ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ. Գ. ԺԱՄԿՈՉՅԱՆ, Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ,
Ս. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, Ս. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՎ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԸ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1975

Թույլատրված է ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության կողմից որպես դասագիրք բուհերի ուսանողների համար:

Խմբագրությամբ պրոֆ. Ս. Տ. ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆԻ

Ф $\frac{0662-04}{704(02)-75}$ 11—75

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1975

А. Г. ЖАМКОЧЯН, А. Г. АБРАМЯН,
С. Т. МЕЛИК-БАХШЯН, С. П. ПОГОСЯН

ИСТОРИЯ АРМЯНСКОГО НАРОДА

С начала до конца XVIII века

Учебник для вузов

На армянском языке

Издательство Ереванского университета
Ереван — 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Հայ ժողովուրդն ապրել ու իր բազմադարյան պատմությունը կերտել է այն տերիտորիայում, որը հայտնի է Հայկական լեռնաշխարհ անունով։

Հայկական լեռնաշխարհը հրաբխային և լեռնակազմական ուժերի գործողության հետևանքով առաջացած երկիր է, ֆիզիկա-աշխարհագրական մի ուրույն մեծ շրջան։ Նա հարևան երկրներից ավելի բարձրադիր է և երբեմն անվանվում է «լեռնային կղզի»։ Հյուսիսում նրա սահմանը հասնում է մինչև Փոքր Կովկասի ծայրաշղթաները, հարավում՝ Կորդվաց և Մասիսս լեռները, արևելքում՝ Ուրմիա լճի մոտերքը, իսկ արևմուտքում՝ Անտիտավրոս, զբաղեցնելով ավելի քան 300000 քառ. կմ տարածություն։

Լեռնաշխարհի միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1500—1800 մ է։ Տարբեր ուղղությամբ ձգվող լեռնաշղթաները իրար հետ հատվելով՝ երկիրը վեր են ածել բազմաթիվ փակ շրջանների։ Լեռնաշղթաների միջև ձգված են ձորեր, հովիտներ և դաշտեր։ Երկրում հիմնականում տարածված են հրաբխային սարահարթեր և առանձին լեռնազանգվածներ, բեկորային ու ծալքավոր լեռներ, տեկտոնական իջվածքներ, գետահովիտներ ու դաշտեր։

Հայկական լեռնաշխարհը մտնում է երկրաշարժերի գոտու մեջ։ Հայկական լեռնաշխարհում է գտնվում Առաջավոր Ասիայի միակ գործող հրաբուխը՝ Թոնդուրեկը (Մասսիս հարավ-արևմուտք), որի խառնարանից դուրս են գալիս ջրային գոլորշիներ, ծծմբային ու ածխածնային գազեր և մանր քարակտորներ, իսկ ստորոտից բխում են հանքային տաք աղբյուրներ։

Երկրում հսկայական տարածության վրա ձգվում են Փոքր Կովկաս, Հայկական պար և Հայկական Տավրոս լեռնասիստեմներ։ Դրանցից առաջինը, որն ունի ծալքավոր կառուցվածք, սկսվում է Բաթումի մոտից և հարավ-արևելյան ուղղությամբ ձգվում մինչև Արաքս՝ Մեղրու մոտ։ Փոքր Կովկասը բարդ լեռնասիստեմ է, բաղկացած՝ խոնավ, Վիրահայոց, Փամբակի, Սյունյաց և այլ լեռնաշղթաներից, որոնց միջև տարածվում են մեծ ու փոքր բարձրադիր շրջաններ։ Փոքր Կովկասի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3906 մ)։ Փոքր Կովկասին կից են Դեղամա հրաբխային լեռնաշղթան և Արագած լեռնագագաթը 4096 մ բարձրությամբ։

Հայկական պարը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռնաշղթան է։ Այն ձգվում է զուգահեռականի ուղղությամբ։ Լեռնաշղթայի արևելյան ծայրակետում է գտնվում երկրի ամենաբարձր լեռը՝ Մեծ Մասիսը (Արարատ՝ 5165 մ), որի գագաթը պատած է հավերժական ձյան ծածկույթով։ Հայկական պարի լեռնագագաթներից հայտնի են նաև Սինակը, Բարդողը, Սուկավետը (կամ Ջրաբաշխ) և Այծպտկունքը։

Լեռնաշղթայի արևելյան հատվածին զուգահեռ, նրա հարավային մասով ձգվում են Ծաղկանց լեռները, որոնց լավաները արևելքում հասնում են մինչև Թոնգուրեկ։ Հայկական Տավրոսը կազմում է Տավրոսյան լեռնասիստեմի արևելյան՝ ամենաերկար հատվածը։ Նա ձգվում է Ջահան գետի ակունքներից (Կիլիկիայում) մինչև Ուրմիա լճի մոտերքը։ Սկզբնաղբյուրներում հաճախ են հիշատակվում Հայկական Տավրոսի երեք գագաթները՝ Արտոսն ու Ընձաքիարսը (Կապուտկող)՝ Վանա լճի հարավային ափին, և Անգոկը՝ լեռնաշղթայի կենտրոնական հատվածում։

Հայկական Տավրոսին են միանում դեղադիր Նեմրութ լեռնագագաթի (3050 մ) լավաները, իսկ Նեմրութից հյուսիս-արևելք՝ Վանա լճի հյուսիսային ափին բարձրանում է Հայկական լեռնաշխարհի երկրորդ բարձր լեռը՝ Սիփանը (4434 մ), որի գագաթից անկրկնելի տեսարան է ներկայացնում Վանա լիճն իր շրջակայքով։ Լճի արևելյան կողմում՝ Վան քաղաքից ոչ հեռու Վարագա լեռն է իր համանուն վանքով։ Նշվածներից բացի հայտնի են Վասպուրականի կամ Կոտուր-Ջաքրոշյան լեռնաշղթան, որը ձգվում է հյուսիսից հարավ՝ Մասսից դեպի Միջագետք, Անտիպոնտական պարը, որը Ճորոխի ավազանը բաժանում է Արևմտյան Եփրատի ավազանից, Պոնտական լեռնաշղթայի արևելյան հատվածը, Մեծրաց և Սիրանաց լեռները Ճորոխ, Կուր

և Արաքս գետերի ջրբաժան շրջանում, լեռնաշխարհի արևմտյան սահմանը կազմող՝ Անտիտավրոսյան լեռնաշղթան՝ Եփրատից արևմուտք, և Ջորբորդ Հայքի (Բյուրակն-Մնձուրյան, Ներքին Տավրոս) լեռնաշղթան, որը ձգվում է Բյուրակն ջրառատ բարձրավանդակից (արևելքում) մինչև Եփրատ։

Հայկական լեռնաշխարհի տերիտորիայի մեծագույն մասը կազմում են Արաքս, Արածանի (Արևելյան Եփրատ), Արևմտյան Եփրատ (Եփրատ) և Ճորոխ գետերի ավազանները։ Արաքսի և նրա վտակների հովիտներում են տարածվում Տվարածատափի, Բասենի, Կարսի (կամ Վանանդ), Շիրակի, Արարատյան, Սուրմալուի, Կոգովիտի (Բայազետ), Մակուի (որի մի մասը հայտնի էր Ավարայր անունով), Կարմիր գետի և Նախճավանի ագրավանդ դաշտերը։ Նույնպիսի արգավանդություն ունեն Արածանիի հովտում սփռված Ալաշկերտի, Դուքաղի, Մանազկերտի, Մուշի, Բալահովիտի (Բալու) ու Խարբերդի և Կարինի (Երզրումի), Դերջանի (Աշկալայի և Մամախաթունի), Երզնկայի ու Կամախի դաշտերը։ Աշխարհագրական առանձին շրջաններ են կազմում Վանա լճի եռանկյունաձև ավազանը, որում հայտնի են Հայոց ձորի, Սև ջրի ու Աբաղայի դաշտերը, Կուր գետի վերնագավառը՝ Արդահանի ու Չավախքի սարահարթերով, Ճորոխ գետի անտառապատ հովիտը և Արածանիի ու Արևմտյան Եփրատի ստորին հոսանքների միջև ընկած լեռնային ու անտառաշատ Դերսիմը։

Երկրի լեռնային ռելեֆի և արտաքին ազդակների հետևանքով Հայկական լեռնաշխարհի բնական պայմանները՝ կլիման, հողերը, բույսերը, կենդանիները բազմազան են։ Դրանք բոլորը ենթարկված են ուղղաձիգ զոնալության օրենքին։ Այստեղ առկա են կիսանապատներից մինչև լեռնային «տունդրան» և նույնիսկ լեռնային-«գլեցերային» բնական բոլոր զոնաները։ Եվ այդ բոլորը իրար հաջորդում են ընդամենը 15—20 կմ վրա։ Բնական պայմանների այդպիսի տարատեսակությունն էլ պայմանավորել է երկրի առանձին շրջաններում տարբեր ոլորտների առաջացումն ու զարգացումը։

Հայաստանն ամբողջապես գտնվում է տաք բարեխառն գոտում։ Նրա կլիման ցամաքային է, տեղումներով սակավ և ունի ջերմաստիճանների մեծ տատանումներ։ Համեմատաբար բավարար տեղումներ են ստանում երկրի միայն հյուսիս-արևելյան, հյուսիսային, հյուսիս-արևմտյան և մասամբ հարավային լեռնային ծայրաշրջանները։

Երկրի կենտրոնական մասում համեմատաբար բավարար

տեղումներ են ստանում միայն Հայկական պարի, Սաղկանց լեռների, Սիփանի և այլ լեռների բարձրադիր լանջերը։ Երկրում անհամաչափ է տեղաբաշխված նաև ջերմությունը։ Ամռանը լինում են խիստ շոգ օրեր, իսկ ձմռանը՝ ցրտեր։ Երկրի ամենաշոգ շրջանները Արարատյան դաշտն ու Արևմտյան Տիգրիսի հովիտն են, որտեղ ամռանը ստվերում ջերմաստիճանը երբեմն անցնում է 41 աստիճանից։ Ցրտության կենտրոնը Կարսի շրջանն է։ Այստեղ արձանագրվել է մինչև —42 աստիճան սառնամանիք։ Հայաստանի ցրտության այդ բևեռը իր հերթին սառեցնում է և հարևան շրջանների օդը։

Հայկական լեռնաշխարհը ջրառատ երկիր է։ Նրա քարտեզը զարդարում են մի քանի խոշոր լճեր և բազմաթիվ լճակներ։ Նա ունի բավական զարգացած գետային ցանց և հայտնի է իր սառնորակ, հորդաբուխ աղբյուրներով ու հանքային բազմապիսի ջրերով։

Հայկական լեռնաշխարհի լճերից հայտնի են՝ Վանա լիճը (Բզնունյանց ծով, Աղթամարի լիճ), Աղթամար, Լիմ և Կաուց կղզիներով, Սևանա լիճը (Գեղամա ծով) և Ուրմիա լիճը (կամ Կապուտան ծով)։ Վանա լիճը իր մեծությամբ Ուրմիայից հետո զբաղվում է երկրորդ տեղը (3674 քառ. կմ)։ Նրա բարձրությունը ծովի մակերևույթից 1720 մ է, փակ լիճ է, ջրերը աղի են՝ բորակով հարուստ։ Հայտնի է իր տառեխ ձկան տեսակով։ Լճի մեջ թափվող գետերից են Խոշաբը, Սև ջուրը և Բերկրին։ Սևանա լիճը աշխարհի լեռնային ամենամեծ և ամենաբարձր լճերից է (մինչև մակարդակի իջեցումը բարձրությունը 1916 մ էր, իսկ մակերևույթը՝ 1416 քառ կմ)։ Նրա ջրերը քաղցրահամ են և զարմանալի վճիտ։ Նրա մեջ թափվում են Դալարառգետը, Բախտակը, Վարդենիսը, Մասրիկը, Ձկնագետը և այլն։ Լճի հյուսիս-արևմտյան կողմում գտնվում է Սևանա կղզին, որը լճի մակարդակի իջեցման հետևանքով վեր է ածվել թերակղզու։ Սևանը հայտնի է իր իշխան ձկնով։ Սևանը մեր օրերում հանդիսանում է ՀՍՍՀ-ի էլեկտրաէներգիայի և ոռոգման ամենահիմնական աղբյուրը։ Նշվածներից բացի, տնտեսական որոշակի նշանակություն ունեն նաև Արճակ (Վանա լճից արևելք), Նագիկ (Վանա լճից արևմուտք), Սովք (Արևմտյան Տիգրիսի ակունքի շրջանում), Մեծամոր (Սև ջուր գետի ակունքում) և մի շարք այլ փոքրիկ լճակներ։

Հայկական լեռնաշխարհից են սկիզբ առնում Տիգրիս, Եփրատ, Ճորոխ, Կուր և Արաքս գետերը։ Կուրը սկիզբ է առնում պատմական Տայք աշխարհի Կող գավառից։ Հայկական լեռնաշ-

խարհի մեջ են մտնում Կուրի վերնագավառն ու նրա մեջ աջ կողմից թափվող (Դեբեդ, Աղստև՝ հնում Ձորագետ և այլն) մի շարք վտակների ավազանները։

Արաքսը Հայաստանի մայր գետն է։ Նա աշխարհի ամենաուղղոտ գետն է։ Սկիզբ է առնում Բյուրական բարձրավանդակի Սրմանց դագաթի լանջերից և թափվում է Կուրի մեջ Կասպից ծովի մոտակայքում։ Ձկնառատ է և արագահոս։ Վարարումների և հունի փոփոխման պատճառով պատմության ընթացքում նրա վրա կառուցված կամուրջներից միայն Հովվի կամուրջն է (Բասենում) պահպանվել մինչև մեր օրերը։ Արաքսի ձախակողմյան վտակներից հայտնի են Ախուրյանը, Մեծամորը (Սև ջուր), Հրազդանը, Աղատը, Նախիջևանը (Նախճավան), Երնջակը, Ողջին, Որոտանը, Հագարին (կամ Աղավնոգետ), իսկ աջակողմյաններից՝ Դեղին ու Կոտուր (Կարմիր) գետերը։

Եփրատը Հայկական լեռնաշխարհից սկսվող գետերի մեջ ամենաերկարն է, իսկ Տիգրիսը՝ ամենաջրառատը։ Այդ երկուսն էլ կազմավորվում են երկուական ճյուղերից, Եփրատը՝ Արածանիից (Արևելյան Եփրատ) և Արևմտյան Եփրատից (Եփրատ), իսկ Տիգրիսը՝ Արևմտյան Տիգրիսից (Տիգրիս, Տգլաթ) և Արևելյան Տիգրիսից (նաև՝ Ջերմ, այժմ՝ Բոհտանսու)։ Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Էրզրումի սարահարթից, իսկ Արածանին՝ Մաղկանց լեռներից։ Երկու Եփրատներն իրար են միանում և կազմում Եփրատ գետը Խարբերդի դաշտի հյուսիս-արևմտյան կողմում։ Արևմտյան Տիգրիսը սկիզբ է առնում Մովք լճից։ Նրա մեջ թափվող վտակներից ամենահայտնին Քաղրիդն է (կամ Նիմֆիոս, այժմ՝ Բաթմանսու), որի աջակողմյան փոքրիկ օժանդակներից մեկի՝ Ցարկինի (կամ Ցարկինսու) ափին գտնվում են Տիգրանակերտ մայրաքաղաքի ավերակները։ Արևելյան Տիգրիսի ակունքը գտնվում է Կորդվաց լեռների և Հայկական Տավրոսի կազմած անկյունում։ Նրա աջակողմյան վտակներից հայտնի են Մոկս և Բաղեշ (Բիթլիս) գետերը։ Երկու Տիգրիսները՝ Սղերդ քաղաքի մոտ իրար միանալով կազմում են Տիգրիսը։

Հայկական լեռնաշխարհի գետերը լեռնային բնույթ ունեն, արագահոս են և փրփրալից։ Դրանց անկման ուժը հին և միջին դարերում օգտագործվել է շատ ընչին չափով՝ ջրաղացներ գործի դնելու համար։ Գետերը արագահոսության և մեծ անկման պատճառով նավարկության համար պիտանի չեն։ Գետերի նշանակությունը առանձնապես մեծ է եղել ոռոգման և ձկնորսության համար։

Ընդհանուր առմամբ Հայկական լեռնաշխարհի հողն արդավանդ է։ Երկիրը հավասարապես նպաստավոր է գյուղատնտեսության երկու կարևորագույն ճյուղերի՝ երկրագործության և անասնապահության զարգացման համար։ Հողն ու բուսականությունը այստեղ, կլիմայական պայմաններին համապատասխան, բազմազան են. դրանք ուղղաձիգ ուղղությամբ կազմում են մի քանի գոտիներ։ Ցածրադիր մասերում՝ ծովի մակերևույթից 500—1000 մ բարձրության վրա գտնվող հարթություններում (Արարատյան դաշտ, Մեղրու և Ղափանի հովիտներ, Արևմտյան Տիգրիսի հովիտ և այլն) արհեստական ոռոգման դեպքում հաջողությամբ աճում են չոր մերձարևադարձային մշակույթներ՝ բամբակ, նուռ, ֆուզ և այլն։ Այս գոտում հացահատիկային կուլտուրաների հետ միասին մշակում են բրինձ։

Հնագույն ժամանակներից ի վեր Հայաստանը մեծ համբավ ունի իր խաղողով, դեղձով, ծիրանով և պտուղների այլ տեսակներով։ Ցածրադիր այդ գոտու բնական աղքատ բուսածածկը հիմնականում բաղկացած է օշինդրից և ճահճաբույսերից։ Ցածրադիր գոտուց վեր՝ ծովի մակերևույթից 1100—1500 մ բարձրության վրա ընկած է նախալեռնային գոտին, որի համար բնորոշ մշակույթները հացահատիկներն են, ցորենը, գարին, տարեկանը, հաճարը, կորեկը, իսկ ցածրադիր մասերում՝ մինչև 1300 մ բարձրության վրա խաղողի ու կորիզավոր պտուղների մշակույթը։ Հացահատիկներով առանձնապես աչքի են ընկել Շիրակը, Ալաշկերտը և Մուշը։ Հայկական լեռնաշխարհի նախալեռնային գոտում տարածված են վայրի հացաբույսերի մի քանի տեսակներ։ Հայաստանը վայրի ցորենի նախահայրենիքներից մեկն է։

Երկրում լայն տարածում ունեցող նախալեռնային գոտուց վերև տարածվում է լեռնային գոտին, որը ծովի մակերևույթից ունի 1500—2000 մ բարձրություն։ Այստեղ նույնպես տարածված են հացահիտիկները, միայն այն տարբերությամբ, որ ցորենի փոխարեն գերիշխում են գարին և տարեկանը։ Հացահատիկների ցանքերը այս գոտում երբեմն վնասվում են կարկուտից և ցրտերից։ Լեռնային գոտու բարձր շերտերում՝ 1900—2000 մետրից վեր տարածվում են ալպյան փարթամ ու հյութեղ մարգագետինները, որոնք դրավում են ընդարձակ տարածություններ։ Ալպյան մարգագետիններով առանձնապես հարուստ են Բյուրակնյան, Խոնավ, Սևանի (Սևանա լճից արևելք), Գեղամա և Սյունաց լեռների բարձրադիր լանջերը։

Անտառները Հայկական լեռնաշխարհում համեմատաբար

քիչ տարածություն են գրավում։ Նրա կենտրոնական շրջանները, եթե չհաշվենք տեղ-տեղ երևացող առանձին պուրակները դրանք անտառազուրկ են։ Մեծ զանգվածներով անտառներ գտնվում են Արցախում, Սյունիքում, Գուգարքում, Տայքում, Զորոռոդ Հայքում, Արևելյան Տիգրիսի ավազանում։ Հնում անտառներն ավելի ընդարձակ տարածություններ են գրավել, քան այժմ։ Հայկական լեռնաշխարհի անտառներում առանձնապես տարածված են՝ կաղնին, հաճարին, բոխին, թխկին, հացենին և կեչին։ Սյունիքի, Արցախի և Գուգարքի անտառներում կան մեծ քանակությամբ վայրի պղտատու ծառեր ու թփեր՝ տանձենիներ, խնձորենիներ, սալորենիներ և այլ ծառատեսակներ։ Սյունիքի հարավային մասում, Վանա լճի ավազանում և մի քանի տեղերում անտառային պուրակներ են կազմում ընկուզենիները։

Հին Հայաստանում տնկվել են մի քանի անտառապուրակներ։ Դրանցից առանձնապես նշանավոր են եղել «Սոսյաց անտառը» (Արմավիր մայրաքաղաքի մոտ), «Մենդոց անտառը» (Ախուրյան գետի աջ ափին Բագարան քաղաքի շրջակայքում) և, մանավանդ, «Խոսրովակերտ» անտառը, որը տարածվում էր Ազատ և Վեդի գետերի շրջանի շրջանում՝ Գառնիի բերդի մոտից մինչև Դվին, ապա՝ Արտաշատ։ Վերջինիս մնացորդները մինչև օրս էլ մնում են ՀՍՍՀ Արարատի շրջանում Խոսրովի անտառ անունով և որպես պետական արգելանոց պահպանվում են հատուկ խնամքով։

Բազմազան է նաև Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհը։ Ընտանի կենդանիներից այստեղ տարածված են ոչխարը, այծը, կովն ու եզը, ձին, գոմեշը, ջորին, էշը, և բազմազան թռչուններ։ Վայրի կենդանիներից՝ աղվեսը, նապաստակը, կզաքիսը, գայլը, արջը, բորենին, քարայծն ու վայրի ոչխարը, եղնիկը, վարազը, ծայր հարավային մասերում նաև առյուծ։ Հին և միջնադարյան Հայաստանի համար տնտեսական մեծ նշանակություն է ունեցել կենդանական աշխարհի մի փոքր ներկայացուցիչը, միջատի մի տեսակը, որն աճում էր Արարատյան դաշտի Արաքսին հարող ճահճուտներում։ Այդ միջատից պատրաստում էին արտաքին շուկայում մեծ համբավ ձեռք բերած հայկական չդունաթափվող վառ կարմիր ներկ՝ «որդան կարմիր»-ը։

Հայկական լեռնաշխարհն աչքի է ընկնում իր բնական հարստություններով՝ ամենից առաջ սեղանի աղով։ Աղի երեք նշանավոր հանքավայրերը՝ Կողբը, Նախիջևանը և Կաղզվանը հայտնի էին վաղագույն ժամանակներից։

Հայկական լեռնաշխարհը հայտնի է նաև պղնձի, կապարի ու

ցինկի հանքերով։ Պղնձի հանքավայրեր կան երկրի շատ մասերում։ Առանձնապես հայտնի են եղել Գուգարքի Տաշիրք գավառը, Սյունիքի Վայոց ձոր, Բաղք և Զորք գավառները, Այրարատի Վարաժնունիք գավառը և Զորրորդ Հայքի՝ Արևմտյան Տիգրիսի ակունքների վրա ընկած շրջանը՝ Արղնին (Արղանա-մադեն)։ Պղնձի և դրան ուղեկցող մետաղների համեմատությամբ երկաթն ավելի լայն տարածում ունի։ Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ի (VII դար) մեջ հիշատակվում է, որ երկաթով հարուստ են Աղձնիք (Արևմտյան Տիգրիսի հովտում), Տուրուբերան (միջին Արածանիի ավազան և Արաքսի վերնագավառ) և Ուտիք (Կուրի միջին հոսանքի և Փոքր Կովկասի միջև) «աշխարհ»-ները։ Առանձնապես նշանավոր էին Վանա լճի հարավային ափին գտնվող «Երկաթահատ» կամ «Երկաթահանք» կոչված հանքերը՝ Ընձաքիրաս (Կապուտկող) լեռան մոտ։ Այս նույն հանքավայրից արդյունահանվում էր նաև կապար և այդ պատճառով էլ հանքավայրը հաճախ կոչված է «Կապարահատ»։ Նավթը նույնպես հիշատակվում է Աղձնիք և Տուրուբերան «աշխարհ»-ներում։ Նավթային ավազաններ կան նաև Վանից հարավ, Բերկրի քաղաքի շրջանում և Կարինում (Էրզրում)։ Քարածխով աշքի են ընկնում Արևմտյան Տիգրիսի և Արևմտյան Եփրատի ավազանները։

Ազնիվ մետաղներից հիշատակվում են ոսկին և արծաթը։ Արծաթի հայտնի հանքավայրը գտնվում էր հին Հայաստանի հյուսիս-արևմտյան մասում, իսկ ոսկու հանքեր ու ոսկեբեր ավազներ հիշատակվում են Հայկական լեռնաշխարհի հինգ մասերում՝ Սպեր գավառում (Ճորոխ գետի վերնագավառում), Արարատյան դաշտում, Զորրորդ Հայք «աշխարհ»-ի Պաղնատուն գավառում (Խարբերդից հյուսիս-արևելք), Հայկական Տավրոսի Վանա լճին հարող հատվածում և Սյունիքում (Սոտք գավառում)։ Դրանցից առանձնապես նշանավոր էին Սպերի ոսկու հանքերը, որոնք հայտնի են եղել և մշակվել են շատ հին ժամանակներից։ Ոսկին և արծաթն իրրև ուղեկցող մետաղներ հանդես են դալիս նաև պղնձի ու գունավոր այլ մետաղների դրեթե բոլոր հանքերում։ Երկրի հրաբխային շրջաններում և գունավոր մետաղների հանքավայրերում մեծ տարածում ունի ծծումբը։ Լեռնաշխարհի տարբեր մասերում հանդիպում են տորֆ, զառիկ, բրոմիտ։

Հայկական լեռնաշխարհը իրավամբ կարող է հպարտանալ իր բազմատեսակ շինանյութերով։ Երկրում ավազը, կավը և կրաքարերը տարածված են դրեթե ամենուրեք։ Կան տարբեր տեսակի ու գույնի մարմարներ (Երևանի մոտ, Արզականում, Խոր-

վիրապում, Արարատ կայարանի մոտ և այլ տեղերում)։ Հրաբխային շատ շրջաններում հզոր շերտերով տարածված են բազմագույն (սև, դորշ, վարդագույն և այլն) տուֆերը, որոնցից այժմ առանձնապես մեծ հռչակ է վայելում Արթիկի վարդագույն տուֆը։ Տուֆերով (Երևանում, Շիրակում և այլուր), մարմարներով, ինչպես և պեմզայով (Շիրակում) ու գիպսով (Արարատյան դաշտում) հայտնի է եղել մանավանդ Այրարատյան «աշխարհ»-ը։ Պակաս տարածում չունեն նաև գրանիտը, բազալտը, ֆիլլիտները։ Շինանյութերի բարձր որակն ու առատությունը բնականաբար նպաստել են Հայկական լեռնաշխարհի բնակիչների շինարարական արվեստի զարգացմանը, մի արվեստ, որի ամենատարբեր ժամանակներին վերաբերող կոթողներն այսօր էլ պահպանում են իրենց հմայքը։

Հրաբուխների տարածվածության շնորհիվ Հայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր կողմերում բխում են բազմատեսակ ու բազմաթիվ հանքային տաք ու սառն աղբյուրներ։ Դրանք հիմնականում ունեն ածխաթթվային, երկաթային, ծծմբային և ածխաթթվա-ալկալիական բաղադրություն։ Հրազգան գետի ավազանում բխում են հանքային մի շարք սառն աղբյուրներ, որոնց մեջ պատմական շատ հին ժամանակներից ի վեր բուժիչ հատկություններով հայտնի է Արզնիի ջուրը։ Այժմ այդտեղ գործում է համամիութենական տիպի առողջարան։ Տաք աղբյուրներից հայտնի են «Վարշակի ջերմուկը» (Բայազետ քաղաքից ոչ հեռու, Դիադինի շրջանում), Ջերմուկը (Սյունիքի Վայոց ձոր գավառում), Կարինի (Էրզրում) և Երզնկայի ջերմուկները։ Մեր օրերում լայնորեն օգտագործվում է Վայոց ձորի ջերմուկը, ուր կառուցվել են հիանալի առողջարաններ։ Հանքային բազմաթիվ աղբյուրներ կան Փամբակ ու Աղստև գետերի ձորերում, Որոտան ու Ողջի գետերի ավազաններում և այլուր։

Հայկական լեռնաշխարհի այն մասում, որը մտնում է Սովետական Միության տերիտորիայի մեջ, հայտնաբերվել են մի շարք նոր հանքեր՝ մոլիբդեն, սիենիտներ, երկաթ և այլն։ Սովետական իշխանության տարիներին գունավոր մետաղների մշակումը արագ թափով զարգացավ հատկապես Ալավերդում և Ղափանում։

Հին ու միջին դարերում շահագործման է ենթարկվել նշված հանքերի միայն մի մասը։ Երկրի համեմատաբար խոր շերտերում գտնվող մետաղները անմատչելի են եղել մարդու համար,

իսկ մի քանի հանքատեսակներ (օրինակ՝ քարածուխը) հին և միջին դարերում կարևոր նշանակություն չեն ունեցել։

Անկախ այդ բոլորից բնական պայմանների համառոտ նկարագրությունից երևում է, որ Հայկական լեռնաշխարհն իր կլիմայական ու հողային բարենպաստ պայմաններով, ձկնառատ լճերով ու արագահոս գետերով, հարուստ բուսական ու կենդանական աշխարհով, հանքային բազմատեսակ հարստություններով մեծ հնարավորություններ է տվել տնտեսության զարգացմանը։

Հայաստանը քաղաքակրթված հին աշխարհի բաղկացուցիչ մասերից մեկն էր, և, իբրև այդպիսին, նա հայտնի էր պատմության վաղագույն ժամանակներից։ Բուն Հայաստանի մասին իսկական հիշատակություններն սկսվում են Ուրարտական պետության անկումից անմիջապես հետո։ Հայաստանի հնագույն շրջանի տերիտորիայի և վարչական բաժանման վերաբերյալ հիշատակություններ են կատարել Հերոդոտը, Քսենոֆոնը, Ստրաբոնը, Պլինիոս Ավագը, Պտղոմեոսը և հայտնի այլ հեղինակներ։ Սելևկյան տիրապետության ժամանակներից սկսած (IV—II դար մ. թ. ա.) հայաբնակ բոլոր շրջանները բաժանված էին երեք խոշոր վարչական միավորների՝ Փոքր Հայք, Սոփք և Մեծ Հայք, որոնք II դարում (մ. թ. ա.) դարձան առանձին-առանձին անկախ պետություններ։ Դրանց մեջ ամենից զորեղը Մեծ Հայքի պետությունն էր, որտեղ II դարից (մ. թ. ա.) մինչև V դարը (մ. թ.) թագավորում էին նախ Արտաշեսյանները, ապա Արշակունիները։

Արտաշեսյանների օրոք, մանավանդ Արտաշես I-ի և Տիգրան II-ի թագավորության շրջանում, Մեծ Հայքի տերիտորիան՝ հարևան հայկական ու մասամբ ոչ հայկական շրջանների, ինչպես նաև Սոփքի ու Փոքր Հայքի հաշվին ընդարձակվելով, հասավ իր առավելագույն սահմաններին։ Նրա սահմանները, որ գրեթե առանց էական փոփոխության մնացին նաև I—IV դարերում, Տիգրան II-ի օրոք հասնում էին արևելքում Կասպից ծով, արևմուտքում՝ Եփրատ, հյուսիսում՝ Կուր գետը, իսկ հարավում Կորդվաց լեռների հարավային վերջավորությունները։ Նշված սահմանների միջև ամփոփված երկիրը, որը, եթե բացառելու լինենք արևելյան մի քանի շրջաններ, հիմնականում համընկնում է Հայկական լեռնաշխարհի հետ, պատմությանը հայտնի է Մեծ Հայք կամ ուղղակի Հայաստան անունով, անկախ ժամանակի ընթացքում նրա կրած տերիտորիալ ու վարչական-քաղաքական փոփոխություններից։

Մեծ Հայքն իր մեջ լիովին չէր ընդգրկում հայաբնակ բոլոր

շրջանները, ինչպես նաև նրա մեջ մտնող որոշ տերիտորիաներ (Փայտակարանը, Պարսկահայքի ու Կորճեքի որոշ մասերը) հայաբնակ չէին։ Մեծ Հայքը վարչական առումով Աքեմենյանների թագավորության շրջանում բաժանվում էր զորավարությունների (վարչատերիտորիալ ու զինվորական միավորներ) ու բդեշխությունների, իսկ Արշակունիների օրոք՝ նախարարությունների ու բդեշխություններում։ Հետագայում Մամիկոնյանների, Արշակունի խալիֆայության, Բագրատունիների թագավորության, սելջուկների տիրապետության շրջանում և հետագա դարերում երկրի ներքին վարչա-տերիտորիալ բաժանումներն ըստ էության բազմաթիվ անգամ ենթարկվում են փոփոխությունների։ Սակայն դարեր շարունակ պատմագիրների ու աշխարհագիրների մոտ գործածության մեջ է մնում Մեծ Հայքի տերիտորիալ այն բաժանումը, որը տրվում է VII դարի «Աշխարհացույց»-ում։ Անանիա Շիրակացին, որին այժմ վերագրում են այդ «Աշխարհացույց»-ը, Մեծ Հայքը «աշխարհների» (նահանգ, կողմ, տուն) ու գավառների է բաժանել՝ ելնելով երկրի ներքին վարչական և բնա-աշխարհագրական պայմաններից։

Ըստ «Աշխարհացույց»-ի Մեծ Հայքը բաղկացած էր 15 աշխարհներից, որոնք բոլորը միասին ունեին 191 գավառ։ Այդ աշխարհները հետևյալներն էին. Տայք (Ճորոխ գետի միջին հոսանքի շրջանում), Բարձր Հայք կամ Կարինի աշխարհ (Արևմտյան Եփրատի վերին ու միջին հոսանքների ավազանում և Ճորոխի վերնագավառում), Զորորորդ Հայք (Արածանիի ստորին և Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքի շրջանում), Աղձնիք (Հայկական Տավրոսի և Արևմտյան Տիգրիսի միջև), Կորճեք կամ Կորդվաց «աշխարհ» (Արևելյան Տիգրիսից հարավ), Մոկք (Արևելյան Տիգրիսի աջ կողմում), Պարսկահայք (Ուրմիա լճի հյուսիս-արևմտյան և արևմտյան կողմում), Փայտակարան (Կուր և Արաքս գետերի ստորին հոսանքից հարավ՝ Ատրպատականի հյուսիսային շրջաններում), Արցախ (Կուր և Արաքս գետերի միջև՝ այժմյան Լեռնային Ղարաբաղն ու Միլլիի տափաստանը միասին վերցրած), Ուտի կամ Ուտիք (Սևանա ու Արեզունի լեռների և Կուրի միջև), Դուգարք (Աղստևից մինչև Ճորոխի ավազան), Տուրուբերան կամ Տարոնի երկիր (Արածանիի միջին հոսանքի շրջանում և Արաքսի ծայր վերնագավառում), Վասպուրական (Վանա ու Ուրմիա լճերի և Արաքսի ու Հայկական Տավրոսի արևելյան հատվածի միջև) և Այրարատ, որն իր մեջ ընդգրկում էր Արաքսի միջին հոսանքի ավազանը և Արածանիի վերնագավառը։

Հայ ժողովրդի պատմության մեջ առանձնապես կարևոր դեր են խաղացել Բարձր Հայքը, Չորրորդ Հայքը, Տուրուբերանը, Վասպուրականը, Սյունիքը, Գուգարքը և, հատկապես Այրարատը։ Բարձր Հայքի գավառներից նշանավոր էին՝ Դարանաղի գավառն իր Անի ամրոցով, Եկեղյաց գավառը՝ Երիզա ավանով (Երզնկա), Մանանաղի գավառը, որն առանձնապես հայտնի դարձավ Թոնդրակյան շարժման ժամանակ, Կարինը Կարին քաղաքով և Սպեր գավառը Սպեր (այժմ՝ Իսպիր) գյուղաքաղաքով։ Չորրորդ Հայքը հնում հայտնի էր Տոփք անունով, IV դարի երկրորդ կեսից այն կոչվում է Նախայարական Հայաստան, իսկ 6-րդ դարից՝ Հուստինիանոսի ռեֆորմից հետո, արդեն կոչվեց Չորրորդ Հայք։ Այս աշխարհի գավառներից նշանավոր էին Հանձիթը՝ Խարբերդ քաղաքով և Հանդեսա վայրով, Մեծ Տոփքը, Անգեղ տուն գավառը՝ Անգղ ամրոցով և այլն։ Տուրուբերան աշխարհի ամենանշանավոր գավառը Տարոնն էր՝ Աշտիշատ ու Գլակա վանքերով, Ողական ամրոցով, Մուշ գյուղաքաղաքով և նշանավոր Հացեկաց ու Խորնի գյուղերով։ Նրա մյուս գավառներից էին Բզնունիքը, Խոռխոռունիքը, Խոսքը և այլն։

Վասպուրականը Մեծ Հայքի ամենաբազմագավառ «աշխարհն» էր, նրա գավառների թիվը հասնում էր մինչև 37-ի։ Հայտնի էին հատկապես Ռշտունիքը՝ Ոստան գյուղաքաղաքով, Նարեկա վանքով և Աղթամար կղզով, Տոսպը՝ Վան քաղաքով և Արտամետ գյուղաքաղաքով, Արտազը՝ Ավարայրի դաշտով և Եղինդ գյուղով, Աղբակը՝ Արծրունիների Ադամակերտ ոստանով, Նախճավանը՝ Նախճավան քաղաքով և գուսաններով հայտնի գիննվետ Գողթնը գավառը։ Սյունիքի նշանավոր գավառներից էին Արևիքը (այժմյան Մեղրու շրջանը), Բաղքը (Ղափանը), Սղուկը (Սիսիանը և Գորիսի մի մասը), Վայոց ձորը (Եղեգնաձոր և Ազիզբեկով շրջանները միասին վերցրած) և Գեղարքունիք գավառը (Մարտունի, Կամո և Սևան շրջանները միասին վերցրած)։

Մեծ Հայքի ամենահայտնի «աշխարհ»-ը Այրարատն էր, հայ պետականության, կուլտուրական ու տնտեսական կյանքի ամենանշանավոր կենտրոնը։ Բավական է ասել, որ հայկական պետության մայրաքաղաքների մեծագույն մասը գտնվում էր Այրարատում։ Այրարատյան «աշխարհ»-ի գավառներից հայտնի էին՝ Բասենը՝ Վաղարշավան քաղաքով, Արշարունիքը՝ Երվանդաշատ ու Բագարան քաղաքներով, Երվանդավան դղյակով և Արտաշատ ամրոցով, Վանանդը՝ Կարս բերդով, Շիրակը՝ Անի բերդով, Արագածոտնը՝ Արմավիր ու Վաղարշապատ քաղաքներով, Կոտայքը՝

Երևան գյուղաքաղաքով, Մաղազը՝ Գառնի գերդաքաղաքով; Բագրեվանդը՝ Վաղարշակերտ գյուղաքաղաքով, Սաղկոտնը՝ Շահապիվան վանքով, Կոգովիտը՝ Բագրատունիների ոստան Դարոյնքով (Բայազետ), Ոստանը՝ Արտաշատ և Դվին քաղաքներով։ Հայ մատենագիրները, հատկապես Ղազար Փարպեցին, մեծ գովեստով են խոսում Այրարատի արգավանդության մասին։

Մեծ Հայքից բացի հայ ժողովուրդը զանգվածներով բնակչության մեծամասնություն է կազմել նաև Փոքր Հայքում, որն սկզբում գրավում էր միայն Իրիս (Եշիլ-իրմակ) գետի և նրա աջակողմյան Գայլ (Կելկիդ) գետերի վերին ու միջին հոսանքների ավազանները, բայց հետագայում, IV դարից սկսած, երբ այն բաժանվեց Առաջին և Երկրորդ Հայք պրովինցիաների (առաջինը Սեբաստիա, երկրորդը՝ Մալաթիա կենտրոնով), նրա տերիտորիան զգալի չափով մեծացրին հարևան շրջանների հաշվին։ Ավելի ուշ Մեծ Հայքից եկող բնակիչները Փոքր Հայքից բացի բնակություն հաստատեցին նաև նրա հարավային հարևան՝ նախկին Կապադովկիայի տերիտորիայում, իսկ X դարից՝ Կիլիկիայում, որտեղ XI դարում նրանք ստեղծեցին իրենց պետականությունը։

Արաբական պետության ժամանակներից սկսած՝ մեկը մյուսին փոխարինող արտաքին նվաճողները միշտ ցանկացել են աղավաղել, փոխել Հայաստանի աշխարհագրական անունները։ Այդ պատճառով էլ մենք Հայաստանում հանդիպում ենք ամենատարբեր օտարածին աշխարհագրական անունների։ Սակայն նրա բնակչության հիմնական զանգվածները և աշխարհագրական անունների մեծ մասը, ընդհուպ մինչև առաջին համաշխարհային պատերազմը, մնացին հայերն ու հայկական անունները։

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՂ ՍՏՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ I

ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ-ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՊԱԼԵՈԼԻԹԸ ԵՎ ՆԵՈԼԻԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նախնադարյան հասարակության զարգացման շրջանները

Մարդկային հասարակության կազմավորումն ու զարգացումը հարյուր հազարավոր տարիների պատմություն ունի։

Հայտնի է, որ մարդը հանդես է եկել երկրի պատմության չորրորդական ժամանակաշրջանի սկզբում, ավելի քան մեկ միլիոն տարի առաջ երկրագնդի այն մասերում, որտեղ գոյություն են ունեցել առավել նպաստավոր պայմաններ։

Մարդու՝ կենդանական աշխարհից բաժանվելու և հասարակական էակ դառնալու մեջ վճռական դեր է կատարել աշխատանքը։ Նախամարդը աշխատանքային գործունեությամբ ոչ միայն զարգացնում է իր ֆիզիկական կառուցվածքը, այլև ընդարձակում մտահորիզոնը, ստեղծում հաղորդակցության միջոցը՝ հոդաբաժան լեզուն։

Ի տարբերություն կենդանիների, մարդն իր սնունդն ու կենսապայմանները հայթայթելու համար բնության դեմ մղվող պայքարում հանդես է գալիս արտադրության գործիքներով։ Աշխատանքային կամ արտադրության գործիքների պատրաստումը մարդու առաջին և հիմնական առանձնահատկությունն է։ Նրա կարևոր առանձնահատկություններն են նաև գիտակցությունը, մտածողությունը և նպատակադրումը։

Մարդն իր առաջին գործիքները պատրաստել է փայտից, քարից և ոսկրից։ Քարե գործիքների պատրաստման համար իբրև շինանյութ ծառայել են կայծքարը, օբսիդիանը (սատանի եղունգ), կվարցիտը և այլն։ Միայն հարյուր հազարավոր տարիներ հետո,

մարդը, տիրապետելով մետաղների մշակման արվեստին, սկըսում է գործիքներ պատրաստել նաև մետաղներից։

Նախնադարյան հասարակության պատմությունը ըստ աշխատանքային գործիքների, բաժանվում է քարե դարի, պղնձեքարե դարի (էնեոլիթ), բրոնզե դարի և երկաթե դարի։ Քարե դարը իր հերթին բաժանվում է երկու խոշոր շրջանների՝ պալեոլիթ և նեոլիթ, այսինքն՝ հին քարե դար և նոր քարե դար։

Նյութական բարիքներ արտադրելու համար, բնության դեմ մղվող պայքարում, մարդիկ հանդես են գալիս միասին, խմբերով կամ հասարակություններով։

Նախնադարյան հասարակության սկզբում մարդիկ ապրել են թափառող խմբերով, իսկ հետագայում միավորվել են տոհմային համայնքներում։ Նախնադարյան հասարակության արտադրական հարաբերությունների հիմքը հանդիսացել է արտադրության միջոցների հանրային սեփականությունը։ Այստեղ թե՛ աշխատանքը և թե՛ ձեռք բերված նյութական բարիքների բաշխումն ու յուրացումը ունեցել են կոլեկտիվ, հասարակական բնույթ։ Այստեղ չեն եղել ոչ շահագործում և ոչ էլ դասակարգեր։ Քարե գործիքներով զինված մարդը միայն երկարատև աշխատանքի միջոցով էր հազիվ կարողանում պահպանել իր և իր սերնդի գոյությունը։ Հասարակության ներսում հավելյալ կենսամթերքների արտադրության անհնարինությունը բացառում էր շահագործման և դասակարգերի գոյության հնարավորությունը։

Պալեոլիթը Հայաստանում

Պալեոլիթը կամ հին քարե դարը տևել է մի քանի հարյուր հազար տարի։

Վերջին տասնամյակներում կատարված հնագիտական բազմաթիվ հայտնագործումներն ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհը հանդիսացել է մարդկային հասարակության հնագույն բնակավայրերից մեկը, որտեղ բնակության համար գոյություն են ունեցել աշխարհագրական, կլիմայական նպաստավոր պայմաններ։ Հայաստանը ծածկված է եղել մերձարևադարձային կոսական խիտ անտառներով, ունեցել է մեղմ ու խոնավ կլիմա։

Արտին լեռան լանջերում, Հրազդան գետի միջին հոսանքի շրջանում, ինչպես և Կարս, Մալաթիա, Բուլանխ քաղաքների շրջակայքում հայտնաբերված նախնադարյան մարդու կայաններից հայտնաբերվել են հազարավոր քարե գործիքներ, որոնք պատկանում են պալեոլիթի տարբեր շրջաններին։ Այս կայաններից շա-

տերը հանդիսացել են քարե գործիքների պատրաստման յուրատեսակ արհեստանոցներ։

Այժմ համաշխարհային մեծ համբավ ու ճանաչում են ստացել Արտին լեռան սիստեմի մեջ մտնող Սատանի դար, Արեգունի և Հարավային կոչվող բլուրների լանջերին հայտնաբերված պալեոլիթյան կայանները։ Այս կայաններից գտնված քարե գործիքները պատկանում են պալեոլիթի ամենավաղ շրջաններին՝ շելյան և աշելյան մշակույթներին, կամ, այլ կերպ ասած, դրանք նախնադարյան մարդու ամենահին քարե գործիքներից են։ Հայաստանում գտնված շելյան քարե գործիքները, որոնք միակն են Սովետական Միության մեջ, ունեն ավելի քան 800.000 տարվա հնություն։

Ստորին պալեոլիթի գործիքների կոպիտ ու անմշակ վիճակը ցույց է տալիս ոչ միայն աշխատանքի ու արտադրության ձևերի, այլև մարդկային հնադույն խմբերի զարգացման ցածր աստիճանը։ Այդ ժամանակ մարդիկ ապրում էին թափառող փոքրաթիվ խմբերով, սնվում էին բույսեր և պտուղներ հավաքելով, մասամբ էլ վայրի կենդանիներ որսալու միջոցով։

Ստորին պալեոլիթի վերջում երկրաբանական փոփոխությունների հետևանքով Եվրոպայի և Կովկասի, այդ թվում և Հայաստանի կլիման խիստ կերպով ցրտում է, գոյանում են սառցադաշտային կենտրոններ։

Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած սննդի հայթայթման դժվարությունները Հայաստանում ապրող նախնադարյան մարդուն ստիպում են բարելավել իր աշխատանքի գործիքները և բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։ Այժմ գործիքները նախկիններից համեմատությամբ ոչ միայն լավ էին մշակվում, այլև ունեին ավելի սուր և կտրող ծայրեր, որովհետև այժմ մամոնտի, ռնգեղջյուրի, հսկա եղջերուի, քարանձավային արջի կոլեկտիվ որսորդությունը դարձել էր նախնադարյան մարդու սննդի գլխավոր աղբյուրներից մեկը։

Կլիմայի խստացումը ստիպում է միջին պալեոլիթի մարդուն ցրտից պատսպարվելու համար ապաստարան-կացարան գտնել։ Հայաստանում նույնպես նախնադարյան մարդու առաջին մշտական ապաստարան-կացարանները դառնում են քարայրները, որոնք նա նվաճում էր գիշատիչ կենդանիների դեմ մղվող համառ պայքարում։ Երևանյան լճի աջ ափին գտնվող մի մեծ քարանձավից հայտնաբերվել են միջին և վերին պալեոլիթին պատկանող հազարավոր քարե գործիքներ ու մեծ քանակությամբ խոհանո-

յային մնացորդներ, որոնք ունեն 100.000-ից մինչև 25.000 տարվա հնություն։ Նման բազմաթիվ կացարան-քարայրներ գտնվել են նաև այլ վայրերում։

Ստորին և միջին պալեոլիթում մարդը դեռևս լրիվ կերպով անջատված չէր կենդանական աշխարհից։ Ժամանակակից մարդու տիպը՝ մտածող, բանական մարդը (Homo Sapiens) հանդես է գալիս միայն պալեոլիթում։

Միջին և վերին պալեոլիթի սահմանագծում մարդը կատարում է ամենամեծ գյուտերից մեկը՝ արհեստական կերպով կրակ ստանալու գյուտը, որը Ֆ. Էնգելսի բնորոշմամբ «բնության դեմ մարդու տարած առաջին մեծ հաղթանակն էր»։ Կրակը նախնադարյան մարդուն ոչ միայն պաշտպանում է ցրտից ու հնարավորություն տալիս նրան հում մսից անցնելու խորոված-եփած մսի գործածության, ոչ միայն հեշտացնում է նրա աշխատանքը, գործիքների պատրաստումն ու սննդի հայթայթումը, այլև մի ահեղ զենք է դառնում բնության և դիշատիչ կենդանիների դեմ պայքարելու համար։ Կրակը մարդուն հնարավորություն է տալիս տարածվելու ավելի ընդարձակ տերիտորիայում։

Մայրական տոհմի ձևավորումը

Համատեղ աշխատանքային գործունեությունը, ընդհանուր բնակարանում միասին ապրելը ոչ միայն բնական անհրաժեշտությամբ համախմբում ու միավորում է մարդկանց, այլև նպաստում նրանց միջև ամուսնական հարաբերությունների կարգավորմանը, արենակցական կապերի առաջացմանն ու ամրապնդմանը։ Մարդկային հասարակությունը նախնադարյան հոտից անցում է կատարում դեպի նախնադարյան տոհմային համայնքը։ Այդ համայնքների մեծ մասում առաջ է գալիս նաև խմբակցական ամուսնության էկզոգամ, այսինքն՝ այլացեղ ձեր, որի ժամանակ արգելվում էր ներտոհմային ամուսնությունը և այն թույլատրվում էր միայն տարբեր, ոչ արենակից տոհմերի տղամարդկանց ու կանանց միջև։ Էկզոգամայի զարգացումը նպաստում է թշնամաբար տրամադրված մարդկային տարբեր խմբերին մոտենալ իրար։

Վերին պալեոլիթում աշխատանքի արտադրողականության բարձրացումը, զբաղմունքի նոր բնագավառների հանդես գալը նախնադարյան հասարակության ներսում առաջ են բերում աշխատանքի բնական բաժանում տղամարդկանց և կանանց միջև։ Եթե տղամարդը առավելապես զբաղվում էր որսորդությամբ և գործիքներ ու զենքեր պատրաստելով, ապա կինը հավաքում էր

բույսեր, պատրաստում հագուստներ ու տնային իրեր, խնամում երեխաներին ու ծերերին, պահպանում օջախ-կրակարանը և այլն։ Բացառիկ կերպով մեծ էր կնոջ դերը հասարակական-ընդհանուր բնակարանում։ Տոհմային համայնքներում գոյություն ունեցող խմբակցական ամուսնության պայմաններում երեխայի հայրը որոշակի կերպով հայտնի չէր, ուստի երեխաները պատկանում էին մորը և արենակցությունը որոշվում էր միայն գծով։ Այս հանգամանքը մեծացնում է կնոջ-մոր դերն ու ազդեցությունը նախնադարյան հասարակության կյանքում։ Վերին պալեոլիթում առաջանում է մայրական տոհմային համայնքը, հաստատվում է մայրիշխանությունը։ Մայրական տոհմային համայնքում մարդիկ, բացի բնության ու գիշատիչ կենդանիների դեմ համատեղ պայքարելու, համատեղ սնունդ հայթայթելու անհրաժեշտությունից, իրար էին միացած նաև արենակցական կապերով։ Տոհմային համայնքում թե՛ աշխատանքը և թե՛ նյութական բարիքների բաշխումն ու յուրացումը ունեին բացառապես կոլեկտիվ բնույթ։

Նեոլիթը Հայաստանում

Նեոլիթը կամ նոր քարե դարը կարևոր դեր է կատարել նախնադարյան հասարակության զարգացման պատմության մեջ։ Նա տևել է մոտ ութ հազար տարի։

Հայաստանում ապրող նոր քարեդարյան մարդը նախ խոշոր առաջադիմություն է կատարում աշխատանքի գործիքների պատրաստման ասպարեզում։ Պալեոլիթի կոպիտ, ծանր, պարզունակ քարե գործիքների փոխարեն հանդես են գալիս մշակված, ավելի նպատակահարմար ձև ունեցող մասնագիտացված գործիքներ ու զենքեր։ Թալինի շրջանի Զաղաներ, Բառոժ, Արարատյան դաշտի Կղզյակ-բլուր, Տերտերի-ձոր, Մաշտոց-բլուր, Սև-բլուր կոչվող նեոլիթյան բնակատեղերից, ինչպես և Անի-Պեմզայի, Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղի շրջակայքից և այլ վայրերից հայտնաբերված գործիքների ու զենքերի մեջ կան կայծքարից, օբսիդիանից ու կրաքարից պատրաստված դանակներ, կացիններ, մուրճեր, ուրագներ, բրիչներ, գուրզեր, իլիկի գլուխներ և այլն։

Առաջավոր Ասիայի շատ երկրներում, այդ թվում և Հայաստանում, մարդը նոր քարե դարի հենց սկզբում կատարում է իր ժամանակի ամենահնառաձիգ զենքի՝ նետ ու աղեղի գյուտը, որը նրա ձեռքին մի կարևոր գործիք ու զենք է դառնում որսը հեռվից սպանելու, վիրավորելու, ինչպես և գիշատիչ կենդանիներից ու թշնամիներից պաշտպանվելու համար։ Հայաստանի նեոլիթյան

բնակատեղերից գտնվել են կայծքարից ու օբսիդիանից պատրաստված, երկու կողմից մշակված, սուր ու հռանկյունաձև նետի սլաքներ։

Նոր քարեդարյան մարդու խոշոր նվաճումներից մեկը հանդիսացավ վայրի կենդանիների ընտելացումը և անասնապահության սկզբնավորումը։ Մարդը ոչ միայն օգտագործում էր կենդանու միսը, կաթը, կաշին ու մորթին, այլև նրա բուրդը և մազը։ Հայաստանի նեոլիթյան բնակատեղերում, բացի ընտանի ոչխարի, այծի, եզան, խոզի ու շան ոսկորներից, գտնվել են նաև քարից ու ոսկրից պատրաստված իլիկի գլուխներ, հերուններ ու ասեղներ։ Այս իրերը ապացուցում են, որ Հայաստանում ապրող նեոլիթյան մարդը բուրդն ու մազը մանում էր թել ստանալու համար, որը նա օգտագործում էր հագուստներ հյուսելու և մորթե հագուստեղենի առանձին մասերն իրար միացնելու համար։

Նեոլիթի վերջում հատկապես կնոջ ջանքերով հանդես է գալիս նաև ձեռքի բրիչով մշակվող պրիմիտիվ երկրագործությունը։ Վերևում նշված բնակատեղերում գտնված ցորենի ու գարու մնացորդները, քարե ու ոսկրե բրիչները, մանգաղները, սանդերն ու աղորիքները հաստատում են, որ Հայաստանում երկրագործությունը առաջացել է մ. թ. ա. վեցերորդ հազարամյակում և նրա առաջին կենտրոններն են դարձել Արարատյան դաշտը, Արածանի գետի ստորին հովիտը, Հայոց ձորը Վասպուրականում և այլն։

Անասնապահությունը և երկրագործությունը հեղաշրջող դեր են կատարում նախնադարյան հասարակության կյանքում։ Մարդիկ հավաքչության և որսորդության միջոցով ձեռք բերվող պատահական, անկայուն սննդի աղբյուրներից, ստեղծում են իրենց համար սննդի համեմատաբար մշտական ու կայուն աղբյուրներ։ Անասնապահությունը և երկրագործությունը մեծ չափով նպաստում են նաև նստակեցությանը, մշտական բնակարանների կառուցմանը, մարդկանց ապրելակերպի, նրանց աշխարհայեցողության, հոգեբանության փոփոխմանը։

Նախնադարյան հասարակության տնտեսության և մշակույթի զարգացման մեջ հսկայական դեր է կատարում նաև Նեոլիթի շրջանում կավագործության կամ խեցեգործության առաջացումը։ Կավի ամանների հանդես գալը բարելավում է մարդկանց սնունդը և սննդամթերքների պահպանման գործը։ Հայաստանի նեոլիթյան բնակատեղերից գտնվել են կավի, ավազի ու հարդի խառնուրդից ձեռքով կոպիտ կերպով պատրաստված, վատ թրծ-

ված գորշ ու կավագույն թասեր, կճուճներ, դավեր և այլ սամանների բեկորներ։

Նեոլիթի վերջում առաջանում է նաև մթերքների միջտոհմային պարզ փոխանակությունը։ Հայաստանում միջտոհմային պարզ փոխանակության հիմնական նյութերից մեկը դառնում է աղը, քանի որ այն գոյություն չուներ բոլոր տոհմերի ապրած տերիտորիայում։

Հայաստանում փոխանակության կարևոր նյութեր էին նաև օբսիդիանը ու նրանից պատրաստված գործիքները։ Հատկապես Արագածի օբսիդիանը իր ծխագույն, երբեմն նաև կարմրավուն գույներով տարբերվում է այլ երկրների նույնանման քարատեսակներից, որը մեզ հնարավորություն է տալիս որոշելու նրա տարածման սահմանները։ Ոչ լրիվ տվյալներով, Արագածի օբսիդիանից պատրաստված գործիքներ են գտնվել Անդրկովկասի, Պարսկաստանի, Միջագետքի և Փոքր Ասիայի տարբեր մասերում։

Մայրական տոհմային համայնքի զարգացումը

Տնտեսության նոր բնագավառների հանդես գալը ավելի է խորացնում աշխատանքի բնական բաժանումը տղամարդկանց և կանանց միջև։ Կինը, բացի տնային աշխատանքներից, զբաղվում էր նաև երկրագործությամբ, անասնապահությամբ, բրդի մշակմամբ և այլն։ Մենդի մշտական և հիմնական միջոցներն արտադրվում էին կնոջ աշխատանքով, որովհետև որսորդությունը, որով հիմնականում զբաղվում էին տղամարդիկ, կախված էր պատահական հաջողությունից։

Նախնադարյան հասարակության ներսում ավելի է բարձրանում կնոջ դերը։ Վերին պալեոլիթում առաջացած մայրական տոհմային համայնքը լրիվ զարգացման է հասնում նեոլիթի շրջանում։ Արտադրության բոլոր միջոցները՝ հողը, անասունները, աշխատանքի գործիքները և այլն հանդիսանում էին տոհմի սեփականությունը։

Տոհմի ղեկավարման գերագույն մարմինը տոհմի ժողովն էր, որտեղ հավասար իրավունքներ ունեին տղամարդիկ և կանայք։ Տոհմի ժողովը վճռում էր տոհմի ներքին և արտաքին բոլոր կարևոր հարցերը, ընտրում և հրաժարեցնում էր տոհմի ավագին ռազմական առաջնորդին։

Ուշ նեոլիթում առաջանում է զույգային ամուսնությունը և զույգային ընտանիքը, որի ժամանակ նույնպես ամուսնությունը թույլատրվում էր տարբեր, ոչ արյունակից տոհմերի, անգամների միջև։

Նեոլիթի շրջանում արտադրողական ուժերի զարգացման հետևանքով զգալի չափով աճում է աղդաբնակչության թիվը։ Բազմամարդ տոհմերի անդամների մի մասը պարբերաբար բաժանվելով ստեղծում են նոր տոհմեր, որոնք բնակություն են հաստատում մայր տոհմից որոշ հեռավորության վրա գտնվող սակավաբնակ կամ անմարդաբնակ շրջաններում։ Տնտեսական ու մշակութային փոխադարձ կապերի, հարևան թշնամի տոհմերից համատեղ կերպով պաշտպանվելու, փոխադարձաբար իրար օգնելու անհրաժեշտությամբ արյունակից տոհմերը, ինչպես և էկզոգամ ամուսնությամբ իրար հետ կապված ոչ արյունակից տոհմերը միանալով կազմում են ցեղեր, իսկ ցեղերն իրենց հերթին երբեմն կազմակերպում են նաև դեռևս անկայուն ցեղային միություններ։

Ցեղերի առաջացումը մեծ չափով նպաստում է տնտեսական ու մշակութային դյուտերի, նորությունների արագ տարածմանը և յուրացմանը։ Առաջանում են նաև ցեղային լեզուները, որոնք հասկանալի էին ավելի շատ թվով մարդկանց։

Նախնադարյան մարդու բնության, բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ ունեցած միամիտ աշխարհայեցողությունից դեռևս պալեոլիթի շրջանում առաջանում և զարգանում է տոտեմիզմը, որը իր գոյությունը պահպանում է նաև նեոլիթի ժամանակ։ Ամեն մի տոհմ ուներ իր բուսական կամ կենդանական տոտեմը և կոչվում էր նրա անունով։ Նրա անդամները հավատում էին, որ իրենց տոհմը առաջացել է այս կամ այն բույսից կամ կենդանուց։ Ազգագրական և այլ տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում ապրող տոհմերի մոտ հիմնականում գոյություն են ունեցել կենդանական տոտեմներ, ինչպես ցուլը, եզը, ձին, վարազը, խոյը, այծը, շունը, եղջերուն, արծիվը, անդրդը, աղավնին, արագիլը, կռունկը, ծիծեռնակը, օձը և այլն։

Այդ ժամանակ մարդը, չկարողանալով բացատրել մահվան, քնի և բնության երևույթների պատճառները, սկսում է պաշտամունքի առարկա դարձնել բարի և չար ոգիներին։ Հայաստանում ապրող նախնադարյան մարդը ևս հավատում էր, որ մեռնելիս մարդու հոգին մարմնի հետ չի մահանում, այլ փոխադրվում է մի այլ աշխարհ։ Դրա համար հանգուցյալի հետ թաղում էին նրա զենքերը, զարդերը, ձին, գործիքներ, ամաններ, անասուններ, ուտելիք, ջուր և այլն։

2. ԷՆԵՈԼԻԹԸ ԵՎ ԲՐՈՆԶԵ ԴԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Էնեոլիթը Հայաստանում

Հայաստանը հանդիսացել է մետաղամշակության հնագույն վայրերից մեկը։ Դրան մեծ չափով նպաստել են պղնձի, կապարի, երկաթի, անագի հարուստ հանքերը։

Մետաղի մշակույթի իրացման առաջին ժամանակաշրջանը հանդիսանում է էնեոլիթը, այսինքն՝ պղնձե-քարե դարը։ Այն Հայկական լեռնաշխարհում տևել է մ. թ. ա. IV հազարամյակի կեսից մինչև III հազարամյակի վերջը։

Հայաստանում ապրող նախնադարյան մարդը նույնպես իր առաջին մետաղե գործիքները պատրաստել է մաքուր պղնձից։ Սակայն մաքուր պղնձից պատրաստված գործիքներն իրենց փափկության պատճառով չեն կարողանում արտադրության բնագավառից լրիվ դուրս մղել քարե գործիքներին։ Այդ պատճառով էլ էնեոլիթի ժամանակ ևս քարե գործիքները շարունակում են կարևոր դեր կատարել։

Հնագիտական պեղումների ընթացքում թե՛ Սովետական Հայաստանում և թե՛ Արևմտյան Հայաստանում հայտնաբերվել են մեծ թվով էնեոլիթյան բնակավայրեր։ Հատկապես բացառիկ նշանակություն ունեն Շենգավիթի, Աբովյանի, Էջմիածնի շրջանի Մոխրաբլուրի, Սև բլուրի, Թագավորանիստի (Կիրովական), Վանի, Կարինի, Բագրևանդի շրջաններում գտնվող բնակատեղերը։ Այդ վայրերում գտնվել են պղնձից պատրաստված կացիններ, ուրագներ, դանակներ, մանգաղներ, գնդասեղներ, ձուկ որսալու կարթեր, տեղի տերևաձև ծայրեր, ապարանջաններ, օղեր և այլն։ Մեծ արժեք ունեն Շենգավիթում և Քյուլթափայում գտնված պղընձե հարթ, կոթի անցքով կացինը, իսկ Գառնիի էնեոլիթյան շերտում՝ ականջավոր կացին ձուլելու քարե կաղապարները։ Այս գյուտերն ապացուցում են, որ Հայաստանում գտնված պղնձե իրերը ձուլվել ու պատրաստվել են տեղում։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Շենգավիթում հայտնաբերված տոհմային բնակարանները։ Դրանք բաղկացած են 6—8 մետր տրամագիծ ունեցող կլոր կացարաններից և հարակից քառանկյունի, իրար հետ կապված շինություններից, որոնց հիմքերը շարված են անմշակ քարով, պատերը՝ հում աղյուսով, իսկ տանիքները ծեփված են ցեխով։ Կլոր կացարանի կենտրոնում գտնվում է մի մեծ քար, որը հենարան է հանդիսացել կոնաձև տանիքի վերջավորությունն ամփոփող և նրա ծան-

բությունը պահպանող սյան համար։ Այս սյան մոտ գտնվում է պաշտամունքային օջախը, որն ունի իրար հետ կապված երեք բաժանմունք։ Էնեոլիթյան այսպիսի բնակարաններ գտնվել են նաև այլ վայրերում։

Պղնձե գործիքների հանդես գալը և քարե գործիքների հետագա կատարելագործումը նպաստում են Հայաստանի նախնադարյան հասարակության տնտեսական զարգացմանը։

Հայաստանի էնեոլիթյան գրեթե բոլոր բնակավայրերում հայտնաբերվել են մեծ քանակությամբ ոչխարի, այծի, կովի, շան, խոզի, ձիու և այլ ընտանի կենդանիների ոսկորներ։ Նույն բնակավայրերից հայտնաբերվել են նաև վայրի կենդանիների, հատկապես վայրի այծի, եղջերուի և ձկան ոսկորներ, որոնք ցույց են տալիս, որ էնեոլիթյան մարդը անասնապահության հետ միաժամանակ զբաղվում էր նաև որսորդությամբ ու ձկնորսությամբ։

Էնեոլիթի շրջանում գոյություն ունեցող երկրագործության մասին մեզ արժեքավոր տվյալներ են հասել Շենգավիթի պեղումներից։ Կլոր կացարանների հատակին և կավե մեծ ամանների մեջ գտնվել են ցորենի, գարու տարբեր տեսակների հատիկներ ու հասկեր, որոնք մոտ են տեղական վայրի տեսակներին։ Էնեոլիթյան տարբեր բնակատեղերից գտնվել են նաև զդալի թվով քարե մանգաղներ, կտրիչներ, սանդեր և աղորիքներ, որոնք օգտագործվել են հասկերը քաղելու, ծեծելու միջոցով հասկերից հատիկներն անջատելու, մանրացնելու և կոպիտ ալյուր ստանալու համար։

Սակայն եղած տվյալները ցույց են տալիս նաև, որ էնեոլիթի ժամանակ Հայաստանում երկրագործությունը գտնվում էր դեռևս զարգացման ցածր աստիճանի վրա։ Ցանքը կատարվում էր բնակավայրերին մոտիկ գտնվող դեռևս ափերի նեղ շերտերում, հողը մշակվում էր բրիչի ու փայտատի միջոցով, հացահատիկային սերմերը դեռևս վայրի տեսակներից էին։

Համեմատաբար ավելի բարձր զարգացման է հասնում կավագործությունը։ Հայաստանի էնեոլիթյան բնակավայրերում գտնվել են մեծ քանակությամբ լավ փայլեցված սև և բաց կարմրավուն գույնի կավե ամաններ և ամանների բեկորներ, որոնց վրա հաճախ կան երկրաչափական, բուսական և կենդանական զարդարանքներ ու նկարներ։ Հայտնաբերվել են նաև կավից պատրաստված կնոջ, եզան, ոչխարի, շան և թռչունների արձանիկներ։

Բրոնզե դարը Հայաստանում

Էնեոլիթին հաջորդում է բրոնզե դարը, որը Հայաստանում տևել է մեր թվականությունից առաջ II հազարամյակի ընկողքից մինչև X դարը։ Մաքուր պղինձը իր փափկության պատճառով երկար չի մնում գործածության մեջ։ Հետագայում մարդը պղնձի և անագի համաձուլվածքից ըստանալով ավելի ամուր մի այլ մետաղ՝ անագապղինձը կամ բրոնզը, սկսում է իր գործիքները պատրաստել դրանից։

Պատմական Հայաստանի տերիտորիայում չկա մի շրջան, որտեղ գտնված չլինեն բրոնզեդարյան հուշարձաններ։

Բրոնզե դարում սկսում են լայնորեն օգտագործման ենթարկվել Հայաստանի պղնձի, կապարի, ոսկու, արծաթի, անագի հանքերը։ Իր ժամանակի տեխնիկայի ուսումնասիրման տեսակետից բացառիկ արժեք ունեն պեղումների միջոցով հայտնաբերված Մեծամորի տարբեր մետաղների և Զոդի ոսկու հանքանյութի մշակման արտադրական համալիրները՝ հանքաքարի մանրացման, հարստացման հարմարանքներով, մետաղներ հալելու բազմաթիվ մեծ ու փոքր հնոց-ձուլարաններով։

Շատ հարուստ և լավ պահպանված բրոնզեդարյան իրեր են գտնվել հատկապես Լճաշենի, Ալթիկ տուֆի քարհանքի, Հառիճի և այլ վայրերի դամբարանադաշտերի պեղումներից։

Հայաստանում գտնված բրոնզե իրերի մեջ կան տարբեր տեսակի կացիններ, դրեր, դանակներ, ձուլածո սղոց, մանգաղներ, եղաններ, սանձեր, ասեղներ, հերուններ և տնտեսական գործածության այլ մանր առարկաներ։ Շատ են հատկապես զենքի տեսակները՝ սրերը, դաշույնները, սակրերը, նիզակի ծայրերը, նետասլաքները, գուրզերը, վահանները, սաղավարտները և այլն։ Հարուստ և բազմազան են նաև տղամարդկանց ու կանանց զարդարանքի առարկաները։

Մեզ են հասել նաև բրոնզից ու ոսկուց պատրաստված զգալի թվով դեղարվեստական իրեր։ Դեղարվեստական բացառիկ մեծ վարպետությամբ են պատրաստված Լճաշենից գտնված նոչերուի, թռչունների, ցլի, քարայծի, առյուծի բրոնզե արձանիկները։ Բրոնզե լայն գոտիները հաճախ զեղազարդված են օրսի, ռազմական ու կրոնական երթերի խմբային տեսարաններով, տարբեր կենդանիների, թռչունների, երկնային մարմինների, ռազմակառքերի նկարներով։ Ոսկերչական արվեստի նուրբ ու գեղեցիկ նմուշներ են Լճաշենի ու Տոլորսի դամբարաններից գտնված ոսկե ցանցիկեն պատյանիկները, հատիկավոր ուլունքները, դրոշմազարդ

գորտուկը, ղլանաձև փոքրադիր կնիքը, շղթայիկով զարդերը։ Կիրովականի դամբարանից հայտնաբերված ոսկե թասը նուրբ փորագրությամբ զարդարված է երեք դույզ առյուծներով։

Հայտնաբերված բրոնզե իրերը հիմնականում պատրաստված են քարե, կավե և այլ կաղապարներով ձուլելու եղանակով։ Բրոնզե սակրի, կացինի ու զարդարանքի առարկաների կաղապարներ են գտնվել Մեծամորում, Լենինականում, Կարմիր-բլուրում, Մուհանաթ-թափայում, Դվինում և այլ վայրերում։

Բրոնզե գործիքների հանդես գալը մեծ չափով բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը և նպաստում Հայաստանի նախնադարյան հասարակության տնտեսության բոլոր բնագավառների արագ զարգացմանը։

Զգալի չափով զարգանում է նաև երկրագործությունը։ Ընդարձակվում են ցանքատարածությունները, հատկապես հացահատիկային կուլտուրաների տարածությունները, բարելավվում են երկրագործության հետ կապված աշխատանքի պրոցեսները։ Բացի ցորենի, գարու և հաճարի մշակությունից, առաջանում է նաև խաղողի և պտղատու ծառերի մշակությունը։ Հայաստանը համարվում է խաղողի մշակության հնագույն հայրենիքներից մեկը։

Ցանքսերը և արոտավայրերը ոռոգելու, անասունները ջրելու համար Հայաստանի բրոնզեդարյան մարդը Արարատյան դաշտում, Արագածի և Գեղամա լեռների լանջերում կառուցում է ջրանցքների և առուների ամբողջական ցանցեր, որոնք սկիզբ էին առնում լեռնային աղբյուրներից։ Այդ աղբյուրների մոտ հայտնաբերվել են հսկա ձկան տեսք ունեցող քարակոթողներ՝ «վիշապներ», որոնք համարվել են ջրի պահապաններ։

Բրոնզե դարում մարդը հնարում է նաև լծկան անասունների ուժով գործող արորը և կամը, որով բարելավվում և ընդարձակվում է հերկը և հեշտացվում ու արագացվում է հացահատիկի կալսումը։ Նույն այս ժամանակ մարդը հնարում է նաև երկանիվ ու քառանիվ սայլը, ճամփորդական կառքը և ռազմակառքը։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Լճաշենի ու Գետաշենի դամբարաններից հայտնաբերված բարձրակող, ցածրակող, կամարակապ ծածկով, թանկարժեք կարմիր փայտից շինված երկանիվ, քառանիվ ամբողջական սայլերն ու կառքերը։ Արվեստի հիանալի նմուշներ են նաև Լճաշենից գտնված թեթև ռազմակառքերի բրոնզե մոդելները, որոնց քաշող զույգ ձիերի առջևից փախչում են եղնիկներ, իսկ թափքի վրա կանգնած են սպառազեն մարտիկներ։

Անասնապահության և երկրագործության զարգացման շնոր-

հիվ Հայաստանի լեռնային շրջաններում ապրող տոհմերն ու ցեղերը առավելապես սկսում են զբաղվել անասնապահությամբ, իսկ դաշտավայրերում բնակվողները՝ երկրագործությամբ։ Այս պատճառով անասնապահությունը և երկրագործությունը բաժանվում են իրարից, և տեղի է ունենում աշխատանքի առաջին խոշոր հասարակական բաժանումը։

Դամբարաններում և բնակավայրերում հայտնաբերված հազարավոր կավե ամաններն ու իրերը ցույց են տալիս, որ բրոնզե դարում Հայաստանում մեծ զարգացման էր հասել նաև կավագործությունը։ Հայտնաբերված իրերի մեջ կան բրուտի դրդի վրա պատրաստված, լավ թրծված, փայլարկված, նախշերով հարուստ թասեր, կճուճներ, սափորներ, գավեր, քամիչներ, ամաններ, խնոցիներ և այլն։ Այս անոթների մի մասը զեղազարդված է որսի, զոհաբերության խմբային տեսարաններով, տարբեր կենդանիների ու թռչունների նկարներով, բուսական ու երկրաչափական զարդերով։

Զգալի չափով զարգանում է նաև փայտամշակությունը, քարագործությունը, կաշեգործությունը, ջուլհակագործությունը և այլն։

Բրոնզե դարում զարգանում է նաև փոխանակությունը, որը տեղի է ունենում հեռավոր տոհմերի ու ցեղերի և նույնիսկ հեռավոր երկրների միջև։ Այս ժամանակ աղի հետ միասին փոխանակության կարևոր առարկաներ են դառնում նաև անասունը, բրոնզե գործիքները և զենքերը։ Փոխանակային կապի գլխավոր նյութը Հայաստանի համար անագն էր։

Հայրական տոհմը

Անասնապահության քոչվորային և կիսաքոչվորային բնույթը, հոտերը թշնամի ցեղերից և գիշատիչ կենդանիներից պաշտպանելու անհրաժեշտությունը, երկրագործության մեջ արորի կիրառումը և ֆիզիկական ավելի մեծ ուժ պահանջող աշխատանքների հանդես գալը պահանջում են տնտեսության այս բնագավառներում կնոջ աշխատանքը փոխարինել տղամարդու աշխատանքով։ Տղամարդը, տնտեսության բոլոր ճյուղերում դառնալով հիմնական արտադրողը, միաժամանակ հանդիսանում է հասարակության կենտրոնական դեմքը։

Մայրական տոհմը և մայրական իրավունքը, որոնք արդեն չէին համապատասխանում արտադրական նոր հարաբերություններին, վաղ բրոնզե դարում անհրաժեշտաբար փոխարինվում են հայրական տոհմով և հայրական իրավունքով, որի ժամանակ երեխաների արենակցությունը արդեն հաշվվում էր հոր գծով, և հայրը ի-

ռավունք էր ստանում իր ժառանգությունը թողնել երեխաներին։ Այնուհետև սահմանվում է, որ տոհմի արական անդամները պետք է մնան նույն տոհմում, իսկ իգական անդամները ամուսնանալուց հետո պետք է հեռանան տոհմից, իսկ նրանց երեխաները պետք է մտնեն իրենց հոր տոհմի մեջ։

Զույգային ամուսնության հիման վրա առաջանում է նահապետական ընտանիքը կամ գերդաստանը, որն իր մեջ ընդգրկում էր մոտիկ արյունակիցների մի քանի սերունդներ՝ ընտանիքի ավագը համարվող տղամարդու կամ նահապետի գլխավորությամբ։ Տոհմային ընտանիքներում աշխատանքը և արտադրված նյութական բարիքների յուրացումը ուներ կոլեկտիվ բնույթ, և շահագործումը միայն պատահական երևույթ էր։

Ցեղային կազմակերպությունը, որն առաջացել էր մայրական տոհմի ժամանակ, մեծ չափով ամրապնդվում և ուժեղանում է։ Արտաքին թշնամու դեմ համատեղ կերպով պաշտպանվելու անհրաժեշտությամբ ցեղերը միանալով կազմում են ավելի կայուն ցեղային միություններ։

Արոտավայրերի, անասունների և կողոպուտի համար մղվող միջցեղային կռիվներն ու ընդհարումները այս շրջանում սովորական երևույթ են դառնում։ Այդ կապակցությամբ էլ Հայաստանում ապրող ցեղերը ոչ միայն պարսպապատում են իրենց բնակավայրերը, այլև այդ բնակավայրերին մոտիկ բլուրների վրա և անառիկ վայրերում կառուցում են բերդաշեներ կամ կիկլոպյան ամրոցներ։ Նման ամրոցների պարիսպները, որոնք ունեն չորս և ավելի մետր հաստություն, շարված են միաշար կամ երկշար, անտաշ խոշոր քարերով և առանց շաղախի։ Նրանք ունեն նաև պաշտպանական աշտարակներ։ Ամրոցների ներսում կան բնակարանային բաժանումներ, երբեմն նաև թաքստարաններ, գետնուղիներ, ջրամատակարարման ավազաններ։ Նման հարուրավոր ամրոցներ կան Սևանա լճի ավազանում, Արարատյան դաշտում, Շիրակում, Սյունիքում և այլ շրջաններում։

Անասնապահության և հատկապես երկրագործության զարգացման հետևանքով, երբ փոխվում է նախնադարյան հասարակության տնտեսության հիմքը, դրա հետ միասին փոխվում են նաև նախնադարյան մարդու կրոնական հավատալիքները։ Բացի հնում գոյություն ունեցող կրակի, կենդանական ու բուսական տոտեմների պաշտամունքից, առաջանում է նաև արեգակի ու երկնային լուսատուների, հողի, ջրի, նախնիների «հոգուց» պաշտամունքը։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Մեծամորում հայտնաբերված

մեհյանը իր ատրուշանով և բազմաթիվ կուռքերի արձաններով։

Հայաստանի նախնադարյան հասարակության կրոնական հավատալիքների ու արվեստի ուսումնասիրման տեսակետից շատ արժեքավոր են Արագածի, Գեղամա լեռների, Սյունիքի լեռնալանջերում գտնված ժայռապատկերները, որտեղ պատկերված են ընտելացած շների մասնակցությամբ, զինված մարդկանց կռվից վայրի ու գիշատիչ գազանների կոլեկտիվ շուրջկալով կատարվող որսորդական տեսարաններ, պաշտամունքային, ծիսական շուրջպարեր և այլն։ Ուշադրավ է, որ պատկերների մեջ կան նաև եզներով լծված երկանիվ և քառանիվ սայլեր։ Ուսումնասիրողները գտնում են, որ այդ ժայռապատկերներից հները, հավանաբար, ստեղծվել են նոր քարե դարում, իսկ նորերը՝ բրոնզե դարում։

Ինչպես այլ երկրներում, նույնպես և Հայաստանում ապրող տոհմերը ունեցել են իրենց տոհմային գերեզմանատները։ Դամբարանների պեղումներից երևում է, որ թաղումը կատարվել է ննջեցյալներին կարասների, քարարկղերի և մեծ սալաքարերից պատրաստված տնականման դոլմենների մեջ տեղավորելով։ Կիրառվել է նաև դիակիզում։

3. ԵՐԿԱԹԵ ԴԱՐԻ ՍԿԻԶԲԸ ԵՎ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Երկաթե դարի սկիզբը Հայաստանում

Երկաթի մշակությունը Հայաստանում սկսվել է մեր թվականությունից առաջ X դարից։ Հայաստանի շատ շրջաններում պեղված հին բնակավայրերից և դամբարաններից հայտնաբերվել են զգալի քանակությամբ երկաթե զանազան իրեր՝ բահեր, քլունգներ, կացիններ, եղաններ, մանգաղներ, դանակներ և այլն։ Շատ են նաև դենքերը, որոնց մեջ կան բրոնզե երախակալներով դաշույններ, սրեր, թրեր, տապարներ, նիզակի և նետի ծայրեր։ Զենքերի մի մասը իր վրա ունի զարդաբանական։

Երկաթի մշակությունը մարդկային հասարակության պատմության մեջ հեղաշրջող դեր է կատարում։ Երկաթե գործիքները մինչ այդ չտեսնված չափով բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը և ընդլայնում արտադրության բոլոր ճյուղերը։

Համեմատաբար արագ է զարգանում երկրագործությունը։ Եթե երկաթե սուր կացինը հնարավորություն է տալիս անտառները կտրատելու միջոցով մեծ չափով ավելացնել ցանքատարածությունները, ապա երկաթե խոփով գործող արորը հեղաշրջում է առաջ

բերում երկրագործության մեջ։ Բացի ցորենի, գարու և հաճարի մշակությունից, Հայաստանում սկսվում է նաև կորեկի, ոսպի, սիսեռի, յուղատու հատիկներից՝ կտավատի, քնջութի մշակությունը։ Զգալի չափով զարգանում է նաև այգեգործությունն ու պտղաբուծությունը։ Գրավոր և հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ Հայաստանում ապրող ցեղերը արդեն այս ժամանակ ծանոթ են եղել գինու և բուսական յուղի պատրաստմանը։

Այս շրջանում զարգանում են նաև արհեստագործության ճյուղերը։ Արհեստները ավելի նեղ մասնագիտացման են ենթարկվում, կատարելագործվում են շինարարության, կառուցողական գործի տեխնիկան ու արվեստը։ Դեռևս ուշ բրոնզե դարում արհեստավորները մասնագիտանալով մի որևէ արհեստի մեջ, աստիճանաբար կտրվում են գյուղատնտեսությունից։ Երկաթե դարի սկզբում տեղի է ունենում աշխատանքի հասարակական երկրորդ խոշոր բաժանումը՝ արհեստագործությունը բաժանվում է երկրագործությունից։

Նախնադարյան համայնական կարգերի քայքայումը

Բրոնզե և երկաթե դարերում արտադրողական ուժերի զարգացումը և դրա հիման վրա առաջացած աշխատանքի հասարակական առաջին և երկրորդ բաժանումները սկսում են քայքայել նախնադարյան-համայնական հասարակությունը։

Անասունների հոտերը, որոնք սկզբում պատկանում էին տոհմերին, հավասարաբար միջին բրոնզե դարից դառնում են ընտանիքների ավագների մասնավոր սեփականությունը։ Սրանց մասնավոր սեփականությունն են դառնում նաև անասունների փոխանակության միջոցով ձեռք բերված իրերը։ Աշխատանքի հասարակական երկրորդ բաժանումից հետո մասնավոր սեփականության զարգացումը ավելի մեծ չափեր է ընդունում. անձնական զենքերի, զարդարանքների և անասունների հետ միասին մասնավոր սեփականություն են դառնում նաև աշխատանքի գործիքները և նյութական բարիքները։

Տնտեսության բոլոր ճյուղերի ընդլայնումը և աշխատանքի արտադրողականության բարձրացման շնորհիվ հավելյալ կենսամթերքների ստացման հնարավորությունը, պայմաններ են ստեղծում շահագործման և ստրկության առաջացման համար։ Եթե առաջ պարտված և գերեվարված թշնամուն սպանում կամ որդեգրում էին հաղթողների տոհմում, ապա այժմ նրան ստրկացնում են։ Ստրկատիրությունը, որն սկզբում միայն պատահական երևույթ էր

և ուներ նահապետական բնույթ, ուշ բրոնզե դարում և երկաթե դարի սկզբում ավելի է տարածվում։ Սրանով մարդկային հասարակության ներսում առաջանում է դասակարգային առաջին խոշոր բաժանումը. առաջ են գալիս ստրկատերեր և ստրուկներ, շահագործողներ և շահագործվողներ։

Պեղված դամբարանները ցույց են տալիս, որ ուշ բրոնզե դարում Հայաստանում ևս ստրկությունը որոշ չափով տարածված երևույթ է եղել։ Մարտունու շրջանի մի դամբարանում սայլի վրա պառկած տոհմապետի կամ ռազմական առաջնորդի դիակի ոտքերի տակ շարված ձևով գտնվել են դլխատված 5 մարդկանց գլուխներ ու կմախքներ։ Սպանված կամ առանց սպանելու իրենց տերերի հետ թաղված մարդկանց կմախքներ են գտնվել նաև Սյունիքում, Դուգարքում։

Մասնավոր սեփականության առաջացման հետևանքով աստիճանաբար հարստությունը սկսում է կուտակվել տոհմի ազդեցիկ անդամների՝ ավագների և ռազմական առաջնորդների, ձեռքում։ Կողոպուտի նպատակով մղված միջցեղային կռիվները ավելի ևս ուժեղանում և ամրապնդում են տոհմական ավագանու տնտեսական կարողությունը և իշխանությունը։ Տոհմի ներսում առաջանում են հարուստներ և աղքատներ։ Նահապետական ընտանեկան համայնքը քայքայվելով առաջանում են ավելի փոքր ընտանիքներ։

Մասնավոր սեփականության վրա հիմնված ընտանիքի հանդես գալը, բնակչության աճող խտությունը և տարբեր տոհմերի անդամների մեջընդմեջ իրար խառնվելը, տոհմի տերիտորիայում ստրուկների շատանալը վերացնում են տոհմային համայնական հողատիրությունը, հողի կոլեկտիվ մշակումը և տոհմական համայնքը վերածվում է գյուղական համայնքի։

Փոխադարձ տնտեսական-մշակութային կապերի և արտաքին թշնամու դեմ համատեղ պայքարելու անհրաժեշտությամբ սկզբում առաջանում են ցեղային միությունները, իսկ հետագայում սրանց ձուլումից կազմավորվում է ժողովուրդը՝ մի միասնական տերիտորիայով ու լեզվով։ Ժողովուրդների մեծ մասի կազմավորումը տեղի է ունեցել տոհմատիրական կարգերից դասակարգային հասարակության անցման շրջանում։ Այս ժամանակաշրջանում առաջ են գալիս ժողովրդական հանրաժողովը, խորհուրդը և ժողովրդի ղեկավարման պաշտոնը։ Աստիճանաբար ձևավորվում է նաև պետությունը, որը մի գործիք է դառնում իշխող դասակարգերի ձեռքին՝ շահագործվող դասակարգերին ճնշելու և հպատակության մեջ պահելու համար։

ԳԼՈՒԽ II

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Նաիրի երկիրը

XIII—XIV դարերում մ. թ. ա. Վանա լճի շրջակայքում և նրանից դեպի հարավ ու արևմուտք ընկած ընդարձակ տարածությունների վրա ապրում էին խուրրիտական-ուրարտական բազմաթիվ ցեղեր, որոնց զբաղեցրած տերիտորիան ասորեստանյան արձանագրությունների մեջ անվանվում է Նաիրի երկիր։

Նաիրին առաջին անգամ հիշատակված է Ասորեստանի Սալմանասար I (1280—1261) թագավորի մի արձանագրության մեջ, որտեղ նա հայտնում է, որ դեպի հյուսիս կատարած իր արշավանքի ժամանակ, ի թիվս այլ երկրների, նվաճել է նաև Նաիրի երկիրը։

Հետևելով իր հորը, Թուկուլթի-Նինուրտան (1261—1239) նույնպես մի արշավանք է կատարում Նաիրի երկրի վրա, որտեղ նրա դեմ դուրս են գալիս 40 ցեղերի առաջնորդներ կամ ցեղապետեր, որոնք ասորեստանյան արձանագրության մեջ անվանված են «թագավորներ»։

Նաիրի երկրի մասին ավելի մանրամասն և հետաքրքիր տեղեկություններ է տալիս Թիգլաթպալասար II-ը (1115—1077), որը երեք արշավանք է կատարել այս երկրի վրա։ 1111 թվականին Թիգլաթպալասարը մեծ զորքով ու ռազմակառքերով մտնում է Նաիրի երկիրը, որը նա անվանում է «ընդարձակ, հպատակություն չիմացող և անծանոթ երկիր»։ Թիգլաթպալասարը հայտնում է, որ ճակատամարտում հաղթել է Նաիրի երկրի 23 և նրանց օգնության եկած 60 «թագավորների», այսինքն՝ ցեղային առաջնորդների, ջարդել է նրանց 120 ռազմակառքերը, դրավել, ավերել ու այրել է նրանց բնակավայրերը, կողոպտել ու տարել է նրանց անասունների

երամակները և երկրագործական անթիվ ունեցվածքը։ Նա հայտնում է նաև, որ ցեղային առաջնորդների որդիներին պատանդ է վերցրել և նրանց վրա տարեկան 12000 ձի և 2000 խոշոր եղջերավոր անասուն հարկ է նշանակել։

Ի հիշատակ նաիրյան ցեղերի դեմ տարած իր հաղթանակի՝ Թիգլաթպալասարը ճակատամարտի վայրում՝ Մանաղկերտի դաշտում՝ մի արձանագրություն է թողել, որը Հայաստանի տերիտորիայում մինչև այժմ հայտնաբերված ամենահին արձանագրությունն է։

Դատելով ասորեստանյան արձանագրությունների տվյալներից, XIV—X դարերում մ. թ. ա. Նաիրի երկրի ցեղերը գտնվում էին տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հասարակության անցման շրջանում։ Թեև այդ ցեղերի մոտ ցեղապետի պաշտոնը արդեն ժառանգական էր, բայց և նրանց մոտ դեռևս գոյություն չուներ միասնական ցեղային միություն։ Նաիրի երկրում այս ժամանակ ավելի շուտ գոյություն ուներ ցեղերի համադաշնակցություն, որի կազմի մեջ մտնում էին բազմաթիվ ցեղեր, երբեմն նաև փոքր ցեղային միություններ։

Նաիրի երկրի մասին մեզ կարևոր տեղեկություններ է տալիս նաև Ասսուրնազիրպալ II (883—859) թագավորի տարեգրությունը։

Իրար հաջորդող չորս արշավանքների ընթացքում Ասսուրնազիրպալը, դաժան կերպով ճնշելով նաիրյան ցեղերի դիմադրությունը, գրավում և ավերում է նրանց քաղաքներն ու բնակավայրերը և ծանր հարկեր նշանակում։ Նա հայտնում է. «Նաիրի երկրում 250 քաղաք իրենց զորավոր պարիսպներով ավերեցի, քանդեցի, ավերված ու խոպան երկրի վերածեցի»։

Ասսուրնազիրպալը սահմանամերձ քաղաքներում բնակեցնում է ասորեստանյան գաղթականներ, թողնում է պահակազորք և իր գրաված առանձին երկրամասերում տեղական ցեղային առաջնորդների փոխարեն նշանակում է ասորեստանցի կառավարիչներ։

Իր տարեգրության մեջ Ասսուրնազիրպալը շատ հաճախ հիշատակում է, որ Նաիրի երկրից ինքը տարել է մեծ քանակությամբ գերիներ, ձիեր, ջորիներ, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, հացահատիկ, գինի, պղինձ, բրոնզ, կապար, անագ, ոսկի, արծաթ, պղնձե և բրոնզե ամաններ, կաթսաներ, գործված հագուստներ և այլն։

Արտադրողական ուժերի զարգացման և նրա հետ կապված առանձին ցեղերի միջև տնտեսական-կուլտուրական սերտ կապերի առաջացման, ինչպես և Ասորեստանի դեմ համատեղ կերպով պայ-

քարելու անհրաժեշտության հետևանքով XI—X դարերում Նաիրի երկրում նախկին ցեղային դաշնակցության կամ փոքր ու թույլ ցեղային միությունների փախարեն առաջանում են մի քանի ուժեղ, աստիճանաբար պետական միավորումների վերածվող ցեղային միություններ, ինչպես, օրինակ, Ուրարտուի, Դայանիի, Մուսասիրի, Խուրուշկիայի ցեղային միությունները։

Ասորեստանի դեմ մղվող պատերազմներն ու միջցեղային կռիվները ոչ միայն մեծ չափով ամրապնդում են ցեղային միության և ռազմական առաջնորդների ժառանգական իշխանությունը, այլև նպաստում հարստության կուտակմանը նրանց ձեռքում։ Մասնավոր սեփականության և դուրքային անհավասարության հիման վրա ցեղի ներսում առաջացած շերտավորման, ինչպես և ստրկատիրության և շահագործման առաջացման հետևանքով նաիրյան ցեղերի մոտ շատ ավելի վաղ, քան Հայկական լեռնաշխարհի մյուս ցեղերի, քայքայվում են տոհմատիրական կարգերը և առաջանում է դասակարգային հասարակությունը, որի հիման վրա էլ կամրավորվում է պետությունը։

Ուրարտական պետության առաջացումը

IX դարի կեսին (մ. թ. ա.) Վանա լճի շրջանում կազմավորվում և պատմության թատերաբեմ է իջնում Հայկական լեռնաշխարհի ամենահնագույն պետությունը, որը ասորեստանյան արձանագրությունների մեջ անվանվում է Ուրարտու, իսկ Աստվածաշնչում՝ Արարատի երկիր։

Ուրարտացիները իրենց պետության կենտրոնական մասը անվանում էին Բիաինիլի։ Նրանց մայրաքաղաքն էր այժմյան Վանը, որը կոչվում էր Տուշպա։ Պատմության մեջ ընդունված է այս պետությունը ասորեստանյան ձևով անվանել Ուրարտու։

Ուրարտական պետության մասին մեզ կարևոր տեղեկություններ են տալիս ասորեստանյան և, հատկապես, ուրարտական սեպագիր արձանագրությունները։ Մինչև այժմ հայտնաբերվել է ավելի քան 400 ուրարտական արձանագրություն։

Ուրարտուի պատմության ուսումնասիրության համար շատ կարևոր աղբյուր են նաև Վանի, Թուշրակ-կալայի, Արմավիրի, Կարմիր բլուրի և Արին-բերդի պեղումների ժամանակ գտնված հնագիտական նյութերը։

Ուրարտական պետությունը հզորության ժամանակ իր սահմանների մեջ հիմնականում ընդգրկել է պատմական Հայաստանի տերիտորիան։ Նրա բնական սահմաններն են եղել արևելքից Ուրմիո լիճը, արևմուտքից՝ Եփրատ գետը, հյուսիսից՝ Փոքր Կովկասը և հարավից՝ Հայկական Տավրոսը։

Ուրարտուն «Ուրուատրի» ձևով առաջին անգամ հիշատակված է XIII դարի սկզբում՝ Սալմանասար I-ի մի արձանագրության մեջ։ Սալմանասարը հայտնում է, որ երեք օրում նվաճել է Ուրարտուն իր ութ երկրով և 51 բնակավայրով, և որ նա այնտեղից տարել է գերիներ ու հարուստ ավար։

Ուսումնասիրություններից երևում է, որ XIII—X դարերում (մ. թ. ա.) Ուրարտուն եղել է Նաիրյան ցեղային դաշնակցության մեջ մտած փոքր ցեղային միություններից մեկը։

«Ուրարտու» անվանումը, հին «Ուրուատրի» ձևի փոխարեն, առաջին անգամ հիշատակված է Ասսուրնազիրպալ II-ի արձանագրության մեջ։ Այնտեղ նշված է, որ ասորեստանցիք նվաճել են բոլոր երկրները՝ «Սուբնատ գետի (Ջերենե-սու) ակունքներից մինչև Ուրարտու երկիրը»։

Այս վկայությունից հետևում է, որ IX դարի առաջին կեսում (մ. թ. ա.) Ասսուրնազիրպալի դեպի Նաիրի երկիրը կատարած չորս ավերիչ ու կողոպտիչ արշավանքներից զերծ էր մնացել Ուրարտուի տերիտորիան։ Այս հանգամանքը, մի կողմից, ապահովում է ուրարտական ցեղային միության տնտեսական-հասարակական կյանքի բնական զարգացումը, մյուս կողմից, ուրարտական ռազմա-ստրկատիրական ավազանու համար ստեղծում է տնտեսական-քաղաքական խոշոր գերակշռություն՝ Նաիրյան ցեղային դաշնակցության մեջ։ Ասորեստանցիների կողմից խիստ կերպով կողոպտված և ծանր հարկերի տակ ընկած Նաիրյան ցեղերը, որոնք վաղուց իրար հետ կապված էին տնտեսական, լեզվական, կուլտուրական և ռազմա-քաղաքական կապերով, իրենց ուժերը արագ կերպով համախմբում են Ուրարտուի շուրջը։ Ուրարտական ռազմա-ստրկատիրական ավազանին, գլխավորելով Նաիրյան ցեղերի միավորումը, IX դարի առաջին կեսին (մ. թ. ա.) ստեղծում է կենտրոնական պետություն։

Ուրարտական պետության հիմնադիրը և նրա առաջին թագավորը դառնում է Արամը (մոտ 860—843)։

Ասորեստանը հենց սկզբից փորձում է վճռական հարված հասցնել նորաստեղծ Ուրարտական պետությանը։ Իր թագավորության առաջին տարում Սալմանասար III-ը (859—825) մեծ ուժե-

րով հարավից մի արշավանք է կատարում Ուրարտուի վրա և գրավում, կողոպտում ու ավերում է սահմանամերձ Սուգունիա բերդաքաղաքը, 14 այլ բնակավայրեր և հասնում «Նաիրի ծովը» (Վանա լիճը)։ Երկու տարի հետո Սալմանասարը հյուսիս-արևմուտքից հարձակվելով Ուրարտուի վրա, մոտենում և պաշարում է թագավորանիստ քաղաք Արգաստկուն, որի մոտ տեղի ունեցած ուժեղ ճակատամարտում ուրարտացիները պարտվում են։ Դրանից հետո ասորեստանցիներ դրավում ու ավերում են Արգաստկու քաղաքը և Արամալի երկրամասի բազմաթիվ բնակավայրեր։

848 թվականին Սալմանասարը մի երրորդ արշավանք է կատարում Ուրարտուի վրա, որի մասին նա իր արձանագրության մեջ նշում է շատ համառոտ կերպով. «Ուրարտացի Արամի քաղաքները մինչև Եփրատ գետի (Արածանիի) ակունքը ավերեցի, քանդեցի, հրով այրեցի»։

Սալմանասարը Ուրարտուի վրա կատարած արշավանքներին շատ կարևոր նշանակություն տալով Սուգունիա, Արգաստկու քաղաքների գրավման տեսարանները քանդակել է տվել Բալավաթի իր պալատի բրոնզե դռների վրա, որոնք այժմ գտնվում են Բրիտանական թանգարանում։ Այդ բարձրաքանդակները կարևոր պատմական և ազգագրական հուշարձաններ են, որովհետև դրանք որոշ գաղափար են տալիս ուրարտացիների մարդաբանական տիպի և նրանց քաղաքների ու ռազմական տեխնիկայի մասին։ Բարձրաքանդակներից երևում է, որ Սուգունիան և Արգաստկուն կառուցված են եղել բլուրների վրա, ունեցել են պարիսպներ ու աշտարակներ։

Ուրարտական պետության ամրապնդումը

833 թվականի չորրորդ արշավանքի ժամանակ ասորեստանցիների դեմ դուրս է գալիս Արամին հաջորդած Սարդուր I-ը (835—825), որին ասորեստանցիք կոչում էին Սիդուր։ «Ուրարտուի կառավարող Սիդուրը,—ասված է Սալմանասարի արձանագրության մեջ,—երբ այդ մասին լուր ստացավ, իր մեծաթիվ զորքերի ուժին վստահեց և շարժվեց իմ դեմ ճակատամարտ տալու համար։ Ես պատերազմեցի նրա դեմ և հաղթեցի նրան»։

Վանի միջնաբերդում հայտնաբերվել է Սարդուր I-ի ասորեստանյան լեզվով թողած և բովանդակությամբ միանման երեք արձանագրություն, որոնց մեջ նա հայտնում է, որ այստեղ բերդ է կառուցել։ Այս արձանագրությունների հիման վրա ուսումնասիրողների մեծ մասը գտնում է, որ Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայի (Վանի) հիմնադիրը եղել է Սարդուրը։

Նշված արձանագրությունների մեջ Սարգուրը իրեն անվանում է «Մեծ արքա, հզոր արքա, բազմությունների արքա, Նաիրի երկրների արքա, արքա, որին ոչ մի թշնամի չի հաղթել», և այլ նման տիտղոսներով։ Նույն տեղում նա հայտնում է նաև, որ «բոլոր թագավորներից հարկեր առացա»։

Սարգուրին տրվող վերոհիշյալ տիտղոսները, նրա մեծաթիվ զորք ունենալը և «բոլոր թագավորներից» հարկեր գանձելը ցույց են տալիս, որ IX դարի երկրորդ կեսում Ուրարտական պետությունը զգալի չափով ուժեղացել էր և իրեն ապահով էր զգում Ասորեստանի հնարավոր արշավանքներից։

Ուրարտական պետությունը ավելի մեծ չափով ամրապնդվում, ուժեղանում և ընդարձակվում է Իշպուինի թագավորի (825—810) ժամանակ։

Ուրարտական զորքերը, Իշպուինիի և նրա որդու՝ Մենուայի ղեկավարությամբ նախ նվաճում և իրենց պետությանն են միացնում Վանա և Ուրմիայի լճերի միջև ընկած երկրամասերը և Մուսասիր քաղաքը։ Այս քաղաքը, որը գտնվում էր Վանա լճից դեպի հարավ-արևելք և իր բնական դիրքով շատ լավ էր պաշտպանված, դառնում է Ուրարտուի վարչական, կրոնական խոշոր կենտրոններից մեկը։

Ուրարտացիները, այստեղից հաղթականորեն շարժվելով դեպի հարավ, նվաճում են նաև Ուրմիա լճի հարավային ափին գտնվող, Ասորեստանին սահմանակից և նրա գերիշխանությանը հնազանդված Մաննա երկրի մի մասը։ Նույն այս ժամանակ ուրարտացիները, նվաճելով նաև Վանա լճից դեպի հյուսիս-արևելք ընկած տերիտորիաները, Ալաշկերտի դաշտը և նրա շուրջը գտնվող ցեղային երկրները, իրենց պետության հյուսիսային սահմանները հասցնում են դրեթե Հայկական պարը։

Իշպուինին զբաղվում է նաև շինարարական աշխատանքներով։ Նա Տուշպայում և նրա շրջակայքում կառուցում է ամրոցներ, տաճարներ, սրբատեղիներ և այլն։

2. ՈՒՐԱՐՏՈՒՆ ԻԲՐԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՀԶՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Մենուան և Ուրարտական պետության հզորացումը

IX դարի վերջից (մ. թ. ա.) Ուրարտուն դառնում է Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունը։ Այդ հզորությունն սկսվում է Մենուայի (810—786) թագավորության սկզբից և տևում է մոտ 70 տարի։ Դա մի կողմից Ուրարտուի ներքին սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման, իսկ

մյուս կողմից հզոր ու աշխարհակալ Ասորիստանի ժամանակավոր թուլացման հետևանք էր։

Մենուայի թագավորության ժամանակ ուրարտացիները բոլոր ուղղություններով խոշոր նվաճումներ են կատարում և ընդարձակում իրենց պետության սահմանները։

Մենուան նախ մի քանի արշավանքներով նվաճում է Ասորիստանին ենթակա և նրան սահմանակից Մաննա, Բուշտու, Պարսուա երկրները։

Մենուան իր հաջորդ ռազմական արշավանքներն ուղղում է դեպի հարավ-արևմուտք, Եփրատի միջին հոսանքի շրջանում գտնվող Ասորեստանի տիրապետությունների դեմ։ Ուրարտացիք Տարոնը, Արածանիի հովիտը, Ծոփքը գրավելուց հետո հասնում են Եփրատ գետին և անցնելով այն, նրա արևմտյան ափին նվաճում են նաև Մելիտինեի (այժմյան Մալաթիա) խեթական փոքրիկ թագավորությունը։

Մենուայի ժամանակ ուրարտացիները անցնելով Հայկական պարը, հասնում են Արաքս գետին և նվաճում Արարատյան դաշտի մեծ մասը, որտեղ բնակվում էին բազմաթիվ ցեղեր։ Մենուան առաջինն էր, որը գնահատեց Արարատյան դաշտի տնտեսական խոշոր նշանակությունը՝ Ուրարտական պետության հետագա հզորացման համար։ Արարատյան դաշտում իր նվաճումներն ամրապնդելու և հենակետ ստեղծելու նպատակով Մենուան Արաքսի այ ափին, այժմյան Դաշբուռուն գյուղի մոտ կառուցում է մի քաղաք— ամրոց, որը նրա անունով կոչում է Մենուախինիլի։ Նա այստեղ ոչ միայն նշանակում է կառավարիչ, թողնում է կայազոր և փոխադրում զգալի թվով ուրարտացի գաղթականներ, այլև նրանց համար կառուցում է տաճար, զորանոցներ և բնակարաններ։

Մենուան իր թագավորության վերջում մի քանի արշավանքներ է կատարում նաև դեպի հյուսիս-արևմուտք՝ Դիաուեխի (ասորեստանյան Դայանի, հայկական Տայք) երկրի դեմ ցեղային միության դեմ։ Մենուան իր արշավանքների ժամանակ հաղթելով Դիաուեխի երկրի «թագավորին», գրավում է նրա մայրաքաղաք Շաշիլուն և հասնում մինչև Օլթի գետ։ Դիաուեխի երկրի «թագավորը» ստիպված է լինում ընդունել Մենուայի գերիշխանությունը, նրան հարկ վճարել և վերադարձնել Ուրարտուից փախած ստրուկներին։

Մենուան իր պետության սահմաններն ընդարձակելու հետ միասին խոշոր աշխատանք է կատարում նաև երկրի տնտեսական կյանքի զարգացման ուղղությամբ։ Նա Ուրարտական պետության

տարբեր մասերում և, հատկապես, նրա կենտրոնական մասում կառուցում է բազմաթիվ ջրանցքներ, քաղաքներ, բերդեր, պալատներ, տաճարներ, սրբատեղիներ, տնկում է խաղողի և պտղատու ծառերի այգիներ և այլն։

Մենուայի շինարարական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Վանում նրա կառուցած նշանավոր ու հոյակապ ջրանցքը, որը հետագայում հայերը վերագրել են Ասորեստանի թագուհի Շամիրամին և կոչել «Շամիրամի ջրանցք», որը այժմ էլ գործում է և ոռոգելու ու խմելու ջուր է մատակարարում Վան քաղաքին ու նրա շրջակայքի գյուղերին։ Ջրանցքը սկիզբ է առնում հոշաբ գետից 5 կիլոմետր հարավ գտնվող լեռան ստորոտից բխող աղբյուրներից։ Նա ունի 70 կիլոմետր երկարություն։ Ջրանցքը տեղ-տեղ անցնում է լեռնալանջերով, փորված ժայռերի միջով, ցածրագիր հատվածներում՝ հսկայական քարերից կառուցված և 15—20 մետր բարձրություն ունեցող լայն ու անշաղախ պատերի վրայով։

Արգիշտի I-ի և Սարդուր II-ի նվաճումները

Մենուային հաջորդում է նրա որդին՝ Արգիշտի I-ը (786—764), որի ժամանակ Ուրարտական պետությունը հասնում է իր քաղաքական և ռազմական հզորության ամենաբարձր աստիճանին։

Արգիշտի I-ը իր թագավորության տարիների մեծ մասը անց է կացնում ռազմական արշավանքների մեջ, որոնց ամփոփումը նա տվել է Վանի ժայռի վրա փորագրված «Խոռխոռյան» կոչվող նշանավոր տարերգության մեջ։

Արգիշտին իր գահակալության սկզբում մի խոշոր արշավանք է կատարում Դիաուեխի երկրի վրա, որը, հավանաբար Մենուայի մահվանից հետո դուրս էր եկել Ուրարտուի գերիշխանությունից։ Ուրարտական զորքը ճանապարհին ընկած ամրոցները, բնակավայրերը կողոպտելով ու ավերելով, հասնում է մինչև Զդրը լճի ափերը և հարկադրում երկրի «թագավորին» կրկին ընդունելու Ուրարտուի գերիշխանությունը։ Արգիշտին նվաճում է նաև Էրիախի երկիրը (Շիրակ), և այնտեղից տանում ավար ու գերիներ։

Հետևելով հոր քաղաքականությանը, Արգիշտին մեծ ուշադրությամբ ու եռանդով աշխատում է ամրապնդել Ուրարտուի տիրապետությունը Արարատյան դաշտում և տարածվել դեպի հյուսիս։ Իր թագավորության երրորդ և հինգերորդ տարիներին կատարած երկու արշավանքների ընթացքում նա անցնելով Արաքս գետը գրավում է Արարատյան դաշտի մնացած մասը և շարունակելով

նվաճումները, հասնում է մինչև Սևանա լճի հյուսիս-արևելյան ափը։

Արգիշտին իր թագավորության չորրորդ տարում արշավում է դեպի հարավ-արևմուտք՝ վերանվաճում Սոփքը և Մելիտինեի խեթական թագավորությունը, իսկ այնուհետև գրավում Հյուսիսային Ասորիքի մի շարք շրջաններ։

Արգիշտի I-ի գահակալության ժամանակ գերիշխանության համար ուժեղ պայքար է սկսվում Ուրարտուի և Ասորեստանի միջև, որը ի վերջո ավարտվում է Ուրարտուի հաղթանակով։ Բազմաթիվ արշավանքներից ու ճակատամարտերից հետո Արգիշտին ոչ միայն վերանվաճում է Ասորեստանի օգնությամբ ապստամբած Մաննա, Բուշտու, Պարսուա երկրները և հասնում Դիալա գետի միջին հոսանքին, այլև, հաղթելով ասորեստանյան զորքին, ներխուժում է բուն Ասորեստան և այնտեղից տանում հարուստ ավար ու տասնյակ հազարավոր գերիներ։

Արգիշտին զբաղվում է նաև շինարարական աշխատանքներով։ Նա իր գահակալության հինգերորդ տարում, այսինքն՝ 782 թ. մ. թ. ա. Երևանի հարավ-արևելյան շրջանում, Արին-բերդ կոչվող բլրի վրա կառուցում է մի հզոր քաղաք—ամրոց և այն անվանում Էրեբունի։ Պեղումների ժամանակ այստեղ հայտնաբերված, գրեթե միանման, երկու արձանագրություններով Արգիշտին ազդարարում է.

«Խալդ աստծո մեծությամբ Արգիշտի, որդի Մենուայի, այս հզոր քաղաք—ամրոցը կառուցեցի. նրա համար անուն սահմանեցի Էրեբունի, Բիաինիլի երկրի հզորության և թշնամական երկրների սարսափեցման ու խաղաղեցման համար»։

Գիտականորեն ապացուցված է, որ Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի անունը առաջացել է այս ամրոցի Էրեբունի անունից։

Արարատյան դաշտում, Արաքսի ձախ ափին Արգիշտի I-ը իր անունով կառուցում է նաև մի այլ քաղաք—ամրոց՝ Արգիշտիխինիլին, որին հետագայում հայերը վերանվանում են Արմավիր։ Նա այս և Էրեբունի քաղաք-ամրոցներում և նրանց շրջակայքում կառուցում է նաև հոյակապ պալատական շենքեր, տաճարներ, զորանոցներ, պահեստներ, հանում է ջրանցքներ, տնկում խաղողի և մրգատու ծառերի այգիներ։

Շուտով թե՛ Էրեբունին և թե՛ Արգիշտիխինիլին դառնում են Ուրարտական պետության հյուսիսային մարզերի վարչական, ռազմական ու տնտեսական խոշոր կենտրոններ։

764 թ. (մ. թ. ա.) գահ է բարձրանում Արգիշտիի որդին՝ Սարդուր II-ը (764—735)։

Սարդուրը II-ը նախ մի շարք արշավանքներ է կատարում դեպի Էրիախի երկիրը, որը ըստ երևույթին նրա հայրը՝ Արգիշտին, վերջնականապես չէր կարողացել նվաճել։ Նա արևելյան բռնապետին հատուկ դաժանությամբ ճնշում է տեղական ցեղերի դիմադրությունը, նվաճում նրանց երկիրը և այն միացնում իր պետությանը։ Սարդուրը շուտով իր տիրապետությունը տարածում է նաև Սևանա լճի արևմտյան և հարավային շրջանների վրա։

Տարբեր ժամանակներում կատարված երկու արշավանքների ընթացքում նա իր զորքի հետ, անցնելով Զրդրը լիճը, հյուսիս-արևմուտքից հասնում է Կուլխա կամ Կոլխա երկրին, որը ուսումնասիրողները համապատասխան են համարում Կոլխիդային։ Ուրարտացիները ճնշելով այստեղ բնակվող ցեղերի դիմադրությունը, ավերում, այրում են նրանց բնակավայրերը և տանում մեծ թվով գերիներ ու ավար։

Իր թագավորության առաջին շրջանում Սարդուր II-ը երկու մեծ արշավանք է կատարում Ուրմիա լճից հարավ ընկած շրջանների վրա և հասնում Բաբիլու, այսինքն՝ Բաբելոնիա, 753 կամ 752 թ. Նա հարձակվում է նաև Ասորեստանի վրա և հաղթում Ասսուրնիրարի IV թագավորին (753—746)։

Սարդուրի առավել կարևոր արշավանքներն ուղղված էին դեպի հարավ-արևմուտք, դեպի Կոմմուխ երկիրը (Կոմմագենե), որը գրավվում է հավանաբար 746 թվականին։ Այս երկրի թագավորը ստիպված է լինում հպատակություն հայտնել Սարդուր II-ին և հարկ վճարել նրան։

Կոմմուխի նվաճումով Սարդուր II-ը արևմուտքից թևանցում և մեկուսացնում է Ասորեստանին։ Դրանից հետո Սարդուր II-ը Ուրարտուի, Մելիտինեի, Կոմմուխի, Դուրգամի (Մարաշ) և Հյուսիսային Ասորիքի մի քանի այլ մանր երկրների մասնակցությամբ ստեղծում է հակաասորեստանյան մի ռազմական դաշնակցություն։

Այսպիսով Արգիշտի I-ի և Սարդուր II-ի թագավորության առաջին շրջանում Ուրարտուն դարձել էր Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունը։

Հաղթական նվաճումների հետ միասին Սարդուրը զբաղվում է նաև շինարարական աշխատանքներով։ Վանում, Արճեշում, Արգիշտիխինիլիում, Էրեբունի ամրոցում և այլ վայրերում նա կառուցում է բերդեր, տաճարներ, հացահատիկի, մթերքի ու զենքի պահեստներ, անցկացնում է ջրանցքներ, տնկում այգիներ։

8. ՊԱՅՔԱՐ ՈՒՐԱՐՏՈՒԻ ԵՎ ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ

Ուրարտական բանակի պարտությունը և Թիգլաթպալասար III-ի արշավանքը

Հյուսիսից, արևմուտքից և արևելքից ըստ պառնացող ու անընդհատ ուժեղացող ուրարտական վտանգը ստիպում է Ասորեստանի իշխող դասակարգի առանձին խմբերին, որպեսզի սրանք վերջ տան ներքին կռիվներին, համախմբեն իրենց ուժերը՝ այդ վտանգի դեմ պայքարելու համար։

745 թ. (մ. թ. ա.) Ասորեստանում գահ է բարձրանում Թիգլաթպալասար III-ը։ Վարչական մի շարք ռեֆորմներով պետությունն ամրապնդելուց, ասորեստանյան բանակը վերակազմելուց և զորքի մարտունակությունը բարձրացնելուց հետո Թիգլաթպալասարը վճռական պայքարի է դուրս գալիս Ուրարտուի դեմ։

743 թ. (մ. թ. ա.) Թիգլաթպալասարը մեծ ուժերով հարձակվում է Ուրարտուի դաշնակից Արպադ քաղաքի վրա, որը գտնվում էր Հյուսիսային Ասորիքում։ Ուրարտուն և նրա մյուս դաշնակիցները անմիջապես օգնության են շտապում Արպադի իշխանությանը։ Ճակատամարտը տեղի է ունենում այս քաղաքի մոտ, որը տևում է մի օր և վերջանում Ուրարտուի ու նրա դաշնակիցների ծանր պարտությամբ։ Սարդուր II-ը, կորցնելով իր զորքի մեծ մասը և ռազմակառքերը, ստիպված է լինում հեռանալ մարտի դաշտից։ Ասորեստանցիները վերցնում են մեծ թվով գերիներ և հարստություն։ Ավար, որոնց մեջ նաև Սարդուրի վրանը, որտեղ գտնվում էին նրա թանկագին զարդերը, մահճակալը, շարժական գահը և այլն։ Ութ տարի հետո՝ 735 թ. (մ. թ. ա.), Կոմմուխի երկրի Կիշտան և Խալպու քաղաքների միջև տեղի ունեցած ճակատամարտում ասորեստանցիները ուրարտական բանակի դեմ տանում են երկրորդ վճռական հաղթանակը։ Այս անգամ Թիգլաթպալասարը, հետապնդելով Սարդուրին, մեծ ուժերով ներխուժում է Ուրարտու, հասնում և պաշարում է նրա մայրաքաղաք Տուշպան, սակայն գրավել չի կարողանում և կողոպտելով մի շարք բնակավայրեր նա է վերադառնում։

Ուրարտական բանակի պարտությունը ծանր հետևանքներ է ունենում պետության համար։ Ուրարտուն ոչ միայն կորցնում է իր քաղաքական գերիշխանությունը Առաջավոր Ասիայում, ինչպես և իր տիրապետությունները՝ Ասորիքում, Միջագետքում և Ուրմիայի լճից դեպի հարավ գտնվող երկրներում, այլև ծայրամասային և նույնիսկ կենտրոնական մի շարք մարզեր, որոնք միայն թույլ կա-

պերով ու վենքի ուժով էին միացած Ուրարտական պետությանը, անջատվում են նրանից։

Ուրարտուի վերամիավորումը և նրա հզորության վերականգնումը

Սարդուրի մահից հետո գահ է բարձրանում նրա որդին՝ Ռուսա I-ը (735—714)։ Դա Ուրարտական պետության համար ծանր ժամանակաշրջան էր։ Սակայն, Ռուսան կարճ ժամանակից հետո, ճնշելով տեղերում առաջացած ապստամբությունները, կրկին Ուրարտուին է միացնում անջատված երկրամասերը։ Ուրարտուի տիրապետությունը տեղերում ամրապնդելու և կենտրոնախույս ուժերին սանձահարելու նպատակով նա բարեփոխում ու փոքրացնում է երկրամասային կամ մարզային կառավարչությունները, տեղական թագավորների, ցեղապետերի կողքին կամ նրանց փոխարեն ուրարտական ավագանուց նշանակում է կառավարիչներ։

Առաջին շրջանում Ռուսան, խուսափելով Ասորեստանի հետ ընդհարվելու առիթներ ստեղծելուց, աշխատում է իր տիրապետությունն ամրապնդել և ընդարձակել Սևանա լճի ավազանում։ Նա այստեղ վերանվաճում է լճի արևմտյան, հարավային շրջանները և դրավում ու իր պետությանն է միացնում նաև լճի արևելյան շրջանները։

Հավանաբար, փոքր-ինչ ավելի ուշ Ռուսա I-ը ընդարձակ նվաճումներ է կատարում նաև Ուրմիա լճի հյուսիսային ու արևելյան շրջաններում և հյուսիս-արևելքից հասնում է Մաննայի պետության սահմաններին, որը Սարդուր II-ի պարտությունից հետո դուրս էր եկել Ուրարտուի տիրապետության տակից և ընկել էր Ասորեստանի գերիշխանության տակ։ Իր գրաված նոր շրջանում նա կառուցում է քաղաք-ամրոցներ, հացահատիկի և գինու պահեստներ, անց է կացնում ջրանցքներ, տնկում խաղողի այգիներ և այլն։

Ռուսան խոշոր շինարարական աշխատանքներ է կատարում նաև մայրաքաղաքում։ Նա նախ մեծ չափով ավերված Վանի միջնաբերդից արքունիքը տեղափոխում է Զրմդրմ լեռան շրջանում կառուցված Թոփրակ-կալայի ամրոցը։ Մայրաքաղաքում կառուցում է մի նոր թաղամաս, որը նրա անունով կոչվում է Ռուսախինիլի։ Նոր թաղամասը խմելու և ոռոգելու ջրով ապահովելու նպատակով նա կառուցում է նաև արհեստական մի լիճ։

Ուրարտական պետության հզորության վերականգնումը մեծ անհանգստություն էր առաջ բերում Ասորեստանում։ 722 թվականին (մ. թ. ա.) Ասորեստանում գահ բարձրացած Սարգոն II-ը

(722—705) ուշի-ուշով հետևում էր Ուրարտուում տեղի ունեցող դեպքերին։

Ընդհարումը կիմմերների հետ և ներքին պայքարը

Ռուսան նոր էր վերականգնել Ուրարտուի հզորությունը և պատրաստվում էր վճռական պայքար սկսել Ասորեստանի դեմ, երբ ստիպված է լինում ընդհարվել մի նոր վտանգավոր թշնամու՝ կիմմերների հետ։

Կիմմերները քոչվոր կամ կիսաքոչվոր ցեղեր էին, որոնք վաղ ժամանակներից բնակվում էին Սև ծովից դեպի հյուսիս ընկած տափաստաններում։ VIII դարի երկրորդ կեսին (մ. թ. ա.) կիմմերները Կովկասի վրայով ներխուժում են Անդրկովկաս և Փոքր Ասիա։

Կիմմերները, հաստատվելով Ուրարտուի հյուսիսային սահմաններում, այստեղից սկսում են ասպատակություններ կատարել ու կողոպտել սահմանամերձ շրջանները։ Ռուսան իր զորքով շարժվում է կիմմերների դեմ, սակայն տեղի ունեցած ճակատամարտում պարտություն է կրում։

Ուրարտական զորքի անհաջող արշավանքը կիմմերների դեմ ու նրա պարտությունը երկրում առաջ են բերում ապստամբություններ ու ներքին խռովություններ։ Օգտվելով առիթից ծայրամասային և կենտրոնական մի քանի մարզեր ապստամբություն են բարձրացնում և անջատվում Ուրարտուից։ Խռովություն է բարձրացնում նաև զորքի մի մասը, որի գլուխ կանգնում է քանակի սպարապետը։

Ռուսան հավատարիմ մնացած զորագնդերով արագ կերպով շարժվելով խռովարարների դեմ, Վանա լճից հարավ-արևմուտք գտնվող Ուասի մարզում ջախջախում է խռովարարներին և ձերբակալում նրանց պարագլուխ սպարապետին։

Ռուսան այնուհետև ճնշում է նաև Տուշպայում, ուրարտական բանակի 21 այլ հրամանատարների խռովությունը, որոնց ղեկավարում էր զորքի երկրորդ սպարապետը։

Չնայած կիմմերների դեմ մղած ճակատամարտում ուրարտական բանակի կրած պարտությանը և երկրի ներսում առաջացած ապստամբություններին, Ռուսային հաջողվում է պահպանել իր պետության ամբողջությունը։

Սարգոն II-ի 714 թ. արշավանքը

Ուրարտուի և Ասորեստանի միջև ընդհարումը գնալով դառնում է անխուսափելի։ Դրա համար Ռուսան արևմուտքում և հարավ-արևելքում գտնվող փոքր երկրներից հակաասորեստանյան մի դաշնակ-

ցությունն է կազմակերպում, որին միանում է նաև Մաննայի պետությունը։

Իր գերիշխանությունը Մաննայում վերահաստատելու և պահպանելու նպատակով, Սարգոն II-ը 714 թ. մի խոշոր պատժիչ արշավանք է կատարում դեպի Ուրմիայի լճի արևելյան շրջանները։ Ռուսան և նրա դաշնակիցները որոշում են վճռական ճակատամարտ տալ Ասորեստանի դեմ։ Դրա համար նրանք իրենց զորքերով գալիս ճամբար են գնում Սարգոնի թիկունքում, լճի արևելյան ափին գտնվող Ուասուշ լեռան կիրճում։ Ասորեստանյան լրտեսներից ճիշտ ժամանակին տեղեկություն ստանալով, Սարգոնը անմիջապես փոխում է իր բանակի ընթացքը և արագ կերպով շարժվում դաշնակիցների դեմ։ Ասորեստանցիները գիշերը հանկարծակի հարձակվում են ուրարտական և դաշնակից զորքերի վրա և պարտության մատնում նրանց։ Ռուսան հեռանում և ապաստանում է Տուշպայում։

Դրանից հետո Սարգոնը ներխուժում է Ուրարտու։ Նա իր անցած ամբողջ ճանապարհին քանդում, այրում ու կողոպտում է բնակավայրերը, ոչնչացնում ջրանցքները, այգիները, ցանքսերը, բռնագրավում կամ այրում է սննդամթերքների պաշարները, տանում անասունները և այլն։

Այս արշավանքի ժամանակ Սարգոնը գրավում է նաև Մուսասիր քաղաքը։ Ասորեստանցիները թագավորի պալատից և Մուսասիրի տաճարից կողոպտում և տանում են հսկայական քանակությամբ ոսկի, արծաթ, պղինձ, բրոնզ, երկաթ, կապար, ոսկե և արծաթե բաժակներ, դեկորատիվ վահաններ, սրեր, դաշույններ, թանկագին քարեր, փղոսկրե իրեր, հագուստներ և այլն։ Նրանք Մուսասիրի տաճարից տանում են նաև խալդ աստծու, Արուբանի աստվածուհու, Սարդուր քրմապետի, Արգիշտի I-ի և Ռուսա I-ի արձանները։

Ասորեստանցիների կողմից Մուսասիրի տաճարի գրավման և կողոպտման տեսարանը Սարդոնը քանդակել է տվել Դուր-Շարրուկինի իր պալատի դահլիճներից մեկում։ Դժբախտաբար այդ քանդակի միայն մի մասն է մեզ հասել, որովհետև 1842—1843 թթ. պեղումների ընթացքում հայտնաբերված բուն հուշարձանը Ֆրանսիա տեղափոխելու ժամանակ ընկղմվել է Տիգրիս գետը։

Ռուսան, լուր ստանալով Մուսասիրի տաճարի գրավման ու կողոպտման մասին, ինքնասպան է լինում։

4. ՈՒՐԱՐՏՈՒԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Երկրագործությունը և անասնապահությունը

Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերին դեռևս վաղուց էին հայտնի երկրագործությունն ու այգեգործությունը, սակայն դրանք առավել մեծ չափով զարգանում և բնակչության տնտեսական հիմնական զբաղմունքն են դառնում ուրարտական դարաշրջանում։

Ուրարտական պետության ներսում բնակչության աճը և նվաճված երկրներից հարյուր հազարավոր տարուկների փոխադրումը դեպի պետության կենտրոնական շրջանները անհրաժեշտաբար պահանջում էին մեծ չափերով ընդարձակել մշակվող հողային տարածությունները։ Սակայն աշխարհագրական տեսակետից լեռնային անհարթ մակերևույթ և չոր կլիմա ունեցող Հայկական լեռնաշխարհում մշակվող հողային տարածությունները հնարավոր չէր ընդարձակել առանց արհեստական ոռոգման։ Արևելքի երկրներում, այդ թվում և Հայկական լեռնաշխարհում, երկրագործության համար միշտ էլ շատ կենսական նշանակություն է ունեցել և դյուղատնտեսության հիմքն է կազմել արհեստական ոռոգումը։ Ֆ. Էնգելսը նշում է, որ Արևելքի երկրներում արհեստական ոռոգումը «հանդիսանում էր համայնքների, երկրամասերի կամ կենտրոնական իշխանությունների գործը»։ Ուրարտուում ևս արհեստական ոռոգման գործը իր ձեռքն է վերցնում պետությունը։ Ուրարտական դրեթե բոլոր թագավորները եռանդուն գործունեություն են ծավալում ջրանցքաշինության ասպարեզում։ Բացի Մենուայի նշանավոր ջրանցքից, ուրարտական թագավորները արհեստական ոռոգման ընդարձակ ու ճյուղավորված ցանցեր են ստեղծում Վանա լճի ավազանում, Արարատյան դաշտում, Արածանիի հովտում, Ուրմիայի լճի հյուսիսային շրջանում և այլուր։

Երկրագործության զարգացումը Ուրարտուում պայմանավորված էր նաև դյուղատնտեսության մեջ երկաթե գործիքների մուտքով։ Թոփրակ-կալայում, Կարմիր-բլուրում և այլ վայրերում գտնվել են երկաթե ծանր արորի թիականման խոփեր, բահեր, մանգաղներ, հղաններ և այլն։ Հատկապես երկաթե խոփ ունեցող ծանր արորի կիրառումը երկրագործության մեջ հնարավորություն է տալիս ընդարձակելու ցանքսերի տարածությունը, բարելավելու հողի մշակությունը։

Արձանագրություններից և հնագիտական տվյալներից երևում

է, որ ուրարտացիները մշակում էին դարի, ցորեն, կորեկ, հաճար, սիսեռ, ոսպ, քնջութ և այլն։ Կարմիր-բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են դարու, ցորենի, կորեկի ու սիսեռի ածխացած մեծաքանակ մնացորդներ, կորեկից պատրաստված հաց, ոսպի հատիկներ, ազոբիքներ, սանդեր։

Ուրարտացիները մեծ չափով զբաղվում էին նաև խաղողի և պտղատու ծառերի այգիների մշակությամբ։ Ուրարտական թագավորները իրենց թողած արձանագրություններում շատ հաճախ են հիշատակում վանա լճի ավազանում, Արարատյան դաշտում խաղողի ու պտղատու ծառերի այգիներ տնկելու մասին։ Ուշագրավ է, որ ուրարտացիները պտղատու ծառերն անվանել են «զարի» կամ «զարի», որը համապատասխանում է հայերեն «ծառ» բառին։

Ուրարտացիները վաղուց ծանոթ էին նաև դինի, գարեջուր և ձեթ պատրաստելու արհեստին։

Ուրարտական պետության նախայեռնային ու լեռնային շրջաններում զարգացած էր նաև անասնապահությունը։ Ուրարտացիները և մյուս ցեղերը պահում էին խոշոր եղջերավոր անասուններ, ոչխար, այծ, ձի, ջորի, էշ, խոզ և ուղտ։

Արհեստները

Ուրարտացիները բարձր զարգացման էին հասցրել մետաղների մշակությունը։ Նրանք արդյունահանում էին պղինձ, երկաթ, անագ, կապար, ոսկի, արծաթ և այլն։ Ուրարտական բնակավայրերից պեղումների ժամանակ գտնվել են մեծ քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ, կացիններ, մուրճեր, ուրագներ, սղոցներ, սամաններ, կաթսաներ, թասեր, աշտանակներ, սանձեր, սրեր, դաշույններ, դանակներ, վահաններ, սաղավարտներ, գոտիներ, ապարանջաններ, ճարմանդներ, օղեր, արձաններ և այլն։

VIII—VII դարերում (մ. թ. ա.) Ուրարտուում մետաղագործության մեջ գերիշխող է եղել երկաթի մշակությունը։ Ուրարտացիները աշխատանքային գործիքներ ու զենքեր պատրաստելու համար հիմնականում օգտագործել են երկաթը, իսկ սամաններ, զարդարանքի իրեր ու արձաններ պատրաստելու համար՝ բրոնզն ու պղինձը։

Մեզ հասած մետաղե իրերի մեծ մասը ձուլված է քարե ու կավե կաղապարներով, որոնց վրա հաճախ դրոշմվել են նաև արտադրող արհեստավորների կամ արհեստանոցների նշանները։ Զգալի քանակությամբ առարկաներ էլ պատրաստված են ձեռքի աշխատանքով, տեխնիկական մեծ հմտությամբ։ Մեծ հիացմունք է պատճառում Կարմիր-բլուրում գտնված 70 դույլ տարողություն և երկու

բոնակ ունեցող պղնձե հսկայական կաթսան, որի պռունկները ա-
գուցված են բրոնզե շերտով։ Նուրբ ճաշակով են պատրաստված
բրոնզե աշտանակները, թասերը, ամանները, ինչպես և զենքերի ու
զարդարանքի առարկաների մի մասը։

Երկաթե գործիքների հանդես գալը մեծ չափով նպաստում է
նաև քարի մշակությանը և նրա հետ կապված արհեստների զար-
գացմանը։ Երկաթե գործիքները բարելավում ու հեշտացնում են
քարի տաշումը, հնարավորություն են ընձեռում անցնելու ավելի
կարծր քարատեսակների մշակությանը։

Ուրարտացիների տնտեսական կյանքում ու կենցաղում քարը
կարևոր դեր է կատարել։ Բացի շինարարությունից, ուրարտացի-
ները քարը լայնորեն օգտագործել են տնային գործածության իրեր,
զարդարանքի առարկաներ, արձաններ, կնիքներ պատրաստելու և
սեպագիր արձանագրություններ փորագրելու համար։ Թոփրակ-կա-
լայում, Կարմիր-բլուրում, Արին-բերդում և այլ վայրերում հայտ-
նաբերվել են մեծ քանակությամբ քարե աղորիքներ, սանդեր, տնա-
յին գործածության մանր իրեր, արձաններ, փորագրության միջո-
ցով զանազան կենդանիների, թռչունների նկարներով զեղազարդ-
ված կնիքներ, կիսաթանկագին քարերից՝ ագատից ու սարդիոնից
պատրաստված և հիանալի կերպով հղկված ուլունքներ։

Ուրարտացիները զարգացման նոր աստիճանի են հասցնում
կավագործությունը։ Ուրարտական պետության տարբեր վայրերում
կատարված հնագիտական պեղումներից հայտնաբերվել են մա-
քուր կավից պատրաստված, լավ թրծված, սև, կարմիր և դեղնա-
վուն գույնի մեծ քանակությամբ կաթսաներ, կճուճներ, սափորներ,
կժեր, դավաթներ, ամաններ, արձանագրություններ գրելու ադյուս-
ներ և այլն։ Մեզ հասած իրերը հիմնականում պատրաստված են
բրուտի դրգի վրա և բարձր որակով։ Սրանց մեջ կան փայլեցված,
հարուստ նախշերով, կենդանիների և այլ նկարներով զեղազարդ-
ված բազմաթիվ իրեր։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ուրարտացի բրու-
տագործ վարպետների պատրաստած և ուրարտական պետության
սահմաններում լայնորեն տարածված կարասները, որոնք երբեմն
ունեն մինչև 1000 լիտր տարողություն։ Կարասների մի մասի վրա
կան հիանալի զարդանկարներ և տարողության չափը նշող սեպա-
գիր նշաններ։ Ուրարտացիները կարասներն օգտագործել են ոչ
միայն գինի, գարեջուր և հեղուկներ, այլև հացահատիկ, զանազան
մթերքներ ու իրեր պահելու համար։

Ուրարտուում զարգացած էին նաև մանածագործությունը,

փայտամշակությունը, կաշեգործությունը և այլն։ Սարգոն II-ը հայտնում է, որ Ուրարտուից և Մուսասիրից տարել է նաև բազմաթիվ գույնզգույն գործվածքներ, բրդե ու վուշե գդեստներ։ Կարմիր-բլուրում գտնվել են թավշանման խավոտ բրդե գործվածքի մնացորդներ, բրդի և վուշի թելերից գործված ուզեկարպետ, բրդե թելի կծիկներ։ Նույն տեղում գտնվել են նաև կճուճանման փայտե մի աման, եղջյուրով ներզարդված տնային կահույքի մասեր, ոչխարի գլուխ ներկայացնող բռնակ, փորագրված փայտե առարկաների բեկորներ, փայտե շերեփ, գդալ, կաշվով ծածկված փայտե կապարճ և այլն։ Ուրարտական բանակում մասսայաբար գործածվող ռազմակառքերը, ինչպես և սովորական կառքերն ու սայլերը, որոնց հիմնական մասերը պատրաստված էին փայտից, նույնպես ապացուցում են, որ փայտամշակությունը և նրա հետ կապված արհեստները զգալի չափով զարգացած էին։

Ապրանքափոխանակությունը

Ուրարտուի ներքին ապրանքափոխանակության մասին մեզ գրավոր ուղղակի վկայություններ չեն հասել։ Սակայն հնագիտական տվյալները և գրավոր անուղղակի վկայությունները ցույց են տալիս, որ Ուրարտուում որոշ չափով զարգացած է եղել ապրանքափոխանակությունը, որը պայմանավորված էր մասնագիտացված արհեստը երկրագործությունից բաժանվելու հետ։

Թուխրակ-կալայում, Կարմիր-բլուրում և Արին-բերդում գտնվել են ոսկուց, արծաթից, երկաթից, պղնձից, բրոնզից, անագից, արճճից, սուրմայից, ագատից, սարդիոնից, լեռնային բյուրեղներից պատրաստված բազմաթիվ իրեր։ Սակայն հայտնի է, որ նշված վայրերի անմիջական շրջապատում վերոհիշյալ մետաղների և կիսաթանկագին քարերի հանքավայրեր գոյություն չունեն։ Այստեղից հետևում է, որ նման իրերի մեծամասնությունը, եթե ոչ պատրաստի վիճակում, գոնե նրանց հումքը, ձեռք է բերվել փոխանակության միջոցով։ Հիմնականում ապրանքափոխանակության հետևանքը պետք է համարել նաև այն, որ աշխարհագրականորեն իրարից շատ հեռու գտնվող ուրարտական բերդերից, բնակավայրերից ու դամբարաններից գտնվել են արհեստագործական բազմաթիվ միանման իրեր։ Աշխատանքային գործիքների, զենքերի, տնային ու միստիպ կաղապարներով ձուլված լինելու երևույթը ևս ապացուցում է, որ ուրարտացի արհեստավորները հիշյալ իրերը արտադրում էին փոխանակության համար։

Ներքին ապրանքափոխանակության հետ միասին Ուրարտուն

սերտ տնտեսական կապեր է ստեղծում նաև արտաքին աշխարհի հետ։ Կարմիր-բլուրից հայտնաբերվել են հոխմապակուց պատրաստված եգիպտական Սոխմետ դիցուհու արձանիկը, հիերոգլիֆագիր եգիպտական հմայիլներ, Ասորեստանում շինված կնիքներ, ուլունքներ, մետաղե իրեր, էգեյան մշակույթին պատկանող ոսկե օղեր, կնիքներ, սկյութական ձիասարքի մասեր, բրոնզե նետասլաքներ, եղջյուրից պատրաստված զարդեր և այլն։ Հնագիտական այս տվյալները մասամբ հաստատվում են նաև գրավոր վկայություններով։ Մուսասիրից իր տարած ավարի ցուցակում Սարգոնը հիշատակում է նաև փղոսկրից պատրաստված բազմաթիվ իրեր, Ասորեստանում ու Տաբալում (Փոքր Ասիայի արևելյան մասում) շինված արծաթե բաժակներ։

Ուրարտուն իր հերթին նույնպես արտահանում էր զանազան ապրանքներ։ Առաջնակարգ Ասիայում հատկապես մեծ հռչակ ունեին ուրարտական մետաղագործական իրերը։ Ուրարտական մետաղե իրեր հայտնաբերվել են Ասորեստանում, Միջագետքում, Իրանում, Փոքր Ասիայի տարբեր վայրերում, Հյուսիսային Կովկասում և այլուր։

Սարկատերերը

Ուրարտական հասարակությունը հին արևելյան տիպի վաղ ստրկատիրական հասարակություն էր, սակայն Ուրարտուի տարբեր մասերը գտնվում էին հասարակական զարգացման տարբեր աստիճանների վրա։ Եթե պետության բուն կենտրոնում՝ Բիաինիլիում, Մուսասիրում և Արարատյան դաշտում իշխում էին ստրկատիրական հարաբերությունները, ապա պետության ծայրամասերում և լեռնային շրջաններում ապրող ցեղերը գտնվում էին տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հասարակության անցման շրջանում։ Տեղ-տեղ պահպանվել էին նաև տոհմատիրական-համայնական կարգերը։

Ուրարտուում իշխող ու շահագործող հիմնական դասակարգը ստրկատերերի դասակարգն էր, որը կազմված էր ինչպես ուրարտական, նույնպես և նվաճված երկրների ստրկատերերից։

Ուրարտուում հողերի մի զգալի մասը, հատկապես արհեստական ոռոգմամբ յուրացվող հողերը, պատկանում էին պետությանը և անմիջականորեն գտնվում թագավորի տնօրինության տակ։ Պետությանը կամ թագավորին էին պատկանում նաև շրջանները, քաղաքների մեծ մասը և հանքերը։ Արձանագրությունների մեջ հաճախ է հիշատակվում, թե այս կամ այն քաղաքը «կառուցված է թագավորի կողմից» կամ «պատկանում է թագավորին»։ Նման

քաղաքները, որոնք շրջապատված էին պետական ընդարձակ այգիներով և մշակելի հողային տարածություններով, մեծ մասամբ ոչ միայն ռազմա-վարչական, այլև պետական տնտեսության խոշոր կենտրոններ էին։ Այստեղ էին մշակվում և պահպանվում պետական այգիներից ու հողերից, ինչպես և շրջապատի հարկատու բնակչությունից հարկի դիմաց ստացված գյուղատնտեսական մթերքները։ Նման քաղաքներում կային նաև պետական խոշոր արհեստանոցներ։

Պատերազմների ժամանակ ձեռք բերված ավարի մեջ տասնյակ հազարների, իսկ երբեմն նաև հարյուր հազարների էին հասնում անասունները, որոնցից մի խոշոր մասը բաժին էր ընկնում թագավորին։ Արձանագրություններից երևում է, որ պետությունը ուներ նաև ընդարձակ արոտներ, խոշոր ու մանր եղջերավոր անասունների հոտեր, ձիերի երամակներ։

Պետական տնտեսության տարբեր ճյուղերից ստացվող արտադրանքը թեև դտնվում էր թագավորի անմիջական տնօրինության տակ, սակայն այն միայն թագավորի և նրա ընտանիքի կողմից չէր յուրացվում։ Եթե արտադրանքի մի մասը ծախսվում էր ստրուկներին և արհեստավորներին կերակրելու համար, ապա մյուս մասը, որը արտադրողների ստեղծած հավելյալ արդյունքն էր, որպես ոռճիկ բաժանվում էր պետական և զինվորական ծառայության մեջ դտնվող ստրկատերերի միջև։ Հին Արևելքի ստրկատիրական մյուս պետությունների նման Ուրարտական պետությունը ևս հանդես էր գալիս ստրուկներին և ազատ արտադրողներին կենտրոնացված ու կոլեկտիվ կերպով շահագործողի դերում։

Ընդարձակ հողային տարածություններ, արոտավայրեր և անասունների հոտեր ունեին նաև թագավորական ազգատոհմի անդամները և խոշոր ստրկատերերը։ Սարգոն II-ի մի վկայությունից երևում է, որ թագավորի եղբայրները նույնիսկ ունեին իրենց քաղաքները։

Քրմական դասը կազմում էր իշխող ստրկատիրական դասակարգի անբաժանելի մասը։ Պետության մեջ թագավորից հետո երկրորդ դեմքը քրմապետն էր։ Դրա համար էլ շատ հաճախ քրմապետ էր նշանակվում թագավորի եղբայրներից կամ մոտիկ ազգականներից մեկը։

Ուրարտական տաճարները ոչ միայն կուտակել էին հսկայական հարստություններ, այլև ունեին ընդարձակ հողային տարածություններ, արոտներ, տասնյակ հազարավոր անասուններ, ստրկական աշխատանքի վրա հիմնված խոշոր արհեստանոցներ։

Տաճարական տնտեսությունները իրենց մեծությամբ զիջում էին միայն պետական տնտեսությանը։ Նվաճված երկրներից վերցված ավարի և ստրուկների մի մասը նույնպես տրվում էր տաճարներին։

Գյուղական համայնքը և ազատ համայնականները

Ուրարտական հասարակության ազատ բնակչության ճնշող մեծամասնությունը կազմված էր հողագործներից, որոնք միավորված էին գյուղական համայնքներում և ապրում էին մեծ ընտանիքներով կամ դերդաստաններով։

Ուրարտուում շահագործվում էին ոչ միայն ստրուկները, այլև ազատ համայնականները։ Նրանք բնամթերքներով հարկեր էին վճարում պետությանը, ձրի ու պարտադիր կերպով մասնակցում էին ջրանցքների, ճանապարհների, քաղաքների ու բերդերի կառուցմանը, զինվորական ծառայություն էին կատարում և այլն։ Նրանք որոշ պարտավորություններ ունեին նաև տաճարների նկատմամբ։

Ստրուկները

Ուրարտական հասարակության շահագործվող հիմնական դասակարգը ստրուկների դասակարգն էր։

Ստրուկների հայթայթման հիմնական աղբյուրը պատերազմն էր։ Ուրարտական թագավորները իրենց մղած նվաճողական ու կողոպտիչ պատերազմների ժամանակ նվաճված երկրներից դեպի Բիաինիլի էին քշում և ստրկացնում տասնյակ հազարավոր, երբեմն նաև հարյուր հազարավոր գերիներ։ Ոչ լրիվ տվյալներով Արգիշտի I-ը ռազմական արշավանքների ընթացքում գերեվարել է 280.512, իսկ Սարգուր II-ը՝ 197.521 տղամարդ, կին և պատանի։

Երկրում ամենամեծ ստրկատերը թագավորն էր, որովհետև ստրուկների մեծ մասը բաժին էր ընկնում նրան։ Ստրկական աշխատանքը կիրառվում էր պետական այգիների, հողերի, հանքերի մշակման, քաղաքների, բերդերի, ջրանցքների, ճանապարհների կառուցման և այլ բնագավառներում։ Պետական ստրուկները մեծ չափով օգտագործվում էին նաև հանքերում ու արհեստանոցներում։

Մեծ թվով ստրուկներ ունեին նաև տաճարները և ռազմաստրկատիրական ավազակային ներկայացուցիչները։

Ուրարտական մի քանի արձանագրություններ վկայում են, որ թագավորները կերևվարված ստրուկներ են բաժանել կամ նվիրել ոչ միայն զինվորներին, այլև առանձին տոհմերին, ցեղերին կամ համայնքներին։

Չնայած ստրկատիրական հարաբերությունների որոշակի զարգացմանը, այնուամենայնիվ, արտադրողական ուժերի զարգացման

տվյալ մակարդակի պայմաններում Ուրարտուում ստրկական աշխատանքի կիրառման հնարավորությունները սահմանափակ էին։ Ուրարտական բանակը նվաճված երկրներից վերցնում էր շատ ավելի մեծ թվով գերիներ, քան պետության կենտրոնական շրջանները կարող էին այդ գերիներին որպես ստրուկներ օգտագործել։ Դրա համար էլ ուրարտացիներն իրենց վերցրած գերիների որոշ մասին սպանում էին տեղում։

Պետական կարգը

Ուրարտուն հին արևելյան տիպի ռազմաստրկատիրական պետություն էր։ Նա ստրկատերերի դիկտատուրա էր, որն ուղղված էր ստրուկների, ազատ համայնականների և նվաճված երկրների ցեղերի դեմ։

Ուրարտական պետությունը այժմյան իմաստով ազգային պետություն չէր, այլ տնտեսական-հասարակական զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող, էթնիկական տարբեր ծագում ունեցող և տարբեր լեզուներով խոսող, բռնի ուժով իրար միացած ցեղերի մի միություն էր։ Տերիտորիալ և քաղաքական իմաստով պետությունը բաժանված էր երկու մասի։ Առաջինը Բիաինիլին էր (Վանա լճի ավազանը), որը ուրարտացիների բուն հայրենիքը և պետության կենտրոնն էր։ Երկրորդը ցեղային այն երկրներն էին, որոնք բռնի ուժով միացվել էին Ուրարտուին։

Պետական կառավարման ձևը հին արևելյան տիպի բացարձակ միապետությունն էր՝ թագավորի անսահմանափակ իշխանությամբ։ Թագավորը երկրի գերագույն կառավարողն էր, զորքի գերագույն հրամանատարը և երկրի գերագույն դատավորը։ Թագավորական իշխանությունը ժառանգական էր, որը հորից անցնում էր ավագ որդուն։

Պետական կառավարման կարևոր օրգաններից մեկը ավագների խորհուրդն էր, որը կազմված էր թագավորական տան անդամներից, թագավորի խորհրդականներից, պետական ու զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներից և տարբեր ցեղերից ծագող խոշոր ստրկատերերից։ Ավագների խորհուրդը քննարկում էր համապետական նշանակություն ունեցող հարցեր։

Ուրարտական պետությունը, սենկասած, ունեցել է հարկային-ֆինանսական, պետական տնտեսության ղեկավարման, պետական-հասարակական աշխատանքների կազմակերպման և այլ գերատեսչություններ։

Վարչական տեսակետից ամբողջ պետությունը բաժանված էր մեծ ու փոքր մարզերի կամ ավելի ճիշտ՝ «երկրների», որի բաժան-

ման հիմքում ընկած էր ցեղային հատկանիշը։ Ամեն մի ցեղի զբաղեցրած տերիտորիան իրենից ներկայացնում էր վարչական մի մարզ կամ մի «երկիր»։

Թե՛ բուն ուրարտական և թե՛ նվաճված ցեղային երկրները կամ մարզերը կառավարվում էին թագավորի կողմից նշանակված փոխարքաների կամ կառավարիչների միջոցով։ Այս պաշտոններում մեծ մասամբ նշանակվում էին ուրարտական, իսկ երբեմն նաև տեղական ռազմա-ստրկատիրական ավագանու ներկայացուցիչները։ Սկզբնաղբյուրների վկայություններից երևում է, որ նվաճված երկրներում իրենց դոյությունը պահպանում էին նաև տեղական թագավորները և ցեղային առաջնորդները։

Պետական ֆինանսական միջոցները հիմնականում գոյանում էին պատերազմների ժամանակ ձեռք բերված ավարից, պետական տնտեսություններից ու արհեստանոցներից ստացվող եկամուտներից, ինքնուրույն տնտեսություն վարող պետական ստրուկներից, նվաճված ցեղերից և ազատ համայնականներից գանձվող հարկերից։

Բանակը

Ուրարտական պետությունը հաճախակի պատերազմներ էր մղում նոր ցեղեր նվաճելու, ավար և ստրուկներ ձեռք բերելու համար։ Դրա հետևանքով էլ պետական ու հասարակական կյանքում բանակը առաջնակարգ տեղ էր գրավում։

Ուրարտական բանակը մշտական բանակ չէր։ Թեև ուրարտական թագավորները ունեին իրենց սեփական մշտական զորքը, որը հանդիսանում էր բանակի կորիզը, սակայն ուրարտական բանակի ճնշող մասը կազմված էր մարզերի ազատ բնակչությունից՝ աշխարհազորային հիմունքներով։ Ամեն մի մարզ ուներ իր զորամասը, որի հրամանատարը տվյալ մարզի կառավարիչն էր։ Պատերազմի ժամանակ մարզերի զորամասերը, իրենց հրամանատարների գլխավորությամբ, պարտավոր էին անմիջապես միանալ թագավորական զորքին։

Բուն ուրարտացիները համեմատաբար թվով քիչ էին։ Նրանք շատ ավելի մեծ թվով ցեղեր էին նվաճել, քան կարող էին միայն իրենց սեփական ուժերով դրանք պահել մշտական հնազանդության մեջ։ Մի կողմից՝ այդ ցեղերին հնազանդության մեջ պահելու, իսկ մյուս կողմից՝ Ասորեստանի դեմ հաջող պայքար մղելու համար ուրարտացիները ստիպված էին զորամասեր ստեղծել նաև հպատակեցված ցեղերից։ Նման զորամասերը ուրարտացիները մեծ մասամբ օգտագործում էին կայազորային ծառայության համար, այն

էլ ոչ թե տվյալ ցեղի, այլ էթնիկական տարբեր ծագում ունեցող ցեղերի տերիտորիաներում։

Ուրարտական բանակի և սպառազինության հիմնական տեսակներն էին ռազմակառքերը, հեծելազորը և հետևակը։

Բանակի գերագույն հրամանատարը, ինչպես ասվեց, թագավորն էր։ Սակայն բանակը ուներ նաև իր առաջին և երկրորդ գլխավոր զորահրամանատարը, որը հավանաբար ասորեստանյան ձևով կոչվում էր «տուրտան»։

Ուրարտական բանակում զենքի հիմնական տեսակներն էին նետ ու աղեղը, սուրը, դաշույնը, տապարը, նիզակը, վահանը և սաղավարտը։

5. ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Ուրարտուն VII դարի կեսին մ. թ. ա.

Սարգոն II-ի 714 թ. արշավանքից հետո Ուրարտական պետությունը զգալի չափով թուլանում է, Ռուսա I-ին հաջորդած Արգիշտի II-ը (714—685), հաշվի առնելով Ասորեստանի հետզհետե աճող հզորությունը, խուսափում է նրա հետ ընդհարվելուց և առավելապես զբաղվում է խաղաղ շինարարական աշխատանքներով։

Ուրարտական պետությունը ժամանակավորապես որոշ չափով ուժեղանում է Արգիշտիի որդու՝ Ռուսա II-ի (685—645) ժամանակ։

Կենտրոնախույս ձգտումներ հանդես բերող ուրարտական ռազմամաստրկատիրական ավագանու՝ բանակում ունեցած դիրքերը խախտելու և Ասորեստանի դեմ հակակշիռ ուժ ստեղծելու նպատակով Ռուսա II-ը դաշինք է կնքում իր պետության հյուսիսային սահմանների մոտ հաստատված կիմմերների հետ։ Նա իր բանակում սկսում է զգալի չափերով օգտագործել կիմմերներին։

672 թ. Ռուսա II-ը, կիմմերների հետ դաշնակցած, մի խոշոր արշավանք է կատարում դեպի արևմուտք։ Նա գրավում ու կողոպտում է Փոքր Ասիայի արևելյան մասում գտնվող Մուշկինին (այսինքն՝ մուշկերի երկիրը՝ Փռյուգիան), խաթթին (խեթերի երկիրը) և խալիտուն։

Ռուսա II-ը պետության հյուսիսային շրջաններում, հատկապես Արարատյան դաշտում, կատարում է խոշոր շինարարական աշխատանքներ։

Զվարթնոցի տաճարի ավերակների տերիտորիայում հայտնաբերված արձանագրության մեջ Ռուսա II-ը հայտնում է, որ նա

Կուտուրլինի դաշտում (հավանաբար Հրազդանի հովտում) տնկել է խաղողի այգիներ և պտղատու ծառեր, կատարել ցանքս, Իլդարունի (Հրազդան) գետից հանել է ջրանցք և այլն։ Ռուսա II-ի հանած ջրանցքը (Երևանում), որն այժմ էլ գործում է, իր ժայռափոր թունելով ուրարտական նշանավոր կառույցներից է։

Ռուսայի շինարարական գործունեության մեջ ամենանշանավորը Երևանի մոտ գտնվող Թեյշեբաինի քաղաքի (Կարմիր-բլուր) և նրա միջնաբերդի կառուցումն է։ Այս քաղաքը VII դարի առաջին կեսում դառնում է Ուրարտական պետության ռազմա-վարչական և տնտեսական խոշոր կենտրոններից մեկը։

Սկյութների արշավանքը

Ուրարտուն, որն իր կենսական ուժերը ըսպառել ու չլատել էր Ասորեստանի, կիմմերների և տեղական ցեղերի դեմ մղվող երկարատև պայքարում, VII դարի կեսից կանգնում է սկյութական ցեղերի ներխուժման վտանգի առաջ։ VII դարի 80-ական թվականներին սկյութները Հյուսիսային Կովկասից Դերբենդի լեռնանցքով ներխուժում են Արևելյան Անդրկովկաս և այստեղ հաստատում իրենց թագավորությունը։ Այստեղից նրանք ըսկրսում են արշավանքներ կատարել դեպի Առաջավոր Ասիայի երկրները, որոնց թվում և Ասորեստան։ Սակայն Ասորեստանին շուտով հաջողվում է դաշնիք կնքել սկյութների հետ և նրանց ուժերը օգտագործել իր թշնամիների դեմ։

Ուրարտուն Ասորեստանի և նրա դաշնակից սկյութների հարվածից խուսափելու համար աշխատում է բարեկամություն հաստատել Ասորեստանի հետ։ Այդ նպատակով էլ Ռուսա II-ը 654 թվականին մի դեսպանություն է ուղարկում Ասորեստան՝ Բաբելոնիայի և Էլամի դեմ հաղթանակ տարած Ասսուրբանիպալին (668—633) ողջունելու համար։

Սակայն սկյութների հարվածից խուսափելու ուղղությամբ Ռուսա II-ի գործադրած ջանքերը հավանաբար առանձին արդյունք չեն տալիս։ VII դարի կեսին, Ասորեստանի դրդումով, սկյութները հարձակվում են կիմմերների վրա և ջախջախում նրանց։ Հավանաբար, այս ժամանակ էլ սկյութները ներխուժում են նաև Ուրարտուի հյուսիս-արևելյան շրջանները և սոսկալի ավերածություններ գործում։

Սկյութների այս հարվածից խիստ թուլացած՝ Ուրարտուն այժմ աշխատում է իր գլխավոր հակառակորդի՝ Ասորեստանի, հովանավորության տակ մտնել և նրանից օժանդակություն ստանալ։ Դրանով պետք է բացատրել, որ Ռուսա II-ին հաջորդած Սարդուր III-ը

(645—625) նվերներ է ուղարկում Ասսուրբանիպալին և իր գրած նամակներում միսխանակ իր նախորդների նման նրան «եղբայր» անվանելու, անվանում է «իմ տեր»։

Մարաստանը և Ուրարտուի կործանումը

Դեռևս երկրորդ հազարամյակի վերջից (մ. թ. ա.) մարերը ապրում էին Իրանական բարձրավանդակի հյուսիս-արևելյան մասում, իսկ նրանց ցեղակից պարսիկները՝ նույն բարձրավանդակի հարավային մասում։ Մարական և պարսկական ցեղերը մասամբ նստակյաց և մասամբ կիսաքոչվոր հնդեվրոպական ցեղեր էին, որոնց հիմնական զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն էր։

Մարական ցեղերը VII դարի վերջում միավորվում և կազմակերպում են մի ուժեղ ցեղային միություն, որը հետագայում վերածվում է ստրկատիրական պետության։ Մարաստանի (Մեդիա) մայրաքաղաքն է դառնում Էկբատանը (այժմ՝ Համադան)։

Մարաստանը մեծ չափով ուժեղանում և Ասորեստանի վտանգավոր ախոյանն է դառնում Կիաքսար թագավորի (625—585) ժամանակ։ Մարերը Բաբելոնիայի և տեղական ցեղերի հետ դաշնակցած՝ 612 թ. գրավում և կործանում են Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն, իսկ 605 թ.՝ նրա վերջին հենակետը հանդիսացող Կարքեմիշ քաղաքը։ Այսպիսով, երբեմնի հզոր ու աշխարհակալ Ասորեստանը կործանվում և դուրս է գալիս պատմության թատերաբեմից. նրա տերիտորիան բաժանվում է Մարաստանի և Բաբելոնիայի միջև։

Ուրարտուն, որն Առաջավոր Ասիայում տեղի ունեցող այս խոշոր անցքերի ժամանակ հանդես էր եկել որպես Ասորեստանի դաշնակիցը, նույնպես զերծ չի մնում մարերի և նրանց դաշնակիցների հարվածից։ Բաբելոնյան տարեգրության մի վկայության համաձայն 610 կամ 609 թ. (մ. թ. ա.) մարերը գրավում և ավերում են Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան։ Սակայն Աստվածաշնչի մի վկայությունից երևում է, որ այս դեպքից հետո էլ Ուրարտուն շարունակել է պահպանել իր գոյությունը մինչև VI դարի 90-ական թվականները (մ. թ. ա.), Ուրարտուի վերջին թագավորն էր Երիմենայի որդի Ռուսա III-ը (605—590)։

Մոտավորապես 590 թ. (մ. թ. ա.) մարերը մտնում են Արարատյան դաշտ և տեղական ցեղերի օժանդակությամբ կործանում Ուրարտուի վարչական կենտրոնները, որոնց թվում և Թեյշեբաինի քաղաք-ամրոցը։ Հավանաբար, նույն այս ժամանակ է, որ Ուրար-

տական պետությունը վերջնականապես կործանվում և պատմության թատերաբեմից դուրս է գալիս։

Ուրարտուի կործանումից քիչ առաջ մարերը ոչնչացնում են նաև Մաննայի պետությունն ու Անդրկովկասում սկյութների հիմնած թագավորությունը։ Այդ դեպքերից հետո սկյութական ցեղերը մեծ մասամբ վերադառնում են Սև ծովի հյուսիսային ափերը և Հյուսիսային Կովկաս, իսկ տեղում մնացածները՝ ձուլվում նոր կազմավորվող ժողովուրդների հետ։

Դրանից հետո մարերը շարժվում են դեպի արևմուտք և մտնում Փոքր Ասիա։ Սակայն այստեղ նրանց ուժեղ դիմադրություն է ցույց տալիս Լյուդիական պետությունը։ Մարերի և լյուդիացիների միջև տեղի ունեցած կռիվներից հետո Մարաստանի և Լյուդիայի սահմանը դառնում է Ալիս գետը։

Այսպիսով, Կիաքսարի թագավորության վերջում Մարաստանը դառնում է Առաջավոր Ասիայի ամենահզոր պետությունը, որի սահմանների մեջ մտնում էին Իրանական բարձրավանդակի մեծ մասը, Ալենեյան Անդրկովկասը, բուն Ասորեստանը և Փոքր Ասիայի արևելյան շրջանները։

6. ՈՒՐԱՐՏՈՒԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Գիրը IX դարի վերջում (մ. թ. ա.) ուրարտացիները վերցնելով ասորեստանյան սեպագիրը և այն հարմարեցնելով ուրարտերենին, ստեղծում են իրենց սեփական գիրն ու գրականությունը։

Գեղարվեստական ու գիտական բնույթի ուրարտական գրավոր տեքստեր մեզ չեն հասել։ Այդ պատճառով էլ մենք տեղեկություններ չունենք Ուրարտուում գոյություն ունեցող գեղարվեստական գրականության, գիտության և հոգևոր մշակույթի մյուս բնագավառների մասին։

Մեզ են հասել միայն ռազմական, շինարարական, տնտեսական ու կրոնական բնույթի ավելի քան 400 մեծ ու փոքր արձանագրություններ, որոնք փորագրված են ժայռերի, բազալտե սրբատաշ քարակոթողների, շենքերի պատերի, կավե աղյուսների, կավե ու մետաղե իրերի վրա։ Այդ արձանագրությունները գրեթե բացառապես պետական կամ թագավորական վավերագրեր են, որոնք գրված են պաշտոնական շոր լիզվով և միանման ոճով։

Ուրարտական սեպագրերը դրված են ձախից աջ, առանց բառանջատման և տողադարձի։ Նրանք բաղկացած են մոտ հարյուր

վանկագրերից, նույնքան գաղափարագրերից և քիչ թվով դետերմինատիվ, այսինքն՝ բառի բնույթը բացահայտող նշաններից։

Եթե գաղափարագրերը, մի կողմից, ուսումնասիրողներին հնարավորություն են տալիս հեշտությամբ վերծանելու ուրարտական արձանագրությունների իմաստը, ապա մյուս կողմից՝ մեզ դրկում են ու անհնարին են դարձնում իմանալու, թե այդ գաղափարագրերի տակ թաքնված բառերը ուրարտացիները ինչպես են արտասանել կամ անվանել։

Ուրարտացիների մոտ թվական հաշվումները հիմնված են տասնորդական սիստեմի վրա։

Բացի սեպագրերից, ուրարտացիները օգտագործել են նաև հիերոգլիֆներ։

Մեզ հասած ուրարտական բառապաշարի և քերականական ձևերի սահմաններում դժվար է որոշակիորեն նշել ուրարտերենի ցեղակցական կապը հին կամ ժամանակակից լեզուների հետ։

Պաշտամունքը

Ուրարտական պետության կազմավորմանը զուգընթաց ձևավորվում և առաջանում է նաև ուրարտական պաշտամունքը։ Վանի մոտ գտնվող «Մհերի դուռ» կոչվող ժայռի վրա Իշպուինի թագավորը և նրա որդի Մենուան թողել են մի արձանագրություն, որտեղ նշել են ուրարտական պանթեոնի բոլոր աստվածներին և նրանցից յուրաքանչյուրին մատուցվելիք զոհերի քանակը։ Այդ արձանագրությունից տեղեկանում ենք, որ ուրարտական պանթեոնի մեջ մտնում էին բուն ուրարտական և նվաճված ցեղային երկրների մեծ ու փոքր 79 աստված։

Ուրարտացիների գլխավոր աստվածը կոչվում էր Խալդ, որը պատկերացվում էր առյուծի վրա կանգնած մարդու կերպարանքով։ Նա համարվում էր երկնքի, բարության, քաջության և պատերազմի աստվածը։ Ուրարտական թագավորները Խալդ աստծու անունով էին կռվի գնում և նրան էին վերագրում տարած հաղթանակները։ Խալդ աստծու գլխավոր տաճարը գտնվում էր Մուսասիր քաղաքում։ Բոլոր աստվածներից ամենից շատ զոհ մատուցվում էր Խալդ աստծուն։ Խալդ աստծու կինը Արուբանի աստվածուհին էր։

Ուրարտական պանթեոնի երկրորդ գլխավոր աստվածը Թեյշեբան էր։ Սա համարվում էր ջրի, անձրևի, հեղեղի, փոթորկի աստվածը։ Սրա կինն էր Խուբա աստվածուհին։ Թեյշեբա աստծու գլխավոր տաճարը գտնվում էր Կումենու քաղաքում, որի տեղը մինչև այժմ հայտնի չէ։

Երրորդ տեղը ուրարտական պանթեոնում գրավում էր Տարևի

աստված Շիվինին, որի խորհրդանիշը պատկերվում էր ճառագայթող արևի սկավառակով կամ հրե գնդով։ Սրա կինն էր Ուրարտուի մայրաքաղաքի՝ Տուշպայի, աստվածուհի Տուշպեյան։ Շիվինի աստծու և նրա կնոջ գլխավոր տաճարը գտնվում էր մայրաքաղաքում։

Բացի երրորդությունն կազմող վերոհիշյալ գլխավոր աստվածներից, ուրարտական պանթեոնում գոյություն ունեին նաև տարբեր քաղաքների, ցեղային երկրների, հողի, ջրի, ծովի, լեռան, քարայրի, ճանապարհի, լուսնի, աստղերի և այլ աստվածներ։ Ուրարտացիների մոտ մեծ չափով տարածված էր նաև սրբազան ծառերի պաշտամունքը։

Ճարտարապետությունը

Ուրարտուում զարգացման բարձր աստիճանի վրա էր գտնվում ճարտարապետությունը և շինարարական տեխնիկան։ Ուրարտացիները կառուցել են քաղաքներ, ամրոցներ, պալատներ, տաճարներ, բնակելի շենքեր, ջրանցքներ, արհեստական լճեր և այլ շինություններ, որոնց ավերակները ցրված են պատմական Հայաստանի ամբողջ տերիտորիայում։

Ուրարտական ճարտարապետական հուշարձաններից համեմատաբար լավ են ուսումնասիրված էրեբունի և Թեյշեբաինի քաղաքների միջնաբերդերը։

Էրեբունիի եռանկյունաձև միջնաբերդը շրջապատված է հղել բազալտե հիմքի վրա հում աղյուսով շարված, 3 մետր լայնություն և մոտ 15—20 մետր բարձրություն ունեցող ատամնավոր հզոր պարսպով։ Պեղումների միջոցով միջնաբերդում հայտնաբերվել են Արգիշտի I-ի կառուցած պալատական համալիրը՝ իր աշխարհիկ և պաշտամունքային շենքերով, ցորենի մի խոշոր պահեստ, գինու մառան և բնակելի թաղամասի հետքեր։ Հայտնաբերված բոլոր շենքերը միհարկանի են, հում աղյուսով շարված, առանց պատուհանների, երթիկով։ Ճարտարապետական արվեստի արժեքավոր ու հետաքրքիր կոթողներ են պալատական սյունազարդ, հանդիսավոր ընդունելության հոյակապ դահլիճը, խալդ աստծուն նվիրված տաճարը, որոնց պատերը գեղազարդված են որսի, կենաց ծառերի, ռազմական ու կրոնական երթերի խմբային հիանալի որմնանկարներով։

Համանման շինարարական նյութերով ու տեխնիկայով, բայց պաշտպանական ավելի թույլ հզորությամբ է կառուցված նաև Թեյշեբաինի քաղաքի միջնաբերդը։ Նրա պարիսպը ըստ տեղեկանքի ունեցել է 6-ից մինչև 12 մետր բարձրություն։ Միջնաբերդի ներսի հսկայական տարածությունը բաղկացած է 120—150 կից

սենյակներից։ Շենքը հիմնականում եղել է միհարկանի, բացի նրա կենտրոնական մասից, որն ունեցել է երկու հարկ։ Առաջին հարկի սենյակներում տեղավորված են ցորենի, գարու և գյուղատնտեսական այլ մթերքների պահեստները, գինու մառանները, ձիթահանքը, մթերքների վերամշակման ցեխերը, արհեստանոցները և այլն։

Ուրարտուի մայրաքաղաք Տուշպայի (Վան) միջնաբերդը շրջապատված է մշակված ու լավ շարված հսկայական մեծությունն ունեցող քարերից, իսկ Թոփրակ-կալայում հայտնաբերված տաճարը՝ տարբեր գույնի սրբատաշ քարերից։

Ճարտարապետության տեսակետից բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում Մուսասիրի տաճարը, որն ունեցել է երկթեք տանիք, քանդակներով և հոնիական ոճի վեց սյուներով գեղազարդված ճակատ։ Ուսումնասիրողները գտնում են, որ այս տաճարը հունական դասական ճարտարապետության նախատիպերից է։

Ուրարտացիները Վանում, և այլ վայրերում կառուցել են նաև ժայռափոր ընդարձակ բնակարաններ, դահլիճներ, որմնախորշեր, հարթակներ, սանդուղքներ, շրանցքի թունելներ և այլն։ Ժայռափոր այս շինությունները ցույց են տալիս ուրարտական շինարարական արվեստի ու տեխնիկայի բարձր զարգացումը և վարպետների բացառիկ հմտությունը։

Քանդակագործությունը և կիրառական արվեստը

Ուրարտուում զարգացած էին նաև քանդակագործությունը և կիրառական արվեստը։ Ուրարտացի վարպետները արձաններ, գեղարվեստական իրեր են պատրաստել պղնձից, բրոնզից, ոսկուց, արծաթից, քարից, կավից և ոսկրից։

Քանդակագործական արվեստի ակնառու և նուրբ ճաշակով պատրաստված ստեղծագործություն է ուրարտական աստվածուհիներից մեկի բրոնզե արձանիկը, որ գտնվել է Վանի շրջակայքի Դարարեյ բերդի ավերակներում և այժմ պահվում է Հայկական ՍՍՀ պատմության թանգարանում։ Որոշ չափով այս արձանիկի հետ է առնչվում Թոփրակ-կալայում գտնված ոսկե մեդալիոնը, որի վրա ռեալիստական մեծ վարպետությամբ բանդակված են գահին բազմած վերոհիշյալ աստվածուհին և նրա առաջ կանգնած բազկատարած թագուհին։ Արվեստի հիանալի և ուշագրավ նմուշներ են Կարմիր-բլուրում ու Թոփրակ-կալայում գտնված թեյշեբա աստծու, գահի մասեր հանդիսացող թևավոր առյուծների ու ցուլերի, ձիու, ղլխի բրոնզե արձանիկները։ Արվեստի մի արժեքավոր նմուշ

է նաև Կարմիր-բլուրում գտնված քարե տուփը, որի կողերը գեղազարդված են որսի տեսարաններով, իսկ կափարիչի վրա քանդակված է նստած առյուծ։

Ուրարտացի վարպետները հիանալի կերպով տիրապետում էին բրոնզե արձաններն ու գեղարվեստական իրերը ոսկու բարակ շերտով պատելու կամ ոսկեզօծելու, քարը մետաղի հետ զուգակցելու տեխնիկային։ Այս տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Բեռլինի թանգարանում գտնվող ուրարտական արձանիկը, որի իրանը շինված է ոսկեզօծված բրոնզից, իսկ գլուխը՝ սպիտակ քարից։ Ուշագրավ է նաև Լենինգրադի Էրմիտաժում պահվող արձանիկներից մեկը, որը գահի մաս է կազմել և ունի մարդու գլխով թևավոր առյուծի տեսք։ Սրա իրանն ու գլուխը պատրաստված են ոսկեզօծված բրոնզից, դեմքը՝ սպիտակ քարից, իսկ աչքերն ու հոնքերը դրվագազարդված են։ Հար և նման ձևով է շինված նաև Բրիտանական թանգարանում գտնվող գիշատչի գլխով վիշապի արձանիկը։

Արվեստի բարձրարժեք հուշարձաններ են նաև գեղազարդված վահանները, սաղավարտները, կապարճները, գոտիները, ամաններն ու այլն։ Կարմիր-բլուրում գտնված Արգիշտի I-ի սաղավարտը գեղազարդված է սրբազան ծառերի, նրանց երկու կողմերը կանգնած աստվածների, ռազմակառքերի, իսկ Սարդուր II-ի վահանը՝ առյուծների ու ցլերի հոյակապ քանդակներով։ Սրընթաց արշավող հեծյալ մարտիկների, ռազմակառքերի ու կառավարների նույնպիսի հիանալի քանդակներով են գեղազարդված նաև Արգիշտի I-ի և Սարդուր II-ի կապարճները։

Ոսկերչական հմտալի և նուրբ աշխատանքի արգասիք են Կարմիր-բլուրում հայտնաբերված ոսկե ակտնջողները, ոսկե ապարանջանը, որի երկու ծայրերը առյուծի գլխի տեսք ունեն։

Ուրարտացիները պալատների և տաճարների պատերը զարդարել են որմնանկարներով, գորգերով, դեկորատիվ վահաններով, զենքերով և գեղարվեստական այլ իրերով։ Բացի Էրեբունիի միջնաբերդից, որմնանկարների բեկորներ են գտնվել նաև Կարմիր-բլուրում, Թոփրակ-կալայում, Երզնկայի մոտ գտնվող Այթին-թափայում և այլուր։

Ուրարտուի մշակույթի ժառանգությունը

Ուրարտուն իր գոյության ավելի քան երկու և կես դարի ընթացքում ստեղծեց Հին Արևելքի ամենազարգացած մշակույթներից մեկը, որը հանդիսանում է համաշխարհային մշակույթի անբաժանելի մասը։

Ուրարտացիները խոր ազդեցություն թողեցին Հայկական լեռնաշխարհի, Անդրկովկասի ու իրենց հարևան ցեղային երկրների վրա և մեծ չափով նպաստեցին, այդ երկրների ցեղերի տնտեսական, հասարակական ու մշակութային կյանքի զարգացմանը։

Ուրարտացիները ավելի քան խոր ազդեցություն թողեցին նաև սկզբում հայկական ցեղերի, իսկ այնուհետև նոր կազմավորվող հայ ժողովրդի վրա։

Հայկական լեռնաշխարհում ուրարտացիներին փոխարինեցին հայերը, հայկական պետականությունը առաջացավ ու զարգացավ նախկին Ուրարտուի տերիտորիայի վրա, իսկ ուրարտական ցեղերը ձուլվեցին հայերի հետ և հանդիսացան կազմավորված հայ ժողովրդի հիմնական նախնիներից մեկը։ Այս առումով էլ ուրարտական մշակույթի անմիջական ժառանգորդը հայ ժողովուրդն է։

Ուրարտացիները հայերին փոխանցեցին իրենց պետական ու հասարակական կյանքի ավելի զարգացած ձևերը և տնտեսության ու մշակույթի տարբեր բնագավառներում իրենց ձեռք բերած նվաճումները։

Բացի հայոց լեզվի բառային ֆոնդում պահպանված ուրարտերեն բազմաթիվ բառերից, հայերը ժառանգել են նաև ուրարտական ժամանակաշրջանի տեղանուններից ու հատուկ անուններից շատերը. ուրարտական ծագում ունեն ուրարտերեն «նի» հոգնակիով և ուրարտերեն ու հայերեն «նիք» կրկնակի հոգնակիներով վերջացող Հայաստանի աշխարհագրական գրեթե բոլոր տեղանունները և նախարարական տների անունները. օրինակ՝ Սյունիք, Աղձնիք, Գեղարքունիք, Ռշտունիք, գետերից ու բնակավայրերից՝ Արածանի, Գառնի, Արզնի, Բջնի, իսկ նախարարական տներից՝ Արծրունի, Գնունի, Գնթունի, Խոռխոռունի և այլ անուններ։ Ուրարտական ծագում ունեն նաև Արարատ-Այրարատ, Տոսպ, Տարոն, Վան, Ռանհեշ, Ախուրյան և բազմաթիվ այլ տեղանուններ։

Անհրաժեշտ է նշել նաև, որ Ուրարտուի մայրաքաղաք Տուշպա-վանը և Արգիշտիխինիլի-Արմավիրը դարձան Հայաստանի առաջին մայրաքաղաքները, հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի առաջին կենտրոնները։ Հայկական ՍՍՀ-ի մայրաքաղաք Երևանը ևս մեզանից ավելի քան 2750 տարի առաջ հիմնադրել են ուրարտացիները։

ԳԼՈՒԽ III

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ուրարտուի կործանումից հետո, VII դարի վերջում կամ VI դարի սկզբում (մ. թ. ա.), Հայկական լեռնաշխարհում հանդես է գալիս հայ ժողովուրդը։ Այդ ժամանակաշրջանից սկսած Ուրարտական պետության նախկին տերիտորիան՝ Հայկական լեռնաշխարհը, դառնում է հայ ժողովրդի հայրենիքը։

Հայերը իրենց անվանում են «հայ», իսկ երկիրը՝ «Հայաստան» կամ «Հայք»։ Մինչդեռ բոլոր մյուս ժողովուրդները, բացի վրացիներից, հայերին անվանում են «արմեն», իսկ նրանց երկիրը՝ «Արմենիա»։ Վրացիները հայերին անվանում են «սոմեխի», երկիրը՝ «Սոմխեթի»։

Հայ ժողովրդի էթնիկական ծագման և կազմավորման հարցը մեր ժողովրդի պատմության տակավին չպարզաբանված, շատ կողմերով մութ ու վիճելի հարցերից մեկն է։

Ո՛չ հայկական և ո՛չ էլ օտար սկզբնաղբյուրներում հայ ժողովրդի ծագման ու նրա կազմավորման մասին պատմական ճշգրիտ ու որոշակի վկայություններ չեն պահպանվել։ Մեզ են հասել միայն հայկական, վրացական ու հունական առասպելախառն ավանդություններ։

1. ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ժողովրդական ավանդությունը

Առասպելախառն ավանդությունների մեջ ամենահինը և արժեքավորը հայկական ժողովրդական ավանդությունն է, որը հայտնի է նաև «Հայկի ու Բելի առասպել» անունով։

Այս ավանդությունը մեզ է հասել երկու տարբեր սկզբնաղբյուրնե-

րից՝ Խորենացու և Սեբեոսի պատմական աշխատություններից։ Ավանդության բովանդակությունը հետևյալն է.

Առաջին աստվածներից առաջացած հաղթանդամ ու վիթխարի հսկաներից մեկը Թորգոմի որդի Հայոսեոսության Հայկն էր։

Գեղապատշաճ ու քաջագանգուր, խայտակն ու հաստաբազուկ Հայկը, ընդդիմանում է բոլոր նրանց, ովքեր ձգտում էին իշխանություն ձեռք բերել հսկաների և դյուցազունների վրա։ Բաբելոնում աշտարակաշինության անհաջող փորձից հետո հսկաներից մեկը՝ Տիտանյան Բելը, բռնանում է բոլորի վրա և իրեն արքա է հայտարարում։ Հայկը չի կամենում հնազանդվել Բելին և իր որդիների, դուստրերի ու թոռների հետ, թվով մոտ երեք հարյուր հոգի, Բաբելոնից հեռանում, գնում է Այրարատի երկիրը և փնակվում է մի լեռնադաշտում, ու այդ դաշտը այնուհետև կոչվում է Հայք։

Լսելով Հայկի անհնազանդության մասին, Բելը պահանջում է նրանից ետ վերադառնալ և հնազանդվել իրեն։ Սակայն Հայկը մերժում է կատարել այդ պահանջը։

Բելը զայրացած հետևակ զորքերի բազմությամբ գալիս հասնում է Արարատի երկիրը։ Հայկը, Բելի հարձակման լուրն առնելով, անմիջապես հավաքում է իր քաջ և աղեղնավոր որդիներին ու թոռներին և շարժվում Բելի դեմ։ Աղի ջուր և մանր ձկներ ունեցող Ծովակի (Վանա լճի) մոտ, բարձր լեռների միջև գտնվող մի դաշտաձև տեղում Հայկը և նրա ուղեկիցները հանդիպում են Բելի զորքին։ Ինքը Բելը, հսկաներով շրջապատված, գտնվում էր մի ջլրի վրա։

Երկու կողմի հսկաները իրար են զարնվում և այդ ընդհարումից ահագին դղրդյուն է բարձրանում։ Մարտի ընթացքից զարհուրած Բելը որոշում է իջնել ջլրից և ամրանալ զորքի մեջ։ Աղեղնավոր Հայկը այդ բանը նկատելով, առաջ է անցնում և մոտենում Բելին պինդ քաշում է իր լայնալիճ աղեղը և երեքթևյան նետի սլաքը դիպցնում նրա կրծքի զրահատախտակին. սլաքը, թափով անցնելով և թիկունքից դուրս գալով, ընկնում է գետնին։ Եվ այսպես, հպարտ Բելը տապալվում է, իսկ նրա զորքը փախուստի է դիմում։

Հայկը հաղթանակի առթիվ ճակատամարտի տեղում շինում է դաստակերտ և անվանում է Հայք, նույն պատճառով դավառն էլ անվանվում է Հայոց ձոր, իսկ մեր աշխարհն էլ մեր նախահոր Հայկի անունով կոչվում է Հայք։

Ավանդության մեջ այնուհետև պատմվում է, թե ինչպես Հայկի որդին՝ Արմենակը, և նրա հաջորդ սերունդները շարժվելով դե-

պի հյուսիս, բնակություն են հաստատում Արարատյան դաշտում և Հյուսիսային Հայաստանի տարբեր մասերում, որտեղ և նրանց անունով են կոչվում առանձին գավառների ու բնակավայրերի անունները։ Այսպես, օրինակ՝ Արմենակի անունով է կոչվում Արագածոտն լեռը և Արագածոտն գավառը, Արամայիսի անունով՝ Արմավիրը, Շարայի անունով՝ Շիրակը, Գեղամի անունով՝ Գեղարքունիքը, Սիսակի անունով՝ Սիսականը, Արայի անունով՝ Այրարատը և այլն։

Ըստ ավանդության, Հայկի սերնդից էր նաև Արամը, որը բազմաթիվ քաջագործություններ է կատարում և Հայոց աշխարհի սահմանները ընդարձակում։ Այդ պատճառով էլ օտարները Արամի անունով հայերին սկսում են անվանել արմեն, իսկ նրանց երկիրը՝ Արմենիա։

Հայագիտության մեջ տիրել է այն կարծիքը, թե այս ավանդությունը նախահայկական ծագում ունի, և որ նրա մեջ արտացոլվել են Ասորեստանի դեմ ուրարտացիների մղած դարավոր պայքարի միայն արձագանքներն ու կրոնական առասպելները։ Սակայն այս կարծիքը, մասամբ միայն ճիշտ լինելով, թերի է և անընդունելի։ Իրականն ու ճիշտն այն է, որ ավանդության մեջ իրենց արտացոլումն են գտել նաև հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը, այդ պրոցեսին տարբեր ցեղերի ունեցած մասնակցությունը, հայկական ցեղերի աստիճանական տարածումը Հայկական լեռնաշխարհում, հայկական հնագույն դիցաբանական զրույցները և այլն։ Ճիշտ է, որ ավանդության առանձին մասերը (Արամի, Արա Գեղեցիկի ու Շամիրամի մասին և այլն) ունեն նախահայկական ծագում, սակայն ինքը ավանդությունը ստեղծվել է հայ ժողովրդի կազմավորման ժամանակ, հավանարար մ. թ. ա. VI—V դարերում, երբ հայկական ցեղերը դեռևս գտնվում էին տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հասարակության անցման շրջանում։

Ինչպես արդեն ճիշտ կերպով ցույց են տվել ուսումնասիրողներից շատերը, ավանդության մեջ հիշատակվող հերոսների մեծ մասը ոչ թե պատմական անձնավորություններ են, այլ հայ ժողովրդի կազմավորման պրոցեսին մասնակցած և նրա կազմի մեջ մտած տարբեր ցեղերի հերոսականացված ու անհատականացված էպոնիմներ։ Այսպես, օրինակ՝ ավանդության մեջ Հայկը հանդես է գալիս որպես հայ ցեղի էպոնիմը, Արմենակը՝ արմեն ցեղի, Արան՝ ուրարտական ցեղի և այլն։ Տարբեր ցեղերի էպոնիմները հաճախ միաժամանակ հանդիսացել են նաև նույն այդ ցեղերի ասույածները։ Հին Արևելքում ստեղծված շատ ավանդությունների նման, այս-

տեղ ևս տարբեր ցեղերի գործողությունները վերագրված են նրանց աստվածներին։

Վրացական ավանդությունը

Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ծագման մասին մեզ է հասել նաև վրացական մի ավանդություն։

Այդ ավանդության համաձայն հայերի նախահայր Հայկը, վրացիների նախահայր Քարթլոսը, ազվանների նախահայր Ռանոսը, եգերների նախահայր Նգրեսը և վրացական ու կովկասյան մի քանի այլ ցեղերի նախահայրերը հարազատ եղբայրներ են եղել և սերել են մի հորից՝ Թորգոմից։

Բաբելոնի աշտարակաշինությունից և լեզուների բաժանումից հետո Թորգոմը, որդիներով և իր ամբողջ ժողովրդով դուրս գալով Բաբելոնից, բնակություն է հաստատում Մասիս և Արագած լեռների միջև։

Սակայն շուտով Թորգոմի ժողովուրդը բազմանում է, և Մասիսի ու Արագածի երկիրը ի վիճակի չի լինում տեղավորել նրանց, որի պատճառով էլ նրանք տարածվում են և ընդարձակում իրենց բնակության սահմանները Սև ծովից մինչև Կասպից ծովն ու Կովկասյան լեռները։

Թորգոմի որդիները իրենց հոր մահից մի քանի տարի անց ապստամբություն են բարձրացնում աշխարհի առաջին բռնակալ Նեբրովթի դեմ և մարտում սպանում նրան։ Նեբրովթին հաղթելուց հետո դյուցազն եղբայրները սկսում են հանգիստ և անկախ կերպով իշխել իրենց երկրներում։ Ավանդությունը ավելացնում է նաև, որ «Քարթլոսը և Հայկը, ինչպես և նրանց եղբայրները, իրենց ամբողջ կյանքի ընթացքում փոխադարձաբար սեր էին տածում իրար նկատմամբ և իրար օգնում ամեն տեսակ կարիքի ժամանակ»։

Վրացագետները հիմնավոր փաստերով արդեն ցույց են տվել, որ այս ավանդությունը ստեղծվել է շատ ուշ ժամանակաշրջանում, հավանաբար IX—X դարերում, հայկական ժողովրդական ավանդության անմիջական ազդեցության տակ և նրա նմանությամբ ու հետևությամբ։ Սրանից հետևում է, որ վրացական այս ավանդությունը հայ ժողովրդի կազմավորման հարցի ուսումնասիրման տեսակետից առանձին դիտական արժեք չի կարող ունենալ։

Այս ավանդության հիմնական արժեքն այն է, որ այնտեղ շատ հիանալի կերպով ու վառ գույներով արտահայտված է առաջին հերթին հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը,

նրանց փոխադարձ օգնությունը ու համատեղ պայքարը օտարերկրյա նվաճողների դեմ։

Հունական առասպելը

Հայ ժողովրդի ծագման մասին մեզ է հասել նաև հունական մի առասպել, որը բերված է հույն նշանավոր աշխարհագիր Ստրաբոնի աշխատության մեջ։

«Պատմում են,—գրում է Ստրաբոնը,—որ դեպի Կողքիս նավարկման ժամանակ Յասոնը, Թեսալացի Արմենոսի հետ, գնացել էր մինչև Կասպից ծովը և անցել Իբերիան, Ալբանիան (Աղվանքը) և Արմենիայի ու Մարաստանի մեծագույն մասը, ինչպես այդ վկայում են Յասոնին նվիրված սրբավայրերը և բազմաթիվ հիշատակարաններ։ Պատմում են նաև, որ Արմենոսը Արմենիոն քաղաքից էր, որն այն վայրերից մեկն էր, որոնք գտնվում էին Բոյբեյիս լճի շուրջը, Փերեի և Լարիսայի միջև, և որ նրա ուղեկիցները բնակվել էին Ակիլիսենում և Սիսպիրիտիսում՝ մինչև Կալաթեն և Ադիաբենե։ Եվ պատմում են նմանապես, որ երկիրն Արմենիա էր անվանվել Արմենոսի անունով»։

Եթե ընդունենք, որ այս առասպելի մեջ հիշատակվող Արմենոսը արմեն ցեղի էպոնիմն է, ապա ստացվում է, որ հին հունական արգոնավորդների առասպելի ստեղծման ժամանակ, այսինքն՝ XI—X դարերում (մ. թ. ա.), արմենները, դուրս գալով Թեսալիայից, եկել ու հաստատվել են Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում և Հյուսիսային Միջագետքում։ Սակայն նման ենթադրություններ անելու համար պատմական հիմք չկա։

Ստրաբոնը իր աշխատության մեջ մի այլ տեղում կրկին, դրեթե բառացիորեն, մեջբերելով այս առասպելը, ավելացնում է. «Կիրսիլոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին ու նրանց հետ եղողները, որ մասնակցում էին Ալեքսանդրի արշավանքին, ասում են, որ երկիրն Արմենիա էր անվանվել Արմենոսի անունով»։

Այս վկայությունից ոչ միայն երևում է, որ Ստրաբոնը այս առասպելը վերցրել է Կիրսիլոս Փարսալացուց և Մեդիոս Լարիսացուց, այլև, հավանաբար, առասպելը հորինվել է IV դարի վերջում (մ. թ. ա.), Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ, երբ հույները նման առասպելներ հորինել էին նաև պարսիկների ու մարերի Բալկանյան թերակղզուց դաղթած լինելու մասին։

Վերոհիշյալ դիտողությունից և պատմական այլ փաստերից երևում է, որ այս առասպելը ոչ հայ ժողովրդի կազմավորման հարցի ուսումնասիրման տեսակետից առանձին գիտական արժեք չի կարող ունենալ։

2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կղերա-ֆեոդալական տեսությունը

Մինչև XIX դարի սկիզբը մարդկության, առանձին ժողովուրդների ու լեզուների առաջացումը գրեթե բացառապես բացատրվում էր Աստվածաշնչի առասպելներով։ Ըստ այդ առասպելների՝ երկրագնդի վրա մարդկությունը առաջին անգամ առաջացել է աստծու կողմից ստեղծված նախամարդու՝ Ադամի, իսկ երկրորդ անգամ՝ իր տապանով Արարատ լեռան վրա հանգչած և ջրհեղեղից փրկված Նոյ նահապետի սերնդից։ Մի այլ առասպելի համաձայն՝ աշխարհի տարբեր ժողովուրդները և նրանց լեզուներն առաջացել են բաբելոնյան աշտարակաշինության ժամանակ, երբ իբր թե աստված խառնել է մարդկանց լեզուները, որպեսզի նրանք չհասկանան իրար և չկարողանան կառուցել դեպի երկինք, աստծու մոտ բարձրացվող աշտարակը։

Միջնադարյան պատմագրության մեջ տիրում էր այն տեսակետը, որ աշխարհի ամենահին, Ադամի և Նոյ նահապետի սերնդից սերած ժողովուրդը եղել են հրեաները, իսկ մինչև բաբելոնյան աշտարակաշինությունը գոյություն ունեցող միակ լեզուն՝ եբրայերենը։ Միջնադարյան հայ մատենագիրները ևս պաշտպանում էին այս տեսակետը։ Նրանք միաժամանակ գտնում էին, որ հայոց լեզուն բաբելոնյան լեզվախառնման ժամանակ առաջացած լեզուներից մեկն է, որը հայերի նախահայր Հայկը և նրա տոհմի անդամները Բաբելոնից բերել են Հայաստան։

XVIII դարում և XIX դարի սկզբում մասամբ եվրոպական, իսկ հիմնականում հայ կղերա-ֆեոդալական պատմագրության ու լեզվաբանության ներկայացուցիչները, հիմք ընդունելով Աստվածաշնչի առասպելները, հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագման մասին ստեղծում են մի տեսություն, ըստ որի մարդկությունը երկու անգամ էլ, այսինքն՝ թե՛ Ադամի և թե՛ Նոյի սերնդից, առաջացել է Հայաստանում, որով և Հայաստանը եղել է մարդկության օրրանը կամ նրա նախահայրենիքը, հայ ժողովուրդը հանդիսացել է աշխարհի ամենահին ժողովուրդը, իսկ հայերենը՝ մարդկության նախամայր լեզուն։ Այս կապակցությամբ էլ հիշյալ տեսության հետևակները, մի շարք բռնազբոսիկ, շինծու ու մտացածին փաստարկներ բերելով և դրանք համադրելով իրար ճգնել են «ապացուցել», որ Աստվածաշնչում նկարագրված դրախտը գտնվել է Հայաստանում։ Նրանք աշխատել են «հիմնավորել», որ ջրհեղեղից հետո Արարատից իջնելով, Նոյը և իր հաջորդները մնացել են Հայաստա-

նում և խոսել են հայերեն։ Ըստ նրանց՝ այս իրողությունը «հաստատում են» Հայաստանի մի շարք տեղանուններ. այսպես, օրինակ՝ այն տեղը, ուր Նոյը ուռի է տնկել, կոչվել է «Ակոռի» («արի ուռի»), Նոյի իջևանած առաջին վայրը անվանվել է «Նախճավան» («նախ իջևան»), իսկ Նոյի՝ հեռվից տեսած առաջին բնակավայրը՝ «Երևան» («հրևալ» բառից)։

Հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագման մասին գոյություն ունեցող կղերա-ֆեոդալական այս տեսությունը գիտական ոչ մի արժեք չի կարող ունենալ։

Պատմա-համեմատական կամ հնդեվրոպական տեսությունը

XIX դարի սկզբում հայ ժողովրդի ու հայոց լեզվի ծագման ու ցեղակցության մասին առաջացավ մի նոր տեսություն։ Դա պատմա-համեմատական կամ հնդեվրոպական լեզվաբանության առաջ քաշած տեսությունն էր։

1837 թ. առաջին անգամ Հ. Պետերմանը, իսկ այնուհետև նաև Ֆ. Վինդիշմանը, Ֆ. Բոպպը և ուրիշներ ապացուցեցին, որ հայերենը ևս հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուներից է։ Սկզբում տիրում էր այն կարծիքը, որ հայերենը պատկանում է իրանական կամ արիական ճյուղին։ Սակայն հետագայում Հ. Հյուբշմանը և նրա հետևորդները վերջնականապես և հիմնավոր կերպով հաստատեցին, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի մի անկախ ու ինքնուրույն ճյուղն է կազմում։

Հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը հաստատելուց հետո բնական է, որ այս տեսությանը հետևող լեզվաբաններն ու պատմաբանները պետք է զբաղվեին նաև հայ ժողովրդի ծագման հարցով։ Նրանք պետք է աշխատեին պարզել, թե ովքեր են եղել ներկա հայերի հնդեվրոպական անմիջական նախնիները և սրանք երբ, որտեղից ու ինչ ճանապարհներով են եկել ու հաստատվել իրենց նոր հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում։

Հենվելով հայ ժողովրդի ծագման մասին Ստրաբոնի մոտ բերված առասպելի և հույն պատմիչների մի քանի վկայությունների վրա, հնդեվրոպաբանները դատեցին, որ ներկա հայերի հնդեվրոպացի նախնիները հանդիսացել են արմենները, որոնք հետագայում միայն տեղական ոչ հնդեվրոպական մի ցեղից վերցրել կամ ժառանգել են իրենց «հայ» անունը։ Հենվելով նույն այդ վկայությունների վրա, նրանք արմենների դաղթի մասին զարգացրին հետևյալ տեսությունը. պատմական շատ հեռավոր անցյալում արմենները հնդեվրոպական մյուս ցեղերի կամ ժողովուրդների հետ միասին, դուրս գալով նախահայրենիքից, նախ եկել բնակություն են հաստատել

Բալկանյան թերակղզում՝ Թեսալիայում։ Այնուհետև արմենները լեզվական ու արենակցական տեսակետից իրենց անմիջականորեն ցեղակից թրակա-փռյուգիական ցեղերի հետ, մոտ XIII—XII դարերում (մ. թ. ա.), դուրս գալով նաև Բալկանյան թերակղզուց և անցնելով Հելլեսպոնտոսը, ներխուժել են Փոքր Ասիա, որտեղից էլ 500—600 տարվա ընթացքում, դանդաղ կիրպով առաջ շարժվելով դեպի արևելք, VII դարի վերջում (մ. թ. ա.) մտել են Հայկական լեռնաշխարհ և հաստատվել իրենց նոր հայրենիքում։ Ըստ հնդեվրոպաբանների՝ արմենները են գլխավորել հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը և իրենց հետ ձուլել Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերին։

Հայ ժողովրդի ու հայոց լեզվի ծագման մասին հնդեվրոպական այս տեսությունը շուտով տարածվեց և ընդունելություն գտավ թե՛ հայ և թե՛ օտար լեզվաբանների ու պատմաբանների կողմից։

Այս տեսության մեջ գիտականորեն ճիշտ է այն, որ հայոց լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին և կազմում է նրա ճյուղերից մեկը։ Ճիշտ է նաև այն, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ առաջավոր դեր են կատարել ներկա հայերի հնդեվրոպական նախնիները։

Սակայն այն պնդումները, թե հայերի հնդեվրոպական միակ նախնիները հանդիսացել են արմենները և նրանք դաղթել են Բալկաններից ու անմիջապես ցեղակից են եղել թրակա-փռյուգիական ցեղերի հետ՝ պատմական հաստատուն փաստերով ապացուցված չեն։

Հաբեթական և ասիական տեսությունները

Այսպես կոչված հաբեթական լեզվաբանության տեսության հիմնադիր Ն. Մարը հայոց լեզվի ծագման մասին առաջ է քաշում այլ տեսակետ։ Բազմաթիվ բառերի անհիմն, ոչ գիտական մեկնություններով, նա սկզբում փորձում էր ապացուցել, որ հայերենը խառնածին լեզու է՝ կազմավորված հաբեթական (կովկասյան) և հնդեվրոպական երկրնույթի համազոր շերտերից։ Հետագայում նա, երբ ստեղծում է լեզուների աստիճանական զարգացման իր տեսությունը, գտնում է, որ հայերենը հաբեթական աստիճանից հնդեվրոպական աստիճանին փոխանցվող լեզվի դասական օրինակ է։

Հետևելով այս տեսությանը, հատկապես Ն. Մարի, հայ հետևորդները աշխատեցին ոչ միայն ժխտել հայերենի հնդեվրոպական բնույթը, այլև ապացուցել, որ հայ ժողովուրդը և հայոց լե-

զուն կազմավորվել են բացառապես տեղաբնիկ ցեղերի ու նրանց լեզուների միաձուլման, խաչավորման միջոցով։

Գ. Ղափանցյանի տեսակետի հիմքում ևս փաստորեն ընկած է հայոց լեզվի խառնածին լինելու տեսությունը։ Ի տարբերություն Ն. Մառի և նրա հետևորդների, նա գտնում է, որ հայերենը հին փոքրասիական ծագում ունի և պատկանում է ասիանիկ կոչվող լեզվախմբին, որը «կազմվել է հայասցիների, խեթերենի, խուրրիտա-ուրարտական լեզուների, ինչպես և հնդեվրոպական մի (կամ մի քանի) լեզվի խառնուրդով»։ Գ. Ղափանցյանը ճիշտ է նշում, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ առաջատար, գլխավորող դերը կատարել են հայ (հայասցիներ) և արմեն կոչվող ցեղերը։ Սակայն նա գտնում է նաև, որ հայասցիներն ու արմենները ոչ թե հնդեվրոպական, այլ տեղաբնիկ ցեղեր են, որոնցից առաջինը ազդակից է եղել խեթական, բալայական, վրացական, բայց հատկապես մենդրելական ու ճանական, իսկ երկրորդը՝ խուրրիտա-ուրարտական ցեղերին։

Ն. Մառի, նրա հետևորդների և Գ. Ղափանցյանի վերոհիշյալ տեսակետները հիմնավոր չեն։ Գիտականորեն ապացուցված է, որ խառնածին կամ խառն լեզուներ գոյություն չունեն, և որ հայերենը առաջացել է ոչ թե տարբեր բնույթի ցեղային լեզուների միաձուլման, միախառնման, այլ առաջատար հայ-արմեն ցեղախմբի հնդեվրոպական լեզուն ցեղային մյուս լեզուների նկատմամբ հաղթանակող դուրս գալու, ամբողջությամբ իր քերականական ձևերն ու բառային հիմնական ֆոնդը պահպանելու, մասամբ պարտված լեզուների հաշվին հարստանալու, ցեղային լեզվից աստիճանաբար համաժողովրդական լեզվի վերածվելու ճանապարհով։ Հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը, որն այժմ լեզվաբանության մեջ ոչ մի կասկած չի հարուցում, ինքնին ցույց է տալիս, որ հայ ժողովրդի կազմավորման մեջ առաջատար դեր են կատարել ոչ թե խուրրիտա-ուրարտական կամ կովկասյան, այլ հնդեվրոպական ցեղերը։

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԵՐՆ ՈՒ ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական ցեղերը

Ասսուրա-բաբելական և խեթական արձանագրությունների հաղորդած տեղեկություններից երևում է, որ հայ ժողովրդի կորիզը և նրա անմիջական նախնիները հանդիսացող հայկական ցեղերը շատ վաղ ժամանակներից ապրել են Հայկական լեռնաշխարհի արևմտյան և Փոքր Ասիայի արևելյան մասերում։ Մեզ հայտնի չեն Փոքր Ասիայում շատ վաղ ժամանակներից ապրող

հնդեվրոպական մյուս՝ նեսիտ-խեթական, բալայական, լուվիական և այլ ցեղերի, ինչպես և հայկական ցեղերի որտեղից գաղթած լինելը, նրանց գաղթի ժամանակն ու ուղիները։

Հին հունական, հռոմեական, սլավոնական, վրացական կամ գերմանական ցեղերի նման հայկական ցեղերը ևս անշուշտ բաղկացած են եղել տարբեր անուններ կրող արյունակից ցեղերից։ Սակայն հայկական բոլոր ցեղերի մասին մեզ գրավոր վկայություններ չեն հասել, այլ առավելապես տեղեկություններ են հասել «հայ» և «արմեն» կոչվող ցեղախմբերի մասին, որոնցից առաջինի անունը պահպանել են իրենք՝ հայերը, իսկ երկրորդինը՝ օտարները։

Դժբախտաբար հայկական ցեղերի հին լեզվից կամ բարբառներից մեզ գրավոր հիշատակարաններ չեն հասել։ Սակայն պետք է կարծել, որ հայ, արմեն և այլ անուններ կրող հայկական ցեղերը «չ թե խոսել են տարբեր լեզուներով, այլ իրար հասկանալի, մի միասնական լեզվի՝ հայերենի ցեղային բարբառներով։

Հայկական ցեղերը, ապրելով Հին Արևելքի վաղ ստրկատիրական հզոր պետությունների միջև ընկած տարածքներում, երկրորդ հազարամյակի սկզբից պարբերաբար ենթարկվում են խեթերի, ասորեստանցիների, միտանի-սուբարիների կողոպտիչ արշավանքներին։ Արտաքին հզոր թշնամիների դեմ համատեղ պայքարի անհրաժեշտությունից ելնելով, հայկական ցեղերը աստիճանաբար միավորվում են և, հավանաբար XVII—XVI դարերում (մ. թ. ա.), ստեղծում մի քանի ցեղային միություններ։

Հայ անվան բացատրման փորձերը

«Հայ» անվան բացատրման ուղղությամբ արվել են բազմաթիվ փորձեր ու ենթադրություններ։

Միջնադարից սկսած մինչև XIX դարի կեսը ոչ միայն հայ ժողովրդի ծագումը, այլև «հայ» և «Հայք» անունները բացառապես կապվում էին Հայկի հետ։

Հայ հին մատենագրության մեջ Հայկ է անվանված Օրիոնի—երևակի համաստեղությունը, և այն գործածված է «հսկա» իմաստով։

«Հայկ» անվան ծագումը, ինչպես և «հայ» և «Հայք» բառերի միջև գոյություն ունեցող լեզվաբանական կապը մեզ անհայտ է։ Սակայն անկասկած է, որ եթե նույնիսկ լեզվաբանական կապ գոյություն ունեցած լիներ այդ բառերի միջև, ապա «հայ» անունից միայն կարող էր առաջանալ «Հայկ» անունը և ոչ թե ընդհակառակն, որովհետև տվյալ դեպքում բառի արմատը պետք է լիներ

«հայ»-ը, «Հայք» բառը, որը պարզապես «հայ» բառի հոգնակի ձևն է և նշանակում է «հայեր» կամ «Հայաստան», նույնպես «Հայկ» անունից չէր կարող առաջացած լինել, որովհետև «Հայկ» բառի վերջին «կ» մասնիկը այստեղ հոգնակիի իմաստ չունի։

Գերմանացի դիտնական Պ. Ենսենը փորձել է ապացուցել, որ «հայ» անունը առաջացել է խեթերի «հաթ» կամ «հաթիո» էթնիկական անունից, և որ լեզվական ստուգաբանությամբ «հաթ» և «հայ» բառերը, որպես էթնիկական անուններ, նույնն են։

Ուսումնասիրողներից շատերը ապացուցել են, որ «հաթ» և «հայ» անունների նույնանիշ լինելու վերոհիշյալ տեսակետը սխալ է և անհիմն, որովհետև խեթերը նույն հայերը կամ հայերի անմիջական նախնիները չեն եղել, և ոչ էլ «հայ» անունը կարող է առաջացած լինել «հաթ» անունից։

Փորձեր են եղել նաև «հայ» անունը ուրարտացիների գլխավոր աստված Խալդի անունով բացատրելու ուղղությամբ։

«Հայ» անունը բացատրելու վերոհիշյալ փորձերը, պատմական ու փաստական հիմքից զուրկ լոկ ենթադրություններ լինելով, գիտական ոչ մի արժեք չեն ներկայացնում և անընդունելի են։

Հայասա երկիրը

Դեռևս XV դարում (մ. թ. ա.), դուցե և ավելի վաղ շրջանում Փոքր Հայքում ու Բարձր Հայքում կազմակերպվում է մի ուժեղ ցեղային միություն, որի զբաղեցրած տերիտորիան խեթերը անվանում էին Հայասա կամ Հայասա-Ազզի երկիր։

Ուսումնասիրողները ցույց են տվել, որ Հայասա երկիրը լեզվական առումով նույնն է, ինչ որ Հայքը կամ Հայաստանը։ Պ. Կրեչմերը ապացուցել է, որ Հայասա անվան վերջին «սա» մասնիկը փոքր-ասիական ածանց է, որը ցույց է տալիս այս կամ այն ցեղի, ժողովրդի բնակության տեղը, որով «Հայասա» նշանակում է «հայասաների», «հայոնների» կամ «հայերի երկիր»։ Այժմ դրեթե բոլոր ուսումնասիրողները համամիտ են, որ մեր ժողովրդի ազգային «հայ» անունը առաջացել է Հայասա երկրում բնակվող «հայ» կամ «հայա» ցեղի անունից։

Հայասա երկիրը առաջին անգամ հիշատակված է խեթական թագավոր Սուպպիլուլիումի (1380—1346) տարեգրության մեջ։ Այդ տարեգրությունից իմանում ենք, որ Տուդխալիա III-ը (1410—1390), իր որդու՝ Սուպպիլուլիումի մասնակցությամբ, երկու արշավանք է կատարել Հայասա երկրի դեմ՝ այն իրեն ենթարկելու համար։ Երկրորդ արշավանքի ժամանակ Տուդխալիա III-ի դեմ դուրս է գալիս Հայասայի Կարանիի «թագավորը»։ Ճակատամարտը

տեղի է ունենում Կումմախա քաղաքի մոտ, որը, հավանաբար, վերչանում է Կարանների պարտությամբ։

Է. Ֆորերը, Ն. Ադոնցը, Դ. Ղափանցյանը և ուրիշներ ճիշտ կերպով Կումմախա քաղաքը, համապատասխան համարելով Եփրատի ափին գտնվող Կամախ քաղաքի հետ, գտնում են, որ այն հանդիսացել է Հայասայի մայրաքաղաքը։ Այս քաղաքը հետագայում հայերը անվանել են նաև Կամախ-Անի կամ պարզապես Դարանաղյաց Անի։

Վերոհիշյալ արշավանքից որոշ ժամանակ անց Սուպպիլուլիումի և Հայասայի «թագավոր» Հուգգաննայի միջև կնքվում է մի դաշնագիր, որով կողմերը պարտավորվում են վերացնել թշնամությունը, չկռվել և փոխադարձաբար օգնել ու պաշտպանել միմյանց։ Դաշնագիրը ավելի հաստատուն դարձնելու նպատակով Սուպպիլուլիումը իր քրոջը կնության է տալիս Հուգգաննային, պայմանով, որ իր քույրը լինի Հուգգաննայի առաջին կինը։

Խեթերի և հայասաների միջև տեղի ունեցած հետագա փոխհարաբերությունների մասին մեզ կարևոր տեղեկություններ են հասել Մուրշիլ II-ի (1346—1320) տարեգրությունից, որից երևում է, որ խեթերի և Հայասայի միջև կնքված բարեկամության դաշնագիրը իր ուժը պահպանել է մինչև Հուգգաննայի մահը։ Սրան հաջորդած Անիա «թագավորը», հավանաբար 1338 թ. (մ. թ. ա.), հարձակվում է սահմանակից խեթական Դանկուվա քաղաքի վրա, ավերում ու կողոպտում է այն, բերում է մեծ թվով գերիներ, անասուններ և այլ հարստություններ։

Մուրշիլ II-ը մի դեսպանություն է ուղարկում Հայասա-Ազզիի «թագավոր» Անիայի մոտ և պահանջում վերադարձնել փախած խեթական ստրուկներին, ինչպես և այն գերիներին, որոնց նա տարել էր Դանկուվայից։ Սակայն Անիան հրաժարվում է կատարել Մուրշիլի պահանջը և նրան խիստ պատասխան է տալիս։

Մոտ երեք տարի տևող անհաջող բանակցություններից հետո 1335 թ. (մ. թ. ա.) Մուրշիլը մեծ զորքով և ռազմակառքերով հարձակվում է Հայասայի վրա և իրար հետևից գրավում նրա քաղաքներն ու բերդերը։ Հայասայի ավագները, տեսնելով, որ իրենց ամրացված քաղաքները չեն կարողանում դիմադրել թշնամուն, գալիս են Մուրշիլի մոտ և հայտնում, որ երկիրը ենթարկվում է նրան։ Նրանք խոստանում են նաև վերադարձնել իրենց մոտ գտնվող խեթական ստրուկներին ու գերիներին։

Հայասա երկիրը վերջին անգամ հիշատակվում է XIII դ. մի

արձանագրության մեջ որպես խեթերին սահմանակից և թշնամական երկիր։

Ելնելով խեթական արձանագրությունների հաղորդած տեղեկություններից, հայասցիները XV—XIII դարերում ապրում էին տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հասարակության անցման շրջանում։ Նրանց տնտեսական զբաղմունքը անասնապահությունն ու երկրագործությունն էր։ Զարգացած էր նաև մետաղամշակությունը և արհեստագործությունը։

Հայասայում ստրկատիրությունը շատ քիչ էր զարգացած և ստրուկների շահագործումը դեռ թույլ էր։ Դրա համար էլ շատ հաճախ խեթական թագավորությունից ստրուկները փախչում, գալիս էին Հայասա։

Թեև խեթական արձանագրություններում Կարանինին, Հուդգաննան և Անիան անվանվում են թագավորներ, սակայն իրականում նրանք լոկ ցեղային միության առաջնորդներ էին։ Ցեղային առաջնորդի կողքին գոյություն է ունեցել նաև ցեղային միության խորհուրդ, որը կազմված է եղել ցեղերի ավագներից կամ ցեղապետերից։

Տոհմատիրական կարգերի քայքայման շրջանում գտնվող բոլոր ցեղերի նման հայասցիները ևս եղել են խիստ մարտունակ։ Սրանց զորքը կազմված է եղել հետևակազորից ու հեծելազորից։ Նրանք պատրաստել և կռիվներում օգտագործել են նաև ռազմակառքեր։

Արմենի-Ծուպրիա երկիրը

Հայկական «արմեն» կոչվող ցեղախմբերը վաղ ժամանակներից ապրում էին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան և Փոքր Ասիայի արևելյան մասերում։ Հայկական լեռնաշխարհում, հավանաբար, նրանց հնագույն բնակավայրերն էին Ծոփք, Հանդիթ, Մնձուր, Անգեղտուն գավառները և Թոգարմա երկիրը (հետագայի Սրբորդ Հայքը)։

Ասորեստանյան արձանագրություններում արմենները հիշատակված են «ուրումե», ուրարտական արձանագրություններում «ուրմե» կամ «արմե», իսկ Հոմերոսի «Ի՛լիականում»՝ «արիմ» անուններով։ Հայագետ բոլոր լեզվաբաններն ու պատմաբանները համամիտ են, որ «Արմենի», «Արմենիա» կամ հին պարսկերեն «Արմինա» անվան վերջին «նի», «նիա» կամ «ինա» մասնիկը ոչ թե հնդեվրոպական, այլ խուրրիտա-ուրարտական ծագում ունի, որը հայերենի «ք» կամ նոր պարսկերեն «ստան» մասնիկի նման մատնանշում է այս կամ այն ցեղի բնակության վայրը։ Բ. Պիոտրովսկու

իրավացի դիտողությամբ՝ «Արմենի» անունը, կազմված լինելով «արմեն» կամ «արմե» ցեղանունից և խուրրիտա-ուրարտական «նի» ածանցից, նշանակում է, «արմենների երկիր» կամ «արմե ցեղի երկիր»։ Այս անունը բացառապես օտարների մոտ տարածված ու պահպանված լինելու երևույթը ինքնին ապացուցում է, որ ոչ թե արմեններն են իրենք իրենց երկիրը անվանել «Արմենի-Արմենիա», այլ նրանց հարևան խուրրիտա-ուրարտական ցեղերը։

«Արմենի-Արմենիա» անվան կազմությունը ցույց է տալիս, որ այն իբրև ցեղային երկիր գոյություն է ունեցել Հայկական լեռնաշխարհում դեռևս ուրարտական պետության անկումից շատ առաջ, և նրա անունով էլ հետագայում Հայաստանը օտարներն անվանել են «Արմինա», «Արմենի» կամ «Արմենիա»։

Մի հին արձանագրության հաղորդած տեղեկության համաձայն՝ XXIII դարում (մ. թ. ա.) տասնյոթ «թագավորներ» կամ ավելի ճիշտ՝ ցեղային երկրների առաջնորդներ Ակկադի Նարամսին թագավորի դեմ դաշինք են կազմակերպում, որտեղ հինգերորդը հիշատակված է Հաթթիի, այսինքն՝ խեթերի երկրի Պամբա թագավորը, վեցերորդը՝ այժմյան Կեսարիայի մոտ գտնվող Կանեշ երկրի Զիպանի թագավորը, իսկ տասնմեկերորդը՝ Արմանի երկրի Մանդակինա թագավորը։ Երկրորդ անգամ Արմենի երկիրը հիշատակված է Սարգոն I-ի (1980—1948) մի արձանագրության մեջ, որտեղ նա հայտնում է, որ իր ժամանակ Ասորեստանի տիրապետության տակ, ի թիվս այլ երկրների, գտնվել է նաև Արմանի երկիրը։

Դժբախտաբար նշված արձանագրությունները հնարավորություն չեն տալիս ճիշտ կերպով որոշելու Արմանի երկրի տեղը։ Եթե հետագայում նոր փաստերի հիման վրա հնարավոր լինի Արմանի երկիրը տեղադրել Հայկական լեռնաշխարհում, ապա հիշյալ արձանագրությունները կլինեն արմենների և նրանց ցեղային երկրի մասին մեզ հայտնի ամենահնագույն վավերագրերը։

«Ուրումե» ձևով արմեններին իր տարեգրության մեջ առաջին անգամ հիշատակում է Թիգլաթպալասար I-ը։ Նա հայտնում է, որ իր գահակալությունից հիսուն տարի առաջ, մոտ 1170—1165 թթ. (մ. թ. ա.) ուրումեացիները, որոնք Հաթթի երկրի անհնազանդ մարդիկ էին, ուժով գրավել էին Շուպրիա երկրի Ալզի և Պուրուլումդի շրջանները, այսինքն՝ Աղձնիքը, որի թվում և Սասունը, և որ ինքը հաղթել ու իրեն է հպատակեցրել նրանց։

Սակայն Աղձնիքն ու Սասունը գրաված ուրումե-արմենները երկար չեն մնում Ասորեստանի տիրապետության տակ։ Նրանք ոչ միայն անկախություն են ձեռք բերում և ստեղծում մի ուժեղ ցեղա-

յին միություն, այլև տեղական ցեղերին աստիճանաբար ձուլում են իրենց հետ և իրենց ցեղային Արմե-Արմենի անունն են տալիս ասորեստանյան արձանագրությունների մեջ հիշատակվող Շուպրիա երկրին։

X—IX դարերում Ասորեստանի թագավորները մի քանի նոր փորձեր են կատարում Արմենի-Շուպրիան նվաճելու համար, սակայն առանձին հաջողության չեն հասնում։

Ուրարտական թագավորներից առաջինը Մենուան է արշավում Արմենի-Շուպրիա երկրի վրա, այն անվանելով «Ուրմե երկիր» կամ «Ուրմեուխի»։ Նա Մուշ քաղաքի և Դրմերտ գյուղի մոտ թողած արձանագրությունների մեջ հայտնում է, որ նվաճել է Ուրմե երկիրը, նրա Կուլիմարի քաղաքը և 400 բնակավայր։ Այս քաղաքը, որը ասորեստանյան արձանագրությունների մեջ ևս նշվում է Արմենի-Շուպրիայում, համապատասխանում է հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվող Քաղիրթ գետի ձախ ափին գտնվող Քղիմար քաղաքին։

Ուրարտական թագավորները սովորաբար արձանագրություններ էին թողնում այն երկրներում, որ նրանք նվաճում էին։ Մուշի և Դրմերտի մոտ Մենուայի թողած արձանագրություններից հետևվում է, որ դեռևս IX դարում (մ. թ. ա.) Տարոնի դաշտի մեծ մասը ևս անցել էր հայ-արմենական ցեղերի, Արմենի-Շուպրիայի տիրապետության տակ։

773 թ. մ. թ. ա. Արգիշտի I-ը նույնպես մի խոշոր արշավանք է կատարում Ուրմե երկրի վրա, նվաճում այդ երկիրը, ավերում, այրում է նրա քաղաքներն ու բնակավայրերը և Բիաինիլի է տանում 24,813 գերի, տասնյակ հազարավոր խոշոր ու մանր եղջերավոր անասուններ։

Այս երկիրը «Արմեն» ձևով առաջին անգամ հիշատակում է Սարգուր II-ը։ Նրա տարեգրությունից տեղեկանում ենք, որ նա 751 թ. (մ. թ. ա.) երեք արշավանք է կատարել դեպի Արմե երկիրը, նվաճել ու ավերել է 11 բերդ, տարել 8500 գերի, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ և այլն։

Սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ մինչև VIII դարի կեսը (մ. թ. ա.) արմե կամ արմեն կոչվող հայկական ցեղերը ևս գտնվում էին տոհմատիրական կարգերից դասակարգային հասարակության անցման շրջանում։ Այդ ցեղերի տնտեսական հիմնական զբաղմունքը անասնապահությունն ու երկրագործությունն էր։ Նրանց մոտ որոշ չափով զարգացած էին նաև մետաղամշակությունը և արհեստները։

4. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊՐՈՑԵՍԸ

Հայկական ցեղերի գերիշխանության հաստատումը Հայկական լեռնաշխարհում

Դեռևս Ուրարտական պետության գոյությունից առաջ Փոքր Հայքի, Բարձր Հայքի, Տուփքի, Երկրորդ Հայքի կամ Թոգարմա երկրի, Աղձնիքի և Տարոնի մի զգալի մասի բնակիչները հիմնականում հայ, արմեն գուցե և այլ անուններ կրող հայկական ցեղերն էին։ Ուրարտական թագավորների կողմից այս երկրամասերից տասնյակ հաղարավոր մարդկանց գերեվարելու և նրանց պետության տարբեր մասերում վերաբնակեցնելու հետևանքով VIII—VII դարերում (մ. թ. ա.) զգալի չափով աճում է նաև հայկական էթնիկական ծագում ունեցող բնակչության թիվը Հայկական լեռնաշխարհի կենտրոնական շրջաններում և Արարատյան դաշտում։

VII դարի վերջում (մ. թ. ա.) մի կողմից՝ Մարաստանի ու Բաբելոնիայի, իսկ մյուս կողմից Ասորեստանի ու Ուրարտուի միջև մղվող պայքարի ժամանակ հայերը հանդես են գալիս իբրև մարերի դաշնակից։ Ըստ Մովսես Խորենացու բերած ավանդական պատմության՝ հայերը ակտիվ կերպով մասնակցում էին 612 թ. (մ. թ. ա.) Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի գրավմանն ու կործանմանը։ Հայկի ու Բելի միջև տեղի ունեցած ճակատամարտի վայրը Ուրարտուի մայրաքաղաք Տուշպային մոտիկ գտնվելու և այն Հայոց ձոր վերանվանվելու փաստերը ցույց են տալիս, որ հայկական ցեղերը մարերի հետ միասին ակտիվ կերպով մասնակցել են նաև Ուրարտական պետության կործանմանը։

Օգտվելով ստեղծված դրությունից, ինչպես և ի փոխհատուցումն իրենց ցույց տված օժանդակության, մարերի համաձայնությամբ, հայկական ցեղերը նվաճում և իրենց տիրապետությանն են ենթարկում ոչ միայն Տարոնի մնացած մասը, Հարքը, Մոկաց աշխարհը և Ուրարտուի կենտրոնական շրջանները, այլև Կորճեքն ու Հյուսիսային Միջագետքը։ Որ իրոք հայկական ցեղերը գրավել էին նաև Կորճեքն ու Հյուսիսային Միջագետքը, հաստատվում է Սարաբոնի այն վկայությամբ, որ Միսպիրիտիսը, Կալաքենը և Ադիաբենը գտնվում էին հայ-արմենների հնագույն բնակավայրերի թվում։ Ուսումնասիրողներն արդեն ցույց են տվել, որ Միսպիրիտիսը (Շուպրիա երկրի անվան հունարեն աղավաղված ձևն է, Կալաքենը գտնվում էր Խաբուր և Մեծ Զաբ գետերի միջև, այսինքն՝ պատմական Կորճեք նահանգի տեղում, իսկ Ադիաբենը՝ Հյուսիսային Միջագետքում։

Հայկական ցեղերի վերոհիշյալ նվաճումները ոչ թե ունեցել են

զուտ ռազմական արշավանքների, այլ ավելի շուտ՝ ցեղային տեղաշարժերի կամ գաղթերի բնույթ։

Այսպիսով, արդեն VII դարի վերջում (մ. թ. ա.) Հայկական լեռնաշխարհի մեծ մասում հաստատվում է հայկական ցեղերի գերիշխանությունը։ Ժողովրդական ավանդությունից երևում է, որ մի քիչ ավելի ուշ հայերը, շարժվելով դեպի հյուսիս և անցնելով Հայկական դարը, նվաճում են նաև Արարատյան դաշտը, Շիրակը, Սյունիքը, Արցախը և Ուտիքը։

Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ և եկվոր ցեղերի ձուլումը հայերի հետ և հայ ժողովրդի կազմավորումը

Հայկական ցեղերի նվաճումների ժամանակ մեծ չափով մեծանում է ցեղային և ռազմական առաջնորդների դերն ու կշիռը, ուժեղանում նրանց տնտեսական կարողությունը և քաղաքական իշխանությունը։ Տոհմա-ցեղային ավագանին աստիճանաբար վերածվում է ստրկատիրական ավագանու։ VI դարից (մ. թ. ա.) սկսում են որոշակիորեն քայքայվել տոհմատիրական կարգերը և ձևավորվել ստրկատիրական հարաբերությունները։ Տոհմատիրական կարգերի քայքայման և դասակարգային հասարակության առաջացման հետևանքով VI դարի սկզբում (մ. թ. ա.) կազմավորվում է հայկական պետականությունը։

Թե՛ հայկական և թե՛ տեղաբնիկ այլ ցեղերի մոտ տոհմատիրական կարգերի քայքայումը և մասնավոր սեփականության առաջացումը, էթնիկական տարբեր ծագում ունեցող ցեղերի գաղթը դեպի Հայկական լեռնաշխարհ, բնակչության բնական աճը, սկզբում ուրարտացիների, իսկ այնուհետև հայերի կողմից կատարված արշավանքների ժամանակ մեծ թվով ցեղերի բռնագաղթեցումները և նրանց խառն կամ ցեղընդմեջ բնակեցումները, նույն տոհմի կամ ցեղի սահմաններում ազատ բնակչության կողքին մեծ թվով օտարածին տարուկների հանդես գալը անխուսափելիորեն խիստ կնշպով թուլացնում և աստիճանաբար քայքայում են տոհմա-ցեղային, արենակցական կապերը։ Տոհմային համայնքը դյուղական համայնքի վերածվելուն զուգընթաց տոհմա-ցեղային կապերը փոխարինվում են տերիտորիալ-տնտեսական կապերով։

Տոհմա-ցեղային կապերի քայքայումը, էթնիկական տարբեր խմբերի միջև տերիտորիալ-տնտեսական կապերի առաջացումը և այդ խմբերի միավորված լինելը մի պետության կազմի մեջ անհրաժեշտ պայմաններ էին ստեղծում Հայկական լեռնաշխարհում մի միասնական լեզվով խոսող ժողովրդի կազմավորման համար։ Սակայն նման ժողովրդի կազմավորումը կարող էր տեղի ունենալ միայն

այն ցեղախմբերից մեկի գլխավորությամբ և մնացած ցեղերը այդ ցեղախմբի հետ ձուլվելու, ինչպես և այդ ցեղախմբի լեզուն ժողովրդական լեզվի վերածվելու ճանապարհով։ Թե՛ ուրարտացիները և թե՛ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական ու հյուսիս-արևելյան շրջաններում ապրող ցեղերը սրդեն անընդունակ էին և չէին կարող գլխավորել կազմավորվող ժողովրդի պրոցեսը, որովհետև այդ ցեղերը ոչ միայն գտնվում էին նվաճվողի դրության մեջ, այլև իրար դեմ մղվող դարավոր պայքարում սպառել ու ջլատել էին իրենց կենսական ուժերը։ Կազմավորվող ժողովրդի պրոցեսը կարող էին գլխավորել և մնացած ցեղերին իրենց հետ կարող էին ձուլել միայն հայկական ցեղերը, որոնք ավելի կենսունակ էին, մարտունակ և ավելի համախմբված։ Մնացած ցեղերի նկատմամբ հայկական ցեղերի խոշոր առավելություններից մեկն էլ այն էր, որ նրանք օգտվում էին նվաճողի բոլոր արտոնություններից, և նրանց ձեռքում էր գտնվում քաղաքական իշխանությունն ու նորաստեղծ հայկական պետական ապարատը։

Դժբախտաբար հայ ժողովրդի կազմավորման մանրամասնությունները մեզ հայտնի չեն, սակայն անկասկած է, որ այդ կազմավորումը տեղի է ունեցել հայկական ցեղերի կողմից մյուս ցեղերին աստիճանաբար իրենց մեջ համաձուլելու ճանապարհով։

Հայ ժողովրդի կազմի մեջ մտած կամ համաձուլված բոլոր ցեղերի մասին մենք գրավոր տեղեկություններ չունենք։ Նրանցից մի մասը լոկ իրենց անուններն են թողել Հայաստանի նահանգների, գավառների և այլ տեղանունների, ինչպես և շատ հաճախ այդ տեղանուններին համապատասխանող հայ նախարարական տների վրա։ Գրավոր վկայությունները և տեղանունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայ ժողովրդի մեջ են ձուլվել, նրա բաղադրիչ մասերը և նախնիներն են հանդիսացել ոչ միայն հնդեվրոպական ծագում ունեցող հայկական ցեղախմբերը՝ հայասներ և արմենները, այլև ուրարտական, խուրիտական և կովկասյան ծագում ունեցող տեղաբնիկ ցեղախմբերը։ Ուրարտացիները, որոնք իրենց հասարակական, տնտեսական և մշակույթի զարգացման աստիճանով ավելի բարձր մակարդակի վրա էին կանգնած, քան հայկական ցեղերը, բնականաբար, ուժեղ ազդեցություն պետք է թողնեին նոր կազմավորվող հայ ժողովրդի վրա և նրան պետք է փոխանցեին իրենց հասարակական, տնտեսական կյանքի ավելի զարգացած ձևերն ու մշակույթի մի մասը։ Բացի ուրարտական, խուրիտական և կովկասյան տեղաբնիկ ցեղախմբերից, հայ ժողովրդի մեջ են ձուլվել նաև խեթական, փոքրասիական, փռյուգիական,

կիմմերական, սկյութական, սարմատական և իրանական մի շարք նկվոր ցեղեր։

Հայ ժողովրդի կազմավորմանը զուգընթաց հայ-արմենների ցեղային լեզուն, հաղթանակող դուրս գալով և որոշ չափով հարբստանալով պատված մյուս ցեղային լեզուների հաշվին, սկզբում վերածվում է միջցեղային խոսակցական, իսկ հետո՝ համաժողովրդական լեզվի։

Տերիտորիալ-տնտեսական փոխադարձ կապերը, պետական, լեզվական ընդհանրությունները անհրաժեշտորեն առաջ են բերում նաև միայն հայ ժողովրդին հատուկ, նրան մյուս ժողովուրդներից տարբերող քիչ թե շատ կայուն սովորություններ, բարքեր, ընավորության գծեր, հավատալիքներ և այլն։

Հայ ժողովրդի կազմավորումը իրենից ներկայացրել է մի երկարատև պրոցես։ Նա սկսվել է VII դարի վերջից և հիմնականում ավարտվել է II դարի սկզբում (մ. թ. ա.)։ Ստրաբոնը վկայում է, որ արդեն II դարի սկզբում (մ. թ. ա.) Հայաստանում բնակվող բնակչությունը խոսում էր մի լեզվով, այն է՝ հայերեն։

ԳԼՈՒԽ IV

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Հայկական հնագույն պետության առաջացումը

Հայկական ցեղերի նվաճումների, տոհմատիրական կարգերի քայքայմանը և ստրկատիրական հարաբերությունների առաջացմանը զուգընթաց, VII դարի վերջում կազմավորվում են հայկական մի քանի պետական միավորումներ, որոնցից միայն երկուսի մասին են մեզ տեղեկություններ հասել։

Ըստ Մ. Խորենացու բերած ավանդական պատմության՝ հայոց նահապետ Պարույր Սկայորդին դաշնակցում է մարերի թագավոր Կիաքսարի հետ և իր ջոկատներով ակտիվ կերպով մասնակցում Ասորիստանի մայրաքաղաք Նինվեի գրավմանն ու կործանմանը։ Ի փոխհատուցումն այս օգնության, Կիաքսարը սրան ճանաչում է իբրև Հայից թագավոր։ Ըստ ավանդության Պարույր Սկայորդին դառնում է «առաջին պսակաւորն Հայոց»։ Ենթադրվում է, որ սա եղել է Արմենի-Շուպրիա երկրի ցեղային միության առաջնորդը և հիմնել է հայկական առաջին պետական միավորումներից մեկը։

609 թ. (մ. թ. ա.) հայկական ցեղերը մարերի հետ դաշնակցած Ուրարտուի մայրաքաղաք Տուշպան գրավելուց հետո, այնտեղ հիմնում են երկրորդ պետական միավորումը կամ թագավորությունը, որի դահլիճն են բարձրանում Երվանդունիների ռազմա-ստրկատիրական տոհմի ներկայացուցիչները։ Նվաճման իրավունքով այս տոհմի ձեռքն է անցնում ոչ միայն Ուրարտական պետության հարբասության մի զգալի մասը, այլև ուրարտական թագավորների բուն տիրույթը հանդիսացող Տուշպա-Վանի քաղաքային տերիտորիան, որը այնուհետև վերանվանվում է Երվանդունիք։

Կազմավորված պետական միավորումների մեջ ավելի կենսու-

Նակ ու ուժեղ էր Երվանդունիների թագավորությունը։ Հենվելով իրենց ունեցած տնտեսական ու ռազմական գերազանցության վրա, Երվանդունիները շուտով նվաճում և իրենց թագավորությանն են միացնում նաև Արմենի-Շուպրիայի թագավորությունը և հայկական մյուս պետական միավորումները։ Այսպիսով, VI դարի առաջին կեսին (մ. թ. ա.) առաջանում է հայկական միացյալ հնագույն պետությունը։

Մովսես Խորենացին Երվանդունիների դինաստիան անվանում է «Հայկազանց»։

Պարսից Դարեհ I թագավորի (522—486) Բիհիսթունյան արձանագրության մեջ հին պարսկական բնագրում գրված «Արմինա-Արմենիայի» փոխարեն բաբելական բնագրում գրված է «Ուրարտու»։ Այս ուշագրավ փաստը ոչ միայն ցույց է տալիս որ Ուրարտու հին անունը փոխարինվել էր Արմենիա նոր անունով, այլև Հայկական հնագույն պետությունը կամ Արմենիան արդեն իր սահմանների մեջ էր ընդգրկում նախկին Ուրարտական պետության հիմնական տերիտորիան։ Նորաստեղծ այս պետության սահմանների մեջ էին մտնում սկզբում Վասպուրականը, Աղձնիքը, Կորճեքը, Մոկքը, Տարոնը, Տուրուբերանը, Բարձր Հայքն ու Փոքր Հայքը, իսկ մի քիչ ավելի ուշ նաև Այրարատը, Սյունիքը, Արցախը և Ուտիքը։

Հայկական հնագույն պետության մայրաքաղաքը Տուշպան էր, իսկ երկրորդ կարևոր կենտրոնը՝ Անի-Կամախը։

Հայերի պայքարը Մարաստանի դեմ

Հայերի պատմական հնագույն անցյալի, հատկապես VI դարի առաջին կեսում Մարաստանի դեմ մղած պայքարի մասին որոշ տեղեկություններ են պահպանվել հույն պատմիչ Քսենոֆոնի «Կյուրոպեդիա» («Կյուրոսի վարքը») և Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունների մեջ։

Խորենացու հաղորդած տեղեկություններից երևում է, որ Ասորեստանի և Ուրարտուի դեմ մղվող պայքարի ժամանակ հայերը հանդես են եկել ոչ միայն իբրև մարերի դաշնակից, այլև հայերի ու մարերի միջև գոյություն են ունեցել բարեկամական, դաշնակցային իրավահավասար հարաբերություններ, որոնք հաճախ ամրապնդվել են նաև խնամիական կապերով։ Սակայն դաշնակցային իրավահավասար այս հարաբերությունները երկար չեն պահպանվում։ Շուտով Հայաստանը ընդունում է Մարաստանի գերիշխանությունը և պարտավորվում նրան հարկ վճարել և պատերազմի դեպքում զորք տալ։

Դրանից որոշ ժամանակ անց, պատմում է Քսենոֆոնը, Հայոց թագավորը, օգտվելով Մարաստանի և Բաբելոնիայի միջև առաջացած պատերազմից, ապստամբում է Մարաստանի դեմ։ Քսենոֆոնը չի հայտնում Հայոց թագավորի անունը, սակայն Խորենացու վկայությունների համեմատությունից երևում է, որ դա եղել է Երվանդ Սակավակյացը։ Մարաց թագավոր Աժդահակը (585—550) իր զորահրամանատար Կյուրոսին հեծյալ ու հետևակ զորքով ուղարկում է Հայաստան՝ ապստամբությունը ճնշելու համար։ Հայոց թագավորը, երբ լուր է ստանում Կյուրոսի մոտենալու մասին, շտապ զորք է հավաքում և մարտակարգ կազմում՝ թշնամու դեմ։ Սակայն Կյուրոսը խորամանկությամբ գերեվարում ու ձերբակալում է Հայոց թագավորին և նրա ընտանիքի անդամներին։ Ձերբակալված Հայոց թագավորին ուղղված՝ Կյուրոսի այն հարցին, թե «Արդ, ինչու՞ այժմ ոչ տուրք ես վճարում, ոչ զորք ես ուղարկում և սկսել ես ամբոխություններ շինել», նա պատասխանում է. «Ես ազատության էի ձգտում, որովհետև գերադասում էի, որպեսզի թե ինքս ազատ լինեմ և թե որդիներիս ազատություն թողնեմ»։ Թագաժառանգ Տիդրանի միջնորդությամբ, որը Կյուրոսի մոտիկ ընկերն էր ու որսակիցը, նախկին հիմունքներով, բայց վճարելիք հարկը ավելացնելու պայմանով, հաշտություն է կնքվում Կյուրոսի և Հայոց թագավորի միջև։

Քսենոֆոնի հաղորդած տեղեկության համաձայն՝ հայկական զորքը բաղկացած էր 8 հազար հեծելազորից և 40000 հետևազորից, իսկ Հայոց թագավորի ունեցած կարողությունը, այն հարստությունների հետ միասին, որ թողել էր նրա հայրը, կազմում էր ավելի քան 3000 արծաթ տաղանդ (մոտ 12 միլիոն ոսկի ռուբլի)։ Կյուրոսը պատերազմում մարերին օգնելու համար վերցնում է հայկական զորքի կեսը՝ 4 հազար հեծելազոր և 20 հազար հետևազոր։

«Կյուրոպեդիա»-ում հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել նաև հայերի և նրանց հարևան խալդայների փոխհարաբերությունների մասին։ Խալդայները Փոքր Հայքի և Պոնտոսի միջև գտնվող խաղտիք-խալդիկա կոչվող լեռնային երկրում բնակվող, մշակելի հողերից զուրկ, աղքատ, ծառերի ճյուղերից հյուսված կաշվեպատ վահաններով ու նիզակներով զինված, խաշնարած ցեղեր էին, որոնք կողոպուտի նպատակով մշտապես հարձակվում էին դաշտավայրերի երկրագործ հայերի վրա։ Խալդայների ու հայերի միջև մղվող մշտական կռիվների պատճառով Հայոց երկրի մի մասը մնացել էր անմշակ ու անմարդաբնակ։

Խալդայները, ինչպես երևում է Քսենոֆոնի պատմածից, ձգ-

տում էին ձեռք բերել և մշակել այն անմշակ ու արդավանդ հողերը, որոնք դտնվում էին դաշտավայրում, իսկ հայերը շահագրգռված էին, որպեսզի խալդայները թույլ տան նրանց օգտվելու լեռնային արոտներից։

Կյուրոսը, հայկական զորքի օժանդակությամբ խալդայներին հալածելուց և նրանց լեռնային կարևոր բարձունքները գրավելուց հետո, հաշտություն է կայացնում հայոց թագավորի և խալդայների միջև։ Այդ հաշտությամբ, մի կողմից, խալդայները, հայոց թագավորին սահմանված հողային հարկը վճարելու պայմանով, իրավունք են ստանում տիրել ու մշակել դաշտավայրի հողերը, իսկ մյուս կողմից՝ հայերը, խալդայներին որոշ տուրք վճարելու պայմանով, իրավունք են ստանում օգտվել արոտավայրերից։

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

Աքեմենյան դինաստիայի հիմնադրումը և Հայաստանը

Մարերի տիրապետությունը Առաջավոր Ասիայում երկար չի տևում։ 553 թ. (մ. թ. ա.) պարսիկները, օգտվելով մարական իշխող վերնախավի ներսում առաջացած պայքարից և Աժդահակի դեմ գոյություն ունեցող դժգոհություններից, ապստամբություն են բարձրացնում։ Ապստամբության գլուխ է կանգնում Աժդահակի՝ վերը հիշված զորավար Կյուրոսը, որը ծագումով պարսկական Աքեմենյան տոհմից էր։ Երեք տարի տևող կռիվներից հետո Կյուրոսը 550 թ. (մ. թ. ա.) հաղթում է մարերին և գրավում նրանց մայրաքաղաք Էկբատանը։ Կյուրոսը (550—529) գրավելով մարական դահը, հիմնադրում է հին պարսկական կամ Աքեմենյան պետությունը, որով և մարական գերիշխանությունը փոխարինվում է պարսկական գերիշխանությամբ։

Այդ պայքարի ժամանակ հայերը անցնում են պարսիկների կողմը։ Ըստ Խորենացու բերած ավանդական պատմության՝ Երվանդ Սակավակյացին հաջորդած հայոց թագավոր Տիգրան Երվանդյանի և Կյուրոսի միջև կնքվում է բարեկամական դաշինք։ Այդ դաշինքը, որ գրգռի վտանգ էր ներկայացնում մարերի համար, խիստ մտահոգություն է պատճառում Աժդահակին։ Աժդահակը ենթադրելով աշխատում է քանդել այդ դաշինքը և ձերբակալել ու սպանել Տիգրանին. սակայն դա նրան չի հաջողվում։ Հավանաբար, Աժդահակի դեմ Կյուրոսի ձեռնարկած վճռական գործողությունների ժամանակ, Տիգրանը իր հերթին ապստամբություն է բարձրացնում Աժդահակի դեմ և իր զորքերով հարձակվում նրա վրա։ Ըստ ավանդության՝ հայ-մարական պատերազմը տևում է բավական երկար և վերջանում հայերի հաղթությամբ։ Նույնիսկ հայկական ժողովրդական ա-

վանդությունը Աժդահակի պարտությունը և սպանությունը վերագրում է հայոց թագավոր Տիգրանին, որը, անշուշտ, պատմական իրականությանը չի համապատասխանում։ Սակայն միանգամայն պատմական իրողություն է ժողովրդական ավանդության այն վկայությունը, որ Տիգրանը աջակցել է Կյուրոսին։

Հայերը աջակցելով Կյուրոսին, անշուշտ հույսեր էին տածում, որ կազատագրվեն օտարերկրյա գերիշխանությունից և լիովին կվերականգնեն իրենց պետական ինքնուրույնությունը։ Սակայն այդ հույսերը չեն արդարանում։ Շուտով, ինչպես Մարաստանի գերիշխանության տակ գտնվող մյուս երկրներ, նույնպես և Հայաստանը, հարկ վճարելու և պատերազմի դեպքում զորք տալու պայմանով, ստիպված են լինում ընդունել Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանությունը։

Կյուրոսի և նրա որդու՝ Կամբիզի (529—522) ժամանակ պարսիկները խոշոր նվաճումներ են կատարում և մեծ չափով ընդարձակում իրենց պետության սահմանները։ Նրանք 546 թ. նվաճում են ամբողջ Փոքր Ասիան և հասնում մինչև Էգեյան ծով, 538 թ. գրավում են Բաբելոնը, իսկ 525 թ. Եգիպտոսը։ Քսենոֆոնի վկայությունների համաձայն, հայկական հեծելազորը և հետևազորը, Տիգրանի ու Էմբասի առաջնորդությամբ, մասնակցել են Բաբելոնի գրավմանը։ Հաստատ կերպով կարելի է ենթադրել, որ հայկական զորամասերը մասնակցել են նաև Կյուրոսի և Կամբիզի մղած մյուս պատերազմներին։

Ինչպես Մարական, նույնպես հին Պարսկական պետությունը իր բնույթով ազգային պետություն չէր, այլ բռնի ուժով իրար միացած ժողովուրդների ու ցեղերի մի միավորում, որտեղ հպատակված երկրները պահպանում էին իրենց ներքին ինքնուրույնությունը։ Հայաստանը ևս, չնայած սկզբում Մարաստանի, իսկ այնուհետև Աքեմենյան Պարսկաստանի նկատմամբ ունեցած իր հարկային ու զինվորական պարտավորություններին, պահպանում էր իր պետական-կառավարչական, տնտեսական, լեզվական ու կրոնական ներքին ինքնուրույնությունը։

Հայերի 521—520 թթ. (մ. թ. ա.) ապստամբությունը Աքեմենյան Պարսկաստանի դեմ

Կամբիզի մահից և յոթ ամիս տևող ներքին կռիվներից հետո Պարսկաստանում գահ է բարձրանում Դարեհ I-ը (522—486)։ Նրա գահակալության հենց առաջին տարում 521 թ., մի շարք երկրներ ապստամբություն են բարձրացնում Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության դեմ։ Այդ երկրների թվում էր նաև Հայաստանը։

Հայերի ապստամբությունը և նրանց մղած կռիվները հիշատակված են Քիրմանշահ քաղաքից ոչ հեռու գտնվող Բիհիսթունի ժայռի վրա Դարեհ I-ի թողած սեպագիր արձանագրության մեջ, որը գրված է երեք լեզվով՝ հին պարսկերեն, էլամերեն և բաբելոնա-ակկադերեն։ Այդ արձանագրության մեջ Հայաստանը հին պարսկական ձևով անվանված է Արմինա։

Իր դեմ առաջացած ապստամբությունը ճնշելու համար, Դարեհ I-ը Արմինա (Հայաստան) է ուղարկում Դադարշիս անունով իր հայ զորավարին։ Դադարշիսը Հայաստանում երեք ճակատամարտ է տալիս ապստամբների դեմ։ Յուրաքանչյուր ճակատամարտից հետո Դարեհն իր արձանագրության մեջ միաձև կերպով ավելացնում է. «Աստվածն ինձ օգնեց։ Շնորհիվ Աստվածի իմ բանակը շատ մարդ կոտորեց ապստամբների բանակից»։

Հակառակ Դարեհի պարծենկոտ հայտարարություններին, առաջին երեք ճակատամարտերում հաղթող էին հանդիսացել ոչ թե պարսիկները, այլ հայերը։ Հատկապես երրորդ ճակատամարտում, ինչպես երևում է արձանագրության հետագա վկայություններից, հայերը ոչ միայն պիտի չխոչընդոտեին պարսկական բանակը և նրան դուրս քշել Հայաստանի սահմաններից, այլև, հետապնդելով թշնամուն, ներխուժել էին Ասորեստանի հյուսիսային շրջանները։

Պարսկական բանակի կրած անհաջողության պատճառով Դարեհը ստիպված է լինում փոխել իր զորահրամանատարին։ Վերջ ամիս հետո նա մի նոր բանակ է ուղարկում Հայաստան, Վահումիսա անունով պարսիկ զորավարի ղեկավարությամբ։ Պարսկական բանակի և ապստամբների միջև մղվում են ևս երկու նոր ճակատամարտեր։

Չնայած արձանագրության միաձև ոճին և միակողմանի բնույթին, դժվար չէ նկատել, որ հայերը երկարատև, համառ ու հերոսական կռիվներ են մղել պարսկական զավթիչների դեմ։

Դարեհ I-ի ռեֆորմները և Հայաստանը

Դարեհ I-ը իր դեմ առաջացած ապստամբությունները ճնշելուց հետո տերության ներսում կատարում է մի շարք ռեֆորմներ, որոնց նպատակն էր ուժեղացնել ու ամրապնդել կենտրոնական իշխանությունը։

Դարեհը նախ ամբողջ Պարսկական պետությունը բաժանում է վարչական 20 առանձին մարզերի կամ սատրապությունների։ Սրանց կառավարումը նա հանձնում է բարձրաստիճան կառավարիչների, որոնք կոչվում էին «սատրապ»։ Սատրապներն իրենց են-

թակա մարզերի քաղաքացիական բնակչության նկատմամբ ունեին վարչական և դատական անսահմանափակ իշխանություն։ Նրանց պարտականությունների մեջ էին մտնում նաև պետական հարկերի հավաքումը, պարհակների կազմակերպումը, ճանապարհների անվտանգության ապահովումը և այլն։

Պատմական Հայաստանը, ինչպես հետևում է Հերոդոտի վկայություններից, մտնում էր Աքեմենյան Պարսկաստանի 13-րդ և 18-րդ սատրապությունների կազմի մեջ։ Այստեղ ապրող ցեղերը հետագայում մեծ մասամբ ձուլվում են հայ ժողովրդի հետ։ Ենթադրում են, որ 13-րդ սատրապության կենտրոնը եղել է Վանը, իսկ 18-րդ սատրապության կենտրոնը՝ Էրեբունի-Երևանը։ Հերոդոտի վկայության համաձայն, 13-րդ սատրապությունը Աքեմենյան Պարսկաստանին որպես հարկ տարեկան վճարում էր 400 արծաթ տաղանդ, իսկ 18-րդ սատրապությունը՝ 200 արծաթ տաղանդ։ Բացի դրամական հարկից, Հայաստանը Պարսկաստանին տալիս էր նաև 20000 ձի։ Դարեհ 1-ը կառուցում է նաև «Արքայական» կոչվող մեծ ճանապարհը, որը դուրս գալով Պարսկաստանի մայրաքաղաք Շուշից կամ Սուզայից, հասնում էր մինչև Փոքր Ասիայի արևմտյան ծովափին գտնվող Սարդես քաղաքը։ Մոտ 2400 կիլոմետր տարածություն ունեցող այս ճանապարհը իր ապահովության և բարեկարգության պատճառով դառնում է միջազգային քարավանային առևտրի հիմնական մայրուղին։ Ապրանքափոխանակության և առևտրի զարգացմանը զգալի չափով նպաստում են նաև Դարեհի կողմից՝ ոսկե, արծաթե և պղնձե դրամները գործածության մեջ մտցնելը և միասնական չափ ու կշռի սահմանումը։

«Արքայական ճանապարհի» մի որոշ հատվածը, որն ուներ 56½ փարսախ, այսինքն՝ մոտ 330 կիլոմետր երկարություն և 15 կայարան, անցնում էր Հայաստանի հարավային նահանգների՝ Աղձնիքի և Տոփքի վրայով։

Հայաստանը Քսենոֆոնի ընկարագրությամբ

401 թ. (մ. թ. ա.) Կյուրոս Կրտսերը գահը գրավելու համար ապստամբություն է բարձրացնում իր եղբոր՝ Արտաքսերքսես II-ի (404—358) դեմ։ Հույները, հաղթանակի դեպքում նոր թագավորից գիջումներ ստանալու հույսով, ընդառաջում են Կյուրոսի խնդրանքին և նրան օգնելու համար ուղարկում են վարձկաններից կազմված տասը հազարանոց մի զորաբանակ։ Սակայն Կյուրոս Կրտսերը իր եղբոր դեմ մղած կռիվներում պարտվում և սպանվում է։ Հույները ստիպված են լի-

նում Բաբելոնի մոտից Միջագետքի, Կորդվաց աշխարհի և Հայաստանի վրայով վերադառնալ Հունաստան։

Հունական տասը հազար զինվորների նահանջը նկարագրել է նույն բանակում գտնվող հույն պատմագիր Քսենոֆոնը իր «Անաբասիս» կոչվող աշխատության մեջ։ Քսենոֆոնը, իբրև ականատես, այս աշխատության մեջ շատ արժեքավոր տեղեկություններ է տալիս նաև Հայաստանի ու հայերի մասին։

Ըստ Քսենոֆոնի Հայաստանը մեծ, ընդարձակ, հարուստ ու բարեկեցիկ երկիր էր, որտեղ իշխում էր Օրոնտասը, որն ամուսնացած էր Արտաքսերքսես II-ի դստեր հետ և իր զորքով մասնակցել էր Կյուրոս Կրտսերի դեմ մղված ճակատամարտին։

Նահանջող հույները, Կորդուխների երկրի վրայով անցնելուց հետո, հասնում են Կենտրիտես գետին, այժմյան Բոհտան-սուին կամ Արևելյան Տիգրիսին, որը Հայաստանը և Կորդուխների երկիրը բաժանում էր իրարից։ Այստեղ նրանք գետի հակադիր ափին տեսնում են դինված ֆիավորներ և նրանցից վերև՝ բլուրների վրա, շարքերով կանգնած հետևակ զորքեր, որոնք նպատակ ունեին թույլ չտալ հույներին անցնելու գետը և մտնելու Հայաստան։ Մեծ վահաններով ու երկար նիզակներով դինված այս զորքերը Օրոնտաս-Երվանդի զորքերն էին, որոնք կազմված էին հայերից և վարձկան մարդերից ու խալդայներից։

Սակայն հույները կարողանում են անցնել գետը և մտնել Հայաստան, իսկ Օրոնտաս-Երվանդի զորքերը, ըստ երևույթին, հաշվի առնելով իրենց ուժերի փոքրաթիվ լինելը, խուսափում են ընդհարվել նրանց հետ։

Շարժվելով դեպի հյուսիս, հույները իջնում են Մուշի դաշտը և հասնում Տելեբոաս գետին, կամ այժմյան Մեղրագետին (Կարասու), որի շուրջը կային բազմաթիվ գյուղեր։ Այս գետից սկսած՝ երկիրը կոչվում էր Արևմտյան Հայաստան, որի հյուսիսարևելյան մասինքն՝ փոխիկառավարիչն էր պարսից թագավորի բարեկամ Տիրիբազը։ Սա բանակցություններ է վարում նահանջող հույն զորքի հրամանատարության հետ և պայման է կապում, որ հույները չպետք է այրեն հայկական գյուղերը, իսկ կենսամթերքներ կարող են վերցնել այնքան, որքան անհրաժեշտ է իրենց։

Հետո հույները հասնում են մի ասպարանք-ամրոցի, որի շուրջը նույնպես եղել են բազմաթիվ գյուղեր, որտեղ նրանք գտնում են առատ մթերքներ՝ մսացու անասուններ, հաց, հին անուշահոտ գինիներ, չամիչ, ամեն տեսակի ընդեղեն, խոզի ճարպ, քնջութի,

դառն նշի և բեկենի յուղ, ինչպես և դրանից պատրաստված անուշահոտ յուղ։

Մի ընդհարումից հետո հույները, վախենալով, որ Տիրիբազի զորքը կարող է գրավել լեռնանցքը, որոշում են անմիջապես մանապարհ ընկնել։ Հույները, անմարդաբնակ վայրերով երեք օր առաջ շարժվելուց հետո, հասնում են Նփրատ, այսինքն՝ Արածանի գետին և անցնում այն։

Նփրատ-Արածանիի ափից սկսած՝ չորս օր տևող շատ ծանր հրթից և զինվորների, դերիների ու գրաստների մի մասին ցրտի պատճառով կորցնելուց հետո, նահանջող զորքի առաջապահ զորամասը հասնում է ամրություն ունեցող մի գյուղի։ Առաջապահ զորամասը մնում է այդ գյուղում, իսկ մնացած զորամասերը տեղավորվում են շրջակայքի իրար մոտիկ գտնվող մյուս բնակավայրերում։

Քսենոֆոնը իր զորամասով գնում է շրջակա գյուղերից մեկը և իջևանում գյուղապետի տանը։ Քսենոֆոնը տեղեկացնում է, որ այստեղ գյուղական տները գետնափոր էին, մուտքը ջրհորի բերանի նման, որից մարդիկ ցած էին իջնում սանդուղքներով։ Տներում մարդկանց հետ ապրում էին նաև ընտանի կենդանիներ, որոնց համար ներքևից հատուկ մուտք էր շինված։

Բացի ցորենից, գարուց, այլ ընդեղեններից և գինուց, այս տներում կար նաև կարասների մեջ պատրաստված գարեջուր, որին Քսենոֆոնը անվանում է «գարուց պատրաստված գինի»։ Գարեջուրը խմում էին կարասների մեջ գրված եղեգներից՝ ծծելու միջոցով։

Հույները հայկական այս գյուղերում յոթ օր հանգստանալուց և պարենավորվելուց հետո շարժվում են Ֆասիս, հասնում Տրապիզոն, իսկ այստեղից էլ վերադառնում Հայրենիք։

Քսենոֆոնի նկարագրությունից երևում է, որ արդեն V դարի վերջում (մ. թ. ա.) Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղերի մեծ մասը ձուլվել էր կազմավորվող հայ ժողովրդի հետ։ Դրա լավագույն ապացույցն այն է, որ նահանջող հույները Կենտրիտես-Բոհտանսուից սկսած մինչև տարածների երկրի՝ Տայքի սահմանները, անցել էին Հայաստանի վրայով և բացառապես հանդիպել էին հայկական գյուղերի։ Սակայն այս ժամանակ Հայկական լեռնաշխարհի առանձին մասերում գոյություն են ունեցել նաև դեռևս իրենց ինքնուրույնությունը պահպանած այնպիսի ցեղեր, որոնք հետագայում են միայն ձուլվել հայ ժողովրդի հետ։

Քսենոֆոնի վկայություններից հետևում է, որ այս ժամանակ

Հայաստանը բաժանված էր երկու մասի՝ Արևելյան և Արևմտյան։ Սակայն դրանք Աքեմենյան Պարսկաստանի կազմի մեջ մտնող ինքնուրույն, իրարից անկախ երկու տարբեր սատրապություններ չէին, այլ Հայաստանի վարչական տեսակետից բաժանված երկու երկրամասեր։ Նման վարչական բաժանման անհրաժեշտությունը, անկասկած, առաջացել էր նրանից, որ բազմաթիվ ցեղերի և հատկապես նախկին 18-րդ սատրապությունում բնակվող ցեղերի հայացման և նրանց երկրների միացման հետևանքով մեծ չափով ընդարձակվել էր Հայաստանի տերիտորիան։

Հայաստանի թագավոր-սատրապը Օրոնտաս-Երվանդ II-ն էր, իսկ Արևմտյան Հայաստանի հյուպարքոս-փոխկառավարիչը կամ կուսակալը՝ Տիրիբազը։ Այս վերջինը Օրոնտաս-Երվանդի ենթական էր, դուցե և նրա օգնականը։

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ VI—IV ԴԴ. (Մ. Թ. Ա.)

Գյուղատնտեսությունը և արհեստները

Բիհիսթունի արձանագրության, Հերոդոտի և Քսենոֆոնի աշխատությունների հաղորդած տեղեկություններից երևում է, որ հայերը վաղուց նստակյաց էին և նրանց հիմնական զբաղմունքը երկրագործությունն ու անասնապահությունն էր։

Քսենոֆոնի այն վկայությունները, որ հայկական գյուղերում «պաշարեղենը շատ առատ էր», գյուղերը «լի էին բաղում պաշարեղենով», «լիառատ էին» և այլն, ինքնին ապացուցում են, որ Հայաստանում երկրագործությունը գտնվում էր զարգացման բավական բարձր աստիճանի վրա։ Հայերը մշակում էին ցորեն, գարի, քնջութ, կտավատ և այլ ընդեղեններ։

Հայաստանում զարգացած էին նաև այգեգործությունն ու պտղաբուծությունը։ Դրա լավագույն ապացույցն այն է, որ ճահճոտ հույները հայկական գյուղերի մեծ մասում գտել էին կարասների մեջ պահվող մեծ քանակությամբ սովորական, հին ու անուշահոտ գինիներ, չամիչ և այլ չոր մրգեր։ Բացի գիններից, հայերը գիտեին պատրաստել նաև գարեջուր, քնջութի և կտավատի ձեթ, դառը նշի և բեհեկնի յուղ, օծանելիք, անուշահոտ յուղեր։

Հայաստանում, հատկապես նրա լեռնային և նախալեռնային շրջաններում զարգացած էր նաև անասնապահությունը։ Հայերը պահում էին խոշոր եղջերավոր անասուններ, ոչխար, այծ, խոզ,

ձի, ջորի, էշ, ուղտ և տնային թռչուններ։ Հայաստանը հատկապես հարուստ և հռչակված էր ալնվացիղ ձիերով։

VI—V դարերում (մ. թ. ա.) Հայաստանում գոյություն ունեցող արհեստների մասին մեզ հասել են ոչ բավարար տվյալներ։ Սակայն այդ տեղեկություններն անգամ ցույց են տալիս, որ հայերի մոտ ևս շատ վաղուց կատարվել էր աշխատանքի երկրորդ մեծ հասարակական բաժանումը. մասնագիտացված արհեստը բաժանվել է երկրագործությունից։ Հերոդոտի և Քսենոֆոնի տարբեր վկայություններից հայտնի է, որ հայերը իրև զենք օգտագործել են սրեր, դաշույններ, նետ ու աղեղ, կարճ ու երկար նիզակներ, երկսայր տապարներ, տեգեր, մեծ ու փոքր վահաններ, երկաթե կամ պղնձե լարերով հյուսված սաղավարտներ, զրահներ և այլն։ Քսենոֆոնը վկայում է, որ հայոց թագավորը ունեցել է թանկարժեք զարդեր և տնային կարասիներ, իսկ հույները Տիրիբազի վրանում գտել էին արծաթե ոտքերով գահույքներ և ըմպանակներ։ Բացի գրավոր այս տեղեկություններից, Էրեբունի ամրոցի շրջակայքում, Երզնկայում, Կարինում և այլ վայրերում հայտնաբերվել են արծաթից ու բրոնզից շինված, նախշերով, տարբեր կենդանիների՝ ձիու և հեծյալի, ցլի գլխի, թևավոր առյուծի, արծվի, քարայծի բարձրաքանդակներով գեղազարդված եղջերաբաժակներ, թասեր, գավաթներ, ամանների բռնակներ և այլն։ Ոսկուց շինված զարդերից Հասան-կալայում գտնվել է ծայրերը առյուծակերպ մի մանյակ, իսկ Արմավիրում՝ մահիկաձև, գեղազարդված և շատ նուրբ կրծքազարդ։ Նշված փաստերը ապացուցում են, որ VI—V դդ. Հայաստանում զգալի չափով զարգացած էին մետաղամշակությունը և նրա հետ կապված արհեստները, և որ հայերը ժառանգել և հիմնականում պահպանել էին մետաղամշակության այն խոշոր նվաճումները, որ ձեռք էին բերել ուրարտացիները։

Պեղումների ժամանակ Էրեբունի քաղաք-ամրոցում հայտնաբերվել է սյունազարդ մի դահլիճ, որը նման է Աքեմենյան Պարսկաստանի մայրաքաղաքներ Սուզայում, Պերսեպոլսում և այլ վայրերում հայտնաբերված ընդունասրահներին։ Հնագետները գտնում են, որ այս դահլիճը կառուցվել է V դարում (մ. թ. ա.), ուրարտական պալատական շենքի մի մասը վերափոխելու միջոցով։ Նորահայտ այս դահլիճը, ինչպես և բերդերի ու ամրաքանդ-ամրոցների գոյությունը Հայաստանում ցույց են տալիս, որ հայերը պահպանել ու զարգացրել էին նաև ուրարտացիներից ժառանգած շինարարական արվեստը։

Ինչպես վկայում են հույն պատմիչները, հայկական ավագա-

նին և զինվորները հագնում էին կարճ վերնազգեստներ, ճտքավոր կոշիկներ, իսկ գյուղացիները՝ տարբեր գույնի երկար զգեստներ և տրեխներ։ Հին հայերը կրում էին նաև սրածայր, սաղավարտանման և այլ ձևի գլխարկներ։ Էրեբունի քաղաք-ամրոցի, Ջրաշատ գյուղի , Դվինի և այլ վայրերի պեղումներից հայտնաբերվել են նաև V—IV դարերին պատկանող կավե ամաններ, կարասներ, կժեր, կճուճներ, տարբեր նյութերից պատրաստված զանազան գույնի ուլունքներ, քարե տնային իրեր և այլն։ Վերոհիշյալ գրավոր վկայությունները և նյութական մշակույթի մնացորդները հաստատում են, որ Հայաստանում VI—IV դարերում որոշ չափով զարգացած են եղել նաև մանածագործությունը, կաշեգործությունը, կավագործությունը և մյուս արհեստները։

«Հայաստանը,—ասում է Քսենոֆոնը,—մեծ է, հարուստ և բարեկեցիկ»։ Հույն պատմիչի այս բնութագրումը պարզ մի ապացույց է, որ իրոք VI—IV դարերում Հայաստանը գտնվել է տնտեսական զարգացման բավական բարձր աստիճանի վրա։ Այդ զարգացման ցուցանիշ է հանդիսանում նաև Հայաստանի երկու սատրապությունների՝ Աքեմենյան Պարսկաստանին տարեկան վճարած 600 արծաթ տաղանդի հարկագումարը, որի կշիռը հավասար էր մոտ 19,584 կիլոգրամ արծաթի, իսկ արժեքով՝ մոտ 2,400,000 ոսկի ռուբլու։ Իր ժամանակի համար այս մեծ հարկագումարը կարող էր վճարել միայն տնտեսապես զարգացած երկիրը, մանավանդ, եթե համեմատության համար նշենք, որ Հին Արևելքի ամենահարուստ, ամենազարգացած երկրներից Եգիպտոսը տարեկան վճարում էր 700, Բաբելոնիան՝ 1000, իսկ Փոքր Ասիան, իր երեք սատրապությունների հետ միասին, 1760 արծաթ տաղանդ։

Փոխանակությունը և առևտուրը

Պատմագրության մեջ այն կարծիքն է տարածված, որ Հայաստանում VI—IV դարերում քաղաքներ գոյություն չեն ունեցել։ Այս եզրակացության համար հիմք է հանդիսացել այն, որ հույները իրենց նահանջի ճանապարհին Հայաստանում ոչ մի քաղաքի չէին հանդիպել։ Սակայն նման եզրակացությունը հիմնավոր չէ։ Հավանաբար, հույները իրենք էին խուսափել Հայաստանում քաղաքների հանդիպելուց և նահանջել էին ոչ թե բանուկ, այլ գյուղական ճանապարհներով։

Իհարկե անտրամաբանական է կարծել, որ մարերը և հայերը կործանել ու մոխրակույտերի էին վերածել ուրարտական բոլոր նշանավոր քաղաքներն ու վարչական կենտրոնները։ Մեզ հասած պատահական ու կցկտուր տվյալները հակառակն են ապացուցում։

Վանի միջնաբերդում հայտնաբերվել է պարսից թագավոր Քսերքսես I-ի (486—465) պարսկերեն լեզվով գրված սեպագիր մի արձանագրություն, որտեղ նա խոսում է իր կատարած շինարարական աշխատանքների մասին։ Ուրարտական էրեբունի քաղաք-ամրոցում, ինչպես արդեն նշվել է, հայտնաբերվել են աքեմենյան դարաշրջանին պատկանող նյութական մշակույթի զգալի մնացորդներ։ Այս փաստերը ցույց են տալիս, որ Ուրարտուի մայրաքաղաք Տուշպա-Վանը և էրեբունի քաղաք-ամրոցը իրենց գոյությունն ու քաղաքային-վարչական նշանակությունը այս կամ այն կերպ պահպանել էին VI—IV դարերում։ Պետք է կարծել, որ իրենց գոյությունը և՝ նշանակությունը պահպանել էին նաև Արգիշտիխինիլի-Արմավիրը և ուրարտական քաղաք-ամրոցներից շատերը։

Մասնավոր սեփականության առաջացումը և աշխատանքի երկրորդ մեծ հասարակական բաժանումը, բնականորեն հայկական հասարակության ներսում նույնպես պետք է նպաստեին ապրանքափոխանակության և առևտրի առաջացմանն ու հետագա զարգացմանը։

Հայաստանի և Բաբելոնի միջև Եփրատ գետի վրայով տեղի ունեցող առևտրի մասին մի հետաքրքիր տեղեկություն է պահպանվել Հերոդոտի մոտ։ Նա հայտնում է, որ Բաբելոնից առևտրականները գալիս էին Հայերի երկիրը և այնտեղ գնում էին մեծ քանակությամբ գինի։ Այնուհետև նրանք տիկերով շրջապատված լաստանավեր էին պատրաստում, կարմիր կարասներով լցված գինին բեռնում էին նրանց վրա և Եփրատ գետի հոսանքով գալիս էին Բաբելոն։ Այստեղ գինին և լաստանավերի կմախքը վաճառելուց հետո, տիկերը բեռնում էին դրաստներին և ցամաքային ճանապարհով, Եփրատ գետի ափով կրկին գալիս էին Հայերի երկիրը։

Մ. Գարագաշյանը, Գ. Խալաթյանցը և ուրիշներ կարծել են, որ Հայաստանի և Բաբելոնի միջև տեղի ունեցող այս առևտրի միջնորդ առևտրականները եղել են հայերը։ Սրան հակառակ Հ. Մանանդյանը ցույց է տվել, որ այդ միջնորդ առևտրականները ոչ թե հղել են հայերը, այլ ասորեստանցիները։ Սակայն, անկախ նրանից, թե ովքեր են եղել միջնորդ առևտրականները, կարևորն ու էականն այն է, որ V դարում (մ. թ. ա.) Հայաստանը Եփրատ գետի վրայով առևտրական կապեր է ունեցել Բաբելոնի հետ և արտահանել է մեծ քանակությամբ գինի, հավանաբար նաև գյուղատնտեսական այլ ապրանքներ։ Հերոդոտի հաղորդած տեղեկության մեջ առավել ուշագրավ է այն, որ միջնորդ առևտրականները Հայաստանում գինի և այլ գյուղատնտեսական մթերքներ ձեռք բերելու համար Բա-

բելոնից, իրենց հետ ապրանքներ չեն բերել։ Այստեղից հետևում է, որ առևտրականները Հայաստանում իրենց գնումները կատարել են ոսկու ու արծաթի կշռով կամ դրամահատված փողի միջոցով։

Էրեբունի ամրոցի շրջակայքում գտնված արծաթե եղջերաբաժակներից մեկը բացահայտ կերպով հին հունական ծագում ունի։ Այս եղջերաբաժակը, ինչպես և հին աթենական ու միլեթական դրամները ապացուցում են, որ Հայաստանը աքեմենյան դարաշրջանում փոխանակային-առևտրական կապեր է ունեցել նաև Փոքր Ասիայի և հունական աշխարհի հետ։

Առևտրի և արհեստագործության առաջին կենտրոնները հանդիսացել են Հայաստանի քաղաքներն ու քաղաք-ամրոցները, թեև ինչպես Արևելքի շատ երկրներում, նույնպես և Հայաստանում քաղաքները դեռևս մեծ մասամբ ռազմա-վարչական կենտրոններ էին։

Հայաստանում գոյություն ունեցող առևտրի, առուծախի մասին կողմնակի վկայություններ կան նաև Քսենոֆոնի «Կյուրոպեդիա» աշխատության մեջ։ «Զինվորներին նա (Կյուրոսը) հրամայեց,—վկայում է Քսենոֆոնը,—որ ոչ ոքի հետ անարդար չվարվեն, և եթե հայերից որևէ մեկը հանդիպի՝ հայտնեն, որ անհանգիստ չլինեն, և ասեն, որ ցանկացողները ծախու ապրանքներ բերեն ուր որ իրենք են գտնվելու, եթե նրանք կամենում են ծախել ուտելիք և կամ խմիչք»։

Մեջբերված այս վկայությունը ցույց է տալիս, որ Քսենոֆոնը ևս ականատես կամ տեղյակ է եղել, որ Հայաստանի առանձին մասերում առևտուրը կատարվել է ոսկու ու արծաթի կշռով կամ դրամահատված փողի միջոցով, իսկ բնակիչները մթերքներ ու խմիչքներ են վաճառել զինվորներին։

Հայոց թագավորի ունեցած 3000 արծաթ տաղանդի կարողությունը և Հայաստանի երկու սատրապությունների տարեկան վճարած 600 տաղանդի հարկագումարը նույնպես կողմնակի կերպով ապացուցում են, որ Հայաստանը անծանոթ չի եղել այս դարաշրջանում դրամական տնտեսությանը։

Սակայն Հայաստանում VI—IV դարերում գոյություն ունեցող ներքին ու արտաքին առևտրի, դրամական տնտեսության ու շրջանառության դերը չի կարելի գերագնահատել։ Պետք է կարծել, որ Հայաստանի հեռավոր շրջանները ոչ միայն դեռ անծանոթ էին դրամական տնտեսությանը, այլև այս տեղերում առևտուրը կատարվում էր պարզ ապրանքափոխանակության ձևով։ Աքեմենյան դա-

բաշխչանում Հայաստանը դեռևս գտնվում էր փակ, բնատնտեսության շրջանակներում։

Հասարակական հարաբերությունները

VI—IV դարերում հայ ժողովուրդը գտնվում էր տոհմատիրական կարգերի քայքայման, տնտեսապես ու սոցիալապես շերտավորված և աստիճանաբար արևելյան տիպի ստրկատիրության վերածվող հասարակության շրջանում, որտեղ ուժեղ էին նաև տոհմա-ցեղային հարաբերությունների մնացորդները։

Հասարակության իշխող ու շահագործող խավը կազմված էր հայկական ու տեղական այլ ցեղերից առաջացած ռազմա-ստրկատիրական և տոհմա-ցեղային ավագանու մեծ ու փոքր ներկայացուցիչներից, որոնք հետզհետե վերածվում էին ստրկատիրական դասակարգի։ Քսենոֆոնը սրանց անվանում է «երևելի հայեր», «պատվավոր հայեր» կամ «իշխանավորներ»։

Ինչպես Աքեմենյան Պարսկաստանում և Առաջավոր Ասիայի շատ երկրներում, նույնպես և Հայաստանում հողը պետության սեփականությունն էր։ Իսկ հողային ռենտան և պետական հարկը հանդես են եկել միաձուլված տեսքով։

Բացի հողից, Հայաստանում պետությանը կամ թագավորին են պատկանել նաև քաղաքները, բերդերը, հանքերը, ջրանցքները, ճանապարհները։

Օգտագործման իրավունքով, գուցե և գանձվող պետական հարկի մի մասը յուրացնելու պայմանով ընդարձակ հողային տիրություններ են ունեցել թագավորական և ռազմա-ստրկատիրական ավագանու ազգատոհմերը։

Հայկական գյուղերի բնակչությունը, ինչպես երևում է Քսենոֆոնի վկայություններից, կազմված էր տոհմա-ցեղային կապերից կտրված, մենամուսնության և հայրական իրավունքի հիման վրա կազմված առանձին ընտանիքներից կամ ծխերից, որոնք միավորված էին տերիտորիալ գյուղական համայնքներում։ Գյուղական տները, նրանց մեջ պահվող անասունները, կենսամթերքները, խմիչքները, տնային իրերը և այլն ընտանիքների կամ ազատ համայնականների մասնավոր սեփականությունն էին։

Հայաստանում ազատ համայնականները շահագործվում էին կրկնակի կերպով։ Նրանք բնամթերքներով հարկեր ու տուրքեր էին վճարում ոչ միայն հայկական, այլև պարսկական պետությանը։ Բացի հարկերից ու տուրքերից, նրանք կատարում էին նաև շինարարական, փոխադրական և մի շարք այլ պարհակներ։ Համայնքի

անդամներից հարկերի գանձումը կատարվում էր գյուղապետի կողմից։

Հնագույն հայկական պետությունը իր բնույթով արևելյան տիպի միապետություն էր, որի գլուխ կանգնած էր թագավորը կամ թագավոր-սատրապը։ Թագավորական իշխանությունը ժառանգական էր, որը հորից անցնում էր անդրանիկ որդուն։

ՍՏՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ V

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ IV—III ԴԱՐԵՐՈՒՄ
(Մ. Թ. Ա.)

1. ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները և Սելևկյան պետության հիմնադրումը

IV դարի առաջին կեսից (մ. թ. ա.) Աքեմենյան Պարսկաստանը խիստ թուլանում է և կանգնում կործանման առաջ։ Հունա-մակեդոնական ստրկատերերը, օգտվելով Պարսկաստանի թուլությունից, ծրագրում էն նվաճել Փոքր Ասիան և Արևելքի մյուս երկրները։

Հունական զորքերը, Ալեքսանդր Մակեդոնացու ղեկավարությամբ, 334 թ. (մ. թ. ա.) ներխուժում են Փոքր Ասիա և պատերազմ սկսում Աքեմենյան Պարսկաստանի դեմ։ 331 թ. սեպտեմբերին Նինվեի ավերակներից ոչ այնքան հեռու գտնվող Գավգամելա բնակավայրի մոտ վճռական ճակատամարտ է տեղի ունենում աքեմենյան վերջին թագավոր Դարեհ III Կոդոմանի (336—331) և Ալեքսանդր Մակեդոնացու միջև։ Չնայած Դարեհի ունեցած ուժերի մեծ գերակշռությանը, Ալեքսանդր Մակեդոնացին լիակատար հաղթանակ չ տանում և վերջնականապես կործանում Աքեմենյան պետությունը։

Ալեքսանդր Մակեդոնացին ստեղծում է ընդարձակածավալ ու աշխարհակալ մի պետություն, որի սահմանները տարածվում էին Դանուբի ափերից մինչև Գանգես գետի ու Հնդկական օվկիանոսի ափերը, Սև ծովից և Միջին Ասիայից մինչև Եթովպիայի սահմանները։ Նորաստեղծ այս տերության մայրաքաղաքն է դառնում Բաբելոնը։

Սակայն Ալեքսանդր Մակեդոնացին երկար չի ապրում։ Նա մահանում է 323 թ. և նրա ստեղծած պետությունը արագ քայքայվում

էր։ Նրա զորավարները, արյունալի կռիվներից հետո պետությունը բաժանում են իրար մեջ և հիմնադրում ինքնուրույն երեք խոշոր հելլենիստական թագավորություններ։ Մակեդոնիայի և Հունաստանի տերիտորիայում ստեղծվում է մի առանձին պետություն. Պտղոմեոս զորավարը Եգիպտոսում հիմնադրում է Պտղոմեական, իսկ Սելևկոս Նիկատորը Առաջավոր Ասիայում՝ Սելևկյան պետությունը։

Սկզբում այս պետության հիմնական տերիտորիան հանդիսանում էր Բաբելոնիան։ Սակայն այդ պետությունը մեծ չափով ընդարձակվում և հզորանում է 301 թվականի Իպսոսի ճակատամարտից հետո։ Արդեն IV դարի վերջում (մ. թ. ա.) Սելևկյան պետության կազմի մեջ էին մտնում Բաբելոնիան, Հյուսիսային Միջագետքը, Ասորիքը, Մարաստանը, Պարսկաստանը, Իլամը, Միջին Ասիան և Փոքր Ասիայի մեծ մասը։ Սելևկյան պետության մայրաքաղաքն էր սկզբում Բաբելոնը։ հետո Տիգրիս գետի ափին կառուցված Սելևկիա քաղաքը, իսկ ապա՝ Ասորիքում հիմնադրված Անտիոքը։

Հելլենիզմը Արևելքում

Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումները և հելլենիստական պետությունների առաջացումը մեծապես նպաստեցին Արևելքի երկրների տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի զարգացմանը։

Հունա-մակեդոնական տիրապետության ժամանակ մեծ թվով հույն գաղթականներ, զինվորներ, արհեստավորներ ու առևտրականներ են գալիս Արևելք։ Սրանք Արևելք են բերում իրենց ավելի կատարելագործված արտադրության գործիքները, արտադրական հարուստ կենսափորձը, բարձր մշակույթը, լեզուն, սովորությունները, պետական-վարչական ձևերը և այլն։

Ալեքսանդր Մակեդոնացին և նրա հետևորդները նպաստում են Արևմուտքի և Արևելքի միաձեցմանը։ Այս քաղաքականության հետևանքով Արևմուտքի և Արևելքի սոցիալ-տնտեսական նույնատիպ, բայց առանձնահատուկ, ինքնուրույն գծեր ունեցող հարաբերությունները միաձուլվում են և դրանց սինթեզից Արևելքում առաջանում է ստրկատիրության նոր և ավելի բարձր աստիճանը, որը հայտնի է հելլենիզմ անունով։

Հույն գաղթականները Արևելքի երկրներում հիմնում են հելլենիստական տիպի ինքնավար, բայց թագավորական իշխանությանը ենթարկվող մեծ թվով քաղաքներ ու գաղթավայրեր, որոնք դառնում են արհեստագործության և առևտրի կենտրոններ։ Արևելքի

քաղաքներից շատերը վերածվում են հելլենիստական տիպի ինքնավար քաղաքների։

Արևելքում պետական, տաճարական և տնային ստրկատիրության կողքին զգալի չափով զարգանում է նաև մասնավոր, անտիկ ստրկատիրությունը, և ստրկական աշխատանքը ավելի մեծ չափերով կիրառվում է արտադրության բոլոր ճյուղերում։

Արևելքի հելլենիստական երկրներում, հնուց գոյություն ունեցող հողի պետական սեփականության պահպանմամբ հանդերձ, առաջանում ու զարգանում է նաև հողի մասնավոր սեփականությունը։ Գյուղական համայնքների կողքին հանդես են գալիս մասնավոր սեփականատիրական տնտեսություններ։

Հողի մասնավոր սեփականության առաջացման, ստրկական աշխատանքի ինտենսիվ շահագործման, ավելի կատարելագործված գործիքների և հողագործության սիստեմի կիրառման, առանձին անասունների ցեղի բարելավման, քաղաքային բնակչության կենսամթերքների նկատմամբ ունեցած պահանջի աճման հետևանքով ըզգալի վերելք են ապրում երկրագործությունն ու անասնապահությունը։

Հելլենիստական քաղաքներում զարգացման ավելի բարձր աստիճանի են հասնում մետաղամշակությունը, մանածագործությունը, կավագործությունը, ապակեգործությունը և արհեստագործության մյուս ճյուղերը։ Զարգանում են նաև առևտուրն ու դրամական շրջանառությունը։ Հելլենիզմի դարաշրջանում առևտուրը ստանում է միջազգային բնույթ։

Արևելքի հելլենիստական երկրների տնտեսական կյանքի ու առևտրի այս աննախընթաց զարգացումն իր ոլորտի մեջ է առնում նաև հարևան երկրներին, որոնք չէին նվաճվել Ալեքսանդր Մակեդոնացու կամ նրա հետևորդների կողմից։

Սակայն չի կարելի գերագնահատել հելլենիստական քաղաքների, տնտեսության ու առևտրի զարգացման դերն ու նշանակությունը։ Ինչպես ստրկատիրական բոլոր հասարակությունների, նույնպես և հելլենիզմի, որպես անտիկ հասարակության զարգացման նոր աստիճանի համար խիստ բնորոշ էին արտադրության բազայի նեղությունը, ստրկական աշխատանքի արտադրողականության սահմանափակությունը, արտադրության տեխնիկայի համեմատաբար ցածր մակարդակը։ Հելլենիզմը առաջադիմական մի խոշոր քայլ էր միայն Արևելքում գոյություն ունեցող նախորդ սոցիալ-տնտեսական հարաբերությունների, տնտեսական կյանքի լճացման ու դանդաղաշարժության նկատմամբ։ Հելլենիզմը ոչ միայն չկարո-

դացավ լրիվ բայքայել Արևելքի հետամնացության ու դանդաղաշարժության հիմքը հանդիսացող գյուղական համայնքը, այլև ինքը ընդօրինակեց ու պահպանեց գյուղական համայնքի շահագործման Արևելքում գոյություն ունեցող ձևը։ Հելլենիստական պետությունները Արևելքից ընդօրինակեցին նաև կառավարման միապետական բռնապետական ձևը՝ որոշ փոփոխություններով, հողի պետական սեփականության իրավունքը, վարչական բաժանման ու կառավարման սիստեմը և այլն։

Զարգացող սոցիալ-տնտեսական հարաբերությունների բազայի հիման վրա հունական և Արևելքի տեղական մշակույթների համաձուլման և նրանց սինթեզի հետևանքով առաջանում և զարգանում է մշակույթի մի նոր տիպ, որը հայտնի է հելլենիստական մշակույթ անունով։ Զարգացման նոր, ավելի բարձր աստիճանի են հասնում գիտության, մշակույթի և արվեստի այն ժամանակվա հայտնի բոլոր ճյուղերը։ Նորաստեղծ այս մշակույթը, հունարեն լեզուն, հունական աստվածների պաշտամունքը և նրանց նույնացումը տեղական աստվածների հետ մեծ տարածում են ստանում Արևելքի երկրների տեղական հելլենականացած ստրկատիրական վերնախավի շրջանում։

Հելլենիստական մշակույթի ստեղծման մեջ կարևոր դեր են կատարում ոչ միայն իրենք՝ հույները, այլև եգիպտացիները, ասորիները, բաբիլացիները, հրեաները, պարսիկները, հայերը և Արևելքի մյուս ժողովուրդները։ Այդ իմաստով էլ հելլենիստական մշակույթը ոչ միայն պատկանում է հույն ժողովրդին, այլև այն ստեղծած բոլոր ժողովուրդներին։

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ IV—III ԴԱՐԵՐՈՒՄ

Հայաստանի անկախության վերականգնումը

Հայաստանի IV—III դարերի (մ. թ. ա.) պատմության վերաբերյալ մեզ են հասել միայն պատահական, կցկտուր և աղոտ տեղեկություններ։

Գավգամելայի նշանավոր ճակատամարտում, ինչպես վկայում են հույն և հռոմեացի պատմագիրները, Դարեհ Կոդոմանի բանակում հայերը նույնպես կռվել են Ալեքսանդր Մակեդոնացու դեմ և Օրոնտաս-Երվանդ III-ի (մոտ 336—300) և Միթրաուստեսի ղեկավարությամբ, դուրս բերել 40000 հետևազոր և 7000 հեծելազոր։

Այս ճակատամարտում պարսկական բանակի պարտությունից

հետո հայկական զորքի մնացորդները իրենց առաջնորդների հետ միասին վերադառնում են Հայաստան։

Ալեքսանդր Մակեդոնացին, որն իր արշավանքը կատարել էր Փոքր Ասիայի հարավային շրջանների, Կիլիկիայի, Ասորիքի և Բաբելոնիայի վրայով դեպի Պարսկաստան, անձամբ Հայաստանում չէր եղել և այն չէր նվաճել։ Սակայն Գավգամելայի ճակատամարտից անմիջապես հետո, նա Հայաստանի սատրապ է նշանակում Միթրեն կամ ավելի ճիշտը Միհրան անունով մի պարսիկի։ Այս նշանակումը, սակայն, բացառապես ձևական ու անվանական էր մնացել, որովհետև Միթրեն-Միհրանը չէր կարողացել մտնել Հայաստան և այնտեղ հաստատվել սատրապի պաշտոնում։

Որ իրոք Հայաստանը չէր նվաճվել՝ պարզ կերպով երևում է նրանից, որ այս նշանակումից առնվազն երեք տարի անց Ալեքսանդրը Մակեդոնացին, Մենոն զորավարի առաջնորդությամբ, մի հատուկ զորամաս է ուղարկում Հայաստան՝ Սպեր գավառում գտնվող ոսկու հանքերը գրավելու համար, սակայն հայերը ջարդում են հունա-մակեդոնական զորքերին և ճակատամարտում սպանում Մենոնին։

Գավգամելայի ճակատամարտից հետո այն երկրները, որոնք չէին նվաճվել Ալեքսանդր Մակեդոնացու կողմից, ձեռք են բերում ինքնուրույնություն ու անկախություն։ Երվանդ III-ը և Միթրաուստեսը, օգտվելով Աքեմենյան տերության կործանումից և Ալեքսանդր Մակեդոնացու՝ Միջին Ասիայում ու Հնդկաստանում զբաղված լինելու հանգամանքից, վերականգնում են Հայաստանի անկախությունը և այնտեղ հիմնում երկու ինքնուրույն թագավորություն։ Երվանդ III-ը իրեն անկախ թագավոր է հայտարարում Մեծ Հայքում, իսկ Միթրաուստեսը՝ Փոքր Հայքում։

Մեծ Հայքի թագավորությունը

Մեծ Հայքի թագավորությունն իր կազմի մեջ ընդգրկում էր Հայաստանի տերիտորիայի մեծագույն մասը։ Նրա սահմանների մեջ էին մտնում Աղձնիքի ու Կորճեքի նահանգները, Վանա լճի ավազանը, Տարոնը, Մոկքը, Այրարատը, Սյունիքը, Ծոփքը և Մելիտինեի շրջանը։

Սկզբում Ալեքսանդր Մակեդոնացու զորավարների, իսկ այնուհետև հելլենիստական պետությունների միջև մղվող երկարատև ու արյունալի պատերազմները հնարավորություն չեն տալիս հունա-մակեդոնական նվաճողներին միջամտելու հատկապես Մեծ Հայքի ներքին գործերին, որը և մեծ չափով նպաստում է Մեծ Հայ-

քի թագավորության անկախության ամրապնդմանն ու հզորացմանը։

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո պետության խնամակալ ընտրված Պերդիկկաս զորավարը 322 թ. (մ. թ. ա.) նվաճում է Հայաստանի հարևան Կապադովկիան, Պաֆլագոնիան ու Սև ծովի շրջանները՝ մինչև Տրապիզոն, և այդ երկրները իրեն առանձին սատրապություն հանձնում է իրեն կողմնակից, Ալեքսանդր Մակեդոնացու քարտուղար Եվմենեսին։

IV դարի վերջում կամ III դարի սկզբում (մ. թ. ա.) Մեծ Հայքի մայրաքաղաքը տեղափոխվում է Արարատյան դաշտ՝ ուրարտական նախկին Արգիշտիխինիլի տեղում կառուցված Արմավիր քաղաքը։ Այս ժամանակից սկսած Արարատյան դաշտը դառնում է Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի կենտրոնը։ Այդ պատճառով էլ հնում Մեծ Հայքի թագավորությունը սկսում են անվանել նաև «Արարատյան» կամ «Այրարատյան թագավորություն»։

III դարում (մ. թ. ա.) Մեծ Հայքի տնտեսական, հասարակական և սոցիալական կյանքում զգալի տեղաշարժեր ու փոփոխություններ են կատարվում, որոնք հիմնականում երկրի ներքին օրինաչափ զարգացման, մասամբ նաև Առաջավոր Ասիայի հելլենիստական երկրների ունեցած ազդեցության հետևանք էին։

Մեծ Հայքում, բացի Արմավիրից և հնուց գոյություն ունեցող վանից, առաջանում են նաև մի շարք նոր քաղաքներ, քաղաքատիպ ավաններ։ Քաղաքաշինությունը, հատկապես Այրարատ նահանգում, մեծ ծավալ է ստանում Երվանդ IV-ի (մոտ 230—201) ժամանակ։ Մովսես Խորենացին հաղորդում է, որ Երվանդ IV-ը Արաքս և Ախուրյան գետերի խառնարանի մոտ իր անունով կառուցում է մի նոր քաղաք՝ Երվանդաշատը և Արմավիրից այնտեղ է տեղափոխում արքունիքը։ Նա նոր մայրաքաղաքի միջնաբերդն ամրացնում է բարձր պարիսպներով, պարիսպների մեջ դնում պղնձե դռներ և ներքնից մինչև վեր բարձրացող երկաթե սանդուղքներ։ Նա Ախուրյան գետի ձախ ափին կառուցում է նաև դեղեցիկ ու շքեղ շինվածքներով Երվանդակերտ դաստակերտն ու Բագարան փոքր քաղաքը։ Արմավիրից նա Բագարան է փոխադրում հեթանոս աստվածների արձանները և իր եղբորը՝ Երվազին, նշանակում քրմապետ։ III դարում են առաջանում նաև Երվանդավան, Նախճավան, Վարդգեսավան (հետագայում Վաղարշապատ), Երազգավորս և այլ քաղաքատիպ բնակավայրերը։

Զգալի թվով քաղաքների ու քաղաքատիպ ավանների առաջա-

ցումն ու զարգացումը Մեծ Հայքում առաջին հերթին պայմանավորված էին աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացման, ուրարտական ժամանակաշրջանի հետ համեմատած՝ գյուղատնտեսության ու արհեստագործության ավելի բարձր զարգացման և, դրանց հիման վրա, առևտրի ու դրամական շրջանառության ծավալման հետ։ Առևտրի և քաղաքների զարգացմանը որոշ չափով նպաստում է նաև միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհներից մեկը, որը սելևկյանների նախկին մայրաքաղաք Սելևկիայից Միջագետքի, Մարաստանի ու Արարատյան դաշտի վրայով, գնում էր Կոլխիդա և Սև ծովի նավահանգիստները, իսկ այնտեղից էլ Բոսպոր (Ղրիմ) և մերձազովյան երկրները։ Այս ճանապարհի շնորհիվ Մեծ Հայքը ևս ներգրավվում է միջազգային առևտրի մեջ։

Մեծ Հայքում առևտրի ու դրամական շրջանառության զարգացման ընդհանրում կատարված խոշոր բեկումը պարզ կերպով երևում է հայտնաբերված հին դրամներից։ Մեծ Հայքի տերիտորիայի մեծ մասում, այդ թվում՝ Երևանում ու նրա շրջակայքում և Սիսիանում, Օրդուբադում, Լեռնային Ղարաբաղում և այլուր հայտնաբերվել են Ալեքսանդր Մակեդոնացու, ինչպես և III դարում և II դարի առաջին կեսում իշխած սելևկյան, պարթևական, պոնտական, կապադովկյան թագավորների արծաթե ու պղնձե դրամներ։

Արմավիրում գտնվել են III դարի վերջին պատկանող հունարեն արձանագրություններ, որոնցից մեկի մեջ Մեծ Հայքը անվանված է «գեղեցիկ երկիր Արմենիա»։

Փոքր Հայքի թագավորությունը

330 թ. (մ. թ. ա.) Միթրաուստեսի կողմից հիմնադրված Փոքր Հայքի թագավորությունը իր սահմանների մեջ ընդգրկում էր Եփրատ և Դայլ գետերի վերին հոսանքների միջև ընկած տերիտորիան։ II դարի սկզբում (մ. թ. ա.) Փոքր Հայքը իրեն է հպատակեցնում նաև խալդայներին ու տիբարեններին և հյուսիսից տարածվում է մինչև Սև ծովի ափերը։

322 թվականին Կապադովկիայի, Պաֆլագոնիայի և Սև ծովի մոտակա շրջանները նվաճելու ժամանակ հունա-մակեդոնական զորքերը դրավում են նաև Փոքր Հայքը և այն միացնում Ալեքսանդր Մակեդոնացու քարտուղար Եվմենեսին հանձնված սատրապությանը։ Այստեղ կառավարիչ է նշանակվում Նեոպտղոմեոսը, որի վարած դաժան քաղաքականության պատճառով Փոքր Հայքի հայերը խիստ գրգռվում և ապստամբություն են բարձրացնում զավթիչների

դեմ։ Միայն Եվմենեսի միջամտության շնորհիվ, որը վարում էր համեմատաբար մեղմ քաղաքականություն, հնարավոր է լինում առժամանակ հանգստացնել ու հնազանդեցնել ապստամբ հայերին։

Սակայն Փոքր Հայքը երկար չի մնում հունա-մակեդոնական տիրապետության տակ։ Իսոսոսի ճակատամարտից հետո, 301—300 թթ. Փոքր Հայքը ևս ապստամբություն է բարձրացնում և վերականգնում իր անկախությունը։

Սկզբնաղբյուրների հաղորդած կցկտուր և պատահական տեղեկություններից երևում է, որ IV—III դարում Փոքր Հայքում ևս զգալի չափով զարգանում են երկրագործությունը, այգեգործությունը. անասնապահությունը, մետաղամշակությունը և արհեստագործության մյուս ճյուղերը։ Մեծ զարկ են ստանում նաև առևտուրն ու դրամական շրջանառությունը։ Սրանց զարգացման մեջ զգալի դեր են կատարում Միջագետքից ու Ասորիքից, Մեծ Հայքի ու Սոփքի վրայով եկող և Փոքր Հայքում խաչավորվող առևտրական ճանապարհները, որոնք գնում էին դեպի Պոնտոս և Սև ծովի հարավային նավահանգիստները։

Փոքր Հայքը իր անկախությունն ու ինքնուրույնությունը պահպանում է համարյա երկու հարյուր տարի։

Սոփքի հայկական թագավորությունը

Սոփքը կամ Սոփաց աշխարհը գտնվում է Հայաստանի հարավ-արևմտյան մասում։ Նրա տերիտորիան տարածվում է Արածանի գետի ստորին հոսանքի շատ բարեբեր հովտում, որին Պոլիբիոսը անվանում է «գեղեցիկ դաշտ»։

Կոմմագենը և Սոփքը իրենց աշխարհագրական դիրքի պատճառով դեռևս աքեմենյան դարաշրջանից սկսած՝ տնտեսական, մասամբ նաև մշակութային ավելի սերտ կապերի մեջ էին գտնվում Ասորիքի, Միջագետքի ու Կապադովկիայի, քան Մեծ Հայքի հետ։

Դրա համար էլ III դարի առաջին կեսում (մ. թ. ա.) այդ երկրամասերն անջատվում են Մեծ Հայքից և դառնում ինքնուրույն թագավորություն։

Հայկական այս նորաստեղծ թագավորության հիմնադիրը, հավանաբար, հանդիսացել է Սամոսը (մոտ 260—240), որը Մեծ Հայքի Երվանդունիների տոհմից էր և մինչև իրեն թագավոր հռչակելը եղել էր այս երկրամասերի կառավարիչը։ Սա Կոմմագենում, Եփրատ գետի ափին իր անունով կառուցում է Սամոսատ մայրաքաղաքը։

Սամոսին հաջորդում է նրա որդին՝ Արշամը (մոտ 240—220),

Սա իր անունով Սոփքում կառուցում է Արշամաշատը, իսկ Կոմմագենում՝ Արսամեյա կամ Արշամեյա անունով քաղաքները։

Հավանաբար, Արշամի մահից հետո Սոփքը և Կոմմագենը բաժանվում են իրարից անկախ երկու ինքնուրույն թագավորությունների, որոնցում շարունակում են իշխել Երվանդունի թագավորական տան ներկայացուցիչները։

Սոփքը ինչպես հնում, նույնպես և այս դարաշրջանում միջազգային տարանցիկ առևտրի կարևոր հանգույցներից էր։ Սոփքի վրայով էր անցնում ոչ միայն հին աշխարհի տարանցիկ առևտրի գլխավոր մայրուղին, նրա զարկերակը հանդիսացող «Արքայական ճանապարհը», այլև հարավից դեպի Սև ծովի ափերը տանող բանուկ ու կարճ ճանապարհը։ Այստեղ էր գտնվում նաև Եփրատի կարևոր գետանցներից մեկը և նրա մոտ կառուցված Տոմիսա ամրոցը, որը կայան էր Փոքր Ասիայից, Սև ծովի ափերից, Միջագետքից և Ասորիքից եկած քարավանների համար։

Սոփքի նշանավոր քաղաքներն էին Արշամաշատը և Արկաթիակերտը, որոնցից առաջինը գտնվում է Արածանի գետի մոտ, իսկ երկրորդը՝ Տիգրիսի աղբյուրագետակ Արղանայի վրա։ Արշամաշատը Սոփքի մայրաքաղաքն էր։ Այս երկու քաղաքներն էլ ոչ միայն վարչական, այլև արհեստագործության ու առևտրի կարևոր կենտրոններ էին։

Սելևկյան գերիշխանությունը Մեծ Հայքում և Սոփքում

Հայ թագավորներից Սոփքի թագավորները առաջինն են իրենց անունով սեփական դրամներ կտրել։ Մինչև այժմ հայտնաբերվել են Արշամ, Աբդիսարես, Քսերքսես և Զարեհ թագավորների կտրած արծաթե և պղնձե դրամները, որոնք պահվում են եվրոպական տարբեր թանգարաններում։

220 թ. (մ. թ. ա.) Սելևկյան պետությունը, որը զգալի չափով ուժեղացել էր Անտիոքոս III-ի (223—187) գահակալության ժամանակ, իր գերիշխանությանն է ենթարկում Սոփքը և Մեծ Հայքը։ Սակայն այդ գերիշխանությունը շատ անկայուն էր։ Հավանաբար Սոփքի Աբդիսարես թագավորը, օգտվելով սելևկյանների 217 թ. Եգիպտոսի պտղոմեականներից կրած ծանր պարտությունից, հրաժարվում է ճանաչել Անտիոքոս III-ի գերիշխանությունը և նրան հարկ վճարել։

Անտիոքոս III-ը, իր ուժերը վերականգնելուց հետո, որոշում է կրկին Սոփքը ենթարկել իրեն։ Այդ նպատակով նա 212 թ. զգալի ուժերով ներխուժում է Սոփք և բանակ է դնում Արշամաշատ մայ-

բաքաղաքի մոտ։ Սոփքի Քսերքսես թագավորը, նկատի ունենալով թշնամու ուժերի գերազանցությունը, դեսպաններ է ուղարկում Անտիոքոսի մոտ և հայտնում, որ ցանկանում է բանակցության մեջ մտնել նրա հետ։ Անտիոքոսը իր մոտ է կանչում Քսերքսեսին, հաշտվում նրա հետ և նույնիսկ նրան է զիջում հարկի մեծագույն մասը, որ մերժել էր իրեն վճարել Քսերքսեսի հայրը։ Այնուհետև, Անտիոքոսը վերցնում է Քսերքսեսից 300 տաղանդ, 100 ձի և նույնքան ջորի, իրենց լծասարքերով, վերադարձնում է նրան ամբողջ իշխանությունը և ամուսնացնում նրան իր քրոջ հետ։ Սակայն անհնազանդության համար Անտիոքոսը 201 թ. սպանել է տալիս Քսերքսեսին և Սոփքում ստրատեգ, այսինքն՝ զորավար-կառավարիչ է նշանակում Զարեհին, որը, ըստ երևույթին, Սոփքի թագավորական նույն տոհմից էր։

Նույն այս ժամանակ հայկական ավագանու ընդդիմադիր հոսանքի ղեկավար Արտաշեսը, Անտիոքոս III-ի օգնությամբ, պայքար է սկսում Մեծ Հայքի թագավոր Երվանդ IV-ի դեմ։ Արտաշեսը, ինչպես հաղորդում է Խորենացին, զգալի ուժերով հարձակվում է Երվանդի վրա, հաղթում է նրան, պաշարում և գրավում Երվանդաշատը։ Մայրաքաղաքի գրավման խառնաշփոթության ժամանակ զինվորներից մեկը վաղրով սպանում է Երվանդին։ Դրանից հետո Արտաշեսը, գրավելով նաև Բագարանն ու սպանելով Երվանդի հղբորը՝ քրմապետ Երվազին, վերացնում է Երվանդունիների դինաստիան։ Օրոնտաս-Երվանդ IV-ի տապալումից ու սպանությունից հետո, Անտիոքոս III-ը Արտաշեսին Մեծ Հայքում նշանակում է ստրատեգ։ Դրանից հետո ավելի քան տասը տարի Մեծ Հայքը և Սոփքը իբրև սելևկյան տիրապետության տակ գտնվող երկրներ կառավարվում են Արտաշեսի ու Զարեհի կողմից։

ԳԼՈՒԽ VI

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Մեծ Հայքի և Մոփքի անկախությունը վերականգնումը

Երկրորդ դարի սկզբում (մ. թ. ա.) Արևելքում հանդես է գալիս մի նոր հզոր ուժ։ Դա սարկատիրական Հռոմն էր։ 200—197 թթ. Հռոմը, իր իշխանությանը ենթարկելով Հունաստանը, անմիջական սպառնալիք է ստեղծում նաև Փոքր Ասիայի համար։ Հռոմը իր նվաճումները քողարկում էր հույներին և մյուս ժողովուրդներին «հովանավորելի» դիմակով։

Հռոմի կողմից Փոքր Ասիայի նկատմամբ ստեղծած անմիջական սպառնալիքը անխուսափելի է դարձնում սելևկյանների և հռոմեացիների ընդհարումը։ 190 թ. Փոքր Ասիայի Մագնեսիա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Անտիոքոս III-ը սոսկալի պարտություն է կրում և գլխովին ջախջախվում։

Մագնեսիայի մոտ Անտիոքոսի պարտությունը ոչ միայն դառնում է Սելևկյան պետության քայքայման և անկման սկիզբը, այլև աղդանշան հանդիսանում նրա տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազատագրական շարժման համար։ Հայերը ևս 189 թ., օգտվելով ստեղծված դրությունից, Մեծ Հայքում Արտաշեսի և Մոփքում Զարեհի գլխավորությամբ, ապստամբություն են բարձրացնում սելևկյան տիրապետության դեմ և վերականգնում իրենց անկախությունը։ Մեծ Հայքում թագավոր է հռչակվում Արտաշեսը, իսկ Մոփքում՝ Զարեհը։

Արտաշես I-ը (189—160) հելլենիստական կրթություն ստացած, վարչական ու ռազմական մեծ ընդունակություններ ունեցող, իր ժամանակի նշանավոր պետական գործիչներից էր։ Նա Հայաս-

տանում հիմնադրում է Արտաշեսյան դինաստիան, որը շատ կարևոր դեր է կատարում հայկական հողերի միավորման, Հայաստանի քաղաքական հզորացման, նրա տնտեսական և մշակութային կյանքի զարգացման ասպարեզում։

Արտաշեսի տոհմային ծագման մասին մեզ հաստատուն տեղեկություններ չեն հասել։ Հայաստանում սահմանաքարերի վրա թողած արամեական արձանագրությունների մեջ Արտաշես I-ը իրեն անվանում է «որդի Զարեհի Երվանդական», որից կարելի է հնթադրել, որ Արտաշեսը ևս պատկանել է Երվանդունիների տոհմին կամ, իրեն «Երվանդական» անվանելով, ցանկացել է նշել, որ ինքը Երվանդունիների թագավորության օրինական ժառանգորդն է և նրա ավանդույթների շարունակողը։

Հայկական հողերի միավորումը

Հայկական առաջին միասնական պետությունը ստեղծում են Երվանդունիները, որն իր գոյության ընթացքում շատ կարևոր դեր է կատարում Հայկական լեռնաշխարհի ցեղային երկրները միավորելու և հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը խթանելու գործում։ Սակայն այս պետությունը արտաքին ուժերի միջամտության պատճառով ոչ միայն չի կարողանում ստեղծել կենտրոնացված ուժեղ իշխանություն, այլև ինքը տրոհվում ու բաժանվում է առանձին մասերի։

III դարում Հայաստանի տնտեսության բոլոր ճյուղերի, առևտրի և քաղաքների աննախընթաց զարգացումը, դասակարգային հարաբերությունների խորացումը, II դարի սկզբում հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի ավարտվելը անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում նոր հիմքերի վրա հայկական հողերը միավորելու և ավելի կայուն ու կենսունակ, կենտրոնացված, միասնական պետություն ստեղծելու համար։

Հայկական հողերի միավորման և կենտրոնացված միասնական պետականության ստեղծման նախաձեռնությունը վերցնում է Արտաշես I-ը։

Ստրաբոնի վկայությամբ Արտաշես I-ը գրավում է Կասպիանե կամ Կասպից երկիրը, որին հայերը կոչում էին Փայտակարան, Փավնիտիսը ու Պարսպատունիքը, Գուգարքը, Տայքը և Խորձյան դավառը, Կարինը, Դերջանը, Տմորիքը։ Սյունիքը, Արցախը և Ուտիքը նույնպես այդ ժամանակ Հայաստանի անբաժանելի մասն էին կազմում։

Զարեհի թագավորության ժամանակ Ծոփքը ևս իր տերիտորիան զգալի չափով ընդարձակում է Անտիտավրոսի կողմերում

գտնվող երկրամասերի հաշվին։ «Պատմում են,—գրում է Ստրաբոնը,—որ Հայաստանը առաջ եղել է փոքր և մեծացել է Արտաշեսի ու Զարեհի ձեռքով»։

[Զարեհի մահից հետո Արտաշեսը փորձում է Սոփքը նույնպես միացնել Մեծ Հայքի թագավորությանը։ Սակայն Արտաշեսին չի հաջողվում հայկական այս կարևոր երկրամասը միավորել իր թագավորության հետ։

Չնայած դրան, Արտաշես I-ը կարողացավ ստեղծել հայկական մի ընդարձակ և հզոր թագավորություն, որի սահմանները տարածվում էին Կասպից ծովի արևմտյան ափերից մինչև Սփրատ գետը, Վիրահայոց լեռներից մինչև Տավրոսյան լեռնաշղթան։ Մեծ Հայքի թագավորությունն արդեն իր սահմանների մեջ ընդգրկում էր գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը, պատմական Հայաստանի 15 նահանգներից 14-ը. Այրարատը, Սյունիքը, Գուգարքը, Տայքը, Արցախը, Ուտիքը, Վասպուրականը, Մոկքը, Բարձր Հայքը, Տարոնը, Աղձնիքը, Կորճեքի մեծ մասը, Փայտակարանը և Պարսկահայքը։ Անշուշտ, դրա համար էլ Պոլիբիոսը Արտաշեսին անվանում է «Հայաստանի մեծագույն մասի կառավարիչ»։

Մեծ Հայքի թագավորության ընդարձակվելն ու հզորանալը առաջին հերթին հետևանք էր այն բանի, որ Արտաշեսի գրաված նահանգների բնակչության մեծ մասը, բացի Կասպիանե երկրամասից, հայեր էին։ Արտաշեսը, իրոք, ոչ միայն գրավում էր այս կամ այն երկրամասը, այլև միավորում հայկական հողերը մի միասնական պետության մեջ և հիմնական գծերով իր ավարտին էր հասցնում վաղուց սկսված հայ ժողովրդի կազմավորման ընթացքը և քաղաքական իշխանությամբ ամրապնդում այն։ Այս տեսակետից էլ իրավամբ Արտաշես I-ը հանդիսացել է ոչ միայն հայկական կենտրոնացված պետության հիմնադիրը, այլև հայկական հողերի միավորողը։)

Արտաշես I-ի ներքին քաղաքականությունը

Արտաշես I-ի ներքին քաղաքականության ու պետական գործունեության մասին մեզ որոշ տեղեկություններ հաղորդում է նաև պատմահայր Մովսես Խորենացին։

Արտաշես I-ը ստեղծելով մի ընդարձակ պետություն, բնականաբար, պետք է մտածեր նաև նրա կառավարման ու ամրապնդման մասին։ Նա նախ Հայաստանը, ըստ աշխարհագրական կողմերի, բաժանում է չորս զինվորական շրջանների։ Կենտրոնական իշխանությունը, երկրի պաշտպանությունը ամրապնդելու նպատակով նա պետական, զինվորական կարևոր պաշտոնները կենտրոնացնում է

իր որդիների ու մերձավորների ձեռքում։ Նա իր անդրանիկ որդուն՝ Արտավազդին, հանձնում է արևելյան նահանգների կառավարումն ու հայկական բանակի սպարապետությունը։ Իր երկրորդ որդուն՝ Վրույրին, որը իմաստուն և բանաստեղծական ձիրք ունեցող մարդ էր, նշանակում է հարկային, շինարարական և արքունի գործերի կառավարիչ, մյուս որդուն՝ Տիրանին, հանձնարարում է արևմտյան, հինգերորդին՝ Զարեհին, հյուսիսային, իսկ իր դայակ Սմբատին՝ հարավային զինվորական շրջանների կառավարումն ու զորքերի հրամանատարությունը։ Կարևոր պաշտոններից մեկը նաև քրմապետության պաշտոնն էր, որը վարում էր Արտաշեսի Մաժան անունով որդին։

Արտաշեսի թագավորության ժամանակ զգալի չափով ընդարձակվում և զարգանում են պետական, տաճարական ու մասնավոր ստրկատիրական դաստակերտային և ագարակային տնտեսությունները։ Սրանց զարգացմանը նպաստում են մեծ թվով գերեվարված ստրուկները, որոնց Արտաշեսը և Մեծ Հայքի ստրկատերերը ձեռք էին բերել իրենց արշավանքների ժամանակ։ Խորենացին վկայում է, որ Արտաշեսը հողերի վերաբաժանում է կատարում և իր անունով հատուկ սահմանաքարեր է դնում գյուղերի ու ագարակների միջև։ Պատմահոր նշած այս սահմանաքարերից հինգը հայտնաբերվել են Հայաստանի տարբեր մասերում։

Բնական է, որ Հայկական լեռնաշխարհի և հայ ժողովրդի հընշող մեծամասնության միավորումը մի միասնական պետության կազմի մեջ պետք է նպաստեր Հայաստանի նաև տնտեսական ու մշակութային-կյանքի նոր վերելքին։

«Բայց ասում են,—վկայում է Մովսես Խորենացին,—որ Արտաշեսի ժամանակ Հայոց աշխարհում անմշակ հող չէր կարելի գտնել ոչ լեռնային և ոչ դաշտային մասերում՝ երկրի շինության պատճառով»։ Պատմահայրը մի այլ տեղ վկայում է, որ որոշ ժամանակ հայերի մոտ ունայնացել էին մեծամեծ արվեստներն ու դիտությունները, մոռացվել էին նավագնացությունը, արհեստները, մասամբ նաև երկրագործությունը. սակայն այդ բոլորը վերստին ստեղծվում և զարգանում են Արտաշեսի օրոք։ Արտաշեսի և Սաթենիկի ամուսնության կապակցությամբ ժողովրդական երգի մեջ ասված է.

«Տեղ ոսկի տեղայր
Ի փեսայութեանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ
Ի ճարսնութենն Սաթենկանն»։

Հին ժողովրդական վեպի մեջ Արտաշեսի մահվան առթիվ ասված է, որ նրա դագաղը, թագը և զենքերը ոսկեղեն էին, դահույքը, անկողինը և պատմուճանը՝ ոսկեթել բեհեզից։

Չնայած վերոհիշյալ վկայությունների մեջ եղած չափազանցություններին, այնուամենայնիվ, դրանք մասամբ ցույց են տալիս, որ իրոք Արտաշեսի թագավորության տարիները Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքի աննախընթաց զարգացման տարիներ են եղել։

Արտաշատի կառուցումը

Հայաստանում արհեստագործության, առևտրի և դրամական շրջանառության հետագա զարգացումը անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում նոր քաղաքների և քաղաքատիպ ավանների առաջացման համար։ Արտաշեսը 180—160 թթ. ընթացքում Արարատյան դաշտում, Արաքսի ձախ ափին իր անունով կառուցում է Արտաշատ մայրաքաղաքը։

«Արտաշեսը,—վկայում է Խորենացին,—գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը իրար էին խառնվում, և հավանելով՝ բլրի վրա շինում է քաղաք և իր անունով կոչում Արտաշատ»։

«Հայաստանի քաղաքներն են,—ասում է Ստրաբոնը,—Արտաշատը (որն անվանում են նաև Արտաշաշատ և որը հիմնել էր Հաննիբալը Արտաշեսի համար) և Արքսատան։ Երկու քաղաքն էլ գտնվում են Արաքսի վրա, Արքսատան՝ Ատրպատականի մոտ, իսկ Արտաշատը՝ Արաքսյան դաշտի մոտ։ Այս վերջինը գեղեցիկ քաղաք է և երկրի մայրաքաղաքն է։ Նա շինված է գետի թև ձևացրած թերակղզու վրա, որի պարիսպները շուրջանակի պատում են գետը, բացի պարանոցից, որը փակված է խրամով և պատնեշով»։

Հռոմեացի պատմագիր Տակիտոսի և Ագաթանգեղոսի վկայություններից հայտնի է նաև, որ Արտաշատը Արաքս գետի հոսկադիր ափի հետ կապված է եղել կամուրջներով։

Արտաշատի ավերակները գտնվում են ՀՍՍՀ Արարատի շրջանում, Խոր-Վիրապի շրջակայքում, որտեղ այժմ հնագիտական պեղումներ են կատարվում։

Ստրաբոնը և Պլուտարքոսը վկայում են, որ Արտաշատը կառուցվել է Կարթագենի նշանավոր զորավար Հաննիբալի խորհրդով, և իբր սա է Արտաշեսին ցույց տվել քաղաքի կառուցման տեղը և ուրվագծել նրա հատակագիծը։

Արտաշատի տեղը շատ հաջող էր ընտրված։ Նա կառուցված էր ոչ միայն տնտեսապես ավելի զարգացած, քաղաքային կյանքի մեծ ավանդույթ ունեցող և հարձակումներից ավելի ապահով Արա-

բատյան դաշտում, այլև Չինաստանից, Միջին Ասիայից, Միջագետքից ու Մարաստանից եկող և դեպի Սև ծովի նավահանգիստները գնացող միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհների հանդուցակետում։

Արտաշեսը իր մայրաքաղաքը արագ կերպով բնակեցնելու և զարգացնելու նպատակով Երվանդաշատից, Արմավիրից և այլ վայրերից այնտեղ է տեղափոխում մեծ թվով բնակիչներ։ Նա Բագարանից Արտաշատ է տեղափոխում նաև հայկական աստվածների և հունական Արտեմիս ու Ապոլլոն աստվածների արձանները։

Արտաշատը սկսում է արագ կերպով զարգանալ և կարճ ժամանակից հետո դառնում է Հայաստանի պետական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի հիմնական կենտրոնը։ Առևտուր անելու համար այստեղ էին գալիս ոչ միայն մոտիկ ու հարևան, այլև հեռավոր երկրների վաճառականները։

Պատահական չէ, որ Ստրաբոնը Արտաշատը անվանում է «գեղեցիկ քաղաք», իսկ Պլուտարքոսը՝ «մեծ և շատ գեղեցիկ քաղաք» կամ «Հայաստանի Կարթագեն»։

Արտաշեսի թագավորության ժամանակ են առաջանում նաև Զարիշատը և Զարեհավանը։ Հավանաբար, այդ ժամանակ է առաջանում նաև Արքաստա քաղաքը, որի մասին հաղորդում է Ստրաբոնը։

Հայաստանում քաղաքների, առևտրի ու դրամական շրջանառության հետագա զարգացման կարևոր ապացույցներից մեկն էլ այն է, որ Արտաշատում հիմնադրվում է փողերանոց, որտեղ ըսկըսում են կտրել տեղական դրամներ։ Հայտնաբերվել են պղնձե երկու դրամներ, որոնց վրա հունարեն գրված է Արտաքսատա, այսինքն՝ Արտաշատ։

Արտաշես I-ի արտաքին քաղաքականությունը

Արտաշես I-ի արտաքին քաղաքականության մասին մեզ հասել են կցկտուր տեղեկություններ։

Ստրաբոնը վկայում է, որ Մագնեսիայի ճակատամարտում Անտիոքոս III-ի պարտությունից հետո Արտաշեսը և Զարեհը հարել ու անցել էին հաղթող հռոմեացիների կողմը։ Արտաշեսը, իրեն արտաքուստ հռոմեացիների կողմնակից հայտարարելով և գուցե նրանց մոտ դեսպաններ ուղարկելով, անշուշտ, հետապնդել էր մի հիմնական նպատակ, այն է՝ իր երկիրը ղերծ պահել պարտված, բայց դեռ զգալի ուժեր ունեցող Սելևկյան պետության հարձակումներից։

180 թ. պատերազմ է առաջանում մի կողմից՝ Պոնտոսի ու

Փոքր Հայքի, իսկ մյուս կողմից՝ Կապադովկիայի, Պերգամոնի ու Բիթինիայի թագավորների միջև։ Սակայն հռոմեացիների միջամտության պատճառով շուտով պատերազմը դադարեցվում և կողմերի միջև հաշտության պայմանագիր է կնքվում։ Պոլիբիոսը, որն իր աշխատության մեջ ամբողջությամբ բերել է այդ դաշինքը, ավելացնում է, որ պայմանագրին մասնակից էր արվել նաև «Արտաշեսը, որը Հայաստանի մեծագույն մասի կառավարիչն էր»։ Այս փաստն ինքնին ցույց է տալիս, որ արդեն այս ժամանակ Հայաստանը այնքան էր ուժեղացել և նրա հեղինակությունն ու դերը միջպետական հարաբերություններում այնքան էր բարձրացել, որ նույնիսկ Փոքր Ասիայի իրար դեմ կռվող թագավորները դիմել էին Արտաշեսի հաշտարար միջնորդությանը։

161 թ. սելևկյան կուսակալ Տիմարքոսը Մարաստանում ապըստամբություն է բարձրացնում և իրեն հայտարարում թագավոր։ Արտաշեսը, որի համար խիստ ցանկալի էր Սելևկյան թագավորության հետագա թուլացումը և Հայաստանի համար նրա անվտանգ դարձնելը, ընդառաջում է Տիմարքոսի ցանկությանը և դաշն կնքում նրա հետ։ Արտաշեսի ցույց տված ռազմական օգնությամբ Տիմարքոսը ոչ միայն ամրապնդում է իր դիրքերը Մարաստանում, այլև սելևկյաններից գրավում է նաև Հյուսիսային Միջագետքը։

Արտաշեսի արտաքին պատերազմների և քաղաքականության մասին մեզ որոշ տվյալներ են հասել նաև ժողովրդական վեպից, որն իր պատմության մեջ բերել է Խորենացին։ Ըստ այդ վեպի Արտաշեսը կռիվներ է մղում նաև ալանների և նրանց միացած լեռնական ցեղերի դեմ, որոնք Վրաստանի կողմերից ներխուժել էին Հայաստանի հյուսիսային շրջանները։ Տեղի ունեցած ճակատամարտում ալանները պարտվում են և ստիպված են լինում բարեկամական դաշինք կնքել Արտաշեսի հետ։

Հայկական և վրացական ժողովրդական վեպի կամ զրույցների համաձայն Արտաշեսը բարեկամական դաշն է կնքել նաև վրաց թագավորի հետ։ Ըստ վրացական ավանդության, վրացիները պարտավորվում են Հայաստանի վրա արտաքին թշնամիների հարձակման դեպքում իրենց ամբողջ ռազմական ուժով օգնել Արտաշեսին, իսկ Հայաստանի սահմաններից դուրս՝ Արտաշեսի մղած պատերազմների ժամանակ նրան տրամադրել տասը հազար զորք։

Հայաստանը Արտաշես Ի-ի հաջորդների ժամանակ

Արտաշեսի մահից հետո Հայաստանում գահ է բարձրանում նրա անդրանիկ որդին՝ Արտավազդ Ի-ը (մոտ 160—115)։

II դարի կեսից սկսած մեծ չափով ուժեղանում է Պարթևական թագավորությունը։ Գրավելով Պարսկաստանը, Ատրպատականը և Միջագետքը, պարթևները Արտավազդի դահակալության ժամանակ դառնում են Հայաստանի վտանգավոր հարևանը։

Արտավազդ Ի-ի մասին արտաքին սկզբնաղբյուրներից մեզ է հասել միայն մի փոքր տեղեկություն։ Յուստինիոսը խոսելով պարթևական Միհրդատ II թագավորի (123—88) մղած պատերազմների ու նվաճումների մասին, ավելացնում է. «Վերջը կռվեց հայոց թագավոր Արտավազդի դեմ»։ Այս պատերազմում թեև Հայաստանը չէր նվաճվել պարթևների կողմից, բայց և Արտավազդը ստիպված էր եղել ընդունել պարթևների գերիշխանությունը և ժառանգ չունենալու պատճառով իր եղբորորդուն՝ Տիգրանին, պատանդ տալ պարթևների մոտ։

Արտավազդին հաջորդում է նրա եղբայրը՝ Տիրանը, որին Ապպիանոսը և վրաց տարեգրությունը անվանում են նաև Տիգրան։ Սա պարթևների մոտ պատանդ տրված և հետագայում Հայաստանում գահ բարձրացած Տիգրան II-ի հայրն էր։

Տիրան-Տիգրան Ի-ի (մոտ 115—95) գործունեության մասին մեզ տեղեկություններ չեն հասել։ Միայն Խորենացին հայտնում է, որ սա մեծամեծ գործեր չի կատարել, ապրել է խաղաղությամբ, զբաղվել որսորդությամբ ու զբոսանքներով և թագավորել է քսանմեկ տարի։

ԳԼՈՒԽ VII

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻԲՐԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՀԶՈՐ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ

Տիգրան II-ի գահակալությունը

95 թ. (մ. թ.ա.) հայկական գահն է բարձրանում հին Հայաստանի ամենանշանավոր պատմական դեմքերից մեկը՝ Տիգրան II-ը, որին պատմագրության մեջ անվանում են Տիգրան Մեծ (95—56)։

Տիգրան II-ը, ինչպես արդեն նշվել է, մինչև գահ բարձրանալը պարթևների մոտ պատանդ էր։ Նա իր հոր մահից հետո, սահմանակից գավառներից 70 հազար պարթևներին զիջելով, ազատվում է պատանդությունից, վերադառնում Հայաստան և ժառանգում իր հոր գահը։ Այս ժամանակ նա արդեն 45 տարեկան էր։

Տիգրան II-ը պետական-վարչական ու ռազմական բացառիկ ունակություններ ունեցող, դիվանագիտական հմտությամբ օժտված, տաղանդավոր և եռանդուն զորավար-միապետներից մեկն էր։

Հայաստանը Տիգրան II-ի ժամանակ հասնում է իր քաղաքական հզորության ամենաբարձր կետին և դառնում Առաջավոր Ասիայի հզոր տերություններից մեկը։

Հայաստանի հզորացման ներքին և արտաքին պայմանները

Տիգրան II-ի ժամանակ Հայաստանի հզորացումը նախ սերտորեն կապված էր երկրի ներքին արտադրողական ուժերի, տնտեսության զարգացման հետ։ Աքեմենյան դարաշրջանից սկսած՝ Հայաստանի տնտեսությունը անշեղ կերպով զարգանում և վերելք էր ապրում։ Այդ վերելքը մեծ չափով ուժեղանում է հելլենիզմի դարաշրջանում և առանձնապես հայկական հողերի միավորումից հետո։

Տիգրան II-ը և հայ սարկատիրական ավազակին, օգտագործելով երկրի տնտեսական հնարավորությունները, կարողանում են

կարճ ժամանակամիջոցում ստեղծել ժամանակի մեծ և ուժեղ բանակներից մեկը։ «Հետևակ կովողները,—վկայում է Խորենացին,— ձիավոր դարձան, պարսավորները՝ հաջող աղեղնավորներ, շերտավորները զինվեցին սրերով ու տեղավորները՝ նիզակներով, մերկերը պատսպարվեցին վահաններով և երկաթե գդեստներով։ Եվ երբ նրանք մի տեղ հավաքվեին, միայն նրանց արտաքին տեսքն ու նրանց պահպանակների ու զենքերի փայլատակումը բավական էին [թշնամուն] հալածելու և վանելու համար»։

Հայաստանի հզորացման մեջ շատ կարևոր դեր են կատարում նաև հայ ժողովրդի կազմավորման պրոցեսի ավարտումը և հայկական հողերի միավորումը մի միասնական պետության կազմի մեջ։ Այս նշանակալից իրողությունները ոչ միայն տնտեսական, քաղաքական ու մշակութային ավելի սերտ կապեր են հաստատում երկրի տարբեր մասերի միջև, ոչ միայն համախմբում են ժողովրդի ուժերը և միավորում նրա ջանքերը, այլև ամրապնդում ու հզորացնում են կենտրոնական իշխանությունը։ Նրանք հնարավորություն են ընձեռում նաև կազմակերպելու նույն լեզվով խոսող մարտիկներից համալրված, ավելի վստահելի, համախմբված, կայուն ու մարտունակ բանակ։

II դարի կեսից (մ. թ. ա.) Արևելքի շատ երկրների, որոնց թվում և Հայաստանի արտաքին դրությունը դդալի չափով ծանրանում է, մի կողմից՝ Պարթևական թագավորության, իսկ մյուս կողմից՝ Հռոմի նվաճողական քաղաքականության պատճառով։

Այդ ժամանակ պարթևները, ինչպես արդեն նշվել է, իրենց մի շարք հարձակումներով սպառնալիք են ստեղծում Հայաստանի անկախության համար։ Պարթևական թագավորության հետ զրեթե միաժամանակ Արևելքում իր ագրեսիվ նվաճումներն է սկսում նաև ստրկատիրական Հռոմը։ Հռոմեացիները, որպես նվաճողներ առաջին անգամ ոտք դնելով Փոքր Ասիայի արևմտյան մասում, 133 թ. դրավում են Պերգամոնի ընդարձակ թագավորությունը, իսկ 102 թ.՝ Արևմտյան լեռնային Կիլիկիան։ Շուտով Հռոմը ակտիվ կերպով միջամտում է նաև Գալատիայի, Բիթանիայի և Կապադովկիայի ներքին գործերին և այդ երկրները դցում իր ազդեցության տակ։ Հռոմեական զենքի ուժով դահ բարձրացած կամ իրենց դահը այդ ուժով պահպանող հիշյալ երկրների թագավորները վասալական կախման մեջ են ընկնում Հռոմից, նրա ձեռքին դառնում են խաղալիք։ Իրեն ենթարկելով սահմանակից Կապադովկիան, Հռոմը անմիջական սպառնալիք է ստեղծում նաև Հայաստանի համար։

Սակայն դրությունը փոխվում է Տիգրան II-ի դահ բարձրանա-

լու ժամանակ։ I դարի սկզբից (մ. թ. ա.) Հռոմում սկսված ներքին քաղաքացիական կռիվները և ստրկական խոշոր ապստամբությունները, իսկ Պարթևական թագավորության ներսում Միհրդատ II-ի մահվանից հետո առաջացած գահակալական կռիվներն ու խռովությունները, առժամանակ վերացնում են Հայաստանին սպառնացող վտանգը։

Տիգրան II-ը, օգտագործելով ներքին և արտաքին նպաստավոր պայմանները, եռանդուն կերպով աշխատում է ամրապնդել ու հզորացնել հայկական պետությունը, ավարտել հայկական հողերի միավորումը, նոր երկրներ ու ժողովուրդներ նվաճելու հաշվին ընդարձակել հայ ստրկատերերի շահագործման բազան, ձեռք բերել նոր հարստություններ և ստրուկներ։

Ծոփքի միացումը

Տիգրան II-ը նախ որոշում է Մեծ Հայքին միացնել Ծոփքը։ 94 թ. (մ. թ. ա.) նա հարձակվում է Ծոփքի Արտանես թագավորի վրա, հաղթում նրան և Ծոփքը, ապա նաև Ծկեղյաց ու Դարանաղյաց գավառները միացնում իր թագավորությանը։

«Արտաշեսի սերնդից էր,—վկայում է Ստրաբոնը,—Տիգրանը. նա իշխում էր այսպես կոչված բուն Հայաստանում, որը սահմանակից էր Մարաստանին, Աղվանքին, Իբերիային՝ մինչև Կողքիս և Սև ծովի մոտ գտնվող Կապադովկիային։ Իսկ Զարեհի սերնդից էր Արտանես Ծոփացին, որն իշխում էր Հայաստանի հարավային և մանավանդ հարավ-արևմտյան մասերում։ Տիգրանը հաղթեց սրան և ինքը տեր դառավ բոլոր այդ երկրներին»։

Գրավելով Ծոփքը, Տիգրանը ոչ միայն իր թագավորությանն է միացնում հայկական զարգացած ու հարուստ երկրամասերից մեկը, ոչ միայն տիրում է միջազգային տարանցիկ առևտրի հիմնական մայրուղու՝ «Արքայական ճանապարհի» այստեղից անցնող հատվածին և Տոմիսիա ամրոցին, այլև ռազմա-ստրատեգիական կարևոր դիրք է գրավում Հյուսիսային Ասորիքի և Կապադովկիայի նկատմամբ։

Ծոփքի միավորումը Մեծ Հայքի հետ կարևոր նշանակություն ուներ, քանի որ այն կրեթե իր ավարտին էր հասցնում հայկական հողերի ու հայ ժողովրդի միավորումը և ուժեղացնում կենտրոնական իշխանությունը։

Մի քիչ ավելի ուշ Տիգրան II-ը ետ է խլում նաև այն 70 հովիտները, որ ինքը զիջել էր պարթևներին։ Նա հայկական հողերից միայն Փոքր Հայքը ամբողջովին չի կարողանում միացնել Մեծ Հայ-

քին, որովհետև նրա (մ. թ. ա.) նվաճվել անդրեփրատյան գավառները դեռևս 111 թ. ու միացվել էին Պոնտոսին։

Հայ-պոնտական դաշինքը

II դարի առաջին կեսից զգալի չափով ուժեղանում է հյուսիս-արևմուտքից Հայաստանին սահմանակից Պոնտական թագավորությունը։ Պոնտոսը իր հզորության գագաթնակետին է հասնում Հին աշխարհի հռչակավոր զորավարներից և պետական գործիչներից մեկի՝ Միհրդատ Պոնտացու կամ Միհրդատ VI Եվպատորի (111—63) թագավորության ժամանակ։ Իր գահակալության առաջին տարիներին Միհրդատ Եվպատորը, նվաճելով և իր գերիշխանությանը ենթարկելով Փոքր Հայքը, Կոլխիդան, Տավրիկյան Խերսոնեսը, Բոսպորը (Ղրիմ) և սկյութական երկրները, Պոնտոսը դարձնում է Փոքր Ասիայի ամենաընդարձակ և հզոր պետությունը։

99 թ. Միհրդատ Պոնտացին գրավում է նաև Կապադովկիան, որի բնակչությունը ցեղական, մշակութային և կրոնական ընդհանուր կապերով կապված էր Պոնտոսի բնակչության հետ։ Սակայն շուտով, 95 թ. հռոմեացիների միջամտության պատճառով պոնտական զորքերը հարկադրված են լինում հեռանալ Կապադովկիայից։

Միհրդատ Պոնտացին, չնայած իր կրած անհաջողությանը, ոչ միայն աշխատում է կրկին գրավել Կապադովկիան, այլև ծրագրում է հռոմեացիներին Փոքր Ասիայից, Հունաստանից և Մակեդոնիայից դուրս քշելով ստեղծել հելլենիստական մի ընդարձակ պետություն։

Հռոմի դեմ վճռական գոտեմարտի դուրս գալուց առաջ Միհրդատը, իր թիկունքը արևելքից ապահովելու և հայկական զորքի օժանդակությունը ստանալու նպատակով, աշխատում է դաշինք կնքել Տիգրանի հետ։ Միհրդատի այս ձգտումը համընկնում էր Տիգրանի ցանկության հետ, որն իր հերթին ծրագրում էր գրավել Հյուսիսային Միջագետքն ու Ասորիքը և դուրս գալ Միջերկրական Ծով։

Փոխադարձաբար իրար օգնելու և միմյանց թիկունքն ապահովելու, ինչպես և Հռոմի դեմ համատեղ պայքարելու նպատակով, 94 թ. Միհրդատ Պոնտացին և Տիգրան II-ը ռազմա-քաղաքական դաշինք են կնքում։ Այս դաշինքը ավելի ևս ամրապնդելու նպատակով Միհրդատը իր աղջկանը՝ Կլեոպատրային կնության է տալիս Տիգրանին։

Պայքար Կապադովկիայի համար

Հայաստանին ու Պոնտոսին սպառնացող հռոմեական վտանգը կանխելու և Հռոմի դեմ ռազմագիտական ավելի հարմար դիրքեր գրավելու համար Միհրդատը և Տիգրան II-ը որոշում են գրավել Կապադովկիան։ 93 թ. հայկական և պոնտա-

կան բանակները հարձակվում են Կապադովկիայի վրա և առանց մեծ դժվարության գրավում այն։ Կապադովկիայի Արիոբարզան թագավորը պարտվելով, փախչում է Հռոմ։

Հռոմեական սենատի կարգադրությամբ Կիլիկիայի փոխարքա Սուլլան 92 թ. զգալի ուժերով գալիս է Կապադովկիա, պարտության մատնում հայկական ու պոնտական զորքերին և կրկին Կապադովկիայի գահի վրա է հաստատում Արիոբարզանին։

Սակայն Սուլլան երկար չի մնում Կապադովկիայում։ Նա 91 թ. իր բանակով վերադառնում է Հռոմ։ Սուլլայի հեռանալուց անմիջապես հետո հայկական զորքերը Տիգրան II-ի զորավարներ Միթրաասի և Բագոասի (Բագրատ) ղեկավարությամբ կրկին հարձակվում և գրավում են Կապադովկիան։ Նույն այս ժամանակ պոնտական զորքերը գրավում են նաև Հռոմի վասալ Բիթինիան։

Հռոմեական սենատը այս անգամ Արևելք է ուղարկում կոնսուլ Մանիոս Ակվիլիոսին, որը 89 թ. վերականգնում է նախկին դրությունը Կապադովկիայում և Բիթինիայում։ Միհրդատը և Տիգրանը առանձին դիմադրություն ցույց չեն տալիս, որովհետև նրանք այդ պահին չէին ցանկանում պատերազմել Հռոմի դեմ։

Տիգրան II-ի նվաճումները

89 թ. աշնանը, հռոմեացիների դրդումով և նախաձեռնությամբ սկսվում է պատմության մեջ հայտնի Միհրդատյան առաջին պատերազմը։ Պատերազմի սկզբում Միհրդատը, չախչախելով հռոմեացիներին ու նրանց դաշնակիցներին, նվաճում է ամբողջ Փոքր Ասիան և հաղթականորեն մտնում Հունաստան։ Հունական քաղաքները բաց են անում իրենց դռները Միհրդատի առաջ և նրան դիմավորում մեծ ցնծությամբ, իբրև ազատարարի։

Հռոմեական սենատի որոշմամբ մեծ ուժերով Միհրդատի դեմ է ուղարկվում Սուլլան։ Սա, գալով Հունաստան, երկու տարվա արյունահեղ ու համառ կռիվներից հետո 84 թ. հաղթում է Միհրդատին, որը ստիպված է լինում հրաժարվել Պոնտոսից դուրս կատարած իր բոլոր նվաճումներից։

Միհրդատյան առաջին պատերազմի գրեթե սկզբից նվաճումներ է սկսում կատարել նաև Տիգրան II-ը։ Նա իր առաջին հարվածը ուղղում է արևելքից Հայաստանի անկախությանը սպառնացող Պարթևական թագավորության դեմ։ 88 թ. հայկական զորքերը, հարձակվելով Պարթևական թագավորության վրա, նախ ետ են գրավում այն 70 հովիտները, որ Տիգրանը ղիջել էր պարթևներին՝ պատանդությունից ազատվելու համար։ 88—85 թթ. ընթացքում հայկական բանակը, հաղթական կերպով առաջ շարժվելով, իրար հ-

տևից գրավում է հարավ-արևելքում՝ Ատրպատականը, Մարաստանը, իսկ Հյուսիսային Միջագետքում՝ Կորդուքը, Ադիաբենը, Միգդոնիան, Օսրոյենը։ Հայկական բանակը Միջագետքում հասնում է մինչև Նինվեի և Արբելայի շրջանները, իսկ հարավ-արևելքից՝ մինչև պարթև Արշակունիների ամառային մայրաքաղաք Էկբատան։

Պարթևները, պարտություն կրելով հայկական բանակից, ստիպված են յինում հաշտություն խնդրել Տիգրանից։ 85 թ. կնքված հայ-պարթևական հաշտության դաշնագրով պարթևները ոչ միայն հրաժարվում են Տիգրանի նվաճած երկրներից, ոչ միայն ընդունում են Տիգրանի գերիշխանությունը, այլև պարթևական թագավորները հրաժարվում են նաև իրենց «արքայից արքա» տիտղոսից, որն այնուհետև կրելու էին Տիգրանը և նրա հաջորդները։

Այս նվաճումների հետևանքով Տիգրան II-ի տիրապետության տակ են ընկնում զգալի թվով հարուստ քաղաքներ ու երկրամասեր, նրա ձեռքն են անցնում Հյուսիսային Միջագետքի, Մարաստանի ու Ատրպատականի վրայով անցնող միջազգային տարանցիկ առևտրի ճանապարհները և Եփրատի բոլոր կարևոր դեռանցները։

Նվաճված երկրների թագավորները թեև պահպանում էին իրենց գոյությունը, և նույնիսկ Ատրպատականի թագավորը ամուսնացել էր Տիգրանի աղջկա հետ, սակայն նրանք որպես վասալներ հպատակեցված էին Տիգրանին և պարտավոր էին նրան հարկ վճարել և օգնել զորքով։

Հայ պարթևական դաշնագրից անմիջապես հետո Տիգրանը, գրավելով և իրեն ենթարկելով նաև Ասորիքի հյուսիսային մասում գտնվող Կոմագենը, զենքն ուղղում է Սելևկյան թագավորության դեմ։ Տիգրանի այս նվաճողական քաղաքականության նպատակն էր՝ գրավել Ասորիքի ու Փյունիկիայի հելլենիստական հարուստ քաղաքները և դուրս գալ Միջերկրական ծով։

Սելևկյան երբեմնի հզոր ու աշխարհակալ թագավորությունն արդեն այս ժամանակ ամփոփված էր միայն Ասորիքի ու Փյունիկիայի սահմաններում և գտնվում էր կործանման եզրին։ Անտիոքի ստրկատիրական ու առևտրա-վաշխառուական խավերը ձգտում էին արտաքին ուժի միջոցով պահպանել իրենց ունեցվածքը, ճնշել ու հնազանդության մեջ պահել շահագործվող մասսաներին և դուրս բերել երկիրն ու մայրաքաղաքը ծանր վիճակից։

Տիգրան II-ի հարձակումը Սելևկյան թագավորության վրա համընկնում էր Անտիոքի տիրող խավերի ցանկությանը։ Ուստի նրանք 84 թ. (մ. թ. ա.), առանց դիմադրություն ցույց տալու, Անտիոքի դռները բաց են անում Տիգրանի հաղթական բանակի առաջ։

84—83 թթ. հայկական բանակը, առանց լուրջ դիմադրության հանդիպելու գրավում է նաև ամբողջ Ասորիքն ու Դաշտային Կիլիկիան։ Անտիոքի և Ասորիքի վաճառաշահ շատ քաղաքների՝ կամավոր կերպով Տիգրան II-ին անձնատուր լինելը պետք է բացատրել նաև նրանով, որ արդեն այս ժամանակ Ասորիքը Փոքր Ասիայի ու Հյուսիսային Միջագետքի հետ կապող առևտրական բոլոր ճանապարհները գտնվում էին Տիգրանի տիրապետության տակ։ Սելևկյանների հռչակավոր, հարուստ և մոտ կես միլիոն բնակչություն ունեցող մայրաքաղաքը այսուհետև դառնում է Տիգրանի մայրաքաղաքներից մեկը, որտեղ նրա անունով ու պատկերով սկսում են կտրել ոսկե և արծաթե դրամներ։

Ի տարբերություն Ասորիքի, Փյունիկիայի ծովափնյա անառիկ քաղաքները, որոնք առանձին շահագրգռվածություն չունեին ցամաքային առևտրի մեջ և կապված էին ծովային առևտրի հետ, սկսում են համառ դիմադրություն ցույց տալ Տիգրան II-ին։ Հայկական բանակը երկարատև կռիվներից հետո միայն կարողանում է գրավել այդ քաղաքները։ 71 թ. Տիգրանը մեծ զորքով գալիս և պաշարում է Փյունիկիայի հարավում գտնվող Պտղոմայիդ քաղաքը, որտեղ ամրացել էր սելևկյան Սելենե-Կլեոպատրա թագուհին։ Հակառակ ցույց տրված համառ դիմադրությանը, Տիգրանը գրավում է քաղաքը և դերի է վերցնում թագուհուն, որը հետագայում Տիգրանի հրամանով մահապատժի է ենթարկվում։

Տիգրանի մեծաթիվ զորքի երևալը Փյունիկիայի հարավում սարսափ է տարածում նաև սահմանակից Պաղեստինում։ Հրեաստանի թագուհին, վախենալով հայկական զորքի ներխուժումից, մեծաքանակ ու արժանավայել ընծաներ է ուղարկում Տիգրանին և ընդունում նրա գերիշխանությունը։

Տիգրան II-ի նվաճումները ավարտվում են 70 թ. (մ. թ. ա.)։

Տիգրան II-ի տերությունը

Տիգրան II-ը մոտ 25 տարի տևող իր հաղթական առաջխաղացման և նվաճումների ընթացքում ստեղծում է մի լայնածավալ տերություն, որի սահմանները տարածվում էին Կասպից ծովից մինչև Եգիպտոսի սահմաններն ու Միջերկրական ծովը, Մարաստանի լեռներից մինչև Արևմտյան Եփրատի ափերը։ Հայաստանը վերածվում է Առաջավոր Ասիայի հզոր տերության։

Իր դասակարգային բնույթով Տիգրան II-ի ստեղծած տերությունը հելլենիստական տիպի ստրկատիրական միապետություն էր, որի գլխավոր հենարաններն էին հայ ստրկատիրական դասակարգը

և հայկական զորքը։ Սակայն ինչպես Արևելքի բոլոր մեծ նվաճողների, նույնպես և Տիգրան II-ի ստեղծած տերությունը ազգային պետություն չէր, այլ բազմացեղ ու բազմալեզու, տնտեսական-հասարակական կյանքի զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող երկրների ու ժողովուրդների խառնուրդ էր։

Տիգրան II-ի տերության գոյությունը և պահպանությունը առավելապես հիմնված էր ռազմական ուժի վրա։ Մեծ նվաճումներ կատարելու և հպատակեցված երկրները հնազանդության մեջ պահելու համար Տիգրանը ստեղծում է խոշոր բանակ, որի մի մասը կազմվում էր հպատակ երկրների օժանդակ ուժերից և վարձկան զորքերից։

Նվաճված երկրները կառավարելու, այդ երկրներում իր տիրապետությունն ամրապնդելու և առաջացած ապստամբությունները ճնշելու նպատակով Տիգրանը Հյուսիսային Միջագետքում, Ասորիքում, հավանաբար նաև այլ երկրամասերում հիմնում է փոխարքայություններ։ Նա Հյուսիսային Միջագետքում փոխարքա է նշանակում իր Գուրաս անունով եղբորը, իսկ Ասորիքում՝ Բադրատ զորավարին։

Նվաճված երկրներից Տիգրանը և հայ ստրկատերերը ձեռք են բերում հսկայական հարստություններ և տասնյակ հազարավոր ստրուկներ։ Այդ երկրները այնուհետև հարկատու են դառնում Տիգրանին։

Հայաստան տեղափոխված հսկայական հարստությունները, նյութական արժեքները և բազմահազար գերիներն ու ստրուկները չէին կարող չնպաստել Հայաստանի տնտեսական կյանքի հետագա ընդհանուր վերելքին։ Տիգրան II-ը, լինելով Առաջավոր Ասիայի հելլենիստական տիպի խոշոր միապետներից մեկը, իր քաղաքականությամբ նույնպես մեծ չափով նպաստում է Հայաստանի տնտեսական կյանքի, բայց հատկապես քաղաքների, արհեստագործության և առևտրի զարգացմանը։ Նա զգալի չափով նպաստում է նաև Հայաստանում հելլենիստական մշակույթի տարածմանն ու զարգացմանը։

Տիգրանակերտի կառուցումը

Տիգրան II-ի տերությունը առավելապես ընդարձակվել էր հարավից։ Արտաշատը և Անտիոքը, որոնք գտնվում էին նրա տերության հյուսիսային ու հարավային ծայրամասերում, չէին կարող լրիվ կերպով մայրաքաղաքի դեր կատարել։

Նվաճված երկրները ավելի հեշտ կառավարելու, այդ երկրները Հայաստանի հետ կապելու և Հայաստանում քաղաքային կյանքը

ավելի զարգացնելու նպատակով Տիգրանը 80—70 թթ. ընթացքում Աղձնիք նահանգում, հետագայի Նփրկերտ-Ֆարկին քաղաքի շրջակայքում հիմնադրում ու կառուցում է մի նոր մայրաքաղաք, որը նրա անունով կոչվում է Տիգրանակերտ։ Ըստ Ապպիանոսի վկայության, Տիգրանը իր նոր մայրաքաղաքը հիմնադրել է Հայաստանի այն վայրում, որտեղ նա պատանդությունից ազատվելուց հետո եկել և թագավոր էր հռչակվել։

Տիգրանակերտի կառուցման տեղը հաջող էր ընտրված։ Նա ոչ միայն գտնվում էր նորաստեղծ տերության կենտրոնում, այլև Հյուսիսային Միջագետքից դեպի Փոքր Ասիա, Արարատյան դաշտը և Սև ծովի նավահանգիստները տանող գլխավոր ճանապարհների հանգուցակետում։

Տիգրանը ոչ մի միջոց ու ջանք չի խնայում իր մայրաքաղաքը շքեղ և փառահեղ կառուցելու համար։ Տիգրանակերտը շրջապատված էր բարձրաբերձ պարիսպներով, որոնք ունեին 50 կանգուն բարձրություն։ Այդ պարիսպները այնքան լայն էին, որ նրանց մեջ Տիգրանը շինել էր տվել ձիերի ախոռներ ու պահեստներ։ Քաղաքը ուներ ամուր և անմատչելի միջնաբերդ։ Միջնաբերդի պարիսպներից դուրս կառուցված էր Տիգրանի փառահեղ պալատը, որը շրջապատված էր պարտեզներով, զբոսարաններով, որսատեղիներով ու ձկնավազաններով։

Իր նոր մայրաքաղաքը և Հայաստանի մյուս քաղաքները արագ կերպով շենացնելու և զարգացնելու նպատակով Տիգրանը 78 թվականին մի արշավանք է կազմակերպում դեպի Կապադովկիա, Դաշտային Կիլիկիա և Ասորիք։ Այդ արշավանքի ժամանակ նա, դրավելով Կապադովկիայի մայրաքաղաք Մաժաքը և ամայացնելով տասներկու հելլենիստական քաղաքներ, սրանց բնակիչներին (մոտ 300000 հոգի) բռնությամբ գաղթեցնում և բնակեցնում է Տիգրանակերտում և Հայաստանի մյուս քաղաքներում։ Նա Հայաստան է գաղթեցնում նաև զգալի թվով բնակիչներ Կորդուքից, Ադիաբենից և այլ վայրերից։ Հայաստան գաղթեցված մոտ կես միլիոն բնակչության մեջ, բացի բազմահազար ստրուկներից և քաղաքներում բնակվող կիսակախյալ ու ազատ հողագործներից, կային նաև մեծ թվով հույն, հրեա և ասորի արհեստավորներ ու առևտրականներ։

Տիգրանը իր նորակառույց մայրաքաղաքում է բնակեցնում հատկապես Մաժաքից, Դաշտային Կիլիկիայի ծովափնյա Սոլի և այլ քաղաքներից բերված բնակիչներին։ Ուսումնասիրողներից շատերը ենթադրում են, որ Տիգրանակերտը այդ ժամանակ ուներ մոտ 300 000 բնակչություն։

Մայրաքաղաքում հայկական տարրը ավելացնելու և այնտեղ իր ու տրքունիքի համար ամուր հենարան ստեղծելու նպատակով Տիգրանը հարկադրում է հայ ստրկատիրական ավագանու ներկայացուցիչներին՝ թողնել իրենց բնակության նախկին վայրերը և հաստատվել Տիգրանակերտում։

Կարճ ժամանակում Տիգրանակերտը դառնում է Հայաստանի և Առաջավոր Ասիայի շքեղ, բազմամարդ ու հարուստ քաղաքներից մեկը։

2. ՀԱՑ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Լուկուլլոսի արշավանքը Հայաստան

73 թ. գարնանը (մ. թ. ա.) սկսվում է Միհրդատյան երրորդ պատերազմը։ Այս պատերազմի սկզբում ևս հաջողությունը գտնվում էր Միհրդատի կողմը։ Նա, մի քանի ճակատամարտերում ծանր պարտության ենթարկելով հռոմեական զորքերին ու նավատորմիղին և գրավելով հռոմեական պրովինցիա դարձած Բիթինիան, գալիս պաշարում է Մարմարա ծովի ափին, Դարդանելի նեղուցից ոչ այնքան հեռու գտնվող Կիզիկ քաղաքը։ Սակայն այստեղ, 73—72 թթ. ձմռանը Միհրդատը պարտություն է կրում հռոմեացի զորավար Լուկուլլոսից և իր բանակի մնացորդներով նահանջում Պոնտոս։

Հռոմեացիների դեմ պայքարը շարունակելու համար Միհրդատը օգնություն է խնդրում իր որդուց՝ Բոսպորի փոխարքա Մաքարեսից, պարթևներից և սկյութներից։ Սակայն ոչ ոք օգնության ձեռք չի մեկնում նրան։

Միհրդատը օգնություն է խնդրում նաև Տիգրանից, նրա մոտ իբրև դեսպան ուղարկելով հայտնի հույն փիլիսոփա և պատմագիր Մետրոդորոս Սկեպսացուն։ Սակայն սա, որը թշնամացել էր Միհրդատի հետ, Տիգրանին խորհուրդ չի տալիս օգնել նրան։

Տիգրանը, որը ձգտում էր ամրանալ իր նոր նվաճված երկրներում և չէր ցանկանում ընդհարվել Հռոմի հետ, որոշում է չօգնել իր աներոջը։ Տիգրանի այս որոշման մեջ, անկասկած, որոշակի դեր են կատարել նաև հռոմեացիների այն կեղծ հավաստիացումները, որ իրենք Հայաստանի նկատմամբ թշնամական մտադրություններ չունեն։ Դա երևում է նրանից, որ այս դեպքերի ժամանակ Տիգրանը և հայկական զորքը գտնվում էին Ասորիքում և զբաղված էին Փյունիկիայի հարավային քաղաքները նվաճելով։ Ինչ էլ որ լինի, իր անհեռատես այս որոշմամբ Տիգրան քաղաքական մեծ

սխալ է գործում։ Նա, չօգնելով Միհրդատին, ոչ միայն հռոմեացի-ներին հնարավորություն է տալիս պարտության ենթարկելու նրան և գրավելու Պոնտոսը, այլև հռոմեական զորքը կանգնեցնում է իր իսկ պետության սահմանագլխին, իր տերության բախտն ու ապագան դնելով մեծ վտանգի տակ։

Դրսից ոչ մի օգնություն չստանալով, Միհրդատը 71 թ. Կաբիրայի մոտ տեղի ունեցած անհավասար ճակատամարտում հռոմեացիներից ծանր պարտություն է կրում, և իր փոքրաթիվ զորքով անցնում Հայաստան։ Տիգրանը հռոմեացիների հետ չեզոքություն պահպանելու հույսով, Միհրդատին չի հրավիրում իր մոտ և չի տեսակցում նրա հետ, այլ միայն թույլ է տալիս նրան ապրել իր պետության հեռավոր ու սահմանային երկրամասերից մեկում։

Սակայն իզուր էին Տիգրանի գործադրած բոլոր զգուշությունները։ Լուկուլլոսը Պոնտոսը նվաճելուց հետո, նույնիսկ առանց հռոմեական սենատի թույլտվությունն ստանալու, որոշում է նվաճել նաև Հայաստանը։

Պատմագրության մեջ հաճախ Լուկուլլոսի այս որոշումը աշխատել են բացատրել միայն հռոմեացի զորավարի փառամոլությամբ ու մեծամտությամբ։ Սակայն իրականության մեջ այդ որոշումը բխում էր Հռոմի նվաճողական քաղաքականությունից և ելնում էր հռոմեական ստրկատերերի շահերից։ Լուկուլլոսը և հռոմեական ստրկատերերը, ծրագրելով Հայաստանի նվաճումը, ձգտում էին իրենց տիրապետությունը հաստատել Հայաստանում, Միջագետքում և Ասորիքում, ձեռք բերել կողոպուտի, շահագործման և ստրուկներ հայթայթելու նոր աղբյուրներ։ Լուկուլլոսը հարբստանալու հետ մեկտեղ ցանկանում էր Միհրդատ Պոնտացուն հաղթողի իր փառքի վրա ավելացնել նաև Տիգրան II-ին հաղթողի փառքը։

71 թ. Լուկուլլոսը մի դեսպանություն է ուղարկում Տիգրանի մոտ և պահանջում, որպեսզի նա Հայաստանում ապաստանած Միհրդատին հանձնի հռոմեացիներին։ Սակայն Տիգրանը իրավացի կերպով մերժում է հռոմեացի զորավարի անօրինական և Հայաստանի ու Տիգրանի համար անպատվաբեր այդ պահանջը։

Լուկուլլոսի դեսպանության անդամները, օգտվելով առիթից, իրենց շրջագայությունների ժամանակ անհրաժեշտ ռազմական ու լրտեսական տեղեկություններ են հավաքում Հայաստանի մասին, Ասորիքի հելլենիստական քաղաքներին ու նվաճված երկրների առանձին իշխանավորներին ապստամբության կոչ անում և դրգռում Տիգրանի դեմ։

Օգտվելով նրանից, որ Տիգրանը իր բանակով դեռևս գտնվում էր Փյունիկիայի հարավում, 69 թ. հռոմեական զորքերը առանց նախորոք պատերազմ հայտարարելու, հանկարծակի Մելիտինե քաղաքի մոտից անցնում են Եփրատ գետը և ներխուժում Սոփք։ Սոփքի հայ ստրկատիրական ավագանին, որը դժգոհ էր Տիգրանից՝ իր երբեմնի ունեցած մի քանի արտոնություններից զրկված լինելու պատճառով, ոչ մի դիմադրություն չի կազմակերպում թշնամու դեմ։

Հռոմեական զորքերը Սոփքից արագ շարժվում են դեպի Տիգրանակերտ։ Լուկուլլոսը ձգտում էր՝ արագ ու անակնկալ հարվածով գրավել Տիգրանակերտը և անջատել Տիգրանի՝ հարավում նվաճած երկրները Հայաստանից, թույլ չտալ այդ երկրներին՝ օգնություն ուղարկելու Տիգրանին։

Հայաստանում անհրաժեշտ քանակությամբ պատրաստի զորք չկար։ Այդ պատճառով միայն 3000 հոգուց բաղկացած հեծելազորային մի զորամաս է ուղարկվում թշնամու դեմ, Մերուժան զորավարի ղեկավարությամբ, որպեսզի սա կասեցնի հակառակորդի առաջխաղացումը դեպի մայրաքաղաք։

Մերուժանի հեծելազորը կռվի է բռնվում թշնամու հետ և պարտվում է։ Հանդուգն ու խիզախ անհավասար այս կռվում ընկնում են հայ զինվորներից շատերը, որոնց թվում և նրանց հրամանատար Մերուժանը։

Հայկական այս փոքրաթիվ զորամասի դիմադրությունը հաղթահարելուց հետո, հռոմեական զորքերը դալիս ու պաշարում են Տիգրանակերտը։ Հռոմեացիները, պարիսպներ քանդող մեքենաների օգնությամբ, բազմաթիվ գրոհներ են կատարում քաղաքի վրա։ Սակայն ամեն անգամ մայրաքաղաքի կայազորի մարտիկները, նետերի տարափի տեղալով և պատերազմական մեքենաները այրելով, ետ են քշում թշնամուն։ Մոտ հինգ ամիս Տիգրանակերտի կայազորը և բնակչությունը, Մանկայոս զորավարի գլխավորությամբ, համառ ու հերոսական դիմադրություն են ցույց տալիս քաղաքը պաշարած հռոմեական զորքերին։

Պաշարման սկզբում հայկական հեծյալ գնդերից մեկը, ճեղքելով հռոմեացիների պաշտպանողական շղթան, մտնում է քաղաք և այնտեղից դուրս բերում Տիգրանի կանանոցը և պետական գանձերը.

Տիգրանակերտի ճակատամարտը

Լուր ստանալով հռոմեացիների հարձակման մասին, Տիգրան II-ը իր բանակով Փյունիկիայից շտապ վերադառնում է Հայաստան։ Նա իր մոտ է հրավիրում Միհրդատին և խորհրդակցում նրա հետ։ Որոշվում է, որ Միհրդատը 10000 հայկական զորքով մեկնի Պոնտոս և այնտեղ նոր կռիվներ սկսի հռոմեացիների դեմ, որպեսզի նրանք ստիպված լինեն իրենց ուժերը բաժանել երկու մասի և հնարավորություն չունենան նոր ուժեր ուղարկել Հայաստան։

Նույն այդ ժամանակ Տիգրանը նոր ուժեր է հավաքում։ Բացի Հայաստանում զորակոչվածներից, նրան օգնության են գալիս Ատրպատականի և Ադիաբենի թագավորները, ինչպես և օժանդակ զորամասեր են ուղարկում Վրաստանը, Աղվանքը և Միջագետքի արաբները։

Տիգրանն իր բանակով, Մուշի դաշտի ու Տավրոսյան լեռների վրայով 69 թ. հոկտեմբերի սկզբին դալիս է և բանակ դնում Տիգրանակերտի մոտից հոսող Նիկեֆորիոն-Ցարկին գետակի ափին։ Սակայն, անհեռատեսություն հանդես բերելով, նա չի գրավում իր բանակի թիկունքում գտնվող ցածրադիր բլուրը։

69 թ. հոկտեմբերի 6-ին Տիգրանակերտի մոտ հայկական և հռոմեական բանակների միջև տեղի է ունենում մի մեծ ճակատամարտ։ Ճակատամարտի սկզբում թշնամու հեծելազորը հարձակվում է հայկական բանակի կենտրոնի վրա և ապա կեղծ փախուստի դիմում։ Հայկական զորքերը հետապնդելով փախուստի դիմած թշնամուն, զգալի չափով բացազատվում և ցրվում են։ Նույն այդ ժամանակ թշնամու հետևակ զորքերը, որոնք մինչ այդ գաղտնաբար գրավել էին հայկական բանակի հետևում գտնվող բլուրը, ըսկրսում են թիկունքից հարձակվել զրահավոր հեծելազորի և դրաստագումակի վրա։ Այս հանկարծակի հարձակումը առաջ է բերում խուճապ և հայկական բանակը պարտվում է։

Պլուտարքոսը տեղեկացնում է, որ իբր թե Տիգրանակերտի ճակատամարտում հայկական հետևազորից կտորվել է ավելի քան 100 000 մարդ, իսկ հեծելազորից շատ քչերն են ազատվել. դրանց դիմաց հռոմեացիներից վիրավորվել է 100 և սպանվել ընդամենը 5 մարդ։ Այս թվերը այնքան շինծու են, որ ոչ մի արժանահավատություն չեն ներշնչում։ Ավելի արժանահավատ է Փլեդոն Տրալլացու վկայությունը, ըստ որի հայկական զորքի կորուստը կազմում էր մոտ 5000 մարդ։

Հայկական բանակի պարտությունից հետո Լուկուլլոսը շարունակում և ուժեղացնում է Տիգրանակերտի պաշարումը։ Մինչև ճակատամարտի սկսվելը մայրաքաղաքի օտար ու բոնի կերպով այստեղ գաղթեցված բնակիչները և նրանցից կազմված կայազորի առանձին զորամասերը հավատարիմ էին մնացել և նույնիսկ կռվում էին մայրաքաղաքի պաշտպանության համար։ Սակայն ճակատամարտից որոշ ժամանակ անց նրանք ապստամբություն են բարձրացնում և դավաճանաբար մայրաքաղաքը հանձնում թշնամու ձեռքը։

Հռոմեացիները անխնա կերպով կողոպտում և ավերում են Տիգրանակերտը։ Այդ կողոպուտից Լուկուլլոսին անձնապես բաժին է ընկնում 8000 արծաթ տաղանդ (մոտ 17 միլիոն ոսկի ռուբլի), իսկ հռոմեական ամեն մի զինվորին՝ 800 դրաքմե (մոտ 280 ոսկի ռուբլի), չհաշված մյուս թանկագին իրերն ու հարստությունները։

Ի փոխհատուցումն իրենց ապստամբության և դավաճանության, Լուկուլլոսը Տիգրանակերտի հույն և օտար բնակիչներին ետ է ուղարկում իրենց նախկին քաղաքներն ու երկրները։

Հայկական զորքի պարտությունը ծանր ու բացասական հետևանք է ունենում նաև Տիգրան II-ի տերության համար։ Ասորիքը, Փյունիկիան, Դաշտային Կիլիկիան և Կոմմագենը անջատվում են Հայաստանից։ Այդ երկրներից առաջին երեքը կարճ ժամանակից հետո վերածվում են հռոմեական պրովինցիաների, իսկ Կոմմագենը, իր տեղական թագավորությունը պահպանելով հանդերձ, դառնում է Հռոմի հլու-հնազանդ վասալ երկրներից մեկը։

Ժամանակավորապես Հայաստանից անջատվում է նաև Վրաստանը կամ Կորդվայց աշխարհը։ Այս երկրի Զարբիենոս թագավորը դեռ մինչև Լուկուլլոսի արշավանքը, դավաճանելով Տիգրանին, դաշնադրություն է կնքել հռոմեացիների հետ։ Սակայն Տիգրանը, լսելով սրա դավաճանության մասին, հրամայել է՝ նրան և նրա ընտանիքին սրի քաշել։

Լուկուլլոսի հետագա արշավանքը և նրա պարտությունը

Տիգրանակերտի անկումից հետո, ձմեռվա սկսվող ցրտերի պատճառով, երկու կողմերն էլ դադարեցնում են պատերազմական գործողությունները և նախապատրաստվում նոր ընդհարումների։

Լուկուլլոսը, փախենալով թշնամաբար տրամադրված շրջապատից և հռոմեացիների համար անսովոր ձմեռվա ընթացքում հայկական բանակի հարձակումներից, իր զորքը ուրս է բերում Տիգրանակերտից ու Հայաստանից և գնում ձմեռում է հայերի հետ

թշնամացած Կորդվաց աշխարհում, որտեղ կային նաև հացի առատ պաշարներ։

Միհրդատը դեռ Պոնտոս չհասած, լուր ստանալով Տիգրանի պարտության մասին, ետ է վերադառնում։ Տիգրանը և Միհրդատը անմիջապես եռանդուն կերպով ձեռնամուխ են լինում նոր պատերազմի նախապատրաստմանը։ Նրանք նոր զորք են հավաքում, հռոմեականի նման վերակառուցում և վարժեցնում են հայկական բանակը, ստեղծում են ավելի մարտունակ ու մեծաթիվ հեծելազոր։ Տիգրանի նոր բանակում կային նաև վրացական ու մարական զորամասեր։ Մարական զորամասերին, ինչպես Տիգրանակերտի ճակատամարտի ժամանակ, առաջնորդում էր Ատրպատականի Միհրդատ թագավորը, որը Տիգրանի փեսան էր։

Զմեռվա ընթացքում թե՛ Տիգրանն ու Միհրդատը, թե՛ Լուկուլլոսը ծավալում են նաև դիվանագիտական աշխույժ գործունեություն։ Պատերազմող երկու կողմերի համար էլ շատ կարևոր ու էական նշանակություն ուներ Պարթևական թագավորության դիրքը։ Եթե պարթևները միանային կռվող կողմերից մեկին, ապա այդ կողմը կստանար բացարձակ գերակշռություն։

Տիգրանն ու Միհրդատը իրենց դեսպանների միջոցով, նվաճված անդրեփրատյան երկրները պարթևներին վերադարձնելու պայմանով, աշխատում էին համոզել պարթևների Հրահատ III թագավորին (70—57), որպեսզի նա միանար իրենց հետ և համատեղ պայքար սկսեր Արևելքի ընդհանուր և վտանգավոր թշնամու՝ Հռոմի դեմ։ Նրանք միաժամանակ զգուշացնում էին Հրահատին, որ եթե Հայաստանը պարտվի ու նվաճվի, ապա այնուհետև հռոմեացիները կհարձակվեն պարթևների վրա։

Իր հերթին Լուկուլլոսը դեսպանների միջոցով, օգտագործելով հայերի ու պարթևների միջև գոյություն ունեցող թշնամությունը, աշխատում էր Հրահատին գրավել իր կողմը և նրան դուրս բերել Հայաստանի դեմ։

Սակայն պարթևները որոշում են չեզոքություն պահպանել։ Նրանք հույս ունեին, որ պատերազմում երկու կողմերն էլ խիստ կերպով կթուլանան, դրանով իսկ կապահովվի իրենց տերության անվտանգությունը, և իրենք Արևելքում կգրավեն գերիշխող դիրք։

68 թ. գարնան վերջին վերսկսվում են պատերազմական գործողությունները։ Լուկուլլոսը, տեսնելով որ Տիգրանը ո՛չ նախահարձակ է լինում և ո՛չ էլ հաշտություն խնդրում, իր զորքերով դուրս է գալիս Կորդվաց աշխարհից և Տիգրանակերտի մոտով ու

Տավրոսյան լեռների վրայով շարժվում դեպի Մուշի դաշտը և Արածանիի հովիտը, դեպի Հայաստանի խորքերը։ Լուկուլլոսի նպատակն էր բաց ճակատամարտում հաղթել հայկական բանակին կամ դրավել Հայաստանի հին մայրաքաղաք Արտաշատը և ստիպել Տիգրանին վերջնական հաշտություն կնքել հռոմեացիների առաջարկած պայմաններով։

Հայկական բանակը այս նոր կռիվների ժամանակ գործադրում է ակտիվ պաշտպանական նահանջի, թշնամուն դեպի երկրի խորքերը քաշելու, մանր ու անկանոն կռիվներում նրա ուժերը հյուծելու և բարոյալքելու տակտիկա։

Միհրդատի ղեկավարությամբ գործող հայկական բանակի հետևակային զորամասերը և հեծելազորի մի մասը, որոշ հեռավորությունից թշնամուն ճակատից անընդհատ նեստահարելով կամ նրա հետ փոքր ընդհարումներ ունենալով, բայց և խուսափելով կանոնավոր ճակատամարտից, սկսում են աստիճանաբար նահանջել և թշնամուն քաշել դեպի երկրի խորքերը։ Մյուս կողմից, Տիգրանի հրամանատարությամբ գործող հեծելազորային զորամասերը, շարժվելով թշնամու բանակի թևերից ու թիկունքից, հեռվից նեստահարում և գիշեր ու ցերեկ լարված ու անհանգիստ վիճակի մեջ էին պահում հակառակորդին, շրջապատում ու ոչնչացնում էին նրա փոքր խմբերին ու գումակը, կտրում հաղորդակցության ճանապարհները և դժվարացնում պարենավորումը։

Երբ հռոմեացիները խորանում են երկրում և անմիջական ըստպառնալիք ստեղծում հայկական պետականության գոյությանը, հայ ժողովուրդը նույնպես ոտքի է կանգնում իր հայրենիքը, անկախությունն ու պետականությունը օտարերկրյա նվաճողներից պաշտպանելու համար։ Ժողովրդական մասսաների ցասումն ու վրնժխնդրությունը ավելի է բորբոքվում, երբ հռոմեացիները, Լուկուլլոսի հրամանով սկսում են ավերել ու այրել հայկական գյուղերը։

Հայկական զորքերի հասցրած հարվածների, ժողովրդական մասսաների ծավալած պայքարի, ատելության և թշնամանքի հետևանքով հռոմեական բանակը ընկնում է ծանր դրության մեջ։ Դժվարանում է նրա պարենավորումը, անընդհատ աճում է սպանված և ծանր վիրավորված զինվորների թիվը։

Հռոմեացիները իրենց ուժերը լարելով, ճիշտ է, շատ դանդաղ կերպով, բայց առաջ շարժվելով, հասնում են Արածանիի դետնանցին, որտեղից ուղիղ ճանապարհ էր բացվում դեպի Արտաշատ։ Տիգրանը և Միհրդատը, նկատի ունենալով Հայաստանի մայրաքա-

զաբին սպառնացող վտանգը, որոշում են թշնամու դեմ վճռական ճակատամարտ տալ։

68 թ. սեպտեմբերին Արածանի գետի ափին տեղի է ունենում երկրորդ խոշոր ճակատամարտը։

Հռոմեացի զորավարների, այդ թվում և Լուկուլլոսի, փառքը գովերգող Պլուտարքոսը տեղեկացնում է, որ իբր թե Արածանիի ճակատամարտում ևս հաղթել են հռոմեացիները և ոչնչացրել հայկական բանակը։ Սակայն նա միաժամանակ հայտնում է, որ ճակատամարտից մի քանի օր հետո, Լուկուլլոսի հրամանով, հռոմեական բանակը սկսում է ետ նահանջել, որովհետև զորքը ապստամբել և պահանջում էր ետ վերադառնալ։ Պլուտարքոսը հռոմեական զորքի ապստամբությունը և նահանջը պատճառաբանում է Հայաստանում սկսված անժամանակ ցրտերով, իսկ Ցիցերոնը նրանով, որ իբր թե հռոմեացի զինվորները կարոտել էին իրենց հայրենիքը։

Հակառակ Պլուտարքոսի, հույն պատմագիր Դիոն Կասիուսը վկայում է, որ այս ճակատամարտում հայկական հեծելազորը շատ նեղն էր դցել հռոմեացիներին և շատերին սպանել ու վիրավորել էր։ Նույն հեղինակը վկայում է նաև, որ հայերի նետերի սլաքները թունավոր էին և ունեին երկու ծայր, որոնք այնպես էին իրար կցված, որ թե՛ վերքի մեջ մնալով և թե՛ դուրս հանելով՝ արագ մահ էին պատճառում։

Հույն պատմիչի այս վկայություններից դժվար չէ նկատել, որ հռոմեական զորքի ապստամբությունը և նահանջը ոչ թե ցրտի և հայրենիքի կարոտի, այլ այդ զորքի տված մեծ կորուստների ու պարտության հետևանքն էր։

Արածանիի ճակատամարտում պարտված և ծանր կորուստներ կրած հռոմեական բանակը սկսում է ետ նահանջել դեպի հարավ։ Սակայն Տիգրանը և Միհրդատը այս նահանջի ժամանակ թույլ են տալիս ռազմագիտական խոշոր սխալ։ Նրանք, հետևելով իրենց առաջվա ստատիկային, խուսափում են թշնամու դեմ կանոնավոր ու վճռական ճակատամարտ տալուց, չեն հետապնդում նրան։ Ընդհակառակն, այժմ Տիգրանի և Միհրդատի հիմնական խնդիրը պետք է լիներ ոնպայման կանոնավոր ճակատամարտ տալ բարոյալքված, հուսալքված ու հյուծված թշնամու դեմ և թույլ չտալ, որպեսզի ոչ մի հռոմեացի նվաճող կենդանի դուրս գար հայկական հողից։

Լուկուլլոսը, օգտվելով Տիգրանի և Միհրդատի թույլ տված սխալից, կարողանում է իր զորքի մնացորդները դուրս բերել Հայաստանից և տանել Հյուսիսային Միջագետք։ Այստեղ հռոմեական

զորքը պաշարում է հայկական փոխարքայության կենտրոն հանդիսացող Մծբին քաղաքը, որը ռազմական կարևոր նշանակություն ուներ և շրջապատված էր կրկնակի պարիսպներով։ Մծբինի հայկական փոքրաթիվ կայազորը, Տիգրանի եղբոր՝ Գուրասի գլխավորությամբ, համառ ու երկարատև դիմադրություն է ցույց տալիս։ Միայն երկու կամ երեք ամսից հետո հռոմեացիները, օգտվելով դիշերային տեղատարափ անձրևից ու փոթորկից, կարողանում են գրավել քաղաքը։ 68—67 թթ. ամբողջ ձմեռը հռոմեացիները մնում են Հյուսիսային Միջագետքի տաք և պաշարներով լի կայաններում։

Հռոմեական զորքի նահանջից հետո Միհրդատը, 8000 զինվոր ստանալով Տիգրանից, մեկնում է Պոնտոս և կարճ ժամանակամիջոցում ազատագրում իր թագավորության արևելյան շրջանները։ Ժողովուրդը ցնծությամբ է ընդունում և օգնում Միհրդատին, որովհետև ցասումով և ատելությամբ էր լցված դեպի հռոմեացի կեղեքիչները։ 67 թ. գարնանը Զելայի մոտ հայ-պոնտական զորքերը գլխովին ջախջախում են այստեղ գտնվող հռոմեական ուժերին և ազատագրում ամբողջ Պոնտոսը։

Նույն այս ժամանակ հայ-մարական զորքերը, Տիգրանի և նրա փեսա Միհրդատի գլխավորությամբ, անցնում են Եփրատ գետը և հարձակվում Հռոմի «դաշնակից» Կապադովկիայի վրա։ Հայ-մարական զորքերը, անխնա կերպով կոտորելով հռոմեացիներին, ավերում և նվաճում են Կապադովկիան։

67 թ. գարնանը Լուկուլլոսը իր զորքով, դուրս գալով Միջագետքից և շարժվելով դեպի արևմուտք, գնում է Փոքր Ասիա։ Նրա հեռանալուց հետո Տիգրան II-ը կրկին գրավում և իր տերությանն է միացնում Կորդվաց աշխարհը և Հյուսիսային Միջագետքը։

Այսպիսով, Լուկուլլոսի յոթ տարի առաջ սկսած պոնտական և հայկական արշավանքները վերջանում են անարդյունավետ կերպով։ Լուկուլլոսը, որը չէր բավականացել Միհրդատ Պոնտացուն հաղթողի իր փառքով, այժմ զրկվել էր նաև դրանից։ Տիգրանը և Միհրդատը ոչ միայն վերականգնել էին իրենց թագավորությունները, այլև Հռոմի փոքրասիական պրովինցիաները գտնվում էին հայկական և պոնտական զորքերի ներխուժման վտանգի առաջ։

Ներքին հակասությունների սրումը

Հայ-պոնտական դաշինքն ու համագործակցությունը երբեք այնքան ամուր չէին թվում, որքան Լուկուլլոսի պարտությունից հետո։ Սակայն այդ դաշինքը շուտով քայքայվում և նույնիսկ թշնամությամբ է փոխարինվում Հայաստանում առաջացած ներքին դաշ-

կալական կոիվների և իշխող վերնախավի ներսում հակասությունների սրման հետևանքով։

Հայ ստրկատիրական ավագանու մի շարք ներկայացուցիչներ, որոնք հավանաբար դժգոհ էին ներքին ու արտաքին քաղաքականությունից, պայքար են սկսում Տիգրան II-ի իշխանության դեմ։ Տիգրանի դեմ կազմակերպում են խռովություններ ու դավադրություններ, որոնց գլուխ կանգնում են հայկական գահի ամենամոտիկ հավակնորդները՝ նրա հարազատ որդիները։

Տիգրանի անդրանիկ որդին՝ Զարեհը, հայ ավագանու դժգոհ ներկայացուցիչների հետ, գաղտնի դավեր լարելով՝ խռովություն է բարձրացնում իր հոր դեմ։ Սակայն խռովությունը ճնշվում է. Զարեհն ու նրա կողմնակիցները կռվում հաղթվում և սպանվում են։ Նրա երկրորդ որդին, որի անունը մեզ չի հասել, նույնպես աշխատում է գահը խլել։

Սակայն շուտով իշխող վերնախավի ընդդիմադիր ու դժգոհ տարրերի պարագլուխը և նրանց շահերի արտահայտիչն է դառնում Տիգրանի երրորդ որդին, որի անունը նույնպես Տիգրան էր։ 67 թ. վերջին, Տիգրան Կրտսերը, օգտվելով այն բանից, որ հայրը արշավանքի մեջ էր գտնվում Կապադովկիայում, իր կողմնակիցների հետ ապստամբում և փորձում է գրավել գահը։ Տիգրան Մեծը, լսելով այս մասին, զորքով վերադառնում է Հայաստան և ճնշում է ապըստամբությունը։ Տիգրան Կրտսերը իր կողմնակից դավադիր հայ ավագանու ներկայացուցիչների հետ փախչում է պարթևների մոտ և այնտեղ ամուսնանում Հրահատ III-ի դստեր հետ։

Իրար ետևից առաջացած այս դավադրություններն ու խռովությունները ոչ միայն ծանրացնում և անկայուն են դարձնում Հայաստանի ներքին դրությունը, այլև խիստ կերպով վատացնում են դաշնակից թագավորների՝ Տիգրանի և Միհրդատի քաղաքական հարաբերությունները։ Տիգրան Մեծը իրավացի հիմքով կասկածում էր, որ իր որդիներին դավադրության հրահրողը Միհրդատն է։ Հայկական ռազմական ուժերը օգտագործելու տեսակետից, անշուշտ, Միհրդատի համար ավելի ցանկալի էր հայկական գահի վրա տեսնել իր երիտասարդ թոռանը, քան ինքնուրույն քաղաքականություն վարող Տիգրան Մեծին։ Բացառված չէ նաև այն ենթադրությունը, որ այս խռովությունները կարող էին հրահրված լինել նաև հռոմեացիների և պարթևների կողմից։

Պոմպեոսի արշավանքը և հայ-հռոմեական հաշտությունը

67 թ. վերջին (մ. թ. ա.) հռոմեական սենատի որոշմամբ Լուկուլլոսի փոխարեն Արևելքում հռոմեական զորքերի ընդհանուր հրամանատար է նշանակվում Պոմպեոսը, որը մինչ այդ հռչակվել էր Իսպանիայում Սերտորիուսի, իսկ Միջերկրական ծովում ծովահենների դեմ մղված պատերազմներում։ Նրան տրվում են պատերազմ վարելու, հաշտություն կնքելու, պրովինցիաները կառավարելու ու նրանց եկամուտները տնօրինելու արտակարգ լիազորություններ և անսահմանափակ իշխանություն։

Պոմպեոսը իր նշանակման մասին լուրը ստանալով Կիլիկիայում, անմիջապես ձեռնամուխ է լինում Միհրդատի և Տիգրանի դեմ նոր պատերազմի նախապատրաստմանը։ Նա կարճ ժամանակամիջոցում իր, Լուկուլլոսի և Հռոմին ենթակա ու վասալ երկրների ուժերից ստեղծում է մի խոշոր բանակ։ Նախքան պատերազմական գործողություններ սկսելը Պոմպեոսը կարողանում է, Միջագետքում Տիգրանի գրաված երկրները պարթևներին վերադարձնելու խոստումով, իր կողմը գրավել Հրահատ III-ին և սրան դարձնել Հայաստանի վտանգավոր հակառակորդը՝ թիկունքից։ Հայաստանի և Պոնտոսի դեմ ուղղված պարթևա-հռոմեական այս դաշինքի կնքման մեջ որոշ դեր է կատարում նաև Տիգրան Կրտսերը։

66 թ. գարնանը Պոմպեոսը ավելի քան 60 000 զորքով հարձակվում է Պոնտոսի վրա։ Հռոմեական ուժերի դեմ Միհրդատը իր քայքայված և ուժասպառ եղած երկրից կարողանում է դուրս բերել միայն 33 հազար զորք։ Նկատի ունենալով հակառակորդի գերակշռությունը, Միհրդատը խուսափում է կանոնավոր ճակատամարտից և սկսում է մղել պարտիզանական մանր կռիվներ։ Սակայն Պոմպեոսը Գայլ գետից դեպի հարավ, Փոքր Հայքի Դաստիր բնակավայրի մոտ գտնվող նեղ կիրճում շրջապատում է Միհրդատի բանակն ու վերջնական պարտության մատնում նրան։ Միհրդատը փոքրաթիվ ուժերով փախչում է սկզբում Կողքիս, իսկ հետո՝ Ռոսպոր (Ղրիմ), որտեղ և 63 թ. (մ. թ. ա.) ինքնասպանությամբ վերջ է տալիս իր խռովահույզ ու փոթորկալից կյանքին։ Պոնտոսը և Փոքր Հայքը նվաճվում ու վերածվում են հռոմեական պրովինցիայի։

66 թ. գարնանը (մ. թ. ա.) Հայաստանը իր հերթին ենթարկվում է պարթևների հարձակմանը։ Հրահատ III-ը, պարթևների կորցրած հողերը վերադարձնելու և իր փեսա Տիգրան Կրտսերին հայկական գահի վրա բարձրացնելու նպատակով, ներխուժում է Հա-

յաստան և գալիս պաշարում Արտաշատը։ Տիգրան Մեծը, մայրաքաղաքի պաշտպանությունը կայազորին հանձնարարելով, ինքը հեռանում է երկրի լեռնային շրջանները զորք հավաքելու համար։ Արտաշատի կայազորը և բնակչությունը երկարատև ու համառ դիմադրություն են ցույց տալիս թշնամուն։

Երբ Հրահատը տեսնում է, որ Արտաշատի պաշարումը երկարում է, հետագա պաշարումը հանձնարարելով Տիգրան Կրտսերին, ինքը զորքի մի մասով վերադառնում է իր երկիրը։ Սրա հեռանալուց անմիջապես հետո, Տիգրան Մեծը հարձակվում և գլխովին ջախջախում է դավաճան որդուն. որը մազապուրծ փախչում և գնում է Պոմպեոսի մոտ։

Միհրդատին վերջնական պարտության ենթարկելուց հետո, 66 թ. աշնանը Պոմպեոսը հարձակվում է նաև Հայաստանի վրա և շարժվում դեպի Արտաշատ։

Տիգրան Մեծի համար ստեղծվում է շատ ծանր դրություն։ Նա միայն իր ուժերով, առանց դաշնակիցների չէր կարող միաժամանակ պատերազմել թե՛ հզոր Հռոմի և թե՛ Պարթևական թագավորության դեմ, մանավանդ, որ Հայաստանի ներքին դրությունն էլ կայուն չէր։ Հայաստանի պարտությունը դառնում է անխուսափելի։ Ելնելով ստեղծված իրավիճակից, երկիրը անտեղի ու անօգուտ ավերածություններից զերծ պահելու և ժամանակ շահելու նպատակով, Տիգրանը հաշտություն է առաջարկում Պոմպեոսին, որը ընդունում է։ Երկու կողմերի միջև տեղի ունեցած բանակցություններից հետո, 66 թ. աշնանը Արտաշատում հաշտության պայմանագիր է կնքվում Հռոմի և Հայաստանի միջև։

Այդ պայմանագրով նախատեսվում է հետևյալը։ Բացի պարթևներից գրաված հողերի մի մասից, Տիգրանը հրաժարվում էր Հայաստանից դուրս կատարած իր բոլոր նվաճումներից։ Սոփքը ժամանակավորապես անջատվելու էր Հայաստանից, և այստեղ թագավոր էր դառնալու Տիգրան Կրտսերը։ Սա իր հոր մահից հետո ժառանգելու էր նաև նրա գահը։ Տիգրանը պարտավորվում էր՝ իբրև պատերազմական տուգանք Պոմպեոսին վճարել 6000 տաղանդ, յուրաքանչյուր հռոմեացի զինվորին՝ 50 դրաքմե, յուրաքանչյուր հարյուրապետին՝ 100 դրաքմե, իսկ յուրաքանչյուր զինվորական տribունին՝ մեկ տաղանդ։ Ընդհանուր առմամբ Տիգրանը պետք է վճարեր մոտ 12000 տաղանդ (մոտ 25 միլիոն ոսկի ռուբլի)։ Այս դումարները մեծ մասամբ պետք է տրվեին Սոփքում պահվող պետական գանձերից։ Այսուհետև Տիգրանը հռչակվում էր «հռոմեական ժողովրդի բարեկամը և դաշնակիցը»։

Այսպիսով, նեղքին հակասությունների և հռոմեական նվաճողական քաղաքականության հետևանքով քայքայվում է Տիգրան II-ի տերությունը։ Հայաստանը դադարում է Առաջավոր Ասիայի հզոր տերություն լինելուց և ամփոփվում Հայկական լեռնաշխարհի սահմաններում։

Պոմպեոսը շատ մեղմ և ընդունելի պայմաններով հաշտություն էր կնքել Տիգրան Մեծի հետ։ Դրանով հռոմեացի զորավարը պարզապես աշխատել էր շատ չգրգռել հայերին և ապագա պատերազմում նրանց չմղել պարթևների կողմը։ Անշուշտ, հայ-պարթևական հետագա դաշնակցությունը խափանելու նպատակով էր նաև, որ Պոմպեոսը հայկական գահը չէր տվել Տիգրան Կրտսերին, որովհետև Տիգրան Մեծը, լինելով պարթևների հակառակորդը, ավելի ցանկալի դաշնակից էր հռոմեացիների համար, քան պարթևների կողմը թեքված և նրանց հետ բարեկամական կապերով կապված Տիգրան Կրտսերը։

Կնքված հաշտությունից խիստ դժգոհ է մնում Տիգրան Կրտսերը, որը հույս ուներ ստանալու հայկական գահը։ Սա անարգում ու վիրավորում է Պոմպեոսին, ըմբոստանում և նոր դավեր է նյութում հոր դեմ։ Պոմպեոսը ձերբակալում է Տիգրան Կրտսերին, սրա ընտանիքին ու որդիներին և, հակառակ Հրահատ III-ի բողոքներին, ուղարկում Հռոմ։

Հայաստանից Պոմպեոսը 65 թ. արշավում է դեպի Իբերիա (Վրաստան), իսկ ապա՝ Աղվանք։ Իբերները և աղվանները ուժեղ ու համառ դիմադրություն են ցույց տալիս հռոմեական զավթիչներին։ Սակայն Հայաստանի հարևան այս երկրների թագավորները նույնպես ստիպված են լինում ընդունել Հռոմի գերիշխանությունը և իրենց հռչակել «հռոմեական ժողովրդի բարեկամ ու դաշնակից»։ Շուտով Հռոմի գերիշխանությունը ընդունում է նաև Հայաստանի հարևան ու դաշնակից Ատրպատականը։

Նույն 65 թ. Հրահատ III-ը գրավում է Միջագետքն ու Կորդվաց աշխարհը, որոնք Պոմպեոսի հետ կնքված դաշինքի համաձայն պետք է պատկանեին պարթևներին։ Սակայն Պոմպեոսը պահանջում է Հրահատից ազատել Կորդվաց աշխարհը և Հյուսիսային Միջագետքի մի մասը։ Նա, նույնիսկ չսպասելով Հրահատի պատասխանին, հրամայում է հռոմեական զորքերին՝ գրավել այդ երկրները և հանձնել Տիգրան II-ին։ Այսպիսով, Պոմպեոսը խախտում է իր կնքած դաշինքը։ Այժմ, անշուշտ, հռոմեացիների համար ավելի ձեռնտու էր, որ ռազմա-ստրատեգիական կարևոր դիրք ու-

նեցող Կորդուքը և Հյուսիսային Միջագետքը գտնվեին դաշնակից հայերի, քան թե ուժեղացող պարթևների ձեռքում։

Հրահատ III-ը ստիպված է լինում լուծյամբ տանել հռոմեացի զորավարի այս անարգանքը։ Այժմ արդեն Հրահատը պետք է հասկացած լիներ, թե ինչպիսի խոշոր ու ճակատագրական սխալ էր գործել։

Հաշտության դաշնագրից հետո Տիգրան II-ը թագավորում է ևս տասը տարի։ Նա մահանում է 56 թ. (մ. թ.-ա.), 85 տարեկան հասակում։

ԳԼՈՒԽ VIII

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Արտավազդ II

Տիգրան II-ին հաջորդում է նրա որդին՝ Արտավազդ II-ը (56—34), որը, հավանաբար, դեռևս հոր կենդանության վերջին տարիներին դարձել էր նրա աթոռակիցը։ Արտավազդը քաղաքական բարդ իրադրությունների մեջ կողմնորոշվող, շրջահայաց ու հեռատես, միաժամանակ հայկական արքունիքում հելլենիստական բարձր կրթություն ստացած պետական գործիչներից էր։

Մեզ են հասել Արտաշատի դրամատանը կտրված Արտավազդի գեղեցիկ արծաթյա դրամները, որոնց առաջին երեսին դրոշմված է արքայական թագով նրա պատկերը, իսկ երկրորդ երեսին՝ քառաձի ռազմակառք։ Դրամների վրա, հունարեն, Արտավազդն իրեն անվանում է «արքայից արքա»։

Ջնայած Լուկուլլոսի և Պոմպեոսի արշավանքների հետևանքով Հայաստանի կրած տերիտորիալ մեծ կորուստներին, ավերումներին ու կողոպուտին, Արտավազդի ժամանակ դեռևս Հայաստանը բավական ընդարձակ և ուժեղ պետություն էր։ Նա ուներ ռազմական մեծ ուժեր և նյութական միջոցներ։ Այդ հանգամանքը իրենց պայքարի ժամանակ հաշվի են առնում թե՛ հռոմեացիները և թե՛ պարթևները։ Եթե հռոմեացիները, հենվելով իրենց կնքած հաշտության պայմանագրի վրա, առանց Հայաստանի բուն շահերը նկատի ունենալու, աշխատում էին հայկական ուժերն օգտագործել բացառապես իրենց նվաճողական քաղաքականության իրականացման համար, ապա պարթևները, ուղղելով իրենց սխալը, ձգտում էին դաշնակցել հայերի հետ՝ ընդդեմ Հռոմի։ Այդ պատճառով էր, որ պարթևները

լուսլյայն համաձայնվել էին, որպեսզի Կորդուքը և Հյուսիսային Միջագետքը մնային Հայաստանի կազմում։

Արտավազդ II-ը դահ բարձրանալուց հետո, հենվելով երկրի ռազմական ուժերի վրա և օգտագործելով հռոմա-պարթևական հակասությունները, աշխատում է Հայաստանը դուրս բերել Հռոմի նկատմամբ ունեցած կախումից և վերականգնել նրա ինքնուրույնությունը։

Կրասոսի պարթևական արշավանքը և հայ-պարթևական դաշինքը

60 թ. (մ. թ. ա.) Հռոմում կազմվում է առաջին տրիումվիրատը կամ եռապետությունը, որի մեջ մտնում էին Գնեոս Պոմպեոսը, Հուլիոս Կեսարը և Մարկոս Կրասոսը։ Արևելքի երկրների կառավարումը հանձնարարվում է Կրասոսին, որը Հռոմի ամենահարուստ, ընչաքաղց ստրկատեր վաշխառուներից էր։ Նա հայտնի էր նաև Սպարտակի ապստամբությունը ճնշելու ժամանակ իր գործադրած վայրագությամբ ու դաժանությամբ։

54 թ. Կրասոսը գալով Ասորիք, նախապատրաստվում է Միջագետքի վրայով մեծ արշավանք կատարել պարթևների դեմ։ Այդ արշավանքով նա ձգտում էր ձեռք բերել նոր հարստություններ և ռազմական փառք։

Նույն այս թվականին Արտավազդ II-ը գալիս է Ասորիք, դանդաղում է պարթևական արշավանքի ծրագրի հետ և Կրասոսի պահանջով խոստանում նրան 10000 հեծելազոր և 30 հազար հետևազոր։ Միաժամանակ, հաշվի առնելով, որ հայկական զորքը երկրից դուրս գալու դեպքում՝ պարթևները կարող են հարձակվել ու ավերել Հայաստանը, նա խորհուրդ է տալիս Կրասոսին իր արշավանքը կատարել ոչ թե Միջագետքի անապատային հարթավայրերով, այլ Հայաստանի լեռնային շրջաններով, որտեղ հռոմեացիները կշարժվեին ապահով կերպով և չէին ենթարկվի պարթևական հեծելազորի վտանգավոր հարձակումներին։ Սակայն Կրասոսը մերժում է այդ խորհուրդը, որից հետո Արտավազդը վերադառնում է Հայաստան։

53 թ. գարնանը Կրասոսը ավելի քան 45000 զորքով, անցնելով Եփրատ գետը, Միջագետքի տափաստաններով շարժվում է պարթևների դեմ։ Պարթևների Օրոդես թագավորը (56—37) իր զորքի մի մասը ստղանդավոր զորավար Սուրենի առաջնորդությամբ, ուղարկում է Կրասոսի դեմ, իսկ ինքը զորքի մյուս մասով շարժվում է Հայաստան։

Արտավազդը սուրհանդակներ է ուղարկում Կրասոսի մոտ և

հայտնում, որ ինքը չի կարող օժանդակ զորք տալ նրան, որովհետև պարթևները հարձակվել են Հայաստանի վրա։ «Կրասոսը,—ասում է Պլուտարքոսը,—բարկացած լինելով և անքաղաքավարի դտնվելով, Արտավազդին գրավոր պատասխան չուղարկեց, այլ ասաց բերանացի, որ այժմ նա ժամանակ չունի զբաղվելու հայերով, բայց կվերադառնա և կպատժի Արտավազդին՝ դավաճանության համար»։

Արտավազդը և հայկական զորքը ոչ մի շահագրգռվածություն չունեին պարթևների դեմ մղվող պատերազմում։ Դեռ ավելին. Նրանք շատ լավ էին գիտակցում, որ հռոմեացիները պարթևներին հաղթելուց հետո անպայման կվերացնեն հայկական պետականությունը և Հայաստանը կդարձնեն հռոմեական սովորական մի պրովինցիա։ Կրասոսի վերոհիշյալ սպառնալիքից հետո Հայաստանի շահերը պահանջում էին անհապաղ դաշինք կնքել պարթևների հետ և համատեղ կերպով պայքարել հռոմեական նվաճողների դեմ, մանավանդ որ պարթևներն էլ ձգտում էին դրան։ Շուտով Օրոդեսի և Արտավազդի միջև կնքվում է բարեկամական դաշինք։ Այդ դաշինքն ամրապնդելու նպատակով Արտավազդը իր քրոջը կնության է տալիս Օրոդեսի որդուն՝ թագաժառանգ Բակուրին։

Մինչ այդ, Կրասոսը, շարունակելով արշավանքը, աշխատում է շփման մեջ մտնել պարթևական զորքի հետ, որը հիմնականում կազմված էր հեծելազորից։ Սկզբում պարթևները խուսափելով ճակատամարտից թշնամուն քաշում են Միջագետքի անապատները։ 53 թ. մայիսի 6-ին պարթևները հանկարծակի խառան քաղաքի մոտ շրջապատում, անխնա կոտորում ու ոչխարին ցախչախում են հռոմեացիներին։ Պարթևների հաղթությունը կատարյալ էր ու փառավոր։ Հռոմեացիները տալիս են 20000 սպանված և 10000 գերի։ Սպանվում են Կրասոսը և նրա որդին։ Բացի հարուստ ավարից, պարթևների ձեռքն են ընկնում նաև հռոմեական արծվանիշ դրոշները։

Սուրեն զորավարը ճակատամարտում սպանված Կրասոսի գլուխը ուղարկում է Արտաշատ, որտեղ այդ ժամանակ գտնվում էին պարթևների Օրոդես թագավորը և պարթև մեծամեծներից շատերը։ Այստեղ հռոմեացիների դեմ տարված հաղթանակի և թագաժառանգ Բակուրի ու Արտավազդի քրոջ ամուսնության կապակցությամբ տեղի էին ունենում տոնահանդեսներ։ Կրասոսի գլուխը բերում են այն ժամանակ, երբ արքունի թատրոնում հույն դերասանների խումբը ներկայացնում էր Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը։ Դանդիսատեսները բուռն ցնծություն են տալիս, երբ գլխավոր դերակատար Յասոնը ցուցադրում է Կրասոսի կտրված գլուխը և

արտասանում ողբերգության հետևյալ տողերը. «Տուն վերադառնալով, մենք բերում ենք լեռներից նոր սպանված եղջերուն, քախտավոր մի որս»։ Այս տեսարանը հանդիսատեսները ընդունում են բուռն ծափահարություններով և մեծ ցնծությամբ։

51—40 թթ. ընթացքում հայ-պարթևական զորքերը բազմաթիվ արշավանքներ են կատարում դեպի Ասորիք, Փյունիկիա և Պաղեստին։ Հռոմեացիների կողմից կեղեքված ու հարստահարված այս երկրների բնակչությունը համակրանքով է ընդունում և ոչ մի դիմադրություն ցույց չի տալիս հայ-պարթևական զորքերին։ Այս արշավանքների ընթացքում, բացի հարուստ ավարից, Արտավազդ II-ը բերում է նաև զգալի թվով հույն, ասորի և հրեա գերիներ, որոնց բնակեցնում է Հայաստանի քաղաքներում։

Հավանաբար 52 կամ 51 թ. (մ. թ. ա.) Արտավազդը դրավում և կրկին Հայաստանին է միացնում Սոփքը, որը դեռևս 63 թ. Պոմպեոսը հանձնել էր Կապադովկիային։

Այսպիսով, Արտավազդ II-ը, օգտվելով հռոմեացիների պարտությունից, վերականգնում է Հայաստանի պետական ինքնուրույնությունը։

Անտոնիոսի պարթևական արշավանքը

43 թ. (մ. թ. ա.) Հռոմում կազմվում է երկրորդ եռապետություն, որի կազմի մեջ մտնում են Օկտավիանոսը, Անտոնիոսը և Լեպիդոսը։

Արևելքը բաժին է ընկնում Մարկոս Անտոնիոսին, որը 38 թ. (մ. թ. ա.) մեծ ուժերով դալիս է Արևելք։ Հաշվի առնելով Կրասոսի արշավանքի տխուր փորձը, նա ծրագրում է պարթևների դեմ արշավել Հայաստանի և Ատրպատականի վրայով։ Եվ Անտոնիոսի հրամանով՝ 37 թ. արևելյան պրովինցիաների կառավարիչ Պուբլիոս Կանիդիոսը զգալի ուժերով ներխուժում է Հայաստան։ Դաշնակից պարթևները ոչ մի օգնություն չեն կարողանում ցույց տալ Հայաստանին, որովհետև հենց նոր գահ բարձրացած Հրահատ IV-ը (37—2) վտանգավոր մրցակիցներից ազատվելու համար կոտորել էր տվել իր հորը՝ Օրոդեսին, եղբայրներին ու պարթև մեծամեծներից շատերին և երկրում ստեղծել խառն ու անկայուն վիճակ։ Արտավազդը դրսից ոչ մի օգնություն չստանալով և մենակ մնալով հռոմեացիների դեմ, ստիպված է լինում կրկին ընդունել Հռոմի գերիշխանությունը և ճանաչել «հռոմեական ժողովրդի դաշնակցի ու բարեկամի» պարտավորությունները։

36 թ. Անտոնիոսը սկսում է իր պարթևական արշավանքը։ Նա խոշոր ուժերով դուրս գալով Եգիպտոսից, դալիս է Հայաստան և

բանակ է գնում Կարնո դաշտում, որտեղ հավաքվել էին նաև «դաշնակից» թագավորների զորքերը։ Այստեղից Անտոնիոսի բանակը, որը կազմված էր ավելի քան 100 000 զորքից և 300 սայլերի վրա բարձած պաշարողական մեքենաներից, հունիսին շարժվում է դեպի Ատրպատական՝ այնտեղից պարթևների վրա հարձակվելու համար։ Անտոնիոսը, դանդաղ կերպով տեղափոխվող պաշարողական մեքենաների պաշտպանությունը և ուղեկցումը հանձնարարելով երկու լեգեոն զորքի, ինքը դլխավոր ուժերով արագ գալիս և պաշարում է Ուրմիա լճի հարավ-արևելյան կողմում գտնվող Ատրպատականի մայրաքաղաք Փարաասպան կամ Գանձակը։ Ատրպատականի մայրաքաղաքը ուժեղ և համառ դիմադրություն է ցույց տալիս, վիժեցնելով թշնամու հետագա մտադրությունները։

Շուտով Ատրպատականին 50000 հեծելազորով օգնության են գալիս պարթևները։ Պարթևական խոշոր զորամասերից մեկը, անցնելով հակառակորդի թիկունքը, պաշարում և ոչնչացնում է դեռևս գլխավոր բանակին չհասած պաշարողական մեքենաները և գլխովին կոտորում նրանց ուղեկցող հռոմեական զինվորներին։

Հայկական հեծելազորը, որին, ըստ երևույթին, նույնպես հանձնարարված էր պատերազմական մեքենաների պաշտպանությունը, ոչ մի օգնություն ցույց չի տալիս հռոմեացիներին և չի ցանկանում կռվել պարթևների դեմ։ Արտավազդը կանխատեսելով հռոմեացիների պարտությունը և հույս ունենալով վերանորոգելու պարթևների հետ բարեկամական դաշինքը, չի մասնակցում կռիվներին և իր զորքով ետ է վերադառնում։

Ատրպատականում տեղի ունեցած կռիվների ընթացքում Անտոնիոսի բանակը ծանր կորուստներ է կրում։ Վրա հասնող աշնան ցրտերը և անդամթերքների պակասությունը ավելի ևս ծանրացնում են հռոմեական զորքի վիճակը։ Անտոնիոսը ոչ մի էական հաջողության չհասած և նույնիսկ պարթևների երկիրը չմտած, ստիպված է լինում Ատրպատականից նահանջել Հայաստան։

Անտոնիոսը Հայաստան դալուց հետո Արտավազդին ցույց է տալիս կիսդ հարգանք և բարեկամություն, որպեսզի իր զորքի համար նրանից վերցնի կենսամթերք, փող և չղրգռի հայերի թշնամությունը։ Անտոնիոսը, վախենալով, որ պարթևները, մարերը և հայերը միացած՝ կարող են ձմեռվա պայմաններում հարձակվել ու գլխովին ոչնչացնել իր բարոյալքված ու հուսաբեկված բանակը, զորքի հետ դուրս է գալիս Հայաստանից և գնում Ասորիք ճանապարհին ցրտից կորցնելով ևս 8000 մարդ։

Հայաստանի նվաճումը Անտոնիոսի կողմից

Անտոնիոսը և նրա հրամանատարները պարթևական արշավանքում իրենց խայտառակ պարտությունը հետագայում սկսում են վերադրել Արտավազդի իբրև թե կատարած դավաճանությանը։ Սա ոչ միայն մի միջոց էր ծեծված ու պախարակված հռոմեացի զորավարին արդարացնելու, այլև հնարված մի պատրվակ՝ Հայաստանը նվաճելու ու կողոպտելու համար։

34 թ. գարնանը (մ. թ. ա.) Անտոնիոսը զորքով, դազտագողի Փոքր Հայքի վրայով ներխուժում է Հայաստան և արագ կերպով շաքժվում դեպի Արտաշատ։ Արտավազդը իր երկիրը ավերածություններից փրկելու, գուցե և անձնական բանակցությունների միջոցով հաշտության եզր գտնելու հույսով գնում և ներկայանում է Անտոնիոսին, իսկ սա դրժելով իր խոստումները, անմիջապես ձերբակալում և շղթայում է նրան։

Սկզբում Անտոնիոսը ձերբակալված հայոց թագավորին իր հետ ման է ածում Հայաստանի բերդերը, որպեսզի առանց կռվի կարողանա բռնագրավել արքունի գանձերը։ Նա ամեն տեղ անամոթաբար հայտարարում է, որ ինքը Արտավազդին ձերբակալել է միայն նրա համար, որպեսզի փրկագին վերցնի նրա անձի և թագավորության համար։ Սակայն բերդերի կայազորները նրան չեն լսում և չեն բավարարում նրա ընչաքաղցությունը։

Զայրույթով լցված ժողովուրդն ու զորքը թագավոր են հռչակում ձերբակալությունից ազատ մնացած Արտավազդի անդրանիկ որդուն՝ Արտաշեսին և պատերազմի են դուրս գալիս հռոմեական նվաճողների դեմ։ Սակայն հայկական զորքերը, որոնք լավ չէին նախապատրաստված, պարտվում են, իսկ Արտաշես II-ը (34—20) անցնում է պարթևների մոտ։

Հայկական զորքի պարտությունից հետո հռոմեացիները նվաճում են Հայաստանը և սկսում անխնա կողոպտել այն։ Նրանք այնպիսի ոճրագործություններ են գործում, որ նույնիսկ կողոպտում են Հայաստանի տաճարները։ Ինքը՝ Անտոնիոսը հափշտակում է Սկեղյաց դավառի Երիզա ավանի տաճարում գտնվող Անահիտ աստվածուհու ոսկեձույլ արձանը։

34 թ. ամառվա վերջին Անտոնիոսը զորքի մի մասի հետ և կողոպտած հսկայական հարստություններով վերադառնում է Եգիպտոս, իր հետ տանելով նաև ձերբակալված Արտավազդին, նրա կնոջը, որդիներին՝ Տիգրանին ու Արտավազդին։ Նա Հայաստանում տարած իր «հաղթանակի» առթիվ Ալեքսանդրիայում կազմակերպում է

շքերթ։ Ոսկե շղթաներով կապված Արտավազդը, նրա ընտանիքի անդամները և մյուս գերիները տարվում էին առջևից։ Հռոմեացիները Արտավազդին և նրա ընտանիքի անդամներին ազատություն էին խոստանում, եթե նրանք Կլեոպատրայի առջևից անցնելիս նրան անվանեին «թագուհիների թագուհի»։ Սակայն հայոց թագավորն ու նրա ընտանիքը, մահը գերադասելով սարկական աղերսանքով ձեռք բերված ազատությունից, արհամարհանքով ու հպարտությամբ անցնում են Կլեոպատրայի առջևից։ «Հայերը,—ասում է Դիոն Կասիուսը,—ցույց տվին իրենց հոգու վեհությունը, ուստի և փառավոր անվան արժանացան»։

Բացի հաղթական շքերթից, Անտոնիոսը Հայաստանի նվաճման առթիվ կտրել է տալիս նաև իր ու Կլեոպատրայի նկարներով զարդարված և «Անտոնիոսը Հայաստանը նվաճած» մակագրությամբ դրամներ։

Հայաստանի անկախության վերականգնումը

Այս դեպքերից հետո Անտոնիոսը Կլեոպատրային հանդիսավոր կերպով հայտարարում է «թագուհիների թագուհի», նրա և իր որդիներին տալիս է առանձին երկրներ, որոնք հռոմեական պրովինցիաների մեջ էին մտնում կամ ինքնուրույն թագավորություններ էին։

Անտոնիոսի պարթևական անհաջող արշավանքը դժգոհություն է առաջ բերում Հռոմում և գցում նրա հեղինակությունը։ Օկտավիանոսը, օգտվելով առթից, պայքարի է դուրս գալիս Անտոնիոսի և Կլեոպատրայի դեմ։ Կողմերի միջև ճակատամարտը տեղի է ունենում 31 թ. սեպտեմբերի 2-ին Ակտիում հրվանդանի մոտ, որը վերջանում է Անտոնիոսի պարտությամբ։

Ակտիումի ճակատամարտից առաջ՝ Կլեոպատրայի հրամանով Արտավազդ II-ը մահապատժի է ենթարկվում, իսկ նրա կնոջը և որդիներին Օկտավիանոսը տանում է Հռոմ։

31 թ. աշնանը (մ. թ. ա.) պարթևների մոտ ապաստանած Արտաշես II-ը, օգտվելով ստեղծված նպաստավոր դրությունից, պարթևական զորքերով վերադառնում է Հայաստան։ Նա չափազանցելով այստեղ գտնվող հռոմեական ուժերին, լրիվ կերպով վերականգնում է Հայաստանի պետական անկախությունն ու ինքնուրույնությունը և վերագրվում իր հայրենի գահը։ Մեզ են հասել Արտաշես II-ի կտրած պղնձե դրամները, որոնց վրա նա իրեն անվանում է «արքայից արքա»։

Նույն այս ժամանակ Արտաշես II-ը հայ-պարթևական ուժերով հարձակվում է Ատրպատականի վրա։ Ատրպատականի Արտավազդ

թագավորը, որի հնձելազորը Անտոնիոսը տարել էր Ակտիումի ճակատամարտում կռվելու համար, չի կարողանում դիմադրություն ցույց տալ, պարտվում է և գերի ընկնում, իսկ Ատրպատականը միացվում է Հայաստանին։

Արտաշեսը, դանդաղցած պարթևների հետ, վարում է միանգամայն ինքնուրույն և հակահռոմեական քաղաքականություն։ «Արտաշեսը,—վկայում է հռոմեացի պատմագիր Տակիտոսը,—որն իր հոր հետ կապ ունեցող հիշողության պատճառով մեզ թշնամացած էր, պահպանեց իր անձը և իր թագավորությունը Արշակունիների ուժով»։

Արտաշեսյան թագավորության անկումը

Սակայն Հռոմը երկար չէր կարող հանդուրժել անկախ Հայաստանի հզորացումը, մանավանդ նրա դաշնակցությունը պարթևների հետ։ Հայ-պարթևական դաշնակցությունը ոչ միայն գերակշռություն էր ստեղծում Արևելքում ընդդեմ Հռոմի, այլև անմիջական ըստ պատանալիք՝ Հռոմի տիրապետության տակ գտնվող Ասորիքի, Փյունիկիայի, Կապադովկիայի, Պոնտոսի և մյուս երկրների համար։

27 թ. (մ. թ. ա.) Հռոմում հաստատվում են միապետական կարգեր։ Օկտավիանոսը դառնում է Հռոմի առաջին կայսրը և հռոմեական սենատից ստանում ու իրեն վերանվանում է «Օգոստոս», այսինքն՝ «սրբազան» կամ «աստվածների կողմից բարձրացյալ»։

Օգոստոսը իր դիրքերն ամրապնդելուց հետո աշխատում է Հայաստանը կրկին ենթարկել Հռոմի գերիշխանությանը։

20 թ. մեծ ուժերով Օգոստոսը գալիս է Ասորիք։ Հրահատ IV-ը, նկատի ունենալով իր երկրի անկայուն վիճակը, ինչպես և վախենալով հռոմեացիների ներխուժումից, ստիպված է լինում համաձայնություն կնքել Օգոստոսի հետ։ Այդ համաձայնությամբ պարթևները ոչ միայն ետ են վերադարձնում իրենց մոտ գտնվող հռոմեացի գերիներին, այլև հարկադրված են լինում ճանաչել Հռոմի գերիշխանությունը Հայաստանի նկատմամբ։ Այս համաձայնությունից հետո Օգոստոսը իր որդեգիր Տիբերիոս Կլավդիոսին մեծ զորքով ուղարկում է Հայաստան և հրամայում գահընկեց անել Արտաշես II-ին ու գահ բարձրացնել նրա եղբորը՝ Տիգրանին։

Նույն այս ժամանակ հռոմեական գործակալների դրդումով, գուցե և կաշառքով, Հայաստանի ստրկատիրական իշխող շերտերում ևս առաջանում են երկպառակություններ։ Երբ դեռ հռոմեական զորքերը Հայաստան չէին մտել, Հռոմի կողմնակիցները դավադրաբար սպանում են Արտաշեսին և կազմալուծում երկրի պաշտ-

պանությունը։ Հռոմեացիները, առանց դիմադրության հանդիպելու, մտնում են Հայաստան և գրավում նրա մայրաքաղաք Արտաշատը։ Այստեղ Տիբերիոս Կլավդիոսը 20 թ. (մ. թ. ա.) Արտավազդ II-ի միջնակ որդուն՝ Տիգրան III-ին հանդիսավոր կերպով հայտարարում է Հայաստանի թագավոր։ Սա, ավելի քան տասը տարի ապրած ու դաստիարակված լինելով Հռոմում, դարձել էր նրա շտապովներից և հլու-հնազանդ կամակատարներից մեկը։

Տիգրան III-ի գահ բարձրացվելը և Հռոմի գերիշխանության վերահաստատումը Հայաստանում հռոմեացիները սկսում են մեծ աղմուկով ցուցադրել որպես իրենց խոշոր հաղթանակներից մեկը Արևելքում։ Այս առթիվ Օգոստոսը կտրել է տալիս «Հայաստանը նվաճված» կամ «Հայաստանը վերանվաճված» մակագրություններով և Հայաստանի խորհրդանիշը պատկերող տարբեր նկարներով ոսկե ու արծաթե դրամներ։ Հռոմեական նշանավոր բանաստեղծներից Հորացիոսը գրում է. «Հային ցած է գցել Տիբերիոս Կլավդիոսի ահռելի ուժը», իսկ Օվիդիոսը նշում՝ «Հայն այժմ աղերսում է խաղաղություն»։

Օգոստոսը իր կտակի մեջ Տիգրան III-ի նման մի ողորմելի թագավորի Հայաստանում գահ բարձրացնելը համարում է նույնիսկ հայերին տրված մի շնորհ. «Մեծ Հայաստանը,—ասում է Օգոստոսը,—թեև ես կարող էի նրա՝ Արտաշես թագավորի սպանությունից հետո դարձնել պրովինցիա, սակայն ավելի լավ համարեցի, հետևելով մեր նախնիների օրինակին, այդ թագավորությունը տալ Տիգրանին, որ Արտավազդի որդին էր և Տիգրան թագավորի թոռը»։

Հակառակ Օգոստոսի պարծենկոտ հայտարարությանը և հայ իշխող դասակարգի առանձին շերտերի գոհունությանը, հայ ժողովուրդը երբեք մտադիր չէր կորցնել իր պետական անկախությունը և ղենքը ցած դնել հռոմեական նվաճողների առաջ։ Հռոմեական նշանավոր բանաստեղծ Վիրգիլիոսը, որը ավելի լավ էր հասկացել հայերին, քան իր գրչակիցները, փոխաբերաբար գրում էր. «Արքաքը զայրույթով լի է դեպի կամուրջը», այսինքն՝ Հայաստանը զայրույթով է լցված դեպի հռոմեական լուծը։ Եվ, իսկապես, հայ ժողովուրդը հետագայում ևս, մեծ մասամբ մենակ, իսկ երբեմն էլ պարթևների հետ դաշնակցած, փշրում ու ոչնչացնում է հռոմեական «կամուրջը»։

Տիգրան III-ի գործունեության մասին մեզ տեղեկություններ չեն հասել։ Սակայն, անկասկած, նա վարել է հռոմեասեր քաղաքականություն։ Նրա մահից հետո 6 թ. (մ. թ. ա.) հայերը ապստամ-

բում են Հռոմի դեմ և դահ բարձրացնում թագաժառանգ Տիգրան IV-ին։ Տիգրան IV-ը Հայաստանն ազատագրում է Հռոմի գերիշխանությունից, վերականգնում նրա անկախությունը և վարում միանգամայն ինքնուրույն քաղաքականություն։

Հռոմը, որը այս ժամանակ հասել էր իր հզորության գագաթնակետին, իհարկե, չէր կարող հաշտվել Հայաստանում տեղի ունեցած այս փոփոխության հետ։

Տիգրան IV-ը, հաշվի առնելով ստեղծված անբարենպաստ դրությունը, հաշտություն է կնքում հռոմեացիների հետ։ Սակայն շուտով, մեր թվականության 1 թ. նա սպանվում է կովկասյան լեռնականների դեմ մղվող պատերազմում, իսկ նրա քույրը՝ էրատոն, հրաժարվում է գահից։

Տիգրան IV-ի և էրատո թագուհու անունով մեզ է հասել մի գեղեցիկ գրամ, որն այժմ պահվում է Փարիզի ազգային գրադարանում։ Այս գրամի տարբեր երեսներին գրոշմված են Տիգրանի և էրատոյի նկարները, որոնց շուրջը հունարեն մակագրված են. «Տիգրան՝ արքայից արքա» և «էրատո՝ քույրը Տիգրան թագավորի»։

Տիգրան IV-ի մահով վերջանում է Արտաշեսյան դինաստիան Հայաստանում։

ԳԼՈՒԽ IX

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ

Գյուղատնտեսությունը

Սարկատիրական շրջանում Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնության հիմնական զբաղմունքը երկրագործությունը և անասնապահությունն էր։

IV դարի երկրորդ կեսում (մ. թ. ա.) Հայաստանի անկախության վերականգնումը, իսկ այնուհետև II—I դարերում հայկական հողերի միավորումը և Հայաստանի հզորացումը, բազմահազար քաղաքային բնակչության և զորքի կենսամթերքների նկատմամբ ունեցած պահանջը, մասնավոր սեփականատիրական տնտեսությունների առաջացումը, ավելի կատարելագործված երկաթե գործիքների մասսայական կիրառումը նպաստավոր պայմաններ են ստեղծում գյուղատնտեսության հետագա զարգացման համար։ Հատկապես Արտաշեսյան թագավորության շրջանում ընդարձակվում է ցանքերի տարածությունը, բարելավվում հողի մշակությունը։

Երկրագործության մեջ կարևոր տեղ են գրավում ոչ միայն հացահատիկային, այլև յուղատու և թելատու տեխնիկական բույսերի մշակությունը։ III—I դարերում Հայաստանում մշակում էին ցորեն, դարի, հաճար, սիսեռ, ոսպ, կորեկ, բրինձ, քնջութ, կտավատ, կանեփ, հավանաբար նաև բամբակ։

Ինչպես հնում, նույնպես և սարկատիրության շրջանում, Արարատյան դաշտում, Արցախում, Սյունիքի հարավային շրջաններում, Արածնիի հովտում, Վանա լճի շրջակայքում, Ծոփքում և այլ վայրերում զարգացած էր այգեգործությունն ու պտղաբուծությունը։ Ստրաբոնը վկայում է, որ Հայաստանը «մեծ մասամբ այգեշատ ու

դինեվետ է»։ Մի այլ տեղ նա, խոսելով Հայաստանի մասին, ասում է. «Ամբողջ այս երկիրը լիքն է հացահատիկներով, պտղատու և մշտադալար ծառերով»։ Քնջութի, կտավատի, կանեփի հատիկներից, ընկույզից, կաղինից, նշից և յուղատու կորիզների միջուկներից հանում էին ձեթ, խաղողից պատրաստում էին գինի, օղի և շամիչ, զանազան պտուղներից՝ չորացրած մրգեր և օշարակներ, իսկ վարդից ու ծաղիկներից՝ անուշահոտ յուղեր։

Հայաստանի լեռնային և նախալեռնային շրջաններում առաջվա նման զարգացած էր նաև անասնապահությունը։ Երկրի մի շարք նահանգներ հռչակված էին ձիաբուծությամբ։

Ժողովրդական ավանդությունը վկայում է, որ «Արտաշեսի ժամանակ Հայոց աշխարհում անմշակ հող չէր կարելի գտնել ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային մասերում, երկրի շնորհության պատճառով»։

Հանքամշակությունը և արհեստները

Հելլենիզմի դարաշրջանում մետաղահանքերի և օգտակար հանածոների շահագործումը ավելի ուժեղանում՝ ու ինտենսիվ է դառնում։ Հայաստանում արդյունահանվում էր ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, կապար, անագ, սուրմա, ծծումբ և այլն։

Ինչպես հնում, այս շրջանում ևս շահագործվում էին Նախճավանի, Կողբի, Կաղզվանի և այլ վայրերի հարուստ աղահանքերը։ Ստրաբոնը վկայում է, որ Հայաստանում կար և արդյունահանվում էր ծիրանի գույն տվող սանդիքս անունով հանքային ներկը, որը կոչվում էր նաև «հայկական ներկ»։ Սակայն հին աշխարհում ավելի մեծ չափով հռչակված էր Արարատյան դաշտում բույսերի վրա բազմացող որդերից ստացվող հայկական «որդան կարմիր» կոչվող ներկը։

Արդյունահանվող մետաղների ու օգտակար հանածոների, ինչպես և գյուղատնտեսական արտադրանքի՝ կաշվի, բրդի, թելատու կուլտուրաների, փայտի և բուսական ներկերի հումքային հարուստ բազայի վրա զարգանում է նաև արհեստագործությունը։ Հնագիտական, մատենագրական և լեզվական տվյալները ցույց են տալիս, որ Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում ևս ավելի բարելավվում ու կատարելագործվում են արհեստավորական գործիքները, արհեստագործության զլխավոր ու հիմնական ճյուղերը զգալի չափով տրոհվում են և առաջանում նոր ու ավելի նեղ մասնագիտացված արհեստներ, բարձրանում է արհեստավորների հմտությունն ու վարպետությունը։ Բացի հնուց գոյություն ունեցող բրուտի դրդից արհեստագործական մի շարք ճյուղերում հանդես են գալիս նաև

ոտքի կամ ձեռքի ուժով պտտվող ճախարակներ, դայլիկոններ, ծակող, կտրող, տաշող և հարթող գործիքներ։

Աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացումը, արհեստների ավելի նեղ մասնագիտացումը, արտադրանքը սպառողների ավելի լայն շուկայում վաճառելու անհրաժեշտությունը, քաղաքային բնակչությանը տրվող արտոնությունները իթանում են գյուղերում ապրող արհեստավորների զգալի մասին՝ կենտրոնանալու քաղաքներում և քաղաքատիպ ավաններում։ Մեծ մասամբ նվաճված երկրներից, իսկ երբեմն նույնիսկ Հայաստանի տարբեր շրջաններից արհեստավորների կենտրոնացումը քաղաքներում տեղի էր ունենում նաև պետական բռնի ուժով։ Այսպիսով, արհեստագործության հիմնական կենտրոններ են դառնում քաղաքներն ու քաղաքատիպ ավանները։

Կենտրոնանալով քաղաքներում, մասնագիտացված արհեստները հասնում են զարգացման ավելի բարձր աստիճանի։ Ընդլայնվում է արհեստագործական արտադրությունը և նկատելի չափով աճում է շուկայի համար նրանց բաց թողած ապրանքային արտադրանքի քանակը։

Քաղաքի արհեստավորները բավարարում էին պետության, ստրկատերերի, քաղաքային բնակչության, արտաքին շուկաների, մասամբ նաև գյուղական բնակչության պահանջները։ Հայաստանի գյուղական շրջանները դեռևս հիմնականում ինքնամփոփ կյանք էին վարում։ Գյուղերում ապրող արհեստավորները պատրաստում էին այն բոլոր գործիքները և տնային գործածության իրերը, որոնք անհրաժեշտ էին գյուղացու համար։

Հին Հայաստանում զարգացման բավականին բարձր աստիճանի էին հասել երկաթի ու պղնձի մշակման հետ կապված արհեստները։ Երկաթագործները և դարբինները շինում էին գյուղատնտեսական ու արհեստագործական աշխատանքային բազմազան գործիքներ՝ երկաթե խոփեր, դերանդիներ, մանգաղներ, բահեր, եղաններ, մուրճեր, ունելիներ, սղոցներ, կացիններ, դանակներ, սանձեր, շղթաներ և այլն, իսկ պղնձագործները՝ պղնձե և բրոնզե մեծ ու փոքր կաթսաներ, ամաններ, ջահեր և տնային ու կենցաղային գործածության այլ առարկաներ։

Իր ժամանակի ռազմական տեխնիկայի բարձր մակարդակի վրա էր գտնվում զինագործությունը։ Զենքերի արտադրությունը հիմնականում կենտրոնացված էր քաղաքներում ու ամրոցներում գտնվող արքունի մեծ արհեստանոցներում կամ «գործոց տներում», որտեղ աշխատում էին նաև ստրուկներ։ Զինագործական արհեստա-

նոցներում պատրաստում էին սրեր, թրեր, դաշույններ, պատերազմական կացիններ, նիզակներ, նետ ու աղեղներ, վահաններ, զրահներ, սաղավարտներ, ռազմակառքեր, հավանաբար նաև պարիսպներ քանդող մեքենաներ։

Այս դարաշրջանում գործածվող մետաղների մեջ ամենամասսայականը դառնում է երկաթը։ Աշխատանքային գործիքները և հարձակողական կտրող զենքերը գրեթե բացառապես պատրաստվում էին երկաթից, իսկ մի մասն էլ պղնձից։

Զգալի չափով զարգացած էր նաև ոսկերչությունը։ Ոսկերիչ վարպետները արքունիքի և ստրկատիրական ավագանու համար ոսկուց ու արծաթից պատրաստում էին ականակուռ և քանդակազարդ թագեր, խուլրեր, մանյակներ, գոտիներ, օղեր, մատանիներ, ճարմանդներ, գեղազարդված բաժակներ, բաժակակալներ, թասեր, ճաշասեղանի սպասեղեններ և այլ իրեր։ Հասարակ քաղաքացիների զարդարանքի առարկաները մեծ մասամբ պատրաստվել են արծաթից, բրոնզից ու պղնձից, իսկ քիչ դեպքերում՝ նաև ոսկուց։ Դառնիի և Վաղարշապատի I—II դարերին պատկանող հասարակ քաղաքացիների դամբարաններից գտնվել են ոսկու հատիկներից շինված ու քարեր ունեցող, ինչպես և արծաթե օղեր, արծաթից, բրոնզից և պղնձից պատրաստված մատանիներ, ճարմանդներ, ապարանջաններ և զարդարանքի այլ առարկաներ։ Այս իրերից մի քանիսի վրա կան նաև քանդակներ ու նախշեր։ Հետաքրքրություն են ներկայացնում նաև Դառնիի դամբարաններից հայտնաբերված արծաթադույն մետաղե հայելիները։

Նախորդ դարաշրջանի հետ համեմատած՝ խոշոր առաջադիմություն էր տեղի ունեցել նաև մանածագործության և նրա հետ կապված արհեստների բնագավառում։ Բացի բրդից, վուշից, կանեփից և բամբակից պատրաստվող սովորական կտորեղեններից, Հայաստանում արտադրվում էին նաև «դիպակ», «սնդուս», «ծիրանի» և «բեհեղ» կոչվող մետաքսե և բամբակե նուրբ ու ծաղկավոր կերպասներ։ Սրանից էին կարվում թագավորական և ստրկատիրական ավագանու տան անդամների զգեստները, որոնք հաճախ դեղազարդվում էին ոսկե, արծաթե թելերով ու թանկարժեք քարերով։ Հայաստանում արտադրվում էին նաև դորգեր, կարպետներ, բազմոցների ու բարձերի երեսներ և այլն։

Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում նոր առաջացած և բարձր աստիճանի հասած արհեստագործության ճյուղերից էր ապակեգործությունը։ Դառնիի և Վաղարշապատի նշված դամբարաններից հայտնաբերվել են դեղնավուն, կապտավուն, մուգ կարմրա-

վուն, մանուշակագույն, արծաթագույն և այլ գույներով բազմաթիվ սրվակներ, փոքր շշեր, ջրամաններ, թասիկներ, ինչպես և հախճապակու և սովորական ապակու բեկորներ։ Այս իրերից շատերը իրենց վրա ունեն նախշեր ու զարդարանքներ։

Զարգացած էին նաև կավագործությունը, փայտամշակությունը, քարամշակությունը, կաշեգործությունը և նրանց հետ կապված արհեստները։

Ներքին և արտաքին առևտուրը

Քաղաքների առաջացման ու զարգացման, արհեստները քաղաքներում կենտրոնանալուն զուգընթաց աճում և ընդլայնվում է ներքին շուկան։ Եթե առաջ արհեստավորները գրեթե բացառապես արտադրում էին պատվիրատուի պատվերով և նրա նյութով, ապա այժմ նրանք իրենց արտադրանքի զգալի մասը սկսում են արտադրել շուկայի, անծանոթ սպառողի համար։

Թեև քաղաքացիներից շատերը միաժամանակ զբաղվում էին գյուղատնտեսությամբ, բայց նրանց արտադրանքը չէր կարող բավարարել քաղաքային բազմահազար բնակչության և արհեստագործական մի շարք ճյուղերի գյուղատնտեսական մթերքների ու հումքի նկատմամբ ունեցած պահանջները։ Այս պատճառով էլ հատկապես քաղաքամերձ գյուղական շրջանները իրենց արտադրանքի մի մասը դուրս են բերում շուկա։

Ներքին առևտրի հետ միաժամանակ զարգանում է նաև արտաքին առևտուրը։ Դեռևս Երվանդունիների ժամանակ ընդգրկվելով հելլենիստական երկրների տնտեսական հարաբերությունների ոլորտի մեջ, Հայաստանը առևտրական կապեր է ստեղծում Միջագետքի, Ասորիքի, Պարթևստանի, Պոնտոսի, Կապադովկիայի, Ատրպատականի, Վրաստանի և այլ երկրների հետ։

Տնտեսական կապերի ստեղծման և արտաքին առևտրի զարգացման մեջ կարևոր դեր է կատարում միջազգային տարանցիկ առևտուրը, որի երկու հիմնական մայրուղիները անցնում էին Հայաստանի վրայով։

Վաղ հելլենիզմի շրջանից սկսած կարևոր նշանակություն է ստանում Միջագետքից դեպի Կոլխիդա գնացող ճանապարհը։ Դուրս գալով Սելևկիա քաղաքից, այս ճանապարհը Մարաստանի, Ատրպատականի և Արարատյան դաշտի վրայով գնում էր Կոլխիդա, իսկ այնտեղից էլ՝ Բոսպոր (Ղրիմ) և մերձազովյան շրջանները։ Այս հիմնական մայրուղուն էին միանում նաև էկբատան քաղաքում՝ Հնդկաստանից ու Պարսից ծոցից, իսկ Ատրպատականի Դանձակ մայրաքաղաքում՝ Չինաստանից, Հեռավոր Արևելքից, Բակտրիայից

և Քուշանաց թագավորությունից եկող ճանապարհները։

Արարատյան դաշտում այս ճանապարհի դլխավոր հանգուցային կայանն էր սկզբում Արմավիրը, իսկ հետագայում՝ Արտաշատը։ II դարում (մ. թ. ա.) Արտաշատը առանձին ճանապարհներով ևս, Վրաստանի մայրաքաղաք Արմազի—Մցխեթի վրայով կապված էր Կոլխիդայի, իսկ Փոքր Հայքի վրայով՝ Սև ծովի պոնտական նավահանդիստների և Փոքր Ասիայի հետ։

Հելլենիզմի դարաշրջանում ևս միջազգային առևտրի մեջ բացառիկ դեր է կատարում «Արքայական ճանապարհը»։

Տիգրան II-ի ժամանակ Հայաստանի տնտեսական-առևտրական կապերը հելլենիստական աշխարհի հետ ավելի են ուժեղանում։ Հայաստանը կարճ ժամանակով իր վերահսկողության տակ է առնում ոչ միայն միջազգային տարանցիկ առևտրի մայրուղիները, այլև Եփրատի հիմնական՝ Զևգմայի, Սամոսատի և Տոմիսայի գետանցները, որոնք մաքսային մեծ եկամուտ էին բերում։

Ռազմական ու տնտեսական նկատառումներով Տիգրան II-ը կառուցում է նաև Տիգրանակերտից Արտաշատ գնացող «Արքունի ճանապարհը»։

Առևտրական ճանապարհներով Հնդկաստանից Հայաստան էին ներմուծվում համեմունքներ, թանկագին քարեր, փղոսկր, Չինաստանից՝ հում մետաքս և մետաքսե կտորեղեն, Ասորիքից՝ նուրբ ապակյա ամաններ, գեղարվեստական իրեր և պերճանքի առարկաներ, մերձազովյան շրջանից՝ թանկագին մորթիներ և այլն։ Հայաստանը իր գյուղատնտեսական և արհեստագործական արտադրանքներով նույնպես ակտիվ կերպով մասնակցում էր միջազգային առևտրին։ Հայաստանից տարբեր երկրներ էին արտահանվում բուսական ու հանքային ներկեր, «որդան կարմիր», գինի, դեղաբույսեր, զանազան քարեր, ձիեր, ջորիներ, մետաղներ և այլն։

Ներքին ու արտաքին առևտրի զարգացման հետևանքով Հայաստանում մեծանում ու ուժեղանում է նաև դրամական շրջանառությունը։ Վաղ հելլենիզմի դարաշրջանից սկսած՝ գրեթե ամբողջ Հայաստանում հատված դրամը դառնում է վաճառվող ապրանքների ընդհանուր արժեքային, շրջանառության և հարստության կուտակման միջոց։ Բացի Սուիքից, սեփական դրամներ հատելու անհրաժեշտություն է առաջանում նաև Մեծ Հայքում։ Մեզ են հասել Տիգրան II-ի, Արտավազդ II-ի, Արտաշես II-ի, Տիգրան III-ի, Տիգրան IV-ի և Երատո թագուհու՝ իրենց պատկերներով կտրած դրամները։ Հայաստանում հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ սելևկյան, պարթևական, պոնտական, հռոմեական և այլ դրամներ։

Չնայած ապրանքափոխանակության, առևտրի և դրամական շրջանառության զգալի չափով զարգանալուն, հելլենիզմի դարաշրջանում ևս Հայաստանի տնտեսությունը նատուրալ և փակ բնույթ ուներ։

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հասարակարգը և իշխող դասակարգը

Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում տիրում էին ստրկատիրական կարգեր։ Սակայն այդ կարգերը նման չէին հին Հունաստանում և հին Հռոմում գոյություն ունեցող կլասիկ ստրկատիրական կարգերին։ Հայկական հասարակությունը իր բնույթով արևելյան հելլենիստական տիպի, բայց համեմատաբար ավելի թույլ զարգացած ստրկատիրական հասարակություն էր։ Երկրի տարբեր շրջանները հասարակական-տնտեսական զարգացման տեսակետից գտնվում էին տարբեր աստիճանների վրա։ Թեև քաղաքներում, քաղաքատիպ ավաններում, ամրոցներում և քաղաքամերձ շրջաններում տիրում էին ստրկատիրական հարաբերությունները, սակայն գյուղական շրջաններում տիրապետող էր գյուղական համայնքը։ Մայրամասային-և լեռնային շրջաններում դեռևս ուժեղ էին նաև տոհմա-ցեղային հարաբերությունների մնացուկները և ցեղային կապերը։ Ի տարբերություն կլասիկ ստրկատիրական երկրների, Հայաստանում ստրկական աշխատանքը ոչ միայն չի կարողանում ազատ քաղաքացու աշխատանքը դուրս մղել արտադրության բոլոր ճյուղերից և փոխարինել նրան, այլև ստրուկները չեն կազմում բնակչության ճնշող մեծամասնությունը։

Իշխող դասակարգը ստրկատերերի դասակարգն էր, որի նյութական բարեկեցությունն ու հարստությունը պայմանավորված էր ստրուկների և գյուղական համայնքի անդամների աշխատանքի շահագործմամբ։

Երկրում իշխանությունը գտնվում էր թագավորական աղգատոհմի անդամների և հայկական տարբեր տոհմերից ծագող ռազմա-ստրկատիրական ավագանու ձեռքում։ Սրանցից էին նշանակվում պալատական և պետական բարձրաստիճան պաշտոնյաները, նահանգների ու գավառների կառավարիչները, զինվորական հրամանատարները։ Իշխող դասակարգի անբաժանելի մասն էին կազմում նաև քրմական դասը, միջին ու ստորին պետական պաշտոնյաները, քաղաքների և գյուղական վայրերի մեծ ու փոքր ստրկատերերը։

Երկրի քաղաքական ու ռազմական կյանքում կարևոր դեր էին

կատարում նաև ծայրամասային-ու լեռնային շրջանների ցեղային առաջնորդները։ Սրանք ոչ միայն իրենց երկրամասերի կիսանկախ իշխաններն էին, այլև ցեղային սկզբունքով կազմակերպված իրենց զորամասերի հրամանատարները։

Պետական և մասնավոր ստրկատիրական տնտեսություններ

Ինչպես Արևելքի բոլոր երկրներում, նույնպես և Հայաստանում հողի սեփականության գերագույն իրավունքը պատկանում էր պետությանը, թեև հելլենիզմի դարաշրջանում այդ իրավունքը զգալի չափով խախտվել էր և զուտ իրավական ու ձևական բնույթ էր ստացել։ Երկրի բոլոր հողերը կոչվում էին «արքունի երկիր»։ Պետությանը կամ թագավորին էին պատկանում նաև երկրագործության համար կենսական նշանակություն ունեցող արհեստական ոռոգման սիստեմները և ջրօգտագործման իրավունքը։ Բացի հողային ընդարձակ տիրություններից, պետությունը Հայաստանի գյուղական գրեթե բոլոր շրջաններում ուներ նաև ստրկական աշխատանքի վրա հիմնված մեծ թվով տնտեսություններ, իսկ քաղաքներում ու ամրոցներում՝ խոշոր արհեստանոցներ, որոնք կոչվում էին «գործող տներ»։ Պետության մենաշնորհային սեփականությունն էին նաև երկրի բոլոր հանքերը, լճերի ափերին գտնվող «արքունի ձկնորսարանները»։

Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում հողի պետական սեփականության կողքին առաջանում և որոշ չափով զարգանում է նաև հողի մասնավոր ու ժառանգական ստրկատիրական սեփականությունը։ Այս տեսակետից խիստ ուշագրավ են Արմավիրում հայտնաբերված հունարեն արձանագրություններից երկուսը, որոնց մեջ արդեն դատապարտվում է մոտիկ ազգականների միջև ժառանգական գույքի անարդարացի բաժանումը և Արտեմիս-Անահիտ աստվածուհու անունից պահանջվում է ժառանգական գույքի և հողային կալվածքների բաժանումն ու սահմանազատումը կատարել արդարացի կերպով։

Խորենացին տարբեր տեղերով տեղեկացնում է, որ հայ թագավորները և ավագանու ներկայացուցիչները գրսից բերված գերի ստրուկներին բնակեցնելու միջոցով հիմնում էին նոր ավաններ և գյուղեր, որոնք կոչվում էին «դաստակերտ» կամ «ձեռակերտ»։ Առաջանում են նաև անմիջականորեն ստրկատերերի կողմից վարվող և ստրկական աշխատանքի վրա հիմնված տնտեսություններ, որոնք կոչվում էին «ագարակ»։

Իրրև կանոն դաստակերտները և ագարակները հիմնվում էին գյուղական համայնքներին չպատկանող ազատ հողերի վրա։ Սա-

կայն ստրկատերերը, հաճախ խախտելով այս կարգը, սկսում են բռնադրավել գյուղական համայնքներին պատկանող հողերը և նրանց հաշվին ընդարձակել իրենց դաստակերտների ու ագարակների սահմանները։ Այս երևույթը արդեն II դարի առաջին կեսում (մ. թ. ա.) իսկ դժգոհություններ է առաջ բերում գյուղական համայնքների ներսում։ Արտաշես I-ը ստիպված է լինում հողերի վերաբաժանում կատարել և գյուղական համայնքներին պատկանող ու ստրկատիրական տնտեսությունների միջև իր անունով հատուկ սահմանաքարեր դնել, որոնք կոչվում էին «Արտաշիսական»։

Սկզբնաղբյուրների վկայություններից երևում է, որ թե՛ ագարակները և թե՛ դաստակերտները ստրկատիրական կալվածքներ էին։ Սակայն ագարակները զուտ ստրկատիրական տնտեսություններ էին, իսկ դաստակերտները գյուղերի ձևով կառուցված ստրկատիրական տիրույթներ։

Քրմական դասը և տաճարական տընտեսությունը

Քրմական դասը իշխող ստրկատիրական դասակարգի անբաժանելի մասն էր։ Նա կարևոր դեր էր կատարում երկրի կրոնական ու քաղաքական կյանքում և խոշոր ազդեցություն ուներ բնակչության դիտակցության վրա։

Երկրում թագավորից հետո երկրորդ դեմքը քրմապետն էր։ Այդ պատճառով էլ, ինչպես Ուրարտուում և Արևելքի մյուս երկրներում, նույնպես և հին Հայաստանում քրմապետ էր նշանակվում թագավորի հարազատներից կամ որդիներից մեկը։ Քրմապետը երկրի հոգևոր պետն էր, թագավորի առաջին խորհրդականը։ Նրա ձեռքում էր գտնվում գերագույն դատավորի պաշտոնը։

Բացի քրմապետի պաշտոնից, մնացած ամբողջ քրմությունը տոհմա-ժառանգական ու կաստայական բնույթ ուներ։ Խորենացին վկայում է, որ քրմական բարձր պաշտոնները ժառանգաբար պատկանում էին հայկական հին ազգատոհմերից մեկին՝ Վահունիներին։

Հայաստանի հեթանոսական տաճարները իրենց շրջակայքում ունեին ավաններ, գյուղեր, դաստակերտներ, ագարակներ, արոտավայրեր, «գործող տներ» և այլն։ Երիզա ավանում գտնվող Անահիտ աստվածուհու տաճարի հողային տիրույթները և նրա քաղաքական կշիռը այնքան մեծ էին, որ նույնիսկ Եկեղյաց գավառը նրա անունով կոչվում էր նաև Անահտական։ Զենոբ Գլակը վկայում է, որ Տարոն գավառի մեհյաններից մեկը ուներ 12 մեծամեծ ավաններ և դաստակերտներ։ Նման բնակավայրերի հողի սեփականությունը պատկանում էր տաճարներին և տնօրինվում նրանց կողմից։

Ինչպես Փոքր Ասիայում և Իրանում, նույնպես և Հայաստանում

հեթանոսական տաճարները իրենց պատկանող բնակավայրերի հետ միասին քաղաքական-տնտեսական ինքնուրույն միավորումներ կամ համայնքներ էին։ Այդ միավորումները հելլենիստական քաղաքների կամ պոլիսների նման ունեին ներքին ինքնավարություն և որոշ արտոնություններ, որոնցից օգտվում էին միմիայն տվյալ համայնքի քրմերը, ստրկատերերը, արտոնյալ և ազատ բնակչությունը։ Տաճարները ունեին նաև իրենց զորքը, որը կազմված էր տվյալ համայնքի մեջ մտնող ավանների և գյուղերի ազատ բնակչությունից։

Տաճարական հողերը գյուղական համայնքի, վարձակալման և այլ հիմունքներով մշակող ազատ համայնականները, վարձակալները, կիսակախյալ և կախյալ գյուղացիները տաճարներին վճարում էին հարկեր ու տուրքեր, ինչպես և նրանց օգտին կատարում էին պարհակներ։ Անմիջականորեն տաճարների կողմից շահագործվող տնտեսություններում, «գործոց տներում», տաճարներում և քրմերի տնային տնտեսության մեջ աշխատում էին ստրուկ-սպասավորները, որոնց հույն մատենագիրները անվանում են հիերոդուլներ։

Մեհյանները հարստանում էին նաև թագավորների, ստրկատերերի ու հասարակ ժողովրդի նվիրատվություններով։ Ագաթանգեղոսը, խոսելով Տարոն գավառի Աշտիշատ ավանում գտնվող Վահագն աստծու մեհյանի մասին, վկայում է, որ սա մեծագանձ էր, լի էր ոսկով, արծաթով և թագավորների տված բազմաթիվ նվերներով։ Պատերազմների միջոցով ձեռք բերված ստրուկների ու ավարի մի մասը ևս բաժին էր հանվում տաճարներին։

Անձնական ունեցվածքներ, հարստություններ և ստրուկներ ունեին նաև քրմապետներն ու բարձրաստիճան քրմերը։ Խորենացին վկայում է, որ Բագարանի գրավման ժամանակ Արտաշեսի դայակ ու զորավար Սմբատի ձեռքն են ընկնում ոչ միայն քրմապետ Երվազի անձնական գանձերը, այլև նրա 500 ստրուկները, որոնց Սմբատը տանում բնակեցնում է Մասիս լեռան թիկունքում՝ իր նոր կառուցած նույնանուն Բագարան դաստակերտում։

Քաղաքները և քաղաքային բնակչությունը

Արտադրողական ուժերի ընդհանուր վերելքի, առևտրի ու դրամական շրջանառության զարգացման և ստրկատիրական հարաբերությունների հետագա խորացման իրրև բնական հետևանք՝ հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում առաջանում և զարգանում են քաղաքները։ Քաղաքների զարգացմանը որոշ չափով նպաստում է նաև միջազգային տարանցիկ առևտուրը։ Հայաստանի տերիտորիայի վրայով անց-

նող հյուսիսային ճանապարհի վրա առաջանում են Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Նախճավան ու Վաղարշապատ, հարավային ճանապարհի վրա՝ Արշամաշատ, Արկաթիակերտ ու Տիգրանակերտ, իսկ Տիգրան II-ի կառուցած «Արքունի ճանապարհի» վրա՝ Վան, Զարեհավան, Զարիշատ և Մծուրն խոշոր քաղաքները։ Նույն այս ճանապարհների և նրանց ճյուղավորումների վրա առաջանում են նաև մոտ երկու տասնյակ քաղաքատիպ ավաններ։

Մեծ թվով քաղաքների առաջացումն ու զարգացումը ստրկատիրական կարգերին հատուկ ու բնորոշ երևույթներից էր։ Քաղաքները ոչ միայն արհեստագործության, առևտրի և հայկական հելլենիստական մշակույթի, այլև ստրկատիրության հիմնական կենտրոններ էին։ «Դասական հնության պատմությունը,—ասում է Կ. Մարքսը,—դա քաղաքների պատմությունն է, բայց քաղաքների պատմությունը, հիմնված հողային սեփականության և երկրագործության վրա»։

Ինչպես Արևելքի հելլենիստական մյուս երկրներում, նույնպես և Հայաստանում քաղաքները մեծ մասամբ հիմնադրվում և կառուցվում էին թագավորների կողմից։ Այդ պատճառով էլ նրանք ոչ միայն կոչվում էին իրենց հիմնադիրների անունով, այլև համարվում էին պետության սեփականությունը և արքունի դաստակերտներ էին։ Հայ թագավորները հատուկ ուշադրություն էին դարձնում քաղաքների զարգացմանը, որովհետև նրանք խոշոր եկամուտներ էին տալիս պետական գանձարանին և կենտրոնական իշխանության համար ամուր հենարան էին։

Ստրկատիրական Հայաստանի քաղաքները ևս հիմնված էին հողային սեփականության և երկրագործության վրա։ Ավելին, այստեղ քաղաքները շատ ավելի ուժեղ կերպով էին կապված գյուղի հետ, քան հին Հունաստանի ու հին Հռոմի քաղաքները։ Քաղաքային բնակչությունը արհեստագործության, առևտրի կամ վաշխառության հետ միաժամանակ զբաղվում էր նաև երկրագործությամբ։ Յուրաքանչյուր քաղաք իր շրջակայքում ուներ թագավորի կողմից հատկացված ընդարձակ հողային տարածություններ, որոնք հաճախ հավասար էին մի ամբողջ գավառի։ Վան քաղաքին պատկանող տերիտորիան կազմում էր մի առանձին գավառ և այդ քաղաքի ուրարտական շրջանի անունով կոչվում էր Տոսպ, Նախճավան քաղաքինը կրում էր նույն քաղաքի անունը՝ Նախճավան, իսկ Վաղարշապատ քաղաքինը կոչվում էր Քաղաքաքաղաշտ։ Քաղաքներին պատկանող հողերը բաժանվում էին ազատ քաղաքացիների միջև։ Արհեստավորները և հասարակ քաղաքացիները իրենց հողաբաժինները մշա-

կում էին իրենք, իսկ ստրկատերերը և հարուստ քաղաքացիները՝ ստրուկների, կախյալ գյուղացիների ու վարձկան մշակների միջոցով։

Հայաստանի քաղաքներն իրենց կառուցվածքով նման էին Արևելքի հելլենիստական քաղաքներին։ Նրանք մի կողմից ենթարկվում էին կենտրոնական իշխանությանը և համարվում էին արքունի դաստակերտներ, իսկ մյուս կողմից՝ ունեին ներքին ինքնավարություն։

Քաղաքային ինքնավարության բարձրագույն մարմինը քաղաքի խորհուրդն էր, որի անդամները ընտրվում էին ազատ քաղաքացիների կողմից։ Քաղաքային ինքնավարության մարմիններն էին կառավարում ու կարգավորում քաղաքի ներքին վարչական, դատական, տնտեսական ու մշակութային կյանքը։

Քաղաքները իրոք կանոն ենթարկվում էին միայն կենտրոնական իշխանությանը կամ թագավորին։ Յուրաքանչյուր քաղաք ուներ թագավորի կողմից նշանակված իր կառավարիչը, որը կոչվում էր «շահապ» կամ «վերակացու քաղաքի»։ Սրա հիմնական պարտականություններն էին՝ հետևել ու հսկել թագավորի կարգադրությունների պետական պարտավորությունների կատարմանը, հարկերի հավաքմանը և այլն։

Յուրաքանչյուր քաղաք ուներ նաև իր սեփական զորամասը։ Խաղաղ ժամանակ, բացի մայրաքաղաքից, մյուս քաղաքներում թագավորական զորքերը մշտական մնալու իրավունք չունեին։ Միայն պատերազմի կամ կենտրոնական իշխանության դեմ այս կամ այն քաղաքի ապստամբության դեպքում թագավորը կարող էր իր զորքերը մտցնել քաղաք։

Հայաստանի քաղաքները ունեին խայտաբղետ բնակչություն։ Հայերից բացի քաղաքներում ապրում էին նաև հրեաներ, ասորիներ և հույներ, որոնց Տիգրան II-ն ու Արտավազդ II-ը իրենց արշավանքների ժամանակ բերել էին Արևելքի տարբեր երկրներից։

Խոշոր քաղաքներում հատկապես մեծ էր հրեաների թիվը։ Ուշագրավ է, որ հայերենում առևտրի հետ կապված շատ բառեր, ինչպես, օրինակ՝ «շուկա», «խանութ», «հաշիվ», «դաղուք» և այլն ունեն սեմական ծագում և փոխառություններ են ասորերենից։

Քաղաքային բնակչության էթնիկական-կրոնական տարբեր խմբերն ապրում էին համայնքներով՝ քաղաքի առանձին թաղամասերում, որոնք ունեին իրենց ներքին վարչական մարմինները, դատարանները և մշակութային, կրոնական հիմնարկները։ Քրեական ծանր հանցագործությունները և տարբեր համայնքների ան-

դամների միջև առաջացած դատական գործերը քննվում էին համաքաղաքային դատարաններում։

Քաղաքային բնակչության իշխող վերնախավի մեջ էին մտնում ստրկատերերը, խոշոր առևտրականներն ու վաշխառուները։ Սրանք ունեին մեծ արհեստանոցներ կամ «գործոց տներ», ագարակներ, դաստակերտներ, խանութներ և տներ։ Սրանց ձեռքում էր գտնվում քաղաքային ինքնավարության վարչական ու դատական մարմինների ղեկավարությունը։

Քաղաքներում մեծ թիվ էին կազմում արհեստավորները, որոնք աշխատում էին իրենց սեփական մանր արհեստանոցներում կամ արքունի ու մասնավոր ստրկատիրական «գործոց տներում»։ Քաղաքներում կային նաև մեծ թվով հողագործներ՝ օրավարձով աշխատողներ և լյումպեն պրոլետարներ։ Վերևում հիշատակված սոցիալական բոլոր խավերը կազմում էին քաղաքի ազատ բնակչությունը և կոչվում էին «քաղաքացիներ»։

Բացի անձնական ազատությունից և քաղաքային ինքնավարության իրավունքից, ազատ քաղաքացիները օգտվում էին նաև հարկային, պարհակային զինվորական և այլ արտոնություններից, որոնք շնորհվում էին թագավորների կողմից։ Սրանք ենթարկվում էին ոչ թե համապետական, այլ քաղաքային ինքնավարության օրենքներին, թեև նրանք միաժամանակ հարկատու էին կենտրոնական իշխանությանը։ Քաղաքացիները իրենց իրավական ու սոցիալական դրությամբ ավելի բարձր էին կանգնած, քան ազատ գյուղացիները կամ համայնականները։ Խորենացին վկայում է, որ Հայոց Վաղարշակ թագավորը «հրամայեց, որպեսզի քաղաքացիների հարգն ու պատիվը ավելի լինի, քան գյուղացիներինը, և որ գյուղացիները պատվեն քաղաքացիներին, ինչպես իշխաններին»։

Քաղաքների ազատազրկված, իրավազուրկ և ընչազուրկ բնակիչները ստրուկներն էին։

Գյուղական համայնքը

Հելլենիզմի դարաշրջանում ևս Հայաստանի ազատ բնակչության ճնշող մեծամասնությունը ապրում էր շեներում, գյուղերում ու ավաններում և միավորված էր գյուղական համայնքներում։

Գյուղական համայնքի հիմքը և նրա տնտեսական միավորը հանդիսացող գյուղացիական ընտանիքը կոչվում էր «երդ» կամ «ծուխ», իսկ համայնքի անդամը կամ համայնականը՝ «շինական»։ Յուրաքանչյուր գյուղական համայնք ուներ իր որոշակի տերիտո-

րիան, որի մեջ մտնում էին բնակատեղը, վարելահողերը, արոտավայրերը, գետերն ու առուները։

Գյուղական համայնքում տները, գոմերը, բակերը, տնամերձ հողամասերը, անասունները, աշխատանքային գործիքները և տնային գործածության իրերը ընտանիքների, այսինքն՝ երդերի կամ աղատ շինականների մասնավոր, ժառանգական սեփականությունն էին։

Թեև գյուղական համայնքների հողերի գերագույն սեփականության իրավունքը պատկանում էր պետությանը, սակայն այդ իրավունքը մեծ մասամբ ձևական նշանակություն ուներ, քանի որ գյուղական համայնքները շարունակում էին իրենց համարել հողերի կոլեկտիվ սեփականությունը, և նրանց ձեռքում էր գտնվում հողերի օգտագործման ու վերաբաժանման տնօրինումը։ Ցուրաքանչյուր համայնքի սահմանների մեջ գտնվող արոտավայրերը, անտառները, լճերը, գետերը համայնքի անդամների կողմից օգտագործվում էին համահավասար իրավունքով և ըստ կարիքի։ Հակառակ սրան, վարելահողը պարբերաբար, ըստ ընտանիքի անդամների թվի, վերաբաժանվում էր անհատական օգտագործման համար, բայց առանց օտարելու և վաճառելու իրավունքի։ Շինականը իրեն բաժին հասած վարելահողը, որը կոչվում էր «հող երդոյ», հիմնականում մշակում էր իր ընտանիքի անդամների ուժերով և սեփական արտադրության միջոցներով, արդյունքն էլ յուրացնում էր մասնավոր կարգով։ Շինականները, բացի հողից, արտադրության միջոցների մասնավոր սեփականության հիմքի վրա հիմնված անհատական տնտեսություն վարող ազատ և մանր արտադրողներ էին։

Գյուղական համայնքի գերագույն մարմինը համայնքի ընդհանուր ժողովն էր, որը որոշում էր հողաբաշխման, ջրօգտագործման և համայնքի ներքին ու արտաքին կյանքին վերաբերող կարևոր հարցերը։ Ընդհանուր ժողովը համայնքի ընթացիկ գործերը վարելու, վեճերը կարգավորելու համար ընտրում էր նաև ավագների խորհուրդ, գեղջավագ կամ գյուղապետ, իսկ ջրօգտագործումը կանոնավորելու համար՝ ջրապետ կամ ջրաբաշխ։

Շինականները իրենց օգտագործած հողաբաժինների համար բնամթերային և դրամական հարկեր ու տուրքեր էին վճարում պետությանը, կատարում էին շինարարական, փոխադրական և այլ պարհակներ, որոնք կոչվում էին «ամարդահարկ», «հարկ բեռնակրաց», «հարկ քարահատաց», «խաշար» և այլն։ Պատերազմի ժամանակ նրանք կատարում էին նաև զինվորական ծառայություն։

Գյուղական համայնքում գոյություն ունեցող արտադրության

մասնավոր սեփականատիրական բնույթը և արտադրված արդյունքի մասնավոր յուրացումը համայնքի երդերի կամ ծխերի միջև անխուսափելիորեն առաջ է բերում տնտեսական, ունեցվածքային տարբերություն։ Դեռևս Քսենոֆոնի ժամանակ Հայաստանում գյուղական համայնքի ծխերի միջև նկատվող տնտեսական, գույքային տարբերությունը հելլենիզմի դարաշրջանում ավելի է խորանում։ Համայնքի ներսում առաջանում են մի կողմից տնտեսապես հարուստ, իսկ մյուս կողմից՝ աղքատ ու չքավոր ընտանիքներ։

Աղքատ շինականների մի մասը աստիճանաբար ընչազրկվում և հողազրկվում է։ Դրան զգալի չափով նպաստում է քաղաքներում ու գյուղերում զարգացող վաշխառությունը։ Տանը պարտքերի տակ ընկած ազատ համայնականը հարկադրված է լինում ոչ միայն իր շարժական գույքը, այլև իր հողաբաժնի օգտագործման իրավունքը, բայց ոչ հողը, վաճառել կամ գրավ դնել պարտատիրոջ կամ հարուստ համագյուղացու մոտ։ Այս ճանապարհով հողազրկված շինականը դառնում է հարուստ գյուղացիների վարձկան մշակը։

Սակայն գյուղական համայնքի առկայության պայմաններում ունևոր գյուղացու շահագործման հնարավորությունները սահմանափակ էին, որովհետև նա չէր կարող անընդհատ ընդարձակել իր հողային տարածությունները և դրա հիման վրա շահագործել մեծ թվով վարձկան մշակների և ստրուկների աշխատանքը։ Նա չէր կարող նաև դուրս գալ գյուղական համայնքից, որովհետև այդ դեպքում կզրկվեր համայնքի տնօրինության տակ գտնվող հողից ու ջրից օգտվելու իրավունքից։ Համայնքի կաշկանդիչ այս պայմաններից դուրս գալու նպատակով տնտեսապես հարուստ ու քաղաքականապես ազդեցիկ ընտանիքները աստիճանաբար ձգտում են մասնավոր սեփականության վերածել համայնքին պատկանող կամ նրա տնօրինության տակ գտնվող վարելահողը, արոտավայրերն ու ջրանցքները։ Մի կողմից՝ հարուստ գյուղացիների այս ձգտման, իսկ մյուս կողմից՝ չքավոր համայնականների մի մասի ընչազրկման ու հողազրկման հետևանքով ոչ միայն սրվում է պայքարը համայնքի ներսում, այլև գյուղական համայնքը սկսում է աստիճանաբար քայքայվել։

Սակայն, ինչպես Արևելքի մյուս երկրներում, նույնպես և Հայաստանում ստրկատիրական ու ապրանքա-դրամական հարաբերությունների համեմատաբար թույլ զարգացման, համայնքի ներսում առաջացած անբավարար շերտավորման և հողի պետական սեփականության հետևանքով գյուղական համայնքների քայքայումը տեղի էր ունենում շատ դանդաղ կերպով։ Հելլենիզմի դարաշրջանում

չանում ևս գյուղական համայնքները դեռ զգալի չափով ուժեղ էին և համեմատաբար կայուն։

Կ. Մարքսը գյուղական կամ երկրագործական համայնքը համարում է «արխաիկ հասարակական ֆորմացիայի նոր տիպը»։ Գյուղական համայնքում արտադրողական ուժերի զարգացումը տեղի էր ունենում շատ դանդաղ։ Նրա ներսում գերիշխում էր ոչ թե ընդլայնված, այլ պարզ վերարտադրությունը։ Գյուղական համայնքը իր գոյությամբ ոչ միայն արգելակում էր երկրի արտադրողական ուժերի հետագա վերելքը, այլև Արևելքի, այդ թվում և Հայաստանի, տնտեսական հետամնացության, դանդաղաշարժության պատճառն էր։ Արևելյան դեսպոտիզմը ևս, ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, հիմնված էր համայնական հողատիրության վրա։

Ստրուկները

II—I դարերում (մ. թ. ա.) Հայաստանում ստրկատիրությունը տարածված և ընդհանուր երևույթ է դառնում։ Հնում գոյություն ունեցող պետական և տաճարական ստրկատիրության կողքին առաջանում ու զարգանում է նաև մասնավոր ստրկատիրությունը։

Ստրկության հիմնական աղբյուրը պատերազմն էր։ Հայկական ու հոռեա-հուռիական պատմիչները վկայում են, որ Արտաշես I-ը, Տիգրան II-ը և Արտավազդ II-ը իրենց կատարած նվաճումների և արշավանքների ժամանակ տարբեր երկրներից Հայաստան են բերել ու ստրկացրել հարյուր հազարավոր գերիներ։ Ըստ Ապպիանոսի վկայության՝ Տիգրան II-ը միայն Կապադովկիայից Հայաստան է բերել մոտ 300000 մարդ։ Մշակված և սահմանված կարգի համաձայն՝ ռազմական ավարը և գերիները բաշխվում էին թագավորի, ստրկատիրական ավագանու ներկայացուցիչների և տաճարների միջև։ Պատերազմի միջոցով ձեռք բերված ստրուկները կոչվում էին «օտարածին ստրուկներ»։

Ստրկության երկրորդ կարևոր աղբյուրը ստրուկների բնական աճն էր։ Այս կամ այն ստրկատիրոջ տանը ստրուկներից ծնված երեխաները նույնպես համարվում էին նրա ստրուկները։ Այս կարգի ստրուկները, ի տարբերություն գերեվարությամբ ձեռք բերված ստրուկների, կոչվում էին «ընդոծին»։

Ստրկության երրորդ կարևոր աղբյուրը պարտային ստրկությունն էր։ Հայաստանի ստորին դասերին պատկանող ազատ քաղաքացիները՝ շինականները և ռամիկները, հաճախ ընկնելով ծանր պարտքերի տակ և չկարողանալով վճարել դրանք, գոյություն ունեցող օրենքի համաձայն, պարտատիրոջ կողմից ստրկացվում և վաճառվում էին։ Անվճարունակ շինականներն ու ռամիկները հա-

Հաճախ նաև իրենք էին ստիպված լինում իրենց երեխաներին ստրկության վաճառել։ Գնման ու վաճառքի միջոցով ձեռք բերված ստրուկները կոչվում էին «արծաթագին» կամ «դրամագին»։ Շինականները և ռամիկները ստրկացվում էին նաև պետական ու կրոնական ծանրը հանցանքներ գործելու դեպքում։

Ինչպես այլ երկրներում, նույնպես և Հայաստանում ստրուկներն ամբողջովին ընչազրկված, ազատազրկված ու իրավազրկված էին։ Նրանք համարվում էին իրենց տիրոջ սեփականությունը։ Ստրկատերը կարող էր ստրուկին ոչ միայն նվիրաբերել, վաճառել, ծծել, բանտարկել և խեղանդամ դարձնել, այլև սպանել։ Ստրուկը կարող էր ազատվել միայն տիրոջ կամքով և փրկագնմամբ։

Երկրի ամենամեծ ստրկատերը պետությունն էր կամ թագավորը։ Պետությանը պատկանող ստրուկները կոչվում էին «արքունի ստրուկներ»։ Մեծ թվով ստրուկներ ունեին նաև տաճարները և աստվածանուն ներկայացուցիչները։ Տաճարներին պատկանող ստրուկները կոչվում էին «սպասավոր» կամ հունական տերմինով՝ «հիերոդուլ»։

Հելլենիզմի դարաշրջանում ստրուկների աշխատանքը կիրառվում էր պետական, տաճարական և մասնավոր ստրկատիրական ագարակներում, արհեստանոցներում, հանքերում, ձկնորսարաններում, քաղաքների, բերդերի, ջրանցքների և ճանապարհների շինարարության վրա և այլն։ Ստրուկների աշխատանքը առաջվա նման մեծ չափով կիրառվում էր նաև տնային ծառայության մեջ։ Արական սեռին պատկանող տնային ստրուկները կոչվում էին «ծառա» կամ «սպասավոր», իսկ իգական սեռին պատկանողները՝ «աղախին» կամ «սպասուհի»։

Սրանք իրենց տնտեսական ու սոցիալական դրությամբ նման էին հելլենիզմի դարաշրջանում Եգիպտոսում և Մերձավոր Արևելքի մյուս երկրներում գոյություն ունեցող «լաոյ» կոչված կախյալ հողագործներին կամ Հռոմի ուշ շրջանի պատմությունից հայտնի «կոլոն» կոչվող կիսաստրուկներին։

Պետական կարգը

Հայկական պետությունը իր բնույթով հելլենիստական տիպի կենտրոնացած ստրկատիրական պետություն էր։ Նա ստրկատերերի դիկտատուրան էր, որն ուղղված էր ստրուկների և շահագործվող շինականների դեմ։

Պետական կառավարման ձևը բացարձակ միապետությունն էր՝ թագավորի անսահմանափակ իրավունքով։ Թագավորը ոչ միայն երկրի գերագույն կառավարողն էր, այլև զորքի գերագույն հրամա-

նատարը և երկրի գերագույն դատավորը։ Նրա իրավունքի մեջ էին մտնում պատերազմ հայտարարելը, խաղաղության դաշնագիր կնքելը, պետական և զինվորական բարձր պաշտոնյաների նշանակումը, պետական հարկերի սահմանումը և այլն։ Դրամ կտրելու իրավունք ուներ միայն թագավորը։ Հայ թագավորները կրում էին «Մեծ Հայքի թագավոր» կամ «թագավոր Հայոց մեծաց», իսկ Տիգրան II-ից սկսած՝ նաև «արքայից արքա» տիտղոսը։

Երկրի կառավարման մեջ կարևոր դեր էին կատարում թագավորի խորհրդականները։ Սրանք բացառապես նշանակվում էին թագավորական տան անդամներից, ավագանու ներկայացուցիչներից և բարձրաստիճան քրմերից։ Թագավորի առաջին խորհրդականներից մեկը քրմապետն էր։

Պետական կենտրոնական կարևոր գործառույթ գերատեսչություններից էին հարկային-ֆինանսական, արքունի տնտեսության կառավարման, պետական-հասարակական աշխատանքների, շինարարությունների կազմակերպման, ռազմական, դատական գերատեսչությունները, որոնք գտնվում էին ստրկատիրական ավագանու ձեռքում։ Պետական ներքին ու արտաքին գրագրությունը, օրենքների ու կարգադրությունների հրապարակումը, հարկային ցուցակները և այլն կենտրոնացված էին արքունի գրասենյակում, որը կոչվում էր «դիվան»։ Այս գրասենյակում աշխատող գրագիրները կոչվում էին «դպիր», իսկ նրանց պետը՝ «դպրապետ» կամ «դիվանապետ»։

Վարչական տեսակետից Հայաստանը բաժանված էր տասնհինգ նահանգների կամ «աշխարհների» և նրանց կազմի մեջ մտնող մեծ ու փոքր գավառների։ Նահանգների վարչական բաժանման հիմքում մեծ մասամբ ընկած էին նախկին ցեղային մեծ միությունների կամ պետական միավորումների տերիտորիաները, իսկ գավառների հիմքում՝ նախկին ցեղային երկրները։ I դարի հեղինակ Պլինիոսը տեղեկացնում է, որ իր ժամանակ Հայաստանը բաժանված էր 120 ստրատեգիաների, այսինքն՝ ռազմա-վարչական շրջանների կամ զորավարությունների։

Թե՛ նահանգները և թե՛ գավառները կառավարում էին թագավորի նշանակած կառավարիչները։ Այս պաշտոններում մեծ մասամբ նշանակվում էին թագավորի ազգականները, մերձավորներն ու զինվորական հրամանատարները, իսկ երբեմն՝ նաև տեղական ստրկատիրական ավագանու ներկայացուցիչներն ու ցեղային առաջնորդները։ Նահանգների կառավարիչները կոչվում էին «աշխարհակալ» կամ «կուսակալ», իսկ գավառներինը՝ «գավառակալ»։

Արտաքին հարձակումներից պաշտպանվելու համար Հայաստանը, բաստ աշխարհագրական կողմերի, բաժանված էր սահմանապահ չորս խոշոր զինվորական իշխանությունների կամ շրջանների, որոնք կոչվում էին «բդեշխություն», իսկ այդ շրջանների զորահրամանատարը՝ «բդեշխ»։ Հայկական սկզբնաղբյուրների վկայություններից հայտնի են Տուրքի, Աղձնիքի, Նոշիրականի և Գուգարքի բդեշխությունները։

Տիգրան II-ի ժամանակ նվաճված երկրները վերածված էին առանձին փոխարքայությունների, որոնք կառավարվում էին Տիգրանի կողմից նշանակված փոխարքաների միջոցով։

«Շատ թագավորներ,—վկայում է Պլուտարքոսը,—սպասավորում էին Տիգրանին։ Բայց նրանցից չորսը միշտ նրա հետ էին լինում՝ որպես ուղեկիցներ և թիկնապահներ, և երբ նա գնում էր ձիով՝ նրանք խիտոններ հագած՝ վազում էին առջևից, իսկ երբ նստած էր լինում և պաշտոնական գործերով էր զբաղվում՝ նրանք կանգնած էին լինում նրա շուրջը՝ իրար ձեռքից բռնած»։

Պետական տնտեսական-ֆինանսական միջոցները գոյանում էին հիմնականում պետական տնտեսություններից, արհեստանոցներից, հանքերից ոչ ձկնորսարաններից ստացվող եկամուտներից, քաղաքային և գյուղական բնակչությունից գանձվող հարկերից, տուրքերից ու մաքսից։ II—I դարերում (մ. թ. ա.) հայկական պետության եկամտի կարևոր աղբյուրներն էին նաև պատերազմի միջոցով ձեռք բերվող ավարը և նվաճված երկրներից գանձվող հարկերը։

Բանակը

Հայկական բանակը պարտադիր զինվորական ծառայության հիման վրա ազատ բնակչության բոլոր խավերից հավաքագրված բանակ չէր։ Բանակի կորիզը կազմում էր արքունի մշտական զորքը, որի կազմը համալրվում էր ստրկատիրական խավերից։ Պատերազմի դեպքում բանակը համալրվում էր նաև աշխարհազորային, իսկ երբեմն նաև զորակոչային հիմունքով քաղաքային ռամիկներից ու շինականներից կազմված զորամասերով։

Հայկական բանակը բաժանվում էր գնդերի, գումարտակների, վաշտերի և ավելի մանր ստորաբաժանումների. թեև զինվորական այդ ստորաբաժանումների թվական կազմի և նրանց ներքին կառուցվածքի մասին մեզ տեղեկություններ չեն հասել։ Բանակը կազմված էր թեթևազեն և զրահավորված հեծյալ ու հետևակ զորամասերից, պարիսպներ քանդող սակրավոր ջոկատներից, օժանդակ ուժերից և գումակից։ Իր մարտունակությամբ Արևելքում հատկա-

պես հռչակված էր հայկական հեծելազորը կամ «հայոց այրուձին»։

Հունա-հռոմեական սկզբնաղբյուրները վկայում են, որ Տիգրան II-ի ժամանակ հայկական բանակը բաղկացած էր 300 հազար մարդուց։ Այդ բանակի մեջ անշուշտ մտնում էին նաև հպատակեցված ու դաշնակից երկրների օժանդակ զորամասերը։ Բուն հայկական զորքի թիվը հավանաբար հասնում էր մոտ 120 հազարի։

Բանակի գերագույն հրամանատարը, մեծ մասամբ զորքին առաջնորդողը պատերազմում թագավորն էր։ Սակայն բանակը ուներ նաև իր գլխավոր հրամանատարը, որ կոչվում էր «սպարապետ»։

Հայկական բանակում մարտիկները զինված էին երկար նիզակներով, տեգերով, սրերով, թրերով, դաշույններով, վաղը ու սակը կոչվող տապարներով, նետ ու աղեղով։ Թշնամու հարվածներից իրենց պաշտպանելու համար մարտիկները կրում էին վահաններ, իսկ գլուխն ու իրանը պաշտպանելու համար հագնում էին մետաղե լարերից կամ թերթերից պատրաստված սաղավարտներ ու զրահներ։ Հայերը թշնամու դեմ օգտագործում էին նաև կեռ ճանկերով, թունավորված նետի սլաքներ։

ԳԼՈՒԽ X

ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ I—III ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Հայ ժողովրդի պայքարը Հռոմի և նրա կողմից նշանակված օտարազգի թագավորների դեմ

Առաջին դարի սկզբից Հայաստանը, իր պետականությունը պահպանելով հանդերձ, դառնում է Հռոմին ենթակա երկրներից մեկը։ Իրենց տիրապետությունն ամրապնդելու և Հայաստանը աստիճանաբար պրովինցիայի վերածելու նպատակով հռոմեացիները ըստ կրսում են այնտեղ նշանակել ծագումով օտար թագավորներ։ Հռոմի դրածո այս թագավորները, հայկական գահի վրա իրենց ղգալով ժամանակավոր և անապահով, ոչ միայն չէին պաշտպանում երկրի շահերը, այլև, որքան կարելի է, կողոպտում էին այն։ Սրանք մեծ մասամբ իրենց տիրապետությունը պահպանում էին հռոմեական ռազմական ուժի միջոցով։

Ի պատասխան Հռոմի այդ քաղաքականության, հայ ժողովուրդը նոր ապստամբություններ է բարձրացնում։ Նա Հռոմի դեմ անհավասար, բայց հերոսական պայքար է մղում, համառ ջանքեր է գործադրում իր պետականությունը և անկախությունը վերականգնելու համար։

Արտաշեսյան դինաստիայի անկումից հետո Գայոս Կեսարը, որը դեռ գտնվում էր Արևելքում, հայկական գահը հանձնում է Ատրպատականի թագավոր Արիոբարզանին։

Հայ ժողովուրդը, վրդովված սրանից, ապստամբություն է բարձրացնում, բայց Գայոս Կեսարը հռոմեական ուժերով ճնշում է այն։ Միայն Արտագերս ամրոցը շարունակում է համառ դիմադրություն ցույց տալ թշնամուն։ Որոշ ժամանակ հետո բերդապահ

զորքի հրամանատար Ադդոնը գեղծ բանակցություններ է սկսում Գայոս Կեսարի հետ և նրան է հանձնում ամրոցում պահվող արքունի գանձերի ցուցակը։ Երբ ընչաքաղց հռոմեացի զորավարը ուշադիր կերպով ծանոթանում էր այդ ցուցակի հետ, Ադդոնը դաշույնով մահացու հարվածներ է տալիս նրան և թաքնվում բերդում։ Ստացած վերքերից էլ Գայոս Կեսարը հետագայում մահանում է։ Գալատյան հռոմեացիները երկարատև պաշարումից հետո հրդեհում և գրավում են Արտաքերսը և քանդում նրա պարիսպները։ Ադդոնը թշնամիների ձեռքը կենդանի չընկնելու համար ամրոցի աշտարակից իրեն գցում է խարույկի մեջ։

Արիոբարզանի գահակալությունը Հայաստանում երկար չի տևում։ 4 թ. սա, ինչպես վկայում է Տակիտոսը, մահանում է պատահական մահով։ Պետք է կարծել, որ հայերը սրան թունավորելու կամ այլ միջոցով սպանել ու վերացրել են մեջտեղից։

Հայաստանի գահը Օգոստոսը հանձնում է Արիոբարզանի որդուն՝ Արտավազդին։ Սակայն հայերը, հավանաբար մեկ տարի հետո, 5 թ. նոր ապստամբություն են բարձրացնում և սպանում են նաև հռոմեական այս նոր դրածուին։

Հայ ժողովրդի համառ դիմադրությունը, Արիոբարզանի կասկածելի պատահական մահը և Արտավազդ IV-ի սպանությունը հարկադրում են Հռոմին հրաժարվելու Հայաստանը Ատրպատականի հետ միացնելու իր ծրագրից։ 6 թ. Օգոստոսը Հայաստանում թագավոր է նշանակում Տիգրան V-ին։ Իր կտակի մեջ Օգոստոսը հայտնում է, որ սա «հայոց արքունի տոհմից էր»։ Սակայն իրականում նա ծագումով հրեա էր և միայն մոր կողմից հեռավոր ազգակցական կապ ուներ Արտաշեսյան թագավորական տան հետ։

Նույն 6 թ. հայերը նոր ապստամբություն են բարձրացնում։ Նրանք, հռոմեացիներին և Տիգրան V-ին դուրս վտարելով Հայաստանից, կրկին գահ են բարձրացնում Արտաշեսյան թագավորական տոհմի վերջին ներկայացուցչին՝ Էրատո թագուհուն։ Սակայն սա արդեն ծերացած լինելով, չի կարողանում երկիրը կառավարել, որի պատճառով էլ կարճ ժամանակից հետո հեռացվում է գահից։

11 թ. պարթևական գահը գրավում է Արտավան III-ը (11—40), ճակատամարտում հաղթելով և երկրից դուրս վտարելով Հռոմի կողմնակից ու կամակատար Վոնոն թագավորին։

Պարտված և գահընկեց արված Վոնոնը, գալով Հայաստան, հռոմեացիների օգնությամբ տիրում է հայկական գահին և կարճ ժամանակով դառնում Հայաստանի թագավոր։

Իհարկե, Արտավան III-ը երկար չէր կարող հանդուրժել իր

հակառակորդի գահակալությունը Հայաստանում։ Նա, երկրում իր իշխանությունը ամրապնդելուց հետո, պատերազմի սպառնալիքով Հռոմից պահանջում է իր ախոյանին հեռացնել Հայաստանից։ Խուսափելով Արևելքում վտանգավոր պատերազմից, Հռոմը բավարարում է Արտավանի պահանջը, մանավանդ որ, ինչպես վկայում է Հովսեփ Ֆլավիոսը, «Հայաստանի մեծամեծները, որոնք Նպատ լեռան շուրջն էին բնակվում, հարել էին Արտավանին»։ Տիբերիոս կայսեր (14—37) կարգադրությամբ Ասորիքի հռոմեական կուսակալը 16 թ. իր մոտ է հրավիրում Վոնոնին և ձերբակալում։

Տիբերիոսը շուտով Արևելք է ուղարկում իր որդեգիր Գերմանիկոսին։ Սա 18 թ. հռոմեական զորքերով գալիս է Արտաշատ և հայերի համաձայնությամբ Հայաստանի թագավոր է հռչակում Պոնտոսի Պոլեմոն թագավորի որդուն՝ Զենոնին, որը մանկությունից ապրել էր հայկական միջավայրում և յուրացրել էր հայերի սովորույթներն ու բարքերը։ Հայերը փոխում են սրա օտար ու խորթ անունը և վերանվանում են Արտաշես։

Զենոն-Արտաշեսը (18—34) Հռոմի կողմից Հայաստանում նշանակված օտարազգի թագավորներից միակն է, որ թագավորել է բավական երկար, մոտ 17 տարի և մահացել իր բնական մահով։

Զենոն-Արտաշեսի մահից հետո, 34 թ. Արտավան III-ը հայկական ավագանու համաձայնությամբ իր անդրանիկ որդուն՝ Արշակին դարձնում է Հայաստանի թագավոր։ Հայերը համակրանքով են ընդունում Արշակ I-ի գահակալությունը, որովհետև նրանք, թեկուզ և Հայաստանը Արշակունիների դինաստիայի պետական սիստեմի մեջ մտցնելու պայմանով, ձգտում էին վերականգնել երկրի պետական անկախությունն ու ինքնուրույնությունը։

Սակայն Հռոմեական կայսրությունը, Հայաստանի հարևան իր «բարեկամ ու դաշնակից» երկրների, բայց հատկապես Իբերիայի Փարսման թագավորի օգնությամբ, կարողանում է կրկին վերականգնել իր գերիշխանությունը Հայաստանում։

Հռոմեացիների թելադրանքով 35 թ. Փարսմանը և նրա եղբայրը՝ Միհրդատը, կաշառքի ու դավադրության միջոցով պալատական ծառայողների ձեռքով Արշակին թունավորել տալուց հետո, մեծ զորքով հարձակվում են Հայաստանի վրա և գրավում Արտաշատը։ Արտավան III-ի փորձերը Հայաստանը կրկին գրավելու և իբերներից վրեժ լուծելու ուղղությամբ ապարդյուն են անցնում։ 35 թ. հռոմեացիների համաձայնությամբ հայկական գահին տիրում և Հայաստանի թագավոր է դառնում։ Փարսմանի եղբայրը՝ Միհրդատը։

Միհրդատը զոհ է գնում իր հարազատ հղբոր՝ Փարսմանի և սրա որդու՝ Հռոդամիզդի կազմակերպած դավադրությանը։

Հռոդամիզդը Միհրդատին և նրա կնոջը խեղդել է տալիս ծանր գորգերի տակ, որովհետև խոստացել էր նրանց չսպանել ո՛չ սրով և ո՛չ էլ թույնով։ Ապա սպանել է տալիս նաև Միհրդատի որդիներին։

51 թ. Կապադովկիայի հռոմեական կաշառված կուսակալի ներկայությամբ Հռոդամիզդը Արտաշատում հայտարարվում է Հայաստանի թագավոր։

Տրդատ I-ի գահակալությունը

Նույն 51 թ. իր եղբայրների համաձայնությամբ գահ է բարձրանում պարթևական ամենանշանավոր թագավորներից մեկը՝ Վաղարշ I-ը (51—75)։ Սա որոշում է հռոմեացիներին ու նրանց կամակատար Հռոդամիզդին դուրս քշել Հայաստանից և հայկական գահը տալ իր եղբորը՝ Տրդատին, իսկ Հայաստանը դարձնել Արշակունյաց տոհմի երկրորդ ինքնուրույն թագավորությունը։

Հայաստանում գերիշխանություն հաստատելու համար Հռոմի և Պարթևական թագավորության միջև մղվող պայքարի ընթացքում հայկական ավագանու ճնշող մեծամասնությունը թեքված էր պարթևների կողմը։ Դրա հիմնական պատճառն այն էր, որ պարթևները չէին սպառնում Հայաստանի ինքնուրույնությանը և նրա տերիտորիալ ամբողջականությանը, մինչդեռ հռոմեացիները ձգտում էին Հայաստանը վերածել հռոմեական պրովինցիայի։ Բացի այդ, հայերը ոչ միայն իրենց երկրի դիրքով, բարքերով ու նիստուկացով շատ մոտ էին պարթևներին, այլև նրանց հետ կապված էին մշակութային, կրոնական և ամուսնական փոխադարձ կապերով։ Մինչդեռ, «հայերը,—ինչպես վկայում է Տակիտոսը,—լի էին ատելությամբ դեպի հռոմեացիները»։

Երկիրը հռոմեացիների տիրապետությունից դուրս բերելու և կայուն պետականություն ստեղծելու նպատակով հայկական ավագանին, ընդառաջելով Վաղարշ I-ի ցանկությանը, համաձայնության է գալիս նրա հետ, որպեսզի հայերն ու պարթևները համատեղ կերպով պայքարեն Հռոմի դեմ, և Տրդատը դառնա Հայաստանի թագավոր։

52 թ. Վաղարշը և Տրդատը պարթևական զորքերով մտնում են Հայաստան։ Արտաշատը և Տիգրանակերտը հոժարակամ կերպով իրենց դռները բացում են պարթևական զորքի առաջ։ Պարթևները և ապստամբություն բարձրացրած հայերը երկրից դուրս են քշում հռոմեացիներին և նրանց «դաշնակից» իբերներին։ Հռոդամիզդը

առանց դիմադրություն ցույց տալու փախչում է իր հոր մոտ՝ Իբերիա, իսկ Տրդատը հայտարարվում է Հայաստանի թագավոր։ Տրդատ I-ի գահակալությամբ ոչ միայն Հայաստանում փաստորեն հիմնադրվում է հայ Արշակունյաց դինաստիան, այլև վերանում է հռոմեական տիրապետությունը, որի հաստատման ու պահպանման համար Հռոմը մոտ հարյուր տարվա ընթացքում ապարդյուն կերպով հսկայական ուժեր և նյութական միջոցներ էր ծախսել։ Հայաստանում հռոմեական տիրապետության այսպիսի անկայուն վիճակը առաջին հերթին իր հայրենիքի անկախության համար պայքարող հայ ժողովրդի, իսկ այնուհետև՝ պարթևների համառ ու երկարատև դիմադրության հետևանք էր։

Կորբուլոնի արշավանքը

Արշակունյաց դինաստիայի և պարթևական գերիշխանության հաստատումը Հայաստանում առաջ է բերում նոր պատերազմ Հռոմեական կայսրության և Պարթևական թագավորության ու նրա դաշնակից Հայաստանի միջև, որը տևում է տասը տարի (54—64)։

Հռոմեական տիրապետությունը Հայաստանում վերականգնելու նպատակով նոր գահ բարձրացած Ներոն կայսրը (54—68) Արևելք է ուղարկում հռոմեացի հայտնի զորավար Կորբուլոնին։

Տասնամյա պատերազմի առաջին չորս տարիների ընթացքում կողմերի միջև փոփոխակի հաջողություններով տեղի են ունենում միայն փոքր ու սահմանային ընդհարումներ։

58 թ. գարնանը Կորբուլոնը, օգտվելով Վրիանաց աշխարհում պարթևների դեմ առաջացած ապստամբությունից և պարթևական զորքի այնտեղ զբաղված լինելուց, մեծ ուժերով ներխուժում է Հայաստան և շարժվում դեպի Արտաշատ։

Արտաշատին սպառնացող վտանգի պահին Տրդատը իր զորքերով մայրաքաղաքի մատույցների մոտ հարձակվում է հռոմեական բանակի վրա, բայց առանձին հաջողություն չի ունենում։ Այս ընդհարումից հետո Տրդատը ստիպված է լինում իր զորքերով Հայաստանից նահանջել Ատրպատական։

Տրդատի հեռանալուց հետո Կորբուլոնը առանց կռվի գրավում է Արտաշատը և իր բանակի հետ 58—59 թթ. ձմեռը անցկացնում է այնտեղ։ 59 թ. գարնանը հռոմեական զորքը, դուրս գալով Արտաշատից, շարժվում է դեպի Տիգրանակերտ։ Նախքան հեռանալը հռոմեացիները, Կորբուլոնի հրամանով, հրդեհում, քարուքանդ են անում ու հողին հավասարեցնում Արտաշատը։ Կորբուլոնը այս վայրագությունը արդարացնում էր նրանով, որ Հայաստանի մայ-

բաքաղաքը իր պարիսպների լայնածավալության պատճառով առանց ուժեղ պահակազորի չէր կարելի պահպանել, իսկ ինքը այնքան ուժ չուներ թե՛ Արտաշատը պահպանելու և թե՛ պատերազմ մղելու համար։ Իրապես, Արտաշատի կործանման հիմնական պատճառը ոչ այնքան Կորբուլոնի ուժեր չունենալն էր, որքան այն, որ Հայաստանի մայրաքաղաքը հակահռոմեական շարժումների ու պայքարի, հետևապես և Հայաստանի անկախության ձգտող ուժերի միավորման հիմնական կենտրոնն էր։

Արտաշատի կործանումը ավելի ևս ուժեղացնում է հայ ժողովրդի մեջ ատելությունը հռոմեական զավթիչների նկատմամբ։ Վրեժխնդրությամբ լցված հայերը Արտաշատից դեպի Տիգրանակերտ շարժվող հռոմեական բանակի դեմ մղում են ուժեղ պարտիզանական կռիվներ։ Թշնամու զորքերը հատկապես հանդուգն և խիզախ հարձակումների են ենթարկվում Արածանիի հովտի լեռնային շրջաններում։

Չնայած հայերի ցույց տված դիմադրությանը, այնուամենայնիվ, Կորբուլոնին հաջողվում է Տարոնի վրայով մոտենալ Հայաստանի երկրորդ մայրաքաղաքին։ Տիգրանակերտի մեծ մասամբ օտար ու հելլենականացած բնակիչները քաղաքի դռները բաց են անում հռոմեական զորքի առաջ։ Միայն անվախ երիտասարդությունը ամրանում է միջնաբերդում և համառ մարտեր է մղում թշնամու դեմ։ Սակայն հռոմեացիներին վերջ ի վերջո հաջողվում է գրավել նաև միջնաբերդը։

Հայաստանի վերանվաճման առթիվ Հռոմում կազմակերպվում են տոնահանդեսներ, կտրվում են պղնձե, արծաթե ու ոսկե դրամներ՝ «Հայաստանը նվաճված» և այլ մակագրություններով։

Ներոնի կողմից հայկական գահի համար նոր թեկնածու է ընտրվում Կապադովկիայի Արքեղայոս թագավորի ծոռը՝ Տիգրանը, որը 60 թ. գալիս է Հայաստան և Տիգրանակերտում գահ բարձրանում։ Տիգրանը, ինչպես վկայում է Տակիտոսը, երկար ժամանակ Հռոմում պատանդ լինելով, ձեռք էր բերել ստրուկներին հատուկ համբերություն ու ստորաքարշություն։ Հակառակ հռոմեական զորքի ներկայությանը, սրա թեկնածությունը Հայաստանում ընդունվում է բացահայտ դժգոհությամբ։

Կորբուլոնը, Տիգրան VI-ի տրամադրության տակ մոտ 5000 զինվոր թողնելուց հետո, ինքը մնացած ուժերով հեռանում է Սասրիք։

61 թ. գարնանը հռոմեացիների թելադրանքով Տիգրան VI-ը հարձակվում է պարթևների գերիշխանության տակ գտնվող Ադիա-

բենի վրա։ Նա Հայաստանի սահմանակից այս երկիրը, ինչպես վկայում է Տակիտոսը, «ավերել էր լայն չափով և ավելի երկարատև, քան լինում է ավազակության ժամանակ»։ Հավանաբար, այս հարձակման նպատակն էր եղել ստիպել պարթևներին ընդունելու Հայաստանում տեղի ունեցած փոփոխությունը։

Տրդատի արտաքսվելը Հայաստանից և նրա փոխարեն Տիգրան VI-ի գահ բարձրանալը, ինչպես և այս վերջինի հարձակումը Ադիաբենի վրա պարթևական ավազանու շրջանում խիստ դժգոհություններ են առաջ բերում Վաղարշ I-ի դեմ։ Իր եղբորից դժգոհ էր նաև Տրդատը։

Վաղարշ I-ը, հաշվի առնելով այս բոլորը, անմիջապես հաշտություն է կնքում Վրկանաց աշխարհի հետ, շտապ նոր, խոշոր ուժեր է հավաքում և 61 թ. պատերազմ է սկսում Հռոմի և նրա կամակատար Տիգրան VI-ի դեմ։ Պարթևական բանակը բաժանվում է երկու մասի։ Զորքի մի մասը, Տրդատի հրամանատարությամբ, մտնում է Հայաստան և գալիս պաշարում է Տիգրանակերտը, որտեղ, ճակատամարտից խույս տալով, ամրացել էին Տիգրան VI-ը և հռոմեական լեգեոնները։ Պարթևական զորքի մյուս մասը, Վաղարշի ղեկավարությամբ, Միջագետքի կողմից շարժվում է դեպի Ասորիք։

Կորբուլոնը, համոզված լինելով, որ այժմ արդեն չի կարող կռվել ու հաղթել հայ-պարթևական միացյալ ուժերին, ինչպես և վախենալով, որ վտանգավոր այս պատերազմում կարող է կորցնել նաև նախկինում հեշտությամբ ձեռք բերած իր փառքը, խնդրում է Ներոնից նոր զորավար ուղարկել Հայաստան։

Կորբուլոնը, մինչև նոր հրամանատարի գալը ժամանակ շահելու, պատերազմի պատասխանատվությունից խուսափելու և Տիգրանակերտում պաշարված հռոմեական լեգեոններին փրկելու նպատակով, Մծբին քաղաքում պարթևների առաջարկած պայմաններով, զինադադար է կնքում Վաղարշ I-ի հետ։ Ըստ զինադադարի պայմանների՝ Կորբուլոնը Տրդատին ճանաչում է իբրև Հայաստանի թագավոր։ Միաժամանակ թե՛ Վաղարշ I-ը և թե՛ Կորբուլոնը Հայաստանից դուրս են բերում պարթևական ու հռոմեական զորքերը, ինչպես և Տիգրան VI-ին։ Այսպիսով, կողմերի միջև կնքված համաձայնությամբ, Տրդատի դահակալության պայմանով Հայաստանը ճանաչվում է իբրև անկախ ու ինքնուրույն պետություն։

Պետոսի աշխատանքը և նրա պարտությունը

Վաղարշ I-ը զինադադարի պայմանների հիման վրա վերջնական հաշտություն կնքելու նպատակով դեսպաններ է ուղարկում Հռոմ։ Սակայն Ներոն կայսրը մերժում է այդ պայմանները և դեսպաններին ետ է ուղարկում ձեռնունայն։

Պատերազմը շարունակելու համար Ներոնը նոր բանակով Արևելք է ուղարկում Պետոս զորավարին։ Սա, գալով Կապադովկիա, հայտարարում է, թե ինքը հաղթված հայերի վրա հարկ է դնելու, նրանց ենթարկելու հռոմեական օրենքներին և Հայաստանում թագավորի ստվերի փոխարեն հաստատելու է հռոմեական իշխանություն։

62 թ. ամռանը Պետոսը իր զորքերով, Մելիտինեի մոտից անցնելով Նփրատ գետը, ներխուժում է Հայաստան և Տավրոսյան լեռների վրայով շարժվում դեպի Տիգրանակերտ։ Սակայն հայերը ուժեղ դիմադրություն են ցույց տալիս, որի պատճառով էլ նրան հազիվ է հաջողվում գրավել սահմանամերձ մի քանի ամրություններ։ Պետոսը, նկատի ունենալով վրա հասնող ձմեռվա ցրտերը, շուտով իր զորքերը ետ է տանում և բանակ է դնում Խարբերդի դաշտում, Արածանիի ափին, Հանդեա կոչվող վայրում։

62 թ. աշնանը պարթևական և հայկական զորքերը շարժվում են Մոփ՝ Պետոսի դեմ։ Հայ-պարթևական զորքերը, Տավրոսի լեռնանցքները պաշտպանող և դաշտավայրի տարբեր մասերում գտնվող հռոմեական բոլոր զորամասերին գլխովին ջախջախելուց հետո, գալիս են ու շրջապատում Պետոսի ամրացված ճամբարը։ Նրանք սկսում են ուժեղ ճնշում գործադրել և զգալի կորուստներ պատճառել պաշարված հռոմեացիներին։

Պետոսը իր բանակի մնացած մասը վերջնական կործանումից փրկելու համար հաշտություն է խնդրում։ Վաղարշ I-ը բանակցություններ վարելու և զինադադար կնքելու համար Պետոսի մոտ է ուղարկում հայ զորավար Վասակին։ Սա պահանջում է հռոմեացիներից անվերապահ կերպով անձնատուր լինել, հայտարարելով, որ Հայաստանը գրավելու կամ պահելու միայն պատրանքն է մնացել հռոմեացիների մոտ, իսկ իրական ուժը հայերի ու պարթևների ձեռքումն է։

Հայ զինվորները, շրջապատելով ելքի բոլոր ճանապարհները և մտնելով հռոմեական ամրացված ճամբարը, սկսում են զինաթափել հռոմեացիներին, ետ խլել նրանցից գերիներին և այն ամբողջ ավարը, որ նրանք վերցրել էին Հայաստանից։ Հռոմեական «անպարտելի» համարվող բանակը ենթարկվում է ստորացման, ծաղր

ու ծանակի։ Հայերը վինաթափված հռոմեացի զինվորներին ու հրամանատարներին ծնկաչոք կերպով անց են կացնում նիզակներով պատրաստված «լծի» տակով, որը այդ ժամանակ համարվում էր ամենամեծ ստորացումը պարտվողների համար։

Պետոսի և նրա բանակի մնացորդների հեռանալը Հայաստանից վերածվում է ամոթալի փախուստի։ Նրանք մի օրվա ընթացքում, առանց ետ նայելու, փախչում են ավելի քան 60 կիլոմետր, ճանապարհին թողնելով վիրավորներին։

Հռանդեայի դաշնագիրը և հայկական թագավորության վերականգնումը

Վաղարշ I-ը նոր դեսպաններ է ուղարկում Հռոմ, որոնք այնտեղ են ժամանում 63 թ. գարնանը։ Սրանք Ներոնին են հանձնում Վաղարշի նամակը, որտեղ նա հայտնում էր, որ թեև պարթևները հաղթել են հռոմեացիներին և ունեն զինվորական գերակշռություն, բայց առաջարկվում է Տրդատին Հայաստանում թագավոր ճանաչելու պայմանով հաշտություն կնքել։ Ներոնը մերժում է հաշտության առաջարկը, որովհետև այն համարում է Հռոմի համար նվաստացուցիչ ու անպատվաբեր։ Սակայն այս անգամ Վաղարշի դեսպաններին նվերներ են տալիս և նրանց հասկացնում, որ պարթևների առաջարկած պայմաններով հաշտություն կկնքվի, եթե Տրդատը անձամբ գա Հռոմ և իր թագը ստանա Ներոնի ձեռքից։ Սրանով Հռոմը ցանկանում էր մեղմացնել իր զորքերի ծանր պարտության տպավորությունը և պահպանել իր վարկը Արևելքում։

Ներոնը հայերի ու պարթևների դեմ պատերազմը շարունակելու հրամանատարությունը կրկին հանձնարարում է Կորբուլոնին, տալով նրան պատերազմ վարելու, հաշտություն կնքելու արտակարգ լիազորություններ։ 64 թ. Կորբուլոնը խոշոր ուժերով մտնում է Սոփք։ Սակայն նա, ելնելով Հռոմից ստացած իր հրահանգներից, խուսափում է պատերազմից և աշխատում է հաշտություն կնքել։ Այդ նպատակով նա բանակցություններ է սկսում Վաղարշի և Տրդատի հետ։

Վաղարշը և Տրդատը, Հայաստանը հետագա ավերումից ազատելու և Հռոմի հետ կայուն խաղաղություն հաստատելու նպատակով, ընդունում են Կորբուլոնի առաջարկությունը։ Տրդատը պահանջում է, որ կողմերի հանդիպումը և հաշտության դաշնագրի կնքումը տեղի ունենա հռոմեական բանակի պարտության վայրում, որպեսզի ընդգծված լինի, որ ինքը հայկական գահը Ներոնից ստանում է ոչ թե իբրև պարգև, այլ հայ-պարթևական բանակների դեմ տարած

հաղթանակի շնորհիվ։ Կորբուլոնը ստիպված է լինում համաձայնել Հռոմի համար ոչ պատվաբեր այդ առաջարկության հետ։

64 թ. Հանդեսային կողմերի միջև կնքվում է հաշտության դաշնագիր։ Այդ դաշնագրով Տրդատը ճանաչվում է Հայաստանի թագավոր, միայն նա պետք է անձամբ գնար Հռոմ և թագը ստանար Ներոնի ձեռքից։ Հաշտությունից հետո հռոմեական և պարթևական զորքերը հեռանում են Հայաստանից։ Վերականգնվում են Հայաստանի նախկին սահմաններն ու ինքնուրույնությունը։

65 թ. Տրդատը կնոջ ու երեխաների, իր եղբորորդիների հետ, ինչպես և 3000 հայ ու պարթև հեծյալներից բաղկացած շքախմբի և հռոմեական մի հատուկ զորամասի ուղեկցությամբ ցամաքային ճանապարհով ուղևորվում է Հռոմ։ Նրա ուղևորությունը տևում է մոտ ինը ամիս։ Տրդատին և սրա ուղեկիցներին բոլոր քաղաքներում հանդիսավոր ու փառահեղ ընդունելություն են ցույց տալիս։ Ուղևորության ամբողջ ծախսը, որը կազմում էր օրական մոտ 200 000 դինար-դրաքմե, այսինքն՝ մոտ 160 000 ոսկի ռուբլի, վճարում էր Հռոմեական կայսրությունը։

Ներոն կայսրը Տրդատին ընդունում է սիրալիր կերպով։ Հռոմում Տրդատի պատվին կազմակերպում են հանդեսներ։ Ներոնը Հռոմի հրապարակում հանդիսավոր կերպով բազմահազար բնակչության և զորքի ներկայությամբ թագադրում է Տրդատին։

Կորբուլոնի կողմից ավերված Արտաշատը վերաշինելու համար Ներոնը Տրդատին նվիրում է 50 միլիոն դինար-դրաքմե, այսինքն՝ մոտ 40 միլիոն ոսկի ռուբլի, ինչպես և նրան է տալիս հռոմեացի բազմաթիվ արհեստավորներ։ Հռոմեական կայսրի այս առատաձեռնության նպատակն էր, անշուշտ, սիրաշահել Տրդատին և մեղմացնել հայերի ատելությունն ու զայրույթը հռոմեացիների նկատմամբ։

66 թ. Տրդատը իր ուղեկիցներով վերադառնում է Հայաստան։ Այսպիսով, իրավական տեսակետից վերջնականապես վերականգնվում է հայ ժողովրդի պետական անկախությունը, և Հայաստանում հաստատվում է Արշակունյաց թագավորությունը։

Հայաստանում թագավորող առաջին Արշակունի թագավորները ծագումով պարթևներ էին։ Սակայն հետագայում նրանք աստիճանաբար, խնամիական կապեր ստեղծելով տեղական իշխանական տների հետ, լրիվ կերպով հայանում են, և այդ դինաստիան ազգայնանալով ստանում է հայկական բնույթ։

Արշակունյաց թագավորության հաստատումը Հայաստանում խոշոր դրական դեր է կատարում, որովհետև նա ոչ միայն երկրում

ատեղծում է քիչ թե շատ կայուն ու կենտրոնացված պետականություն, այլև նպաստում է երկրի հասարակական-տնտեսական կյանքի և հայկական մշակույթի հետագա զարգացմանը։

Տրդատ I-ի հետագա գործունեությունը

Հռանդեայի դաշնադրից հետո Արևելքում հաստատվում է խաղաղություն, որը տևում է հիսուն տարի (64—114)։ Խաղաղության այս շրջանը զգալի չափով նպաստում է Հայաստանում քաղաքների, արհեստագործության ու առևտրի զարգացմանը։

Տրդատ I-ը Հռոմից վերադառնալուց հետո վերաշինում է ավերված Արտաշատը, որը, ի պատիվ Ներոն կայսրի, վերանվանվում է Ներոնեա։ Սակայն այս նոր անունը ժողովրդականություն չի ստանում և չի տարածվում։

Տրդատ I-ը, ինչպես երևում է Գառնիում հայտնաբերված նրա հունարեն արձանագրությունից, 77 թ. վերակառուցում է նաև Գառնիի բերդը և նրա ներսում կառուցում նոր շենքեր։ Նրա կառուցած հոյակապ շենքերից մեկն է Գառնիի սյունազարդ և սքանչելի քանդակներով զարդարված հեթանոսական տաճարը, որը այժմ էլ մեծ հիացմունք է պատճառում դիտողներին։

Այս ժամանակ Հայաստանի հատկապես հյուսիսային ու հյուսիս-արևելյան շրջանների հանգստությունը որոշ չափով խանգարում են ալանները, որոնք կովկասյան մյուս ցեղերի ու իբերների հետ միասին 72 թ. կողոպուտի նպատակով արշավում են դեպի Ատրպատական ու Հայաստան։ Տրդատը հայկական ուժերով ոչնչացնելով, ճակատամարտ է տալիս նրանց դեմ։ Ալանների արշավանքը կրկնվում է նաև 75 թ.։

Տրդատի կյանքի վերջին տարիները և նրա մահվան ճիշտ թվականը հայտնի չեն։ Ուսումնասիրողները ենթադրում են, որ նա թագավորել է մինչև 78 թ.։

Հայաստանը Սանատրուկի ժամանակ

Տրդատ I-ին հաջորդում է Սանատրուկը (78—110), որը ծագումով Արշակունի էր։ «Հայոց թագավոր Սանատրուկը,—վկայում է հույն մատենագիր Սուիդասը,—ուներ միջին հասակ, բայց հակում ուներ ամեն մի մեծ բանի և, մանավանդ, դեպի պատերազմական գործերը։ Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր և ուղղամիտ, ինչպես լավագույնները հույների և հռոմեացիների մեջ»։

Սանատրուկի ժամանակ Հայաստանում շարունակում է զար-

գանալ քաղաքաշինությունը։ Նա Արածանի գետի և Մեղրագետի միախառնման տեղում, Մուշի դաշտի արևմտյան կողմում կառուցում է Մծուրն կամ Մծուրք քաղաքը։

Մոտ 110 թվականին մահանում է Սանատրուկը և թաղվում Դարանաղյաց գավառի Անի ամրոցում գտնվող հայ թագավորների, այդ թվում և Արշակունի թագավորների տոհմային գերեզմանատունը։ Սրա դամբարանը, ինչպես վկայում է Փավստոս Բուզանդը, հրաշակայտշեն, ամրապինդ և ճարտարագործ մի կառուցվածք էր, որը նույնիսկ չէին կարողացել բանալ պարսիկները, երբ նրանք 365 թ., գրավելով Անի ամրոցը, քանդել էին հայ թագավորների գերեզմանները և նրանց մեջ եղած ոսկորները տարել իրենց հետ։

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ II—III ԴԱՐԵՐՈՒՄ

Տրդատոս կայսեր արշավանքը

Չնայած Արշակունյաց դինաստիայի հաստատմանը, մինչև II դարի վերջը հայկական գահը ժառանգաբար չէր անցնում Հայաստանի Արշակունի թագավորների որդիներին։ Հռանգեայի դաշնագրի հիման վրա՝ յուրաքանչյուր թագավորի մահից հետո պարթև Արշակունիները հայկական գահի համար իրենց տոհմից առաջարկում էին նոր թեկնածու, որը կարող էր թագավորել Հռոմեական կայսրության հավանությունը և հաստատություն ստանալուց հետո միայն։

Սանատրուկի մահից հետո, պարթև Արշակունիների առաջարկությամբ և Հռոմեական կայսրության համաձայնությամբ, Հայաստանում գահ է բարձրանում պարթևաց Բակուր II թագավորի (77—110) որդին՝ Աշխադարը։

113 թ. պարթևաց նոր թագավոր Խոսրովը, իր սեփության շահերի տեսակետից անհամապատասխան համարելով Աշխադարին, ինքնագլուխ կերպով առանց Հռոմեական կայսրության համաձայնության, Աշխադարին հեռացնում է հայկական գահից և նրա փոխարեն Հայաստանի թագավոր է նշանակում Բակուր II-ի մյուս որդուն՝ Պարթամասիրին։

Տրդատոս կայսրը (98—117), Հայաստանում կատարված այս փոփոխությունը համարելով Հռանդեայի դաշնագրի խախտում և հռոմեական շահերի ոտնահարում, մի խոշոր արշավանք է կատարում դեպի Արևելք։ Այս արշավանքի անմիջական շարժառիթը թեև Հայաստանում կատարված փոփոխությունն էր, սակայն իրակա-

նում այս արշավանքով Տրայանոսը ձգտում էր Արևելքում վերականգնել Հռոմի խախտված դիրքերը։

114 թ. գարնանը Տրայանոսը իր զորքերով մտնում է Հայաստան և, Մուրքի մայրաքաղաք Արշամաշատը գրավելուց հետո, գալիս բանակ է դնում Նկեղյաց գավառում։ Այստեղ Տրայանոսին է ներկայանում Հայաստանի թագավոր Պարթամասիրը և իր թագը դնում նրա ոտքերի մոտ, այն հույսով, որ այդ թագը կրկին նա կընտանա կայսեր ձեռքից։ Սակայն Տրայանոսը մերժում է հայկական գահը վերադարձնել Պարթամասիրին և հայտարարում է, որ ինքը որոշել է Հայաստանը դարձնել հռոմեական պրովինցիա։

Տրայանոսը Պարթամասիրին և նրան ուղեկցող պարթևներին թույլ է տալիս հեծյալ մի պահակախմբի հսկողությամբ հեռանալ հռոմեական բանակից։ Սակայն ճանապարհին ուղեկցող պարթևների և հռոմեական պահակախմբի միջև տեղի է ունենում ընդհարում, որտեղ և սպանվում է Պարթամասիրը։

Շուտով Տրայանոսը նվաճում է Հայաստանը և այն վերածում հռոմեական պրովինցիայի։

Տրայանոս կայսրը իր հետագա արշավանքի ընթացքում 114—116 թթ. գրավում է նաև Մծբինը, Եդեսիան, պարթևների մայրաքաղաք Տիզբոնը, Սելևկիան և հասնում մինչև Պարսից ծոց։

116 թ. Հայաստանում, Միջագետքում և Ադիաբենում ուժեղ ապստամբություններ են առաջանում հռոմեացիների դեմ։ Այս ապստամբությունները ոգևորում են նաև պարթև Արշակունիներին, որոնք, մի կողմ թողնելով իրենց ներքին տարաձայնությունները, ամբողջ ուժերը համախմբում են՝ արտաքին թշնամու դեմ։ Ապստամբներն ու պարթևական զորքերը շատ տեղերում ջարդում կամ դուրս են վտարում հռոմեական պահապան զորքերին։

Տրայանոսը իր թիկունքը վտանգված տեսնելով, շտապ վերադառնում է Միջագետք և դաժան կերպով ճնշում այստեղ առաջացած ապստամբությունները։ Սակայն դրանից հետո Տրայանոս կայսրը երկար չի ապրում։ Նա մահանում է 117 թ. Կիլիկիայում։

Հռոմեա-պարթևական հետագա մրցակցությունը և Հայաստանը

Տրայանոսի մահից հետո Ասորիքում գտնվող հռոմեական զորքերը կայսր են հռչակում նրա ազգական Ադրիանոսին (117—138)։ Սա հրաժարվում է Տրայանոսի բոլոր նվաճումներից և նոր նվաճված հրկրամասերը վերադարձնում է պարթևական թագավորությանը, որովհետև կայսրությունը առանց ուժերի ծայրահեղ լարման ու նյութական մեծ միջոցների չէր կարող պահել դեռևս տեղ-տեղ ապստամբություններով

բռնկված, չխաղաղեցված և հռոմեացիների դեմ թշնամաբար տրամադրված այդ երկրամասերը։

Հայ ժողովրդի բարձրացրած ապստամբության և ցույց տված համառ դիմադրության, ինչպես և պարթևների հետ ընդհարվելու վտանգի հետևանքով Ադրիանոսը ստիպված է լինում հռոմեական զորքերը դուրս բերել նաև Հայաստանից։ 117 թ. կրկին վերականգնվում են Հայաստանի ներքին ինքնուրույնությունն ու թագավորությունը և գահ է բարձրանում Սանատրուկ թագավորի որդին՝ Վաղարշ I-ը (117—140)։

Հայաստանում կրկին հաստատվում է համեմատաբար երկարատև խաղաղություն։ Տնտեսական կյանքի զարգացման հետևանքով Արարատյան դաշտում, Հայաստանի մայրաքաղաք Արտաշատից ոչ այնքան հեռու, առաջանում է մի նոր մեծ քաղաք։ Դեռևս Երվանդունիների ժամանակ գյուղաքաղաք հանդիսացող Վարդգեսավանը աստիճանաբար մեծանում, բազմամարդանում և առևտրաշահ քաղաքի է վերածվում։ Հայոց Վաղարշ I թագավորը ամուր պարիսպներով ու պատվարով շրջապատում է Վարդգեսավանը և այն իր անունով վերանվանում Վաղարշապատ, որը հայկական և հունա-հռոմեական սկզբնաղբյուրներում կոչվում է նաև Նոր քաղաք կամ Կայնեպոլիս։

Վաղարշ I-ի մահից հետո, մեզ անհայտ պատճառներով, Հայաստանում կրկին հաստատվում է հռոմեական գերիշխանությունը։ 140 թ. Անտոնիոս Պիոս կայսրը (138—161) Հայաստանում թագավոր է նշանակում հռոմեական սենատի անդամ Սոհեմոսին (առաջին անգամ՝ 140—161), որին խորենացին անվանում է Տիգրան։ Սա ծագումով Արշակունի չէր, այլ Եմեսայի (այժմ՝ Հոմս) իշխանական տոհմից։

Սոհեմոս-Տիգրանին գահ բարձրացնելը Հայաստանում, որը բացահայտ կերպով հռոմեացիների կողմից Հանդեայի դաշնագրի խախտումն էր, իհարկե, երկար չէր կարող հանդուրժելի լինել պարթևների համար։ 161 թ. պարթևական զորքերը մտնում են Հայաստան, գլխովին ջախջախում հռոմեական լեգեոններին և Սոհեմոսին դուրս են վտարում Հայաստանից։ Պարթևները Հայաստանի թագավոր են հռչակում Արշակունի Բակուրին։

Հռոմեացիները Կապադովկիայից նոր ուժեր են ուղարկում Հայաստան, որոնք չարաչար պարտվում են հայ-պարթևական զորքերի կողմից։

Պարթևներին հետ մղելու և Հայաստանում Հռոմի գերիշխանությունը վերականգնելու համար Մարկոս Ավրելիոս կայսրը (161—

180) խոշոր ուժերով Արևելք է ուղարկում իր գահակից եղբորը՝ Լուկիոս Վերոսին (161—169)։

163 թ. ամռանը հռոմեական զորաբանակներից մեկը, Ստատիոս Պրիսկոս զորավարի գլխավորությամբ, Կապադովկիայի վրայով ներխուժում է Հայաստան և համառ կռիվներից հետո նվաճում այն։ 163 թ. վերջին հռոմեացիները նվաճում են նաև Արտաշատը և այն կրկին ավերում։ Հայաստանի թագավոր Բակուրը գերի ընկնելով, ուղարկվում է Հռոմ, որտեղ և որդեգրվում է արքայական Ավրելյան աղգատոհմում և այնտեղ էլ մահանում։

164 թ. հռոմեացիները Հայաստանում նորից գահ են բարձրացնում Հռոմից վերադարձած Սոհեմոս-Տիգրանին։ Դրանից վրդովված հայերը, Տրդատ հայ իշխանի գլխավորությամբ, հուժկու ապստամբություն են բարձրացնում։ Սակայն հռոմեական զորքերը դաժան կերպով ճնշում են ապստամբությունը և ձերբակալում Տրդատին։

Հռոմեացիները զգալի չափով ավերված Արտաշատի փոխարեն Վաղարշապատը հայտարարում են Հայաստանի գլխավոր քաղաքը և այն դարձնում են հռոմեական զորքերի կայան, հետագայում պարհակների միջոցով ավելի ևս ամրացնելով նրա պարիսպները։ 164 թ. սկսած մինչև V դարի երկրորդ կեսը Վաղարշապատը դառնում է Հայաստանի մայրաքաղաքը, թեև Արտաշատը ևս հետագա դարերում շարունակում է մնալ երկրի տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի հիմնական կենտրոններից մեկը։

Մեզ հայտնի չէ, թե երկրորդ անգամ Սոհեմոս-Տիգրանը մինչև երբ է թագավորել։ Ենթադրում են, որ նա մահացել է 185 թ.։

Հայ Արշակունյաց ժառանգական դինաստիայի հաստատումը

Սոհեմոս-Տիգրանի մահից հետո հայկական գահը գրավում է պարթևաց թագավորի եղբայր Վաղարշ II-ը (185—198)։ Հռոմեական կայսրությունը, որն այս ժամանակ ներքին խառնակ և անկայուն վիճակ էր ապրում, պարթևների հետ ընդհարումներից խուսափելու նպատակով համաձայնվում է Հայաստանում տեղի ունեցած այս փոփոխության հետ։

193 թ. Հռոմում կայսր է հռչակվում Սեպտիմիոս Սևերոսը (193—211)։ Սա 194 թ. աշնանը, մեծ ուժերով գալով Արևելք, ցանկանում է ներխուժել նաև Հայաստան։ Սակայն հայոց թագավոր Վաղարշ II-ը կանխում է այդ, ուղարկելով նրան փող, նվերներ ու պատանդներ, ինչպես և խոստանալով զինակցություն ու բարեկամություն։

197 թ. հռոմեացիները ոչ միայն վերանվաճում են Միջագետքը, այլև գրավում են պարթևների մայրաքաղաք Տիզբոնը և Բաբելոնը։ 199 թ. պարթևները ստիպված են լինում հաշտության դաշնագիր կնքել Սևերոսի հետ։ Այդ դաշնագրով Միջագետքը անցնում է Հռոմեական կայսրությանը։

Հռոմեացիները գրավելով և պրովինցիայի վերածելով Միջագետքը, փաստորեն սեպ են խրում Հայաստանի և Պարթևստանի միջև և այդ երկրները բաժանում իրարից։

Հայ Արշակունիները, որոնք վաղուց ձգտում էին ազատվել պարթև Արշակունիների վերահսկողությունից և Հայաստանում հիմնել իրենց սեփական ժառանգական դինաստիան, աշխատում են դաշինք կնքել հաղթական Հռոմեական կայսրության հետ, մանավանդ որ այժմ կայսրությունը այն չափով չէր սպառնում երկրի անկախությանն ու ինքնուրույնությանը, որքան առաջ։

Սեպտիմիոս Սևերոսը հայերին սիրաշահելու, հայ-պարթևական հետագա հնարավոր դաշնակցությունը խափանելու նպատակով ընդառաջում է Վաղարշ II-ի ցանկությանը և բարեկամական դաշնագիր է կնքում նրա հետ։ Ըստ այդ դաշնագրի՝ կայսրը դուրս է բերում Հայաստանում գտնվող հռոմեական զորքերը, թույլ է տալիս մեծացնել հայկական հեծելազորի թիվը և ամեն տարի զգալի գումար է բաց թողնում նրա պահպանման համար. սակայն, պայմանով, որ այդ զորքը պետք է մասնակցեր հռոմեական արշավանքներին։

Հայաստանում հիմնվում է հայ Արշակունիների սեփական ժառանգական դինաստիան, որի հիմնադիրը, ինչպես ճիշտ կերպով նշել է Հ. Մանանդյանը, դառնում է Վաղարշ II-ը, և որ այս Վաղարշը ոչ այլ ոք է, եթե ոչ Խորենացու մոտ հիշատակված հայոց թագավոր Վաղարշակը։

1961 թ. պեղումների ժամանակ Գառնիում հայտնաբերվել է պահլավերեն մի արձանագրություն, որի նախնական ընթերցումից պարզվում է, որ այն թողել է հայոց Վաղարշ թագավորի որդին։ Այս փաստը ևս ապացուցում է, որ Վաղարշ II-ի ժամանակ հայ Արշակունիների թագավորությունը դարձել էր ժառանգական։

198 թ. վրաց-հայերը նոր արշավանք են կատարում դեպի Հայաստան։ Թեև Վաղարշ II-ը հաղթում և դուրս է քշում նրանց Հայաստանից, սակայն տեղի ունեցած կռիվներից մեկում սպանվում է նաև ինքը։

Կարակալլա կայսեր արշավանքը Հայաստան

Վաղարշ II-ին հաջորդում է նրա որդին Խոսրով I-ը (198—215)։ Նա, ինչպես վկայում է Խորենացին, իր հոր վրեժը լուծելու նպատակով մի արշավանք է կատարում Կովկասի լեռնականների դեմ և հաղթում նրանց։

Սեպտիմիոս Սևերոսից հետո կայսր է դառնում նրա որդին՝ Անտոնիոս Կարակալլան (211—217)։ Սա անգութ, նենգամիտ, վրիժառու և փոքրոգի մի բռնակալ էր։ Նա երազում էր նմանվել իր ամենասիրելի հերոսին՝ Ալեքսանդր Մակեդոնացուն և նվաճել ամբողջ Առաջավոր Ասիան։

Այդ նպատակով էլ Կարակալլան 215 թ. գալիս է Ասորիք։ Նա նախ որոշում է գրավել Հայաստանը և այն դարձնել հռոմեական պրովինցիա։ Հենց այդ ժամանակ հայոց Խոսրով I թագավորի և նրա որդիների միջև ներքին տարաձայնություններ ու վեճեր էին առաջացել։ Կարակալլան, օգտվելով դրանից, հայոց թագավորին և նրա որդիներին հաշտեցնելու պատրվակով, կեղծ բարեկամական նամակներով իր մոտ՝ Անտիոք է կանչում Խոսրովին ու նրա ընտանիքի անդամներին։ Երբ Խոսրովը և նրա կինը միամտաբար գալիս են Անտիոք, Կարակալլան ձերբակալում է վերջիններիս և ուղարկում Հռոմ։

Հռոմեական կայսեր այս նենգ ու տմարդի արարքն ընդհանուր զայրույթ է առաջ բերում Հայաստանում։ Հայերը զենք են բարձրացնում և չեն ուզում հպատակվել Կարակալլային։ Նրանք Հայաստանի թագավոր են հռչակում Խոսրով I-ի որդիներից մեկին՝ Տրդատ II-ին (215—252)։

Կարակալլան աշխատում է զենքի ուժով հնազանդեցնել հայերին, բայց հաջողություն չի ունենում։ Հայերը նրա ուղարկած զորքերին ջախջախում և դուրս են քշում երկրի սահմաններից։

216 թ. Կարակալլան պատերազմ է սկսում պարթևների դեմ։ Նա Մարաստանի շուրջը գտնվող երկրները ավերելուց և Ադիաբենը գրավելուց հետո վերադառնում և ձմեռում է Եդեսիայում։ 217 թ. գարնանը նա նոր արշավանքի է դուրս գալիս պարթևների դեմ, բայց հենց այդ ժամանակ էլ սպանվում է իր զինվորների ձեռքով։

Նոր կայսր Մակրինոսը (217—218) թեև շարունակում է պատերազմը, սակայն Մծբինի մոտ երկու անգամ պարտություն կրելով, ստիպված է լինում հաշտություն կնքել Արտավան V թագավորի (216—224) հետ։ Մակրինոսը ստիպված է լինում դադարեցնել նաև թշնամությունը Հայաստանի նկատմամբ։ Եվ որովհետև Խոսրով I-ը մահացել էր բանտում, ուստի Մակրինոսը նրա որդուն՝

Տրդատ II-ին, ճանաչում է Հայաստանի թագավոր և նրան ուղարկում է թագ։ Մակրինոսը բանտից ազատում ու էտ է դարձնում նաև Տրդատի մորը։ Բացի այդ, նա Տրդատին է վերադարձնում նաև Հայաստանից տարված ավարը և նրա հոր ունեցած կալվածքները Կապադովկիայում։

Սասանյան դինաստիայի հաստատումը Պարսկաստանում և Հայաստանը

Սոցիալ-դասակարգային հարաբերությունների սրման, ապստամբությունների, անվերջ դահակալական կռիվների և Հռոմեական կայսրության դեմ մղված անհաջող երկարատև պատերազմների հետևանքով պարթև Արշակունիների դինաստիան հեղինակազրկվում, թուլանում և կանգնում է անկման առաջ։

Պարթև Արշակունիների դեմ շարժումն սկսվում է բուն պարսկական նահանգից՝ Ֆարսից կամ Պարսքից, որը հանդիսանում էր Աքեմենյանների հայրենիքը և զրադաշտական կրոնի կենտրոնը։ Շարժման գլուխն է կանգնում Պարսքի Ստահր քաղաքի արքայիկ Արտաշիրը, որը նույն քաղաքի քրմապետ Սասանի թոռն էր։

224 թվականի գարնանը տեղի ունեցած ճակատամարտում Արտավանը պարտվում և սպանվում է։ Շուտով Արտաշիրը գրավում է ամբողջ Պարթևական թագավորությունը և նրա մայրաքաղաք Տիզբոնը։ 226 թվականին նա Տիզբոնում հանդիսավոր կերպով թագադրվում և իրեն հայտարարում է «Իրանի արքայից արքա» կամ «Իրանի շահնշահ»։ Այսպիսով, Արտաշիր I-ը (226—241) Պարսկաստանում հիմք է դնում մի նոր դինաստիայի, որը նրա պապ Սասանի անունով կոչվում է Սասանյան։

Սասանյանները, հենվելով Իրանում նոր ձևավորված ֆեոդալական դասակարգի ու քրմական դասի վրա, ինչպես և համախմբելով իրանական ժողովրդի ուժերը, ստեղծում են ավելի կենտրոնացված և ուժեղ պետություն, քան Պարթևական թագավորությունն էր։ Նրանք, իրենց համարելով Աքեմենյանների ժառանգորդները և նրանց ավանդույթների շարունակողները, սկզբից ևթ ձգտում են վերականգնել հին պարսկական աշխարհակալ պետությունը և նրա հզորությունը։ Այդ նպատակով էլ Սասանյանները, ի տարբերություն պարթև Արշակունիների, Հռոմեական կայսրության դեմ ըստ էության են վարել ակտիվ հարձակողական քաղաքականություն և և աշխատում են նրան դուրս քշել Արևելքից։

Սասանյանները խիստ ու անհաշտ թշնամական դիրք են գրավում նաև Հայաստանի նկատմամբ, այնտեղ իշխող Արշակունինե-

ին համարելով իրենց դինաստիական հակառակորդները։ Նրանք ոչ միայն ձգտում են Հայաստանում ևս վերացնել Արշակունիներին, այլև նվաճել Հայաստանը և այն դարձնել Պարսկաստանին ենթակա մարզերից մեկը։

Հայ ժողովուրդը իր պետականությունը և ինքնուրույնությունը պահպանելու համար ստիպված է լինում համառ ու անհավասար պայքար մղել Սասանյան Պարսկաստանի դեմ։ Այդ պայքարում Հայաստանը հարկադրված է լինում հակվել դեպի Հռոմեական կայսրությունը, մանավանդ որ վայրէջքի ու անկման երկարատև ճգնաժամի մեջ մտած կայսրությունը այժմ արդեն Հայաստանի համար այնքան վտանգավոր չէր, որքան առաջ։

Սասանյան դինաստիայի հաստատումը Պարսկաստանում ունենում է նաև այն հետևանքը, որ հայերը, աղվաններն ու վրացիները քաղաքականապես ու մշակույթով ավելի սերտ կերպով մերձենում են իրար, քանի որ Սասանյանները սպառնում էին նաև Աղվանից աշխարհի ու Վրաստանի անկախությանը։

Հայաստանի պայքարը Սասանյան Պարսկաստանի դեմ

Պարթև Արշակունիների անկումից հետո, ինչպես վկայում է Դիոն Կասիոսը, Արտավան V-ի որդիները և Սասանյանների հակառակորդ պարթևական ավագանու ներկայացուցիչները իրենց զորքերով գալիս են Հայաստան և ապաստան գտնում Հայոց թագավորի մոտ։ Հայաստանը փաստորեն դառնում է հակասասանյան ուժերի համախմբման հիմնական կենտրոնը։

Հայոց թագավոր Տրդատ II-ը տասնմեկ տարի հայկական, Հայաստանում ապաստանած պարթևական, ինչպես և դաշնակից վրացական, աղվանական ու կովկասյան լեռնականների միացյալ ուժերով բազմաթիվ արշավանքներ է կատարում, որպեսզի Պարսկաստանում տապալի Սասանյանների տիրապետությունը և վերահաստատի պարթև Արշակունիների դինաստիան։ Սակայն նրա այդ ջանքերը ոչ մի արդյունք չեն տալիս։

Իհարկե, Սասանյանները իրենց հերթին չէին կարող հաշվի չառնել և անտեսել Հայաստանից իրենց սպառնացող այս վտանգը։ Արտաշիր I-ը, Իրանում իր իշխանությունն ամրապնդելուց հետո, որոշում է նվաճել Հայաստանը և ոչնչացնել այստեղ համախմբված հակասասանյան ուժերին։ Այդ նպատակով էլ Արտաշիր I-ը 228 թվականին հարձակվում է Հայաստանի վրա։ Սակայն հայկական բանակը և Հայաստանում ապաստանած պարթևական զորքերը

ժանր պարտության են մատնում Արտաշիրին և նրան դուրս քշում երկրից։

Սասանյան Պարսկաստանը մեծ չափով ուժեղանում է Արտաշիրի որդու՝ Շապուհ I-ի ժամանակ (241—272)։

Երրորդ դարի կեսից Հայաստանի արտաքին դրությունը խիստ ծանրանում է, որովհետև այդ ժամանակ Հռոմը առավելապես զբաղված լինելով ներքին գահակալական կռիվներով և Եվրոպայում գոթերի, ֆրանկների ու ալամանների, իսկ Աֆրիկայում՝ մավրիտանական ցեղերի հարձակումները ետ մղելով, ոչ միայն չէր կարող օգնել իր դաշնակցին՝ Հայաստանին, այլև պաշտպանել իր արևելյան սահմանները։

Հայաստանը, զրկված լինելով Հռոմի օգնությունից, շուտով մենակ է մնում և 252 թվականին նվաճվում Պարսկաստանի կողմից։ Տրդատ II-ը փախչում է հռոմեացիների մոտ։

Շապուհ I-ը Հայաստանը նվաճելուց հետո այնտեղ թագավոր է նշանակում Արտավազդ անունով մեկին, որի մասին մեզ քիչ բան է հայտնի։

Հայաստանը վերջնականապես Պարսկաստանին ենթարկելու նպատակով Շապուհ I-ը որոշ ժամանակ անց Արտավազդի փոխարեն հայկական գահի վրա է բարձրացնում իր անդրանիկ որդուն՝ Որմիզդ-Արտաշիրին, որը Հայաստան գալով, վարում է մեղմ քաղաքականություն, աշխատում է սիրաշահել գահից զրկված Արշակունիներին ու հայ նախարարական տներին, կարգավորում է պետական հարկերը։ Սա, ինչպես վկայում է Խորենացին, գեղեցկապես կարգավորում է Հայոց աշխարհը և այնտեղ հաստատում նախկինում գոյություն ունեցող կարգ ու կանոնը։ Միաժամանակ Որմիզդ-Արտաշիրը խիստ պայքար է սկսում Արևմուտքի ազդեցության ու հելլենիստական մշակույթի դեմ, ինչպես և աշխատում է Հայաստանում տարածել իրանական մշակույթը և զրադաշտական կրոնը։

III դարի 70-ական թ. սկզբին Հռոմեական կայսրությունը կարողանում է ժամանակավորապես վերականգնել իր քաղաքական հզորությունը և ուշադրություն դարձնել Արևելքի վրա։ Մի քանի հաղթական ճակատամարտերից հետո, Ավրելիանոս կայսրը 271—273 թթ. վերադարձվում է արևելյան նախկին պրովինցիոները և վերականգնում իր տիրապետությունը։

Ավրելիանոս կայսրի արևելյան այս արշավանքի ժամանակ, հավանաբար 273 թվականին, Հայաստանը ևս հռոմեացիների օգնությամբ ազատագրվում է Սասանյան Պարսկաստանի տիրա-

պետությունից և վերականգնում իր ինքնուրույնությունը։ Հայաստանում թագավոր է հռչակվում Հայ Արշակունիների տոհմից Խոսրով II-ը (273—287), որը, հավանաբար, Տրդատ II-ի որդիներից մեկն էր։ Սասանյան Պարսկաստանը, որտեղ Շապուհ I-ի մահից (272 թ.) հետո քաղաքական անկայուն վիճակ էր ստեղծվել, չի կարողանում դիմադրություն ցույց տալ և լռելյայն համաձայնվում է Հայաստանում տեղի ունեցած փոփոխության հետ։

Խոսրով II-ը, հաճախ դաշնակցելով հարևան վրացիների ու աղվանների, իսկ երբեմն էլ հռոմեացիների հետ, պայքար է մղում Սասանյան Պարսկաստանի դեմ։ Սակայն այդ պայքարը առանձին արդյունք չի տալիս։

Խոսրով II-ի հակասասանյան քաղաքականությունը, բնականաբար, չէր կարող առաջ չբերել նրա դեմ պարսից իշխող վերնախավի թշնամությունն ու վրեժխնդրությունը։ Ըստ ավանդական պատմության՝ Խոսրովը սպանվում է Վաղարշապատում, պարսից թագավորի կողմից ուղարկված վարձկան Անակ Պարթևի ձեռքով, հավանաբար 287 թվականին։ Խոսրովի սպանությունից հետո Հայաստանը կրկին նվաճվում է պարսիկների կողմից, իսկ թագաժառանգ պատանի Տրդատը փախչում և ապաստանում է հռոմեացիների մոտ։

ԳԼՈՒԽ XI

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊ, ԹԱՏՐՈՆ

Հելլենիստական մշակույթը Հայաստանում

III դարից (մ. թ. ա.) հունական մշակույթը, դիցաբանությունը և հունարեն լեզուն զգալի չափով տարածվում են նաև Հայաստանում։ Սոցիալ-տնտեսական հարաբերությունների, բայց հատկապես քաղաքների զարգացման, տեղական ու հունական մշակույթների սինթեզի, փոխազդեցության հիման վրա առաջանում է հայկական հելլենիստական մշակույթը։ Հայաստանում ստեղծված կամ հայկական հելլենիստական մշակույթը զարգանում էր ինքնուրույն ուղիով, տեղական ավանդույթի ինքնատիպ հատկանիշների պահպանումով ու դրոշմով, թեև նա միաժամանակ Արևելքի երկրներում ստեղծված հելլենիստական ընդհանուր մշակույթի մի մասն էր։

Ինչպես Արևելքի շատ երկրներում, նույնպես և Հայաստանում հելլենիստական մշակույթը առավելապես ստրկատիրական վերնախավի ու քաղաքային բնակչության մշակույթն էր և տարածված էր սրանց շրջանում։ Այդ պատճառով էլ հայկական հելլենիստական մշակույթը գրեթե բացառապես զարգանում էր արքունիքում, ստրկատերերի ապարանքներում և քաղաքներում։

Հակառակ սրան, գյուղական բնակչությունը, այսինքն՝ բուն ժողովուրդը ոչ միայն պահպանում էր իր լեզուն, կենցաղը, սովորույթներն ու հավատալիքները, այլև շարունակում էր զարգացնել օտարամուտ ազդեցություններից զերծ հայկական մշակույթը։ Որոշ չափով բուն հայկական մշակույթը պահպանվում և զարգացվում էր նաև մեհյաններում։

II—I դարերում Հայաստանի միավորման, նրա տնտեսական

ու քաղաքական հզորության զուգընթաց վերելք է ապրում նաև հայկական մշակույթը. Հայաստանը դառնում է Արևելքի մշակույթով զարգացած առաջավոր երկրներից մեկը։

Գրականությունը և պատմագրությունը

Մովսես Խորենացին վկայում է, որ հայկական մեհյաններում, բայց հատկապես Դարանաղյաց գավառի Անի ամրոցում, եղել են մեհենական տարեգրություններ, հավանաբար, նաև ուրիշ կրոնական գրքեր։ Սակայն Նա, դժբախտաբար, չի նշում, թե այդ գրքերը ինչ լեզվով և ինչպիսի նշանագրերով էին գրված։ Արաքս գետի ափին գտնվող Դաշբուռուն գյուղի մոտ ժայռերի վրա հայտնաբերվել են գիտությանը անծանոթ նշանագրեր, որոնք որոշ նմանություն ունեն հայկական ձեռագրերում պահպանվող դաղափարագրերի հետ։ Առանձին ուսումնասիրողներ, հիմնվելով այս նշանագրերի և Խորենացու վկայությունների վրա, ենթադրում են, որ դեռևս մեր թվականությունից մի քանի դար առաջ Հայաստանում գոյություն են ունեցել հայկական մեհենական նշանագրեր։ Եթե իրոք գոյություն են ունեցել հայկական մեհենական նշանագրեր, ապա պետք է կարծել, որ դրանք մասսայական գործածության համար չեն եղել, այլ, ինչպես Եգիպտոսում և այլ երկրներում, ունեցել են կաստայական բնույթ, դրանց ծանոթ են եղել միայն քրմերը և դրանցով գրվել են բացառապես կրոնական գրքեր և մեհենական տարեգրություններ։

Հայերեն լեզվով աշխարհիկ բովանդակություն ունեցող երկեր, բանաստեղծություններ, երգեր, նամակներ և զանազան գրություններ գրելու համար հայերը օգտագործել են արամեական, պարսկական և հունական տառերը։

Սակայն նույն այս ժամանակ հայկական արքունիքում, ստրկատիրական արիստոկրատիայի և քաղաքային բնակչության շրջանում գրականությունը, գիտությունը և մշակույթի մյուս ճյուղերը զարգանում էին սկզբում արամերեն, իսկ հետագայում՝ հունարեն լեզուներով։ Պետական գրագրությունները և դիվանը նույնպես վարում էին այդ լեզուներով։

Առաջին հայ հեղինակը, որի մասին մեզ տեղեկություն է հասել, հայոց Արտաշես I թագավորի որդի Վրույրն է։ Խորենացին, օգտվելով մեհենական պատմությունից և այլ աղբյուրներից, Վրույրին անվանում է «այր իմաստուն և բանաստեղծ»։ Սակայն դժբախտաբար պատմահայրը չի նշում նրա գրվածքներից կամ բանաստեղծություններից որևէ մեկը։

Հնագույն հայ հեղինակներից ու պատմագիրներից էր Դարա-

նաղլաց գավառի Անի ամրոցի Ողյումպ քուրմը, որը, հավանաբար, ապրել և ստեղծագործել է I դարում մ. թ. ա.։ Սա գրել է «Մեհենական պատմություն», որի մեջ շատ արժեքավոր տեղեկություններ են եղել Երվանդ IV-ի և Արտաշես I-ի ժամանակ Հայաստանում տեղի ունեցած դեպքերի, քաղաքաշինարարության և մեհյանների մասին։ Խորենացին, որը զգալի չափով օգտվել է Ողյումպ քրմի աշխատությունից, սրան անվանում է «ստուգապես պատմող» և «գրող մեհենական պատմությանց»։

Տիգրան II-ի ժամանակ Հայաստանի Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքները դառնում են հելլենիստական մշակույթի կարևոր կենտրոններ։ Մի շարք հույն գիտնականներ, հալածվելով կամ փախչելով հռոմեացիներից, գալիս և հաստատվում են Հայաստանում։

Պլուտարքոսը վկայում է, որ հայկական արքունիքում էր ապրում իր հայրենի քաղաքից արտաքսված հույն նշանավոր հռետոր ու պատմագիր Ամֆիկրատես Աթենացին։ Հայաստանում եղած ժամանակ սա գրել է «Մեծ մարդկանց մասին» վերնագրով մի աշխատություն, որտեղ, հավանաբար, շարադրված է եղել նաև Տիգրան II-ի կյանքն ու գործունեությունը։

71 թ. (մ. թ. ա.) Հայաստան է գալիս և արքունիքում է ապրում նաև հույն հայտնի փիլիսոփա, հռետոր և պատմագիր Մետրոդորոս Սկեպսացին, որը մինչ այդ եղել էր Պոնտոսի պետական գործիչներից և Միհրդատ Պոնտացու խորհրդականներից մեկը։ Պլուտարքոսը սրան անվանում է «բազմագիտուն մարդ», իսկ Պլինիոսը՝ «հռոմատյաց»։ Սա գրել է Տիգրան II-ի ընդարձակ պատմությունը։ Թե՛ Ամֆիկրատես Աթենացու և թե՛ Մետրոդորոս Սկեպսացու վերոհիշյալ աշխատությունները մեզ չեն հասել։

Այս ժամանակ Հայաստանում եղել են նաև հայ նշանավոր գիտնականներ և մտածողներ։ Հայաստանում հելլենիստական լավագույն և բավականին կրթություն ստացած հայ գիտնականներից մեկն էր Տիրանը, որին Լուկուլլոսը գերեվարել և տարել էր Հռոմ։ Սա Հռոմում հռչակված էր իբրև նշանավոր հռետոր և քերականագետ։ Նա Հռոմեացի նշանավոր պետական գործիչ և հռետոր Ցիցերոնի անձնական բարեկամն էր և նրա դպրոցի հայտնի ուսուցիչներից մեկը։ Տիրանը Հռոմում հիմնել էր նաև մի գրադարան, ուր հավաքել էր հազարավոր ձեռագիր գրքեր։

Հայկական Հելլենիստական մշակույթի նշանավոր դեմքերից էր հայոց Արտավազդ II թագավորը։ Սա ոչ միայն հայկական արքունիքում հելլենիստական փայլուն կրթություն ստացած, հելլենիստա-

կան մշակույթը մեծապես գնահատող ու հովանավորող պետական գործիչ էր, այլև հունարեն լեզվով գրված բազմաթիվ երկերի հեղինակ։ «Արտավազդը,—վկայում է Պլուտարքոսը,—գրում էր ողբերգություններ, ճառեր և պատմական աշխատություններ», որոնք, ցավոք, մեզ չեն հասել։ Սակայն նրանցից մի քանիսը, ինչպես վկայում է Պլուտարքոսը, պահպանվել էին մինչև մեր թվականության II դարը։

I—III դարերում հայ Արշակունի թագավորները ևս Հայաստան են հրավիրել ու հովանավորել հելլենիստական մշակույթի մի շարք ներկայացուցիչների։ Այսպես, օրինակ՝ հայտնի է, որ հայոց թագավոր Սոհեմոս-Տիգրանի հրավերով Հայաստան է գալիս և երկար ժամանակ Արտաշատում ապրում II դարի հայտնի հռետոր, գրող և մանկավարժ Յամբլիքոս Քաղեղոնացին։ Սա Արտաշատում զբաղվում է հայ արքայազների դաստիարակությամբ և այնտեղ գրում 35 հատորանոց «Բաբելոնիկա» պատմա-վիպական երկը, որից միայն առանձին հատվածներ են հասել մեզ՝ հետագա հեղինակների միջոցով։

II դարի վերջից հայ Արշակունի թագավորները առանձին հետաքրքրություն են հանդես բերում Հայաստանի պատմության նկատմամբ։ Հայոց վաղարշ II թագավորի հանձնարարությամբ ասորի փիլիսոփա և պատմագիր Մար Աբաս Կատինան, օգտվելով հայկական արքունի դիվանում պահվող ժողովրդական ավանդությունների, առասպելների ու երգերի ժողովածուներից, հունարեն և ասորերեն լեզուներով գրում է Հայաստանի նախնական պատմությունը։ Խորենացին և Սեբեոսը իրենց աշխատությունների առաջին մասը գրելիս մեծապես օգտվել են նրա աշխատությունից։ Սեբեոսը նրան անվանում է «Մծուրնացի»։ Այս անվանումը ցույց է տալիս, որ նա ծնվել կամ երկար ժամանակ ապրել է Հայաստանի Մծուրն քաղաքում։ Անկասկած է, որ նա իմացել է նաև հայոց լեզուն։

Մար Աբաս Կատինա Մծուրնացու ժամանակակիցն էր ասորի նշանավոր գրող ու պատմագիր Բարդածան Եդեսացին (154—222)։ Ըստ Խորենացու վկայության՝ սա Հայաստան եկած առաջին քրիստոնյա քարոզիչներից էր։ Իր քարոզչության մեջ հայերի շրջանում հաջողություն չունենալով, Բարդածանը գալիս է Դարանաղյաց գավառի Անի ամրոցը և իրեն նվիրում գիտական աշխատանքի։ Այնտեղ նա գտնում, ընթերցում և հայերենից ասորերեն է թարգմանում «Մեհենական պատմությունը», որտեղ նշել են նաև տեղեկություններ հայ թագավորների գործունեության մասին։ Նա այնուհետև այս

աշխատության և նոր ժամանակների վերաբերյալ իր ունեցած տեղեկությունների հիման վրա գրում է Հայաստանի պատմությունը, որը հետագայում թարգմանվել է նաև հունարեն։ Նրա աշխատությունը ևս, որից Խորենացին օգտվել է, դժբախտաբար, մեզ չի հասել։

Բացի Ողյումպ քրմի և Բարգածանի թարգմանած մեհենական պատմություններից, հայերեն լեզվով գոյություն է ունեցել նաև Հայկազանց և Տիգրան Երվանդյանին նվիրված և չորս «հագներգություններից», այսինքն՝ մասերից բաղկացած չափածո մի երկ, որը կոչվել է «Հիսուսն Պիտոյից»։ Մովսես Խորենացին, որ անձամբ կարդացել և օգտվել է այս գրքից, թեև հեղինակի անունը չի տալիս, սակայն նրան անվանում է «իմաստունների մեջ իմաստնագույն»։

Ժողովրդական վեպը

IV—I (մ. թ. ա.) դարերում, ինչպես և հետագա շրջանում, հարստանում է նաև հայկական ժողովրդական վեպը կամ էպոսը։ Հայ վիպասանները և գուսանները ստեղծում են Հայաստանում տեղի ունեցած դեպքերի և հայ թագավորների շուրջը պատմա-ավանդական բնույթի գեղարվեստական բարձրարժեք բազմաթիվ վեպեր և զրույցներ։ Նրանք այդ ստեղծագործությունների մեջ մեծ չափով արտացոլել են հայ ժողովրդի ներքին կյանքը, նրա կենցաղը, սովորույթներն ու հավատալիքները։

Ժողովրդական պատմա-ավանդական վեպերի մեջ առաջնակարգ տեղ է գրավում Արտաշես I-ի անվան շուրջը հյուսված վեպը, որը հավանաբար ստեղծվել է մեր թվականությունից առաջ II—I դարերում։ Այդ վեպի մեջ դրվագվել են հայկական հողերի միավորման և հայկական միասնական կենտրոնացված պետականության ստեղծման համար Արտաշեսի մղած կռիվները Սելևկյանների (ըստ վեպի՝ հռոմեացիների), Երվանդ IV-ի և կովկասյան ցեղերի դեմ, Արտաշեսի կատարած շինարարական գործերը, Արտաշատ մայրաքաղաքի կառուցումը, նրա ժամանակ Հայաստանում տնտեսական կյանքի, արհեստների և մշակույթի զարգացումը և այլն։

Վեպում առանձին տեղ է գրավում Արտաշեսի կռիվը ալանների դեմ և այդ կապակցությամբ նրա ամուսնությունը ալանաց թագավորի դստեր՝ Սաթենիկի հետ։ Ըստ վեպի՝ ալանները, միացած կովկասյան այլ ցեղերի հետ, ներխուժում են Հայաստանի հյուսիսային շրջանները։ Արտաշեսը իր զորքով շարժվում է նրանց դեմ։ Տեղի ունեցած ճակատամարտում ալանները պարտվելով, քաշվում են Կուր գետի հյուսիսային ափը և բանակ դնում այնտեղ, իսկ Արտաշեսը

բանակ է դնում նույն գետի հարավային ափին։ Ալանաց թագավորը հաշտություն է առաջարկում Արտաշեսին և խնդրում ազատել իր որդուն, որը գերի էր ընկել հայերի ձեռքը։ Սակայն Արտաշեսը մերժում է կատարել նրա խնդիրքը։ Դրանից հետո ալանաց թագավորի դուստր Սաթենիկը, մոտենալով դեսպին, դիմում է Արտաշեսին.

Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց,
Ե՞կ հաւանեա՛ց բանից աղագեղոյ դստեր Ալանաց՝
Տալ զպատանիդ.
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝
Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն,
Կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել,
Եւ թշնամութիւն հաւիտենական
Ի մեջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել։

Արտաշեսը լսելով Սաթենիկի իմաստուն խոսքերը և տեսնելով նրա գեղեցկությունը, հաշտվում է և ամուսնանում նրա հետ։

Այս վեպի անմիջական շարունակությունն է Արտաշեսի և Սաթենիկի որդու՝ Արտավազդի անվան շուրջը հյուսված պատմա-առասպելական վեպը։

Բացի վերոհիշյալ վեպերից, գոյություն է ունեցել նաև Տիգրան II-ին նվիրված մի առանձին վեպ, որը, դժբախտաբար ամբողջապես և ինքնուրույն կերպով մեզ չի հասել։

Ժողովրդական վեպի մեջ հայ թագավորներն ու զորավարները հանդես են բերված իդեալականացված և հերոսականացված տեսքով։ Նրանց վերագրված են հոդիական լավագույն այնպիսի հատկություններ, որոնք գնահատված, հարգված ու սիրված են եղել հին հայերի մոտ։ Ժողովրդական երգիչները հայ թագավորներին ու զորավարներին գունազարդելով դրական հատկություններով և առաքինություններով, իրապես ոչ թե նրանց ներկայացրել են այնպես, ինչպես նրանք եղել են կյանքում, այլ այնպես, ինչպես ժողովրդի պատկերացմամբ պետք է լիներ։

Հին հայերի մոտ գնահատվել ու գովերգվել են նաև հերոսների մարմնական գեղեցկությունը, նրանց ֆիզիկական ուժը։ Երվանդը սրատ է և հաղթանդամ։ Արտաշեսի զորավար և դայակ Սմբատը մեծամարմին է՝ իր քաջության համեմատ, Տիգրանը դեմքով գեղեցիկ է, խարտյաշ, թիկնեղ, բարձրահասակ, գեղեցկատես, մարմնի մասերով համաչափ և ուժեղ։ Իսկ կանայք գեղեցիկ են, վայելչադեղ, գեղաշյա, իմաստուն և խորագետ։

Բացի պատմա-ավանդական վեպերից և դիցաբանական առասպելներից, անշուշտ, գոյություն են ունեցել նաև աշխատանքի, սիրո, ուրախության, հարսանիքի, տխրության, վշտի, թաղման և այլ ժողովրդական երգեր։ Սակայն, դժբախտաբար, հայ ժողովրդի առօրյան արտահայտող այդ երգերը մեզ չեն հասել։

Այս դարաշրջանում ևս ժողովրդական վիպերը, առասպելները և երգերը հորինում, մշակում և հարստացնում էին վիպասաններն ու գուսանները։ Հայաստանում հատկապես հռչակված էին Գողթն գինեվետ գավառի երգիչները։ Շրջելով ամեն տեղ, գուսանները քաղաքների ու գյուղերի հրապարակներում, իշխանական պալատներում, քաղաքացիների տներում, շինականների խրճիթներում տոնական հանդեսների, հարսանիքների ու խնջույքների ժամանակ պատմում էին դյուցազնական վեպեր և առասպելներ։ Նվագակցությամբ կատարում էին ժողովրդական երգեր ու պարեր։ Նրանք հորինում էին նաև երգերի երաժշտությունը։ Նրանց երաժշտական գործիքներն էին փանգիռը, տավիղը, քնարը, վինը, սրինգը և փոքր թմբուկը։ Գառնիի հին դամբարաններից մեկում գտնվել է ոսկրից պատրաստված մի սրինգ, որը մեզ հասած ամենահին երաժշտական գործիքն է։

Թատրոնը

Հայաստանի քաղաքներում զարգացման բավականին բարձր աստիճանի վրա էր գտնվում հայկական հելլենիստական թատրոնը։ Պլուտարքոսը վկայում է, որ Տիգրանակերտում գտնվում էին մեծ թվով հույն դերասաններ, որոնց Տիգրան II-ը հրավիրել էր զանազան տեղերից։ Նույն պատմիչի մի այլ վկայությունից հայտնի է, որ Արտաշատը նույնպես ունեցել է իր թատրոնը, որտեղ 53 թ. մ. թ. ա. Կրասոսի դեմ տարված հաղթանակի տոնախմբությունների ժամանակ, հայ և պարթև մեծամեծների ներկայությամբ, ներկայացվել է Էվրիպիդեսի «Բաքուսուհիներ» ողբերգությունը։

Պլուտարքոսի վկայություններից երևում է, որ հատկապես Տիգրանակերտի թատրոնը կառուցված է եղել ոչ թե ստրկատիրական վերնախավի, այլ մասսայական հանդիսատեսի համար։ Նա, հավանաբար, նման է եղել հելլենիստական քաղաքների ամֆիթատրոններին։ Թատրոն հաճախելը հելլենիստական քաղաքների բնակչության կենցաղի անհրաժեշտ մասն էր կազմում։ Հովհան Մանդակունի կաթողիկոսը (473—490) վկայում է, որ թատրոն էին հաճախում ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք։

Արտաշատի և Տիգրանակերտի թատրոնների խաղացանկը մեզ հայտնի չէ։ Սակայն, անկասկած է, որ այդ թատրոններում, բացի

հին Հունաստանի մեծագույն ողբերգակների երկերից, ներկայացվել են նաև Արտավազդ II-ի գրած ողբերգությունները։

Հայկական հելլենիստական թատրոնն իր գոյությունը պահպանում և զարգանում էր նաև մեր թվականության I—III դարերում։ Հունական մատենագրության մեջ տեղեկություններ են պահպանվել, որ Տրդատ I-ի խնդրանքով Ներոն կայսրը նրան է նվիրում իր ամենահայտնի միմոսներից մեկին։ Թատերական ճաշակը այնքան տարածված ու հարգված էր Հայաստանում, որ նույնիսկ թատերական տեսարանները գեղազարդման նյութ են դառնում կիրառական արվեստի համար։ Մայկոպ քաղաքի մոտ պեղված հին դամբարաններից մեկում հայտնաբերվել է հայոց Բակուր թագավորի ոսկեզոծված արծաթե թասը, որի կողմերը գեղազարդված են թատերական տեսարաններով, դիմակներով, պարող դերասանուհու նկարով և այլն։

Հելլենիստական թատրոնի կողքին գոյություն ուներ նաև հայկական ժողովրդական թատրոնը։ Այս թատրոնի դերասանները նույն գուսաններն էին։ Որ իրոք գուսանները միաժամանակ եղել են դերասաններ, երևում է նրանից, որ հունարեն «միմոս» բառը հին հայերեն թարգմանվել է «գուսան»։

Գուսանական խմբերը քաղաքների փայտաշեն թատրոններում, իշխանատներում, հրապարակներում, գյուղերում, տոնական հանդեսներում և այլուր ներկայացրել են ողբերգություններ, կատակերգություններ և խեղկատակություններ։ Վերջին երկու ժանրերի ներկայացումների նյութը մեծ մասամբ վերցվում էր ժամանակակից և առօրյա կյանքից։ Այդ տիպի ներկայացումների ժամանակ կատակագուսանները կամ ծաղրագուսանները, նպատակահարմար դիմակներ հագած, ծաղրում էին ոչ միայն մարդկային վատ արարքները, այլև հանդիսատեսին լավ ծանոթ ժամանակակից իշխանների ու հոգևորականների ագահությունը, ընչաքաղցությունը, շատակերությունը, անաստվածությունը, դաժանությունը, տգիտությունը, ժլատությունը և այլն։ Հովհան Մանդակունին ժողովրդական թատրոնի դեմ ուղղված հիմնական մեղադրանքներից մեկը համարում է այն, որ այդ թատրոնը «որդիներին թշնամացնում է հայրերի, իսկ ստրուկներին՝ տերերի հետ»։

Ժողովրդական թատրոնի ներկայացումները տեղի էին ունենում նվագի, երգերի ու պարերի ուղեկցությամբ։ Գուսանական խմբերի հետ ներկայացումների ու խնջույքների ժամանակ հանդես եկող դերասանուհի-պարուհիները կոչվում էին «վարձակ»։ Նշանավոր վարձակ դերասանուհիներից մեկն էր Նաղենիկը, որը «շատ գե-

պեցիկ էր և երգում էր ձեռքերով», այսինքն՝ ելույթ էր ունենում և պարում մնջախաղով։

Չորրորդ դարից սկսած՝ քրիստոնեական եկեղեցու հայրերը խիստ հալածանքներ են հարուցում թատրոնի դեմ, այն համարելով «հեթանոսական, դիվական և պիղծ»։ Ժողովրդական թատրոնը իր գոյությունը թեև պահպանում է նաև հետագա դարերում, բայց նա մեծ անկում է ապրում։

2. ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԵՎ ՏՈՄԱՐԸ

Հայկական հնագույն աստվածները և կրոնական հավատալիքները

Հայկական առասպելները սերտորեն կապված են հայոց հնագույն դիցաբանության և կրոնական հավատալիքների հետ։ Ուսումնասիրողները հիմնավոր կերպով ապացուցել են, որ Հայկը, Արան, Տորքը, գուցե և Արամը ոչ միայն հայ ժողովրդի կազմի մեջ մտած ցեղերի հավաքական ներկայացուցիչները կամ էպոնիմներն են, այլև նույն այդ ցեղերի աստվածները։

Հայ ժողովրդի կազմավորմանը զուգընթաց սկսում է ձևավորվել նաև հայկական հնագույն կրոնական պանթեոնը։ Նրա գլխավոր աստվածը Հայկն էր, որին հայերը համարում էին իրենց նախահայրը։ Նա քաջ աղեղնավոր էր, որսորդ և հովիվ։ Նրա անունով էր կոչվում երկնքի ամենապայծառ ու գեղեցիկ աստղերից մեկը՝ Օրիոն-Երևակի աստղը և նրա համաստեղությունը։ Հայկը երկնքի, լույսի, Հայոց երկրին կյանք պարգևող և նրան արտաքին թշնամիներից պաշտպանող աստվածն էր։

Հայոց հին աստվածներից էր Արան, որի պաշտամունքը տարածված էր նաև Փոքր Ասիայում։ Նա գեղեցկության, ողջախոհության, երկրագործության, մեռնող ու հարություն առնող բնության աստվածն էր։ Ըստ առասպելի Շամիրամը Արայի արձանն էր կանգնեցրել։

Ուժի ու քաջության, արհեստների ու արվեստների աստվածն էր Տորքը կամ Տուրքը։ Սա համարվում էր Հայկի թոռներից մեկը։ Առասպելում սրան տրված «Անգեղեայ» կոչումը խորենացին մեկնել է իբրև «տգեղ»։ Սակայն իրականության մեջ նշանակում է, որ Տորքը Անգեղի սերնդից կամ տոհմից է։

Անգեղը նույնպես եղել է հայոց հնագույն աստվածներից։ Դա երևում է նրանից, որ Աստվածաշնչի մեջ նշված սեմական անդրերկրյա ներգալ աստծու անունը հայերենում թարգմանված է Անգեղ։

Նրա անունով է կոչվել Անգեղ տուն գավառը, նույն գավառի կենտրոն Անգեղ ավանը և Պաղկոտն գավառի Անգեղ գյուղաքաղաքը։

Ասորեստանի ազդեցությամբ Հայաստանում տարածված էր նաև պտղաբերության ու սիրո աստվածուհի Շամիրամի պաշտամունքը։ Դա հաստատում են ոչ միայն հայկական առասպելի տարբերությունները և Հայաստանի տարբեր վայրերում գտնվող Շամիրամի անվան հետ առնչվող տեղանունները, այլև երկրորդ դարի հեղինակ Լուկիանոս Սամոսատցու այն վկայությունը, որ Շամիրամի երկրպագուները Հայաստանից նվերներ էին ուղարկում նրա տաճարին։

Հին հայերի մոտ շատ ուժեղ էր ջրի պաշտամունքը։ Ջրի, ծովի ու անձրևի աստվածուհին էր Սովինարը։ Սրա պաշտամունքը երկար ժամանակ պահպանվել էր ժողովրդի մեջ։ Պաշտամունքի առարկա են հանդիսացել նաև առանձին աղբյուրները, որոնց ժողովուրդը անվանել է «լուսաղբյուր» կամ «կաթնաղբյուր»։ Հայերը հավատում էին, որ այս աղբյուրները ունեն հիվանդություններ և վերքեր բուժելու հատկություն։

Ուժեղ է եղել նաև արևի, լուսնի ու աստղերի պաշտամունքը։ Հայաստանում գոյություն են ունեցել արևին զոհաբերելու համար նվիրատված հատուկ նժույգներ։ Այդպիսի նժույգներից մեկն է եղել Քսենոֆոնի ձին, որը վերջինս նվիրել է գյուղապետին, որ կնրակրի ու զոհ բերի արևին։ Արևին ու լուսնին նվիրված հատուկ սրբատեղի է գոյություն ունեցել Արմավիրում։

«Սրբազան» կամ «կենաց ծառերի» պաշտամունքը, որը գոյություն է ունեցել դեռևս ուրարտական շրջանում, շարունակվել է նաև հայերի մոտ։

Հատուկ պաշտամունքի առարկա էին շան կերպարանքով պատկերացվող «արալեզները», որոնք իբր թե պատերազմում զոհված հերոսների վերքերը լիզելով՝ առողջացնում ու վերակենդանացնում էին նրանց։ Ըստ առասպելի՝ Շամիրամը հրամայել էր իր աստվածներին՝ լիզել պատերազմում զոհված Սրա Գեղեցիկի վերքերը և վերակենդանացնել նրան։

Հայկական կրոնական նոր պանթեոնը

Հին հայկական պաշտամունքի հիմքի վրա և մասամբ իրանական պաշտամունքի ազդեցությամբ առաջանում և ձևավորվում է հայկական հեթանոսական կրոնի նոր պանթեոնը։ Հայկական հին աստվածներից շատերը՝ Հայկը, Արան, Տորքը, Սովինարը և այլք իրենց տեղը զիջում են նոր աստվածներին, թեև նրանց պաշտամունքը դրանից հետո էլ երկար ժամանակ պահպանվում է ժողովրդի մեջ։

Հայկական հեթանոսական կրոնի նոր պանթեոնի գլխավոր

աստվածը Արամազդն էր, որը հին պարսկերենում նշանակում է «տեր գերագույն իմաստության»։ Արամազդը համարվում էր աստվածների հայրը, երկնքի ու երկրի ստեղծողը, մարդկանց բարօրության ու արիության շնորհողը, երկրին լիության ու պարարտության պարգևողը։ Հայերը նրան անվանում էին «Մեծն ու արին Արամազդ»։ Սրա զլխավոր մեհյանը գտնվում էր Դարանաղյաց գավառի Անի ամրոցում, որը, հավանաբար, նաև հայոց քրմապետի կենտրոնատեղին էր։

Արամազդի դուստրն էր աստվածուհի Անահիտը, որը հին պարսկերեն նշանակում է «անբիծ, անարատ»։ Անահիտ աստվածուհու պաշտամունքը տարածված էր Արևելքի շատ ժողովուրդների, բայց ամենից շատ՝ հայերի մեջ։ «Պարսից բոլոր աստվածությունները,—վկայում է Ստրաբոնը,—պաշտվում են նաև մարաց և հայոց կողմից, բայց Անահիտի պաշտամունքը հայոց մեջ զերազանցում է բոլորից»։ Անահիտը հայկական պանթեոնում առաջնակարգ և ամենասիրելի աստվածուհին էր։ Նա համարվում էր Հայոց աշխարհի խնամակալը, ամենայն զդաստության մայրը, մարդկանց բարերարը։ Հայերի կրոնական պատկերացմամբ Հայոց աշխարհը գոյություն ուներ և կենդանություն էր առնում Անահիտ աստվածուհու շնորհիվ։ Հեթանոս աստվածներից միայն Անահիտը ուներ ոսկեձույլ արձան, որի համար էլ նա կոչվում էր նաև «Ոսկեմայր», «Ոսկեծին» և «Ոսկեհատ»։

Անահիտի ամենանշանավոր մեհյանը գտնվում էր Եկեղյաց գավառի Երիզա (այժմ՝ Երզնկա) ավանում։ Նրա մյուս նշանավոր մեհյանները գտնվում էին Արտաշատ մայրաքաղաքում և Տարոն գավառի Աշտիշատ ավանում։ Այս վերջինը հայտնի էր նաև «Անահտայ աթոռ» անունով։ Արմավիրում հայտնաբերված հունարեն արձանագրություններից երևում է, որ Հայաստանի այս հնագույն մայրաքաղաքում ևս գտնվում էր Անահիտ-Արտեմիս աստվածուհու նշանավոր մեհյաններից մեկը։

Անահիտ աստվածուհուն նվիրված էր երկու տոն, որոնք նշվում էին գարնանն ու աշնանը։ Այս տոները տեղի էին ունենում մեծ հանդիսավորությամբ և ուղեկցվում ժողովրդական երգերով, պարերով ու խաղերով։

Հայկական նոր պանթեոնի մեջ մտած, տեղական ծագում ունեցող, հայերի սիրելի աստվածներից էր Վահագնը։ Նա համարվում էր քաջության, ուժի, հերոսության, ռազմի և ամպրոպի աստվածը։ Նա կոչվում էր «Քաջն Վահագն»։ Հայ թագավորները և ռազմիկները նրանից էին քաջություն խնդրում։

Հայ գուսանները Վահագնի և նրա կատարած քաջագործությունների մասին առասպելական բազմաթիվ երգեր ու զրույցներ էին հորինել։ Այդպիսի հին երգերից էր Վահագնի ծննդին նվիրված երգը, որը պատմահայր Խորենացին լսել էր գուսաններից և քաղվածք բերել իր «Հայոց պատմության» մեջ։ Հեթանոսական շրջանի ժողովրդական այս հին երգի մեջ Վահագնի ծնունդը նկարագրված է այսպես.

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
Նա հուր հեր ունէր,
Ասպա թէ բոց ունէր մօրուս,
Եւ աչկունքն էին արեգակունք։

Առասպելական մի այլ հին երգի մեջ նկարագրված է եղել, թե ինչպես Վահագնը կռվել է վիշապների դեմ և հաղթել նրանց։ Այս պատճառով էլ նա կոչվել է նաև «Վիշապաքաղ»։ Ըստ մի այլ առասպելի՝ Վահագնը ամեովա մի ցուրտ գիշեր զողացել է ասորաց Բարշամ աստծու հարդը, սակայն հարդը ճանապարհին թափվել է, որից և երկնքում առաջացել է Հարդագողի ճանապարհը, այսինքն՝ Ծիր Կաթինը։ Վահագնի նշանավոր մեհյանը գտնվում էր Տարոն գավառի Աշտիշատ ավանում և կոչվում էր «Վահէվանեան»։

Հայերի հին ու սիրելի աստվածուհիներից էր Աստղիկը։ Նա երկնային լույսի, ջրի, սիրո և գեղեցկության աստվածուհին էր։ Աստղիկը քաջության աստված Վահագնի սիրուհին էր կամ ամուսինը։ Այդ պատճառով էլ Աշտիշատ ավանում գտնվող նրա մեհյանը կոչվում էր «Սենեակ Վահագնի»։

Աստղիկին էր նվիրված հեթանոսական շրջանի ամենաժողովրդական տոներից մեկը՝ վարդավառի տոնը։ Այս տոնը նույնպես նշվել է հանդիսավորությամբ, ժողովրդական երգերով, պարերով, սպորտային խաղերով և այլն։ Տոնի օրը մարդիկ իրար վրա անուշահոտ կամ սովորական ջուր են ցանել, իբրև խաղաղության և անմեղության նշան՝ աղավնիներ թռցրել։ Տոնը վարդավառ է կոչվել, որովհետև այդ օրը սիրո և գեղեցկության աստվածուհուն, գուցե և իրար, մարդիկ վարդ են նվիրել։ Այս պատճառով էլ Աստղիկ դիցուհին կոչվել է նաև «Վարդամատոն»։ Վարդավառը հանդիսացել

է սիրո, գեղեցկության, ջրի պաշտամունքի, վարդի ու ծաղկի տոն։

Հայկական պանթեոնի աստվածներից էր նաև Արամազդի որդին՝ Միհրը։ Նա արեգակի, լույսի և կրակի աստվածն էր, արդարության ու ճշմարտության պաշտպանը, կեղծիքի ու խարդախության մերկացնողը։

Միհր աստծու անունով է կոչվել հայկական ամիսների ութերորդ օրը։ Նրա տոնը կատարվել է մեհեկան ամսին։ Միհր աստծու նշանավոր մեհյանը գտնվում էր Դերջան գավառի Բագարիճ ավանում։ Ենթադրում են, որ Գառնիի հեթանոսական տաճարը ևս նվիրված է եղել Միհր աստծուն։

Արամազդի երկրորդ դուստրը, Անահիտի և Միհրի քույրն էր Նանե աստվածուհին։ Սա համարվում էր մայրության, սնուցիչ, տան օջախը պահպանող աստվածուհին։ Սրա մեհյանը գտնվում էր Դարանաղյաց գավառի Թիլ ավանում։

Հայերի հարգված աստվածներից էր Տիրը։ Նա աստվածահոր՝ Արամազդի քարտուղարն էր, գրի, գրականության, գիտության ու արվեստի հովանավորողը։ Նա իբրև «գրող» հաշվի էր առնում մարդկանց բարի ու չար գործերը, մեկնում էր երազները։ Տիր աստծու անունով է կոչվել հայկական տոմարի Տրե ամիսը։ Տիր աստծու մեհյանը գտնվել է Արտաշատ մայրաքաղաքի մոտ, Երազամույն կոչված տեղում։

Հայերի սիրելի աստվածներից էր նաև Ամանորը, որի մականունն էր Վանատուր։ Ամանոր նշանակում է «նոր տարի», իսկ Վանատուր՝ «հյուրընկալ»։ Նա պտղաբերության, բերքի, այգեկության, խաղողի, գինու և ուրախության աստվածն էր։ Նրա նշանավոր մեհյանը գտնվում էր Բագրևանդ գավառի Բաղավան ավանում։ Ամանոր-Վանատուրին էր նվիրված բերքի տոնը, որը տեղի էր ունենում ամեն տարի, հայկական տոմարի առաջին ամսի՝ Նավասարդի մեկից մինչև վեցը։ Ինչպես բոլոր հին ժողովուրդների, նույնպես և հայերի մոտ բերքի տոնը նշվում էր մեծ հանդիսավորությամբ։

Հելլենիզմի դարաշրջանում հայ ստրկատիրական վերնախավում և մասամբ քաղաքային բնակչության մեջ տարածվում է նաև հունական դիցաբանությունը։ Իշխող շերտերի միջավայրում հայկական պանթեոնը ստանում է հելլենիստական տեսք։ Հայկական պանթեոնի աստվածները նույնացվում են հունական համապատասխան ֆունկցիա ունեցող աստվածների հետ և անվանվում նաև նրանց անունով։ Այսպես, Արամազդը նույնացվում է Զեվսի, Անահիտը՝ Արտեմիսի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի, Տիրը՝ Ապոլլոնի, Վա-

հագնք՝ Հերակլեսի հետ։ Սակայն օտարամուտ այս աստվածների ո՛չ պաշտամունքը և ո՛չ էլ նրանց անունները ժողովրդի մեջ չեն տարածվում և շուտով մոռացվում են։

Հայկական տոմարը

Գյուղատնտեսությունը սերտորեն կապված է տարվա եղանակների, ժամանակի հետ։ Ցանքսի, բերքահավաքի և գյուղատնտեսական մյուս աշխատանքների ճիշտ ժամանակը որոշելու համար, բնական է, որ հայերը վաղ ժամանակներից պետք է ստեղծեին նաև իրենց տոմարը կամ օրացույցը։

Ինչպես այլ ժողովուրդների, նույնպես և հայկական տոմարը ստեղծվել է երկնային լուսատուների շարժման հիման վրա։ Հատուկ մարդիկ են եղել, որոնք դիտել են երկնային լուսատուների շարժումը, կազմել են օրացույց և գուշակություններ արել։

Հայկական արեգակնային տոմարով տարին ուներ 365 օր և բաժանված էր տասներկու լրիվ ամիսների և մեկ փոքր ամսի։ Ամիսների անուններն էին՝ Նավասարդ, Հոռի, Սահմի, Տրե, Քաղոց, Արաց, Մեհեկան, Արեգի, Ահեկան, Մարերի, Մարգաց, Հրոտից և Ավելյաց։ Առաջին տասներկու ամիսները ունեին 30 օր, իսկ Ավելյաց ամիսը ուներ ընդամենը 5 օր։ Այս հինգ օրյա փոքր ամիսը հայկական տոմարում ավելացվել է հետադայում։ Այդ 5 օրվա տարբերությունը նախկինում գոյություն ունեցող տասներկու ամիսների վրա չի ավելացվել, այլ առանձին ամիս է դարձվել, հավանաբար առաջուց սահմանված կրոնական տոների կարգը չխախտելու համար։

Հայկական ամիսների անունները հայոց լեզվով մեծ մասամբ անբացատրելի են ու անհասկանալի։ Նավասարդ անունը համարում են իրանական փոխառություն, որ նշանակում է «նոր տարի»։ Հոռի և Սահմի ամիսները կապվում են վրացերեն «օրի» և «սամի», այսինքն՝ «երկու» և «երեք» բառերի հետ, որով այդ ամիսները նշանակում են «երկրորդ» և «երրորդ»։ Ենթադրում են նաև, որ Հոռի անունը առաջացել է եգիպտական «Օրուս» և հունա-հռոմեական «Հոռա» անուններից։ Տրե և Մեհեկան ամիսների անունները առաջացել են Տիր և Միհր աստվածների անուններից և նվիրված են եղել սրանց։ Քաղոց և Մարգաց ամիսները կապված են եղել բերքահավաքի և մարգեր կապելու գյուղատնտեսական աշխատանքների հետ։ Արեգ ամիսը, ինչպես ցույց է տալիս նրա անունը, նվիրված է եղել արեգակին։

Անանիա Շիրակացու հաղորդած մի ավանդության համաձայն՝ Նավասարդ, Հոռի, Սահմի, Մեհեկան, Արեգ և Մարերի ամիսները

եղել են հայոց նախահոր՝ Հայկի դուստրերի, իսկ Տրե, Քաղոց, Արաց և Հրոտից ամիսները՝ նրա որդիների անունները։

Ամսվա յուրաքանչյուր օրը և օրվա ժամերը ևս ունեին իրենց հատուկ անունները։

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ

Ճարտարապետությունը

Հնուց ի վեր գոյություն ունեցող հայկական ճարտարապետությունը հելլենիզմի դարաշրջանում ստեղծագործաբար յուրացնելով հունական և փոքրասիական երկրների շինարարական արվեստի առաջավոր տարրերը, բայց և պահպանելով իր ինքնատիպ բնույթը և տեղական հատկանիշները, հասնում է զարգացման նոր ու բարձր աստիճանի։

Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում կառուցվում են մի քանի տասնյակ քաղաքներ ու քաղաքատիպ ավաններ, բազմաթիվ անառիկ ամրոցներ, պալատներ, տաճարներ, թատրոններ, պարիսպներ, կամուրջներ, հյուրանոցներ, բաղնիքներ և այլն։ Սկզբնաղբյուրները մեծ գովեստով ու հիացմունքով են խոսում Հայաստանի հին մայրաքաղաքներ Արմավիրի, Երվանդաշատի, Արտաշատի, Տիգրանակերտի և Վաղարշապատի ճարտարապետական հուշարձանների մասին։

Այդ հուշարձաններից միայն հազվագյուտ նմուշներ են հասել մեզ։ Տիգրանակերտի ավերակներում պահպանվել են սև սրբատաշ քարերից կառուցված, պաշտպանական հզոր աշտարակներ ունեցող, թաղազարդ արձիվներով բանդակազարդված քաղաքի լայն ու բարձր պարիսպների մնացորդները։ Պահպանվել է նաև տեղական և հունական ճարտարապետական ոճերի համակցությամբ կառուցված, սլաքաձև աղեղներ ու կամարներ ունեցող, սյունազարդ երկհարկանի մի շենքի կիսականգուն ճակատը։ Ուսումնասիրողները ենթադրում են, որ այս շենքը եղել է պալատական շենքերից մեկը կամ Տիգրանակերտի արքունի թատրոնը։ Վերջերս ամրակուռ պարիսպների և մոնումենտալ շենքերի բեկորներ են հայտնաբերվել նաև Արտաշատ մայրաքաղաքում։

Ճարտարապետական հուշարձանների մի մասի ավերակների պահպանումով երջանիկ բացառություն է կազմում Գառնիի թագավորական ամրոցը։ Հին հայկական ճարտարապետության մոնումենտալ կոթողներից, հին Հայաստանի ռազմա-պաշտպանական հզոր ու առաջնակարգ կառուցումներից մեկն է այս ամրոցի կիսականգուն պարիսպը՝ իր աշտարակներով, որը, հավանաբար, կա-

առուցվել է III դարում մ. թ. ա, իսկ վերակառուցվել՝ I դարում մ. թ.։ Պարիսպը ունի ավելի քան 314 մետր երկարություն և 2 մետր հաստություն։ Ենթադրվում է, որ նրա սկզբնական բարձրությունը եղել է մոտ 25 մետր, որից այժմ մնացել է միայն 6—8 մետրը։ Պարիսպը կառուցված է մինչև 5—6 տոննա կշռող բազալտե սրբատաշ քարերից։ Այդ խոշոր ու ծանր քարերը իրար վրա բարձրացված և հարթ ու մաքուր կերպով շարված են առանց շաղախի։ Նրանք իրար են միացված՝ երկու ծայրերը կոացրած և հատուկ փոսերի մեջ արճճե ձուլվածքով ամրացված երկաթե հաստ կապերով։

Ապշեցուցիչ հզորություն ունեն պարսպից դուրս ցցված ու ուղղանկյան ձև ունեցող 14 աշտարակները։ Այս աշտարակները, որոնք նույնպես կառուցված են բազալտե քարերից և իրարից հեռու են գտնվում 10—12 մետր տարածությամբ, ամրոցի պաշտպանական սիստեմի մեջ վճռական դեր են կատարել։ Գառնիի բերդը, իր հզոր պաշտպանական սիստեմով, անառիկ ու անմատչելի է եղել ժամանակի տեխնիկայի համար։

Հայկական հելլենիստական ճարտարապետության գլուխգործոցը, նրա պսակը և անկրկնելի մարգարիտն է Գառնիի հեթանոսական տաճարը, որի այժմ վերականգնված պատկերը գերող ուժավորություն է թողնում դիտողների վրա։ Այս հազվագյուտ, փառահեղ ու շքեղ տաճարը կառուցվել է I դարում (մ. թ.)։ Նա ունեցել է երկթեք տանիք, չորս կողմից 24 սյուներից բաղկացած սյունաշար։ Պարսպի նման տաճարը ևս կառուցված է կարծր բազալտե հսկայական քարերից և ամրացված երկաթե կապերով ու արճճե ձուլվածքով։ Մակայն տաճարի քարերը անհամեմատ ավելի լավ են սրբատաշված ու հղկված, քան պարսպի քարերը։ Տաճարի ճակատը, խոյակները, եզրերը, քարե առաստաղը և այլ մասերը զեղազարդված են բուսական ու երկրաչափական ճոխ, կատարելության հասնող նուրբ քանդակներով, որոնք մեծ հիացմունք են պատճառում դիտողներին։

Տաճարը կանգուն է եղել մինչև XVII դարի երկրորդ կեսը։ Նա կործանվել է 1679 թ. երկրաշարժի ժամանակ։ Կործանման հիմնական պատճառներից մեկը եղել է այն, որ հրաբխի գործունեությունից հետո շատ բախտախնդիրներ բարբարոսաբար հանել են շենքի քարերն ու մասերը իրար ամրացնող արճիճը։

Հնագիտական պեղումների միջոցով հայտնաբերվել է նաև Գառնիի պալատական բաղնիքի շենքը, որը կառուցվել է II կամ III դարում։ Իր հինգ սենյակներով կամ բաժանմունքներով, տաքացման սիստեմով այս բաղնիքը շինարարական արվեստի տեսա-

կետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Այս բաղնիքը հին Հայաստանի առայժմ մեզ հասած միակ քաղաքացիական կոմունալ շինությունն է։

Այս բոլորը մեզ մոտավոր գաղափար են տալիս Հայաստանի հին մայրաքաղաքներում, քաղաքներում, ամրոցներում և սրբավայրերում գոյություն ունեցած ճարտարապետական կոթողների մասին։

Քանդակագործությունը և կիրառական արվեստը

Հին Հայաստանում զարգացած էին նաև քանդակագործությունը և կիրառական արվեստը։ Հայ և օտար սկզբնաղբյուրներից հայտնի է, որ հայկական հեթանոսական տաճարներում եղել են մարմարից, քարից, փղոսկրից, ոսկուց, արծաթից, բրոնզից, պղնձից և այլ նյութերից շինված աստվածների և թագավորների մեծ ու փոքր բազմաթիվ արձաններ։ Անկասկած է, որ զանազան արձաններ եղել են նաև քաղաքներում, քաղաքատիպ ավաններում, ամրոցներում, թագավորական պալատներում, հարուստ տերկատերերի ու քաղաքացիների տներում։

Սակայն այդ արձաններից մեզ միայն մի քանի նմուշներ ու բեկորներ են հասել։ Քրիստոնեությունը գրեթե իսպառ ոչնչացրել է արվեստի այդ հուշարձանները։

Փոքր Հայքի Սատաղ քաղաքում գտնվել է բրոնզից շինված Անահիտ աստվածուհու արձանի գլուխը, որը այժմ պահվում է Բրիտանական թանգարանում։ Հայկական հելլենիստական արվեստի ոճով պատրաստված այս արձանը մեզ հասած արձանների մեջ ամենալավագույնն է։ Նա կերտված է գեղարվեստական բարձր հմտությամբ և մեծ վարպետությամբ։ Նույն ոճի ուշագրավ ու արժեքավոր նմուշներ են նաև Վաղարշապատում գտնված կավե արձանիկների գլուխները։ Գառնիում հայտնաբերվել են մարմարից պատրաստված մի կնոջ արձանիկի իրանն ու պատվանդանը, որտեղ շատ գեղեցիկ ու բնական կերպով տրված են կնոջ կեցվածքը և հարուստ շրջազգեստի ծալքերը։ Քանդակագործական արվեստի ակնառու և արժեքավոր նմուշ է նաև Արտաշատի պեղումների ժամանակ գտնված կնոջ մարմարյա փոքր արձանը, որի գլուխն ու թևերը նույնպես չարդված են և մեզ չեն հասել։ Պետք է ենթադրել, որ սրանք եղել են աստվածուհիների կամ թագուհիների արձաններ։

Հայաստանում զարգացած էր նաև կերպարվեստը։ Տաճարները և պալատները ոչ միայն զարդարվում էին դրսից՝ բուսական ու երկրաչափական ճոխ զարդաքանդակներով, ինչպիսին Գառնիի հե-

թանոսական տաճարն է, այլև ներսից՝ որմնանկարներով ու խճանկարներով (մոզաիկա)։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Գառնիի պալատական բաղնիքի հանդերձասրահի խճանկար հատակը։ Նրա սյուժեն կամ թեման վերցված է հունական դիցաբանությունից։ Ամբողջ խճանկարը պատրաստված է ծով ներկայացնող բաց կանաչավուն ֆոնի վրա. կենտրոնում, գեղեցիկ շրջանակի մեջ կոտոշավոր տղամարդու պատկերով ներկայացված է օվկիանոսը, իսկ կնոջ պատկերով՝ ծովը։ Այս շրջանակի չորս կողմում պատկերված են նաև հունական ծովային, սիրո և այլ աստվածների, գեղեցկության աստվածուհի Աֆրոդիտեի, ծովում պարող նրա քույրերի՝ ներեիդների (ծովահարսերի), մարդկանց գլխով, ձիու ոտքերով ու ձկան պոչով էակների, ձկնորսների և ձկների բազմաթիվ նկարներ։

Խճանկարի վրա կան նաև հունարեն արձանագրություններ, որոնք լոկ պատկերված աստվածների ու ներեիդների անունների հիշատակագրություններ են։ Բացի այդ, ամենաաջի ընկնող տեղում, կենտրոնական շրջանակի վերևում խճանկարը պատրաստող արվեստագետ վարպետները ևս թողել են մի արձանագրություն, որտեղ ասված է. «Աշխատեցինք ոչինչ չստանալով»։

Խճանկարը ամբողջապես պատրաստված է Գառնիի մոտից հոսող Ազատ գետից հավաքված և նրա ջրերով հղկված գունավոր խճաքարերից։ Թեև խճանկարի բոլոր նկարները միանման բարձր վարպետությամբ ու համաչափությամբ չեն կատարված, թեև ամբողջ խճանկարը իր վրա կրում է հելլենիստական արվեստի անկման շրջանի նշանները, բայց և այնպես, հանդիսանալով տեղում զարգացող հելլենիստական արվեստի այդ բնագավառի մեջ հասած միակ ու հազվագյուտ նմուշը, մշակութային ու պատմական տեսակետից այն մեծ արժեք է ներկայացնում։

Սկզբնաղբյուրները վկայում են, որ հին Հայաստանում գոյություն են ունեցել դահարազարդ թագեր, խույրեր, թանկագին մետաղներից ու քարերից պատրաստված զանազան զարդեր, գորգեր և այլն։ Կիրառական արվեստի լավագույն նմուշներ են Սոփքի և Մեծ Հայքի հայ թագավորների, բայց հատկապես Տիգրան II-ի և Արտավազդ II-ի՝ իրենց պատկերներով ու զանազան տեսարաններով կտրած դրամները, Բակուր թագավորի՝ վերևում հիշատակված արծաթե թասը, մի կնոջ կամ դերասանուհու դեմքի տարբեր ար-

տահայտություններով զեղազարդված, Արմավիրում հայտնաբերված չորս ոսկե մեդալիոնները, թանկագին քարերի վրա տարբեր նկարներ փորագրած կնիքները և այլն։ Կիրառական արվեստի հիանալի նմուշներ են նաև վերջերս Սիսիանի դամբարան-զոհարանում գտնված վիշապագլուխ ոսկյա ապարանջանները, դավազանի գլուխները, արծաթյա զեղազարդված թասերը, որոնք պատկանում են I դարին։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ XII

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՂՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ֆեոդալիզմի ձևավորումը

Մեր դարաշրջանի սկզբներում քայքայվող ստրկատիրական հասարակության ընդերքում աստիճանաբար զարգանում և ձևավորվում է արտադրության ֆեոդալական եղանակը։ Հասարակության հիմնական արտադրողի դերում նախկին ստրուկների փոխարեն հանդես է գալիս գյուղացին, իսկ ռազմա-ստրկական ավագանու փոխարեն իշխող դիրք է գրավում հայ նախարարական դասը։

65 թվականից մինչև երկրորդ դարի կեսերը Հայաստանը ապրում էր խաղաղության շրջան, որը նպաստեց երկրի տնտեսական կյանքի աշխուժացմանն ու արտադրողական ուժերի զարգացմանը։ Հնագիտական պեղումներից երևում է, որ այս շրջանում արորի փոխարեն սկսում են լայն չափով օգտագործել երկաթե խոփ ունեցող փայտե գութանը և կատարելագործված գյուղատնտեսական այլ գործիքներ, որոնք բարելավում են հողի մշակությունը և ընդարձակում ցանքատարածությունները։ Այս շրջանում նկատվում է նաև ոռոգման ցանցի ընդարձակում, որը կարևոր նշանակություն ուներ ցամաքային կլիմա ունեցող Հայաստանի բերքատվության բարձրացման համար։ Անցյալում տարանցիկ առևտրի հետ կապված Հայաստանի քաղաքները I—II դարերում ճգնաժամ են ապրում և դադարում են էական դեր կատարելուց։ Այժմ առաջատար դեր է սկսում խաղալ գյուղը։ Ստրկատիրական նախկին հարաբերությունները մեր դարաշրջանի սկզբներում ոչ միայն չէին նպաստում, չէին խթանում արտադրական ուժերի զարգացմանը, այլև արգելակում էին նրան։ Բացի այդ, նորաստեղծ հայ Արշակու-

Նիների պետությունն ի վիճակի չէր այլևս նվաճողական պատերազմների միջոցով տնտեսությունները ապահովել գերի ստրուկներով։ Ստրկական աշխատանքն ինքն այլևս անշահաբեր էր դարձել։ Եվ ահա իր դարն ապրած ստրկատիրությանը փոխարինելու է գալիս արտադրության ֆեոդալական եղանակը, որը նախկինի համեմատությամբ ավելի առաջադիմական էր։

Անշուշտ, ֆեոդալիզմի սկզբնավորության մասին որոշակի ժամանակ սահմանելը դժվար է, որովհետև ստրկատիրական հասարակությունից ֆեոդալիզմին անցնելը տեղի չի ունեցել անմիջապես, այլ այն երկարատև մի պրոցես է և ընդգրկել է մեծ ժամանակաշրջան։ Ֆեոդալական կացութաձևը ստրկատիրական հասարակության ընդերքում գոյություն ուներ շատ վաղուց, սակայն այն նոր որակ ստացավ, արտադրության հիմնական եղանակ դարձավ միայն երկրորդ-երրորդ դարում։ Խորենացու մի տեղեկությունն այն մասին, որ հայոց Վաղարշ թագավորը բարեփոխություններ է կատարում պետական ապարատում, կարգ ու կանոն է սահմանում նախարարական տների, քաղաքների, ավանների միջև և այլն, ամենայն հավանականությամբ, վերաբերում է նոր ձևավորված ֆեոդալական հասարակական կարգ ու կանոնին։ Արտադրության ֆեոդալական եղանակի այս երկարատև ձևավորման ժամանակը նկատի ունենալով, առաջին դարը և երկրորդ դարի կեսը պայմանականորեն կարելի է համարել ստրկատիրական հասարակությունից ֆեոդալիզմին անցնելու ժամանակաշրջան։

Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների կազմավորումը տեղի է ունեցել առանձնահատուկ պայմաններում։ Ֆեոդալիզմն այստեղ ձևավորվել է ո՞չ միայն ստրկատիրական տնտեսությունների, այլև ցեղատոհմային կացութաձևի և գյուղական համայնքների քայքայման, նրանց փլատակների վրա։ Հին հայկական մատենագրության մեջ բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ Արշակունի հայ թագավորները «իշխանազուն անձանց» տիրույթներ են նվիրել Հայաստանի գլխավորապես լեռնային շրջաններում, որոնց բնակչությունը, հիմնականում չէր անցել ստրկատիրության ոլորտով։

Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին խոսելիս պետք է հաշվի առնել մի այլ հանգամանք ևս. այնպիսի մի երկրում, ինչպիսին լեռնոտ Հայաստանն է, նրա բոլոր վայրերում միաժամանակ չէ, որ տեղի են ունենում տնտեսական կյանքի փոփոխություններ. այն ժամանակ, երբ արդեն ձևավորվել էին ֆեոդալական հարաբերությունները, առանձին տեղերում դեռ պահ-

պանվում էին տոհմատիրության և ստրկատիրության մնացորդները։

Հողատիրության ձևերը

Ֆեոդալական հասարակության ամենաբնորոշ հատկանիշներից մեկը, ինչպես հայտնի է, ավատական խոշոր հողատիրությունն է։ Ինչ ձևով է այն հանդես եկել Հայաստանում։

Հին հայկական մատենագրության մեջ պահպանված տեղեկություններից երևում է, որ վաղ ֆեոդալիզմի շրջանում գոյություն է ունեցել հողատիրության երեք ձև՝ «հայրենական», «պարգևականք» և «գանձագին»։ «Հայրենական» էին կոչվում այն հողերը, որոնք որպես ժառանգական սեփականություն հորից անցնում էին որդուն։ «Պարգևականք»-ը այն հողերն էին, որ զինվորականները և պետական պաշտոնյաները ստանում էին իբրև պարգև իրենց աշքի ընկնող ծառայության համար, իսկ «գանձագին» հողերը դրամատեր աշխարհիկ կամ եկեղեցական մեծահարուստ մարդկանց կողմից գնված հողերն էին։

Ամենախոշոր հողատերը երկրում հանդիսացել է արքունիքը։ Արքունական ընդարձակ կալվածքներ են եղել Հայաստանի բոլոր նահանգներում, սակայն նրանց հիմնական մասը կենտրոնացված էր Այրարատ «աշխարհում», որտեղ գտնվում էր նաև մայրաքաղաքը։ Խորենացին Այրարատը կոչում է «կալուածք արքայի»։

Արքունական հողերը, որպես կանոն երկրի ընտրատու լավագույն հողերն էին։ Նրանց որոշ մասը, որպես «պարգևականք», տրվում էր մանր ազնվականությանը՝ զինվորական, վարչական և այլ կարգի ծառայությունների համար։ Ըստ որում, «պարգևականք» հողերը տրվում էին պայմանական կարգով. մանր ազնվականը կարող էր դրանցից օգտվել այնքան ժամանակ, ինչքան ժամանակ նա կատարում էր իր վասալական պարտավորությունը արքունիքի առջև, բայց երբ դադարում էր նրա ծառայությունը, հողամասը նորից արքունիքի տրամադրության տակ էր անցնում։ Սակայն, քանի որ սովորաբար որդին ժառանգում էր հոր պաշտոնը, ապա նախկին իրավունքով նա օգտագործում էր նաև հոր տիրույթը։

Հին մատենագրության մեջ բազմաթիվ հիշատակություններ կան այն մասին, որ արքունիքն աշխատում էր թուլացնել կամ ամբողջապես լուծարքի ենթարկել ռազմական մեծ ուժ ունեցող նախարարությունները և «յարքունիս դրաւել» նրանց կալվածքները։ Այստեղից էլ սկիզբ է առնում ֆեոդալիզմի ներքին հակասություններից բխող ներդասային այն երկարատև, արյունոտ պայքարը,

որ տեղի է ունենում թագավորի ու նախարարների միջև՝ IV դարում։ Բոլոր դեպքերում այդ պայքարը զգալի չափով խախտում էր իշխող խավերի քաղաքական միասնությունը, թագավորական իշխանության հզորությունը և դուռ բացում օտարերկրյա նվաճողների առաջ։

Իրենց ծավալով արքունական կալվածքներին չէին զիջում բդեշխական կալվածքները։ Բդեշխները՝ Հայաստանի «գահերեց» կամ «աշխարհակալ», «կողմնապահք» կոչվող մեծ իշխաններն էին, որոնք խոշոր նահանգների տիրակալներ էին և իրենց վարչական իրավունքներով, թագավորից հետո, երկրորդ տեղն էին գրավում։

Վաղ ֆեոդալիզմի շրջանում Հայաստանում խոշոր կալվածքներ ունեին նախարարները։ Արշակունյաց Հայաստանի շուրջ 90 «գավառատեր» խոշոր իշխաններ ունեցել են իրենց կալվածքները, գյուղերը, ագարակները, դաստակերտները և այլն։ Այդ նախարարներից առանձնապես աչքի են ընկել Բագրատունիները, Արծրունիները, Մամիկոնյանները, Կամսարականները, Ամատունիները և ուրիշներ։

Նախարարի իրավունքները իր նահանգում կամ գավառում՝ որևէ անխախտ օրենքով սահմանափակված չեն եղել։ Հայ մատենագրության մեջ բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել այն մասին, թե ինչպես նախարարներն իրենց տիրույթների մեջ գտնվող գյուղերը կամ ավանները նվիրաբերում են եկեղեցիներին, վանքերին և աչքի ընկնող զինվորականներին։

Նախարարությունների միջև, ինչպես կտեսնենք, հաճախ են տեղի ունեցել սուր ընդհարումներ. ում ունեցողն աշխատել է ընդարձակել իր տիրույթի սահմանները ի հաշիվ թույլ հարևանի։ Այս հողի վրա հաճախ են տեղի ունեցել միջֆեոդալական կռիվներ, որոնք նույնպես կազմալուծել, թուլացրել են հայ ֆեոդալական պետությունը։ Մանր ազնվականը որոշ հողամաս ստանալով իր սյուզերենից պարտավորվում էր կռվի դեպքում իր ձիով, զենքով և զրահով ներկայանալ նրան։ Իրենց պարտավորությունների նկատմամբ անպարտաճանաչ լինելու դեպքում ֆեոդալն իրավատու էր նա խլել տրված հողաբաժինը։

Հայաստանում սրուշակի տեղ էր գրավում նաև եկեղեցական կալվածատիրությունը։ Ինչպես հայտնի է, իր կազմակերպման առաջին իսկ օրից, երբ քրիստոնեությունը պաշտոնապես ճանաչվեց, եկեղեցուն հատկացվեցին նախկին մեհենական կալվածքները։ Տրդատ III-ի հրամանով եկեղեցականները դասվեցին ազատանու շարքը։ Հետագայում, հայ թագավորների և նախարարների գործոն

աջակցությամբ, եկեղեցին ավելի ընդարձակեց իր կալվածքների սահմանները և սոցիալական հզոր ուժ դարձավ։

IV դարի երկրորդ կեսին, երբ Հայաստանում հիմնադրվեցին եկեղեցական միաբանությունները, վանքերը շուտով դարձան կալվածատիրական խոշոր տնտեսություններ։ Այդ ժամանակ միայն կաթողիկոսը խոշոր կալվածքներ ուներ Հայաստանի 15 նահանգներում։

Ֆեոդալական հարաբերությունների զարգացման և խորացման զուգընթաց, ընդարձակվում էր նաև վանական-եկեղեցական կալվածատիրությունը։ Եկեղեցիները և վանքերը նոր կալվածքներ էին ձեռք բերում նվիրատվության, գնումների և բռնադրավումների ճանապարհով։ Նրանք հետագայում տնտեսական այնպիսի վիթխարի ուժ են դառնում, որ քաղաքական իշխանությունները հարկադրված են լինում սահմանափակել նրանց իրավունքները։

Ֆեոդալական հիերարխիան

Ֆեոդալական հասարակության բնորոշ առանձնահատկություններից մեկը ավատական իշխող դասակարգի աստիճանակարգությունն է։ Ֆեոդալական հասարակության այս առանձնահատկությունը, ընդհանուր գծերով, հատուկ է եղել նաև Հայաստանի վաղ ֆեոդալական հասարակությանը։

Հայաստանում ֆեոդալական պետության գլուխ կանգնած էր թագավորը կամ արքան։ Նա համարվում էր «Գլուխ երկրին Հայոց» և ուներ անսահմանափակ իրավունքներ։ Թագավորն էր հայտարարում պատերազմ կամ հաշտություն կնքում, նա էր բանակցելու համար պատգամավորներ ուղարկում ուրիշ երկրներ և այլն։ Բոլոր նախարարները գտնվում էին վասալական կախման մեջ թագավորից և պարտավոր էին վճարել սահմանված հարկն ու պատերազմի ժամանակ զորք տալ։

Թագավորը մեծ մասամբ գործում էր ինքնուրույն, բայց պետական կարևոր նշանակություն ունեցող հարցերում խորհրդակցում էր «գահերեց» իշխանների և կաթողիկոսի հետ։ Հարկավոր դեպքերում հրավիրվում էին նախարարների և բարձրաստիճան հոգևորականների «աշխարհաժողովներ», որոնք կարևոր դեր էին կատարում հայ հասարակական-քաղաքական կյանքում։

Թագավորից անմիջապես վասալական կախվածության մեջ էին գտնվում բդեշխները, որոնք հանդիսանում էին «բյուրավորներ» (այսպես են կոչվել այն բոլոր նախարարները, որոնց զորքը «բյուրից», այսինքն՝ տասը հազարից ավելի է եղել)։ Բդեշխներն ունեցել են իրենց պահանիստ խոշոր կենտրոնները։ Բդեշխներին էր

հանձնարարված հսկելու երկրի սահմանների պաշտպանությունը օտարերկրյա թշնամական ուժերի ներխուժումից։ Ռդեշխները թագավորին ներկայանալիս հագնում էին իրենց տոհմական տարազը. նրանք իրավունք ունեին՝ մի ոտքին կարմիր, իսկ մյուս ոտքին կանաչ կոշիկ հագնելու (միայն թագավորի իրավասությանն էր պատկանում երկու ոտքերին կարմիր կոշիկ հագնելը)։

Թագավորից վասալական կախման մեջ էին գտնվում երկրի բոլոր աշխարհատեր նախարարները, որոնք նույնպես վճարում էին հարկ և պատերազմի ժամանակ պարտավոր էին ներկայանալ թագավորին՝ իրենց զորամասերով։ Այդ պարտավորությունը հին հայկական մատենագրության մեջ կոչվել է «ի սպասու ծառայութիւն»։ Նախարարներից յուրաքանչյուրն ուներ իր հատուկ դրոշակը և զինանշանը։

Նախարարներն իրենց տիրույթների սահմաններում անձնիշխան էին։ Նրանք, բացի նախարարական զորքի հրամանատարը լինելուց, վարում էին նաև իրենց երկրամասի վարչական և դատաստանական գործերը։ Նախարարներն ունեին ամրոց-նստավայր, ուր սովորաբար պահում էին գանձերը, իսկ կովիւ-ժամանակ դրանք ապաստան էին ծառայում նախարարական տան և շրջակայքի բնակչության համար։

Ավելի մեծ տիրույթ և ռազմական ուժ ունեցող նախարարներն ավելի մեծ հեղինակություն ունեին, քան թույլերը։ Արքունիքում նախապես սահմանված էին նախարարների համապատասխան տեղերը՝ ըստ բարձրի. հեղինակավոր նախարարները թագավորին ավելի մոտիկ բարձրի վրա էին բազմում։ Արքունիքում հանդեսների ժամանակ սահմանված էր 400 բարձ, որոնք շարվում էին թագավորի աջ և ձախ կողքերում՝ ըստ աստիճանների։ Մեզ է հասել «Գահնամակ» անունով մի վավերագիր, ուր սահմանված է նախարարներից յուրաքանչյուրի տեղը արքունիքում։

Թագավորից անմիջական վասալական կախման մեջ էին գտնվում նաև ոստանիկները։ Ոստանիկ էին կոչվում արքունիքի հետ անմիջապես կապված և մեծ մասամբ թագավորի հետ հեռավոր կամ մոտիկ ազգակցության մեջ գտնվող ու թագավորի ոստանում՝ Այրարատյան նահանգում, տիրույթներ ունեցող մանր ազնվականները։

Ոստանիկներն արքունիքին ավելի մոտիկ կանգնած և ամենից վստահելի ազնվականներն էին. մեծ մասամբ նրանցից էր կազմված լինում թագավորական հեծելազորը, նրանց էին վստահվում արքունիքի պաշտպանությունը և այլ պատասխանատու պաշտոն-

ներ։ Իրենց այդ ծառայության համար ոստանիկները արքունի կալվածքներից ստանում էին տիրույթներ՝ որպես «պարգևականք»։

Վաղ ֆեոդալական հասարակության մեջ իրենց հատուկ տեղն ունեին նաև սեպուհները։ Այսպես էին կոչվում նախարարական տան անդամները՝ նախարարների եղբայրները, որդիները և այլն։ Հայ մատենագրության մեջ հիշվում են երկու կարգի սեպուհներ՝ «ավագ» և «կրտսեր», այսինքն՝ նախարարական տան ավագ անդամներ և կրտսեր անդամներ։ Սեպուհները զինվորական ծառայություններ էին կատարում իրենց ազգակից նախարարի զորամասում։ Հետագա դարերում «սեպուհ» տերմինը կորցնում է իր նախկին սոցիալական իմաստը և ստանում է պետական ու զինվորական պաշտոնի նշանակություն։

Լայն առումով՝ «ազատ» են կոչվել հասարակության արտոնյալ բոլոր խավերը՝ ի հակադրություն «անազատների»՝ աշխատավորության։ Իսկ նեղ, դասային առումով «ազատ» են կոչվել մանր և միջին այն բոլոր ազնվականները, որոնք ունեցել են մեծ կամ փոքր կալվածքներ և վարել ռազմական ու պետական պաշտոններ։ Ազատները վասալական կախման մեջ են գտնվել կամ արքունիքից, կամ «դահերից» և «գավառատեր» նախարարներից։

Քաղաքական իշխանությանը նմանվող հիերարխիա գոյություն ուներ նաև հոգևորականության մեջ։ «Միջին դարերում,—գրում է Էնգելսը,—հենց այն չափով, ինչ չափով ֆեոդալիզմն էր զարգանում, քրիստոնեությունն ընդունում էր նրան համապատասխան կրոնի կերպարանք՝ համապատասխան ֆեոդալական հիերարխիայով»։

Պետական կարգը

Թագավորը երկիրը կառավարում էր արքունիքի միջոցով, որը գտնվում էր մայրաքաղաքում։ Արքունիքի հետ անմիջապես կապված էին բազմաթիվ վարչական, զինվորական, տնտեսական և դիվանագիտական այլ և այլ աշխատողներ։ Թագավորը երկիրը կառավարում էր գործակալությունների միջոցով, որոնցից կարևորները հետևյալներն էին։

Հազարապետություն գործակալության խնդիրն էր սահմանել պետական հարկերը և հսկել նրանց հավաքմանը, զեկավարել պետական նշանակություն ունեցող հասարակական աշխատանքները (ճանապարհներ կառուցել, ջրանցքներ փորել, անտառներ տնկել և այլն)։ Հազարապետին ենթարկվում էին հարկահավաքները։ Հազարապետության պաշտոնը ժառանգաբար գտնվում էր Ամատունի նախարարական տան ձեռքում։

Սպարապետություն: Զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը պատկանում էր սպարապետին, որն անմիջապես ենթարկվում էր թագավորին և գործում նրա հրամանով։ Կռվի ժամանակ սպարապետին էին ենթարկվում վասալական պարտավորություն կատարող բոլոր նախարարների զորամասերը։ Սպարապետությունը IV—V դարերում Մամիկոնյան տան ժառանգական պարտականությունն էր։

Մարզպետություն: Այս գործակալության պարտականությունն էր անձամբ հսկել թագավորի կալվածքներին, գանձերին և արքունական բերդերին։ Սրա հսկողությանն էր ենթարկվում նաև թագավորի կանանոցը։ Մարզպետը թագավորի մշտական խորհրդատուն էր և արքունիքում ուներ մեծ հեղինակություն։ Նա կրում էր նաև «Հայր» մականունը։ Մարզպետը պատերազմի ժամանակ գլխավորում էր սեպուհների գունդը։

Մաղխազությունը արքունական պահակազորի պարտականությունը կատարող գործակալությունն էր։ Մաղխազը թագավորի թիկնապահ զորքի հրամանատարն էր։ Նրա պարտականության մեջ էր մտնում նաև արքունիքի պաշտպանությունը։ Մաղխազությունը խոռխոռունիների տան ժառանգական պաշտոնն էր։

Թագակալ ասպետությունը թագավորին թագադրելու պատվավոր պաշտոնը վարող գործակալությունն էր։ Այդ պաշտոնը զբաղվող նախարարը կոչվում էր «թագադիր» կամ «թագակալ»։ Թագադիր ասպետների պարտականությունն էր հետևել սահմանված ֆեոդալական կարգի ճշգրիտ կատարմանն արքունիքում։ Այս պաշտոնը ժառանգաբար գտնվում էր Բագրատունիների տան ձեռքին։

Մեծ դատավարությունը գերագույն դատավորի պարտականություն կատարող գործակալությունն էր, որը գտնվում էր հայոց կաթողիկոսի իրավասության տակ։ Կաթողիկոսը եկեղեցական ժողովների միջոցով օրենքներ էր սահմանում և հետևում նրանց անշեղ կատարմանը։ Նախարարների կամ նախարարների ու թագավորի միջև որևէ դժգոհություն լինելու դեպքում կաթողիկոսը միջամտում և իր վճռական խոսքն էր ասում։

Արքունի սենեկապետությունն գործակալությունը արքունի գրասենյակի կառավարությունն էր։ Սենեկապետը հսկում էր գրագրության վրա։ Նա միաժամանակ թագավորի անձնական քարտուղարն էր. պետական արխիվի պահպանությունը նրա վրա էր դրված։

Արքունիքին ենթակա հիմնարկություններից էր դիվանը, որը վարում էր արքունիքի գրագրությունը։ Հատուկ պաշտոնյաներ կա-

յին, որոնք ծառայում էին թագավորի ախոռապետի, տակառապետի, որսապետի, զինակրի, դրոշակակրի և այլ պաշտոններում։

Հայկական բանակը կազմված էր կադրային զորքերից և պատերազմի սպառնալիքի դեպքում նախարարներից հավաքագրվող ռազմական ուժերից, որոնք կազմ ու պատրաստ պահվում էին ռազմական ճամբարներում։ Կադրային զորքերի մի մասը գտնվում էր թագեշների հրամանատարության տակ և հսկում սահմանների անվտանգությունը, իսկ մյուս մասը գտնվում էր թագավորի ոստանում և պարտավոր էր պահպանել արքունիքը, գանձարանը, կանանոցը, պաշտպանական նշանակություն ունեցող գյուղերն ու ամրոցները։

Պատերազմի սպառնալիքի ժամանակ նախարարները, կատարելով իրենց վասալական պարտականությունները, սեփական զորամասերով օգնության էին գալիս արքունական ուժերին, իսկ պատերազմը վերջանալիս՝ ցրվում էին։ Նախարարների զորքերը տարբեր քանակի էին։ Այսպես, Սյունյաց նախարարը պարտավոր էր ներկայանալ 19400, Գուգարքինը՝ 4500, Աղձնիքինը՝ 4500 զինվորներով և այլն։ Տասը հազարից ավելի զինվոր ունեցող նախարարները կոչվում էին «բյուրավորք», իսկ մեկ հազարից մինչև ինը հազարը՝ «հազարավորք»։ Կային «հարյուրավորք» կոչվող փոքր նախարարներ, որոնք ունեին 400-ից մինչև 1000 զինվոր։ Այրուձին մեծ մասամբ կազմված էր լինում ազատներից, իսկ հետևակը՝ շինականներից։ Պետք է նշել, որ հայկական այրուձին, որպես մարտական միավոր, մեծ հռչակ ուներ Արևելքում և պատերազմում հաճախ վճռական դեր էր կատարում։

Հայաստանի ռազմական ուժերի թիվը եղել է 120000։

Հայկական բանակը բաժանվում էր գնդերի և վաշտերի, որոնցից ամեն մեկն ուներ իր դրոշը։ Բանակը զինված էր ժամանակի բոլոր տեսակի զենքերով՝ աղեղով ու նետով, պարսատիկով, սրով, նիզակով, վահանով, բաբաններով և այլն։ Հեծյալները իրենց մարմինը սովորաբար ծածկում էին մետաղյա զրահով և գլուխներին դնում սաղավարտ։ Ճակատամարտերի ժամանակ, կռիվ հայտարարելուց առաջ, զորքը դասավորվում էր ըստ թևերի՝ աջ, ձախ և միջին։ Հայկական զորքերն ունեին առաջապահ, վերջապահ և կողմնապահ զորամասեր։

Շահագործվող դասակարգը

Ֆեոդալական հասարակության շահագործվող բոլոր խավերը հայտնի են եղել մի ընդհանուր անունով՝ ռամիկ։ «Ռեամիկ» են կոչվել հիմնականում գյուղացիները։ Բայց ռամիկ են կոչվել նաև ար-

հեստավորները, մանր առևտրականները, քաղաքի աշխատավորությունը, ստրուկները և այլն։

Ռամիկների հիմնական մասը կազմել են գյուղացիները, որոնք հին մատենագրության մեջ կոչվել են «շինական»։

Հայ գյուղացիության հիմնական դրաղմունքը վաղ ֆեոդալիզմի շրջանում եղել է հողագործությունը և անասնապահությունը։ Դաշտային մասերում տնտեսության կարևոր ճյուղն է հանդիսացել նաև այգեգործությունը։ Մշակվող հիմնական կուլտուրաներն են եղել ցորենը, գարին, վարսակը և կտավատը։

Հայաստանում գյուղական համայնքը այս շրջանում ևս տնտեսական կայուն օջախ էր, որի բոլոր անդամները կամ «ծխեր»-ը հավասար իրավունքներ ունեին։ Ագաթանգեղոսի տեղեկությունը՝ ավաններում յոթական, իսկ ագարակներում չորսական կտոր հողամաս եկեղեցիներին հատկացնելու մասին, վերաբերում է համայնքի ներսում բաժանվող այն հողակտորներին, որոնք կոչվելիս են եղել «հող երդոյ»։

Շինականները պետությանը վճարում էին «գլխահարկ» կամ «շնչահարկ» (ընտանիքի անդամների թվի համեմատ վճարվող հարկ), «ծխահարկ» (յուրաքանչյուր տան կամ ծխի վրա դրված հարկ) և «անասնահարկ» (խոշոր և մանր եղջերավոր անասունների համար գանձվող հարկ)։

Գյուղացիները հարկերից բացի, իրենց նախարարի կամ արքունիքի հանձնարարությամբ, պարտավոր են եղել մասնակցել պետական նշանակություն ունեցող հասարակական աշխատանքների՝ ճանապարհների անցկացմանը, բերդերի ամրացմանը, կամուրջների և վանքերի կառուցումներին և այլն։ Գյուղացիները պատերազմի ժամանակ ենթարկվել են զորահավաքի և ծառայել հետևակ զորամասերում կամ գումակում։

Շինականները որոշ պարտավորություն են ունեցել նաև եկեղեցու հանդեպ։ Նրանք եկեղեցուն վճարել են իրենց եկամուտի մեկ տասներորդ մասը, որը կոչվել է «տասանորդ»։

Գյուղացիներն ունեցել են սեփական տուն, անասուններ և գյուղատնտեսական գործիքներ։ Նրանք կախման տարբեր աստիճաններում են գտնվել հողատեր-ֆեոդալից։ Եղել են գյուղացիներ և գյուղական համայնքներ, որոնք մեծ կամ փոքր չափով կախված են եղել ֆեոդալից, եղել են նաև գյուղացիներ կիսազատ վիճակում, որոնք կոչվել են «կարճազատներ» և վերջապես հողազուրկ գյուղացիներ՝ «մշակներ», որոնք ծառայել են ֆեոդալի տնտեսության մեջ ու շինարարական աշխատանքներում։

Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ կապված կարևոր հարցը՝ ճորտատիրության հարցն է. վաղ ֆեոդալիզմի շրջանում համատարած ճորտություն եղե՞լ է Հայաստանում, թե ոչ։ Չպետք է շփոթել ճորտությունը գյուղացիների ֆեոդալական կախվածության հետ։ Ֆեոդալը գյուղացուց կարող է վերցնել ավել կամ պակաս քանակի ռենտա, կարող է պարտադրել նրան, որ կոռային աշխատանք կատարի, բայց այդ գյուղացին դեռևս ճորտ չէ։ Ճորտ է այն գյուղացին, որն աշխատում է ֆեոդալի կալվածքում և իրավունք չունի առանց կալվածատիրոջ կամքի հեռանալ նրա կալվածքից, իսկ ճորտատիրության այդպիսի մասսայական երևույթ Հայաստանում մենք չենք տեսնում վաղ ֆեոդալիզմի շրջանում։ Գյուղատնտեսական արտադրությունը ապրանքային նշանակություն դեռ չէր ստացել։ Ապրանքը դեռ չէր արտադրվում շուկայի համար, ուստի հայ ֆեոդալները շահագրգռված չէին սեփական կալվածատիրական տնտեսություններ ստեղծելու մեջ և անհրաժեշտություն չունեին ճորտեր ունենալ և նախապատվություն տալ ճորտական աշխատանքին։

Հայագիտության մեջ վեճեր են եղել այն մասին, թե վաղ ֆեոդալիզմի շրջանում ռենտաների որ տեսակն է իշխել Հայաստանում։ Եվրոպայի մի շարք երկրներում, ինչպես հայտնի է, վաղ ֆեոդալիզմի շրջանում գերիշխող է հանդիսացել աշխատավճար ռենտան, ֆեոդալական հարաբերությունների բարձր շրջանում՝ բնավճար, իսկ ֆեոդալիզմի վերջին, քայքայման շրջանում՝ դրամավճար ռենտան։

Սակայն ռենտաների այս հաջորդականությունը պարտադիր չէր բոլոր երկրների համար։ Մարքսը խոսելով Արևմտյան Եվրոպայի երկրների հատուկ ռենտաների հաջորդականության մասին, նշել է, որ, տարբեր հանգամանքների, պայմանների և ազդեցության հետևանքով, տարբեր երկրներում այս օրինաչափությունը կարող է տարբեր փոփոխակներով և աստիճաններով դրսևորվել։ Ընդսմին, ռենտան վաղ ֆեոդալիզմի շրջանում Հայաստանում հանդես է եկել տարբեր ձևով. այստեղ ռենտաներից իշխողը բնավճարն էր։

Հասարակության շահագործվող խավերից է հանդիսացել արհեստավորությունը, որը ֆեոդալական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց սկսում է կենտրոնանալ ֆեոդալական ամրոցներում, գյուղերում և քաղաքներում։ Արհեստավորներից հիշվում են՝ դարբինները, ջինագործները, որմնադիրները, հյուսները, ոսկերիչները և այլն։ Բայց պետք է նշել, որ արհեստավորությունը

դեռ շարունակում էր կապված մնալ հողի հետ և էական դեր չէր կատարում հասարակական-քաղաքական կյանքում։

Վաղ ֆեոդալական շրջանում Հայաստանում եղել են նաև ստրուկներ։ Փավստոսի, Խորենացու, Անանիա Շիրակացու և այլ հեղինակների տեղեկություններից երևում է, որ Հայաստանում պատերազմների ժամանակ վերցված գերիների մի մասին դեռ շարունակում էին ստրկացնել և օգտագործել շինարարական աշխատանքներում, արհեստագործության մեջ և այլն։ Ստրուկներ են ունեցել հայ թագավորները, նախարարներն ու վանքերը։ Վաղ ֆեոդալիզմի շրջանում ստրուկներին սովորաբար հող ու արտադրության միջոցներ էին տալիս և կապում հողի հետ։

Պետք է նշել, սակայն, որ ստրկությունը երկրի տնտեսական կյանքում չուներ առաջատար դեր, նա կրում էր միայն տնային ստրկության բնույթ։ Սակայն ստրուկները շարունակում էին մնալ իրավազուրկ վիճակում. ստրուկի տերն իրավասու էր նրան վաճառել, փոխել, գրավ դնել, ցանկացած դեպքում՝ նույնիսկ սպանել։

Քաղաքները և առևտուրը

Հայաստանի քաղաքները վաղ ֆեոդալիզմի շրջանում չնայած կորցրել էին իրենց նախկին իշխող դիրքը երկրի տնտեսական և քաղաքական կյանքում, սակայն շարունակում էին դեռ վճռական դեր խաղալ առևտրի ընդգալոռում։ Հայաստանի քաղաքների առևտրի աշխուժացմանը զգալի չափով խթանեց Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև Մծբինում 298 թվականին կնքած քառասնամյա խաղաղության պայմանագիրը. կողմերը համաձայնության էին եկել, որպեսզի իրենց վաճառականներն ապրանքները փոխանակեն Հայաստանում։

Ըստ IV դարի 60-ական թվականներին կազմված հռոմեական մի քարտեզի, որը կոչվում էր «Պևտինգերյան քարտեզ», Արտաշատը առևտրական ուղիներով կապված էր Պարսկաստանի, Վրաստանի, Միջագետքի և այլ երկրների առևտրական կենտրոնների հետ։ Պևտինգերյան քարտեզում մատնացույց են արված Արտաշատում խաչաձևվող ուղիները։ Պետք է նկատի ունենալ, որ Արտաշատում խաչաձևվող ուղիները ունեին նաև ռազմական կարևորագույն նշանակություն։

Հնագիտական ուսումնասիրություններից պարզվել է, որ Հայաստանի քաղաքները ունեցել են միջնաբերդ, շահաստան և արվարձաններ։ Քաղաքի կենտրոնում է գտնվել միջնաբերդը, ուր տեղավորված էին վարչական, կառավարական և ռազմական հաստատությունները։ Միջնաբերդի շուրջը տարածված է եղել շահաս-

տանը՝ քաղաքի առևտրական մասը՝ իր շուկաներով, խանութներով, արհեստանոցներով և պահեստներով։ Շահաստանը գտնվել է քաղաքի պարիսպների ներսում։ Քաղաքի պարիսպներից դուրս սրիրված էին բնակելի արվարձանները, ուր ապրում էին գլխավորապես հասարակ մարդիկ, աշխատավորները։

Վաղ ֆեոդալիզմի շրջանում Հայաստանի աչքի ընկնող քաղաքներն էին՝ Արտաշատը, Վաղարշապատը, Տիգրանակերտը, Վանը, Նախիջևանը, Զարիշատը, Զարեհավանը, Երվանդաշատը և Եվինը։ Թվարկած քաղաքները, ինչպես երևում է Փավստոս Բուզանդի տեղեկություններից, սովոր բնակչություն են ունեցել։ Քաղաքներում հայերից բացի ապրում էին նաև մեծ թվով հրեաներ և ասորիներ։

Հայկական քաղաքների բնակչության սոցիալական կազմում ամենից մեծ թիվը կազմել են մանր առևտրականները, արհեստավորները, մշակները և շահագործվող այլ խավերը, որոնք հայ մատենագրության մեջ հիշվում են հավաքական մի անունով՝ Քաղաքային ռամիկ։ Ֆեոդալական իշխող խավերը քաղաքների բնակչության մեջ մեծ թիվ չեն կազմել։ Քաղաքներն ունեցել են իրենց ինքնավարությունը, որի գլուխ կանգնած էր քաղաքագլուխը՝ շանհայը։

Քաղաքային բնակչությունից գործուն դեր են ունեցել մասնավորապես արհեստավորները։ Սկզբնաղբյուրներում հիշվում են պղնձի, երկաթի, ոսկու, թանկարժեք քարերի, փայտի և այլ նյութերի վրա աշխատող արհեստավորներ։ Քաղաքային արհեստավորությունը, ինչպես և քաղաքի ողջ բնակչությունը, կապված է եղել հողի հետ։ Բոլոր քաղաքների մերձակա վայրերում գտնվող հողամասերը մշակվում էին քաղաքի աշխատավորության կողմից։ Այդ հողամասերը կոչվում էին Քաղաքաղաշտեր։ Քաղաքի բնակիչներն ունեցել են նաև այգիներ և զբաղվել անասնապահությամբ։

Առևտրականները իրենց վաճառած ապրանքների համար մաքս էին վճարում, որը կոչվում էր բաժ։ Մաքսի մոտավոր չափը կազմել է վաճառված ապրանքի արժեքի մեկ տասներորդ մասը։ Առևտրի մեջ, ինչպես երևում է, մասնակցել են ավատական որոշ խավեր, նույնիսկ՝ հոգևորականներ։ Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնեից եպիսկոպոսի կանոններում դատապարտվում են առևտուր անող և վաշխառությամբ զբաղվող հոգևորականները։

Հայաստանի քաղաքներն անչափ դանդաղ հարված ստացան 368—369 թվականներին, երբ պարսկական Շապուհ թագավորը, նվաճելով Հայաստանը, զգալի թվով քաղաքային բնակչություն բռնադաղթեցրեց Պարսկաստան։

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ IV ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Տրդատ III-ի գահակալությունը

Հայաստանի նվաճման համար Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև I դարում սկսված մրցությունը չթուլացող ուժով շարունակվում է ամբողջ II—III դարերում։

Պատերազմը հռոմեական և պարսկական բանակների միջև սկզբում ընթանում էր հռոմեացիների համար անհաջողությամբ, բայց երբ հռոմեական բանակը համալրվեց նոր ուժերով, և Պարսկաստանի դեմ բռնկվեցին փոքրասիական ժողովուրդների ազատագրական նոր և հզոր շարժումները, պատերազմական գործողությունների ընթացքը փոխվեց հօգուտ Հռոմի։ 297 թվին հռոմեական բանակը, հայկական զորամասերի գործոն օժանդակությամբ, սոսկալի ջարդ տվեց պարսիկներին և փախուստի մատնեց նրանց։ Կռվում վիրավորվեց ներսեհ թագավորը, գերի ընկան նրա կինը, քույրերը, աղջիկները, որդիները և բավական թվով բարձրաստիճան զինվորականներ։ Հպարտ Սասանյանը հարկադրված եղավ հրաժարվել իր անիրագործելի ծրագրերից և հաշտություն խնդրել։ 298 թ. Մծբինում հաշտության պայմանագիր կնքվեց։

Մծբինի պայմանագրով Հայաստանը ճանաչվեց իբրև անկախ պետություն, հռոմեացիները համարվեցին նրա հովանավորները, և պարսկական զորքերը դուրս հանվեցին Հայաստանից։ Պարսկական արքունիքը պարտավորվեց այլևս չմիջամտել Հայաստանի գործերին։ Այդ պայմանագրով, հռոմեացիներին անցան Հայաստանի չորս նահանգները՝ Անգեղ տունը, Տոփքը, Աղձնիքը և Մավդեից գավառը, որոնք ստրատեգիական կարևոր նշանակություն ունեին։ Հռոմը Հայաստանին սիրաշահելու համար նրա սահմաններն ընդարձակեց մինչև Զինթա ամրոցը (Մարաստանում)։

Հռոմեացիները Հայաստանի թագավոր ճանաչեցին Տրդատին, որը հայ ժողովրդի պատմության մեջ հայտնի է Տրդատ III անունով (298—330)։

Ժամանակակից պատմիչների տեղեկություններից երևում է, որ Տրդատը չնայած գահ բարձրացավ հռոմեացիների աջակցությամբ, բայց չդարձավ նրանց հլու կամակատարը։ Նա աշխատեց բարեկամական հարաբերություններ հաստատել ինչպես Հռոմի, այնպես և Պարսկաստանի հետ։

Տրդատը ռազմական դաշինք կնքեց հռոմեացիների հետ։ Ըստ այդ դաշինքի, հռոմեացիները ճանաչում էին Հայաստանի անկախությունը և խոստանում օգնել նրան, եթե պարսիկները փորձեին հարձակվել Հայաստանի վրա։

Տրդատն աշխատեց բարեկամական հարաբերություններ հաստատել նաև հարևան Վրաստանի, Աղվանքի և Հյուսիսային Կովկասի ալանական պետության հետ։ Ի հաստատումն այդ բարեկամության, նա ամուսնացավ ալանների թագավորի աղջկա՝ Աշխենի հետ։

Քրիստոնեության մուտքը Հայաստան և նրա ճանաչումը որպես պաշտոնական կրոն

Հայաստանում ձևավորված ֆեոդալական նոր հարաբերությունները պահանջում էին նաև համապատասխան նոր գաղափարախոսություն։ Նման գաղափարախոսության դերով հանդես եկավ քրիստոնեությունը։

Քրիստոնեությունը Հայաստան է թափանցել դեռևս I—II դարերում Ասորիքից և Կապադովկիայից։ Նրա առաջին տարածողներն ու քարոզիչները հույներն ու ասորիներն էին։ Քրիստոնեական համայնքներ ստեղծվել էին գլխավորապես Հայաստանի այն քաղաքներում, որոնք կապված էին առևտրական հարավային մայրուղու հետ։ Քրիստոնեությունը նախնական շրջանում սոցիալական նպաստավոր հող կարողացավ գտնել ցածր խավերի՝ արհեստավորների, ստրուկների և մանր առևտրականների մեջ։ Սկզբում նոր կրոնի հետևողները Հայաստանում ևս ենթարկվեցին կատաղի հալածանքների և խոշտանգումների, որոնց մասին բազմաթիվ հիշատակություններ կան Ագաթանգեղոսի «Պատմության» և վարքագրական գրականության մեջ (Հռիփսիմյանց կույսերի նահատակությունը, Գրիգոր Լուսավորչի շարչարանքները և այլն)։ Սակայն հետագայում, ինչպես ուրիշ երկրներում, այնպես էլ Հայաստանում, քրիստոնեությունը փոխեց իր ներքին էությունը և դարձավ շահագործող դասակարգի գաղափարախոսությունը, կոչ անելով աշխատավորությանը՝ հնազանդ լինել իրենց տերերին։

Ագաթանգեղոսի և Խորենացու հաղորդած տեղեկություններից երևում է, որ քրիստոնեությունը Տրդատի կողմից պաշտոնական կրոն հայտարարվելուց հետո այն բռնությամբ սկսում են տարածել նաև ժողովրդի մեջ։ Տրդատը և Գրիգոր Լուսավորիչը հատուկ պարաբանակներով շրջում էին Հայաստանում, քանդում մեհյանները և նրանց տեղում եկեղեցիներ կառուցում։ Ագաթանգեղոսը պատմում է, որ Տրդատը և իր համախոհները Արտաշատի ճանապարհի վրա նախ Տիր աստծու տաճարը «Քակեալ աւերեալ քանդեցին», այնուհետև Արտաշատում «Ամենայն շինուածք ի հիմանց դրդեալ տապալեցան», Թորդանում «Սպիտակափառ» կոչվող Վահագնի տաճարը «Կործանէին և զսպատակեր նորին փշրէին», Երիզայում ոչնչացնում են Անահիտի արձանը և քանդում նրա մեհյանը և այլն։

Ղևոնդ Գլակը նկարագրում է այն արյունոտ ընդհարումները, որոնք տեղի են ունեցել Տարոնում հեթանոսների և քրիստոնյաների միջև։ Հեթանոսները, Արձան քրմապետի գլխավորությամբ, կռվում էին Տրդատի բանակի դեմ, և մեծ դժվարությամբ է հաջողվում Տրդատին հաղթանակ տանել։ Այդ ընդհարումների ժամանակ սպանվել են ավելի քան հազար հոգի։ Ճակատամարտում ընկել է նաև Արձան քրմապետը։

Հեթանոսներին հաղթելուց հետո, ամենուրեք ստիպել են ժողովրդին քրիստոնեություն ընդունել և մկրտվել։ Եթե հավատալու լինենք Ագաթանգեղոսի հաղորդած տեղեկությանը, ապա Հայաստանում այդ ժամանակ նոր կրոնն ընդունել են շուրջ «չորս հարիւր բիւր», այսինքն՝ չորս միլիոն մարդ, որ չափազանցություն է։

Վաղ քրիստոնեությունը Հայաստանում ենթարկվեց զգալի փոփոխությունների. նոր կրոնը ժողովրդական լայն շրջաններին դրավիչ և ընդունելի դարձնելու նպատակով սրբագործվեցին հեթանոսական շատ ծեսեր և սովորություններ։ Այդպիսի ծեսերից էին, օրինակ, զոհաբերությունը, ուխտագնացությունը, ննջեցյալների պաշտամունքը, տյառնընդառաջը (տրնդեզը), վարդավառը և այլն։ Քրմական դասի դիմադրությունը մեղմելու նպատակով նրանցից ոմանց պաշտոններ հատկացրին քրիստոնեական եկեղեցիներում։ Քրմերի որդիների համար բաց արեցին հատուկ դպրոցներ, ուր նրանց դաստիարակում էին քրիստոնեական ոգով և դարձնում եկեղեցականներ։

Իշխող ֆեոդալական շրջանները մեծ ուշադրություն էին դարձնում եկեղեցու տնտեսական վիճակի վրա և նրա տրամադրության տակ դնում նախկին մեհյանների ողջ կալվածքները։ Ունեցվածքը, որոնք ժամանակի ընթացքում էլ ավելի էին բազմապատկվում։

Քրիստոնեությունը Հայաստանում մուտք գործեց որպես ֆեոդալական իշխող դասակարգի կրոն։ Նա հանդիսացավ իշխող դասակարգի գաղափարական դենքը՝ շահագործվող դասակարգին մշտապես հնազանդության մեջ պահելու համար։ Հայկական եկեղեցին հեթանոսությունից ժառանգում է նաև դատապարության և օրենսդրության իրավունքը։ Եկեղեցին գաղափարապես ամրապնդել է ֆեոդալական միապետության տնտեսական ու քաղաքական հիմքերը և ֆեոդալական իրավունքի անձեռնմխելիությունը։

Հայադիտության մեջ քրիստոնեության պաշտոնական կրոն հռչակվելու թվականի վերաբերյալ շատ վեճեր են եղել։ Այժմ հիմնավորապես հաստատված է, որ քրիստոնեությունը Հայաստանում պետական, պաշտոնական կրոն է ճանաչվել 301 թ., այսինքն՝

տչ միայն Հռոմեական կայսրությունից ավելի քան մեկ տասնամյակ առաջ, այլև ընդհանրապես աշխարհում առաջինը Հայաստանն էր այդ նոր ուսմունքը պաշտոնապես ճանաչել։

Քրիստոնեության ընդունման հետ միասին Հայաստանում ձևավորվել է սկսում նաև հայկական եկեղեցական դասը, որի գլուխ կանգնած էր կաթողիկոսը։ Չորրորդ դարում կաթողիկոսությունը գտնվում էր Գրիգոր Լուսավորչի և Աղբիանոսների տոհմերի ներկայացուցիչների ձեռքում։ Կաթողիկոսության ենթակայության մեջ էին գտնվում առանձին խոշոր նախարարություններում պաշտոնավարող եպիսկոպոսները, որոնցից հետո գալիս էին ստորադաս հոգևորականները։ Եվ այսպես, աշխարհիկ ֆեոդալական հիերարխիայի նմանությամբ, սկսում էր ձևավորվել նաև հայկական հոգևոր հիերարխիան։

Քրիստոնեությունը Հայաստանում հանդես է եկել որպես ֆեոդալական կրոն, որպես տիրապետող դասակարգի տիրապետող գաղափարախոսություն։ Նա հանդիսացել է ֆեոդալական իշխող դասակարգի գաղափարական զենքը։

Տրդատի և Կոստանդիանոսի դաշինքը

Քրիստոնեության մուտքը էական նշանակություն ունեցավ Հայաստանի քաղաքական կողմնորոշման խնդրում. եթե նա անցյալում իր կրոնով, կուլտուրայով և սովորություններով որոշ չափով կապված էր Իրանի հետ, ապա քրիստոնեություն ընդունելուց հետո կողմնորոշվեց դեպի քրիստոնեական Հռոմը։

Ագաթանգեղոսի և Փավստոսի տեղեկություններից երևում է, որ Տրդատը դաշինք է կնքել Կոստանդիանոս Մեծի հետ, ըստ որի Հռոմեական կայսրությունը հանձն էր առնում անհրաժեշտության դեպքում օգնել Հայաստանին ռազմական ուժով։

Խոսրովի գահակալությունը և շինարարական աշխատանքները

Մծբինի դաշնագրությունից հետո Մերձավոր Արևելքում խաղաղություն հաստատվեց։ Հայաստանը, որ մինչ այդ ոտնակոխ էր լինում պարսկա-հռոմեական անվերջ պատերազմներից, հնարավորություն ունեցավ բուժել իր վերքերը և տնտեսական աշխույժ զարգացման ուղու վրա կանգնել։ Խաղաղության այս շրջանին են դուցադիպում Տրդատի որդու՝ Խոսրով III-ի կամ Կոդակի (կարճահասակ) գահակալության տարիները (331—338)։

Փավստոս Բուզանդը Խոսրովի թագավորության շրջանը բնորոշում է որպես «խաղաղության» շրջան, թեպետ, իրականում, նրա

գահակալության վերջին տարիներին արյունահեղ քիչ պատերազմներ չեն եղել։

Խոսրովի գահակալության առաջին տարիներին կատարված շինարարական աշքի ընկնող գործերից մեկը Դվին քաղաքի հիմնումն է։ Ըստ պատմիչների տեղեկությունների, այդ ժամանակ Արաքս գետը փոխել էր իր նախկին հունը և հեռացել Արտաշատի մոտից, որի պատճառով խախտվել էր մայրաքաղաքի ռազմական պաշտպանությունը։ Անցյալում Արաքսը ծնկաձև պտույտ էր տալիս մայրաքաղաքի շուրջը և երեք կողմից ջրային արգելակով պաշտպանում էր այն, իսկ այժմ քաղաքը զրկվել էր այդ պաշտպանությունից։ Բացի այդ, Արաքսի ընթացքը փոխվելու հետևանքով, ջրերը դուրս էին եկել հունից և ճահճուտներ ստեղծել մայրաքաղաքի շուրջը, օդը դարձել էր վատառողջ, «օդք չերմայինք պղտորեալք ժանգահոտութեամբ փչէին»,— գրում է Խորենացին։ Ահա այս նկատառումով արքունիքը որոշում է մայրաքաղաքը տեղափոխել առողջ կլիմայով բարձրադիր մի վայր։ Նոր մայրաքաղաքի համար հարմար տեղ են ընտրում Արտաշատից ոչ շատ հեռու գտնվող Դվին կոչվող բլուրը, որտեղ հիմնում են քաղաքը և բլրի անունով կոչում Դվին։

Նոր հիմնադրված մայրաքաղաքում կառուցում են արքունական ապարանքներ և դեղեցիկ այլ շենքեր։ Դվինը փոխարինում է Արտաշատին և շուտով դառնում տարանցիկ առևտրի խոշոր կենտրոններից մեկը Մերձավոր Արևելքում։

Խոսրովի ժամանակ կատարված շինարարական մյուս աշխատանքներից ուշադրության արժանի է Խոսրովի անտառի տնկումը։ Խոսրովը, ինչպես վկայում է Փավստոսը, որպես արևելյան տիպի բռնապետ, ցանկանում էր արքունիքին մոտիկ վայրում ունենալ իր անտառը՝ լիքը որսի կենդանիներով, որպեսզի կարողանար որսորդություն անել և իր հաճույքը բավարարել։ Այդ նպատակով նա կարգադրում է Վաչե սպարապետին՝ աշխատող ձեռքեր հավաքագրել բնակչությունից, կաղնու տնկիներ բերել տալ և հսկայական մի տարածության վրա՝ Գեղարդից մինչև Մեծամորի դաշտը, Ազատ գետի երկու կողմերում՝ ծառատնկում կատարել։ Բագավորի կարգադրությունը կատարվում է. տնկվում է անտառը։ Հետագայում բերվում և այդ անտառն են բաց թողնվում վայրի կենդանիներ։

Ազատ գետի երկու կողմերում տնկած անտառը մատենագրության մեջ հայտնի է Խոսրովային կամ Խոսրովակերտ անտառ անունով։ Նրա մի մասը մնացել է մինչև մեր ժամանակները և արհեստական տնկված անտառների մեջ հնագույններից մեկն է համար-

վում ամբողջ աշխարհում։ Պատմաբաններից ոմանց կարծիքով, նման անտառները ոչ միայն անհրաժեշտ են եղել որսորդության, այլև հարմար վայր են հանդիսացել զինավարժության համար։

Մազկութների արշավանքը

Շուտով, սակայն, խախտվում է Հայաստանի խաղաղությունը։ Մազկութների Սանեսան թագավորը, Շապուհի թելադրանքով, ալաններից, մազկութներից, հոներից և Հյուսիսային Կովկասի այլ ժողովուրդներից կազմված խառնիճաղանջ մեծ բանակով 335 թվականին հարձակվում է Հայաստանի վրա։ Ըստ Փավստոսի տեղեկության, Սանեսանի բանակը այնքան բազմամարդ էր, որ «զինքեան զիւրեանց զօրսն թուիլ ոչ կարէին». և երբ նրանց զինվորները ճանապարհների կողքին մեկական քար էին նետում, քարրնկեց տեղում քարակույտի հսկայական մի շեղջ էր գոյանում։

Օգտվելով այն հանգամանքից, որ հայկական զորաբանակը ցրված էր երկրի զանազան մասերում և սպարապետ Վաչե Մամիկոնյանը բացակայում էր, մազկութներին հաջողվում է առանց լուրջ դիմադրության, Սևանա լճի ափով ներթափանցել Այրարատյան նահանգը և վերցնել Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների մեծ մասը՝ մինչև Արաքս գետը։ Խոսրովը ի վիճակի չի լինում կազմակերպելու դիմադրությունը և ամրանում է Դարույնքի բերդում։ Մի ամբողջ տարի մազկութներն անարգել ասպատակում են Հայաստանի արևելյան նահանգները, ավերում երկիրը, կողոպտում բնակչությանը և հազարներով գերի տանում։ «Եւ ելին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց. քանդեցին, կերեցին, առհասարակ աւերեցին»,— գրում է Փավստոսը։ Վերջապես՝ Բյուզանդիայից վերադառնում է Վաչե Մամիկոնյանը, հավաքում է Հայաստանի ռազմական ուժերը, կազմակերպում հայկական բանակը և կռվում մազկութների դեմ։ Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Օշականին մոտիկ Առատաբ վայրում 336 թ. գարնանը։ Հայկական զորքը պլխավին ջարդում է մազկութներին և խլում նրանցից Հայաստանից տարվող գերիները և ավարը։ Կռվում սպանվում է նաև Սանեսան թագավորը, և նրա բանակը խուճապահար փախչում է Հայաստանից։

Պայքար ընդդեմ կենտրոնախույս նախապարարությունների

III դարում ֆեոդալական հարաբերություններն արդեն հաստատվել ու տիրապետող էին դարձել Հայաստանում որպես արտադրության իշխող եղանակ։ Երկրի տնտեսական և քաղաքական կյանքում շուտով սկսում են դրսևորվել մասնատվածության բնորոշ այն երևույթները, որոնք

հատուկ են ֆեոդալիզմին ընդհանրապես։ Խոշոր ֆեոդալները, որոնք իրենց տիրույթների անձնիշխան տերերն էին և իրենց շուրջն էին համախմբել բավական թվով միջին և մանր ազնվականներ, ձգտում էին քաղաքական անկախության։ Այստեղից էլ ծայր է առնում այն երկարատև ու լարված պայքարը, որ տեղի էր ունենում թագավորի և կենտրոնախույս նախարարների միջև։ Հայկական արքունիքն ամեն կերպ աշխատում էր ճնշել ֆեոդալական, պառակտողական կենտրոնախույս ուժերին և ստեղծել կենտրոնացված ուժեղ պետություն։

Թե ինչպիսի մեծ վտանգ էին ներկայացնում կենտրոնական իշխանության համար ֆեոդալական կենտրոնախույս ուժերը, և արքունիքում որքան մեծ վախ կար նրանց նկատմամբ, կարելի է պատկերացնել այն փաստից, որ Խոսրովը հատուկ կարգ էր սահմանել, որ «բյուրավոր» նախարարները պարտավոր էին մշտապես լինել արքունիքում, որպեսզի հնարավորություն չունենային դավադրություններ կազմակերպելու կենտրոնական իշխանության դեմ։

Հայաստանի պետական հզորությունը խարխլվում էր նաև նախարարական երկպառակությունների, միջֆեոդալական կռիվների հետևանքով։ Հայ պատմիչներն առանձնապես դայրույթով են խոսում Մանավազյան և Որդունի նախարարական տների միջև տեղի ունեցող կռիվների մասին, որոնց հետևանքով, ինչպես Փավստոսն է վկայում, կոտորվում են «բազում մարդիկ»։

Կռվող նախարարներին պատժելու համար ուղարկվում է արքունական բանակը՝ Վաչե Մամիկոնյանի գլխավորությամբ։ Մանավազյան և Որդունի նախարարները փորձում են դիմադրություն ցույց տալ, բայց պարտվում են։ Անհնազանդ ֆեոդալներին պատժելու համար սպարապետը ֆեոդալական այս երկու տոհմերի արու զավակներին ոչնչացնում է և նրանց կալվածքները «յարքունիս» գրավում կամ տալիս է նկեղեցուն։

Պարսկա-հռոմեական մրցակցությունը և Շապուհի արշավանքները

Մծբինի դաշնագրությունից հետո ևս ավելի քան երկու տասնամյակ շարունակվում է Հռոմի և Պարսկաստանի մրցությունը Հայաստանին տիրելու համար։ Մրցող կողմերը այժմ ավելի քան առաջ օգտագործում են Հայաստանի կենտրոնախույս ուժերը։ Նրանք աշխատում են իրենց կողմը գրավել որոշ նախարարների, հրահրել երկպառակություններ, որպեսզի թուլացնեն Հայաստանի քաղաքական հզորությունը և հեշտացնեն նրա գրավումը։

Պարսկաստանի և Հռոմի այս մրցակցությունը Հայաստանի

համար ավելի սուր բնույթ է ստանում առանձնապես այն ժամանակ, երբ Կոստանդիանոս Մեծի ջանքերով ստեղծվում է Արևելյան Հռոմեական կայսրությունը։

Կոստանդիանոս Մեծը, ինչպես և նրա հաջորդ կայսրերը, այսուհետև հանդես են գալիս քրիստոնյա Հայաստանի հովանավորողի կեղծ դիմակի տակ, բայց իրականում վարում են նվաճողական որոշակի քաղաքականություն։ Հայկական արքունիքը, քաղաքական ծանր դրության մեջ ընկնելով, հաճախ է դիմում Բյուզանդական կայսրին, որպես «դաշնակցի» ու քրիստոնյա պետության, և օգնություն խնդրում, բայց միշտ էլ նրա ակնկալությունները հուսախաբությամբ են վերջանում։

IV դարում ռազմա-քաղաքական իր վերելքի շրջանում էր գտնվում Պարսկաստանը։ Սասանյան գահակալներին հաջողվել էր ստեղծել ֆեոդալական բավական ուժեղ պետություն։ Նրանք ձգտում էին վերականգնել Աքեմենյանների երբեմնի լայնածավալ պետությունն ու նրա փառքը։ Այդ քաղաքականությունն առանձնապես նկատելի է Պարսից Շապուհ II-ի ժամանակ (310—379), որն իր երկարատև գահակալության ընթացքում վիթխարի ջանքեր էր գործադրում դրավելու Հայաստանն ու հարևան երկրները։ Նա օգտագործում էր ամեն մի ասիք՝ իր զորքերը Հայաստան մտցնելու համար։

Սկսած 335 թվականից Պարսկաստանի և Հռոմի հարաբերությունները նորից սրվում են։ Նրանց միջև սահմանային մանր միջադեպեր հաճախ էին տեղի ունենում։ Բայց երբ Շապուհը լսում է Կոստանդիանոս Մեծի մահը (337 թ.) և գահակալության համար նրա որդիների միջև սկսված պայքարը, անմիջապես շարժում է իր բանակը դեպի անդրեփրատյան երկրները։ Պարսկական զորքերը շրջապատում են Մծբինը։

Պարսկական մի այլ բանակ հարձակվում է Հայաստանի վրա՝ շարժվելով Հեր և Զարևանդ գավառների ուղղությամբ։ Պարսկական զորքին դիմադրելու համար Հայաստանում շտապ զորահավաք է կատարվում և Բզնունյաց նախարար Դատարեի գլխավորությամբ ուղարկվում թշնամու դեմ։ Բայց Դատարեն, թշնամու հետ կռվելու փոխարեն, ինքնագլուխ կերպով հաշտություն է կնքում Շապուհի հետ։ Հայկական արքունիքը հարիադրված է լինում երեսուն հազարանոց նոր բանակ ուղարկել սպարապետ Վասակ Մամիկոնյանի հրամանատարությամբ։ Ճակատամարտը տեղի է ունենում Վանա լճի մոտ գտնվող Առեստ ավանի մոտ։ Հայկական զորքը ցուցաբե-

բում է բացառիկ արիություն։ Նրան հաջողվում է հաղթել թշնամուն, վերցնել բավականաչափ ավար, այդ թվում՝ ռազմական փղեր։ Կռվում բռնում են նաև Դատաբևին և քարկոծում՝ որպես հայրենիքի դավաճանի։

Փավստոսի հաղորդած տեղեկություններից երևում է, որ թագավորի դեմ ապստամբում է նաև Աղձնիքի Բակուր բդեշխը, որը օգնական զորք ստանալով Շապուհից, կռիվ է սկսում կենտրոնական իշխանության դեմ։ Սակայն արքունիքի բանակը ճնշում է Բակուր իշխանի ապստամբությունը և սպանում նրան։

Շապուհն իր կրած պարտության վրեժն առնելու համար, նոր արշավանք է ձեռնարկում դեպի Հայաստան։ Այս անգամ կռիվներում չնայած հաղթում են հայերը, սակայն հայկական բանակը մեծ կորուստներ է ունենում. մարտերում զոհվում են բարձրաստիճան զինվորականներ, այդ թվում նաև՝ Վաչե Մամիկոնյանը։ Ժողովուրդը, ըստ Փավստոսի տեղեկության, սիրելի սպարապետի մահվանը լուրը ընդունում է «արտասուակաթ ողբով և ծանրաթախիծ հոգով»։ Հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակը վառ պահելու համար կարդ է սահմանվում, որպեսզի նրանց հիշատակը նշվի ամեն տարի («ամ յամէ»)։

Վաչեից հետո հայկական զորքերի սպարապետությունը հանձնվում է նրա որդուն՝ Արտավազդ Մամիկոնյանին։ Հավանական է հայ-պարսկական այս պատերազմից առաջ մահացել էր Խոսրով թագավորը, որովհետև նրա անունը պատմիչների մոտ այլևս չի հիշվում։ Գուցե և Խոսրովի մահն է առիթ տվել Շապուհին կազմակերպելու հայկական արշավանքը և դահ բարձրացնելու իր դրածոներից մեկին։

Պարսկական արքունիքը օգտագործելով ստեղծված քաղաքական բարենպաստ պայմանները 338 թ. աշնանը ավելի խոշոր բանակ է ուղարկում Հայաստան։ Շապուհի բանակին միանում են դավաճան որոշ հայ իշխաններ ևս։ Հայկական փոքրաթիվ զորաբանակը ի վիճակի չի լինում դիմադրել պարսիկներին և պարտություն է կրում։ Արտավազդ Մամիկոնյանը և նրան համակիր հայ նախարարները հարկադրված հեռանում են Հայաստանից և ապաստանում բյուզանդացիների մոտ։

Հայաստանը Տիրանի գահակալության տարիներին

338 թվականի աշնանը Հռոմը կտրուկ միջոցների է դիմում պարսկական արշավանքի առաջն առնելու համար։ Կոստանդիոսը անձամբ դալիս է Արևելք՝ Պարսկաստանի դեմ պատերազմը կազմակերպելու համար։

339 թվականին կայսրը խոշոր բանակով մտնում է Հայաստան և գահ բարձրացնում Խոսրովի որդուն՝ Տիրանին (339—350)։

Տիրանի գահակալության շրջանում ձեռնարկված պետության կենտրոնացման քաղաքականությանը դիմադրում էին որոշ ֆեոդալներ և կաթողիկոսը։ Եվ այժմ, երբ սրվել էին արքունիքի և նախարարների փոխհարաբերությունները, հայ հոգևորականությունը հանդես էր գալիս արքունիքի քաղաքականության հակառակորդների շարքում։

Ըստ Փավստոսի տեղեկության, Տիրանի ժամանակ քրիստոնեությունը ջերմեռանդ հավատքով չէին պաշտում շատերը և դեռ շարունակվում էր կուռքերի երկրպագությունը։

Տիրանի ժամանակ կաթողիկոսական գահի վրա էր Հուսիկը՝ Լուսավորչի տոհմից, որի փոխհարաբերությունը Տիրանի հետ գընալով այնքան է սրվում, որ կաթողիկոսն արգելում է թագավորին եկեղեցի մտնել որպես անհավատի։ Տիրանը, վիրավորված Հուսիկի այս վարմունքից, կարգադրում է բրածեծ անել և սպանել նրան։ Թագավորի կարգադրությունն ի կատար է ածվում։

Հայ պետականության և եկեղեցու միջև սկսված պայքարը, սակայն, Հուսիկի սպանությամբ չի վերջանում. Հուսիկին հաջորդող կաթողիկոսը՝Դանիել Ասորին, ևս Հուսիկի բախտին է արժանանում։ Երբ վերջինս փորձում է ընդդիմանալ Տիրանի քաղաքականությանը, թագավորը կարգադրում է պարանը գցել նրա վիզը և խեղդամահ անել։ Նրանց հաջորդող Փառեն և Շահակ կաթողիկոսները, ակամա, ստիպված են լինում համակերպվել Տիրանի քաղաքականության հետ և դառնալ նրա հլու կամակատարները։

Նախարարական տների ներքին պայքարն ու պառակտումը նպաստավոր հող են ստեղծում մրցակից Պարսկաստանի և Հռոմի համար, որոնք աշխատում էին օգտագործել ստեղծված քաղաքական նպաստավոր իրադրությունը։

Տիրանը իր գահակալության առաջին տարիներին փորձում է բարեկամական հարաբերությունների մեջ մտնել Շապուհ II-ի հետ, սակայն, իրականության մեջ, Տիրանի և Շապուհի բարեկամությունը կեղծ էր, որովհետև Շապուհը երբեք չէր հրաժարվել իր մտադրությունից՝ նվաճելու Հայաստանը, իսկ Տիրանը դաշինք ուներ կնքած Բյուզանդիայի հետ։

Ահա այդ բարդ իրադրությունների մեջ Հայաստանի վիճակը բավական վտանգվում է։

Տիրանի գահակալության առաջին տարիներն անցնում են համեմատաբար խաղաղ, որովհետև Շապուհը զբաղված էր Պարս-

կաստանին հյուսիս-արևելքից սպառնացող վտանգով, իսկ հռոմեացիները՝ հյուսիսային արշավանքով. Հայաստանը դեռ դուրս էր նրանց տեսադաշտից։ Իսկ հետագա տարիներին, երբ ազատվում են նրանց ձեռքերը, նրանք երկուստեք իրենց ուշադրությունը բևեռում են Հայաստանի վրա, զորքեր կենտրոնացնում նրա սահմաններում և պատրաստվում կռվի։ Պարսկական և հռոմեական բանակների միջև տեղի են ունենում մի շարք կռիվներ, որոնց մասնակցում են նաև հայկական զորքերը՝ իբրև հռոմեացիների դաշնակիցներ։ 346 թվականին Շապուհը խոշոր բանակով մտնում է հռոմեական տերիտորիան և շրջապատում Մծբինը։ Քաղաքը հերոսաբար պաշտպանվում է ավելի քան երեք ամիս, մինչև Կոստանդիոսը գալիս և ազատում է այն։ 347 թվականին կռվող կողմերը համաձայնության են գալիս և զինադադար կնքում։

350 թվականին խռովություն է սկսվում հռոմեական կայսրության մեջ։ Օգտվելով այդ դրությունից Շապուհը անմիջապես շարժվում է Մծբինի վրա և նորից շրջապատում քաղաքը։ Պարսկական զորքերը ճնշում են գործ դնում նաև Հայաստանի վրա, որը միայնակ էր մնացել պարսկական խոշոր բանակների դեմ։ Պարսկական զորքերին հաջողվում է մտնել Հայաստան, ձերբակալել Տիրանին և տանել Տիզբոն։ Շապուհը Տիրանի աչքերը հանել է տալիս շիկացած երկաթով և Հայաստանի թագավոր նշանակում իր որդի Ներսեհին։

Փավստոս Բուզանդը փոքր-ինչ այլ ձևով է ներկայացնում Տիրանի դերի ընկնելն ու կուրացումը։ Ըստ նրա տեղեկության Ատրպատականի կողմնակալ Վարազ Շապուհը պարսիկ արքունիքի անունից բանակցություններ է սկսում Տիրանի հետ։ Այդ բանակցությունների ընթացքում քսու դեր է կատարում Տիրանի սենեկապետ Փիսակը, որը նշանակված էր Տիրանի ներկայացուցիչը՝ բանակցությունների ընթացքում։ Սա դավաճանելով Տիրանին, Վարազ Շապուհին խորհուրդ է տալիս Տիրանից նվեր պահանջել նրա լավագույն նժույգը։ Ընչաքաղց պարսիկը մարդ է ուղարկում Տիրանի մոտ և պահանջում այն։ Տիրանը չկամենալով իր այդ նժույգը տալ և միաժամանակ չցանկանալով մի ձիու համար փչացնել հարաբերությունները, իր ձիու նմանությամբ մի այլ ձի է ուղարկում պարսիկ կողմնակալին։ Փիսակն իսկույն իրազեկ է դարձնում Վարազ Շապուհին Տիրանի կատարած կեղծիքը։ Պարսիկ կողմնակալը զայրացած, 3000 հոգով, գալիս է Հայաստան և բանակցելու պատրվակով խաբեությամբ բռնում Տիրանին, կուրացնում նրան և գերի տանում Պարսկաստան։

Տիրանի ձերբակալման և պարսկական զորամասերի Հայաստանում ունեցած հաջողությանը նպաստել են կենտրոնախույս ձգտում ունեցող որոշ նախարարներ։ Այդ որոշակի երևում է մեզ հասած Հուլիանոս կայսեր (361—363) մի ճառից, ուր ասված է, թե «բավական թվով հայեր հարել են պարսիկներին»։

Տիրանի ձերբակալությունից ու կուրացումից հետո Շապուհը գործուն աշխատանք է սկսում՝ Հայաստանը դրավելու և Պարսկաստանին միացնելու համար։

Երկրին սպառնացող վտանգի այս ծանր պահին, ըստ Փավստոսի վկայության, սոցիալական բոլոր խավերը՝ իշխանները, հոգևորականները, շինականները և ռամիկ մարդիկ «ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն»՝ կազմակերպելու հայրենիքի պաշտպանությունը։

Հայ քաղաքական ղեկավար շրջանը, ստեղծված այս ծանր դրության մեջ, անհրաժեշտ է համարում հատուկ պատգամավորություն ուղարկել Բյուզանդիա և «թիկունք օգնականութեան» խնդրել Կոստանդիոս կայսրից։ Կայսրը, որ վերջացրել էր արևմուտքում իր սկսած պատերազմը և այժմ մտահոգված էր Արևելքով, մանավանդ Շապուհի ստեղծած սպառնական վիճակով, դրական պատասխան է տալիս հայ պատգամավորներին։ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև պատերազմական գործողությունները սկսվում են 350 թվականի գարնանը։

Շապուհն իր բանակը կենտրոնացնում է Հայաստանի հարավային սահմանում՝ Սինդարայում, Սատալ-Բասեն ուղղությամբ՝ հարձակում սկսելու համար։ Շապուհը Հայաստան է շարժում իր ողջ բանակը՝ պատերազմական փղերի հետ միասին։

Մինչև Շապուհի հարձակում սկսելը հասնում է նաև հռոմեական բանակը՝ Կոստանդիոս կայսեր գլխավորությամբ։ Կայսրը, Արշավիր և Անդովիկ իշխանների հետ միասին, կաղամբավանքի շորեր հագած մտնում է թշնամու բանակը, հետախուզում ու վերադառնալուց հետո սկսում հարձակումը։ Ճակատամարտը տեղի է ունենում Բասենում։ Հայ-հռոմեական միացյալ զորքերը շարաշար պարտություն են մատնում պարսիկներին, վերցնում բազմաթիվ գերիներ ու ավար, այդ թվում նաև՝ Շապուհի կանանոցը։ Շապուհը հազիվ է կարողանում փախչել և ազատվել գերությունից։

Շապուհը՝ Բասենում կրած իր այդ պարտությունից հետո, համաձայնվում է գերությունից բաց թողնել Տիրանին և ճանաչել Հայաստանի անկախությունը։ Բայց քանի որ Տիրանը կույր էր և այլևս

չէր կարող կառավարել երկիրը, ուստի և գահակալում է նրա որդին՝ Արշակ II-ը (350—367)։

3. ՊԱՅՔԱՐ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՇԱԿ II-Ի ԺԱՄԱՆԱԿ

Արշակ II-ի գահակալությունը և նրա ջանքերը պետության ամրացման ուղղությամբ

Հայաստանը Արշակի գահակալության առաջին շրջանում (350—358) գտնվում էր համեմատաբար խաղաղության մեջ։ Այդ տարիներին կռիվներ չեն եղել, եթե չհաշվենք սահմանային մանր միջադեպերը, որոնց մասին հիշատակություն ունի Ամմիանոսը։ Շապուհը պատերազմ էր վարում հյուսիս-արևելքում քուշանների ու այլ ցեղերի դեմ և Հայաստանը առայժմ դուրս էր մնում նրա տեսադաշտից։ Ինչ վերաբերում է Կոստանդիոսին, ապա նա նոր էր վերջացրել գահակալական կռիվները և Հայաստանի վրա նայում էր իբրև դաշնակից երկրի, մանավանդ, որ հայկական մի զորագունդ օգնել էր նրան գահակալական կռիվների ժամանակ։ Խաղաղության այդ տարիները որոշ չափով նպաստում են հայ քաղաքական ցրված ուժերը համախմբելու, քայքայված տնտեսությունը վերականգնելու և երկրի պաշտպանությունն ամրապնդելու համար։ «Եւ եղև խաղաղութիւն մեծ ի ժամանակին յայնմիկ։ Ժողովեցան ամենայն թագուցեալքն, փախուցեալք, կորուսեալք երկրին Հայոց»,— գրում է Փավստոսը։

Արշակի գահակալությունից անմիջապես հետո հայկական արքունիքը տասը հոգուց բաղկացած պատգամավորություն է ուղարկում Բյուզանդիա՝ նպատակ ունենալով, ինչպես Փավստոսն է նշում, նորոգելու Հայաստանի և Բյուզանդիայի միջև գոյություն ունեցող դաշինքը։ Սխալվում են այն պատմաբանները, որոնք հայ-բյուզանդական այդ դաշնադրության մեջ ուզում են Հայաստանի վասալական կախվածությունը տեսնել Բյուզանդիայից։ Իրականում, պատմական աղբյուրներում չկա որևէ ակնարկ, որ Հայաստանը վասալական բնույթի պարտավորություն է ունեցել Բյուզանդիայի հանդեպ։ Հայաստանը Բյուզանդիայի հետ դաշնակցության մեջ է գտնվել որպես հավասար կողմ։ Ոչ միայն հայկական, այլև հունական պատմիչները խոսելով հայ-բյուզանդական հարաբերությունների մասին, Հայաստանը համարում են Բյուզանդիայի «հին բարեկամը և նիզակակիցը» (Եվսեբիոս), «հին մարտակիցը» (Հուլիանոս) և այլն։

Կոստանդիոսը սիրով է ընդունում հայ պատգամավորությանը և խոստանում հավատարիմ մնալ այն դաշնակցությանը, որը կընքված է եղել Կոստանդիանոս Մեծի և Տրդատի միջև։ Ի նշան անկեղծության կայսրը պատանդությունից ազատում և պատգամավորության հետ Հայաստան է ուղարկում Արշակի եղբոր որդիներին՝ Դնելին և Տիրիթին։

Պատգամավորությունը վերադառնալիս իր հետ բերում է նաև Արշակի հարսնացուին՝ Օլիմպիային։ Սա Կոստանդիոս կայսեր մահացած եղբոր՝ Կոստասի նշանածն էր, պրետորյանների պրեֆեկտ Աբլաբիոսի աղջիկը։ Կայսրը համաձայնել էր Օլիմպիային կնության տալ Արշակին, հավանական է հայ-բյուզանդական դաշինքը ամրապնդելու դիտավորությամբ։ Ըստ երևույթին, Օլիմպիայի հարսնախոսության բանակցությունները տեղի էին ունեցել պատգամավորության գալուց առաջ, և դրա հետևանքով էր, որ պատգամավորությունը ղեկավարում էր Ներսեսը՝ թագավորի սենեկապետը։

Պատմագիտության մեջ հայ պատգամավորության Բյուզանդիա գնալու ժամանակը համարվում է 353 թվականը։ Սակայն ավելի հավանականը գուցե Արշակի գահակալության հենց առաջին տարին լինի՝ 350 թվականը։ Ներսեսը պատգամավորության կազմում է եղել ոչ թե որպես կաթողիկոս, այլ սենեկապետ. նրա պարտականությունների մեջ էր մտնում հարսնացուին ուղեկցելը, իսկ այդ 353 թվականին լինել չէր կարող, որովհետև այդ տարին Ներսեսն արդեն կաթողիկոս էր։

Ներքին քաղաքականության մեջ Արշակն աշխատում է առաջին հերթին համախմբել պառակտված ֆեոդալներին։ Նա պաշտոնի է կանչում Տայքի և Սպերի Մամիկոնյաններին, որոնք իր դայակներն էին եղել. Վասակ Մամիկոնյանին նշանակում է զորքի սպարապետ, իսկ նրա ավագ եղբորը՝ Վարդանին, նահապետ։ Իրենց նախարարական տանն է հանձնվում հազարապետությունը։ Արքունիքի մյուս կարևոր պաշտոններում ևս նշանակվում են աշքի ընկնող նախարարներ։ Արշակին հաջողվում է կարճ ժամանակամիջոցում համախմբել գրեթե բոլոր դժգոհ իշխաններին գահի շուրջը։

Արշակը կազմակերպում և ուժեղացնում է բանակը՝ համալրելով այն թարմ ուժերով։ Նա ուշադրություն է դարձնում հատկապես ծանր զրահավոր հեծելազորի վրա, որը հայկական բանակի կորիզն էր հանդիսանում։ Արշակն իր բանակը բաժանում է չորս մասի և նրանցից յուրաքանչյուրը տեղադրում է երկրի չորս ծայրամասե-

ռում՝ ցանկանալով ամրացնել նրա պաշտպանությունը հանկարծակի հարձակումներից։

Արշակն ուշադրություն է դարձնում նաև հայ նախարարների ունեցած իրավունքների ամրացման վրա և սահմանում է նրանց յուրաքանչյուրի արքունիքի հանդեպ ունեցած վասալական կախվածության աստիճանը։ Ըստ հին հայկական անվավեր մի ընագրի տեղեկության, Արշակը «Նորոգէր զգահս իշխանացն Հայոց, բարձս շորիք հարիւրս։ Ամենից մեծ աշխարհատեր նախարարների համար, անշուշտ, սահմանվում են թագավորական գահին ավելի մոտիկ բարձեր։

Փավստոսը Արշակի ներքին քաղաքականության մասին խոսելուց և նրա գործունեությունը դրվատելուց հետո ոգևորված ամփոփում է. «Նորոգեցաւ, զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս և զառանչինսն. մեծամեծքն յիւրաքանչիւր գահու, և գործակալքն յիւրաքանչիւր շափուն։

Արշակը մեծ ուշադրություն է դարձնում կաթողիկոսի ընտրության վրա։ Ցանկանալով եկեղեցական ղեկավար պաշտոնում ունենալ իրեն վստահելի մեկին նա այդ պաշտոնին հրավիրում է սենեկապետ Ներսեսին, որը նախկին զինվորական էր և որոշ բարեկամություն ուներ իր հետ։ Արշակի պատվերով, 353 թ., Ներսեսին եկեղեցական կոչում են տալիս և մեծ շուքով ուղարկում Կեսարիա՝ ձեռնադրության (հայ կաթողիկոսներն այդ ժամանակ ձեռնադրվում էին Կեսարիայի պատրիարքների կողմից)։

Ներսեսը, ինչպես ներկայացնում են նրան ժամանակակից պատմիչները, ինքնատիպ անձնավորություն է եղել։

Աշտիշատի ժողովը

Ներսես կաթողիկոսն իր աթոռակալության ընթացքում աշխատանք է տանում հայ եկեղեցու, որպես իշխող ֆեոդալական դաղափարախոսության հաստատության, ամրացման ուղղությամբ։ 354 թ. նրա նախաձեռնությամբ Աշտիշատում հրավիրվում է ընդհանուր եկեղեցական ժողով, ուր քննվում են մի շարք հարցեր, որոնք այդ ժամանակ հասարակական խոշոր նշանակություն ունեին։

Ժողովի հիմնական նպատակն էր, առաջին հերթին, մեղմել դասակարգային այն սուր պայքարը, որ շինականներն ու քաղաքային ռամիկները մղում էին իրենց հարստահարող աշխարհիկ և հոգևոր շահագործողների դեմ։ Մշակված կանոններում ժողովը հանձնարարում է աշխատավոր խավերին՝ հնազանդ լինել իրենց տերերին, իսկ շահագործողներին պատվիրում է՝ չափից ավելի չնեղել շինականներին։ Այդ որոշումը ցույց է տալիս, որ աշխատավո-

թությունը իրապես նեղվում էր ֆեոդալների շահագործումից, այլապես՝ եկեղեցական ժողովում նման որոշումն անիմաստ կլիներ։

Եկեղեցական կալվածատիրությունը չտրոհելու նպատակով ժողովը որոշում է, փոքրասիական մի շարք քրիստոնյա երկրների օրինակով, վանքեր հիմնել կուսակրոն միաբանների համար։ Կարգ է սահմանվում նաև, որ կուսակրոն միաբանը մահանալիս նրա հողը և ունեցվածքը մնում է վանքերին։ Այդ որոշումից առաջ բոլոր բարձրաստիճան հոգևորականները, այդ թվում նաև կաթողիկոսները, իրավունք ունեին ամուսնանալու և ընտանիք կազմելու, իսկ դրա հետևանքով մասնատվում էին եկեղեցական կալվածքները։

Եկեղեցական ժողովը որոշում է վերացնել հեթանոսության ժամանակ Հայաստանում գործող մի շարք սովորություններ։ Դրանցից էին՝ մահացածի վրա անվայել ձևով լաց ու կոծ անելը, նվագելը, երեսները պատառոտելը, գերեզմանի վրա մարդկանց սպանությունը և այլն։ Եկեղեցական ժողովը որոշում է մահացածի համար սգալ ավելի մեղմ և «վայելուչ ձևերով»։

Առանձնապես կարևոր է դպրոցների բացման մասին որոշումը։ Այդ ձեռնարկությամբ եկեղեցական ժողովը, անշուշտ, նպատակ էր դնում մատաղ սերնդին դաստիարակել իշխող գաղափարախոսության՝ քրիստոնեության ոգով, որն այդ ժամանակ կարևոր զենք էր հեթանոսության դեմ պայքարելու համար։

Աշտիշատի ժողովը որոշում է ընդունում նաև հասարակական օգտակար բարեգործական հաստատություններ հիմնելու մասին։ Հայաստանում բացվում են հիվանդանոցներ, ուրկանոցներ (բորոտների ապաստարան), որբանոցներ, իջևանատներ՝ դիտավոր ճանապարհների վրա, աղքատանոցներ և այլն, որը, անշուշտ, շորրորդ դարում առաջադիմական խոշոր քայլ էր հայ իրականության մեջ։ Ժողովն արգելում է բազմակնություն և անչափահասների ու արյունակիցների ամուսնությունը։

Արշակի գահակալության տարիներին նկատելիորեն սրվում են աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների փոխհարաբերությունները։ Աշխարհիկ ֆեոդալներն այլևս չէին հանդուրժում եկեղեցու և հոգևորականության հարստացումն ու հսկայական կալվածքների տեր դառնալը և ձգտում էին խլել նրանց հողերը։ Թեպետ մենք չունենք հաստատուն տվյալներ IV դարի վանքերի ու եկեղեցական կալվածքների ծավալի մասին, բայց Փավստոսի նկարագրած մի իրադեպ մեզ որոշ պատկերացում տալիս է։ Հայր Մարդպետը, որը հայկական արքունիքում խոշոր դեր ուներ, պատույտի է դուրս գալիս Տայոնի գավառը։ Աշտիշատում գտնված ժամանակ նա Ներսեսի

կողմից հրավիրվում է ճաշի, որից հետո բարձրանում է տանիք և, հիացած վանքապետական ընդարձակածավալ կալվածքներով, իր վրդովմունքն է հայտնում, թե ինչու այդ բոլորը «կանացիահանդերձ» (այսինքն երկար շոր հագած) եկեղեցականներին է պատկանում։ Ապա նա սպառնում է Ներսեսին, որ երբ ինքը վերադառնա արքունիք, պետք է Արշակին համոզի, որպեսզի նա այդ կալվածքները հարքունիս բռնագրավի։ Կաթողիկոսը հույս է հայտնում, որ նման շար դիտավորություն ունեցողը կենդանի չի հասնի արքունիք։ Եվ այդպես էլ լինում է։ Հայր Մարդպետը տեղ չի հասնում և ճանապարհին սպանվում է։

Այդ միջադեպը մեզ համար կարևոր է այն տեսակետից, որ որոշ պատկերացում է տալիս աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների միջև ծավալված պայքարի մասին, որն ավելի սուր բնույթ է ստանում հետագայում՝ Պապ թագավորի ժամանակ։

Արշակավանի իրադարձությունները

Արշակ II-ի գահակալության տարիներին տեղի ունեցած պատմական կարևոր իրադարձություններից մեկն էլ Արշակավանի կառուցումն ու կործանումն է, որի մասին տեղեկություններ են պահպանվել հայկական աղբյուրներում։

Արշակ թագավորը Մասիս լեռան հարավային լանջի վրա, Կոդովիտ գավառում (ներկայիս հին Բայազետ) սկսում է նոր մայրաքաղաքի կառուցումը։ Նա այդ վայրն է ընտրում կառուցվող քաղաքի համար, որովհետև այդտեղ էին խաչաձևվում հյուսիսից դեպի Միջագետք և Հայաստանից դեպի Սև ծովի ափերը տանող առևտրական մայրուղիները։

Նման քաղաքի կառուցումը Արշակի համար օգտակար էր երկու տեսակետից. իր հիմնած քաղաքը կդառնար առևտրական խոշոր կենտրոն և մեծ շահույթ կբերեր իրեն և ապա՝ հարևան նախարարություններից այնտեղ կհավաքեր մեծ թվով բնակչություն, որը ռազմական վստահելի ուժ կհանդիսանար ֆենտրոնախույս նախարարների դեմ մղած պայքարում։

Արշակի համար զվարթ էր, իհարկե, միանգամից մեծ թվով բնակչություն հավաքել շինարարության վայրը, ուստի նա հրովարտակ է գրում և ազդարարում, որ նորակառույց քաղաքի մուտքն ազատ է բոլոր տեսակի եկվորների համար։ Նույնիսկ եթե հանցագործներ լինեն, նրանք կարող են ապաստան գտնել այնտեղ և ազատվել իրենց հանցանքը կրելու պատասխանատվությունից։ «Եթե (Արշակ) հրաման,— գրում է Խորենացին,— որ ոք անկնալ

անդր բնակեսցէ՝ մի լիցի ի վերայ նորա իրաւունք դատաստանի»։

Ըստ ավատական գործող օրենսդրության, մեծագույն հանցանք էր գյուղացու համար լքել իր տիրոջ տիրությունը, հրաժարվել պարտավորություններից և կամայականորեն հեռանալ մի այլ վայր։ Ուստի զարմանալի չէ, որ ժամանակակից պատմիչներն արտակարգ վրդովմունքով են խոսում Արշակի այս «անմիտ» արարքի և Արշակավան հավաքված «հանցագործ» բնակիչների մասին, ներկայացնելով նրանց որպես «ավաղակաբարո ծառաներ»։

Արշակավանի իրադարձությունների նկատմամբ հին հայկական պատմիչների ունեցած միակողմանի դիրքը պատկերացնելու համար բավական է ծանոթանալ Փավստոս Բուզանդի հետևյալ տեղեկության հետ։ Դաստակերտը կառուցող բնակչության մասին Արշակի հրամանը հրապարակվելուց հետո, Հայաստանի բոլոր շրջաններից շինարարության վայր են գալիս ամեն տեսակ «հանցագործներ»։ «Ժողովեցան այնուհետև յայն տեղի ամենայն գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք և մարդելոյզք (մարդագողեր), վնասակարք, դանձահատք (գանձ հափշտակողներ), զրկողք, ստատգատք (դատարանին սուտ վկայություն տվողներ), զրախօսք (զրպարտիչներ), զերփողք, յափշտակողք, ժլատք»։ Եկողները, շարունակում է Փավստոսը, մեծ անօրինականություններ էին կատարում և վնասներ պատճառում. շատ կանայք բաց էին թողնում իրենց ամուսիններին և այստեղ փախչում, շատ տղամարդիկ թողնում էին իրենց կանանց և այլ կանայք վերցրած գալիս էին այստեղ, շատ ավանդառուներ վերցնում էին իրենց ավանդը, փախչում այստեղ և այլն։

Անհավանական չէ, իհարկե, որ Արշակավան փախչող տասնյակ հազարավոր բնակչության մեջ եղել են նաև գողեր, մարդասպաններ և այլ հանցագործներ, որոնք աշխատել են օգտվել առիթից։ Սակայն, նրանց մեծ մասը, ինչպես ցույց է տվել ակադ. Հ. Մանանդյանը, եղել են ազատագուրկ գյուղացիներ, որոնք փորձել են ազատվել իրենց տերերի ծանր շահագործումից և ազատություն ձեռք բերել։

Արշակավանում հաստատված բնակչության մեջ գտնվել են նաև որոշ թվով առևտրականներ և արհեստավորներ։ Այս որշակի երևում է շրջատարակված անվավեր մի բնագրից, ուր Արշակավանի բնակչության սոցիալական կազմի մասին խոսելիս ասվում է, որ բնակչության մեջ կային այնպիսի խավեր, որոնք «տային շահս բազումս Արշակայ»։

Եվ, վերջապես, Արշակի դաստակերտում գտնվել են նաև ազ-

Նրվականներ։ Ըստ Փավստոսի տեղեկության՝ այնտեղ կառուցվել են արքունական ապարանքներ և եկեղեցիներ։

Կարճ ժամանակամիջոցում այրևայլ նախարարություններից փախչող գյուղացիության հսկայական բազմություն է հավաքվում Արշակի դաստակերտում։ Շուտով ավանը դառնում է խոշոր մի քաղաք։ «Իսկ բնակատեղին (այսինքն կառուցվող դաստակերտը),— գրում է Փավստոսը,— ավան, քաղաք դարձավ, մեծացավ, ժողովուրդով լցվեց ողջ հովիտը»։

Գյուղական բնակչության մասսայական այս փախուստը դեպի Արշակավան, բնական է, չէր կարող չառաջացնել «գավառատեր» նախարարների և եկեղեցականների զայրույթը, մանավանդ որ, ըստ մատենագիրների, փախչողները ոչ մի իրավունք չէին ճանաչում և նրանց նկատմամբ այլևս դատ ու դատաստան չէր կիրառվում։

Խագ եպիսկոպոսը, որը վոխարինում էր Ներսես կաթողիկոսին (Ներսես կաթողիկոսն այդ ժամանակ գտնվում էր Բյուզանդիայում), պաշտոնապես ներկայանում է արքային և կշտամբում նրան այդ «անմիտ ձեռնարկի» համար և հորդորում հետ կանգնել իր մտադրությունից։ Սակայն Արշակը ոչ մի ուշադրություն չի դարձնում և անխափան շարունակում է քաղաքի շինարարությունը։

Շուտով Բյուզանդիայից վերադառնում է Ներսես կաթողիկոսը։ Նա ևս Արշակի մոտ է գալիս և հանդիմանում, որ «անմիտ գործ» է ձեռնարկել և պահանջում է քանդել քաղաքը և ստիպել փախչող բնակչությանը՝ վերադառնալ նախկին բնակավայրերը՝ խոստանալով Արշակին նրա համար քաղաք կառուցել «օրինական ճանապարհով»։ Սակայն Արշակը կտրականապես հրաժարվում է կատարել կաթողիկոսի պահանջը։

Թագավորի և նախարարների փոխհարաբերությունները, այդ հողի վրա, գնալով սրվում են։ Թշնամությունը նրանց մեջ հասնում է այն աստիճանի, որ արքունիքից դժգոհ հայ նախարարները դիմում են պարսից Շապուհ թագավորին և նրանից օգնություն խնդրում։ Եվ Շապուհը, որ առիթ էր փնտրում միջամտելու Հայաստանի ներքին գործերին, հաճույքով ընդառաջում է և դժգոհ նախարարների տրամադրության տակ է դնում իր զորամասերից մեկը՝ պարսիկ զորավարի հրամանատարությամբ։

Դժգոհ նախարարները, Ներսեհ Կամսարականի գլխավորությամբ, դիմում են ռազմական գործողությունների և օգտվելով Արշակի բացակայությունից (նա գտնվում էր Վրաստանում), իրենց կազմակերպած բանակներով հարձակվում են Արշակավանի վրա,

շրջապատում քաղաքը, հիմնովին կործանում են այն և կոտորում բնակչությանը։ «Իսկ Հայոց նախարարները ժողովվելով դիմեցին թագավորական դաստակերտի՝ Արշակավանի վրա, սրով կոտորեցին տղամարդկանց և կանանց, բայի ծծկեր երեխաներից, որովհետև նրանք յուրաքանչյուրը կատաղած էին իրենց ծառաների և վնասարարների դեմ»։

Փավստոս Բուզանդը ցանկանալով Արշակավան քաղաքի կործանմանը հրաշապատում ձև տալու և հայ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների կատարած ոճրագործությունը թեթևացնելու նկատառումով, Արշակավանի բնակչության ոչնչացումը կապում է համաճարակի («մահտարաժամի») հետ, որը իբր թե սկսվել էր քաղաքում և մի քանի օրվա մեջ ոչնչացրել բնակչությանը։ Անհավանական չէ, իհարկե, որ քաղաքի շրջապատման՝ ժամանակ պաշտպանվող բնակչության մեջ իր հունձը կատարած լինի նաև համաճարակը։ Հայտնվել են կարծիքներ, որ Արշակավանը կարող էր կործանված լինել նաև երկրաշարժից։

Արշակավանում կոտորված բնակչության թիվը շատ մեծ է եղել։ Ըստ Փավստոսի վկայության, Արշակավանում կոտորվել են «քսան հազար երդ մարդկանց»։ Ներսես Պարթևի վարքագիրն այդ թիվը փոքր-ինչ պակասեցնում է, հաշվելով «18 000 ծուխ»։ Եթե ընդունենք, որ այդ թվերը չափազանցված են կրկնակի անգամ, և ամեն մի ընտանիք հաշվենք 4—5 հոգի (իսկ ընտանիքները հնում ավելի մեծ էին լինում), ապա Արշակավանում նախարարները կոտորել են ավելի քան 30—40 հազար բնակչություն։

Խորենացու տեղեկությունից երևում է, որ Ներսեսը նախապես տեղյակ էր, որ նախարարները պատրաստվում են կոտորել քաղաքի բնակչությանը, սակայն չի միջամտել։ Նա այնքան է զայրացած եղել այդ «անհնազանդ» բնակչության վրա, որ թողել է, որ կոտորեն, և կոտորածից հետո միայն գալիս է Արշակավան, կողովների մեջ լցնել տալիս կենդանի մնացած ծծկեր երեխաներին և տեղափոխում դոմերը։ Եվ պատմիչը չի թաքցնում, որ Արշակավանում կոտորված բնակչության երեխաների վրա Ներսես կաթողիկոսը նայել է որպես «թշնամիների երեխաների»։

Արշակավանի կործանումից հետո Արշակ թագավորը Քարթլիի (Իբերիայի) թագավոր Միրիանից օգնական ուժեր ստանալով, գալիս է անհնազանդ նախարարներին պատժելու։ Սակայն Ներսես կաթողիկոսը միջամտում և հաշտեցնում է թագավորին նախարարների հետ։ Շատ չանցած՝ նորից վերանորոգվում է թագավորի և կենտրոնախույս նախարարների միջև սկսված պայքարը. արքունա-

կան բանակը հանկարծակի հարձակվում է դժգոհ նախարարների խմբի ղեկավար Կամսարական իշխանի վրա, գրավում նրա ամրությունները և կոտորում Կամսարականների ողջ տոհմը։ Արշակը ոչնչացնում է նաև կենտրոնախույս ձգտում ունեցող այլ նախարարների։

Արշակավանի կործանումը տեղի է ունեցել Ներսես կաթողիկոսի Բյուզանդիայից վերադառնալուց՝ 356 թվականից հետո, հավանաբար 358 թվականին։

Արշակավանի բնակչության կոտորածը դասակարգային պայքարի արյունոտ էջերից մեկն է։ Այստեղ սոցիալական ընդվզումների նկարագրության մեջ անսքող դրսևորված է շահագործող դասակարգի ատելությունը հայ աշխատավորության նկատմամբ։ Արշակավանը կործանելու և «անհնազանդ բնակչությունը» կոտորելու համար միավորվել են տեղի շահագործող խավերը. նրանք դիմել են նաև դրսի թշնամական ուժերի օգնությանը։

Փավստոս Բուզանդը, որը մոտիկից ծանոթ է եղել հայկական արքունիքում տեղի ունեցող անց ու դարձին, նկարագրել է Արշակի ընտանեկան կյանքի հետ կապված որոշ դրվագներ, որոնք պատճառ են դարձել մեծ գժտության Արշակի և Ներսես կաթողիկոսի միջև։ Ըստ այդ նկարագրության, Տիրիթը սիրահարված է եղել իր եղբայր Գնելի կնոջ՝ գեղեցկուհի Փառանձեմին, որը Սյունիքի Անդովկ իշխանի աղջիկն էր։ Ցանկանալով տիրանալ Փառանձեմին, նա ամբաստանել է Գնելին Արշակի մոտ, որ իբրև թե նա ցանկանում է ապստամբել և թագավոր դառնալ։ Արշակը հավատալով Տիրիթի ամբաստանությանը, հրամայել է մահվան դատապարտել Գնելին։ Գնելի սպանությունից հետո պարզվել է, որ նա զոհ է Տիրիթի ամբաստանության, ուստի Արշակը հրամայել է Տիրիթին ևս մահվան դատապարտել։ Արշակը, Տիրիթին սպանել տալուց հետո, ամուսնացել է Փառանձեմի հետ։

Արշակը, ինչպես ասել ենք, ամուսնացել էր Կոստանդիոս կայսեր մահացած եղբոր նշանածի՝ Օլիմպիայի հետ։ Քրիստոնեական օրենքով չէր թույլատրվում նրան երկրորդ կին ունենալ, ուստի Արշակի արածը քրիստոնեական օրինականության բացահայտ խախտում էր, որի նկատմամբ աչք չէր կարող փակել Ներսես կաթողիկոսը։ Նա գալիս է Արշակի մոտ, հանդիմանում նրան թույլ տված անվայել արարքի համար։ Տեսնելով իր հորդորների անօգուտ լինելը, որ ինքն ի վիճակի չէ դադարեցնել Արշակին, Ներսեսը հրաժարվում է կաթողիկոսական աթոռից։

Հայտնի է սակայն, որ շուտով Օլիմպիան մահանում է։ Ըստ Փավստոսի տեղեկության, նա արքունիքի սովորական խարդավանքի զոհ է դառնում, երբ թունավորում են։ Պետք է ենթադրել, որ բացի Օլիմպիայից և Փառանձեմից, նրանցից առաջ, Արշակը ունեցել էր մի այլ կին ևս, որը մահացած է եղել Օլիմպիայի հետ ամուսնանալուց առաջ։ Այդ մասին խոսք կլինի առջևում Պապի կապակցությամբ։

Արշակ II-ի պայքարը քաղաքական անկախության պահպանման համար

Արշակի գահակալության առաջին տարիներին ստեղծված խաղաղությունը անկայուն էր և ամեն րոպե կարող էր խախտվել։ Բյուզանդական և պարսկական բանակները հարմար ժամանակ ու առիթ էին փնտրում իրար վրա հարձակվելու համար։ Կովախնձորը դարձյալ Հայաստանն էր և Միջագետքը։ Իսկ Շապուհն օրակարգից չէր հանել Հայաստանը նվաճելու իր ծրագիրը։ Հռոմը նույնպես հարմար առիթ էր փնտրում Հայաստանը գրավելու և իր կայսրության պրովինցիան դարձնելու համար։ Միջագետքում և Արևմտյան Հայաստանում իրար դեմ կանգնած բյուզանդական և պարսկական զորքերի միջև երբեմն տեղի էին ունենում սահմանային միջադեպեր. պարսկական զորքերը ժամանակ առ ժամանակ խուժում էին Հայաստանի այս կամ այն շրջանը, ասպատակում և ետ վերադառնում, բայց պատերազմը երկու մեծ պետությունների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև դեռ չէր սկսվել։

Հայաստանի նվաճման համար Բյուզանդիայի և Պարսկաստանի մրցության մասին մեզ պարզ պատկերացում է տալիս Շապուհի և Կոստանդիոսի միջև տեղի ունեցած այն նամակագրությունը, որն իր պատմության մեջ բերել է Ամիանոս Մարկելլինոսը։ Շապուհը 358 թ. Կոստանդիոսին ուղղած իր նամակում գրում է. «Իմ սրտում, ամենից առաջ, ճշմարտության զգացմունքն է։ Այդ ունենալով՝ ես երբեք չեմ արել այնպիսի բան, որ հետո զղջամ։ Ուստի ես պիտի ետ վերադարձնեմ Հայաստանը և Միջագետքը, որ անիրավաբար խլել են իմ պապերից... Եթե դու ցանկանում ես լսել իմ բանական խորհուրդը, հրաժարվիր փոքրիկ նահանգից, որը աշտական պայքարի և նենգ վեճի առարկա է հանդիսանում, որպեսզի հանգիստ կարողանաս կառավարել մնացած քո թագավորությունը։ Գիտցիր, որ բժիշկները ևս որոշ դեպքում այրում, կտրում, մարմնից հեռացնում են մարմնի առանձին մասերը, որպեսզի կարելի լինի օգտվել առողջ անդամներից»։

Կոստանդիոս կայսրն այդ նամակին հետևյալ պատասխանն է

տալիս. «Դու պահանջում ես ինչպես Միջագետքը, այնպես և Հայաստանը որպես քո սեփականություն և խորհուրդ ես տալիս ինձ կտրել կենդանի մարմնի որոշ մասերը, որպեսզի դրանով ավելի լավ բարեկամություն անենք հետագայում։ Այդ խորհուրդը լավ է անմիջապես մեկ կողմ դնել, քան հավանություն տալ նրան որևէ ձևով։ Ուստի՝ հասկացիր ճշմարտությունը, առանց խորամանկ ծածկոցի, նրա թափանցիկ պարզության մեջ, ճշմարտություն, որ չի կարելի վախեցնել ոչ մի դատարկ սպառնալիքով»։

Կռանի և սալի վիճակում գտնվող Հայաստանի համար ստեղծվում է բավական ծանր մի վիճակ։ Այս իրադրության մեջ Արշակը վարում է կողմերին սիրաշահելու շրջահայաց մի քաղաքականություն. նա դաշն է կնքում և՛ Պարսկաստանի, և՛ Բյուզանդիայի հետ, թեպետև գործնականում իր քաղաքականության մեջ ավելի հակված էր դեպի Արևելյան հռոմեական կայսրությունը՝ Բյուզանդիան, քան Պարսկաստանը։

Հռոմի և Պարսկաստանի հարաբերությունները գնալով սրվում են, և 359 թ. բռնկվում է պատերազմը։ Շապուհը հարյուր հազարանոց բանակի գլուխ անցած, հարձակվում է Միջագետքի ուղղությամբ և պաշարում Ամիդ (Դիարբեքիր) քաղաքը։ 73 օր տևած պաշարումից հետո, 30 հազար մարդ կորցնելու գնով, Շապուհին հաջողվում է վերցնել այդ ամուր բերդաքաղաքը։

Կոստանդիոսը, որ Արևմուտքում զբաղված էր ալամանների դեմ կռիվներով, շտապ գալիս է Կեսարիա՝ Շապուհի առաջխաղացումը կանգնեցնելու համար։

Մրցակցող կողմերից ամեն մեկն աշխատում էր իր կողմը թեքել Արշակին, որը խոշոր բանակ ուներ և պատերազմի ժամանակ վճռական դեր կարող էր կատարել։ Ըստ Ամիանոսի տեղեկության, Շապուհը Արշակին իրեն դաշնակից դարձնելու նպատակով, դիմում է «խաբեության, սպառնալիքների և նենգության»։ Արշակին սիրաշահելու համար աշխատում է, իհարկե, [illegible] Կոստանդիոսը։

Ամիանոսի տեղեկություններից երևում է, որ Կոստանդիոսը 360 թ. գարնանը, Կեսարիա քաղաքում գտնված ժամանակ, հանդիպում է ունեցել Արշակի հետ և ցանկացել ճշտել Հայաստանի դիրքը այդ պատերազմում։ Արշակը հավաստիացրել է կայսրին, որ «ինքն ավելի շուտ կհրաժարվի կյանքից, քան թե կդրժի կնքված դաշնադրությունը»։

Հետևյալ տարվա գարնանը, բանակն ուժեղացնելու նպատակով կայսրը Հուլիանոս զորավարին Թրակիայից իր լեգեոններով տեղափոխում է Արևելք։ Սակայն Հուլիանոսը ապստամբում է

Կոստանդիոսի դեմ և իրեն հայտարարում կայսր։ Գործը մինչև արյունահեղության չի հասնում, որովհետև Կոստանդիոսը մահանում է 361 թ. նոյեմբերի 3-ին Կիլիկիայում, իսկ Հուլիանոսն առանց դժվարությունների հռչակվում է կայսր։

Հուլիանոսը վճռականությամբ շարունակում է պատերազմական գործողությունները Շապուհի դեմ։ Նա իր զորամասի մի մասը, Պրոկոպիոսի և Սեբաստիանոս կոմսի հրամանատարությամբ, ուղարկում է Արշակի զորքին միանալու և նրա հետ միասին արշավելու Մարաստանի վրա՝ նպատակ ունենալով Շապուհին հարվածելու թիկունքից, իսկ մյուս մասը, իր հրամանատարությամբ, շարժում է ուղիղ Տիգրոնի վրա, բայց հաջողություն չի ունենում և 363 թ. մի ընդհարման ժամանակ սպանվում է։

Հռոմեական զորքը Հուլիանոսի փոխարեն կայսր է հռչակում Հովիանոսին։ Վերջինս, որն ոգտակար չի համարում պատերազմը շարունակելը, բանակցությունների մեջ է մտնում Շապուհի հետ և խաղաղության դաշինք կնքում 363 թ.։

Հովիանոսի կնքած այդ դաշինքը պատմության մեջ հայտնի է «ամոթալի դաշինք» անունով։ «Ամոթալի» է կոչվում այն պատճառով, որ այս պայմանագրով Հովիանոսը ոչ միայն պարսիկներին է զիջում հռոմեական տիրապետության տակ գտնվող մի շարք նահանգներ, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի նահանգներից՝ Աղձնիքը, Մոկքը և ուրիշներ, այլև խոստանում է ռազմական օգնություն ցույց չտալ իր վաղեմի դաշնակցին՝ Հայաստանին։ Ամիանոսը, որը հռոմեական բանակի դինվորական էր և դեպքերին ականատես պատմիչ, արտահայտելով ժամանակակիցների զայրույթը հետևյալն է գրում. «Պայմանագրում արված էր նույնպես շատ ծանր և ուիտատրում հավելում, այսինքն՝ այդ համաձայնությունից հետո մեր մշտական հավատարիմ բարեկամ Արշակին ցույց չտրվի որևէ օգնություն ընդդեմ պարսիկների, եթե նա նման օգնություն խնդրելիս լինի»։

363 թվականի «ամոթալի դաշինք»-ից հետո, Հայաստանի համար ստեղծվում է ծանր մի շրջան. նա միայնակ կանգնում է պարսկական հսկայական ուժի դեմ։

Շապուհը սկզբում փորձում է Հայաստանը նվաճել տեղի ներքին ուժերի պառակտման ճանապարհով. նա կաշառքով, խոստումներով իր կողմն է թեքում հայ մի քանի նախարարների և կույր գործիք դարձնում նրանց ընդդեմ Հայաստանի կենտրոնական իշխանության։ Այդպիսիներից էին Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը։

Երբ Շապուհը երկպառակության միջոցով առանձին հաջողությունների չի հասնում, դիմում է բացահայտ ռազմական գործողություններին։ Պարսկական հսկայական մի բանակ 364 թվականի գարնանը, դավաճան Մերուժան Արծրունու ուղեկցությամբ, խուժում է Հայաստան Աղձնիքի ուղղությամբ։ Առաջին հարվածը նրանք հասցնում են Տիգրանակերտին։ Տեղի բնակչությունը սակայն հերոսական դիմադրություն է ցույց տալիս։ Տիգրանակերտից հետո պարսկական զորաբանակն ուղղվում է դեպի Բարձր Հայք։ Այստեղ պարսկական բանակը գրավում է Դարանաղյաց գավառի Անի ամրոցը, քանդում հայ թագավորների գերեզմանները, վերցնում թագավորների ոսկորները՝ Պարսկաստան փոխադրելու նպատակով։ Դրանից հետո պարսկական զորքերը շարժվում են դեպի Արարատյան նահանգ։

Հայկական բանակը, սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ, պարսկական հարձակումը սպասում էր Ատրպատականից, բայց երբ հայտնի է դառնում, որ պարսիկներն այլ ճանապարհով արդեն ներխուժել են Հայաստան, անմիջապես վերադառնում է Այրարատյան նահանգը՝ արքունական ոստանը պաշտպանելու համար։ Պարսկական և հայկական զորքերն իրար են հանդիպում Այրարատյան նահանգում։ Վասակի բանակը, բաղկացած էր 60 հազար հայրենասեր մարտիկներից, որոնք, ինչպես վկայում է Փավստոսը, պատրաստ էին «ի վերայ որդւոց և կանանց իւրեանց և ի վերայ աշխարհին դնել զանձինս իւրեանց մինչև ի մահ»։ Տեղի է ունենում վճռական ճակատամարտը։ Հայկական զորքերը փայլուն հաղթանակ են տանում պարսիկների դեմ և թշնամուն դուրս քշում երկրից։ Նրանք ազատում են պարսիկների վերցրած գերիներին և խլում տարվող ավարն ու թագավորական աճյունները։

Այնուհետև Շապուհը ձեռնարկում է մի շարք այլ հարձակումներ ևս, որոնք բոլորն էլ վերջանում են անհաջող։

Արշակի բանտարկությունը և մահը

Շապուհը չկարողանալով Հայաստանը գրավել զենքի ուժով, դիմում է խորամանկության։ Նա աշխատում է բարեկամ ձևանալ Արշակին և այնպիսի տպավորություն ստեղծել, որ իբր թե ցանկություն ունի բանակցել նրա հետ և վերջ դնել Հայաստանի և Պարսկաստանի միջև եղած թշնամանքին։ Երդմնագրով նա հավատացնում է Արշակին, որ ինքը թշնամանք չունի նրա նկատմամբ և հրավիրում իր մոտ՝ բանակցելու։ Արշակը սկզբում չի վստահում, բայց երբ Շապուհը կնքված աղ է ուղարկում նրան, որը պարսիկների ամենասրբազան երդումն էր, Արշակը հավատում է և իր սպա-

բապետ Վասակի հետ մեկնում Պարսկաստան և ընկնում խորամանկ Շապուհի թակարդը։ Տիզբոն հասնելուն պես նրան ստորաբար ձերբակալում են և շղթայակապ բանտ նետում։

Հայկական ժողովրդական ավանդությունը հայ թագավորի վախճանը համեմել է ուշագրավ էպիկական դրվագով։ Շապուհն ըսկզբում ցանկանում է Արշակին բաց թողնել, բայց կասկածում է, որ վերջինս կարող է դավաճանել իրեն։ Այդ կապակցությամբ նա գիմում է իր աստղաբաշխ, հմայող մոգերին։ Վերջիններս խորհուրդ են տալիս Շապուհին՝ մարդ ուղարկել Հայաստան և բերել տալ այնտեղից հող և ջուր, փռել վրանի հատակի մի մասի վրա և Արշակին խոսեցնել այդ հողի վրա։ Շապուհը կատարում է այդ խորհուրդը։ Ապա Արշակին կանչել է տալիս իր վրանը։ Երբ Արշակի հետ սկսում են խոսել հատակի այն մասի վրա, ուր հայկական հող ու ջուր էր ցանված, Արշակն ըմբոստանում է, սկսում է անվախ հանդգնությամբ խոսել Շապուհի հետ, սպառնում է վրեժխնդիր լինել նրանից։ Բայց երբ Շապուհն Արշակին տանում է պարսկական հողի վրա և խոսեցնում, Արշակը խեղճանում է, ընդունում, որ ինքը հանցավոր է և խոստանում է հավատարիմ մնալ։ Շապուհը վերջնականապես համոզվում է, որ Արշակին բաց թողնելը վտանգավոր է, ուստի պատժում է նրան։

Հայկական հողի մասին ստեղծված ժողովրդական էպիկական այս անմահ դրվագի մեջ, որը հիշեցնում է Անթեյի մասին հունական առասպելը, խտացված ձևով արտահայտված է հայ ժողովրդի դարավոր պատկերացումը՝ հայրենի հողի և ջրի անսկզբն ուժի ներկայումամբ։

Վերին աստիճանի ուշագրավ է նաև Վասակ սպարապետի հետ կապված դրվագը, որը ժողովրդական զրույցներից քաղելով բերում է Փավստոսը։ Շապուհի առջև են բերում Վասակին։ Շապուհը հարցնում է նրան. «Աղվես, այդ դո՞ւ էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ և քաջերին շարչարեցիր, դո՞ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արիներին. հիմա ինչպե՞ս պետք է իմ ձեռքից ազատվես. ես քեզ աղվեսի մահով պիտի սատակեցնեմ»։ Վասակն անվախ պատասխանում է. «Այժմ ինձ տեսնում ես փոքր մարմնով և սուրս էլ վրաս չէ՝ իմ մեծության չափը չիմացար, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ աղվես դարձա։ Բայց ես երբ դեռ Վասակ էի, ես հսկա էի. մի ոտս մի լեռան վրա էր, մյուսը՝ մյուս լեռան վրա. երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ կողմի լեռը գետին էի կոխում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում՝ ձախ կողմի լեռն էի գետին կոխում»։ Շապուհը հարցնում է, թե երկու լեռներ

ասելով նա ո՞ւմ նկատի ունի։ Վասակը համարձակ պատասխանում է. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը Հունաց թագավորը»։

Վասակի այլաբանական այս պատասխանի մեջ արտահայտված է հռոմեական և պարսկական նվաճողների դեմ պայքարող հայ հայրենասերի անհողդողդ կամքը։

Շապուհի կարգադրությամբ Արշակին բանտարկում են Անհուշ բերդում, իսկ Վասակին մորթազերծ են անում, մորթու մեջ հարդ լցնում և դնում Արշակի առջև, որ նա, որքան կենդանի է, իր սիրելի զորավարի խրտվիլակի վրա նայելով, միշտ խոցոտվի վշտից ու տառապանքից։

Արշակը մահանում է բանտում։

Պարսկական զորքերի ներխուժումը Հայաստան և Արտագերսի հերոսական պաշտպանությունը

Արշակի և Վասակի ուխտադրուժ ձերբակալությունից հետո՝ պարսկական զորքերը, Զիկ և Կարեն զորավարների հրամանատարությամբ, մտնում են Հայաստան և ասպատակում երկիրը։ Արշակի փոխարեն պետության ղեկը է կանգնում Արշակի այրին՝ Փառանձեմը։

Պարսկական նվաճումների սպառնալիքի տակ, Փառանձեմի կոչով, հայ հայրենասիրները ոտքի են կանգնում՝ դիմադրավելու երկիր խուժած թշնամուն։ Իսկ թագուհին, իր համակիր նախարարներով 11 000 զորքով, ամրանում է Արշարունիքի Արտագերս բերդում (ներկայիս Կաղզվանի մոտակայքում)։

368 թվականի աշնանը Արտագերսը շրջապատում են պարսկական զորքերը։ Նրանք մեծ ջանք են գործադրում գրավելու անառիկ բերդը, բայց հաջողություն չեն ունենում։ Պարսկական հրամանատարությունը՝ դավաճան հայ նախարարներ Գյակին և Արտավանին պատգամավոր է ուղարկում բերդ՝ բանակցելու Փառանձեմի հետ և համոզելու նրան՝ զենքը ցած դնել։ Երբ հայ նախարարները մտնում են բերդ, տեսնում թագուհու հուսահատական վիճակը և հայ դինվորականության ծանր դրությունը, բորբոքվում է նրանց հայրենասիրական զգացմունքը, ուստի որոշում են միանալ հայրենիքի պաշտպաններին։

Գյակը և Արտավանը, որոնք լավ գիտեին շրջապատող պարսկական զորքերի տեղադրությունը, դիշերը հայկական զորքով հարձակվում են թշնամու վրա, ջարդում և փախցնում նրանց։ Պարսկական բանակը հարկադրված է լինում ձմեռը հանգիստ թողնել Հայաստանը, որի լեռնոտ աշխարհն այնքան էլ հեշտ չէր նվաճել

տեղի բնակչության ցույց տված հերոսական դիմադրության պայմաններում։

Այս ծանր օրերին Փառանձեմը պատգամավորություն է ուղարկում Վաղես կայսեր մոտ՝ խնդրելով Արշակի որդուն՝ Պապին, ճանաչել Հայաստանի թագավոր և օգնական զորքեր ուղարկել Հայաստան։ Վաղեսը համաձայնվում է և 369 թ. գարնանը Պապին, Տերենտիոս զորավարի հետ, առանց զորքի, ուղարկում է Հայաստան։

Շապուհը, որ զուգանային կատաղությամբ էր լցվել Արտագերսում իր զորքերի անհաջողության առթիվ, հենց որ լսում է Պապի և Տերենտիոսի Հայաստան գալը, հավաքում է իր ուժերը և շարժվում Հայաստանի վրա։ Շապուհը նորից շրջապատում է Արտագերսը։ Փառանձեմը իր համախոհներով փորձում է պաշտպանվել։ Բայց քերդում համաճարակ է սկսվում, կռվող զինվորների մեծ մասը մահանում է և Փառանձեմը հարկադրված է լինում քերդի դռները բացել թշնամու առաջ։ Շապուհը գերի է վերցնում Փառանձեմին, կողոպտում թագավորական գանձատունը և տանջամահ անում հայոց թագուհուն։

Արտագերսի անկումից հետո պարսկական զորամասերը ցրվում են Հայաստանի զանազան մասերը և սկսում ասպատակել երկիրը։ Նրանք քարուքանդ են անում գրեթե բոլոր առևտրաշահ քաղաքները, կողոպտում բնակչությանը և հագարներով քշում գերություն։ Ըստ Փավստոսի տեղեկության, Արտաշատից նրանք գերություն են քշում 49 000 ընտանիք, Վաղարշապատից՝ 19 000, Երվանդաշատից՝ 50 000, Զարեհավանից՝ 13 000, Զարիշատից՝ 24 000, Վանից՝ 13 000 ընտանիք և այլն։ Փավստոսի հաղորդած այս թվերը անշուշտ չափազանցված են։ Բայց անվիճելի է, որ Շապուհը մեծ ավերածություններ է կատարել Հայաստանում և բավական թվով գերիներ տարել։ Տարված գերիները տեղավորվել են Խուժիստանի քաղաքներում և օգտագործվել արդյունաբերության և արհեստագործության մեջ։ Այս՝ հայ ժողովրդի պատմության մեջ բռնագաղթի առաջին խոշոր դեպքն է, որը ծանր հարված էր հասցրնում Հայաստանին։

Ըստ տեղեկությունների, Հայաստանից գերի տարված բնակչության մեջ եղել են նաև մեծ թվով հրեաներ, որոնք վաղուց հաստատված են եղել Հայաստանում և զբաղվել են առևտրով և արհեստագործությամբ։

Նվաճելով Հայաստանը, պարսիկները վարում են բացահայտ միաձուլման քաղաքականություն. նրանք Հայաստանում կառուցում են մեհյաններ, հետապնդում հոգևորականներին, պարտադ-

ում են դպրոցներում դասավանդել պարսկերեն լեզուն, խրախուսում են հավատափոխներին և այլն։

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՊԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Պապի գահակալությունը

Հովիանոսի կնքած պայմանագրով չնայած Բյուզանդիան պարտավորություն էր վերցրել չմիջամտել հայկական գործերին, բայց այդ չէր նշանակում, որ նա համաձայնվել էր Հայաստանը հանձնելու Պարսկաստանին, ուստի նա չէր կարող հանդուրժել պարսկական նվաճումները Հայաստանում, մանավանդ որ վերջացել էր գոթերի հետ ունեցած պատերազմը։ Ահա թե ինչու բյուզանդական արքունիքը Հայաստան է ուղարկում մի խոշոր բանակ Արինթեոսի հրամանատարությամբ։

Մինչև Հռոմեական բանակի Հայաստան հասնելը Շապուհը փորձում էր բանակցությունների մեջ մտնել Պապի հետ։ Նա Պապի մոտ ուղարկած իր սպատգամավորների միջոցով կշտամբում է նրան, որ Հռոմեական կայսրության ձեռքին կույր խաղալիք է դարձել, լսում է Գլակին ու Արտավանին և առաջնորդվում նրանց խորհուրդներով։

Պապը հինգ-ամսից ավելի Լազիկայի անտառներում թաքնվելուց հետո, չստանալով Հռոմի օգնությունը, որոշում է բանակցությունների մեջ մտնել Շապուհի հետ։ Բայց այդ տեղի չի ունենում, որովհետև շուտով օգնության են գալիս հռոմեական զորքերը։

Պապը և իր սպարապետ Մուշեղ Մամիկոնյանն անմիջապես ձեռնամուխ են լինում հայկական բանակի կազմակերպմանը։ Նրանց հաջողվում է հավաքել 10 000 հոգուց բաղկացած մի զորաբանակ, և պայքար սկսել օտար նվաճողների և ներքին խռովարարների դեմ։

Պապի առաջին կարևոր գործերից մեկն է լինում Հայաստանին միացնել նրանից անջատված նախարարությունները։ Նրան հաջողվում է կարճ ժամանակամիջոցում երկրին միացնել նրանից բաժանված Ասորպատականը, Նոր-Շիրականը, Հեր և Չարևանդ գավառները, Արցախը, Ուտիքը, Շակաշենը, Փայտակարանը, Գուգարքը, Աղձնիքը, Սոփքը, Անգեղտունը և Անձիտը։ Պապն այդ նահանգների նախարարներից ոմանց պատժում է, ոմանց սիրաշահելով՝ հավատարմության պատանդներ է վերցնում նրանց հպատակության մեջ պահելու համար։

Հռոմեական օգնական զորքերի Հայաստան ժամանելն ավե-

լի է սրում Հռոմի և Պարսկաստանի փոխհարաբերությունները և պատերազմը այս պետությունների միջև անխուսափելի է դառնում։ Վաղեսը 370 թվականին ինքն անձամբ գալիս է Անտիոք՝ մոտիկից ղեկավարելու ռազմական գործողությունները։

Ըստ Փավստոսի, Շապուհն իր արշավանքն սկսում է 370 թվականի աշնանը։ Պարսկական բանակը Հայաստան է խուժում Ատրպատականից։ Հայկական զորքերը Մուշեղ սպարապետի գլխավորությամբ, ոչ միայն կարողանում են դիմադրել նրան, այլև ծանր հակահարված են տալիս՝ վերցնելով մեծ քանակի ավար և գերիներ։ Գերիների թվում էին նաև Շապուհի «տիկնանց տիկինը» և այլ ազնվական կանայք, որոնց Մուշեղ սպարապետը շուտով ազատում և ետ է ուղարկում։

371 թ. գարնանը Շապուհը ձեռնարկում է նոր արշավանք, այս անգամ հարավից։ Հայկական և հռոմեական զորքերը պատրաստվում են դիմադրության։ Ճակատամարտը տեղի է ունենում Նպատ լեռան մոտ՝ Զիրավի դաշտում, ուստի այդ ճակատամարտը պատմության մեջ հայտնի է Զիրավի ճակատամարտ անունով։ Ճակատամարտը վճռական նշանակություն ուներ Հայաստանի հետագա բախտի համար, ուստի և հայերը, Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ, կռվում են արտակարգ քաջությամբ և հնարամտությամբ։ Շապուհի զորքերը նահանջում են, ճակատամարտում մեծ կորուստներ տալով։ Այսպիսով, Հայաստանը նվաճելու Շապուհի նոր փորձը ձախողվում է։ Նոր զինադադար է կնքվում պարսից տրքունիքի և Բյուզանդիայի միջև։

Զիրավի ճակատամարտում Շապուհի բանակում մասնակցում էր դավաճան Մերուժան Արծրունին։ Խորենացին պատմում է, որ Զիրավի ճակատամարտում հայ հայրենասերները բռնում են նրան և դաժան դատաստանի ենթարկում. նրանք շիկացած երկաթից պսակ են դնում Մերուժանի գլխին, ասելով, «թագադրում ենք քեզ, Մերուժան, որովհետև դու երազում էիր հայոց թագավոր լինելու։

Նման վախճան է ունենում նաև մյուս դավաճանը՝ Վահան Մամիկոնյանը։ Վերջինիս որդին, Սամվելը, հայրենասեր մի երիտասարդ, չկարողանալով այլևս տանել հոր անպատիվ ընթացքը, բռնում է իր դավաճան հորը և ուրացող մորը ու միանում հայ հայրենասերների բանակին։

Եվ այսպես, մեծ դժվարություններից ու փորձություններից հետո, Պապը վերջապես իր ձեռքն է վերցնում երկրի կառավարումը և ձեռնամուխ լինում պետական նշանակություն ունեցող խոշոր վերափոխությունների իրականացման։

Պապի ներքին և արտաքին քաղաքականությունը

Պապը գահակալում է Հայաստանում, կարելի է ասել, ավերակների վրա. քանդված էին քաղաքները, ահագին թվով ժողովուրդ գերի էր տարված, երկրում մոլեգնում էր սովը և համաճարակը։

Պապի առաջին գործն է լինում համախմբել արքունիքի շուրջը «դավառատեր» նախարարներին ու բարձրաստիճան հոգևորականությանը և երկիրը դուրս բերել քայքայված վիճակից։ Նրա ջանքերն այդ ուղղությամբ դրական արդյունքներ են տալիս. անցյալում արքունիքի հետ դժտված և նրա դեմ գործող ալբի ընկնող նախարարները նորից մտնում են «ի հարկի ծառայության» և աջակցում արքունիքի ձեռնարկած միջոցառումներին։ Ներսես Պարթևը, որ Արշակի ժամանակ վշտացել էր և թողել կաթողիկոսությունը, նորից գործի է անցնում։ Պապը մեծ ուշադրություն է դարձնում երկրի պաշտպանության գործին։ Նա, իր եռանդուն սպարապետի՝ Մուշեղ Մամիկոնյանի գործուն աջակցությամբ, ստեղծում է խոշոր և մարտունակ բանակ՝ բաղկացած 90 000 մարդուց։

Ներքին տնտեսական կյանքում Պապի ձեռնարկած միջոցառումներից ուշագրավը՝ եկեղեցական կալվածատիրության սահմանափակման քաղաքականությունն է։ Եկեղեցական կալվածատիրությունը այդ շրջանում լայն չափեր էր ընդունել։ Հեծելազորը, որը կազմված էր գլխավորապես մանր ազնվականությունից, իր զինվորական ծառայության համար պետք է սահմանված քանակով հողամասեր ստանար։ Անհրաժեշտ էր, որ արքունիքն այդ հողամասերը հատկացներ կամ իր կալվածքներից և կամ բռնագրավեր որևէ մեկից։ Բռնագրավել նախարարական կալվածքներից, ինչպես վարվում էին նախորդ թագավորները, նոր գժտությունների սեղիք կարող էր տալ։ Եվ քանի որ ամենախոշոր կալվածքները կենտրոնացված էին եկեղեցու և վանքերի ձեռքին, ուստի արքունիքը որոշում է այդ հողերը վերցնել եկեղեցուց։

Եկեղեցական հողատիրությունը սահմանափակելու հարցը առաջացել էր դեռևս Տիրանի ժամանակ։ Նրա լուծումն առաջնահերթ հարց դարձավ Արշակի օրոք, բայց չիրագործվեց։ Իսկ այժմ երիտասարդ Պապն էր, որ վճռականություն ունեցավ իրագործել այդ քաղաքականությունը։ Նա եկեղեցականների 7 կտոր հողամասերից 5-ը գրավեց հօդուտ արքունիքի։ Գրաված հողերը նա բաժանում էր ազատներին, որոնք բանակի հիմնական կորիզն էին կազմում։ Պապը խստորեն կրճատում է նաև հոգևորականության թիվը, որը հսկայական չափերի էր հասել։ Նա փակում է նաև կուսանոցների

մեծ մասը՝ ցանկանալով՝ որ բոլորն էլ ամուսնանան և ավելացնեն բնակչության թիվը։

Պապի այս ձեռնարկումները, բնական է, չէին կարող չառաջացնել հոգևորականության դժգոհությունը, ուստի և զարմանալի չէ, որ հայ քրիստոնյա պատմիչներն արտակարգ բացասական գծերով են ներկայացնում Պապին, որը իրականում ամենից ձեռներեց և ինքնատիպ հայ գահակալներից մեկն էր։

Հայ հոգևորականությունը կատաղի պայքար է սկսում Պապի դեմ։ Հոգևորականները ճարպկորեն օգտագործում են Ներսեսի մահը, որը տեղի է ունենում 372 թ. և մեղադրում Պապին, որ իբր թե սրա թելադրանքով է թունավորվել Ներսեսը։

Նախարարների որոշ շրջանում ևս Պապի նկատմամբ դժգոհություններ են սկսում առաջանալ արտաքին քաղաքականության հարցերում։ Պապը այն գահակալներից չէր, որ խաղալիք լիներ հռոմեացիների ձեռքին։ Նա արտաքին քաղաքականության ասպարեզում, հատկապես իր գահակալության վերջին տարիներին, աշխատել է միանգամայն ինքնուրույն լինել։ Փավստոսի մոտ ակնարկներ կան այն մասին, որ Պապը փորձել է նույնիսկ բանակցությունների մեջ մտնել Շապուհի հետ։ Պապն աշխատել է նաև երկրից դուրս հանել հռոմեական կայազորները, որոնց հրամանատարը՝ Տերենտիոսը, միջամտում էր Հայաստանի ներքին գործերին և աշխատում իր շուրջը համախմբել Պապի քաղաքականությունից դժգոհ եկեղեցականներին և կենտրոնախույս ընթացք ունեցող նախարարներին։

Պապի ինքնուրույն քաղաքականությունը նկատվում է նաև կաթողիկոսության նկատմամբ։ Երբ մահանում է Ներսես կաթողիկոսը, և առաջադրվում է նորի՝ Հուսիկի թեկնածությունը, նա կաթողիկոսին այլևս չի ուղարկում Կեսարիա ձեռնադրության, ինչպես սովորություն էր առաջներում, այլ ձեռնադրել է տալիս տեղում։ Նա չի ցանկանում, որ հայ եկեղեցին վասալական կախվածություն ունենա Կեսարիայից և զեկավարվի հույն պատրիարքի թելադրանքներով։

Պապի ներքին և արտաքին քաղաքականությունից դժգոհ տարրերը անվերջ ամբաստանագրեր են ուղարկում Հռոմ և պահանջում նրան զահընկեց անել։ Այդ գործում քիչ դեր է կատարում առանձնապես Տերենտիոսը, որը ըստ Ամիանոսի բնութագրության, թեպետ արտաքինից հեզ և խոնարհ մեկն էր երևում, բայց գործունեության մեջ, իր ողջ կյանքում, նրա ամենասիրած զբաղմունքը դավեր սարքելն է եղել։ Նա ամբաստանում է Պապին կայսեր մոտ, որ նա սպանել է իր հորեղբոր տղաներ՝ Գլակին և Արտավանին, որ

բռնություն է գործ դնում հոգևորականության վրա, գաղտնի բանակցություններ է վարում Շապուհի հետ և այլն։

Վաղես կայսրը Պապին մեջտեղից վերացնելու նպատակով հրավիրում է նրան Տարսոն, այն պատրվակով, որ իբր թե ցանկանում է կարևոր հարցով խորհրդակցել նրա հետ։ Պապը 300 թիկնապահ հեծելազորով անհապաղ գնում է Տարսոն։ Սակայն այնտեղ կայսրը հրաժարվում է տեսակցել Պապի հետ և նրան գաղտնի հսկողության տակ է առնում։

Պապը, հռոմեական արքունիքում աշխատող հայ պաշտոնյաներից գաղտնի իմանում է, որ ինքն ամբաստանված է, և իրեն թույլ չպիտի տան վերադառնալ հայրենիք։ Երեկոյան, մութն ընկնելիս, նա վերցնում է իր թիկնապահ զորամասը, ճեղքում է քաղաքի պաշտպանությունը և փախչում դեպի հայրենիք։ Վաղեսը հաղար հոգուց բաղկացած մի հեծելազոր է ուղարկում բռնելու Պապին և նա վերադարձնելու, բայց հաջողություն չի ունենում։ Պապի՝ Հայաստան փախչելու ոդիսականի մանրամասնությունները շատ պատկերավոր նկարագրված են Ամիանոսի մոտ։

Վաղեսի՝ Պապի դեմ սարքած դավադրության առաջին փորձը խափանվելուց հետո, այլևս անհարմար էր Տերենտիոսին Հայաստանում թողնելը, ուստի նա կանչվում է Հռոմ, իսկ նրա փոխարեն բյուզանդական զորքերի հրամանատար է նշանակվում Տրայանոսը՝ Պապի դավադրությունը տեղում կազմակերպելու առաջադրանքով։

Տրայանոսը, գալով Հայաստան, ամեն կերպ աշխատում էր սիրաշահել Պապին և գլուխ բերել դավադրություն։ Անհրաժեշտ ենք համարում Ամիանոսի պատմությունից բերել Պապի դեմ բյուզանդիացիների կազմակերպած դավադրության մասին եղած հատվածը. «Որպես բարեկամության ապացույց նա (այսինքն՝ Տրայանոսը) մեկ ցույց էր տալիս Վաղեսի բարեկամական նամակը, մեկ ինքն էր գնում նրա մոտ հյուրասիրության։ Եվ, վերջապես, ավազակությունը վերջնականապես կազմակերպելուց հետո, նա «մենաքաղաքավարի ձևով հրավիրում է իր մոտ։ Պապը չկասկածելով ոչ մի բանից, գալիս, նստում է իր համար նշանակված պատվավոր տեղում։ Մատուցվում են ամենաընտիր կերակուրները, ընդարձակ դահլիճը դղրդում է լարային և փողային գործիքների նվագից և երգեցողությունից։ Երբ գինին սկսում է իր ներգործությունը ունենալ և մարդիկ տաքանում են, խնջույքի կազմակերպողը ինչոր պատրվակով դուրս է գալիս և իր հետ բերում ահեղ տեսքով մի բարբարոսի՝ այն զինվորներից, որոնք կոչվում են սուպրեր։ Վայրենին, գազանային հայացքով, սուրը պատյանից հանած, առաջանում

է՝ սպանելու երիտասարդ թագավորին, որի համար կտրված էին դուրս գալու բոլոր ճանապարհները։ Թագավորը, որը թեքվել էր օթյակում, տեսնելով նրան, կանգնում, հանում է դաշույնը, պաշտպանելու իր կյանքը, բայց ընկնում է խոցված կրծքով, որպես խայտառակ զոհ՝ ամոթաբար խփված երկրորդ հարվածից։ Այդ անազնիվ գործի հետևանքով խախտվեց վստահությունը (հռոմեացիների նկատմամբ)։ Օտարերկրացու արյունը ցրիվ եկավ ասծու առջև՝ հյուրասիրության շքեղ սփռոցի վրա...»։

Պապի սպանությունը տեղի է ունեցել 375 թվականին։

5. ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Վարազդատի գահակալությունը

Պապի տմարդի սպանությունը մեծ զայրույթ է առաջացնում Հայաստանում։ Արքունիքին մոտիկ կանգնած նախարարները հավաքվում են խորհրդակցության՝ որոշելու իրենց բռնելիք դիրքը հռոմեական մարդասպանների նկատմամբ։ Նրանք նպատակահարմար են գտնում խուսափել կտրուկ միջոցառումներից և չարել հարաբերությունները Հռոմի հետ, հաշվի առնելով Պարսկաստանի՝ Հայաստանի նկատմամբ ունեցած թշնամական դիրքը։

Վաղես կայսրը Հայաստանի թագավոր է նշանակում Պապի աղգակիցներից՝ Վարազդատին (375—378)։ Փավստոսի վկայությամբ, սա ըմբշական ուժի տեր և օլիմպիական խաղերի դյուցազն հրիտասարդ էր։ Վարազդատի գահակալության առաջին տարիներին սպարապետության պաշտոնը շարունակում է վարել Մուշեղ Մամիկոնյանը։

Վարազդատը իր կարճատև գահակալության շրջանում ոչ միայն չի փորձում միավորել պառակտված ուժերը, այլև իր թեթևամիտ վարքով ու քսու խորհրդականներով՝ ավելի է խորացնում նախարարների պառակտումը։ Գործիք դառնալով Բատ Սահառունի նախարարի ձեռքին, որը սպարապետ դառնալու մոլուցքով էր տարված, նրա խորհրդով արքունի գործակալություններից հեռացնում է Արշակունի թագավորներին մոտ կանգնած ազդեցիկ մի շարք նախարարների և նոր դժգոհություններ տեղիք տալիս։

Ստեղծված իրադրության մեջ հայ պետականությունը գահավեժ արագությամբ դիմում է դեպի կործանում։ Հայաստանի կենտրոնաձիգ ուժերի պայքարը, որն ուղղված էր ներքին և արտաքին պառակտիչ ուժերի դեմ՝ երկրի քաղաքական անկախությունը պահպանելու համար, վերջանում է անհաջողությամբ։

Հեղինակավոր հայ որոշ նախարարների կողմից փորձեր են արվում կանխելու այդ կործանումը։ Հայաստանը վերահաս վտանգից ազատելու համար Մուշեղ Մամիկոնյանը առաջարկում է ամրացնել Հայաստանի բոլոր բերդերն ու ամրությունները և նոր զորամասեր տեղադրել այնտեղ։ Նա առաջարկում է նաև հռոմեական զինվորական մասերի փոխարեն վարձու զինվորներ հավաքագրել հայերից։

Մուշեղի այս ծրագիրը, իհարկե, չէր կարող իրագործվել և չիրագործվեց, բայց նա մեզ համար հետաքրքիր է այն տեսակետից, որ ցույց է տալիս, թե իր ժամանակի հայ զինվորականների մեջ եղել են մարդիկ, որոնք կռահել են Հայաստանի թագավորության մոտալուտ կործանումը և փորձել են միջոցներ փնտրել և կանխել այն։

Սակայն Վարազդատը ոչ միայն չընդառաջեց Մուշեղ Մամիկոնյանի առաջարկած ծրագրին, այլև Բատ Սահառունու ամբաստանությամբ սպանել տվեց նրան։ Մուշեղ Մամիկոնյանին մեղադրում էին, որ իբր թե նա մասնակից է եղել Պապի սպանությանը և ցանկացել է Հայաստանը հռոմեական նահանգ դարձնել։

Մուշեղի սպանությունը, կազմակերպչական իր ձևով, շատ նման է եղել Պապի սպանությանը։ Վարազդատը Մուշեղին հրավիրում է հյուրասիրության. կերուխումից հետո հյուրասենյակ են մտնում 12 հոգի, որոնցից վեցը բռնում են Մուշեղի մի ձեռքից, վեցը՝ մյուսը։ Մուշեղը հանկարծակիի եկած, երբ իմանում է, որ ինքն ամբաստանվել է, ցավ է հայտնում, որ հայ Արշակունի թագավորն այդքան ստոր ձևով է վարվում մի մարդու հետ, որը նրանց իրավունքը պաշտպանելու համար իր «ճակատից քրտինք սրբելու փոխարեն սլաքով արյուն է սրբել»։ Բատ Սահառունին հանում է սուրը և կտրում հայրենասեր սպարապետի գլուխը։

Այդ ժամանակ, երբ միջֆեոդալական ներքին պայքար ու արքունական դավեր էին տեղի ունենում Հայաստանում, հռոմեացիների և պարսիկների մեջ դաշտնի բանակցություններ էին վարվում Հայաստանի բաժանման համար։ Այդ ծրագրի նախաձեռնողը Շապուհն էր. նա պատգամավորություն էր ուղարկել Վաղեսի մոտ և առաջարկել իր ծրագիրը։ Սկզբում Վաղեսը մերժում է այդ առաջարկը այն պատճառաբանությամբ, որ Հովհաննոսի կնքած պայմանագրով որոշված է հայերին «թույլ տալ ապրելու ըստ իրենց հայեցողության», իսկ ինքը չի ցանկանում խախտել այդ պայմանագիրը։ Հռոմեական կայսրությունն այդ ժամանակ ի վիճակի չէր միջամտելու Հայաստանի գործերին, որովհետև 377 թ. վեստգոթե-

բը ներխուժել էին Բրակիա, ուստի նպատակահարմար էր Հայաստանի բաժանման հարցը դեռ ձգձգել։

Քաղաքական այս իրադրության մեջ պարսկական դերությունից աղատվում և Հայաստան է վերադառնում Մանվել Մամիկոնյանը։ Նա հաստատվում է Տարոնում և իր վրա վերցնում տոհմի նահապետությունը։ Այնուհետև Մանվել Մամիկոնյանը մարդ է ուղարկում Վարազդատի մոտ և հանդիմանում նրան՝ Մամիկոնյանների նկատմամբ ցույց տված ապերախտության համար։ Մանվելը, Փավստոսի ասելով, չի քաշվում անգամ հայտարարելու, որ Մամիկոնյանները Արշակունիներին հավասար իրավունք ունեն. «Մենք ձեր ծառաները չենք եղել,— գրում է Մանվելը Վարազդատին,— այլ ձեր ընկերները»։

Գործը վերջանում է պատերազմով։ 377 թ. Վարազդատի և Մանվելի զորքերը ընդհարվում են Կարնո դաշտում։ Հաղթում է Մանվել Մամիկոնյանը։ Վարազդատը փախչում է Արևմտյան Հայաստան և հաստատվում այնտեղ։ Մանվել Մամիկոնյանը սպանում է Վարազդատի կուսակիցներին, այդ թվում նաև՝ Բատ Սահառունուն։

Նոր ջանքեր Հայաստանի անկախությունը պահպանելու համար

Վարազդատին երկրից դուրս քշելուց հետո Մանվելը դահ է բարձրացնում Պապի երիտասարդ որդուն՝ Արշակին (378—386), իսկ ինքը խնամակալ դառնում թագավորի ընտանիքին։ Արշակի եղբայրը՝ Վաղարշակը, դառնում է իր ավագ եղբոր գահակիցը։

Շապուհը, որ ուշի-ուշով հետևում էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, աշխատում է օգտվել առիթից և իր տիրապետությունը հաստատել Հայաստանում։ Նա իր որդու՝ Սուրենի միջոցով հարուստ նվերներ է ուղարկում Զարմանդուխտ թագուհուն, նրա որդիներին և սպարապետին ու աշխատում սիրաշահել նրանց։ Այնուհետև, Հայաստանի անկախությունը պաշտպանելու պատրվակի տակ, նա Հայաստան է ուղարկում 10 000 հոգուց բաղկացած մի հեծելազոր։ Սուրենը Հայաստանում իր ձեռքն է վերցնում իշխանությունը և պարտադրում հարկ վճարել անգամ պարսից արքունիքին։ Սա մեծ վրդովմունքի տեղիք է տալիս. նախարարները միավորում են իրենց ռազմական ուժերը և դուրս վտարում պարսկական զորքերը Հայաստանից։

Պարսկաստանում 379 թվականին մահացել էր Շապուհ II-ը և գահակալության համար սկսվել էին ներքին խռովությունները, ուստի հայ նախարարների վարմունքը մնում է անպատիժ։ Հետագա-

յում, երբ Արտաշիրի (379—384 թթ.) կարճատև թագավորությունից հետո գահ է բարձրանում Շապուհ III-ը (384—388), վերջինս զորք է ուղարկում Հայաստան՝ պատժելու հայ նախարարներին։ Հայ-պարսկական զորքերը, ըստ Փավստոսի տեղեկության, հանդիպում են Բագրևանդի Բագավան դաշտում։ Պարսիկները պարտություն են կրում և դիմում փախուստի։

Մանվել Մամիկոնյանը հայ միասնական պետականության պահպանման շնորհալի կազմակերպիչներից մեկն էր։ Նա մեծ ջանքեր է գործ դրել համախմբելու հայ ֆեոդալական ուժերը և վերացնելու պետության և եկեղեցու միջև գոյություն ունեցող հակամարտությունը։ Սակայն Մանվել Մամիկոնյանը, ինչքան էլ հանճարեղ լիներ, հասկանալի է, ի վիճակի չէր փոխելու Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը և վերացնելու ֆեոդալական հասարակությանը հատուկ տնտեսական և քաղաքական մասնատվածությունը։

Մանվելի խնամակալության շրջանը տևում է 7 տարի և անցնում է, համեմատաբար, խաղաղության մեջ։

Ուշագրավ է Փավստոսի պատմության մի դրվագը, ուր նկարագրված է Մանվել Մամիկոնյանի մահը. Մանվելը դտնվում է մահվան մահճում. նա հանում է իր շորերը և ներկաներին ցույց տալիս պատերազմում ստացած բազմաթիվ վերքերի սպիները, որոնք ծածկել էին ողջ մարմինը։ Ապա լաց է լինում, թե ինչու չի մեռնում ձիու վրա, պատերազմում, հայրենիքի պաշտպանության դիրքում, չի գոհվում «ի վերայ կանանց և որդւոց մերոց»։

Հայաստանի բաժանումը

Շապուհ II-ին հաջորդող պարսիկ թագավորները շարունակում են Հայաստանի նվաճման իրենց վաղեմի քաղաքականությունը։ 385 թ. Շապուհ III-ը պարսկական ազդեցության տակ գտնվող հայ նախարարությունների համար թագավոր է նշանակում Խոսրով անունով մի երիտասարդ Արշակունու։ Արշակը հարկադրված է լինում տեղափոխվել Արևմտյան Հայաստան և կառավարել հռոմեական ազդեցության տակ գտնվող նախարարությունները։ Այսպիսով, Հայաստանը փաստորեն բաժանվում է երկու ազդեցության շրջանների՝ պարսկական և հռոմեական՝ մրցակից երկու հայ թագավորներով՝ Արշակ III և Խոսրով IV։

Թեոդոսիոս կայսրը (379—395) վեստգոթերի դեմ սկսված պատերազմը հաջողությամբ վերջացնելուց հետո, իր ուշադրությունը դարձնում է արևելքի վրա։ Նա 383 թվականին խոշոր մի զորաբանակ է ուղարկում արևելք՝ պաշտպանելու կայսրության իրավունք-

ները և բարձրացնելու Հռոմի ընկած հեղինակությունը։ Բանակի հրամանատարությանը նա հանձնարարում է պաշտպան կանգնել Արշակի իրավունքներին և աշխատել նրա իշխանությունը տարածել ողջ Հայաստանի վրա։

Երբ պարսկական արքունիքը տեղեկանում է հռոմեացիների դիտավորությանը, ինքը ևս պատրաստվում է պատերազմի։ Պարսիկները զորք են մտցնում Այրարատյան նահանգը՝ պաշտպանելու իրենց դրածո թագավորին՝ Խոսրովին, իսկ հռոմեացիները Եկեղյաց գավառը՝ պաշտպանելու Արշակին։

Հռոմեական և պարսկական բանակների մեջ, սակայն, կռիվ տեղի չի ունենում. նրանք բանակցությունների մեջ են մտնում, համաձայնության գալիս և զորքերը քաշում Հայաստանից և սկսում նոր բանակցություններ՝ երկիրն իրար մեջ բաժանելու համար։ 384 և 386 թվականներին կողմերը նախնական համաձայնության են գալիս և 387 թվականին վերջնականապես ինքում Հայաստանի բաժանման պայմանագիրը։

Ըստ այդ պայմանագրի, Հայաստանի արևելյան նահանգները, այսինքն՝ երկրի մեծ մասն անցնում է Պարսկաստանին, իսկ արևմտյան նահանգները՝ Բյուզանդիային։ Բաժանման գիծ է սահմանվում հյուսիսում՝ Կարինը, որը գտնվում էր Բյուզանդիայի գերիշխանության տակ, միջին մասում՝ Սրմանց կամ Բյուրակնյան լեռնաշղթան, հարավում՝ Մծբինը՝ երկու երկրների սահմանագծում։ Բյուզանդիայի գերիշխանության տակ են ընկնում Եկեղյաց գավառը, Դերջանը, Խորձենը, Կարինը, Մոփքը և Անգեղ տունը։ Արևելյան Հայաստանի բոլոր նահանգները մնում էին պարսկական գերիշխանության տակ։ Երկու մասում էլ ժամանակավորապես թողնվում են հայ թագավորները՝ Արշակը բյուզանդական մասում, իսկ Խոսրովը՝ պարսկական, իհարկե, երկուսն էլ որպես վասալներ։

Հայաստանի համար աղետալի այս իրադարձությունը շատ լավ ըմբռնել են ժամանակակից պատմիչները։ Այսպես, Փավստոսը խոսելով պարսկա-հռոմեական դիվանագիտության այս նենգադավ համաձայնության մասին, նշում է, որ կողմերն այդպիսի բաժանումով ցանկանում էին խորտակել Հայաստանի «հզոր և հարուստ թագավորությունը», «խեղճացնել», այն աստիճան, որ Հայաստանն այլևս չկարողանա «բարձրացնել իր գլուխը»։ Հայաստանի բաժանումից հետո, վշտով նկատում է Փավստոսը, «նուազեաց բաժանեցաւ, ցրուեցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիրմէ մեծութիւնէն յայն ժամանակն և յապայ»։

Արշակունիների անկումը

Հայաստանի երկու քաղաքական մասերի հայ նախարարները ոչ միայն լուրջ փորձեր չեն անում վերացնելու քաղաքական պառակտումը, այլև եղբայրասպան քաղաքացիական նոր կռվի դուռ են բաց անում։ Հռոմեական կայսրությունը 391 թ., Արշակի մահանալուց հետո, վերացնում է Արևմտյան Հայաստանի քաղաքական անկախությունը և երկիրը վերածում հռոմեական պրովինցիաների՝ նշանակելով իր կառավարիչները, որոնք համարվում էին կայսեր փոխանորդները և կոչվում կոմիսներ։

Արևելյան Հայաստանում պարսիկները որոշ ժամանակ դեռ հանդուրժեցին քաղաքական անկախության պահպանումը, իրենց հավանությամբ դահ բարձրացած թագավորների միջոցով։ Պարսկական արքունիքի այս հանդուրժողական վերաբերմունքը պետք է բացատրել ոչ թե նրա՝ հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած ինչոր սիրալիրությամբ, այլ այն հանգամանքով, որ Արևելյան Հայաստանի նախարարական շրջանները բավականին ուժեղ էին, կարող էին դիմադրություն ցույց տալ, իսկ Պարսկաստանի համար տվյալ շրջանում ցանկալի չէր նոր կռվի դուռ բաց անել։

391 թ. պարսից արքունիքում Խոսրովն ամբաստանվում է հայ միասնական պետությունը վերականգնելու ձեռնարկման մեջ, կանչվում է Տիզբոն և բանտարկվում Անհուշ բերդում։ Խոսրովից հետո հայկական գահը մնում է թափուր վիճակում։ Հայաստանի վարչական իրավունքը, մոտ ութ տարի, հազարապետի իրավունքով, հանձնարարվում է Առավան անունով մի պարսիկի։ Այնուհետև, նախարարների պահանջով, Հայաստանի թագավոր է նշանակվում Խոսրով թագավորի եղբայրը՝ Վռամշապուհը (400—414 թթ.), որի գահակալության իսկզբի շրջանը բարերար ազդեցություն է ունենում Հայաստանի ինչպես տնտեսական, այնպես և կուլտուրական կյանքի համար։ Վռամշապուհի ժամանակ է, որ Մեսրոպ Մաշտոցի նախաձեռնությամբ ստեղծվում է հայկական գիրը։

Վռամշապուհի մահվանից հետո, Սահակ կաթողիկոսի միջնորդությամբ՝ պարսից արքունիքը բանտից ազատում և Հայաստան է ուղարկում Խոսրովին։ Սակայն նա ապրում է միայն մի տարի։ Նրա մահվանից հետո Հազկերտ I-ը Հայաստանի թագավոր է նշանակում իր որդուն՝ Շապուհին (415—419)։

Շապուհի գահակալությունը հայ նախարարների շրջանում խոր դժգոհություն է առաջացնում։

419 թ., երբ մահանում է Հազկերտ I-ը, Շապուհը շտապում է Պարսկաստան՝ ժառանգելու հոր գահը, բայց սպանվում է ճանա-

պարհին։ Երեք տարի հայկական գահը թափուր մնալուց հետո, պարսկական Վռամ թագավորը Հայաստանի թագավոր է նշանակում Արտաշես III-ին (422—428), որը վերջին Արշակունին էր հայկական գահի վրա։ Սա, ըստ Խորենացու վկայության, ավելի շատ զբաղված էր իր անձնական հաճույքներով, քան երկիրը կառավարելու հոգսերով։ Հայաստանի ազդեցիկ նախարարները բողոքում են Վռամին։ Վերջինս, օգտագործելով առիթը, 428 թ. դահընկեց է անում Արտաշեսին, վերացնում է հայկական թագավորությունը, Հայաստանը դարձնում մարզպանություն։

Այսպիսով, IV դարի հայ Արշակունի թագավորների և նրանց համակիր նախարարների ջանքերը՝ միասնական պետության պահպանման ուղղությամբ, անհաջողությամբ են վերջանում։ Այդ անհաջողությունը, իհարկե, պայմանավորված չէր հայ առանձին դահակալների ինչ-որ անկարողություններով, ինչպես կարծում են որոշ պատմաբաններ։ Ընդհակառակն, IV դարի հայ թագավորների շարքում հանդես են գալիս ինքնատիպ և եռանդուն այնպիսի դեմքեր։ Ինչպիսիք Արշակ II-ն ու Պապն էին։ Սակայն առանձին անձինք, որքան էլ ցանկանային, ի վիճակի չէին տնօրինել երկրի սեփական ճակատագիրը։ Քաղաքական, տնտեսական և քաղաքական մասնատվածության պայմաններում Հայկական լեռնաշխարհում չստեղծվեցին անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հրնարավոր լիներ համախմբել տեղի ռազմական ուժերը և պահպանել երկրի քաղաքական անկախությունը։

Հայ Արշակունիների մղած պայքարը կենտրոնական ուժերի դեմ՝ Հայաստանի անկախության պահպանման և միասնական հզոր պետություն ստեղծելու համար, անկասկած, առաջադիմական երևույթ էր։

ԳԼՈՒԽ XIII

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ V—VI ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Հայ աշխատավորության ծանր վիճակը

Ֆեոդալական հարաբերությունների զարգացմանը և խորացմանը զուգընթաց ծանրանում է նաև շինականների դրությունը։ Ֆեոդալները սկսում են ավելացնել շինականների հողային ռենտան և պետական պարտավորությունները։

Աշխատավորության դրությունն ավելի է վատթարանում առանձնապես V դարում պարսկա-բյուզանդական տիրապետության դաժան լծի տակ։ Շինականներն այժմ ենթարկվում են կրկնակի հարստահարության. նրանք պարտավորություններ էին կատարում ոչ միայն իրենց տեղական աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների հանդեպ, այլև հարկ էին վճարում պարսկա-բյուզանդական նվաճողներին։

Ստեղծված այս նոր իրադրության մեջ գյուղական համայնքները կամ անհատ գյուղացիները ասպիճանաբար կախման մեջ են ընկնում իրենց ֆեոդալ տերերից։ Համայնքի երբեմնի ազատ անդամները, ելք փնտրելու համար, հաճախ հարկադրված են լինում թողնել իրենց բնակավայրերը և տեղափոխվել այլ վայրեր, որ, համեմատաբար, ազատ վիճակ գոյություն ուներ։

Այդ ժամանակ խորանում են դասակարգային ներհակությունները և սրվում դասակարգային պայքարը։ Շինականները և քաղաքի ռամիկները ոտքի են կանգնում և պայքարում իրենց շահագործողների դեմ։ Այդ պայքարը Հայաստանում հանդես է եկել տարբեր ձևերով՝ պասսիվ՝ ֆեոդալների մոտից փախչելու, վարագուրված՝ աղանդավորական քողի տակ և բացահայտ՝ գյուղացիական ընդվզումների ձևով։

Էնգելսը, խոսելով միջին դարերում ֆեոդալիզմի դեմ ուղղված սոցիալական շարժումների մասին, գտնում է, որ ֆեոդալիզմի դեմ ուղղված հեղափոխական օպոզիցիան նկատվում է ամբողջ միջնադարի ընթացքում. նայած ժամանակի պայմաններին, նա հանդես է գալիս մերթ իբրև միստիկա, մերթ որպես բացորոշ հերետիկոսություն և մերթ իբրև զինված ապստամբություն։

Ինչպես մյուս շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում ֆեոդալական իրավունքի ձևավորողի և ջերմ պաշտպանի դերում հանդես է գալիս եկեղեցին։ Քրիստոնեությունը իր քարոզչության հիմնական շեշտը դնում էր ծառաների հնազանդության վրա։ Պատահական չէ, որ հենց նույն ծառաները պայքարի սլաքն առաջին հերթին ուղղում էին ընդդեմ եկեղեցու՝ խոշոր ֆեոդալական այդ հաստատության, որը միաժամանակ ֆեոդալական իրավունքի ձևավորողն ու ջերմ պաշտպանն էր։

Թե ինչպիսի ջանասիրությամբ է պաշտպանել եկեղեցին ֆեոդալական իրավունքն ու սնիականությունը, պարզ կարելի է պատկերացնել Աթանաս Արեքսանդրացու այն կանոնից, որը նախատեսում է անհնազանդ ծառաների սպանությունը. «Եթե լինի այնպիսի ծառա, որ անհնազանդ գտնվի,—կարդում ենք նրա կանոններում,—և տերը շատ զայրանալով խփի ու սպանի իր ծառային... անպարտ է»։ Այդ կանոնը մարդասպան տիրոջը միայն պարտավորեցնում է՝ ծառային սպանելուց հետո եկեղեցի գնալ և «ապաշխարել»։

Անապատականների շարժումը

IV—V դարերում Հայաստանում հանդես եկող կարևոր սոցիալական շարժումներից մեկը «անապատականների» շարժումն էր։ Այդ շարժումն առաջին անգամ հանդես է եկել Ասորիքի, Պաղեստինի և Կապադովկիայի քրիստոնյա համայնքների շրջանում և այնտեղից լայն ալիքով անցել Հայաստան և սոցիալական նպաստավոր հող գտել Հայաստանում։ Բազմաթիվ հավատացյալներ, դժգոհ իրենց դրությունից, մասսայարար թողել են ընտանիք և բնակավայր, մեկուսացել հասարակությունից, միաբանություններ հիմնել և ապրել անապատականի կյանքով։ «Անապատականների» այդ խմբերը կոչվել են նաև «եղբայրանոցներ», որովհետև այդ «անապատներում» միաբանության անդամներն աշխատել և ապրել են համայնական հավասար կյանքով։ Նրանք իրենց ձևով և ապրելակերպով նմանվել են վաղ քրիստոնեական համայնքներին և տարբերվել հետագայի կալվածատիրական խոշոր օջախներ դարձած և պե-

տական հովանավորությունը վայելող վանական միաբանություններից։

«Անապատականներին» հարել և նրանց շարքերն են մտել գլխավորապես նյութական կարիքի տակ ընկած ընչազուրկ հավատացյալները՝ մարդիկ, որոնք հիասթափված են եղել պաշտոնական եկեղեցուց և լավ ոչինչ չեն ակնկալել ապագայում։

«Անապատականների» այդ շարժումը պայքարի պասսիվ ձև էր և ուղղված էր, առաջին հերթին, ֆեոդալական հասարակության մոտ պաշտոնական ծառայության մտած եկեղեցական նվիրապետության դեմ. ի վիճակի չլինելով բացահայտ պայքարի դուրս գալ ֆեոդալական դասի իրականության դեմ, այդ շարժման հետևողները դիմում էին պայքարի պասսիվ ձևի՝ հիասթափված լքում, հեռանում էին աշխարհիկ կյանքից և հոգեկան մխիթարություն փնտրում մենավոր կյանքի մեջ։

«Անապատականներն» իրենց «եղբայրանոցներն» ունեին Սյունիքում, Տարոնում, Վասպուրականում և Հայաստանի լեռնային մի շարք այլ շրջաններում։ Այդ շարժումը IV դարի վերջին քառորդում այնպիսի սպառնական բնույթ է ստանում, որ պետությունն անհրաժեշտ է համարում միջոցներ ձեռք առնել սահմանափակելու նրանց թիվը։

Բորբորիտները

V դարում Հայաստանում հանդես եկող սոցիալական շարժումներից մասսայական բնույթ է ունեցել նաև բորբորիտների շարժումը։ Բորբորիտ բառը հունարեն է (բորբորոս), որ նշանակում է աղբ, կեղտ, դարշելի։ Այդ անունը շարժման հետևողներին տվել են անշուշտ եկեղեցական պաշտոնական շրջանները՝ նպատակ ունենալով անվանարկել, վարկաբեկել նրանց։

Բորբորիտների մասին մեզ տեղեկություններ են հաղորդում Մովսես Խորենացին և Կորյունը։ Պատմահայրը հայտնում է, որ Կոստանդնուպոլսի Ատտիկոս պատրիարքը (404—425) գրություն է ուղարկել Սահակ Պարթև կաթողիկոսին և հայտնել նրան քարոզիչներ ուղարկելու Արևմտյան Հայաստան բորբորիտ կոչվող աղանդավորներին կարգի բերելու համար։

Հայ եկեղեցու պայքարը բորբորիտների դեմ չի սահմանափակվել միայն Արևմտյան Հայաստանում. պատմիչների տեղեկություններից երևում է, որ բորբորիտների դաղափարները տարածված են եղել նաև Գողթն գավառում և այլ վայրերում։ Բորբորիտների շարժումը Հայաստանում լայն տարածում է գտել և լուրջ մտահոգություն պատճառել ինչպես պետական, այնպես էլ եկեղե-

ցական պաշտոնական շրջաններին։ Այն փաստը, որ այդ շարժումով անձամբ զբաղվել են բյուզանդական Թեոդորոս կայսրը, Պոլսի Ատիկոս պատրիարքը, իսկ Հայաստանում՝ Սահակ կաթողիկոսը և այլի ընկնող այլ եկեղեցականներ ու իշխաններ, ցույց է տալիս, թե ինչպիսի մեծ վտանգ է ներկայացրել այն՝ իշխող ֆեոդալական դասակարգի համար։

Հայոց եկեղեցին ըստ տեղեկությունների, ստանալով աշխարհիկ ֆեոդալների գործուն աջակցությունը և գործի դնելով իր «թրշվառացուցիչ գավազանը», վճռական միջոցների է դիմում՝ բանտարկում, հալածում, տանջում է նրանց և ճնշում շարժումը։

Մծղնեականների շարժումը

Հայաստանում հանդես եկած սոցիալական շարժումներից ավատական իշխող շրջաններին առանձնապես մեծ սարսափ է պատճառել մծղնեական շարժումը, որի մասին կցկտուր տեղեկություն է պահվել միայն 443 թվականի Շահապիվանի ժողովի կանոնների մեջ։

Ժողովի ներածական մասում եղած մի ակնարկից երևում է, որ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահվանից հետո, խախտված է եղել եկեղեցական կարգն ու կանոնը («լինէր եղծումն և քայքայումն կարգաց և օրինաց և եկեղեցւոյ»), գլուխ էին բարձրացրել մծղնեության հետևորդները, ուստի և նրանց նկատմամբ անհրաժեշտ է եղել վճռական միջոցներ ձեռք առնել։

Թե ովքե՞ր էին մծղնեականները, ո՞ր շրջաններում էին տարածված նրանք և ինչի՞ համար էին պայքարում պաշտոնական եկեղեցու դեմ, ոչինչ չգիտենք. հայ պատմագրությունը այդ մասին խնամքով լռում է։ Բայց դատելով Շահապիվանի ժողովի՝ մծղնեության դեմ ընդունած պատժի խստության աստիճանից, պետք է ենթադրել, որ այդ շարժման հետևորդները հայ եկեղեցու կատաղի հակառակորդներն են եղել, այլապես անիմաստ կլիներ նման որոշման կարիքը «անօրէն աղանդաւորների» դեմ։

Շահապիվանի ժողովի 19-րդ կանոնով սահմանվել է հետևյալ խստագույն պատիժը. մծղնեությանը հարող մարդու կամ կնոջ ձեռքերի և ոտքերի շլերը պետք է կտրել, ադվնսադրոշմ դնել նրա ճակատին և բորոտների մոտ տանել՝ ապաշխարության համար։

Մծղնեության հարած ծնողների երեխաները, եթե դիտակցական հասակ ունեն, ենթակա են ծնողների ճակատագրին, իսկ եթե մանկահասակ են, ապա երեխաներին պետք է վերցնել ծնողներից և տալ եկեղեցուն՝ դաստիարակության։

Եթե եկեղեցականն է մեղադրվում մծղնեության մեջ և այդ

առաջին անգամն է, ապա նրան կարգալույծ պիտի անել իր պաշտոնից, ճակատին աղվեսադրոշմ դնել և ուղարկել Ճդնելու, իսկ եթե եկեղեցականը երկրորդ անգամ է մեղադրվում այդ նույն հանցանքում, կտրվում են նաև նրա ոտքերի և ձեռքերի ջլերը։

Վաղ ֆեոդալիզմի շրջանում գուցե չէր կարելի մտածել պատժի ավելի սարսափազդու մի ձև, քան մարդկանց ոտքերի և ձեռքերի ջլերը կտրելն էր, այսինքն՝ հաշմանդամ դարձնելը։ Դաժան պատիժ էր նաև մարդկանց ճակատին աղվեսադրոշմ խարանելը. հավատացյալ մարդը տեսնելով անդրվված մարդուս ճակատի դրոշմը, ոչ միայն պետք է խուսափեր փոխհարաբերություն ունենալ նրա հետ, այլև պարտավոր էր նրան հալածել որպես «հասարակության թշնամուս»։

Շահապիվանի ժողովը, սակայն, պատիժներ է սահմանել ոչ միայն մծղնեից շարժման հարողների, այլև այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր մծղնեից շարժման հարողներին կթաքցնեն իշխանությունից և տեղեկություն չեն հայտնի նրանց մասին։ Ըստ որում, եթե մծղնեականին թաքցնողը հասարակ քահանա է, օրենքով պետք է կտրել նրա ոտքի և ձեռքի ջլերը, եթե բարձրաստիճան եկեղեցական է, նզովվում և պաշտոնից է հեռացվում, իսկ եթե աղնվական ծագում ունեցող մարդ է, միայն նզովվում է։

Ինչպես տեսնում ենք, հայկական կանոններում նույն հանցանքի համար տարբեր դասակարգի ներկայացուցիչների համար տարբեր պատիժ է սահմանվել. բոլոր դեպքերում ամենատարտոնված խավերին ամենափոքր պատիժն է տրվել։

Հաջողվե՞ց արդյոք հայոց եկեղեցու պաշտոնական ներկայացուցիչներին Շահապիվանի ժողովի այդ դաժան կանոններով արմատախիլ անել սոցիալական շարժումները Հայաստանում։ Ո՛չ։ Այդ ցույց կուան հետագա դարերի իրադարձությունները, որոնց կծանոթանանք պավլիկյան շարժման առիթով, մի շարժում, որը ցնցեց ոչ միայն միջնադարյան Հայաստանի, այլև ողջ Բյուզանդիայի ֆեոդալական հասարակության իշխող վերնաշերը։

2. ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ V ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Հայաստանի քաղաքական դրությունը

Արևելյան Հայաստանը Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ ընկնելուց հետո, թեպետ հայ նախարարները վասալական կախման մեջ էին պարսիկ թագավորից և վճարում էին նրան սահմանված հարկը և կռվի ժամանակ նրա

տրամադրության տակ դնում իրենց այրուձին, սակայն պահպանում էին ներքին անկախությունը։

Հայաստանի ղեկավար կարևոր պաշտոնները դեռ շարունակում էին վարել հայ իշխանները։ Այսպես, հազարապետությունը գրաված էր Ամատունիների, սպարապետությունը՝ Մամիկոնյանների, դատավարությունը՝ կաթողիկոսի ձեռքին և այլն։

Սասանյան արքունիքի հանդուրժողական այս վերաբերմունքը պայմանավորված էր Իրանի այդ ժամանակվա քաղաքական անկայուն վիճակով։ Սասանյան Պարսկաստանին V դարի 30—40-ական թթ. արևմուտքից սպառնում էր Բյուզանդիան, իսկ հյուսիսից՝ նա ենթակա էր քուշանների և հոների հարձակմանը։

Հազկերտ II-ը (438—457), դահ բարձրանալով, իր առջև խնդիր է դնում ապահովել երկիրը արտաքին հարձակումներից և հետո միայն զբաղվել հպատակ ժողովուրդների, այդ թվում նաև Հայաստանի ներքին անկախությունը վերացնելու և նրանց ասիմիլյացիայի ենթարկելու խնդրով։ Քաղաքական այս իրադրության մեջ Հայաստանը դուրս էր մնում Սասանյան արքունիքի ուշադրության տեսադաշտից և շարունակում էր պահպանել իր ներքին անկախությունը։

Հազկերտ II-ը իր գահակալության առաջին տարիներին Բյուզանդիայի հետ ունեցած սահմանային թեթև կռիվներից հետո, որի մասին հիշատակություն ունի Խորենացին, բանակցություններ է մտնում Թեոդոսոս կայսեր հետ և վերահաստատում 422 թ. կնքած 50-ամյա խաղաղության պայմանագիրը։ Ըստ այդ պայմանագրի, Բյուզանդիան իրավասու չէր միջամտելու Արևելյան Հայաստանի ներքին գործերին և չպիտի հովանավորեր Պարսկաստանի դեմ գործող թշնամական ուժերին։

Հայաստանը ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող մի երկիր էր, և այդ շատ լավ գիտակցում էր Բյուզանդիան։ Սակայն պայմանագրի կնքման ժամանակ նա հարկադրված էր տեղի տալ, որովհետև Դանուբի կողմից սկսել էին խուժել Աթիլայի հրոսակները, և Բյուզանդական կայսրությունը գտնվում էր մեծ վտանգի առջև։ Ստեղծված քաղաքական աննպաստ այս դրության մեջ Բյուզանդիայի համար, իհարկե, անմտություն կլիներ նոր պատերազմական գործողություններ սկսել արևելքում։

Հազկերտը, Բյուզանդիայի հետ խաղաղության դաշնագրությունը վերահաստատելուց հետո, զբաղվում է Պարսկաստանի հյուսիսային սահմանից սպառնացող քուշանների հարցով։ Նա իր զորքաբանակները տեղափոխում է սրանց դեմ և սկսում կռիվը Պարս-

կական զորաբանակների մեջ գտնվում էին նաև հայկական, վրացական և աղվանական զորաբաժիններ։ Հազկերտը հաջողությամբ վերջացնում է քուշանական պատերազմը և հեռացնում քուշաններին Պարսկաստանի սահմաններից։

Հազկերտի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ

Պարսկաստանի հյուսիսային սահմանից բռնառնացող վտանգը վերացնելուց հետո Հազկերտը այնուհետև սկսում է զբաղվել հպատակ ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի ասիմիլյացիայի հարցով։

Տիզբոնի վաղեմի ծրագիրն էր, ինչպես ասացինք, վերացնել հայ ժողովրդի ներքին անկախությունը, պարտադրել զրադաշտությունը և աստիճանաբար ասիմիլյացիայի ենթարկել նրան։ Ըստ որում, Տիզբոնն իր այդ քաղաքականությունը վարում էր ոչ միայն Հայաստանի, այլև նրա դրացի Վրաստանի և Աղվանից աշխարհի նկատմամբ։

Եղիշեն, խոսելով Սասանյանների՝ Անդրկովկասի և Հայաստանի ժողովուրդների նկատմամբ վարած այս քաղաքականության մասին, նշում է, թե պարսից արքունիքում իշխում էր այն կարծիքը, որ եթե իրենց հաջողվի վերացնել Հայաստանի ներքին անկախությունը, ապա դժվար չի լինի այնուհետև նույնը կատարել նաև Վրաստանում և Աղվանից աշխարհում։

Պարսկական արքունիքն իր նախագծած ծրագրի իրագործումը Հայաստանում վարում է հայ իշխանների միասնությունը պառակտելու քաղաքականության միջոցով։ 447 թ. արտակարգ լիազորություններով Հայաստան է ուղարկվում Դենշապուհ անունով խորամանկ մի պաշտոնյա։

Դենշապուհը, ըստ պատմիչների տեղեկության, «խաղաղաների կեղծավորությամբ՝ աշխատում է իրար դեմ լարել հայ նախարարներին և կամաղուկ ու փառասեր տարրերին դրավել իր կողմը. «Նրանցից ոմանց,— գրում է Եղիշեն,— որսում էր ոսկով և արծաթով, շատերին առատ պարգևներ էր բաշխում, ոմանց տալիս էր ազարակներ և մեծամեծ գյուղեր, ոմանց մեծամեծ աստիճաններ և իշխանություն էր շնորհում, սնոտի հույս էր ներշնչում նրանց և այսպես մշտապես հրապուրում էր և թեյադրում»։

Եղիշեի այս տեղեկությունը ուշագրավ է ոչ միայն Սասանյանների՝ Հայաստանում վարած պառակտողական քաղաքականությունը հասկանալու համար, այլև պատկերացնելու այն կամայականությունները, որ պարսիկ պաշտոնյան թույլ էր տալիս ֆեոդալական սեփականության և իրավունքի նկատմամբ։ Փաստորեն ոչ մի

նախարար Հայաստանում ապահով չէր, որ վաղը չի ամբաստանվի պարսից արքունիքի առջև, և նրա կալվածքը չի բռնագրավվի ու չի տրվի մեկ ուրիշի։ Նման քաղաքականության հետևանքները, բնական է, չէին կարող խոր դժգոհություն չառաջացնել տոհմիկ «դավառատեր» նախարարների շրջանում։

Սասանյանների այս քաղաքականությունը շուտով տալիս է իր շոշափելի արդյունքները։ Ղազար Փարպեցին վկայում է, որ պարսից արքունիքը «նախարարներին բռությամբ իրար դեմ հանեց և խռովություն ստեղծեց ամենուրեք»։

Դենշապուհն այնուհետև ձեռնարկում է Հայաստանը տնտեսապես քայքայելու քաղաքականությունը։ Այդ նպատակով նա կատարում է աշխարհագիր (մարդահամար)՝ Հայաստանի հարկերը թեթևացնելու պատրվակի տակ, բայց իրականում ցանկանում է ծանրացնել հարկերը կրկնակի ու եռակի չափով։

Եղիշեն խոսելով Դենշապուհի աշխարհագրից հետո պարսիկ հարկահավաքների՝ ժողովրդից հավաքած հարկերի մասին, վրդովված բացականչում է. «Բայց ով կարող է պատմել, թե ինչպիսի ծանր տուրքեր և սակեր, բաժեր և հասեր էին նշանակում լեռների, դաշտերի և անտառների վրա»։ Հարկատու այն համայնքից, գրում է նա, որ առաջ պարսիկ հարկահավաքները վերցնում էին հարյուր դահեկան, այժմ վերցնում են երկու հարյուր։ Նրանք ծանրացնում են առանձնապես վարելահողերից և արոտավայրերից գանձվող հարկերը։ «Դեռ էին հարկս,— գրում է Եղիշեն,— ոչ միայն շինաց, այլ և աւերակաց»։ Ըստ որում, հարկերը գանձում էին ամենավայրագ բռնության և հափշտակության ճանապարհով, հավարում էին նրանք ծանր և բազմատեսակ այս հարկերը և զարմանում՝ «թէ ուստի՞ սոյս ամենայն գանձս ելանէ»։

Սասանյան արքունիքի՝ Հայաստանում վարած հարկային այս քաղաքականությունից ուժգին հասարակական հիմնական խավերը, հասկանալի է, որ շինականն էր և քաղաքային ռամիկը. սրանց ուսերին էր ծանրանում առաջին հերթին պարսկական հարկային լուծը։

Այս քաղաքականությունը, բնականաբար, պետք է առաջացներ և առաջացնում է խոր դժգոհություն աշխատավորության լայն շրջաններում և ոտքի հանում նրանց։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ շինականները և քաղաքային ռամիկները ոտքի են կանգնում ոչ միայն նրա համար, որ պարսիկները վիրավորում էին նրանց կրոնական զգացմունքները, հարկադրում կրոնափոխության, ինչպես կարծում են կղերական պատմագրության ներկայացուցիչներից

ոմանք, այլև այն պատճառով, որ նրանք բացահայտ կեղծվում էին ու հարատահարվում։

Պատմիչների տեղեկություններից երևում է, որ Դենշապուհը հարկ էր դրել նաև հայ հոգևորականության վրա, որը որպես սոցիալական արտոնյալ խավ, մինչ այդ ազատ էր ամեն տեսակ հարկատվությունից։ «Զաղատուիւն եկեղեցւոյն, արկանէր ընդ ծառայութեան»,—գրում է Եղիշեն։ Պարսից արքունիքն իր այդ քաղաքականությամբ նպատակ ուներ, անշուշտ, զրկել հայ հոգևորականներին արտոնությունից, քայքայել նրանց տնտեսապես և նախապատրաստել վճռական հարվածի՝ դրադաշտությունը Հայաստանին պարտադրելու համար։ Պարսկական արքունիքի այս քաղաքականությունը առաջացնում է նաև հոգևորականության խոր դժգոհությունը։

Դենշապուհը ծանրացնում է նաև Հայաստանի առևտրականների դանձվող մաքսը՝ «բաժը»։ Այսպիսով, հայ առևտրականները, սոցիալական մյուս խավերի նման, նույնպես ենթարկվում են Սասանյան արքունիքի բռնություններին։

Պատմիչների տեղեկություններից պարզ երևում է, որ Սասանյան արքունիքի՝ Հայաստանում վարած քաղաքականությունն իր սուր ծայրով ուղղված էր հայ ժողովրդի բոլոր խավերի դեմ։ Հայ նախարարները դժգոհ էին, որովհետև նրանց սպառնում էր քաղաքական իրավունքից և տիրությունից զրկվելու վտանգը, հայ եկեղեցականները դժգոհ էին, որովհետև կանգնել էին լինել-չլինելու սպառնալիքի առաջ, առևտրականները դժգոհ էին, որովհետև սահմանափակվել էր նրանց գործունեության ասպարեզը, հայ շինականները դժգոհ էին, որովհետև ենթակա էին աննախընթաց կեղեքումների։

Ժողովրդի դժգոհության պատճառները, սակայն, միայն դրանք չէին. պարսկական արքունիքը սկսել էր վարել կրոնափոխության հարկադրանքի քաղաքականությունը, որը վիրավորում էր ժողովրդի կրոնական զգացմունքները։ Պետք է նկատի ունենալ, որ V—VI դարերի ազատագրական շարժումների մեջ կրոնական ազդակը շատ խոշոր դեր է կատարել։

Պարսից արքունիքը իր քաղաքականությունը Հայաստանում իրագործելու նպատակով, նախապատրաստական որոշ աշխատանքներից հետո, պատասխանատու պաշտոններից սկսում է հեռացնել հայերին և հանձնում դրանք պարսիկներին։ Հազարապետության պաշտոնից Դենշապուհը հեռացնում է Վահան Ամատունուն և տեղը նշանակում մի պարսիկի։ Մեծ դատավարությունը,

որը հնուց ի վեր պատկանում էր կաթողիկոսի իրավասությանը, վերցվում է նրանից և հանձնվում պարսիկ պաշտոնյայի։

Նոր նշանակված հազարապետը և մեծ դատավորը պարսկական արքունիքից հանձնարարություն ունեին ոչ թե հետևել օրինականության, պահպանել երկրի կարգ ու կանոնը, այլ դավեր սարքել, պառակտել հայ նախարարների միասնությունը, և Հայաստանը քայքայել տնտեսապես և քաղաքականապես։

Պարսից արքունիքը տեղյակ էր Հայաստանում ծայր առած հուզումներին, ուստի հայկական այրուձին՝ իր զինվորական ղեկավարների հետ, նախապես դուրս էր հանվել Հայաստանից և ուղարկվել քուշանների դեմ։

Հայաստանի նախարարական շրջանում Պարսկաստանի վարած պառակտողական քաղաքականությունը որոշ ժամանակ հետո տալիս է իր արդյունքները. գտնվում են իշխաններ, որոնք Սասանյան քաղաքականության հլու հնազանդներն են դառնում Հայաստանում, իսկ ընդդիմադիր նախարարները, հայրենասիրական դրդիչ տակ, համախմբվում են և պատրաստվում ապստամբության։

Նախարարների այս խմբավորման կապակցությամբ պետք է ասել, որ սխալ է որոշ պատմաբանների այն տեսակետը, որ իբր թե նշված խմբավորումը կատարվել է պարսկական և բյուզանդական օրիենտացիաների շուրջը. դավաճաններն ունեցել են պարսկական օրիենտացիա, իսկ հայրենասիրները՝ բյուզանդական։ Նման դնահատականը բացահայտ սխալ է։

Նախարարների այն խումբը, որը հարել է բյուզանդական օրիենտացիային, իրականության մեջ պետական անկախության ձգտող նախարարների խումբն է եղել։ Այդ նախարարները Բյուզանդիայի հետ փոխհարաբերության մեջ են մտել ոչ թե նրան ծառայելու, այլ նրա օգնությամբ իրենց ծրագիրն իրագործելու համար։ Այլ բան է, որ Բյուզանդիայի խորամանկ դիվանագետները խաբել են և չեն կատարել իրենց խոստումները։ Հակապարսկական նախարարներին է հարել նաև ժամանակակից Հովսեփ կաթողիկոս Վայոցձորեցին։

Թումա Արծրունու բերած թանկարժեք մի հիշատակությունից երևում է, որ հայ հայրենասերները նպատակ են ունեցել վերականգնել Հայաստանի քաղաքական անկախ իրավունքը և անգամ թեկնածուներ է փնտրել հայկական գահի համար։ Թումա Արծրունին վկայում է, որ Ավարայրի ճակատամարտի նախօրյակին նախարարները ցանկացել են Վահան Ամատունուն «թագաւորացուցանել ի վերայ Հայոց», բայց հետո համաձայնության չեն եկել և

կանգ են առել Վարդան Մամիկոնյանի վրա։ Այդ մասին վկայում է նաև Եղիշեն։

Հայ նախարարների այդ նպատակադրումը և ձգտումը լիովին հասկանալի կդառնա, եթե մենք հիշենք, որ շատ ժամանակ չէր, որ հայ ժողովուրդը կորցրել էր իր քաղաքական անկախությունը. հայ նախարարական շրջանը դեռ չէր հաշտվել ստեղծված դրության հետ, վերքը թարմ էր, և բնական է, որ փորձեր պիտի կատարեին քաղաքական անկախության վերականգնման ուղղությամբ։

Կրոնափոխության առաջարկը

Պարսից արքունիքը նախապատրաստական աշխատանքները Հայաստանում ավարտելուց հետո անցնում է վճռական գործողության. հրովարտակ է ուղարկում Հայաստան և առաջարկում կրոնափոխություն։

Կրոնափոխությունը Տիզբոնի համար, իհարկե, ինքնանպատակ չէր, այլ՝ իր հիմնական նպատակին հասնելու միջոց, իսկ նրա հիմնական ցանկությունն էր՝ վերացնել Հայաստանի ներքին քաղաքական անկախությունը և ասիմիլյացիայի ենթարկել հայ ժողովրդին։ Հրովարտակը ստորագրված է եղել Հաղկերտի անմիջական խորհրդականը՝ հաղարապետ Միհրներսեհը։

Եղիշեն բերել է հրովարտակի համառոտ բովանդակությունը. հրովարտակում ասվում է, որ հայերը մոլորված են կրոնական ճիշտ ուղուց, իսկ այդ մոլորվածության համար աստվածների առաջ պատասխանատու է ինքը՝ թագավորը, ուստի անհրաժեշտ է, որ հայերը «ուղիղ հավատի դան»՝ ընդունեն զրադաշտությունը և հետևեն պարսիկներին։ Հրովարտակի վերջում առաջարկվում է հայ նախարարներին պատասխանել արքայից արքայի վերջնագրին կամ անձամբ ներկայանալ նրան։ Պարսից արքունիքը համանման հրովարտակներ է ուղարկում նաև Վրաստան և Աղվանից աշխարհ։

Ղազար Փարպեցին պարսից արքունիքին հայերի դեմ դրդռելու հարցում մեղադրում է Վասակ Սյունեցու փեսային՝ Վարազվաղանին։ Նա գտնում է, որ վերջինս զրադաշտությունը ընդունելով, ամբաստանել է հայ նախարարներին ու հոգևորականությանը և խորհուրդ տվել արքունիքին՝ կրոնափոխության առաջարկություն անել։

Անհավանական չէ, որ Վասակ Սյունու փեսան և նրա նման մի քանի այլ հայ բախտախնդիրներ հրահրած լինեն պարսից արքունիքին, սակայն հարևան երեք ժողովուրդներին կրոնափոխ անելու քաղաքականությունը Տիզբոնի որդեզրած վաղեմի ծրագրից էր բխում, որն այժմ նա ուզում էր իրագործել կյանքում։

Արքայից-արքայի Հայաստան ուղարկած հրովարտակը քննության առնելու համար Արտաշատում հրավիրվում է նախարարների և այլի ընկնող եկեղեցականների աշխարհաժողով։ Ժողովը ղեկավարում է կաթողիկոսական տեղապահ Հովսեի Վայոցձորեցին։

Ժողովականները միաձայն որոշում են մերժել արքունիքի առաջարկը։ Նրանք իրենց պատասխան նամակում հայտնում են, որ իրենք արքայից արքայի «հնազանդ ծառաներն են», կկատարեն նրա բոլոր առաջարկությունները, բայց կրոնական հարցերում չեն ենթարկվում նրան և ազատ են իրենց հավատը տնօրինելու ըստ իրենց խղճի։ Վերջում վճռականորեն հայտարարում են, որ ոչ մի բան չի կարող շեղել իրենց հավատքից՝ «ո՛չ հրնշտակք, ո՛չ մարդիկ, ո՛չ սուր և ո՛չ հուր, ո՛չ ջուր և ամենայն զինչ և դառն հարուածքս»։

Հայերի պատասխանը մեծ զայրույթ է առաջացնում Տիզբոնում։ Պարսից արքունիքի մոգերը, օգտվելով առիթից, սկսում են գրգռել Հազկերտին հայերի դեմ, հավատացնելով նրան, որ հայերը նման հանդգնության չէին դիմի, եթե մտադիր չլինեին ապստամբության և նախապես չուններին Բյուզանդիայի օգնության խոստումը։ Դադարած Հազկերտը հրամայում է՝ նորից հրովարտակ գրել Հայաստանի, Վրաստանի և Աղվանից աշխարհի ավագանուն և առաջարկել նրանց՝ անմիջապես ներկայանալ արքունիք։

Երեք երկրների ֆեոդալական վերնախավը քննության է առնում Հազկերտի այս առաջարկը և որոշում արքայից արքայի մոտ ուղարկել իրենց ներկայացուցիչներին։ Պարսկաստան մեկնած նախարարները 449 թ. դարնանը ներկայանում են Հազկերտին։ Վերջինս նրանց սառը ընդունելություն է ցույց տալիս, հանդիմանում իրենց հանդուգն պատասխանի համար և առաջարկում հավատափոխություն՝ սպառնալով, որ եթե նրանք չընդունեն իր առաջարկը, ապա զորք կուղարկի և քանդել կտա նրանց երկիրը և բնակչությանը վքշի դերություն։ Նախարարներից ոմանք փորձում են համոզել Հազկերտին, որ այդպիսի խստության չդիմի, մատնացույց անելով իրենց՝ հավատարիմ քաղաքացի լինելու և պատերազմների ժամանակ հայ, վրացի և աղվան զինվորականների ցուցաբերած քաջագործության փաստերը, սակայն արքայից-արքան անհողդողդ է մնում իր որոշման մեջ։

Գտնվելով անելանելի վիճակում, նախարարները խնդրում են ժամանակ տալ իրենց՝ խորհրդակցելու և պատասխանելու։ Առանձին քննության առնելով Հազկերտի առաջարկը, նրանք հարմար են գտնում դիմել կեղծ ուրացության, որպեսզի կարողանան դուրս գալ

ծուղակից, վերադառնալ հայրենիք և ապա որոշել իրենց հետագա անելիքները։ Նրանք հայտնում են արքունիքին, որ իրենք ընդունում են Հաղկերտի առաջարկը։

Նախարարների հավատափոխության մասին տված համաձայնությունն արքայից-արքան ընդունում է մեծագույն գոհունակությամբ։ Հաջորդ օրը կատարվում է զրադաշտական կրոնի հատուկ ծիսակատարություն։ Այնուհետև՝ հավատուրացներին տալիս են թանկարժեք նվերներ և յոթ հարյուր մոգերի հետ ուղարկում Հայաստան։ Հնարավոր անպատեհությունից խուսափելու համար, Հաղկերտը պատանդ է պահում Վասակ Սյունու երկու որդիներին և վրաց Աշուշա բդեշխին։ Եղիշեի վկայությունից երևում է, որ Հաղկերտը հանձնարարած է եղել նախարարներին՝ մի տարվա ընթացքում հավատափոխ անել Հայաստանի և Անդրկովկասի բոլոր բնակիչներին, եկեղեցիները վերածել կրակատների և երիտասարդությանը դաստիարակել զրադաշտական ոգով։

700 հոգուց բաղկացած քրմական բանակը, «անշեջ կրակը» վերցրած, ճանապարհ է ընկնում՝ իր միսիան կատարելու համար։ Քրմերը տարված էին մեծ հարստության տիրանալու ակնկալություններով։ Ըստ Եղիշեի տեղեկության, նրանք անդամ կռվում էին իրար հետ՝ թե ո՞վ որ շրջանի առաջնորդն է լինելու։ 449 թ. սեպտեմբերի վերջին նախարարները և մոգերը հասնում են Բաղրևանդի Անդ կոչված գյուղաքաղաքը։

Անդի միջադեպը և ապստամբության նախապատրաստությունը

Նախարարների ուրացության լուրն անմիջապես հասնում է Հայաստան։ Հայ հողևորականությունը, մինչև նախարարների ժամանումը, մեծ աշխատանք է տանում ժողովրդի մեջ։ Փաստորեն մինչև նախարարների գալը, Հայաստանում արդեն սկսվել էին մասսայական հուզումները։

Պատմիչները, դժբախտաբար, այս հուզումների մասին խոսում են ընդհանուր ձևով։ Սակայն Անդ ավանում տեղի ունեցած դեպքերին վերաբերող տեղեկությունները որոշակի պատկերացում են տալիս ժողովրդական հուզումների մասին։ Անդ ավան ժամանած քրմերը, «անթիվ բազմությամբ», փորձում են եկեղեցին վերածել աստուծանի։ Տեղի շինականները բահերով ու բրիչներով զինված, Ղևոնդ երեցի դլխավորությամբ, հարձակվում են քրմերի վրա, ջարդում նրանց և դուրս անում գյուղից։ Այդպես են վարվում նաև Զարեհավանում։ Այստեղ «տամիկ զօրացն բազմութիւնն» հարձակվում է նոր հիմնած մեհյանի վրա (բնագրում՝ մոխրանոցի) և քրմերին կոտորում։

Հայ ժողովուրդը պատրաստվում է վճռական դոտեմարտի։ Նղիշեն, խոսելով բնակչության մարտական տրամադրությունների մասին, հետևյալն է գրում. «Եվ իբրև այսպէս հաստատեցաւ կազմեցաւ, երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռին, ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց»։

Պատմիչների տեղեկություններից երևում է, որ ապստամբության սկզբում նախարարների մեջ որոշ անհամաձայնություն է եղել։ Եվ Վարդան Մամիկոնյանը, որ ապստամբության գլխավոր կազմակերպիչներից մեկն էր, տեսնելով նախարարներից ոմանց տատանումները, որոշել է հրաժարվել զեկավարությունից և հեռանալ Հայաստանից։ Սակայն, երբ նախարարները և մարզպան Վասակը, հավաքվել են խորհրդակցության և հայտնել իրենց անհողդողդ կամքը՝ հավատարիմ մնալու իրենց որոշմանը և ապստամբել, Վարդանը նորից ստանձնել է ապստամբության զեկավարությունը։

Ապստամբության կազմակերպչական աշխատանքները ընկրկբում տարվել են գաղտնի։ Այս շրջանում մարզպան Վասակ Սյունին մի կողմից աշխատել է հանդստացնել Հայաստանում գտնված պարսիկ մոգպետին՝ պարսկական արքունիքը չզրդռելու նպատակով, իսկ մյուս կողմից՝ մասնակցել է ապստամբության կազմակերպչական աշխատանքներին։

450 թ. գարնանից ապստամբության զեկավարները սկսում են համալրել հայկական զորամասերը և զինել նրանց։ Այդ միջոցառումներն այլևս թաքցնել հնարավոր չէր, ուստի և որոշում են հանդես գալ բացահայտ ձևով։ Մարզպանը սկզբում դիմադրում է, բայց հետո, նախարարների թախանձանքի տակ, նորից համաձայնվում է։ Նախարարներն ուխտում են չդավաճանել իրար և կռվել մինչև վերջ։ Պատմիչների տեղեկությունից երևում է, որ այդ ժամանակ պարսկական բռնակալության դեմ ապստամբել էր նաև դրացի աղվան ժողովուրդը և պարսից արքունիքը տասը հազարանոց մի բանակ է ուղարկել Աղվանք՝ ճնշելու ապստամբությունը։ Ռազմական գործողությունների հապաղումը Հայաստանում արդեն կարող էր վնասակար լինել, ուստի հայկական զորաբանակը, որի մեծամասնությունը գտնվում էր Ծաղկանց լեռներում, սկսում է իր ռազմական գործողությունները։ Նա հարձակվում է Հայաստանում գտնված պարսիկ կայազորների վրա, ոչնչացնում նրանց և զրավում ռազմական կարևոր հենակետեր։

Ապստամբության զեկավարները գիտակցում էին, որ փոքրիկ Հայ ժողովրդի համար դժվար է կռվել ռազմական այնպիսի խոշոր և կազմակերպված ուժի դեմ, ինչպիսին Սասանյան Պարսկաս-

տանն էր, ուստի և անհրաժեշտ են համարում պատգամավորություն ուղարկել Բյուզանդիա, Թեոդորոս կայսեր մոտ և նրանից ռազմական օգնություն խնդրել։ Պատգամավորության մեջ մտնում են երեք հեղինակավոր նախարարները՝ Վահան Ամատունին, Մերուժան Արծրունին և Հմայակ Մամիկոնյանը։ Հայերը միաժամանակ ռազմական դաշինք են կնքում աղվանական և վրացական ժողովուրդների հետ։

Ինչպես միշտ, այս անգամ ևս, հայերի՝ բյուզանդացիների վրա դրած հույսերը խաբուսիկ են դուրս գալիս։ Մինչև պատգամավորության Բյուզանդիա հասնելը Թեոդորոս կայսրը մահանում է, իսկ նրան փոխարինող Մարկիանոսը, (450—457) ընդունելով հայկական պատգամավորությանը, խորհրդակցում է Արևելքի բյուզանդական զորքերի հրամանատար Անատոլիոս զորավարի հետ և կտրականապես մերժում հայերի խնդրանքը, հայտարարելով, որ չի ցանկանում խախտել պարսկա-բյուզանդական 422 թ. 50-ամյա հաշտության պայմանագիրը։ Դեռ ավելին. Անատոլիոս զորավարի միջոցով նա գաղտնի հայտնում է պարսից արքունիքին, որ հայերը պատրաստվում են ապստամբության և դիմել են իրեն օգնությունը և ինքը մերժել է։

Այսպիսով, հայ ապստամբներին մնում էր գործել իրենց սեփական ուժերով և կտրել հույսերը Բյուզանդիայից։ Հաբկական զորաբանակը, պարսկական կայազորները ոչնչացնելուց և փարեր ամրությունները գրավելուց հետո, շարունակում է համայրել իր շարքերը և դինվել։

Հայերի օգնությունն աղվան ժողովրդին

Պարսկական զորքերն իրենց ռազմական գործողությունները Աղվանքում՝ ապստամբների դեմ սկսում են 450 թ. ամռանը։ Ապրստամբության նախորյակին պարսկական մի զորաբանակ, Սեբոխտի հրամանատարությամբ, որը գտնվում էր Թիֆլիսում, շարժվում է Աղվանք՝ առաջադրանք ունենալով նախ հնշիլ Աղվանքի ապստամբությունը, իսկ այնտեղից շարժվել Հայաստան։ Պարսկական մի այլ զորաբանակ, Միհրներսեհի գլխավորությամբ, շարժվում է Փայտակարան՝ Հայաստանի վրա հարձակվելու համար։ Այդ ժամանակ աղվանները պատգամավորություն են ուղարկում Հայաստան և օգնություն խնդրում։

Հայերը որոշում են կատարել իրենց դաշնակցային պարտականությունը և օգնել մոտիկ հարևանին։ Նրանք հայկական բանակը բաժանում են երեք մասի, որոնցից մեկը ներշապուհ Արծրունու հրամանատարությամբ շարժվում է հարավ՝ Հեր և Ջարևանդ գա-

վառները, պաշտպանելու հարավային սահմանը պարսկական անակնկալ հարձակումներից, երկրորդ զորամասը, Վարդան Մամիկոնյանի հրամանատարությամբ, շարժվում է Աղվանք՝ օգնության, իսկ երրորդ զորամասը, Վասակ Սյունու դլխավորությամբ, մնում է Այրարատյան նահանգում։ Վասակ Սյունին, որպես դիվանագետ անձնավորություն, ընտրում է քաղաքականության նոր ընթացք. մի կողմից՝ թելադրել պարսկական տոքունիքին հրաժարվելու իր բռնության քաղաքականությունից, իսկ մյուս կողմից՝ մեղմացնել տեղում ժողովրդի հուզումները և թույլ չտալ նրան անհավասար գոտեմարտի բռնվել պարսկական հզոր զորաբանակների հետ։

Աղվանից աշխարհին օգնության գնացած հայկական բանակը թշնամուն հանդիպում է խաղխաղ կոչվող քաղաքի մոտ (Ներկայիս Ղաղախը), որը նախկին աղվանական թագավորների ձմեռանոցն էր։ Հայկական զորաբանակին են միանում աղվանական զորքերն ու պարտիզանական ջոկատները։

Չնայած նրան, որ պարսկական բանակը թվական մեծամասնություն ուներ և լավ էր զինված, այնուամենայնիվ, Վարդան Մամիկոնյանը որոշում է ճակատամարտ տալ խաղխաղի դաշտավայրում։ Նա հարմար դասավորում է իր և դաշնակից աղվանական զորամասերը, երբեք կողմից վճռական հարվածներ տալիս թշնամուն, հաղթում նրան և փախուստի մատնում։

Խաղխաղի ճակատամարտը շահելուց հետո հայկական բանակը շարժվում է դեպի Ծորա պահակը (Ալանաց դուռը), ուր գտնվում էին պարսկական խոշոր կայազորներ։ Նա ջարդում է պարսկական այս զորամասերը և ազատում ոչխարեղ գտնվող գերիներին։ Ծորա պահակի վերակացությունը Վարդանը հանձնում է Վահան անունով մի աղվան իշխանի։ Նա բանակցություններ է վարում և փոխօգնության դաշինք կնքում հոների հետ, որոնք խոստանում են կռվել Պարսկաստանի դեմ։

Շուտով սուրհանդակ է գալիս Հայաստանից Վարդան Մամիկոնյանի մոտ և հայտնում նրան Վասակ Սյունու որդեգրած նոր քաղաքականության մասին։ Վարդանը իր բանակով անմիջապես վերադառնում է Հայաստան 450 թվականի աշնանը։ Մոտենում էր ձմեռը, պահեստներում անհրաժեշտ քանակությամբ հաց և սերնդամթերք չլինելու պատճառով, Վարդանը հարկադրված է լինում զինվորներին բաց թողնել իրենց տները՝ գարնանը նորից հավաքելու նպատակով։

Վարդանի վերադառնալուց հետո պարսկական իշխանության

դեմ պայքարող նախարարները հավաքվում են խորհրդակցության և որոշում չհետևել Վասակ Սյունու քաղաքականությանը։ Կազմվում է կառավարություն. Վարդանին է հանձնվում սպարապետության պաշտոնը, Վահան Ամատունուն նշանակում են հաղարապետ, Խորեն Խոռխոռունուն՝ մաղխազ, իսկ Հովսեփ կաթողիկոս Վայոց-ձորեցուն՝ մեծ դատավոր։

Ավարայրի ճակատամարտը

Պարսից արքունիքը ուշադիր հետևում էր Հայաստանում ծավալված իրադարձություններին։ Ստեղծված լարված դրությունը փոքրինչ մեղմելու դիտավորությամբ, արքունիքը հրովարտակ է ուղարկում Հայաստան և հայտարարում, որ հավատափոխության պարտադրանքը վերանում է, հարկերը պիտի թեթևացվեն և այլն։ Սակայն ժողովրդական հուզումներն այնպիսի լայն չափեր էին ընդունել և ապստամբության գաղափարն այնքան էր մասսայականացել, որ անհնարին էր ժողովրդին կանգնեցնել կես ճանապարհին։ Ապաստամբներն ամբողջ ձմռանը նախապատրաստվում էին վճռական դոտեմարտի։

Գարունը բացվելուն պես պարսկական մի խոշոր բանակ, Մուշկան Նյուսալավուրտի հրամանատարությամբ, շարժվում է դեպի Հայաստան։ Պարսկական զորքերը հասնում են Հեր և Զարեվանդ գավառները, իսկ այնտեղից ասպատակելով՝ մտնում Արտազ և ճամբարում Տղմուտ գետի ափին, Ավարայրի դաշտավայրում։

Հայկական այրուձին, Վարդան Մամիկոնյանի ղեկավարությամբ, Նախիջևանի վրայով շտապ շարժվում է Արտազ և միանում հայկական հարավային բանակին։ Կազմվում է 66 000 հոգուց բաղկացած մի զորաբանակ՝ մեծ մասամբ շինականներից և քաղաքային ռամիկներից։ Պետք է ասել, որ Վարդանի բանակն այնքան էլ լավ զինված չի եղել. շինականները վերցրել էին այն, ինչ ճարել էին։ Զորքի մի մասը ձիավոր էր, մյուս մասը՝ հետևակ։

Հայ ժողովրդի լայն խավերը լցված էին թշնամուն հաղթելու հաստատուն վճռականությամբ։ Ջենք էին վերցրել և կռվի դուրս եկել ազնվականները, շինականները, արհեստավորները, քաղաքային ռամիկները և նույնիսկ՝ հոգևորականությունը։ Ապստամբությունը համաժողովրդական, համազգային բնույթ ուներ։ Առանձին նախարարների շարժմանը չմասնակցելն ամենևին չի բացառում աղատագրական պայքարի համաժողովրդական, մասսայական բնույթը։ Ճակատամարտի նախօրյակին Վարդան Մամիկոնյանը, իսկ հայ եկեղեցականներից՝ Հովսեփ կաթողիկոսը, Վեռնդ երեցն՝

իրենց քարոզներով աշխատում են ոգևորել բանակը, ներշնչել նրան՝ անվախ դիմադրավելու թշնամուն։

Նշենք բերել է Հովսեփ Վայոցձորեցու, Ղևոնդի և Վարդան Մամիկոնյանի՝ հայ զինվորությանն ուղղած ճառերը։ Վարդանը, դիմելով իր զինվորներին, հիշեցնում է նախ նրանց փառավոր անցյալը, նրանց սխրագործությունները։ «Մենք իրար հետ շատ ճակատամարտեր ենք տվել, եղել է, որ մենք քաջապես հաղթել ենք թշնամիներին և եղել է, որ սրարտվել ենք, սակայն շատն այն է, որ մենք հաղթող ենք եղել, քան պարտվողներ։ Ապա նա անձնվեր հայրենասիրության և մարտական անվեհերության է հրավիրում իր զինվորներին, որի բարոյական իմաստը խտացված կերպով ձևակերպված է՝ «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն» նշանաբանի մեջ։ Փախչողը, ասում է Վարդանն իր ճառում, անողոք մահվան է ենթակա, իսկ քաջությամբ ընկնողը՝ հավիտենական անուն է վաստակում։ Նա կոչ է անում զինվորներին՝ կռվել անձնուրաց արիությամբ։

Ճակատամարտը տեղի է ունենում Ավարայրի դաշտում, 451 թ. մայիսի 26-ին։ Վարդան Մամիկոնյանը հայկական բանակը բաժանում է չորս գնդի. կենտրոնական գնդի հրամանատար է նշանակում Ներշապուհ Արծրունուն, աջ թևինը՝ Խորեն Խոսխուռունուն, ձախ թևը ինքն է վերցնում, իսկ վերջապահ զորամասի հրամանատար է նշանակում իր եղբորը՝ Համազասպին։ Յուրաքանչյուրի կողքին նշանակում է մի քանի օգնականներ։

Պարսից զորքն ընդունում է մարտը՝ դասավորվելով դաշտի լայնությամբ, Տղմուտի մյուս ափին։ Հարձակումն սկսում է հայկական զորքը, որն անցնում է Տղմուտ գետը և գրոհում թշնամու վրա։ Վարդանն իր գլխավոր հարվածն ուղղում է մատյան (արքունական) գնդի վրա, որը պարսից բանակի ամենից մարտական զորամասն էր։

Նշենք, որպես ճակատամարտի ականատես, դեղարվեստական բացառիկ վարպետությամբ և զգացմունքով է նկարագրել Ավարայրի ճակատամարտը։ «Եվ այսպես պատրաստվելուց հետո երկու կողմերն էլ սրտմտությամբ և մեծ բարկությամբ լցված, գազանային զորությամբ հարձակվեցին իրար վրա։ Կողմերի բարձրացրած աղմուկն ու աղաղակը լսվում էր ինչպես խուռն ամպերի ճայթմունքը։ Ձայների դղրդյունից շարժվում էին լեռների թարանձավները։ Բազմաթիվ սաղավարտների և զրահի փայլը կարում էր արեգակի ճառագայթների շողը։ Բազմաթիվ սրերի շողշողումներից ու բազմաթուրն նիզակների ճոճանքից կարծես կրակ էր փայլփլում։ Ո՞վ կա-

բող է նկարագրել ահաղդու ձայների այս մեծ տագնապը, իրար զարկող վահանավորների թնդյունը և աղեղների լարերի ճայթյունը, որոնք առհասարակ խլացնում էին բոլորին»։

Հայկական զորքի հարվածների տակ պարսից գունդը սկզբում նահանջում է։ Թվում է, թե հայերի հաղթանակը անվիճելի է։ Բայց շուտով պարսկական զորքերը աջյանի մեջ են առնում Վարդան Մամիկոնյանի զորամասը։ Սկսվում է կատաղի կռիվ. երկու կողմերից ընկնում են բազմաթիվ զինվորներ։ Մարտը տևում է մինչև երեկո։ Այստեղ հերոսի մահով ընկնում է Վարդան Մամիկոնյանը։ Հայկական զորքերը, կորցնելով իրենց հրամանատարին, մութն ընկնելիս թողնում են պատերազմի դաշտը և նահանջում։

Ճակատամարտից հետո Ավարայրի դաշտավայրը սրտամորմոք մի տեսարան էր ներկայացնում. «Ժամանակը գարնանային էր,— գրում է Եղիշեն,—ծաղկալից դաշտը արյունով ծածկվեց։ Մարդու սիրտը կտրատվում, աղիքները գալարվում էին, երբ, մտնավանդ, տեսնում էր սպանվածների բազմաթիվ կույտերը, խոցվածների մռմռացը, ջարդվածների մռնչյունը, վիրավորների թավալգոր սողալն ու շարժվելը... սիրելիների ողբը, մերձավորների սուգը և բարեկամների վայնասունը»։

Ըստ պատմիչների տեղեկության, Ավարայրի ճակատամարտում պարսկական բանակից սպանվում են 3544, իսկ հայկականից՝ 1036 հոգի։ Հավանական է, որ հայրենասեր պատմիչները պարսիկ սպանվածների թիվը չափազանցրել են։

Հայագիտության մեջ վիճի առարկա է դարձել այն հարցը, թե Ավարայրի ճակատամարտը հայերին հաղթանա՞կ, թե պարտություն բերեց։ Հայազետներից ոմանք Ավարայրի ճակատամարտը հաղթություն են համարում, ոմանք պարտություն։ Ճակատամարտի ճիշտ գնահատականը տվել է ժամանակակից պատմիչ Եղիշեն. «Ոչ թե մի կողմը հաղթեց, և մյուսը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով, երկու կողմերն էլ պարտություն կրեցին։ Բայց որովհետև հայոց զորավարը ընկել էր մեծ պատերազմում, չկար ղեկավարող մեկը, որի շուրջը համախմբվեին մնացած գնդերը... ուստի ցրվեցին»։

Ավարայրը հայերի համար ռազմական պարտություն էր, սակայն քարոզչական հաղթանակ։ Ավարայրի ճակատամարտով պատերազմը չվերջացավ։ Ապստամբ հայկական զորամասերը, վերադասավորելով իրենց ուժերը, փոքրիկ ջոկատներով շարունակեցին պարտիզանական կռիվներ մղել պարսկական զորքերի դեմ և խորտակիչ հարվածներ հասցրին նրանց։ Պարտիզանական ուժեղ կռիվ-

ներ ծավալվեցին Տայքում, Արցախում, Տմորիքում և այլ վայրերում։ Պարտիզանական կռիվների ընթացքում հայ ժողովուրդը ցուցաբերեց անձնազոհության և հերոսության օրինակներ։ Հիշենք նրանցից մի քանիսը։ Պարսկական խոշոր մի զորամաս շրջապատում է Կապույտ բերդը։ Բերդում ամրացած է լինում նաև հայ պարտիզանական մի ջոկատ։ Պարտիզանները դուրս են դալիս բերդից, հարձակվում պարսիկների վրա, կոտորում նրանցից շատերին, իսկ «զմնացեալսն փախստական ի բանակն արկանէին»։ Տմորիքում ամրացած պարտիզանական մի զորամաս, երբ լսում է պարսից զորքերի՝ տեղում կատարած վայրագությունները, հարձակվում է նրանց վրա և «յանխնա կոտորելով նախճիրս արեան գործէին»։ Խաղտյաց լեռներում ամրացած պարտիզանական ջոկատները, երբ տեղեկանում են, որ պարսիկները քանդում են հայկական գյուղերը, հարձակվում են Տայքի դավառում գտնվող պարսկական զորքերի վրա և կոտորում նրանց։ Այդ դավառի երկու գյուղում պարսիկները այրել էին տեղի եկեղեցիները։ Պարտիզանները, վրեժխնդրությամբ լցված, հարձակվում են պարսկական զինվորների վրա, կոտորում «զբազումս ի նոցանէ և զմնացեալսն փախստական հանին յաշխարհէն»։

Սաեփանոս Օրբելյանի հաղորդած մի տեղեկությունից երևում է, որ Ավարայրի ճակատամարտում, Վարդանի զորաբանակի կազմում, դանվել է նաև Արցախի հայկական զորամասը և կռվել թշնամու դեմ։ Ճակատամարտից հետո Արցախի զինվորականները ցանկացել են վերադառնալ իրենց բնակավայրը Վայոց Ձորի վրայով։ Պարսկական խոշոր մի հեծյալ զորագունդ, Աթաշխուդա անունով մեկի հրամանատարության տակ, հետապնդել է վերադարձող արցախցիներին և շրջապատման մեջ առել «ամերձ ի բլուրն, որ մեծամեծ վիմօք պատեալ էր վասն ամրութեան ի գիտամիջին Եղեգեաց և Մողանի»։ Մատնացույց արված ամրությունը, ինչպես պարզված է, հանդիսանում է ներկայիս Եղեգնաձորի կենտրոնում գտնվող բլուրը։ Արցախի հայ հայրենասերները կռվում են պարսկական կերպարանց ուժերի դեմ և ընկնում հերոսի մահով։ Հետագայում զոհված հայ մարտիկների ոսկորները թաղելու է գալիս Գյուտ կաթողիկոսը և հողին հանձնում այն վայրում, ուր նրանք ընկել էին։ Եղեգնաձորի կենտրոնում գտնվող բլուր-ամրությունը փաստորեն Վարդանաց նահատակների ոսկորն ամփոփող մի տակ ճանաչված հուշարձանն է այդ հողի վրա։

Պարսիկ հրամանատարությունը ճակատամարտից անմիջապես հետո ձերբակալում է Հայաստանի աշքի ընկնող մի շարք իշխաններ-

րի ու եկեղեցականների և ուղարկում Պարսկաստան՝ իրրև քաղաքական հանցագործներ։ Որպես պատանդ, նա Պարսկաստան է ուղարկում Մամիկոնյան, Կամսարական և ապստամբության մասնակցած մյուս նախարարների երեխաներին, այդ թվում նաև Վարդանի եղբայր Հմայակի երեք որդիներին՝ Վահանին, Վասակին ու Արտաշեսին։

Ավարայրի ճակատամարտից հետո Մուշկան Նյուսալավուրտը արքունիքին տեղեկացնում է պատերազմի արդյունքների և նոր սկսած պարտիզանական կռիվների մասին։ Ստեղծված այս ծանր իրադրության մեջ, արքունիքը հարկադրված է լինում իր բանակը ետ կանչել Հայաստանից և սիրաշահելու քաղաքականություն ընտրել։

Պարսից արքունիքը մարզպանության պաշտոնից հեռացնում է Վասակ Սյունուն և նրա փոխարեն նշանակում Ատրորմիզդ անունով մի պարսիկի, թույլատրում է բռնությամբ մոգություն ընդունած հայերին նորից վերադառնալ իրենց նախկին հավատին, որոշ չափով թեթևացնում է հարկային լուծը, տնտեսությունը լքած, հեռացած մարդկանց թույլ է տալիս վերադառնալ իրենց տները, և, վերջապես, հայկական այրուձին, որ գտնվում էր Պարսկաստանում, վերադարձնում է Հայաստան։

Ավարայրի ճակատամարտից հետո պարսիկ իշխանությունները դատում են ձերբակալված և Տիզբոն տարված ապստամբության ղեկավարներին։ Տիզբոնում ձերբակալվում է նաև Վասակ Սյունին, որը կանչվել էր որպես վկա։ Վախենալով, որ եթե նրանց թույլ տրվի վերադառնալ Հայաստան, նորից կարող են հրահրվել ժողովրդական հուզումները, որոշում են անպատիժ բաց չթողնել. 13 նախարարներ և 8 եկեղեցականներ դատապարտվում են ցմահ բանտարկության և աքսորվում Վրկանից աշխարհ։ Այստեղ էլ նրանք մնում են մինչև 454 թվականի պարսկա-հոնական պատերազմը։ Այդ պատերազմի ընթացքում աքսորականներին նրանք տեղափոխում են Ասար աշխարհը, ուր եկեղեցականներին կոտորում են, իսկ աշխարհականներին՝ թույլ տալիս վերադառնալ հայրենիք։

Ավարայրի ճակատամարտի նշանակությունը

Ավարայրի ճակատամարտը հայ ազատագրական պայքարի պատմության փայլուն էջերից մեկն է։ Ազատասեր հայ ժողովուրդն այդ պայքարում ցուցաբերել է անձնուրաց պայքարի ու հերոսության օրինակներ։ Հայ ժողովուրդն Ավարայրում վճռական մարտի դուրս եկավ օտարերկրյա բռնակալի դեմ և հերոսաբար կռվեց իր ազատության ու անկախության համար։

Ազատագրության համար թշնամու դեմ կռվեցին հասարակության բոլոր խավերը՝ շինականները, իշխանները, հոգևորականությունը և այլն։ Ժողովուրդն ապստամբության ղեկավար Վարդան Մամիկոնյանին ու նրա զինակիցներին դասեց հայրենիքի համար զոհված հերոսների շարքը և հատուկ տոն սահմանեց նրանց հիշատակին։

Ժամանակակից պատմիչները՝ Եղիշեն և Ղազար Փարպեցին, իրենց պատմությունների մեջ արձանագրեցին այն զորավարների անունները, որոնք ընկան Ավարայրում։ Պատերազմում ընկած հարյուրավոր հայրենասեր շինականների անունները մնացին հավաքական մի անվան տակ՝ «Հայրենիքի նահատակներ»։

Ուշադրավ է այն փաստը, որ Ավարայրի ճակատամարտից շատ չանցած, մի հայ ուխտավոր, Երուսաղեմի հայ վանքերին պատկանող շենքերից մեկում իր ծախսով պատրաստել է տվել խաչանկար մի հատակ և բոլորաձև երկաթագրով գրել տվել, որ իր հուշարձանը նվիրում է այն հերոսների հիշատակին, որոնք ընկել են պատերազմի դաշտում և անուններով հայանի չեն։

Վասակի կապակցությամբ հայագիտության մեջ սուր վեճեր են առաջացել։ Ն. Ադոնցն իր «Վասակ մարզպանը պատմաբանների դատաստանի առաջ» խորագրով ռուսերեն ուսումնասիրության մեջ աշխատել է արդարացնել նրան այն հիման վրա, որ Վասակը շրջահայաց դիվանագետ լինելով, նախապես խմացել է Բյուզանդիայի բացասական դիրքը հայերի ապստամբության նկատմամբ և ուղեցել է խույս տալ արյունահեղությունից։ Հայագետներից ոմանք էլ, հիմնվելով Եղիշեի և Փարպեցու հաղորդած տեղեկությունների վրա, Վասակին համարում են դավաճան։ Կան նաև պատմաբաններ, որոնք գտնում են, որ Վասակ Սյունին որպես խոշոր դիվանագետ համոզված էր, որ հայկական փոքրաթիվ զորքերն առանց ուրիշի օգնության ի վիճակի չեն լինի դիմադրելու պարսկական խոշոր զորաբանակին, անտեղի էր համարում ապստամբությունը։

3. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ 481—484 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Տիզբոնի քաղաքականությունը և Վահան Մամիկոնյանը

Ավարայրի ճակատամարտից հետո ևս պարսից արքունիքը շարունակում էր Հայաստանի ներքին քաղաքական անկախությունը վերացնելու իր նախկին քաղաքականությունը։

Պարսկական արքունիքն ամեն կերպ աշխատում էր թշնամանք սերմանել հայ նախարարների շրջանում, պառակտել ու իրար դեմ լարել նրանց։

Պարսկական օրիենտացիա ունեցող մի քանի հայ իշխաններ, որոնց հայ պատմիչները «դասք ուրացող» անունն են տալիս, այժմ համախմբվում են Գաղիշո Մաղխազի և Գոլիհոն Սյունի իշխանների շուրջը։ Սակայն երկրում ստվար թիվ էին կազմում երկրի անկախության համար մաքառող հայ իշխանները, որոնք քաղաքական հարմար ժամանակի էին սպասում՝ պարսկական բռնակալության դեմ ապստամբության դրոշը նորից բարձրացնելու համար։ Այդ խմբի մեջ մտնում էին գլխավորապես Ավարայրում մասնակցած նախարարական տների զինվորականությունը՝ Մամիկոնյանների և Կամսարականների գլխավորությամբ։ Նախարարների այս խմբին հարում էր նաև Գյուտ կաթողիկոսը (461—478)։

Ղազար Փարպեցու մի տեղեկությունից երևում է, որ հակապարսկական այս խումբը գաղտնի բանակցություններ է վարելիս եղել բյուզանդական կայսր Լևոնի հետ և նրանից զինվորական օժանդակություն խնդրել։ Բյուզանդիան այս անգամ խոստացել է օգնել հայերին, բայց սովորականի նման խաբել է ու ձգձգել։

Ժողովրդա-ազատագրական շարժման ղեկավարի դերում այժմ հանդես են գալիս Վահան Մամիկոնյանը՝ Վարդան Մամիկոնյանի եղբոր՝ Հմայակի որդին և Սահակ Բագրատունին։ Վահան Մամիկոնյանը փոքր հասակում իր երկու եղբայրների հետ երկար տարիներ գտնվում էր պատանդության մեջ, պարսկական արքունիքում։ Պատանդությունից նա ազատվում է վրաց Աշուշա թագեշխի միջնորդությամբ, որը Վահանի մորաքրոջ՝ Անուշվռամի ամուսինն էր։ Վահանը, վերադառնալով Տիզբոնից, բնակվում էր Աշուշա թագեշխի տանը, ուր և դաստիարակվում էր իր մոր՝ Զվիկի անմիջական հսկողության տակ։ Հասուն տարիքում Վահանը մտնում է քաղաքական ասպարեզ և մեծ հեղինակություն ստեղծում իր շուրջը։ Փարպեցին նրան համարում է «այր մտացի, առողջախորհուրդ և բարեսէր»։

Վահան Մամիկոնյանը, պատանդության տարիներին, իր մասին բավական լավ կարծիք է ստեղծում պարսկական արքունիքում։ Պատանդությունից վերադառնալուց հետո, սակայն, որոշ հայ դավաճաններ, աշխատելով խախտել նրա դիրքը պարսկական արքունիքում, սկսում են ամբաստանել նրան արքունիքի առջև։ Վահանն իր շուրջը ստեղծված կասկածները փարատելու նպատակով անձամբ գնում է Տիզբոն Պերոզ թագավորի մոտ, տանելով իր հետ մեծարժեք նվերներ։ Պերոզը Վահանին սիրալիր ընդունելություն է ցույց տալիս և նշանակում Հայաստանի հարկահավաքի պաշտոնում՝ նրան օգնական տալով Վրիկ անունով մի ասորու։

Հայաստան վերադառնալուց հետո Վրիկը ամբաստանում է

նրան այն բանում, որ իբր Վահանը հավաքած ոսկի դրամը մատադիր է բյուզանդացիներին տալ և դաղտնի ապստամբություն է պատրաստում Պարսկաստանի դեմ։ Այդ ամբաստանությունը հերքելու համար Վահանը հարկադրված է լինում կրկին անդամ դնալ Տիզբոն՝ իր հետ տանելով նաև հավաքած ոսկին։ Նա աշխատում է Պերոզին համոզել, որ ինքն այնքան անհեռատես չէ, որ չտեսնի Պարսկաստանի մեծ ուժը և համարձակվի ապստամբել այդ աշխարհակալ երկրի դեմ։ Այսպիսով, Վահանը նորից շահում է Պերոզի վստահությունն ու վերադառնում Հայաստան՝ իր նախկին պաշտոնին։

V դարի 60-ական թվականներին պարսկական արքունիքը նորից որոշում է սկսել Հազկերտի ձեռնարկած կրոնափոխության և ձուլման քաղաքականությունը Հայաստանում և Անդրկովկասում։ Նորից նա ծանրացնում է հարկերը Վրաստանում ու Հայաստանում և զեկավար պաշտոններից հեռացնում հայրենասեր անձանց։ Հայկական և վրացական քաղաքական զեկավար շրջանները այս ծանր իրադրության մեջ ավելի են մոտենում իրար և ապստամբելու հաստատ որոշում ընդունում։ Ղազար Փարպեցու վկայությունից երևում է, որ հայերի և վրացիների մեջ կնքված է եղել ռազմական դաշինք։ Կողմերը երդվել են՝ «չդրժել իրենց ուխտը»։

Պարսից արքունիքը շուտով գաղտնի տեղեկություն է ստանում, որ Հայաստանում ծայր են առել ժողովրդական հուզումներ։ Արքունիքի առջև ամբաստանվում է Գյուտ կաթողիկոսը, որն իբր թե գաղտնի բանակցություններ է վարում Բյուզանդիայի հետ և ժողովրդին դրդում ապստամբության։ Պերոզը Գյուտ կաթողիկոսին կանչում է Տիզբոն և բացատրություն պահանջում նրանից։ Կաթողիկոսը չի ժխտում Բյուզանդիայի հետ ունեցած իր հարաբերությունները, սակայն աշխատում է հավատացնել, որ դրանք քաղաքական բնույթ չունեն։ Այնուամենայնիվ, Պերոզը Գյուտին զրկում է կաթողիկոսական պաշտոնից և պահում Տիզբոնում։

Սասանյան Պարսկաստանի դեմ շուտով ապստամբություն է բռնկվում Վրաստանում. վրաց Վախթանգ թագավորը սպանում է պարսից Վազգեն իշխանին և երկրից դուրս անում պարսիկ կուսակալներին։ Պարսից արքունիքը՝ այս լուրն առնելուն պես, հրամայում է Հայաստանի և Աղվանից աշխարհի իր զորամասերի հրամանատարներին՝ շարժվելու Վրաստան և ճնշելու ապստամբությունը։

Հայաստանում այդ ժամանակ մարզպան էր նշանակված Ատրշնասպ անունով մի պարսիկ, իսկ զորահրամանատարն էր Վեհվեհնամը՝ դարձյալ պարսիկ։ Սրանք հավաքում են Հայաստա-

նում իրենց ունեցած զորամասերը և Շիրակի վրայով շարժվում Վրաստան։

Հայաստանի պարսկական զորամասերը կազմված էին գլխավորապես հայ զինվորներից, որոնք, ըստ Փարպեցու տեղեկության, որոշում են չենթարկվել պարսից հրամանատարությանը, չգնալ հարևան Վրաստանի վրա և ապստամբել։ Նրանք դիմում են Վահան Մամիկոնյանին և խնդրում իր վրա վերցնել ապստամբության ղեկավարությունը։ Վահան Մամիկոնյանը սկզբում հրաժարվում է այն պատճառաբանությամբ, որ իրենք փոքր ուժ ունեն և դժվար է դուրս գալ պարսից խոշոր պետության դեմ, մանավանդ, որ ոչ մի հույս չի կարելի դնել բյուզանդացիների վրա, որոնք «հարանց մերոց ուխտեցին երդմամբ և ստեցին»՝ ակնարկելով, անշուշտ Վարդանանց պատերազմը։ Նա նշում է նաև այն մասին, որ Վրաստանը փոքրիկ մի երկիր է, փոքր թվով այրուձի ունի և չի կարող էական դեր խաղալ։ Բայց երբ ապստամբության կողմնակից հայ զինվորականները պնդում են, Վահանը համաձայնում է։ Որոշվում է, լույսը բացվելիս, ձերբակալել պարսիկ մարզպանին և զորահրամանատարին, և սկսել ռազմական գործողությունները պարսից դեմ։

Ապստամբության որոշումը կայացնող հայ զինվորականների մեջ գտնվում է դավաճան մեկը՝ Գաղիշո Խոռխոռունին, որը պարսիկ մարզպանին և զորահրամանատարին դաղտնի հայտնում է պատրաստվող ապստամբության մասին։ Մարզպանը և պարսիկ զորահրամանատարը, համոզված լինելով, որ Շիրակի պարսից բանակի մեջ չկան իրենց հավատարիմ կողմնակիցներ, դիշերով փախչում են Անի ամրոցը՝ իսկ այնտեղից դեպի Ատրպատական։ Ապստամբ հայ զինվորականները հետապնդում են փախչողներին, բայց չեն կարողանում հասնել նրանց։ Բռնում են միայն Գաղիշո Խոռխոռունն և նրա հետ դատաստան տեսնում՝ որպես հայրենիքի դավաճանի։

Ապստամբները կազմում են կառավարություն։ Մարզպան է նշանակվում Սահակ Բագրատունին, իսկ սպարապետ՝ Վահան Մամիկոնյանը։ Կառավարության մյուս անդամների մասին տեղեկություններ մեզ չեն հասել։ Մայրաքաղաք են ընտրում Դվինը, որը Այրարատյան նահանգի խոշոր կենտրոններից մեկն էր այդ ժամանակ։

Ակոռի ճակատամարտը և պարսկական բանակի ջախջախումը

Հայաստանի նախկին մարզպան Ատրվշնասպը, Ատրպատականի պարսկական զորամասի գլուխ անցած, շարժվում է Հայաստանի վրա, ցանկանալով ապստամբությունն արագ խեղդել իր սկզբնավորության մեջ և թույլ չտալ նրան ծավալվել։

Դվինում լուր է ստացվում, որ թշնամու զորամասերը մոտենում են Արաքսին։ Անմիջապես հավաքվում է հայկական փոքրիկ մի զորամաս և շարժվում պարսկական բանակի դեմ։ Հայոց զորքի հրամանատարներ են նշանակվում Վասակ Մամիկոնյանը, Արշավիր և Ներսեհ Կամսարականները և Ատոմ ու Առատոմ Գնունիները։

Հայկական զորքը թշնամուն հանդիպում է Արաքսի ափին՝ Նախիջևանի Վարազկերտ գյուղի մոտ։ Հայկական առաջապահ զորամասի հրամանատար էր նշանակված Վասակ Մամիկոնյանը, որը խիզախ ու ճարպիկ մի զինվորական էր։ Նա հետախուզության նպատակով դիմում է համարձակ մի քայլի՝ մի քանի հոգով գնում է պարսկական բանակի ճամբարը՝ իրրև բանակցող պատգամավորություն։ Ատրվշնասպը սկզբում չի ընդունում Վասակի պատգամավորությունն այն պատճառաբանությամբ, թե՝ «Աշխարհ մի ապստամբ առ իս զի՞նչ պատգամ յզենս», բայց հետո բանակցում է։ Վասակը, պարսկական բանակում եղած ժամանակ, մոտիկից ուսումնասիրում է բանակի կազմը, զինվածությունը և ռազմական այլ տեղեկություններ հավաքելուց հետո, ճարպկորեն դուրս է փախչում պարսկական ճամբարից և վերադառնում յուրայիններին մոտ։ Հայկական զորքի հրամանատարությունը խորհրդակցում է և խուսափում բաց ճակատամարտ տալուց։ Արարատյան դաշտում և խնդիր գնում կռիվը տեղափոխել Մասիսի լեռնոտ փեշերը։ Նրանց հաջողվում է փոքրիկ կռիվներով պարսիկներին քաշել Մասիսի լանջերը և այստեղ, Ակոռի գյուղի մոտ, ճակատամարտ տալ։

Ճակատամարտից առաջ հայկական զորքը բաժանվում է չորս զորաբաժնի։ Ըստ Փարպեցու տեղեկության, պարսիկ մարզպանը, տեսնելով հայկական փոքրիկ զորագունդը, ծիծաղելով՝ նրանց «դեպի մահ դնացող խելագարներ» է անվանում։ Պարսկական մեծամիտ հրամանատարը, սակայն, շարաշար սխալվում էր։ Հայկական զորքն այնպիսի շեշտակի հարձակում է գործում պարսկական բանակի վրա և խուճապ առաջացնում նրա շարքերում, որ թշնամու զորքը դիմում է փախուստի։ Հայոց զորամասերը հետապնդում են

պարսիկներին և կոտորում նրանց։ Սպանում են նաև մարզպան Ատրվշնասպին։

Մինչև հաղթող հայ զինվորության Դվին վերադառնալը, նախապես կռվի դաշտից Դվին փախած հայ զինվորներից ոմանք էլ էին տարածել, որ իբր հայկական ողջ զորամասը ոչնչացել է կրռվում, իսկ հրամանատարները՝ սպանվել։ Մեծ է լինում բոլորի տխրությունը, երբ հաղթանակով մայրաքաղաք է վերադառնում հայ զինվորությունը. «Օրն այն լինէր ուրախութիւն մեծ»,— ասում է Փարպեցին։

Հաջողությամբ են վերջանում ռազմական գործողությունները նաև հարևան Վրաստանում։ Վրաց հայրենասերները, Վախթանգի գլխավորությամբ, կարողանում են հաղթել պարսից զորքերին և ազատագրել երկիրը։ Սերտ կապ է հաստատվում հայերի և դրացի վրացիների միջև։ Վախթանգը 300 հոգուց բաղկացած հոնական մի զորամաս է ուղարկում հայերին օգնության, սակայն այդ զորամասը երկար չի մնում Հայաստանում և ռազմական գործողությունները չսկսած, վերադառնում է Վրաստան։ Դրանից հետո մարզպանը և սպարապետը մեծ աշխատանք են կատարում համախմբելու ցրված հայ ֆեոդալական ուժերը։ Այդ նպատակով նրանք հատուկ պատգամավորություն են ուղարկում Արծրունյաց, Անձևացյաց, Ռշտունյաց և մյուս իշխանների մոտ և առաջարկում միանալ իրենց և կռվել ընդհանուր թշնամու դեմ։ Հայ իշխաններից ոմանք համաձայնվում են միանալ սպասավորությանը։ Ամբողջ 481 թ. ամառը և աշունը, ինչպես և 481—482 թթ. ձմեռն անցնում է կազմակերպչական եռուզեռով։

482 թվականի գարնանը, ինչպես սպասվում էր, պարսկական խոշոր բանակներից մեկը շարժվում է Հայաստանի վրա։ Զորքը գլխավորում էր Սալար անունով մի զորավար։

Հայկական փոքրաթիվ բանակը շարժվում է թշնամուն ընդառաջ։ Հայերը պարսկական բանակին հանդիպում են 482 թ. մայիս ամսին Արտազ գավառի Ներսեհապատ գյուղի մոտ, Ավարայրի պատմական վայրից ոչ շատ հեռու, որտեղ տեղի է ունենում ճակատամարտը։ Հայկական զորքերին միացել էին մեծ թվով կամավորներ՝ հայ աշխատավորությունից։ Հայկական զորքի մեջ էր գտնվում ժամանակակից Հովհան Մանդակունի կաթողիկոսը և հայոց մարզպան Սահակ Բագրատունին։ Զորքը ղեկավարում էր սպարապետ Վահան Մամիկոնյանը։

Վահան Մամիկոնյանը հայկական զորաբանակը բաժանում է երեք խմբի. միջին մասում գործող զորախմբի ղեկավար է նշա-

նակում Սահակ Բագրատունուն, աջ թևը հանձնում է Վահևունուն, ձախը՝ Կամսարական եղբայրներին, իսկ ինքը վերցնում է ընդհանուր հրամանատարությունը։ Կռվից առաջ հայ հրամանատարները զինվորներին ոգեշնչում էին հայրենասիրական ոգով, որպեսզի նրանք թշնամու բազմությունից «չդողահարեն»։

Հայկական զորաբանակը մեծ քաջագործություններով կարողանում է հաղթել պարսիկներին և խայտառակ փախուստի մատնել նրանց։ Այսպիսով, Ներսեհապատի ճակատամարտը վերջանում է հայերի կատարյալ հաղթանակով։ Պարսիկների կորուստը, ըստ պատմիչի, շատ մեծ է եղել, ավելի շատ, քան փախչող-աղատվողներն էին։

Օգնություն Վրաստանին

Վահան Մամիկոնյանն իր հոգնած բանակը Ներսեհապատից տեղափոխում է Ծաղկոտն գավառի Վարշակի ջերմուկների շրջանը, որը հնուց ի վեր հայկական բանակի հանգստի ճամբարավայրերից էր։

Հայոց բանակին, սակայն, չի հաջողվում երկար մնալ և հանգստանալ այստեղ, որովհետև Վրաստանից, Վախթանգ թագավորի մոտից սուրհանդակ է գալիս և հայտնում, որ Աղվանից աշխարհի վրայով պարսկական մի խոշոր զորաբանակ է մտել Վրաստան և Վախթանգը օգնություն է խնդրում հայերից։ Վահան Մամիկոնյանը խորհրդակցելով նախարարների հետ, որոշում է կատարել իրենց դաշնակցային պարտավորությունը և օգնական զորք ուղարկել։ Հայկական զորքը շարժվում է Վրաստան անձամբ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ։

Վրացական սուրհանդակի տված տեղեկության համաձայն, մի քանի օրից հետո Վախթանգին հյուսիսից պիտի օգնության գային նաև հոները՝ խոշոր բանակով։ Բայց երբ հայկական զորքը հասնում է Վրաստան, կանգնում է միանգամայն այլ իրողության առաջ. պարզվում է, որ հոները չեն կատարել իրենց խոստումը, չեն եկել, և հայերը, վրացական փոքրաթիվ ուժերի հետ, կանգնած էին պարսկական հսկայական մի բանակի առջև։ Հայ-վրացական զորքերի հրամանատարությունը, այնուամենայնիվ, որոշում է ընդունել մարտը։ Ճակատամարտը տեղի է ունենում Ճարմանայի դաշտում 482 թ.։

Ճակատամարտը վերջանում է վրացիների և հայերի պարտությամբ։ Այս անհաջողությունը բացատրվում է նրանով, որ հայ-վրացական զորքերը, պարսկականի համեմատությամբ փոքրաթիվ էին, հայկական զորքը հոգնած էր և տեղանքին ծանոթ չլինելով, վատ կողմնորոշվեց մարտի ժամանակ։

Հայերը և վրացիները, մարդկային ուժի մեծ կորուստ տալով, քաշվում են լեռները։ Կռվում սպանվում են Սահակ Բագրատունին և Վասակ Մամիկոնյանը՝ Վահան Մամիկոնյանի եղբայրը։ Դերի է ընկնում Հրահատ Կամսարականը։ Վահան Մամիկոնյանը մնացած հայկական ուժերով տեղափոխվում է Տայք։ Նրան հետապնդում է պարսից զորքը՝ Միհրանի գլխավորությամբ, նպատակ ունենալով վերջնականապես ջախջախել հայկական բանակը։

Հետագայում պարսկական և հայկական զորքերն իրար են հանդիպում Բասենի Դու կոչվող գյուղի մոտ։ Միհրանը նախ փորձում է բանակցությունների մեջ մտնել Վահանի հետ և համոզել նրան, որ վերջ տա իր թշնամությանը պարսկական արքունիքի նկատմամբ և հնազանդվի նրան՝ խոստանալով բարձր պաշտոններ ու պատիվներ։ Սակայն Վահան Մամիկոնյանը հրաժարվում է այն պատճառաբանությամբ, որ պարսկական արքունիքը Հայաստանում հենվում է ոչ թե ազնիվ և քաջ, այլ «անսիրտան և բախտախնդիր» մարդկանց վրա, նրանց է լսում, նրանց միջոցով պառակտիչ քաղաքականություն վարում հայ նախարարների շրջանում։

Միհրանի և Վահանի միջև, սակայն, կռիվ տեղի չի ունենում։ Տիզբոնում արդեն հայտնի էին դարձել Վրաստանի իրադարձությունները, և Միհրանը շտապ կանչվել էր հեփթաղների դեմ ուղարկվելու համար։

Պարսկաստան վերադարձող զորամասերն իրենց հետ շղթայակապ գերի էին տանում նաև Հրահատ Կամսարականին։ Սրա եղբայրը՝ Ներսեհ Կամսարականը, կրնկակոխ հետապնդելով պարսկական զորքին, Բագրեվանդ գյուղի մոտ հարմար առիթ է ստեղծում, հարձակվում է պարսիկների վրա և ազատում եղբորը։ Պարսից զորքի հեռանալուց հետո, Վահանը 482 թվականի աշնանը վերադառնում է Դվին, սկսում կարգի բերել իր ռազմական քայքայված ուժերը և պատրաստվել դիմադրելու պարսկական զորքի հարձակմանը։

Հաջորդ տարին, դարունը դեռ չբացված, Դվինում սուտ լուրեր են տարածում, որ իբր թե Սահակ Բագրատունին և Վասակ Մամիկոնյանը Ճարմանայում չեն սպանվել, այլ վիրավորվել են, մի կուսակրոն գտել է նրանց վիրավորված վիճակում, տարել է իր մոտ և բուժել։ Այժմ նրանք կենդանի են, բայց չեն ուզում դուրս գալ իրենց թաքստոցից՝ վախենալով ընկնել թշնամու ձեռքը։ Մարդիկ են գալիս Վահանի մոտ, հավատացնում են, որ նրանց տեսել են։ Բարեկամների թախանձանքի տակ, Վահանը ստիպված է լինում Դվինի հայկական իր փոքրիկ զորամասի մոտ կեսն ուղարկել Վրաստան՝ Սահակին և Վասակին բերելու համար։ Սակայն շուտով պարզ-

վում է, որ լուրը թշնամին է տարածել այն դիտավորությամբ, որ հայկական զորքերի մի մասը դուրս հանի Դվինից, թույլցնի հայկական բանակը և հնարավորություն ունենա դյուրությամբ վերցնել քաղաքը։

Պարսկական զորքը Հայաստան է մտնում Հազարավուխտի հրամանատարությամբ 483 թ. գարնանը։ Հազարավուխտին հայտնի էր «զնրթն կիսոյ գնդին Հայոց ի Վիրս»։ Պարսիկներն աշխատում են Դվինին մոտենալ գաղտագողի և դերի վերցնել Վահան Մամիկոնյանին։ Պարսկական զորամասերն անցնում են Արտաշատի կամուրջով և պաշարում Դվինը։ Սակայն պարսիկ հրամանատարին չի հաջողվում հասնել իր նպատակին։ Վահան Մամիկոնյանը հայկական փոքրիկ զորամասով կարողանում է ճեղքել թշնամու շղթան և հեռանալ լեռները։

Պարսկական բանակի նոր հարձակումները և պարտիզանական պատերազմի ծավալումը

Հազարավուխտն արքունիքից առաջադրություն ուներ՝ անհապաղ ճնշել ապստամբությունը Հայաստանում և ոչնչացնել Վահանի փոքրիկ զորամասը։ Ուստի գալով Հայաստան, նա ջանք և միջոց չի խնայում Վահան Մամիկոնյանին ու նրա զորամասերին ծուղակի մեջ գցելու համար։

Վահան Մամիկոնյանի ղեկավարած պարտիզանական ջոկատները 483 թվականին ցուցաբերում են արտակարգ հերոսություն։ Վահանի պարտիզանական ջոկատները կազմված են եղել գլխավորապես աշխատավորներից՝ շինականներից և քաղաքային ռամիկներից, որոնք հայրենասիրական վառ զգացմունքով տոգորված, մաս առ մաս ոչնչացնում են պարսկական կայազորները։

Պարտիզանները ջերմ աջակցություն են գտնում ժողովրդի կողմից։ Սրանք մատակարարում են պարտիզանների սննդամթերքը, տեղեկություններ հաղորդում պարսկական զորքերի շարժումների մասին, իսկ հարկավոր դեպքում՝ նաև կռվում նրանց դեմ։ Փարպեցու վկայությամբ, Հազարավուխտը, հայերի բարոյությունից և պատճառած վնասներից գազազած, «զբաղում տեղիս ամրոցացն Հայոց ընդ երթալն առեալ հարկանէր, քակէր, աւերէր և անցանէր և զբաղումս կոտորեալ՝ հանէր արեանց ճապաղիսս»։ Ըստ որում, վերջինս արտակարգ դայրույթով էր լցվել աշխատավորության նկատմամբ և «զբաղումս ի ռամիկ մարդկանէն Հայոց սպանանէին»։

Փարպեցու պատմության մեջ ուշադրավ դրվագներ են արձա-

նագրված հայ շինականների՝ պարսիկ նվաճողների դեմ մղած անձնազոհ պայքարի մասին։ Այսպես, Փարպեցին պատմում է, որ պարսից զորավարներից մեկը՝ Շապուհը, ցանկանում է պատժել Կարինի շրջանի Արծաթ գյուղի հնձվորներին այն բանի համար, որ սրանք ապաստան են տվել Վահան Մամիկոնյանի պարտիզանական խմբին։ Եվ երբ տեղեկանում է, որ պարտիզանները հեռացել են այդտեղից և նրանց հետևից հասնել չի կարող, «կամեցան մշակացն տեղեացն վնասել», թե՝ «ընդէ՞ր բնաւ ծառայից արքայից արքայի տայք շրջել յաշխարհի ձերում»։ Եվ երբ պարսիկ զինվորներից մեկը ցանկանում է սպանել Խուրս անունով կարնեցի մի մշակի, նրա ընկերները հարձակվում են պարսիկի վրա և տեղն ու տեղը սպանում։ Այնուհետև՝ գյուղացիները հարձակվում են պարսկական ջոկատի վրա, շատերին կոտորում, իսկ մյուսներին «փախստականս արարեալ՝ դարձուցանէին ընդ կրունկն ամօթով»։ Հայ շինականները այդ օրն սպանում են 72 պարսից զինվոր։

Մի այլ անգամ Վահան Մամիկոնյանը, Երիզա գյուղի գյուղացիներին վերցրած («առեալ ընդ իւր զարս զօրուն իւրոյ զշինականս զերիզացիսն») հարձակվում է պարսից մի ջոկատի վրա և «առաքուր հարեալ կոտորէին, և լիներ ձայն լալոյ և ձայն զուժի ի բանակէ անօրինացն»։ Վահանն իր հետևողներով միշտ փոխադրվում էր մի տեղից մյուսը և գյուղացիների օգնությամբ, գլխավորապես գիշերները, հարձակվում թշնամու վրա և կոտորում նրանց։

Պարսիկները որպես ուղեկիցներ օգտագործում էին դավաճան հայ ազնվականներին, որոնցից մեկը Գդիհոն Սյունին էր։ Վահանի կողմնակիցներին հաջողվում է Հաշտյանք գավառի Շոհա գյուղի մոտ պարսիկների հետ տեղի ունեցող մի կռվում բռնել դավաճան Գդիհոն Սյունուն և սպանել նրան։

Վահան Մամիկոնյանը թշնամու աչքում դառնում է առասպելական մի հերոս, նրա անունը լսելիս սարսափահար փախչում էին պարսիկները։ Ժողովրդի մեջ Վահանի մասին առասպելներ էին հորինվում, նրա քաջագործությունների մասին, ասում է Փարպեցին, «զի վէպս պատմեն»։ Ցույց տալու համար, թե Վահանից և նրա պարտիզաններից ինչպիսի ահ ու սարսափի մեջ էր գտնվում թշնամին, Փարպեցին պատմում է հետևյալ միջադեպը. Վահան Մամիկոնյանը 30 հոգով հանդիպում է թշնամու մի քանի հարյուր հոգուց բաղկացած ջոկատի։ Թշնամին, երբ իմանում է, որ իրեն հանդեպ Վահանն է կանգնած՝ իր զինվորներով, խուճապահար փախչում է։ Ինչպես արծիվը սլանում է կաքավների երամի ետևից, ոգե-

վորված պատմում է Փարպեցին, ոմանց սպանում է, իսկ մյուսները ցրվում, թաքնվում են ծերպերի մեջ և քարի ճեղքերում, «ըստ նմին օրինակի այսր անդր զայնչափ բազմութիւն զօրացն արկեալ է վեր ի վայր ցրուեցան»։

Նվարսակի դաշնագրությունը

Ժողովրդա-ազատագրական հերոսական այս պայքարը շարունակվում է մինչև 484 թվականի ամռան վերջերը։ Շուտով մի իրադարձություն գալիս է հիմնովին փոխելու պայքարի ընթացքը։ Հեփթաղների հետ տեղի ունեցող կռվում խայտառակ պարտություն են կրում պարսիկները. կռվում սպանվում է զոռոզ Պերոզ թագավորը։ Նոր թագավոր է նշանակվում Պերոզի եղբայր Բալաշը, որին հայկական պատմիչները Վաղարշ անունն են տալիս։ Ստեղծված պայմաններում պարսկական արքունիքը հարկադրված է լինում մեղմ քաղաքականություն վարել հպատակ ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի նկատմամբ։ Հայաստանից շտապ Տիգրան է կանչվում Շապուհը իր զորամասերով։

Վաղարշ թագավորը խորհրդակցում է Հազարավուխտի ու Շապուհի հետ և որոշում փոխել Հազկերտի և Պերոզի վարած քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ և սկսել սիրաշահելու քաղաքականություն։ Պարսկական արքունիքը, հսկայական նյութական և մարդկային կորուստներից հետո, լիովին համոզվում է, որ նրա բռնությունները Հայաստանում ապարդյուն են անցնում։ Այսպիսով, պարսկական արքունիքը հայ ժողովրդի ազատագրական հսկա պայքարի առջև հարկադրված է լինում տեղի տալ և վերցնել զիջման ճանապարհը։

Պարսկաստանից Հայաստան է ուղարկվում մի մեծ պատգամավորություն՝ Նիխոր Վշնասպդատի գլխավորությամբ, հայերի հետ բանակցություն վարելու համար։ Բանակցությունները վարում են Վահան Մամիկոնյանի հետ։ Նիխորը ցուցաբերում է որոշ դիպուշավորություն. նա անմիջապես չի գալիս Դվին, այլ կանգ է առնում Հեր գավառի Նվարսակ գյուղում և պատգամախոսներ ուղարկում Վահանի մոտ։ Վահանը համաձայնում է Նվարսակ գնալ և բանակցություններ սկսել այն պայմանով, եթե Նիխորը նախապես վրստահության պատանդներ տա իրեն։ Նիխորը համաձայնում է և տալիս իր պատանդները։ Վահանն այնուհետև գնում է Նվարսակ և ընկալում բանակցությունները։ Վահան Մամիկոնյանը առաջադրում է հետևյալ երեք հիմնական խնդիրները, որոնք և ընդունվում են պարսիկների կողմից՝ առանց առարկության։

1. Վերջ դնել կրոնափոխության հարկադրանքին և չստիպել հայերին զրադաշտություն ընդունել, քանդել Հայաստանում շինված կրակատները և դժվարություն չստեղծել եկեղեցականների համար՝ իրենց ծիսակատարությունների ժամանակ։

2. Պետական պաշտոնյաներին մեծարել և գնահատել ոչ թե քմահաճույքով, այլ արդարամտությամբ։ Պետք է նրանցից առաջ քաշել, դնահատել ազնիվ, գործունյա և վաստակավոր մարդկանց և ատել անազնիվ, անվաստակ և քու դավաճաններին։ Արքունիքը պետք է լսի ուղղամիտ մարդկանց խորհուրդները։

3. Պարսկական արքունիքը չպիտի մեջտեղի հայ նախարարների ներքին գործերին և չպիտի հավատա երկերեսանի անձնավորությունների զրպարտություններին։

Նիխորը ընդունում է Վահանի այս առաջարկությունները, Միայն նրանից խնդրում է կազմակերպել հայոց այրուձին և ուղարկել Տիզբոն։

Պարսից արքունիքը հաստատում է Նիխորի՝ Վահան Մամիկոնյանի հետ նվարսակում 484 թ. կնքված պայմանագիրը։ Վահան Մամիկոնյանը, իր հերթին կատարում է տրված խոստումը. Դրիգոր Մամիկոնյանի հրամանատարությամբ կազմակերպում է մի հեծելազունդ և ուղարկում Տիզբոն՝ օգնելու Վազարշ թագավորին։

485 թ. Վահան Մամիկոնյանն անձամբ գնում և ներկայանում է Վազարշ թագավորին, որը նրան ընդունում է մեծ պատիվներով։ Վահանին տրվում է հայկական զորաբանակի սպարապետության պաշտոնը։

Պարսկական արքունիքը Հայաստանի մարզպան է նշանակում Անդեկան անունով մի պարսիկի։ Սակայն շուտով վերաբերմունքը փոխվում է։ Պարսից արքունիքը, ցանկանալով շահել հայ ֆեոդալների համակրանքը, հեռացնում է Անդեկանին և մարզպանության պարտականությունը նույնպես հանձնում է Վահան Մամիկոնյանին։

Վահան Մամիկոնյանի մարզպանությունը Հայաստանում ընդունվում է բացառիկ ցնծությամբ։ Այդ առթիվ Դվին քաղաքում կազմակերպվում են շքեղ հանդեսներ և տոնախմբություններ։

Թե քանի տարի է Վահան Մամիկոնյանը մնացել մարզպանի պաշտոնում, հայտնի չէ, միայն 506 թ. նախարարների՝ մեզ հասած ցանկում այլևս չենք գտնում նրա անունը, այդ հիման վրա ենթադրվում է, որ դրանից առաջ նա մահացել էր։

V դարի ազատագրական շարժումների նշանակությունը

V դարի ազատագրական շարժումները հայ ժողովրդի ազատության և անկախության համար մղված պայքարի պատմության հիասքանչ դրվագներից են։ Ազատասեր հայ ժողովուրդը կյանքի և մահվան կռվի դուրս եկավ Սասանյան աշխարհակալ պետության դեմ և իր ազատությունն ու պատիվը փրկելու համար կատարեց անօրինակ սխրագործություններ։ V դարի ազատագրական շարժումները ազատագրության և հայրենասիրության անջնջելի նշանակ են հանդիսացել հայ ժողովրդի՝ օտարերկրյա թշնամու դեմ մղած պատերազմներում։

Հայ կղերական պատմագրությունը V դարի ազատագրական պատերազմները ներկայացրել է որպես կրոնական պատերազմներ։ Այսպես, Օրմանյանը, խոսելով Ավարայրի ճակատամարտի և նրա նշանակության մասին, գրում է. «...Եղելությունը (Ավարայրում) քաղաքականեն ավելի կրոնական կերպարանք ուներ և ուղղակի եկեղեցական գործունեության ձև էր առած։ Որչափ ալ Վարդանն էր շարժման հոգին, սակայն անոր կազմակերպողները եկեղեցականներ էին և Հովսեփ կաթողիկոս առաջին դեր ուներ ամեն պարագայի մեջ»։

Չի կարելի, իհարկե, ժխտել կրոնականների կազմակերպչական գործուն աշխատանքը, մանավանդ շարժման առաջին փուլում, սակայն V դարի շարժումներն ունեին բացահայտ ժողովրդա-ազատագրական բնույթ։ Հայ ժողովուրդն ուզում էր ազատ լինել ոչ միայն կրոնական հարկադրանքից, այլև ցանկանում էր թոթափել օտարերկրյա լուծն ընդհանրապես և ձեռք բերել կորցրած քաղաքական անկախությունը։ Ըստ որում, դրան ձգտում էին հասարակության բոլոր խավերը՝ շինականները, առևտրականները, արհեստավորները, նախարարները, եկեղեցականները, բացի դավաճան մի քանի նախարարներից, որոնք առաջնորդվում էին անձնական նեղ շահերով։

Սխալ է նույնպես V դարի պատերազմները ներկայացնել որպես նախարարական պատերազմներ, հիմնական շեշտը դնելով նախարարների վրա, ինչպես վարվում են պատմաբաններից ոմանք։ Անշուշտ, նախարարներն ազատագրական շարժման կազմակերպողներն ու ղեկավարներն են եղել, սակայն այդ պայքարի շարժիչ ուժը ժողովուրդն է հանդիսացել։

ԳԼՈՒԽ XIV

ՀԱՅԱՍՏԱՆԸ VI ԴԱՐՈՒՄ

1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ՌԵՖՈՐՄՆԵՐԸ

Բյուզանդիայի ռազմա-վարչական ռեֆորմները

Հայաստանը երկու մասի բաժանվելուց հետո, ճիշտ է, վերացվեց հայ պետականությունը, սակայն նա Պարսկաստանի և Բյուզանդիայի կցորդը չդարձավ։ Հայ նախարարները շարունակեցին պահպանել իրենց ներքին անկախությունը և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Հայաստանում։ Հայ իշխաններն ունեին իրենց զորամասերը, իրենք էին հավաքում ժողովրդից հարկը և հանդիսանում տեղի վարչական, զինվորական պետը, միայն թե կատարում էին իրենց վասալական պարտավորությունը տիրողների հանդեպ՝ վճարում էին հավաքված հարկի մի մասը և անհրաժեշտության դեպքում զորք տալիս նրանց։

Հայ նախարարների այդ կիսաանկախ վիճակը ձեռնտու չէր ո՛չ Պարսկաստանին և ո՛չ էլ Բյուզանդիային, որոնք իրենց դիրքերը Հայաստանում ամրացնելու համար որոշակիորեն վարում էին ասիմիլյատորական քաղաքականություն։ Նրանք աշխատում էին վերացնել նրանց անկախությունը, պարտադրել իրենց կարգերը, կրոնա-դավանական հովատալիքները, լեզուն և աստիճանաբար ձուլել հայ ժողովրդին։

Ազատասեր հայ ժողովուրդը, հասկանալի է, չէր կարող հանդուրժել այս քաղաքականությունը, ուստի հաճախ ընդվզում էր իր տիրակալների դեմ և ոտքի կանգնում՝ պայքարելու իր ազատության և անկախության համար։

Բյուզանդական կայսրությունը, Արևմտյան Հայաստանին տիրելուց հետո, նրան պարտադրեց վարչական այն կարգը, որը գոյություն ուներ իր մոտ։

Մինչև VI դարի առաջին քառորդը Հայաստանը բաժանված էր երեք մասի՝ Փոքր Հայք, Սատրապական Հայաստան կամ ինքնավար իշխանություններ և Ներքին Հայք կամ Մեծ Հայք։

Փոքր Հայքն ընդգրկում էր Կապադովկիային սահմանակից Անդրնփրատյան մարզը։ Թեոդորոս Մեծի օրոք նա կազմված էր երկու պրովինցիաներից՝ Առաջին Հայք՝ Սեբաստիա կենտրոնով և Երկրորդ Հայք՝ Մելիտինե կենտրոնով։ Այս երկու հայկական պրովինցիաները մտնում էին Պոնտական դիոցեզի մեջ։

Սատրապական Հայաստանի կամ ինքնավար իշխանությունների տերիտորիան ընդգրկում էր Բյուզանդիային անցած Մեծ Հայքի հարավ-արևմտյան մասը և հայկական հինգ նախարարությունների՝ Հաշտենի, Մոփքի, Հանձիթի, Անձեվ տան և Բաչահովտի տերիտորիան։ Հայկական այս հինգ նախարարություններն այդ ժամանակ կոչվելիս են եղել սատրապություններ։ Սատրապներին իրենց պաշտոնում նշանակում էր կայսրը՝ ցմահ։ Նրանց իրավունք էր տրված հագնել ծիրանի քղամիդ, մինչև ծնկները հասնող կարմիր կոշիկներ և կրել փետուրներով զարդարված մետաքսե վերարկու, որոնք հագնում էին միայն կայսրերը և պարսից թագավորները։ Բյուզանդիան զորք չէր ուղարկում սատրապությունները. սատրապներն իրենք էին ռազմական ուժով պահում իրենց կառավարած շրջանները։ Իրենց իրավական վիճակով նրանք, փաստորեն, փոքրիկ թագավորներ էին։

Ներքին Հայաստանի կամ Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան տերիտորիան ընդգրկում էր Բարձր Հայքի հայ նախարարությունները՝ Սպերի, Մանանաղի, Դարանաղի, Սկեղյաց, Կարինի, Մարդաղի, Խորձենի և Դերջանի։ Ի տարբերություն Սատրապական Հայաստանի, այստեղ հայ նախարարների իրավունքները սահմանափակված էին։ Բյուզանդիան վարչական ղեկավար պաշտոններում նշանակում էր իր լիազոր ներկայացուցիչը՝ կոմես անունով։ Ներքին Հայաստանի ռազմական իշխանությունը ենթարկվում էր բյուզանդական մագիստրոսին։ Հայ նախարարները, իրենց զորամասերով, դասվում էին մագիստրոսի բարձրագույն հրամանատարության տակ։

Արևմտյան Հայաստանի ռազմա-վարչական այս բաժանումը, բնականաբար, չէր համապատասխանում Բյուզանդիայի վարած քաղաքականությանը, որը ցանկանում էր արևելյան սահմանում կազմակերպել միասնական ամրակուռ պաշտպանություն։ Ռազմա-վարչական այն սիստեմը, որ գոյություն ուներ Արևմտյան Հայաստանում, Բյուզանդիայի համար կայուն վիճակ չէր ստեղծում և

լայն հնարավորություն էր ընձեռում հայ նախարարներին ցանկացած ժամանակ չհնազանդվելու Բյուզանդիային և հանդես գալու թշնամական ուժերի հետ համագործակցած։ Հայտնի է, որ 749 թվականին՝ Զենոն կայսեր դեմ տեղի ունեցած ապստամբության ժամանակ, ապստամբներին հարեցին և գործոն մասնակցություն ունեցան Սատրապական Հայաստանի նախարարները։ Ապըստամբությունը ճնշելուց հետո Զենոնը, ճիշտ է, զրկեց սատրապներին ժառանգական իրավունքներից, սակայն վարչական կարգը մնաց անփոփոխ։

Բյուզանդական առաջին կայսրը, որն անմիջականորեն զբաղվել է Արևմտյան Հայաստանի ռազմա-վարչական կարգերի վերափոխման հարցով, Հուստինիանոսն էր (527—565)։ Նա 529 թ. հատուկ հրովարտակով բյուզանդական գերիշխանության տակ գտնըված Մեծ Հայքի, Սատրապական Հայաստանի և Փոքր Հայքի իշխանությունները միավորելով, կազմեց զինվորական մի շրջան՝ գլխավոր հրամանատար նշանակելով մագիստրոսին։ Արևմտյան Հայաստանի մագիստրոսը, որ կոչվում էր Արևելքի մագիստրոս, իր տրամադրության տակ ուներ բավական խոշոր մի բանակ՝ կազմըված բյուզանդական լեգեոններից։ Հայերն այդ բանակում ունեին միայն նետաձիգ գնդեր։

Այդ վերակազմության հետևանքով վերացավ կոմեսների պաշտոնը, և հայ նախարարները զրկվեցին սեփական զորք ունենալու ժառանգական իրավունքից։ Սահմանափակվեցին նաև նախարարների վարչական իրավունքները, որովհետև Հուստինիանոսի այդ նույն հրովարտակով քաղաքական իշխանությունները ևս ենթարկվում էին մագիստրոսին։ Բյուզանդական ռազմական ուժերի կենտրոն և մագիստրոսի ռեզիդենցիան դարձավ արևելյան սահմանի վրա գտնվող Թեոդոսուլիս (Կարին) քաղաքը։

Հուստինիանոս կայսեր առաջին ռեֆորմին հետևեց երկրորդը՝ 536 թ. քաղաքացիական վերակառուցման ռեֆորմը։ Նոր օրենսդրությամբ՝ Բյուզանդիայի գերիշխանության տակ գտնվող հայկական հողերից կազմվում էր չորս նոր վարչական միավոր՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Չորրորդ Հայք։ Առաջին Հայքի մեջ մտնում էին Մեծ Հայքը, Պոնտոսի որոշ շրջաններ և նախկին Առաջին Հայքի մի մասը։ Երկրորդ Հայքի մեջ էր նախկին Առաջին Հայքի մնացած մասը։ Երրորդ Հայքը կազմվում էր նախկին Երրորդ Հայքից, գրեթե առանց փոփոխության։ Չորրորդ Հայքն ընդգրկում էր ամբողջ Սատրապական Հայաստանը։ Այս փոփոխության վերջնական նպատակն այն էր, որ ավելի երկրի յու-

քահատուկ քաղաքական-հասարակական կարգը և հռոմեականացվի»,— ինչպես շատ ճիշտ նկատել է Ն. Ադոնցը «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակ» աշխատության մեջ։

Նույն թվականին Հուստինիանոսը հրատարակեց երկու նոր օրենք ևս, որոնք վերաբերում էին հայ ընտանիքի ժառանգական իրավունքին։ Այդ օրենքների ներածական մասում կայսրը որոշակի նշել է, որ իր հրապարակած օրինադրության նպատակն այն է եղել, որ «հայերը ամեն ինչում հետևեն հռոմեական օրենսդրությանը, և Հայաստանը ոչնչով չտարբերվի կայսրությունից»։ Եվ ահա այդ օրենքներով Հուստինիանոսը կանանց և տղամարդկանց հավասար ժառանգական իրավունք էր տալիս։ Հուստինիանոսի այդ օրենսդրությամբ փաստորեն մասնատվում էին հայ ֆեոդալների տիրույթները, նրանց կալվածատիրական ամբողջականությունը, իսկ այդ ինքնին ծանր հարված էր հասցնում ֆեոդալական սեփականատիրական իրավունքին։

Բյուզանդիան Մերձավոր Արևելքի ժողովուրդների նկատմամբ իր վարած ասիմիլյատորական քաղաքականության ընթացքում մեծ չափով օգտագործում էր նաև քրիստոնեական եկեղեցին։

Դեռևս 451 թվականին Քաղկեդոն քաղաքում գումարվել էր համաքրիստոնեական տիեզերական մի ժողով, որը օրակարգի հարց դարձրեց թե քանի՞ բնություն է ունեցել Քրիստոսը։ Ժողովի մասնակիցների մեծ մասը, բյուզանդական արքունական և պատրիարքական շրջանների թելադրանքով, ընդունել էր Քրիստոսի երկու բնություն ունենալու (մարդկային և աստվածային) տեսակետը։ Հետագայում այս տեսակետին հարողները կոչվեցին երկաբնակներ (դիոֆիզիտներ) կամ քաղկեդոնականներ, այսինքն՝ քաղկեդոնական ժողովի որոշման կողմնակիցներ։ Իսկ ժողովի որոշումից դժգոհ, նրա տեսակետը չբաժանող քրիստոնյաները կոչվեցին միաբնակներ (մոնոֆիզիտներ)՝ Քրիստոսին մի բնություն, միայն աստվածայինը վերագրողներ կամ հակաքաղկեդոնականներ։ Քրիստոնեական այս երկու խմբերի միջև տեղի ունեցող վեճը, ըստ էության, սխոլաստիկ վեճ էր, սակայն հետագայում ընդունեց շատ սուր քաղաքական բնույթ և մեծ շարաշահության նյութ դարձավ և՛ Բյուզանդիայի, և՛ Պարսկաստանի կողմից։ Բյուզանդիան ամեն ջանք գործ էր դնում, որ հայերը անվերապահ ենթարկվեին Քաղկեդոնի ժողովի որոշումներին և կատարեին նրա դոգմաները։ Դրանում շահագրգռված էր Բյուզանդիան, որովհետև եկեղեցու միասնությունը նպաստավոր այն հողն էր, որն ուժեղացնում էր Բյուզանդիայի քաղաքական և գաղափարական ազդեցությունը՝ նվաճ-

ված քրիստոնյա երկրներում և օգնում էր փոքր ժողովուրդների ասիմիլյացիային։

Հայերը չէին մասնակցել Քաղկեդոնի ժողովին 451 թվականի խառը իրադրությունների պատճառով։ Այդ վեճերի նկատմամբ հայերն առանձին հետաքրքրություն չեն ցուցաբերել մինչև VI դարի սկզբները։ Սակայն, երբ քաղկեդոնական դավանանքը Բյուզանդական կայսրության ջերմ պաշտպանության տակ այնքան ուժեղացավ, որ սկսեց լուրջ վտանգ դառնալ հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար, հայ եկեղեցին հարկադրված եղավ կողմնորոշվել և վերցնել որոշակի հակաքաղկեդոնական ուղղություն։ Այդ որոշումն իր վերջնական ձևավորումն ստացավ 506 թվականի Դվինի առաջին և 554 թվականի երկրորդ ժողովներում։ Այդ ժողովների որոշումներով հայ եկեղեցին վերջնականապես խզեց իր կապերը բյուզանդական եկեղեցուց։

Դվինի երկրորդ ժողովը, քաղկեդոնականությունից բացի, քննության առավ նաև նեստորական աղանդավորների հարցը, որը նույնպես վտանգավոր էր հայ ժողովրդի համար, որովհետև նրանց ջերմ պաշտպանության տակ էին առել և օգտագործում էին պարսկական իշխանությունները։ Դվինի ժողովը, իր հակաքաղկեդոնական և հականեստորական որոշումներով, ցանկանում էր դռները փակել ինչպես բյուզանդական, այնպես և պարսկական գաղափարական ազդեցությունների առջև։

Աշխատավորության դրությունը

Արևմտյան Հայաստանում առանձնապես ծանր էր աշխատավորության՝ շինականների և քաղաքային ստորին խավերի դրությունը։ Բյուզանդական կայսրությունը իր արևելյան սահմանը պարսիկների անակնկալ հարձակումից պաշտպանելու համար հսկայական բանակ էր կենտրոնացրել Արևմտյան Հայաստանում. հայկական սահմանամերձ շրջանները փաստորեն վեր էին ածվել ռազմական ճամբարների և բյուզանդական արևելյան բանակի ողջ ծանրությունը ընկել էր նրա ուսերի վրա։ Նրանց պարտականությունն էր սննդամթերքով բավարարել բանակին։ Բանակի ծախսերի մի մասը ևս ժողովրդի վրա էր դրված։

Բյուզանդական այդ բանակը Արևմտյան Հայաստանի սահմանամերձ վայրերում կառուցում էր ամրությունների մի ամբողջ շարք։ Այդ ամրությունների վրա բյուզանդացիները, մեծ մասամբ պարհակային պարտավորության կարգով, աշխատեցնում էին հայ աշխատավորությանը։

Հայ աշխատավորության հարկային պարտավորություններն

առանձնապես մեծացան Հուստինիանոսի ռեֆորմից հետո։ Բյուզանդիան իր բանակը Հայաստանում պահելու համար մեծ ծախսերի պետք ուներ, որոնք ծածկելու համար ավելացնում էին ժողովրդից գանձվող հարկերը։ Բյուզանդական պատմիչ Պրոկոպիոսը հայտնում է, որ Առաջին Հայքի պրոկոնսուլ Ակակիոսը սովորական գանձվող հարկերից զատ, աղդաբնակչության վրա դրեց նոր տեսակի մի հարկ՝ յուրաքանչյուրից վերցնելով 4 կենդինար։

Արևմտյան Հայաստանի վարչական նոր բաժանումից հետո պաշտոնները մեծ մասամբ տրվում էին հռոմեացիներին։ Վերացել էր պաշտոնավարության նախկին կարգը, երբ պաշտոնյայի որդին տվյալ պաշտոնի թեկնածու էր. այժմ պաշտոնները սպեկուլյացիայի առարկա էին դարձել. մեծահարուստ մարդիկ վճարում էին պահանջվող կաշառքը և պաշտոն ձեռք բերում։ Նրանք իրենց տված այդ կաշառքը ժողովրդից գանձում էին քազմապատիկ չափով։ Պատահում էր անգամ, որ որոշ մարդիկ պահանջվող կաշառքի չափով փող չէին ունենում և դիմում էին վաշխառուի օգնությանը. սրանից տոկոսով վերցնում էին պահանջվող գումարը, ապա պաշտոնի անցնելուց հետո բնակչությունից հավաքում էին այնքան գումար, որ կարողանում էին պարտքերը վճարել և իրենք էլ հարստանալ։

Անմխիթար վիճակի մեջ էին նաև Արևմտյան Հայաստանի քաղաքները։ Պարսկա-բյուզանդական լարված հարաբերությունների պատճառով քաղաքների մեծ մասը գրկվել էր տարանցիկ առևտրի մեջ ունեցած նախկին դերից և վեր ածվել ռազմական ճամբարների։ Միայն Արևմտյան Հայաստանի հարավում գտնվող որոշ քաղաքներ դեռ շարունակում էին իրենց նախկին դերը տարանցիկ առևտրի ասպարեզում։

VI դարում Արևմտյան Հայաստանում աստիճանաբար սկսում էր մուտք գործել և քաղաքացիական իրավունք ստանալ կոլոնատի սիստեմը՝ իր երկու տարբերակով՝ ազատ և ամրացած։ Ընչազուրկ գյուղացիները, նյութական կարիքից հարկադրված, սկսում էին աշխատել կալվածատիրոջ մոտ՝ այն պայմանով, որ նշանակված ժամանակը լրանալուց հետո կարողանան հեռանալ որպես հողի ազատ վարձակալներ։ Բայց պատահում էր, որ ազատ կոլոնը, երկար մնալով մի տեղում, ամրացվում էր վարձակալած հողին։ Երբեմն նույնիսկ էր հռոմեական օրենսդրությունը։ Անաստաս կայսեր (491—518) հրովարտակով 30 տարուց ավելի վարձակալվող կոլոնը ամրացվում էր հողին և այլևս իրավունք չուներ հեռանալու կալվածքից։

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի բյուզանդական տիրապե-

տության մասում հայ հասարակության բոլոր սոցիալական խավերի համար ստեղծվում էր բավական ծանր դրություն. կայսրության ռազմա-վարչական ռեֆորմներից հետո հայ ազատանին զրկվում է իր նախկին կիսանկախ վիճակից, հայ եկեղեցու անկախությանը սպառնում էր բյուզանդական երկաբնակ եկեղեցին, հայ աշխատավորությունից գանձվող հարկերը ծանրանում էին, ընչազուրկ բընակչությունն սկսում էր ամրացվել հողին որպես կոլոն, քաղաքային արդյունագործության սահմանափակման հետևանքով ծանրանում էր քաղաքային ռամիկի վիճակը։ Ստեղծված այս դրության հետևանքով Արևմտյան Հայաստանում սկսում են բորբոքվել հակաբյուզանդական մասսայական շարժումներ, որոնք և վեր են ածվում ապստամբության։

Ապստամբությունները Արևմտյան Հայաստանում

Հակաբյուզանդական շարժումները Արևմտյան Հայաստանում սկսում են Հուստինիանոսի ռեֆորմներից անմիջապես հետո և ավելի ծավալվում VI դարի 50-ական թվականներին։

Բյուզանդական կայսրության դեմ առաջին խոշոր ընդվզումը տեղի է ունեցել Առաջին Հայքում 536 թվականին։ Ակակիոս անունով այլասերված մի հայ ազնվականի խարդախ ճանապարհով հաջողվում է սպանել տալ Առաջին Հայքի պրոկոնսուլ Համազասպին և ինքը նշանակվել այդ պաշտոնում։

Հայ քաղաքական շրջաններում զայրույթը Հուստինիանոսի դեմ խորանում է այն աստիճան, որ Բյուզանդիայում հաստատված հայ որոշ իշխաններ 548՝ թվականին փորձում են կազմակերպել կայսեր սպանությունը. նախաձեռնությունը վերցնում է Արշակ Արշակունի իշխանը, որի հայրը՝ Հովհաննես Արշակունին, սպանվել էր Հուստինիանոսի կողմից։ Նա համոզում է Արտավան Արշակունուն համագործակցել իրեն հետ. դավադիրները որոշում են կայսրին սպանել իր պալատում, այն ժամին, երբ նա մի ծերունի քահանայի հետ միասին ընթերցանությամբ էր պարապում։ Արշակը և Արտավանը սակայն միամտություն են ունենում իրենց ծրագիրը հայտնելու արքունի հույն երիտասարդներից մեկին՝ Հուստինոսին, որի հայրը թշնամական փոխհարաբերության մեջ էր կայսեր հետ։ Սակայն սա, ապստամբների հետ գործակցելու փոխարեն մատնում է իր հայ ընկերներին և բաց անում դավադրությունը։ Արշակն ու Արտավանը ձերբակալվում են։ Այսպիսով, Հուստինիանոսին սպանելու հայ իշխանների փորձն անհաջողությամբ է վերջանում։

Պրոկոնսուլի պաշտոնը ստանձնելուց հետո Ակակիոսը, բյուզանդական իշխանությունների առջև ուղղափառ երևալու համար, ավելի է ծանրացնում ժողովրդի հարկերը և հայ իշխանների նկատմամբ ամեն տեսակ անիրավություններ կատարում։ Դրությունը ծանրանում է այն աստիճան, որ որոշ հայ իշխաններ հարկադրված թողնում են իրենց հայրենի տիրույթները և հեռանում Արևելյան Հայաստան։ Շուտով, սակայն, ժողովրդական լայն զանգվածների մեջ ապստամբություն է բռնկում։ Ապստամբության գլուխ է կանգնում Հովհաննես Արշակունին։ Ապստամբները հարձակվում են տեղի բյուզանդական պաշտոնյաների վրա, սպանում պրոկոնսուլ Ակակիոսին և Առաջին Հայքն անկախ հայտարարում։

Հուստինիանոսը ապստամբների դեմ է ուղարկում մի խոշոր բանակ՝ Սիտտա անունով զորավարի գլխավորությամբ։ Վերջինս դալիս է Առաջին Հայք, բայց ռազմական գործողություններ չի սկսում, այլ աշխատում է խաղաղ ճանապարհով հնազանդեցնել ապստամբներին՝ խոստանալով միջնորդել արքունիքի առջև՝ ներողամիտ գտնվելու նրանց նկատմամբ։ Սակայն կայսրը հրաման է ուղարկում Սիտտային՝ անհապաղ ճնշել ապստամբությունը և պատժել մեղավորներին։

Բյուզանդական բանակը սկսում է իր ռազմական գործողությունները։ Վտանգավոր այդ պահին տեղի հայ քաղաքական շրջանները միավորում են իրենց ուժերը և դիմադրում բյուզանդական բանակին։ Ապստամբներին հաջողվում է դլխովին ջարդել բյուզանդացիներին և փախուստի մատնել նրանց։ Սպանվում է նաև բյուզանդական բանակի հրամանատար Սիտտան։ Ապստամբները մաքրում են Առաջին Հայքը բյուզանդական զորքերից, իսկ իրենք ամրանում բերդերում ու ամրոցներում։

Առաջին Հայքի հայ հայրենասերներին պատժելու համար Հուստինիանոսն անմիջապես նոր ուժեր է ուղարկում՝ Բուզ զորավարի գլխավորությամբ։ Սա, որ վերին աստիճանի խորամանկ անձնավորություն էր, գալով Առաջին Հայք, նույնպես ռազմական գործողություններ չի սկսում, այլ փորձում է ապստամբներին հնազանդեցնել խաղաղ ճանապարհով։ Սակայն, նախարարներից շատերը, որ քանիցս փորձվել էին և ծանոթ էին բյուզանդական ենդ քաղաքականությանը, հրաժարվում են դալ բյուզանդական զորահրամանատարի մոտ բանակցությյան։ Միամիտ է գտնվում միայն ապըստամբների ղեկավարը՝ Հովհաննես Արշակունին, որը հավատալով Բուզին, մեկնում է նրա մոտ որպես նրա անձնական բարեկամը։ Հովհաննես Արշակունու հետ է լինում նաև նրա փեսան՝ Վասակը։

Երեկոյան՝ կերուխումի թեժ պահին, բյուզանդական զորքերը շրջապատում են այն տունը, ուր գտնվում էին Հովհաննեսն ու իր փեսան։ Հովհաննեսն սպանվում է նենգադավ բարեկամի ձեռքով, իսկ Վասակին հաջողվում է մեծ ճարպկությամբ դուրս գալ որոգայթից, փախչել ու ազատվել։

Ապստամբներին այլևս դժվար էր շարունակել պայքարը բյուզանդական կազմակերպված բանակների դեմ, ուստի նրանց ղեկավարները հարկադրված են լինում տեղափոխվել Արևելյան Հայաստան, որից հետո բյուզանդացիներն արյան մեջ խեղդում են Առաջին Հայքի ապստամբությունը։

Ապստամբության ճնշումից հետո Արևելյան Հայաստան փախած հայ նախարարները պատգամավորություն են ուղարկում պարսկական խոսրով Նուշիրվան թագավորի մոտ և օգնություն խնդրում նրանից։ Խոսրովը, որ անհանգստացած էր Բյուզանդիայի՝ Արևելքում վարած քաղաքականությունից և վաղուց էր ուզում վնասում նրա հետ պատերազմելու, օգտվում է հանգամանքից և ռազմական գործողություններ սկսում Բյուզանդիայի դեմ։ Բյուզանդիայից դժգոհ ժողովուրդների, առանձնապես հայ ժողովրդի գործուն աջակցությամբ՝ նրան հաջողվում է հաղթանակ տանել Բյուզանդիայի դեմ և հասնել մինչև Անտիոք ու գրավել այն։

Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև պատերազմական գործողությունները Հայաստանում շարունակվում են մինչև 562 թվականը, երբ կողմերը համաձայնության են գալիս և կնքում հաշտության պայմանագիր՝ 50 տարի ժամանակով։ Ըստ այդ պայմանագրի, երկու երկրների սահմանը մնում էր հինը։ Բացի այդ, Բյուզանդիան պարտավորվում էր տարեկան 30 000 ոսկի վճարել Ճորա պահակի պաշտպանության համար։ Պարսկա-բյուզանդական այս պատերազմի ժամանակ ամենից շատ տուժողը Հայաստանն էր։

2. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ VI ԴԱՐՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Հայաստանի տնտեսական ու քաղաքական վիճակը VI դարում

VI դարում հայ ժողովրդի դրությունը մխիթարական վիճակում չէր նաև Արևելյան՝ մարզպանական Հայաստանում։ Իր ասիմիլյատորական քաղաքականությամբ մեջ պարսկական արքունիքը հետ չէր մնում Բյուզանդիայից։ Հայաստանի ներքին անկախությունը վերացնելու ուղղու-

թյամբ առանձնապես լուրջ քայլեր կատարվեցին Խոսրով Նուշիրվան թագավորի երկարատև գահակալության շրջանում (531—578)։

Պարսկական տիրապետության տակ Հայաստանը, Վրաստանի և Աղվանից աշխարհի հետ միասին, մտնում էր Պարսկաստանի Հյուսիսային երկրամասի կամ քուստակի մեջ (Պարսկաստանը բաժանված էր նման չորս քուստակների)։ Հյուսիսային քուստակի վարչական կենտրոնը Գանձակն էր՝ Ուրմիայի լճի հարավ-արևելքում։ Ըստ սահմանված կարգի ամեն մի քուստակ ուներ իր վարչական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյան. առաջինը կոչվում էր «պատգոսպան», իսկ երկրորդը՝ «սպարապետ»։ Պատգոսպանի պարտավորության մեջ էին մտնում հարկեր հավաքելը, պետական շինարարությունը և այլն, իսկ սպարապետի՝ զինվորական հրամանատարությունը։ Երկրամասերն իրենց հերթին բաժանվում էին վարչական ավելի մանր մասերի՝ «մարզերի» և «շահրերյարների»։

Արևելյան Հայաստանը կազմում էր առանձին մարզպանություն։ 571 թվականից նրա կազմից առանձնացվեց Սյունիքը և Հայաստանից անկախ «շահրյարություն» ճանաչվեց։ Հայաստանի մարզպանները ենթարկվում էին երկրամասերի պատգոսպանին և սպարապետին ու պարտավոր էին վճարել արքունիքի կողմից նախապես սահմանված հարկը։ Նրանց պարտքն էր նաև կռվի ժամանակ սպարապետի տրամադրության տակ դնել իրենց զինված ուժերը և կատարել այն բոլոր հրամանները, որը կտրվեին նրանց։

Հայաստանի տնտեսական կյանքը VI դարում, նախորդ շրջանի համեմատությամբ, նշանակալի տեղաշարժեր է կատարում։ Դրան ղղալի չափով նպաստում է այդ դարաշրջանի աշխույժ տարանցիկ առևտուրը, որի մեջ խոշոր դեր է ունեցել առանձնապես Արևելյան Հայաստանը։ VII դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու «Մրոնաշափք» վերնագրով աշխատությունից երևում է, որ VI—VII դարերում Հայաստանի վրայով անցնելիս են եղել զանազան ուղղություններով 6 մայրուղիներ՝ 1) Դվին—Կարին—Կոլոնիա՝ դեպի Կոստանդնուպոլիս, 2) Դվին—Խլաթ—Ուռհա՝ դեպի Սրուսաղեմ, 3) Դվին—Բերդկունք—Պարտավ՝ դեպի Կասպից ծով, 4) Դվին—Նախիջևան՝ դեպի Գանձակ—Շահաստան, 5) Նախիջևան—Սյունիք—Վարդանակերտ—Փայտակարան՝ դեպի Կասպից ծով և, վերջապես, 6) Դվին—Կուղբ՝ դեպի Թիֆլիս։ Պատմական տեղեկություններից երևում է, որ Հայաստան էին բերվում ապրանքներ հեռավոր Հընդ-

վաստանից, Չինաստանից, Միջին Ասիայից, Բյուզանդիայից և այլ երկրներից։

Առևտրական այդ մայրուղիների վրա Հայաստանում զարգացում են մի շարք քաղաքներ, որոնցից առանձնապես խոշոր դեր է կատարում Դվինը։ VI դարի հույն պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին հետևյալ տեղեկությունն է տալիս Դվինի մասին. «Դվինը շատ բերրի երկիր է։ Նա ունի քարեխառն օդ և լավ ջուր։ Թեոդոսուլսից գտնվում է ութ օրվա ճանապարհի հեռավորության վրա։ Այստեղ դաշտերը հարթ են և հարմար։ Իրար մոտիկ բազմաթիվ գյուղեր կան, որոնք զբաղեցված են առևտրականներով, որովհետև Հնդկաստանից, հարևան Իբերիայից, Պարսկաստանից և Հռոմի գերիշխանության տակ գտնված գրեթե բոլոր ժողովուրդներից այստեղ են բերվում ապրանքներ, որոնցով և առևտուր են անում»։

Հայաստանը տարանցիկ առևտրի մեջ գործուն մասնակցություն է ունեցել։ Շիրակացու «Աշխարհացույց»-ից երևում է, որ Հայաստանը արտադրել է հետևյալ ապրանքները. Բարձր Հայքում նշվում է աղը, Զորորոդ Հայքում՝ «բյուրեղ» կոչվող թանկագին քարը. Աղձնիքում՝ երկաթն ու դեղաթորը, Տուրուբերանում՝ պղինձը, նավթը, երկաթը և մեղրը, Կորճեքում՝ զառիկը և շահանդակը, Վասպուրականում՝ ձուկը, Արցախում՝ քարախունկը, Փայտակարանում՝ բամբակը, Այրարատում՝ որդան կարմիր ներկը և այլն։ Չենք խոսում դեռ դեղաբույսերի և այլ ապրանքների մասին, որոնք հիշված են նաև այլ աղբյուրներում։

Հայաստանի քաղաքների և առևտրական կյանքի նման աշխուժացումը, հասկանալի է, չէր կարող չունենալ իր անդրադարձումը սոցիալ-տնտեսական կյանքում։ Մատենագրական տեղեկություններից երևում է, որ հայ որոշ իշխաններ և հոգևորականներ սկսում են առևտրով զբաղվել։ Քաղաքներում ուժեղանում է վաշխառությունը։ Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնյան եպիսկոպոսի 554 թվականին գրած կանոններում՝ բացառական երևույթների շարքում նշվում է նաև վաշխառությունը։ Դնալով ավելի ու ավելի են սրվում ու խորանում հակասությունները երկու հիմնական դասակարգերի միջև։

Հայ նախարարները, չնայած վասալական կախման մեջ էին, իրենց տիրույթների սահմաններում շարունակում էին պահպանել նախկին կիսանկախ վիճակը. իրենք էին ժողովրդից հարկ հավաքողները, իրենց նախարարության գերագույն իրավատերը, նրանց անմիջական տրամադրության տակ էր գտնվում զինյալ շրջանի զո-

րամասը, իրենք էին իրենց բերդերի և ամրությունների տերերը և այլն։

Պարսկական արքունիքը, Վահան Մամիկոնյանից հետո ևս, որոշ ժամանակ շարունակում էր Հայաստանի մարզպան նշանակել հայ նախարարներից։ VI դարում որպես մարզպան պաշտոնավարել են Վարդ Պատրիկը (506—509), իսկ հետագայում՝ Մժեժ Գնունին (521—555)։ Սակայն Մժեժ Գնունուց հետո նախկին կարգը փոխվեց և մարզպանության պաշտոնը նորից սկսեցին տալ պարսիկների։

Պարսից արքունիքը իր լուծը Հայաստանում ծանրացնելու նպատակով առաջին հերթին ավելացնում էր ժողովրդից գանձվող հարկերը։ Թագավորի հանձնարարությամբ կատարվում է մարդահամար, չափագրվում էին Հայաստանի պիտանի վարելահողերն ու մարգագետինները և ժողովրդից գլխահարկն ու հողահարկը սկսում էին գանձել նոր ցուցակներով։ Հարկերը հավաքում էին երեք նվագով։ Ըստ որում, գլխահարկը վերցվում էր միայն շինականներից և ռամիկներից (ազատանին և հոգևորականներն ազատ էին հարկերից), իսկ հողային հարկը գանձում էին բոլորից։ Չափահաս յուրաքանչյուր մարդուց գանձում էին 4-ից մինչև 12 դրամ, որը բավական խոշոր մի գումար էր։ Հարկերի մի մասը պահանջում էին դրամով, իսկ այն ժամանակվա պայմաններում այնքան էլ հեշտ չէր դրամ ճարելը։

Հայ շինականը և քաղաքային ռամիկը, պարսկական արքունիքին վճարած հարկից բացի, ծանր պարտավորություն ունեին նաև իրենց աշխարհիկ և հոգևոր տիրակալների հանդեպ. նրանք պարտավոր էին իրենց եկամտից բավական խոշոր բաժին հանել նաև նրանց։

Ըստ եկեղեցական ժողովների մեկի սահմանած կարգի, գյուղացիները գյուղի երեցին պարտավոր էին «պտղի» տալ հետևյալ կարգով. թվանիկը (հարուստ գյուղացին) պարտավոր էր վճարել 4 գրիվ ցորեն (մոտ 40 կիլոգրամ), 6 գրիվ (մոտ 60 կիլոգրամ) գարի և 16 բաժակ մեղր։ Չքավոր գյուղացին պարտավոր էր տալ դրա կեսը և գինի՝ որքան կամենա, իսկ վարելահող և այգի չունեցողը՝ ոչինչ։ Բացի այդ, ոչխար ունեցողը պետք է տար մեկ ոչխար, 3 ոչխարի բուրդ՝ և մեկ գլուխ պանիր, ձիեր ունեցողը՝ մեկ ավանակ, իսկ խոշոր եղջերավոր անասուններ ունեցողը՝ մեկ հորթ։

Ստեղծված ծանր պայմանների հետևանքով չքավոր գյուղացիներից ոմանք հարկադրված էին լինում իրենց հողամասերը վաճառել միջակ կամ հարուստ հողատիրոջը, զրկվել սեփական հողամասից և ընկնել ստրկական վիճակի մեջ։

VII դարի հայ եկեղեցական գործիչներից մեկը՝ Հովհան Մայրավանեցին, իր քարոզներից մեկի մեջ ահազանգում է բարիքներ ստեղծող հասարակական խավի անմխիթար վիճակը և առաջարկում լուրջ ուշադրություն դարձնել ընչազուրկ գյուղացիների վրա և բարելավել նրանց դրությունը։

Նույն հեղինակը ժամանակակիցների ուշադրությունն է հրավիրում նաև հասարակական մի այլ արատավոր խավի՝ վաշխառուների վրա։ Գյուղացիները, ասում է նա, հաճախ հարկադրված են լինում հարկ վճարելու համար դիմել վաշխառուներին և նրանցից տոկոսով փող խնդրել, իսկ վաշխառուներն օգտվելով առիթից դրամ են տալիս անխիղճ տոկոսներով, և երբ գյուղացիները ի վիճակի չեն լինում վճարելու վերցրած դրամն իր տոկոսներով, ապա ստրկական վիճակի մեջ են գցում նրանց։ Վաշխառուն, ասում է Մայրավանեցին, «անխիղճ ձևով ծծում է չքավորների արյունը... ցանք շարած՝ բերք է հավաքում... այն ժամանակ, երբ երկրագործը անձրև, առատություն և լիություն է ցանկանում. վաշխառուն երազում է սով և հարաճուն շահույթ»։

Այսպիսով, մարզպանական Հայաստանում ևս աշխատավոր բնակչության դրությունը մխիթարական չէր։ Նա գտնվում էր և՛ պարսկական նվաճողների, և՛ տեղական աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների կրկնակի հարստահարության տակ։

VI դարի կեսերից սկսած պարսկական արքունիքը նորից ասպարեզ է բերում անցյալ դարում Հայաստանում հաջողություն չդրտած իր կրոնափոխության ծրագիրը։ Սկզբում նա ամեն կերպ քաջալերում է հայ եկեղեցու՝ բյուզանդական երկարնակության դեմ մղած պայքարը, ցանկանալով թույլ չտալ երկու եկեղեցիների միասնությունը։ Հետագայում, սակայն, երբ ստեղծվում են քաղաքական նպաստավոր պայմաններ, նա նորից փորձեր է անում զրադաշտականությունը հիմնավորել Հայաստանում, Վրաստանում և Աղվանից աշխարհում։

Պարսկական արքունիքի՝ Հայաստանում վարած տնտեսական, վարչական և դաղափարական այս քաղաքականության հետևանքով առաջանում են դժգոհություններ հայ ժողովրդի գրեթե բոլոր խավերի մեջ. հայ իշխանները դժգոհ էին իրենց իրավունքներին ըստանացող վտանգը տեսնելով, հայ շինականները դժգոհ էին կրկնակի և դաժան հարստահարության ենթարկվելու համար, հայ հոգևորականները դժգոհ էին կրոնափոխության վտանգի պատճառով։ Շուտով այդ դժգոհությունները խորանում և փոխվում են ազատագրական հզոր շարժումների և ապստամբության։

571—572 թվականների ապստամբությունը

Պարսկական բռնապետության դեմ Արևելյան Հայաստանում նոր ապստամբությունը բռնկվում է 571—572 թ.։ Այդ ապստամբության մասին հայկական պատմիչներից տեղեկություններ են հաղորդում Սեբեոսը (VII դար) և Ստեփանոս Ասողիկը (X—XI դար)։ Օտար պատմիչների տեղեկություններից արժանահավատ է VI դարի դեպքերի ժամանակակից, ասորի մատենագիր Հովհաննես Եփեսացու վկայությունը. նա անձամբ հանդիպում է ունեցել ապստամբության մասնակիցների հետ և արձանագրել նրանց պատմածները։ Պատմիչները ապստամբության պատճառները հիմնականում երեքն են համարում՝ 1) հարկերի աննախընթաց ծանրացումը, 2) հայ իշխանների իրավունքների ոտնահարումը և 3) կրոնափոխության հարկադրանքը։

Ըստ պատմական տեղեկությունների, խոսրով Նուշիրվանը արտակարգ լիազորություններով Հայաստանի մարզպան է նշանակում իր ազգական Սուրեն Վշնասպին։ Սա, դալով Հայաստան, առաջին հերթին ծանրացնում է ժողովրդից գանձվող հարկերը, հալածում, հետապնդում է հայ իշխաններից ոմանց, ղրկաշտությունը Հայաստանում տարածելու համար ավելում է ատրուշաններ կառուցել։ Հովհաննես Եփեսացու մի տեղեկությունից երևում է, որ Սուրեն մարզպանը այդ ամենն արել է ոչ թե իր անձնական նախաձեռնությամբ, այլ նախապես ունեցել է պարսկական արքունիքի հրահանգը։

Այդ ժամանակ հայկական զորքերի հրամանատարն էր Վարդան Մամիկոնյանը, որը, ի տարբերություն V դարի Վարդան Մամիկոնյանի, պատմության մեջ կոչվում է Կարմիր Վարդան։ Վարդանը, պարսկական արքունիքի նկատմամբ բնդհանուր դժգոհություն ունենալուց բացի, ուներ նաև անձնական թշնամանք Սուրեն մարզպանի դեմ, որովհետև վերջինս սպանել էր իր եղբորը՝ Մանվելին։ Ապստամբությունը կազմակերպելու գործում մեծ դեր է կատարում նաև կաթողիկոս Հովհաննես II Գաբեղենացին։

Մատենադիրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ ապստամբությունը ևս նախապես մտածված և կազմակերպված է եղել։ Վարդան Մամիկոնյանը և կաթողիկոսը նախապես հատուկ պատգամավորություն են ուղարկում Կոստանդնուպոլիս, Հուստինոս կայսրից օգնություն խնդրելու։ Կայսրը հաստատապես խոստանում է օգնել հայերին։ Նա հայտարարում է, որ ինքն ամեն ջանք կործ կդնի ազատագրելու և իր գերիշխանության տակ վերցնելու

Արևելյան Հայաստանը, և եթե ռազմական գործողություններն անհաջող դասավորվեն, ապա ինքը ապաստան կտա ապստամբության ղեկավարներին և նրանց չի հանձնի պարսկական իշխանություններին։

Արևելյան Հայաստանի ապստամբության ղեկավարները միաժամանակ պատգամավորություն են ուղարկում Վրաստան և Աղվանից աշխարհը և օգնություն խնդրում նրանցից։ Նրանք ևս խոստանում են աջակցել հայ ապստամբներին։ Վրաստանում ապստամբությունը ղեկավարում էր Գուրգենը, իսկ Աղվանից աշխարհում՝ Շիրոն։

Հայաստանում ապստամբներն սկսում են կազմակերպել իրենց զորամասերը՝ հասցնելով տասը հազար հոգու։ Ապստամբության ղեկավար է նշանակվում Վարդան Մամիկոնյանը։ Ապահովության համար կաթողիկոսարանի գանձարանը, արժեքավոր իրերը և դիվանը տեղափոխում են Թեոդոպոլիս։

Հայ ապստամբների այս նախապատրաստությունը, իհարկե, չէր կարող վրիպել պարսկական մարզպանի աչքից, որը հնազանդության էր հրավիրում ժողովրդին։ Վարդան Մամիկոնյանը և կաթողիկոսը պահանջում են դադարեցնել ատրուշանների շինարարությունը, պարսկական զորքերը դուրս հանել երկրից և կարգավորել ժողովրդից գանձվող հարկերը։ Մարզպանը մեկնում է Տիզբոն՝ զեկուցման։

Խոսրով թագավորը, երբ իմանում է հայերի մտադրությունը, դազազում է, զորք է տալիս Սուրենին և կարգադրում շտապ վերադառնալ Հայաստան՝ ճնշելու ապստամբությունը և ընաջինջ անելու հայերին։ Նա միաժամանակ ցանկանում է իմանալ, թե ի՞նչ դիրքորոշում ունի ապստամբների նկատմամբ բյուզանդական արքունիքը։ Այդ նպատակով նա պատգամավորություն է ուղարկում Կոստանդնուպոլիս՝ պահանջելով այդ տարվա 30 000 ոսկու ռազմատուգանքը։ Կայսրը հրաժարվում է վճարել ռազմատուգանքը, իսկ հայ ապստամբների մասին հայտարարում է, որ եթե նրանք ապրստամբեն, ապա ինքը պաշտպանության տակ է առնելու նրանց։

Դրանից հետո պարսիկ մարզպանը, 15 000-անոց զորաբանակի գլուխ անցած, շարժվում է Արևելյան Հայաստան՝ ճնշելու ապստամբությունը։

VII դարի պատմիչ Հովհան Մամիկոնյանն իր «Պատմութիւն Տարօնոյ» աշխատության մեջ գրի է առել ժողովրդական առասպելախառն այն զրույցները, որոնք հյուսվել են ազատագրական այս պայքարի շուրջը և դեռ թարմ են եղել ժողովրդի հիշողության

մեջ։ Ըստ այդ զրույցների, Սուրենն իր զորքով գալիս է Հայաստան և բանտարկված տեսնում իր եղբայր Վախթանգին և նրա կնոջն ու որդուն։ Նա պահանջում է ապստամբներից, ի հաշիվ Հայաստանի վճարելիք հարկի, բանտից ազատել իր եղբորն ու նրա ընտանիքին։ Ըստ Հովհան Մամիկոնյանի, նա դիմել է ապստամբների ղեկավարներից մեկին՝ Սմբատին, հետևյալ խոսքերով. «Իշխան հզօր աշխարհիս Հայոց, տուր զայս կին և զորդի (ձերբակալված Վախթանգի կինը և որդին) պարսից արքայի տուրս»։ Սմբատը պատասխանել է. «...Մեռեալ շուն մի որ զայն ճաշ ուտէ առանց գնոյ ոչ տամ, թող թե զդոսա»։

Պարսկական բանակը, մարզպանի գլխավորությամբ, գալիս հասնում է Դվին։ Նրանց գալուստն ավելի է զայրացնում հայ հայրենասերներին։ Նրանք վերջնականապես համոզվում են, որ պարսկական արքունիքը նպատակ չունի փոխել իր քաղաքականությունը Հայաստանում։ Սպասելն արդեն անիմաստ էր։ Եվ ահա հայկական բանակը, որ մինչև մարզպանի գալն ավելացել էր և հասել 20000-ի, Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, 572 թվականի փետրվարի 2-ին, երեքշաբթի օրը, հարձակվում է Դվինում գտնվող պարսկական զորքերի վրա։ Պարսիկները, անակնկալի եկած, չեն կարողանում կազմակերպել պաշտպանությունը և դիմում են փախուստի։ Սակայն դյուրին չի լինում Հայաստանից փախչել ազատվելը. նրանց մեծ մասն ապանվում է։ Սպանվում է նաև պարսկական մարզպան Սուրենը։ Ըստ Շիրակացու թվաբանական մի խնդրի մեջ բերված տեղեկության, մարզպան Սուրենին սպանողը եղել է Զորակ Կամսարականը։

Խոսքովը, պարսկական զորքերի՝ Հայաստանում կոտորվելու լուրն առնելով, կարգադրում է անմիջապես նոր զորաբանակ ուղարկել Հայաստան՝ ապստամբությունն արյան մեջ խեղդելու համար։ Բայց իր խորհրդականները համոզում են նրան սուր միջոցների չդիմել և փորձել ապստամբներին հնազանդեցնել համոզելով։ Այդ նպատակով, պարսկական արքունիքը պատգամավորություն է ուղարկում Հայաստան՝ Սեբուխտ անունով մի պաշտոնյայի գլխավորությամբ։ Ապստամբները, սակայն, արգելում են պատգամավորությանը մտնել Հայաստան և հրաժարվում են բանակցել նրա հետ։

Պարսկական արքունիքը Հայաստան է ուղարկում նոր բանակ՝ Միհրան Մեհևլանդակի գլխավորությամբ։ Հայկական և պարսկական զորքերի միջև ճակատամարտը տեղի է ունենում Խաղամախյա դաշտում։ Այստեղ պարսկական զորքը խայտառակ պարտություն է

կրում. հրամանատարը հազիվ է կարողանում փախչել և ազատվել։

Հայաստանը և իր դրացիներ Վրաստանն ու Աղվանքը դուրս են գալիս պարսկական գերիշխանության տակից և մտնում Բյուզանդիայի գերիշխանության տակ։ Սակայն պարսկական արքունիքը չէր կարող այդքան հեշտությամբ Բյուզանդիային զիջել Հայաստանը ու Անդրկովկասը, որի պատճառով երկու խոշոր պետությունների՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բռնկվում է պատերազմ, որը տրոշ ընդհատումներով տևում է ավելի քան 20 տարի։

Հայաստանում բռնկված ապստամբությունը ճնշելու նպատակով Պարսկաստանը կազմակերպում է բազմաթիվ արշավանքներ, որոնք բոլորն էլ անհաջողությամբ են վերջանում։ Հայ հայրենասերները անօրինակ քաջությամբ և հնարամտությամբ պաշտպանում են Հայաստանն օտարերկրյա նվաճողներից։

Պարսկա-բյուզանդական պատերազմները և Հայաստանի երկրորդ բաժանումը

575 թվականին պարսիկները ու բյուզանդացիները համաձայնության են գալիս և զինադադար կնքում։ Պարսից արքունիքը օգտվելով առիթից, աշխատում է բռնի ուժով հնազանդեցնել հայ ապստամբներին։ Հայերն իրենց փոքրաթիվ ուժերով հերոսական դիմադրություն են ցույց տալիս պարսկական զորաբանակին։

Պարսիկների և բյուզանդացիների միջև ռազմական գործողությունները նորից սկսվում են 576 թվականին։ Նոր փորձեր են լինում հաշտություն կնքելու, սակայն կողմերը համաձայնության չեն գալիս։ Պարսկական արքունիքը ցանկանում էր ստանալ նախկինում սահմանված տարեկան 30 000 ոսկի ռազմատուգանքը, նա պահանջում էր նաև Արևելյան Հայաստանի գործերին չմիջամտել, իսկ Բյուզանդիան հրաժարվում է։ 580 թվականին բյուզանդական կռվող բանակի հրամանատարներն են նշանակվում Մորիկը (որը հետագայում կայսր դարձավ և գահակալեց 582—602) և Ժազումով հայ Ներսես զորավարը, որոնք մի շարք ճակատամարտերում խորտակիչ հարվածներ են հասցնում պարսիկներին և դրանով որոշում պատերազմի ելքը։

Պարսկա-բյուզանդական այս պատերազմի հետևանքներն առանձնապես ծանր են լինում Հայաստանի համար, որը տրորվում էր կռվող բանակների ոտքերի տակ։ Երկու կողմից Հայաստան խուժած օտար բանակներն ավերում էին երկիրը և անարգել կողոպտում բնակչությանը։ Հայ երիտասարդության դգալի մասը, առան-

ձին զորամասեր կազմած մասնակցում էր պատերազմական գործողություններին՝ բյուզանդացիների կողմում։

Երկարամյա պատերազմի հետևանքները ծանր են լինում նաև Պարսկաստանի համար, որի բանակում 589 թվականին ապստամբություն է բռնկվում Որմիզդ թագավորի դեմ։ Ապստամբությունը գլխավորում էր Վահրամ Չուբինը՝ պարսկական զորքի հրամանատարը։ Ապստամբները կուրացնում են Որմիզդ թագավորին և նոր թագավոր հռչակում նրա փոքրահասակ որդուն՝ Խոսրովին։ Սակայն վերջինս վստահություն չի ունենում ապստամբների նկատմամբ և ապստամբների հետ ունեցած անհաջող մի ընդհարումից հետո փախչում է Բյուզանդիա և խնդրում Մորիկի օգնությունը։ Խոսրովը խոստանում է՝ գահի վրա հաստատվելուց հետո՝ Բյուզանդիային զիջել Միջագետքի և Անդրկովկասի մի շարք ռեգիոնամասեր ու Արևելյան Հայաստանը։

Մորիկն ընդունում է Խոսրովի առաջարկը և նոր զորամասեր ուղարկում արևելք։ Հայաստանում ևս հայկական զորագնդերը, թվով 15 000 հոգի, Տարոնի իշխան Մուշեղ Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու գլխավորությամբ, պատրաստվում են կռվի։ Վահրամ Չուբինը փորձում է հայերին դրավել իր կողմը և խոստանում նրանց անկախություն շնորհել, եթե օգնեն իրեն՝ հաղթելու Խոսրովին։ Սեբեոսն իր Պատմության մեջ բերել է Վահրամ Չուբինի՝ հայերին ուղարկած նամակի պատճենը։ Հայերը, ըստ երևույթին, հույս չունենալով, որ Չուբինը կարող է հաջողություն ունենալ, հրաժարվում են նրան օգնելուց։

Չուբինի և Խոսրովին օգնող բյուզանդական զորքերի միջև կռիվը տեղի է ունենում Ատրպատականում։ Չուբինը պարտվում է և դիմում փախուստի։ Բյուզանդական զորքերը Խոսրովին հաստատում են Պարսկաստանի գահի վրա։ Դրանով վերջանում են պարսկա-բյուզանդական արյունոտ կռիվները։

Երկարամյա այդ կռիվները, որոնց մասնակցում էին հայերը՝ Բյուզանդիայի կողմում, ոչ միայն չեն դնահատվում կայսրության կողմից, այլև վերջնական հաղթանակից հետո Մորիկն սկսում է իրագործել Հայաստանը՝ առանց հայերի, իր որդեգրած քաղաքականությունը։ Նա աշխատում է առաջին հերթին Հայաստանից դուրս հանել հայկական ռազմական ուժերը։

Սեբեոսը բերել է հայերի մասին Մորիկ կայսեր մի նամակը՝ ուղղված պարսից Խոսրով թագավորին։ Նամակում Մորիկը հետևյալն է գրել. «Մեր երկուսի մեջ խոտոր և անհնազանդ մի ժողովուրդ կա... Եկ, ասում է նա, ես իմ մասում գտնված (հայերին)

հավաքեմ և տեղափոխեմ Թրակիա, իսկ դու քո մասի հայերին հավաքիր և տեղափոխիր Արևելք. եթե կմեռնեն՝ մեր թշնամիները կըմեռնեն, իսկ եթե կմեռցնեն՝ մեր թշնամիներին կմեռցնեն»։

Բյուզանդիայի քրիստոնյա կայսրը ոչ միայն հայերին արտաքսելու ծրագիր էր կազմում, այլև աշխատում էր այն իրագործել կյանքում։ Նրա կարգադրությամբ Հայաստանում կազմվում է երկու հազար հոգուց կազմված երկու գունդ՝ Սմբատ Մամիկոնյանի և Սմբատ Բագրատունու գլխավորությամբ՝ Թրակիա ուղարկելու նպատակով։ Սմբատ Մամիկոնյանն իր գունդը տանում է Կոստանդընուպոլիս՝ Սեբաստիայի վրայով, իսկ մյուս գունդը, չցանկանալով հայրենիքից հեռանալ, ճանապարհին ապստամբում և ամրանում է լեռներում։ Ապստամբության գլուխ է կանգնում Սմբատ Բագրատունին։ Նրանց միանում են Բյուզանդիայի քաղաքականությունից դժգոհ մյուս հայ նախարարները ևս։ Նրանց բոլորին, ըստ Սեբեոսի վկայության, մի ցանկություն էր համակում՝ «զի մի և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց»։

Շուտով բյուզանդացիներին հաջողվում է ճնշել ապստամբությունը և Սմբատ իշխանին բռնել ու շղթայակապ տանել Կոստանդընուպոլիս։ Սմբատին դատապարտում են մահվան՝ կրկեսում դիշատիչ գազանների առջև նետելու միջոցով։ Սակայն հայ իշխանը, որը բարձրահասակ, թիկնեղ և մեծ ուժի տեր էր, կարողանում է հաջողությամբ կռվել գազանների դեմ, սպանել իրեն հոշոտելու նետված գազաններին և արժանանալ հանդիսականների, այդ թվում նաև կայսեր հիացմունքին և ներմանը։

Երկար բանակցություններից հետո 591 թվականին Բյուզանդիան և Պարսկաստանը վերջնական համաձայնության են գալիս և երկրորդ անգամ Հայաստանը բաժանում իրար մեջ։ Էստ նոր բաժանման, Բյուզանդիային են անցնում Տուրուբերան նահանգը և Այրարատյան նահանգի մեծ մասը։ Բաժանման սահմանագիծ է դառնում Ազատ գետը, Կոդովիտ գավառը, Մակուն՝ մինչև Վանա լիճը։

Հայաստանի նոր բաժանումը ավելի է խորացնում նրա քաղաքական անջատվածությունը։ Գոնվում են հայ եկեղեցականներ, որոնք հարում են քաղկեդոնականությանը և կայսրության կամակատարները դառնում։

Հայաստանում ստեղծվում է երկու կաթողիկոսություն. մեկի կաթողիկոսն է դառնում հակաքաղկեդոնական Մովսես II Եղվարդեցին, որի գահանիստ կենտրոնը Դվինն էր, իսկ մյուսինը՝ քաղկեդոնական Հովհաննես Բագրևանդցին, որի գահանիստ կենտրո-

նը Ավան գյուղաքաղաքն էր։ Եվ այս երկու կաթողիկոսները պայքարում են իրար դեմ՝ ավելի խորացնելով հայ հասարակական-կյանքի քաղաքական մասնատվածությունը։

591 թվականի բաժանումից հետո, մինչև Մորիկի մահը՝ 602 թվականը, Մերձավոր Արևելքը, այդ թվում նաև Հայաստանը, համեմատաբար գտնվում էր խաղաղ շրջանում։ Այդ խաղաղությունն այնքան ակնառու է եղել VI դարի 70—80-ական թվականների անընդմեջ պատերազմների փոթորիկներից հետո, որ ժողովրդի մեջ առածի կարգն է անցել. «Անհոգ այնպես ես նստել, որ կարծես Մորիկի ժամանակ լինի»։

Մերձավոր Արևելքի խաղաղությունը, սակայն, նորից խախտվում է Մորիկի սպանությունից հետո, Փոկասի դահակալության տարիներին (602—610)։ Պարսկաստանը, ցանկանալով օգտվել Բյուզանդիայում տեղի ունեցող դահակալական կռիվներից, ինքը ևս առաջարկում է իր թեկնածուն՝ Թեոդորոսին՝ Մորիկի կարծեցյալ որդուն։ Իր բարեկամի և բարերարի վրեժն առնելու նպատակով Խոսրովը 605 թվականին անցնում է բյուզանդական սահմանը և վերցնում Դարան։ Հետագայում, զարգացնելով պատերազմական գործողությունները, նա հաջողությամբ առաջ է շարժվում և 609 թվականին հասնում մինչև Քաղկեդոն և սպառնում Կոստանդնուպոլսին։ Ճակատագրական այդ պահին Կոստանդնուպոլսում տեղի է ունենում դահակալական մի նոր հեղաշրջում. դահընկեց են անում Փոկասին և դահ բարձրացնում Հերակլին (610—641)։

Հերակլը փորձում է խաղաղություն կնքել Խոսրովի հետ, սակայն վերջինս վճռականապես հրաժարվում է։ Ռազմարումները նորից են վերսկսվում և փոփոխակի հաջողություններով շարունակվում մինչև 622 թ.։ Պատերազմական գործողությունների ընթացքը փոխվում է այն ժամանակ, երբ կայսրը բյուզանդական բանակը համալրում է նոր լեգեոններով։ Հերակլին օգնում էր Մեծ Գնունի իշխանը՝ հայկական գնդով։

Պարսկական և բյուզանդական բանակների վճռական ճակատամարտը տեղի է ունենում հին Նինվեի մոտերքում՝ 627 թվականին։ Բյուզանդական բանակը վճռական հաղթանակ է տանում և հետապնդելով թշնամուն, շարժվում է Տիգրոնի վրա։ Այդ ժամանակ խռովություն է առաջանում պարսկական բանակում, և սպանվում է Խոսրովը։ Պարսկական դահն է բարձրանում Կավատը, որը 628 թվականին Բյուզանդիայի հետ կնքում է հաշտության նոր պայմանագիր։

Հերակլը Հայաստանի կյուրոպաղատ է նշանակում Դավիթ Սահառունուն։

Հայաստանին, սակայն, վիճակված չէր խաղաղ ապրել, շուտով պատմության ասպարեզ է իջնում Արաբական խալիֆայությունը և սկսում բախել երկու ախոյան երկրների՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի խարխված դռները։

ԳԼՈՒԽ XV

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ IV—VIII ԴԱՐԵՐՈՒՄ

Հայ գրի և գրականության ստեղծման շարժառիթը

Դժվար է բազմադարյան հայ մատենագրության մեջ մատնացույց անել մշակույթային մի այլ ակնառու ու կարևոր երևույթ, որը կարելի լինի համեմատության մեջ դնել հայկական գրի և գրականության ստեղծման հետ։ Հայկական գրի ստեղծումը դարագլուխ կազմեց միջնադարյան հայ մատենագրության մեջ և պաշտպանողական հզոր վահան հանդիսացավ օտարերկրյա նվաճողների վարած քաղաքականության դեմ։ Հայ գիրը կապի հզոր միջոց հանդիսացավ ցրված հայության համար, այն բարձրացրեց ժողովրդի քաղաքական ինքնագիտակցությունը՝ նախապատրաստելով նրան դալիք փորձություններին։

Հայ գրի և գրականության ստեղծումը, իհարկե, պատահականության արդյունք չէր, այլ պայմանավորված էր իր ժամանակի հայ հասարակական և քաղաքական կյանքում առաջացած կենսական անհրաժեշտությամբ։ Պատահական չէ, որ հայ գրի և գրականության անհրաժեշտությունը առաջացավ ո՛չ թե չորրորդ դարում, երբ գոյություն ուներ հայ անկախ պետականություն, այլ հինգերորդ դարում, երբ հայ ժողովուրդը ընկավ օտարի լծի տակ և սկսեց մաքառել իր ֆիզիկական գոյության պահպանման համար։

387 թվականին, Հայաստանի բաժանումից հետո, ինչպես ասվել է, Հայաստանն ընկավ պարսկական և բյուզանդական տիրապետության տակ։ Հայ պետականության կորուստը, սակայն, ներքին անկախության կորուստ չէր նշանակում. հայ նախարարները ինչպես բյուզանդական, այնպես և պարսկական մասերում շարունակում էին պահպանել իրենց ներքին անկախությունը։ Իրենց տի-

ռուլթների սահմաններում նրանք փոքրիկ թագավորներ էին. ունեին սեփական զորք, և իրենց ձեռքում էին պահում վարչական մի շարք իրավունքներ։ Նախարարների վասալական կախվածությունը պարսկական կամ բյուզանդական իշխանավորների հանդեպ արտահայտվում էր նրանով, որ նրանք պարտավոր էին վճարել նախապես սահմանված հարկը և պատերազմներին մասնակցել իրենց զորքերով։

Հայաստանի քաղաքական այս վիճակը, իհարկե, ցանկալի չէր ո՛չ Բյուզանդիային և ո՛չ էլ Պարսկաստանին։ Կիսանկախ վիճակում գտնվող հայ նախարարները հնարավորություն ունեին օգտագործել հարմար առիթը և ապստամբել, մանավանդ որ ժողովուրդը չէր հանդուրժում օտարերկրյա լուծը։ Բացի այդ, տիրակալների նպատակն էր ոչ միայն վերացնել հայ նախարարների ներքին անկախությունը, այլև ասիմիլյացիայի ենթարկել ողջ ժողովրդին։ Ահա այս ծանր շրջանում, երբ երկիրը բաժանված էր երկու մասի, երբ երկու կողմերում էլ նվաճողները որոշակիորեն վարում էին ձուլողական քաղաքականություն, անհրաժեշտ էր ժողովրդին դրդաստության և պայքարի կոչել։ Բախտորոշ այդ ժամանակում էական դեր ուներ կատարելու հայ դիրն ու գրականությունը։

Ամենից մեծ վտանգը հայ ժողովրդին սպառնում էր քրիստոնեական Բյուզանդիան։ Զուլողական քաղաքականության համար նա ուներ ավելի նպաստավոր հող հետևյալ պատճառով։ Հեթանոսական հայ մշակույթին սպանիչ հարված հասցրեց նորամուտ քրիստոնեությունը։ Ճիշտ չէ, որ հեթանոսությունն իր տեղը կամավոր զիջեց քրիստոնեությանը։ Քրիստոնեությունը արտակարգ անհանդուրժողական վերաբերմունք ցուցաբերեց դեպի հեթանոսական հայ մշակույթը։ Քրիստոնեության առաջին մեծ զոհերից մեկը կարելի է ասել, որ հեթանոսական հայ մշակույթը հանդիսացավ։

Լուսավորիչը և Տրդատը կրթություն էին ստացել հունական միջավայրում։ Նրանք իրենց շրջապատել էին հույն և ասորի քարոզիչներով։ Հեթանոս հայկական մատենագրության արգելումից հետո Հայաստանում սկսեցին իշխող դիրք գրավել հունական և ասորական քարոզիչները, որոնք իրենց հետ բերում էին ոչ միայն նոր վարդապետությունը, այլև իրենց լեզուն և մատենագրությունը։ Գրագրությունն սկսեցին վարել հունարեն և ասորերեն։ Դպրոցներում հայ երեխաների հետ սկսեցին պարապել հունարեն և ասորերեն։ Նույնիսկ եկեղեցական ծիսակատարությունները կատարվում էին հունարեն և ասորերեն լեզուներով։ Եթե IV դարում, երբ գոյություն ուներ հայ պետականություն, ստեղծված այդ վիճակն այն-

քան էլ վտանգավոր չէր, ապա Հայաստանի բաժանումից հետո, երբ նվաճողները հայ ժողովրդի նկատմամբ վարում էին ապազգայնացման քաղաքականություն, դրությունն է՛լ ավելի վտանգավոր դարձավ։ Հայ ժողովուրդը կանգնեց մեծ փորձությունների առաջ։

Պետք է նկատի ունենալ, որ Բյուզանդական կայսրությունը հիմնված էր ոչ թե միատարր ժողովրդի վրա, այլ էթնիկական խառնարանի՝ հույների, ասորիների, հայերի, հրեաների և այլ ժողովուրդների։ Արքունիքը եռանդուն միջոցներ էր ձեռնարկում կայսրության սահմաններում գտնվող փոքր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի ձուլման ուղղությամբ։

Այդ քաղաքականության մեջ Բյուզանդական կայսրության գործոն աջակցի դերում հանդես էր գալիս քրիստոնեական եկեղեցին։ Մինչև 451 թվականը, երբ դեռ չէին պառակտվել և ընդհանրական, եկեղեցու մասն էին կազմում եգիպտացիները, ասորիները, նեթովպացիներն ու այլ ժողովուրդներ, երբ նրանց մոտ դեռ չէր խախտվել հավատը Բյուզանդիայի նկատմամբ ու նրա վրա նայում էին իբրև քրիստոնեության պաշտպան պետության, նպաստավոր պայմաններ էր ստեղծվել բյուզանդական ձուլողական քաղաքականության համար։

Հայ ժողովրդի նկատմամբ, ինչպես ասվել է, ձուլողական քաղաքականություն էր վարում նաև Սասանյան Պարսկաստանը։ Իր նպատակին հասնելու համար նա ևս օգտագործում էր կրոնը և ցանկանում հայ ժողովրդին պարտադրել զրադաշտական կրոնը։ Պետք է նկատի ունենալ, որ հեթանոսական շրջանում հայերը պաշտամունքով մոտ էին պարսիկներին և քրիստոնեությունն ընդունելուց հետո նրանք անխզելիորեն դեռ չէին պոկվել պարսկական հավատալիքից, մանավանդ՝ լեռնային շրջաններում։ Իսկ այս նրպաստավոր հող էր ստեղծում պարսկական արքունիքի վարած քաղաքականության համար։ Այսպիսով, օտար ազդեցությունների դեմ դաղափարական պայքար մղելու համար գիր ու գրականությունն էր հարկավոր։

Գրի և գրականության ստեղծման հիմնական շարժառիթներից մեկը, իհարկե, նաև քրիստոնեական ուսմունքը ժողովրդի մեջ պրոպագանդելն էր։

Հայ ժողովրդի պատմության այս ծանր, բախտորոշ շրջանում է ահա, որ հանդես է գալիս հայ հայրենասեր մատենագրականների այն ընտիր խումբը, որն ըմբռնելով ժամանակի մեծ խորհուրդը, հայ ժողովրդին սպառնացող ահավոր վտանգը, ձեռնարկում է հայ

գրի և գրականության ստեղծմանը և հաջողությամբ իրագործում այն։ Լուսավորական այս մեծ շարժման հանճարեղ ղեկավարի և կազմակերպչի դերում հանդես է գալիս մեծ հայրենասեր Մեսրոպ Մաշտոցը։

Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ստեղծումը

Մեսրոպ Մաշտոցի մասին մեզ տեղեկություն են հաղորդում հինգերորդ դարի երեք պատմիչներ՝ Կորյունը, Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին։ Կորյունը եղել է Մաշտոցի ավագ աշակերտներից, գործուն մասնակցություն է ունեցել հայ գրի և գրականության ստեղծմանը և իր ուսուցչի մահվանից հետո, որպես լավատեղյակ անձնավորություն, գրել և մեզ է թողել իր երախտավոր ուսուցչի կենսագրությունը՝ «Վարք Մաշտոցի» խորագրով։

Մաշտոցի մասին բացառիկ դրվատանքով է խոսում նաև Ղազար Փարպեցին։ Նա ծանոթ է Կորյունի աշխատությանը, տեղ-տեղ օգտվել է նրանից և, որպես արժանահավատ աղբյուր, մատնացույց է անում այն. «Եթե որևէ մեկը կամենում է ավելի հավաստի գիտենալ նրա (այսինքն՝ Մաշտոցի) գործունեության և հայերեն նշանագրերը ստեղծելու մասին,— գրում է նա,—թող կարդա և տեղեկանա սիրելի Կորյունի, հանգուցյալի աշակերտի գրածը...»։

Ուշ դարերի պատմիչներից ու տարեգիրներից Մաշտոցի մասին տեղեկություններ են հաղորդում Անանիա Շիրակացին (VII դ.), Հովհաննես Դրասխանակերտցին (X դ.), Ստեփանոս Ասողիկը (X—XI դար), Սամվել Անեցին (XII դ.) և ուրիշներ։ Սակայն նշված հեղինակների վկայությունները պատմական մեծ արժեք չեն ներկայացնում, որովհետև նրանք, հիմնականում, օգտվել են Կորյունից, Մովսես Խորենացուց և Ղազար Փարպեցուց։

Մաշտոցի մասին մեզ տեղեկություն հաղորդող հեղինակները մեծ մասամբ եկեղեցականներ են և հայ գրի ու գրականության ստեղծման մասին խոսում են կրոնա-քարոյախոսական տեսանկյունով։ Որոշ պատմիչների մոտին կրոնական այդ շեշտն այնքան ուժեղ է, որ հաճախ միստիկ հրաշապատումների մեջ մթագնվում է Մաշտոցի պայծառ կերպարը որպես անձնվեր հայրենասերի, մեծ գիտնականի և խոշոր կազմակերպչի։

Ըստ Կորյունի տեղեկության Մաշտոցը ծնվել է Տուրուբերանի Նահանգի Տարոն գավառի Հացիկ կամ Հացեկաց գյուղում, որն իր անունը պահել էր մինչև մեր ժամանակները։ Հոր անունը եղել է Վարդան։

Տոմարագիտական մոտավոր հաշվումներով Մաշտոցը ծնված պետք է լինի 361—364 թվականներին։ Մաշտոցը հունական

Կրթություն է ստացել։ Չորրորդ դարում Հայաստանում գործող բոլոր դպրոցները, առանց բացառության, ինչպես ասել ենք, հունական կամ ասորական կրթություն էին տալիս։

Մաշտոցի ստացած դաստիարակության հարցում ավելի հավանական է այն ենթադրությունը, որ Մաշտոցը սովորել է Անտիոքում, Լիբիանոսի նշանավոր դպրոցում։ Այդ դպրոցի շրջանավարտներից են եղել համաշխարհային հռչակ վայելող մի շարք դեմքեր՝ Հովհան Ոսկեբերանը, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Նազիանզացին, Թեոդորոս Մոպսուեստացին, Ղևոնդ Հայկազնը և ուրիշներ։

Տարոնցի երիտասարդը իր կրթությունը ավարտելուց հետո գալիս է Վաղարշապատ, որն այն ժամանակ կոչվում էր Նոր քաղաք, և ծառայության մտնում հայ Արշակունիների արքունիքում Առաջնորդի հաղարապետության տարիներին։ Մաշտոցի տեղական ծառայությունը արքունիքում որոշակի կապված է զինվորական գործի հետ։ Այդ երևում է Կորյունի մի ակնարկից, որ Մաշտոցը հմուտ էր աշխարհական կարգերի մեջ և զինվորական արհեստը լավ տիրապետած լինելու համար՝ սիրված զինվորականներից։ Մաշտոցը, սակայն, արքունի ծառայության մեջ երկար չի մնում։ Նա հոգևոր կոչում է ընդունում և մեկնում քարոզչության Դողթն գավառը։

Ինչո՞վ բացատրել Մաշտոցի այս շրջադարձը զինվորականից՝ հոգևորական գործին, ի՞նչն ստիպեց նրան այդ քայլն անելու։ Եթե հավատալու լինենք եկեղեցական պատմաբաններին, ապա այդ քայլն անելու դրդից Մաշտոցի բարեպաշտությունը։ Սակայն ուշադիր քննելով պատմական սկզբնաղբյուրները, դալիս ենք այլ եզրակացության։ Մաշտոցը պաշտոնավարելով հայկական արքունիքում, շփվելով հայ հասարակական ու քաղաքական լայն շրջանների հետ և մոտիկից ծանոթանալով արաբակա-բյուզանդական տիրակալների ապազգայնացման դիտավորություններին, տեսնում էր այն ահռելի վտանգը, որ սպառնում էր հայ ժողովրդին, ուստի նրա մոտ արթնանում է այն գիտակցությունը, որ հայ ժողովրդի փրկության միակ միջոցը ինքնուրույն գիր ու գրականություն ունենալն է։

Այս մտածումի մեջ, ինչպես երևում է, Մաշտոցը միայնակ չէր։ Բայց ինչո՞վ, ինչպե՞ս կարող էր նա օգտակար լինել իր ժողովրդին, փրկել նրան կործանումից։ Միակ ասպարեզը, ուր նա կարող էր գործել և իրականացնել իր նպատակները, եկեղեցին էր. նա էր հանդիսանում ավատական գաղափարախոսության պաշտոնական ներկայացուցիչը, նրան էին ենթարկվում դպրոցները, նրա բեմից էին քարոզում ժողովրդին։

Առաջին գավառը, որն ընտրում է Մաշտոցը իր և իր աշակերտ-

ներքի քարոզչության համար. Գողթն էր։ Այդ ընտրությունը պատահական չէր։ Գողթնը Հայաստանի լեռնային այն գավառներից մեկն էր, ուր հեթանոսությունը բավականին ուժեղ էր և հին հայկական ավանդությունները դեռ պահպանվում էին։ Գալով Գողթն, նորից մտնելով ժողովրդի մեջ և մոտիկից շփվելով նրա հետ, նա ավելի ու ավելի է համոզվում, որ եթե միջոցներ չձեռնարկվի օտարամուտ ազդեցությունների դեմ, ապա հայ ժողովուրդը ենթակա է վերջնական խորտակման։

Հայ գիր ու գրականություն ստեղծելու որոշակի մտադրությամբ Մաշտոցը գալիս է Վաղարշապատ և ներկայանում կաթողիկոս Սահակ Պարթևին ու հայտնում նրան իր մտադրությունը։ Երկուսով միասին ներկայանում են Վռամշապուհ թագավորին։ Սա ևս համամիտ լինելով նրանց հետ, միաժամանակ հայտնում է, որ ինքը Միջագետքում Դանիել Ասորի անունով մի եպիսկոպոսի մոտ տեսել է հայկական գրեր։ Մարդ են ուղարկում և բերել տալիս այդ գրերը, երեխաներ հավաքում և նրանով սկսում դասավանդել հայոց լեզուն։

Դանիելյան գրերը Հայաստան են բերվում Վռամշապուհ թագավորի գահակալության երրորդ տարում՝ 403 թվականին։ Սակայն կարճ ժամանակամիջոցում դասավանդման ընթացքում պարզվում է, որ այդ գրերը չեն արտահայտում հայկական լեզվի հնչունական առանձնահատկությունները, երեխաները դժվար են յուրացնում այն և չեն տալիս թվական ամբողջական համաչափք, ուստի որոշում են մեկնել Ասորիք՝ օտար ժողովուրդների գրատեսակները ուսումնասիրելու և տեղի հույն ու ասորի գիտնականների հետ խորհրդակցելու համար։ Այդ գործի նախաձեռնությունը դարձյալ իր վրա է վերցնում Մաշտոցը։ Նա իր հետ տանում է նաև աշակերտների մի մեծ խումբ՝ հունական և ասորական լեզուների մեջ մասնագիտացնելու և թարգմանիչներ պատրաստելու նպատակով։ Կորյունի տեղեկության համաձայն, Մաշտոցը իր աշակերտների հետ Ասորիք է մեկնում 405 թվականին։

Միջագետքում գտնված ժամանակ Մաշտոցը նախ լինում է Ամիդ, իսկ այնուհետև՝ Եդեսիա քաղաքում։ Նա իր աշակերտներից մի մասին թողնում է այստեղ ասորերեն սովորելու, իսկ մյուս մասին ուղարկում Սամոսատ քաղաքը հունարենի մեջ կատարելագործվելու համար։ Մաշտոցը հենց Եդեսիա քաղաքում էլ ստեղծում է հայկական նոր այբուբենը, որը Կորյունն անվանում է «ծընունդ նորոգ և սքանչելի»։ Մաշտոցն ինքն է գծում նշանագրերը, անուններ դնում նրանց և դասավորում այբբենական շարքի մեջ։

Հայկական գրի ստեղծումը վերջնականապես ավարտելուց հետո նա անցնում է Սամոսատ, ուր գտնվում էր այդ ժամանակ գրչության արվեստի մեջ մեծ հռչակ ունեցող Հռոփանոս գեղագիրը՝ հայկական նորաստեղծ նշանագրերը գրչության արվեստի համաձայն հղկելու, ձևավորելու համար։ Հռոփանոսը գեղագրական ձև է տալիս հայկական նշանագրերին, որից հետո Մաշտոցն իր երկու աշակերտների հետ, որոնք ուղեկցում էին նրան, Հովհան Եկեղացու և Հովսեփ Պաղնացու օգնությամբ, սկսում են թարգմանություններ կատարել։ Առաջին փորձը սկսում են Սողոմոնի առակներից, որոնք խրատական բովանդակություն ունեին և կարող էին մատչելի լինել նորուս աշակերտության համար։ Մաշտոցյան այս գիրը հայ հնագրության մեջ՝ կոչվում է «Բոլորաձև երկաթագիր»։

Եվ այսպես, հայկական գիրը վերջնականապես ստեղծելուց և ձևավորելուց հետո, Մաշտոցը և իր աշակերտները «հոգելից ուրախությամբ» վերադառնում են հայրենիք։

Ժամանակակից հայ հասարակությունը, ինչպես երևում է, բացառիկ կարևորություն է տվել գրի ստեղծմանը։ Այդ երևում է այն փառավոր ընդունելությունից, որ ցույց են տվել հայրենիք վերադարձող Մաշտոցի և նրա աշակերտների նկատմամբ. Վաղարշապատ քաղաքի ողջ բնակչությունը, այդ՝ թվում նաև թագավորը, նախարարները, հոգևորականությունը, Մաշտոցին դիմավորում են Ռահ գետի կամուրջի մոտ, ցնծությամբ վերադառնում մայրաքաղաք և այդ օրը տոն հայտարարում։

Հայ գրի ստեղծումը, ըստ Կորյունի, տեղի է ունեցել Հաղկերտ I-ի գահակալության ութերորդ տարում։ Հաղկերտը գահակալել է 399 թվականին, նրա ութերորդ տարին կլինի 406 թվականը։

Հայկական առաջին դպրոցը բացվում է Վաղարշապատում։ Դպրոցում դասավանդում է ինքը Մաշտոցը։ Կենտրոնական այդ դպրոցում սովորում են գլխավորապես այն անձնավորությունները, որոնք հետագայում պետք է աշխատեին որպես ուսուցիչներ։ Սովորողների թվում հիշվում են նաև V դարի ազատագրական շարժումների այնպիսի ակնառավոր դեմքեր, ինչպիսիք Վարդան Մամիկոնյանն է, Համայակ Մամիկոնյանը, Վահան Ամատունին և ուրիշներ։ Մաշտոցի աշակերտների թվում եղել են նաև ոչ քիչ թվով գյուղացի տղաներ։

Առաջին փորձի հաջող ավարտից հետո, դպրոցներ են բացվում Հայաստանի միջնաշխարհում և գավառներում։ Ինքը՝ Մաշտոցը, աշակերտներ վերցրած պտտում էր Հայաստանի բնակչաշատ քաղաքները և ավանները ու հայկական դպրոցներ բաց անում։ «Մաշ-

տոցը բերեց մեր լեզվի նշանագրերը, — գրում է Խորենացին,— Վռամշապուհի և Սահակ Մեծի պատվերով ժողովեցին ուշիմ, առողջակազմ, ձայնեղ և երկարաշունչ ընտիր մանուկներ, դպրոցներ հաստատեցին Հայաստանի բոլոր գավառներում և սովորեցնել ըսկըսեցին Պարսկական բաժնի բոլոր կողմերում»։

Նորաստեղծ գիրը Արևելյան Հայաստանում գործածության մեջ դնելուց հետո անհրաժեշտ էր այն գործածության մեջ դնել նաև Արևմտյան Հայաստանում, ուր ապրում էր։ Կորյունի բառերով ասած, «այլուս կես ազգն Հայոց»։ Եվ ահա Մաշտոցը աշակերտներ վերցրած մեկնում է Արևմտյան Հայաստան։ Բայց այստեղ Մաշտոցը դժվարության է հանդիպում. տեղի բյուզանդական իշխանությունները թույլ չեն տալիս Մաշտոցին հայկական դպրոցներ բաց անել։ Պատճառը հասկանալի է. նրանք չէին ուզենա հունական դպրոցները փոխարինել հայկական դպրոցներով, որը կխանգարեր նրանց ասիմիլյացիոն քաղաքականությանը։ Բայց Մաշտոցը, ուժեղ նկարագրով ու կազմակերպչական ունակություններով օժտված այս մեծ հայրենասերը, չի հուսահատվում և գործը թերի չի թողնում։ Մաշտոցը գնում է Թեոդորոս կայսեր ու Ատոիկոս պատրիարքի մոտ և թույլտվություն ստանում դպրոցներ բաց անելու Արևմտյան Հայաստանում։ Մաշտոցի դեպի Բյուզանդիա կատարած ճանապարհորդությունը և նրա գործունեությունը Արևմտյան Հայաստանում պետք է տեղի ունեցած լինի 419—425 թվականներին։

Վերադառնալով Արևմտյան Հայաստանից, Մաշտոցը Սահակ Պարթևի և իր շնորհալի աշակերտների հետ ձեռնարկում է գրական և մանկավարժական վիթխարի աշխատանք։

Մաշտոցը մահացել է 440 թվականի փետրվարի 17-ին խոր ծերության մեջ՝ իր պարտքը տիրելի ժողովրդի առջև լիովին կատարած։ Մաշտոցի գիտակը, իր աշակերտ Վահան Ամատունու ցանկությամբ, թաղվում է Օշականում։

Հայ բաղմադարյան պատմության մեջ անկարելի է մատնացույց անել պատմական մի այլ անձնավորության, որն այնքան մեծ սեր ու հարգանք վայելի հայ ժողովրդի մեջ, որքան Մեսրոպ Մաշտոցը։ Նրան նվիրված հարյուրավոր արձակ ու չափածո ներբողներ են գրվել, նրա շուրջը բազմաթիվ զրույցներ են հորինվել և նրա գերեզմանն ուխտավայր է դարձել։

Հայ գրի և գրականության ստեղծումը վիթխարի նշանակություն ունեցավ հայ ժողովրդի պատմության մեջ։ Չորրորդ դարի վերջին քառորդում, երբ ֆեոդալական Հայաստանը գտնվում էր տնտեսական և քաղաքական մասնատված վիճակում, երբ նա բա-

ժանված էր բյուզանդական և պարսկական նվաճողների միջև, և հայ հասարակական կյանքը մղվում էր դեպի մեկուսացում, նորաստեղծ հայ գիրը և հայադիր գրականությունը հանդիսացավ կոփող, միավորող այն հզոր ուժը, որ կարողացավ իրար կապել տարբեր քաղաքական ազդեցությունների տակ ընկած ցրված հայության հասարակական կյանքը։

Խորենացին խոսելով Մաշտոցի մասին, հետևյալ բնութագրությունն է տվել նրան. «Նա հրեշտակի տեսք ուներ, բեղմնավոր միտք, պայծառ էր խոսքով, գործով՝ ժուժկալ, մարմնով՝ փառահեղ, սովորություններով՝ անմատ, խորհրդով՝ մեծ, հավատով՝ ուղիղ, խոսքով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, ուսուցանելիս՝ անձանձիր»։

Մաշտոցի գործունեության նշանակությունը, սակայն, չի պարփակվում հայ ժողովրդի պատմության սահմանների մեջ։ Նրա հիմնած մատենագրական դպրոցը լայնորեն բաց է արել իր դռները անտիկ առաջավոր գիտության առջև, թարգմանել է բազմաթիվ դիտնականների աշխատություններ, որոնք հայ ժողովուրդը գուրդուրանքով պահել և հասցրել է մինչև մեր օրերը։ Մաշտոցի գործունեությունը պատկանում է պատմական այն երևույթների շարքին, որոնք չեն խունանում։ Մաշտոցի և իր աշակերտների նախաձեռնությամբ ստեղծված հայ գիրը պաշտոնական հզոր զենք հանդիսացավ ո՛չ միայն ժամանակակիցների, այլև հետագա սերունդների համար։

Գերմանացի հայտնի հայագետ պրոֆ. Հ. Մարկվարտը համեմատության մեջ դնելով Մաշտոցի գործունեությունը գերմանական աշքի ընկնող լուսավորիչներ Պիպինի և Վինֆրիդի հետ, հետևյալ կարծիքն է հայտնում. «Եթե նկատի ունենանք այն պայմանները, որոնցում Մաշտոցն ու Սահակը իրենց մտքի գործունեությամբ հոգևոր ու ժողովրդական ինքնագիտակցության բերին հայ ժողովրդին և նրանց գործի հետ համեմատենք Դանայան այն պարգևը, որ Ֆրանկ Պիպինը նվիրեց գերմանական ժողովրդին, իր ձեռքում ունենալով քաղաքական և եկեղեցական ամեն միջոց, կտեսնենք, որ Պիպինը և իր զինակից Վինֆրիդը խեղճ թզուկներ են երևում մտքի այս հսկաների համեմատությամբ։ Մի ժողովուրդ, որ իր ծոցից ծնել է այսպիսի մարդիկ և նրանց հարգում է որպես իր դյուցազնի, անկարելի է, որ իսպառ չնչվի, քանի հետևում է նրանց օրինակին»։

Մաշտոցի աշակերտները և հայագիր մատենագրության սկզբնավորումը

Հայկական գիր ստեղծելուց և դպրոցներ բաց անելուց հետո Մաշտոցը, Սահակ Պարթևի գործուն աջակցությամբ, ձեռնամուխ է լինում հայագիր մատենագրության ստեղծմանը։ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը ընդունակ հայ ուսանողներին, մի քանի խմբերով, ուղարկում են արտասահման՝ Աթենք, Ալեքսանդրիա, Անտիոք, Հռոմ, Կոստանդնուպոլիս՝ մասնագիտանալու հունարեն և ասորերեն լեզուների մեջ։ Վերադառնալով Հայաստան, կրթություն ստացած այս երիտասարդները հիմք են դնում հայագիր թարգմանական և ինքնուրույն գրականության։ Մաշտոցի ավագ և կրտսեր աշակերտների մեջ մենք տեսնում ենք՝ Հովհան Եկեղեցուն, Հովսեփ Պաղնացուն, Կորյունին, Տիրայր Խորձենացուն, Օձնիկ Կողբացուն, Հովսեփ Վայոցձորցուն, Աբրահամ Արևելցուն, Մովսես Խորենացուն, Մամբրե Վերծանողին և շատ ուրիշների։

Սահակ Պարթևի և Մաշտոցի նախաձեռնությամբ ասորերենից և հունարենից առաջին հերթին թարգմանվում են Աստվածաշունչը։ Թարգմանվում են նաև աչքի ընկնող եկեղեցականների՝ Գրիգոր Նազիանզացու, Հովհան Ոսկեբերանի, Բասեղ Կեսարացու և ուրիշների աստվածաբանական աշխատությունները, հոգևոր ճառերը և այլն։ Եկեղեցու ընթացիկ կարիքների համար թարգմանվում են նաև ծիսակատարության գրքեր և կանոնական այլ գրականություն։

Հայագիր մատենագրության ստեղծման գործում առանձնապես խոշոր է եղել Մաշտոցի այն աշակերտների դերը, որոնք իրենց կրթությունը ստանալով բարձրագույն դպրոցներում, ծանոթանում են անտիկ առաջավոր մտածողների գիտական ստեղծագործություններին, դրանք թարգմանում հայերեն, մեկնում և այդ հիմքի վրա ստեղծում նաև իրենց ինքնատիպ աշխատությունները։

Հայ պատմագրությունը և գեղարվեստական գրականությունը

Հայ մատենագրության մեջ առաջնակարգ դերը պատկանում է պատմագրությանը։ Պատմական բովանդակությամբ մեզ հասած ամենահին գործերից մեկը Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց» աշխատությունն է։ Փավստոսը V դարի պատմիչ է։ Նրա պատմությունը հիմնականում, ընդգրկում է չորրորդ դարի իրադարձությունները՝ սկսած քրիստոնեության տարածումից մինչև Հայաստանի առաջին բաժանումը։ Նա կանգ է առել ղլխավորապես Հայաստանի քաղաքական պատմության վրա։ Նրա մոտ հայրենասիրական վառ զգացմունքներով են նկարագրված պարսկական հարստահարիչների դեմ հայ ժողո-

վրդի մղած հերոսական պայքարը։ Փավստոսի պատմությունն արժեքավոր սկզբնաղբյուր է հանդիսանում ոչ միայն հայ ժողովրդի, այլև Մերձավոր Արևելքի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության համար։

V դարի պատմիչներից է Ագաթանգեղոսը, որի աշխատությունը վերնագրված է «Պատմություն Հայոց»։ Աշխատության հիմնական նյութը վաղ քրիստոնեության պատմությունն է, նրա հաստատվելը Հայաստանում։

V դարի հայ աշքի ընկնող պատմիչներից է Կորյունը, որը Մաշտոցի աշակերտներից է, ինքը գործուն մասնակցություն է ունեցել հայ գրի և գրականության ստեղծմանը և Մաշտոցի մահվանից հետո գրել է նրա կենսագրությունը «Վարք Մաշտոցի» խորագրով։ Այս աշխատությունը, փաստորեն հայագիր պատմության առաջնակն է և ունի ավելի կենսագրական բովանդակություն։

Հին հայկական մատենագրության ամենից կարկառուն դեմքը Մովսես Խորենացին է։ Նա գրել է մի շարք աշխատություններ, բայց նրա դուխ-գործոցը «Հայոց պատմություն»-ն է, որը գրի է առել 480—483 թվականներին՝ Սահակ Բագրատունու հանձնարարությամբ։

Խորենացին առաջին հայ հեղինակն է, որ հայ ժողովրդի պատմությունը շարադրել է նախապատմական շրջանից մինչև 440 թվականը՝ Մաշտոցի մահը։ Իր ձեռնարկած այդ վիթխարի գործը գլուխ բերելու համար նա ուսումնասիրել է բազմաթիվ հունական և ասորական սկզբնաղբյուրներ և նրանցից քաղել արժեքավոր այն տեղեկությունները, որոնք վերաբերում են հայ ժողովրդին։ Նա օգտվել և անուններով հիշատակել է 40-ից ավելի սկզբնաղբյուրներ։ Ըստ որում, նշված աղբյուրները նա օգտագործել է քննադատաբար. եթե իր նկարագրած փաստերից որևէ մեկն անհավանական է թվացել, ապա նա արտահայտել է իր կարծիքը։

Խորենացին պատմագրության մեջ մեծ տեղ է տալիս ժամանակագրությանը։ Նա այն կարծիքն է ունեցել, որ առանց ժամանակագրության ճշգրիտ պատմություն լինել չի կարող։ Նրա կազմած IV դարի հայ Արշակունիների ժամանակագրությունը՝ պատմության մեջ միակ հավաստի աղբյուրն է այդ շրջանի գիտական ժամանակագրության համար։

Խորենացին իր Պատմությունը շարադրել է հայրենասիրական ջերմ զգացմունքներով. ամեն մի քաղաքական գործչի գնահատականը տալիս, նա նկատի է ունենում այն, թե դրանցից ո՞րը ի՞նչ օգտակար գործ է կատարել իր հայրենիքի և ժողովրդի համար։ Նա

փառաբանել է այն հայ քաղաքական գործիչներին, որոնք աշխատել են պետության հզորացման համար, քաջաբար պաշտպանել երկրի սահմանները և, ընդհակառակն, դատապարտել նրանց, ովքեր ոչինչ չեն արել ժողովրդի ու երկրի համար։

Խորենացու «Պատմությունը» ավելի քան 14 դար շարունակ դպրոցների միակ ուսումնական դասագիրքն է հանդիսացել։ Նա իր շերմ հայրենասիրությամբ, կուռ տրամաբանությամբ և պատկերավոր ոճով կարողացել է համակել տասնյակ սերունդների և հրապարակական դեր կատարել հայ ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման գործում։

Հին հայկական պատմագրության խոշոր ներկայացուցիչներից է V դարի պատմիչ Եղիշեն։ Նրա աշխատությունը վերնագրված է «Վասն Վարդանա և Հայոց պատերազմին»։ Հեղինակը, որպես ժամանակակից անձնավորություն, գեղարվեստական բացառիկ վարպետությամբ է շարադրել պարսկական նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը։ Նրա պատմության մեջ առանձնապես պատկերավոր է նկարագրված 451 թվականի Ավարայրի ճակատամարտը։

Եղիշեն իր պատմությունը գրել է մեծ խանդաղատանքով. նրա նպատակն է եղել սերունդներին ոգեշնչել Վարդանանց հերոսական սխրագործություններով և առելություն ներշնչել դեպի օտար նվաճողներն ու հայրենիքի դավաճանները։

Եղիշեից հետո V դարում հանդես է գալիս Ղազար Փարպեցին, իր «Պատմություն Հայոց» վերնագրով աշխատությամբ։ Աշխատությունը սկսվում է 387 թվականից և հասցվում մինչև 485 թվականը։ Գլխավոր նյութը դարձյալ հայ ժողովրդի ազատագրական պայքարն է V դարում՝ ընդդեմ Սասանյան Պարսկաստանի։ Պատմական մեծ արժեք ունեն առանձնապես V դարի երկրորդ կեսում Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ մղված ազատագրական շարժումներին վերաբերող տեղեկությունները։ Պատմությունը շարադրելիս, ասում է Փարպեցին, պետք է լինել անկողմնակալ՝ «ոչինչ չպիտի ավելացնել և ոչինչ չպիտի պակասեցնել»։

Կարևոր արժեք է ներկայացնում VII դարի հեղինակ Սեբեոսի «Պատմութիւն»-ը, որը հարուստ նյութեր է պարունակում Հայաստանի և Մերձավոր Արևելքի մյուս երկրների մասին։ Սեբեոսի գիրքը հրատարակվել է ռուսերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով։

Պատմական կարևոր սկզբնաղբյուր է հանդիսանում «Պատմություն Տարոնո» աշխատությունը։ Այդ երկը յուրատեսակ ժողովածու է տարբեր ժամանակներում և տարբեր հեղինակների գրած

պատմական ու բարոյախոսական աշխատությունների, որոնք ի մի է հավաքել և մշակել VII դարի պատմիչ Հովհան Սամիկոնյանը:

Պատմական արժեքավոր նյութեր է պարունակում նաև VII դարի հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղվանից աշխարհի» խորագրով աշխատությունը, որը աշխարհում մեզ հասած միակ պատմական աղբյուրն է աղվան ժողովրդի մասին։ Հեղինակն իր այդ աշխատության մեջ ի մի է հավաքել իր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրների տեղեկությունները աղվանից ժողովրդի մասին, իսկ որոշ գլուխներ գրել է իբրև ականատես անձնավորություն։ Այս աշխատությունը X դարում շարունակել է մի այլ հեղինակ՝ Մովսես Դասխուրանցին:

Արաբական խալիֆայության տիրապետության սկզբնական շրջանի հայ պատմիչներից նշանավոր է VIII դարի հեղինակ Ղևոնդը: Ղևոնդի Պատմությունն ամբողջովին նվիրված է ազատագրական այն պայքարին, որ հայ ժողովուրդը մղել է Արաբական խալիֆայության դեմ՝ VII—VIII դարերում։ Պատմիչի հաղորդած տեղեկությունները հետաքրքիր են և արժանահավատ։

Համեմատաբար աղքատ է V—VIII դարերից մեզ հասած գեղարվեստական գրականությունը։ Պատմական անվիճելի տեղեկություններ կան, որ հայ գեղարվեստական գրականությունը հնում գոյություն է ունեցել, բայց չի պահպանվել։ Գեղարվեստական չափածո աշխարհիկ գրականության մի գեղեցիկ նմուշ մնացել է Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ՝ Դավթակ Քերթողի 36 տուն ողբ-պոեմը։

V—VI դարերից մեզ է հասել գեղարվեստական արձակի թարգմանական երկու երկ՝ «Պատմութիւն Բարլեղամի և Յովասափ» (Բուդդայի քրիստոնեացված կենսագրությունը) և «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ», որի հեղինակն է համարվում սուտ Կալիսթենեսը և որը առաջին անգամ թարգմանել է Մովսես Խորենացին։ Հետագայում թարգմանվել են նաև Եզոպոսի «Առակները»։

V դարի երկրորդ կեսում հունարենից հայերեն է թարգմանվել Թիոնիսիոս Թրակացու «Քերականությունը», որը զգալի դեր է կատարել հայ գրական լեզվի քերականական նորմավորման գործում և նպաստել դրության արվեստի զարգացմանը։ Թրակացու այդ քերականության հիման վրա հայ հեղինակները կազմել են հայոց լեզվի քերականական ձեռնարկները կամ մեկնությունները։ Մեկնիչ հայ հեղինակների շարքում եղել են աչքի ընկնող գիտնականներ՝ Մովսես Խորենացին, Մամբրե Վերծանողը, Դավիթ Անհաղթը և ուրիշներ։ Թարգմանության և թարգմանված բնագրերը մեկնելու

գործում առանձնապես խոշոր գործունեություն է ծավալել Սյունյաց բարձրագույն դպրոցը։

Փիլիսոփայությունը

V—VIII դարերի հայ մատենագրության մեջ իր պատվավոր տեղն ունի փիլիսոփայությունը։ Մենք նկատի ունենք ինչպես տեղում ստեղծված ինքնատիպ փիլիսոփայական երկերը, այնպես էլ հունարենից և այլ լեզուներից կատարված թարգմանությունները։

V դարի հայ պատմիչների վկայություններից երևում է, որ Ալեքսանդրիայի, Հռոմի, Աթենքի, Անտիոքի և Եդեսիայի բարձրագույն դպրոցներում սովորող հայ ուսանողներն առանձնահատուկ հետաքրքրություն են ցուցաբերել փիլիսոփայության նկատմամբ։ Հայ ուսանողների մեջ եղել են այնպիսիները, որոնք իրենց բացառիկ ընդունակությունների շնորհիվ հասել են մինչև ուսուցչապետի պաշտոնների և ղեկավարել իրենց իսկ սովորած դպրոցների փիլիսոփայական ամբիոնները։ Այդպիսիներից է, օրինակ, մեծ «սոփեստոս և բանաստեղծ» Ղևոնդ Հայկազը, որը V դարի քսանական թվականներին Աթենքի համալսարանի աստղերից մեկն էր համարվում։ Իսկ Պրոյերեսիոսը (Պարույրը), որպես հետևոր, այնքան մեծ հռչակ է ստեղծում Հունաստանում և Հռոմում, որ նրա պատվին Հռոմում հատուկ արձան է կանգնեցվում՝ «Հռոմի թագուհուց՝ հռետորների թագավորին» մակագրությամբ։

V—VII դարերում հունարենից հայերեն են թարգմանվել հույն աշքի ընկնող փիլիսոփաներից մեծ մասի՝ Արիստոտելի, Պլատոնի, Զենոնի, Հերմեսի, Փիլոն Ալեքսանդրացու, Օլիմպիոդորի, Պորփյուրի և այլ հեղինակների աշխատությունները։ Հունարենից հայերեն թարգմանված այդ բնագրերը գիտության համար մեծ արժեք ունեն, որովհետև նշված հեղինակների հունարեն բնագրերը ուշ միջնադարյան ընդօրինակողների կողմից ենթարկվել են խմբագրական զգալի փոփոխությունների ու աղճատումների, տեքստերում ավելացել են ընդմիջարկություններ, որոշ հատվածներ կրճատվել են և այլն։

Հույն փիլիսոփաներից ամենից մեծ տեղը հայ իրականության մեջ տրվել է Արիստոտելին, Պլատոնին, Պորփյուրին։

Թարգմանված երկերից արժեքավոր են հատկապես այն աշխատությունները, որոնց հունական բնագրերը կորել են և դրանք գիտության մեջ հայտնի են միայն հայերեն ընդօրինակություններով։

Ս. դ կարգի անգնահատելի օրինակներից է Զենոն Ստոիկի (336—264 թթ. մ. թ. ա.) փիլիսոփայական աշխատությունը, որը

պահվում է Երևանի Մատենադարանում։ Զենոն Ստոիկի փիլիսոփայական աշխատությունները մեզ չեն հասել և նրա հայացքների մասին մինչև այժմ խոսվում էր միջնադարյան առանձին հեղինակների քաղած մեջբերումների հիման վրա, իսկ այժմ մեր ձեռքի տակ է նրա «Բնության մասին» աշխատությունը։

Հայերեն թարգմանությամբ գիտության մեջ հայտնի բնագրերից է նաև Հերմես Նոամնի փիլիսոփային վերագրվող, փիլիսոփայական բովանդակություն ունեցող «Սահմանք» վերնագրով աշխատությունը։

Փիլիսոփայությամբ զբաղվող հայ հեղինակները, սակայն, թարգմանությամբ չէ միայն, որ հայտնի են. նրանք դրել են ինքնուրույն գործեր և մեկնել հույն փիլիսոփաների աշխատությունները։

Հայ փիլիսոփայական մտքի աչքի ընկնող դեմքերից է Եզնիկ Կողբացին՝ Մեսրոպ Մաշտոցի ավագ աշակերտներից մեկը, որը ակտիվ մասնակցություն է ունեցել V դարի հայ ինքնուրույն գրականության ստեղծման գործում։ Եզնիկի աշխատություններից մեզ է հասել միայն մեկը՝ «Եղծ աղանդոց»-ը, այն էլ միայն մեկ օրինակով։

Եզնիկ Կողբացու այդ աշխատությունը ուղղված է գրադաշտության ու գնոստիցիզմի դեմ, որոնք իր ժամանակին լուրջ վտանգ էին ներկայացնում հայ ժողովրդի համար։ Թշնամական այդ դաղափարախոսության դեմ է, ահա, որ հանդես են գալիս հայ հայրենասեր մտավորականները, այդ թվում և Եզնիկ Կողբացին։

«Եղծ աղանդոց»-ի մեջ Եզնիկն աշխատում է փիլիսոփայորեն հիմնավորել շարին դիմադրելու անհրաժեշտությունը. «Ծոր ավազակը,— գրում է նա,— հարձակվում է երկրի վրա, որպեսզի ոչընչացնի բնակչությանը, մի՞թե պետք չէ, որ բնակչությունը հավաքի իր զորքերը, դնդեր կազմի՝ ավազակին դուրս վռնդելու երկրից։ Զորք հավաքելը և ավազակին երկրից հանելը անհրաժեշտ համարելով, մենք դրանով ապացուցում ենք, որ ավազակի՝ երկիր ավերելը և ագահաբար դույք ու հարստություն կողոպտելը ճակատագրի կանխորոշմամբ չէ, որ կատարվում է»։

VI դ. հայ փիլիսոփաներից է Դավիթ Անհաղթը, որի «Սահմանք իմաստասիրութեան» աշխատությունը պահպանվել է բազմաթիվ օրինակներով։ Դավիթ Անհաղթը, որ հայ մատենագրության մեջ հայտնի է «Մեծամեծ փիլիսոփա» մականունով, մեծ հեղինակություն է վայելել նաև հույն և հռոմեացի փիլիսոփաների շրջանում։

Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքները իմացաբա-

նական հարցերում ճանապարհ են հարթում մատերիալիստական ուղղության համար։ Նա պայքարում է սկեպտիցիզմի դեմ, քննադատում Անտիսֆենի փիլիսոփայությունը, որը ժխտում էր ղդայական օբյեկտիվ աշխարհի գոյությունը։ Օպտիմիստորեն նայելով մարդու իմացական կարողության վրա, նա փիլիսոփայությանը վերագրում է բարձր կոչում և գտնում, որ տեսական իմացությունը առաջացել է մարդկության պրակտիկ գործունեության հետևանքով։

Փիլիսոփայական արժեքավոր մտքեր են հանդիպում մեզ VII դարի գիտնական Անանիա Շիրակացու աշխատություններում։ Շիրակացին փիլիսոփայական հատուկ աշխատություն չունի, սակայն իր «Տիեզերագիտության» մեջ արտահայտել է փիլիսոփայական որոշ մտքեր, որոնք հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել գիտնականների կողմից։

Փիլիսոփայական հիմնական հարցերից մեկը, որը արծարծել է Շիրակացին, այդ տիեզերքի սկզբնավորության հարցն է. աշխարհը գոյություն ունի՞ հավիտենապես, թե նա ստեղծված է աստծու կողմից։ Շիրակացին որոշակի կանգնած է իդեալիստական փիլիսոփայության տեսակետի վրա և գտնում է, որ այն ամենը, ինչ գոյություն ունի գետնի վրա կամ երկնքում, բոլորն էլ ստեղծված է աստծու կողմից։ Նա նույնիսկ քննադատում է անտիկ Հունաստանի մատերիալիստ փիլիսոփաներին այն բանի համար, որ նրանք «Ջաստուած ոչ կամեցան ճանաչել և պատճառ լինելութեան զհիլէ ասացին»։

Շիրակացին բնությունը պատկերում է շարժման, փոփոխության մեջ։ Ըստ նրա որդեգրած բնափիլիսոփայության, բոլոր տեսակի առկա գոյությունները քայքայվում են և նրանց փոխարեն նորերն են ստեղծվում. «Ամեն մի լինելություն,— գրում է նա,— ենթադրում է քայքայում, իսկ ամեն քայքայում սկիզբ է հանդիսանում նոր լինելության և այս անվնաս հակադրության շնորհիվ է, որ աշխարհը կարողանում է գոյատևել»։

Հայ մատենագրության մեջ խոշոր փիլիսոփա է ճանաչված Ստեփանոս Սյունեցին (VIII դար)։ Նրա աշխատություններից մեկ է հասել «Պիտանի լուծմունք սահմանացն Դավթի և Պորփյուրի»։ Սյունեցու այս աշխատությունը պարունակում է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» և Պորփյուրի «Ներածութեան» մեկնությունները։

Հին հայ մատենագիրները հատուկ ուշադրություն են դարձրել նաև ճարտասանությանը։ VI դարում նրանք հունարենից հայերեն են թարգմանել Թեոնի «Ճարտասանական արվեստի մասին»

աշխատությունը, որն ավելի ամբողջական և ավելի հարազատորեն է պահել հեղինակի նախնական բնագիրը, քան մեզ հասած հունական ընդօրինակությունը։ Հույն պատմա-հռետորական աշխատությունների հնում հայերեն են թարգմանվել նաև նոնոսի և այլ հեղինակների աշխատությունները։

Բնական գիտությունները

Հայ գիտնականները արժեքավոր ներդրումներ են կատարել նաև բնական գիտությունների՝ մաթեմատիկայի, քիմիայի, տիեզերագիտության, բժշկության, տոմարագիտության և ուրիշ բնագավառներում։ Հայ գիտնականների համար ուղեցույց է հանդիսացել V դարում հունարենից հայերեն թարգմանված Բարսեղ Կեսարացու «Վեցօրեից» կոչվող աշխատությունը, որի մեջ փորձեր են արվում անտիկ բնագիտական միտքը համաձայնեցնել քրիստոնեական դոգմաներին։ Այս աշխատությունից բավականաչափ օգտվել են բնագիտությամբ զբաղվող հայ հեղինակները։

Առաջին հայ հեղինակը, որ օգտագործել է բնական գիտությունների տվյալներն իր աշխատության մեջ, հանդիսացել է Եզնիկ Կողբացին։ Նա իր «Եղծ աղանդոց»-ի մեջ բազմաթիվ փաստեր է բերել երկրի ձևի, արեգակի, լուսնի շարժման և բնական մի շարք երևույթների մասին։

Բնական գիտությունների խոշոր ներկայացուցիչներից է VII դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին։ Շիրակացին հանդիսացել է բնական գիտությունների հիմնադիրը հայ իրականության մեջ։

Շիրակացին ծնվել է VII դարի սկզբներին Շիրակի շրջանի Անի ավանում։ Նախնական կրթությունը ստացել է տեղի պետական դպրոցում, իսկ այնուհետև 8 տարի Տրապիզոն քաղաքում ուսանել է հույն գիտնական Տյուքիկոսի մոտ։ Գիտական մեծ պատրաստությամբ վերադառնալով հայրենի Շիրակ, նա զբաղվում է մանկավարժությամբ ու գիտական հետազոտական աշխատանքով։ Շիրակացին մահացած պիտի լինի VII դարի 80-ական թվականներին։

Շիրակացու աշխատություններից քիչ մասն է մեզ հասել, սակայն այդ քչի մեջ ևս դժվար չէ տեսնել գիտնականի մեծությունը և նրա արտակարգ տաղանդը։

Շիրակացու մեզ հասած լավագույն աշխատությունը նրա թվաբանության դասագիրքն է, որը պարունակում է գումարման, հանման, բազմապատկման և բաժանման ագյուսակները, թվաբանական 24 և «խրախճանական» խնդիրներ։

Շիրակացին իր ժամանակ այնքան մեծ հռչակ է վայելել որ-

պես մաթեմատիկայի խոշորագույն մասնագետի, որ նրան տրվել է «համարող», այսինքն՝ «մաթեմատիկոս» մականունը։

Մեզ հասած Շիրակացու մյուս աշխատություններից դիտական բացառիկ արժեք ունի «Տիեզերագիտությունը»։ Շիրակացու այս աշխատության մեջ արծարծված են տիեզերագիտական բազմաթիվ հարցեր, որոնք ներկայումս մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիտությունների պատմության համար։

Տիեզերագիտական այս աշխատության մեջ ուշագրավ է հատկապես Շիրակացու արտահայտած տեսակետը կոսմոգոնիայի (աշխարհաստեղծման) մասին։ Քննասեր հայ մտածողին հետաքրքրել է այն հարցը, թե ինչ ձև ունի երկիրը։ Անդրադառնալով այս հարցին, նա հետևյալ ինքնատիպ բացատրությունն է տվել. «Երկիրը, ինձ թվում է, ձվի նման է. ինչպես ձվի դեղնուցը կլոր մեջտեղումն է, սպիտակուցը՝ նրա շուրջը, իսկ կեղևը շրջապատում է չորս կողմից, այնպես էլ երկիրը գտնվում է մեջտեղում, օդը՝ նրա շուրջը և երկինքը շրջապատում է չորս կողմից»։

Նշանակալից է այն, որ Շիրակացին իր կարծիքը երկրի կլորության մասին հայտնում է առանց վերապահության՝ հակադրվելով երկրի ձևի մասին իր ժամանակ գոյություն ունեցող մի շարք տեսակետների, այդ թվում նաև՝ Աստվածաշնչի տեսակետին, ըստ որի երկիրը տափակ մի տարածություն է, և եթե մարդ բարձրանա շատ բարձր լեռան գագաթը, կտեսնի աշխարհի չորս բոլորը։ Պետք է նկատի ունենալ, որ մեծ համարձակություն էր այն ժամանակ արտահայտել այնպիսի տեսակետ, որը հակասում էր քաղաքացիություն ունեցող պաշտոնական ըմբռնումներին, դիտության մշակին կարող էին համարել հերետիկոս, կտրել նրա ձեռքի և ոտքերի ջլերը, խարան դնել ճակատին, ինչպես վարվում էին սովորաբար։

Շիրակացին իր նույն աշխատության մեջ անդրադառնում է նաև երկրի կլորության հարցին, բայց այս անգամ ասում է վարագուրված ձևով, որ իբրև թե ինքը Եվգենիայի տաճարում աղոթելիս մտածել է այն հարցի մասին, թե ինչ ձև ունի երկիրը և քանի տարել է։ Սրազում իբրև թե տեսնում է, որ արևգակը երիտասարդ տեսքով իջնում է երկիր։ Նա գնում է արեգակին ընդառաջ, գրկում նրան և հարցնում, թե նա երբ գնում է երկրանդի մյուս կողմը, ո՞ւմ է տալիս լույս։ Արեգակը պատասխանում է, որ երկրի մյուս մասում կան անմարդաբնակ ձորեր, լեռներ, անձավներ, նրանց է լույս տալիս։

Երկրի կլորության հարցում Շիրակացին հետևում է Պտղոմեոսի տեսությանը. նրա աստղագիտական սիստեմը ոչ թե հելիոցենտ-

րիկ է (արեգակենտրոն), այլ գեոցենտրիկ (երկրակենտրոն)։

Ընդունելով երկրի կլորությունը, անհրաժեշտ էր բացատրել նաև այն հարցը, թե ինչպես է, որ երկիրը, այդ հսկայական զանգվածը, կարողանում է պահպանել իր հավասարակշռությունը տիեզերական անհունության մեջ և «վայր չի ընկնում»։ Այս հարցին հնում գիտնականները տարբեր բացատրություններ են տվել։ Այսպես, ոմանք կարծել են, թե երկիրը հաստատված է հսկա փղերի վրա, ոմանք՝ եզան, ոմանք կոկորդիլոսների և այլն։ Ըստ Աստվածաշնչի, երկիրը հաստատված է ծովի վրա, իսկ ծովը՝ սյուների։ Շիրակացին զգուշությամբ առարկում է Աստվածաշնչին, թե՝ «Ծովերն ինչպե՞ս կարող են պահել այդպիսի ծանրություն և թույլ չտալ որ ընկղմվի»։ Շիրակացու կարծիքով, երկրին հավասարակշռություն տվողը՝ մրրիկն է, որը փչում է երկրի ներքևից դեպի վեր, երկիրն իր ծանրությամբ հակումն ունի ներքև իջնելու, իսկ մրրիկն աշխատում է նրան վեր բարձրացնել և այս երկու հակադիր ուժերն են, որ հավասարակշռություն են ստեղծում։ Այդ տեսակետը, ինչպես գիտենք, ճիշտ չէ, սակայն Նյուտոնից առաջ տվյալ հարցի մասին արտահայտված հիպոթեզներից ամենից տրամաբանականն է, որը գիտության պատմության մեջ հայտնի է «Մրրիկների տեսություն» անունով։

Շիրակացին խորը թափանցելով տիեզերքի գաղտնիքների մեջ ճիշտ է բացատրել Ծիր Կաթինի էությունը։ Այդ հարցին նվիրված «Յաղագս կաթին ծրոյ» գլխում նա բերում է ժողովուրդների մեջ տարածված մի շարք առասպելներ. «Ոմանք ասում են,— գրում է նա,— թե Ծիր Կաթինը՝ Հերա աստվածուհու ստինքից թափված կաթը է, որ ցրվել է երկնակամարում, ոմանք գտնում են, թե դա Գիրոն աստծու նախիրի ճանապարհն է, ոմանք Պերսեֆոնիա աստվածուհու առաջատն են համարում»։ Շիրակացին բերում է նաև հայկական առասպելը, ըստ որի հայկական Վահագն աստվածը մի ցուրտ ձմռան դնացել է Ասորիք, գողացել ասորական Բարշամ աստծու հարդը և երկնքով բերելիս թափել ճանապարհին, որի պատճառով այն «Հարդագողի ճանապարհ» է անվանվում։ Նա քննադատում է այս առասպելները. «Թողէք զայդ ի բաց... մի դուք զայդպիսի բան լսեք, քանզի բարի փիլիսոփայք ասացին զդմանէ, թե խիստ աստեղք են բազումք, նուազ և յոյժ ընդ աղօտ երևմանէն միաւոր լոյս տեսանին»։

Շիրակացին իր «Տիեզերագիտության» մեջ հանգամանորեն խոսել է արեգակի և լուսնի խավարումների մասին և հակառակ քաղդեական աստղաբաշխների անհեթեթ բացատրությունների, որոնք

22—1172

խավարումներր կապում էին երկնային ինչ-որ վիշապի շարժումների հետ, որն իր պոչով իբր թե ծածկում էր արեգակի կամ լուսնի երեսը և առաջացնում խավարումը, նա գտնում է, որ երբ արեգակը իր պտույտի ընթացքում գտնվում է հյուսիսային կիսագնդում, իսկ լուսինը հարավային և երկիրն ընկնում է նրանց մեջ և արգելակում արեգակի լույսի թափանցումը դեպի լուսին, առաջանում է լուսնի խավարում։ Իսկ այն դեպքում, երբ լուսինն է ընկնում արեգակի և երկրի միջև և արգելակում արեգակի լույսը դեպի երկիր, առաջանում է արեգակի խավարումը։

Շիրակացին գիտե, որ արեգակը մեծ է երկրից։ Նա բերում է մի ջրաք օրինակներ և ամփոփում հետևյալ խոսքերով. «Եվ յայսմ ամենայն յայտ է, թէ մեծ է արեգակն»։

Շիրակացին կտրականապես մերժում է այն գիտնականների տեսակետը, այդ թվում նաև՝ եկեղեցական հայրերի, որոնք գտնում են, որ լուսինն ունի իր սեփական լույսը։ Հակառակ այդ կարծիքի Շիրակացին պնդում է, որ լուսինն իր սեփական լույսը չունի, այլ նա լույսը ստանում է արեգակից և արտացոլում այնպես, ինչպես արեգակի լույսն արտացոլվում է հայելու մեջ։

Շիրակացին լուսնի պարբերաշրջանների փոփոխության հետ է կապում ծովերի և օվկիանոսների տեղատվությունը և մակընթացությունը։

Շիրակացին իր գիտական աշխատությունների մեջ քննության է առել բնական գիտություններին վերաբերող բազմաթիվ հարցեր՝ երկնային լուսատուների երկրից ինչ հեռավորությունների վրա գտնվելու, նրանց շարժումները, ձյան և անձրևի առաջացման պատճառները և բազմաթիվ այլ հարցեր։

Շիրակացու լավագույն աշխատություններից է նրա «Աշխարհացոյց»-ը, որը բացառիկ արժեք ունի ոչ միայն Հայաստանի, այլև հարևան ժողովուրդների պատմական աշխարհագրության համար։

Շիրակացու մեզ հասած աշխատություններից բարձր են գնահատվում նաև նրա չափ ու կշռի, թվանկարին քարերի, «Մղոնաչափք»-ի, «Օդաչափք»-ի մասին գրած աշխատությունները և մի բանի այլ բնույթեր, որոնց պատառիկներն են միայն մեզ հասել։

Հայ գիտնականը կատաղի հակառակորդ է ախտարքով զբաղվողներին, բախտագուշակներին։ Նա սուր քննադատության է ենթարկել մասնավորապես քաղդեական բախտագուշակներին այն բանի համար, որ նրանք փորձում են մարդկանց ճակատագիրը՝ նրանց բախտավոր կամ անբախտ, բարի կամ չար, հարուստ կամ աղքատ, տեր կամ ծառա լինելը կապել աստղերի շարժման հետ և

պնդել, որ իրր մարդկանց ճակատագիրը նախորոշվում է աստծուց, կախված է այն բանից, թե որ աստղի տակ է ծնվում երեխան։ Նման գիտնականների պնդումները Շիրակացին համարում է զառանցանք, իսկ նրանց հեղինակներին՝ կախարդներ։ «Եթե հիշտ է այս տեսությունը,— գրում է Շիրակացին,— այն դեպքում ի՞նչու են ծառաները ձգտում լավ կյանքի, չէ՞ որ աստված նախապես որոշել է նրանց դժբախտ կյանք... Եթե երեխան ծննդից շար է, այն դեպքում ինչո՞ւ են հանցանքի համար նրան դատապարտում, չէ՞ որ նա ծնված օրից՝ աստծուց շար է ստեղծված։ Եթե մարդկանց շար ու բարի լինելը նախապես աստծուց է սահմանվում, այն դեպքում ինչո՞ւ համար են օրենքները և դատարանները, քանի որ մարդը չի կարող աստծու սահմանումից դուրս գալ կամ հակառակը գործել։ Եվ, վերջապես, եթե փոքրիկ, անմեղ երեխայի մեջ ապտված չարություն է դնում, այն դեպքում շար է ինքը՝ աստված։ Շիրակացու համար ամեն ինչից բարձր է գիտությունը և այն ամենը, ինչ հակառակ է գիտությանը, անընդունելի է Շիրակացուն. «Դու գիտությունը մերժեցիր, ես էլ քեզ եմ մերժում»,— այս է Շիրակացու նշանաբանը։

Չի կարելի, իհարկե, ժխտել, որ Շիրակացին իր աշխատությունների մեջ, մի շարք հարցերում, օգտվել է իր ժամանակի առաջավոր և անտիկ գիտնականների աշխատություններից։ Բայց այլ կերպ լինել չէր կարող. գիտությունը և կուլտուրան երբեք չեն պարփակվել ազգային նեղ շրջանակների մեջ. գիտական այս կամ այն նորությունները հրապարակ գալուց հետո դրանք արագ տարածվել և ժողովուրդների սեփականությունն են դարձել։

Ինչպես հին շրջանում, այնպես էլ միջին դարերում արժեքավոր աշխատանքներ են կատարվել նաև բժշկության բնագավառում։

Պետք է նկատի ունենալ, որ բժշկական գիտությունն ավելի քան մի այլ գիտություն, չի պարփակվել ազգային նեղ շրջանակներում։ Պատահական չէ, որ միջնադարյան հայ բժիշկներն իրենց աշխատություններում այս կամ այն հիվանդության դեղատոմսի մասին խոսելիս, հայ հեղինակների շարքում հիշատակում են նաև օտարների անունները։ Հայաստանում լայն ճանաչում գտած հեղինակների շարքում են Հիպոկրատեսը, Դիոսկորիդեսը, Ասկլեպիադեսը, Գալիանոսը, Օրիբազիան և ուրիշներ։

Ստեփանոս Սյունեցին 772 թվականին հունարենից հայերեն է թարգմանել IV դարի հույն հեղինակ Նեմեսիոսի «Մարդու բնության մասին» վերնագրով աշխատությունը, որը միջին դարերում, թյուրիմացաբար, վերագրվել է վաղ քրիստոնեական գործիչներից

մեկին՝ Գրիգոր Նյուսացուն։ Նեմեսիոսի այս աշխատությունը նվիրված է ֆիզիոլոգիային և հոգեբանությանը։ Ըստ որում, ֆիզիոլոգիայի հարցերում նա հենվում է Գալիանոսի վրա, իսկ հոգեբանության՝ Պլատոնի և Արիստոտելի։ Աշխատությունը բաղկացած է 44 գլխից։ Հայկական բնագիրը բավական տարբերակներ ունի հունական բնագրի համեմատությամբ։

VIII դարում հունարենից հայերեն է թարգմանվել նաև Բարսեղ Կեսարացու (331—379) «Տեսություն մարդու կազմության» վերնագրով բժշկական մի աշխատություն, որը բովանդակում է մարդու անատոմիան։

Հայ բժիշկները մեծ համարում ունեին Հայաստանի սահմաններից դուրս։ Հայտնի է, օրինակ, որ վեցերորդ դարում պարսկական խոսրով թագավորի արքունիքի բժշկապետը Գաբրիել անունով մի հայ բժիշկ է եղել։

Հայաստանը հնում հայտնի էր իր բուսական և հանքային դեղորայքով։ Հայաստանից արտահանվում էին հայկական կոչվող կավը, կապույտ քարը, ամոնիումը, բորակը և այլ դեղանյութեր։

Հայ մատենագիտության մեջ հատուկ տեղ է գրավում տոմարագիտությունը։ Թվականները սովորաբար կապվում են պատմական խոշոր դեպքերի հետ. օրինակ՝ հռոմեական թվականի սկիզբը համարվում է Հռոմի հիմնադրման առաջին տարին, ներկա գործածական թվականը՝ Քրիստոսի ծննդյան ենթադրական տարին, Հիջրայի թվականը՝ Մուհամմեդի Մեկկայից Մեդինա փախչելու տարին և այլն։ Հայ ժողովրդի պատմության մեջ 553 թվականը հանդիսանում է «Հայկազյան մեծ» կամ «Թորգոմյան» կոչվող թվականի սկիզբը։ Իսկապես 553 թվականին հայ կյանքում որևէ խոշոր պատմական իրադարձություն տեղի չի ունեցել։ Հարց է առաջանում՝ ապա ինչի՞ հետ է կապված հայկական թվագրության ընկիզբը։

Նորագույն ուսումնասիրությունները պարզել են, որ հայկական թվականը կապված է եղել տոմարական շրջանների ՇէՄ աղյուսակների հետ, որն իր մեջ ամփոփել է արևգակնային 28 և լուսնային 19 շրջանների՝ 532 տարիները։ Այդ աղյուսակները մշակել են Եգիպտոսում դումարված տոմարագետների ժողովում և պաշտոնական ընդունելություն գտել հայ եկեղեցու կողմից։ Դա ուղեցույց է ծառայել հայկական օրացույցների և տոմարական բոլոր տեսակի աշխատությունների համար։ Նշված տոմարական աղյուսակները կազմված են եղել ըստ հռոմեական անշարժ տոմարի, որոնք հարմարեցված են եղել հայկական շարժական տոմարին։

Պետք է նկատի ունենալ, որ հայերը հնուց ի վեր հետևելիս են եղել արեգակնային տոմարին։ Հայկական տոմարը, եգիպտականի նման, չորս տարին մեկ օրով առաջ էր ընկնում, որովհետև տարվա մեջ հաշվում էին ոչ թե 365 և մեկ քառորդ օր, այլ 365 օր։ Հայկական տարին, եգիպտականի նման, ուներ 13 ամիս, որից տասներկուսը՝ 30 օրով և մեկը, վերջինը, որ կոչվում էր «աուելեաց»՝ 5 օրով։

Գիտական մեծ արժեք ունեն Շիրակացու տոմարագիտական աշխատությունները, որոնք նա գրել է 667 թ. Անաստաս կաթողիկոսի հանձնարարությամբ։ Շիրակացու տոմարագիտական աշխատությունների մեջ քննարկված են տոմարագիտական բազմաթիվ հարցեր՝ կապված վերադրի, յոթներյակի, ոսկեզրի, տարեմուտի, լուսնի և արեգակի պարբերաշրջանների հետ և այլն։

Շիրակացին իր տոմարական աշխատությունների մեջ լայն տեղ է հատկացրել ժամանակի տոմարական կարևոր սիստեմներին։ Կան ժողովուրդներ, որոնց տոմարը հայտնի է միայն Շիրակացու աշխատություններից։ Այսպես, հայտնի է, որ հարևան աղվանական ժողովրդի տոմարի միակ սկզբնաղբյուրը Անանիա Շիրակացին է։

Շիրակացու վերջերս հայտնի դարձած աշխատություններից գիտական մեծ արժեք ունի նրա «Լուսնացույց»-ը, որը պարունակում է լուսնի 19 տարիների պարբերաշրջանի բոլոր ամիսներում տեղի ունեցած լուսնի ծնունդները և լրումները։ Այդ «Լուսնացույց»-ի հիման վրա կարելի է ճշտությամբ ասել, թե որ թվականին, որ ամսի քանիսին, որ ժամում և որ բոպեին պետք է Հայաստանում տեղի ունենա լուսնի ծնունդը և լրումը։ Անհրաժեշտ է նշել, որ Շիրակացին անփոփոխ չի ընդօրինակել Մետոնի «Լուսնացույց»-ը, այլ տեղում աստղագիտական դիտարկումներ է կատարել և այն սրբագրել՝ հարմարեցնելով Հայաստանի պայմաններին։

Հին հայկական հեթանոսական տոմարում նոր տարին եղել է մարտի 20-ը։ Քրիստոնեական շարժական տոմարով ամանորը չորս տարին մեկ օրով սկսեց առաջ շարժվել մինչև Հովհաննես Իմաստասերը, որը 1084 թվականին իր մշակած անշարժ տոմարով հայկական ամանորը սահմանեց օգոստոսի 11-ին, որով և առաջնորդվեցին հետագայում։

Մարտարվեստությունը և մանրանկարչությունը

V—VIII դարերից մեզ հասած ճարտարապետական կոթողները մեծ մասամբ տաճարներ են, եկեղեցիներ և տապանաքար-հուշարձաններ։ Աշխարհիկ բնույթի շենքերը շատ քիչ են, եղածներն էլ կիսակիր վիճակում են գտնվում։

Եկեղեցական ճարտարապետական հուշարձանները բավական շատ են և ցրված պատմական Հայաստանի ողջ տերիտորիայի վրա։ Հայ շնորհալի ճարտարապետները և վարպետներն իրենց ձեռքի արվեստը և ստեղծագործական հանճարը թափել են ամեն մի հուշարձանի, ամեն մի գեղաքանդակ բեկորի վրա։ Նրանք մեզ պարզ պատկերացում են տալիս հին հայկական ինքնատիպ և զարգացած ճարտարապետության մասին։

Հայ եկեղեցական ճարտարապետությունը, չորրորդ դարից ըսկըսած մինչև ութերորդ դարը, զգալի փոփոխություններ է ենթարկվել։ Այդ փոփոխությունները հաճախ այնքան ակնբախ են, որ, նրանց ճարտարապետական ոճին նայելով, կարելի է որոշել նաև նրանց մոտավոր ժամանակը։

IV դարի քրիստոնեական տաճարները Հայաստանում ունեցել են շատ պարզ ձև. դրանք երկարավուն սովորական դահլիճներ են, որոնք արևելյան կողմում ունենում են սեղան՝ վիմաքարով։ Տաճարներն ունեցել են փայտածածկ հարթ տանիք, որոնք ժամանակի ընթացքում քանդվել են։ Պատահում է, որ դահլիճները ծածկված են լինում քարե թաղով, այդ դեպքում դրանց տանիքը երկթեք ձև է ունենում։ Այդ տաճարներն իրենց կառուցվածքով հիշեցնում են հեթանոսական մեհյանները, որոնք շատ ժամանակ չէ, որ իրենց տեղը զիջել էին քրիստոնեական աղոթատներին։ Ճարտարապետական այս տիպի կառուցվածքներից են Օղվարդի և Թվինի տաճարները։

Սկսած V դարից տաճարները սկսում են փոքր-ինչ լայնանալ և կառուցվում են ներսից երկշար սյուների վրա եռանավ կամարներով։ Ըստ որում սյուների միջև եղած տարածությունն ավելի լայն է լինում, քան սյուների և պատերի միջև եղած տարածությունը։ Նման տաճարները ճարտարապետության մեջ կոչվում են բազիլիկաներ։ Եռանավ բազիլիկաներից Հայաստանում կարելի է մատնացույց անել Քասախի, Երերույքի, Աշտարակի, Սիթեռնակավանքի տաճարները։ Բազիլիկաների որոշ մասն ունենում է դրսից մեկ կամ երկու կողմից կամարակապ սրահներ։

VI—VII դարերի ճարտարապետության մեջ հանդես է գալիս նոր ոճ՝ գմբեթավոր կառուցումների ոճը։ Սկզբում գմբեթները դրվում են եռանավ բազիլիկայի հիմքի վրա։ Գմբեթային բազիլիկայի տիպի տաճարներից են Օձունի, Մրենի, Հռիփսիմեի տաճարները։ Պարզված է, որ Տեկորը ևս V դարում կառուցված է եղել բազիլիկային ձևով և VII դարում է, որ վերանորոգման ժամանակ ավելացվել է գմբեթը։

VII—VIII դարերում Հայաստանում սկսում են կառուցել կենտրոնագմբեթ տաճարներ։ Դրանք իրենցից ներկայացնում են խաչաձև հիմքի վրա բարձրացող շենքեր, որոնք ներսից ունենում են չորս կիսաշրջանաձև աբսիդներ, որոնց մույթի վրա նստում է գմբեթը։ Այս ոճի հնագույն տաճարներից են Ավանի եկեղեցին 590-ական թվականներից, Միսիան ավանի եկեղեցին VI—VII դարերից, Հռիփսիմեի տաճարը՝ կառուցված 618 թվականին և ուրիշները։ VII դարում նման ձև է ունեցել նաև Էջմիածնի Կաթողիկե Ամենայնի, որը, սակայն, հետագայում վերակառուցվել է և փոխվել։

Կենտրոնագմբեթ հրաշալի հուշարձաններից է Զվարթնոցի տաճարը, որը ճարտարապետ Թորամանյանի կարծիքով ոչ միայն հայ, այլև ընդհանրապես վաղ ֆեոդալիզմի շրջանի ճարտարապետության հոյակապ կոթողներից է։ Այդ տաճարը բրդաձև կլոր մի շենք էր, որը դրսից երեք հարկի տպավորություն էր թողնում։ Ներսից ուներ սյունաշարք կազմող կիսաշրջան խորաններ։ Գմբեթը նրված էր գեղաքանդակ խոյակներ կրող մույթերի վրա։ Զվարթնոցը կառուցվել է VII դարում։

Մեզ հասած քաղաքացիական տիպիկ շենքերից կարելի է մատնացույց անել Ամբերդի բազմահարկ պալատ-ամրոցը (VII դար), Դվինի կաթողիկոսական պալատը (VI—VII դար), որը ներսից ունեցել է հնգական սյունների երկու շարք՝ գեղեցիկ խոյակներով, պալատական շենքերի ավերակները Զվարթնոցում, Արուճում և այլ վայրերում։

V—VIII դարերում Հայաստանում բավական զարդացած է եղել քանդակագործությունը։ Եթե հեթանոսական շրջանում նա կապված էր գլխավորապես արձանագործության հետ, ապա վաղ ֆեոդալիզմի ժամանակ կապվում է ճարտարապետության հետ։ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի քանդակները գլխավորապես պատկերաքանդակներ և զարդանկարներ են՝ կատարված շենքերի և մահարձանների վրա։ Գրեթե բոլոր հուշարձաններն ունեն երկրաչափական, բուսական և այլ զարդաքանդակներ։ Զարդաքանդակի ընտիր նմուշներ կան Զվարթնոցում, որոնք մինչ օրս էլ հիացմունք են պատճառում դիտողին։

Հին հայկական արվեստի գեղեցիկ նմուշներ մենք ունենք նաև խճանկարչության (մոզաիկայի) մեջ։ Հայ խճանկարչության հնագույն մի նմուշ հայտնաբերվեց Նրուսաղեմում (VI դար)։ Նրուսաղեմի Զիթենյաց կոչվող լեռան վրա հայտնաբերված այդ խճանկարը կատարված է հայկական զարդաքանդակներով և գրությամբ։ Զարդաքանդակված են սիրամարգ, կաքավ և Հայաստանի բնությա-

նը հատուկ այլ թռչուններ։ Ծուրաքանչյուր թռչուն գեղանկարված է կլոր շրջանակների մեջ, որոնցից կախված է խաղողի ողկույզը։ Հետագայում Զիթենյաց լեռան այդ խճանկարների ոճով՝ հայկական երեք այլ խճանկարներ հայտնաբերվել են Երուսաղեմի ուրիշ թաղամասերում։

Խճանկարչության հետքեր հայտնաբերվել են նաև Դվինի և Զվարթնոցի ավերակներում։ Արուճի տաճարը նրանից պահել է մեծադիր և բարձրարվեստ խճանկարի ամբողջական պատկերներ։

IV—VIII դարերում Հայաստանում գոյություն է ունեցել նաև թատրոն։ Հայտնի է, որ Հովհան Մանդակունի կաթողիկոսը հատուկ ճառ ունի գրած, ուր դատապարտում է այն հավատացյալներին, որոնք եկեղեցի գալու փոխարեն թատրոններ են հաճախում։

Հին հայկական կուլտուրայի կարևոր բնագավառներից է մանրանկարչությունը։ Հայ մատենագրության մեջ մանրանկարչությունն են կոչվել ձեռագիր մատյաններում եղած նկարազարդումները՝ գլխազարդերը, լուսանցքազարդերը, զարդագրերը և այլ զարդանկարներ։ Հայ գրչությամբ զբաղվողները, ձեռագրերն ավելի ակնապարար դարձնելու նպատակով, սովորություն են ունեցել զարդանկարել դրանք։ Միջնադարյան Հայաստանում հանդես են եկել մանրանկարչության մի շարք ներկայացուցիչներ, որոնք փայլում են իրենց ստեղծագործության մեջ և ինքնատիպ արվեստով։

Մանրանկարիչները հայ մատենագրության մեջ կոչվել են տարբեր անուններով՝ «ծաղկող», «նաղաշ», «ծաղկարար» և այլն։ Մեզ հասած ամենից հին հայկական մանրանկարները Օրևանի մատենադարանի սեփականությունը հանդիսացող «Փղոսկրյա» կոչվող ձեռագրի մանրանկարված պահպանակներն ու փղոսկրյա կազմն են, որոնց ժամանակը համարվում է VI դարը։

Հայաստանում վաղ ֆեոդալիզմի շրջանում ստեղծված կուլտուրան և գիտությունը իրենց ինքնատիպությամբ և զարդացման աստիճանով՝ ուրույն տեղ ունեն համաշխարհային գիտության և կուլտուրայի պատմության մեջ։ Նրանք հանդես են եկել այն ժամանակ, երբ հելլենիստական կուլտուրան իր ճգնաժամն էր ապրում, իսկ արաբականը՝ դեռ չէր ստեղծվել։

Ուշագրավ է այն, որ հետագա դարերում, քաղաքական անբարենպաստ իրադարձությունների հետևանքով, Բյուզանդիա և այլ երկրներ արտագաղթող հայ բնակչությունը իր ինքնատիպ արվեստի և մատենագրության շատ արժեքներ փոխանցել է գաղթօջախներին։ Իր կատարած միջնորդի այդ դերով նա կապող օղակ է դարձել անտիկ աշխարհի և Առաջավոր Արևելքի ու Եվրոպայի միջև։

ԳԼՈՒԽ XVI

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

1. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Արաբական խալիֆայության հզորացումը և արաբների առաջին ներխուժումները Հայաստան

VII դարի 30-ական թվականներից սկսած մի քանի հաղթական արշավանքներից ու ճակատամարտերից հետո արաբները համեմատաբար կարճ ժամանակում դարձան Առաջավոր Ասիայի ամենավտանգավոր ախոյանները երբեմնի հզոր Բյուզանդիայի և Պարսկաստանի համար։

635 թվականին՝ արաբներն առաջին անգամ բախվելով բյուզանդական զինված ուժերի հետ՝ հաղթեցին նրանց և գրավեցին Դամասկոսը, իսկ հաջորդ տարին Յարմուկ գետի ափին տարած երկրորդ հաղթանակով ապահովեցին իրենց առաջխաղացումը նաև դեպի Ասորիք ու Միջագետք։ 634 թվականից հետո արաբները արտակարգ հաջող կռիվներ էին մղում նաև Պարսկաստանի դեմ։ Եվ արդեն 637 թվականին Քադեսիայի ճակատամարտում նրանք ծանր պարտության մատնելով թվապես դերակշիռ պարսկական զորքերին՝ գրավեցին նաև պարսից հինավուրց մայրաքաղաք Տիգրոնը։ Սասանյանների դարավոր տիրապետության վերջնական կործանումը փաստորեն տեղի ունեցավ 642 թվականի Նեհավենդի ճակատամարտում, որից հետո արաբների առջև բացվում էր նաև ճանապարհը դեպի Հայաստան։

Արաբների հզորացումն ու արագորեն մեծացող սպառնալիքը հարկադրում էին Բյուզանդիային ու Պարսկաստանին որոշ իմաստով մեղմացնելու իրենց քաղաքականությունը հայերի նկատմամբ։ Սակայն պետք է ասել, որ հայ ֆեոդալ-ազնվականները չկարողացան անհրաժեշտ չափով օգտվել դրանից, որովհետև երկրի մասնատվածությունն ու օտարների տիրապետությունը մեծ դժվա-

ությունները էին ստեղծում հայ ժողովրդի համախմբման, պարսկա-բյուզանդական տիրապետության տապալման և սեփական ուժերով երկիրը արաբական հրոսակների ներխուժումներից պաշտպանելու համար։

Ասորիքը, Միջագետքը և Պարսկաստանի մի որոշ մասը գրավելուց հետո 640 թվականի գարնանը արաբական զորամասերն առաջին անգամ ներխուժեցին նաև Հայաստան։ Արաբները Հայաստան մտան հարավ-արևմուտքից և Զորրորդ Հայքի կամ Տիգրանակերտի վրայով հասան Տարոն։ Այստեղ նրանք իրենց թվական գերակշռության շնորհիվ կարողացան ընկճել հայերի համառ դիմադրությունը, ապա կողոպտելով շրջակայքը, արագությամբ անցան Վանա լճի հյուսիսային ափերով ու անսպասելիորեն հայտնվեցին Արարատյան հովտում և նույն թվականի հոկտեմբերի սկզբներին մոտեցան ու բանակ դրեցին Դվինի մոտ և տեղանքն ու քաղաքի պաշտպանական հնարավորություններն ուշադրությամբ զննելով՝ հոկտեմբերի 6-ին միօրյա կռվից հետո գրավեցին Դվինը։ Սկզբնաղբյուրները հաստատում են, որ Դվինի անկման հիմնական պատճառը նրա գրեթե անպաշտպան լինելն էր, որովհետև հայկական կռվող ուժերն ամբողջությամբ Թեոդորոս Ռշտունու հետ էին, իսկ քաղաքում մնացել էին միմիայն կանայք, երեխաները և շրջակայքի բնակավայրերի այստեղ ապաստանած անզեն ու կռվելու փորձ չունեցող տղամարդիկ։ Դվինը գրավելուց հետո արաբները ոչ միայն ավերեցին ու կողոպտեցին քաղաքը, այլև կոտորեցին կանանց, երեխաներին ու ծերունիներին։ Ժամանակակիցները հաղորդում են, որ այդ ժամանակ Դվինում սպանվածների թիվը 12 000 էր, իսկ գերի տարվածներինը՝ 35 000։

Դվինն ու նրա շրջակայքն ավերելուց և կողոպտելուց հետո արաբները հարուստ ավարով և շատ գերիներով կրկին ետ դարձան։ Հայոց զորքերի սպարապետ Թեոդորոս Ռշտունին փորձեց վրեժխնդիր լինել թշնամուց, սակայն Կողովիտ գավառում կրած պարտությունից հետո ստիպված եղավ նահանջել։

Այսպիսով արաբական առաջին արշավանքից հետո վտանգը Հայաստանի համար ավելի էր մեծանում։

Արաբներն իրենց երկրորդ արշավանքն սկսեցին 643 թվականի գարնանը՝ դարձյալ Հայաստանի հարավ-արևմտյան կողմից։ Այս անգամ, ինչպես երևում է, նրանք իրենց տրամադրության տակ ունեին ավելի մեծ ուժեր, որովհետև այստեղ նրանք բաժանվեցին մեծ ու փոքր խմբերի և սկսեցին առանձին-առանձին տապալել Հայաստանն ու Անդրկովկասը։ Հիշյալ հրոսակախմբերից մեկը

Վասպուրականի վրայով մտավ նաև Այրարատ։ Թեոդորոս Ռշտունին, որպես երկրի զինված ուժերի հրամանատար ու փաստական կառավարիչ, այժմ արդեն լուրջ նախապատրաստություններ էր տեսել հակառակորդին կազմակերպված դիմադրություն ցույց տալու համար։ Նա կարճ ժամանակում կարգի էր բերել ու ամրացրել շատ քերդեր ու ամրոցներ և նրանց պաշտպանություն հանձնել քաջ ու վստահված զինվորականների։

Հայոց սպարապետը այդ ժամանակ դեռ օգնության որոշ հույսեր կապում էր Բյուզանդական կայսրության և արևելյան պրովինցիաներում նրա ունեցած զինված ուժերի հետ։ Ահա թե ինչու Թեոդորոս Ռշտունին դիմից Հաթաստանում գտնվող բյուզանդական զորքերի հրամանատար Պրոկոպիոսին, որպեսզի համատեղ ուժերով հանդես գան թշնամու դեմ։ Սակայն բյուզանդական հրամանատարը զոռողաբար մերժեց նրա առաջարկությունը և շարունակեց ուշադրություն չդարձնել արաբների գործողություններին։ Այս դեպքում հայերին մնում էր ապավինվել միայն իրենց սեփական ուժերին և անհավասար պայքարի մեջ մտնել հակառակորդի դեմ։

643 թվականի ամռանը, երբ տասը հազարանոց արաբական զորաբանակն անցնում էր դեպի Կոգովիտ, Թեոդորոս Ռշտունին իր փոքրաթիվ ուժերով նրանց ծուղակի մեջ է դցում և Եղբարը Սարակ կոչվող լեռան մոտ ուժեղ շարդ տալիս։ Հայերի համարձակ գործողությունները կարծես շարժում են բյուզանդացիների նախանձը և նրանք էլ շուտով դուրս են գալիս արաբների դեմ։ Սակայն տեղի ունեցած ճակատամարտում պարտվելուց և ահագին զոհեր տալուց հետո ստիպված են լինում կրկին քաշվելու իրենց զորակայանը։ Թեոդորոս Ռշտունու և նրա զինվորների հաղթանակը մեծ ոգևորություն էր առաջ բերել Այրարատ աշխարհի ազգաբնակչության մեջ՝ մարդիկ այս ու այն տեղերում ինքնաբուխ կերպով զինվում ու հարձակվում էին թշնամու վրա և լուրջ կորուստներ պատճառում նրան։ Եղբարը Սարակից հետո, հենց նույն թվականին, արաբական հրոսակախմբերը հայերից խայտառակ պարտություն կրեցին նաև Երևանի բերդի մոտ ու Կոգովիտ գավառի Որդսպու բնակավայրում։ Վերջին պարտություններից կատաղած, արաբները շարժվում են Կոգովիտ գավառի ամենանշանավոր բերդերից մեկի՝ Արծափի վրա։ Այստեղ նրանք գտնելով դեպի բերդը տանող գաղտնի ճանապարհը, նույն թվականի օգոստոսի 10-ին վաղ առավոտյան ներխուժում ու գրավում են Արծափը։ Այնուհետև սկսվում է ավերածությունն ու կոտորածը։ Արաբ հրոսակների ձեռքն են ընկնում բերդում ապաստանած մեծ թվով կանայք ու երեխաներ, որոնց սպան-

նում էր մահ կամ աքսոր։ Սակայն արաբները դեռ չէին հասցրել վայելելու իրենց հաղթանակը, երբ հաջորդ առավոտ, անսպասելիորեն Արծափ հասավ Հայոց սպարապետ Թեոդորոս Ռշտունին իր 2000 հեծյալներով։ Ռշտունին շեշտակի հարվածով նույն օրը ևեթ կարողանում է դլխովին ջախջախել թշնամու 3000-անոց ուժերին և խլել ավարն ու ազատել բոլոր գերիներին։ Այդ կռվում ոչնչացվում է արաբ հրոսակների մեծ մասը, նրանց երկու հրամանատարների՝ Օթմանի և Ոգոմանի հետ միասին։

643 թվականին Կոգովիտում ծավալված դեպքերի ու խայտառակ պարտության պատասխանատվությունից խուսափելու համար բյուզանդական զորքերի հրամանատար Պրոկոպիոն-վարդան է ամբաստանել ու անտեղի մեղադրանքներ բարդել Թեոդորոս Ռշտունու վրա։ Դրանից հետո կայսրի դիտությամբ բյուզանդական գործակալներին հաջողվում է դավադրաբար ձերբակալել հայոց սպարապետին և ուղարկել Կոստանդնուպոլիս, որտեղ նրա դեմ հարուցված մեղադրանքները հաստատել չկարողանալով, ազատում և ետ են ուղարկում Հայաստան։ Կայսրը Թեոդորոս Ռշտունու նկատմամբ այսպիսի դիրք գրավեց պարզապես նրա համար, որպեսզի քաղաքական լարված իրադրությունների մեջ իր դեմ չդրդռի հայ ազնվականության այն հիմնական մասին, որը գնում էր Թեոդորոս Ռշտունու ետևից։

Հայոց սպարապետի ամբաստանության ու բացակայության ժամանակ պայքարը արաբական նվաճողների դեմ շարունակվում էր նոր ուժով։ Եվ այդ պայքարի արդյունքը եղավ այն, որ 646 թվականին հայերին հաջողվեց ամբողջապես դուրս քշել արաբներին Հայաստանից։

Պայքար քաղաքական կողմնորոշման համար

Արաբական արշավանքների ընթացքում, երբ Հայաստանում ստեղծվել էին բավականին բարդ ու լարված պայմաններ, ազնվականության, կրոնական և զինվորական գործիչների մեջ դժբախտաբար չկար քաղաքական միասնություն։

Արդեն 640—650-ական թվականներին հայ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների շրջանում պարզորոշ կերպով ուրվագծվում էին հասարակական-քաղաքական երկու հոսանքներ, երկու ուղղություններ։ Հայ ազնվականության մի մասը, որ կենտրոնախույս տրամադրություններ ուներ, ձգտում էր երկիրը բաժանել իրարից անջատ, մանր նախարարությունների և Հայաստանը դնել Բյուզանդիայի հովանավորության տակ։ Այս հոսանքը գլխավորում էր հայոց կաթողիկոս Ներսես 3-րդ Տայեցին (641—661)։

Քաղաքական մյուս հոսանքը ղեկավարում էր VII դարի տաղանդավոր զորավար, նշանավոր քաղաքական գործիչ ու դիվանագետ Թեոդորոս Ռշտունին, որը հենվելով ժողովրդի վրա և իր հետևից տանելով նախարարների մեծամասնությանը, գտնում էր, որ պետք է հրաժարվել Բյուզանդիայի հովանավորությանն ապավինելուց և Հայաստանի քաղաքական անկախության պահպանման համար, որքան հնարավոր է, արաբների հետ վարել հաշտ ու համերաշխ քաղաքականություն։ Թեոդորոս Ռշտունին, ճիշտ ըմբռնելով քաղաքական դեպքերի զարգացման ընթացքը, հասկանում էր, որ նոր քարձրացող Արաբական խալիֆայությունն օրըստօրե հզորանում է, իսկ Բյուզանդիան՝ թուլանում։ Ուրեմն հայերը իրենց փոքր ուժերով, եթե անգամ հաշվի չառնեին որևէ հետևանք ու համագործակցեին Բյուզանդիայի հետ, դարձյալ չէին կարող կանգնեցնել արաբների առաջխաղացումը դեպի Հայաստան։ Դրա համար էլ նրանք պետք է ընտրեին այնպիսի մի ճանապարհ, որը գոնե որոշ չափով ժողովրդին ազատեր անտեղի զոհողություններից, իսկ երկիրը՝ ավերվելուց։ Այդ է պատճառը, որ ինչպես ժողովուրդը, այնպես էլ իշխող դասակարգի մի զգալի մասը, հաստատակամորեն հետևում էր Թեոդորոս Ռշտունուն ու վստահում նրան որպես ժամանակի ամենախելացի առաջնորդի։ Աղբյուրները ցույց են տալիս, որ Թեոդորոս Ռշտունին լուրջ կերպով հաշվի էր առնում նաև Հայաստանի հարևան Վրաստանի ու Աղվանից աշխարհի շահերը, դրա համար էլ նրան պաշտպանում ու նրա հետ դաշնակցել էին նաև Վրաստանի ու Աղվանքի ազնվականները։

Քաղաքական խնդիրների այսպիսի բարդ ու խառը իրադրությունների մեջ բյուզանդական կայսր Կոստանդ 2-րդը (642—668), հենվելով Հայաստանում գտնվող իր ռազմական ուժերի վրա և միաժամանակ օգտվելով Ներսես կաթողիկոսի բյուզանդական կողմնորոշումից, կրկին սկսեց հրահրել քաղկեդոնական դավանանքի հարցը։ Հասկանալի է, որ Բյուզանդիան քաղկեդոնականության արծարծման միջոցով ձգտում էր ամրացնել իր քաղաքական ու կրոնական դիրքերը Հայաստանում։ Այս նպատակով Կոստանդ 2-րդի նախաձեռնությամբ 648 թվականին Դվինում գումարվում է մի հատուկ եկեղեցական ժողով, որտեղ քննության է դրվում բյուզանդական դավանանքի ընդունման հարցը։ Դվինի ժողովին մասնակցում էին Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների ներկայացուցիչները։ Ժողովը, սակայն, բյուզանդացիների համար ցանկալի ընթացք չունեցավ։ Այնտեղ հաղթանակ տարան Թեոդորոս

Ռշտունու կողմնակիցները և քաղկեդոնական դավանանքի ընդունման առաջարկությունը միահամուռ կերպով մերժվեց։

Դվինի ժողովի դիրքը բխում էր նախ և առաջ երկրի իրավիճակից և Բյուզանդիայի ու Արաբական խալիֆայության քաղաքականությունից։ Բանը նրանում է, որ Բյուզանդիան, հետևելով Հայաստանի ամբողջական յուրացման իր հին քաղաքականությանը, նույնիսկ արաբների ասպարեզ դալուց հետո էլ չէր դադարեցնում ճնշումն ու հալածանքը ինչպես հասարակ ժողովրդի, այնպես էլ ազնվականության նկատմամբ։ Մինչդեռ արաբները այդ նույն ժամանակներում բավարարվում էին միայն սպատակությունների։ Ահա այս հանգամանքն էր, որ հալ իշխող դասակարդի ներկայացուցիչների մեծ մասին կողմնորոշեց դեպի Թեոդորոս Ռշտունին։ Արաբների հետ հաշտ քաղաքականության ձգտումը հատկապես զգալի դարձավ 650-ական թվականներին, երբ խալիֆայության նավատորմիջոցը մոտենալով Կոստանդնուպոլսին, հարկադրեց Կոստանդ կայսրին վճարել ռազմատուգանք և փնտրել նամայա գինադադար։

652 թվականի հայ-արաբական դաշինքը

Կոստանդ կայսրին տված մերժողական պատասխանից հետո Թեոդորոս Ռշտունուն մընում էր արագորեն համախմբել իր ուժերը և նախապատրաստվել Բյուզանդիայի հնարավոր հարձակումների առաջն առնելու համար։ Հայոց տպարապետը կարողացավ այս հարցում միասնական կարծիքի գալ նաև Վրաստանի ու Աղվանից աշխարհի ազնվականության հետ։ Թեոդորոս Ռշտունին համոզեց իր զինակիցներին ու դաշնակիցներին, որ անհրաժեշտ է արագ կերպով բանակցություններ սկսել Արաբական խալիֆայության հետ։ Այս նպատակով Թեոդորոս Ռշտունու ներկայացուցիչները 652 թվականին մեկնում են Դամասկոս՝ Ասորիքի արաբական կառավարիչ Մոավիայի մոտ ու նրա հետ կնքում մի պայմանագիր, որի մեջ ուշադրություն են դրավում հատկապես հետևյալ կետերը. ա) Հայաստանն ընդունում է Արաբական խալիֆայության դերիշխանությունը, բ) հայերը երեք տարի ազատվում են հարկային պարտականություններից, իսկ երեք տարին անցնելուց հետո տարվելիք հարկի չափը որոշակիորեն չէր նշվում, այլ այն պետք է որոշեին իրենք՝ հայերը, գ) Հայաստանին իրավունք է տրվում ունենալու 15000 հոգուց կազմված հեծելազոր, որի ամբողջ ծախսերը կատարվելու էին խալիֆայության հաշվին։ Հայկական հեծյալ ուժերը հիմնականում պետք է պաշտպանեին Հայաստանի ու Անդրկովկասի սահմանները, դ)

Արաբական խալիֆայությունը պարտավորվում է պահպանել Հայաստանի ներքին ինքնուրույնությունը։ Արաբները չպետք է գրավեն Հայաստանի բերդերը և ամրությունները և չպետք է տեղավորեն զինվորներ ու զինվորականներ, ե) ստար տերությունների և Բյուզանդիայի հարձակումների ժամանակ Արաբական խալիֆայությունը պարտավորվում է օգնել հայերին։

Հիշյալ պայմանագրի կնքումը կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանն առժամանակ արաբական ասպատակություններից ապահովելու համար։ Բացի այդ, պայմանագիրը, ինչպես տեսանք, չէր շոշափում երկրի ներքին կյանքին վերաբերող խնդիրներ. հայ ազնվականները համարվելով խալիֆի վասալներն ու հարկատուները, պահպանում էին իրենց ինքնուրույնությունն ու սեփականատիրական իրավունքները։ Հայ-արաբական պայմանագիրը է՛լ ավելի է ամրանում, երբ նույն թվականին Թեոդորոս Ռշտունին անձամբ է մեկնում Դամասկոս Մոամեթի մոտ։ Դամասկոսում հայոց սպարապետին տրվում են ավելի ընդարձակ իրավունքներ ու լիազորություններ. նա նշանակվում է Հայաստանի և ողջ Անդրկովկասի կառավարիչ։

Հայ-արաբական պայմանագրում Հայաստանի նկատմամբ խալիֆայության կողմից որոշակիորեն արտահայտված մեղմությունը բխում էր միայն քաղաքական հատուկ նպատակներից։ Արաբները պարզապես հայերին սիրաշահում էին, որպեսզի նրանք հեռու մնան իրենց հիմնական հակառակորդի՝ Բյուզանդիայի ազդեցությունից։ Բացի այդ արաբները ցանկանում էին նաև հայկական ռազմական ուժերն օգտագործել Բյուզանդիայի և հյուսիսից սպառնացող խազարների դեմ։ Հասկանալի է, որ արաբների նմանօրինակ քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ կրում էր միայն և միայն ժամանակավոր բնույթ և մի որոշ չափով էլ կապվում էր խալիֆայության ներսում տեղի ունեցող դահակալական կռիվների հետ։

652 թվականի հայ-արաբական, այսպես ասած, մերձենցմանը, ինչպես նաև պայմանագրի կնքմանը Բյուզանդական կայսրությունը չկարողացավ անմիջապես միջամտել կամ մի որևէ արգելք հարուցել։ Դեռ ավելին, քյուզանդացիներն այդ ժամանակ նույնիսկ շտապեցին իրենց զորքերը դուրս տանել Արևելյան Հայաստանի որոշ շրջաններից։ Սակայն ուշադրությամբ հետևելով Հայաստանում զարգացող քաղաքական իրադարձություններին, Բյուզանդիան տենդագին կերպով նախապատրաստվում էր ամբողջովին նվաճել Հայաստանը։

Բյուզանդական և արաբական նոր արշավանքները Հայաստան

Կոստանդ 2-րդ կայսրը միայն 653 թվականի աշնանը հարյուր հազարանոց բանակի գլուխ անցած սկսեց հարձակումը Հայաստանի վրա։ Բյուզանդական մեծաքանակ զորքերի առաջխաղացման լուրն ստանալուն պես հայկական մի քանի գավառների իշխաններ ու նախարարներ, ներսես 3-րդ Տայեցի կաթողիկոսի հետ միասին, բացահայտորեն լքեցին Թեոդորոս Ռշտունուն և ընդառաջ գնացին կայսրին, որն արդեն հասել էր Կարին։ Բյուզանդացիների կողմն անցած ազնվականներն սկսեցին ամրաստանել ու վարկաբեկել Թեոդորոս Ռշտունուն և կայսրին դրդռել նրա դեմ։

Թեոդորոս Ռշտունին այդ ժամանակ իր հայ զինակիցների և Վրաստանի ու Աղվանքի համախոհ իշխանների հետ, կազմակերպելով երկրի պաշտպանությունը, ինքն ամրացել էր Աղթամար վզղում։ Իսկ Կոստանդ 2-րդը քսան հազարանոց մի զորաբանակով հասել էր Դվին։ Կայսրն այդ ժամանակ Հայաստանի հնձելազորի հրամանատար նշանակեց Մուշեղ Մամիկոնյանին և առանձին զորամասեր ուղարկեց Վրաստանը, Աղվանքն ու Սյունիքը նվաճելու համար։ Կոստանդն ի նշանավորումն իր հաջողությունների, Դվինի ս. Գրիգոր եկեղեցում հունական ծիսակատարությամբ պատարագ մատուցեց, որին մասնակցում էր նաև հայոց կաթողիկոսն իր հավատարիմ բարձրաստիճան հոգևորականների հետ միասին։

653 թվականի գարնանը Կոստանդը շտապ վերադարձավ Կոստանդնուպոլիս։ Սակայն դնալուց առաջ նա հայոց իշխանի պաշտոնում նշանակեց ոմն Մամիրիանոսի և երկրի փաստական ղեկավարությունը հանձնեց նրան։ Կայսրի գնալուց հետո Մամիրիանոսը նախ կողոպտեց ու ավերեց Դվինը, ապա փորձեց ելնել հարձակվող արաբների դեմ, սակայն նախիջևանի մոտ ծանր պարտություն կրելով, հազիվ կարողացավ փախչել ու ազատվել։

Բյուզանդական կայսրի Դվինից գնալուց հետո այստեղից հեռացավ նաև հայոց կաթողիկոս Ներսեսը։

Թեոդորոս Ռշտունին կայսրի գնալուց հետո օգնություն խնդրեց արաբներից և սկսեց հարձակման պատրաստություններ տեսնել։ Եվ ահա 653 թվականի գարնանը արաբական 7000-անոց զորաբանակը հասավ Հայաստան։ Դրանից հետո հայերը, արաբների հետ միասին, իրենց առաջին հարվածն ուղղում են բյուզանդական զորքերի այն հատվածի դեմ, որը հարձակում էր տվել դեպի Աղթամար։ Նահանջող բյուզանդական զորքերն այսուհետև գտնվում էին հայ-արաբական ստորաբաժանումների մշտական հետապնդումնե-

բի ու հարձակումների սպառնալիքի տակ։ Թեոդորոս Ռշտունին, ամենուրեք ջախջախելով թշնամուն, արագ երթով մտավ Ծայք, ապա հետապնդելով նահանջող հակառակորդին, դուրս եկավ Սև ծովի ափերն ու գրավեց նաև Տրապիզոն քաղաքը։

Բյուզանդական զորքերին պարտության մատնելուց հետո Թեոդորոս Ռշտունին ետ վերադարձավ, բերելով իր հետ մեծ թվով գերիներ ու ռազմավար։ Այս դեպքերից շատ չանցած, Թեոդորոս Ռշտունին հիվանդացավ ու կրկին քաշվեց Աղթամար կղզին։ Օգտվելով հանգամանքից հայ նախարարներից մի քանիսը ինքնագլուխ կերպով սկսեցին կալվածքների նոր վերաբաժանում կատարել, ընդարձակել իրենց տիրույթները և ավելացնել ժողովրդից հավաքվող հարկերը։ Այս կամայականությունները երկրում առաջ բերեցին լուրջ դժգոհություններ։

Արաբական խալիֆայությունը բյուզանդացիների պարտությունից հետո փոխել էր իր վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ և ձգտում էր բռնությամբ տիրել Հայաստանին։ Դրա համար էլ արաբները հայ նախարարների ինքնագլուխ գործողությունները պատրվակ դարձնելով, 654 թվականին մի ստվար բանակ ուղարկեցին Հայաստան Հաբիբ իբն-Մասլամայի գլխավորությամբ։

2. ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի քաղաքական դրությունը VII դարի կեսերին

Հաբիբ իբն-Մասլամայի հրոսակախմբերը տակնուվրա արեցին գրեթե ողջ Հայաստանը։ Նրանք կոտորելով և ահաբեկելով ժողովրդին, կարողացան վերջիվերջո երկիրը ենթարկել խալիֆայության իշխանությանը։ Կոտորածներից և սրհավիրքներից խուսափելու համար առանց դիմադրության թշնամուն հանձնվեց նաև Դվինը։ Արաբական պատմիչ Բալաձորին վկայում է, որ Հաբիբ իբն-Մասլաման այդ ժամանակ Դվինի բնակիչների հետ կնքել է հատուկ պայմանագիր և պարտադրել նրանց ստանձնելու հարկատվության պարտականություն։ Արաբական զորավարը ավարից ու գերիներից բացի, երկրի անվանի մարդկանցից, նրանց կանանցից, դուստրերից և որդիներից վերցրեց շատ պատանդներ ու իր հետ տարավ Արաբիա։ Գերիների ու պատանդների քարավանին ինքնակամ կերպով միացավ նաև Թեոդորոս Ռշտունին, որը, հավանաբար, մտադիր էր անձամբ ներկայանալ խալիֆին ու կարգավորել հայ-արաբական փոխհարաբերությունները։ Սակայն նա

չհասավ իր նպատակին։ Թեոդորոս Ռշտունին վախճանվեց Դամասկոսում 656 թվականին, իսկ նրա դին տեղափոխվեց Հայաստան։

Մասլամայի արշավանքները տակնուվրա էին արել նաև Վրաստանն ու Աղվանքը։ Դրա համար էլ ինչպես Հայաստանում, այնպես էլ Անդրկովկասում օրստօրե մեծանում էր դժգոհությունն ու վրեժխնդրությունը ընդդեմ արաբների։

654 թվականից սկսած արաբները սանձարձակ կերպով մի քանի տարի կողոպտում էին հայերին ու ավերում երկիրը։ Հայ ժողովուրդն իր սեփական ուժերով չէր կարող արհավիրքի առաջն առնել։ Դրա համար փորձ արվեց դիմել դրսի օգնությանը։ Ահա հենց այդ ժամանակ կրկին իր պաշտոնին վերադարձավ Ներսես 3-րդ կաթողիկոսը։ Նա նորից սկսեց բանակցությունները Բյուզանդական կայսրության հետ ու առաջարկեց Կոստանդ 2-րդին Հայաստանը վերցնել իր հովանավորության տակ։ Կաթողիկոսը դրա փոխարեն խոստանում էր աղդովին ընդունել քաղկեդոնական դավանանքը։ Բյուզանդիան այդ առաջարկությունն ընդունեց ուրախությամբ։ Այդ ընթացքում արաբներն զբաղված լինելով ներքին կռիվներով, չկարողացան խափանել հայ-բյուզանդական մերձեցումը և դաժան վրիժառությամբ դպխատեցին Դամասկոսում պահվող հայ պատանդներից 1775 հոգուն։

Արաբական խալիֆայության ներսում ծայր առած զահակալական արյունահեղ կռիվները վերջացան Ալի խալիֆի (656—661) սպանությամբ և Ասորիքի արաբների հաղթանակով։ Նոր խալիֆ հռչակվեց Մոավիան (661—680), որը հիմք դրեց արաբական՝ Օմայան դինաստիային։ Մոավիայից սկսած, Արաբական խալիֆայության կենտրոնը դարձավ Դամասկոսը։

Նոր հիմնադրված դինաստիայի շահերը պահանջում էին խալիֆայության քաղաքական տիրապետության հիմքերի ամրացման համար որոշ չափով մեղմացնել նաև վերաբերմունքը հպատակ ժողովուրդների նկատմամբ։ Այս քաղաքականության ընդհանուր ընկրգբունքներից հլնելով, 660-ական թվականներին Մոավիան վերականգնեց հայերի հետ ունեցած 652 թվականի հաշտության պայմանագիրը։ Վերոհիշյալ դեպքերի ժամանակ մահացավ Հայաստանի կառավարիչ Համազասպ Մամիկոնյանը։ Հայերը հատուկ դիմումով խնդրեցին խալիֆին, որպեսզի նա Հայաստանի կառավարչի պաշտոնը հանձնի Համազասպի եղբորը՝ Գրիգոր Մամիկոնյանին, որը գտնվում էր Դամասկոսում որպես պատանդ։ Մոավիան կատարեց հայերի խնդրանքը և 661 թվականին Հայաստանի կառավարիչ նշանակեց Գրիգոր Մամիկոնյանին։ Գրիգոր Մամիկոն-

կոնյանն իր պաշտոնում մնաց մինչև 682 թվականը։ Նրա կառավարության այս քսան տարին Հայաստանի համար համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան էր, որը զգալիորեն նպաստեց երկրում հատկապես շինարարության և մատենագրության զարգացմանը։

Հայաստանի քաղաքական անդորրությանը նպաստում էր նաև այն, որ հիշյալ ժամանակաշրջանում արաբա-բյուզանդական պատերազմները տեղի էին ունենում մեծ մասամբ Հայաստանից դուրս, և Հայաստանն ավերածություններից չէր ենթարկվում։ Մի քանի տարի շարունակ ուղղակի Կոստանդնուպոլսի վրա ծովից և ցամաքից Մոավիայի կատարած հարձակումները խալիֆայությանը ոչինչ չտվեցին, իսկ 677 թվականին փոթորկից ոչնչացավ արաբական նավատորմիղի մեծ մասը և խալիֆը նույնիսկ հարկադրված եղավ տարեկան խոշոր գումար վճարել բյուզանդացիներին որպես ռազմատուգանք։ Այս մասին կնքված պայմանագիրը պետք է ուժի մեջ մնար երեսուն տարի։

680 թվականին մահացավ խալիֆ Մոավիան։ Նրա մահը և Օմայանների՝ Բյուզանդիայից կրած պարտությունը ոտքի հանեց հակաօմայան ուժերին, որոնք գահի համար մի քանի տարի շարունակ արյունահեղ կռիվներ էին մղում։

Հայերն օգտվելով խալիֆայության ներսում առաջացած խառը դրությունից, 683 թվականին ապստամբելով, թոթափեցին արաբական լուծը և հրաժարվեցին խալիֆայության հանդեպ ունեցած իրենց հարկային և այլ պարտականությունների կատարումից։ Այս ապստամբությունը ունեցավ այն հետևանքը, որ Հայաստանը մինչև 689 թվականը ձեռք բերեց կատարյալ անկախություն։

Հայկական ապստամբությունները խոշոր ազդեցություն ունեցան նաև Անդրկովկասի մյուս ժողովուրդների վրա։ 680-ական թվականների հայերի օրինակով արաբների դեմ ելան նաև վրացիներն ու Աղվանքի ժողովուրդները։

Հիշյալ շրջանում Հայաստանում և Անդրկովկասում խաղաղությունը երբեմն խախտվում էր Հյուսիսային Կովկասի խազարների կողմից, որոնք հաճախակի մեծ բանակներով ներխուժելով Անդրկովկաս կողոպտում և ավերում էին ընդարձակ երկրամասեր։ 680-ական թվականների կեսերի այսպիսի մի արշավանքի ժամանակ հայերին, վրացիներին և աղվաններին հաջողվեց ծանր ու հերոսական պայքարի գնով խազարներին դուրս քշել երկրից։ Այս կռիվներում շատերի հետ քաջաբար զոհվեց նաև Գրիգոր Մամիկոնյանը։ Նրանից հետո, 685 թվականին, Հայաստանի կառավարիչը դարձավ Աշոտ Բագրատունին։

Արաբա-բյուզանդական հակամարտությունն ու խալիֆայության տիրապետությունը Հայաստանում

680-ական թվականների կեսերից սկսած արաբա-բյուզանդական հարաբերությունները կրկին լարվում են։ Հուստինիանոս 2-րդը (685—695) դահ բարձրանալուց անմիջապես հետո վերսկսեց պատերազմը արաբների դեմ նախկինում Բյուզանդիային պատկանող հողերը ետ խլելու համար։

Այս նպատակով Բյուզանդիայի ձեռնարկած առաջին գործողություններն ուղղվեցին Հայաստանի դեմ։ 689 թվականին դեպի Հայաստան շարժվեց բյուզանդական մի հսկայական բանակ Լեոնտիոս զորավարի հրամանատարությամբ։ Բյուզանդական զորքերին կարգադրված էր՝ հայերի հետ վարվել որպես թշնամիների հպատակություն ընդունած և քաղկեդոնական եկեղեցու սկզբունքներին հակառակվող ժողովրդի։ Սա նշանակում էր, որ Հուստինիանոսը Հայաստանում կանգ չէր առնելու բռնության և ահաբեկման ոչ մի միջոցի առաջ։ Ղևոնդ պատմիչը վկայում է, որ բյուզանդական զինվորները մտնելով Հայաստան, անխնա կոտորում էին բնակչությանը, կողոպտում նրա ունեցվածքը, ավերում բնակավայրերը։ Նրանք չէին խնայում նույնիսկ հարտարապետական արժեքավոր հուշարձաններն ու շինությունները։ Սեփանոս Ասողիկի վկայությամբ, բյուզանդացիներն այս կռիվների ժամանակ քարուքանդ էին արել 25 գավառ և գերի տարել 8000 մարդ։ Հիշյալ դեպքերի ընթացքում արաբները ոչ միայն հնարավորություն չունեցան դիմադրելու բյուզանդացիներին, այլև ավելացրին Բյուզանդիային իրենց կողմից տրվելիք հարկը և 689 թվականին կնքած հատուկ պայմանագրով զիջեցին Բյուզանդիային նաև Հայաստանը։ Բյուզանդիան հենց նույն 689 թ., հակառակ Հայաստանի և Անդրկովկասի ժողովուրդների ցույց տված համառ դիմադրությանը, նվաճեց և՛ Հայաստանը, և՛ ամբողջ Անդրկովկասը։

Միայն 690-ական թվականներին խալիֆ Աբդ էլ-Մելիքը (685—705), ճնշելով երկրի ներսում ծագած խռովությունները և ապստամբությունները, հնարավորություն ունեցավ ամբողջ ուժերով գործելու Բյուզանդիայի դեմ։ Արաբական խալիֆայությունը Բյուզանդիայի դեմ տարած մի քանի հաղթանակներից հետո որոշեց կրկին վերանվաճել Հայաստանն ու Անդրկովկասը։

696 թվականին Աբդ էլ-Մելիքի եղբայր Մուհամեդ իբն-Մրվանի ղեկավարությամբ արաբական մի խոշոր բանակ ներխուժեց Հայաստան։ Երկու երեք տարվա ընթացքում Մուհամեդ իբն-Մրվանը

համառ ու արյունահեղ կռիվներից հետո, հաղթահարելով հայ ժողովրդի և Անդրկովկասի ժողովուրդների դիմադրությունը, կարողացավ նվաճել Հայաստանն ու Անդրկովկասը։ 700 թվականին Մրվանը Հայաստանի կառավարիչ նշանակեց Աբդուլային և ինքը վերադարձավ Ասորիք։ Այդ արշավանքով Հայաստանը և Անդրկովկասը վերջնականապես նվաճվեցին և ընկան խալիֆայության տիրապետության տակ։

Արաբական վարչաձևը Հայաստանում և հայերի դերը երկրի կառավարման ասպարեզում

Գրավելով Հայաստանը, արաբները ձեռնամուխ եղան նաև նրա քաղաքական, վարչական և ռազմական բնագավառների ու նրանց կառավարման նախկին ձևերի վերափոխմանն ու վերակառուցմանը։

Խալիֆայության կողմից մտցված առաջին վերափոխումները վերաբերում էին Հայաստանի վարչաձևին։ VIII դարի առաջին տասնամյակում արաբներն իրենց նվաճած հայկական ու անդրկովկասյան երկրամասերից ստեղծեցին վարչական մեկ միավոր՝ Արմենիա կամ Էրմենիա անունով, որի սահմանները հյուսիսում կազմում էին Դերբենդն ու Կովկասյան լեռները, արևմուտքում՝ Եփրատի միջին հոսանքը, Ճորոխի հովիտն ու Սև ծովը, հարավում՝ Վանա լճի հարավ-արևմտյան ափերն ու Տուրուբերան աշխարհը, փոքր արևելքում՝ Կասպից ծովն ու Պարսկաստանը։

Արմենիան, այսպիսով, իր մեջ միավորում էր Արևելյան Վրաստանը, Աղվանից աշխարհը և պատմական Հայաստանի ընդարձակածավալ արևելյան շրջանները։ Արմենիայի մեջ երբեմն մտնում էր նաև Ատրպատականը։

Արաբներին ենթակա Արմենիան իր հերթին բաժանվում էր չորս խոշոր ենթաշրջանների, որոնք ուղղակի կոչվում էին Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Արմենիաներ կամ Հայքեր։ Արմենիայի մեջ բուն հայկական տերիտորիան, որ կազմում էր ավելի քան 250.000 քառակուսի կիլոմետր տարածություն, ոչ միայն ընդհանրապես մեծ էր նրա մեջ մտնող ոչ հայկական տերիտորիաներից միասին վերցրած, այլև իր ռազմա-տնտեսական հզորությամբ, քաղաքական կշիռով Արմենիայի հասարակական ու քաղաքական կյանքում կատարում էր առաջնային դեր։ Մինչև 789 թվականը Արմենիայի վարչական կենտրոնը Դվինն էր, փոքր հետո դարձավ Պարտավը՝ Աղվանքում։ Արաբական տիրապետության ժամանակ Հայաստանը կառավարում էին հատուկ պատգամավորներ, որոնք կոչվում էին էմիրներ։ Հայկական սկզբնաղբյուրներում նրանք անվան-

վում են ոստիկաններ։ Ոստիկանի իշխանությունը տարածվում էր կամ Հայաստանի և կամ ամբողջ Արմենիայի վրա։ Ոստիկանը համարվում էր Արաբական խալիֆայության գերագույն իշխանավորը։ Նրա պաշտոնավարության ժամկետը որոշակի չէր։ Սակայն, որպես կանոն, ոստիկանները երկար չէին մնում իրենց պաշտոնում։ Ոստիկանի հիմնական պարտականությունների մեջ մտնում էին՝ երկրի ընդհանուր դրության հսկողությունը, հարկահավաքության գործի կազմակերպումը, երկրի անդորրության ապահովումը և նրա պաշտպանությունը դրսի հարձակումներից։ Ոստիկանի վերոհիշյալ պարտավորությունների վրա VIII դարից սկսած ավելացավ նաև Արմենիայում և Հայաստանում արաբական ու մուսուլմանական ցեղերի վերաբնակեցման գործի կազմակերպումը։ Արմենիայի ռազմա-տնտեսական կարևոր նշանակություն ունեցող քաղաքներում ու խոշոր հանգուցակետային բնակավայրերում, ասպա նաև բերդերում ու ամրոցներում նստում էին հատուկ վերակացուներ ու կառավարիչներ, որոնք նույնպես կոչվում էին էմիրներ։ Վերջիններս անմիջապես ենթարկվում էին ոստիկանին և կատարում նրա կարգադրությունները։ Ոստիկանից ու նրան ենթակա տեղական կառավարիչներից հետո, կարևոր պաշտոն էր համարվում փոստի և սուրհանդակության տնօրինության պաշտոնը, որին արաբները անվանում էին սահիբ ալ-բարիդ։ Հարկահավաքները կամ հարկահավաքության գործին հսկողները կոչվում էին դաղիներ։ Կար նաև հողաչափի կամ երկրաչափի պաշտոնը։

Արաբական խալիֆայության մեջ, որպես կանոն, բարձր պաշտոնները տրվում էին կաշառքով կամ ուղղակի վաճառվում էին։ Հասկանալի է, թե ինչպիսի ծանր հետևանքներ պետք է ունենար պաշտոնների առ ու ծախը հպատակ ժողովուրդների համար։ Այս բոլորով հանդերձ, արաբները այնուամենայնիվ ստիպված էին նաև հաշվի առնել տեղական ազնվականությանը։ Դրա համար էլ նրանք պահպանում էին հայ ազնվականության որոշ իրավունքները երկրի կառավարման ընագավառում։ Այսպես, արաբական իշխանությունները հայոց իշխանի և հայոց սպարապետի պաշտոնները համարյա մինչև վերջ էլ թողեցին հայերի ձեռքին։ Արաբները փաստորեն հայոց իշխանի միջոցով էին հավաքել տալիս հարկերը։ Հայոց իշխանը պարտավոր էր ապահովել հայ ազնվականների հավատարմությունն ու հպատակությունը արաբական իշխանությունների հանդեպ։ Այս պաշտոնը նշանակովի էր և ոչ ժառանգական։ Ժառանգական չէր նաև հայոց սպարապետի պաշտոնը։ Սպարապետը, ինչպես նախկին ժամանակներում, առաջնորդում էր հայկական դին-

ված ուժերը և որպես նրա գլխավոր հրամանատարը պարտավոր էր իր գործողությունները համաձայնեցնել արաբական իշխանությունների հետ։ Այս երկու պաշտոններում էլ նշանակումները կատարում էր խալիֆը կամ նրա կողմից լիազորված մի որևէ բարձր պաշտոնյա։

Արաբների տիրապետության սկզբնական շրջանում որոշ իմաստով արտոնյալ վիճակում էր դտնվում հայկական եկեղեցին ու հոգևորականությունը։ Դրա համար էլ օրենսդրության և դատավարության բնագավառը տնօրինում էր եկեղեցին։ Սկեղեցին իր ձեռքում էր պահում նաև ամուսնության վավերացման իրավունքը։

Սակայն ժամանակների փոփոխման հետ փոխվում էին նաև արաբական իշխանությունների վերաբերմունքն ու պահանջները հպատակ ժողովուրդների նկատմամբ և նախկին քիչ թե շատ հանդուրժողության քաղաքականությունը կամաց-կամաց տեղի էր տալիս բռնի ուժին ու սանձարձակ կամայականությանը։

3. ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՋԱՂԱՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ֆեոդալական հարաբերությունները ու հողատիրությունը

Արաբական տիրապետությունը Հայաստանում ֆեոդալական փոխհարաբերությունների և շահագործվող դասակարգերի սոցիալական և իրավական դրության մեջ էական փոփոխություններ չմտցրեց։ Տեղական աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների հանդեպ հայ գյուղացու ունեցած պարտավորություններին այժմ ավելանում էր նաև արաբական նվաճողների ծանր ու դաժան լուծը։

Որպես ֆեոդալական երկիր Հայաստանում նույնպես սեփականության գլխավոր ձևը հողային սեփականությունն էր։ Երկրում ամբողջ հողի սեփականատերը թեև համարվում էր թագավորը (խալիֆը), սակայն նրա հողատիրական գերագույն սեփականության իրավունքն ուներ միայն ձևական բնույթ, իսկ հողի փաստական տերերը իրենք՝ հողատեր նախարարներն էին։ Արաբները, որոնք սկզբնական շրջանում գտնվում էին զարգացման շատ ցածր մակարդակի վրա, հիմնականում չկարողացան խախտել հայկական նախարարական դասի փոխհարաբերությունները, այլ իրենց տիրապետության ընթացքում, պահպանելով հայկական ֆեոդալական սիստեմի կարևոր գծերը, նրա մեջ մտցրին միայն որոշ փոփոխություններ։

VIII դարի սկզբներին, երբ արաբները հնարավորություն ունե-

ցան գործադրել նաև կայուն հարկային քաղաքականություն, այդ ժամանակ միայն նրանք սկսեցին խախտել նաև հայկական հողատիրության իրավական կառուցվածքն ու հողային սեփականության սկզբունքները։

VIII դարի արաբական հայտնի օրենսդիր Աբու-Յուսուֆն իր «Քիթաբ ալ-խարաջ» գրքում ասում է՝ «Այն հողերը, որոնք հաշտության պայմանագրով թողնվում են բնակիչներին, ենթակա են (հարկադրման) պայմանագրի կետերին համաձայն...»։ Այդ նշանակում է, որ այստեղ խոսքը վերաբերում է արաբների կողմից դեռևս վերջնականապես չնվաճված, հետևաբար նաև դրանց նկատմամբ լիակատար իրավունքներ չունեցող հողային կալվածքներին, որոնց տերերը թեև պահպանում էին իրենց հողային սեփականատիրական իրավունքները, բայց թշնամուց ռազմական պարտություն կրելով, հարկադրված հանձն էին առնում հարկատվության որոշակի պարտավորություններ։ Ինչպես տեսնում ենք, մենք այստեղ գործ ունենք հողատիրության պայմանական ձևի հետ, որը խարբսխվում էր արաբների ձեռք բերած լոկ ժամանակավոր ռազմական հաջողությունների վրա, որը ավելի շուտ կիրառելի էր արաբական ներխուժումների և նվաճումների սկզբնական ժամանակաշրջանում։ Քանի դեռ արաբների տիրապետությունը Հայաստանում հաստատուն հիմքեր չուներ, նրանք չէին կարող ո՛չ մանրամասնորեն հաշվառման ենթարկել հպատակեցված երկրամասերի հողատարածությունները և ո՛չ էլ իրականացնել հողատիրության ուրիշ և ավելի բարդ ձևեր։ Դրա հետևանքով էլ պայմանական հողատիրության այս ձևի համար կայուն և հաստատուն սկզբունքների փոխարեն ավելի շուտ պետք է գործեին պատահական և հալթողի ու հաղթվողի փոխադարձ համաձայնությամբ հաստատվորեն ձևը բերված նորմաները, որոնք արաբական տիրապետության հաստատումից հետո իրենց տեղն անխուսափելիորեն պետք է զիջեին հողատիրության ավելի կայուն ձևերին։

Նվաճված Հայաստանը արաբները հողով, ջրով և ընդերքով հայտարարեցին խալիֆայական սեփականություն։ Բոլոր նվաճողների և տիրողների նման նրանք նույնպես ձգտում էին Հայաստանը ենթարկել իրենց նաև տնտեսապես։ Խալիֆայության մեջ գործող օրենքներով արաբների կողմից նվաճված բոլոր երկրներն ու հողային տարածությունները դիտվում էին որպես պատերազմական ավար, որոնց տնօրինությունը կատարվում էր այնպես, ինչպես սովորական ավարի տնօրինությունը։ Սակայն նոր նվաճած հողերի նկատմամբ խալիֆի ունեցած «գործողությունների լիակատար ա-

զատությունը» գործնական նշանակություն չուներ, որովհետև արաբ պաշտոնյաներն ու գինվորականներն իրենց գրաված երկրներում, աստիճանաբար գավթելով հողային ընդարձակ տարածություններ, դառնում էին դրանց իրական տերերը։ Մոտավորապես նույնն էր նաև ոչ իսլամ ժողովուրդների դրությունը։ Գոյություն ունեցող օրենքով եթե ոչ իսլամ ժողովուրդները առանց դիմադրության հպատակություն էին հայտնում արաբներին ու նրանց հետ կնքում էին խաղաղության դաշինք, ապա արաբական իշխանությունները կարող էին նրանց հողերն իրենց թողնել՝ պայմանով, որ նրանք վճարեն «խարաջ» (հողահարկ)։ Այս դեպքում հողատերն արաբական իշխանություններից ստանում էր հողօգտագործման տնօրինությունը և դառնում էր իր կալվածքի տերը սեփականատիրական ոչ լիակատար իրավունքով, որովհետև հողի իրավական սեփականատերը համարվում էր խալիֆը։ Հողատիրության այս եղանակը, որը, անշուշտ, պատկանում է հողօգտագործման պայմանական ձևին, արաբներն իրենք անվանում էին «խարաջային հողատիրություն»։ Այստեղից բխում էր նաև այն, որ եթե խարաջային սկզբունքներով հող ստացողը կանոնավորապես կատարեր խարաջի պարտավորությունը, ապա արաբական իշխանությունները իրավական տեսակետից չպետք է առարկեին, եթե հողի նկատմամբ եղած այդօրինակ իրավունքն անցներ նաև հողատիրոջ ժառանգներին։ Արաբական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում, չնայած հայ ֆեոդալական վերնախավի նկատմամբ գործադրվող հալածանքներին ու ոչնչացման քաղաքականությանը, հայկական նախարարական կարգը այնուամենայնիվ իր գոյությունը պահպանեց և շարունակեց խարաջային սկզբունքներով կառավարել իր հողային կալվածքները։ Այս սկզբունքը ընձեռում էր նաև հողի ժառանգական իրավունք, եթե այդ ժառանգները նույնպես կկատարեին խարաջի պարտականությունները։

Նվաճված մյուս երկրների նման Հայաստանում ևս արաբները ստեղծել էին պետական հողային ֆոնդ («կատայլի»), որից նրանք հատկացումներ էին կատարում Հայաստանում բնակեցվող մուսուլմաններին դարձյալ պայմանական հողատիրության սկզբունքներով։ Մուսուլմանական վերաբնակիչներն իրենց ստացած հողերի դիմաց պարտավոր էին իշխանություններին վճարել տասանորդ հարկը, որը իր չափով զգալիորեն պակաս էր «խարաջ»-ից։ Մուսուլմանական վերաբնակիչներն իրենց հողերի նկատմամբ նույնպես միայն տնօրինության իրավունք ունեին։

Արաբական ցեղերի մասսայական վերաբնակեցումները Հայաստանում

Արաբական իշխանությունները Հայաստանում ֆեոդալական-նախարարական կարգը քայքայելու և նրա ուժերը վերջնականապես թուլացնելու նպատակով ոչ միայն կիրառում էին ֆիզիկական բնաջնջման, ահաբեկման ու տնտեսական հալածանքների, սահմանափակումների ձևերը, այլև մասսայական վերաբնակեցումների միջոցով ստեղծում էին իր բնույթով դարձյալ ֆեոդալական-մուսուլմանական իշխանություններ, որոնք սովորաբար կոչվում էին էմիրություններ։ Այս քաղաքականությունը արաբները թեև սկսել էին կիրառել դեռևս իրենց արշավանքների սկզբնական ժամանակներում, սակայն Հայաստանում զանգվածային վերաբնակեցումները կատարվում են խալիֆայության իշխանության հաստատումից հետո։ Հայաստանի և Անդրկովկասի առաջին վերաբնակիչները մեծ մասամբ զորացրված զինվորականները և պետական նպաստ կամ թոշակ ստացող արտոնյալ մարդիկ էին, որոնց իշխանությունները հանձնարարում էին նաև ճանապարհների, գյուղերի և բնակավայրերի հսկողությունն ու պաշտպանությունը։ Եվ այսպես, արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի այնպիսի բերդերում ու քաղաքներում, ինչպիսիք էին Դվինը, Նախիջևանը, Մանազկերտը, Արձեշը, Բաղեշը, Կարինը, Բերկրին ու Ամյուկը, արաբական տարբեր զգալի տոկոս էին կազմում։ Արաբների ձեռքն անցած երկրի կարևորագույն կենտրոններն այնուհետև վեր էին ածվում արաբական իշխանությունների ռազմա-վարչական հենակետերի, որտեղ վերաբնակիչներից ու պաշտոնյաներից բացի, տեղավորվում էին նաև զորային միավորումներ։ Քաղաքների, բերդերի և խոշոր բնակավայրերի շուրջը կարճ ժամանակում կենտրոնանում էին Պողեստինի, Եմենի, Խորասանի և մյուս վայրերի մուսուլմանական վերաբնակիչները, որոնց իշխանությունների կողմից հատկացվում էին ամենաարգավանդ և ամենալավագույն հողերն ու արոտավայրերը։ Բոլմա Արծրունին վկայում է, որ արաբ վերաբնակիչներն ամբողջ ցեղերով, տոհմերով ու ընտանիքներով գալիս հաստատվում էին Հայաստանում, խլում հայերին պատկանող հողերն ու բաժան-բաժան անում իրար մեջ։

Հայաստանում հողային կալվածքների նկատմամբ արաբների սպառնալիքի հետևանքով տեղի էր ունենում խոշոր ֆեոդալական տնտեսությունների «կամովին» մասնատում և հողային կալվածքների բաժանում ֆեոդալական տոհմերի ներկայացուցիչների վրա,

մի բան, որը մեծ չափով թուլացնում էր հայկական նախարարությունների տնտեսական զորությունը։

Այսպիսով, արաբական ցեղերի բնակեցումը Հայաստանում ուժեղ կերպով քայքայում էր երկրի էթնիկական և տերիտորիալ ամբողջությունը ու ճանապարհ հարթում արաբական մեծ ու փոքր էմիրությունների առաջացման համար, էմիրություններ, որոնք արդեն VIII—IX դարերում Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքում սկսել էին կատարել որոշակի դեր։

Այդ ժամանակներում Հայաստանում գոյացած շատ թե քիչ ազդեցիկ արաբական էմիրություններն ու մուսուլմանական միավորումները հետևյալներն էին. Դվինում և նրա շրջակայքում ըստեղծվել էր Ջահաբիդների էմիրությունը, Կայսիկները իշխում էին Ապահունիքում, որի կենտրոնը Մանազկերտն էր, Ութմանիկները սեփականացրել էին Առբերանը Բերկրի կենտրոնով, Աղձնիքն անցել էր Մուսա իբն-Զուրարին, որը նստում էր Բաղեշում, Ամիդում իշխում էին Շայբանիդները և այլն։

Արաբական նորաստեղծ էմիրությունները ժամանակի ընթացքում ձեռք բերելով նաև զորք պահելու, հարկեր հավաքելու իրավունք, դառնում էին առանձին-առանձին ինքնուրույն ու ինքնամփոփ ֆեոդալական իշխանություններ, որոնք երբեմն փորձում էին նույնիսկ ազատվել խալիֆայության գերիշխանությունից և հաճախ եռանդուն մասնակցություն էին ցույց տալիս պետության ներսում մղվող կռիվներին։

Հայկական նախարարական դասի և զինվորական վերնախավի ոչնչացման քաղաքականությունը

Չնայած արաբները հաստատվել էին Հայաստանում, բայց քանի որ հայերն օգտվում էին սեփական զինված ուժեր ունենալու իրավունքից, ապա նրանք որոշակի երկյուղ էին կրում այդ ուժերից։ Ահա թե ինչու VII դարի վերջերից և VIII դարի սկզբներից արաբները վարում են հայկական զինված ուժերի չլատման և ոչնչացման քաղաքականություն։ Այս քաղաքականության առաջին զոհերը դարձան հայ զինվորականները և ռազմական գործի աչքի ընկնող նախարարները։

705 թվականին, երբ սկսվեց արաբա-բյուզանդական պատերազմը, նոր խալիֆ Վալիդ 1-ինը հանձնարարեց Հայաստան ներխուժած Մուհամեդ իբն-Օքբային որևէ եղանակով մեջտեղից վերացնել հայ նախարարների ու զինվորականների նշանավոր դեմքերին։ Մուհամեդն իր հերթին որոշակի ցուցումներ է տալիս Նախիջևանի արաբական զորքերի հրամանատար Կասիմին, իսկ վեր-

չինս, օգտագործելով մի քանի տարի առաջ արաբների ունեցած փորձը, դարձյալ դիմում է խորամանկությունը։ Նա նախ հաշվառման և նվերներ բաժանելու պատրվակով իր մոտ է հրավիրում հայոց մեծամեծներին ու զինվորականներին։ Շատերը գործի էությանը միանգամայն անտեղյակ, միամտաբար ընդունում են այդ հրավերը և իրենց մարդկանցով մեկնում Նախիջևան։ Այստեղ նրանց բոլորին գավազրաբար կալանավորում և քշում են քաղաքի և նրանից ոչ հեռու գտնվող խրամ գյուղի եկեղեցիները, հետո զինաթափ են անում և խլում նրանց ձիերն ու թանկարժեք իրերը։ Բայց դա բոլորը չէր. արաբները ավելի հարուստ ու անվանի մարդկանցից փրկագին են պահանջում և երբ այդ էլ են ստանում, այն ժամանակ եկեղեցիների դռներն ու լուսամուտները փակում են և, շենքերը հրդեհելով, բոլորին ոչնչացնում։ Նախիջևանում և Խրամում հայերի կրած զոհերի ընդհանուր թիվը կազմում էր 1200 հոգի։ Առանձնապես շատ էին տուժել Բաղրատունի, Արծրունի, Ամատունի և երկրի ներքին կյանքում աչքի ընկնող դեր կատարող մյուս նախարարությունները։ Այս դեպքերի մասին տեղեկություններ են հաղորդում ինչպես ժամանակակից, այնպես էլ հետագայի հայ և օտար հեղինակները։

Հայ նախարարներին ու մեծամեծներին նենգամտորեն ոչնչացնելուց հետո, արաբներն սկսեցին ամբարտավան կերպով շարչարել ու տանջել նաև նրանց ընտանիքի անդամներին, աղղականներին ու բարեկամներին։ Արաբա-բյուզանդական ավիրիչ պատերազմների և արաբական արշավանքների ու ասպատակությունների պատճառով քար ու քանդ արված Հայաստանի համար արաբների հասցրած այս հարվածն առանձնապես ծանր ու զդալի էր։ 705 թվականից հետո հետապնդումներն ու հալածանքները Հայաստանում շարունակվեցին է՛լ ավելի ուժեղանալ։

Կրոնական խտրականությունը և ազգային անհանդուրժողականությունը

Արաբները որոշակիորեն վարում էին նաև կրոնական խտրականության և ազգային անհանդուրժողականության քաղաքականություն։ Արաբների օրոք, օրինակ, մուսուլմաններին իրավունք էր տրվում քանդել քրիստոնյայի տունը՝ եթե այն մահմեդականի ունեցածից մեծ ու շքեղ էր։ Այլադավանները իրավունք չունեին օգտվելու իսլամի հետևորդների բաղնիքներից կամ աղբյուրներից։ Քրիստոնյային սպանելու դեպքում իսլամ քաղաքացին օրենքով ազատվում էր արյան վրեժից, քրիստոնյան իրավունք չուներ իսլամ հպատակի դեմ վկայություն տալու և այլն։

VIII դարից սկսած նախարարական և գյուղացիական հողերի հետ միասին արաբները գրանցագրավում և յուրացնում էին նաև հայկական եկեղեցական կալվածքներն ու հարստությունները, և աստիճանաբար սահմանափակում էին նախկինում քրիստոնեական հոգևորականության ու եկեղեցուն տրված արտոնությունները, ծաղր ու ծանակի ենթարկում հայոց եկեղեցին ու եկեղեցական դասի ներկայացուցիչներին։ Այդ մասին բավականին հարուստ ու ակնառու տեղեկություններ են հաղորդում հայկական և օտար աղբյուրները։

Հայոց դավանանքի, եկեղեցու և հոգևորականության դեմ գործադրված բռնություններով ու հալածանքներով, արաբները չէին հետապնդում հայերի մեջ անպայման իսլամը տարածելու նպատակներ, այլ այդ քաղաքականության հիմնական նպատակը երկիրը կողոպտելն էր։

Հարկերն ու հարկային քաղաքականությունը

Հարկերի գանձումը համարելով նվաճված երկրներում իրենց ներքին քաղաքականության ամենակարևոր ու հիմնական կողմը, արաբները հարկային սիստեմը միշտ հարմարեցնում էին ժամանակի ու պայմանների պահանջներին։ Դրա համար էլ ինչպես հարկերի տեսակներն ու չափերը, այնպես էլ նրանց հավաքման եղանակները տարբեր ժամանակներում եղել են տարբեր։ Հայաստանում արաբական տիրապետության ժամանակաշրջանի հարկային քաղաքականությունը կարելի է բաժանել չորս շրջանի՝ 652—700, 700—725, 725—750 և 750—862 թթ.։

Արաբների հարկային քաղաքականության առաջին շրջանին վերաբերող վկայությունները ցույց են տալիս, որ այս շրջանում արաբները Հայաստանում և Անդրկովկասում կայուն քաղաքական իշխանություն չունենալու պատճառով, չեն կարողացել վարել նաև կանոնավոր հարկային քաղաքականություն։ Դրա համար էլ այս շրջանում Հայաստանում գոյություն չունեին ո՛չ հարկերի որոշակի տեսակներ, ո՛չ էլ դրանց համար սահմանված կայուն չափեր։ VII դ. ամբողջ երկրորդ կեսին արաբների հարկահավաքությունն ավելի շատ կրում էր ռազմական հաջողություններով պայմանավորվող պատահական միջոցառման, քան կանոնավոր հարկահավաքության բնույթ։ Այդ շրջանում գանձվող հիմնական հարկը ծխահարկն էր, որը գանձվում էր յուրաքանչյուր ընտանիքից անկախ նրա շնչերի քանակից։ Հարկերն ավելի շատ գանձվում էին մթերքով, քան դրամով։

Արաբական խալիֆայության ռազմա-տնտեսական հզորացմա-

նը զուգընթաց մեծացող պետական և այլ ծախսերը վաղ թե ուշ պետք է արմատական բեկում մտցնեին նաև հպատակ երկրների նկատմամբ արաբների ընդհանուր վերաբերմունքի, նրանց հարկային քաղաքականության մեջ։ Այդ ուղղությամբ որոշ միջոցառումներ ձեռնարկվեցին 700—725 թվականներին, երբ արաբները Հայաստանում արդեն ձեռք էին բերել քաղաքական իշխանություն և երկիրն ամբողջապես ենթարկել էին իրենց։ Թեև այդ ժամանակներից սկսած արաբները որոշ չափով կանոնավորեցին հարկային սիստեմը, ճշգրտեցին հարկերի տեսակներն ու դրանց չափերը, այնուամենայնիվ դրանց մեջ առաջվա նման նախապատվությունը արրվում էր բնամթերային ռենտային, իսկ հարկային լուծն ընդհանրապես ծանր չէր։

Արաբները հարկային ծանր քաղաքականություն սկսեցին վարել 725 թվականից հետո, Հիշամ խալիֆի (724—743) գահակալության շրջանում։

Հիշամն արաբական տիրակալների մեջ առաջինն էր, որ իր գահակալության սկզբում խալիֆայության եկամուտները բազմապատկելու և եկամտաբեր աղբյուրների տեսակներն ու հարկերի չափերը ճշգրտելու համար Հայաստանում անցկացնել տվեց հատուկ աշխարհագիր (ազգաբնակչության, գույքի և եկամուտների հաշվառում)։ Այդ նպատակով 725 թվականին Հայաստան ուղարկվեց մի բարձրաստիճան պաշտոնյա Հարիթ իբն ադ-Խային կամ Հերթ անունով։ Հերթը ոչ միայն շրավարարվեց մարդահամարով, այլև մանրամասն տվյալներ հավաքեց հողատարածությունների և անասունների դլխաքանակի մասին։ 725 թվականի աշխարհագիրը ոչ միայն հնարավորություն տվեց անցնելու կանոնավոր հարկային քաղաքականության, այլև ավելացնելու հարկատու միավորները։ Բացի այդ, դրանից հետո հարկերն սկսեցին գանձել նաև դրամով. դա ավելի էր ծանրացնում աշխատավորության դրությունը։ Արաբական խալիֆայության հարկային քաղաքականության այս երրորդ շրջանում Հայաստանում կատարվում է երկու հիմնական և կարևոր փոփոխություն։ Դրանցից առաջինը այն էր, որ ծխահարկի փոխարեն մտցվում է գլխահարկը («ջիզիե»), իսկ երկրորդը՝ արաբները վերացնում են իշխող դասակարգի ներկայացուցիչներին տված արտոնությունը և նրանց էլ են հարկադրում։ Այդ ժամանակվանից սկսած գլխահարկը գանձվում էր հարկատուների սոցիալական պատկանելության և տնտեսական կարողության համապատասխան, որից տուժում էին հասարակության բոլոր խավերը՝ և՛ հարուստները, և՛ աղքատները։

Հերթի աշխարհագրից սկսած, արաբները կարևոր տեղ էին հատկացնում նաև հողահարկին («խարաջ») ու անասնահարկին։ Խարաջը վճարում էին առանց դիմադրության արաբներին հպատակված ոչ մուսուլման ժողովուրդները։ Խարաջի և անասնահարկի չափերը տարբեր ժամանակներում և վայրերում եղել են տարբեր։ Նրանք կայուն սահմանումներ չեն ունեցել։ Խարաջի չափը, օրինակ, հասել է բերքի 1/5-ից մինչև 1/2-ին։ Արաբների մոտ տարածված հարկատեսակներից մեկն էլ երիտասարդ աղջիկների, աղջիկների ու կանանց հավաքելն էր, որի մասին որոշակի հիշատակություններ ունեն արաբական և հայկական աղբյուրները։

Հայաստանում խալիֆայության հարկային քաղաքականությունը է՛լ ավելի ծանրացավ չորրորդ շրջանում՝ 750—862 թվականներին։ Այդ ժամանակ քրիստոնյա հպատակների նկատմամբ գործադրվող պահանջներն ու հարկադրանքներն այնքան լայն տարածում ունեին, որ այդ բռնությունները չափից ավելի էին համարում նույնիսկ իսլամի ու խալիֆայության գաղափարախոսները։ Հարկահավաքության ծանր ու հոգեմաշ քաղաքականության մեջ արաբներն այնքան հեռու էին գնացել, որ երբեմն կենդանի մնայածներին հարկադրում էին վճարելու մահացած և նույնիսկ մահմեդականություն ընդունած ազգականների կամ համադյուղացիների պարտքերը։ Արաբները իրենց գործը հեշտացնելու և հարկերը վճարածներին դեռևս չվճարածներից տարբերելու համար առաջինների պարանոցներից կախ էին տալիս կապարյա հստակ կնիքներ կամ խարանում էին նրանց դեմքը, կուրծքը, երեսն ու ձեռքերը։

Արաբական շրջանում Հայաստանից գանձվող հարկերի քանակի մասին տեղեկություններ են հաղորդում միայն արաբական աղբյուրները։ Սակայն նրանք դժբախտաբար հիշատակում են խալիֆայության գանձարանը մուտք եղած դրամական եկամուտների չափերը, իսկ թե որքան է կազմել նյութական եկամուտների արժեքը կամ պետությանը տրվելիք հարկերի անվան տակ Հայաստանից կորզված միջոցները, այդ մասին նրանք ոչինչ չեն ասում։ Որպեսզի պատկերացվի, թե ինչպիսի ահռելի չափերով էին ավելանում հարկերը, բավական է ասել, որ արաբական տիրապետության վերջին շրջանում, սկզբնական ժամանակների հետ համեմատած, միայն դրամական հարկերն ավելացել էին 1288 անգամ։ Եվ եթե հաշվի առնենք, որ փոքրիկ Հայաստանը հսկայածավալ Արաբական խալիֆայության դրամական ընդհանուր եկամուտների երեք տոկոսից ավելին միայն ինքն էր վճարում, աղա հասկանալի կլինի, թե որքան ծանր էր ու տաժանելի արաբական լծի տակ գտնվող

մասնատված, բաժան-բաժան եղած ու քաղաքական անկախությունը կորցրած հայ ժողովրդի վիճակը VII—IX դարերում։

Երկրի տնտեսական քայքայումը և բնակչության արտագաղթը

Վերաբնակիչ արաբական ցեղերը հիմնականում հաստատվում էին Հայաստանի հարթավայրային շրջաններում և զբաղվում ոչխարաբուծությամբ ու ուղտապահությամբ։ Նրանց բազմահազար հոտերի անկանոն ու անխնա տեղաշարժերի պատճառով երկրի այգեվետ ու ծառաստաններով հարուստ մասերը շուտով վեր էին ածվում անշրջի խոպան ու անհրապույր տափաստանների։ Նույնիսկ արաբական հեղինակ Տաբարին խոստովանում է, որ իր ցեղակիցների՝ դեպի Հայաստան կատարած «մշտական ներխուժումները հիմնավորապես ոչնչացրել են նրա բուսականությունը»։

Երկրի տնտեսությանը լուրջ կերպով վնասում էին նաև պատերազմները, որոնք ոչ միայն սահմանափակում էին առևտուրն ու փոխանակությունը, անապահով դարձնում երթևեկությունը, կասեցնում առևտրի ու արհեստների զարգացումը, այլև ամայացնում ու անմարդաբնակ էին դարձնում երկրի քաղաքների ու մարդաշատ ամբողջ շրջաններ։ Ասորական հեղինակ Դիոնիսիոս Թել-Մահարցին խոսելով արարների՝ դեպի Հայաստան կատարած մի արշավանքի մասին, ասում է, որ այդ «երկրամասերը, որոնք շատ բնակչություն ունեին, խաղողի, հացահատիկի, պտղատու այգիների ընդարձակ տարածություններ, արշավանքից հետո ամայացան ու բնակչությունից զրկվեցին»։ Այս նույն միտքը հաստատում է նաև արաբական ամենանշանավոր հեղինակներից մեկը՝ Աբու-Յուսուֆը նա, խոսելով Տիգրիսի և Եփրատի հովիտներում եղած խոպան հողերի մասին, նշում է, որ այդ հողերն առաջներում մշակվելիս են եղել, բայց արդեն հարյուր տարի է, որ դրանք լքվել ու այլևս չեն մշակվում։ Այս երևույթի հետևանքներն ամբողջովին հասկանալի կլինի, եթե ի նկատի ունենանք, որ Հայաստանն արաբական տիրապետության ժամանակաշրջանում անընդհատ էր ենթարկվում ավերիչ հարձակումների ու ասպատակությունների։ Ուրեմն որքան ծանր ու կորստաբեր պետք է լիներին այդ արշավանքների ու պատերազմների հետևանքները երկրի ու ժողովրդի համար։

Արաբների օրոք Հայաստանում մեծապես տուժեց նաև տնասնապահության մի շատ կարևոր ու արդյունավետ ճյուղը՝ խոզաբուծությունը։ Խոզաբուծության նկատմամբ արաբների անհանդուրժողականությունը չի կարելի բացատրել միմիայն կրոնական տեսակետից։ Խոզի միսը իր հատկություններով հարավում, շոգ կլի-

մայի պայմաններում ապրող արաբների համար, օգտակար չէր։ Ահա թե ինչու արաբները հիմնականում զբաղվում էին ոչխարաբուծությամբ։ Հայաստանում վերաբնակեցված արաբական ցեղերը նույնպես զբաղվում էին ոչխարաբուծությամբ։ Ուրեմն հասկանալի է, որ ոչխարաբուծությամբ զբաղվող արաբներին խոզաբուծության առկայությունը վնասում էր նախ և առաջ տնտեսապես։ Դրա համար էլ նրանք օգտվելով իրենց քաղաքական իշխանությունից, Հայաստանում ոչնչացնում էին տնտեսության հիշյալ ճյուղը։

Հայաստանի տնտեսական կյանքի թուլացումն ու անկումը քաղաքական ցնցումներից բացի կապվում էր նաև միջազգային առևտրական ճանապարհների փոփոխվելու հետ։ Առևտրի ու փոխանակության անկումը որոշակիորեն աղդեց նաև Հայաստանի քաղաքների ու քաղաքային կյանքի վրա։ Քաղաքները կորցնելով իրենց նախկին տեսքը, արաբական տիրապետության շրջանում վերածվում էին լոկ ռազմա-վարչական կենտրոնների։ Քաղաքային բնակչությունը հիմնականում կազմված էր առևտրականներից, արհեստավորներից, վաշխառուներից, բարձր դիրք ունեցող տեղացի և օտարերկրյա պաշտոնյաներից, զինվորականներից, հոգևորականներից և աշխատավորական զանգվածների ներկայացուցիչներից։

Հայաստանում ստեղծված տնտեսական և քաղաքական անապահով վիճակը ազնվականության ու բնակչության որոշ մասին հարկադրում էր ապաստան որոնել օտար երկրներում։ Մարդիկ երբեմն մեծամեծ խմբերով՝ թողած ամեն ինչ, հալածանքներից ու ոչնչացումից փրկվելու համար դիմում էին օտարություն։ Արտագաղթողների մեջ որոշակի թիվ էին կազմում նաև ազնվականները։ Ղևոնդ պատմիչը մի առիթով գրում է, որ օտար երկրներ գաղթող հայերի 12.000 հոգուց կազմված մի խմբի առաջնորդում էին հայ նախարար Շապուհ Ամատունին ու նրա որդին՝ Համամը։ Հայ բնակչությունը հիմնականում գաղթում էր Բյուզանդիա և Արևմտյան Վրաստան։ Արաբական իշխանություններն ընդհանրապես դեմ չէին արտագաղթին և միայն երբեմն խոչընդոտներ էին հարուցում։

Արաբները, ամրապնդելով իրենց ռազմա-տնտեսական դիրքերը Հայաստանում, ակում էին ժառանգական-տիրակալական իրավունքներից աստիճանաբար զրկել նաև հայ ֆեոդալներին։ Նրանք նոր հողամասեր և արոտավայրեր տալիս էին միայն հայկական իշխող դասակարգի այն ներկայացուցիչներին, որոնք այս կամ այն կերպ հարմարվում էին նոր պայմաններին։ Նրանք այդ անում էին

միանգամայն ինքնակամորեն, հաշվի չառնելով հնից պահպանված ժառանգական իրավունքն ու ազնվականական ծագումը։

Հասկանալի է, որ որպես Արաբական խալիֆայությանը ենթակա երկիր Հայաստանում նույնպես անխուսափելի էր արաբական լեզվի ու մշակույթի որոշ ազդեցությունը։ Այդ երևույթն առանձնապես նկատելի էր իշխող դասակարգի շրջաններում, որը արաբների հետ մշտական շփման ավելի մեծ առիթներ էր ունենում։ Հայ ազնվականներից ոմանք այդ ժամանակ նույնիսկ ընդունում էին իսլամը, ամուսնական կապեր հաստատում արաբների հետ, ենթարկվում նրանց նիստ ու կացին, կրում արաբական անուններ, հագնում արաբական զգեստներ և այլն։

Արևմտյան Հայաստանը VII—IX դարերում

Հայ ժողովրդի դրությունը ծանր էր նաև հայկական այն նահանգներում, որոնք գրաված էին Բյուզանդական կայսրության տիրապետության տակ։ Բյուզանդիան ժամանակի ընթացքում կարողացել էր Արևմտյան Հայաստանը լիովին ենթարկել իր տիրապետությանը։

Լևոն 3-րդ Իսավրացին (717—741) VIII դարում իր որդու՝ Կոստանդինի հետ հրապարակեց այսպես կոչված «Ընտրություն օրինաց»-ը, որտեղ հատուկ մաս կար հողատերերի և ազատ գյուղական համայնքների փոխհարաբերությունների մասին։ Այդ նույն օրենքը Արևմտյան Հայաստանում շուտով ոչնչացրեց եղած գյուղական ազատ համայնքները։ Համայնքի սկզբունքներով կազմված առանձին տնտեսությունների մեջ աշխատող գյուղացիներն աստիճանաբար կախման մեջ էին ընկնում աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներից։ Գյուղացիությունը, այսպիսով, վեր էր ածվում կոլոնի։

Իրավական տեսակետից կոլոնը համարվում էր անձնապես ազատ։ Նա ուներ իր հողակտորը և հկամտի դրպի մասը տալիս էր տիրոջը։ Ազատ կոլոնները փաստորեն հողի ազատ վարձակալողներն էին։ Սակայն, եթե վարձակալումը պայմանավորված ժամկետից անցնում էր և կոլոնը չէր կարողանում ստանձնած պարտավորությունները կատարել, ապա նա զրկվում էր վարձակալած հողից հեռանալու իրավունքից և ամրացվում էր հողին։ Ֆեոդալներն ու կալվածատերերը հենց դրան էլ ձգտում էին և իրենց հաշիվները դասավորում էին այնպես, որպեսզի կոլոններին անելանելի դրության մեջ դնեն և մշտապես ամրացնեն հողին։

Արևմտյան Հայաստանում կիրառվում էր նաև ստրուկի աշխատանքը։ Ստրուկները աշխատում էին հիմնականում ֆեոդալների

տներում, եկեղեցիներում և վանքերում։ Տնտեսության մեջ գերիշխող ճյուղը գյուղացու աշխատանքն էր։

Արևմտյան Հայաստանի աշխատավորության կեղեքման գործում հայկական և բյուզանդական աշխարհիկ ֆեոդալներից հետ չէին մնում նաև եկեղեցին և հոգևորականները։ Բյուզանդական եկեղեցին, որպես ֆեոդալական խոշոր կազմակերպություն, նույնպես ուներ հսկայական կալվածքներ՝ կոլոններով ու ճորտերով։ Օգտագործելով Բյուզանդական կայսրության քաղաքական իշխանությունը Արևմտյան Հայաստանում, բյուզանդական հոգևորականությունն ամեն միջոցի դիմում էր հայ ժողովրդի արևմտյան հատվածին քաղկեդոնական դարձնելու համար։

Բյուզանդական իշխանությունները հատուկ հոգատարություն էին ցուցաբերում քաղկեդոնական եկեղեցու և եկեղեցականների նյութական ապահովության նկատմամբ։ Եվ առաջին կայսրերի օրինակով հետագա շրջանի դահակալները նույնպես գնալով ընդարձակում էին եկեղեցու իրավունքները՝ տալով նրան բազմապիսի արտոնություններ։ Բավական է ասել, որ VII դարում հենց միայն Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլսում հաշվվում էր 80 վանք։ Կայսրության տերիտորիայում կային այնպիսի վանքեր, որտեղ ապրում էին 2000-ից ավելի հոգևորականներ և մի այդքան էլ կույսեր։ Բյուզանդական եկեղեցին հիշյալ շրջանում այնքան էր ուռճացել, որ նա տիրում էր պետության ամբողջ հողային ունեցվածքի 1/3-ից մինչև կես մասին։

Այսպիսին էր Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրությունը VII—IX դարերում։ Հայ ժողովուրդը ինչպես արաբների, այնպես էլ բյուզանդացիների լծի տակ կրկնակի ճնշման և շահագործման էր ենթարկվում։ Բնական է, որ նա չէր կարող լուռ ու մունջ տանել ոտարի և տեղական շահագործողների ծանր լուծը։ Այս պայմաններում հայ ժողովրդի բողոքն արտահայտվեց հուժկու մի շարժումով, որը պատմության մեջ հայտնի է պավլիկյան շարժում անունով։

ԳԼՈՒԽ XVII

ՊԱՎԼԻԿՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՑՔԸ

Պավլիկյան շարժման սկզբնավորումը

Պավլիկյան շարժումը ֆեոդալիզմի ծագման ու զարգացման ժամանակաշրջանի ամենահզոր ու ամենահուժկու սոցիալական շարժումներից էր։ Ֆեոդալական ճնշման ու շահագործման դեմ ուղղված մյուս հասարակական-քաղաքական շարժումների նման, պավլիկյանությունը նույնպես արտաքինից ընդունել է կրոնական կերպարանք և հանդես եկել աղանդավորական քողով ծածկված։ Պավլիկյան շարժումը, սոցիալականից բացի, մեծ չափով կրում էր նաև օտարերկրյա զավթիչների դեմ ուղղված ժողովրդա-ազատագրական շարժման բնույթ։

Պավլիկյան անվան ծագման մասին պատմագրության մեջ արտահայտվել են մի քանի կարծիքներ։ Ուսումնասիրողներից ոմանք այդ անունը կապում են Պողոս առաքյալի, ոմանք Պողոս Սամոսատցու, ոմանք էլ սամոսատցի ինչ-որ կնոջ՝ մանիքեական ուսմունքի հետևորդ Կալինիկեի որդու՝ Պողոսի հետ, որը ծագումով հայ էր։ Պահպանված կարևոր սկզբնաղբյուրները պավլիկյան շարժման հիմնադիր են համարում վերջին Պողոսին, որն ապրել է V դարի վերջերին և VI դարի սկզբներին։ Հավանաբար այս Պողոսի անունից էլ առաջացել է պավլիկյան շարժման անունը։

Պավլիկյան շարժման մասին հայկական սկզբնաղբյուրներից բացի, տեղեկություններ են հաղորդում նաև միջնադարյան բյուզանդական և արաբական սկզբնաղբյուրները։

Պավլիկյանների անունն առաջին անգամ հիշատակվում է հայոց Ներսես II Բագրևանդցի (548—557) կաթողիկոսի նախաձեռնությամբ գումարված Դվինի 554 թվականի երկրորդ եկեղեցական ժո-

ղովում կազմված, այսպես կոչված «Ուխտ միաբանության Հայոց աշխարհիս» փաստաթղթի մեջ, որտեղ ասվում է, որ Հայաստանում գտնվող նեստորական աղանդավորներն իրենց որոշ ծեսերով նմանվում էին պավլիկյաններին։ Ժողովից հետո հայկական եկեղեցին նեստորականների դեմ սկսում է կիրառել պատժիչ միջոցներ։ 554 թվականին նեստորականների կենտրոնատեղին, որ գտնվում էր Դվինի մոտ, հիմնահատակ կործանվում է, իսկ աղանդի հետևորդները՝ նզովվում ու ցիր ու ցան արվում։

Ծագելով V դարի վերջերին և VI դարի սկզբներին, պավլիկյան շարժման գաղափարախոսությունը սերտորեն առնչվել է բորբորիտների և մծղնեականների գաղափարախոսության հետ։ Պավլիկյանների և մծղնեականների դաղափարական մոտիկության ու սերտ հարաբերությունների պատճառով է, որ հայկական և օտար մատենագրության մեջ երբեմն մծղնեական ասելով հասկացել են պավլիկյան և ընդհակառակը։ Միջնադարյան հայ հեղինակներից ոմանք նույնիսկ ուղղակի նշում են, որ մծղնեականները դրանք նույն պավլիկյաններն են։

Պավլիկյան շարժման ընթացքը Արևելյան Հայաստանում

554 թվականի Դվինի եկեղեցական ժողովից հետո պավլիկյանները և հայկական եկեղեցու մյուս հակառակորդները ենթարկվեցին խիստ հալածանքների ու ոչնչացման։ Այդ պատճառով էլ VI դարի կեսերից սկսած երկար ժամանակ Արևելյան Հայաստանում պավլիկյան շարժման մասին մեզ ոչ մի տեղեկություն չի հասել։

Պավլիկյան շարժումն Արևելյան Հայաստանում կրկին ուժեղացավ VII դարի վերջերին և VIII դարի սկզբներին, երբ արաբական իշխանությունները Հայաստանում բյուզանդական ազդեցության տարածման դեմ պայքարի անհրաժեշտությունից ելնելով, հովանավորում կամ ուղղակի անուշադրության էին մատնում պավլիկյանների գործունեությունը։ Սակայն նրանց հանդուրժել չէր կարող հայոց եկեղեցին։ Պավլիկյանների դեմ պայքարի գործն այս անգամ էլ իր ձեռքը վերցրեց եկեղեցին և անձամբ կաթողիկոս Հովհան Օձնեցին (717—728)։ Հովհան Օձնեցին 719 թվականին հրավիրեց Դվինում հատուկ եկեղեցական ժողով և ուրիշ հարցերի հետ քննության դրեց նաև պավլիկյանների դեմ մղվելիք պայքարի կազմակերպման հարցը։

Դվինի ժողովի ընդունած կանոններից 32-րդն ամբողջությամբ վերաբերում է պավլիկյաններին։ Այս կանոնը հավատացյալներին պատվիրում էր ամենևին օթևան չտալ պավլիկյաններին, չխոսել ու

չշփվել նրանց հետ, խուսափել նրանցից, որովհետև նրանք «սատանայի որդիներ են» և այլն։ Այդ կանոնն օրինազանցների համար առաջին անգամ նախատեսում էր խոշտանգում, իսկ երկրորդ անգամ եկեղեցու հովանավորությունից զրկում։ Հովհան Օձնեցին պավլիկյանների դեմ իր գործունեությանն ազատությունտալու համար կարողացավ ձեռք բերել նաև ինչպես Հայաստանի ոստիկան Վլիթի, այնպես էլ խալիֆի հովանավորությունը։ Դրա համար կաթողիկոսը 720 թվականին անձամբ մեկնեց Դամասկոս և տեսակցեց Օմար 2-րդ խալիֆի (717—720) հետ։ Հովհան Օձնեցին պավլիկյանների դեմ մղում էր նաև կատաղի գաղափարական պայքար։ Նա 710-ական թվականներին պավլիկյանների դեմ գրեց իր «Ընդդէմ պաւղիկեանց» աշխատությունը, որտեղ հեղինակը, չկարողանալով գոնե փոքր չափով հիմնավորապես հերքել պավլիկյանների դրույթները կամ նրանց գաղափարախոսությունը, սկսում է հաղար ու մի ձևով զրպարտել ու անարգել նրանց։

Ինչպես երևում է, Հովհան Օձնեցին և նրա հետևորդները այնուամենայնիվ կարողացել են ջլատել պավլիկյանների ուժերը և թուլացնել շարժումը, որովհետև դրանից հետո շարժման մասնակիցները խոշոր զանգվածներով սկսեցին հեռանալ Արևելյան Հայաստանից ու հաստատվել Փոքր Հայքում և Արևմտյան Հայաստանում, որտեղ նրանց գաղափարների տարածման համար կային ավելի նպաստավոր պայմաններ։

Պավլիկյան շարժման վերելքն Արևմտյան Հայաստանում

Արևմտյան Հայաստանի պավլիկյանների առաջին պարագլուխներից ու առաջնորդներից է Կոնստանդին-Սիլվանը։ Նա ծնվել է Հայաստանի Մանանաղ գյուղում։ Սիլվանը որպես պավլիկյանների առաջնորդ պատմական ասպարեզ է եկել 654 թվականին։ Նա դեռևս իր հայրենի գյուղում ծանոթանում է Ավետարանին ու Պողոս առաքյալի թղթերին, որից հետո տեղափոխվում է Կոլոնիա քաղաքի մոտ գտնվող Կիբոսա բերդը։ Կոնստանդին-Սիլվանն իր գաղափարների տարածման գործում բավական հաջողություն է ունենում ոչ միայն Հայաստանում, այլև հարևան Պոնտոսում և Կոստանդնուպոլսում։

Պավլիկյան շարժման աշխուժացումը Բյուզանդական կայսրության արևելյան պրովինցիաներում չէր կարող չանհանգստացնել իշխանություններին։ 680—681 թվականներին բյուզանդական զորքերը ներխուժում են Արևմտյան Հայաստան, բռնում Կոնստանդին-Սիլվանին ու երկար չարչարելուց հետո սպանում են նրան։ Նույն

բախտին է արժանանում նաև պավլիկյանների մյուս ղեկավար Սիմեոն-Տիտը։

VII դարի վերջերին Բյուզանդական կայսրության դաժան հետապնդումներից ազատվելու համար պավլիկյանների նոր առաջնորդ Գենեսիոս-Տիմոթեոսն իր գործունեության կենտրոնը տեղափոխում է արաբական սահմանի մոտ, վերը նշված Մանանաղ գյուղը։ Իր նոր բնակավայրում Գենեսիոսն ունենալով նաև արաբների որոշ հանդուրժողականություն, հասավ մեծ հաջողություններ։ Նրա եռուն գործունեությունը շարունակվեց երեսուն տարի, մինչև VIII դարի 20-ական թվականները։

Գենեսիոս-Տիմոթեոսի մահվանից հետո նրա հետևորդները բաժանվում են երկու խմբի, որոնցից մեկին ղեկավարում է Զաքարիան, իսկ մյուսին՝ Հովսեփը։ Երկու ղեկավարների միջև գնալով թշնամանքն ու հակամարտությունը մեծանում էր։ Այս պատակտումը, ինչպես երևում է, լոկ անձնական թշնամանքի ու հակակրանքի հետևանք չէր։ Հավանաբար, սա պավլիկյան շարժման մեջ գոյություն ունեցող չափավոր և արմատական թևերի բախման արտահայտությունն էր։

Հովսեփն ու Զաքարիան շուտով ենթարկվելով արաբների հետապնդումներին ու հալածանքներին՝ իրենց հետևորդներով կրկին անցնում են բյուզանդական սահմանը և հաստատվում Եպիսպարիսում։ Գենեսիոս-Տիմոթեոսի մահվանից հետո պավլիկյանների դեմ արաբների սկսած ճնշումն ու հալածանքը համընկնում է Դվինի 719 թվականի ժողովի ընդունած որոշումների և Արևելյան Հայաստանում պավլիկյանների դեմ ծավալված ընդհանուր հալածանքների ժամանակին։ Հենց այս հալածանքների ալիքներն էին, որ հասել էին Մանանաղ և, երևի, նաև բյուզանդական սահմանամերձ մոտիկ գտնվող շրջաններում ապրող պավլիկյաններին։

Եպիսպարիս անցնելուց հետո պավլիկյանների միանձնյա առաջնորդ դարձավ Հովսեփը։ Եպիսպարիսի բնակիչները Հովսեփին և նրա հետևորդներին ընդունում են մեծագույն ցնծությամբ և վառվող ջահերով։ Այս հանդամանքը վախեցնում և սոսկալի է տեղական բյուզանդական իշխանություններին, որպեսզի նրանք պայքար սկսեն պավլիկյանների դեմ։ Շատ ժամանակ չանցած բյուզանդական զինված ջոկատները գաղտագողի շրջապատում են Հովսեփի բնակարանը, սակայն նրան բռնել չեն կարողանում։ Հովսեփը Տարպկությամբ դուրս է գալիս ծուղակից ու փախչում Անտիոք, որտեղ շարունակում է երեսուն տարի ղեկավարել տեղի պավլիկյաններին։ Չնայած դեպքերի այդպիսի ընթացքին, Արևմտյան Հայաս-

տանում պավլիկյան շարժումը չի թուլանում։ Այնտեղ պայքարի ղեկավարությունն ստանձնում է Վահանը, որը, ինչպես պատմիչն է ասում, փառաբանվում էր հատուկ հաստատակամությամբ։ Վահանը կարողանում է իր շուրջը համախմբել «բազմաթիվ հասարակ մարդկանց» և շարունակել պայքարը նոր ուժգնությամբ։ Այդ հասարակ մարդիկ, անշուշտ, մեծ մասամբ շահագործվող գյուղացիներ էին, որոնց շրջանում էլ արագությամբ արմատավորվում ու տարածվում էր պավլիկյանների գաղափարախոսությունը։

VIII դարի կեսերից սկսած պավլիկյան շարժումն ապրում է իր աշխուժացման ու ծավալման շրջանը։ Վահանից հետո, մինչև VIII դարի վերջերը շարժումը ղեկավարում է պավլիկյանների տաղանդավոր առաջնորդներից մեկը՝ Սերգիյը, որը հայտնի է նաև Տյուքիկոս մականունով։

Սերգիյն իր եռանդուն ու հետևողական գործունեությամբ կարողացավ պավլիկյան շարժման հետևորդների ու մասնակիցների թիվը հարյուր հազարների հասցնել։ Նրան հետևում էին անդամ բարձրաստիճան հոգևորականներ ու եկեղեցականներ։ Վերջիններիս՝ պավլիկյան շարժմանը հարելը բխում էր նրանց ներգաստային պայքարի առկայությունից։ Հոգևորականների, ինչպես նաև աշխարհիկ ֆեոդալների այն հատվածները, որոնք մասնակցել կամ հարել են պավլիկյան շարժմանը, անշուշտ, նպատակ են ունեցել այդ շարժումն օգտագործել իրենց շահերի համար։

Պավլիկյան շարժման հզորանալուց անհանգստացած՝ Բյուզանդական կայսրությունը դիմեց հալածանքի ու ահաբեկման ամենախիստ քաղաքականության։ Սակայն ո՞չ կայսրության ռազմական ուժերը, ո՞չ էլ գործադրվող դաժանություններն առայժմ ի վիճակի չեղան կասեցնելու պավլիկյանների շարժումը, որը հատկապես IX դարի սկզբներից թևակոխելով իր վերելքը, դնալով ընդգրկում էր ավելի մեծ շրջաններ ու համակում ավելի շատ մարդկային դանդվածներ։ Պավլիկյաններն առժամանակ թողնում են բյուզանդական շրջանները ու անցնում Մալաթիայի արաբական էմիրություն։ Այստեղ արաբները նրանց բնակեցնում են Արդաուս բնակավայրում և խրախուսում, որպեսզի նրանք իրենց պայքարը բյուզանդացիների դեմ շարունակեն։

Հաստատվելով արաբական տիրապետության շրջանակներում, պավլիկյաններն առայժմ վայելում էին վերջիններիս լիակատար հովանավորությունը և նրանց հետ դաշնակցած ավերում բյուզանդական երկրամասերը՝ մարդկային և նյութական հսկայական վնաս պատճառելով կայսրությանը։ Պավլիկյաններն ընդհանրապես

զբաղեցնելով Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության սահմանամերձ շրջանները, երկու հակառակորդ պետություններ միջև ստեղծել էին մի տեսակ ռազմականացված ամուր գոտի։

Պավլիկյաններին հալածելու գործում բյուզանդական կայսրերի և պաշտոնական անձանց մեջ իր դաժանությամբ փայլում էր հատկապես կայսրուհի Թեոդորան, որը հայկական Մամիկոնյան տոհմից էր։ 843—844 թվականներին Թեոդորայի կարգադրությամբ բյուզանդական զորքերը շարժվեցին դեպի արևելք՝ ետ քշելու Մելիտինեի արաբներին և ոչնչացնելու պավլիկյաններին։ Պավլիկյանների զինված ուժերը արաբների հետ միասին բյուզանդական բանակին հանդիպեցին Կեսարիայից հյուսիս, Մավրոպոտամոս վայրում։ Կռվում Թեոդորայի բանակը խայտառակ պարտություն կրեց, հազարավոր զինվորներ գերի ընկան, իսկ զորավարը հազիվ կարողացավ մի կերպ փախչել ու ազատվել։

Թեոդորայի սկսած արյունալի դատաստանը այնուամենայնիվ շարունակվեց։ Առաջին խայտառակ պարտությունից հետո դաշտում կայսրուհին արևելք ուղարկեց իր մագիստրոսներից Արդիրին, Դուկին և Սուքալիսին՝ պատվիրելով պավլիկյանների նկատմամբ գործադրվելիք միջոցների ժամանակ կանգ չառնել ոչ մի խստության առաջ։ Բյուզանդական զորքերն անողոք հաշվեհարդար տեսան պավլիկյանների հետ, նրանք ոչնչացրին հարյուր հազարավոր մարդկանց, կողոպտեցին նրանց ունեցվածքը, իսկ բնակավայրերն այրեցին։ Պատմիչն ասում է, որ այդ ժամանակ մարդկանց կենդանի կենդանի նետում էին խարույկների մեջ կամ գլորում անդունդները։ Քաղկեդոնական եկեղեցին չի մոռացել վարձատրել Թեոդորային։ Այդ արյունառուչտ միապետը դասվել է սրբերի շարքը և մեծարվել կրոնական հատուկ տոներով։

Սակայն որքան պավլիկյանների նկատմամբ հալածանքները խստանում էին, այնքան նրանց դիմադրությունն ուժեղանում էր։ Թեոդորայի ինկվիզիցիայի տարիներին պավլիկյաններին իր շուրջը համախմբեց ազգանվանավոր զորավար ու առաջնորդ Կարբեասը։ Նա վերջին արյունալի դեպքերի ժամանակ ծառայում էր բյուզանդական բանակում որպես սպա։ Երիտասարդ զինվորականը լսելով, որ բյուզանդական շարագործների զոհն է դարձել նաև իր ալևոր հայրը, վրեժխնդրությամբ լցված՝ իր շուրջը հավաքեց 5000-ի չափ զինվորներ և անցավ Մելիտինեի՝ արաբների մոտ։ Մելիտինեի էմիրը Կարբեասին փառավոր ընդունելություն ցույց տվեց, ապա ուղարկեց խալիֆի մոտ։ Խալիֆը թույլատրեց Կարբեասին իր հետևորդ-

ներով բնակություն հաստատել Սեբաստիայի շրջանի Արգաուս և Ամարա բնակավայրերում։

Պավլիկյաններին արաբների կողմից ցույց տրվող այդպիսի ընդունելությունը բացատրվում էր նրանով, որ արաբները հատկապես IX դարի կեսերին մեծ կարիք ունեին պավլիկյանների նման ռազմատենչ զորականների՝ Բյուզանդիայի առաջխաղացումը դեպի արևելք կասեցնելու համար։ Բյուզանդական պատմիչների վկայությամբ Կարբեասի ժամանակ պավլիկյաններն է՛լ ավելի համախմբվեցին և համալրեցին իրենց շարքերը։ Նրանք այլևս Արգաուսում և Ամարայում չտեղավորվելով, 855 թվականին իրենց համար հիմնեցին մի երրորդ, է՛լ ավելի մեծ ու ամուր բնակավայր՝ Տեվրիկ անունով, որը գտնվում է Նիբրատի միջին հոսանքում, նրա փոքրիկ Մելաս (այժմ՝ Թոխմա սու) վտակի ափին։

Տեվրիկը դարձնելով իր մշտական ու գլխավոր կենտրոնը, Կարբեասն այնուհետև ձեռնարկեց իր արշավանքներն ընդդեմ Բյուզանդիայի։ 855 թվականին Կարբեասը Տարսոնի արաբական էմիր Ալի-Արմանիի հետ հարձակման անցավ Բյուզանդական կայսրության սահմանների ուղղությամբ։ Իսկ 856 թվականին տակտիկական նպատակով, պավլիկյանների զորքերը նահանջելով՝ դեպի իրենց շրջանների խորքերը քաշեցին թշնամուն։ 857 թվականի դարնանը բյուզանդական բանակը Պետրոնաս Մամիկոնյանի գլխավորությամբ առանց դիմադրության ներխուժեց Սամոսատի և Ամիդի շրջանները և շարժվեց դեպի Տեվրիկ։ Սակայն քաղաքի անառիկ դիրքը և ուժեղ դիմադրությունը հարկադրեցին թշնամուն նահանջել։ 859 թվականին մի նոր արշավանք ձեռնարկեց անձամբ կայսր Միքայել 3-րդը (842—867)։ Կայսրն իր զորքերով երևք որ էր, որ հասել էր Սամոսատ, երբ պաշարված պավլիկյան և արաբական զորամասերը հանկարծակի դուրս եկան քաղաքի դարպասներից և անսպասելիորեն հարձակվեցին թշնամու անհոգ ու գոռոզացած զորքերի վրա։ Բյուզանդացիները գլուխները կորցրած խուճապի մեջ ընկան ու սկսեցին անկանոն կերպով փախուստի դիմել։ Բյուզանդացիները Սամոսատի մոտ թողեցին իրենց զինվորների բազմաթիվ դիակները և հարուստ ռազմավար։ Կայսրը միայն դիպվածով կարողացավ փախչել ու ազատվել գերի ընկնելուց։ Սամոսատի հակատամարտում միայն Կարբեասը գերի վերցրեց բյուզանդական հարյուրի չափ բարձրաստիճան զինվորականներ։

860—861 թվականներին Միքայել 3-րդը 40.000-անոց բանակի գլուխն անցած նորից արշավանքի դուրս եկավ պավլիկյանների ու արաբների դեմ նախորդ անգամվա իր խայտառակ պարտության

վրեժը լուծելու համար։ Սակայն առաջին իսկ ընդհարման ժամանակ, որը տեղի ունեցավ Թոկատից ոչ հեռու Զելա քաղաքի շրջակայքում, Կարբեասն ու նրա դաշնակից Մելիտինեի էմիր Օմար ալ-Ակտան չախչախելով թշնամուն, հարկադրեցին նրան նահանջել իր գրաված սկզբնական դիրքերից։ Դրանից հետո պավլիկյաններն ու արաբները կրնկակոխ կերպով հետապնդելով բյուզանդացիներին, հնարավորություն չէին տալիս նրանց ուշքի գալու։ Այս կռիվների ժամանակ Օմար ալ-Ակտան գերի վերցրեց 7000 զինվոր, Կարբեասը՝ 5000, Ալի-Արմանին, որը նույնպես մասնակցում էր կռիվներին՝ 5000 մարդ և 10.000 գրաստ։ Պատերազմի ժամանակ պավլիկյանների և արաբների զինված խմբերը հարձակումներ կատարելով ամբողջ սահմանագլխի երկարությամբ, նյութական և մարդկային ուժի մեծ կորուստներ էին պատճառում բյուզանդացիներին։

863 թվականի ամռանը Կարբեասն իր դաշնակից Օմար ալ-Ակտայի հետ միասին, 40.000-անոց բանակի գլուխ անցած, թշնամուն հալածելով հասավ մինչև Սև ծովի ափերն ու գրավեց Արմենիակ թեմի Ամիսոս նավահանգստային քաղաքը։ Բյուզանդացիները, նահանջելով հանդերձ, թիկունքում կուտակում էին մեծ ուժեր։ Եվ ահա, երբ պավլիկյաններն ու արաբները Ամիսոսից սկսեցին ետ քաշվել, նրանց զորքերը շրջապատվեցին կրկնակի անգամ ավելի բյուզանդական բանակի կողմից, որին առաջնորդում էր Պետրոնաս Մամիկոնյանը։

863 թվականի սեպտեմբերի 3-ին տեղի ունեցավ Պոսոնի ճակատամարտը։ Արաբներն ու պավլիկյանները կռվում էին արտակարգ խիզախությամբ։ Սակայն Պոսոնի ճակատամարտը վերջացավ բյուզանդացիների հաղթանակով։ Ճակատամարտում հերոսի մահով ընկավ նաև Կարբեասը։

Կարբեասի մահից հետո պավլիկյանների ղեկավարությունն ստանձնեց նրա զինակից ու բարեկամ Խրիսոխիրը։ Դառնալով պավլիկյան շարժման ականավոր պարագլուխներից մեկը, նա երևան բերեց պատերազմական արվեստի բարձր ընդունակություններ։ Չնայած Բյուզանդիայի կողմից շարունակաբար աճող ճնշմանը, պավլիկյան շարժումը Խրիսոխիրի ղեկավարությամբ մեկ տասնամյակ ևս տարեց իր վերելքի շրջանը և միայն IX դարի 70-ական թվականներին դնաց դեպի անկում։ Խրիսոխիրի ղեկավարած պավլիկյան զորամասերը 863 թվականից սկսած անընդհատ ավերում էին սահմանամերձ բյուզանդական տիրապետությունները և հարձակվում կայսրության նույնիսկ հեռավոր շրջանների վրա՝ լուրջ վնասներ պատճառելով իրենց թշնամիներին։ IX դարի սկզբներից

մինչև 70-ական թվականները պավլիկյան շարժումն ընդգրկել էր գրեթե ողջ Բարձր Հայքը, Մանանաղի, Դարանաղի գավառներն ու Ամասիայի և Սեբաստիայի շրջանները, Իրիս ու Փայլ գետերի հովիտների հետ միասին։

Խրիսոխիրի գործունեությունը համընկնում է բյուզանդական կայսր Բասեղ 1-ինի (867—886) գահակալման ժամանակներին։ Մակեդոնական-հայկական դինաստիայի հիմնադիր Բասեղ 1-ինը կարճ ժամանակում կոտրելով արաբների հզորությունը արևելքում, լուրջ սպառնալիքի տակ էր դնում նաև նրանց դաշնակից պավլիկյաններին։ Ահա թե ինչու հատկապես IX դարի կեսերին պավլիկյանների պայքարը բյուզանդական նվաճողների ու ներքին շահագործողների դեմ կրում էր է՛լ ավելի կատաղի ու վճռական բնույթ։

Պավլիկյանների դեմ Բասեղ 1-ինի ձեռնարկած առաջին արշավանքները վերջացան նրա համար խայտառակ պարտությամբ։ Իրենց ոչ մեծ ուժերով ստվարաքանակ բյուզանդական լեգեոններին քաշելով դեպի երկրի խորքերը, պավլիկյանները շախշախում ու ոչնչացնում էին նրանց։ Բյուզանդական զավթիչներն իրենց կատաղությունը թափում էին խաղաղ բնակչության վրա։ Նրանք անխնա կոտորում էին բնակիչներին կամ գոնագաղթեցնում դեպի արևմուտք։ Բասեղ 1-ինի անցած վայրերն ավերվում ու անապատ էին վերածվում։ Բյուզանդացիների շարագործություններն այնպիսի չափերի էին հասնում, որ այդ բանն ակամայից խոստովանում էին նույնիսկ բյուզանդական հեղինակները։

Բյուզանդական զորքերի քաշվելուց հետո պավլիկյան զորավարներ Խրիսոխիրն ու Կալիստը 870 թվականին, հետապնդելով թշնամուն, սրընթաց կերպով գրավում են մի շարք խաղաղ բնակավայրեր ու քաղաքներ Բյուզանդիայի արևելյան պրովինցիաներում, ինչպես՝ Նիկիան, Նիկոմեդիան, Եփեսոսը և այլն։ Պավլիկյանների այս առաջխաղացումն այն աստիճան շփոթեցրեց բյուզանդացիներին, որ նույնիսկ գոռող Բասեղը մի նամակով առաջարկեց Խրիսոխիրին հաշտություն կնքել։ Խրիսոխիրն ի պատասխան կայսերական նամակի և որպես հաշտության նախապայման, առաջարկում է Բասեղին հրաժարվել արևելքում իր ունեցած տիրապետություններից ու հեռանալ դեպի արևմուտք։ Հակառակ դեպքում պավլիկյանների քաջարի առաջնորդն սպառնում էր բյուզանդացիներին ուժով վռնդել Փոքր Ասիայի տերիտորիայից։

Վերոհիշյալ դեպքից հետո 871 թվականին Բասեղ 1-ինը մի ստվար բանակի գլուխ անցած շարժվեց արևելք։ Պավլիկյանների առանց այն էլ փոքրաքանակ ուժերն արյունահեղ կռիվներում ավե-

լի էին նոսրանում։ Դրա համար Խրիսոխիրն անցավ պաշտպանողական մարտի։ Նա իր ուժերը կենտրոնացրեց Տեվրիկում և շարունակեց դիմադրությունը։ 871 և 872 թվականների երկու խոշոր հարձակումներին էլ Տեվրիկը դիմադրեց հերոսաբար։

873 թվականին փոքր-ինչ համալրելով իր շարքերը՝ Խրիսոխիրն անցավ հակահարձակման և պատերազմական գործողությունները փոխադրեց Թրակիայի տերիտորիան։ Այս կռիվների ժամանակ պավլիկյանները նոկաուտեցին Կապադովկիա ու հասան մինչև Անկարա քաղաք։ Անկարան դրավելուց հետո պավլիկյանները գերիներով ու ավարով նոր վերադարձան։ Խրիսոխիրի նահանջի ժամանակ բյուզանդական զորքերը Քրիստափորի առաջնորդությամբ գաղտագողի սկսեցին հետապնդել նրան։ Եվ այն ժամանակ, երբ պավլիկյանները հանգստանում էին Խարսիանա թեմի Ագրանե վայրում, լուսաբացին աղմուկ-աղաղակով նրանց վրա հարձակվեցին բյուզանդական զինվորները, որոնց օգնում էին նաև Արևմտյան Հայաստանի որոշ ֆեոդալների ռազմական ուժերը։ Պավլիկյանները խուճապի մեջ ընկան և սկսեցին լքել իրենց դիրքերը։ Այս կռվում սպանվեց նաև Խրիսոխիրը։ Պավլիկյանների կորուստները մեծ էին։ Ագրանեի ճակատամարտն էլ պավլիկյանների վերջնական պարտության համար ունեցավ ճակատագրական նշանակություն։ Դրանից հետո, զրկվելով դիմադրության, բյուզանդացիները գրավեցին նաև Տեվրիկը և պավլիկյանների մյուս ամրոցներն ու բնակավայրերը։ Բյուզանդացիներն ամենուրեք մասսայաբար սրի էին քաշում բնակիչներին ու ավերում նրանց բնակավայրերը։ Պավլիկյանները սարսափահար փախչում և ապաստանում էին լեռներում և անտառներում։

Հիշատ. IX դ. 70-ական թվականների արյունալի կոտորածները չլուծեցին պավլիկյանների ազգամական ուժերը, բայց շարժումն արմատախիլ անել կամ նրա գաղափարներն իսպառ ոչնչացնել չկարողացան։ Բյուզանդական ռազմական ահեղ մեքենան ճնշելով պավլիկյանների ապստամբությունը, շարունակեց իր տիրապետությունը պահպանել Արևմտյան Հայաստանում և փոքրասիական մյուս երկրներում։ Պավլիկյաններին պարտության մատնելուց հետո բյուզանդացիներն սկսեցին նրանց մնացորդներին զանգվածաբար դաղթեցնել դեպի Բալկաններ։

Պավլիկյանները Բալկաններում

Բռնադաղթեցված պավլիկյանների խոշոր զանգվածները հատկապես X դարից սկսած տեղավորվեցին Թրակիայի Ֆիլիպոպոլիս (այժմ՝ Պլովդիվ, Բուլղարիայում) քաղաքում։ Պավլիկյանների

կովող ուժերը շտապ կարգով մտցվում էին բյուզանդական սահմանապահ զորամասերի կազմի մեջ և նետվում սլավոնական արշավանքների դեմ։ Սակայն բյուզանդական կայսրերն ու քաղաքական գործիչները ոչ մի կերպ չկարողացան մեռցնել պավլիկյանների գաղափարախոսությունը։ Հայերի զանգվածային բռնադաղթը Արևմուտք տվեց մի շատ հակառակ արդյունքը։ Պավլիկյանների դաղափարները սոցիալական նպաստավոր պայմաններում լայնորեն ծավալվեցին Բալկաններում, Կիևյան Ռուսիայում և եվրոպական մի շարք երկրներում։ Եվրոպայի և Ասիայի համար ընդհանուր սոցիալական պայմանների շնորհիվ էլ այդ գաղափարախոսությունը դուրս եկավ հայկական շրջանակներից և նախորդեց Եվրոպայում հետագա դարերում ծավալված, այսպես կոչվող, աղանդավորական և ռեֆորմիստական շարժումներին։

Բալկաններում պավլիկյան շարժման ազդեցությամբ X դարի սկզբներին բուլղարների մեջ սկիզբ առավ իր շատ կողմերով պավլիկյան շարժմանը նման բոգոմիլների շարժումը (շարժման անունը առաջացել է ղեկավար Բոգոմիլի անունից)։ Աշխատավոր բուլղար ժողովուրդը բոգոմիլյան շարժման դրոշի տակ մասսայական պայքարի ելավ իր հարստահարողների՝ բյուզանդական և տեղական ֆեոդալների դեմ։

X—XII դարերում պավլիկյանները զինված ջոկատներով շարունակում էին իրենց պայքարը Բյուզանդական կայսրության դեմ։ Այդ պայքարի ընթացքում նրանց շատ հաճախ օգնում էին Բալկանների սլավոնական ժողովուրդները։ Տնտեսական և իրավական ծանր պայմաններն ստիպում էին պավլիկյաններին հարմար դեպքում համագործակցել Բյուզանդիայի թշնամիների հետ՝ օժանդակելով նրանց արշավանքներին դեպի Բյուզանդիա։

Բալկանյան թերակղզում, ինչպես նաև Բյուզանդական կայսրությանը մոտիկ միջերկրածովյան կղզիներում տեղավորված պավլիկյաններն առևտրական լայն հարաբերությունների մեջ էին գտնվում արևմտաեվրոպական պետությունների և մասնավորապես Իտալիայի ու Ֆրանսիայի հարավային պրովինցիաների հետ։ Այս հանգամանքը, ինչպես և պավլիկյանների նկատմամբ բյուզանդացիների գործադրած հալածանքները, շատ հաճախ ստիպում էին պավլիկյաններին բնակություն հաստատել այն երկրներում, որոնց հետ նրանք առևտրական հարաբերությունների մեջ էին գտնվում։ Այս շփման շնորհիվ պավլիկյան գաղափարները թափանցում էին Եվրոպա։ Պավլիկյանների ուսմունքը արմատներ էր թողել Ֆրանսիայի Պրովանս և Շվեյցարիայի Վո շրջաններում։ Նրանց գաղա-

փարների ազդեցությունը եվրոպական ժողովուրդների վրա այնքան զորեղ էր, որ XIII դ. Ինոկենտիոս 3-րդ (1198—1216) պապը և XIV դ. Ֆրանսիայի թագավոր Ֆրանսուա 1-ին արյունալի դատաստան սկսեցին նրանց դեմ։

Դեռ անցյալ դարում Պլովդիվի և Սվիշտովի (Բուլղարիա) շրջաններում ապրում էին պավլիկյանների հետնորդները, որոնց թիվը 50.000-ի էր հասնում, որոնք թեպետ արդեն մոռացել էին իրենց նախնիների դաղափարները, բայց տակավին պահպանում էին որոշ սովորություններ, որոնք հիշեցնում էին հայկականն ու պավլիկյանը։ Պավլիկյան հայերի ու բուլղարների երբեմնի դաղափարական ու մշակութային մոտիկության արդյունքը պետք է համարել նաև այն, որ մինչև այժմ էլ հիշյալ վայրերի բուլղարական և հայկական կենցաղային սովորությունների, ասեղնագործության, երաժշտության, ժողովրդական պարերի մեջ կան շատ նմանություններ։

2. ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԴԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Պավլիկյանների դաղափարախոսության հիմնական դրույթները

Պավլիկյանների դաղափարախոսության ըստ կրդրունքը երկվությունն էր (դուալիզմ)։ Նրանք ընդունում էին շարության և բարության աստվածություններ, որոնք, իբր, իրար նկատմամբ դտնվում են հարատև պայքարի մեջ։ Սկզբնաղբյուրները վկայում են, որ պավլիկյանները տեսանելի, զգայական, նյութական աշխարհը վերագրում էին շարության աստծուն, իսկ ինչ որ տեսանելի չէր, երկնային ու հոգեկան էր՝ բարության աստծուն։

Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ շարժումն ուղղված էր ամեն տեսակի անհավասարության և դասային բազմապիսի արտոնությունների դեմ։ Ըստ երևույթին պավլիկյանները ոչ թե նյութականի ստեղծումն են վերագրել շարության աստծուն, այլ ընդունել են, որ նյութը և հոգին հենց սկզբից ստեղծվել են աստծու կողմից, իսկ հետագայում նյութականի վրա իշխելու իրավունքն ընկել է չարի ձեռքը։ Սա ամբողջապես համապատասխանում է շարժման ոգուն և հիմնավորում պավլիկյանների դարավոր պայքարն ուղղված չարի իշխանության դեմ։

Պավլիկյանների արմատական թևը ժխտում էր սնդրշիրիմյան կյանքը։ Պավլիկյանները չէին ընդունում նաև եկեղեցական ծեսերը և կանգնած էին իրական կյանքի ընդունման սկզբունքի վրա։ Պավ-

ֆիկյանները չէին ընդունում Հին Կտակարանը, իսկ հավատում էին Նոր Կտակարանի միայն որոշ դրույթներին։ Ժխտելով կույս Մարիամի աստվածածնությունը, հերքում էին նրա պաշտամունքը։ Քրիստոսին վերագրելով միայն աստվածային հատկություններ, պավլիկյանները հերքում էին նրա կրկին հարության գաղափարը, չէին հավատում նրա կրած մարմնական չարչարանքներին։ Այստեղից էլ անմիջականորեն բխում էր պավլիկյանների կողմից եկեղեցական համարյա բոլոր ծեսերի ու խորհուրդների ժխտումը, որոնք մեծ մասամբ, համաձայն քրիստոնեական ուսմունքի, կապվում էին Քրիստոսի անձնավորության և նրա գործունեության հետ։ Այսպես, օրինակ, նրանք գտնում էին, որ ոչ թե պետք է երկրպագել, այլ անիծել խաչը, չպետք է խաչակնքել և խաչից բարի ակնկալություններ սպասել։

Ժխտելով Քրիստոսի մարդկային հատկությունները, պավլիկյաններն ուղղակի հակադրվում էին քաղկեդոնական երկաբնակ եկեղեցուն, այն եկեղեցուն, որը, բյուզանդական աշխարհիկ իշխանության հետ համագործակցած, հարստահարում ու ճնշում էր հայ ժողովրդին։ Եվ հենց այդ ճնշման ու հալածանքի պոռթկումն էր, որ իր արտացոլումն էր գտել պավլիկյանների ուսմունքի մեջ։ Պետք է ենթադրել, որ քաղկեդոնական եկեղեցու դեմ ունեցած հակադրությունն էր եղել այն պատճառներից մեկը, որ Արևմտյան Հայաստանում բյուզանդական աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների դեմ մղվող պայքարն ընդունեց երկարատև դիմված ապստամբության կերպարանք։

Պավլիկյանները չէին ընդունում նաև հաղորդության, մկրտության և պատարագի ծեսերը, որոնք դարեր շարունակ նյութական մեծ շահ էին բերում ոչ միայն հայոց, այլև քրիստոնեական բոլոր եկեղեցիներին։ Այդ գաղափարների առանձին արձագանքները, ինչպես ճիշտ նկատել են որոշ ուսումնասիրողներ, պահպանվել են նաև հայ ժողովրդի մեծ էպոս «Սասունցի Դավթի» մեջ։ Գուցե Սանասարի ու Բաղդասարի կնունքը թոնրի կրակի վրա և Դավթինը՝ երինջների որդյամբ՝ պավլիկյան դաղափարախոսության հեռավոր արտահայտությունն է դյուցազներգության մեջ։

Պավլիկյանների դրույթներից մեկն էլ այն էր, որ նրանք հիմնավորապես ժխտում էին սրբերի պաշտամունքը և սրբերին համարում նյութական աշխարհի վրա իշխող չարության աստծու ծառաներ։ Պավլիկյանները պահանջում էին սրբապատկերների և եկեղեցիների ոչնչացում։ Նրանք գտնում էին, որ ով հավատում է աստծուն, նա ինքն էլ կարող է անհատապես, առանց միջնորդի, կապ-

վել նրա հետ ինչպես ցանկանա և որտեղ որ պատահի, որովհետև աստված ամենազոր է և ամեն տեղ։ Վերոհիշյալ դրույթներից բացի, պավլիկյանները ժխտում էին նաև հոգեհանգստի, հոգու հացի, զոհաբերության (մատաղ), խնկարկման և այլ ծեսերը։

Պավլիկյան շարժման գաղափարախոսության հիմնական դրույթներից մեկը եկեղեցական հիերարխիայի ժխտումն էր։ Նրանք հերքելով դարերով սրբազործված եկեղեցական նվիրապետությունը, ելնում էին իրական պայմաններից ու ցանկանում էին հավատացյալների մեջ մտցնել աստիճանի ու կոչման հավասարություն։ Պավլիկյանները տեսնում էին, որ արտոնյալ ու պորտաբույծ հոգևորականությունը դարեր շարունակ իր ամբողջ տարաստիճան բանակով տգրուկի նման ծծում է ժողովրդի արյունը։ Ուստի նրանք արդարացի հարց էին դնում՝ ոչնչացնել հոգևորականն, այսպես կոչված, սրբազան նվիրապետությունը։ Այս հավասարեցման սկզբունքը պավլիկյաններն իրենց համայնքներում իրականացրել էին։ Պավլիկյանների ղեկավարները, առաջնորդներն ու քարոզիչները շարքայիններից չէին տարբերվում նույնիսկ իրենց հագուստով ու ապրելակերպով։

Հակառակ քրիստոնեական եկեղեցու և պահպանվող հետամնաց սովորությունների, պավլիկյաններն առաջ էին քաշում աղատ սիրո գաղափարը։ Այս դրույթն օգտագործել են նրանց դատակարգային թշնամիները հերյուրանքի և զրպարտության համար, որ իբր պավլիկյաններն անբարոյական ու անառակ կյանք էին վարում։ Այսպես են փորվել նաև կղերական ու բուրժուական պատմագրության ներկայացուցիչները, առանց հասկանալու, որ նման բարքերով պավլիկյանները չէին կարող իրենց շուրջը համախմբել հարյուր հազարավոր աշխատավորների և դարեր շարունակ անհավասար ու հերոսական պայքարի ելնել ֆեոդալիզմի դեմ։

Մի կողմ թողնելով այն, որ պավլիկյանների ուսմունքի մեջ այնուամենայնիվ կրոնա-աստվածաբանական կողմը նույնպես մեծ տեղ է գրավել, որ պավլիկյանները կրոնի և պաշտամունքի իսպառ վերացման հարցը չեն դրել ու չէին էլ կարող դնել, մեզ համար կարևորը նրանց շարժման ներքին սոցիալական էությունն է։ Իսկ Պավլիկյան շարժման սոցիալական կողմը հենց այն է, որ նրանք համարյա ժխտելով քրիստոնեական բոլոր ծեսերն ու խորհուրդները և առաջարկելով պաշտամունքի ավելի պարզ ձևեր, փաստորեն ժխտում ու պայքարում էին հոգևոր ֆեոդալների շահագործման դեմ, որովհետև եկեղեցական ծեսերը հանդիսացել են շահագործման հիմնական ու ամենատարածված եղանակներից մեկը։

Պավլիկյաններն իրենց երջանկությունը փնտրել են այս աշխարհում։ Նրանք ձգտել են ոչնչացնել առաջին հերթին հենց նրանց, ովքեր դարեր շարունակ կեղեքել են, խաբել մարդկանց և վայելել նրանց ձեռքով ստեղծված բարիքները, իրենց համար բաժին թողնելով միայն հանդերձյալ կյանքի «հրաշալիքները» և հոգեկան երանությունները մահվանից հետո։

Պավլիկյան շարժումը լինելով աղանդավորական, արտաքինից կրոնական շարժում՝ ըստ էության սոցիալական շարժում էր, որն ուղղված էր ոչ միայն եկեղեցու, այլև տիրապետող դասակարգի ու շահագործման դեմ ընդհանրապես։ Պավլիկյան շարժումն իր մեջ ընդգրկելով գյուղացիներին, կոլոններին, ստրուկներին ու արհեստավորներին, հանդես է եկել որպես դեմոկրատական շարժում։ Շարժման հիմնական առաջատար ուժը կազմել է գյուղացիությունը։ Այդ շարժումը կրել է ինտերնացիոնալ բնույթ, քանի որ շարժման ընդգրկած տերիտորիայում հայերից բացի, ապրում էին նաև հույներ, ասորիներ, հրեաներ, արաբներ և այլն, որոնց ստորին շերտերն ու դասակարգերը նույնպես ենթարկվում էին տեղական և օտար շահագործողների ճնշմանն ու հալածանքներին։

Պավլիկյան շարժումը մասսայական, ժողովրդական լայն բնույթի շնորհիվ իր արտացոլումն է գտել ժողովրդական հրգերում, որոնք խիստ վերամշակվելով ու ձևակերպվելով պահպանվել են X դ. ձևավորված «Դիգենիս Ակրիտ» բյուզանդական էպոսում, որտեղ հանդես են գալիս շարժման առաջնորդներ Կարբեասն ու Խրիսոխիրը։

Պավլիկյան շարժումը որպես սոցիալական, զանգվածային շարժում առաջադիմական էր, սակայն, նա նույնպես, ինչպես միջնադարյան գյուղացիական բոլոր շարժումները ի վիճակի չէր հաղթանակի հասնել։

ԳԼՈՒԽ XVIII

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

1. ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ VIII ԴԱՐՈՒՄ

702—705 թվականների առաջին զինված ապըստամբությունը

Արաբներն իրենց ամբողջ տիրապետության ընթացքում այնուամենայնիվ ի վիճակի չեղան ոչնչացնել հայկական ռազմական ուժն ու նախարարական դասը։ Հայկական զորքերի սպարապետ Սմբատ Բագրատունին օգտվելով դրանից, ապստամբության ուժերը կազմակերպելու համար 702 թվականին հրավիրում է մի գաղտնի խորհրդակցություն, որին մասնակցում էին համախոհ և ապստամբության կողմնակից ազնվականները՝ Աշոտի որդի Սմբատ իշխանը՝ Վասապուրականից Թեոդորոս Ռշտունու որդին՝ Վարդը, սպարապետի եղբայր Աշոտ Բագրատունին և ուրիշները։

Խորհրդակցությունից հետո Սմբատ Բագրատունուն հաջողվում է իր շուրջը համախմբել 2000 հեծյալ զինվորականներից։ Սակայն որովհետև այդ ուժերը քիչ էին պայքարի հաջող ընթացքի համար, ուստի ապստամբները որոշում են անցնել Արևմտյան Հայաստան՝ նոր ուժեր կազմակերպելու համար։ Սմբատ Բագրատունու զորքն անցնելով Արաքս գետը, կանգ է առնում Մասիսի ստորոտներում գտնվող Ակորի գյուղում։ Սակայն հայկական զորաբանակի տեղաշարժը աննկատ չի մնում։ Արաբները, որ ուշադրությամբ հետևում էին հայերի նախապատրաստություններին, իսկույն ևեթ նրանց դեմ են ուղարկում 5000 հոգուց բաղկացած մի զորաբանակ։

Սմբատ Բագրատունին ռազմական նպատակներով գերադասում է դիրքեր գրավել Ակորիից ոչ հեռու գտնվող Վարդանակերտ գյուղում։ Դրա համար էլ նա շարժվում է դեպի Վարդանակերտ ու ամրանում այնտեղ։ Արաքսի ձախ ափին գտնվող այս գյուղը շու-

տով վեր է ածվում ռազմական ամրացված ճամբարի։ Հայ զինվորները մեծ եռանդով անմիջապես փակում են գյուղի փողոցները և դիրքեր գրավում նրա շրջակայքում։ Նախապատրաստական աշխատանք կատարելու հետ միասին Սմբատ Բագրատունին, այնուամենայնիվ, աշխատում է խուսափել ընդհարումից։ Դրա համար նա արաբների մոտ է ուղարկում հատուկ բանագնաց, որը հայերի անունից նրանց հաղորդում է հետևյալը. «Ինչու եք մեր հետևից ընկել, ինչ մեղք ունենք ձեր հանդեպ։ Ահա ձեր առջև է մեր երկիրը, ձեզ ենք տվել մեր տունն ու տեղը, մեր այգիները, անտառներն ու հանդերը, էլ ինչու եք ուզում մեր անձն էլ ձեր ձեռքը գցել։ Թույլ տվեք, որ հեռանանք մեր սահմաններից»։ Սակայն արաբները չուզեցին լսել հայերի առաջարկը։ Դրա համար էլ ընդհարումը երկու կողմերի միջև դարձավ անխուսափելի։

702—703 թվականի Արարատյան դաշտի խստաշունչ ձմեռն էր։ Արաբական զորքն ամբողջ գիշերը մնացել էր դրսում, բաց երկընքի տակ, ցրտից անպաշտպան։ Հաջորդ առավոտյան հայկական հեծելազորը արաբներին թույլ չտալով ուշքի գալ, նախահարձակ եղավ։ Արաբները, վստահ իրենց թվական գերակշռության վրա, չէին սպասում, որ հայերն առաջինը կհարձակվեն։ Ուստի նրանք, անակնկալի գալով, այլևս չկարողացան կանգնեցնել հայ զինվորների կատաղի գրոհը։ Արաբների շարքերն սկսեցին արագորեն նոսրանալ։ Թշնամին կրում էր մարդկային ուժի մեծ կորուստներ։ Եվ որովհետև այլևս հաղթանակի կամ փրկության ոչ մի հույս չկար, դրա համար էլ կենդանի մնացածները սարսափից խուճապահար դիմեցին փախուստի դեպի Արաքսի աջ ափը։ Այսպես զինվորները՝ հնձյալ թե հետիոտն, խումբ-խումբ նետվեցին դեպի սառցակալած գետը, որը չդիմանալով մարդկանց ու ձիերի ծանրությանը, ջարդվեց ու դեպի հատակը տարավ թշնամու կենդանի մնացած զինվորների մեծ մասին։ Արաբական հինգ հազար զինվորներից հազիվ կարողացան փրկվել միայն 300 հոգի, որոնց հայերը մեծահոգաբար նիրում շնորհեցին և թույլ տվեցին ետ վերադառնալ։

703 թվականի Վարդանակերտի ճակատամարտը փառքով պսակեց արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի բարձրացրած առաջին ապստամբությունը։ Այս դեպքերին զուգընթաց, նույն թվականին ոտքի ելան նաև Ռշտունյաց գավառի բնակիչները, որոնց առաջնորդում էր Վասպուրականի Աշոտ իշխանի որդին՝ Սմբատը։ Ռշտունցիներն իրենց գավառի Գուկանք գյուղի մոտ հանդիպելով արաբական ասպատակող գնդերին, կռվի են բռնվում նրանց հետ և, չախչախելով վերջիններիս, կենդանի մնացածներին հարկադրում

են նահանջել։ Սմբատ իշխանը համեմատաբար փոքրիկ ուժերով սկսում է հետապնդել փախչող արաբներին, որոնցից 280 հոգի հաղիվ կարողացան իրենց գցել գյուղի եկեղեցին ու ներում խնդրել։ Հայերն ի պատասխան նրանց, ասացին. «Մենք սովորել ենք մեր հայրերից, որ ողորմություն արժե անել նրանց, որոնք գիտեն ողորմել, իսկ դուք անողորմ եք և ողորմության արժանի չեք»։ Երբ արաբները տեսան, որ այս ձևով իրենք ազատվել չեն կարող, փորձեցին կռվով փրկել իրենց կյանքը։ Գուկանքում սկսվեց թեժ մարտը, հայերը ոգևորված իրենց տարած մի քանի հաղթանակներով, համարձակ գրոհով նետվեցին թշնամու վրա և ոչնչացրին մինչև վերջին մարդը։

Վարդանակերտի ու Գուկանքի հաղթանակներից ոգևորվելով, շուտով ապստամբեց նաև Այրարատ աշխարհի Վանանդ գավառը։ Այստեղ ապստամբներին ղեկավարում էին Կամսարականները և մյուս նախարարները։ Վանանդի ապստամբներին ևս հաջողվեց փայլուն հաղթանակ տանել արաբական մի խոշոր զորամասի դեմ։ Այս դեպքերից հետո Սմբատ Բագրատունին կարողացավ բարեկամական կապեր հաստատել բյուզանդական կայսր Տիբերիոս 3-րդ Ապսիմարոսի հետ (698—705) և նրանից կյուրապաղատության կոչում ստանալով, իր զինակիցներով անցավ Տայոց աշխարհն ու հաստատվեց Թուխարք ամրոցում։

Երկրում մնացած նախարարները դրանից հետո որոշեցին հաշտության ուղիներ որոնել խալիֆի հետ։ Նրանց տագնապը մեծացավ մանավանդ այն ժամանակ, երբ իմացան, որ Աբդ էլ-Մելիք խալիֆը Մուհամեդ բեն-Օքբայի հրամանատարությամբ մի մեծ բանակ է ուղարկել Հայաստան։ Հայերը շուտափույթ կերպով հատուկ պատգամավորություն ուղարկեցին Դամասկոս, Սահակ Զորափորեցի կաթողիկոսի (677—703) գլխավորությամբ, որպեսզի նա անմիջական բանակցություններով միջոցով մեղմացնի խալիֆի բարկությունը։ Սակայն կաթողիկոսը կես ճանապարհին մահացավ և բանակցությունների գործը մնաց անկատար։

705 թվականին արաբները կարողացան ճնշել Հայաստանում բռնկված առաջին ապստամբությունը և ամրապնդել իրենց տիրապետության հիմքերն ամբողջ Արմենիայում։

Այսպիսով, ամփոփելով 702—705 թվականների արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի բարձրացրած առաջին ապստամբության մասին վերևում ասածները, կարելի է այսպիսի հետևություն անել, որ թեև այդ ապստամբությունը վերջիվերջո պարտություն կրեց, սակայն նա անհետևանք չմնաց։ 702—705 թվա-

կանների ապստամբությունը մեծ չափով բարձրացրեց հայ ժողովրդի մարտական ոգին, վստահություն ներշնչեց սեփական ուժերի նկատմամբ և զարթնեցրեց պայքարի ու հաղթանակի մեծ ձգտում, որը առավել նպաստավոր պայմաններում ի վիճակի էր նոր ու էլ ավելի ուժեղ բռնկումներ տալու։

744—754 թվականների ապստամբությունները

VIII դարից սկսած արաբներն իրենց տիրապետության հյուսիսային սահմանների ապահովության համար կատաղի պատերազմներ էին մղում նաև Կովկասյան լեռնաշղթայից դեպի հյուսիս ապրող ժողովուրդների դեմ։ Այս պատերազմները շարունակվեցին մինչև VIII դ. 30—40-ական թվականները և միայն Մրվան ոստիկանի ժամանակ արաբները կարողացան հաստատվել Դերբենդում, որն այնուհետև դարձավ խալիֆայության ամենախոշոր ամրությունը Կովկասի սահմանագլխին։

Օգտագործելով հայ նախարարների միջև եղած հակասություններն ու թշնամանքը, արաբները Հյուսիսային Կովկասից կատարվող հարձակումների դեմ, իրենց զորքերի հետ միասին, դուրս էին բերում նաև հայկական հեծելազորը։ Դրանով արաբները հետապնդում էին նաև հայկական ռազմական ուժերը չլատելու և քայքայելու նպատակ։

725 թվականին արաբների անցկացրած նոր աշխարհագրից հետո հարկային քաղաքականությունն ավելի խստացվեց, իսկ քիչ հետո՝ 40-ական թվականների սկզբներին բուն Արաբական խալիֆայության ներսում ծայր առան գահակալական արյունահեղ կռիվներ, որոնք դյուրավորում էին Օմայանների ոխերիմ ու վտանգավոր հակառակորդները՝ Աբասյանները։ Այս կռիվները շարունակվեցին մինչև 750 թվականը, երբ օմայան Մրվանի սպանությունից հետո հաստատվեց արաբական նոր դինաստիա, Աբասյանների դինաստիան։ Այս խառը ժամանակներում էր, որ արաբներին հնարավոր մի քանի երկրներում, այդ թվում նաև Արմենիայում, փորձեր արվեցին ապստամբության միջոցով թոթափելու խալիֆայական լուծը։

Այդ ժամանակ Հայաստանի քաղաքական ու տնտեսական կյանքում հիմնական ու կարևոր դեր կատարող նախարարությունները Մամիկոնյաններն ու Բագրատունիներն էին, որոնց հարում կամ որոնց ազդեցության տակ էին գտնվում նաև երկրի մյուս մեծ ու փոքր ազնվականները։ Բագրատունիներն իրենց դիրքերը Հայաստանում ամրապնդելու համար մեծ մասամբ փորձում էին համակերպվել խալիֆայությանը, իսկ Մամիկոնյանները որոշ հույսեր կապելով Բյուզանդիայի հետ, ուզում էին նրա օգնությամբ

տապալել արաբական տիրապետությունն ու վերը բարձրանալ քաղաքական ասպարեզում։ Միանգամայն հասկանալի է, որ Հայաստանում խալիֆայական իշխանությունները նախապատվությունը մեծ մասամբ պետք է տային Բագրատունիներին և ոչ թե Մամիկոնյաններին։ Դրա համար է, որ ոստիկան Մրվան իբն-Մուհամեդը 739—740 թվականներին հայոց իշխանի և սպարապետության պաշտոնները հանձնեց Վասակ Բագրատունու որդուն՝ Աշոտին, որն իր ընտանիքի մեջ համարվում էր ամենահեղինակավոր անձնավորությունը։ Աշոտ Բագրատունուն որպես պատիվ տրվեց նաև պատրիկի կոչում։

Սրանից հետո արաբները հարձակման անցան հայ ֆեոդալների ըմբոստ տարրերի դեմ և առաջին հերթին առավել հեղինակավոր Մամիկոնյանների դեմ, որոնք մեծ ազդեցություն ունեին ամբողջ Հայաստանում։ Մրվան ոստիկանի այդ ուղղությամբ ձեռնարկած առաջին գործը եղավ այն, որ նա կալանավորեց և Արաբիա ուղարկեց Սմբատ Մամիկոնյանի երկու որդիներին՝ Գրիգորին և Դավթին։ Կալանավորների վերաբերյալ Մրվանն ուղարկել էր նաև հատուկ ամբաստանագրեր, որոնցով նրանք մեղադրվում էին որպես խռովարարներ և իշխանության թշնամիներ։ Հիշամ խալիֆն (724—743) իր ոստիկանի զեկուցագրի հիման վրա Գրիգոր և Դավթի Մամիկոնյաններին դատապարտեց ցմահ աքսորի ու քշեց Եմենի անապատները։

40-ական թվականների կեսերին Արաբական խալիֆայության կենտրոնական շրջաններում տեղի ունեցող գահակալական կռիվները հասան լարվածության ծայր աստիճանի։ 743—744 թվականներին, խալիֆայական գահի վրա իրար եռևից բարձրացան ու ընկան երեք նոր գահակալներ։ Այս կռիվներում ժամանակավոր հաղթանակը մնաց Արմենիայի ոստիկան Մրվանի ձեռքում, որն իրեն խալիֆ հռչակեց 744 թվականի նոյեմբերին և կառավարեց մինչև 750 թվականը։ 743—744 թվականների գահակալական կռիվների ժամանակ շատերի հետ աքսորից աղատվեցին ու հայրենիք վերադարձան նաև Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանները։

Մամիկոնյան եղբայրները գալով Հայաստան, նախ կանգ են առնում Վասպուրականում և հենց այստեղ էլ անմիջապես ըսկըսում են իրենց շուրջը համախմբել արաբական լծից ու Աշոտ Բագրատունու հաշվողական քաղաքականությունից դժգոհ նախարարներին։ Մամիկոնյանները որպես քաղաքական իրադրությունների և խալիֆայության ներսում տիրող խառն վիճակին մոտիկից ծանոթ մարդիկ, գտնում էին, որ իրենք անհապաղ

պետք է օգտվեն առիթից ու զենքի դիմեն։ Երկու եղբայրների հորդորներն իզուր չեն անցնում։ Շուտով նրանց շուրջն են համախմբվում հայ նախարարներն իրենց զորքերով։ Ապստամբության կողմնակիցների թվի արագությամբ աճելու հետևանքով, կարճ ժամանակ հետո, գերակշռությունն անցնում է Մամիկոնյանների կողմը։ Այսպիսով, 744 թվականին Հայաստանում ըսկըսվում է հակաարաբական մի նոր ապստամբություն, որը ղեկավարվում էր Մամիկոնյան եղբայրների ու նրանց համախոհ հայ ազնվականների կողմից։ Գրիգոր և Դավիթ Մամիկոնյանների ու նրանց զինակիցների ճնշման տակ, երկար տատանվելուց հետո, ապստամբությանն է միանում նաև հայոց ապարապետ Աշոտ Բագրատունին։ Այս նախապատրաստություններից հետո, ապըստամբները քաշվում են Տայոց աշխարհը, որպեսզի միանալով Պոնտոսում գտնվող բյուզանդական զորքերին, այստեղից սկսեն հարձակումը արաբների վրա։ Ղևոնդ պատմիչի վկայությամբ հայ ապստամբների և Բյուզանդիայի կայսր Կոստանդին V Կոպրոնիմոսի (741—775) միջև նախօրոք կնքվել էր համերաշխության դաշինք։

Սակայն Տայքում ապստամբների և առաջին հերթին նախարարների միջև շուտով պառակտում է առաջանում։ Դրա հիմնական պատճառներից մեկն այն էր, որ այստեղ ապստամբներին են միանում սոցիալական ցածր խավերի շատ ներկայացուցիչներ, որոնք օտարերկրյա կեղեքիչների դեմ պայքարի հետ մեկտեղ, առաջ էին քաշում նաև ներքին շահագործման դեմ պայքարի հարցը։ Սոցիալական այս ցածր խավերի մասին Ղևոնդն ասում է. «Եվ հանցագործների բոլոր զավակները գնում խառնըվում էին ապստամբության գնդին, որոնք չէին վախենում աստծու երկյուղից և ոչ էլ իշխանների ահից ու ծերերի պատվից. այլ որպես այլազգի և օտարացածներ՝ ասպատակելով գերում էին իրենց եղբայրներին ու ազգականներին և շատ ավարառություն էին անում, խոշտանգում և տանջում իրենց եղբայրներին»։ «Հանցագործների զավակներ», «այլազգիներ», «օտարացածներ» ասելով Ղևոնդը կարող էր նկատի ունենալ միմիայն այն ժամանակ սոցիալական պայքարի առաջին շարքերում գտնվող պավլիկյաններին։ Ժողովրդական շարժման հեռանկարից առաջինը վախեցան ապստամբության մասնակից անվճռական ու տատանվող նախարարները, որոնք ապարապետ Աշոտի գլխավորությամբ դրժեցին իրենց երդումը և լքելով զինակիցներին, դավաճանարար փախան Բագրևանդ, որպեսզի այնտեղից կապ հաս-

տատեն արաբների հետ ու ձեռք բերեն նրանց հովանավորությունը։

Գրիգոր Մամիկոնյանն, իմանալով Աշոտի հեռանալու մասին, անմիջապես սկսում է հետապնդել նրան ու հասնում է Բագրևանդի Հազր գյուղը, որտեղ ամրացել էր սպարապետն իր մարդկանցով։ Գրիգոր Մամիկոնյանի զորքերն անմիջապես շրջապատում են Հազրը և գերի վերցնում Աշոտ Բագրատունուն։ Հենց այստեղ էլ Գրիգորի կարգադրությամբ Աշոտ Բագրատունին կուրացվում է։ Դրանից հետո Գրիգոր Մամիկոնյանն ապստամբության կենտրոնը տեղափոխում է Կարին, ամրացնում քաղաքը և այստեղից շարունակում պայքարը արաբների դեմ։ Սակայն ազատագրական պայքարի այդ հրամանատարին վիճակված չէր մինչև վերջ լինելու իր զինակիցների հետ։ Նա Կարինում անըսպասելիորեն հիվանդանում ու մահանում է։ Ապստամբության ղեկավարությունն այնուհետև իր ձեռքն է վերցնում նրա եղբայրը՝ Մուշեղը, որն այդ ժամանակ վարում էր նաև Հայոց իշխանի պաշտոնը։

VIII դարի կեսերին Հայաստանում բռնկված ապստամբությունը որոշակի ազդեցություն է ունեցել նաև հարևան ժողովուրդների վրա։ Այսպես, օրինակ, հայկական ապստամբական շարժման հետ զուգընթաց, ոտքի ելան նաև Աղվանքի ժողովուրդները։ 748 թվականին առաջինն ապստամբեցին Բայլական քաղաքի ու նրա շրջակայքի բնակիչները, որոնց շուտով միացան նաև արդաբիլցիները։ Աղվանները ջարդեցին Պարտավի արաբ էմիր փթն-Եզիդի զորքերին և կալում ապանեցին նրան։ Այդ նույն ճակատագիրն ունեցան նաև օգնության եկած արաբական լրացուցիչ ուժերը։ Աղվանից աշխարհի ապստամբությունը լայն տարածում ունեցավ նաև Շամախիի շրջանի հայության մեջ, որտեղ ինչպես Բալածորին է վկայում, պայքարի գլուխ էր անցել հայազգի քաջարի զորավար Միքայելը։ Շամախիի և Աղվանից աշխարհի մյուս վայրերի ապստամբությունները արաբները հազիվ կարողացան ճնշել 753—754 թվականներին։

740—750-ական թվականների ապստամբական շարժումներին իրենց գործուն մասնակցությունն են ցույց տվել նաև Արևմտյան Հայաստանի ու Փոքր Հայքի մի քանի շրջանների հայերը, որոնց պայքարի ու սխրանքների հերոսական դրվագներին մենք հանդիպում ենք աստի ու արաբ հեղինակների գործերում։ Արևմտյան Հայաստանի հայության հաջող պայքարին օգնում էին բյուզանդացիների հաղթանակները արաբա-բյուզանդական պա-

տերազմում և նրանց առաջխաղացումը Մելիտինե-Կարին ուղղությամբ։ Դեպի Կարին շարժվող բյուզանդական ու հայկական զորքերին առաջնորդում էր հայազգի զորավար Կուսանը։ Կարինի դեմ ձեռնարկված ռազմական գործողությունների ընթացքում առանձնապես նշանակալից էր երկու հայ եղբայրների սխրագործությունը։ Նրանք իրենց կյանքը վտանգի ենթարկելով, կարողանում են քաղաքի պարիսպների մեջ խորշ բացել և հնարավորություն տալ Կուսանի զորքերին ներս մտնելու և պարտության մատնելու արաբներին։

Արաբական լծի դեմ Հայաստանում ծագած այս երկրորդ ապստամբությունը վերջ ի վերջո ճնշվեց 754 թվականին։ 750 թվականին գահ բարձրացած Աբասյան դինաստիայի հիմնադիր Աբուլ-Աբասի եղբայրը՝ Աբու-Ջաֆար էլ-Մանսուրը հատուկ զորաբանակով մտնում է Հայաստան։ Նա մի քանի տարի շարունակ կեղեքում ու կողոպտում է ժողովրդին, պահանջելով նույնիսկ անցած տարիներին մահացածների հարկերը։ Արաբների վայրագություններն անցնում էին ամեն չափ ու սահման։ Պատմիչն ասում է, որ մարդիկ, ոմանք իրենց կամքով, ոմանք հարկադրաբար, կեղեքիչներին էին տալիս ձիեր, ջորիներ, թանկարժեք զգեստներ, ոսկի, արծաթ և այլն, որպեսզի «լցնեն վիշապի բերանը», բայց էլի չէին կարողանում աղատվել հետապնդումից ու բռնությունից։ Աննկարագրելի նեղությունից աղատվելու համար շատերը փախչում էին օտար երկրներ։ Սակայն արտագաղթը ավելի էր ծանրացնում տեղում մնացածների դրությունը։

762 թվականի ազատագրական կռիվները Վասպուրականում

Հայաստանը կողոպտվում, ավերվում էր ոչ միայն այսպես կոչված պաշտոնական անձանց կողմից, որոնց խալիֆները տալիս էին երկիրը տիրելու լիազորություններ ու զորք, այլև առանձին ջարդարարական հրոսակախմբերի կողմից, որոնք իրենց ասպատակություններով ըզգալի վնաս էին հասցնում խաղաղ բնակչությանը։ Եվ քանի որ նրման ասպատակությունները կանխելու ուղղությամբ արաբական իշխանությունները դրեթե ոչ մի միջոց չէին ձեռնարկում, այլ, ընդհակառակն, կողոպտիչներին հովանավորում ու քաջալերում էին, ուստի ինքնապաշտպանության համար մղվող անհավասար կռիվում հայերը մնում էին մենակ ու անպաշտպան։

762 թվականին Ատրպատականի կողմից արագ զորավար Սուլեյմանի գլխավորությամբ մի մեծ արշավանք կազմակերպվեց դեպի Վասպուրական։ Ներխուժելով այստեղ, արաբները ըս-

կրսեցին անխնա կոտորել բնակիչներին, կողոպտել նրանց ու ավերել բնակավայրերը։ Թշնամու հրոսակախմբերի դեմ հերոսական դիմադրություն կազմակերպեցին Վասպուրականի նախարարներից Վահան Արծրունու որդիները՝ Սահակ և Համազասպ Արծրունիները։ Սրանք արագությամբ իրենց փոքրաթիվ ուժերով ընդառաջ ելան արաբներին։ Բռնկվեց անհավասար մարտը։ Հայ զինվորներն իրենց սիրած զորավարների օրինակով և մեծ զոհերի գնով անընդհատ հարվածի տակ էին պահում թշնամուն։ Հայերի շարքերն արագությամբ նոսրանում էին։ Թշնամին արդեն շրջապատում էր այն ջոկատը, որը Սահակի և Համազասպի գլխավորությամբ դեռ շարունակում էր դիմադրել։ Շուտով Համազասպը մահացու վերք ստանալով հերոսի մահով ընկնում է կռվում։ Սահակ Արծրունին տեսնելով իր եղբոր հերոսական մահը, այլևս ոչինչ հաշվի չառնելով, ինքը ևս նետվում է արաբների խիտ շարքերի մեջ, սպանում թշնամու զինվորներից շատերին ու ինքն էլ սուրը ձեռքին ընկնում մարտադաշտում։

Համազասպի և Սահակի անօրինակ սխրագործությունների ու հերոսական մահվան լուրն արագությամբ տարածվում է ամբողջ Վասպուրականում և արաբների դեմ ոտքի հանում մյուս նախարարներին։ Պայքարի այս երկրորդ շրջանում հայկական զորքերի հրամանատարությունն իր ձեռքն առավ Համազասպի ու Սահակի մյուս եղբայրը՝ Դագիկ Արծրունին։ Դագիկը թեև սկզբում չի կարողանում հանդիպել թշնամու արագությամբ ետ քաշված հրոսակախմբերին, բայց հետո մի ընդհարման ժամանակ նա ջարդում է հակառակորդին ու սպանում արշավանքների կազմակերպիչ Սուլեյմանին։

Արաբները, Վասպուրականում կրած իրենց ծանր պարտությունից ու անհաջողություններից վայրացած, շարունակում են նոսրանոր ուժեր նետել Դագիկի դեմ։ Վասպուրականի հերոսամարտերը շարունակվում են բորբոքվել նոր թափով։ Արաբների դերազանց ուժերի դեմ հայերը հարկադրված սկսում են մղել պաշտպանողական ծանր կռիվներ։ Ընդհարումների հիմնական թատերաբեմը դառնում է Վասպուրականի հայտնի Նկան բերդը, որտեղ ամրացել էր Դագիկ Արծրունին։

Վասպուրականի հայության ըմբոստությունը ճնշելու համար խալիֆն իր ցեղակիցների տրամադրության տակ է դնում նոր զորամասեր, որոնք և պաշարում են Նկանը, բայց գրավել չեն կարողանում։ Արաբական զորքերի հրամանատարը հաշտություն կնքելու պատրվակով իր մոտ է հրավիրում Դագիկին և խաբեու-

թյամբ ձերբակալելով, նրան ու նրա երկու որդիներին աքսորում Արաբիա, որտեղ Դագիկ Արծրունին մահանում է։ Որոշ ժամանակից հետո նրա որդիներին հաջողվում է գերությունից ազատվել ու հայրենիք վերադառնալ։ Այսպիսով, 762 թվականի վաստուրականում ծաղած հայերի խռովությունները ճնշվում են և Հայաստանի այս մասերում կրկին վերահաստատվում է արաբական տիրապետությունը։

774—776 թվականների ապստամբությունը

754 թվականին Աբուլ-Աբասի մահից հետո խալիֆայական գահն անցնում է Աբուլ-Ջաֆար էլ-Մանսուրին, որն իր գահակալությունը նշանավորելու և արքունիքին ավելի ապահով վիճակում դնելու համար 762 թվականին խալիֆների մայրաքաղաքը Դամասկոսից տեղափոխեց Տիգրիսի ղեղատեսիլ ափը՝ Բաղդադ։

էլ-Մանսուրն առաջինն էր, որ արաբական զինված ուժերի կազմում ստեղծեց վարձու զորամասեր, որոնք պետք է պաշտպաններին նաև թագավորին, պալատը, պետական պաշտոնյաներին ու պաշտոնատեղիները։ Այս վարձկան զնդերը կազմվում էին Միջին Ասիայի ավազակաբարո ու թուրքական ցեղերից, որոնք և հետագայում աստիճանաբար ճանապարհ հարթեցին իրենց ցեղակիցների զանգվածային տեղափոխությունների համար դեպի Մերձավոր Արևելք։

Նոր մայրաքաղաքի արագ կառուցումն ու վարձկան զորամասերի ստեղծումը կատարվում էր հպատակ ժողովուրդների կեղեքման հաշվին։ Արաբների հարկային ծանր քաղաքականության դեմ Հայաստանից եկած բողոքներին խալիֆը պատասխանում էր նրանով, որ հաճախ փոփոխում էր տեղում նշանակված ասպիկաններին ու մյուս պաշտոնյաներին, միաժամանակ հանձնարարելով նրանց էլ ավելի ուժգին կողոպտել ու հարստահարել ժողովրդին։

Հայերի դրությունը շատ ծանրացավ Եզիդին հաջորդած Թեքիր և Հասան ասպիկանների ժամանակ։ Խալիֆ էլ-Մանսուրն իր քաղաքականությունը Հայաստանում անցկացնելու համար այստեղ ուղարկեց նաև Խորասանից հավաքած վարձկան զորքեր, որոնք պատմիչի վկայությամբ իրենց գազանություններով մեծամեծ աղետների պատճառ դարձան։ Արաբների ճնշմանն ու հարստահարություններին չդիմանալով, հայ ժողովուրդը դիմեց նոր ապստամբության։ Ղևոնդ պատմիչը վկայում է, որ հայ զինվորները «կյանքները վտանգի տակ դնելով, ձեռնամուխ եղան այն-

պիսի մի գործի, որը դլուխ բերել չէին կարող, որովհետև փոքրաթիվ էին։ Բայց այնուամենայնիվ լավ համարելով քաջությամբ մեռնելը, քան սարսռալից կյանքը, ձեռնամուխ եղան ապըստամբության գործին, որ դուրս դան արաբների գերիշխանության տակից»։

Այս ապստամբությունը փաստորեն սկսեց Հմայակ Մամիկոնյանի որդին՝ Արտավազդ Մամիկոնյանը։ 774 թվականին Արտավազդը եկավ Դվին և իրեն արաբներին հավատարիմ ցույց տալով, սկսեց զինել իր ջոկատը։ Այստեղից Արտավազդն իր զորականներով անցավ Շիրակի Կումայրի գյուղը (այժմ՝ Լենինական քաղաք), որտեղ անանկնալ հարձակումով ջարդեց ու ցիր ու ցան արեց արար հարկահավաքներին։ Հասան ոստիկանը, լսելով այդ մասին, շուտով Արտավազդի դեմ թարմ ուժեր ուղարկեց Մուհամեդի գլխավորությամբ։ Տեսնելով թշնամու ուժերի գերակշռությունը՝ Արտավազդը նահանջեց Վրաստանի կողմերը։ Արարների և Արտավազդ Մամիկոնյանի միջև ընդհարումը տեղի ունեցավ Սամցիխե (այժմ՝ Ախալցխա) դավառում։ Այստեղ արաբները չկարողանալով խանգարել Արտավազդի նահանջը դեպի Արևմտյան Վրաստան, սկսեցին ասպատակել շրջակայքը և կողոպտել խաղաղ բնակչությանը։ Այս բանն է՛լ ավելի դրդեց հայերի զայրույթը։

Երբ Արտավազդ Մամիկոնյանի խիզախ գործողությունների լուրը տարածվեց երկրում, մարդիկ ամենուրեք զենքի դիմեցին և նլան արաբների դեմ։ Երկրով մեկ սկսվեց հակաարաբական. ժողովրդական մի նոր ապստամբություն։

Այս անդամ ապստամբության կազմակերպման ու ղեկավարման գործում կենտրոնական դեմքը դարձավ Հրահատի որդի Մուշեղ Մամիկոնյանը, որն իր խիզախ ու հաղթական կռիվներով շուտով դարձավ բոլորի սիրելին։ Մուշեղն Արտագերս քերդից, մի քանի հարյուր հոգու դլուխ անցած, հարձակումներ էր գործում շրջակայքի սրաբական կայազորների ու հարկահավաքների վրա։ Եվ ուր էլ որ հայտնվում էր նա, արաբները պարտվում ու փախչում էին։ Մուշեղ Մամիկոնյանը ծանր ու խորտակիչ հարվածներ հասցրեց արաբներին հատկապես Բագրևանդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում։ Պատմիչն ասում է, որ այս հաղթանակները է՛լ ավելի բարձրացրեցին Մուշեղի հեղինակությունը։ Ամեն կողմից գալիս ու նրան էին միանում նորանոր զինված խմբեր։

774 թվականին Կարինից դեպի Արտագերս շարժվեց արա-

բական լավ զինված ու վարժված մի ջոկատ։ Վազորոք իմանալով թշնամու դիտավորությունների մասին, Մուշեղն սկսեց անմիկատելիորեն հետապնդել նրան։ Եվ երբ արաբական ջոկատը իջավանեց Խարս գյուղի այդիներում, Մուշեղ Մամիկոնյանի մարտիկները, գիշերն անմիկատելիորեն մոտենալով այդիներին, ըստ կրսեցին փլցնել շրջապարիսպները։ Փլուզման դղրդյունը և հայերի ազմուկ-աղաղակը գիշերային խավարի մեջ շփոթություն ու սարսափ առաջացրին արաբների զորակայանում։ Օգտվելով խառնաշփոթությունից, հայերն անմիջապես ներխուժեցին թշնամու ճամբարը և սկսեցին կոտորածը։ Արաբները մեծ կորուստներ կրելով, անմիջապես դիմեցին փախուստի։ Մուշեղ Մամիկոնյանի զինվորները, գրավելով հակառակորդի ձիերը, զենքերն ու հանդերձանքը, արագությամբ հեռացան գյուղից։

Երբ արաբների պարտության լուրը հասավ Դվին, ոստիկանը, մեծ զայրույթով լցված, նկատեց նոր ուժեր հավաքել հայերի դեմ ուղարկելու համար։ Արաբներին հաջողվեց զենքի տակ դնել 400 ընտիր հեծյալների, որոնք Ապունճիպի հրամանատարությամբ շարժվեցին դեպի Բագրևանդ ու կանգ առան Բագավան գյուղում։ Հայերը, որ հավանական տեղյակ էին թշնամու գորախմբի մտադրություններին, որոշեցին կանխել նրանց հարձակումը։ Մուշեղ Մամիկոնյանն անմիջապես դիմեց հարձակման։ Քանի դեռ հայերը հարձակվում էին ճակատից, թշնամին դիմադրություն էր ցույց տալիս, բայց երբ Մուշեղ Մամիկոնյանի ջոկատներից մի քանիսը, անցնելով հակառակորդի թիկունքը, սկսեցին հարվածել նաև թիկունքից, արաբներն այլևս դիմադրությունը շարունակեցին և խուճապահար փախուստի դիմեցին։

Բագրևանդի ճակատամարտը շատ կարճ տևեց։ Հայերը հետապնդելով արաբներին, հասան մինչև Արուճ ավանը և այստեղ հասցրին երկրորդ հարվածը ու կռվում շատերի հետ սպանեցին նաև արաբական զորքերի հրամանատարին։ Բագավանի և Արուճի մոտ տարած հաղթանակները, մեծ ոգևորություն առաջացնելով երկրում, էլ ավելի խտացրին ապստամբների շարքերը։ Ապստամբները ահ ու սարսափ էին տարածել արաբների վրա։ Նույնիսկ Դվինում արաբները չէին համարձակվում պարիսպներից հեռանալ, այլ մնում էին պարփակված քաղաքի ամրությունների ներսում։

Ապստամբության հաջող ընթացքն ու հաղթանակի հույսը ոգևորել ու համակել էր շատ շատերին։ Ղևոնդ պատմիչն ասում է, որ Հայաստանի տարբեր մասերից հավաքված նախարարները

արքաղան երդում էին տալիս «ապրել ու մեռնել միասին»։ Ազնվականների զորքերին միանում էին նաև աշխարհազորային դնդերը։ 774 թվականի վերջերին ապստամբությունը Հայաստանում այնքան լայն ծավալ ընդունեց, որ նրա շարքերում կովոգների թիվն արդեն հասնում էր 5000 մարդու։ Մինչ այդ տատանվող ու անհամարձակ զորականները նույնպես միացան Մուշեղ Մամիկոնյանին։ Նրանցից էին, օրինակ, սպարապետ Սմբատ Բագրատունին և նրա եղբայրը՝ Վասակը։ Սակայն որքան մեծանում էր ապստամբների թիվը, այնքան ցայտուն ձևով էին դրսևորվում հատկապես ազնվականների և ապստամբության ղեկավար կորիզի մեջ եղած տարաձայնությունները։ Այս հանգամանքը խոշոր չափով խանգարում էր՝ ապստամբության հարվածները ճիշտ նպատակակետին ուղղելուն։ Այդ պատճառով էլ 774 թվականի վերջերից սկսած ապստամբների կողմից թույլ են տրվում ռազմական բնույթի լուրջ սխալներ։ Հանդստացած լինելով արաբների, այսպես ասած, անգործունեությունից՝ ապստամբները կորցրին իրենց զգոնությունը և փոխանակ միացյալ ուժերով բուռն հարձակման անցնելու արաբների դեմ, ցրիվ եկան, անջատվեցին իրարից և սկսեցին գործել առանձին-առանձին։ Այսպես, Համազասպ Արծրունին իր եղբոր հետ քաշվեց Վասպուրականն, Վասակ Բագրատունին Ամատունի և Տրունի նախարարների հետ գնաց Կողովիտ ու Արտազ և այլն։ Ապստամբությանը սկզբունքորեն դեմ էր արաբների կողմից Հայաստանի պատրիկ նշանակված Աշոտ Բագրատունին։ Նա ապստամբներին զգուշացնում էր, որ բազմապլուխ վիշապին հետևել չէ դիմադրելը, որովհետև նրա զորքերը շատ են։ Արաբների դեմ դուրս եկած երկրները ջարդ ու փշուր եղան կավե անոթների նման, դուք էլ նույն ճակատագրին կարժանանաք։ Աշոտի խորհուրդն էական ազդեցություն չունեցավ նրանց վրա, ովքեր հավատարիմ իրենց երդմանին, որոշել էին պայքարը շարունակել մինչև վերջ։ Բագրատունի իշխանի այսօրինակ վարքագիծը անհավատարմություն և կասկածանք էր ներշնչում ապստամբներին։

Ելնելով ստեղծված իրադրությունից, ապստամբներն իրենց ուժերի մեծ մասը շարժեցին Կարին, որպեսզի գրավելով այդ ամուր քաղաքը, կապ հաստատեն Բյուզանդիայի հետ, սակայն քաղաքի պաշարումը երկարեց և օգուտ չտվեց։ Այդ նույն ժամանակ Բաղդադում կենտրոնացվում էին խոշոր ուժեր Հայաստան ուղարկելու համար։ Արդեն 776 թվականի սկզբներին խալիֆի 30.000-անոց խորասանյան ընտիր զորքերը արշավանքի

դուրս եկան դեպի Հայաստան։ Այդ բանակին առաջնորդում էր Ամիրը։ Արաբական զորքերը սկզբում շարժվեցին դեպի Վանա լճի ափերն ու կանգ առան հետաքրքրությամբ։ Թշնամու զորքերի հրամանատարն այդ ժամանակ իր մոտ կանչեց Հայաստանի պատրիկ Աշոտ Բագրատունուն, նրանից վերցրեց անհրաժեշտ բացատրություններ և նախապատրաստվեց հարձակման անցնելու։ Աշոտ Բագրատունին թեև ի պաշտոնե ներկայացավ, բայց նա միաժամանակ լուր ուղարկեց ապստամբներին, որպեսզի նրանք զգուշանան թշնամու ձեռնարկումներից, մանավանդ, որ հակառակորդն ուներ հսկայական գերակշռություն։ Սակայն ապստամբները ոչ միայն չհավատացին Աշոտ Բագրատունու զգուշացումներին, այլև համարձակորեն շարունակեցին արշավը դեպի Արճեշ։ Ճանապարհին հայկական հիմնական զորքերին միացան նաև մեծ թվով հետիոտն գյուղացիներ։ Դեռ Արճեշ չհասած հայկական ապստամբական բանակի հրամանատարությունը թույլ տվեց երկրորդ կոպիտ սխալը։ Քաղաքի մոտ զորքի հրամանատարությանը ներկայացավ մի սուրհանդակ և հայտնեց, որ հարձակումը շարունակելը վտանգավոր է, որովհետև արաբներն այնտեղ թաքցրել են հսկայական ուժեր։ Սակայն այդ տեղեկությունը ևս ուշադրության չարժանացավ և հարձակումը շարունակվեց։ Եվ երբ հայերը վստահորեն սկսեցին գրոհել քաղաքի ամրություններին վրա, անսպասելիորեն դարանից դուրս եկան արաբական հիմնական ուժերն ու մտան կռվի մեջ։ Հայերի դրությունը հենց սկզբից վատացավ։ Նրանք փաստորեն հարձակման էին ենթարկվում մի քանի կողմերից։ Առաջին հարվածն իր վրա ընդունեց հեծելազորը, որը կարճատև դիմադրությունից հետո սկսեց նահանջել։ Դրանից հետո խիստ դժվարին կացության մեջ ընկան հետևակային զորամասերը, որոնք մեծ մասամբ կազմված լինելով անվարժ ու համարյա անզեն գյուղացիներից, մեծ կորուստներ տվեցին։ Արճեշի ճակատամարտում, որը տեղի ունեցավ 776 թվականի ապրիլի 14-ին, հայերը ծանր պարտություն կրեցին՝ տալով 1500 միայն սպանված։

Արճեշի մոտ հայերի կրած պարտությունը ոչ միայն որոշեց Կարինը պաշարած զորամասերի ճակատագիրը, այլև փոխեց ապստամբության ընթացքն ընդհանրապես։ Դրանից հետո Ամիրն իր դեմ կանգնած ապստամբական ուժերը ջախջախված համարելով, շարժվեց դեպի Կարին։ Հայերը, որ քիչ էր մնում գրավեին քաղաքը, անմիջապես դադարեցրին նրա շրջապատումը և 5000 հոգով ընդառաջ ելան արաբների 30.000-անոց բանակին։ Հայ-

կական ապստամբական զորքերը Բասենի վրայով անցան Բագրևանդ ու կանգ առան Արածանիի հովտում՝ Արձնի գյուղի մոտ։ Այստեղ 776 թվականի ապրիլն 24-ին տեղի ունեցավ երկրորդ խոշոր ճակատամարտը հայկական ապստամբական ուժերի ու արաբների զորքերի միջև։ Հայերի համալրված գրոհները խիտ ու բազմամարդ շարքերի վրա, սկզբում խուճապի մատնեցին թշնամուն։ Հայ զինվորները կռվի ընթացքում միմյանց ոգևորում էին բացականչելով՝ «Քաջությամբ մեռնենք մեր հայրենիքի և մեր ժողովրդի համար»։ Սակայն շուտով դրությունը փոխվեց։ Արաբները, որ սկզբում նեղվելով սկսել էին նահանջել, յարելով իրենց ուժերը՝ անցան հակահարձակման և հենվելով իրենց թվական գերակշռության վրա, սկսեցին հաջողությամբ հետ մղել գրոհները և ծանր կորուստներ պատճառել հայերին։ Կռվի վերջում հայկական հեծելազորայիններն ու հետևակայինները մեծ կորուստներ կրելով, պարտվեցին։ Հայերը տվեցին 3000 սպանված։ Զոհվածների թվում էին Մուշեղ և Սամվել Մամիկոնյանները, բուպարապետ Սմբատ Բագրատունին և նրա նիզակակից հայոց իշխան Սահակ Բագրատունին, Վահան Գնունին և ուրիշները։ Այս ճակատամարտից հետո հայոց պատմության թատերաբեմից մեկ ընդ միշտ դուրս եկան Մամիկոնյանները։ Կռվից հետո կենդանի մնացածների մի մասն անցավ Վրաստան կամ Բյուզանդիա, իսկ մյուս մասն ամրացավ երկրի անմատչելի վայրերում և շարունակեց պայքարը թշնամու դեմ։ Ոչնչացված կամ շարքից դուրս եկած հայ ֆեոդալների կալվածքները գրավվում էին արարների կողմից և տրվում մուսուլմանական վերաբնակիչներին։

774—776 թվականներին արաբական բանակալական լծի դեմ ոտքի ելան նաև Հայաստանի հարավ, հարավ-արևմտյան շրջանների լեռնականները։ Այդ վայրերի ու հատկապես Զորրորդ Հայքի ու Խութի հայության հերոսական պայքարի պատմության դրվագների մասին տեղեկություններ կան VIII դարի ասորական ժամանակագրության մեջ։

2. ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ IX ԴԱՐՈՒՄ

Բաբեկի ապստամբությունը

VIII դարի երկրորդ կեսերի հայկական ապստամբական շարժումների պարտությունը ծանր հարված հասցրեց ոչ միայն աշխատավորությանը՝ այլև հայ ֆեոդալներին։ Ապստամբությանն ակտիվորեն մասնակցած նախարարների մի մասը կռիվներում ու

ճակատամարտերում ընկավ հերոսաբար։ Իսկ նրանք, ովքեր կենդանի էին մնացել, այլևս չէին կարող խաղաղ գոյակցել արաբների հետ, ուստի հեռացան օտար երկրներ։ Հայ ազնվականներից եղան նաև այնպիսիները, որոնք մի կերպ համակերպվեցին տիրողների հետ, մշտապես ենթարկված լինելով նրանց հետապնդումներին։

70-ական թվականներին խալիֆայությունն ավելի մեծ եռանդով սկսեց ամրացնել իր գիրքերը Հայաստանում։ Այս ուղղությամբ ձեռնարկված առաջին և հիմնական միջոցառումը տարաբնակ նորանոր ցեղերի վերաբնակեցումն էր Հայաստանում։ Մանազկերտում, Բերկրիում, Բաղեշում և ուրիշ տեղերում հիմնվել էին ուժեղ արաբական իշխանություններ, որոնց մեջ հատկապես կարևոր դեր էին կատարում Կայսիի և Շայբանի ցեղերը։ Արաբական ցեղերի առաջնորդներն ու զինվորական վերնախավն, անցնելով նստակեցության, շուտով յուրացրին հայկական ֆեոդալական հարաբերությունների գծերը։ Նրանցից ոմանք հարմար առիթների ժամանակ միանում էին հայ ազնվականների հետ ու կռվում կենտրոնական իշխանության դեմ։ Սակայն հիմնականում արաբական էմիրություններն արտահայտում էին խալիֆայության շահերն ու համատեղ կողոպտում հայ ժողովրդին։

Բյուզանդիային սահմանակից կամ նրան մոտիկ շրջաններում՝ Սպերում, Տայքում և Կղարջքում հայկական ֆեոդալական տների մեջ համեմատաբար ավելի կենսունակ ու գործուն դեր էին կատարում Բագրատունիները։ Սրանք արաբական իշխանությունների հետ իրենց վարած զգուշավոր ու ճկուն քաղաքականության շնորհիվ կարճ ժամանակում ոչ միայն ընդարձակեցին իրենց կալվածքները, այլև ձեռք բերեցին մի քանի կարևոր պաշտոններ։ 775—804 թվականներին հայոց իշխանի պաշտոնը վարում էր Աշոտ Բագրատունին, իսկ սպարապետությունը՝ Բագրատը։ 805—826 թվականներին հայոց իշխան դարձավ Աշոտ Մսակեր Բագրատունին, որը յուրացնելով պատմության ասպարեզից հեռացած Մամիկոնյանների ու Կամսարականների հողերը, հաստատվեց Տայքում, Արշարունիքում, Շիրակում և Աշոցքում ու հիմնեց Շիրակի Բագրատունիների ճյուղը, իր կենտրոնը դարձնելով Բագարան ավանը։

VIII դարի երկրորդ կեսին Արաբական խալիֆայության ռազմա-քաղաքական դիրքերն զգալիորեն թուլացել էին նաև Անդրկովկասում։ Արաբական պատմիչ Յակուբին վկայում է, որ VIII դարի վերջերին ծանր հարվածով ամբողջ Արմենիան բռնկված էր ապստամբական շարժումներով։ Նույն Յա-

կուրին ասում է, որ Հարուն ալ-Ռաշիդ խալիֆի ժամանակ միայն Հայաստանում իրար հետևից փոխվեցին 15-ից ավելի կառավարիչներ, որը նույնպես խալիֆայության ընդհանուր դրության անհանգիստ վիճակի արդյունքն էր։ 99-ական թվականներին Աղվանքում և Ատրպատականում ոտքի էին կանգնել Շիրվանի, Պարտավի, Բայլականի և Արդաբիլի բնակիչները։

793—794 թվականներին ապստամբություն ծագեց Փայտակարանում։ Ապստամբությունը գլխավորում էր Աթա էլ-Մուկաննան։ Մուկաննան տեղում ոչնչացնելով արաբական զինվորականներին ու պաշտոնյաներին, շարժվեց դեպի Հայաստան, թրքնամու մյուս ուժերի հետ ևս հաշվեհարդար տեսնելու համար։ Փայտակարանի ապստամբներին միացան նաև հայերը և համատեղ ուժերով շարժվեցին դեպի Դվին ու չորս ամիս շարունակ շրջապատված պահեցին ալաբական իշխանությունների այս կարևոր կենտրոնը։

Ժողովրդական ապստամբությունները քսան տարի շարունակ չէին դադարում նաև Աղվանքից արևելք ու հարավ-արևելք՝ Դեյլեմում և Տաբարիստանում։ Այստեղ լեռնականները 779, 783—785 և 797—798 թվականներին հերոսական պայքար էին մղում իրենց հարստահարիչների դեմ, նրանց հասցնելով խորտակիչ հարվածներ։

VIII դարում Աղվանքում, Ատրպատականում և հարևան շրջաններում արաբական տիրապետության դեմ բռնկված ապրստամբությունները շուտով հիմք դրեցին համաժողովրդական այնպիսի մի հուժկու շարժման, որի դեմ տասնամյակներ շարունակ խալիֆայությունը ծանր պայքար մղելով՝ դրեթե հասել էր կործանման եզրին։ Այդ շարժումը պատմության մեջ հայտնի է խուրամիդյան շարժում անունով։ Ենթադրվում է, որ այդ անունը ծագել է պարսկական խուրամնա բառից, որը նշանակում է լուսավոր, փայլուն։ Շարժումն սկսվեց 808—809 թվականներին Ռալիշի լեռներում և Աղվանքում։ Ապստամբության մեջ շուտով ընդգրկվեցին Ռալիշի սկեղերը, դելյեմիտները, գիլանցիները և բրգերը։ Շարժումը հենց սկզբից ընդունեց նաև դասակարգային բնույթ, որովհետև խուրամիդներն իրենց զենքն ուղղում էին արաբ հողատերերի և մյուս շահագործողների դեմ։ Շարժման կենտրոնը դարձավ քաղաք-ամրոց Բազը, որտեղ իր հետևորդների հետ միասին գտնվում էր շարժման առաջնորդ Ջավիդանը։

815 թվականին Ջավիդանի սպանությունից հետո շարժման առաջնորդ դարձավ Բաբեկը, որը հսկայական դեր կատարեց այդ

շարժման տարածման, խոշոր դինված ուժերի կազմակերպման և արաբների դեմ սկսած կանոնավոր և հերոսական պայքարում։ Բաբեկից սկսած այդ շարժումը կոչվեց բաբեկյան շարժում։ Բաբեկի հետևորդներն սկզբում խուրամիդյան շարժման ամենահեռևորդական ու համարձակ տարրերն էին։ Բաբեկի ուժն ու հաջողությունները պայմանավորվում էին նրանով, որ նա ամենից առաջ հենվում էր գյուղացիական խավերի վրա։ Ապստամբություններով բռնված շրջաններում մանր ու միջակ հողատերերից ու ազնվականներից շատերը նույնպես միանում էին Բաբեկին, հույս ունենալով, որ նա հաղթանակից հետո կվերադարձնի իրենց ազնվականական իրավունքներն ու արաբների կողմից գրաված հողերը։

IX դարի 20-ական թվականներին Բաբեկը մեկը մյուսի հետևից չախչախելով արաբական զորագնդերին, ազատագրեց համարյա ամբողջ Ադվանքը և շեշտակի հարվածներով հասավ մինչև Պարսկաստանի խորքը՝ Խորասան։ Արաբական պատմիչ Մասուդին վկայում է, որ Բաբեկի կողմնակիցներն այնքան էին շատացել ու հզորացել, որ նրանց հարվածներից քիչ էր մնում Աբասյանների թագավորությունը կործանվեր։

Բաբեկի շարժումը շուտով իր մեջ ընդգրկեց նաև Պարսկաստանի արևմտյան շրջանները, Համադանը և Հայաստանի արևելյան շրջանները։ Շարժումն իր վերելքի ընթացքում զբաղեցնում էր մոտավորապես 400 հազար քառակուսի կիլոմետր տարածություն։

Բաբեկի ապստամբությանը մասնակցում էին նաև Հայաստանի Սյունյաց աշխարհի գյուղացիներն ու ազնվականության մի մասը։ Ապստամբության հաղթական վերելքի ժամանակ ազնվականները երբեմն վախից, իսկ երբեմն էլ իրենց իրավունքների վերականգնման ակնկալություններով, օգնում և աջակցում էին Բաբեկին։ Ասկայն, երբ պարզ դարձավ բաբեկյան շարժման սոցիալական էությունը, նրանք սկսեցին ստիճանաբար հեռանալ և ի վերջո բացահայտ թշնամական դիրք բռնել Բաբեկի ներկայամամբ։

Բաբեկյանները կռվելով օտարերկրյա հարստահարողների դեմ, միաժամանակ նաև պայքար էին մղում սոցիալական անհավասարության և շահագործման դեմ ընդհանրապես, պահանջելով գույքի և հարստությունների հավասար բաշխում։ Վերջին հանգամանքը բավական էր, որպեսզի բաբեկյանների դեմ արաբական իշխանությունների հետ միասին հանդես գային նաև տե-

ղական ֆեոդալները, այդ թվում նաև հայ նախարարները։ Բաբեկի ապստամբության ճնշման տարիներին հայ ազնվականները ևս գործունեության լայն ասպարեզ ստացան և ձեռք բերեցին նոր իրավունքներ ու կալվածքներ։

Երկարատև կռիվներում բավական մեծ կորուստներ կրելուց հետո ապստամբների շարքերը խստորեն նոսրացան և 837 թվականին Բաբեկն այլևս չկարողացավ դիմադրել թշնամուն, տեղի տվեց նրան։ Նույն թվականին էլ Բաբեկը դավադրությամբ բռնվեց և հանձնվեց արաբական իշխանություններին։ Ազատագրական պատերազմների այս առասպելական հերոսը տարվեց Բաղդադ, որտեղ ծանր խոշտանգումներից հետո նրան քառատեցին։

Թեև Բաբեկի ապստամբությունը ճնշվեց, բայց նրա հասցրած հարվածն Արաբական խալիֆայությանը նույնպես ծանր ու խոտակիչ եղավ։ Այդ բանը խոստովանում են նույնպես արաբական պատմիչները։ Նրանք ասում են, որ իր քսանամյա պատերազմների ժամանակ Բաբեկն արաբներից ոչնչացրեց 250.000 մարդ, իսկ ոմանք այդ թիվը հասցնում են 500.000-ի։ Այստեղ չի խոսվում նյութական հսկայական կորուստների մասին, որ կրել էին արաբները, այն էլ այնպիսի մի ժամանակ, երբ նրանք կռիվներ էին մղում նաև իրենց լայնածավալ տիրապետության մյուս մասերում։

Բաբեկի հերոսական ապստամբության արձագանքները տարածվել էին խալիֆայության ողջ տիրապետության մեջ ու ոտքի հանել նորանոր ժողովուրդների։ 829—832 թվականներին Բաբեկի օրինակով գյուղացիական խոշոր ապստամբություն ծագեց Եգիպտոսում։ Արաբները հնարավորություն չունեին միանգամից ճնշելու բոլոր ապստամբությունները։ Նրանք հարկադրված իրենց զինվորական ուժերը ցրել էին ամբողջ տիրապետության մեջ։ Այս հանգամանքն էլ ավելի մեծ հնարավորություններ էր ստեղծում հպատակ երկրների ու ժողովուրդների համար համարձակ գործողությունների դիմելու։ Ստեղծված իրադարձությունները մեծապես օգտվեցին նաև հայերը։

Պայքար արաբական էմիրությունների դեմ և հայկական նախարարությունների ուժեղացումը

IX դարում հայկական նախարարական տոհմերի ռազմա-քաղաքական հզորացմանն արգելակում էին ինչպես արաբական իշխանությունները, այնպես էլ հայկական հողի վրա ձևավորված մուսուլմանական էմիրությունները։ Հայ ազնվականությունը,

այնուամենայնիվ, օգտվելով Արաբական խալիֆայության համար ստեղծված քաղաքական անբարենպաստ պայմաններից, խոշոր ցանքերի գնով ընդարձակում էր իր կալվածքներն ու վերականգնում կորցրած իրավունքները։ Հայ նախարարների այս առաջընթացի ճանապարհին լուրջ պայքար էր գնում նաև Հայաստանում եղած արաբական էմիրությունների դեմ, քանի որ վերջիններս նույնպես ձգտում էին ընդարձակել իրենց հողերը և ձեռք բերել ինքնատար անկախություն։

Դեռևս VIII դարի վերջերին Բագրատունիները հաստատվելով Հայաստանի կենտրոնական դավառներում, ինչպես տեսանք, գրավեցին նաև քաղաքական ասպարեզից հեռացած Մամիկոնյանների և Կամսարականների կալվածքները։ Մամիկոնյանների ժառանգական-սեփականատիրական իրավունքների պաշտպանության դերում հանդես եկավ Կայսիկների էմիր Ջահապը, որն ամուսնացած լինելով Մուշեղ Մամիկոնյանի դստեր հետ, իրեն համարում էր Մամիկոնյանների կալվածքների միակ ժառանգորդը։ Ջահապը, այսպես ասած իր իրավունքները պաշտպանելու համար, կռիվ սկսեց Բագրատունիների դեմ և շուտով գրաստից Արշարունիք գավառի մի մասը։

Աշոտ Մսակեր Բագրատունին ընդունելով հակառակորդի մարտահրավերը, իր ամբողջ ուժով հարձակվելով Ջահապի վրա, ջախջախեց նրան ու ետ խլեց Արշարունիքը։ Աշոտ Մսակերի այդ և հետագա գործողություններին խալիֆայական իշխանությունները չէին միջամտում, որովհետև նրանք զբաղված էին Բաբեկի դեմ կռվելու ծանր հոգսով։ Այնպես որ Բագրատունիների ու նրանց դինակից մյուս նախարարների հաջողությունները մի զգալի չափով պայմանավորվում էին Բաբեկի շարժման հաջողությամբ։ Բագրատունիների համար հատկապես դրական նշանակություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ Աշոտ Մսակերի հորեղբայր Վասակի թոռ Աշոտը, խալիֆից ստանալով Վրաստանի կառավարչությունը, ապահով վիճակ ստեղծեց Հայաստանի համար հյուսիսային կողմից։

30-ական թվականների Արաբական խալիֆայության հաղթանակները Բաբեկի ու Բյուզանդական կայսրության դեմ ձեռք էին բերվել շատ թանկ գնով։ Խալիֆայության վերջին և հուսալի ուժը վարձկան զինվորությունն էր, որի շարքերում ծառայող 70.000 զինվորների մեծ մասը թուրքեր էին։ Կռիվներից խիստ կերպով քայքայված խալիֆայությունն այս զորքի վրա տարեկան ծախսում էր վեց միլիոն ռուբլի ոսկով, որը հավասար էր ամբողջ խալիֆա-

յության մեջ հավաքվող երկու տարվա հողային հարկի դումարին։

Թուրքական վարձկանները, վստահ իրենց ուժերի վրա, աստիճանաբար ձեռք էին զցում կարևոր պաշտոններ կամ հարմար առիթներին դահրնվեց անում կամ դահին նստեցնում նոր իշխանավորներ։ Այսպիսով, դեռևս IX դարի առաջին քառորդում երբեմնի հզոր Արաբական խալիֆայության հիմքերի վրա տարբեր տեղերում գոյանում էին նոր ու անկախ իշխանություններ։ 20-ական թվականներին համարյա անկախացավ Խորասանը, որտեղ հաստատվեցին Թահիրյանները, 825 թվականին Դուլեֆյանների գլխավորությամբ անջատվեցին Համադանը, Սպահանն ու Նեհավենդը։ Իսկ հայ նախարարներն արդեն այդ ժամանակ իրենց այնքան ուժեղ ու ապահով էին զգում, որ կարողանում էին հարկադրել խալիֆին Հայաստանի ոստիկան նշանակել իրենց ցանկացած մարդուն։ Այսպես, 40-ական թվականներին Սմբատ սպարապետի պահանջով Մութասիմ խալիֆը ետ կանչեց Խալիդին և նրա փոխարեն Հայաստանի կառավարիչ նշանակեց Ալիին։ Արաբական պատմիչները, խոսելով 40-ական թվականների Հայաստանի մասին, միաբերան վկայում են, որ այստեղ գործերը խառն են, որ հայ պատրիկները (այսինքն՝ ազնվականները) դրավել են իրենց հողերը և խալիֆի իշխանությունը գնալով թուլանում է։

Արաբների նոր արշավանքները Հայաստան և 849—855 թվականների ժողովրդական ապստամբությունը

847 թվականին Բաղդադում գահ բարձրացավ Մութավաքիլ խալիֆը, որը հենց ըսկզբից հպատակ երկրների նկատմամբ սկսեց գործադրել ուժի և բռնության ավելի խիստ քաղաքականություն։ Այդ քաղաքականության նպատակն էր լցնել խալիֆայական դատարկված գանձարանը։ Հասկանալի է, որ նոր խալիֆի ուշադրությունից չէր կարող վրիպել նաև Հայաստանը։ 849 թվականին խալիֆի հանձնարարությամբ ոստիկանի պաշտոնով Հայաստան ուղարկվեց Աբուսեթը։ Նրա տրամադրության տակ դրված էին մեծ քանակությամբ զինվորներ, որոնք պետք է աջակցեին Աբուսեթին հարկահավաքության ժամանակ։

Թովմա Արծրունին վկայում է, որ Աբուսեթը մտադրվել էր պաշտոնից հեռացնել Հայաստանի իշխանաց-իշխան Բագարատ Բագրատունուն և գահերեց իշխան Աշոտ Արծրունուն, որոնք հայոց սպարապետ Սմբատ Բագրատունու հետ միասին Հայաստանի ամենագործունյա և ամենահեղինակավոր գործիչներն էին։ Նրանց հետևից էր գնում հայ ազնվականության մի զգալի մասը։

Այդ լուրն իմանալուն պես, Բագարատի նախաձեռնությամբ մի պատգամավորություն է ուղարկվում Աբուսեթին ընդառաջ և առաջարկվում նրան ստանալ պահանջված հարկն ու ետ վերադառնալ։ Հայկական պատգամավորներն իրենց հետ տարել էին նաև մեծ քանակությամբ ոսկի, արծաթ ու թանկարժեք նվերներ։

Աբուսեթը ոչ այնքան իրեն մատուցված նվերներից շլացած, որքան հայ նախարարների ուժից ու միաբանությունից վախենալով, խոհեմաբար կատարեց նրանց պահանջը։ Դրանով նա միաժամանակ ուզում էր դեպքերի հետագա բարդացման պատասխանատվությունից խուսափել։ Սակայն համենայն դեպս նա վերադարձից առաջ իր զորքերը բաժանեց երկու մասի մի մասը հանձնելով Աղձնիքի և Արձնի էմիր Մուսա իբն-Զուրարին, նրան տվեց նաև Հայաստանի կառավարչի լիազորություններ և ուղարկեց Տարոն հարկեր հավաքելու և Բագարատին պատժելու համար, իսկ մյուսը դնելով Կայսրիկ Ալա-Սովափիի տրամադրության տակ, հանձնարարեց ասպատակել Վասպուրականը։

Արաբական զորաբանակը Ալա-Սովափիի հրամանատարությամբ ներխուժեց Հայաստան Աղբակ գավառի կողմերից և ըստ ամենայնի ասպատակել երկիրը, հասնելով մինչև Անձևացյաց գավառը։ Արաբական այս ուժերի հարձակման հիմնական ուղղությունը Արծրունիների ոստան Հաղամակերտն էր։ Աշոտ Արծրունին իմանալով թշնամու կատարած ավերածությունների մասին, մի նամակով դիմում է Ալա-Սովափիին և պահանջում, որպեսզի նա մի տեղ հանգիստ սպասի, մինչև ինքը հարկերը հավաքի ու հանձնի նրան։ Արաբական գոռոզամիտ զորավարը նույնիսկ արժան չհամարեց պատասխանել հայոց գահերեց իշխանի նամակին և շարունակեց իր ասպատակությունները։ Ով երբ այլևս հաշտության ոչ մի ճանապարհ չմնաց, Աշոտը որոշեց զենքի դիմել։ Նա իր զորքերով հետապնդելով թշնամուն, հասավ Արճուճ գյուղը և անսպասելի հարձակումով ջախջախեց արաբներին։ Ալա-Սովափին հազիվ կարողացավ կռվի դաշտից ողջ և առողջ դուրս պրծնել, իր զինվորներից շատերի դիակների հետ միասին մարտադաշտում թողնելով նաև հսկայական հարստություն և հանդերձանք, որ արաբները կողոպտել էին Հայաստանում։ Հայերի կորուստներն այս կռիվներում, թշնամու կորուստների հետ համեմատած, շատ չնչին էին։ Արճուճի կռիվներում փրկեց քաջությամբ աչքի ընկած Աշոտի եղբայր Գուրգեն Արծրունին, Վահան Հավնունին և ուրիշներ։

Այս հաղթանակից հետո Աշոտը լուր ստացավ, որ արաբա-

Կան մյուս բանակը մտնելով Տարոն, բավական վտանգավոր դրության մեջ է դրել իր քեռուն՝ իշխանաց-իշխան Բագրատ Բագրատունուն։ Աշոտ Արծրունու զինակիցներն իրենց առաջին հաղթանակներից ոգևորված որոշեցին անմիջապես օգնության գնալ։ Եվ այն ժամանակ, երբ Մուսայի զորքերը բռնելով Մուշ քաղաքի շրջակայքը նեղում էին հայերին, վրա հասավ Աշոտն իր զորքերով։ Նա փայլուն կերպով վարելով հարձակումը ջախջախեց արաբական հեծելազորի աջ թևը և ստիպեց թշնամուն նահանջել։ Հայերը փախչող արաբներին հալածեցին մինչև Մուսայի նստավայրը՝ Բաղեշ քաղաքը, որտեղ նրանք կանգ առան էմիրի կնոջ խնդրանքով, որը Բագարատի հարազատ քույրն էր։

Հայկական ապստամբական շարժումները ճնշելու համար Մութավաքիլ խալիֆը նոր զորքեր ուղարկեց Հայաստան նույն Աբուսեթի հրամանատարությամբ։ Սակայն նա ճանապարհին մեռավ, նրա փոխարեն հրամանատար նշանակվեց որդին՝ Յուսուֆը։

Յուսուֆը Հայաստան մտավ Ատրպատականից և կանգ առավ Հաղամակերտում։ Աշոտ Արծրունին չկարողանալով կանգնեցնել թշնամու հսկայական ուժերի առաջացումը, քաշվեց Մարդաստանի կողմերը։ Արաբ զորավար Յուսուֆը փորձեց խորամանկորեն ծուղակը դցել Աշոտին և այդ նպատակով նրան իր մոտ հրավիրեց։ Սակայն Աշոտը հասկանալով թշնամու մտադրությունը և միաժամանակ հետագա բարդությունից խուսափելու նպատակով, Յուսուֆի մոտ ուղարկեց իր մորը՝ Հռիփսիմե տիկնոջը մեծամեծ նվերներով։ Դրանից հետո արաբական զորքերը շարժվեցին դեպի Խլաթ։ Այստեղ Յուսուֆն իր խորամանկությունը բանեցրեց Բագարատ Բագրատունու նկատմամբ։ Նա հայտարարեց, որ ցանկանում է նա վերադառնալ, բայց նախքան այդ, ուզում է Հայաստանի իշխանությունը հանձնել Բագարատին։ Բագարատ Բագրատունին հավատալով Յուսուֆին, գնաց նրա մոտ։ Սակայն այստեղ փոխանակ նրան իշխանություն տալու, շղթայեցին և ուղարկեցին խալիֆի մոտ։ Յուսուֆի այս նենգամիտ վարմունքը չի թաքցնում նույնիսկ արաբական պատմիչ Իբն ալ-Ատիրը։ Նա ասում է, որ Յուսուֆը սմարդի կերպով ձերբակալեց ու Արաբիա աքսորեց Բագարատին, որի պատճառով էլ հայերը ոտքի ելան վրեժ լուծելու համար։

Բագարատ Բագրատունուն ձերբակալելուց հետո արաբական զորքերն սկսեցին համարձակորեն կողոպտել Վասպուրականն ու Տարոնը։ Հայաստանից տարված գերիների մի խոշոր մասն ուղարկվեց Ասորիք և ուրիշ երկրներ վաճառելու համար։ Յուսուֆի

հրոսակախմբերը անգութորեն կերպով կողոպտում էին Տարոնի լեռնային շրջանների բնակիչներին, որոնք առանց այդ էլ սուղ պայմաններում էին ապրում և հազիվ պահպանում իրենց գոյությունը։

Արաբական սանձարձակ բռնությունները շուտով ոտքի հանեցին հայ քաջարի լեռնականներին։ Հայրենի հողն օտար հարստահարողներից մաքրելու համար ոտքի ելան Սասունի, Տարոնի, Վասպուրականի, Արզնի, Նախիջևանի, Աղբակի և այլ շրջանների ու գավառների բնակիչները։

Ապստամբության առաջին ազդանշանը տվեցին Սասունի լեռնային շրջանի՝ Խութի գյուղացիները, որոնք 851—852 թվականների ցրտաշունչ ձմռանը հարձակվեցին Մուշ քաղաքում ձրմեռող Յուսուֆի ու նրա հրոսակախմբերի վրա։ Հայերի այս համարձակ արշավանքը գլխավորում էր ժողովրդի ծոցից դուրս եկած Խութեցի Հովնանը։ Խութեցիներին կազմակերպելու գործում կարևոր դեր են կատարել նաև աքսորից Սասունի լեռները փախած Բագարատ իշխանի որդիները՝ Դավիթն ու Աշոտը։ Արաբները հանկարծակիի գալով, ընկան ծուղակը և գրեթե ոչ մի դիմադրություն չկարողացան ցույց տալ քաջարի խութեցիներին։ Նրանցից քչերին միայն հաջողվեց փախչել ու ազատվել։ Այս կոտորածի ժամանակ ասպարեզից փախել ու քաղաքի եկեղեցում էր թաքնվել դլխավոր շարադրող Յուսուֆը, որը սակայն չկարողացավ իր կաշին փրկել զայրացած լեռնականներից։ Հովնանի մարդիկ հենց եկեղեցում էլ սպանեցին նրան։ Խութեցիները թշնամուց խլեցին ամբողջ ավարը, ազատեցին գերիներին և կրկին քաշվեցին իրենց լեռները։ Խութեցիների գործողությունները մեծ արձագանք գտան ամբողջ Հայաստանում։ Բազմաթիվ տեղերում ժողովուրդը ոտքի կանգնելով չարդում ու երկրից դուրս էր քշում արաբական զավթիչներին։

Ժողովրդական ապստամբությունները ճնշելու համար Մութավաքիլ խալիֆը Հայաստան է ուղարկում իր ամենայնարբու զորավար, թուրքական վարձկանների դլխավոր հրամանատար Բուղա Շարաբին։ Նրան հանձնարարված էր Հայաստանը հպատակեցնելու համար գործադրել բոլոր միջոցները։ Բուղայի տրամադրության տակ դրված էր մի հսկայական բանակ, որի կազմը, Թովմա Արծրունու չափազանցված տվյալների համաձայն, հասնում էր 200.000 մարդու։

Բուղայի զորքերի կատաղի վրիժառությանը ենթարկվեցին ամենից առաջ Սասունի բնակիչները։ Արաբներն այստեղ սկսե-

ցին անխնա կոտորել բոլորին, իսկ կենդանի մնացածներին աքսորել Արաբիա կամ տեղափոխել այլ շրջաններ։ Բուղայի արշավանքների ժամանակ 852 թվականին արաբների ձեռքն ընկան նաև ապստամբության ղեկավարներ՝ Հովհաննը, Աշոտը, Դավիթը և մյուսները։ Սրանց որպես գերիներ աքսորեցին Բաղդադ, որտեղ և տանջամահ արեցին։ Բուղան իրագործելով խալիֆի հրամանը, քայլ առ քայլ ոչնչացնում էր հայերի զինվորական ուժն ու նախարարներին։ Արաբ զինվորականներն ու պաշտոնյաները եղած հրամանի համաձայն սեփականացնում էին հայկական այն հողերը, որոնք իրենք նվաճում էին արշավանքների ընթացքում։ Այս հանգամանքն արաբներին դարձնում էր ավելի բիրտ ու հանդուգն։

Թովմա Արծրունին վկայում է, որ արշավող զորքերի հետևից գալիս էին մեծ թվով արաբական գաղթականներ, որոնք անմիջապես տեղավորվում էին հայերից խլված հողերի վրա։ Բուղան իր գործողությունների ժամանակ կիրառում էր նաև նենգ ու ստոր միջոցներ՝ հայ նախարարներին ու աշքի ընկնող գործիչներին որսալու համար։ Նա պատիվ տալու պատրվակով այդպիսիներին կանչում էր իր մոտ, ապա ձերբակալում և Արաբիա աքսորում։ Բուղան այսպես էր վարվում նույնիսկ նրանց հետ, ովքեր թշնամանքի կամ ապստամբության ոչ մի առիթ չէին տվել։

Հայ անվանի ու հեղինակավոր գործիչներին իր ձեռքը դցելուց հետո Բուղան է՛լ ավելի սարսափելի պատիժներ սկսեց գործադրել ժողովրդի նկատմամբ։ Այսպես, Թովմա Արծրունին պատմում է, որ դավանափոխ չլինելու համար Բուղան կտրել տվեց Մուկաթլ Վանանդեցու ձեռքերը, ոտքերը և լեզուն, իսկ հետո հանելով աչքերը կախել տվեց։

Սասունցիների հետ վայրագ հաշվեհարդար տեսնելուց հետո, Բուղան իր զորքերի մի մասը Ժիրաքի հրամանատարությամբ ուղարկեց Վասպուրական, իսկ մյուս մասով ինքն անձամբ հարձակվեց Աշոտ Արծրունու վրա։

Ժիրաքն առանց դիմադրության ներխուժեց Մոկք և Ռշտունիք։ Թովմա Արծրունին պատմում է, որ այստեղ արաբներին քաջարի դիմադրություն էր ցույց տալիս Շապուհը իր հզոր հետ միասին։ Սրանք միանալով մի խումբ հովիվների, կտրում են արաբների ճանապարհը, ջարդում նրանց ու ազատում գերիներին։ Համեմատաբար ավելի դժվար էր Աշոտ Արծրունու վիճակը։ Աշոտի ուժերը համարյա արդեն չլատվել, քայքայվել էին։ Նրա զինակիցներից ոմանք առանձնացել էին իրենց ամրոցներում ու

բերդերում, իսկ ոմանք էլ բացարձակորեն անցել էին թշնամու կողմը։ Եվ չնայած այդպիսի ծանր վիճակին, Աշոտն իր հավատարիմ մարդկանցով շարունակում էր քաջարի դիմադրությունը։ Նա կարողացավ գրավել Թոռնավան գավառի նշանավոր Նկան ամրոցն ու, ամրանալով այնտեղ, շարունակեց կռվել։ Միաժամանակ նա իր եղբորը՝ Գուրգենին, ուղարկեց ոգնական զորքեր բերելու։ Արաբները շուտով շրջապատեցին Նկանը։ Հայերը շարունակում էին հերոսաբար պաշտպանվել. դրա մասնավոր ու գեղեցիկ նկարագրությունը տալիս է Թովմա Արծրունին։ Սակայն շրջապատվածների շարքում, Աշոտի զինակիցների մեջ շուտով բուն է դնում դավաճանությունը։ Իշխաններից մի քանիսը գաղտագողի կապ հաստատելով Բուղայի հետ, խոստանում են իրենց զեկավարին նրան հանձնել, այն պայմանով, որ իրենք ազատ արձակվեն։ Եվ երբ դավաճանները երես առ երես հրաժարվում են Աշոտի հրամանները կատարելուց, այն ժամանակ նա ինքնակամ անձնատուր է լինում արաբներին։

Աշոտ Արծրունու եղբայրը՝ Գուրգենը, որը գնացել էր նոր ուժեր կազմակերպելու, հազիվ կարողացավ իր շուրջը համախմբել մի քանի նախարարների և հավաքել 900-ի չափ զինվորներ։ Բուղան Աշոտի դեմ ունեցած հաջողություններից ոգևորված, իր զորքերը շարժեց Գուրգենի դեմ։ Այս անգամ ընդհարումների հիմնական թատերաբեմը գարձավ Կորճեք աշխարհի Որոթիրանք գավառը։ Արաբական բանակը, բաղկացած 10.000 մարդուց, կանգ առավ Զաբ գետի ափին։ Նրանից ոչ հեռու Թով գյուղի մոտ բանակ էին դրել հայկական զորքերը։ 852 թվականին Արյան լիճ կոչվող վայրում ուժերի չափազանց անհավասար պայմաններում տեղի ունեցավ մի կատաղի ճակատամարտ, որտեղ Գուրգեն Արծրունու հետ կողք-կողքի կռվում էին նաև նրա հավատարիմ զինակիցները. Արծրունի, Գնունի, Գազրիկյան, Ամատունի, Վարաժնունի, Ընտրունի, Ակեացի, Անձևացի և Վահևունի նախարարական տների ներկայացուցիչները։ Կռվին անձնվիրաբար մասնակցում էին նաև հայ հոգևորականները։

Ճակատամարտն սկսվելուց անմիջապես հետո հայ զինվորները մեկ մարդու նման գրոհի են նետվում։ Նրանց համարձակ գրոհները մինչև օրվա վերջը անընդհատ հարվածի ու ճնշման տակ էին պահում թշնամու գնդերին, որոնք մինչև երեկո կորցնելով 1800 զինվոր, պարտվում և սկսում են անկանոն կերպով նահանջել Արյան լճից։ Ճակատամարտը շահված էր, հայերը տարել էին փառավոր հաղթանակ թշնամու գերազանց ուժերի դեմ։ Բուղան

չէր կարողանում զսպել իր կատաղությունը։ Նա վերջապես որոշեց վրեժխնդիր լինել խորամանկությամբ, այլ ոչ թե զենքով։ Նա իր մոտ կանչեց Գուրգենին՝ Վասպուրականի մեծ իշխան նշանակելու, որպես քաջ ու ճանաչված մարդու։ Սակայն երեք օր պահելուց ու պատվելուց հետո, մյուսների հետ աքսորեց Արաբիա։ Դրանից հետո հայերի դիմադրողունակությունը թուլացավ, արաբները սկսեցին նորից ասպատակել Վասպուրականն ու Տարոնը։

851—852 թվականներին Հայաստանի հարավային գավառներն ու նահանգներն ավերելուց, ժողովրդին ջարդելուց ու կողոպտելուց հետո, Բուղան իր զորքերի հիմնական մասերը շարժեց դեպի հյուսիս՝ ձմեռը Դվինում անցկացնելու համար։

Հաջորդ տարվա գարնանը Բուղան վերսկսեց իր արշավանքները։ Արաբական զորքերը շարժվեցին նախ դեպի Թիֆլիս, որտեղ Իսհակ իբն-Իսմայիլն իրեն անկախ էր հայտարարել ու հրաժարվում էր խալիֆին հարկ վճարել։ Բուղան Թիֆլիսն ու Թիֆլիսի էմիրությունը հպատակեցնելուց հետո արշավեց Կախեթի վրա։ Այստեղ, սակայն, արաբական հրոսակները ջարդ կրեցին և հարկադրված վերադարձան Հայաստան, որպեսզի նոր ուժեր կազմակերպեն։ Կախեթում կրած պարտության վրեժը Բուղան լուծեց Աղվանքի, Ուտիքի և Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների խաղաղ բնակիչներից։ Արաբներն այստեղ դրավեցին շատ գավառներ ու շրջաններ։ Իրենց արշավանքների ընթացքում նրանք ներխուժեցին նաև Գարդման ու Խաչեն։ Բուղան այստեղ ևս սարքեց համատարած կոտորածներ և շատերին էլ գերեվարեց։ Նա հիշյալ շրջանների ու գավառների համարյա բոլոր այբի ընկնող դրծիչներին բռնեց ու աքսորեց։ Բուղային ու նրա կեղեքիչներին անձնատուր չեղան միայն հարավային Արցախի հայերը, որոնք իրենց իշխանի գլխավորությամբ արաբական լծի դեմ բռնկված սպստամբական շարժման սլատմության մեջ փառավոր էջեր գրեցին։ Արցախի հայերին անշուշտ ոգևորել էին Վասպուրականի, Տարոնի և Կախեթի ժողովուրդների հերոսական պայքարի օրինակները։ Հերոս արցախցիներն իրենց քիչ բերդը դարձրին մի հզոր ամրոց։ Կատաղած Բուղան մեկ ամբողջ տարի շրջապատեց այդ բերդը, 28 անգամ դրոհ տվեց նրա վրա, բայց չկարողացավ դրավել։ Բերդը պաշտպանող հայերը քաջարի դիմադրություն էին ցույց տալիս և ծանր կորուստներ պատճառելով հետ էին շպրտում թշնամուն։ Բուղայի ձեռնարկած գլխավոր հարձակումը նույնպես ձախողվեց։ Վերջ ի վերջո բերդի տերերն ու

Բուղան համաձայնության եկան առանձին-առանձին պատգամավորներ ուղարկել խալիֆի մոտ բացատրություն տալու համար։ Արցախի իշխանավորները հայտարարում էին, որ իրենք խալիֆի հպատակներն են և պատրաստ են միայն նրա հրամանները կատարելու։ Լեռնցիների ասպետական ու խիզախ ոգին որքան զորեղ էր կռվի մեջ, նույնքան անզոր էր Բաղդադի դավադրությունների առաջ։

Կախեթցիների ու արցախցիների հերոսությունները նոր ոգևորություն առաջացրին Վասպուրականում։ Ազատագրական պայքարի դրոշն այս անգամ բարձրացրեց Աբու-Ջաֆր Արծրունին, որն իր տրամադրության տակ ուներ 4000 քաջարի մարտիկներ։ Զորքերի հրամանատարությունը վարում էր Աբու-Մկդեմ Արծրունին, Արյան լճի հռչակավոր ճակատամարտի հերոս Գուրգեն Արծրունու զինակիցը։ Վասպուրականում ծագած նոր շարժումները ճնշելու համար ուղարկվեց Նախիջևանի կառավարիչ Իբրահիմը։ Արաբական հիմնական ուժերին սերտորեն համագործակցում էին նաև Բերկրիի Ռիմանիկ արաբական ցեղերի զորքերը։ Ճակատամարտը տեղի ունեցավ Խաղաբերք գյուղի մոտ, որտեղ հայերը ջախջախելով թշնամուն, նրան փախուստի մատնեցին։ Այս կռվում հերոսի մահով ընկավ նաև Աբու-Մկդեմը։ Պայքարը շարունակեց Աբու-Ջաֆրը, որն անցավ Աղբակ գավառը, հարձակվեց Ռշտունիքի վրա ու Իբրահիմի ձեռքից կրկին խլեց Ոստան քաղաքը։ Շուտով Վասպուրականի մի զգալի մասն ազատագրվեց ու անցավ Արծրունիների ձեռքը։ Բուղան այլևս ուժ չունենալով որևէ գործնական քայլի դիմելու, ստիպված ճանաչեց Արծրունիների իրավունքները։ 855 թվականին Բուղան Հայաստանից ետ կանչվեց։ Արաբների տարած մեծ թվով գերիների մեջ էր նաև սպարապետ Սմբատը։ 849—855 թվականներին ամբողջ Հայաստանում ու Անդրկովկասում բռնկված ազատամարտական շարժումները թեև ամբողջապես չթաթախեցին արաբական լուծը, բայց նրանք այնպիսի հարված հասցրեցին Արաբական խալիֆայությանը, որ դրանից շատ չանցած հայերը կարողացան հասնել իրենց քաղաքական անկախությանը և ստեղծել ինքնուրույն թագավորություն՝ Բագրատունիների գլխավորությամբ։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ XIX

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Բագրատունիների իրավունքների ընդարձակումը և արտաքին ու ներքին քաղաքականությունը

Հայկական պետականության վերականգնման համար կարևոր նշանակություն ունեցավ այն, որ Մութավաքիլ խալիֆը (847—861) 855 թվականին Հայաստանի կառավարիչ նշանակեց Սմբատ Բագրատունու որդի Աշոտ Բագրատունուն։ Դրա հետ միասին արաբները լուծարքի ենթարկեցին նաև Հայաստանում գտնված իրենց զորականները և երկրից դուրս բերեցին զորքերն ու հարկահավաքներին և սահմանափակվեց Դվինում նստած արաբական ոստիկանի գործունեությունը։

Այդ նշանակում էր, որ խալիֆայությունը հայ ժողովրդի համար պայքարի ճնշման տակ ստիպված էր երկրի կառավարումը հանձնել հայերին։

IX դ. 60-ական թվականների սկզբին խալիֆը Աշոտ Բագրատունուն շնորհեց իշխանաց-իշխանի տիտղոս, որն առավել ևս ամրապնդեց նրա կառավարչական իրավունքները, ընդարձակեց նրա իշխանությունը և մնացած ֆեոդալական ուժերին իրեն ենթարկելու իրավաբանական հիմք տվեց։ Այսպիսով փաստորեն երկրի կառավարումն ամբողջությամբ անցավ Բագրատունիների ձեռքը և դրանով իսկ Հայաստանը լիակատար ինքնավարություն ստացավ։

Իշխանաց-իշխան Աշոտ Բագրատունին հմտորեն օգտագործեց արաբա-բյուզանդական հակամարտությունները՝ Հայաստանի ներքին ինքնուրույնությունն ամրապնդելու և երկիրը օտար ուժերի ներխուժումներից վերծ պահելու համար։

Արաբական տիրապետության շրջանում նախկին հայկական ֆեոդալական խոշոր տներից շատերը անհետացան։ IX դարում ասպարեզի վրա մնացել էին Բագրատունիները, Արծրունիները և Սյունյաց ֆեոդալական տները։ Այդ երեք նախարարությունները IX դարի երկրորդ կեսին ավելի հզորացան, ընդարձակեցին իրենց կալվածքները և մեծացրին ռազմական ուժերը։

Բագրատունիները իրենց շուրջը համախմբված մյուս նախարարությունների հետ միասին ձգտում էին կազմակերպել ու միավորել երկրի ռազմական ուժերը և պայքարել Հայաստանի լիակատար պետական անկախության համար։

Նրանց ջանքերով հենց սկզբից վերականգնվեցին հայկական կազմակերպված զորագնդերը, ստեղծվեց 40 հազարանոց մշտական ու վարժեցրած բանակ, որը ընդունակ էր պաշտպանելու երկիրը թշնամիների ներխուժումից։ Բանակի սպարապետ նշանակվեց իշխանաց-իշխանի եղբայր Աբասը։ Հայաստանի ռազմական ուժը ավելի աճեց և հզորացավ, երբ Բուղայի կողմից գերեվարված հայ իշխանների մեծագույն մասը վերադարձավ հայրենիք։

Բագրատունիների վարած ներքին քաղաքականության նպատակն էր երկրի ուժերի համախմբումը և պետական անկախության վերականգնումը։ Իսկ արտաքին քաղաքականության բնագավառում նրանք բարիդրացիական հարաբերություններ հաստատեցին Հայաստանի հարևան ժողովուրդների՝ վրացիների և աղվանների հետ։

Իշխանաց-իշխան Աշոտը առավել շրջահայաց քաղաքականություն էր վարում խալիֆայության նկատմամբ։ Նա բացեիբաց չհրաժարվեց արաբական գերիշխանությունը պահպանելուց, աշխատեց համերաշխ դիրք բռնել արաբների հանդեպ։ Իրավացի չեն այն պատմաբանները, որոնք նմանօրինակ քաղաքականության համար Բագրատունիներին վերագրում են արաբներին ծառայելու դիտավորություն։ Այդ սխալ տեսակետը ժխտվում է այն ակտիվ դերով, որ Բագրատունիները հանդես էին բերում խալիֆայության տիրապետության դեմ հայերի մղած ազատագրական պայքարում։

Բագրատունիները հաշտ ու համերաշխ էին նաև Բյուզանդական կայսրության հետ։ Իշխանաց-իշխան Աշոտը բարեկամական կապեր հաստատեց Բարսեղ 1-ի հետ։ Բյուզանդիայի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման հետևանքով հայ-բյուզանդական սահմանների վրա վերջ տրվեց արաբների և բյուզանդացիների անընդհատ ընդհարումներին ու հաստատվեց կա-

յուն խաղաղություն, որի շնորհիվ վերակվեցին և բարենպաստ հնարավորություններ ստացան առևտրական հարաբերությունները Հայաստանի և Բյուզանդիայի միջև։

Բագրատունիների վարած արտաքին քաղաքականությունը նպաստեց այն թանին, որ Հայաստանը զերծ մնա օտարների արշավանքներից, ապահովվի կայուն խաղաղություն, ամրապնդվի ձեռք բերված ինքնավարությունը և պայմաններ ստեղծվեն հայկական պետականության վերականգնման համար։

Հայկական պետականության վերականգնումն ու ամրապնդումը

Ինքնավարության շրջանում արտաքին և ներքին նպաստավոր պայմանները խթանեցին երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի վերելքին։ Ժողովրդի մեջ աճեց ու ամրապնդվեց օտար լծից վերջնականապես ազատագրվելու ձգտումը։ Պետական անկախության ձեռքբերումը դարձավ հայ ժողովրդի բոլոր խավերի իղձն ու նպատակը։

Աշխատավոր բնակչությունը՝ գյուղացիությունն ու արհեստավորությունը, ձգտում էր դրան, որովհետև նա ամենից շատ էր տուժում արաբների կեղեքումներից։ Խոշոր ու մանր ազնվականները և հոգևորականները նույնպես շահագրգռված էին ինքնուրույն պետականության վերականգնմամբ, քանի որ նրանք ևս կազատվեին արար զավթիչների կամայականություններից ու բռնությունից։ Այդ էր պատճառը, որ արաբական լծի վերահաստատման վտանգը, որ դեռևս չէր վերացել, ստիպեց հայ ֆեոդալական խավին համախմբվել Բագրատունիների շուրջը և դառնալ հայկական պետականության վերականգնման իրական հենարանը։

Հայաստանը թագավորություն հռչակելու և իշխանաց-իշխան Աշոտ Բագրատունուն Հայաստանի թագավոր ճանաչելու հարցը հասունացել էր։ Այդ նպատակով, մոտավորապես 875—877 թվականների ընթացքում, հայոց Գեորգ Գառնեցի կաթողիկոսի, Սյունյաց իշխաններ Վասակ Իշխանիկի և Գրիգոր Սուփանի, Արծրունյաց Գրիգոր-Դիրենիկի, Անձևացյաց Գուրգեն Ապուսալիմի և մի քանի այլ իշխանների նախաձեռնությամբ գումարվեց ժողով, որտեղ որոշվեց Աշոտին հռչակել հայոց թագավոր և առաջարկել Արաբական խալիֆայությանը՝ հաստատելու Աշոտի թագավորությունը և օրինականացնելու Հայաստանի պետական անկախությունը։

885 թվականին խալիֆ Ահմեդ Արուլ-Աբասը (870—892) Աշոտին ուղարկեց արքայական թագ ու հանդերձանք և Հայաս-

տանը ճանաչեց որպես թագավորություն։ Շուտով Աշոտի թագավորությունը ճանաչեց նաև բյուզանդական կայսր Բասեղ I-ը։ Հայաստանում հիմք դրվեց Բագրատունիների թագավորությանը՝ Աշոտ I-ի (885—890) գլխավորությամբ։ Աշոտ I Բագրատունու հանդիսավոր թագադրությունը տեղի է ունենում Բագարան քաղաքում։

Բագրատունիները այսուհետև ավելի եռանդուն ջանքեր գործադրեցին հայկական նորաստեղծ պետության ամրապնդման համար։ Նրանք արքունիքում վերականգնեցին Արշակունիների ժամանակ գոյություն ունեցած գործակալությունների սիստեմը։ Երկրի խոշոր իշխաններին պետական բարձր պաշտոններ շնորհվեցին։ Մանր ազնվականներից շատերին կալվածքներ նվիրվեցին և այլն։ Այդ բոլորը հնարավորություն ընձեռեց Աշոտ I-ին սանձահարելու Գուգարքի և Ուտիքի կենտրոնախույս ֆեոդալներին, համագործակցելու Վրաստանի ու Աղվանքի հետ և այդ երկրների հյուսիսային շրջանները մաքրելու լեռնականներից։

Այնուհետև Բագրատունիները խաղաղ պայմաններ ապահովեցին ստեղծարար աշխատանքի համար և իրենց քաղաքականությամբ նպաստեցին ֆեոդալական հարաբերությունների զարգացմանը։ Ժամանակակից պատմագիր Հովհաննես Դրասխանակերտցին Աշոտ I-ի գործունեությունն ամփոփել է հետևյալ խոսքերով. «Եվ այնուհետև շատ և երևելի կարգեր հաստատեց իր տերության մեջ, հորինեց տոհմեր, ազգեր, քաղաքներ, գյուղեր, դաստակերտներ և հավասարապես, ըստ յուրաքանչյուրի, կարգեր էր դնում լեռնականների, ջերմահովիտ բարեխառն դաշտավայրերի բնակիչների համար և բոլոր տափարակ տեղերում ազարակներ և գոմեր էր հաստատում. մանավանդ տեղերը այգիներով ու բուրաստաններով էր զարդարում և այն ամենը ինչ թագավորության օրենքին էր համապատասխանում, կամ թագավորության միջ կար. կամ թե թագավորության շրջակայքումն էր. նրանց ընթացքը չէր կասեցնում, և գրեթե հարստագույն և խոհեմագույնն էր երևում բոլոր թագավորությունների մեջ։ Եվ այսպես նորոգատուր թագավորությամբ բարձրացնում էր Թորգոմյան ազգը»։ Պատմագիրը «տոհմերի» և «ազգերի» հաստատում ասելով, հասկանում է, որ Աշոտ I-ը իր քաղաքականությամբ նպաստում էր նոր ֆեոդալական տների առաջացմանը, նրանց նվիրելով ընդարձակ կալվածներ, որով ցանկանում էր ամրապնդել իր թագավորությունը, ստեղծել դրա համար կայուն հենարան։ Դրասխանակերտցին այնուհետև պատմում է, որ Աշոտ I-ը իր իշխանությունն է տարածում

անհնազանդ և կենտրոնախույս տարրերի վրա, սանձահարում ավազակաբարո տարրերին։ Բագրատունիները երկրում խաղաղություն ապահովելու համար մի կողմից սանձահարում էին միջֆեոդալական ընդհարումները, համագործակցություն հաստատում հարևան եղբայրական ժողովուրդների՝ վրացիների և ադվանների հետ, մյուս կողմից։ փոյալ դիրք էին բռնում Արաբական խալիֆայության նկատմամբ և բարիդրացիական հարաբերություններ հաստատում Բյուզանդական կայսրության հետ։ Դրանով իսկ նպաստավոր պայմաններ են ստեղծում երկրի քաղաքական և տնտեսական կյանքի զարգացման համար։

Աշոտ I-ի մահից հետո, 890 թվականին, գահ բարձրացավ նրա ավագ որդին՝ Սմբատ I-ը (890/91—914)։ Սա թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության մեջ հետևեց իր հորը և ընդարձակեց հայկական թագավորության սահմանները։ 892 թվականին հայկական զորքերը մտան Դվին, ձերբակալեցին արաբական էմիրներ Մուհամմեդին և Ումային ու շղթայակապ ուղարկեցին Կոստանդնուպոլիս։ Նրանք սաստեցին նաև Մանազկերտի արաբական էմիրությանը և ստիպեցին զորք տալ ու հարկ վճարել հայկական պետությանը։ Այնուհետև Բագրատունիները իրենց թագավորությանը միացրին Տարոնը, Աղձնիքի հյուսիսային մասերը, Բարձր Հայքի արևելյան շրջանները, Տայոց աշխարհը և այլ երկրամասեր։

Այսպիսով, հայկական հողերը, բացառությամբ Հայաստանի արևմտյան մի քանի շրջանների, որոնք մտնում էին Բյուզանդական կայսրության մեջ, համարյա ամբողջությամբ միավորվեցին Բագրատունիների տիրապետության ներքո։ Աշոտ I-ի և Սմբատ I-ի ժամանակ Հայաստանի պետական սահմանները, Դրասխանակերտցու վկայությամբ, անցնում էին՝ արևմուտքից Կարին քաղաքի մոտով, Կղարշքով ու Եգերաց երկրով, հյուսիսից՝ Կուր գետով՝ ընդգրկելով Գուգարքը ամբողջությամբ, Ուտիքն ու Շամքորը, արևելքից՝ Փայտակարանով, Հեր ու Զարևվանդ գավառներով. իսկ հարավից՝ Տավրոսյան լեռնաշղթայի հարավային փեշերով։

Հայաստանի դերի բարձրացումը և արաբական էմիրությունների ոտնձգությունները

Բագրատունիների թագավորության ամրապնդումը բարձրացրեց Հայաստանի դերն ու ազդեցությունը։ Հայաստանը օգնեց Վրաստանին դուրս քշելու արաբական էմիրներին Թիֆլիսից և ազատվելու արաբական լծից։ Սմբատ I-ը 90-ական թվականներին թագ շնորհեց վրաց Ատրներսեհ իշխանին և օժանդակեց նրան վերականգնելու վրացական պետությունը։ Վրաց ու աղվանից ժողովուրդների հանդեպ Հայաստանի բարյացակամ վերաբերմունքը նպաստեց նրանց ու հայ ժողովրդի ավելի սերտ մերձեցմանը և բարեկամության ամրապնդմանը։ Անդրկովկասյան ժողովուրդներն իրենց հերթին նեցուկ դարձան Բագրատունիների թագավորության համար, որովհետև Հայաստանի պետական անկախության պահպանումն ու ամրապնդումը կարևոր նրաշխիք էր նաև այդ ժողովուրդների ինքնուրույնության պահպանման համար։

Բագրատունի գահակալները խաղաղ և բարեկամական հարաբերություններ հաստատեցին Բյուզանդական կայսրության հետ։ Դեռևս Աշոտ I-ի ժամանակ Հայաստանի և Բյուզանդիայի միջև բարեկամության հիմք դրվեց, իսկ Սմբատ I-ը 893 թվականին Բյուզանդիայի հետ կնքեց նաև առևտրական պայմանագիր։ Սմբատ I-ին հաջողվեց զսպել երկրի ներսում եղած կենտրոնախույս ուժերին։ Նա ստիպեց իրեն ենթարկվել իր հորեղբորը՝ հայոց սպարապետ Աբասին, որն ամրանալով Կարսում, փորձում էր տիրանալ թագավորական գահին։ Սմբատին միացան և նրան ենթարկվեցին Սյունյաց, Արծրունյաց և այլ իշխաններ։

Հայաստանի հզորացումն ու քաղաքական դերի աճումը հաճելի չէր սահմանակից արաբական էմիրություններին։ Այդ պատճառով նրանք փորձեցին կասեցնել Հայաստանի հետագա հզորացումը։ Ատրպատականի էմիր Ավշինը 893 թվականի հայ-բյուզանդական առևտրական պայմանագիրը դիտեց որպես Հայաստանի կողմից հնազանդության խախտում և նույն թվականին պատրաստվեց հարձակվել Հայաստանի վրա։ Սմբատ I-ը, նախօրոք իմանալով այդ մասին, 30 հազարանոց բանակով շարժվեց դեպի երկրի արևելյան սահմանները՝ նրան ընդառաջ։

Ավշինը դեմ առ դեմ հանդիպելով հայկական 30 հազարանոց բանակին և լսելով Սմբատի բացատրությունը, թե կնքված առևտրական պայմանագիրը օգուտ է բերում նաև արաբներին,

հաշտություն առաջարկեց և իր զորքը ետ տարավ, բայց հաջորդ 894 թվականին նա նորից իր զորքերը շարժեց դեպի Հայաստան։ Ավշինի բանակին հաջողվեց գրավել Դվինը, որը 893 թվականի երկրաշարժից քարուքանդ էր եղել։

Սմբատ I-ը, ասպատակություններից և ավերածություններից խուսափելու համար հաշտություն առաջարկեց։ Նա հայոց Գեորգ կաթողիկոսի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկեց Ավշինի մոտ, բայց վերջինս մերժեց հաշտության առաջարկը, կաթողիկոսին բանտարկեց և հարձակման անցավ։ Հայկական և արաբական բանակների միջև ճակատամարտը տեղի ունեցավ Արագածոտն գավառի Դողս գյուղի մոտ (այժմ էջմիածնի շրջան) և ավարտվեց հայերի հաղթանակով։ Ավշինը իր բանակը ետ տարավ Հայաստանից։

Այդ նույն ժամանակ, երբ հայկական բանակը զբաղված էր Ավշինի հարձակումը ետ մղելով, Հյուսիսային Միջագետքի արաբական էմիր Ահմադը նախ ձերբակալեց Աղձնիքի կառավարիչ Ապլմախրային և այդ նահանգը ենթարկեց իրեն, ապա նվաճեց Սիմ լեռան շրջակայքն ու շարժվեց դեպի Տարոն։ Սմբատ I-ը 60 հազարանոց բանակով ընդառաջ ելավ արաբական զորքերին։ Սևկայն Տարոնի ճակատամարտում հայկական բանակը Գագիկ Ապումրվան Արծրունու դավաճանության պատճառով պարտվեց և ետ նահանջեց։

Այդ դեպքից հետո՝ 896 թվականին Աշվինը նորից հարձակվեց Հայաստանի վրա։ Նա Աղվանքի վրայով մտավ Վրաստան և այնտեղից արշավեց դեպի Հայաստան։ Արաբներին հաջողվեց պաշարել և գրավել Կարսը, գերել Թաղավորի ընտանիքը և առաջ շարժվելով դալ ու ամրանալ Դվինում։ Սմբատ I-ը Տայքից օժանդակ ուժ վերցնելով, վերադարձավ իր արքայանիստ Երազդավորս գյուղաքաղաքը և բանակցություններ սկսեց Ավշինի հետ՝ հաշտություն կնքելու և գերիներին ազատելու համար։ Այս անգամ փոխադարձ զիջումներով հաշտություն կնքվեց։ Ավշինի կազմակերպած արշավանքները թեև խոռվում էին Հայաստանի անդորրը և նյութական վնասներ հասցնում երկրին, սակայն չկարողացան կասեցնել նրա ո՛չ տնտեսական և ո՛չ էլ քաղաքական վերելքը։

Յուսուֆի արշավանքը և Վասպուրականի անջատումը

899 թ. Ավշինի մահից հետո Ատրպատականի էմիրությունը անցավ նրա եղբայր Յուսուֆ Սաջիին։ Սմբատ I-ը, որպեսզի Յուսուֆի հետ առնչություն չունենա, դիմեց խալիֆին հարկը անմիջապես խալիֆի գանձարանը մուծելու հա-

մար։ Այդ հանգամանքը գրգռեց Յուսուֆին և նա 901 թվականին իր բանակը շարժեց դեպի Հայաստան։ Նրա դեմ դուրս եկավ հայկական զորքը։ Յուսուֆը խուսափեց ճակատամարտից, և խաղաղություն հաստատելու առաջարկով իր ասորի քարտուղարին պատվիրակ ուղարկեց Սմբատ I-ի մոտ։ Սա ընդունեց հաշտության առաջարկը, և արաբական զորքերը հեռացան Հայաստանից։

Յուսուֆի համար այդ հաշտությունը, որը տևեց մինչև 909 թվականը, ժամանակ շահելու միջոց էր։

X դարի առաջին տասնամյակին երկրի առանձին նահանգներում խոշոր ֆեոդալներից ոմանք տնտեսական և ռազմական տեսակետից այնքան հզորացան, որ ձգտում էին անկախ և ինքնուրույն դառնալ։ Այսպես, 902 թվականին Մանազկերտի կայսրերը հրաժարվեցին հարկ վճարել և զորք տալ Սմբատ I-ին, բայց հաջողություն չունեցան և ստիպված շարունակեցին կատարել իրենց պարտավորությունները արքունիքի հանդեպ։ Այս դեպքերից մի տարի հետո ապստամբեց Սյունյաց Սմբատ դահերեց իշխանը, սակայն նա ևս ստիպված եղավ տեղի տալ և ենթարկվել Սմբատ I-ին։

Այս դեպքերից շատ չանցած՝ Հավնունիները վրաց Ատրներսեհ թագավորի ոժանդակությամբ դավադրություն կազմակերպեցին Սմբատ I-ի դեմ։ Սրանք որոշել էին սպանել թագավորին, երբ նա շրջագայությունից վերադառնար Երազգավորս։ Սակայն դավադրությունը հայտնաբերվեց և Հասան Հավնունին ու նրա համախոհները պատժվեցին։

Չնայած Բագրատունիներին հաջողվեց ճնշել ֆեոդալական ընդվզումները, սակայն ֆեոդալական հարաբերությունների խորացումը անխուսափելիորեն տանում էր դեպի երկրի քաղաքական մասնատում։ Հայկական միասնական թագավորության առաջին մասնատողները եղան Արծրունյաց իշխաններ։ Արծրունիներն ու Սյունյաց իշխանները X դարի սկզբին վիճում էին Նախիջևան քաղաքի համար։ Այդ քաղաքն իր շրջակայքով երբեմն գտնվել էր Արծրունիների, երբեմն՝ Սյունյաց իշխանների ձեռքում։ Սմբատ I-ը այդ վեճը լուծեց հօգուտ Սյունյաց իշխանների և քաղաքը տվեց նրանց։

Արծրունի իշխաններ Գագիկ-Խաչիկը և Գուրգենը, Սմբատ I-ի քրոջ որդիները, դժգոհ մնացին թագավորի այդ վճռից և դիմեցին Ատրպատականի էմիր Յուսուֆի օգնությանը։ Սրան էլ առիթ էր հարկավոր, որպեսզի պատակտեր և թուլացներ Բագրատունիների թագավորությունը։ Յուսուֆը խոստացավ օգնել Արծրունիներ-

բին, Վասպուրականը հոչակել առանձին թագավորություն և խալիֆից թագ բերել Գագիկ Արծրունու համար։ 908 թվականին Վասպուրականը անջատվեց Բագրատունիների միասնական թագավորությունից ու կազմեց առանձին թագավորություն՝ Գագիկ Արծրունու գլխավորությամբ (908—937)։

Յուսուֆի հարձակումը Հայաստանի վրա և Զկնավաճառի ճակատամարտը

Վասպուրականի դեպքերից առաջ Յուսուֆը խալիֆից Հայաստանի հարկը ստանալու իրավունք էր ձեռք բերել և արդեն առիթ կար միջամտելու Բագրատունիների ներքին գործերին։ Սա Սմբատ I-ին սպառնաց պատերազմով և պահանջեց խալիֆին տրվող հարկը անմիջականորեն վճարել իրեն։ Հայոց արքան երկրի գլխին կախված վտանգը հեռացնելու նպատակով համաձայնվեց հարկերը վճարել, ապա Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսին ուղարկեց Յուսուֆի մոտ՝ նրան համոզելու, որ ետ կանգնի Հայաստան արշավելու մտքից։ Սակայն կաթողիկոսի միջնորդությունն ապարդյուն անցավ։ Յուսուֆը նրան շղթայակապ բանտ նետեց և 909 թ. դարձանը Արծրունիների մասնակցությամբ արշավեց Հայաստանի վրա։ Նրա զորքերը մտան Նախիջևան ու Սյունիք։ Սյունյաց ֆեոդալներ Սմբատն ու Սահակը հեռացան իրենց երկրամասից, իսկ մի քանիսն էլ անձնատուր եղան Յուսուֆին կամ դերի ընկան։

Յուսուֆի զորքերը 910 թ. դարձանը արշավեցին դեպի Արարատյան դաշտ, գրավեցին Դվինը և ասպատակեցին այլ գավառներ։ Հայ ֆեոդալների մի մասը, թշնամու հաջողությունից ահաբեկված, լքեց Սմբատ I-ին ու միացավ կամ անձնատուր եղավ Յուսուֆին։ Դվին եկած արաբներին հանձնվեցին Սյունյաց գահերեց իշխան Գրիգոր Սուփանը և Վասակ իշխանը, հայոց սպարապետ և Սմբատ I-ի եղբոր որդի Աշոտը և ուրիշներ։

Սմբատ I-ը, լքված իր մի քանի զինակիցներից, չկարողացավ այնուհետև կարգի բերել բանակը և կասեցնել հակառակորդի առաջխաղացումը։ Ուժերի դերագույն լարման գնով նույն թվականին Սմբատին վերջիվերջո հաջողվեց համալրել բանակը և իր որդիների՝ Աշոտի ու Մուշեղի գլխավորությամբ կռվի դուրս բերել թշնամու դեմ։

Ճակատամարտը տեղի ունեցավ Նիգ գավառի (այժմյան Ապարանի շրջան) Զկնավաճառ կոչված վայրում։ Սկզբում հաջողությունը հայերի կողմն էր, բայց օրվա երկրորդ կեսին սևորդիներից կազմված գունդը մարտից դուրս եկավ, գերվեց արքայոր-

դի Մուշեղը և Թշնամին պարտություն մատնեց հայոց զորքին։

Զկնավաճառի ճակատամարտից հետո հայկական բանակը այլևս լուրջ և կազմակերպված դիմադրություն ցույց տալ չկարողացավ։ Արաբները ոտնատակ տվին երկիրը և կողոպտեցին ժողովրդին։ Հայ ֆեոդալներից նրանք, ովքեր չէին անցել Թշնամու կողմը կամ չէին գերվել, քաշվեցին իրենց ամրությունները։ Սմբատ I-ը ևս փակվեց Կապույտ բերդում, թողնելով ժողովրդին անպաշտպան։

Յուսուֆի զորքերը մի շարք ամրոցներ գրավելուց հետո պաշարեցին նաև Կապույտ բերդը, որը համառ կերպով պաշտպանվում էր և ծանր կորուստներ էր պատճառում Թշնամուն։ Սակայն Սմբատ I-ը երկրի ավերումն ու կողոպուտը դադարեցնելու նպատակով որոշեց անձամբ գնալ Յուսուֆի մոտ և հաշտություն կնքել։ Բայց արաբները 913 թվականին Սմբատին շղթայակապ տարան Դվին, բանտ նետեցին, իսկ 914 թվականին գլխատեցին։

Պայքարի վերելքը և Աշոտ երկրորդը

Յուսուֆը հույս ուներ, որ Սմբատին ասպարեզից հեռացնելուց հետո հայերը ծնկի կգան։ Բայց այդպես չեղավ։ Հայ ժողովուրդը նորից ծառացավ Թշնամու դեմ իր հայրենիքն ու պետականությունը պաշտպանելու համար։ Դրան նպաստեց նաև Յուսուֆի անողոք վերաբերմունքը իր կողմն անցած հայ իշխանների նկատմամբ։ Նա սպանել տվեց Գրիգոր Սուփան Սյունյաց իշխանին, Սմբատ I-ի եղբորորդի Սմբատ Բագրատունուն, արքայորդի Մուշեղին, Դավիթ ու Գուրգեն Գնունիներին և այլոց։ Հնտապնդումից զերծ չմնացին նաև Գագիկ ու Գուրգեն Արծրունիները։ Սրանք տեսնելով իրենց հայրենակիցների գլխին եկած փորձանքը և զգալով, որ վաղ թե ուշ այդ նույնը վիճակվելու է և իրենց, հեռացան Յուսուֆից, զենքն ուղղեցին նրա դեմ և արյունով քավեցին հայրենիքի նկատմամբ իրենց գործած հանցանքը։

Ոտքի ելավ նաև Սյունիքը։ Յուսուֆի կողմից բանտարկված Վասակ իշխանը սպանում է պահակին, փախչում Սյունիք և կազմակերպում պայքարը Յուսուֆի դեմ։ Այնտեղ վերադարձան Սմբատ և Սահակ իշխանները, որոնք նույնպես ձեռնամուխ եղան ակտիվ պայքարի։ Այդ նույն ժամանակ Թագաժառանգ Աշոտը և նրա եղբայր Աբասը Շիրակի, Գուգարքի և Տայքի բնակիչներից փոքր խմբեր կազմած, պարտիզանական հաջող կռիվներ էին մղում երկիր ներխուժած Թշնամու դեմ։

Յուսուֆի դեմ ծավալվող պայքարը ոգեշնչեց հասարակ ժո-

ղովրդին, որը մեծ վնասներ էր կրում արաբական զորքերի ասպատակություններից, և գավառներում բնակչությունը համախմբվում էր պայքարի դուրս եկած ջոկատների շուրջը, համալրում նրանց շարքերը և օգնում, օժանդակում թշնամուն ջախջախելու գործին։ Թագաժառանգ Աշոտի ջոկատները, խորտակիչ հարվածներ հասցնելով թշնամուն, կարողացան ազատագրել Թագարանը, Շիրակը, Դուգարքը։ Նրանք արաբական զորքերին դուրս քշեցին նաև Թիֆլիսից և Աղստևի հովտից։ Դրանից հետո Աշոտը հռչակվեց հայոց թագավոր Աշոտ II կամ Աշոտ երկաթ մականունով (914—928)։

Բյուզանդական կայսրությունը, որ ուշի ուշով հետևում էր Հայաստանում կատարվող դեպքերին, Աշոտ II-ին հրավիրեց Կոստանդնուպոլիս։ 920—921 թվականներին Աշոտ II-ը մեկնեց Բյուզանդիայի մայրաքաղաք։ Այնտեղ նրան հանդիսավոր կերպով ճանաչեցին որպես հայոց թագավոր և մի ջոկատ բյուզանդական զորքով ճանապարհեցին Հայաստան։

Սևանի ճակատամարտը և արաբների արտաքսումը երկրից

Արաբական զավթիչներից հայրենիքը ազատագրելու համար ժողովրդի սկսած պայքարը օրեցօր ավելի էր ուժեղանում ու լայն ծավալ ստանում։ Աշոտ II-ը մեծ ջանքեր գործադրեց միավորելու այդ պայքարը։ Նա փոփոխական հաջողություններով մի քանի ընդհարումներ ունեցավ արաբական զորքերի հետ, բայց լուրջ հաջողությունների չհասնելով՝ առժամանակ քաշվեց Սևանա կղզին։

Այդ ժամանակ Յուսուֆը հեռացել էր Հայաստանից և իր փոխարեն Հայաստանի կառավարիչ էր նշանակել նախ Նըսրին, ապա Բեշրին։ Վերջինս օգտվելով առիթից, սկսեց հետապնդել Աշոտ II-ին, կողոպտել Սևանի շրջակայքը, ասպատակել Կոտայքը և այլն։ Արաբների դեմ շուտով դուրս եկան Գևորգ Մարզպետունի իշխանի քաջարի ջոկատները։ Մի անգամ նրա ջոկատներից մեկը Դվին տանող ճանապարհին հանդիպելով մի խումբ արաբների և մարտի բռնվելով նրանց հետ, ջարդեց նրանցից շատերին ու փախուստի մատնեց մնացածներին։ Սակայն արաբները դրանից հետո ավելի մեծ ուժերով շարժվեցին դեպի Սևան և բանակ դրեցին Սևանա կղզու հանդիպակաց ափին։

Աշոտ II-ը կղզում գտնվող իր ռազմիկներից ընտրեց լավագույն նետաձիգների, տեղավորեց նավակներում և դեռ ափ չհասած սկսեց անվրեպ նետահարել ափում խոնված արաբներին։ Հայոց թագավորի համարձակ գործողությունները անմիջապես խուճա-

պի մատնեցին արաբներին, որոնք շուտով սկսեցին գլխակորույս նահանջել։ Ճանապարհին նահանջողների վրա հարձակվեց նաև Գևորգ իշխանի ջոկատը և նոր ջարդ տվեց նրանց։ Սևանի ճակատամարտը և Գևորգ իշխանի ջոկատի հաջողությունները ոգեշնչեցին բնակչությանը և մեծ թափ հաղորդեցին արաբների դեմ մղվող պայքարին։ 924—925 թվականներին Հայաստանը ամբողջությամբ մաքրվեց արաբական զորքերից։ Բագրատունիների թագավորությունը նորից ոտքի կանգնեց և իր իշխանության ներքո միավորեց երկրի մեծագույն մասը, առանց Վասպուրականի։

Հայկական պետության պահպանման համար Ատրպատականի արաբական էմիրության դեմ մղվող պայքարն ավարտվեց հայերի հաղթանակով։ Այդ հաղթանակից հետո Հայաստանը ամբողջությամբ թոթափեց արաբական գերիշխանությունը և ձեռք բերեց լիակատար անկախություն։

ԳԼՈՒԽ XX

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ IX—XI ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՈՒՄԸ

Արտադրողական ուժերի զարգացումը

IX դարի երկրորդ կեսերից սկսած Հայաստանը ավելի քան 120 տարի ապրեց համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան և երկրում ստեղծվեցին նպաստավոր պայմաններ սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման համար։ Այդ շրջանում զգալիորեն կատարելագործվեցին արտադրության գործիքները, աճեց բնակչությունը։ Գյուղատնտեսության մեջ մասսայաբար գործադրվում են երկաթե խոփը, երկաթե բահը, փայտատը, մանգաղը, գերանդին, երկաթե խոփով գութանը և այլ գործիքներ։

Հայաստանում IX—XI դարերում տեղի է ունեցել նաև աշխատող ձեռքերի զգալի աճ։ Հայ և օտար աղբյուրները վկայում են հիշյալ դարերի Հայաստանի բազմաքանակ բնակավայրերի մասին։ Օրինակ՝ Սամվել Անեցին և Մատթեոս Ուռհայեցին հաղորդում են, որ Արծրունյաց թագավորությունն ունեցել է ավելի քան 4000 գյուղ, 8 քաղաք և 72 ամրոց։ Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ Սյունյաց թագավորությունում եղել են ավելի քան 1000 գյուղ և 43 ամրոց։ Արաբական մատենագիր Իբն-ալ-Ֆաքիհի վկայությամբ Արաքսի հովիտը, այսինքն՝ Արարատյան դաշտը ունեցել է 1000 բնակավայր, իսկ մատենագիր Յակուտին ամբողջ Հայաստանի բնակավայրերի քանակը հասցնում է 18000-ի։

Հայաստանի բնակավայրերի թվի մասին հիշյալ տեղեկությունները որքան էլ չափազանցված լինեն, այնուամենայնիվ ապացույց են խիտ բնակչության առկայության։ Կարելի է ենթադրել, որ Հայաստանը այդ ժամանակ ուներ 5—6 միլիոն բնակ-

չությունն։ Բնակչության մեծամասնությունը կազմել են գյուղացիներն ու արհեստավորները, այսինքն՝ աշխատավոր մարդիկ։ Դարերի ընթացքում այդ մարդկանց ձեռք բերած փորձն ու հմտությունը նրանց հնարավորություն են տվել ավելի արդյունավետ կերպով օգտագործել եղած արտադրամիջոցները և առաջ մղել երկրի տնտեսական կյանքը։

Ֆեոդալական հարաբերությունների խորացումը

Հայաստանը IX դարից սկսած վաղ ֆեոդալիզմից թևակոխեց զարգացած ֆեոդալիզմի շրջանը։ Այժմ նույնպես ֆեոդալական հարաբերությունների հիմքում ընկած էր ֆեոդալի սեփականատիրությունը արտադրության միջոցների՝ հատկապես հողի և ոչ լրիվ սեփականատիրություն արտադրող մարդկանց՝ հատկապես ճորտ գյուղացիների նկատմամբ։ Ֆեոդալական սեփականության այդ տիրապետող ձևի կողքին գոյություն ուներ նաև գյուղացու և արհեստավորի անձնական սեփականությունն աշխատանքային գործիքների և տնտեսության նկատմամբ։

Բագրատունիների թագավորության ժամանակ ֆեոդալական հարաբերությունները կրել են զգալի փոփոխություններ։ Նախկին ֆեոդալական խոշոր տների ներսում առաջացել էին բազմաթիվ ինքնուրույն ֆեոդալներ՝ իրենց կալվածքներով, ամրոցներով ու զորքերով։ Բագրատունիների ֆեոդալական նախկին տունը IX դարում արդեն տրոհվել էր մի քանի ինքնուրույն ֆեոդալական ընտանիքների։ Սյունյաց ֆեոդալական տոհմը բաժանվել էր 10—12, Արծրունյաց տոհմը ավելի քան 15 նույնպիսի տների։

Ֆեոդալական այդ նոր տները տիրացել էին ոչ միայն իրենց նախկին ֆեոդալական տոհմի կալվածքներին, այլև զավթել ու զավթում էին գյուղական ազատ համայնքներին պատկանող հողերը։ Նոր կալվածքներ ձեռք բերելու գործում աշխարհիկ ֆեոդալներից ետ չէին մնում նաև վանքերը և հոգևոր ֆեոդալական մյուս հաստատությունները։ Նոր հողեր յուրացնելով, ֆեոդալները դեռևս ազատ մնացած գյուղացիներին տնտեսական կախման մեջ էին դնում իրենցից, ստիպում տուրք վճարել և ապա սահմանափակում էին իրենցից կախյալ վիճակում գտնվող գյուղացիների անձնական ազատությունը։

Հողատիրության ձևերը

IX դարում Հայաստանում վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանի համեմատությամբ արդեն զգալի փոփոխություններ էին կատարվել ֆեոդալական հողատիրության ձևերի մեջ։ Արշակունիների թագավորության և մարզպանության շրջանում, բացի տանուտե-

րից, ֆեոդալական տան մյուս իշխանները իրավասու չէին իրենց տոհմին պատկանող կալվածքների նկատմամբ տնօրինություն անել՝ նվիրել, վաճառել կամ նոր կալվածք գնել։ Սկսած VII—VIII դարերից, իսկ ավելի ցայտուն կերպով՝ IX դարում, ֆեոդալական տոհմի յուրաքանչյուր իշխանական ընտանիք առանձնանում է, վերցնում իր բաժին կալվածքը և այն տնօրինում ինքնուրույնաբար։ Այլ կերպ ասած՝ նախկին սեպուհներն արդեն հանդես էին գալիս որպես ինքնուրույն ֆեոդալներ և կոչվում էին ոչ թե սեպուհ, այլ գահակալ իշխան։

Նախկին տանուտերը կամ նախարարը այլևս գահակալ իշխանների կալվածքների տերերը չէին և չէին կարող տնօրինել այդ կալվածքները։ Այժմ նրանք կոչվում էին ոչ թե տանուտեր, նահապետ կամ նախարար, այլ՝ գահերեց իշխան։ Հիշյալ փոփոխության կարևոր պատճառներից մեկն այն էր, որ ֆեոդալներն սկսել էին կազմակերպել իրենց սեփական տնտեսությունը։ Հետևաբար, անհրաժեշտ էր, որ տնտեսատիրոջ լիակատար սեփականությունը դառնային ոչ միայն նրա տնտեսությունից ստացվող արդյունքները, այլև մշակվող հողերն ու կալվածքները։

Գահերեց և գահակալ իշխաններն իրենց կալվածքների զգալի, թերևս մեծագույն, մասը տիրում էին որպես սեփականատերեր կամ, ինչպես պատմագիտական գրականության մեջ ընդունված է ասել, dominium dirrectum։ Այդ կարգի կալվածքը մեր մատենագրության մեջ անվանվել է ճայրենիք, որը համապատասխանում է Ռուսաստանում եղած вотчина-ին։ Գահերեց և գահակալ իշխանները իրենց տրամադրության տակ ունեին նաև պայմանական տիրույթ հանդիսացող հողեր կամ, այլ կերպ ասած, dominium utile։ Այս կարգի կալվածքները անվանվել են զարգևական, արքայական, որոնք համապատասխանում էին եվրոպական feod-ին և beneficium-ին։ Այդ կարգի կալվածքները առանց նրա պարգևողի համաձայնության՝ պարգև ստացողը ուրիշին նվիրելու կամ վաճառելու իրավունք չուներ։

Պատմագիտական գրականության մեջ կարծիք կա՝ թե ֆեոդալների տրամադրության տակ եղած բոլոր կալվածքների գերագույն սեփականատիրական իրավունքը պատկանել է թագավորին։ Սակայն կան բազմաթիվ փաստեր, որոնք ժխտում են այդ կարծիքը և հաստատում, որ թե՛ գահերեց և թե՛ գահակալ իշխանները հանդիսացել են իրենց կալվածքների բացարձակ սեփականատերերը։ Օրինակ, կա փաստ, որ նույնիսկ թագավորը ֆեոդալից կալվածք է գնել։

Ֆեոդալական հողատիրության ձևերից մեկն էլ մանր ազնվականների տիրակալությունն էր, նրանց հանձնված կալվածքների վրա։ Մանր ազնվականները, այսինքն՝ ազատները, իրենց զինվորական ծառայության համար կալվածքներ էին ստանում խոշոր ֆեոդալներից՝ թագավորից, գահերեց և գահակալ իշխաններից, պայմանական կարգով տիրում էին այդ կալվածքներին, քանի դեռ ծառայում էին կալվածք տվող ֆեոդալի մոտ։ Սյունիքում և նրան հարևան շրջաններում մանր ազնվականները կոչվում էին խոստակղար, իսկ նրանց ստացած կալվածքները՝ խոստակ։ Ազատները կամ խոստակգարները իրենց տրված կալվածքները առանց իրենց իշխանի թույլտվության վաճառելու կամ ուրիշին նվիրելու իրավունք չունեին։ Ֆեոդալական հողատիրության ձևերից մեկը եկեղեցական կամ վանքապատկան կալվածքն էր, որը կրոնական հաստատության լիակատար սեփականությունն էր։

Ֆեոդալական հիերարխիան

Բագրատունիների օրոք հողատիրության ձևերին համապատասխանում էր նաև ֆեոդալական աստիճանականությունը (հիերարխիան)։ Այդ աստիճանականության բարձրագույն ոլորտը արքունիքն էր թագավորի գլխավորությամբ։ Թագավորից հետո երկրորդ աստիճանը կազմում էին գահերեց իշխանները, որոնք նշանակվում էին թագավորի կողմից։ Նրանք թագավորին հարկ վճարելու և պատերազմի ժամանակ զորք տալու պարտավորություն ունեին։

Ֆեոդալական աստիճանականության երրորդ սանդուղքը կազմում էին գահակալ իշխանները։ Սրանք ենթակա էին գահերեց իշխաններին և նույնպես պարտավոր էին վերջիններին հարկ վճարել և զորք տալ։ Գահակալ իշխանների վասալական կախվածությունը գահերեց իշխաններից տնտեսական հիմք չուներ, քանի որ սրանք գահակալ իշխանների կալվածքների նկատմամբ որևէ իրավունք չունեին։ Թագավորի հանդեպ թե՛ գահերեց և թե՛ գահակալ իշխանների պարտավորություններից մեկն էլ արքունիքում գործակալության պաշտոն վարելն էր։

Ֆեոդալական աստիճանականության վերջին սանդուղքում էին գտնվում մանր ազնվականները, այսինքն՝ ազատները կամ այլ խերպ ասած՝ խոստակղարները։ Սրանք այն ֆեոդալների վասալներն էին, որոնցից կալվածք էին ստանում և որոնց մոտ ծառայում էին որպես զինվորականներ։ Սենյորներից նրանց վասալական կախվածությունը և՛ տնտեսական, և՛ քաղաքական բնույթ ուներ։ Ֆեոդալական աստիճանականության մեջ մտնող

վերոհիշյալ դասերը, հողնորականության հետ միասին, կազմում էին տիրապետող և շահագործող դասակարգը, որին հակադրվում էին բնակչության մնացած խավերը՝ գյուղացիությունը, արհեստավորությունը և քաղաքային բնակչության իրավազուրկ և հարկատու խավերը։

Գյուղացիների կախվածությունը և գյուղական համայնքը

Այդ շրջանում որոշակի փոփոխություններ են կրում նաև գյուղացիների և ֆեոդալների փոխհարաբերությունները։ Ֆեոդալները զանազան ճանապարհներով տիրանում են դեռևս անցյալից եկող ազատ գյուղական համայնքների հողերին և համայնքի գյուղացիներին կախման մեջ դնում իրենցից. օրինակ, այդպես է վարվել Տաթևի վանքը Սյունիքի Ցուր, Տամալեկք և Ավելաղաշտ գյուղերի համայնական գյուղացիների հետ։

Ֆեոդալներից տնտեսական կախման մեջ գտնվող կախյալ գյուղացիները աստիճանաբար ամրացվում էին հողին, զրկվում տեղից-տեղ փոխադրվելու ազատությունից և անձնապես կախման մեջ ընկնում ֆեոդալներից։ Այսպիսով, IX—X դարերից սկսած տեղի էր ունենում գյուղացիների մի մասի ճորտացում, որի հետևանքով Բագրատունիների օրոք, բացի ազատ և կախյալ գյուղացիներից, առաջանում էր նաև ճորտ գյուղացիների խավը։

Ճորտ և կախյալ գյուղացիները, զրկված լինելով հողից, ստիպված էին ֆեոդալից հող վերցնել և մշակել՝ այն պայմանով, որ կա՛մ իրենց ստացած եկամտի մի մասը տային հողատիրոջը, կա՛մ շաբաթվա մեջ մի քանի օր ձրի աշխատեին նրա համար։ Հիշյալ դարերում դեռևս իր գոյությունը պահպանում էր նաև ազատ գյուղացիների խավը։ Այդպիսի գյուղացիները իրենց մշակելիք հողերի տերերն էին և վճարում էին միայն պետական հարկեր։

Գյուղացիների բոլոր խավերը, բացի այն, որ իրենց իրավական կեցությամբ տարբեր խմբերի էին բաժանված, ունեցվածքային կարողությամբ նույնպես բաժանվում էին զանազան խավերի։ Հայկական մատենագրության մեջ հիշատակվում է հետևյալ երեք խավը. առաջին՝ թվանիկներ, որոնք իրենց տնտեսական կարողությամբ ավելի ունևոր են եղել, երկրորդ՝ տառապյալ գյուղացիներ, որոնք կազմել են գյուղացիության միջին շերտը և իրենց տնտեսական դրությամբ շատ էլ բարվոք վիճակում չեն եղել, և երրորդ՝ վար ու ցանքի ենթարկություն չունեցող գյուղացիներ, այսինքն՝ աղքատ գյուղացիներ։

Գյուղացիները միավորվում էին տերիտորիալ համայնքնե-

ռում։ Գյուղական համայնքը կազմված էր այն ծխերից, այսինքն՝ ընտանիքներից, որոնք ապրում էին միևնույն գյուղում։ Համայնքը կամ գյուղը իր տրամադրության տակ ուներ հողային որոշակի տարածություն ընդհանուր օգտագործման համար՝ արոտավայրեր, անտառներ և համայնքի անդամների անձնական օգտագործման համար վարելահող, այգի, խոտհարք և այլն։ Հնագույն ժամանակներից եղած սովորույթի համաձայն համայնքների ներսում կատարվում էին հողաբաժանություն ըստ ծխերի, հաշվի առնելով նաև շնչերի թիվը։ Բաժանվում էին միայն մշակելի հողերը։ Սակայն այս դեպքում նույնպես թույլ էին տրվում բացառություններ։ Օրինակ, վերաբաժանման ենթակա չէին այգիները, պարտեզները և այն վարելահողերը, որոնք մշակելի դարձնելու համար գյուղացին երկարատև և ծանր աշխատանք էր կատարել։ Այդպիսի հողերը մնում էին նախկին օգտագործողին՝ որպես իրեն հասանելիք բաժնի մի մասը։ Համայնքի ներսում հողաբաժանության առկայությունը վկայությունն է այն բանի, որ գյուղի հողերի տիրակալը, եթե հողը ստացվում էր ֆեոդալից, կամ սեփականատերը, եթե հողը չէր պատկանում ֆեոդալին, գյուղական համայնքն էր։ Ազատ գյուղացու սեփականատիրական իրավունքը իր մշակելի հողերի նկատմամբ դրսևորվում էր համայնքի սեփականատիրական իրավունքի միջոցով։

Գյուղական համայնքն ունեցել է իր ավագը, որը հասարակական հավաքներում ներկայացնում էր համայնքը։ Նա կարգավորում էր համայնքի ներքին գործերը՝ հողաբաժանությունը, արոտավայրերից, անտառներից, ջրից օգտվելու կարգը, հարկերի, տուրքերի և այլ պարտավորությունների բաշխումն ըստ համայնքի ծխերի, հսկում էր այդ պարտավորությունների կատարմանը, լուծում ծխերի միջև ծագած մանր վեճերը և այլն։ Տարբեր տեղերում ավագները տարբեր անուններով էին կոչվում, օրինակ՝ գլխավոր գեղջ՚ն, գնդչավագ, ավագ շենին, դասապետ՚ շինականաց, բռայիս, տանուտեր։

Գյուղական համայնքի պահպանումը ցանկալի էր թե՛ իշխող դասակարգին, որովհետև հեշտացնում էր հարկերի, տուրքերի հավաքումը և այլ պարտավորությունների կատարումը, թե՛ գյուղացիներին, քանի որ նրանց պաշտպանում էր ֆեոդալների կամայականություններից։

Գյուղացիության շահագործման եղանակը, հարկերն ու տուրքերը

Գյուղացիության տարբեր խավեր տարբեր ձևով և տարբեր չափով էին շահագործման ենթարկվում։ Կախյալ և ճորտ գյուղացիները հարկեր ու տուրքեր էին վճարում թե՛ պետությանը, թե՛ ֆեոդալներին, իսկ ազատ գյուղացիները՝ միայն պետությանը։

Պետությանը վճարվող հարկը կոչվում էր բեկաբ և կազմում էր հողից ստացած տարեկան եկամտի մեկ տասներորդը։ Այս հարկը գերազանցապես բնամթերքով էր հավաքվում, բայց չէր բացառվում նաև դրամական ձևով գանձումը։ Այն վայրերում, որտեղ պետությունը (տվյալ դեպքում Բագրատունի թագավորները) հանդես էր գալիս որպես ֆեոդալ, գյուղացիները թագավորին վճարում էին, բացի վերոհիշյալ հողային հարկից, նաև մի այլ տուրք՝ հողային ռենտա, որը կոչվում էր շարիատ և կազմում տարեկան բերքի մեկ տասներորդը՝ անջրդի հողերից, և մեկ հինգերորդը՝ ջրարբի հողերից։

Պետությանը տրվում էր նաև անասնահարկ՝ յուրաքանչյուր տասը մանր եղջերավոր անասունից մեկը, և յուրաքանչյուր կովի համար՝ որոշ քանակի յուղ։ Բացի վերոհիշյալ հարկերից, գյուղացին պետությանը վճարում էր դրամական մի հարկ ևս, որը կոչվում էր նեպակ, և կատարում էր ձրի պարտադիր աշխատանք՝ պարհակություն։

Կախյալ և ճորտ գյուղացիները ֆեոդալներին վճարում էին բազմատեսակ տուրքեր և նրանց համար կատարում տարբեր պարտավորություններ։ Հիմնական տուրքը եղել է շարիատը, որը գանձվում էր նույն չափով, ինչ չափով վճարում էին թագավորին ենթակա գյուղացիները։ Այնուհետև, վճարում էին անասնահարկ՝ տասը անասունից մեկը, յուրաքանչյուր կովից՝ տարեկան մեկ լիտր յուղ, հատուկ տուրք այգիներից և բարձրարժեք մշակույթներից, օրինակ՝ բամբակից։ Այդ տուրքը կոչվում էր խալա ու կազմում բերքի մեկ հինգերորդը։ Ապա առանձին տուրք էին վճարում նաև ֆեոդալի գործակալին, որ կազմում էր շարիատի մեկ քառորդը և անվանվում քաստակ։ Այդ բոլորից բացի գյուղացիները կատարում էին այլևայլ պարտավորություններ ևս։

Գյուղացիների շահագործման մեջ եկեղեցին էլ իր բաժինն ուներ։ Նախ՝ վանքերը նույնպես հանդիսանում էին խոշոր ֆեոդալներ և իրենց կալվածքներում ապրող գյուղացիներից հավաքում էին այն բոլոր տուրքերը, որ տրվում էին աշխարհիկ ֆեոդալներին։ Այնուհետև, սահմանվում էր եկեղեցական հատուկ

տուրք, որ կոչվում էր տասանորդ։ Այս վերջինը թեև համարվում էր նվիրատվություն, բայց հավաքվում էր սիստեմատիկաբար և ուներ պարտադիր բնույթ։

Նախորդ շրջանի հետ համեմատած IX—XI դարերում գյուղացիների շահագործման ձևի մեջ որոշ փոփոխություն էր տեղի ունեցել։ Մինչև IX դարը ֆեոդալներին վճարվող տուրքերը դանձվում էին բնամթերքով։ IX դարից սկսած այդ ձևի կողքին հանդես է գալիս և լայն տարածում ստանում նաև կորը, այսինքն՝ աշխատանքով վճարելու ձևը։ Դա հետևանք էր ֆեոդալների կողմից սեփական տնտեսություն, այսինքն՝ ագարակներ կազմակերպելու, որի ամբողջ եկամուտը պատկանում էր ֆեոդալին։ Սրանք հողի զգալի մասը պահում էին իրենց տրամադրության տակ, գյուղացիներին ստիպում շաբաթվա որոշ օրեր աշխատել իրենց ագարակներում։ Հենց այդ հանգամանքը նպաստել է, որ գյուղացիները հողին ամրացվեն և ճորտացվեն։

Բացի վերոհիշյալ ձևերից, X դարում արդեն հանդես է գալիս նաև դրամով վճարվող հողային ռենտան։ Գյուղացիության շահագործման ձևերից ամենից շատ տարածվածը հողային ռենտայի բնամթերքով վճարելն էր, քանի որ այդ ձևը մյուսների համեմատությամբ ավելի էր համապատասխանում Հայաստանում այդ ժամանակ գոյություն ունեցող արտադրողական ուժերի զարգացման աստիճանին։

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հողամշակության եղանակը և ոռոգումը

Արաբական խալիֆայության կեղեքիչ քաղաքականությունը և նրա զորքերի հաճախակի ասպատակությունները ծանր հարված էին հասցրել Հայաստանի գյուղատնտեսությանը։ Սակայն IX—XI դդ. հաստատված խաղաղությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց նրա զարգացման համար։

Գյուղատնտեսության մեջ այդ ժամանակաշրջանում կատարված կարևոր փոփոխություններից մեկը հողամշակության եռադաշտային եղանակի մասսայական կիրառումն էր։ Այն հնարավորություն էր տալիս գյուղացու հողերի մի մասը երեք տարին մեկ հանգիստ թողնելու՝ ուժասպառ եղած հողի բերքատվությունը վերականգնելու համար։ Հողամշակության մեջ ավելի հաճախ էր կիրառվում հողը գոմաղբով պարարտացնելը։

Կարևոր իրադարձություն էր նաև երկաթե խոփով գութանի ասպարեզ դալը։ Այն հողը հերկելու համար ավելի հարմար և օգտավետ գործիք էր, քան արորը։ Երկաթե խոփն ու մյուս գործիքները հնարավոր էին դարձնում ավելի հեշտ և լավ մշակել հողն ու բարձրացնել նրա բերքատվությունը։

Գյուղատնտեսության զարգացման անհրաժեշտ պայմաններից մեկն էլ ոռոգման ցանցի ընդարձակումն էր։ Սյունիքում անցկացված ջրանցքները ոռոգել են ընդարձակ տարածություններ, որտեղ հաջողությամբ մշակում էին մրգերի ու պտուղների ամենարազմազան տեսակներ և, ինչպես Ստեփանոս Օրբելյանն է վկայում, «առատապար ու փշալից վայրը վարդուտ և տնկալից» էր դարձվում։

Վասպուրականում Վարազա լեռնալանջով ջրանցք են կառուցել դեպի դաշտային վայրերը։ Ջրատար առուներ անց են կացվել նաև Ոստան քաղաքի շրջակայքում և, Թովմա Արծրունու վկայությամբ՝ «շատ վայելուչ կերպով» զարգարել են «ծառովք պտղաբերովք սաղարթեալ և արգևետ բազմութեամբ»։ Ջրանցքներ են կառուցվել նաև Շիրակում և Արարատյան դաշտում, որոնց մեջ նշանավորը Սմբատ II-ին (977—990) վերագրված Անիի ջրանցքն էր, որով ջուր էր մատակարարվում և՛ քաղաքին, և՛ նրա շրջակայքի այգիներին։

Հողամշակության եռադաշտային սիստեմի և երկաթյա գործիքների օգտագործման հետ միասին ջրանցքները խոշոր չափով նպաստում էին գյուղատնտեսության զարգացմանը և արժեքավոր կուլտուրաների մշակմանը։

Գյուղատնտեսական մշակույթները և անասնապահությունը

Գրավոր աղբյուրները և նյութական կուլտուրայի մնացորդները վկայում են, որ Հայաստանում առաջներում, առավելապես IX—XI դդ. ավելի մեծ չափով մշակվում էին հացաբույսերի, մրգատու ծառերի, թելատու բույսերի և այլ կուլտուրաների շատ տեսակներ։

Հացաբույսերից լայն տարածում ունեին ցորենը, գարին, տարեկանը և կորեկը։ Դաշտային վայրերում, հատկապես տաք կլիմա ունեցող շրջաններում, մշակվում էր նաև բրինձ։ Ծառապտուղներից հայտնի էին տանձը, նուռը, ծիրանը, դեղձը, սալորը, խնձորը, ընկույզը, նուշը, թութը և այլն։ Հայտնի է, որ Արարատյան դաշտում, Սյունիքի հարավային մասերում, Բագրևանդում, Վանա լճի մերձափնյա վայրերում, Արծանիի հովտում և Հայաստանի հարավային այլ շրջաններում լայն տարածում է

ունեցել խաղողի մշակությունը։ Կան վկայություններ կանեփի, վուշի և բամբակի մշակության մասին։

Հիշյալ դարերում Հայաստանում գյուղատնտեսության մեջ նորություն էր բանջարանոցային կուլտուրաների մշակումը։ Բացի զանազան տեսակի բանջարեղեններից, որոնք դեռևս վաղուց կարող էին ծանոթ լինել հայերին, սկսած X—XI դդ. բանջարանոցային տարածված կուլտուրաներից էին լոբին, վարունդը, կաղամբը, գազարը, ձմերուկը և այլն։

Երկրի լեռնային մասերի ընդարձակ արոտավայրերը հնարավորություն են ընձեռել բնակչությանը պահելու և բազմացնելու մեծ քանակությամբ մանր և խոշոր եղջերավոր անասուններ։

Անասնապահությունը կազմում էր ֆեոդալական տնտեսության մի մասը։ Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ Աշոտ I-ը կաթողիկոսին տալիս էր «ձիերի երամակներ, տավարի նախիրներ և ոչխարի հոտեր»։ Մեծ քանակությամբ անասուններ էին բուծվում հատկապես Գուգարքի, Արցախի, Վասպուրականի և Սյունիքի ֆեոդալներին պատկանող տնտեսություններում։ Անասնապահությունը բավականին տարածված էր նաև գյուղացու տնտեսության մեջ։

Անասնապահության զարգացման մասին է վկայում Դրասխանակերտցու այն պատկերավոր արտահայտությունը, թե «... ցնծություն ապրեցին լեռները, որովհետև բազմացան նրանցում արջառների նախիրները և ոչխարների հոտերը»։

3. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Արհեստագործության նպաստող պայմանները

Հայաստանում արհեստագործությանը նպաստեցին արտադրողական ուժերի ընդհանուր վերելքը և տեղական հումքի առկայությունը։ Հայաստանը հնուց հայտնի է եղել իր մետաղահանքերով, որոնց շահագործումը Բագրատունիների օրոք ավելի լայն չափեր է ընդունել և հումքով ապահովել մետաղամշակման արհեստանոցներին։

Անասնապահության զարգացումը և թելատու բույսերի մշակումը խոշոր չափով նպաստել են մանածագործությանը, իսկ երկրում եղած լավորակ կավը՝ կավագործության զարգացմանը։ Հումքով ապահովված էին նաև կաշեգործությունը, փայտամշակությունը և մի շարք այլ արհեստներ։

Արհեստագործության զարգացման համար առավել դրական

դեր էին խաղում ներքին շուկայական հարաբերությունների ընդարձակումը և արտաքին առևտրի աշխուժացումը։ Գյուղատնտեսության վերելքի հետևանքով աճում էր գյուղատնտեսական գործիքների պահանջը։ Աճում էր բնակչության պահանջմունքը նաև կենցաղային անհրաժեշտ առարկաների նկատմամբ, իսկ այդ ամենը խթանում էր արհեստագործության զարգացումը։

Արհեստների անջատումը գյուղատնտեսությունից

Սկսած IX դ. գործիքների մեծ մասը պատրաստվում էր երկաթից, որն ավելի դժվար կգելի ու կոփելի էր։ Արհեստավորը ստիպված էր ավելի շատ աշխատանք և ժամանակ ծախսել այդպիսի գործիքներ պատրաստելու համար, իսկ դա հարկադրում էր նրան թողնել մյուս զբաղմունքները և նվիրվել միայն արհեստին։ Այնուհետև, մի կողմից, հումքի հայթայթման և արտադրած առարկաների վաճառքի դժվարությունները գյուղում, արհեստների մասնագիտացումն ու նրանց կապն ու կախվածությունը իրարից, մյուս կողմից՝ ֆեոդալների կամայականություններից ազատվելու ձգտումը ստիպում էին արհեստավորին հեռանալ գյուղից և բնակություն հաստատել քաղաքներում։

Այսպիսով, Հայաստանում X—XI դդ. արհեստները անջատվում են գյուղատնտեսությունից և կենտրոնանում քաղաքներում, որովհետև քաղաքը հեշտացնում էր հումքի ձեռքբերումը և արտադրանքի համեմատաբար արագ վաճառքը։ Այժմ արհեստավորը սկսում է ավելի շատ արտադրել առանց երկյուղ կրելու, որ իր արտադրանքը երկար ժամանակ կմնա արհեստանոցում։ Առաջներում արհեստավորի արտադրանքը շատ նեղ բնույթ ուներ։ Արհեստավորը մեծ մասամբ որևէ իր պատրաստում էր միայն այն դեպքում, երբ նրա մոտ գալիս էր անմիջական սպառողը և հանձնարարում պատրաստել այդ իրը։

Դրությունը փոխվեց, երբ արհեստագործությունը անջատվեց գյուղատնտեսությունից և կենտրոնացավ քաղաքներում։ Այդ բանի հետևանքով գյուղացին իր տնտեսության մեջ օգտագործած գործիքների զգալի մասը, իսկ երբեմն էլ բոլորը, ստիպված էր ձեռք բերել քաղաքում՝ գերազանցապես շուկաներում ու տոնավաճառներում։ Այդպիսին էր ոչ միայն գյուղատնտեսական գործիքների, այլև արհեստագործական արտադրանքի մյուս բոլոր տեսակների արտադրության ու վաճառքի վիճակը։ Այսպիսի պայմաններում արհեստավորը սկսում էր արտադրել մասսայաբար և կայուն ձև տալ իր արտադրած առարկաների առանձին տեսակնե-

ին։ Անիում, Դվինում և այլ վայրերում հայտնաբերված X—XI դդ. վերաբերող նույնանման իրերը ցույց են տալիս, որ դրանք մեծ մասամբ արտադրվել են մասսայաբար՝ ձուլելու կամ կաղապարելու միջոցով։

Արհեստների մասնագիտացումը

Աշխատանքային գործիքների կատարելագործումը, մարդկանց բազմապիսի պահանջմունքները և արհեստավորական արտադրանքի պատրաստման բարդացումը ստիպում են արհեստավորներին մասնագիտանալ արտադրանքի ավելի նեղ բնագավառներում։ Առաջներում արհեստավորը որևէ իր, ասենք՝ կոշիկ պատրաստելու համար պետք է ձեռք բերեր մորթի, մշակեր այն, որպեսզի կաշի ստանար և ապա կոշիկ կարեր, իսկ այս ժամանակաշրջանում կոշկակարը այլևս կաշի մշակելու գործով չէր զբաղվում։ Նա կաշին ձեռք էր բերում պատրաստի վիճակում, որովհետև կաշի պատրաստելը դարձել էր առանձին արհեստավորի զբաղմունք։ Այդ նույն բանը տեղի ուներ նաև արհեստագործական մյուս մայր ճյուղերի ներսում։

Տարածված և խիստ ճյուղավորված արհեստներից էր մանածագործությունը։ Հայտնի էին ջուլհակությունը, դերձակությունը, բեհեզագործությունը, ասեղնագործությունը, մետաքսագործությունը և այլն։ IX—XI դդ. Հայաստանում արտադրվում էին բըրդյա, բամբակյա և մետաքսյա տարբեր տեսակի գործվածքներ, ինչպես, օրինակ, սփռոցներ, գոտիներ, գորգեր, վարագույրներ, մարիզի, բոզյուն, դիպակ ու «հայկական» կոչված գործվածքներ և մետաքսազարդ ոսկեկար զանազան տեսակի պատրաստի հագուստներ։

Բագրատունիների թագավորության շրջանում զարգանում և ժողովրդի տնտեսական կյանքում զգալի դեր էր խաղում մետաղագործությունը։ Այս բնագավառը նույնպես ընդգրկում էր մի շարք արհեստներ՝ դարբնություն, պղնձագործություն, զինագործություն, փականագործություն, ոսկերչություն և այլն։ Այդ արհեստների արտադրանքի զգալի մասը կազմում էին աշխատանքային գործիքները՝ բահ, բրիչ, խոփ, մանգաղ, ուրագ, կացին, զանազան չափի մուրճեր, սղոց։ Քիչ չէին նաև կենցաղային իրերը՝ տնային ամանեղեն, չահեր, կողպեքներ։

Զարգացման բարձր մակարդակի էր հասել կավագործությունը։ Բրուտները ևս մասնագիտացել էին արտադրանքի առանձին բնագավառներում, օրինակ՝ կային տնային գործածության հասարակ ամանեղեն պատրաստողներ և ճենապակյա, հախճապակյա,

յագուրապատված նուրբ առարկաներ պատրաստողներ։ Կավագործները պատրաստում էին նաև շինանյութեր՝ աղյուս, տանիքը ծածկելու կղմինդր։ Տարածված արհեստներից էին կաշեգործությունը, կոշկակարությունը, հյուսնությունը, քարակոփությունը, որմնադրությունը և արհեստագործական այլ ճյուղեր։

Արհեստագործության մեջ տեղի ունեցած հիշյալ փոփոխությունները, աշխատանքային գործիքների կատարելագործումը, ինչպես և տնտեսության մյուս ճյուղերի ընդհանուր վերելքն ու առևտրական հարաբերությունների խորացումը նախադրյալներ էին ստեղծում հենց նույն արհեստի մեջ աշխատանքի բաժանման և արտադրության կազմակերպման ավելի բարձր ձևի անցնելու համար։

Համքարությունների կազմակերպումը

IX—XI դդ. ընթացքում արհեստագործական արտադրանքի ընդարձակման ու մասսայական բնույթ ստանալու հետևանքով անհրաժեշտություն էր զգացվում ստեղծել նաև բազմամարդ արհեստանոցներ և արհեստավորական ընկերություններ։ Միայն վարպետը այլևս ի վիճակի չէր ստեղծելու հասարակության համար անհրաժեշտ քանակի արտադրանք։ Այդպիսի պայմաններում վարպետը օժանդակող մարդկանց կարիք էր զգում և իր արհեստանոցում աշխատանքի էր վերցնում նաև ենթավարպետների և աշակերտների, որն իր հերթին առաջ էր բերում խոշոր արհեստանոցների կազմակերպման անհրաժեշտություն։

Ստեղծված հանգամանքները սահմանում էին միևնույն արհեստով զբաղվող վարպետներին և վարպետացուներին միավորվել, որի հետևանքով Հայաստանի քաղաքներում առաջանում էին արհեստավորական ընկերություններ կամ եղբայրություններ, այլ կերպ ասած՝ համքարություններ։ Նրանց նպատակն էր՝ նախ թույլ չտալ իրենց քաղաքում կողմնակի մարդկանց զբաղվելու իրենց արհեստով և երկրորդ՝ կազմակերպել օգնություն իրենց արհեստակից ընկերներին անհաջողության կամ դժբախտ դեպքերում։ Այդ եղբայրությունները ունեին իրենց ներքին կարգ ու կանոնը, սովորությունները, որոնցով և ղեկավարվում էին։

Հայաստանում համքարությունների գոյության մասին եղած փաստերից մեկն էլ այն է, որ քաղաքների առանձին փողոցներում կամ փողոցի որոշակի հատվածում, ինչպես ցույց են տալիս Անիում կատարված պեղումները, գտնվում էին միևնույն արհեստով զբաղվող մարդկանց արհեստանոցները։ Նույնն են ապացուցում նաև այդ դարերի հայ մատենագիրների և վիմական արձանա-

գրությունների գործածած տերմինները՝ կոշկակարանոցի, գդակ-կարանոցի և արհեստանոցների նման այլ հավաքական վայրերի մասին։

4. ԱՌԵՎՏՈՒՐԸ

Ապրանքային արտադրության ընդլայնումը

Բագրատունիների օրոք երկրի տնտեսական կյանքի վերելքը զգալի չափով նպաստեց նաև առևտրի զարգացմանը։ Գյուղատնտեսությունից արհեստների անջատումից հետո գյուղացին ստիպված էր իր արտադրանքի մի մասը շուկա հանել, որպեսզի վաճառեր և ձեռք բերած վճարով իր տնտեսության համար անհրաժեշտ գործիքներ, հագուստ, կենցաղային զանազան իրեր գներ և վճարեր հարկերն ու տուրքերը, որոնց մի մասը գանձվում էր դրամով։

Արհեստավորն էլ իր արտադրանքն էր շուկա հանում վաճառելու՝ անհրաժեշտ հումք և ապրուստի միջոցներ ձեռք բերելու համար։ Քաղաքի և գյուղի միջև տեղի էր ունենում աշխույժ առևտուր, որի հետևանքով ապրանքայնացվում էր գյուղատնտեսական արտադրանքի մի մասը և արհեստագործական ամբողջ արտադրանքը։

Երկրի ներքին առևտրի զարգացման հետևանքով առաջանում էին մշտական շուկաներ և վաճառափոխոցներ Դվինում, Անիում, Կարսում, Մանազկերտում, Արծնում, Խլաթում, Նախիջևանում, Բաղեշում, Վանում։ Խոշոր քաղաքներում, հատկապես առևտրական ճանապարհների խաչմերուկներում, հաճախ կազմակերպվում էին տոնավաճառներ, ուր իրենց արտադրանքը վաճառքի էին հանում ոչ միայն Հայաստանի արհեստավորներն ու գյուղացիները, այլև ոտարերկրյա և հայ առևտրականները։ Ապրանքային արտադրության տեսակարար կշիռը երկրի տնտեսական կյանքում զգալի չափով բարձրանում էր։

Արտաքին առևտուրը

IX—XI դդ. ներքին առևտրին զուգընթաց աշխուժանում էր նաև արտաքին առևտուրը։ Աշոտ I-ի իշխանության տարիներից առևտրական ճանապարհները բացվեցին երթևեկող առևտրական քարավանների համար, իսկ Սմբատ I-ը 893 թվականին Բյուզանդական կայսրության հետ առևտրական պայմանագիր կնքեց, որի համաձայն Բյուզանդիայից դեպի Հայաստան և Հայաստանից Բյուզանդիա կարող էին ազատ կերպով երթևեկել բոլոր ազգու-

թյուններին պատկանող վաճառականները։ Առևտրական կապեր էին հաստատվել նաև Միջագետքի, Պարսկաստանի, Վրաստանի, Աղվանքի, Հյուսիսային Կովկասի և այլ երկրների հետ։

Սկսեցին գործել Հայաստանի վրայով անցնող առևտրական մի քանի ճանապարհներ։ Այդ ճանապարհներից մեկը Պարսկաստանի վրայով գալիս էր Թավրիզ, այնտեղից անցնում Խոյ, ուր բաժանվում էր երկու ճյուղի՝ մեկը գնում էր դեպի Նախիջևան, այնտեղից՝ Դվին, ապա Անի, Կարս, Կարին, Արծն և անցնում Տրապիզոն։ Մյուս ճյուղը Խոյից գնում էր Բերկրի, որտեղ բաժանվում էր երկու ուղղության. մեկը Վանա լճի հյուսիսային ափերով ձգվում էր դեպի Արճեշ, այնտեղից՝ Խլաթ, ապա Բաղեշ, իսկ մյուսը՝ Բերկրից դեպի Վան, Ոստան, այստեղից էլ՝ Բաղեշ։ Բաղեշից այդ ճանապարհը շարունակվում էր դեպի Արզն, Մայաֆարկին և Ամիդի վրայով անցնում Բաղդադ ու Միջերկրական ծովի ափերը։ Այս մայրուղուց մի ճանապարհ անջատվում էր և Խլաթի վրայով անցնում դեպի Մանազկերտ, այնտեղից էլ Կարինի վրայով միանում Տրապիզոնին։

Դվինից առևտրական մի ճանապարհ էլ Սևանա լճի հարավային ափերով գնում էր դեպի Աղվանից Պարտավ քաղաքը, այնտեղից դեպի Կասպից ծովի արևմտյան ափերը և ապա անցնում Հյուսիսային Կովկաս։ Մի այլ ճանապարհ Դվինից գնում էր Կողբ, այնտեղից Գուգարքի վրայով անցնում Թիֆլիս և Արևմտյան Վրաստանով ձգվում դեպի Սև ծովի ափերը։

Ներմուծվող և արտահանվող ապրանքները

Հայաստան էին ներմուծվում և այնտեղից **արտահանվում** բազմապիսի ապրանքներ։ Բյուզանդիայից, Պարսկաստանից և այլ երկրներից Հայաստան էին ներմուծվում մետաքս, թանկագին քարեր, զարդանկարներով ճենապակյա զանազան ամանեղեն, գենքի որոշ տեսակներ, պերճանքի առարկաներ, նուրբ մետաքսյա գործվածքներ և այլն։ Հայաստանից տարբեր երկրներ արտահանվում էին բամբակ, բրդե և մետաքսե գործվածքներ, ասեղնագործված գոտիներ, սփոցներ, վարագույրներ, գորգեր, զանազան տեսակի պատրաստի հագուստներ, բարձի երեսներ, պղնձյա ամանեղեն, ոսկե զարդեր, դեղորայք, ներկեր՝ հատկապես որդան կարմիրը, հանքային նյութեր՝ երկաթ, կապար, պղինձ, արծաթ, պղնձարջասպ, սնդիկ, մկնդեղ, աղ և այլն։ Հայաստանից արտահանվում էին նաև գյուղատնտեսական մթերքներ՝ հացահատիկ, ձկնեղեն, զանազան խմիչքներ, չորացրած

մրգեր, ինչպես և անասուններ (հատկապես ձիեր, ջորիներ), շինափայտ։

Առևտրական հարաբերությունների ընդլայնման և խորացման հետևանքով երկրի տնտեսական կյանքում փողի դերը բարձրացավ։ Այն դարձավ հարստություն կուտակելու և առևտրական գործառնության ու արտադրության կազմակերպման կարևորագույն միջոց։ Դրամական հարաբերությունները այն ժամանակ զարգացման մեծ հնարավորություններ էին տալիս նաև վաշխառությանը, որը դարձավ փողի, այլ կերպ ասած՝ կապիտալի կուտակման ձևերից մեկը։ Առանձին մարդկանց մոտ կուտակվում էր մեծ քանակությամբ դրամ և այլ ունեցվածք։ Մատթեոս Ուռհայեցին պատմում է, որ երբ սելջուկ-թուրքերը գրավեցին Արծն քաղաքը, այնքան ոսկի և արծաթ տարան, որ հաշվել հնարավոր չէր։ Միայն Արծն քաղաքի քորեպիսկոպոս Դավթուկի տնից հանեցին քառասուն ուղտի բեռ գանձ։ Դավթուկի նման մարդկանց, հատկապես առանձին վաճառականների և հոգևոր պետերի մոտ կուտակված հսկայական հարստության մի մասը փողն էր։ Նրանք այդ փողը շրջանառության մեջ էին դնում ոչ միայն առևտրի կամ վաշխառության, այլև արհեստագործության և գյուղատնտեսության ընդլայնման։

5. ՔԱՂԱՔՆԵՐԸ

Հին քաղաքների ընդարձակումն ու նորերի առաջացումը

Սկսած IX դ. երկրորդ կեսից աշխուժանում և մեծանում էին ոչ միայն դեռ մինչ այդ գոյություն ունեցող քաղաքները, այլև առաջանում էին նորերը, որտեղ աստիճանաբար կուտակվում էր բազմաքանակ բնակչություն։

Դվինը, որ արաբական տիրապետության ժամանակ վերածվել էր ռազմական կայանի, IX դ. վերջից նորից սկսում է վերելք ապրել։ IX—XI դդ. Դվինը արդեն դառնում է Հայաստանի հարուստ, վաճառաշահ, բազմահազար բնակչություն ունեցող արդյունագործական և առևտրական խոշոր կենտրոններից մեկը։ Նման զարգացում էին ապրում նաև Վանը, Մանազկերտը, Խլաթը, Կարինը, Բաղեշը, Մայաֆարկինը և Նախիջևանը։ Հին քաղաքների կողքին հիմնվում և զարգանում էին նորերը՝ որոնց թվում Անին, Կարսը, Արծնը, Արտանուջը, Բերկրին, Արճեշը, Ոստանը և այլն։

Անիի մասին, որպես բերդի, տեղեկություններ կան դեռևս V դարից։ Սակայն նա քաղաք է դառնում X դարում։ Նույն դարի կե-

ին Անին արդեն հիշատակվում է որպես Հայաստանի բարգավաճ քաղաքներից մեկը։

X դ. 60-ական թվականների սկզբին Աշոտ III-ը (953—977) արքունիքը Կարսից տեղափոխեց Անի և այն դարձրեց Հայաստանի մայրաքաղաքը։ Դրանից հետո Անին ավելի արագ սկսեց զարգանալ և դարձավ երկրի վարչական, կուլտուրական, արդյունագործական և առևտրական խոշորագույն կենտրոն, որին Արիստակես Լաստիվերցին «տիեզերահռչակ» անունն է տալիս։

Զարգացման նույնպիսի շրջան է անցել նաև Կարսը։ Սա նույնպես մինչև X դ. հայտնի է եղել որպես ամրոց։ Բագրատունի թագավոր Աբասի (928—953) օրոք Կարսը դարձավ արքայանիստ քաղաք, իսկ XI դարում, երբ այն Վանանդի թագավորության կենտրոնն էր, հիշատակվում է որպես Հայաստանի խոշոր քաղաքներից մեկը, որ, ինչպես Արիստակես Լաստիվերցին է ասում, հարստություն էր ամբարում ծովից ու ցամաքից։

Անիից և Կարսից ետ չի մնացել Արծնը, որը X դ. հիմնվել էր Կարսից Կարին տանող ճանապարհի վրա։ XI դ. կեսին Արծնը եղել է Հայաստանի հարուստ քաղաքներից և արտաքին առևտրի կարևորագույն կենտրոններից մեկը, որը նույնպես Լաստիվերցու ասելով, «լցվում էր ցամաքից և ծովից եկած հարստությամբ»։

Վերը հիշատակվածներից բացի, Հայաստանում հիմնադրվել են տասնյակից ավելի նոր քաղաքներ և համարյա նույնքան էլ հին քաղաքներ են եղել։ Ինչպես հին, այնպես էլ նոր քաղաքները այս ժամանակաշրջանում ֆեոդալական բերդ-ամրոցներից վեր էին ածվել արդյունագործական և առևտրական կենտրոնների, դարձել ֆեոդալական հարաբերությունների քայքայման պրոցես առաջացնող կարևոր օջակներից մեկը Հայաստանում։

Քաղաքների ներքին կառուցվածքը

Որպես ընդհանուր կանոն, քաղաքների մեծ մասը պարսպապատված էր և ուներ միջնաբերդ. այդպիսի քաղաքը կոչվում էր բերդաքաղաք։ Սակայն պարսպապատվածների կողքին կային անպարիսպ և միջնաբերդ չունեցող քաղաքներ՝ բաց քաղաքներ։

Ամրացված քաղաքները ունեին միջնաբերդ՝ շրջապատված առանձին պարսպով։ Միջնաբերդում էր գտնվում քաղաքի տիրոջ՝ իշխանի կամ կառավարչի դղյակը, իսկ եթե մայրաքաղաք էր՝ արքունիքը, միջնաբերդը պաշտպանող զորքի համար անհրաժեշտ շենքերը և այլ կառուցումներ։

Միջնաբերդից դուրս, որոշ քաղաքներում հենց միջնաբերդի

շուրջը, տարածվում էր բուն քաղաքը, որ կոչվում էր շահաստան կամ շահրիստան: Այստեղ կենտրոնացված էին ազնվականների և հարուստ առևտրականների պալատները, շուկաներն ու վաճառափողոցները, արհեստավորների գործատները, հասարակական սպասարկման համար անհրաժեշտ շենքերը՝ քարվանսարաներ, հյուրանոցներ և այլն: Շահաստանը ևս միջնաբերդի հետ միասին պարփակված էր արտաքին պարսպով և ապահովված անակրնկալ հարձակումներից:

Արտաքին պարսպից դուրս գտնվում էին քաղաքի արվարձանները, որոնք արևելքում կոչվում էին ռաբատ: Արվարձաններում բնակություն էին հաստատում համեմատաբար ավելի աղքատ արհեստավորները, սեզոնային զբաղվող և օրավարձով աշխատող մարդիկ: Այդպիսի քաղաքի օրինակ կարող է ծառայել Անին: Նրա շահաստանը ունեցել է երկարաձիգ փողոցներ իրենց խանութներով, արհեստանոցներով, շքեղ պալատներով, քարվանսարաներով ու հյուրանոցներով և եկեղեցիների հոյակապ շենքերով: Քաղաքի այդ մասը պարփակված է եղել կրկնակի պարիսպներով: Այդ պարիսպներից այն կողմ տարածվում էին Անիի արվարձանները: Նրանց մի մասը գտնվում էր գետնի տակ՝ Ախուրյան գետի ափին և քաղաքը եզերող ձորերի այրերում, որտեղ մարդիկ իրենց բնակելի տներն էին կառուցել, արհեստանոցներ հիմնել ու փողոցներ բացել: Այդ գետնահարկ արվարձաններում ապրում էին քաղաքի ամենաչքավոր խավերը:

Բոլորովին այլ կառուցվածք ունեին անպարիսպ կամ բաց քաղաքները: Նրանք միջնաբերդ և արտաքին պարիսպ չունեին: Հայաստանում այդօրինակ քաղաքներ էին Արծնը, Ոստանը, Արծկեն:

Քաղաքային բնակչությունը և քաղաքային ավագանին

X—XI դդ. Հայաստանի քաղաքները բազմամարդ էին: Արդյունաղործության և առևտրի զարգացումը քաղաքը դարձնում էր հրապուրիչ և աստիճանաբար հազարավոր մարդիկ գալիս էին բնակություն հաստատելու այնտեղ: Դրա հետևանքով, ինչպես Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ) է ասում՝ ագարակները ավան էին դառնում, իսկ ավանները քաղաքայնանում էին բազմամարդությամբ և ընչեղությամբ: Թովմա Արծրունու վկայությամբ, 893 թ. երկրաշարժի ժամանակ Դվինում զոհվել է 70 հազար մարդ: Մատթեոս Ուռհայեցու և բյուզանդական պատմագիր Կեդրենոսի տվյալներով, 1049 թ. սելջուկ-թուրքերը Արծն քաղաքում ոչնչացրել են 140—150 հազար մարդ: Այս թվե-

ը, թերևս, չափազանցված են բայց նրանք իրոք խոսում են այդ ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքների բազմամարդության մասին։ Պատմաբաններն ու հնագետները հաստատում են, որ Անին ունեցել է ոչ պակաս, քան 100 հազար բնակչություն։

Հայաստանի քաղաքների բնակչությունն իր սոցիալական կազմով խայտաբղետ էր։ Իրենց քանակական գերակշռությամբ առաջին տեղը բռնում էին արհեստավորներն ու սեպագրագիրները։ Զգալի թիվ էին կազմում նաև առևտրականները։ Այս երեք խավերը միասին հանդես էին գալիս որպես քաղաքային դաս և կազմում քաղաքային բնակչության հիմնական մասը։ Քաղաքներում բնակություն էին հաստատում նաև ազնվականներն ու հոգևորականները։

Երկրի տնտեսության մեջ և հատկապես քաղաքային կյանքում արհեստագործության ու առևտրի դերի բարձրացումը անխուսափելիորեն բարձրացնում էր քաղաքային դասի դերն ու տեղը հասարակական կյանքում և նրանց պայքարի հանում քաղաքների տեր հանդիսացող ֆեոդալների դեմ։ Այդ պայքարը մղվում էր քաղաքի ներքին կյանքի կառավարմանը մասնակցելու, ֆեոդալների կամայականությունները զսպելու և քաղաքային ինքնավարություն ստեղծելու համար։ Արդյունքը եղավ այն, որ մի շարք քաղաքներում ստեղծվեցին քաղաքային ինքնավար օրգաններ՝ քաղաքային խորհուրդներ կամ քաղաքային ավագանի։ Այդպիսի քաղաքային ինքնավարություն ունեին Անին, Կարսը, հավանաբար նաև ուրիշ քաղաքներ։

Արիստակես Լաստիվերցու վկայությամբ Անի քաղաքի գլխավորները, այսինքն՝ ավագները որոշում են Անի կանչել Դվինի էմիրին և թույլ չտալ, որ բյուզանդացիները տիրեն նրան։ Այդ ավագանու գոյության մասին վկայում է նաև Կիրակոս Գանձակեցին, որը պատմում է, թե ինչպես Անիի ավագանին չհամաձայնվեց քաղաքը մոնղոլներին հանձնել։

Ավագանին կամ քաղաքային ավագների խորհուրդը իր ձեռքում էր պահում քաղաքի ներքին կյանքի, ինչպես և համքարությունների և այլ ընկերությունների միջև եղած վեճերի կարգավորումը։ Նա միաժամանակ խոշոր դեր էր խաղում օտար նվաճողներից քաղաքը պաշտպանելու, մի տիրոջից մյուսին հանձնելու և թշնամու հետ բանակցություններ վարելու գործում։ Պետք է ենթադրել, որ ավագանին կազմված է եղել գերազանցապես քաղաքային դասի ներկայացուցիչներից։ Նա հանդիսացել է քաղաքային դասի օրգանը և գործել է քաղաքի իշխանին կամ կառա-

վարչին զուգահեռաբար, հաճախ կոնֆլիկտի մեջ մտնելով նրա հետ։

6. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Արքունիքը և գործակալությունները

Հայաստանում IX—XI դդ. իշխող և շահագործող դասակարգը ներկայացնում էին ազնվականները և հոգևորականները։ Երկրի ամբողջ իշխանությունը գտնվում էր նրանց ձեռքում։ Տիրող դասակարգը իր իշխանությունը իրականացնում էր թագավորի և նրա գլխավորած արքունիքի միջոցով։

Երկիրը կառավարելու համար արքունիքին կից գոյություն ունեին կառավարման կենտրոնական օրգաններ, որոնք կոչվում էին գործակալություններ։ Արքունիքում երբեմն գումարվում էին արքայական ատյաններ, որոնց նիստերին մասնակցում էին գահերից իշխանները և պետական բարձրաստիճան պաշտոնյաներն ու հոգևորականները։

Բագրատունի թագավորներն իրենց արքունիքում ստեղծել էին սպարապետության, մարզպանության, իշխանաց-իշխանի, դատավարության գործակալությունները։ Սպարապետության գործակալությունը իրագործում էր երկրի ռազմական ուժերի ընդհանուր ղեկավարումը և պատերազմի ժամանակ գլխավորում բանակը։ Այդ գործակալությունը սկզբում գտնվում էր Բագրատունիների ձեռքում, ապա անցավ Գեորգ իշխանի որդու՝ Գոռի, իսկ հետո Պահլավունիների ձեռքը։

Մարզպանության գործակալության պարտականությունների մեջ էր մտնում Հայաստանի և հարևան երկրների միջև եղած հարաբերությունների կարգավորումը. նա տնօրինում էր երկրի արտաքին հարաբերությունները։ Այդ գործակալությունը X դարի սկզբին գտնվում էր Արծրունիների ձեռքում։ Իշխանաց-իշխանը, որ մեծ մասամբ լինում էր Բագրատունիներից, կարգավորում էր ֆեոդալների միջև եղած վեճերը և գլխավորում իշխանների հավաքը։ Դատավարության գործակալությունը գտնվում էր կաթողիկոսության ձեռքին։

Արքունիքը գավառների և շրջանների կառավարումն իրականացնում էր իր պաշտոնյաների միջոցով, որոնք անվանվում էին գործակալներ կամ ձեռնավորներ։ Այդ պաշտոնյաները հենց այն իշխաններն էին, որոնք միաժամանակ տվյալ գավառի կամ շրջանի խոշորագույն ֆեոդալն էին։ Գործակալներն իրենց ձեռքի տակ

ունեին ստորադաս պաշտոնյաներ ևս, որոնց միջոցով հավաքում էին հարկերն ու տուրքերը և կարգավորում զանազան հարցեր։

Բանակը

Բագրատունիների թագավորության օրոք բանակի կազմակերպման անհրաժեշտությունը առավել կարևոր նշանակություն էր ստանում, որովհետև հայկական վերականգնված պետականությանը համարյա մշտապես սպառնում էին օտար զավթիչները։ Այդ պատճառով էլ Բագրատունի զահակալները հենց սկզբից ձեռնամուխ եղան երկրի ռազմական ուժերի կազմակերպմանը։ Արդեն Աշոտ I-ը իր վինված ուժերի թիվը հասցրել էր 40 հազարի, նրա որդին՝ Սմբատ I-ը՝ 60 հազարի, Աշոտ III-ը՝ 80 հազարի, իսկ Գագիկ I-ի օրոք (990—1020) զորքի թիվը հասավ 100 հազարի։ Խաղաղ ժամանակաշրջանում այդքան մեծ բանակ չէր պահվում, սակայն ավելի քիչ թվով մշտական բանակի գոյությունը անհրաժեշտ էր թե՛ անակնկալ հարձակումներից պաշտպանվելու և թե՛ ֆեոդալական շահագործման դեմ աշխատավորների ընդվզումները ճնշելու կամ միջֆեոդալական կռիվները սանձահարելու համար։

Մշտական բանակը կազմված էր դերազանցապես ազատների դասից։ Պատերազմի ժամանակ բանակը համալրվում էր նաև գյուղացիներից ու քաղաքային բնակչությունից, որոնք բանակում իրենց քանակով ավելի շատ էին, քան ազատները և իրենց ուսերի վրա էին տանում երկրի պաշտպանության ծանրությունը։

Հայկական բանակը բաժանված էր երկու մասի՝ արքունական և մարզպետական գնդերի։ Արքունական գունդը ամբողջությամբ և անմիջականորեն գտնվում էր թագավորի տրամադրության տակ, իսկ մարզպետական գունդը կազմված էր ֆեոդալներին ենթակա զորամասերից։ Գագիկ I-ի ժամանակ արքունական գունդը ունեցել է 55 հազար, իսկ մարզպետական գունդը՝ 45 հազար զինվոր։

Բանակը կազմված էր տարբեր տեսակի զորամասերից, որոնց մեջ առաջնակարգ դեր էին խաղում հեծելազորը և հետևակը. նրանց զենքերն էին՝ սուսերը, նիզակը և նետն ու աղեղը, իսկ պաշտպանության միջոցները՝ զրահը, վահանը և սաղավարտը։ Հետևակն իր հերթին բաժանվում էր տարբեր տիպի զորաբաժինների՝ նիզակավորների, սուսերավորների, աղեղնավորների և սակրավորների։ Վերջին զորատեսակի գործածական զենքերն էին՝ սակրը, ճկիրը և տապարը, հիշատակվում է նաև վաղրը։

Դատական սիստեմը Դատարանը ամբողջովին գտնվում էր տիրող դասակարգի ձեռքին և հանդիսանում էր այդ դասակարգի շահերն ու իրավունքները պաշտպանող հաստատություն, որի ղեկավարումը հանձնված էր հոգևորականներին։ Յուրաքանչյուր շրջանում գոյություն ուներ դատարան՝ թեմի եպիսկոպոսի գլխավորությամբ։ Դատարանները դատական գործեր քննելիս լսում էին կողմերին և վկաներին։ Դատարանի վճռից դժգոհ կողմը իրավունք ուներ բողոքարկելու ավագ դատավորներին։ Այդ նշանակում է, որ, բացի թեմի եպիսկոպոսի գլխավորած դատարանից, գոյություն է ունեցել նաև ուրիշ դատարան, որն ավելի բարձր էր դասվում և իրավասու էր քննարկելու ստորադաս դատարանի որոշումը՝ այն բեկանելու կամ հաստատելու համար։

Իրենց ենթակա գյուղացիների նկատմամբ դատավորի դերում մեծ մասամբ հանդես էին գալիս նաև ֆեոդալները, որոնք դատում էին փոքր հանցագործությունները։ Պետական ծանր հանցագործությունները քննվում էին արքունիքում և այդ հանցագործությունների վերաբերյալ հանած վճիռների նկատմամբ վերջին խոսքը պատկանում էր թագավորին։ Դատավարությունների ժամանակ ղեկավարվում էին եկեղեցական ժողովների մշակած կանոններով ու երկրի սովորույթներով, որոնք սերնդե-սերունդ անցնելով՝ օրենքի ուժ էին ստացել։

ԳԼՈՒԽ XXI

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐՈՀՈՒՄԸ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՄԱՆՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հայաստանը X դարի երկրորդ քառորդում

X դարի առաջին քառորդի վերջերին արաբական զորքերին երկրից դուրս քշելուց հետո Բագրատունի առաջին գահակալներին չհաջողվեց ամբողջ երկիրը միավորել իրենց թագավորության ներքո։ Արծրունիները անջատեցին Վասպուրականը և այնտեղ Գագիկ Արծրունու գլխավորությամբ (908—937) հաստատեցին իրենց թագավորությունը։ Հետագայում Գագիկ Արծրունին Վասպուրականին միացրեց նաև Մոկսն ու Աղձնիքի մի մասը և Վանա լճի հյուսիս-արևելյան ափերին ընկած շրջանները։

Գագիկի և նրա որդու՝ Աշոտ-Դերենիկի (937—958) ժամանակ բարեկարգվում են Վան և Ոստան քաղաքները, Աղթամար կղզում կառուցվում է ամրոց-քաղաք, ինչպես և հայկական ճարտարապետության լավագույն կոթողներից մեկը՝ Աղթամարի եկեղեցին և արքայական դահիճը, անց են կացվում ջրանցքներ, բացվում են դպրոցներ, զարկ է տրվում գյուղատնտեսության, արհեստագործության ու առևտրի զարգացմանը։

Բագրատունիներին ենթակա հայկական նահանգներն ու դավառները ևս հիշյալ ժամանակաշրջանում ապրեցին տնտեսական և կուլտուրական վերելք։ Աշոտ II-ից հետո գահ բարձրացավ նրա եղբայր Աբասը (928—953)։ Նա Բագրատունիների արքունիքը Երազգավորսից տեղափոխեց Կարս և այն դարձրեց Հայաստանի նոր մայրաքաղաք։

Հայաստանի, Վրաստանի և Աղվանից աշխարհի ժողովուրդները միացյալ ջանքերով իրենց երկրների հյուսիսային սահման-

ներն ապահովեցին լեռնաբնակ ցեղերի հարձակումներից։ Ստեղծվեց համեմատաբար խաղաղ և ապահով գոյավիճակ։

961 թվականին Աշոտ III-ը արքունիքը Կարսից տեղափոխեց Անի, որն այդ ժամանակից սկսած դարձավ Հայաստանի մայրաքաղաքը։ Անին ընդարձակվեց, պարսպապատվեց, իսկ այնտեղ կառուցված պալատները, հյուրանոցները, քարվանսարաները, հիվանդանոցներն ու եկեղեցիները հանդիսացան հայկական ճարտարապետության գլուխ-գործոցներ։ Աշոտ III-ի թագավորության տարիներից Բյուզանդիան սկսեց նվաճողական քաղաքականություն վարել Հայաստանի նկատմամբ։ 969—970 թվականներին Բյուզանդական Չմշկիկ կայսրը արշավանք կազմակերպեց դեպի արևելք և մտավ Հայաստան։ Բյուզանդական զորքերին ընդառաջ ելավ հայկական 80 հազարանոց բանակը, որին մասնակցում էին նաև Վասպուրականի թագավորության և հայկական այլ իշխանությունների զորքերը։ Մատթեոս Ուռհայեցին հայերի այս ցույցը համարում է բարեկամական դիմավորում։ Սակայն անհավանական է, որ նվաճողական արշավանքի ելած և ամենոչ կերպով ուրիշի հողը մտած կայսրին բարեկամաբար դիմավորելու դնային, այն էլ 80 հազարանոց բանակով։ Չմշկիկ կայսրը խոհեմաբար օժանդակ զորագունդ խնդրեց հայերից և հեռացավ երկրի սահմաններից։

Վանանդի, Սյունիքի և Գուգարքի անջատումը

Աշոտ III-ը գործունյա և վճռական չդառնվեց կենտրոնախույս ֆեոդալական ներքին ուժերի հանդեպ։ Հայաստանի մի շարք շրջաններ ոմանք այնքան առաջադիմեցին, որ նրանց ֆեոդալների համար նյութական խոշոր միջոցներ կուտակելու, զինվորական բազմամարդ ջոկատներ պահելու և կենտրոնական իշխանության հանդեպ իրենց համար ինքնակամ գոյավիճակ ստեղծելու մեծ հնարավորություններ ստեղծվեցին։ Արքունիքը Կարսից Անի փոխադրելուց հետո, Աշոտի եղբայր Մուշեղը, որ վարում էր Հայոց սպարապետի պաշտոնը, 962 թ. հրաժարվեց ենթարկվել Աշոտ III-ին, Վանանդը անջատեց Աշոտի թագավորությունից, իրեն հայտարարեց թագավոր և Կարսը դարձրեց իր մայրաքաղաքը։ Մուշեղը կառավարեց իր թագավորությունը մինչև 984 թվականը, որից հետո գահն անցավ նրա որդի Աբասին (984—1029)։ Սա 45 տարի թագավորելով, մի շարք միջոցառումներ իրագործեց իր երկիրը բարեկարգելու համար։ Ասողիկը վկայում է, որ Աբասի վճռական միջոցառումների շնորհիվ վերջ տրվեց ավազակային խմբերին, երկիրը խաղաղվեց, ապահովվեց առև-

տրական քաղաքացիների անվտանգ երթևեկությունը, մարդկանց անձի և ունեցվածքի անվտանգությունը։

Մուշեղի օրինակին հետևեցին Սյունիքի իշխանները։ Սյունյաց գահերեց իշխան Սմբատը 973 թ. Սյունիքը անջատեց Բագրատունիների թագավորությունից, խորասանի արաբական էմիրից թագ ստացավ և իրեն հայտարարեց թագավոր (973—998)։

Սյունյաց թագավորությունը սկզբում իր սահմաններում ընդգրկում էր պատմական Սյունիքը, Արցախի հարավային գավառները և Սևանա լճի ավազանը, սակայն հետագայում՝ Սմբատի հաջորդ Վասակի (998—1040) և Սմբատ II-ի (1040—1044) թագավորության շրջանում այն սեղմվեց և ամփոփվեց Սյունիքի հարավային գավառներում. նրա կենտրոնը Կապան քաղաքն էր, որի պատճառով հաճախ Սյունյաց թագավորությունը անվանվել է Կապանի կամ Բաղաց թագավորություն։

Երկրի քաղաքական մասնատումը մանր ֆեոդալական իշխանությունների, որ ֆեոդալական տարրերի կենտրոնախույս ձգտումների հետևանք էր, խիստ կերպով թուլացրեց հայկական պետականությունը։ Բագրատունիների կենտրոնական իշխանությունը վերածվեց ձևական մի բանի, թեև այդ թագավորության գահին նստածները շահնշահ (արքայից-արքայի) տիտղոսով էին հորջորջվում։

Աշոտ III-ի հաջորդ Սմբատ II-ի թագավորության տարիներին (977—990), մի կողմից շարունակվում էր Հայաստանի քաղաքական մասնատումը, իսկ մյուս կողմից սկսեցին հաճախակի դառնալ միջֆեոդալական ընդհարումներն ու դրսի ուժերի ասպատակությունները։

987 և 988 թվականներին Ատրպատականի Ապրհաճ էմիրը արշավեց Հայաստան, ասպատակեց Վասպուրականը, Նախիջևանը, Արարատյան դաշտը և ոչնչացրեց Սմբատ II-ի թագավորությունը։ Վերջինս միայն մեծ փրկագնով կարողացավ վտանգը հեռացնել իրենից։

Այս դեպքերից մի փոքր առաջ Սմբատ II-ի դեմ ըմբոստացել էր նրա եղբայր Գուրգենը և ամրացել իրեն բաժին ընկած Լոռի գավառում։ Սմբատին չհաջողվեց եղբորը իրեն ենթարկել և Գուգարքը նույնպես անջատվեց Անիի թագավորությունից։

Գուրգենից հետո Գուգարքի իշխան է դառնում նրա որդի Դավիթը, որ պատմության մեջ հայտնի է Անհողին մականունով։ Նա 989 թվականին իրեն հայտարարեց թագավոր՝ հիմք դնելով հայկական հինգերորդ թագավորությանը, որը սկզբում կոչվում էր

Զորագետի կամ Լոռու, իսկ հետագայում նաև Կյուրիկյան թագավորություն։ Դավիթ Անհողինը (989—1050) իր թագավորության սկզբի տարիներին գրավեց և իր իշխանությանը ենթարկեց Շամշուլգե բերդը ու նրա շրջակա գավառները, ընդարձակեց թագավորությունը դեպի արևելք՝ սահմանակից դառնալով Գանձակի էմիրությանը։

Տայքի կյուրոպաղատությունը և էմիրությունները

Սմբատ II-ի թագավորության տարիներին Տայքում և Բասենում առաջացավ հայ-վրացական մի իշխանություն ևս՝ Դավիթ Կյուրոպաղատի գլխավորությամբ։ Բյուզանդիայում ծագած ներքին խռովությունների ընթացքում Դավիթ իշխանը պաշտպանեց Բարսեղ (Վասիլ) II կայսրին (976—1025) և ի վարձատրություն՝ կայսրից ստացավ կյուրոպաղատի կոչում և ճանաչվեց Տայոց աշխարհի ինքնակալ իշխան։ Տայքի կյուրոպաղատությունը իր իրավունքներով և պետական ֆունկցիաներով համազոր էր հայկական մյուս թագավորություններին և իր ռազմական կարողությամբ այդ թագավորություններից մի քանիսից ավելի հզոր էր։

X դարի վերջին տասնամյակում Դավիթ Կյուրոպաղատը իր իշխանությունն ընդարձակեց դեպի հարավ և հարավ-արևելք, տիրեց Բասենի դաշտին, Տուրուբերանի առանձին գավառներին և կայսրիների էմիրությունից խլեց Մանազկերտ քաղաքը։

Բացի հիշատակված հայկական թագավորություններից և Տայքի կյուրոպաղատությունից, Հայաստանի տարբեր գավառներում շարունակում էին իրենց գոյությունը պահպանել նախորդ դարերում առաջացած արաբական էմիրությունները, օրինակ՝ Դվինի, Բերկրիի, Մանազկերտ-Խլաթի և Աղձնիքի էմիրությունները։ Նրանք IX դ. երկրորդ կեսից սկսած այլևս անկախ կյանք չէին վարում և ենթարկվում էին այս կամ այն հայկական թագավորությանը։ Սակայն X դարի երկրորդ կեսին այդ էմիրություններից մի քանիսը փորձեցին ոտքի կանգնել և ինքնուրույն դառնալ։ Նրանք իրենց հերթին խորացրին և ուժեղացրին երկրի մասնատումն ու տրոհումը ֆեոդալական մանր իշխանությունների։

Գագիկ I-ը և երկրի միավորման փորձերը

Երկրի տնտեսական կյանքի զարգացումը և կուլտուրական կյանքի բարձր մակարդակը պահանջում էին մանր իշխանությունները միավորել մեկ միասնական պետության մեջ։ Այդ պահանջը դգալ էր տալիս իրեն թեկուզ հենց այն բանով, որ Հայաստանին սպառնացող արտաքին վտանգի դեպքում հայկա-

կան թագավորությունները անմիջապես համախմբվում էին Անիի Բագրատունիների թագավորության շուրջը և նույնիսկ ճանաչում նրա ավագությունը։

Երկրի քաղաքական միավորման փորձ կատարեց Գագիկ I-ը (990—1020), որ հաջորդեց իր եղբայր Սմբատ II-ին։

Նրա ժամանակ առանձին ուշադրություն դարձվեց Անիի թագավորության ռազմական ուժի կազմակերպման վրա։ Բանակի ղեկավարությունը հանձնվեց տաղանդավոր զորավար Վահրամ Պահլավունուն, իսկ զորքի ընդհանուր քանակը հասցվեց մինչև 100 հազարի։ Ռազմական ուժի հզորությունը հնարավորություն տվեց Անիի թագավորությանն ընդարձակել իր սահմանները, սանձահարել անջատողական ձգտումներ հանդես բերողներին և հաջողությամբ ետ շպրտել Հայաստանի վրա հարձակվող օտարերկրյա զավթիչներին։

Այսպես, 998 թ. Ատրպատականի էմիր Ապուհաբի որդի Մամլունը, պատճառ բռնելով Դավիթ Կյուրոպաղատի կողմից կայսրիկներին պատկանող Մանազկերտի գրավումը, բազմաքանակ զորքով հարձակվեց Հայաստանի վրա և առաջացավ մինչև Ապահունյաց գավառը։ Նրա դեմ դուրս եկան Գագիկ I-ի, Կարսի Աբաս թագավորի և հայկական այլ բանակներ՝ սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ։ Իրենց զորքերն ուղարկեցին նաև Տայքի Դավիթ Կյուրոպաղատն ու վրաց Գուրգեն թագավորը։ Ճակատամարտը տեղի ունեցավ Ապահունիքի Սմբատ գյուղի մոտերքում, որտեղ հայ-վրացական զորքերը ջախջախեցին թշնամուն և դուրս քշեցին երկրի սահմաններից։ Սանձահարվեց նաև Գանձակի Փատլուն էմիրը, որը ոտնձգություններ էր կատարում Դավիթ Անհողինի թագավորության դեմ։ Գագիկ I-ի օգնությամբ նրա զորքերն էլ ետ շպրտվեցին և հայկական հողերը մաքրվեցին օտար հափշտակիչներից։

1001 թվականին Գուգարքի թագավոր Դավիթ Անհողինը փորձեց չենթարկվել Գագիկ I-ին և չճանաչել նրա գերիշխանությունը։ Գագիկի զորքերը արշավեցին Գուգարք, գահընկեց արին Դավիթին և գրավեցին նրա հողերը։ Այդ պատճառով էլ նա անվանվեց Անհողին, այսինքն հող չունեցող։ Միայն դրանից հետո նա զղջաց, ներում խնդրեց և ետ ստացավ իր հողերը՝ ճանաչելով Գագիկի գերիշխանությունը։

Անիի թագավորության վերոհիշյալ միջոցառումների ու գործողությունների շնորհիվ Հայաստանը կվերամիավորվեր, եթե հետագայում արտաքին հանգամանքները չխանգարեին նրան։

2. ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Տարոնի և Հայաստանի արևմտյան գավառների զավթումը

Հայաստանի վերամիավորումն ու հայկական միացյալ ուժեղ պետության վերականգնումը Բյուզանդական կայսրության կողմից դիտվում էր որպես արդելակիչ ուժ իր դիտավորությունների իրագործման ճանապարհին։ Այդ իսկ պատճառով կայսրությունը ձգտում էր քայլ առ քայլ խորանալ դեպի Հայաստանի կենտրոնական գավառները և տարածել իր ազդեցությունը։

Բարսեղ II-ի օրոք կայսրությունը իր տիրապետությունը աստիճանաբար տարածեց Բարձր Հայքի մեծ մասի վրա և հափշտակեց Տարոնի արևմտյան և հարավային շրջանները, բայց ավելի բնորոշ է Տայքի և Մանազկերտի զավթումը։ Ինչպես Ասողիկն է վկայում, Դավիթ Կյուրոպաղատը խոր ծերության տարիքում էր ապրում, բայց զավակ չուներ։ Այդ պատճառ բռնելով, նա իր մահվանից առաջ՝ 1000 թվականին իրեն ենթակա ամբողջ հողերը կտակեց Բյուզանդական կայսրությանը։ Դա հայրենիքի յուրօրինակ վաճառք էր։ Մատթեոս Ուռհայեցու ասելով, Դավիթ Կյուրոպաղատի այդ արարքի դեմ ըմբոստացել են Տայքի իշխաններն ու ազատները և դրգել տեղի եպիսկոպոսին խեղդամահ անել Դավթին։ Պատմագրի այս վկայությունը միանգամայն հավանական է, որովհետև, ինչպես դեպքերն են ցույց տալիս, ժողովուրդը դեմ է եղել իր երկիրը Բյուզանդական կայսրությանը հանձնելուն։ Սակայն դրանով դրությունը չփոխվեց։ Բարսեղ II-ը, որ այդ ժամանակ գտնվում էր Կիլիկիայում, շտապեց Հայաստան գալ և տիրանալ կտակված հողերին։ Նա իր բանակով Հայաստանի արևմտյան գավառներով եկավ Հարբ և այնտեղից անցավ Տայք։ Զենքի ուժով հնազանդեցրեց բնակչությանը, գավառների կառավարիչներ նշանակեց իրեն հավատարիմ մարդկանց, իսկ այն իշխաններին ու ազատներին, որոնք դեմ էին երկիրը Բյուզանդիային հանձնելուն, տեղահան արեց և տարավ բնակեցրեց կայսրության մյուս մասերում։ Բարսեղ II-ին դիմավորելու համար Հայաստանի և Վրաստանի զրեթե բոլոր թագավորները եկան Տայք, կայսրը նրանց կոչումներ ու նշաններ տվեց։ Միայն Դագիկ I-ը նրան արհամարհեց և իր արժանապատվությունից ցած համարեց դիմավորել կայսրին։ Նա նույնիսկ պատժեց իր քրոջ որդուն՝ Աբուսահլ Արծրունուն, այն բանի համար, որ նա իր մասին չարախոսել էր կայսրին։

Վասպուրականի զավթումը

XI դարի առաջին քառորդում Բյուզանդական կայսրության ագրեսիայի զոհ դարձավ նաև Վասպուրականը՝ Արծրունիների թագավորությունը։ Աշոտ-Դերենիկից հետո Վասպուրականի թագավորության գլուխ անցավ նրա եղբայր Աբուսահլ-Համազասպը (958—968), իսկ Աբուսահլին հաջորդեցին նրա երեք որդիները, որոնք երկիրը բաժանեցին իրար մեջ և թագավորեցին բաժան-բաժան։ Սակայն եղբայրների մահից հետո Սենեքերիմը նորից վերամիավորեց Արծրունիների ամբողջ թագավորությունը իր գերիշխանության ներքո և 1003 թ. թագավորեց միայնակ։

Վասպուրականի թագավորությունում գյուղատնտեսությունը, արհեստագործությունը, ինչպես նաև առևտուրը բավական զարգացած են եղել, քաղաքները առաջադիմել և վերելք են ապրել։ XI դարի առաջին քառորդում այդ թագավորությունը ունեցել է ավելի քան 4000 գյուղ, 8 քաղաք, 72 բերդ-ամրոց և 115 վանք։ Տնտեսական և կուլտուրական տեսակետից զարգացած այդ նահանգը իր վրա էր դրավել Բյուզանդական կայսրության ուշադրությունը, մանավանդ, որ Վասպուրականին տիրողը կարևոր ստրատեգիական դիրք էր ձեռք բերում Միջագետքի վրա իշխելու համար։

XI դարի առաջին քառորդում Պարսկաստանի արևմտյան գավառների և Ատրպատականի էմիրություններն էին ներթափանցել սելջուկ-թուրքական զինված ջոկատները, որոնցից այդ ժամանակաշրջանում կազմվում էին արաբական իշխանությունների վարձկան բանակները։ Սելջուկ-թուրքական այդ ջոկատները ավար ձեռք բերելու համար հաճախ ասպատակում էին շրջակա երկրները, որոնց թվում և Վասպուրականը։

Սկզբում վասպուրականցիները բաշաբար դիմադրում և հակահարված էին տալիս սելջուկ-թուրքերին, բայց հարձակումներից ահաբեկված Վասպուրականի Սենեքերիմ թագավորը բանակցություններ մեջ մտավ կայսրության հետ և համաձայնվեց իր երկիրը, այսինքն Վասպուրականի թագավորությունը, հանձնել կայսրին և փոխարենը ստանալ Սեբաստիա քաղաքը՝ նրա շրջակա գավառներով։ Պատմագիրները Վասպուրականի թագավորության անկման մասին տարբեր թվականներ են նշում։ Մատթեոս Ուռհայեցին հիշատակում է 1016 թվականը, իսկ Սամվել Անեցին՝ 1021 թվականը։ Ավելի հավանական է, որ Վասպուրականի զավթումը տեղի է ունեցել 1021 թվականին, Դավիթ I-ի մահվանից հետո։

Վասպուրականի գրավումով Հայաստանի մեծագույն մասն ընկավ Բյուզանդական կայսրության գերիշխանության տակ, իսկ Անիի թագավորության ջանքերը՝ Հայաստանը մեկ ամբողջական միասնական պետության մեջ միավորելու ուղղությամբ չիրականացան։

3. ԱՆԻԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Գահակալական ընդհարումներ Անիի թագավորությունում

Գագիկի մահից հետո, որը տեղի ունեցավ 1020 թ., եղած կարգի համաձայն, գահն անցավ նրա ավագ որդուն՝ Հովհաննես-Սմբատին (1020—1041)։ Գագիկի կրտսեր որդին՝ Աշոտը եղբոր դեմ ըմբոստացավ և փորձեց տիրանալ գահին։ Երկու եղբայրների միջև կռիվ ծագեց։ Աշոտն իր դիրքերն ամրապնդելու համար նախ դիմեց հայկական մյուս թագավորների օգնությանը, բայց, նրանցից մերժում ստանալով, իր հույսը դրեց օտար պետությունների օժանդակության վրա։ Սակայն հայ իշխաններ Սահակ ու Վահրամ Պահլավունիները, Կարսի Աբաս թագավորը, վրաց ու աբխազաց թագավորները և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը միջամտեցին և նրանց միջև 1022 թ. հաշտություն կնքվեց, որի համաձայն Անի քաղաքն ու նրա շրջակայքը հանձնվեց Հովհաննես-Սմբատին, իսկ գավառները՝ նրա եղբորը՝ Աշոտ IV-ին (1022—1040)։ Պայմանագիրը միաժամանակ նախատեսում էր, որ Հովհաննես-Սմբատի մահից հետո Անին ևս անցնելու էր Աշոտին և նա ճանաչվելու էր որպես հայոց թագավոր։

Անիի թագավորությունը իրար մեջ բաժանելուց հետո էլ Աշոտ IV-ը չհրաժարվեց ամբողջ թագավորությանը տիրանալու մտադրությունից և իր նպատակին հասնելու համար նա դիմեց Բյուզանդական կայսրության օգնությանը։ Բարսեղ II-ը խրախուսեց Աշոտի գործունեությունը, սակայն վերջինիս, այնուամենայնիվ, չհաջողվեց խլել եղբոր գահը և առժամանակ հաշտվեց ստեղծված դրության հետ։

Անիի կտակումը Բյուզանդական կայսրությանը

Հովհաննես-Սմբատի և Աշոտի միջև ծագած վեճի միջոցին Տայքում բյուզանդական տիրապետության դեմ ապստամբություն էր բարձրացել։ Տայքի հայերն ու վրացիները ձգտում էին թոթափել օտարի լուծը։

Ապստամբությունը ճնշելու համար 1022—23 թթ. Բարսեղ II-ը

նորից արևելք եկավ, արյան մեջ խեղդեց Տայքի ապստամբությունը և ասպատակեց Աբխազիան ու Վրաստանի արևմտյան գավառները։ Նա միաժամանակ հայոց թագավորներից պահանջեց Կարսն ու Անին։ Իր անձը փրկելու համար Հովհաննես-Սմբատը դիմեց հայրենիքը վաճառելու ամոթալի միջոցին։ 1023 թ. նա մի կտակ գրեց, որով իր մահից հետո Հայաստանի մայրաքաղաք Անին և նրա շրջակայքը հանձնվելու էին Բյուզանդական կայսրությանը։ Այդ չարաբաստիկ կտակը Պետրոս Գետադարձի միջոցով ուղարկվեց Բարսեղ II-ին։ Կայսրը հաճույքով ընդունեց կտակը և առատորեն պարգևատրեց հայոց կաթողիկոսին։ Այդպիսով, թագավորն ու կաթողիկոսը վաճառեցին հայրենիքը օտարին, մեկը իր անձնական հանգստության և ապահովության, մյուսը՝ հարստություն դիզելու համար։

Վերոհիշյալ դեպքերից հետո Անիի թագավորությունը Հովհաննես-Սմբատի գլխավորությամբ արդեն կորցրել էր ապագայի հեռանկարը և ի վիճակի չէր քաղաքական ակտիվություն հանդես բերելու։ Աշոտ IV-ը, Հովհաննեսի եղբայրը, կաշկանդեց իր գործունեության ազատությունը նրանով, որ նույնպես ապավինեց Բարսեղ II-ի հովանավորությանը։ Հայկական մյուս թագավորությունները իրենց իշխանության շրջանակներից դուրս չէին գալիս և իրենց ռազմական ուժի ցածր մակարդակով չէին կարողանում որևէ փոփոխություն մտցնել ստեղծված իրադրության մեջ։

Այսպես շարունակվեց մինչև 1041 թ.։ Այդ 20 տարվա ընթացքում տեղի ունեցած դեպքերից ուշագրավ են Պետրոս Գետադարձի դեմ Անիի բնակչության պոռթկումները։ Նրա մեղսակցությունը՝ Անին Բյուզանդական կայսրությանը կտակելու գործում հայտնի էր ժողովրդին և, երբ Պետրոս Գետադարձը վերադարձավ Անի, նրա դեմ խռովություն կազմակերպվեց։ 1037 թվականին նրան բանտարկեցին, բայց շատ չանցած ստիպված եղան ազատել։

Հետագայում մի նոր պոռթկում ևս տեղի ունեցավ նրա դեմ՝ այս անգամ հատկապես բնակչության ստորին խավերի կողմից։ Այդ պոռթկումների մանրամասնություններն անհայտ են, բայց դրանք ապացույց են այն բանի, որ ժողովուրդը ցանկացել է պատժել հայրենիքի դավաճանին։

Պայքար պետականության պահպանման համար

Անիի կտակումը Բյուզանդական կայսրությանը երկու եղբայրների միջև որևէ բախում առաջ չբերեց։ Այդ վիճակը շարունակվեց մինչև 1041 թվականը, երբ երկու եղբայրներն էլ՝ նախ Աշոտը, ապա Հովհաննես-Սմբատը, մահացան։ Նրանց մահից հետո ոտքի ելան այն տարրերը, որոնք հակված էին երկիրը Բյուզանդական կայսրությանը հանձնելուն։ Նման մարդկանց գլուխ էին կանգնել Պետրոս Գետադարձ կաթողիկոսը և Սարգիս Սյունեցին, որը դեպի Բյուզանդիան ունեցած իր համակրանքի համար ստացել էր բյուզանդական «վեստ» տիտղոսը և մեր պատմության մեջ հայտնի է Վեստ Սարգիս անունով։ Սա նույնիսկ հափշտակեց արքունիքի գանձերը և ամրացավ Անիի միջնաբերդում։ Սակայն Վեստ Սարգսի այդ գործողությունները նրա դեմ հանեցին քաղաքի բնակչությանը, որոնց գլուխ անցավ սպարապետ Վահրամ Պահլավունին։

Սյունեցու կազմակերպած դավադրությունը արագ կերպով ճնշելու և երկրի պետականությունը պահպանելու նպատակով սպարապետը գահի համար առաջ քաշեց Աշոտի պատանի որդու՝ Գագիկի թեկնածությունը, և նրան 1042 թ. վերջին կամ 1043-ի սկզբին օծեցին թագավոր։ Գագիկ II-ը (1042/43—1045) Վահրամ Պահլավունու, սրա եղբորորդի Գրիգորի և ուրիշների օգնությամբ Անիից դուրս քշեց Վեստ Սարգսին, հետո էլ ձերբակալեց։ Անիի կենտրոնական թագավորությունը մի պահ նորից վերականգնեց իր դիրքերը։ Թվում էր թե Գագիկ II-ին կհաջողվի իրագործել իր պապի ձգտումները՝ միավորել Հայաստանը։ Սակայն շուտով Հայաստանի գործերին միջամտեց Բյուզանդական կայսրությունը և խափանեց երկրի միավորումը։

Անիի հերոսական պաշտպանությունը

Բյուզանդական Մոնոմախ կայսրը տեղեկանալով Հովհաննես-Սմբատի մահվան մասին, սրա տված կտակի համաձայն պահանջեց երկիրն իրեն հանձնել և զորքեր ուղարկեց Անին գրավելու։ Սակայն սպարապետ Վահրամ Պահլավունին և Գագիկ II-ը արագ կերպով կարգի բերեցին հայկական բանակը և ոտքի հանեցին ժողովրդին՝ Անին պաշտպանելու և օտարերկրյա զորքերը երկրից դուրս քշելու համար։ Հայերը Անիի պարիսպների տակ ծանր հարված հասցրին բյուզանդական բանակին և դուրս քշեցին Անիի թագավորության սահմաններից։ Բայց կայսրությունը չէր հրաժարվում Անիի թագավորությանը տիրելու մտքից, մանավանդ որ Վեստ Սարգիս Սյունեցին, որ

ազատվել էր բանտից և նորից արքունիքում վերականգնել իր դիրքերը, ինչպես և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը հրահրում էին բյուզանդացիներին Անին գրավելու և խոստանում էին օգնել նրանց։ Առաջին անհաջողությունից հետո բյուզանդական բանակը մինչև 1044 թ. ևս երեք հարձակում կատարեց Անիի վրա, բայց ամեն անգամ, հանդիպելով հայերի հերոսական դիմադրությանը, ստիպված էր ետ նահանջել։

Այդ անհաջողություններից հետո Բյուզանդական կայսրությունը փոխեց իր տակտիկան և դիմեց նենգության։ Կայսրը Վեստ Սարգսի ու Պետրոս Գետադարձի խորհրդով, հաշտություն կնքելու պատրվակով, Գագիկ II-ին հրավիրում է Կոստանդնուպոլիս։ Վահրամ Պահլավունին և նրա կողմնակիցները դեմ էին այդ այցելությանը։ Նրանք գտնում էին, որ կայսրի հրավերը նենգ նպատակներ է հետապնդում։ Նրանց խորհրդով Գագիկը սկզբում հրաժարվեց գնալ Կոստանդնուպոլիս, բայց Վեստ Սարգսի և Պետրոս Գետադարձի հորդորանքների շնորհիվ վերջում համաձայնվեց և 1044 թ. մեկնեց Կոստանդնուպոլիս։ Գագիկ II-ը մեկնելու նախօրյակին երկրի կառավարումը հանձնարարում է Պետրոս Գետադարձին և նրան է տալիս քաղաքի դարբասների բանալիները։ Կաթողիկոսն ու մյուս իշխանավորները հանդիսավոր կերպով երդվեցին պաշտպանել երկիրը և Անի քաղաքը մինչև թագավորի վերադարձը։ Սակայն Գագիկի մեկնելուց հետո Վեստ Սարգիսն ու Պետրոս Գետադարձը ուխտադրուժ կերպով ժողովրդից թաքուն քաղաքի բանալիները ուղարկեցին կայսրին, հայտնելով, որ անցինները որոշել են Անին հանձնել կայսրությանը։

Կոստանդնուպոլսում Գագիկ II-ին սկզբում արքայավայել ընդունեցին, իսկ հետո պահանջեցին, որ Անին հանձնի կայսրությանը և փոխարենը Փոքր Ասիայում ստանա իր համար ընդարձակ կալվածքներ։ Գագիկը համառորեն մերժում էր այդ առաջարկը և պահանջում թույլ տալ իրեն վերադառնալ հայրենիք։ Մոնոմախ կայսեր այն հայտարարությունը, թե Անին և Արևելքը մեզ են տվել քաղաքի մեծամեծները, Գագիկ II-ը պատասխանում է. «Հայաստանի տերն ու թագավորը ես եմ, իսկ ես չեմ տա Հայաստանը քեզ, դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»։ Գագիկի այդ վճռականությունը այլևս նշանակություն չուներ։ Նրան արգելեցին Հայաստան վերադառնալ և ստիպեցին հրաժարվել իր թագավորությունից ու գնալ բնակվել Փոքր Ասիայի ու Կիլիկիայի սահմանագլխին՝ Պիզու կոչված քաղաքում։

Մոնոմախ կայսրը Գագիկ II-ին ասպարեզից հեռացնելուց հետո իր զորավարներից մեկին՝ Ասիտին հանձնարարեց գրավել Անին։ Վերջինս 1044 թ. աշնանը մի մեծ բանակի գլուխ անցած եկավ և պաշարեց Անին, բայց հայկական զորքերը Վահրամ Պահլավունու գլխավորությամբ այս անգամ ևս ջարդեցին բյուզանդացիներին և ետ շպրտեցին։ Ասիտը ստիպված եղավ նահանջել և ձմեռն անցկացնել Կարինի շրջանում։

Անիի թագավորության անկումը

1044 թվականի փառավոր հաղթանակը բյուզանդական զորքերի դեմ չփրկեց Անիի թագավորությունը անկումից։ Հայրենիք չվերադարձավ նաև Գրիգոր Պահլավունին՝ մեր պատմության մեջ հայտնի Գրիգոր Մագիստրոսը, որ գնացել էր Գագիկի հետևից՝ նրան հայրենիք վերադարձնելու նպատակով։ Թուլացավ բանակի եռանդը, ժողովրդի վճռականությունը տատանվեց։ Վեստ Սարգիս Սյունեցին և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը համոզեցին իշխաններից շատերին, որոնց թվում և Վահրամ Պահլավունուն, որ համաձայնեն Անին հանձնել բյուզանդացիներին։ Իրենց դավաճանությունը քողարկելու համար նրանք սուտ արարողություն կազմակերպեցին, ողբացին հայկական պետականության անկումը, իսկ հետո էլ հայտնեցին բյուզանդական զորավար Ասիտին, որ դա և տիրանա Անի քաղաքին։

1045 թվականին բյուզանդական բանակը նորից շարժվեց դեպի Հայաստանի մայրաքաղաք Անի։ Այս անգամ անեցիները բյուզանդական բանակին չդիմադրեցին։ Ներքին դավաճանական տարրերը ջլատել էին ժողովրդի ուժերը և բյուզանդացիները առանց չանք գործ դնելու գրավեցին Անին։ Դրանով փաստորեն վերջ տրվեց հայկական պետականությանը բուն երկրում, որովհետև դեռևս իրենց գոյությունը պահպանած Կարսի, Լոռու և Սյունիքի թագավորությունները տեղական նշանակություն ունեին ու համահայկական պետականության վերականգնման ձգտում հանդես չէին բերում։

Բագրատունիների թագավորության անկման գլխավոր պատճառը երկրի քաղաքական մասնատվածությունն էր։ Ֆեոդալական հարաբերությունների խորացումը և հսկայական նյութական միջոցների ու մարդկային ուժի կուտակումը առանձին խոշոր ֆեոդալների մոտ հնարավորություն ընձեռեցին վանց առնել կենտրոնական իշխանությունը և հանդես գալ գերագույն իշխողի դերում։ Երկիրը այդպիսի նվաղ և մանր թագավորությունների մասնատելը ջլատում էր Հայաստանի ուժը, թուլացնում և անզոր էր դարձ-

նում նրան օտար նվաճողների դեմ։ Հենց դա էլ Բագրատունիների թագավորությունը տարավ դեպի անկում։

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԱՆԻԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Բյուզանդական կառավարիչները Հայաստանում

Անիի թագավորության գրավումից հետո, բացի Վանանդից, Դուպարքից, Սյունիքից, Արցախից, Դվինի և Նախիջևանի շրջակայքից, Հայաստանի մնացած բոլոր նահանգներն ու գավառները արդեն գտնվում էին Բյուզանդական կայսրության ձեռքին։ Նվաճված հայկական նահանգներում կայսրությունը նշանակեց բյուզանդացի կառավարիչներ։ Վասպուրականի և նրա շրջակա գավառների կառավարիչ նշանակվեց Ահարոն Բուլղարը, իսկ Անիի նախկին թագավորության ենթակա շրջանների վրա՝ սկզբում Ասիտ զորավարը, բայց կարճ ժամանակից հետո՝ Կամենաս (կամ Կոմիանոս) զորավարը։ Վարչական այդ բաժանումները պահպանվեցին մինչև սելջուկ-թուրքերի արշավանքները, իսկ 1049—1050 թթ. հայկական հողերի զգալի մասը, բացի Անիի կառավարչին ենթակա շրջաններից, անցավ հյուսիսային Միջագետքի կուսակալությանը, որի կառավարիչ նշանակվեց Գրիգոր Մագիստրոս Պահլավունին։ Մագիստրոսի վկայությամբ, ինքը նշանակված է եղել նաև Վասպուրականի, Տարոնի, Մանազկերտի, Արճեշի, Բերկրիի և Աղձնիքի շրջանների կառավարիչ։ Այդպիսով, 1049 թ. Բյուզանդական կայսրության կողմից գրավված հայկական հողերը փաստորեն բաժանված էին երկու վարչական միավորի՝ մեկն ընդգրկում էր Շիրակը, Արարատյան դաշտի մի մասը և Բագրևանդի շրջանը, որի կառավարիչն էր նույն Կամենասը, իսկ մյուսը՝ Վասպուրականը, Աղձնիքը, Տուրուբերանի նահանգը, Բարձր Հայքի մի մասը և այլ շրջաններ, որի գլուխ կանգնած էր Մագիստրոսը։

Հայկական թագավորությունները

Հայաստանի մնացած շրջաններում իրենց գոյությունը դեռևս պահպանում էին հայկական թագավորությունները։ Դրանցից համեմատաբար ավելի ուժեղ էր Սյունիքի թագավորությունը, որ թագավորում էր Սմբատ II-ի եղբայր Գրիգոր I-ը (1044—1084)։ Այն իր սահմաններում ընդգրկում էր ավելի քան 1000 գյուղ, մեկ-երկու քաղաք, 43 բերդ և 48 վանք։ Հաջորդ՝ համեմատաբար ընդարձակ տարածություն ունեցող թագավորությունը Լոռու-Ջորագետի կամ Կյուրիկյան թագավորությունն էր։ Այդտեղ դեռևս

իշխում էր Դավիթ Անհողինը։ Նա իր թագավորությունը XI դարի առաջին կեսին բավականին ամրապնդեց և, հաջող պայքար մղելով Գանձակի էմիրության դեմ, կասեցրեց նրա առաջխաղացումը դեպի Գուգարք։ Դավիթ Անհողինից հետո՝ 1050 թվականին Լոռու-Զորագետի իշխանության գլուխ անցավ նրա որդի Կյուրիկեն, որի անունով էլ այդ թագավորությունը կոչվեց նաև Կյուրիկյան։ Երրորդը՝ Կարսի կամ Վանանդի թագավորությունն էր։ Աբաս թագավորի օրոք այդ իշխանությունը տնտեսապես զարգացել և բարեկեցիկ վիճակում էր, և այն շարունակվեց Աբասի հաջորդ, նրա որդի Գագիկ Աբասյանի թագավորության տարիներին (1029—1065), բայց քաղաքական առումով այդ թագավորությունը նույնքան թույլ էր, որքան առաջին երկուսը։

Վերոհիշյալ երեք թագավորությունները չկարողացան լուրջ դեր խաղալ երկիրը միավորելու և օտարների ներխուժումներից պաշտպանելու գործում։ Նրանք սելջուկ-Թուրքերի վերահաս ասպատակությունների ժամանակ անզոր եղան նույնիսկ իրենց սեփական թագավորությունները զերծ պահելու ավերածություններից։

Բյուզանդիայի վարած քաղաքականությունը Հայաստանում

Բյուզանդական կայսրությունը իրեն ենթակա հայկական նահանգներում սկզբից ևեթ վարեց ժողովրդին տնտեսապես կեղեքելու և երկրի պաշտպանունակությունն ու ռազմական ուժերը քայքայելու և թուլացնելու քաղաքականություն։ Բյուզանդացիները նախ ծանրացրին հարկերը, ապա սկսեցին հայերին կրոնական և այլ կարգի հալածանքների ենթարկել։ Նրանք փորձեցին վերացնել հայկական կրոնական կենտրոնը՝ կաթողիկոսությունը և հայկական եկեղեցին ենթարկել բյուզանդական քաղկեդոնական եկեղեցուն։ Այդ նպատակով բյուզանդական կուսակալ Կամենասը հայոց կաթողիկոս Պետրոս Դեռատարձին բանտարկեց, իսկ 1047 թվականին ուղարկեց Կոստանդնուպոլիս։ Շուրջ 10 տարի անց բյուզանդական կայսր Կոստանդին XI-ը ձերբակալեց Դեռատարձի հաջորդ՝ Խաչիկ կաթողիկոսին և բռնագրավեց կաթողիկոսարանի հարստությունը։

Կայսրությունը դրանով ձգտում էր հայերին իրեն ենթարկել ոչ միայն քաղաքական, այլև կրոնական ու կուլտուրական տեսակետից, այսինքն՝ հայերին ձուլել հույների հետ։

Բյուզանդական կայսրության վարած քաղաքականությունը խոր դժգոհություն առաջ բերեց հայ ժողովրդի համարյա բոլոր խավերում։ Այդ դժգոհությունը վերածվեց թշնամանքի և ատելու-

թյան, քանի որ ժողովուրդը գիտակցում էր, որ Բյուզանդիան էր հայկական պետականության կործանողը։ XII դարի պատմագիր Մատթեոս Ուռհայեցին իր «ժամանակագրութեան» մեջ գրում է, որ հունական կայսրերը Հայաստանից հանեցին հայ զորականներին, կործանեցին հայկական թագավորությունը, քանդեցին երկրի պաշտպանությունը և երկիրը մատնեցին անտերության, որից էլ օգտվեցին սելջուկ-թուրքերը և ասպատակեցին ու ավերեցին Հայաստանը։

ԳԼՈՒԽ XXII

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ IX—XI ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Դասակարգային հակասությունների սրումը

IX—XI դարերում ֆեոդալական հարաբերությունների խորացման հետևանքով գյուղացիների իրավունքներն ավելի սահմանափակվեցին։ Նրանց մի մասը ամրացվեց հողին և զրկվեց անձնական ազատությունից։ Բազմապիսի հարկերի ու տուրքերի վճարումը և զանազան պարտավորությունների կատարումը ուժեղացրեց նաև գյուղացու տնտեսական շահագործումը։ Այդ ամենը ավելի սրեց նրանց և ֆեոդալների միջև եղած հակամարտությունը և նախադրյալներ ստեղծեց դասակարգային պայքարի բորբոքման համար։

Հակասությունները սրվում էին նաև քաղաքային դասի և տիրապետող ֆեոդալական խավերի միջև։ Քաղաքային դասը ձգտում էր ընդարձակել իր իրավունքները, ծավալել առևտուրը, զարկ տալ արհեստագործությանը, բայց դրան խանգարում էին ֆեոդալական կարգերը, որոնք կաշկանդում էին արտադրողական ուժերի հետագա զարգացումը և խոչընդոտում քաղաքային արտադրության ընդարձակմանը։

Սրվում էին նաև ֆեոդալական դասակարգի տարբեր խավերի փոխհարաբերությունները։ Նրանց միջև նույնպես առաջացել էր շահերի բախում։ Մանր ազնվականությունը տուժում էր խոշոր ֆեոդալների ինքնիշխան դառնալու ձգտումների և կամայականությունների հետևանքով։ Նա զրկվում էր իր կալվածքների մի մասից և ներքին ինքնուրույնությունից։ Դժգոհում էին նաև ստորին կարգի հոգևորականները բարձրաստիճան հոգևորականներից,

որոնց դրպանն էր մտնում եկեղեցական եկամուտների մեծագույն մասը։

Դասակարգային պայքարի նոր վերելքը

Հայաստանում այդ ժամանակաշրջանում ֆեոդալական կարգերի դեմ գյուղացիության ու քաղաքային դասի մղած պայքարի աշխուժացմանը նպաստեցին նաև օտար զավթիչների գերիշխանության թուլացումը և երկրի քաղաքական անկախության վերականգնումը։ Ստեղծված նոր պայմաններում գյուղացիների դեմ առ դեմ, որպես նրանց անմիջական շահագործողներ, կանգնում էին միայն հայ ֆեոդալները։ Ահա այդպիսի պայմաններում՝ IX դարի վերջերին և X դարի առաջին տասնամյակներում Հայաստանում տեղի ունեցան գյուղացիական ընդվզումներ, որոնք արտահայտվեցին թե՛ բացահայտ ելույթներով, թե՛ աղանդավորական շարժման ձևով։

Թոնդրակյան շարժման առաջացումը

IX դարի վերջին տասնամյակներում Հայաստանում սկիզբ առավ գյուղացիական մի նոր շարժում, որը պատմագիտության մեջ անվանվում է թոնդրակյան։ Այդ շարժման առաջացման ժամանակի մասին հայ պատմագիտության մեջ տարբեր կարծիքներ կան։ Ոմանք գտնում են, որ այն սկսվել է IX դարի առաջին կեսին, իսկ ոմանք էլ՝ նույն դարի վերջին՝ Բագրատունիների թագավորության հիմնադրման ժամանակ։ Նրանք, ովքեր շարժման առաջացման ժամանակը համարում են IX դարի առաջին կեսը, վկայակոչում են Գրիգոր Մագիստրոսի այն տեղեկությունը, թե թոնդրակյանները սկսել են գործել Հովհաննես կաթողիկոսի և Սմբատ Բագրատունու օրոք, ենթադրելով, որ հիշյալ անձնավորությունները Հովհաննես Օվայեցին է և Սմբատ Բագրատունի սպարապետը, որոնք միասին գործել են IX դարի 30-ական թ. մինչև 855 թ.։ Մյուսները, ովքեր շարժման սկիզբը համարում են 90-ական թվականները, որպես հիմք ընդունում են Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ) վկայությունը, ըստ որի թոնդրակյանները ասպարեզ են մտել պատմագիր Հովհաննես կաթողիկոս Դվինեցու, այսինքն՝ Դրասխանակերտցու ժամանակից, որը կաթողիկոս է ընտրվել 897 թ. և գործել է Սմբատ Բագրատունի I թագավորի հետ միասին մինչև 914 թ.։

Մագիստրոսի այն տեղեկությունը, թե թոնդրակյաններր գործել են սկսել Սմբատ Բագրատունու և Հովհաննես կաթողիկոսի օրոք, որքան վերաբերում է Օվայեցուն և Սմբատ սպարապետին,

այնքան էլ կարող է վերաբերել Սմբատ I-ին և Դրասխանակերտցուն։

Այսպիսով, սկզբնաղբյուրների համեմատաբար ավելի հաստատուն և որոշակի վկայությունները Թոնդրակյան շարժման առաջացման ժամանակի մասին՝ խոսում են հօդուտ այն տեսակետի, ըստ որի շարժման սկիզբը համարվում է IX դարի վերջը, ոչ շուտ այդ դարի 80-ական թվականներից։ Շարժման հետևորդների կազմակերպած համայնքները X դ. սկզբին ավելի են բազմանում և ակտիվ պայքարի դուրս գալիս հոգևոր և աշխարհիկ ֆեոդալների դեմ։

Սմբատ Զարեհավանցի

Թոնդրակյան շարժման հիմնադիրը եղել է Սմբատ Զարեհավանցին։ Ստեփանոս Տարոնեցին և Գրիգոր Մագիստրոսը հաղորդում են, որ նա Մաղկոտն դավառի Զարեհավան գյուղի բնակիչ է եղել։ Գրիգոր Մագիստրոսը նրան համարում է քահանայական կարգ չունեցող։ Այդ նշանակում է, որ Զարեհավանցին հոգևորական չի եղել։ Նա ազնվականության բարձր խավին էլ չի պատկանել։ Մնում է ենթադրել, որ նա տեղաշարժման իրավունք ունեցող գյուղացի է եղել, այսինքն՝ ազատ գյուղացի։

Մագիստրոսի վկայություններից երևում է, որ Սմբատ Զարեհավանցին մի պարսիկ բժշկից, զանազան գիտելիքներից բացի, սովորել էր նաև աստղագիտություն։ Ուրեմն, նա իր ժամանակի գիտությանը մոտիկ կանգնած մարդ էր, գիտեր պարսկերեն։

Միջնադարյան հայ իրականության այդ խոշոր գործչի և մտածողի վախճանի մասին ոչինչ հայտնի չէ։ Գրիգոր Նարեկացու այն վկայությունը, թե Թոնդրակյանների առաջնորդին հալածել և սպանել է Ապահունիքի Ապլվարդ էմիրը անորոշ տեղեկություն է և ավելի շուտ վերաբերում է Զարեհավանցուց հետո եղած առաջնորդներին, քան իրեն՝ Զարեհավանցուն։

Թոնդրակը շարժման կենտրոն

Սմբատ Զարեհավանցին, շրջագայելով զանազան վայրեր և քարոզելով իր գաղափարները, գալիս է Թոնդրակ գյուղը, որը գտնվում էր Հարք և Ապահունիք գավառների սահմանագլխին, հաստատվում է այնտեղ և իր կողմնակիցներից կազմակերպում շարժման առաջին համայնքը։ Այդ ժամանակից տկսած Թոնդրակը դարձավ շարժման կենտրոն, որտեղից նրա առաջնորդները ղեկավարում էին այլ վայրերում կազմակերպված համայնքները։ Այն բանի համար, որ Թոնդրակը դարձավ շարժման առաջին և գլխավոր կենտրոնը, հակառակորդները շարժման կողմնակիցներին և

հեռևորդներին հետագայում կոչեցին «թոնդրակեցի» և շարժումը ստացավ «թոնդրակյան» անունը։ Այն մասին, թե ինչպես են իրենց անվանել իրենք Թոնդրակյանները՝ պատմությանն առայժմ հայտնի չէ։ Գրիգոր Մագիստրոսը վկայում է, որ Թոնդրակյանների առաջնորդները Թոնդրակում և զանազան շրջաններում հիմնված համայնքներից զեկուցագրեր էին ստանում նրանց գործունեության մասին։ Թոնդրակյանների հակառակորդներն ու թշնամիները Թոնդրակը համարել են «չարիքի» բույն, ակունք, որտեղից, ինչպես Մագիստրոսն է ասում, Թոնդրակյան գաղափարները հորդ վտակների նման հոսում էին դեպի երկրի մյուս շրջանները։

Թոնդրակյան շարժման կազմակերպական միավորը եղել է համայնքը, որը հիմնվել է գյուղում, ավանում կամ քաղաքում։ Համայնքներում ընդգրկվում էին բոլոր նրանք, ովքեր ընդունում էին Թոնդրակյանների գաղափարները։ Համայնքները կազմակերպվում և գործում էին խիստ գաղտնի։ Նրանք հալածվում էին թե՛ պետական պաշտոնական մարմինների, թե՛ եկեղեցու և թե՛ աշխարհիկ ֆեոդալների կողմից։

Չնայած ծանր հալածանքներին և դաժան պատիժներին, շարժման հենց սկզբից Թոնդրակյանների գործունեությունը լայն թափ ստացավ։ Այդ բանին խոշոր չափով նպաստեցին X դարի առաջին քառորդում Հայաստանում տեղի ունեցած գյուղացիական ապստամբությունները, որոնց կազմակերպման և ղեկավարման գործում Թոնդրակյանները ակտիվ դեր են խաղացել։

2. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ X ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

Գյուղացիական ապստամբությունը Այրարատում

Հայաստանում X դ. առաջին քառորդում, հատկապես 914 թ. հետո, աշխատավոր բնակչության դրությունն ավելի վատթարացավ մի կողմից արաբական զորքերի նոր արշավանքի ու ասպատակությունների և, մյուս կողմից, միջֆեոդալական ընդհարումների պատճառով։ Այդ ժամանակաշրջանում Հայաստանի մի շարք շրջաններում բռնկվեցին գյուղացիական ապստամբություններ, որոնք ավելի լայն ծավալ ստացան Բագրատունիների կալվածքներում։

Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, որ 915—916 թթ. մինչև 918—920 թթ. Հայաստանի բնակչության ցածր խավերը ոտքի էին կանգնել և «խռովություն»

բարձրացրել։ «Խռովարարները», այսինքն՝ ապստամբները, որոնց Դրասխանակերտցին անվանում է «նուաղունք» և «ծառայք», աշխատում էին նախահարձակ լինել։ Նրանք իրենց տերերին իջեցնում էին ձիերից, տրեխ հագցնում և հետիոտն իրենց առջևից քշում, իսկ իրենք հեծնում էին ահիպարանոց և ոտնատակ տվող ձիեր՝ «խրոխտացեալք և սոնքացեալք մեծաւ ապստամբութիամբ»։ Ապստամբությունը ընդգրկել է Հայաստանի մի շարք շրջաններ. նրան մասնակցել է գյուղի ու քաղաքի բնակչությունը։ Դրասխանակերտցու վկայությամբ, ապստամբությունը «... պատել էր և՛ քաղաք, և՛ գյուղ»։

Այս ապստամբությունը ուղղված էր ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր ֆեոդալների դեմ։ «Խռովարարները» (ապստամբները), որոնց Դրասխանակերտցին այս դեպքում անվանում է «ավազակներ» և «սրիկաներ», քանդում ու ավերում էին եկեղեցիները։ Նրանք ավերում էին հատկապես վանքերը և եկեղեցական այլ հաստատություններ, այնտեղից քշում էին հոգևորականներին, որոնք իրենց ձեռքում էին կենտրոնացրել մեծ քանակությամբ կալվածքներ և շահագործում էին գյուղացիներին։

Ապստամբության ընթացքի և վախճանի մասին մեզ տեղեկություններ չեն հասել, բայց երկրում տեղի ունեցած քաղաքական այլ դեպքերի ընթացքից երևում է, որ ապստամբությունը տևել է մի քանի տարի՝ 915-ից մինչև 920 թթ.։

Սյունիքի գյուղացիների ապստամբությունը

IX դարի վերջերում և X դ. սկզբներում բարեկարգվում և ընդարձակվում է Տաթևի վանքը։ 906 թվականին ավարտվում է վանքի գլխավոր տաճարի կառուցումը. այդ կապակցությամբ վանքին նվիրում են մի շարք գյուղեր, որոնցից մի քանիսի բնակիչները դեռևս իրենց հողերի սեփականատերերն էին, կամ, ինչպես Ստեփանոս Օրբելյանն է անվանում նրանց, «հին հայրենատերեր» էին։ Տաթևի վանքը աշխատում էր գյուղացիներից վերցնել հողը և սեփականացնել, իսկ վերջիններս դիմադրում էին։ Այդ պատճառով էլ վանքի ու գյուղացիների միջև սկսվում է երկարատև պայքար, որն առանձնապես սուր կերպով է դրսևորվել Ցուր, Տամալեկք և Ավելադաշտ կամ Բերդ գյուղերի բնակիչների շրջանում։

Գյուղացիների պայքարը վանքի դեմ սրվում է վանահայր Հովհաննես եպիսկոպոսի (880—918) օրոք, երբ նա ամեն կերպ աշխատում էր գյուղացիներից խլել նրանց հողերը։ 915 թվականին Ցուր գյուղի բնակիչները դիշերով հարձակվում են Տաթևի

վանքի վրա, ավերում նրա «գործատները»՝ արհեստանոցները, բռնագրավում վանքում եղած հարստությունը, ծեծի ենթարկում վանականներին, սպանում մի քանի ծեր հոգևորականների, փչացնում եկեղեցական մասունքները և սատիրով մեռոնը թափում գետին։

Ցուրի գյուղացիների այդ ելույթից հետո Հովհաննես եպիսկոպոսը օգնության համար դիմում է Սյունյաց գահերեց իշխան Սմբատին, որը զինվորական ջոկատներով հարձակվում է ցուրացիների վրա, դուրս քշում վանքից, ավերում նրանց գյուղը և գյուղացիներից խլելով հողը՝ հանձնում Տաթևի վանքին։

Նույն տարիներին Տաթևի վանքի դեմ համառ պայքար են մղել նաև Բերդ կամ Ավելադաշտ գյուղի բնակիչները։ Ինչպես Ստեփանոս Օրբելյանն է վկայում, նրանք «յոլով նեղութիւնս» էին հասցրել Տաթևի վանքին ու շրջակա կալվածատերերին և ցուրացիների նման «բաղում ոճիրս» գործել վանականների նկատմամբ։

Սյունյաց իշխանների օգնությամբ Տաթևի վանականները կարողանում են ճնշել ավելադաշցիների ընդվզումները, նրանց դուրս քշել իրենց հողերից և սեփականացնել այդ հողերը։

Այդ նույն ժամանակ Տաթևի վանքի դեմ ըմբոստացել էին նաև Տամալեկք գյուղի բնակիչները, որոնք Օրբելյանի վկայությամբ «բաղում և մեծամեծ վիշտս և նեղութիւնս հասուցեալ էին վանիցն»։ Վանքին չի հաջողվում անվերապահորեն ընկճել տամալեկքցիների դիմադրությունը։ Դրա համար էլ նա դիմում է կոմպրոմիսի, գյուղացիներին վճարելով նրանց հողերի արժեքի մի մասն ու սեփականացնելով նրանց հողերը։ Վերը հիշված դեպքերից երևում է, որ Սյունիքի գյուղացիները X դարի առաջին քառորդում, ինչպես և հետագա ժամանակներում ակտիվ և համարձակ պայքարի էին ելել իրենց շահագործողների դեմ և Հայաստանի մյուս շրջանների գյուղացիների նման փորձում էին զենքով պաշտպանել իրենց շահերը։

Թոնդրակյանների մասնակցությունը գյուղացիական ապստամբությանը

Հայաստանում տեղի ունեցած գյուղացիական ապստամբությունների մասին սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունները մեկնաբանելիս, բուրժուական պատմագետներից ոմանք առաջ են քաշում այն միտքը, թե ապստամբները հայ գյուղացիներ չեն եղել և չեն պատկանել հայկական եկեղեցու համայնքին։

Այդ պնդումներն անհիմն են։ Նախ, գյուղացիական այդ ապստամբությունների մասին տեղեկություն հաղորդողները ֆեո-

դալական դասակարգի մարդիկ են և նրանք իրենց դասակարգի դեմ ըմբոստացածներին այլ կերպ չէին անվանի։ Երկրորդ, հենց նույն աղբյուրները հաղորդում են նաև այնպիսի տեղեկություններ, որոնք հաստատում են ապստամբների հայ լինելը և հայկական եկեղեցու դավանանքին պատկանելը։ Դրասխանակերտցին հաղորդում է, որ «խռովարարները» երկրում ունեին իրենց «մերձավոր», այսինքն՝ ազգակից, «ընկերակից» ու «ծանոթ» մարդիկ, որոնցից պարեն էին վերցնում, որ այդ ապստամբները «տանից» էին, այսինքն՝ Հայաստանից և հայկական եկեղեցու համայնքից, և որ նրանց մեջ կային մարդիկ, որոնք համարվում էին եկեղեցու «սյուներ», բայց այժմ հեռացել են «ի Տեառնէ»։ Այնուհետև, սյունյաց փշխանները տամալեկքցիներին «հոգով ու մարմնով» նվիրում են Տաթևի վանքին, իսկ դա ապացուցում է, որ նրանք հայկական եկեղեցու հավատացյալներ են եղել։

Ապստամբներին «հեթանոս», «անաստված» են կոչել, որովհետև գյուղացիական այդ ընդվզումներին ակտիվ կերպով մասնակցել ու գլխավորել են թոնդրակյանները։ Դրասխանակերտցին վկայում է, որ ապստամբները ավերում և քարուքանդ էին անում եկեղեցիները, որ ըմբոստացողները «ապստամբեցան ի Տեառնէ», այսինքն՝ եկեղեցու, Քրիստոսի, աստծու դեմ։ Ի վերջո, Տաթևի վանքի դեմ ապստամբած գյուղացիները մեռոն են թափել։ Այդ բոլորը արել են նրանք, ովքեր մերժել են եկեղեցին, եկեղեցական սրբություններն ու ծիսակատարությունները և հոգևորականության անհրաժեշտությունը։ Հայաստանում այդ ժամանակ թոնդրակյաններն են միայն այդպես վարվել։

Վերոհիշյալ փաստերը խոսում են այն մասին, որ X դարի առաջին քառորդում Հայաստանում տեղի ունեցած գյուղացիական ապստամբությանը մասնակցել և որոշ տեղերում ղեկավարել են թոնդրակյանները։

Գյուղացիական ապստամբությունը մեծ չափով նպաստել է թոնդրակյան շարժման ծավալմանը և թոնդրակյան համայնքների կազմակերպմանը Հայաստանի մի շարք շրջաններում։ Սակայն ապստամբության անհաջող ելքից հետո թոնդրակյան շարժումը ևս թուլացել է իր վայրէջքի շրջանը։

Այրարատում և Սյունիքում տեղի ունեցած գյուղացիական ապստամբությունների վախճանի մանրամասնությունները հայտնի չեն։ Պարզ է այն, որ այդ ապստամբությունները վերջացել են անհաջողությամբ, որովհետև գյուղացիության մասնատվածությունը, ցաք ու ցրիվ լինելը և ծայր աստիճան հետամնացությու-

նը հնարավորություն չէին ընձեռում նրան կազմակերպվելու և միասնական գործողության դիմելու։ Գյուղացիները պայքարի էին ելել առանձին-առանձին շրջաններով, նույնիսկ առանձին-առանձին գյուղերով, ինչպես Սյունիքում էր, իրարից կտրված են եղել և պարզ պատկերացում չեն ունեցել իրենց պայքարի հեռանկարի մասին։

3. ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼԸ

Շարժման ծավալումը և նոր համայնքների կազմակերպումը

Գյուղացիական ապստամբության պարտությունից հետո թոնդրակյան շարժման վայրէջքը երկար չտևեց։ X դարի կեսից այդ շարժումը նորից բռնեց վերելքի ուղին։ Դրան նպաստեցին գյուղացիության ճորտացման պրոցեսի ու շահագործման ուժեղացումը և քաղաքային կյանքի զարգացման արագ թափը։ Զեսավորվեց և ուժեղացավ քաղաքային դասը, որի շահերը նույնպես բախվում էին տիրապետող ֆեոդալական դասակարգի շահերի հետ։ Այդ ամենը պարարտ հող ստեղծեց թոնդրակյանների գործունեության համար, քանի որ նրանց շարժումը տվյալ ժամանակաշրջանում ֆեոդալական կարգերի դեմ մղվող պայքարի գլխավոր և ճանաչված ձևն էր։

Մատենագրական տեղեկությունները հաստատում են, որ X դ. երկրորդ կեսին և XI դ. սկզբին թոնդրակյանները Հայաստանի տարբեր գավառներում նոր համայնքներ էին կազմակերպել։ Ըստ Գրիգոր Մագիստրոսի և Արիստակես Լաստիվերցու, թոնդրակյանները համայնքներ են կազմակերպել Խնուս քաղաքում, Մանանագիի գավառի Կաշե, Աղյուս և Թուլայլ ավաններում, թափանցել են Խլաթի շրջանը և Հարք գավառը, մուտք են գործել Շիրակ և այլ վայրեր։ Գրիգոր Նարեկացու վկայությամբ, նրանք իրենց գործունեությունը ծավալել էին նաև Վասպուրականում և Մոկսում։ Կողմնակի տեղեկություններ կան նաև այն մասին, որ թոնդրակյանները գործել են Սյունիքում և անդամ Աղվանից աշխարհում։ Գրիգոր Մագիստրոսի վկայությամբ, Սմբատ Զարեհավանցուց հետո՝ X դ. երկրորդ և XI դ. առաջին կեսերին թոնդրակյան շարժման աչքի ընկնող առաջնորդներ են եղել Թոդրոսը, Անանեսը, Արքան, Սարգիսը, Կյուրեղը, Հեսուն և Ղազարը։ Վերջին երկուսը Մագիստրոսի ժամանակակիցներն են և գործել են XI դ. կեսին։ Հիշյալ անձնավորություններից բացի, թոնդրակյան շարժման ղե-

կավարներ են հանդիսացել Հարքի Հակոբը, Մանանաղիի Կունձիկը, Մոկաց Կճավա վանքի Մուշեղը և Շիրակի Ներսեսը։

Թոնդրակյանների ելույթը Հարքում

Թոնդրակյան համայնքներից մի քանիսը XI դ. սկզբին երկրի տարբեր գավառներում ծավալեցին աշխույժ գործունեություն։ Այդպիսի գավառներից մեկը եղել է Հարքը։ Արիստակես Լաստիվերցին պատմում է, որ Սարգիս կաթողիկոսի ժամանակ (992—1019), մոտավորապես XI դ. սկզբին, Հարք գավառի Հակոբ եպիսկոպոսը հարում էր Թոնդրակյաններին։ Նա կրճատում էր կատարվող պատարագների քանակը, կարգալուծ անում հոգևորականների մի մասին, վերացնում զոհաբերությունը, հայտարարելով, որ ով «ինքն իւրով անձամբն՝ որով մեղաւն և նովիմբ չապաշխարեաց, նմա ոչ յիշատակք օգնեն և ոչ պատարագք»։

Աղբյուրները լռում են այն մասին, թե Հարքի Թոնդրակյանները բացի եկեղեցական մի շարք ծեսերի վերացումից և հոգևորականների կրճատումից, ուրիշ ինչ պահանջներ են առաջադրել և կենսագործել։ Սակայն հայտնի է, որ նրանց գործունեությունը լայն արձագանք է գտել գավառի բնակչության մեջ և նրան համախմբել Հակոբի շուրջը։

Հարքի Թոնդրակյանների գործունեությունը լուրջ անհանգստություն է առաջ բերել իշխող դասակարգի մեջ։ Հայոց Սարգիս կաթողիկոսը մարդիկ է ուղարկել Հարք՝ քննելու Թոնդրակյանների գործունեությունը և պատժելու նրանց, բայց ուղարկված մարդկանց ջանքերը ապարդյուն են անցել, որովհետև բնակչությունը պաշտպանում էր Հակոբին և նրա հետևորդներին։

Դրանից հետո կարնեցի Նսայի անունով մի հոգևորական մտերմություն է հաստատում Հակոբի և մյուս Թոնդրակյանների հետ, մտնում նրանց համայնքը, ծանոթանում Թոնդրակյանների գործունեության մանրամասնություններին ու քարոզած դաղափարներին և հաղորդում Սարգիս կաթողիկոսին։ Վերջինս խաբեությամբ և «քաղցրական բանիւք» իր մոտ է կանչում Հակոբին, ձերբակալում, հրապարակով դատում, դեմքին ապմեսադրոշմ իարանում և բանտարկում։ Սակայն Հակոբին հաջողվում է գիշերը փախչել։

Հալածանքի են ենթարկվում նաև Հարքի մյուս Թոնդրակյանները։ Նրանց մի մասը հետապնդումներից զերծ մնալու նպատակով քաշվում է Հարքից ոչ շատ հեռու գտնվող Խլաթի լեռներն ու անտառները։

Թոնդրակյանների Եղույթը Մանանաղիում

Թոնդրակյանների մղած պայքարի մի ուրիշ միջադեպ (դարձյալ XI դ. սկզբին) տեղի է ունեցել Մանանաղիի գավառում։ Արիստակես Լաստիվերցին վկայում է, որ Մանանաղիի Շիրի բերդաքաղաքի բնակիչ Կոմծիկ արեղան այդ գավառի մի շարք գյուղերում տարածել էր Թոնդրակյան գաղափարներ ու կազմակերպել համայնքներ։ Նրան հաջողվել էր շարժման մեջ ընդգրկել մանր ազնվականուհիներ Հրանուշին, Կամարա և Ախնի քույրերին, վերջինների եղբայր Վրվեռին ու նրանց պատկանած Կաշե և Աղյուս գյուղերում կազմակերպել Թոնդրակյան համայնքներ։

Մանանաղիի Թոնդրակյանները ավելի համարձակ գործողությունների են դիմում, քան Հարքինը։ Նրանք Կաշե, Աղյուս գյուղերում քանդում են եկեղեցիները, հարձակվում գավառի սրբավայրերի և մենաստանների վրա, ավերում ու այդտեղից դուրս քշում միաբանության անդամներին։ Արիստակես Լաստիվերցին խոսելով Մանանաղիի Թոնդրակյանների գործողությունների մասին, դառնությամբ արձանագրում է՝ «դիտական կատաղությամբն մոլեալ, զեկեղեցիսն... խոպան դարձուցին», շատ վայրերում լռեց ժամերգությունը և վանքերը «յաւեր յանմարդի» դարձրին, կամ «Եւ յանդաստանացն՝ ուր և դիպոզ ժամ հանդիպէր նոցա, զփրկութիւն մերոյ զնշանն... խորտակէին»։

Նույն պատմագիրը վկայում է, որ Կաշե գյուղի Թոնդրակյանները գարնանային մի գիշեր հարձակվում են Բաղմաղբյուրի Խալ կոչված եկեղեցու վրա և հիմնահատակ կործանում այն։ Կատարված դեպքի մասին հաղորդում են Արևմտյան Հայաստանի հոգևոր պետ Սամվել եպիսկոպոսին, որը մեծ թվով մարդկանց հետ դալիս է դեպքի վայրը։ Նրա մարդիկ հարձակվում են Կաշե, Աղյուս և այլ գյուղերի վրա, դուրս քշում բնակչությանը, հրկիզում նրանց տները և վեց հոգու, որոնք հանդիսանում էին Թոնդրակյան համայնքների ակտիվ գործիչները և նրանց գաղափարների քարոզիչները, ձերբակալում և տանում Ջերմ կոչված գյուղաքաղաքը։ Այնտեղ նրանց հրապարակորեն դատում են և աղվեսագրոշմ խարանում դեմքերին։

Սակայն Սամվելի մարդկանց չի հաջողվել կասեցնել Թոնդրակյանների գործունեությունը։ Այդ երևում է նրանից, որ հաջորդ տարին բյուզանդական դատավոր Եղիան զինված ջոկատներով գալիս է Մանանաղիի գավառը, որն այդ ժամանակ գտնվում էր Բյուզանդիայի գերիշխանության ներքո, պատժում է Թոնդրակ-

յաններին, ավերում նրանց տները և տանջանքի ու հալածանքի ենթարկում շատերին։

Ցուրացիների նոր ելույթը

Հարքի և Մանանաղիի գեպքերի տարիներին, մոտավորապես 999—1002 թթ., գյուղացիների պայքարը ակտիվանում է նաև Սյունիքում։ Ցուր գյուղի բնակիչները, որոնց, X դ. առաջին քառորդում Տաթևի վանքի դեմ բարձրացրած ապստամբության պատճառով, դուրս էին քշել գյուղից, նույն դարի երկրորդ կեսին, օգտվելով վանքի ժամանակավոր թուլությունից, նորից վերադառնում են Ցուր և տիրում իրենց նախկին հողերին։ Դարի վերջին տասնամյակներում վանքը ուզում է կանգնում և կրկին ձեռնամուխ լինում իր կալվածքների ընդարձակման գործին։ Բորբոքվում է մի նոր պայքար գյուղացիների և վանքի միջև։ Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, ցուրացիները նորից են հարձակվում վանքի վրա, «հարուցում ամենամեծ հալածումն եկեղեցւոյն» և «կրկին աւերել զվանսն»։ Այդ պայքարի ժամանակ՝ հավանաբար 1001 թ., երբ վանահայր Հակոբ եպիսկոպոսը Բաղքից վերադառնալիս է լինում Տաթև, ցուրացիները հարձակվում են նրա վրա և սպանում հենց Ցուրաձորում։

Հակոբ եպիսկոպոսի սպանությունից հետո վանքի վանահայր դարձած Գրիգոր եպիսկոպոսը (1001/2—1006) Սյունյաց Վասակ թագավորից օգնություն է ստանում, ճնշում գյուղացիների ելույթը, երկրորդ անգամ քարուքանդ անում Ցուրը և խլում գյուղացիների հողերը։

Ցուրացիների այս ելույթը և Հարքի ու Մանանաղիի թոնդրակյանների ելույթները տեղի են ունեցել նույն ժամանակաշրջանում, XI դ. առաջին տասնամյակում։ Թեև հաստատուն փաստեր չկան ցուրացիների այս վերջին գեպքը թոնդրակյան համայնքների գործունեության հետ կապելու, սակայն այն, որ այդ ելույթները տեղի են ունեցել համարյա միաժամանակ և ուղղված են եղել աշխարհիկ ու հատկապես հոգևոր ֆեոդալների դեմ, ցույց է տալիս, որ XI դ. սկզբներին Հայաստանում նորից սուր բնույթ է ընդունել դասակարգային պայքարը և հաճախակի են դարձել գյուղացիական ընդվզումները, որոնք մեծ մասամբ դլխավորում էին թոնդրակյանները։

Շարժմանը մասնակցող խավերը

Դասակարգային պայքարի սրումը թոնդրակյան շարժման մեջ է ներքաշում ավելի մեծ թվով մարդկանց, որոնք պատկանում էին սոցիալական տարբեր խավերի։ Սակայն շարժման հիմնա

կան տարրը գյուղացիներն էին։ Դրա համար էլ պատահական չէ, որ մեզ հայտնի Թոնդրակյան համայնքների մեծ մասը կազմակերպվել է գյուղերում՝ Թոնդրակում, Թուլայլում, Կաշեում, Աղյուսում, Խլաթի լեռնային վայրերի ադարակներում և այլուր։ Գրիգոր Մագիստրոսի վկայությամբ, առանձին շրջաններում Թոնդրակյան համայնքների մեջ էին ընդգրկվել հազարավոր մարդիկ։

Թոնդրակյան շարժմանը մասնակցած երկրորդ տարրը կազմել է քաղաքային աղքատ բնակչությունը։ Այդ մասին է վկայում թեկուզ այն, որ Թոնդրակյան համայնքներ են կազմակերպվել քաղաքատիպ վայրերում, օրինակ, Խնուսում։ Վերոհիշյալ երկու խավերը կազմել են Թոնդրակյան շարժման կորիզը, հիմնական տարրը։

Աղբյուրները վկայում են, որ Թոնդրակյան շարժմանը հարել են նաև ստորին հոգևորականները և մանր ազնվականները։ Հոգևորականության ցածր խավը իր վրա էր կրում եկեղեցական գործերի ծանրությունը, բայց չնչին բաժին էր ստանում եկեղեցական հարուստ եկամուտներից։ Այդ պատճառով էլ գյուղացիական շարժումների ժամանակ այդ կարգի հոգևորականները մասնակցում էին շարժմանը և հաճախ դառնում շարժման ղեկավարներ ու դաստիարակներ։ Մանանաղիի գավառի Թոնդրակյանների կազմակերպիչը, Թոնդրակյան դաղափարների քարոզողն ու տարածողը եղել է Կունծիկ անունով աբեղան, իսկ նրան այդ դաղափարները ուսուցանել է մի այլ աբեղա՝ Աղվանից աշխարհից։ Հարք գավառում կրոնական քարոզիչներն էին Թոնդրակյան դաղափարներ տարածում բնակչության մեջ։

Մանր ազնվականության առանձին տարրեր նույնպես մասնակցել են Թոնդրակյան շարժմանը, որովհետև խոշոր ֆեոդալները խլում էին նրանց իրավունքները, կրճատում նրանց կալվածքները, զրկում ինքնուրույնությունից։ Նրանք բարյացակամ չէին տրամադրված նաև վանքերի և բարձրաստիճան հոգևորականների նկատմամբ, քանի որ վերջիններս ընդարձակում էին իրենց կալվածքները նաև ի հաշիվ մանր ազնվականների ունեցվածքի։

Շարժմանը մասնակցած տարբեր խավերը միատեսակ ձգտումներ և նպատակներ չեն ունեցել։ Գյուղացիությունը և քաղաքային բնակչության ավելի ընչազուրկ տարրերը շահագրգռված էին ֆեոդալական շահագործման վերացման, գյուղացիներին ճորտությունից ազատելու և հողակտոր ձեռք բերելու գործում։ Հոգևորականության ցածր խավը ձգտում էր վերացնել եկեղեցու

ներսում եղած աստիճանականությունն ու արտոնությունները, որպեսզի ինքն էլ հավասար բաժին ստանար եկեղեցու եկամուտներից։ Մանր ազնվականությունն ուզում էր շարժումը օգտագործել իր դասային շահերը պաշտպանելու և խոշոր ֆեոդալների ոտնձգությունները սանձահարելու համար։ Սակայն այդ տարբեր շահերի մեջ կար մի ընդհանուր բան, որ միավորում էր նրանց։ Դա խոշոր ֆեոդալների դեմ մղվող պայքարի անհրաժեշտությունն էր։

Սոցիալական տարբեր խավերի մասնակցությունը թոնդրակյան շարժմանը ավելի լայն հասարակական-քաղաքական բնույթ տվեց նրան։

4. ԹՈՆԴՐԱԿՑԱՆՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Շարժման նոսանքները. Սկզբնաղբյուրներում մանրամասն տեղեկություններ չկան թոնդրակյան շարժման քարոզած գաղափարների և կատարած գործերի մասին. պատմագիրները դիտակցաբար խուսափել են դրանից։ Արիստակես Լաստիվերցին գրում է, թե նրանց կատարած գործերը «անպատշաճ համարեցաք ընդ գրով արկանել», որովհետև «ոչ ամենայն ոք պնդակազմ է լսելեօք» և նրանց կատարած գործերի ու քարոզած գաղափարների հիշատակումը «ի խտղտանս ձգէ զլսօղսն, և ի կատարումն գործոյն իսկ ածէ. վասն այսորիկ և ես խոյս ետու յայնմանէ»։ Նույնը խոստովանում է նաև Գրիգոր Նարեկացին, հայտարարելով թե՝ «ամենևին նուազս ի յոքոնց և սակաւ ի բազմաց գծագրեցի»։ Սակայն եղած տեղեկությունները վկայում են, որ տարբեր սոցիալական խավերի մասնակցությունը թոնդրակյան շարժմանը առաջ է բերել տարբեր ուղղություններ, որոնք հիմնականում երկուսն են։ Գրիգոր Մագիստրոսի խոստովանությամբ՝ թոնդրակյանների մի մասը, «որք ի չարն կատարելագոյնք» էին և կարող էին ընդունել «զմահացու դեղն», քարոզում էին «իբրև անյուսութիւն ամենևին և անաստուածութեան իբրու զՆպիկուրեանցն», իսկ մյուսները քարոզում էին «քրիստոնէական աւանդութեամբ», բայց այն ևս «այլանդակ ի մն կարգաց և կրօնից քրիստոնէից»։

Ուղղություններից առաջինը քարոզել է ավելի առաջադիմական գաղափարներ և գործել է ավելի հետևողական ու վճռական կերպով, ինչպես, օրինակ, Մանանադիի թոնդրակյանները։ Այս ուղղությունն արտահայտել է շարժմանը մասնակցած աշխատա-

վորական տարրերի՝ գյուղացիների և քաղաքի ընչազուրկ մարդկանց ձգտումներն ու նպատակները և հանդիսացել է շարժման առավել հեղափոխական թևու երկրորդ ուղղությունը քարոզել է ավելի չափավոր գաղափարներ, առաջադրել է ոչ արմատական պահանջներ. այդ բանը երևում է Հարքի թոնդրակյանների գործունեությունից։ Այս ուղղությունը արտահայտել է շարժմանը մասնակցած ոչ աշխատավորական տարրերի ձգտումները և հանդիսացել է այդ շարժման չափավոր, ռեֆորմիստական թևը։

Հոգու անմահության և հանդերձյալ կյանքի ժխտումը

Թոնդրակյանների գաղափարախոսության անկյունաքարն են կազմել Քրիստոսի աստվածայնության, սուրբ հոգու գոյության, հոգու անմահության և հանդերձյալ աշխարհի ժխտումը և այս աշխարհի կյանքը որպես մարդու համար միակ ռեալ կյանքի ճանաչումը։ Գրիգոր Մագիստրոսը և Գրիգոր Նարեկացին հաղորդում են, որ թոնդրակյանները Քրիստոսին աստվածային կարողություն և աստվածային հատկություններ չէին վերագրում, այլ համարում էին մահկանացու։ Նրանք մերժում էին նաև հոգու անմահության հասկացողությունը։ Այս մասին ամենից որոշակի գրում է Ներսես Շնորհալին։ Թոնդրակյանները, նրա վկայությամբ, ասել են՝ թե «էակաան բնութիւն բանին մեռաւ ընդ մարմնոյն ի վերայ խաչին» կամ՝ «անստեղծականի բնութեանն Աստուծոյ զչարչարանս գնէք, և զայս ասելով՝ զնոյն իսկ զՀօրն զաստուածութիւն և զՍրբոյ Հոգւոյն՝ ասէք ընդունակաան դոլ մահու»։

Հոգու անմահության գաղափարի ժխտումը թոնդրակյաններին բերել է այն համոզման, որ զորություն չունի նաև սուրբ հոգին։ Այս բոլորը ի վերջո հանգեցրել է այն բանին, որ նրանք մերժել են հանդերձյալ կյանքը, ինչպես էպիկուրյաններն ու սադուկեցիներն էին մերժում, և պաշտպանել այն համոզմունքը, որ մարդն ունի մի կյանք, այս աշխարհում անցկացրած կյանքը։ Հոգու անմահության, Քրիստոսի աստվածայնության և հանդերձյալ կյանքի մասին թոնդրակյանների ունեցած հասկացողությունը բոլորովին տարբերվում է այդ նույն հարցերի մասին իրենց նախորդների՝ պավլիկյանների պաշտպանած տեսակետներից։ Այդ հարցերում թոնդրակյանները մի քայլ առաջ էին գնացել և հակվում էին դեպի աշխարհը ճանաչելու մատերիալիստական ուղին։

Եկեղեցու և հոգևորականության ժխտումը

Թոնդրակյաններն ավելորդ են համարել եկեղեցին, նրա արարողությունները, հոգևորականությունը։ Շարժման առավել արմատական ուղղությունը անվերապահորեն ժխտել է այդ ինստիտուտի անհրաժեշտությունը։ Գրիգոր Նարեկացին վկայում է, որ թոնդրակյանները ժխտել են հոգևորականների ձեռնադրումը, հաղորդությունը, աղոթքը, մկրտությունը, եկեղեցական պսակը և այլ արարողություններ։ Արիստակես Լաստիվերցին նշում է, որ նրանք «զեկեղեցին և զեկեղեցւոյ կարգաւորութիւն բնաւ ոչ ընդունէին», իսկ Գրիգոր Մագիստրոսը, հաստատելով վերոհիշյալ տեղեկությունները, ավելացնում է, որ թոնդրակյանները եկեղեցական բոլոր արարողությունները համարել են ավելորդ և ստեղծված «վասն խաբեղոյ ժողովրդեանն»։

Եկեղեցու և հոգևորականության ժխտումը բխում էր հոգու անմահության և հանդերձյալ կյանքի մերժումից, ինչպես և այն բանից, որ հոգևորականությունը հանդիսանում էր աշխատավոր բնակչությանը շահագործող կազմակերպություն։ Նրա վերացումը կազատեր աշխատավորությանը մի շահագործող դասից։ Ժխտելով եկեղեցին և հոգևորականությունը, թոնդրակյանները մերժում էին նաև եկեղեցու և եկեղեցական օրդանների հաստատած կարգն ու կանոնը, նրանց ընդունած օրենքները։ Գրիգոր Մագիստրոսը հաղորդում է, թե թոնդրակյանները ոչ մի օրենք չեն ճանաչել, «ոչ յաստուածայնոց և ոչ յեղելոց» և «ծաղր առնեն զհին և զնոր օրենս»։ Այս վկայությունից երևում է, որ նրանք մերժել են թե կրոնական և թե աշխարհիկ այն օրենքները, որոնք պաշտպանել են իշխող դասակարգի շահերը։ Սխալ է հայ պատմագիտության մեջ եղած այն կարծիքը, թե թոնդրակյանները մերժել են ամեն մի օրենք և նույնիսկ իշխանություն, պետություն։ Նրանք ժխտել են ֆեոդալական դասակարգի ու նրա սպասարկու եկեղեցու հաստատած կարգն ու կանոնը, իսկ իրենց համայնքներում հաստատել են իրենց օրենքները, իրենց կարգն ու կանոնը։ Եկեղեցական արարողությունների, կրոնական հաստատությունների և մի շարք հասկացողությունների ժխտումը մարդուն դուրս էր բերում եկեղեցու ազդեցությունից, ներշնչում էր նրան համարձակություն իր գործողությունների մեջ, վստահություն իր ուժերի նկատմամբ։

Թոնդրակյան շարժման մասնակիցները վերոհիշյալ դաղափարներին միատեսակ մոտեցում չեն ունեցել։ Ձափավոր ուղղությանը հարողները եկեղեցին ու եկեղեցական արարողությունները

ներն ու հոգևորականությանը ամբողջությամբ չեն ժխտել նրանք կողմնակից են եղել եկեղեցու բարեփոխմանը, մի շարք ավելորդությունների վերացմանը, բայց անհրաժեշտ են համարել հոգևորականների մի մասին պահպանել, ընդունել են մեղքը՝ որպես կրոնական հանցագործություն և դրա հետ միասին՝ աղոթքի ու պատարագի անհրաժեշտությունը։ Այս երևում է Հարք գավառի թոնդրակյանների գործելակերպից։ Դրան հակառակ՝ թոնդրակյան շարժման մյուս թևը՝ ավելի արմատական ուղղությունը ամբողջությամբ ժխտել է կրոնական այդ արարողություններն ու հաստատությունները։

Իրավահավասարության գաղափարը

Թոնդրակյաններն ունեցել են իրենց ուրույն հասկացողությունները մարդկանց փոխհարաբերությունների և հասարակական կյանքի առանձին հարցերի մասին։ Նրանք քարոզել են մարդկանց իրավահավասարության գաղափարը և պաշտպանել ունեցվածքային հավասարության սկզբունքը։ Նրանք իրենց կազմակերպած համայնքներում վերացնում էին կրոնական կոչումները, աստիճանները, դասային արտոնությունները և համայնքի բոլոր անդամներին համարում էին հավասար իրավունքներ ունեցող անձնավորություններ։ Գրիգոր Մագիստրոսի աշխատությունով, թոնդրակյաններն իրենց գործերը վարում էին «ամենայիսկոպոսուն և անքահանայս», իսկ «Բանալի ճշմարտութեան» մեջ ասված է, թե «քահանայ, եպիսկոպոս, վարդապետ, առաքեալ, առաջնորդ և ընտրեալ ոչ են մեծ կամ փոքր ի վերայ միմեանց, այլ են հորթ հաւասարս»։

Մարդկանց իրավահավասարության սկզբունքը թոնդրակյաններն ընդունում էին նաև կանանց նկատմամբ։ Գրիգոր Նարեկացին վկայում է, որ նրանք մերժում էին եկեղեցական պստիր և քարոզում էին ազատ ամուսնություն՝ սիրո սկզբունքի վրա, այսինքն ամուսնության հարցում կնոջը վերապահել են նույնպիսի ազատ ընտրության իրավունք, ինչպիսին կարող էր ունենալ տղամարդը։ Գրիգոր Մագիստրոսը հաղորդում է, որ թոնդրակյանները խտրություն չեն դնում տղամարդկանց ու կանանց միջև և այդ կապակցությամբ մեղադրում է նրանց այն բանի համար, որ նրանք չեն պահպանում կամ, ինչպես ինքն է ասում, չեն պատվում ո՛չ ասվածային և ո՛չ էլ եղած այլ օրենքները։

Մարդկանց իրավահավասարության գաղափարի պաշտպանությունը թոնդրակյանների մոտ առնչվել է նաև ունեցվածքի հավասարության հասկացողության հետ։ Այդպիսի գաղափարի

քարոզումը հավանաբար վերաբերել է առաջին հերթին անշարժ գույքին, հատկապես հողային ունեցվածքին, քանի որ շարժման հիմնական սարքը գյուղացիությունն էր, որ ձգտում էր վերջ տալ ֆեոդալական հողատիրությանը։

Թոնդրակյան համայնքների բնույթը

Թոնդրակյաններն իրենց գաղափարների իրականացման նպատակով կազմակերպում էին համայնքներ։ Այդ համայնքները առերևույթ հիշեցնում էին քրիստոնեական վաղ շրջանի համայնքները, որտեղ չեն եղել հոգևորական աստիճաններ, եկեղեցական բարդ և շատերի համար անհասկանալի ծիսակատարություններ, եկեղեցական հիերարխիա, և համայնքի բոլոր անդամները միատեսակ պարտավորություններ ու հավասար իրավունքներ են ունեցել։ Այդ դարձ էր դեպի վաղ շրջանի քրիստոնեական համայնքը, որ իր բնույթով առաջադիմական չէր և հանդիսանում էր շարժման կրոնական քողը։ Սակայն այդպիսի դաղափարի քարոզումը թոնդրակյանների ձեռքին մի զենք էր պայքարելու շփացած հոգևորականության և եկեղեցական ավելորդ ծիսակատարությունների դեմ։ Դա կազմակերպական այն ձևն էր, որի միջոցով թոնդրակյանները համալրում էին իրենց շարքերը և նախապատրաստում պայքարը ֆեոդալական կարգերի դեմ։

Միջնադարյան գյուղացիական շարժումների համար կրոնական գունավորումը պատմականորեն անխուսափելի է եղել. այդ բացատրվում է առհասարակ կրոնի և մասնավորապես քրիստոնեական եկեղեցու այն խոշոր ազդեցությամբ և խաղացած դերով, որ նա ձեռք էր բերել հասարակական կյանքի համարյա բոլոր բնագավառներում։ Ինչպես շատ երկրներում, այնպես էլ միջնադարյան Հայաստանում եկեղեցին խոշորագույն կալվածատեր էր. նա իր ձեռքն էր վերցրել մտավոր ամբողջ կյանքը՝ դպրոցները, դիտությունը, իրավաբանությունն ու օրենսդրությունը և այդ բոլորը ենթարկել էր աստվածաբանությանը։ Եվ այդ ամենը օգտագործվում էր ֆեոդալական կարգերի սրբագործման համար։

Կրոնի և կրոնական հաստատությունների այդպիսի մեծ ազդեցության պայմաններում միջնադարյան գյուղացիական շարժումները, այդ թվում և թոնդրակյան շարժումը, իրենց մղած պայքարում նույնպես պետք է օգտագործեին կրոնի ազդեցությունը և իրենց կազմակերպություններին ու գործունեությանը տային կրոնական գունավորում՝ ուղղելով այն առաջին հերթին պաշտոնական եկեղեցու դեմ։ Այդ անխուսափելի էր և անհրաժեշտ, որովհետև, ինչպես Էնգելսն է ասում, «Տիրող հասարակական

հարաբերությունների խնդիրը շոշափելու համար անհրաժեշտ էր հեռացնել սրբության այն շղարշը, որով սքողված էին այդ հարաբերությունները» և այդ պատճառով էլ «... յուրաքանչյուր պայքար ֆեոդալիզմի դեմ այն ժամանակ պետք է կրոնական զգեստավորում ընդուներ, ուղղվեր առաջին հերթին եկեղեցու դեմ»։

5. ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄՆՇՈՒՄԸ

Շարժման նոր վերելքը

Մանանագիի և Հարք գավառների թոնդրակյան համայնքների ելույթներից հետո թեև շարժումը XI դ. առաջին քառորդում վայրէջք ապրեց, սակայն նույն դարի 20-ական թվականներից սկսած նոր ծավալ և թափ ստացավ։ Հայաստանից հեռացած Հարքի թոնդրակյանների ղեկավար Հակոբը վերադարձավ հայրենիք և վերսկսեց իր գործունեությունը Ելաթի լեռներում ու անտառներում ապաստանած գյուղացիների մեջ։ Վերականգնվեցին Մանանագիի գավառի Կաշե և այլ գյուղերի ջախջախված թոնդրակյան համայնքները։ Ասպարեզ ելան և ակտիվ գործունեություն ծավալեցին թոնդրակյան շարժման նոր կենտրոններ Թուլայլ ավանը և Խնուս քաղաքը։ Թոնդրակյանների գործունեությունը աշխուժացավ Շիրակում։ Շարժումը ծավալվեց և տարածվեց նաև Հայաստանի այլ գավառներում։

Թոնդրակյան շարժման ծավալմանը զուգընթաց ավելի որոշակի դարձան նրանց ձգտումներն ու քարոզած գաղափարները, որոնք, լատիվերցու արտահայտությամբ, ժողովրդի մեջ տարածվում էին այնպես, ինչպես քաղցկեղն է տարածվում հիվանդի մարմնի մեջ։ Շարժման նոր, հուժկու վերելքի մասին Գրիգոր Մագիստրոսը ահաբեկված տոնով գրել է, թե թոնդրակյանները «մրրկնալ» և «պղտորնալ» վտակների նման ողողել էին երկիրը Սմբատ Զարեհավանցու գաղափարներով։

Թոնդրակյան համայնքների ցրումը

Գյուղացիների և աշխատավորական մյուս խավերի ակտիվ գործունեությունը, թոնդրակյան շարժման համեմատաբար լայն տարածումը երկրի մի շարք նահանգներում անհանգստություն ու վախ են առաջ բերել շահագործող դասակարգի մեջ։ Հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները միացած բյուզանդական իշխանությունների հետ, որոնց տիրապետության տակ էր գտնվում այդ ժամանակ Հայաստանի մեծագույն մասը, XI դարի 50-ական թվականների առաջին տարիներին ընդհանուր դրոհ կազմակերպեցին

Թոնդրակյանների դեմ։ Այդ գործի ղեկին անցավ հայ խոշոր ֆեոդալ և ժամանակի մտավորականության մեջ մեծ հեղինակություն ունեցող Գրիգոր Մագիստրոսը։ Նա 1049 թ. Բասենի ճակատամարտից հետո, երբ սելջուկ-Թուրքերը շուրջ հինգ տարի դադարեցին Հայաստանի վրա արշավելուց, իր տրամադրության տակ եղած ղորքերը գործադրեց Թոնդրակյանների դեմ՝ նրանց կենտրոններն ու համայնքները ոչնչացնելու համար։

Նրա ջոկատները հարձակվեցին խնուսի վրա։ Դրանից հետո նրանք մտան Մանանաղիի գավառը, քարուքանդ արեցին Թուլայլ և Կաշե ավանները և Թոնդրակյան կազմակերպությունները ցրեցին։ Այդ ջոկատները ավելի դաժան դատաստան տեսան Թոնդրակյան շարժման գլխավոր կենտրոնի՝ Թոնդրակ գյուղի հետ, որը հիմնահատակ կործանվեց։ Այդ բոլորի մասին ինքը՝ Մագիստրոսն է տեղեկություններ հաղորդում, հայտարարելով, թե «հրամայեցաք տապալել զհիմունսն հարկացն և հրձիգ առնել և զինքեանս հանել ի սահմանաց մերոց»։

Շարժման թուլացումը ու անկումը

Գրիգոր Մագիստրոսի ջոկատները թեև ծանր հարված հասցրին Թոնդրակյան շարժմանը, բայց չկարողացան նրանց բոլոր կենտրոնները ի հայտ բերել և ոչնչացնել։

Այնուամենայնիվ Թոնդրակյանների դեմ կիրառված այդ հալածանքներից հետո Հայաստանում նրանց շարժումն այլևս նոր վերելք չապրեց, այն թուլացավ և գնաց դեպի անկում։ Սելջուկ-Թուրքերի և մոնղոլական տիրապետության տարիներին քայքայվեց երկրի տնտեսությունը, անկում ապրեցին քաղաքները, ուժեղացավ տնտեսության փակ բնույթը, և ետ մղվեցին սոցիալ-տնտեսական հարաբերությունները։ Այդ բոլորը առաջ բերեց հայ ժողովրդի մասսայական արտագաղթ իր բուն հայրենիքից։ Այդպիսի իրադրությունը այլևս անհրաժեշտ պայմաններ չէր ընձեռում Թոնդրակյան շարժման համար, և այդ է պատճառը, որ Թոնդրակյանները հեռացան ասպարեզից ու տեղի տվեցին դասակարգային պայքարի այլ ձևերի։

Թոնդրակյան շարժման նշանակությունը

Թոնդրակյան շարժման գնահատման հարցում հայ պատմագիտական գրականության մեջ կան տարբեր մոտեցումներ։ Բուրժուա-կղերական շրջաններին պատկանող որոշ պատմագետներ դեռևս XIX դ. վերջերից այդ շարժումը ներկայացրել են որպես լոկ կրոնական, հասարակական արժեքից զուրկ և լուսավոր շող չունեցող մի շարժում՝ այն էլ դրսից ներմուծված

հայ իրականության մեջ։ Նրանք գտնում են, որ Թոնդրակյանները եղել են «հին աշխարհի ճշմարիտ ոչնչականներ», այսինքն՝ նիհիլիստներ և նրանց քարոզած գաղափարները չեն եղել հայ մտքի «արտաբերություն»։

Պատմագետների և բանասերների մի այլ խումբ թեև առաջինների նման շարժման մեջ չի տեսնում դասակարգային պայքար, սոցիալ-տնտեսական բովանդակություն, բայց նշում է նրա առաջադիմական էությունը հայ հասարակական մտքի զարգացման համար և այն գնահատում է որպես հայ հասարակական կյանքի կարևոր երևույթ։

Սովետահայ պատմագիտությունն ու բանասիրությունը ցույց տվեցին, թե որքան անհիմն է Թոնդրակյան շարժմանը տրված կղերա-բուրժուական պատմագետների գնահատականը, վեր հանեցին այդ շարժման կարևոր նշանակությունը և դերը ոչ միայն հասարակական մտքի պատմության, այլև միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի ու դրա հետ կապված դասակարգային պայքարի համար։ Իրոք, Թոնդրակյան շարժումը, առաջանալով IX—XI դդ. որպես Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի հետևանք, հանդիսացել է հայ աշխատավոր բնակչության կողմից ֆեոդալական կարգերի դեմ ուղղված պայքարի ձևերից մեկը։ Այդ շարժումը հաստատում է Հայաստանում IX—XI դդ. ծավալված դասակարգային պայքարի սուր բնույթը և ժխտում կղերա-բուրժուական պատմագետների այն պնդումը, թե հայ իրականության մեջ միջին դարերում դասակարգային պայքար գոյություն չի ունեցել։ Թոնդրակյան շարժումը տոգորված է եղել իր ժամանակի առաջադիմական գաղափարներով և գլխավորել է ֆեոդալական կարգերի դեմ աշխատավոր բնակչության մղած պայքարը։ Այն դրսևորվել է որպես միջնադարյան Հայաստանի հասարակական կյանքի ամենապրոգրեսիվ և հեղափոխական երևույթ։

ԳԼՈՒԽ XXIII

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵԼՋՈՒԿ-ԹՈՒՐՔԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

Սելջուկյան առաջին արշավանքները և Բասենի ճակատամարտը

Սելջուկ-Թուրքական ցեղերը մինչև XI դ. սկիզբն ապրում էին Միջին Ասիայում։ Նրանք, լինելով գերազանցապես խաշնարած և քոչվորական կյանք վարող ցեղեր, նոր արոտավայրեր գտնելու համար հաճախ տեղից տեղ էին փոխադրվում։ Նրանց ցեղապետներ Չակիրը և Տուղրիլ բեկը նույն դարի 30-ական թվականներին իրենց հնթարկեցին ամբողջ Պարսկաստանը և հիմք դրեցին սելջուկյան մեծ պետությանը։ Դրանից հետո սելջուկները արշավանքներ կազմակերպեցին դեպի Միջագետք ու Անդրկովկաս։ Այդ արշավանքների ժամանակ էլ մտան Հայաստան։ Հայաստանի հյուսիսում և հյուսիս-արևելքում գտնվող իրենց դոյությունը պահպանած հայկական մանր թագավորությունները չկարողացան դիմադրել սելջուկ-թուրքերի արշավանքներին, իսկ Բյուզանդական կայսրությունը իր տիրապետության տակ եղած հայկական հողերից տեղահան էր արել և կայսրության այլ շրջաններ քշել հայկական ռազմական ուժերը։ Երկիրն անպաշտպան էր մնացել սելջուկյան ասպատակող հորդաներից։

1048 թվականին սելջուկ-թուրքերը, Գթլմուշի և Իբրահիմ Յանալիի գլխավորությամբ, սկսեցին իրենց առաջին արշավանքը դեպի Հայաստան։ Նրանք Ատրպատականից Խոյի և Սալմաստի վրայով մտան Հայաստան և, ասպատակելով ու կողոպտելով իրենց ճանապարհին ընկած շրջանները, անցան Բերկրի և այնտեղից էլ Վանա լճի հյուսիսային ափերով շարժվեցին դեպի Մանազկերտի դաշտ։ Այնտեղ նրանք բաժանվեցին մի քանի խմբերի,

շարժվեցին դեպի Բասեն, Կարին, Տայք, Սպեր, Արշարունիք և Տարոն։ Սելջուկ-Թուրքերը բազմաթիվ ավաններ ու գյուղեր ավերեցին, շատ մարդկանց սրի ճարակ դարձրին և հարուստ ավարով ու բազմաքանակ գերիներով վերադարձան Պարսկաստան։ Հաջորդ տարի՝ 1049 թ. սեպտեմբերին նրանք նույն զորավարների գլխավորությամբ և նույն ճանապարհով երկրորդ անգամ արշավեցին դեպի Հայաստան։ Սելջուկները Մանանագիի գավառի Սմբատաբերդ լեռան մոտ, ուր ապաստանել էր ժողովուրդը, կոտորեցին տասնյակ հազարավոր մարդկանց՝ չխնայելով ծերերին, կանանց և երեխաներին։ Նրանք գրավեցին ու հիմնահատակ կործանեցին հռչակավոր Արծն քաղաքը, կողոպտեցին նրա հարստությունը և սրի քաշեցին բազմահազար բնակչությանը։ Արիստակես Լաստիվերցին Արծնի մասին պատմում է՝ «Մտին իբրև հնձողք ոչոյ ագարակի, և սուր առն ի վերայ եդեալ հնձեցին մինչև անչատեցաւ ի կենդանւոյ քաղաքս»։ Նրանք հանկարծակի հարձակվեցին նաև Կարս քաղաքի վրա և մեծ կոտորածի ու կողոպուտի մատնեցին բնակչությանը։ Այդպես վարվեցին նաև Հայաստանի այլ քաղաքների ու գյուղերի հետ։

Բյուզանդական կայսրությունը փորձեց կասեցնել թշնամու առաջխաղացումը։ Այդ նպատակով, նույն 1049 թ. Անիի կառավարիչ Կամենասը, Վասպուրականի կառավարիչ Ահարոն Բուլղարը և հյուսիսային Միջագետքի կառավարիչ Գրիգոր Մագիստրոսը, վրաց Լիպարիտ իշխանի հետ միասին, իրենց զորքերով Բասենի դաշտում ճակատամարտ տվեցին սելջուկ-թուրքերին։ Սակայն ճակատամարտի դաշտից Ահարոն Բուլղարի ջոկատների դուրս գալու պատճառով բյուզանդական զորքերը պարտվեցին և ցաք ու ցրիվ եղան, իսկ սելջուկները մեծ ռազմավարով նորից վերադարձան Պարսկաստան։

Բյուզանդիայի նոր քաղաքականությունը Հայաստանում

Կայսրությունը անպաշտպան էր թողել Հայաստանը։ Դա հայերի մեջ առաջ էր բերել տխրություն և թշնամանք դեպի Բյուզանդիան։ 1049 թվականից սկսած Բյուզանդիան որոշ չափով թեթևացրեց հարկերը, ապա երկրի առանձին մասերում նշանակեց հայ կառավարիչներ և հայ խոշոր ֆեոդալներից ոմանց թույլ տվեց վերադառնալ Հայաստան։ Այնուհետև սկսեց ավելի համբերատար քաղաքականություն վարել նաև կրոնա-դավանաբանական հարցերում։

Բյուզանդական կայսրության այդ նոր քաղաքականության նպատակն էր՝ մեղմացնել հայերի թշնամանքը իր նկատմամբ և

ստանալ նրանց օժանդակությունը սելջուկ-թուրքերի դեմ պայքարելու, նրանց արշավանքները կասեցնելու համար։

Սելջուկյան երրորդ արշավանքը և Մանազկերտի պաշտպանությունը

Սելջուկ-թուրքերի արշավանքները վերսկսվեցին 1054 թ.։ Այս անգամ արշավանքը գլխավորում էր անձամբ Տուղրիլ բեկը՝ սելջուկյան պետության ղեկավարը։ Սելջուկյան զորքերը նախորդ արշավանքների ճանապարհներով մտան Հայաստան։ Բայց այս անգամ նրանք որոշ տեղերում հանդիպեցին լուրջ դիմադրության։ Տուղրիլը ձգտում էր գրավել Կարին քաղաքը, սակայն հանդիպեց դիմադրության և ետ քաշվեց։ Այնուհետև փորձեց հարձակվել Կարս քաղաքի վրա։ Բայց Կարսի թագավոր Գագիկ Աբասյանի զորքերը արժանի հարված հասցրին սելջուկներին և ետ շպրտեցին նրանց։

Կարսի վրա կատարված հարձակման ժամանակ Թաթուլ անունով մի հայ զինվորական մահացու հարվածով վիրավորել էր Տուղրիլի բարեկամ սելջուկ մի երիտասարդի, բայց ինքն էլ դերի էր ընկել։ Տուղրիլը իր մոտ կանչելով Թաթուլին, նրան ասում է, որ եթե սելջուկ երիտասարդը մեռնի, ապա իրեն՝ Թաթուլին կգլխատեն, իսկ եթե ապրի՝ ազատ կարձակեն։ Թաթուլը համարձակորեն պատասխանում է, որ եթե հարվածը իմն է, ապա երիտասարդը պիտի մեռնի։ Հայ մարտիկի այդ վճռական պատասխանը իր հայրենիքի պաշտպանության համար ոտքի ելած մարդու անձնազոհության և նվիրվածության ապացույց էր։

Տուղրիլի զորքերը ասպատակած շրջաններից ետ վերադառնալիս պաշարեցին Մանազկերտը։ Քաղաքի բնակչությունը նախորդ ամրացրել էր պարիսպները, մեծ քանակությամբ սննդամթերք ամբարել և պատրաստ էր պաշտպանվելու իր քաղաքը։ Տուղրիլը քաղաքի դեմ հանեց բաբաններ, հրամայեց անցք փորել գետնի տակով և ներխուժել քաղաք։ Սակայն այդ բոլոր ձեռնարկումներն էլ խափանվեցին քաղաքացիների հերոսական ջանքերի շնորհիվ։

Արիստակես Լաստիվերցին պատմում է, որ սելջուկները քաղաքի պարսպին մոտեցրին հարվածներից պաշտպանված մի հսկա բաբան, որի նեռած քարերից մեկը արդեն փլվածք էր առաջացրել պարսպում։ Քաղաքի բնակիչներից մեկը, որին պատմագիրները «փռանգ» են անվանել, հանձն է առնում ոչնչացնել թշնամու այդ ահավոր մեքենան։ Նա մարտի ընդմիջման պահին վերցնում է նավթով լցված շշեր և ձևացնելով, թե բանակցության է գնում, ձին քշում է դեպի բաբանը. մոտենալով մեքենային,

լցնում է նավթը նրա վրա ու հրկիզում։ Մինչև սելջուկները գլխի են ընկնում, փռանգը ասպանդակում է ձին և սլանում դեպի քաղաք։ Լաստիվերցին վկայում է, որ պաշտպանվողներին օժանդակել է թշնամու բանակում եղած և Տուղրիլի նախատեսած գործողություններին իրազեկ մի անձնավորություն։ Նա հաճախ նամակով, որ կապած էր նետին և արձակում պարսպից ներս, տեղեկացրել է մանազկերտցիներին, թե այդ կամ հաջորդ օրը սելջուկները որ ուղղությամբ ինչ գործողություններ են ձեռնարկելու։ Մանազկերտցիների հերոսական և համառ դիմադրությունը ընկճում է սելջուկներին։ Նրանք, շուրջ մի ամիս քաղաքը պաշարելուց հետո, ամոթահար հեռանում են Մանազկերտից։

Սելջուկները Մանազկերտում կրած պարտության վրեժը լուծում են հայկական մյուս քաղաքներից և գյուղերից, ավերում են Արծկե, Բերկրի քաղաքներն ու այլ բնակավայրեր, և բազմաքանակ գերիներով հեռանում Հայաստանից։ Սելջուկ-թուրքերի արշավանքները, որ ավարառության և հետախուզական բնույթ էին կրում, ծանր հարված հասցրին Հայաստանին։ Արիստակես Լաստիվերցին այսպես է ավարտում իր խոսքը սելջուկ-թուրքերի շարագործությունների մասին. «... քաղաքներն ավերվեցին, տները հրկիզվեցին, ապարանքներն ու արքունաշեն սրահները մոխրակույտի վերածվեցին»։

Սելջուկ-թուրքերի կատարած ավերածությունները Հայաստանում առաջ բերեցին բնակչության մասսայական արտագաղթ և թուլացրին Հայաստանը՝ անպաշտպան դարձնելով սելջուկյան հետագա արշավանքների հանդեպ։

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Լոռու, Սյունիքի և Արարատյան դաշտի գրավումը

Սելջուկ-թուրքերը շուրջ տասը տարի դադարեցրին իրենց արշավանքները դեպի Հայաստան։ Սակայն ոչ Բյուզանդական կայսրությունը, ոչ էլ հայկական թագավորությունները այդ ժամանակամիջոցը չօգտագործեցին երկրի պաշտպանությունը ամրացնելու և սելջուկյան հետագա հարձակումները ետ մղելու համար։

Այդ արշավանքները վերսկսվեցին Տուղրիլ բեկի մահից հետո, երբ սելջուկյան պետության գլուխ էր անցել նրա եղբորորդին՝ Ալփ-Ասլանը (1063—1072)։ Սա 1064 թ. մեծ բանակով արշավեց Հայաստան։ Նրա զորքերը, խոկ զորքերի ետևից կրնկակոխ նա սելջուկ ցեղերը՝ իրենց անասունների հոտերով, նախ մտան Աղ-

վանք, ապա Կուր գետի հովտով անցան Արևելյան Վրաստան և այնտեղից Գուգարքի վրայով արշավեցին դեպի Հայաստան։ Ալփ-Ասլանի զորքերը առաջին հերթին գրավեցին Լոռին։ Այնտեղի հայկական թագավորությունը հպատակություն հայտնեց Ալփ-Ասլանին և պահպանեց իր գոյությունը։ Լոռուց թշնամու բանակը իջավ դեպի Շիրակ և պաշարեց Անին։ Սելջուկ-թուրքերը շուրջ մի շաբաթ իզուր փորձում էին գրավել քաղաքը։ Հույսերը կտրած, նրանք դադարեցնում են պաշարումը և պատրաստվում հեռանալու։ Այդ նույն ժամանակ բյուզանդական զորքերը թողնում են արտաքին պարսպի պաշտպանությունը և քաշվում միջնաբերդ։ Քաղաքի անզեն բնակչությունը բողոք է բարձրացնում բյուզանդական զորքերի դեմ։ Հակառակորդը, օգտվելով քաղաքում ստեղծված շփոթությունից, վերսկսում է հարձակումը և գրավում Անին։

Ալփ-Ասլանը Անին գրավելուց հետո, այն իր շրջակայքով հանձնեց Գանձակի Շեդադյան էմիր Փազլունին, որն իր զորքերով օգնում էր սելջուկ-թուրքերին, իսկ սա էլ Անիի կառավարիչ նշանակեց իր թոռ Մանուչին՝ Դվինի Աբուլվաբ էմիրի որդուն։

Սելջուկ-թուրքերը նույն թվականին գրավեցին նաև Արարատյան դաշտը և Սյունիքը։ Սյունյաց հայկական թագավորությունը, որի գլուխ այդ ժամանակ կանգնած էր Գրիգոր I-ը, դիմադրություն ցույց չտվեց՝ հայտնելով իր հնազանդությունը Ալփ-Ասլանին, և պահպանեց իր թագավորությունը։ Կարսի հայոց թագավոր Գագիկ Աբասյանը, իր երկիրը ասպատակությունից զերծ պահելու համար, նույնպես ընդունեց Ալփ-Ասլանի առաջարկությունը և հնազանդվեց նրան։

Այսպիսով, 1064 թ. արշավանքի ժամանակ սելջուկ-թուրքերին հաջողվեց նվաճել Հայաստանի հյուսիսային նահանգները՝ Լոռին, Սյունիքը, Արարատյան դաշտը և Հայաստանի հարևան երկրները՝ Աղվանքն ու Վրաստանի արևելյան շրջանները։ Ժամանակի ընթացքում աստիճանաբար այդ վայրերը ներհյուծեցին ու բնակություն հաստատեցին նաև սելջուկյան ցեղերը։

Մանազկերտի ճակատամարտը և ամբողջ Հայաստանի նվաճումը

Հայաստանի հյուսիսային մասերը գրավելուց հետո սելջուկ-թուրքերը 1070 թ. արշավեցին դեպի Հայաստանի հարավային և արևմտյան նահանգները, գրավեցին Բագրևանդը, իջան դեպի Վասպուրական, արշավեցին Մանազկերտի վրա, գրավեցին և քարուքանդ արեցին քաղաքը։

Այդ ժամանակ Բյուզանդիան մի մեծ բանակ ուղարկեց սելջուկների դեմ։ Սկզբնական շրջանում բյուզանդացիներին հաջողվեց նեղել սելջուկներին և նույնիսկ ետ վերցնել ավերված Մանազկերտ քաղաքը։ 1071 թվականին Մանազկերտի մոտ Դիոգենես IV կայսեր և Ալփ-Ասլանի զորքերի միջև տեղի ունեցավ ճակատամարտ։ Կռվի դաշտում բյուզանդական առանձին զորամասեր և հայկական չոկատները ցուցաբերեցին արիություն և անձնազոհություն, բայց բյուզանդական մի քանի զորավարներ, որոնք անբարյացակամ էին դեպի կայսրը, դավաճանաբար լքեցին մարտի դաշտը և այդպիսով նպաստեցին սելջուկների հաղթանակին։

Մանազկերտի ճակատամարտը վերջացավ բյուզանդացիների լիակատար պարտությամբ։ 1073—1074 թվականներին բյուզանդական մի այլ կայսր՝ Միքայել VII Դուկասը թեև փորձեց ետ մղել սելջուկ-թուրքերին, բայց նորից պարտություն կրեց և հարկադրված նոր հաշտություն կնքեց Ալփ-Ասլանի հաջորդ Մելիք-շահի (1072—1092) հետ, ճանաչեց նրա գերիշխանությունը ամբողջ Մերձավոր Արևելքի, ինչպես և Հայաստանի վրա։

Մելիք-շահի իշխանության առաջին տարիներին սելջուկյան արշավանքներն ավարտվեցին։ Այդ լայնածավալ պետության ներսում ստեղծվեց համեմատաբար խաղաղ դրություն։ Երկրի ամբողջ կառավարումը՝ տեղական վարչական պաշտոնները, դատավարությունը, հարկահավաքումը և այլն, անցան սելջուկների ձեռքը։ Միայն մի քանի դավառներում՝ Լոռիում, Սյունիքում և Հայաստանի հարավային լեռնային վայրերում, ուր հայ ֆեոդալները կարողացել էին պահպանել իրենց գոյությունը, քաղաքական-վարչական իշխանությունը դեռևս հայերի ձեռքին էր։ Սելջուկները բնակչության վրա մեծ հարկեր դրեցին, որոնք առանձնապես ծանր էին գյուղացիների համար։ Նրանց ճորտացման պրոցեսը կասեցվեց. գյուղացիները տեղափոխման իրավունք ստացան, որովհետև սելջուկները, վայրկյան անասնապահ ցեղեր լինելով, շահագրգռված չէին նրանց հողին ամրացնելու գործում, բայց գյուղացիների վիճակը ավելի ծանրացավ. նրանք կորցրին ունեցվածքի և անձի ապահովությունը։ Սելջուկները խլեցին հայ աշխարհիկ ֆեոդալների կալվածքները, նրանց դուրս քշեցին երկրից կամ ոչնչացրին, իսկ խլված հողերը հանձնեցին իրենց զինվորականներին ու պաշտոնյաներին։

Մելիք-շահից հետո սելջուկյան պետության ներսում սկիզբ առան խռովություններ և դահակալական կռիվներ։ Սելջուկ շատ պաշտոնյաներ ու ցեղապետներ, հաստատվելով նվաճված երկրը-

ներում, սկսեցին ծառանալ կենտրոնական իշխանության դեմ, հատկապես Մուհամեդ Տաբարիի (1104—1118) ժամանակ ու նրանից հետո սելջուկյան ընդարձակ պետությունը տրոհեցին բազմաթիվ մանր իշխանությունների։

Սելջուկյան պետության քայքայման պատճառներից մեկն էլ այն էր, որ նրա մեջ կային բազմաթիվ ժողովուրդներ, ցեղախմբեր և ցեղեր, որոնք գտնվում էին զարգացման տարբեր աստիճանի վրա և միավորված էին մի պետության մեջ ոչ թե տնտեսական ու կուլտուրական կապերի անհրաժեշտությամբ, շահերի ընդհանրությամբ, այլ բռնի ուժի, հաջող ռազմական գործողությունների միջոցով։ Եվ բավական էր, որ այդ ուժը մի պահ թուլանար, որպեսզի պետությունը փլվեր նույնպիսի արագությամբ, ինչպիսի արագությամբ ստեղծվել էր։

Հայկական իշխանությունների վերականգնումը

Սելջուկյան դերիշխանության թուլացման հետևանքով հայկական թագավորությունները Լոռիում ու Սյունիքում իրենց անկախ հայտարարեցին։

Լոռիի թագավորությունն այդ ժամանակ ընդգրկում էր Գուգարք նահանգի արևելյան մասերը (Զորագետ-Տաշիրը), սրանցից հյուսիս ընկած շրջանները, Ուտիքի արևմտյան մասերը և այլ գավառներ։ Այդտեղ իշխանության գլուխ կանգնած էին Կյուրիկեի որդիները՝ Դավիթն ու Աբասը։

Ընդարձակ տերիտորիա էր ընդգրկում նաև Սյունյաց կամ Կապանի թագավորությունը։ Նա իր սահմաններում պարփակել էր այն շրջանները, որոնք հիմա հայտնի են Զանգեզուր անունով։ Մելիք-շահի ժամանակ Սյունիքում թագավորում էր Սենեքերիմը (Գրիգորի կնոջ եղբայրը)։ Սենեքերիմին հաջորդում է նրա որդին՝ Գրիգոր II-ը, որը և իր թագավորությունը հայտարարում է անկախ։

Բացի հայկական հիշյալ երկու թագավորությունից, XI դ. վերջերին և XII-ի սկզբներին Հայաստանի հյուսիս-արևելյան և հարավային լեռնային վայրերում իրենց գոյությունը պահպանում էին և ինքնավար կյանք էին վարում առանձին հայկական ֆեոդալական իշխանություններ։ Օրինակ, պատմական աղբյուրներում հիշատակություն կա Արցախ նահանգի Խաչենի իշխանության, Ռշտունիքում՝ Ամյուկ բերդի շրջակայքում և Աղթամար կղզում ապավինած Արծրունիների մնացորդների, Սասունում, Մոկաց լեռնային վայրերում և այլ տեղերի իշխանությունների մասին։ Այդ բոլորի մեջ աչքի էր ընկնում Սասնո իշխանությունը, որի

գլուխ էին կանգնած՝ սկզբում Թոռնիկ իշխանը, իսկ հետո նրա որդիները. Զորավանքը և Վասակը։ Թոռնիկի իշխանությունը, Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, կարող էր ռազմի դաշտ դուրս բերել մի քանի տասնյակ հազար հետևակ և հեծյալ զորք։

Հայկական վերոհիշյալ իշխանությունները բաժան-բաժան և թույլ լինելու հետևանքով ի վիճակի չեղան Հայաստանի կյանքում լուրջ քաղաքական դեր խաղալ և ժամանակի ընթացքում կուլ գնացին շրջակայքի ավելի ուժեղ սելջուկյան էմիրություններին։

Էմիրությունների առաջացումը Հայաստանում

Հայաստանում առաջացան նաև սելջուկթուրքական և այլ օտար իշխանություններ, որոնք մեկ ընդհանուր անունով կոչվում էին էմիրություններ։ Դրանցից մեկը Նեղադյան էմիրությունն էր, որ տարածվում էր Արարատյան դաշտում և Շիրակում՝ կենտրոն ունենալով Դվինն ու Անին։ Այս էմիրության հիմնադիրն էր Գանձակի էմիր Փադլունը, որը ծագում էր քրդական մի ցեղից։ XI դարի առաջին կեսին, Հովհաննես-Սմբատի օրոք, նա գրավել էր Դվինը և հանձնել իր որդի Աբուլսվարին, որն ամուսնացել էր Բագրատունի թագավոր Աշոտ IV-ի դստեր հետ։

Մյուս խոշոր էմիրությունը Շահարմենների էմիրությունն էր։ Այս իշխանությունը կազմակերպվեց XII դ. առաջին երկու տասնամյակների ընթացքում. նրա գլուխ անցավ Սուքման ալ-Կուտբի անունով մի անձնավորություն։ Այս էմիրության մեջ էին մտնում Մանազկերտի, Խլաթի, Տարոնի, Խնուսի, Բագրևանդի գավառները և Բարձր Հայքի, Վասպուրականի մի շարք շրջաններ։ Նրա կենտրոններն էին Մանազկերտը և Խլաթ քաղաքները։ Հայաստանի կենտրոնական շրջաններում հիշյալ էմիրություններից բացի, կազմակերպվեցին նաև Կարինի Սալդուխյան և Կարսի էմիրությունները։

Հայաստանի սահմանամերձ շրջաններում ևս առաջացան զանազան էմիրություններ, օրինակ, Գանձակի կամ Փահլևանյան էմիրությունը, որի մեջ, Աղվանքից բացի, մտնում էին Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները՝ Արցախը, Սյունիքի հյուսիսային գավառները, Սևանա լճի արևելյան ափերը և այլն։ Այս էմիրությունը XII դ. առաջին կեսին անդրկովկասյան երկրների ուժեղագույն իշխանություններից մեկն էր և հայկական թագավորությունների ամենավտանգավոր թշնամին։ Հայաստանի հարավային սահմանագլխին ստեղծվել էր Օրդուխյան էմիրությունը, որի մեջ էին մտնում հյուսիսային Միջագետքը և Հայաստանի հարավային շրջանները՝ Աղձնիքը, Մոկաց աշխարհի և Վասպուրա-

կանի հարավային մասերը։ Օրդուխյան էմիրության կենտրոններն էին Հասան-Քեֆը և Մերդինը։ Հայաստանի արևմտյան մասերում առաջացել էր Դանիշմանների էմիրությունը, որն ընդգրկում էր Փոքր Ասիայի արևելյան գավառները և Հայաստանի արևմտյան շրջանները՝ Երզնկայի, Կամախի հողերը և այլն։

XII դարի սկզբից առաջացած վերոհիշյալ էմիրություններին ենթակա բնակչության մեծ մասը, հատկապես Հայաստանի կենտրոնական շրջաններում, հայեր էին։ Հայ բնակչությունը ենթարկվում էր ծանր հարկադրումների և զանազան կեղեքումների ու հալածանքների։ Այդ էմիրությունների հենարանն էին սելջուկ-թուրքական ցեղերը, որոնք ներխուժել էին հայկական հողերը և հաստատվել այնտեղ։

ԳԼՈՒԽ XXIV

ՀԱՅ ԵՎ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՊԱՅՔԱՐԸ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

1. ՀԱՅ ՈՒ ՎՐԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՕՏԱՐ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ԴԵՄ

Հայերի վիճակը Էմիրություններում

XII դարում Հայաստանում առաջացած օտար իշխանությունները, որոնք իրար նկատմամբ թշնամաբար էին տրամադրված և հաճախ բախվում էին ինչպես իրար, այնպես էլ հայկական թագավորությունների հետ, հայ ժողովրդի համար ստեղծել էին ծանր կացություն։ Վարդան Արևելցին վկայում է, որ Օրդուխյան, Շեդադյան և Գանձակի էմիրությունների միջև տեղի ունեցած բախումների ժամանակ ամենածանր հարվածը հասնում էր հայ ժողովրդին։ Ոտնատակ էին լինում նրա մշակված արտերն ու այգիները, կողոպտվում էր նրա ունեցվածքը, ավերվում ու հրկիզվում էին գյուղերն ու քաղաքները, գերության ու ստրկության էին ենթարկվում հազարավոր մարդիկ։ Էմիրություններում բնակչությունը ենթարկվում էր ծանր հարկադրման և կրոնական հալածանքների։

Էմիրությունները սելջուկյան կենտրոնական իշխանության նման հետամուտ էին հայկական ազնվականության ոչնչացմանը և նրանց կալվածքների գրավմանը։ Իսկ սելջուկ ցեղերի թափառումները (իրենց անասուններով) կատաղյալ շարիք էին դարձել ժողովրդի համար և մեծ վնաս էին հասցնում երկրագործությանը։

Հայկական ուժերի համախմբումը Վրաստանի շուրջը

Ստեղծված դրությունը դժգոհություն և զայրույթ էր առաջացնում հայերի մեջ և նրանց ոտքի հանում էմիրությունների դեմ։ Այդ պայքարն ավելի իրական հիմքերի. վրա դրվեց XII դ. առաջին քառորդից, երբ եղբայրական վրաց ժողովուրդը նույնպես ոտքի ելավ իր հայրենիքից սելջուկ-թուրքական ասպատակողներին դուրս քշելու համար։

Վրաստանի հզորացումը մեծ հույս ներշնչեց էմիրությունների լծի տակ տառապող հայ ժողովրդին։ Նա վրացական պետության հզորացման մեջ էր տեսնում այն ուժը, որի օգնությամբ կազատագրվեր օտարի լծից և սելջուկ-թուրքական ասպատակություններից։ Այդ պատճառով էլ հայ ժողովրդի համարյա բոլոր խավերն իրենց հայացքն ուղղում էին դեպի Վրաստան և ընդհանուր թշնամու դեմ մղված պայքարում, ինչպես հայկական հողերի վրա, այնպես էլ այլ վայրերում, մեծ աջակցություն ցույց տալիս վրացական բանակին։ Դեռևս Դավիթ IV-ի թագավորության առաջին տարիներին սելջուկներից հալածված հայկական ֆեոդալական և զինվորական տարրերը, ինչպես հաղորդում է Մատթեոս Ուռհայեցին, անցան Վրաստան և մտան վրացական բանակի շարքերը։ Վրաստան գնացին նաև հայ բնակչության մեծ զանգվածներ, որոնց նկատմամբ Դավիթ IV-ը բարյացակամ վերաբերմունք էր ցուցաբերում։

Վրաստան տեղափոխված հայերից՝ վրացական բանակում ստեղծվեցին հայկական ջոկատներ, որոնց թիվը դնալով մեծանում էր և նրանց հրամանատարները դառնում էին հայ իշխանները։ Այդ հրամանատարներից ոմանք սկսեցին խոշոր դեր կատարել վրաց բանակում։ Հայկական սկզբնաղբյուրներում այդպիսիներից հիշատակվում է հատկապես Սարգիս Զաքարյանը։

Անդրկովկասյան ժողովուրդների միջև ստեղծվեց ամուր դաշինք, որով շահագրգռված էին թե՛ վրացիները և թե՛ հայերը։ Ստեղծված իրադրությունն անհրաժեշտ էր դարձնում հայերի և վրացիների սերտ համագործակցությունը, որի արդյունավետությունը երկու ժողովուրդների համար էլ ապացուցված էր դարերի պատմությամբ։

Լոռիի միացումը Վրաստանին և պայքարը Անիի համար

Հայերի և վրացիների համագործակցությունը հայկական հողերի ազատագրման համար առաջին հերթին կենսագործվեց Վրաստանին սահմանակից Հայաստանի հյուսիսային մասերում։ Դեռ 1110 թ. ազատագրվել էին Կյուրիկյան թագավորության հին մայրաքաղաք Շամշուլգեն և Սոմխեթի մի շարք բերդեր, 1118 թ. Լոռի բերդաքաղաքը և Ակաբակը, իսկ հետագա տարիներին (մինչև 1123 թ.) Լոռիի հայկական նախկին թագավորության ամբողջ հողերը միացվեցին վրացական պետությանը։ Դրանով Լոռին ու Սևանա լճից հյուսիս ընկած հայկական հողերը զերծ մնացին Գանձակի էմիրության կողմից նվաճվելու վտանգից։

Սելջուկ-Թուրքերի դեմ Վրաստանի տարած հաղթանակները հայերի մեջ մեծ ոգևորություն առաջ բերեցին։ Շեդադյան էմիրության տիրապետության տակ գտնվող Անի քաղաքի բնակիչները 1124 թ. պատգամավորություն ուղարկեցին Դավիթ IV-ի մոտ և խնդրեցին նրան օգնել ազատագրելու Անին։ Դավիթ թագավորն ընդառաջեց հայերի խնդրանքին և դեպի Անի առաջնորդեց իր զորքը, որի շարքերում վրացիների հետ կողք-կողքի մարտնչում էին նաև հայկական ջոկատները։ Հայերը ապստամբություն բարձրացրին քաղաքի կառավարիչ Մանուչեի որդի Աբուլսվարի դեմ, ձերբակալեցին նրան և Անիի դարբասները բացեցին օգնության եկող զորքերի առաջ։

Անի քաղաքի ազատագրումը տագնապ առաջացրեց սելջուկյան էմիրություններում։ Դավիթ Շինարարի մահից հետո, 1126 թվականին, գերված Աբուլսվարի ավագ որդի Փաղլունը, օգնություն ստանալով էմիրություններից, եկավ և պաշարեց քաղաքը։ Սկսվեց օրհասական պայքարը Անիի համար։ Հայերն ու վրացիները քաղաքը պաշտպանում էին հերոսաբար։ Մարտերին ակտիվ կերպով մասնակցում էր Անիի և նրա շրջակայքի բնակչությունը։ Սամվել Անեցին պատմում է, որ քաղաքի պաշտպանությանը մասնակցելու համար կազմակերպվել էին աշխարհազորային ջոկատներ, որոնց շարքերում կային նույնիսկ կանայք։ Նրանցից առանձնապես աչքի էր ընկնում Այծեմիկ անունով մի կին, որը «առնացի ատացեալ սիրտ հալածական առնէր քարամբք» հակառակորդի զինվորներին, «առ ոչինչ համարելով նետերից ստացած վերքերը»։

Սակայն թշնամու դրոհները, օրավուր սաստկանալով, ծանր կացության մեջ դրեցին քաղաքի պաշտպաններին և բնակչությանը։ Քաղաքում սկսվեց սով։ Պաշտպանությունը գնալով դժվարանում էր և վրաց Դեմետրե թագավորը, որ հայոդրել էր Դավիթ IV-ին, ստիպված եղավ Անին վերադարձնել Շեդադյաններին։

Սյունիքի թագավորության անկումը

1126 թվականին Գանձակի Հարուն էմիրը հարձակվեց Սյունիքի վրա, ասպատակեց Արևիք ու Կապան գավառները և գրավեց մի քանի ամրություններ։ Հետո հարձակումներ կատարվեցին նաև Գարդմանի, Խաչենի, Տավուշի և այլ վայրերի ու ամրությունների վրա։ Սյունյաց թագավորության վիճակն ավելի վատացավ, երբ Գանձակի էմիրության գլուխ անցավ Էլդկուզ աթաբեկը, որը հայկական իշխանությունների նկատմամբ բացարձակ թշնամական դիրք բռնեց։

Էլդկուզի զորքերը 1151—1152 թթ. գրավեցին Շլորուտ բերդը,

1157 թ.՝ Մեղրին, 1166—1169 թթ.՝ Գրհամը և Կաքավաբերդը, 1170 թ.՝ Բաղաբերդը և ապա՝ ամբողջ թագավորությունը, վերացրին հայկական վերջին անկախ իշխանությունը բուն Հայաստանում։

Սելջուկ-Թուրքերը կողոպտում էին բնակչությանը, գերեվարում մարդկանց, ավերում բնակավայրերը, ամրությունները և կուլտուրայի հուշարձանները։ Ստեփանոս Օրբելյանը պատմում է, որ էլդկուզ աթաբեկի զորքերը, գրավելով Բաղաբերդը, ոչնչացրին այնտեղ բերված Տաթևի վանքի 10000 ձեռագիր գրքեր։

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՋԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Անիի վերջնական ազատագրումը

Վրաց թագավոր Գեորգի III-ի օրոք (1156—1184) էմիրությունների դեմ հայերի և վրացիների համատեղ պայքարն ավելի մեծ ծավալ ու թափ ստացավ։ Նա մղելով սելջուկ-թուրքական ուժերի գրոհները, իր բանակը համալրելով նաև հայերով և կովկասյան մյուս ժողովուրդներից ստացած ուժերով, Գեորգի III-ը անցավ հակահարձակման։ Նրա բանակը, որն իրավամբ կարելի էր անվանել հայ-վրացական, 1161 թ. երկրորդ անգամ ազատագրեց Անին ու Շիրակի գավառը, իսկ հաջորդ՝ 1162 թ. շարունակեց իր առաջխաղացումը դեպի Արարատյան դաշտ և Շեդադյաններից խլեց նաև Դվինը։ Սակայն այս հաջողությունները երկարատև չեղան։ Գանձակի էմիրության բանակը 1162 թ. աշնանը արշավեց դեպի Արարատյան դաշտ, նա վերցրեց Դվինը և պաշարեց Անին։ Նորից սկսվեց հերոսական պայքար Անին պաշտպանելու համար։ Երկու կողմերն էլ անդիջում մարտնչում էին քաղաքի համար։ Էլդկուզ աթաբեկի զորքերին օգնության էին եկել մյուս էմիրություններից։ Նրանց գրոհը գնալով սաստկանում էր, բայց պաշտպանվողներն էլ անդրդվելի էին։ Սակայն, ի վերջո, Գեորգի III-ը 1165 թ. ստիպված եղավ Անին ու Շիրակը վերադարձնել Շեդադյաններին։

XII դարի վերջերին էմիրությունները սկսեցին քայքայվել, նրանց դիմադրությունը թուլացավ։ Դա նպաստավոր պայմաններ ստեղծեց վրացական պետության ընդարձակման և հայկական հողերի ազատագրման համար։ 1170-ական թվականների առաջին կեսից հայ-վրացական զորքերը վերսկսեցին իրենց հարձակումները և 1174 թ. երրորդ անգամ ազատագրեցին Շիրակն ու Անին։

Անիի երրորդ ազատագրումից հետո, 1177—78 թվականնե-

ին, Վրաստանում տեղի ունեցավ գահակալական խռովություն, որը գլխավորում էր Անիի կառավարիչ Իվանե Օրբելյանը։ Խռովությունը ճնշելուց հետո Օրբելյանների տոհմը սրի քաշվեց։ Անիի կառավարիչ նշանակվեց Սարգիս Զաքարյանը, որը Գեորգի III-ից ստացավ նաև Շիրակը որպես կալվածք։

Զաքարյանները ու վրացական արքունիքը

Սելջուկյան էմիրությունների դեմ Հայաստանի ազատագրման համար մղած պայքարում խոշոր դեր խաղացին Զաքարյան տոհմի ներկայացուցիչները։ Հայկական այդ ֆեոդալական տան առաջացման մասին կան տարբեր ենթադրություններ։ Վերջին տարիների ուսումնասիրությունները պարզում են, որ Զաքարյանները դեռևս XI դ. հաստատված են եղել Գուդարքում և ազգակցական կապեր են ունեցել Լոռիի Բագրատունիների հետ, որոնցից ձեռք են բերել ընդարձակ կալվածքներ և դարձել խոշոր ֆեոդալական տներից մեկը։ Վրացական արքունիքը հաշվի առնելով այդ ամենը, նրանց բարձր պաշտոններ էր շնորհում։ Սարգիս Զաքարյանը, որ պատմական աղբյուրներում երբեմն անվանվում է «Մեծ», բացի Անիի կառավարչի պաշտոնն ստանձնելուց, եղել է նաև վրացական բանակում գործող հայկական զորամասերի հրամանատարը, իսկ 1186 թ. նշանակվել է վրաց և հայոց զորքերի ամիրսպասալար։

Սարգիս Զաքարյանի մահից հետո Թամարի գահակալության ժամանակ (1184—1213) այդ պաշտոնը տրվում է Սարգիս Զաքարյանի ավագ որդուն՝ Զաքարե Զաքարյանին։ Զաքարեի կրտսեր եղբայրը՝ Իվանե Զաքարյանը նշանակվում է վրաց արքունիքի սթաբեի, այսինքն՝ խնամակալ։

Այդպիսով, հայ խոշոր ֆեոդալական տարրերը՝ հանձինս Զաքարյանների, ակտիվ և գործուն մասնակցություն են հանդես բերում վրացական պետության թե՛ ներքին, թե՛ արտաքին կյանքում, և դա առավել ևս ուժեղացնում է հայ-վրացական միացյալ պայքարը էմիրությունների դեմ։

Սյունիքի և Արարատյան դաշտի ազատագրումը

XII դարի վերջերին և XIII-ի սկզբներին հայ-վրացական բանակը Զաքարե և Իվանե Զաքարյանների գլխավորությամբ ջախջախեց Գանձակի էմիրությունը և ազատագրեց Արցախի նահանգը, Սևանա լճի շրջակայքը և ամբողջ Սյունիքը։ Հայկական գավառների հետ միասին ազատագրվեցին նաև Աղվանից աշխարհի շատ շրջաններ։ Հաջորդ հարվածն ուղղվեց Շեդադյան էմիրության դեմ։ 1198—1199 թվականներին ազատագրվեց ամ-

քողջ Շիրակը, իսկ 1202—1204 թթ. հայ-վրացական բանակը սելջուկներից մաքրեց Արագածոտն գավառը, Բզնին, Դվին քաղաքը և ամբողջ Արարատյան դաշտը։

Այսպիսով, XII դ. վերջերին և XIII դ. սկզբներին վրաց և հայ ժողովուրդների միացյալ ուժերը ոչնչացրին Դանձակի և Շեկաղյան էմիրությունները և ազատագրեցին Գուգարքը, Արցախը, Սյունիքը և Այրարատյան նահանգի մեծագույն մասը։ Ազատագրված հայկական բոլոր հողերի կառավարումը Թամար թագուհին հանձնեց Զաքարյաններին, իսկ դրանց մի զգալի մասը՝ որպես սեփական կալվածք։ Զաքարյաններն էլ իրենց հերթին այդ հողերից ընդարձակ կալվածքներ էին նվիրում հայ ազնվականներին և դրանով իսկ նրանց կախման մեջ դնում իրենցից։ Այդ ամենը հիմք հանդիսացավ Զաքարյանների իշխանության ստեղծման համար Հայաստանի հյուսիսային նահանգներում։

Կարսի և Բագրևանդի ազատագրումը

Հայաստանի կենտրոնական գավառները գտնվում էին Շահարմենների, իսկ արևմտյան մասերը՝ Դանիշմանների էմիրության ձեռքում։ XIII դ. սկզբին այդ էմիրություններում դրությունը փոխվել էր։ Շահարմենների, Կարսի, Կարինի, ինչպես և Դանիշմանների էմիրությունները կորցրել էին իրենց ինքնուրույնությունը, ընկել էին Իկոնիայի և եգիպտական բավականին ուժեղ սուլթանությունների ազդեցության տակ։ Դա նշանակում էր, որ հայկական հողերի ազատագրումն այստեղ ավելի մեծ դիմադրության պետք է հանդիպեր, բայց հայ-վրացական զորքերը 1206 թ. ազատագրեցին Կարս քաղաքը։

Դրանից անմիջապես հետո Իկոնիայի Ռուքն-էդ-դին սուլթանը բանակի գլուխ անցած արշավեց Վրաստան։ Բայց վրացական ու հայկական բանակը Զաքարե և Իվանե Զաքարյանների գլխավորությամբ 1206 (կամ 1207) թվականին դուրս եկավ նրա դեմ և Բասենի դաշտում պարտության մատնեց նրան։ Այդ հաղթանակի շնորհիվ ազատագրվեցին Բարձր Հայքի արևելյան շրջանները՝ Բասենի դաշտով, և հանձնվեցին Զաքարյաններին։ 1208—1209 թվականների ընթացքում հայ-վրացական զորքերն ազատագրեցին Բագրևանդի շրջանը, Տուրուբերան նահանգի հյուսիսային մասերը և պաշարեցին Խլաթ քաղաքը։ Այստեղ նրանք հանդիպեցին ուժեղ դիմադրության։ Պաշարումը երկարեց, սակայն մի անակնկալ դեպք առիթ տվեց դադարեցնելու պատերազմական գործողությունները և հաշտություն կնքելու։

Իվանե աթաբեկը դուրս էր եկել դիտելու ռազմաճակատը

քաղաքի շրջակայքում։ Այդ պահին թշնամին հանկարծակի հարձակվում է նրա վրա և դերում։ Զաքարե ամիրսպասալարը հղբորը փրկելու համար բանակցություններ մեջ է մտնում Խլաթի տերերի հետ և առաջարկում հաշտություն կնքել։ Նրանք համաձայնվում են։ Վերացվում է քաղաքի պաշարումը, կնքվում է հաշտություն։ Խլաթի իշխանությանը վերադարձվում են նրանից վերցված մի քանի ամրություններ և գերված Իվանե աթաբեկը ազատ է արձակվում։

Խլաթի հաշտությամբ ավարտվեց հայ և վրաց ժողովուրդների մղած համատեղ պայքարը սելջուկյան էմիրությունների դեմ։ Այդ պայքարը տևեց մի ամբողջ դար և վերջացավ վրացիների ու հայերի կատարյալ հաղթանակով։ Վերացվեցին Հայաստանում հաստատված մի քանի էմիրություններ և ազատագրվեց Հայաստանի մի ղդալի մասը։

Սելջուկյան էմիրությունների դեմ տարած հաղթանակին նպաստեց այն, որ վրաց, աղվանից և հայ ժողովուրդները օտար զավթիչների դեմ մղած պայքարում հանդես էին գալիս միասնաբար։

Զաքարյանների իշխանության հաստատումը Հայաստանում

Ազատագրված հայկական հողերը վրացական պետությունը հանձնեց Զաքարյաններին։ Նրանց իշխանությունը Հայաստանի հյուսիսային մասերում ավելի որոշակի դարձավ և օրինականացվեց Թամար թագուհու օրոք, երբ հայ իշխաններ Զաքարե և Իվանե Զաքարյանները վրացական պետության մեջ ղեկավար դեր ստանձնեցին և գլխավորեցին սելջուկ-թուրքական էմիրությունների դեմ մղվող պայքարը։

Զաքարյաններն իրենց իշխանության տակ գտնվող նահանգներում ու գավառներում բոլոր գործերը վարում էին ինքնուրույն կերպով։ Նրանք լիակատար ինքնիշխան էին Հայաստանին վերաբերող ներքին հարցերի լուծման գործում և ճանաչվում էին որպես Հայաստանի տնօրեն։ Զաքարյաններն իրենց ենթակա նահանգներում և գավառներում նշանակում էին հատուկ կառավարիչներ ու գործակալներ, հավաքում էին հարկերը և տնօրինում դատական, եկեղեցական և երկրի ներքին կյանքին վերաբերող այլ գործեր։ Պատմագիրների երկերում և վիմական արձանագրություններում Զաքարյանների իշխանությունն անվանված է «պետական իշխանություն», «պետություն», «աշխարհակալ տերություն», իսկ իրենք Զաքարյանները՝ «շահնշահ», «Հայոց թագավորներ»։

Այդպիսով, ազատագրված հայկական հողերում ստեղծվեց

հայկական ինքնավար իշխանություն՝ Զաքարյանների գլխավորությամբ։ Այն մտնում էր վրացական թագավորության մեջ։ Սակայն հայկական հողերը չէին դիտվում որպես նվաճված հողեր և հայ ու վրաց բնակչությունը իրավահավասար վիճակում էր։ Ստեղծվել էր հայ և վրաց ժողովուրդների մի համագործակցություն, դաշինք՝ իրենց հողերը օտար ներխուժողներից ազատագրելու և պետական անկախությունը պաշտպանելու համար։

Զաքարյանների իշխանությունից դուրս մնացած հայկական հողերը՝ Վասպուրականի, Մոկքի, Աղձնիքի նահանգները, Տուրուբերանի և Բարձր Հայքի մեծ մասն ու Հայաստանի արևմտյան գավառները գտնվում էին եգիպտական էության և Իկոնիայի սուլթանության տիրապետության ներքո. այդ շրջանների հայ բնակչությունը շարունակում էր մնալ օտար լծի տակ՝ ենթարկվել ծանր հալածանքների և տնտեսական կեղեքման։

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

Հայկական ֆեոդալական հողատիրության վերականգնումը

Զաքարյանների տիրապետության առաջին իսկ տարիներին սելջուկների կողմից իրենց կալվածքներից զրկված հայկական ֆեոդալական տների իրավունքները վերականգնվեցին և առաջացան նորերը։

Այդպիսի խոշոր ֆեոդալական տների թվին էին պատկանում Զաքարյանները, որոնք բաժանված էին երեք ճյուղի։ Նրանցից մեկը՝ Զաքարե ամիրսպասալարի ճյուղը հաստատվեց Շիրակում և Լոռիում։ Երկրորդ ճյուղը, որին գլխավորում էր Զաքարե ամիրսպասալարի եղբայր Իվանե աթաբեկը, կալվածքներ ուներ Արարատյան դաշտում, Սևանա լճի ավազանում, Սյունիքում և այլ գավառներում։ Երրորդ ճյուղը Զաքարեի և Իվանեի հորեղբայր Վահրամի ժառանգներն էին, որոնք հաստատվել էին Արցախի նահանգում և կալվածքներ ունեին Գարդմանքում, Փառիսոսում, Շամքորում և այլ գավառներում։

Բացի Զաքարյանների վերոհիշյալ ֆեոդալական տներից, իր հզորությամբ աչքի էր ընկնում նաև Սյունիքում նոր առաջացած Օրբելյանների տունը, որը ձևավորվեց XII դ. վերջերին և XIII-ի սկզբներին։ Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ վրաց թագավոր Գեորգի III-ի դեմ Իվանե Օրբելյանի բարձրացրած ապստամբության ժամանակ վերջինիս եղբայր

Լիպարիտը, իր երկու որդիների՝ Էլիկումի և Իվանեի հետ միասին, գնացել էր Պարսկաստան օգնություն խնդրելու, բայց մինչև նրանց վերադարձը ապստամբությունը ճնշվում է և Լիպարիտն ու նրա որդի Էլիկումը այլևս չեն վերադառնում Վրաստան։

Լիպարիտի մահից հետո Էլիկումը դալիս է Սյունիք, ամուսնանում Ճահկեցի հայ ազնվական Աբասի դստեր հետ և Երնջակի բերդն ու Հահուկ ավանը ստանում որպես կալվածք։ Էլիկումը և նրա արդեն հայացած զավակները Օրբելյանների հայկական ֆեոդալական տան հիմքն են դնում։ Էլիկումի որդի Լիպարիտը Սյունիքը Գանձակի էմիրությունից ազատագրելու ժամանակ Զաքարյան Իվանե աթաբեկից ընդարձակ կալվածքներ է ստանում Սյունիքի հարավային մասերում։ Այդ ժամանակից սկսած Օրբելյանները հանդես են գալիս որպես խոշոր կալվածատերեր։

XIII դարի սկզբին Սյունիքի արևմտյան մասերում՝ Վայոց ձորում և Կոտայքում, առաջացավ ֆեոդալական մի այլ տուն, որը պատմական աղբյուրներում անվանվում է Պռոշյան կամ Խազբակյան։ Այս ֆեոդալական տան հիմնադիր Վասակ Իշխանը, որն անձամբ մասնակցել էր Սյունիքի և այլ գավառների ազատագրմանը, Զաքարյաններից ընդարձակ կալվածքներ է ստանում Վայոց ձորում, Գառնիում, Կոտայքում և այլ վայրերում։ Նրա հաջորդները XIII դ. առաջին կեսին արդեն հանդես են գալիս որպես խոշոր ֆեոդալներ։ Բացի վերոհիշյալ ֆեոդալական խոշոր տներից, պատմական աղբյուրներում հիշատակվում են Վաչուտյանների տունը, որի հիմնադիր Վաչե իշխանը Զաքարյաններից ընդարձակ կալվածքներ էր ստացել Արագածոտն գավառում, Դուքյանների տունը, որի կալվածքները գտնվում էին Սևանա լճի հարավային ափերին՝ Գեղարքունյաց գավառում, Պահլավունիների հետնորդները իրենց վաղեմի կալվածքներում, և ուրիշներ։

Հայաստանում սելջուկյան տիրապետության ժամանակ հողատեր սելջուկ-Թուրքերը իրենց կալվածքներին, որոնք կոչվում էին իկտա, տիրում էին պայմանականորեն, ժամանակավորապես։ Զաքարյանների իշխանության հաստատման ժամանակաշրջանից սկսած վերահաստատված հայ ֆեոդալները իրենց տրված հողերի մեծ մասի նկատմամբ ձեռք էին բերում սեփականատիրական իրավունք և տիրում ժառանգաբար։ Վերոհիշյալ փոփոխություններ փաստորեն վերականգնումն էր հողատիրության այն ձևերի ու հարաբերությունների, որոնք գոյություն ունեին Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում։

Գյուղացիության ճորտացումը

Հայ ֆեոդալական տների և հողատիրության վերոհիշյալ ձևի վերականգնմանը համընթաց վերսկսվեց նաև գյուղացիության ճորտացման, այսինքն՝ գյուղացուն հողին ամրացնելու պրոցեսը։ Այդ բխում էր ֆեոդալական տնտեսության պահանջներից։ Հայ ֆեոդալները ձեռնամուխ էին եղել սեփական տնտեսության ստեղծման գործին։ Նրանք կազմակերպում էին ագարակային տնտեսություններ և շահագրգռված էին մշտական աշխատող ձեռքեր ունենալու մեջ։ Դրա համար էլ գյուղացուն ամրացնում էին հողին և արգելում հեռանալ այդ վայրից։

XII դարի վերջերին գյուղացիների մի մասի ճորտացումն արդեն կատարված իրողություն էր, որն արձանագրվել է Մխիթար Գոշի «Դատաստանագրքում»։ Գյուղացիներին վերաբերող հոդվածներից մեկում ասված է. «Մարդկային բնությունը արարչից ազատ է ստեղծվել, իսկ տերերին ծառայելը եղել է հողի և ջրի կարիքի պատճառով։ Ես այդպիսի դատաստան եմ պատշաճ համարում, որ (գյուղացին) թողնելով իր տիրոջ կալվածքը կարող է գնալ և ապրել ուր կամենա։ Իսկ եթե այդ բանը տերերից որևէ մեկը չների և բռնությամբ նրան ետ վերադարձնի, հոր մահից հետո ազատ են այն որդիները, որոնք ծնվել են ուրիշ տեղ և ոչ տիրոջ կալվածքում»։ Այս մեջբերումից պարզ երևում է, որ գյուղացիները ամրացված են եղել հողին, անձնապես կախյալ ֆեոդալից և առանց տիրոջ համաձայնության իրավունք չեն ունեցել հեռանալու նրա կալվածքից։

Գյուղացիության ճորտացված լինելու մասին են վկայում նաև XIII դ. վիմական արձանագրությունները, որոնցից մի քանիսում պատմվում է, թե ինչպես ֆեոդալները իրար նվիրել կամ վաճառել են գյուղացիներին՝ և՛ հողի հետ, և՛ առանց հողի։ Օրինակ, Դաղի վանքի 1224 թ. արձանագրության մեջ հիշատակություն կա «չորս տուն շինականի», Խծկոնքի 1211 թ. արձանագրության մեջ՝ մեկ շինականի, Հաղպատի 1243 թ. արձանագրության մեջ՝ երեք շինականի, իսկ Մարմաշենի 1225 թ. արձանագրության մեջ՝ գյուղի ամբողջ բնակչությունը հողով և ջրով նվիրելու մասին։ Ճորտացված գյուղացիության զգալի մասը կենտրոնացված էր ագարակներում, որոնք ֆեոդալական տնտեսության կարևորագույն կենտրոններ էին։ Սակայն գյուղացիությունը ամբողջությամբ վերցված ճորտացված չէր։ Նրա ներսում կային այնպիսի խավեր, որոնք կա՛մ բոլորովին ազատ էին, կա՛մ միայն տնտեսական կախվածության մեջ էին, այսինքն՝ կախյալ գյուղացիներ էին։

Գյուղացիության մեջ XII—XIII դդ. այդպիսի տարբեր խավերի առկայությունն էլ հիմք է տվել Մխիթար Գոշին իր «Դատաստանագրքում», բացի ֆեոդալական դասակարգից, մնացած բնակչությունը բաժանել երեք շերտի։ Այնտեղ ասված է. «Քաղաքացի մարդիկ պիտի ավելի պատիվ ունենան, քան գեղջուկները, իսկ գեղջուկներին նմանապես առավել պատիվ պիտի տրվի, քան ագարակի բնակիչներին»։

Քաղաքացիներն ավելի արտոնյալ վիճակում էին նաև նախորդ դարերում, բայց գյուղացիությունը երկու շերտի՝ գեղջուկների և ագարակի բնակիչների բաժանելը արդեն նոր երևույթ էր։

Գյուղացիության ճորտացումը ամբողջ Հայաստանի համար համատարած երևույթ չի եղել։ Այն հատուկ է եղել միայն Հայաստանի հյուսիսային նահանգներին, ավելի որոշակի ասած՝ Զաքարյանների իշխանությանը ենթակա հայկական շրջաններին։

Գյուղացիության վերոհիշյալ խավերից բացի, XII—XIII դդ. կար շահագործվողների մի այլ խումբ ևս, որի մեջ մտնում էին աղախիններն ու ծառաները, որոնք ըստ երևույթին ժամանակավորապես ստրկացված էին և պարտավոր էին յոթ տարի ձրի աշխատել իրենց տերերի համար։ Թեև ծառաներն ու աղախինները իրենց իրավական և տնտեսական կացությամբ ստրուկների նման էին, բայց տերերը նրանց սպանելու իրավունք չունեին։

Տնտեսական կյանքի աշխուժացումը Զաքարյանների ժամանակ

XII դարի վերջերից Հայաստանի աղատադրված շրջանների բնակչությունը նորից ձեռնամուխ եղավ դաշտերի մշակման և անասնապահության զարգացման գործին։ Շիրակի, Արշարունիքի, Բագրևանդի և Բասենի հարթավայրերում նորից տարածվեցին ցորենի, գարու և այլ հացաբույսերի արտերը, իսկ Արարատյան դաշտում, Լոռիի և Սյունիքի ձորահովիտներում՝ խաղողի այգիները և պտղատու ծառերի պարտեզները։ Վերանորոգվեցին նաև քաղաքները։ Անին, որ սելջուկների արշավանքների հետևանքով խիստ ավերվել էր և նրա տնտեսական կյանքը Շեդադյան էմիրության օրոք կանգ էր առել, այժմ՝ Զաքարյանների օրոք սկսեց վերելք ապրել։ Նորից ծավալվեց շինարարությունը, կառուցվեցին դղյակներ, սկսեցին գործել շուկաները, հիմնվեցին արհեստանոցներ և քաղաքը մտավ իր զարգացման կանոնավոր հունի մեջ։ Վերականգնման այդպիսի ուղի բռնեցին նաև Կարսը և երկրի մյուս քաղաքներն ու քաղա-

քատիպ ավանները։ Աշխուժացավ նաև ներքին և արտաքին առևտուրը։ Տնտեսական կյանքի զարգացման կարևոր հատկանիշներից մեկն այն էր, որ առևտրականները ձգտում էին իրենց միջոցները ներդնել թե՛ արհեստագործության և թե՛ գյուղատնտեսության մեջ։ Այդ երևույթի ցայտուն օրինակ է անեցի հարուստ առևտրական Հոնենց Տիգրանի գործունեությունը։ Նա Հայաստանի տարբեր գավառներում գնել էր դյուղեր, այգիներ, ջրաղացներ, ձիթհաններ, դրանք դարձրել շահույթի աղբյուրներ։

Տնտեսական կյանքի զարգացումը բարերար կերպով անդրադարձավ երկրում ծավալվող շինարարության վրա։ Լոռիում, Սյունիքում, Շիրակում և Այրարատյան նահանգի մի շարք այլ գավառներում վերաշինվեց սելջուկյան արշավանքների ժամանակ ավերված բնակավայրերի մի մասը, ինչպես և կառուցվեցին ճարտարապետական արժեքավոր հուշարձաններ։ Սակայն, այդ բոլորով հանդերձ, երկրի տնտեսական կյանքի մակարդակը, հատկապես քաղաքների, քաղաքային կյանքի ու շուկայական հարաբերությունների զարգացման բնագավառներում, չհասավ այնպիսի բարձրության, որին հասել էր Հայաստանը նախասելջուկյան, այսինքն՝ Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանում։

Աշխատավորության պայքարը շահագործողների դեմ

Երկրի արտադրանքի աճը ընդհանուր առմամբ դրականորեն անդրադարձավ ժողովրդի կենսամակարդակի վրա, սակայն աշխատավոր մարդկանց ստեղծած նյութական բարիքներից օգտվում էին գերազանցապես շահագործող խավերը՝ ազնվականները, հոգևորականները և հարուստ առևտրականները։ Մխիթար Գոշի «Դատաստանագրքից» հայտնի է, որ գյուղացիները պարտավոր էին ֆեոդալներին տալ յուրաքանչյուր տարվա բերքի մեկ հինգերորդ մասը, ամեն տարի տասը մանր եղջյուրավոր անասունից մեկը, յուրաքանչյուր կովից մեկ լիտր յուղ, շաբաթվա մեջ մեկ օր իրենց անասուններով և գործիքներով ձրիաբար աշխատել ֆեոդալների համար, տոն օրերին և տարեմուտին նվերներ տալ, անտառից և որսից ձեռք բերածը տասնորդել, եկեղեցուն տալ տասանորդը և այդ բոլորի հետ միասին պետությանն էլ վճարել զանազան հարկեր։ Իրենց արտադրանքից բազմաթիվ մասհանումներ էին կատարում նաև արհեստավորները։ Այդ ամենը ծանրացնում էր աշխատավոր գյուղացիների վիճակը, նեղ դրության մեջ էր դնում արհեստավորներին, սրում դասակարգային հակասությունները շահագործողների և աշխատա-

վորության միջև, վերջինիս ակտիվ պայքարի հանում շահագործողների դեմ։

Պատմական աղբյուրներում եղած կցկտուր վկայությունները խոսում են ոչ միայն այդ պայքարի առկայության, այլև բորբոքման ու խորացման մասին։ Շիրակի Գրիգոր արքեպիսկոպոսի Անի քաղաքում թողած 1217 թ. և նույն քաղաքում գրված վրաց Եփիփան կաթողիկոսի 1218 թ. արձանագրությունները վկայում են Շիրակի գյուղացիների և Անի քաղաքի բնակչության՝ հոգևորականներին վճարվող տուրքերից ազատելու համար մղած պայքարի մասին։

Գրիգոր արքեպիսկոպոսի արձանագրությունից երևում է, որ նա ստիպված է եղել վերացնել գյուղացիներից եկեղեցու համար հավաքվող հացահատիկային տուրքը, իսկ Անի քաղաքի բնակիչներից՝ զատկի օրերին եկեղեցուն մորթի տալու պարտավորությունը։ Եփիփան կաթողիկոսի արձանագրությունում ասված է, որ Անիի բնակիչները ըմբոստացել են հոգևորականների դեմ, քանի որ նրանք բնակչության վրա ծանր տուրքեր էին դրել։ Կաթողիկոսը հարկադրված է եղել, ժողովրդի զայրույթը մեղմացնելու նպատակով, ի լուր ամենքի հայտարարել, որ նշանակված տուրքերը շատ են և ապօրինի։

XII դարում Հայաստանում և հայաբնակ այլ շրջաններում ևս դասակարգային պայքար է մղվել։ Ինչպես հայտնի է, Հայաստանում թոնդրակյան շարժման ճնշման տարիներին բազմաթիվ թոնդրակեցիներ արտաքսվեցին նաև Ասորիք և հյուսիսային Միջագետք։ Նրանց հետևորդները XII դ. երկրորդ կեսին ակտիվ գործունեություն էին ծավալում Հայաստանի հարավային և սրան սահմանակից շրջաններում։ Ներսես Շնորհալու գրած մի նամակից երևում է, որ Ամայք և Շիղթան գավառների հայ բնակչության մի մասը մերժում էր քրիստոնեական եկեղեցու որոշ սկզբունքներ, հայտարարելով, որ Քրիստոսը մեռել է խաչի վրա և այլևս հարություն չի առել, որ հոգին անմահ չէ, որ նա էլ է մեռնում մարմնի հետ միասին։ Ներսես Շնորհալին պարզաբանում է, որ դրանք թոնդրակյաններ են եղել և այդ գավառների իշխանին խորհուրդ է տալիս՝ շտապել և հալածանքի ենթարկել նրանց։

ԳԼՈՒԽ XXV

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

1. ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Աշխարհագրական դիրքը և բնական հարստությունները

Կիլիկիան ընկած է Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափամերձ շրջանում։ Հարավից Կիլիկիան եզերում է Միջերկրական ծովը, հյուսիսից և արևմուտքից Կիլիկիան Փոքր Ասիայի մյուս շրջաններից անջատվում է Տավրոսի լեռնաշղթայով, արևելքից նրա սահմանն են կազմում Սև լեռները կամ Ամանոսի լեռնաշղթան։ Կիլիկիայի բնական սահմանները երկրի համար պաշտպանական ամուր գոտիներ են։ Երկրի հյուսիս-արևելյան մասը ծածկված է լեռնային զանգվածներով, որոնք կազմում են բարձրադիր մի լեռնաշխարհ և կոչվում Լեռնային Կիլիկիա, իսկ հարավ-արևելյան մասը՝ Դաշտային Կիլիկիա։ Երկրի արևմտյան մասը, որ ծածկված է քարքարոտ բլուրներով, ստացել է Քարուտ Կիլիկիա անունը։

Կիլիկիայում կան բազմաթիվ գետեր ու գետակներ, որոնցից ջրառատությամբ և երկարությամբ աչքի են ընկնում Կալիկադնոս կամ Սելեկիա, Լամոս, Կյուդնոս կամ Տարսուս-չայ, Սարոս կամ Սիհուն և Պիռամոս կամ Ջիհուն գետերը։ Վերջին չորս գետերը, հոսելով դաշտային Կիլիկիայով, երկրի հյուսիսային լեռներից իրենց հետ բերում են հարուստ տիղմ և դրանով ծածկում արդեն իսկ բերրի դաշտերը, ավելի արգավանդ դարձնում դրանք։

Կիլիկիայի բնաշխարհը հարուստ է ինչպես բուսականությամբ ու կենդանիներով, այնպես էլ հանքային հանածոներով։ Նրա լեռնային մասերը ծածկված են սաղարթախիտ անտառներով ու ընդարձակ արոտավայրերով։

Կիլիկիայի լեռների ընդերքում կան բազմատեսակ հանքա-

նյութեր, որոնցից հին ժամանակներում հայտնի են եղել երկաթի, կապարի, արծաթի, զանազան գույնի կրաքարերի, ծծմբի, արջասպի, բորակի, աղի և այլ հանքերը։ Այնտեղ կան նաև հանքային բուժիչ ջրեր, որոնք դեռ վաղ ժամանակներում օգտագործվել են բնակչության կողմից։

Կիլիկիայի բնակչությունը մինչև X դարը

Կիլիկիան հայտնի է շատ վաղ ժամանակներից։ Նրա հնագույն բնակիչներից են եղել փոքրասիական ցեղերն ու ցեղախմբերը, իսկ միջին դարերում այնտեղ ապրել են հույներ, ասորիներ, հրեաներ և այլ ազգություններ։ Հիշյալ բնակիչներից բացի, այդ երկրի առանձին շրջաններում, հին ժամանակներից սկսած, բնակություն են հաստատել նաև հայերը։ Դեռևս մեր թվականությունից առաջ, I դ. Կիլիկիայի արևելյան շրջանները նվաճեց Տիգրան II-ը։ Այդ ժամանակից սկսած հայերը բնակություն են հաստատել այնտեղ։ IV դարի լատին մատենագիր Ամիանոս Մարկիլինոսի վկայությամբ, Իսոսի (այժմյան Ալեքսանդրետի) ծոցը ժամանակին կոչվել է «Հայկական ծոց», իսկ նրա համարյա ժամանակակիցը՝ Հովհան Ոսկեբերանը V դ. սկզբին Կիլիկիայի արևելյան շրջանից գրած մի նամակում հիշատակում է, թե իր ապրած դյուղը հայաբնակ է, որ մի հայ իշխան է այդ շրջանի տերը։

Բյուզանդական կայսրության՝ հայերին Հայաստանից արտաղաղթեցնելու քաղաքականության հետևանքով VII դ. առաջին կեսին Կիլիկիայի արևելյան շրջաններում արդեն մեծ թվով հայեր կային։ Արաբական աղբյուրներում հիշատակվում է, որ 809 թ. վերաշինվել է Սիս քաղաքը, ուր տեղափոխվել են բազմաթիվ հայեր։

Ստեփանոս Տարոնեցին վկայում է, որ Խաչիկ կաթողիկոսը X դ. վերջին Տարսոն և Սոլընդա քաղաքներում ու նրանց շրջակայքում մեծ թվով հայ բնակչության կուտակման պատճառով՝ եպիսկոպոսություններ է հաստատել։ Նույն դարում հայերը բնակություն են հաստատել նաև Սելևկիա քաղաքում և նրա շրջակայքում ու 967 թ. իրենց վրա են վերցրել քաղաքի և նրա շրջակայքի պաշտպանությունը օտար ասպատակողներից։

Այսպիսով, վաղ ժամանակներց սկսած հայերը աստիճանաբար թափանցել են Կիլիկիա և X դ. արդեն զգալի թիվ կազմելով մեծ դեր են խաղացել այդ երկրի տնտեսական և քաղաքական կյանքում։

Հայերի մասսայական հոսանքը դեպի Կիլիկիա XI դարում

XI դարում Հայաստանի համար ստեղծված քաղաքական անբարենպաստ պայմանները բնակչության մի մասին ստիպեցին թողնել հայրենիքը և արտագաղթել օտար երկրներ։ Դեռևս XI դ. առաջին քառորդում Վասպուրականի Սենեքերիմ թագավորի հետ Փոքր Ասիա տեղափոխված ավելի քան 70 հազար հայերի մեծ մասը բնակություն հաստատեց Կիլիկիայի լեռնային մասերում։ Պատմագիտական գրականության մեջ հիշատակություն կա, որ հետագայում Վասպուրականից դեպի վերոհիշյալ շրջանները և Կիլիկիա տեղափոխվել են շուրջ 400 հազար հայեր։

1045 թվականին Բյուզանդական կայսրության մեքենայությունների պատճառով իր թագավորությունից զրկված Դավիթ II-ը եկավ և բնակություն հաստատեց Կիլիկիայի սահմանագլխին գտնված Պիղու քաղաքում։ Այդ հանգամանքը առիթ տվեց, որ Հայաստանի տարբեր շրջաններից հայկական ազնվականական տարրերը, ինչպես և բնակչության մյուս խավերը մասնայարար թողնեն իրենց հայրենիքը և տեղափոխվեն Կապադովկիայի հարավային և Կիլիկիայի հյուսիսային շրջանները։ Հայերի հոսանքը դեպի Կիլիկիա առավել ևս ուժեղացավ սելջուկ-թուրքերի արշավանքների ժամանակ։ 1065 թվականին Կարսի թագավոր Գագիկ Աբասյանը թողեց իր երկիրը և մեծաթիվ զորականների, ազնվականների և այլոց հետ տեղափոխվեց Կիլիկիայի հյուսիսային սահմանամերձ Ծամնդավի շրջանը։ 1073 թվականին բազմաթիվ գաղթականների հետ Կիլիկիա դնաց Արցախի իշխաններից Օշինը։ Այնտեղ տեղափոխվեցին Մասունից, Շիրակից, և Հայաստանի այլ վայրերից բազմահազար հայեր։

XI դարի 70-ական թ. սելջուկ-թուրքերը ներխուժեցին նաև Փոքր Ասիայի արևելյան ու կենտրոնական շրջաններ։ Այստեղ կենտրոնացած հայկական բնակչության զգալի մասը տեղափոխվեց Կիլիկիա և բնակություն հաստատեց Մամեստիա, Ադանա, Տարսոն քաղաքներում և նրանց շրջակայքում։ Այդպիսով, XI դ. կեսերին և հատկապես նրա երրորդ քառորդում Կիլիկիայում կուտակվեցին մեծ թվով հայեր, որոնք արդեն այդ երկրի բնակչության մեջ թվական գերազանցություն էին կազմում։ Շատ շրջաններում առաջացել էին հայկական խոշոր ֆեոդալներ, որոնք իրենց ձեռքն էին առել այդ գավառների վարչական ու տնտեսական կյանքի կառավարումը։

Հայ բնակչության կուտակումը Կիլիկիայում և այնտեղ հայ-

կական խոշոր ֆեոդալական տների առաջացումն ու քաղաքական-նապես ամրապնդվելը նախապայմաններ ստեղծեցին հայկական ինքնուրույն իշխանության առաջացման համար։

2. ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Հայկական իշխանությունների հաստատումը Կիլիկիային սահմանակից երկրամասերում

Կիլիկիայում և նրան սահմանակից շրջաններում հաստատված հայկական ֆեոդալական խոշոր տները իրենց կալվածքներն ընդարձակելու համար պայքարի մեջ մտան այլազգի և առաջին հերթին բյուզանդական ծագում ունեցող ֆեոդալների հետ, զենքն ուղղելով նաև բյուզանդական դերիշխանության դեմ։

Կիլիկիայի, Կապադովկիայի ու Ասորիքի հայ բնակչության բոլոր իրավերը համակրանքով վերաբերվեցին այդ պայքարին, որի արդյունքը եղավ հայկական իշխանությունների առաջացումը Կիլիկիայի լեռնային մասերում, Կապադովկիայում և Ասորիքի հյուսիսային շրջաններում։ Դրանցից մեկը Փիլարտոսի իշխանությունն էր։ Սա նախկինում եղել էր բյուզանդական զորավար, որի բանակի զինվորների մեծ մասը հայեր էին։ 1071 թվականի Մանազկերտի հակատամարտում Բյուզանդական կայսրության կրած պարտությունից հետո նա հրաժարվեց ճանաչել կայսրության դերիշխանությունը և սկսեց գործել ինքնիշխան կերպով։ Շուտով նրա գլխավորությամբ ստեղծվեց մի ընդարձակ իշխանություն, որն ընդգրկում էր Մարաշի, Քեսուի, Եդեսիայի, Անարզաբայի ու այլ շրջաններ։ Այն իր գոյությունը պահպանեց մինչև XI դ. 80-ական թթ.։ Փիլարտոսի մահից հետո, Քեսուում առաջանում է Գոգ Վասիլի իշխանությունը, որը նույնպես ընդարձակ շրջաններ էր ընդգրկում։

Հայկական նշված իշխանությունները երկար ժամանակ կասեցնում էին սելջուկ-թուրքերի ներխուժումը Ասորիքի որոշ շրջաններ ու Կիլիկիա և դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծում Կիլիկիայի հայերի միավորվելու և իրենց սեփական իշխանություններ ստեղծելու համար։ Վերոհիշյալ հայկական իշխանությունները կարճատև կյանք ունեցան։ Նրանք փաստորեն գոյատևեցին մինչև իրենց հիմնադիրների մահը։ Ի տարբերություն վերը հիշատակված իշխանությունների, այլ ընթացք ունեցավ բուն Կիլիկիայում Ռուբենի գլխավորությամբ ստեղծված հայկական իշխանությունը, որը խոշոր դեր խաղաց Կիլիկիայի հայերի պետական ու կուլտուրական կյանքում։

Ռուբինյան իշխանության հաստատումը

Պատմական աղբյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ Գագիկ II-ի թիկնապահ իշխաններից (թերևս ազգականներից) մեկը՝ Ռուբեն անունով, հաստատվել էր Կիլիկիայի հյուսիսային լեռնաշխարհում՝ Բարձրբերդում։ Նա 1080 թ. ապստամբվեց Բյուզանդական կայսրության դեմ, ամրացավ Կոռոմոդոլ բերդում և պայքար սկսեց իր իշխանությունն ընդարձակելու համար։ Այդ պայքարի ընթացքում Ռուբենի շուրջը համախմբվեցին Կիլիկիայի լեռնային շրջաններում բնակություն հաստատած հայերը և օգնեցին նրան այդ շրջանները մաքրելու բյուզանդական իշխանություններից։ Հայերին հաջողվեց կարճ ժամանակում բյուզանդացիներից գրավել նաև Կոպիտառ և Բարձրբերդ ամրոցները, ազատագրել ամբողջ Բարձրբերդի շրջանը և Ռուբենի գլխավորությամբ Կիլիկիայում հիմք դնել հայկական իշխանության։ Այստեղից էլ պատմության մեջ այդ իշխանությունը կոչվեց **Ռուբինյան** իշխանություն, հետագայում նաև թագավորություն։

Ռուբինյան իշխանությունը, որ XII դ. վերջերին դարձավ թագավորություն, իր գոյությունը պահպանեց շուրջ 300 տարի։ Այն իր պետական կառուցվածքով, մշակած օրենքներով և վարչական կառուցվածքով հասավ կազմակերպվածության բարձր աստիճանի ու դարձավ հայերի երկրորդ հայրենիքը, միջնադարյան հայ մշակույթի խոշորագույն օջախը։ Ռուբեն I-ը (1080—1095) կարողացավ իր իշխանությունը տարածել Լեռնային Կիլիկիայի մեծ մասի վրա և արդեն ամուր հիմքերի վրա դրված մի իշխանություն ժառանգություն թողեց իր որդուն՝ Կոստանդին I-ին (1095—1100)։

Խաչակիրները և հայկական իշխանության ընդարձակումը

XII դարի առաջին երեք տասնամյակներում հայկական իշխանությունը Կիլիկիայում ավելի ընդարձակվեց ու ամրապնդվեց։ 1098 թվականին հայկական զորքերը գրավեցին Վահկա բերդը, որն այդ ժամանակից սկսած դարձավ իշխանության կենտրոնը։ Կոստանդին I-ը ձեռնամուխ եղավ իր իշխանության սահմանները դեպի Դաշտային Կիլիկիա ընդարձակելու գործին, և ինչպես Մատթեոս Ուռհայեցին է վկայում, տիրեց «բազում քաղաքաց և գաւառաց»։ Կոստանդինի ժամանակ հայերի հաջողությանը նպաստեց նախ այն, որ ազատագրվող շրջանների բնակչության մեծ մասը հայեր և ասորիներ էին, որոնք ակտիվ կերպով օժանդակում էին հայկական զորքե-

ին։ Երկրորդ, խաչակիրների արշավանքը, որն սկսվել էր այդ ժամանակ, օբյեկտիվորեն օժանդակում էր հայերին Բյուզանդական կայսրության դեմ նրանց մղած ազատագրական պայքարում։

Կոստանդին I-ը համագործակցեց խաչակիրների հետ և իր զորքերով մասնակցեց խաչակիրների արշավանքին դեպի Ասորիք, իսկ խաչակիրները օժանդակեցին Կոստանդինին իր իշխանությունն ընդարձակելու դեպի արևելք, նրան շնորհեցին «կոմսի», «մարկիզի» տիտղոսներ և խնամիական կապեր հաստատեցին նրա ընտանիքի հետ։

Կոստանդին I-ի որդին՝ Թորոս I-ը (1100—1129) շարունակեց իր հոր քաղաքականությունը։ 1104 թ. Թորոսը պարտության մատնելով բյուզանդական զորքերին, իրեն միացրեց Սիս և Անարզաբա քաղաքները։ 1111 թվականին նրանք գրավեցին Կիլիկիայի ամրոցը, որով հայկական իշխանության սահմաններն ընդարձակվեցին դեպի հյուսիս՝ մինչև Կապադովկիա։

Հայկական իշխանության հաջողություններն սկսեցին անհանգստություն պատճառել թե՛ Բյուզանդական կայսրությանը, թե՛ Կիլիկիային սահմանակից սելջուկ-թուրքական էմիրություններին։ 1107 թ. Իկոնիայի սելջուկները թափանցեցին Կիլիկիա և ասպատակեցին Անարզաբայի շրջանը, սակայն Թորոս I-ի և Գող Վասիլի միացյալ զորքերը Բերդուսի մոտ ջարդեցին սելջուկներին և ետ շպրտեցին նրանց։ Հարձակումները կրկնվեցին նաև 1110 և 1113 թթ., բայց հայերին հաջողվեց սանձահարել սելջուկյան հրոսակախմբերին և մաքրել երկիրը նրանցից։

Դաշտային Կիլիկիայի միացումը հայկական իշխանությանը

Թորոս I-ին հաջորդեց նրա եղբայր Լևոն I-ը (1129—1137), որի իշխանության շրջանում երկրի հոգսերից մեկը դարձավ Կիլիկիայի ծովեզրյա մասերի ազատագրումը։ Այստեղ հայերը բախվեցին և՛ բյուզանդացիների, և՛ խաչակիրների հետ։ Վերջիններն իրենց արշավանքների ժամանակ բնակություն էին հաստատել ծովափնյա մի շարք շրջաններում, հատկապես Դաշտային Կիլիկիայի արևելյան մասերում։ Բայց հայերը կարողացան օգտագործել իրենց հակառակորդների միջև եղած թշնամանքը և առանձին-առանձին նրանց դուրս քշեցին Կիլիկիայից։

1130—1132 թվականներին հայկական իշխանությունը բյուզանդական զորքերին դուրս քշեց Մամեստիայից, Ադանայից և Տարսոնից։ Դրանով հայերն իրենց իշխանության սահմանը հարավից հասցրին մինչև Միջերկրական ծովը։ Այնուհետև, Լևոն I-ի

բանակը հարձակվեց Կիլիկիայի սահմանակից սելջուկյան էմիրությունների վրա և իշխանության սահմաններն ընդարձակեց դեպի արևելք ու հյուսիս-արևելք, իսկ հետո ձեռնարկեց Կիլիկիայի հարավ-արևելյան ծովեզրյա շրջանների ազատագրումը։ Դրանից հետո Լևոն I-ը դաշնակցեց Եդեսիայի դուքս Ջոսլինի՝ իր քրոջ որդու, և Հալեպի Զանգի էմիրի հետ, պայքարի ելնելով Անտիոքի դքսության և Երուսաղեմի թագավորության դեմ։ Նա 1135—1136 թվականներին խաչակիրներին ծովափնյա շրջաններից դուրս քշելուց հետո իշխանության սահմաններն ընդարձակեց դեպի արևմուտք և հասցրեց մինչև Կալիկադնոս գետը։

Հայկական իշխանության ժամանակավոր անկումը

Մինչև 1130-ական թվականները Բյուզանդական կայսրությունը լուրջ ուշադրություն չէր դարձնում Կիլիկիայում տեղի ունեցող դեպքերին։ Սակայն 1136 թ., երբ հայկական զորքերը պաշարել էին Սելևկիա քաղաքը, բյուզանդական կայսր Հովհաննես Կոմնենոսը կազմակերպեց արշավանք դեպի Կիլիկիա։

Բյուզանդական բանակը Կիլիկիա մտավ Միջերկրական ծովով։ Նրան հաջողվեց սրընթաց արշավանքով գրավել Տարսոն, Ադանա, Մսիս քաղաքները և առաջ շարժվել դեպի Անարզաբա, որն այդ ժամանակ հայկական իշխանության կենտրոնն էր։ Հայկական զորքերը, տեղեկանալով բյուզանդացիների հարձակման մասին, դադարեցին Սելևկիայի պաշարումը և եկան ամրացան Անարզաբայում, որը շուտով պաշարվեց հակառակորդի կողմից։

Անարզաբայի պարիսպների տակ տեղի ունեցան արյունալի մարտեր։ Երկու կողմերն էլ կռվում էին անընկճելի համառությամբ։ Բյուզանդացիները բարաններ բերեցին և, մարտկոցներ կազմելով, սկսեցին հարվածել պարիսպներին։ Սակայն, պաշտպանվողներն էլ իրենց հերթին մեքենաներով հսկայական քարեր էին նետում թշնամու վրա և շարքից հանում բաբաններին։ Նրանք պարիսպ քանդող մեքենաները հրկիզում էին նաև շիկացած երկաթյա ձողերով։ Բայց այնուամենայնիվ բյուզանդացիները կարողացան ճեղքել պարիսպը և ներխուժել քաղաք։

Հայերը միջնաբերդում 30 օր համառ պայքար մղելուց հետո ստիպված եղան թողնել քաղաքը, քաշվել լեռները և ամրանալ Վահկա բերդում։ Վերջինս որքան էլ անառիկ էր, այնուամենայնիվ չդիմացավ բյուզանդական գերազանց ուժերին և 1137 թ. Լևոն I-ը անձնատուր եղավ։ Բյուզանդական կայսրը Լևոն I-ին և

նրա երկու որդիներին՝ Ռուբենին և Թորոսին, շղթայակապ ուղարկեց Կոստանդնուպոլիս, իսկ Կիլիկիան ենթարկեց իր գերիշխանությանը։

Կիլիկիան նվաճելուց հետո բյուզանդական կայսրը իր զորքերի մեծ մասով վերադարձավ Կոստանդնուպոլիս։ Երկիրը մնաց անպաշտպան։ Դրանից օգտվեցին հարևան սելջուկյան էմիրությունները և լատինական իշխանությունները։ Դանիշման Մելիք-Ահմադը ներխուժեց երկրի լեռնային մասերը, գրավեց Վահկա բերդը և Կապանի ամրությունները։ Խաչակիրները ասպատակեցին դաշտային շրջանները։ Երկրում ստեղծվեց խառնակ և անապահով վիճակ։

Թորոս II-ը և իշխանության վերականգնումը

Կիլիկիայում ստեղծված դրությունը նորից իր վրա հրավիրեց Բյուզանդական կայսրության ուշադրությունը։ Հովհաննես Կոմնենոսը 1142—1143 թթ. նորից մեծ բանակով արշավեց Կիլիկիա։ Սակայն 1143 թ. նա Կիլիկիայում նեռահարվեց թունավոր նետով և մեռավ՝ գահը թողնելով իր որդի Մանվելին։ Վերջինս Կիլիկիայում թողեց 12 հազարանոց մի բանակ և վերադարձավ Կոստանդնուպոլիս։ Հենց այդ ժամանակ էլ երկրում սկսվեց մի հուժկու շարժում բյուզանդական տիրապետությունը նորից տապալելու և հայկական իշխանությունը վերականգնելու համար։

Հայ պատմագիրները հաղորդում են, որ գերված հայոց իշխան Լևոն I-ը և նրա որդի Ռուբենը 1142 թ. մահանում են Կոստանդնուպոլսում։ Մյուս որդին՝ Թորոսը կենդանի է մնում, վերադառնում է Կիլիկիա և պայքարում իշխանության վերականգնման համար։ Թորոսի Կիլիկիա վերադառնալու մասին կան տարբեր տեղեկություններ, որոնք, սակայն, միաբերան վկայում են, որ Թորոս II-ը (1145—1169) փախչում է Կոստանդնուպոլսից, 1145 թ. գալիս է Կիլիկիա, իր շուրջն է համախմբում հայկական ուժերին, օժանդակություն ստանում ասորիներից և պայքար սկսում բյուզանդական զորքերի դեմ։ Շուտով նրա մոտ են գալիս գերությունից ազատ մնացած իր երկու եղբայրները՝ Ստեփանեն և Մլեհը, որոնք բյուզանդական արշավանքի ժամանակ գտնվում էին Հալեպում։ Նրանք ընդհանուր գրոհ սկսեցին բյուզանդացիների դեմ և, նրանց դուրս քշելով Լեռնային Կիլիկիայից, ազատագրեցին Ամուտա, Վահկա, Առյուծ և Սիմոնկայ բերդերը։

Իրենց դիրքերն ամրապնդելու և հաղթանակն ապահովելու նպատակով հայերը դարձյալ համագործակցության մեջ մտան

խաչակիրների հետ։ Այդ նույն նպատակով հայերը աշխատեցին ընդհանուր լեզու գտնել նաև սելջուկ-թուրքական առանձին էմիրությունների հետ։ Օգտագործելով այդ իշխանությունների ուժերը, հայերը Թորոս II-ի գլխավորությամբ ազատագրեցին Անարզաբա քաղաքը, Թիլ ամրոցը, իշան դեպի ծովափ և 1151 թ. դուրս քշեցին բյուզանդացիներին Մսիս և Տարսոն քաղաքներից։ 1145—1151 թվականներին՝ շուրջ 5—6 տարվա ընթացքում, հայերին հաջողվեց բյուզանդական զորքերից մաքրել համարյա ամբողջ Կիլիկիան և վերականգնել հայկական իշխանությունը։ Սամվել Անեցու և Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ Թորոս II-ը ոչ միայն «իր հայրենիքը ետ դրավեց, այլև ավելի քաղաքներ ու բերդեր առավ, քան իր նախնիները» և «տիրապետեց ամբողջ Կիլիկիան ծագե ի ծագ»։

3. ՊԱՅՔԱՐ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԴԵՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Բյուզանդական նոր արշավանքները

Բյուզանդական կայսրությունը 1152 թ. Անդրոնիկոս Կոմնենոս զորավարին մեծ բանակով ուղարկեց Կիլիկիա։ Անդրոնիկոսի զորքերը պաշարեցին Մսիս (Մամեստիա) քաղաքը, ուր գտնվում էր հայկական բանակը։

Թորոս II-ը, նկատի ունենալով թշնամու գերազանց ուժերը, Անդրոնիկոսին առաջարկեց հաշտություն կնքել, խոստանալով հնազանդվել կայսրին, բայց պայմանով, որ կայսրն էլ ճանաչի հայերի իրավունքները։ Սակայն բյուզանդական զորավարը ի պատասխան հայերի առաջարկի, սպառնաց Թորոս II-ին, ասելով, որ ինքը իր հետ բերել է նրա հոր՝ Լևոն I-ի շղթաները և դրանցով Թորոսին պիտի շղթայակապ ուղարկի Կոստանդնուպոլիս։

Հայերը վրդովվեցին Անդրոնիկոսի ամբարտավան պատասխանից, կրկնապատկեցին իրենց ուժերը և ամուր պաշտպանության անցան։ Նրանք անձրևոտ մի գիշեր դուրս գալով քաղաքից, հանկարծակի գրոհեցին բյուզանդական բանակի վրա։ Խուճապի ենթարկված հակառակորդը չդիմացավ ու փախուստի դիմեց։ Թորոս II-ի զորքերը մեծ ջարդ տվեցին թշնամուն և գերեցին շատերին, որոնց թվում Օշին Հեթումյանին և Վասիլ Նաթանայելյանին։ Իսկ բյուզանդական զորավար Անդրոնիկոս Կոմնենոսը հազիվհազ փրկեց իր անձը՝ ճողոպրելով դեպի Անտիոք։

Բյուզանդական կայսրությունը Անդրոնիկոսի պարտությունից հետո փորձեց հայերի դեմ հանել սելջուկ-թուրքական էմիրու-

թյուններին, խաչակիրներին և, հատկապես, Անտիոքի դքսությունը։

Հայերը, հետագա բարդություններից խուսափելու և խաչակիրներին բյուզանդացիների հետ համագործակցելուց ետ կանգնեցնելու համար, Անտիոքի դքսությանը զիջեցին սահմանամերձ մի քանի բերդեր, և վերահաստատեցին նրա հետ նախկին բարեկամությունն ու դաշինքը։ Դրանից հետո այդ երկու իշխանությունները միացյալ ուժերով իրենց զենքն ուղղեցին Բյուզանդիայի դեմ։

Անհաջողություններն ավելի անհանգստացրին Բյուզանդական կայսրությանը։ Նա վճռեց նորից զորքեր ուղարկել Կիլիկիա։ Եվ ահա, 1156—1157 թթ. բյուզանդական զորավար Անդրոնիկոս Եվփորպին մի մեծ բանակով մտավ Կիլիկիա, բայց Տարսոն քաղաքի մոտ մղած մարտի դաշտում թողնելով 3000 դիակ, ետ փախավ։ Մի տարի անց ինքը՝ կայսրը նոր բանակով արշավեց Կիլիկիայի վրա և պատերազմ սկսեց թե՛ հայերի և թե՛ խաչակիրների դեմ։ Պատերազմական գործողությունները ձգձղվեցին, խաչակիրները դադարեցրին դիմադրությունը, իսկ հայերն էլ ընդունեցին Երուսաղեմի թագավորի ու Անտիոքի դուքսի միջնորդությունը և հաշտություն կնքեցին Բյուզանդիայի հետ՝ նրան զիջելով Անարզարա ու Մսիս քաղաքները և ընդունելով կայսեր գերիշխանությունը։ Բայց շուտով Թորոս II-ը այդ պայմանները չեղյալ հայտարարեց։

Հայերի հաղթանակը և իշխանության ամրապնդումը

Շուրջ հինգ-վեց տարի երկիրը զերծ մնաց արտաքին հարձակումներից։ Այդ ժամանակամիջոցում Թորոս II-ը իր ուշադրությունը կենտրոնացրեց իշխանության ամրապնդման վրա։ Նրա զորքերը գրավեցին երկրի ներսում դեռևս տեղ-տեղ բյուզանդացիների ձեռքում մնացած ամրոցները, հայկական իշխանությանը միացրին Նաթանայելյանների կալվածքները և ընդարձակեցին ու ամրապնդեցին իշխանության սահմանները։ Ստեփանեի ջոկատները գրավեցին Սև լեռներում գտնվող Բերդուսը, Դղյակ Կիլիկիոն և այլ ամրություններ։

1163—1164 թվականներին Կիլիկիայով ճանապարհորդել է հրեա ճանապարհորդ Բենիամին Դուտելան։ Նրա հաղորդած տեղեկությունների համաձայն Թորոսի իշխանության սահմանները հարավ-արևմուտքում հասել էր մինչև Կոռիկոս, իսկ արևելքում՝ Սև լեռներ։ Այդ նշանակում է, որ Թորոսին հաջողվել էր ետ մղել բյուզանդացիների բոլոր հարձակումները և, բացառությամբ Քարուտ Կիլիկիայի արևմտյան գավառների, տեր դառնալ Կիլիկիայի մեծագույն մասին։ Թորոս II-ը այդ բավականին ընդարձակ տե-

բիտորիան արտաքին թշնամիներից պաշտպանելու համար ստեղծեց ավելի քան 30 հազարանոց ուժեղ բանակ։ Բացի ռազմական ուժի կազմակերպումից, իշխանությունը իր ուշադրությունը կենտրոնացրեց նաև երկրի շինարարության ու տնտեսական կյանքի վրա։ Բարեկարգվեցին քաղաքները, նավահանգիստները։ Զարկ տրվեց առևտրին, արհեստագործությանը և գյուղատնտեսությանը։ Սակայն բյուզանդացիները մեկ անգամ ևս փորձեցին խախտել Կիլիկիայի խաղաղությունը։

1164 կամ 1165 թվականին բյուզանդական կառավարիչներից մեկը խարդախությամբ իր մոտ կանչեց Թորոս II-ի եղբորը՝ Ստեփաննին և դաժանությամբ սպանեց նրան, կենդանի-կենդանի ընկղմելով կաթսայում եռացող ջրի մեջ։ Թորոս II-ն ու Մլեհը հարձակումներ կազմակերպեցին բյուզանդական տիրապետությանը ենթակա շրջանների վրա, քարուքանդ արեցին նրանց ամրոցները և անխնա կոտորեցին նրանց պաշտոնյաներին։ Կայսրությունը այդ դեպքերը առիթ դարձնելով, նորից բանակ ուղարկեց Կիլիկիա։ Մանվել Կոմնենոսը Կիլիկիա տրշավող զորքերի հրամանատար նշանակեց դարձյալ Անդրոնիկոս Կոմնենոսին, որն արդեն մի անգամ խայտառակ պարտություն էր կրել հայերից։ Կիլիկիա գալով, նա հայերի նկատմամբ իր արհամարհանքը ցույց տալու համար դաշտում զորքերը դասավորեց ոչ մարտական ձևով։ Հայերն էլ օգտագործեցին այդ, անտառներով ու ձորերով ծածկաբար մոտեցան հակառակորդին և, մի քանի կողմից դրոհելով, լիովին ջարդեցին նրան։ Այս անգամ ևս Անդրոնիկոս Կոմնենոսը մազապուրծ փախավ։ Դրանից հետո Բյուզանդական կայսրությունն այլևս երբեք չփորձեց միջամտել Կիլիկիայի գործերին և հաշտվեց հայկական ինքնուրույն իշխանության գոյության հետ։

Մլեհը և նրա քաղաքականությունը

Թորոս II-ը մահացավ 1169 թ.։ Նրան հաջորդեց եղբայրը՝ Մլեհը (1169—1175)։

Պատմագիտական հին աղբյուրներում և նույնիսկ հետագա շրջանի որոշ ուսումնասիրություններում Մլեհը ներկայացվել է որպես անփառունակ և անարժան մի անձնավորություն, այն բանի համար, որ նա Կիլիկիայի հայկական իշխանության արտաքին և մասամբ էլ ներքին քաղաքականության մեջ փոփոխություններ է մտցրել։ Մինչև Մլեհը, Կիլիկիայի հայ իշխանները Բյուզանդիայի դեմ մղած պայքարում հիմնականում դաշնակցում կամ համագործակցում էին խաչակիր ասպետական ընկերությունների և լատինական իշխանությունների հետ։ Մլեհը փոխեց այդ քաղաքականությունը և սկսեց համագործակցել Կի-

լիկիայի հարևան սուլթանությունների, առանձնապես Հալեպի սուլթանության հետ։

Հայկական իշխանությանը հարկավոր էր ամբողջությամբ մաքրել Կիլիկիայի ծովափնյա շրջանները օտարներից. արևմտյան ծովափնյա վայրերում դեռևս իշխում էին բյուզանդացիները, իսկ արևելյան մասերում՝ տեղ-տեղ խաչակիրները։ Սրանց այդ շրջաններից դուրս քշելու համար Մլեհը պետք է այլ ուժերի հետ համագործակցեր և օգնություն ստանար։ Համագործակցել կարող էին հարևան սուլթանություններն ու էմիրությունները, որոնք շահագրգռված էին լատինական իշխանությունների և Բյուզանդիայի թուլացմամբ։

Մլեհն իշխանությունն իր ձեռքը վերցնելուց հետո պետական ապարատում կատարեց որոշ փոփոխություններ։ Նա ասպարեզից հեռացրեց այն մարդկանց, որոնք դեմ էին իր քաղաքականությանը, բռնություններ գործադրեց նրանց նկատմամբ և զրկեց որոշ իրավունքներից։

Այս ձեռնարկումներից հետո 1171—1172 թ. հայկական իշխանությունը, երկիրն ապահովելով հարևան սելջուկ-թուրքական սուլթանությունների ներխուժումներից, պայքար սկսեց խաչակիր տաճարական ասպետների դեմ, որոնք տիրում էին Կիլիկիայի և Անտիոքի միջև ընկած վայրերին, և այդ հողերը միացրեց իրենց։ Այնուհետև, օժանդակություն ստանալով սուլթանություններից և հատկապես Հալեպի սուլթանից, հայերը դուրս քշեցին Անտիոքի դքսին և խաչակիր մյուս տարրերին Կիլիկիայի հարավ-արևելյան ծովափնյա շրջաններից, իսկ բյուզանդական իշխանության մնացորդներին՝ Մամեստիայի, Ադանայի և Տարսոնի ծովամերձ շրջաններից և այդ բոլոր հողերը վերջնականապես միացրին իրենց իշխանությանը։

Բյուզանդական կուսակալներ և զորավարներ Միքայել Վառնան, Կոստանդին Եվփորպեն և Կոստանդին Կալամանը փորձեցին խանգարել հայերին, սակայն նրանց զորքերը շարդվեցին և երկրից դուրս շպրտվեցին։ Մլեհի գլխավորությամբ ձեռք բերված այդ հաջողությունները մեծ հաղթանակ էին հայերի համար, հատկապես այն տեսակետից, որ նրանց ձեռքն էին անցնում խոշոր նավահանգիստները և ծովային ճանապարհների ելքերը։

Մլեհի իշխանության տարիներին հատուկ ուշադրություն դարձվեց երկրի շինարարության և տնտեսական կյանքի կարգավորման ու զարգացման վրա։ Վերաշինվեց ու բարեկարգվեց Սիս քաղաքը և դարձավ իշխանության կենտրոնը։ Այնուհետև հոգ տարվեց

առևտրի և արհեստագործության զարդացման մասին։ Այդ նպատակով Մլեհը, Հալեպի Նուր-էդ-դին սուլթանի հետ միասին, դրամ դտրեց և կարգավորեց երկրի դրամական շրջանառությունը։

Մլեհի վարած քաղաքականությունը և իրագործած ձեռնարկումները, անտարակույս, նպաստեցին հայկական իշխանության ամրապնդմանն ու զարդացմանը։ Դրա հետ մեկտեղ, այդ ձեռնարկումները Մլեհին հնարավորություն տվեցին խոշոր ֆեոդալներին ավելի մեծ կախման մեջ դնելու կենտրոնական իշխանությունից։ Իսկ այդ շահավետ չէր խոշոր ֆեոդալներին, դրա համար էլ նրանք դժգոհեցին Մլեհի քաղաքականությունից։ Հայ բարձրաստիճան հոգևորականները ևս խիստ դեմ էին մահմեդական իշխանությունների հետ Մլեհի համագործակցությանը։ Այդ բոլորը հասցրեց այն բանին, որ 1175 թ. Սիս քաղաքում դավադրություն կազմակերպեցին Մլեհի դեմ և սպանեցին նրան։

Բյուզանդական իշխանության մնացորդների վերացումը

Ստեփանի որդի Ռուբեն II-ը (1175—1187), որ հաջորդեց Մլեհին, չփոխեց իր հորեղբոր վարած քաղաքականությունը այս կամ այն իշխանության, ինչպես նաև սելջուկյան սուլթանությունների հետ համագործակցելու հարցում։ Ռուբեն II-ի ժամանակ ևս հայկական իշխանության հիմնական հոգսը բյուզանդական տիրապետությունից ամբողջ Կիլիկիայի ազատագրումն էր։ Նա, օգտագործելով բյուզանդական իշխանությունների և Իկոնիայի սուլթանության միջև եղած թշնամանքը և օժանդակություն ստանալով Իկոնիայի սուլթանից, կարճ ժամանակում Կիլիկիայի արևմտյան մասերը ազատագրեց բյուզանդական տիրապետությունից։ Հայերը բյուզանդական վերջին կուսակալին՝ Կիր Սահակին գերի վերցրին և հանձնեցին Անտիոքի դքսին։ Կիլիկիայում վերացվեց բյուզանդական տիրապետության վերջին մնացորդը։ Ամբողջ երկիրը միավորվեց հայկական իշխանության ներքո, որի սահմանները ձգվում էին Սելևկիայից մինչև Սև լեռները։

Այսպիսով, ավելի քան հարյուրամյա համառ և արյունալի պայքարի դնով Կիլիկիայի հայերը կարողացան երկրից դուրս քշել բյուզանդացիներին, կազմակերպել և ամրապնդել իրենց իշխանությունը, ձեռք բերել քաղաքական անկախություն և ստիպել Բյուզանդիային ու սահմանակից մյուս տերություններին ճանաչել իրենց իշխանությունը Կիլիկիայում։

Հայ ժողովրդի կիլիկյան հատվածի այդ հաղթանակի վճռական պայմաններից մեկն այն էր, որ ժամանակի ընթացքում

Հայաստանից և հայաբնակ այլ վայրերից Կիլիկիա տեղափոխվեցին հարյուր հազարավոր հայեր։ XI—XII դարերում Կիլիկիայի բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը, որոնք իրենց ձեռքն էին վերցրել երկրի քաղաքական և տնտեսական կյանքի ղեկավարությունը։ Դրա հետ միասին հայերը տոգորված էին բյուզանդական սիրապետությունը թոթափելու և սեփական անկախ պետություն ստեղծելու ձգտումով։

Երկրորդ պատճառն այն էր, որ Կիլիկիան, տեղավորված լինելով Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափին, միջազգային առևտրի ծովային և ցամաքային հանապարհների հանգույց էր։ Իսկ դա զգալի չափով նպաստում էր երկրի տնտեսական կյանքի զարգացմանը և հսկայական եկամուտ բերում իշխանությանը։ Կիլիկիայի աշխարհագրական դիրքն ուներ նաև մի այլ առավելություն։ Նա երեք կողմից շրջապատված էր բարձր և անանցանելի լեռներով, իսկ մի կողմից ծովով։ Այդ դժվարացնում էր թշնամու մուտքը երկրի խորքերը և հեշտացնում երկրի պաշտպանությունը։

Պատճառներից մեկն էլ խաչակիրների և հայերի համագործակցությունն էր։ Խաչակիրների արշավանքները և Ասորիքում ու Պաղեստինում ստեղծած նրանց իշխանությունները ծանր հարվածներ հասցրին Կիլիկիային սահմանակից սելջուկ-թուրքական սուլթանություններին և թուլացրին նրանց։ Բացի այդ, խաչակիրներն իրենց հարվածներն ուղղում էին նաև Բյուզանդիայի դեմ և դրանով խանգարում Բյուզանդիային միջամտելու Կիլիկիայի գործերին։

ԳԼՈՒԽ XXVI

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ԼԵՎՈՆ II-Ը ԵՎ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում XII դարի վերջին քառորդում

Մերձավոր Արևելքի, առանձնապես Միջերկրական ծովի արևելյան ափերին ընկած երկրների, քաղաքական վիճակը XII դ. վերջին քառորդում ենթարկվեց զգալի փոփոխություններին։ Սելջուկական էության սուլթանությունը Սալահեդդինի գլխավորությամբ մեծ հզորության էր հասել։ Այդ սուլթանությունը 1187 թ. դրավեց Երուսաղեմի լատինական թագավորությունը, իրեն ենթարկեց Ասորիքի և Միջագետքի զգալի մասը և վտանգի տակ դրեց Անտիոքի լատինական իշխանության գոյությունը ընդհանրապես։ Միջերկրական ծովի արևելյան ափերին ընկած լատինական իշխանություններից մի քանիսը XII դ. վերջին քառորդին կուլ դնացին Սալահեդդինի նվաճումներին։

Խոշոր ուժ էր դարձել նաև Իկոնիայի սուլթանությունը։ Նա Բյուզանդիայի հաշվին ընդարձակել էր իր տերիտորիան Փոքր Ասիայում և իր ազդեցությունը տարածել արևելքից հարևան սելջուկյան էմիրությունների վրա։ Նրա արևելյան սահմանը XII դ. վերջին քառորդում հասնում էր մինչև Կարնո բարձրավանդակը։

XII դարի վերջերին իր հզորացումն էր ապրում նաև վրացական պետությունը։ Նա այդ ժամանակաշրջանում ծանր հարվածներ էր հասցնում հարևան սելջուկ-թուրքական էմիրություններին։ Մերձավոր Արևելքում աստիճանաբար թուլանում էին արևմտյան պետությունների ազդեցությունը և նրանց ստեղծած լատինական իշխանությունների ուժն ու նշանակությունը։ Բյուզանդիան, որ մինչ այդ ազդեցիկ դեր էր խաղում Միջերկրական ծովի արևելյան

ավազանում, այժմ ետ էր մղվել և ամփոփվել Մարմարի և Սև ծովերի ափերին։ Նա XII դ. վերջերում, այլևս վտանգավոր չէր ինչպես հայկական իշխանության, այնպես էլ ուժեղացող Իկոնիայի և Եգիպտոսի սուլթանությունների համար։

Եգիպտոսի և Իկոնիայի սուլթանությունների նվաճումների հետևանքով Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող միջազգային առևտրի բանուկ ճանապարհներն ու նավահանդիստները դուրս եկան եվրոպական պետությունների ձեռքից։ Հենց դա էլ դրդեց նրանց նոր խաչակրաց արշավանք կազմակերպել դեպի Արևելք՝ լատինական իշխանությունները վերականգնելու և առևտրական ճանապարհներին տիրելու համար։ Այդ ժամանակ էլ կազմակերպվեց խաչակրաց երրորդ արշավանքը, որը գլխավորում էին Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսը և Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծասիրտը։

Պայքարը օտար ներխուժումների դեմ

Այդպիսի քաղաքական իրադրության պայմաններում **Կիլիկիայի հայկական իշխանության** գլուխ անցավ Լևոն II-ը (1187—1219)։ Նրա իշխանության հենց առաջին տարիներին Իկոնիայի և Եգիպտոսի սուլթանությունները փորձեցին անդամահատել Կիլիկիան և տիրանալ նրա առանձին մասերին։ Այդ նպատակով 1187 թ. Իկոնիայի սուլթանի զորավար Ռոստոմը մեծ բանակով հարձակվեց Կիլիկիայի վրա և, առպատակելով շատ գյուղաքաղաքներ, հասավ մինչև Սիս քաղաքը։ Բայց նրա դեմ ելան հայկական զորքերը։ Սիսից ոչ հեռու, Ռավին կոչված վայրում, ջարդեցին նրա բանակը, իրեն էլ սպանեցին։

Թշնամիների ներխուժումները հայերին ստիպեցին մտածել իրենց իշխանության սահմանների ամրապնդման մասին։ Այդ նպատակով հայկական զորքերը 1188 թ. Իկոնիայի սուլթանությունից գրավեցին Պռականա և Լուլուա, Պաղրաս և Դարպսակ ամրոցներն ու բերդերը և գարձրին պաշտպանության ամուր կետեր։

Այդ նվաճումներից հետո, դեռևս 90-ական թթ. սկզբներին, Կիլիկիայի հայկական իշխանության սահմանները հասան հարավ-արևելքից՝ մինչև Ալեքսանդրետի շրջանը, հյուսիս-արևելքից՝ մինչև Մարաշ, հյուսիսից՝ մինչև Առակլիա քաղաքը, իսկ արևմուտքից՝ մինչև ծովափնյա Ատալիա քաղաքը։ Այդպիսով, հայկական իշխանության տերիտորիալ սահմանները Լևոն II-ի իշխանության առաջին տասնամյակում դուրս եկան Կիլիկիայի աշխարհագրական շրջանակներից։

Լևոն II-ը և խաչակիրները

1189 թվականին սկսվեց խաչակիրների երրորդ արշավանքը։ Լևոն II-ը հատուկ պատվիրակության միջոցով բանակցություններ մեջ մտավ գերմանական կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի հետ. նրանք համաձայնության եկան համագործակցելու իրար հետ։ Լևոն II-ը պատրաստակամություն հայտնեց օգնել խաչակիրներին պարենով, իսկ գերմանական կայսրը խոստացավ թագ շնորհել Լևոնին և նրան ճանաչել որպես Կիլիկիայի հայոց թագավոր։

Խաչակիրները մի քանի տարի Երուսաղեմի համար համառ կռիվներ մղեցին Սալահեդդինի բանակի դեմ։ Այդ կռիվներում խաչակիրները թեև լուրջ հաջողություններ չունեցան, բայց զբաղեցրին Սալահեդդինի զորքերին և կասեցրին նրանց հարձակումները Կիլիկիայի հայկական իշխանության վրա։

Լևոն II-ը, փ հատուցումն այդ բոլորի, 1191 թ. անձամբ գլխավորելով հայկական զորքերը, օգնեց Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծասրտին Բյուզանդիայից գրավելու Կիպրոս կղզին, ուր հետո հաստատվեց ֆրանսիական Լյուզինյան կամ Լուսինյան տան իշխանությունը։ Այնուհետև, նա խաչակիր ասպետների միություններից մի քանիսին կալվածքներ շնորհեց Կիլիկիայում՝ տաճարականներին՝ Մարաշի շրջակայքի մի քանի բերդեր, հիվանդանոցային ասպետներին՝ Սելևկիա քաղաքը և այլն։ Լևոն II-ը այդ անում էր այն նպատակով, որպեսզի հետագայում նրանց օգտագործեր իր երկիրը ներխուժող ուժերի դեմ։

Դաշինքի կնքումը Անտիոքի և Կիլիկիայի միջև

Մինչև Լևոն II-ը Կիլիկիայի հայ իշխանները եթե Անտիոքի դքսության ենթական կամ վասալը չէին, այնուամենայնիվ, հանգամանքների բերումով, ընդունում էին նրա ավագությունը։ Լևոն II-ը այդպիսի դրություն այլևս հանդուրժել չէր կարող։ Նա առիթ էր որոնում վերջ տալու այդ աննորմալ վիճակին։ Դեռևս Սալահեդդինի կենդանության ժամանակ, 1193 թ. Անտիոքի դուքս Բոհեմունդը աշխատեց նրան դրդել Լևոն II-ի դեմ։ Սակայն այդ չիրականացավ, որովհետև Սալահեդդինը հենց այդ թվականին մահացավ։ Դրանից հետո Անտիոքի դուքսը խորհեց դավադրությամբ իր ձեռքը գցել Լևոն II-ին։ Երկու երկրների միջև սահմանային վիճները լուծելու և բարեկամություն հաստատելու պատրվակով 1193 թ. Բոհեմունդը պատվիրակություն ուղարկեց Սիս, Լևոնին առաջարկելով գալ և տեսակցել իր հետ երկու պետությունների սահմանագլխին։ Սակայն Լևոն II-ը, նախօրոք տեղեկանալով Անտիոքի դքսի մտադրության մասին, կարողացավ

նույնպիսի ծուղակ սարքել Բոհեմունդի համար։ Նա իր համաձայնությունը հայտնեց հանդիպելու դքսի հետ և տեսակցության վայրը նշանակեց Կաստիմ բերդը։ Բոհեմունդը առանց որևէ կասկածանքի ընդունեց Լևոնի առաջարկը և իր շքախմբով մեկնեց Կաստիմ։ Այնտեղ Լևոն II-ը նրան ձերբակալեց և բերեց Սիս։ Գերված դքսից պահանջեցին ետ վերադարձնել Ռուբեն II-ի օրոք Կիլիկիայից խլած բերդերը, հողերը և գանձը, ինչպես և հայերին հանձնել Անտիոքը։ Բոհեմունդը ընդունեց այդ պահանջները, բայց Անտիոքի բնակիչները չկամեցան քաղաքը հանձնել հայերին և դուքսը մնաց գերության մեջ։

Երուսաղեմի թագավորը 1194 թ. եկավ Սիս, բանակցեց Լևոն II-ի հետ։ Նրան հաջողվեց համոզել Լևոն II-ին ու Բոհեմունդին՝ հաշտություն կնքել։ Այդ հաշտության համաձայն՝ ա) Անտիոքի դքսությունը հրաժարվեց իր ավագությունից Կիլիկիայի իշխանության նկատմամբ և ընդունեց Կիլիկիայի հայկական իշխանության ավագությունը, բ) Կիլիկիայի իշխանությանը վերադարձվեցին նրանից գրավված հողերն ու ամրությունները, գ) ազատ արձակվեց Բոհեմունդը, իսկ նրա որդի Ռայմոնդը ամուսնացավ Լևոն II-ի եղբայր Ռուբենի դուստր Ալիծի հետ, պայմանով, որ Ռայմոնդի մահից հետո դքսությունը անցնի Ալիծից ծնված որդուն։ Լևոն II-ը իր եղբոր աղջկան Ռայմոնդի հետ ամուսնացնելով, ձգտում էր հնարավորություն ստեղծել և իրավաբանական հիմք ունենալ հետագայում Անտիոքի դքսությունը միացնելու Կիլիկիայի հայկական իշխանությանը և այդպիսով կազմակերպելու համեմատաբար ուժեղ և կենսունակ պետություն։ Հետագայում Ալիծից ծնված որդուն նա որդեգրեց և հռչակեց Կիլիկիայի հայկական իշխանության գահաժառանգ։ XII դարի վերջերին Կիլիկիայում արդեն ստեղծվել էին քաղաքական, տնտեսական և տերիտորիալ բոլոր նախապայմանները, որոնք հնարավոր էին դարձնում այդ իշխանությանը տալ պետական ավելի հաստատուն և օրինական ձև՝ հռչակել թագավորություն։

Թագավորության հռչակումը

Կիլիկիան թագավորություն հռչակելու համար գերմանական կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի և Լևոն II-ի միջև դիվանագիտական բանակցություններ էին սկսվել դեռևս XII դարի 80-ական թվականների վերջերից։ Ֆրիդրիխ Շիկամորուսը չկարողացավ իր տված խոստումը կատարել, որովհետև խեղդվեց գետում, բայց հայերը այդ հարցը բարձրացրին նրա հաջորդի՝ Հենրիխ I-ի առջև։ Վերջինս հանձն առավ իրագործել հայերի պահանջը և իր քար-

տուղար Կոնրադի միջոցով թագավորական թագ ուղարկել Լևոն II-ին։ Բայց պատերազմական գործողությունների անհաջող ընթացքի հետևանքով Կոնրադը չկարողացավ հասնել Կիլիկիա և թագադրել Լևոն II-ին։

Այդ ժամանակ բյուզանդական Ալեքսեյ կայսրը շտապեց առաջինը պաշտոնապես ճանաչել Կիլիկիան որպես թագավորություն և 1196 թ. թագ ուղարկեց Լևոն II-ին։ Դրանից երկու տարի հետո Հենրիխ I-ի ուղարկած թագը ևս ստացվեց և այդ նույն՝ 1198 թվականին Լևոն II-ը Տարսոն քաղաքում հանդիսավոր կերպով թագադրվեց որպես Կիլիկիայի հայոց թագավոր։

Այդ ակտը իր ժամանակի պատմագիրների կողմից դիտվել է որպես հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած քաղաքական խոշոր իրադարձություն։ Կիլիկիայի հայ պատմագիր Սմբատ Գունդստաբլը այն բնութագրում է որպես հայկական խորտակված պետականության վերականգնում, ելի իրոք, Կիլիկիան թագավորություն հռչակելը նշանակում էր, որ Մերձավոր Արևելքում ստեղծվել էր հայկական մի ուժեղ պետություն, որ նորից վերականգնվել էր հայկական պետականությունը։

Հայերը Լևոն II-ի թագադրությանը տվեցին հանդիսավոր բնույթ։ Տարսոն էին հավաքվել բազմաթիվ իշխաններ, բարձրաստիճան հոգևորականներ, ոտարերկրյա դեսպաններ ու պատվիրակություններ, ինչպես և բնակչության տարբեր խավերին պատկանող հազարավոր մարդիկ։ Թագադրության հանդեսը տևել է մի քանի օր և վեր է ածվել համաժողովրդական ցնծության։

Լևոն II-ի ձեռնարկումները

Թագավոր օծվելուց հետո Լևոն II-ի առաջին ձեռնարկումը եղավ Կիլիկիայում դեռևս անկախ մնացած առանձին ֆեոդալական իշխանությունների հնազանդեցումն ու հայաբնակ այդ շրջանների միացումը թագավորությանը։ Այդպիսի շրջաններից մեկն էր Լամբրոնը։ Դեռևս Լևոն II-ի նախորդները մի քանի անգամ անհաջող փորձեր էին կատարել Լամբրոնի Հեթումյաններին իրենց ենթարկելու։ Լևոն II-ը վճռեց վերջ տալ նրանց պառակտիչ գործողություններին։ Նա 1202 թ. Լամբրոնի տեր Հեթում իշխանին խնամիական կապ հաստատելու պատրվակով հրավիրեց Տարսոն և բանտարկեց։ Դրանից հետո առանց մարտի գրավեց Լամբրոնը և այն վերածեց արքունական կալվածքի։

Թագավորության ձեռնարկած երկրորդ քայլը եղավ երկրի սահմանների պաշտպանության ամրացումը։ Լեռնանցքներում կառուցվեցին ամրություններ, որտեղ տեղադրվեցին մշտական սահ-

մանապահ զինվորական ջոկատներ։ Այդպիսի ջոկատներ հաստատվեցին նաև սահմանային այն հատվածներում, որտեղից ավելի շատ էր սպասվում թշնամու հնարավոր ներխուժում։ Այնուհետև ուշադրություն դարձվեց երկրի ռազմական ուժի կազմակերպման վրա։ Ստեղծվեց մշտական բանակ և հաստատվեց ռազմական ուսուցման որոշակի սիստեմ։

Իշխանության շրջանում պետական կանոնավոր ապարատ համարյա թե գոյություն չուներ։ Լևոն II-ի օրոք ստեղծվեցին և օրինականացվեցին պետական մի շարք օրգաններ։ Նախ, կազմակերպվեց և օրինական տեսք ստացավ արքունիքը։ Երկրորդ, արքունիքին կից հիմնադրվեց մեծ կամ վերին ատյան, որն անվանվել է նաև արքունական ատյան կամ դիվան։ Երրորդ, արքունիքում կազմակերպվեցին գործակալություններ, վարչություններ, որոնց պաշտոնատար անձինք նշանակվում էին թագավորի կողմից։ Չորրորդ, կարգավորվեց դատական սիստեմը և ստեղծվեց երեք կարգի դատարան՝ Վերին, Սսի արքեպիսկոպոսական և Ստորին կամ Փոքր ատյաններ։ Այս վերջին դատարանը միաժամանակ անվանվել է նաև Բուրջեսի։

Հատուկ ուշադրություն դարձվեց երկրի տնտեսական կյանքին։ Կարգի բերվեցին նավահանգիստները և ապահովվեցին ծովային ավազակների ասպատակություններից, ստեղծվեց առևտրական նավատորմ, կանոնավորվեցին ցամաքային ճանապարհները, շրջանառության մեջ դրվեցին արծաթյա և ոսկյա դրամներ, որոնք գործածության մեջ մտան ոչ միայն Կիլիկիայում, այլև Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում։ Արհեստագործության և առևտրի զարգացմանը նպաստելու համար առևտրական պայմանագրեր և համաձայնագրեր կնքվեցին Վենետիկի, Ջենովայի և այլ քաղաքների ու երկրների առևտրականների հետ։

Լևոն II-ը աշքաթող չարեց նաև երկրի մշակութային կյանքի բնագավառը։ Նա թե՛ հին և թե՛ իր օրոք կառուցված նոր վանքերին կից հրամայում է հիմնադրել դպրոցներ և դրանք ապահովում նյութապես։ Նա գիտության և արվեստի մարդկանց հրավիրում է իր արքունիքը և պայմաններ ստեղծում նրանց գործունեության համար։ Ալիշանի նշած մի հիշատակարանում ասված է, որ Լևոն II-ի օրոք «Կիլիկեցվոց աշխարհը լցվեց իմաստությամբ և բազմացան մատենագրությամբ զբաղվողները՝ կիսը գրականության, մյուսները զարդանկարչության գծով»։

Լևոն II-ի օրոք Կիլիկիայում ամրապնդվեց օրինականությունը և կարգավորվեցին մարդկանց սոցիալ-տնտեսական հարաբե-

ությունները։ Այդ ձեռնարկումների ընթացքում հայկական թագավորությունը շատ բան վերցրեց Ասորիքի և Պաղեստինի լատինական իշխանություններից, հատկապես Անտիոքի դքսության հաստատած կարգ ու կանոնից։ Կիլիկիայում կիրառվեցին Անտիոքի դքսության կողմից ընդունված օրենքները, որոնք ընդհանուր անունով կոչվում էին ասիզ, այսինքն՝ օրենսդրական հրովարտակ։

Նոր ընդհարումներ Անտիոքի դքսության հետ

Հայկական թագավորության ռազմական ու քաղաքական հզորացումը և Անտիոքի դքսությունը հայկական թագավորությանը միացնելու մասին Լևոն II-ի մտադրությունը ցանկալի չէին Կիլիկիայի հարևաններին, որոնց թվում և լատինական իշխանություններին։ Դա նոր բախումներ առաջ բերեց Կիլիկիայի և Անտիոքի դքսության միջև։ 1199 թվականին մեռավ Անտիոքի դուքս Ռայմոնդը, գահը թողնելով Ալիծից ծնված իր անչափահաս որդուն՝ Ռուբեն-Ռայմոնդին։ Բայց այդ բանին դեմ դուրս եկավ Ռուբեն-Ռայմոնդի հորեղբայրը՝ Տրիպոլսի դուքս Բոհեմունդ Միականին։ Նա հարձակվեց Անտիոքի վրա և գրավեց այն։ Միականու գործողությունները դրդեցին Լևոն II-ին պաշտպանելու Ռուբեն-Ռայմոնդի օրինական իրավունքները, որոնք նախատեսված էին և՛ ժառանգական սկզբունքով, և՛ 1194 թ. Անտիոքի դքսի ու Լևոն II-ի միջև կնքված պայմանագրով։

Կիլիկիայի թագավորության և Տրիպոլսի դքսության միջև Անտիոքի համար մղված պայքարը շարունակվեց մինչև 1216 թ. երբ մի վերջին անգամ Լևոն II-ը զորքով մտավ Անտիոք և, այնտեղից դուրս քշելով Միականուն, հանդիսավոր կերպով Ռուբեն-Ռայմոնդին նորից հռչակեց Անտիոքի դուքս։

Այդ ամենից հետո Ռուբեն-Ռայմոնդը ապերախտ գտնվեց իր խնամակալի և պաշտպանի հանդեպ, դաժանացավ և զրկվեց նրա պաշտպանությունից։ Նրանից երես դարձրին նաև Անտիոքի ազդեցիկ մարդիկ և օգնեցին նրա հակառակորդին՝ Միականուն, որը 1219 թ. հարձակվեց Ռուբեն-Ռայմոնդի վրա և վերջնականապես Անտիոքը խլեց նրա ձեռքից։ Դրանով Անտիոքի համար պայքարը փաստորեն վերջացավ Միականու հաղթանակով։

Լևոն II-ի թագավորության վերջին տասնամյակում տեղի ունեցան մի շարք այլ դեպքեր։ Իկոնիայի սուլթան Քեյքաուզը դեռևս 1214 թ. հարձակվել էր Կիլիկիայի վրա և գրավել՝ Լուլուա բերդը, սակայն հայկական բանակից հակահարված ստանալով ետ էր քաշվել։ Այդ դեպքերից հինգ տարի անց՝ 1219 թ. նա նորից

հարձակվեց Կիլիկիայի վրա և պաշարեց սահմանային կարևոր ամրություններից մեկը՝ Կապան բերդը, որի գրավումը լուրջ վտանգի տակ կդներ հայկական թագավորությունը։ Քեյքաուզ սուլթանին չհաջողվեց գրավել բերդը, սակայն բաց ճակատամարտում հայկական զորքերը պարտվեցին և հայկական բանակի հրամանատար Կոստանդին Գունդստաբլը և մի քանի այլ իշխաններ գերի ընկան, որոնց հետո ազատեցին մեծ փրկանք վճարելով, բայց հայկական բանակը դրանից հետո մտավ թշնամու երկիրը, Իկոնիայի սուլթանը խոհեմություն ցուցաբերեց, ետ քաշվեց և այլևս չխախտեց երկրի սահմանները։

Արտաքին թշնամիներին սանձահարելու հետ միասին Լևոն II-ը փորձեց կարգավորել նաև գահաժառանգության հարցը։ Նա արու զավակ չուներ. 1209 թ. նա որդեգրեց Ռուբեն-Ռայմոնդին ու հռչակեց թագաժառանգ։ Սակայն հետագայում հրաժարվեց դրանից։

Անտիոքի դեպքերից հետո, 1217 թ. նա գահաժառանգ հայտարարեց իր երկրորդ կնոջից ծնված դստերը՝ Զաբելին, նրան խնամակալներ նշանակեց սպարապետ Կոստանդինին և իշխան Առանին։ Այս դեպքերից քիչ անց, 1219 թ. մայիսի 2-ին, Լևոն II-ը մեռավ՝ իր հետնորդներին թողնելով բարգավաճած և վերելք ապրող մի հզոր պետություն։

2. ՀԵԹՈՒՄՅԱՆՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՆ ԵՎ ԴԱՇԻՆՔԸ ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ՀԵՏ

Գահակալության հարցը Լևոն II-ից հետո

Լևոն II-ի մահից հետո գահակալության հարցը բարդություններ առաջացրեց։ Խնամակալ Առան պայլի մահից հետո երկրի ամբողջ իշխանությունը կենտրոնացավ Կոստանդին Գունդստաբլի ձեռքում։ Հենց այդ ժամանակ էլ Կիլիկիայի թագավորության գահի համար նոր հավակնորդներ ասպարեզ ելան։ Դրանցից մեկը Լևոն II-ի ավագ դստեր՝ Ռիթայի ամուսինն էր՝ Երուսաղեմի թագավորը, որն ուզում էր իր որդուն դնել Կիլիկիայի թագավորության գահին։

Ոտքի էր կանգնել նաև Ռուբեն-Ռայմոնդը, որն արտաքսվել էր Անտիոքից։ Սակայն այս հավակնորդներից և ոչ մեկը հաջողություն չունեցավ։ 1220 թվականին Ռիթան և նրա որդին մեռան, իսկ Ռուբեն-Ռայմոնդը, որը Կոռիկոսի իշխան Վահրամ Մարաջախտի և այլոց օգնությամբ Կիլիկիա էր մտել և փորձում էր տի-

բանալ գահին, Կոստանդին Գունդստաբլի զորքերից պարտություն կրեց և գերվելով բանտ նետվեց։

Վերոհիշյալ դեպքերը ստիպեցին արքունիքին արագացնել Զաբելի ամուսնությունը, այլ կերպ ասած, լուծել գահակալության հարցը։ Ստեղծված պայմաններում նպատակահարմար համարվեց Կիլիկիայի գահը հանձնել Անտիոքի դուքս Բոհեմունդ Միականու որդուն՝ Ֆիլիպին։ Այդպիսի որոշումն արդարացվում էր նրանով, որ Անտիոքի և Կիլիկիայի միջև եղած հակամարտությունը կվերանար և հնարավոր կդառնար այդ երկու իշխանությունները միավորել մեկ պետության մեջ։ Դրա համար էլ 1221 թ. Ֆիլիպին ամուսնացրին Զաբելի հետ և նրան օծեցին Կիլիկիայի թագավոր այն պայմանով, որ նա, ինչպես վկայում է Սմբատ Գունդստաբլը, «հայենակ կենայր, և զեկեղեցին և զսեղան հայենակ տաներ»։

Սակայն Ֆիլիպը սկսեց պետական բարձր պաշտոններից հեռացնել հայերին, մեծ տեղ տալ լատինական տարրերին և արհամարհել հայկական սովորությունները։ Այդ պատճառով էլ նա 1223 թ. հայ իշխանների կողմից ձերբակալվեց և բանտ նետվեց, որտեղից այլևս դուրս չեկավ։

Հեթումյան դինաստիայի հաստատումը

Թագավորական գահը դարձյալ թափուր մնաց։ Երկիրը նորից սկսեց կառավարել Գունդստաբլը։ Նա այս անգամ ստանձնեց ոչ միայն Զաբելի, այլև ամբողջ թագավորության խնամակալությունը, այսինքն՝ նշանակվեց երկրի պայլ։ Նա երեք տարի այդպես կառավարեց երկիրը և միայն 1226 թ. նորից դրեց գահի համար թեկնածու ընտրելու հարցը։ Այս անգամ պալատականների համաձայնությամբ որոշվեց Զաբելին ամուսնացնել Կոստանդին Գունդստաբլի որդու՝ Հեթումի հետ և նրան ճանաչել որպես Կիլիկիայի թագավոր։ 1226 թվականին Տարսոն քաղաքում մեծ հանդիսավորությամբ Հեթումին հայոց թագավոր օծեցին (1226—1270)։ Այդպիսով, հանձինս Հեթում I-ի, հիմք դրվեց Հեթումյան դինաստիային, որը տևեց մինչև 1342 թ.։

Նորահաստատ դինաստիան իր դիրքերը երկրում ամրացնելու համար պետական բարձր պաշտոններն ու գործակալությունները կենտրոնացրեց իր ձեռքում։ Հեթումի հայրը՝ Կոստանդին Գունդստաբլը նշանակվեց թագավորահայր և ավագ պարոն։ Սպարապետությունը տրվեց Հեթում I-ի ավագ եղբորը՝ Սմբատին։ Թագավորի երկրորդ եղբայրը՝ Լևոնը նշանակվեց մարաջախտ՝ բանակի հրամանատար սպառազինման և մատակարարման գծով և իշխանաց-իշխան կամ պարոնաց-պարոն։ Ամենակրտսեր եղ-

բայրը՝ Օշինը նշանակվեց պալատական թագավորի եղբայրներից մեկն էլ՝ Բարսեղը նշանակվեց Դրազարկի վանքի վանահայր և Սսի արքեպիսկոպոս, որը եկեղեցական գործերում ազդեցիկ պաշտոն էր։

Նոր դինաստիան արքունիքի հետ կապից նաև ազդեցիկ ֆեոդալ-իշխաններին, մանավանդ այնպիսիներին, որոնք հաճախ էին փորձել հակադրվել արքունիքին, օրինակ՝ Լամբրոնի նախկին տերերին։ Կոստանդին թագավորահայրը նրանց և արքունիքի միջև եղած հակամարտությունը վերացնելու համար Հեթումի որդի Կոստանդին Լամբրոնացուն տվեց թագադրության պաշտոն և նրան վերադարձրեց Լամբրոն ամրոցը։ Այդպիսի քաղաքականություն վարեց նաև Կոռիկոսի նախկին տիրոջ՝ Վահրամ Մարաջախտի որդիների նկատմամբ, որոնց վերադարձվեց այդ ամրոցը։

Բանակցություններ մոնղոլների հետ

Հեթում I-ի թագավորության տարիներին Հեռավոր արևելքից մոնղոլ-թաթարական ցեղերը խոշոր զանգվածներով ներխուժեցին Մերձավոր Արևելք և, ոտնատակ տալով բազմաթիվ երկրներ, մտան նաև Փոքր Ասիա, լուրջ սպառնալիք ստեղծելով Կիլիկիայի թագավորության համար։

Կիլիկիայի թագավորության նկատմամբ շրջապատող պետությունների ունեցած թշնամական վերաբերմունքը ստիպեց Հեթումյաններին չհակադրվել մոնղոլներին, այլ դաշինք կնքել նրանց հետ։ Այդ պատճառով էլ, երբ 1243 թ. մոնղոլ-թաթարները Բաչու զորավարի գլխավորությամբ մտան Փոքր Ասիա և գրավեցին Կեսարիա քաղաքը, Կիլիկիայի թագավորությունը Կոստանդին թագավորահոր գլխավորությամբ մի պատվիրակություն ուղարկեց մոնղոլ զորավարի մոտ, առաջարկելով բարեկամություն հաստատել և դաշինք կնքել երկու պետությունների միջև։ Բաչուն ընդունեց հայերի առաջարկը այն պայմանով, որ Կիլիկիայի թագավորը անձամբ գնա մոնղոլական մեծ ղանի մոտ։ Հայերն ընդունեցին Բաչուի պայմանը։ Այդ ժամանակից սկսած Կիլիկիայի հայկական թագավորության ու մոնղոլ-թաթարների միջև բարեկամություն հաստատվեց։ Այդ բարեկամության առաջին արդյունքը եղավ այն, որ մոնղոլական զորքերն ու ցեղերը չմտան Կիլիկիա և երկիրը զերծ մնաց նրանց ահավոր ավերածություններից։ Հեթումի այցը Մոնղոլիա նախապատրաստելու նպատակով 1248 թ. Սմբատ Գունդստաբլը մեկնեց Մոնղոլիա և պայմանավորվեց Հայոց թագավորի այցելության և դաշինքի հաստատման մասին։

Հեթում I-ի այցը Մոնղոլիա և դաշինքի հաստատումը

Հեթում I-ի այցը Մոնղոլիա ձգձգվում էր մասամբ այն պատճառով, որ հարևանները մի քանի անգամ հարձակումներ գործեցին երկրի վրա։ Հարկավոր էր ետ մղել թշնամիներին և ապահովել երկրի պաշտպանությունը։ Այնուհետև, թագուհու մահը 1252 թ. և, թերևս, Հեթումի՝ Մոնղոլիա գնալու ցանկություն չունենալը նույնպես ձգձգում էին այցելությունը։

Սակայն այդ այցելությամբ շահագրգռված էր մոնղոլական պետությունը։ 1253 թ. հայոց թագավորը հրավեր ստացավ այցելելու մոնղոլական պետության մայրաքաղաք Կարակորում, և Հեթում I-ը 1254 թ. գարնանը մեկնեց մոնղոլական մեծ ղանի մոտ։

Հեթում I-ը անցավ Հայաստանով, տեսակցեց մի շարք նշանավոր իշխանների հետ, ապա շարունակեց ճանապարհը դեպի Ոսկե Հորդա, իսկ այնտեղից, էլ՝ Կարակորում։ Այնտեղ նա ընդունվեց Մանգու ղանի կողմից. դաշինքը երկու երկրների միջև հաստատվեց։ Մեզ հասած տեղեկություններից երևում է, որ Հեթում I-ի և Մանգու ղանի միջև կնքված դաշինքը ունեցել է հետևյալ բովանդակությունը. առաջին՝ երկու կողմերն էլ պայմանավորվում են օգնել միմյանց պատերազմի ժամանակ։ Կիլիկիայի հայերը օգնելու էին մոնղոլներին Միջագետքը, Ասորիքն ու Պաղեստինը գրավելու գործում, իսկ մոնղոլներն էլ պաշտպանելու էին Կիլիկիայի թագավորությունը Իկոնիայի, Եգիպտոսի և այլ պետությունների հարձակումներից։ Երկրորդ՝ առանց Կիլիկիայի թագավորության համաձայնության և պահանջի, մոնղոլական զորքերն ու պաշտոնյաները հայկական թագավորության սահմանները չպետք է մտնեին։ Երրորդ՝ այն հողերը, որոնք նախկինում պատկանել էին հայկական իշխանությանը, բայց զավթվել էին ուրիշների կողմից, իսկ հետո էլ անցել մոնղոլներին, պետք է վերադարձվեին հայկական թագավորությանը։ Չորրորդ՝ մոնղոլական պետությունը հանձն էր առնում կարգավորել բուն Հայաստանի բնակչությունից դանձվող հարկերը և թեթևացնել հայկական եկեղեցուց վերցվող տուրքերը։

Կնքված դաշինքը շահավետ էր Կիլիկիայի թագավորության համար։ Այն ապահովում էր այդ թագավորության ինքնուրույն գոյությունը, զերծ էր պահում Կիլիկիան մոնղոլական զորքերի ներխուժումից և Կիլիկիայի առևտրականների համար հնարավորություն էր ստեղծվում մուտք գործելու մոնղոլական լայնածավալ պետության խորքերը։

Մոնղոլական պետության և Կիլիկիայի հայկական թագավո-

բության հարաբերությունների մասին պատմագետներից ոմանք այն կարծիքն են հայտնել, թե Կիլիկիայի թագավորությունը հանդիսացել է մոնղոլական մեծ ղաների բացարձակ վասալը։ Մինչդեռ եղած աղբյուրները հաստատում են, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը չի մտել մոնղոլական պետության կազմի մեջ և եղել է միանգամայն ինքնուրույն իշխանություն։

Հայ-մոնղոլական համագործակցությունը

Հեթում I-ը հայրենիք վերադառնալիս հանդիպեց Հուլաուին, որը նշանակվել էր Մերձավոր Արևելքում գտնվող մոնղոլական զորքերի հրամանատար և այդ երկրների կառավարիչ։ Նրան հանձնեց Մանգու ղանի ուղարկած գրությունները և ապա անցավ Հայաստան։ Նա Հայաստանում տեսակցություն ունեցավ Բաչուի հետ, մասնակցեց դեպի Փոքր Ասիայի արևելյան գավառները նրա կազմակերպած արշավանքին։ 1256 թվականին մեծ հանդիսավորությամբ նա ժամանեց Սիս և իր ձեռքը վերցրեց երկրի կառավարման գործը։

1258 թվականին սկսվեցին մոնղոլական զորքերի նոր հարձակումները Միջագետքի, Ասորիքի ու Պաղեստինի վրա։ Այդ թվականին էլ Հուլաուի բանակը գրավեց Բաղդադը և վերջ տվեց Արաբական խալիֆայությանը։ Հաջորդ տարին Հուլաուի մոտ գնացին Հեթում I-ը և հայոց կաթողիկոսը՝ խալիֆաթի դեմ տարած հաղթանակը շնորհավորելու և նրա գալուստը ողջունելու։ Այդ ժամանակից սկսած Կիլիկիայի հայկական բանակը մոնղոլական զորքերի հետ մասնակցեց հիշյալ երկրների նվաճմանը։ Վարդան Արևելցու վկայությամբ, Հուլաուի զորքերի հետ էր «ի յառնուլն զամենայն աշխարհն Շամա (այսինքն՝ Ասորիք) և մեր պսակաւորն Հեթում»։

Փոքր Ասիայում և Ասորիքում մոնղոլական զորքերի մղած կռիվների ընթացքում հայկական թագավորությանը հաջողվեց իրեն միացնել Հալեպի, Այնթապի, Մարաշի և Կապադովկիայի հարավային շրջանները։

Կիլիկիայի հայկական թագավորության հզորացումը անհանգստություն էր առաջ բերում եգիպտական սուլթանությունում։ Այդ պատճառով եգիպտական սուլթան Բիբարսը (Ինգիստար), օգտվելով Հուլաուի մահվանից (1265) հետո մոնղոլների միջև առաջացած երկպառակությունից ու ընդհարումներից, որոնց հետևանքով նրանք այլևս հայերին չէին կարող օգնել, նախապատրաստվեց արշավել դեպի Ասորիք և Կիլիկիա։ Նա պատերազմական գործողություններն սկսելուց առաջ Կիլիկիայի հայկական թագավորությանն առաջարկեց իրեն վերադարձնել Ասորիքի և Կիլիկիա-

ցի սահմանագլխին դտնվող մի քանի բերդեր և վերացնել Կիլիկիայից Եգիպտոս հաց արտահանելու արգելքը։ Հայկական արքունիքը մերժեց այդ պահանջը։ Եգիպտական զորքերը 1266 թ. նախ հարձակվեցին Անտիոքի վրա, գրավեցին այն, ապա արշավեցին Կիլիկիա։ Հեթում I-ը հայկական բանակի հրամանատարությունը հանձնարարեց իր երկու որդիներին՝ Լևոնին և Թորոսին, իսկ ինքը մեկնեց մոնղոլ-թաթարներից օգնություն խնդրելու։

Եգիպտական բանակը շտապեց մարտի բռնվել հայերի հետ ավելի շուտ, քան նրանք կարող էին մոնղոլներից օգնություն ստանալ։ Հակատամարտը տեղի ունեցավ Սև լեռների մոտ՝ Մառի կոչված վայրում, նույն թվականի աշնանը։ Հայկական բանակը թեև անձնուրաց կերպով կռվեց եգիպտական սուլթանության զորքերի դեմ, բայց, ի վերջո, պարտվեց. հրամանատարներից Թորոսը զոհվեց, իսկ Լևոնը գերի ընկավ։ Մոնղոլական զանը պատերազմի մեջ դտնվելու պատճառով չկարողացավ հայերին օգնել և Հեթումը ձեռնունայն ետ վերադարձավ։

Դրանից հետո հակառակորդի բանակը թափանցեց երկրի խորքը, ասպատակեց քաղաքներն ու գյուղերը, գրավեց Սիսը, հրկիզեց այն և կողոպտեց արքունի գանձարանը։ Սակայն հայերին հաջողվեց մինչև 1268 թ. թշնամուց մաքրել երկիրը և բանակցություններ սկսել եգիպտական սուլթանության հետ հաշտություն կնքելու համար։ Եգիպտական մամլուկյան սուլթանությունը հաշտություն կնքելու և գերված արքայազն Լևոնին ազատ արձակելու համար պահանջում էր, որ իրեն տրվեն սահմանամերձ մի քանի բերդեր և ազատ արձակվի ու Եգիպտոս վերադարձվի մոնղոլների կողմից գերված եգիպտական զորավար Սոնգուրը։ Հեթում I-ը համաձայնվեց և 1268 թ. հաշտություն կնքվեց։ Գերված թագաժառանգ Լևոնը ազատվեց և վերադարձավ հայրենիք։

Կիլիկիայի թագավորության նոր քաղաքականությունը

Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում XIII դ. վերջին քառորդում զգալի փոփոխություններ կատարվեցին։ Մոնղոլների ահ ու սարսափ տարածող ուժը աստիճանաբար թուլանում էր. մոնղոլներն արդեն պաշտպանողական դիրք էին բռնել իրենց հակառակորդների հանդեպ։ Ասպարեզից վերանում էին խաչակիրների կողմից ստեղծված լատինական իշխանությունները, իսկ Իկոնիայի սուլթանությունը մոնղոլներից ստացած հարվածներից այլևս ուշքի չեկավ ու գնալով թուլացավ։ Դրան հակառակ, եգիպտական մամլուկյան սուլթանությունը

տարեցտարի ավելի էր հզորանում և Մերձավոր Արևելքի ազդեցիկ ուժերից մեկը դառնում։

Ստեղծված նոր պայմաններում Կիլիկիայի թագավորության առջև լուրջ խնդիրներ ծառացան ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության ընդավառում։ Կիլիկիայի համար ավելի վտանգավոր հակառակորդ դարձավ եգիպտական սուլթանությունը, որի դեմ պայքարելու դեպքում նա դաշնակցի կարիք պետք է զգար։ Մոնղոլական էլչությունը թեև շարունակում էր մնալ Կիլիկիայի դաշնակիցը, բայց այնքան էլ հուսալի չէր։

Հեթում I-ի հաջորդը և որդին՝ Լևոն III-ը (1270—1289) շարունակեց պահպանել բարեկամությունը մոնղոլների հետ, բայց միաժամանակ նոր դաշնակիցներ ձեռք բերելու հույսով իր հայացքն ուղղեց դեպի Արևմուտք։ Նա 1274 թ. պատգամավորություն ուղարկեց Լուգդունի ժողով, նպատակ ունենալով խաչակրաց նոր արշավանք կազմակերպել դեպի Արևելք։ Նման դիմումներ կրկնվեցին նաև 1278, 1279 և 1282 թթ.։

Մամլուքյան սուլթանությունը այդ բանը դիտեց որպես 1268 թ. հաշտության խախտում։ 1275 թվականին եգիպտական զորքերը մտան Կիլիկիա և, հանկարծակիի բերելով հայկական բանակին, ասպատակեցին երկիրը, ավարի ենթարկեցին Մսիսը, հասան մինչև Կոռիկոս, պաշարեցին Սիսը։ Հայերը միայն հաջորդ տարին Սմբատ Գունդստաբլի հրամանատարությամբ պարտության մատնեցին մամլուքներին և դուրս քշեցին երկրի սահմաններից։ Եգիպտացիները 1277—1281 թթ. ընթացքում մի քանի անգամ հարձակումներ գործեցին Կիլիկիայի սահմանամերձ շրջանների վրա, սակայն հայերը, մոնղոլներից օգնություն ստանալով, կասեցնում էին մամլուքների առաջխաղացումը և ստիպում հեռանալ Կիլիկիայից։ Դրանից հետո, 1282 թ. կնքվեց հաշտություն, փոխանակվեց գերիների փոխանակություն, առևտրական քարավաններին ազատ երթևեկելու իրավունք տրվեց և այլն։ Այդ հաշտությունը երբեմն-երբեմն խախտվելով՝ իր ուժը պահպանեց մինչև 1321 թ.։

Լևոն III-ի ներքին քաղաքականությունը

Լևոն III-ի թագադրության կապակցությամբ, 1271 թ., ներում շնորհվեց բանտարկյալներին և «բազումք ի կապանաց բանտից ազատեցան»։ Սակայն բանտարկյալների ազատման դեմ դուրս եկան խոշոր ֆեոդալները և ապստամբեցին Լևոն III-ի դեմ։ Նրանց ընդվզումը ճնշվեց, Մավլևան բերդի տեր Լևոնը և Աբլղարիբ իշխանը պատժվեցին։

Վերոհիշյալ դեպքերը վկայում են, որ կենտրոնախույս ուժե-

ը ձգտում էին կասեցնել կենտրոնական իշխանության հզորացումը։ Ազնվականության միջին և ցածր խավերը, ինչպես և բնակչության մյուս տարրերը օժանդակեցին Լևոն III-ին կենտրոնախույս ձգտումներ հանդես բերող ֆեոդալների դեմ մղած պայքարում։ Դա պայմաններ ստեղծեց թագավորի իրավունքների ու իշխանության ընդարձակման համար, որը տանում էր դեպի միանձնյա իշխանություն, դեպի աբսոլյուտիզմ։

Լևոն III-ի ժամանակաշրջանում ուշադրություն դարձվեց նաև երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքի վրա։ Միջոցներ ձեռք առնվեցին վերաշինելու պատերազմների ժամանակ վնասված Սիսը, Տարսոնը, վերականգնելու ավերված վանքերը և երկրի պաշտպանության համար կառուցելու ամրություններ։ 1271 թվականին վերանորոգվեցին վենետիկցիների, իսկ 1288 թ. ջենովացիների հետ նախկինում կնքված առևտրական պայմանագրերը, նոր պայմանագիր կնքվեց արաղոնացի առևտրականների հետ։ Առևտրականներին լայն հնարավորություններ էին տրվում Կիլիկիայում առևտուր անելու համար, որը զգալիորեն նպաստում էր երկրի տնտեսական կյանքի զարգացմանը։

3. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XIV ԴԱՐՈՒՄ ԵՎ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում XIV դարի սկզբին

XIII դարի վերջերին և XIV դ. սկզբներին Մերձավոր Արևելքում տեղի ունեցան նոր իրադարձություններ, որոնք աննպաստ վիճակ ստեղծեցին Կիլիկիայի հայկական թագավորության համար։ Եգիպտական սուլթանությունը նվաճեց լատինական իշխանությունները և սահմանակից դարձավ Կիլիկիայի հայկական թագավորությանը։ Մոնղոլական էլղանության ներսում արագացել էր տնտեսական կյանքի անկումը, որի հետևանքով երերուն էր դարձել նաև նրա ռազմական ու քաղաքական վիճակը։ Ղազան ղանի ժամանակ (1295—1304) մոնղոլներն ընդունեցին մահմեդականություն և փոխեցին իրենց նախկին թշնամական վերաբերմունքը մուսուլմանական իշխանությունների նկատմամբ։

Այդ ժամանակաշրջանում Կիլիկիայի թագավորության գլուխ էր կանգնած Լևոն III-ի որդին Հեթում II-ը (1289—1301), ապաշնորհ մի թագակիր, որ իր թագավորության 11 և խնամակալության 5 տարիների ընթացքում հինգ անգամ հրաժարվեց երկրի

կառավարումից և երեք անգամ վանք մտավ որպես հոգևորական։ Նա ամբողջությամբ հարեց կաթոլիկությանը և փորձեց երկրի թագավորության արտաքին և ներքին քաղաքականությունը ենթարկել Արևմուտքի շահերին։ Դա առաջ բերեց երկրում ներքին խլրտումներ և գահակալական կռիվներ, որից օգտվեցին արտաքին թշնամիները և հարձակումներ գործեցին Կիլիկիայի ու նրա սահմանամերձ հայաբնակ շրջանների վրա։

Դեռևս 1292 թ. եգիպտական զորքերը հարձակվել էին Հռոմկլայի վրա, գրավել կաթողիկոսարանը և գերի տարել Ստեփանոս կաթողիկոսին։ Դրանից հետո նոր կաթողիկոսը ստիպված եղավ փոխադրվել Սիս քաղաք։ Եգիպտական զորքերը մի քանի անգամ ևս ասպատակեցին Կիլիկիայի զանազան շրջանները, բայց վերջին անգամ մոնղոլների օգնությամբ հայերին հաջողվեց ետ մղել նրանց հարձակումները և առժամանակ պաշտպանել երկիրը նրանց ներխուժումներից։

Սսի և Ադանայի ժողովները

Կիլիկիայի հայկական արքունիքը ձգտում էր հայ-մոնղոլական թուլացած և իր նշանակությունը կորցրած դաշինքի փոխարեն ձեռք բերել եվրոպական պետությունների օգնությունը։

Հեթում II-ը 1301 թ. պաշտոնապես հրաժարվեց գահից և այն հանձնեց իր եղբորորդի Լևոն IV-ին (1301—1307), բայց այդ անչափահաս թագավորի խնամակալության և խորհրդատուի պարտականություններն ու իրավունքները իր վրա վերցրեց, այլ կերպ ասած, շարունակեց կառավարել երկիրը։ Այդ ժամանակ եգիպտական մամլուքների կողմից Կիլիկիայի համար ստեղծված վտանգն ավելի մեծացավ։ Նրանք մի քանի անգամ հարձակվեցին թագավորության վրա և մեծ տապնապ առաջ բերին երկրում։ Մոնղոլների օգնությունն այլևս հուսալի չէր։ Հեթում II-ը և հայոց կաթողիկոս Գրիգոր Անավարզեցին, որոնք իրենց լատինամոլությունը վաղուց էին դրսևորել, սկսեցին օգնություն խնդրել Հռոմի պապից և եվրոպական իշխանություններից։ Իսկ պապը պահանջում էր, որ հայկական եկեղեցին ընդունի կաթոլիկ եկեղեցու ծիսակատարությունները ու սկզբունքները, այսինքն՝ ենթարկվի իրենց։ Այդ կապակցությամբ 1307 թ. Սսում հրավիրվեց ժողով և քննարկվեց կաթոլիկ եկեղեցուն միանալու հարցը։ Հեթումի և Լևոնի ճնշման ներքո ժողովականները ստիպված եղան համաձայնվել դրան։ Սակայն այդ որոշումը չկատարվեց, որովհետև հայ բնակչությունը և հոգևորականների զգալի մասը դեմ էին դրան։ Այդ պատճառով երկրում առաջացան իրար դեմ պայքարող

խմբավորումներ, որով խախտվեց երկրի քաղաքական միասնությունը։

Կիլիկիայի հարևան սելջուկյան և արաբական իշխանություններն այդ որոշումը դիտեցին որպես խաչակիրներին նորից արևելք բերելու փորձ, և հայկական թագավորության հանդեպ նրանց թշնամական վերաբերմունքն ուժեղացավ։ Նրանց դրդմամբ Կիլիկիայում որպես օդնական ուժ գտնվող մոնղոլական ջոկատի հրամանատար Փիլարդունը, որն արդեն մահմեդականություն էր ընդունել։ Սսի ժողովից ութ ամիս հետո, 1307 թ. նոյեմբերին, հյուրասիրության պատրվակով իր մոտ է հրավիրում Հեթումին և Լևոն IV-ին, կազմակերպում նրանց սպանությունը։ Դրանով արդեն վերջ էր տրվում հայ-մոնղոլական դաշինքին։

Փիլարդունը և նրա համախոհները ամրացան Անարզաբա քաղաքում՝ մտադրվելով տիրանալ Կիլիկիայի մի մասին։ Սակայն թագավորի հորեղբայր Օշինը, հայկական զորքերի գլուխ անցած, հարձակվեց նրանց վրա և դուրս քշեց Կիլիկիայից։ Դրանից հետո Օշինը հռչակվեց թագավոր (1309—1320) և իր ձեռքը վերցրեց երկրի կառավարման գործը։

Արքունիքը և Կոստանդին Կեսարացի կաթողիկոսը ժողովրդի կամքին հակառակ, փորձեցին գործադրության մեջ դնել Սսի ժողովի որոշումը։ 1309 թվականին Ադանայում տեղի ունեցավ մի նոր ժողով, որի նպատակն էր ստիպել ժողովրդին համաձայնվելու հայկական եկեղեցու միացմանը կաթոլիկականին։ Այդ ժողովի դեմ նույն թվականին Սիս քաղաքում տեղի են ունենում ցույցեր և բողոքներ, որոնց մասնակցում են հոգևորականներ, բազմաթիվ հասարակ մարդիկ և բնակչության այլ խավեր, այդ թվում նաև կանայք։ Ցուցարարներից շատերը, որոնց թվում և կանայք, մահապատժի ենթարկվեցին։

1316 թվականին Ադանայում նորից ժողով գումարվեց, որը թագավորի և կաթողիկոսի հարկադրանքով վերահաստատեց Սսի 1307 թ. ժողովի որոշումը։ Եգիպտական սուլթանությունը հայկական թագավորության նման քաղաքականությունը գնահատեց որպես թշնամանք իր նկատմամբ և նորանոր արշավանքներ կազմակերպեց դեպի Կիլիկիա։

Եգիպտական նոր արշավանքը և 1323 թվականի հաշտությունը

1320 թ. Օշինին հաջորդեց նրա անչափահաս որդի Լևոն V-ը (1320—1342), որն սկսեց երկիրը կառավարել խնամակալների և պայլերի օգնությամբ։ Նրանցից առանձնապես նշանավոր էր Կոռիկոսի տեր Օշինը։ Լևոն V-ի թագավորության հենց առաջին տարիներին Եգիպտական սուլթանության իրախուսանքով Կիլիկիայի վրա հարձակվեցին թաթար Թիմուրդաշը և թուրք Ամիր-Օմարը։ Նրանք 1321 թ. հյուսիսից և արևելքից մտան Կիլիկիա և, ասպատակելով մի շարք գավառներ, հասան մինչև Մամեստիա և Ադանա։ Այդ նույն թվականին Կիլիկիա ներխուժեց նաև եգիպտական մեծաքանակ մի բանակ՝ սուլթան Մելիք-Նասիրի գլխավորությամբ, և գրավեց Այաս քաղաքը։

Հայկական բանակը անպատրաստ գտնվեց այդ հարձակումների հանդեպ։ Մանկահասակ թագավորը, Օշին պայլը և սրա եղբայրը՝ Կոստանդին Դունդստաբլը իրենց զորքերով քաշվեցին լեռները և ամրացան բերդերում։ Երկիրը մնաց անպաշտպան։ Միայն տեղ-տեղ կազմակերպվեցին աշխարհազորային և պարտիզանական ջոկատներ, որոնք լեռնանցքներում և կիրճերում փակում էին թշնամու զորքերի ճանապարհը ու հարվածում նրանց։ Այդ ջոկատներից հայտնի է Այասի մոտակայքում 600 մարդուց կազմված խումբը, որը մեծ կորուստ պատճառեց եգիպտական զորքերին։ Ակտիվ կերպով գործել է նաև մի այլ՝ 200 հոգուց բաղկացած ջոկատ, որի գործողությունների հետևանքով ոչնչացվել է շուրջ 6000 մամլուկյան զինվոր։

1323 թ. Եգիպտոսի մայրաքաղաքում հայկական թագավորության և սուլթանության միջև կնքվեց հաշտություն՝ հետևյալ պայմաններով.

ա) Եգիպտական զորքերը ետ են քաշվում Կիլիկիայից։

բ) Հայկական թագավորությունը պարտավորվում է տարեկան 50000 ֆլորին տուրք և Այաս նավահանգստի ծովային եկամտի 50 տոկոսը վճարել եգիպտական սուլթանությանը։

գ) Սուլթանությունը պարտավորվում է իր ծախսով վերաշինել ավերված ամրություններն ու բերդերը, բացառությամբ Այասի ամրությունների։

Բացի այդ, Կահիրեում հայկական պատվիրակությանը հասկացրին, որ արևմտյան պետությունների հետ Կիլիկիայի թագավորության քաղաքական կապերը ցանկալի չեն, հայերը պետք է խուսափեն այդպիսի կապերից։

Լևոն V-ի լատինամոլ քաղաքականությունը

Կիլիկիայի արքունիքը անհրաժեշտ հետևություններ չարեց Կահիրեի 1323 թ. հաշտության պայմաններից։ Հազիվ էր անցել մի քանի տարի, երբ Լևոն V-ը, անտեսանելով մամլուկյան սուլթանության պահանջը, նորից բանակցություններ մեջ մտավ Վատիկանի և մյուս իշխանությունների հետ՝ խաչակրաց արշավանքները վերսկսելու և ռազմական օժանդակություն ստանալու հույսով։

1329 թվականին ձերբակալվում և գլխատվում են Կոռիկոսի տեր Օշին պայլը և նրա եղբայր Կոստանդին Գունդստաբլը։ Նրանց փոխարեն Կիպրոսից Կիլիկիա հրավիրվեցին Լևոն V-ի հորաքրոջորդիներ Ջիվան և Բոհեմունդ Լուսինյան եղբայրները, որոնց Օշինը դուրս էր քշել Կիլիկիայից։ Ջիվանը նշանակվեց պայլ, իսկ Բոհեմունդին տրվեց Կոռիկոսի շրջանն ու բերդը։ Բարձր պաշտոնստացան նաև Բալդին ու Բոհեմունդ լատին իշխանները։

Արքունիքում լատինական տարրերի ազդեցության ուժեղացումը հեշտացրեց Լևոն V-ի արևմտյան քաղաքականության իրագործումը։ Նա 1331 թ. առանձին դրությամբ դիմում է Ֆրանսիական Ֆիլիպ թագավորին և Հռոմի պապին, իսկ երկու տարի հետո հատուկ դեսպանություն է ուղարկում Եվրոպա՝ նոր խաչակրաց արշավանք սկսելու և Կիլիկիայի հայկական թագավորությանը ռազմական օգնություն ցույց տալու խնդրանքով։ Հռոմի պապն ու եվրոպական պետությունները հայկական արքունիքին դատարկ խոստումներ տալուց այն կողմը չանցան։ Եվ եթե պապը 30000 ոսկի խոստացավ Լևոն V-ին, ապա այն պայմանով, որ այդ գումարը հայոց թագավորը կստանա այն դեպքում, երբ հայերը ընդունեն կաթոլիկություն։

Արքունիքի արևմտյան քաղաքականության դրդապատճառներից մեկն էլ այն էր, որ նա մեծ չափով շահագրգռված էր արտաքին և ներքին առևտրի զարգացմամբ ու ծավալմամբ, որովհետև դա պետությանը խոշոր եկամուտ էր բերում։ Իսկ այդ առևտուրը մեծ մասամբ կատարվում էր Արևմուտքի հետ։ Բացի այդ, Կիլիկիայի առևտրականներից շատերը եվրոպացիներ, հատկապես իտալացիներ էին, որոնք շահագրգռված էին հայկական թագավորության և եվրոպական պետությունների դաշինքի ու պապականության ազդեցության ուժեղացման գործում։

Նոր հարձակումներ։ 1337 թ. հաշտությունը

Լևոն V-ի վարած քաղաքականությունը ավելի ուժեղացրեց ներքին պառակտումը, որեց արևմտյան քաղաքականության կողմնակիցների՝ ունիթորների և հակաունիթորների պայքարը, բորբոքեց եգիպտական սուլթանության թշնամանքը Կիլիկիայի թագավորության նկատմամբ։ Այս անգամ նույնպես եգիպտական սուլթանությունը Լևոն V-ի բանակցությունները Արևմուտքի հետ համարեց իր նկատմամբ ոչ բարյացակամ ակտ և 1335 թ. նորից արշավեց Կիլիկիայի վրա։ Պատերազմը շարունակվեց նաև 1336 և 1337 թթ.։ Հայկական բանակն այս անգամ էլ ստիպված եղավ քաշվել երկրի լեռնային մասերը։ Մելիք-Նասիրի զորքերը գրավեցին Մամեստիա, Ադանա, Այաս և Տարսոն քաղաքները, հրկիզեցին շատ բնակավայրեր, կողոպտեցին երկրի հարստությունը և գերեցին բազմահազար մարդկանց։ Հայոց թագավորը ստիպված եղավ հաշտություն կնքելու նպատակով նորից պատվիրակություն ուղարկել Մելիք-Նասիրի մոտ։ Բայց այս անգամ գործը այնպես հարթ չանցավ, ինչպես 1323 թ.։ Եգիպտական սուլթանը բանտարկեց պատվիրակության անդամներին և ապա, ծանր պայմաններ առաջարկելով, համաձայնվեց հաշտություն կնքել։ 1337 թ. կնքված հաշտությամբ Կիլիկիայի հարավ-արևելյան գավառները՝ Սև լեռներից սկսած մինչև Ջհան գետը, և Այաս քաղաքն ու նավահանգիստը անցան Եգիպտոսի սուլթանությանը։ Լևոն V-ը խոստացավ բանակցություններ չվարել եվրոպական պետությունների ու Հռոմի պապի հետ։ Այս հաշտությունը խիստ թանկ նստեց հայկական թագավորության վրա։

Կիլիկիայի հայկական թագավորությունը պարտություն կրեց, որովհետև հայկական արքունիքը հույսը դրեց եվրոպական պետությունների օգնության վրա, որը ոչինչ չտվեց հայերին, բացի հարևան իշխանությունների թշնամանքից։ Արքունիքի վարած այդպիսի քաղաքականությունը երկրի ներսում առաջ բերեց երկպառակություն և անզոր դարձրեց արտաքին նվաճողներին դիմադրելը։ Լատինամոլությունը խանգարեց թագավորության կառավարող շրջաններին Մերձավոր Արևելքի պետությունների հետ խելացի ու հեռատես քաղաքականություն վարելու և երկրի համար խաղաղ զարգացման հնարավորություն ապահովելու գործում։

Լուսինյանները և թագավորության թուլացումը

1337 թ. հայ-եգիպտական հաշտությունից հետո Կիլիկիայի հայկական թագավորությունն ապրեց իր թուլացման շրջանը։ Արքունիքը լատինական տարրերի ազդեցության տակ շարունակեց իր բանակցությունները Հռոմի պապի և եվրոպական պետությունների հետ, բայց մերժում ստացավ։ Թագավորն ընդհարվեց Հակոբ կաթողիկոսի հետ, որը դեմ էր նրա վարած քաղաքականությանը, և պաշտոնանկ արեց նրան։ Արքունիքի այդ վարքագիծը խորացրեց երկրի ներքին պառակտումը։ Ժողովրդի մեծ մասը պահանջում էր պահպանել հայ-եգիպտական հաշտության պայմանները։ Սակայն թագավորն ու նորընտիր Մխիթար կաթողիկոսը շարունակեցին նախկին քաղաքականությունը։

Թագավորության համար այդպիսի ծանր կացության ժամանակ, 1342 թ. երիտասարդ հասակում հանկարծամահ եղավ Լևոն V-ը, առանց ժառանգ թողնելու։ Լևոն V-ի մահից հետո թագավորական գահը Հեթումյան դինաստիայից անցնում է ֆրանսիական ծագում ունեցող Լուսինյաններին, որոնք մոր կողմից աղգակից էին Հեթումյաններին, իսկ հոր կողմից՝ Կիպրոսի թագավորական տանը։ Սկզբում գահը անցավ Լևոն V-ի հորաքրոջ կրտսեր որդուն՝ Ջիվան Լուսինյանին (Կոստանդին II), որը վարում էր պայլի պաշտոնը, բայց մի տարի անց նրան ստիպում են հրաժարվել գահից և այն հանձնում են նրա եղբորը՝ Գվիդոն Լուսինյանին։ 1343 թվականին նրան օծում են Կիլիկիայի հայոց թագավոր Կոստանդին III անունով (1343—1344/5)։ Այդպիսով, Կիլիկիայում հաստատվում է Լուսինյանների դինաստիան։

Գվիդոն Լուսինյանը կամ Կոստանդին III-ը շարունակեց Լևոն V-ի արևմտյան քաղաքականությունը։ Դա գրգռեց նրա հակառակորդներին, որոնք 1344—1345 թթ. կազմակերպեցին Կոստանդին III-ի և նրա եղբոր՝ Բոհեմունդ իշխանի սպանությունը։ Այդ տեղի ունեցավ Ադանա քաղաքում, երբ թագավորի լատինամոլության դեմ զայրացած բազմությունը, պատմագիր Դարդելի խոսքերով ասած, «վառեալ ի զէն գրոհ եառնու» և սպանեցին ինչպես թագավորին, այնպես էլ լատինական տարրերից բաղկացած նրա թիկնապահ զորքի զգալի մասին։ Այդ դեպքերը ավելի խորացրին պետության քայքայումը։

Լևոն VI և թագավորության անկումը

Կոստանդին III-ից հետո թագավորական գահն անցավ Նզրեցիների ձեռքը, որոնք ծագումով հայ էին։ Սկզբում գահ բարձրացավ Նզրեցի Բաղդին մարաջախտի որդի Կոստանդին IV-ը (1344/5—1363), իսկ հետո՝ նրա հորեղբայր Հեթում Ջամբուլայի որդի Կոստանդին V-ը (1363—1373)։ Նզրեցիները փորձեցին վերականգնել երկրի միասնությունը, կասեցնել թագավորության թուլացումը և վերականգնել նախկին հզորությունը։ Այդ նպատակով նրանք աշխատեցին զսպել գլուխ բարձրացրած լատինական տարրերին և լատինամոլ ունիթորական հոսանքի կողմնակիցներին, ձեռնպահ մնացին Արևմուտքի հետ սերտ հարաբերություններ ունենալուց։ Սակայն նրանց ջանքերը դրական արդյունք չտվեցին։

Դեռևս 1347—1348 թթ. Իկոնիայի սելջուկ-թուրքերը և դարամանցիները հարձակվել էին Պապեռոնի վրա և գրավել այն։ Այդ նույն տարիներին համառ պայքար էր մղվել հայերի և մամլուքների միջև Այաս քաղաքի համար, որը ի վերջո ընկավ Մամլուքյան սուլթանության ձեռքը։ 1355 թվականին օտար զավթիչները ավարի և սպանության ենթարկեցին Ադանա և Տարսոն քաղաքներն ու նրանց շրջակայքը։ Հինգ տարի հետո Հալեպի էմիր Բեկ-Թեմուրը՝ եգիպտական զորքերի գլուխ անցած, արշավեց Կիլիկիա և հայկական թագավորությունից վերջնականապես գրավեց այդ քաղաքները։ Կոստանդին IV-ը թեև փորձեց կասեցնել եգիպտական զորքերի առաջխաղացումը, բայց հաջողություն չունեցավ։

Եգիպտական մամլուքները ամրապնդեցին իրենց դիրքերը երկրում, լրջորեն վտանգելով թագավորության գոյությանը։ 1360 թ. Տարսոնի մամլուքյան Մանչուկ էմիրը 60 000-ոց բանակով արշավեց Սիս մայրաքաղաքի վրա և պաշարեց այն, որը տևեց մի քանի տարի։ Սսի համար մղված մարտերում իրենց կատարած հերոսությամբ ու սխրագործություններով աչքի են ընկել հայոց սպարապետ Լիպարիտը և ամիրաներ Հեթումն ու Ջարմանդուխտը։ Վերջինս դեռևս Ադանայի դաշտում մղված մարտում ապանել էր եգիպտական զորավար Էմերին, իսկ Լիպարիտ Գունդրստաբլի՝ Սսի պաշտպանության ժամանակ ցուցաբերած քաջությունն ու անձնազոհությունը ժողովրդի հիշողության մեջ դարձել է ապրել և գովերգվել բանաստեղծների կողմից։ Նրան նվիրված են նվիրել Հովհաննես Թլկուրանցին և Սարգիս Քերթողը։

Կիլիկիայի թագավորության համար ստեղծված այդ ծանր օրերին արքունիքի առաջ դարձյալ ծառացավ գահի թեկնածության

հարցը։ 1373 թ. մեռնում է Կոստանդին V Նզրեցին, առանց ժառանգ թողնելու։ Երկրի ազդեցիկ մարդիկ իրենց հայացքը դարձյալ ուղղեցին դեպի Ֆրանսիացի Լուսինյանները։ Կիպրոսում էր գտնվում Ջիվանի կամ Կոստանդին II-ի որդի Լևոնը։ 1374 թ. նրան Կիպրոսից, ծպտյալ կերպով, թշնամու գրաված տերիտորիայով բերեցին Սիս և այնտեղ օծեցին հայոց թագավոր։ Իշխանության գլուխ անցնելով, Լևոն VI Լուսինյանը (1374—1375) ջանում էր իր շուրջը համախմբել երկրի մնացած ռազմական ուժերին և փրկել թագավորությունը կործանումից։ Այդ նպատակով նա ամրացրեց մայրաքաղաքի պաշտպանությունը և հաշտություն կնքելու համար բանակցությունների մեջ մտավ Կիլիկիա ներխուժած զավթիչների հետ։ Սակայն մամլուկյան զորքերի հրամանատար Աբուբեքրը, որին սուլթանը 15000-անոց բանակով 1374 թ. ուղարկել էր Սիսը գրավելու, չհամաձայնեց հաշտություն կնքել և նորից պաշարեց մայրաքաղաքը։ Հայերը թշնամու գերազանցող ուժերին դիմադրում էին խիզախորեն, բայց երկար դիմանալ չկարողացան։ Հաջորդ՝ 1375 թ. փետրվարին թշնամու ուժերը համալրվում են Հալեպի էմիրի 15000-անոց բանակով, իսկ հայերը, դրսից ոչ մի օգնություն չստանալով, հրկիզում են քաղաքը և քաշվում Սսի վերին ամրոցը, որը քաղաքի ամենաանառիկ կետն էր։ Այստեղ ևս մաքառումը երկար չի տևում. նույն տարվա ապրիլ ամսին հայերը անձնատուր են լինում եգիպտական զորքերին։ Լևոն VI-ն իր ընտանիքով գերի է ընկնում, տարվում Հալեպ, իսկ այնտեղից՝ Կահիրե և բանտարկվում։ Հետագայում, ֆրանսիական կառավարության միջնորդությամբ, նա գերությունից ազատվում, տեղափոխվում է Փարիզ և 1393 թ. մեռնում։ Սսի անկումից և թագավորի գերեվարությունից հետո էլ հայերը Կիլիկիայի առանձին շրջաններում շարունակում էին պայքարը, և նույնիսկ որոշ մարդիկ իրենց թագավոր էին հայտարարում, բայց դրական արդյունքի չհասան և հայկական համակիլիկյան թագավորությունը վերջնականապես ընկավ 1375 թ.։

ԳԼՈՒԽ XXVII

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

1. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Դասակարգերն ու դասակարգային հարաբերությունները

Կիլիկիայի հայկական թագավորությունում բնակություն էին հաստատել տարբեր երկրներից եկած բազմաթիվ մարդիկ, որոնք իրենց հետ բերել էին տարբեր սովորույթներ։ Սակայն, սերտ շփման մեջ մտնելով միմյանց հետ, նրանք իրարից ընդօրինակում և յուրացնում էին շատ սովորույթներ։ Նման բարդ պայմաններում ձևավորվեցին Կիլիկիայի հայկական թագավորությունում իշխող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, որոնք իրենց վրա էին կրում հայկական, արևմտահայրոպական և բյուզանդական սովորույթների կնիքը։

Կիլիկիայի հասարակությունը բաժանված էր երկու գլխավոր խմբի՝ ազատների և անազատների։ Այդ խմբերից յուրաքանչյուրն իր հերթին տրոհված էր զանազան դասերի ու դասակարգերի։ Ազատների, այսինքն՝ իշխողների դասակարգը բաժանված էր գարձյալ երկու մասի՝ աշխարհիկ ազնվականների և հոգևորականների։ Աշխարհիկ ազնվականությունը բաղկացած էր խոշոր ֆեոդալ իշխաններից, որոնք Կիլիկիայում կոչվում էին բերդատեր պարոններ, *և մանր ազնվականներից, այսպես կոչված* ձիավորներ*ի դասից։ Բերդատեր պարոնների դասը նույնպես բաժանված էր երկու խմբի՝ հայրենատեր բերդապետների, որոնք իրենց բերդերին ու կալվածքներին տիրում էին ժառանգաբար, և ոչ հայրենատեր բերդատերերի, որոնք իրենց բերդերն ու կալվածքներն ստանում էին թագավորից։ Բնակչության մյուս՝ անազատների, այսինքն՝ շահագործվողների խումբը նույնպես բաժանված էր տարբեր խավերի՝ գյուղացիության և քաղաքային բնակչության։ Կիլիկիայում*

Հայկական թագավորության օրոք գյուղացիության մեծագույն մասը ճորտացված էր, ամրացված էր հողին։ Այդպիսի գյուղացիները Կիլիկիայում, հունական արտահայտությամբ, կոչվում էին պարիկոս։ Գյուղացիության մի մասն էլ ֆեոդալի նկատմամբ ուներ միայն հարկատվության պարտավորություն և անձնապես ազատ էր։

Պատմական աղբյուրներում երբեմն հիշատակվում են նաև դոմենյան՝ արքունի գյուղացիներ, որոնք, սակայն, ավելի ազատ են եղել, քան կախյալ գյուղացիները, բայց իրենց տերերին վճարում էին նույն տուրքերն ու կատարում նույն պարտավորությունները, ինչ որ կախյալ գյուղացիները։ Նրանք կազմում էին գյուղացիների երրորդ խավը։ Գյուղացիները պարտավոր էին պետությանն ու ֆեոդալին, ինչպես նշված է Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքում», վճարել իրենց տարեկան բերքի մեկ հինգերորդը, շաբաթվա մեկ օրը աշխատել ֆեոդալի համար, առանձին տուրք վճարել անասունների համար, կատարել պետության ու ֆեոդալների հանդեպ ունեցած զանազան պարտավորություններ և տասանորդ վճարել եկեղեցուն։

Կիլիկիայում հայկական թագավորության օրոք տնտեսական ու քաղաքական զգալի ուժ էր ներկայացնում նաև քաղաքային բնակչությունը, որը հիմնականում բաղկացած էր արհեստավորներից և առևտրականներից։ Քաղաքային բնակչության մեջ, բացի հայերից, կային հույներ, իտալացիներ, ասորիներ ու հրեաներ։ Քաղաքային բնակչության գերակշռող մասը արհեստավորներ էին, որոնք անձնական և տնտեսական կախում չունեին ֆեոդալներից։ Կիլիկիայում անձնական ազատություն էին վայելում նաև առևտրականները։ Թե՛ արհեստավորները, թե՛ առևտրականները ունեին իրենց կազմակերպությունները՝ համքարությունները ու միությունները։ Բայց այդ բոլորով հանդերձ նրանք զրկված էին քաղաքական իրավունքներից և պատկանում էին անազատների դասերին. նրանք պարտավոր էին հարկ վճարել պետությանը և տուրք տալ ֆեոդալին։ Դա հակամարտություն էր առաջ բերում քաղաքային դասի և ֆեոդալների միջև։ Բացի վերոհիշյալ սոցիալական խավերից, Կիլիկիայում կար նաև մի այլ խավ՝ ծառաների ու աղախինների խավը։

Հողատիրության ձևերը և ֆեոդալական հիերարխիան

Կիլիկիայի հայկական թագավորությունում հողը նույնպես կենտրոնացված էր խոշոր ֆեոդալական տների, այսպես կոչված բերդատեր պարոնների ձեռքին, որոնց թիվը 70—80-ից ավելի չի եղել։ Հայրենատեր բերդատեր պարոններն իրենց կալվածքներին տիրում էին ժառանգաբար, որպես սեփականություն։ Այդպիսի կալվածքները կոչվում էին հայրենիք։ Ոչ հայրենատեր բերդատեր պարոններն իրենց կալվածքներին տիրում էին պայմանական կերպով, ստանում էին թագավորից։ Այս կարգի կալվածքները կոչվում էին պարգևական և թագավորի համաձայնությամբ հորից անցնում էին որդուն։ Թագավորը, որպես երկրի գերագույն իշխող, իրավասու էր հարկ եղած դեպքում ետ վերցնել ոչ հայրենատեր բերդատերի կալվածքները, իսկ հայրենատեր բերդատերերի կալվածքների նկատմամբ նա այդպիսի անմիջական իրավունք չուներ։ Նրանց կալվածքները թագավորի կողմից կարող էին հարքունիս գրավվել միայն պետական ծանր հանցանքի դեպքում և այն էլ դիվանի որոշմամբ։

Հողատիրության մի յուրատեսակ ձև էր մանր ազնվականներին, այսինքն՝ ձիավորներին տրվող կալվածքը։ Ձիավորները կալվածքներ էին ստանում այն ֆեոդալից, որի մոտ զինվորական ծառայություն էին կատարում։ Այդ կալվածքին նրանք կարող էին տիրել այնքան ժամանակ, որքան ժամանակ ծառայության մեջ էին գտնվում տվյալ ֆեոդալի մոտ։

Ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայի հայկական թագավորությունում գոյություն ուներ հողատիրության մի առանձին ձև ևս. դա եկեղեցական և վանքապատկան հողերն էին, որոնք համարվում էին հոգևորականության սեփականությունը։ Ֆեոդալական սեփականությունից բացի, հողային սեփականության յուրահատուկ ձև էր նաև ազատ գյուղական համայնքների կամ, ավելի ճիշտ, ազատ գյուղացիների տիրակալությունն իրենց հողամասերի վրա։

Ֆեոդալական հիերարխիայի բարձրագույն աստիճանն էր արքունիքը՝ թագավորի գլխավորությամբ։ Թագավորը մյուս բոլոր խավերի նկատմամբ գիտվում էր որպես սյուզերեն։ Թագավորից հետո ֆեոդալական հիերարխիայի երկրորդ աստիճանը կազմում էին բերդատեր պարոնները, որոնք թագավորից վասալական կախվածության մեջ էին գտնվում։ Իրենց սենյորի՝ թագավորի նկատմամբ բերդատեր պարոններն ունեին մի շարք պարտավորություններ՝ պատերազմի ժամանակ օգնել իրենց

զորքով և ռազմական հանդերձանքով, հարկ վճարել արքունիքին, մասնակցել արքունական դիվանի նիստերին և արքունիքում վարել որևէ պաշտոն։

Հիերարխիայի երրորդ և ամենացածր աստիճանը կազմում էր ձիավորների դասը։ Սրանք ենթակա էին այն ֆեոդալին, որից ստանում էին իրենց կալվածքները։ Նրանց պարտականությունն էր մշտական զինվորական ծառայությունը տվյալ ֆեոդալի մոտ, որի վասալներն էին նրանք։ Թագավորի և բերդատեր պարոնների վասալները Կիլիկիայում կոչվում էին լիճ, իսկ նրանց ծառայությունը սենյորի հանդեպ՝ լեություն։

Պետական կառուցվածքը

Կիլիկիայի հայկական թագավորության մեջ արքունիքն էր մարմնավորում երկրի գերագույն իշխանությունը։

Սկզբնական շրջանում, երբ թագավորությունը դեռ չէր կազմակերպվել, երկիրը կառավարում էին Ռուբինյան տոհմի իշխանները, իսկ թագավորության ժամանակ՝ թագավորները։ Նրանք էին պատերազմ հայտարարում, հաշտություն կնքում, դաշն դնում ուրիշ պետությունների հետ, լուծում երկրի ներքին կյանքին վերաբերող կարևորագույն հարցերը և հրապարակում օրենքներ ու վճիռներ։

Կիլիկիայում արքունիքն իր տարբեր օրգաններով և գործակալություններով ձևավորվեց երկրում թագավորություն հռչակելուց հետո։ Լևոն II թագավորը արքունիքը դարձրեց երկրի կառավարման գլխավոր օրգանը, որն ուներ մի շարք գործակալություններ և բարձրագույն ատյան։ Վերջինս թագավորի խորհրդատու օրգանն էր, որի նիստերում նախագահում էր ինքը թագավորը։ Այդ ատյանը կոչվում էր Վերին կամ Արքունի ատյան։ Նրա նիստերին մասնակցում էին բոլոր բերդատեր պարոնները որպես ատյանի անդամներ։ Վերին ատյանը հավաքվում էր երկրի համար լուրջ պահերին և քննություն էր առնում պետությանը վերաբերող կարևոր խնդիրները՝ պատերազմի, հաշտության հարցերը, պետության դեմ կատարված ծանր հանցագործությունները, ֆեոդալների միջև ծագած լուրջ վեճերը և այլն։

Գործակալությունները

Լևոն II-ի օրոք արքունիքում ստեղծվեցին մի քանի գործակալություններ։ Հետագայում՝ Հեթումյանների օրոք, Արևմտյան Եվրոպայի պետությունների օրինակով, ավելացան նաև այլ գործակալություններ. XIII դ. Հեթումյանների արքունիքում

դրանց թիվն արդեն տասից ավելի էր։ Կարևոր գործակալություններից էին.

ա) Խնամակալության գործակալություն կամ պայլություն։ Գործակալության գլխավոր պաշտոնատար անձը կոչվում էր պայլ։ Նա թագավորի առաջին խորհրդականն էր. նրա վրա էր դրվում նաև թագաժառանգի կամ անչափահաս թագավորի խնամակալությունը։ Թագավորի անչափահաս լինելու դեպքում կամ թագաժառանգի խնամակալության ժամանակ պայլի պաշտոնում նշանակվում էին երկու հոգի։ Որպես կանոն, նրանք պետք է լինեին երկրի ֆեոդալական խոշորագույն տների գլխավորները։

բ) Սպարապետություն, որի պաշտոնատար անձը Կիլիկիայում կոչվում էր գունդստաբլ։ Գունդստաբլը զորքի ընդհանուր հրամանատարն էր։ Պատերազմների ժամանակ, եթե թագավորը մասնակցում էր պատերազմական գործողություններին, նա ինքն էր գլխավորում բանակը, բայց մնացած բոլոր դեպքերում երկրի ռազմական ուժերի ընդհանուր հրամանատարությունը գտնվում էր գունդստաբլի ձեռքում։ Երկրի ռազմական ուժերին ապաստարկելու համար արքունիքում կար նաև համբարակալին (ինտենդանտության) գործակալություն, որի խնդիրն էր ռազմական հանդերձանք և պարեն մատակարարել բանակին։ Գլխավոր ինտենդանտին Կիլիկիայում անվանում էին մարաջախտ։

գ) Արքունական քարտուղարություն։ Այս գործակալության գլխավոր պաշտոնյան կոչվել է ջանցլեր կամ կանցլեր, այսինքն՝ ատենադպիր։ Ջանցլերը ղեկավարում էր օտար պետությունների հետ ունեցած բանակցություններն ու գրագրությունները և կատարում դեսպանական հանձնարարություններ։

դ) Սեղանապետությունը իր բովանդակությամբ համապատասխանել է Արշակունիների ժամանակվա հազարապետությանը։ Սեղանապետություն վարող անձը կոչվել է սենեսչալ կամ սենեսկալ։ Նա տնօրինում էր արքունիքի եկամուտները ու ծախսերը, հոգում երկրի տնտեսական կյանքի մասին և հսկում թագավորական տանը։ Այդ պատճառով էլ նա կոչվել է «հավատարիմն տանն արքունի»։ Սենեսկալին է ենթարկվել արքունական մի այլ բարձրաստիճան պաշտոնյա՝ ջամբոյը, այսինքն՝ արքունիքի հանդերձապետը կամ սենեկապետը, որը պահպանում էր թագավորական զգեստները, դրոշը, դանձը և կազմակերպում հանդեսներ։

ե) Մահասպետության գործակալություն։ Այս գործակալությունը կարգավորում էր երկրի ֆինանսները։ Գործակալությունը

վարող գլխավոր պաշտոնյան անվանվել է պրոտոսիմոս, որին ենթարկվում էին բոլոր մաքսատների գլխավորները, նավահանգստային ամրոցների և մյուս նավահանգիստների վերակացուները, որոնք կոչվում էին մինապան կամ կապիտան, և հարկահավաքման ու ֆինանսների պահպանման հետ կապված այլ կարգի պաշտոնյաներ։

Բացի վերոհիշյալ գործակալություններից ու պաշտոնյաներից, արքունիքում կային նաև այլ բարձրաստիճան անձինք, օրինակ՝ պարոնաց-պարոն, թագադիր իշխան, թագավորի սեղանապետ, սուրհանդակապետ և այլն։ Ի տարբերություն մինչ Կիլիկիայի թագավորությունը եղած հայկական պետությունների, որոնց արքունիքում պաշտոնները ժառանգական էին և պատկանում էին որևէ ֆեոդալական տան, այստեղ բոլոր պաշտոնյաները նշանակովի էին և ոչ ժառանգական։

Կիլիկիայում յուրաքանչյուր շրջան նույնպես ուներ իր կառավարիչը կամ իշխանը՝ պարոնը. շրջանների կառավարման գործը մեծ մասամբ գտնվել է տվյալ շրջանի հողերին տիրող ֆեոդալի ձեռքին։ Սակայն եղել են այնպիսի շրջաններ, որոնց կառավարիչները նշանակվել են թագավորի կողմից, նրանք չեն հանդիսացել տվյալ շրջանի հողատերեր։ Այդպիսի շրջանների թվում են եղել հատկապես մեծ քաղաքներն ու նրանց շրջակայքը, օրինակ՝ Տարսոնի, Այասի, Ադանայի, Մամեստիայի շրջանները և այլն։

Դատարանները Լևոն II-ի օրոք Կիլիկիայում կարգավորվեց և օրինական կերպարանք ստացավ դատաստանական գործը։ Կազմակերպվեցին երեք կարգի դատարաններ, որոնք կոչվում էին ատյաններ։ Դրանցից առաջինը արքունի դատարանն էր, որ անվանվել է Վերին կամ Մեծ դարբաս՝ ատյան։ Այս դատարանը եղել է արքունական ատյանին կից։ Այնտեղ քննարկվել են խոշոր ֆեոդալների միջև ծագած վեճերը, պետական ծանր հանցանքները՝ հայրենիքի դավաճանության, թագավորի դեմ դավադրություն կազմակերպելու և այլ պետական նշանակություն ունեցող հանցագործություններ։ Երկրորդ կարգի դատարանը Սսի արքեպիսկոպոսական ատյանն էր։ Այնտեղ քննվում էին հոգևորականներին վերաբերող հարցեր, այլադավան անձանց միջև ծագած վեճերը և հանցանքները։ Այս դատարանը գլխավորում էր Սիս քաղաքի արքեպիսկոպոսը։ Երրորդ կարգի դատարանները Ստորին կամ Փոքր ատյաններն էին։ Սրանք եղել են շրջաններում և քաղաքներում, բայց հատկապես քաղաքներում և

այդ պատճառով կոչվում էին բուրջեր: Հիշյալ ատյաններում քննվում էին տեղական բնակիչների միջև ծագած վեճերը, քրեական հանցանքները և այլն։

Դատական ատյանները կամ դարբասները ունեցել են իրենց ատենապետներն ու ատենակալները։ Մեզ հասած տեղեկություններից երևում է, որ ատենապետը, այսինքն՝ գլխավոր դատավորը կոչվել է տուկ, իսկ վերին ատյանի արքունի դատավորը՝ կապիտան: Մնացած դատարանների ատենապետները անվանվել են դիվանբաշի, իսկ նրանց ենթակա մարդիկ, այսինքն՝ ատենակալները՝ դիվբնցիք: Դատական ապարատի կարգավորմանը զուգընթաց մշակվել է նաև դատական օրենսդրություն, որով ղեկավարվել են դատավորները՝ իրենց վճիռները կայացնելիս։

Բանակը

Կիլիկիայի հայկական թագավորության համար կարևորագույն գործոններից մեկը երկրի ռազմական ուժն էր, քանի որ երկիրը համարյա բոլոր կողմերից շրջապատված էր թշնամաբար տրամադրված իշխանություններով, որոնք հաճախ ներխուժում էին նրա տերիտորիան և ավերածություններ կատարում։ Դեռևս Ռուբինյան առաջին իշխանների ժամանակներից սկսած Կիլիկիայում ստեղծվեց մի քանի տասնյակ հազար զինվորից կազմված մշտական բանակ։ Թագավորության շրջանում բանակն ավելի կազմակերպված դարձավ։ Նրա զինվորների թիվը պատերազմների տարիներին մեծ չափով ավելանում էր և հաճախ անցնում հարյուր հազարից։

Կիլիկիայի հայկական բանակը շատ բան ընդօրինակեց խաչակիրներից։ Բանակում սահմանվեց ռազմական ուսուցում և վարժեցում, զինվորական համազգեստ և զինվորական աստիճան։ Բանակը կազմված էր գլխավորապես հետևակից և հեծելազորից։ Կային նաև սակրավորներ։ Կիլիկիայի հայ զինվորը, հատկապես հեծյալ զինվորը, զգեստավորվել է խաչակիրների նման։ Նա գլխին ունեցել է սաղավարտ, հագին՝ զրահ, իսկ զրահի վրայից կրել է բրդյա պատմուճան՝ առջևից խաչի նշանով։

Հայկական բանակի զենքերն էին սուրը, նիզակը, նետն ու աղեղը, իսկ պաշտպանության համար՝ վահանը։ Գործածել են նաև հատուկ տեսակի աշտե կամ նիզակ, որը բացի սուր ծայրից ունեցել է և կեռ՝ թշնամուն ձիերից վայր գցելու կամ պարսպին մոտեցողներին բարձրացնելու և ոչնչացնելու համար։

Բանակի կազմում տեղ ու դեր ունեին ձիավորի, այսինքն՝ ասպետի կոչում ստացած մարդիկ։ Խաչակիրների ասպետական օրդենների օրինակով Կիլիկիայի հայկական բանակում նույնպես

սահմանվել էր որոշ աստիճան, որին հասնելու համար զինվորականը պետք է հրապարակորեն քննություն տար։ Հաջող քննություն տվողներն ստանում էին ձիավորի կոչում։ Կոչման շնորհումը տեղի էր ունենում հանդիսավոր արարողություններով ու մաղթանքներով։

2. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Գյուղատնտեսությունը

Կիլիկիայի կլիմայական պայմանները, բերրի գետահովիտներն ու արգավանդ դաշտավայրերը հարմար էին երկրագործության, իսկ խոտառատ արոտավայրերը՝ անասնապահության զարգացման համար։ Երկրի ծովամերձ շրջաններում, գետահովիտներում և դաշտային վայրերում բնակչության զբաղմունքը գերազանցապես երկրագործությունն էր։ Բացի հացահատիկային կուլտուրաներից, որոնցից լայն տարածում էր ստացել ցորենը, մշակում էին նաև թեղտու բույսեր, հատկապես բամբակ, որն իր որակով մրցում էր եգիպտականի հետ, բանջարանոցային կուլտուրաներ, բրինձ և այլն։

Կիլիկիայի տաք և մերձարևադարձային կլիման մարդկանց հնարավորություն էր տալիս աճեցնելու նաև մերձարևադարձային կուլտուրաներ՝ ալմավենի, թզենի, նարինջ, կիտրոն, ձիթապտուղ և այլն։ Մշակվել է նաև խաղող։

XII—XIV դարերում Կիլիկիայում զարգացել և կատարելագործվել էին հողամշակության ձևերն ու գյուղատնտեսական գործիքները, որոնց զգալի մասը արդեն պատրաստվում էին երկաթից։

Կիլիկիայի լեռնային մասերում և արևմտյան Քարուտ Կիլիկիայում զարգացած էր անասնապահությունը։ Ամենից շատ պահում էին մանր եղջերավոր անասուններ։ Խոշոր եղջերավոր անասուններից պահում էին կով, եզ, գոմեշ, ապա նաև ձի, ջորի և այլն։ Լավ համբավ են ունեցել Կիլիկիայում բուծված ձիերը, որոնք ոչ միայն օգտագործվում էին երկրի ներսում, այլև արտահանվում էին։ Խոշոր և մանր եղջերավոր մեծաքանակ հոտեր ունենալը հնարավորություն է տվել Կիլիկիայից արտահանելու նաև կաշվեղեն։

Արհեստագործությունը

XII—XIV դարերում Կիլիկիայում արհեստագործությունը զարգացման այնպիսի աստիճանի էր հասել, որ անջատվել էր գյուղատնտեսությունից, մեծ մասամբ կենտրոնացել քաղաքներում և դարձել արհեստավորի ապրուստի հիմնական միջոցը։

Այդ ժամանակներում Կիլիկիայում տարածված և զարգացած արհեստներից էր մանածագործությունը, որը ճյուղավորված էր բազմաթիվ մասնագիտացած արհեստների, օրինակ՝ ջուլհակության, դերձակության, ներկարարության։ Լայն տարածում է ունեցել նաև մետաղամշակությունը, որը տրոհված էր մանր արհեստների՝ դարբնության, պղնձագործության, զինագործության, պայտագործության, ոսկերչության։ Տարածված արհեստներ էին նաև կաշեգործությունը, ատաղձագործությունը, կավագործությունը, որմնադրությունը։

Արհեստագործական արտադրանքը մասսայական բնույթ էր ընդունել և պատրաստվում էր անորոշ սպառողի, շուկայի համար։ Շատ հաճախ ոչ թե արհեստավորն էր իր արտադրած իրի վաճառողը, այլ միջնորդ առևտրականը։ Արհեստագործական արտադրության լայնացմանը զուգընթաց, նրբանում ու կատարելագործվում էին արհեստավորի աշխատանքային գործիքները, տեղի էր ունենում ավելի նեղ մասնագիտացում։ Արհեստավորը աստիճանաբար վարժվում էր որևէ տեսակի արտադրանքի պատրաստման մեջ։

Վերոհիշյալ երևույթները Կիլիկիայում XII—XIV դդ. աստիճանաբար լայն ծավալ էին ստանում և խոշոր չափով նպաստում արհեստագործության զարգացմանն ու շուկայական հարաբերությունների ընդլայնմանը։

Ներքին և արտաքին առևտուրը

XII—XIV դարերում Կիլիկիայում, դյուղատնտեսության և արհեստագործության զարգացմանը զուգընթաց, լայն ծավալ էր ընդունել առևտուրը։ Լևոն II-ի թագավորության տարիներից սկսած պետությունը լուրջ ուշադրություն դարձրեց առևտրի զարգացման վրա։ Կիլիկիայի ներսում վերացվեցին ֆեոդալների կողմից ստեղծված մաքսային արգելքները։

Լևոն II-ի, Հեթում I-ի և մյուս թագավորների օրոք բաց թողնվեցին ինչպես արծաթյա, այնպես էլ ոսկյա դրամներ։ Հայտնի է եղել Կիլիկիայի հայոց թագավորների կտրած բազմաթիվ կոչվող դրամը, որը լայն տարածում և ճանաչում էր գտել Կիլիկիայի սահմաններից դուրս։

Կիլիկիայում առևտրի զարգացանը նպաստեցին նաև հայկական թագավորության կողմից մի քանի օտարերկրյա առևտրական ընկերություններին շնորհած արտոնությունները։ Լևոն II-ը 1201 թ. ջենովացի, իսկ 1215 թ. վենետիկցի առևտրականներին հատուկ պայմանագրերով լայն արտոնություններ տվեց։ Այդ արտո-

նագրերը նորանոր լրացումներով վավերացվեցին հետագա տարիներին։ Նման արտոնագրեր են տրվել նաև 1314 թ. Մոնբելիեի, 1331 թ.՝ Սիցիլիայի և 1335 թ.՝ Ֆլորենցիայի առևտրականներին։

Հիշյալ քաղաքների ու երկրների առևտրականները, մի շարք արտոնություններից բացի, իրավունք էին ստացել մշտական բնակություն հաստատելու Կիլիկիայի քաղաքներում, ունենալու իրենց առանձին թաղամասերը, դատարանը, դպրոցը, եկեղեցին, ինչպես և երկրում զբաղվելու արհեստագործությամբ ու դյուղատնտեսությամբ։ Պատմական աղբյուրները վկայում են, որ վենետիկցիներն ու ջենովացիները հաստատվել էին Այասում, Տարսոնում, Մամեստիայում և Սսում։

Հայկական թագավորության ժամանակներում Կիլիկիայում վերելք էր ապրում նաև արտաքին առևտուրը։ Միջերկրական ծովի արևելյան ափերին XII դ. սկզբին խաչակիրների ստեղծած իշխանությունները, բացի իր ուժն ու նշանակությունը կորցրած Անտիոքի դքսությունից, XIII դ. սկզբին նվաճվեցին սելջուկ-թուրքական իշխանությունների կողմից։ Այդ պատճառով Արևմտյան Եվրոպայի երկրների առևտրականները Արևելքի հետ իրենց առևտուրը մեծ մասամբ սկսեցին կատարել Կիլիկիայի վրայով։

Կիլիկիայի թագավորությունն իր հերթին խրախուսում էր արտաքին առևտրի զարգացումը։ Պետության նախաձեռնությամբ կարգի բերվեցին նավահանգիստները Կորիկոսում, Այասում և այլ վայրերում, առևտրական նավերը և քարավաններն ապահովվեցին ավազակների կողոպուտից, վանոնավորվեցին չափն ու կշիռը։ Մի շարք երկրների ու քաղաքների առևտրականներին տրվեցին արտոնություններ։ Նրանցից մաքս էր վերցվում չորս տոկոսի փոխարեն մեկ տոկոսի չափով։

Կիլիկիան առևտուր էր անում իտալական քաղաքների, Բյուզանդիայի, Ղրիմի, Իկոնիայի սուլթանության, Հայաստանի, Ասորիքի, Միջագետքի և Եգիպտոսի հետ։ Այդ երկրներից, ինչպես և հեռավոր Պարսկաստանից, Հնդկաստանից և այլ վայրերից առևտրական քարավաններ էին գալիս Կիլիկիա։ Երկրի ներսում և երկրի վրայով կատարվող առևտուրը մեծ եկամտի աղբյուր էր պետության համար։ Վերջինս, բացի երկիր ներմուծվող ապրանքների համար գանձվող մաքսից, որ կազմում էր ապրանքի արժեքի 4%-ը, հատուկ հարկ էր վերցնում ոսկու, արծաթի, թանկագին քարերի, մուշտակեղենի, կաշվեղենի և կանդունով չափվող չուխայի վաճառքից և շաբաթական մի թաղվոր (ոսկյա դրամ)՝ օտարազգի գինեվաճառներից։

Քաղաքների զարգացումը

Արհեստագործության և առևտրի զարգացումը խթան հանդիսացավ քաղաքային կյանքի աշխուժացման համար։ Կիլիկիայի հին քաղաքներն էին Տարսոնը, Սիսը, Մամեստիան, Սելևկիան, Ադանան, Անարզարան կամ Անավարզան։ Սակայն այդ քաղաքներն իրենց զարգացման բարձունքին հասան հայկական թագավորության տարիներին, երբ այնտեղ կենտրոնացան արհեստներն ու առևտուրը, առաջացան մշտական գործող շուկաներ, առևտրական քարավանների համար կառուցվեցին քարվանսարաներ, հյուրանոցներ, աճեց բնակչությունը։

Հայկական թագավորության մայրաքաղաքն էր Սիսը։ Թեև նրա մասին հիշատակություն կա V դ. սկսած, բայց այն հայկական պետության օրոք միայն բարձրացավ և դարձավ երկրի վարչական, արհեստագործության, առևտրի ու կուլտուրայի զարգացման խոշոր կենտրոններից մեկը։ Ճանապարհորդ Վիլլեբրանդ Օլդենբուրգի վկայությամբ XIII դ. սկզբին Սիսը անպարիսպ մի քաղաք էր, ուր բնակություն էին հաստատել «անթիվ և մեծատուն» մարդիկ։

Կիլիկիայի ամենախոշոր վաճառաշահ ու հարուստ քաղաքն էր Տարսոնը։ Նա կառուցվել էր մեր թվականությունից առաջ։ Հայկական թագավորության ժամանակաշրջանում Տարսոնը ուներ բազմազգ բնակչություն։ Այնտեղ, բացի հայերից, բնակություն էին հաստատել մեծ թվով հույներ, ասորիներ, հրեաներ, իտալացիներ և այլն։ Տարսոնի նավահանգիստը տարեկան հարյուրավոր առևտրական նավեր էր ընդունում։

Արհեստագործության և առևտրի նշանավոր կենտրոն է եղել Ադանա քաղաքը, որը բուռն կերպով սկսում է զարգանալ XII դ. երկրորդ կեսից։ Այդ ժամանակաշրջանում ապրող մատենագիրների վկայությամբ Ադանան XII—XIII դդ. մարդաշատ, արհեստագործությամբ ու առևտրով զարգացած, ոսկով և արծաթով հարստացած քաղաք էր։

Հայկական թագավորության տարիներին հիմնված, բայց առևտրի ու արհեստագործության զարգացման գործում հռչակ ձեռք բերած նավահանգստային քաղաքներ էին Այասն ու Կորիկոսը։ Վերջինս վերաշինվեց հայերի կողմից, ապահովվեց ծովահենների հարձակումներից, իսկ նրա նավահանգիստը հարմարեցվեց մեծաքանակ և խոշոր նավերի ընդունման համար։ Այնտեղ հաստատվեց մաքսային գլխավոր կետերից մեկը։

Արդյունագործության, ինչպես և առևտրի զարգացման ու ծա-

վալման տեսակետից ավելի մեծ դեր է խաղացել Այաս նավահանգստային քաղաքը։ Այն եղել է խոշորագույն և առաջնակարգ նավահանգիստ։ Հռչակավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն 1271 թ. եղել է Այասում և նկարագրել նրա աշխույժ կյանքը։ Այդ նկարագրության մեջ ասված է. «... Երկիրն ունի բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր, և ամեն ինչ ունի առատորեն... Նրանք, այսինքն՝ հայերը ունեն մի քաղաք ծովի վրա, որ կոչվում է Լայաս (Այաս), որտեղ նրանք մեծ առևտուր են կատարում։ Որովհետև դուք պետք է իմանաք, որ բոլոր համեմունքները և մետաքսյա ու արծաթյա գերպասները, արժեքավոր անոթները, որոնք գալիս են ներքին գավառներից, բերվում են այս քաղաքը։ Ե՛վ Վենետիկի, և՛ Ջենովայի, և՛ ուրիշ երկրների վաճառականները այստեղ են գալիս՝ վաճառելու իրենց ապրանքները կամ գնելու՝ ինչ որ իրենք պետք ունեն»։

Այաս քաղաքի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Ֆլորենցիայի վաճառականական ընկերության գործակալ Պալտուչի Բեկոլոդին իր «Հրահանգ վաճառականության» գրքում։ Նա 1336—1340 թթ. գրել է, որ Կիլիկիան և հատկապես նրա Այաս քաղաքը առևտրի ու վաճառականության խոշորագույն կենտրոն է եղել, ուր մշտապես բնակվել են վաճառականներ։ Այնտեղ կշռաչափով վաճառել են պղպեղ, կոճապղպեղ, շաքար, դարչնանկ, խունկ, որդան-փայտ, կնքախեժ, բամբակ, մետաքս, աճառ, ասր, ցիսի, քրքում, երկաթ, պղինձ, անագ, ոսկի, արծաթ, իսկ տարածաչափով՝ զանազան տեսակի մորթիներ, գծաչափով՝ ամեն տեսակի կտավեղեն և կանեփեղեն, ծավալաչափով ու հատավաճառով՝ արմտիքներ, հացահատիկ և այլ ապրանքներ։

Այասին վերաբերող այս նկարագիրը ցույց է տալիս, որ Կիլիկիայի քաղաքները հանդիսացել են արհեստագործության և առևտրի կենտրոններ, նպաստել են երկրի ներսում գյուղատնտեսական և արհեստագործական արտադրանքի ապրանքայնացման պրոցեսի ուժեղացմանը և քաղաքային կյանքի ու ջուկայական հարաբերությունների ծավալմանն ու խորացմանը, մի երևույթ, որ իր շրջապտույտի մեջ էր առել ոչ միայն արհեստավորներին ու առևտրականներին, այլև ֆեոդալական որոշ տարրերի և գյուղացիներին։

Ունիթորներ և հակաունիթորներ

Հասարակական կյանքի զարգացումն ու բարդացումը՝ դասակարգերի միջև հակամարտ հարաբերությունների խորացումը, քաղաքային տնտեսության զարգացումը և երկրի արտաքին հարաբերություններում առաջացած դժվարությունները Կիլիկիայի բնակչության տարբեր խավերի մեջ առաջ բերեցին շահերի սուր բախում ու պայքար։

Եղած տեղեկություններից պարզվում է, որ Կիլիկիայում ներքին պայքարը սուր ձևեր է ընդունել XIII դ. երկրորդ կեսին։ Ինչպես ասվեց, Հեթումի որդի Լևոն III-ը 1271 թ. իր թագադրության առթիվ ներում շնորհեց բանտարկյալներին։ Բայց դրան ընդդիմացան բերդատեր պարոնները և ընդվզեցին թագավորի դեմ։ Հավանաբար բանտերից ազատվածները եղել են խոշոր ֆեոդալների հակառակորդները՝ կա՞մ գյուղացիներ, կա՞մ քաղաքային դասի ներկայացուցիչներ։

Աղբյուրներում հիշատակվում է նման բախումների մի հետաքրքիր դեպք ևս, որ տեղի է ունեցել Օշին թագավորի (1309—1320) օրոք։ Սամվել Անեցու ժամանակագրության շարունակողի վկայությամբ, Օշին թագավորի ներքին և արտաքին քաղաքականությունից դժգոհ մարդկանց բազմությունը բողոքի ցույց է կազմակերպել։ Սիս քաղաքում ցույցը վերածվել է արյունահեղ ընդհարումների։ Արքունի զորքերը, կաթողիկոսի և իշխանների համագործակցությամբ, ձերբակալել ու բանտ են նետել բազմաթիվ մարդկանց և սպանել «յարանց և ի կանանց զբաղումս և ի կրոնաւորաց սակաւ ինչ»։ Այս տեղեկություններից երևում է, որ Կիլիկիայի տարբեր խավերի միջև մղված պայքարն ունեցել է թե՛ սոցիալական, թե՛ կրոնական դունավորում։ XIV դարի սկզբից այդ պայքարն առավել սուր ձևեր ստացավ։ Այժմ այն մղվում էր ոչ միայն տնտեսական, սոցիալ-իրավական ու կրոնական հարցերի շուրջը, այլև շոշափում էր պետության արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցեր, որոնք առերևույթ կրոնական-դավանաբանական դունավորում էին ստացել։

Ստեղծված իրադրությունը երկրի ներսում առաջացրեց սուր պայքար և տարբեր խմբավորումներ։ Դրանցից մեկը, որ կողմնակից էր հայկական եկեղեցին կաթոլիկականին միացնելուն և եվրոպական ուժերի հետ դաշինք կնքելուն, կոչվեց ունիթոր կամ ունիթորական հոսանք, իսկ մյուսը, որ դեմ էր դրան, հակաունիթորական ուղղություն։ Ունիթորականներին հարում էին առևտրականները, արհեստավորների մի մասը, Կիլիկիայում բնակություն

հաստատած լատինական տարրերը, առանձին բարձրաստիճան հոգևորականներ և արքունիքը։ Հակառնիթորական հոսանքի կողմնակիցներն էին հոգևորականությունը (հատկապես նրա ստորին դասը), խոշոր ֆեոդալների մեծագույն մասը և այլ խավեր։

Ունիթորական հոսանքին հարողները շահագրգռված էին արդյունագործության և առևտրական հարաբերությունների զարգացմամբ թե՛ երկրի ներսում և թե՛ եվրոպական երկրների հետ։ Այդ իմաստով նրանց պայքարն ուներ առաջադիմական կողմեր։ Սակայն նրանք իրենց վարած քաղաքականությամբ ստեղծում էին խիստ վտանգավոր իրադրություն հայկական պետականության համար՝ նրա դեմ հանելով շրջապատի պետություններին։ Այս տեսակետից նրանց վարած քաղաքականությունն ու պայքարը կործանարար էր հայկական թագավորության համար և անընդունելի։

Ունիթորների և հակառնիթորների պայքարը, որ տևեց երկար տարիներ, ծանր կացության մեջ դրեց երկիրը, չքատելով նրա միասնությունը, թուլացնելով նրա ռազմունակությունը և անպաշտպան դարձնելով նրան օտար նվաճողների հանդեպ։

ԳԼՈՒԽ XXVIII

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ IX—XIV ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Դպրոցները և ուսուցումը

Հայկական մշակույթը IX—XIV դդ. զարգացման բարձր մակարդակի հասավ։ Պատմագիտական, փիլիսոփայական, կրոնադավանաբանական գրականությանը զուգահեռ առաջացան և մեծ զարգացում ստացան գեղարվեստական գրականությունը, իրավագիտությունը, մանրանկարչությունը, հարստարարտական արվեստը և կուլտուրայի այլ բնագավառներ։

Վերոհիշյալ դարերում հայկական կուլտուրայի զարգացման համար ստեղծվել էին մի շարք նպաստավոր պայմաններ։ Դրանցից մեկը օտար լծի թոթափումը և հայկական պետականության վերականգնումն էր։ Բագրատունիները և Զաքարյանները Հայաստանում, իսկ Ռուբինյանները Կիլիկիայում շատ հաճախ խրախուսում, հովանավորում էին կուլտուրական ձեռնարկումները և գիտության, գրականության ու արվեստի մարգկանց գործունեությունը։

Կուլտուրական կյանքի վերելքին նպաստող պայմաններից մեկն էլ Հայաստանի և Կիլիկիայի տնտեսական կյանքի, ինչպես և քաղաքների զարգացումն էր։ Պետք է նշել և այն, որ հայերն ունեին բազմադարյան մտավոր մշակույթ։ Բացի այդ, IX դ. սկսած Մերձավոր Արևելքի շատ ժողովուրդներ, առանձնապես արաբներն ու պարսիկները, կուլտուրական մեծ վերելք ապրեցին, որից մեկուսացված չէին նաև հայերը։

Ինչպես մեր երկրում, այնպես էլ Կիլիկիայում վանքերին կից, քաղաքներում, քաղաքատիպ բնակավայրերում, նույնիսկ առանձին գյուղերում բացվում է ավելի քան 80 դպրոց։ Որոշ

դպրոցներում միաժամանակ սովորել են հարյուրավոր աշակերտներ։ Դպրոցները եղել են տարբեր տիպի ու բնույթի, իսկ դասավանդվող առարկաները՝ բազմապան։

Առանձին ուսումնասեր մարդիկ կազմակերպել են որոշ տիպի դպրոցներ, որոնք մասնավոր բնույթ են ունեցել։ Դրանք մատենագրության մեջ անվանվում էին առանձնական դպրոցներ, իմաստնոց տներ, տուն դպրանոց։ Այդ դպրոցներում երեխաներին սովորեցնում էին գրագիտություն, երգեցողություն և հաշվարկում։ Սրանք ցածր տիպի դպրոցներ էին։

Դպրոցների մի մասն էլ կոչվել է հասարակական կամ ժողովրդական։ Նրանք կրում էին աշխարհիկ բնույթ և կազմակերպվում էին քաղաքներում ու ավաններում, օրինակ՝ Անիում, Կարսում, Երզնկայում, Վանում, Սանահին գյուղում, Դսեղում, Եղվարդում և այլուր։ Վերոհիշյալ դպրոցներից բացի, լայն տարածում են ունեցել նաև վանական դպրոցները, որոնք գործել են խոշոր վանքերին կից և բաժանված են եղել երկու կարգի՝ տարրականի և բարձրագույնի։ Տարրականում ուսուցանում էին գրագիտություն, թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն, երաժշտություն, կրոնի պատմություն և այլն։ Բարձրագույն տիպի դպրոցներում, որոնք համապատասխանում էին միջնադարյան համալսարաններին և տարբեր տեղերում տարբեր անուններով էին կոչվում՝ վարդապետարան, իմաստասիրական կամ համալսարան, դասավանդվում էին բազմապիսի առարկաներ՝ աստվածաբանություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, պոետիկա, ճարտասանություն, քերականություն, մաթեմատիկա, տոմարագիտություն, աստղաբաշխություն, երկրաչափություն, պատմություն, երաժշտություն, նկարչություն, գրչության արվեստ (գեղագրություն) և այլն։ Հիշյալ առարկաների դասավանդումը այս կամ այն դպրոցում պայմանավորված էր տվյալ առարկայի մեջ մասնագիտացած դասատուի առկայությամբ։

IX—XIV դդ. մեծ հռչակ էին ձեռք բերել մի շարք բարձրագույն դպրոցներ։ Այդպիսի դպրոցների թվին են պատկանում՝

ա) Տաթևի համալսարանը, որը հիմնադրվել է IX դ. վերջերին և գործել մինչև XV դ.։ Այդ դպրոցը բեղմնավոր գործունեություն է ծավալել առանձնապես XIII—XV դդ., երբ դպրոցի ղեկավարներն ու մանկավարժներն են եղել իրենց գիտականությամբ ու մանկավարժական հմտությամբ մեծ հռչակ վաստակած Հովհաննես Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Առաքել Սյունեցին և ուրիշներ։

բ) Գլաձորի համալսարանը, որ հիմնվել է XIII դ., Սյունիքի Վայոց ձոր գավառում, գործել է որպես բարձրագույն տիպի դպրոց մինչև XIV դ. 30-ական թթ.։ Դպրոցի հիմնադիրը եղել է իր ժամանակի հմուտ ուսուցիչ Ներսես Մշեցին, իսկ վերջինիս մահից հետո այն գլխավորել է նրա աշակերտ Նսայի Նշեցին։ Այնտեղ դասավանդել են նաև Դավիթ Տիրատուրը, Հովհաննես Որոտնեցին և ուրիշներ։ Գլաձորի համալսարանը Հայաստանում ամենից շատ հռչակված դպրոցն էր, ուր սովորելու էին գալիս բազմաթիվ հայեր թե՛ Հայաստանից, թե՛ այլ երկրներից, ի թիվս որոնց նաև Կիլիկիայից։

գ) Նարեկա նարտասանական դպրոցը, որը հիմնադրվել է X դ., գտնվում էր Ռշտունիքի Նարեկ գյուղի մոտերքում՝ Վանա լճի հարավային ափին հիմնված համանուն վանքում։ Նարեկա դպրոցը եռուն գործունեություն է ունեցել X—XI դդ., երբ այնտեղ դասախոսում էին ժողովրդի մեջ հեղինակություն վայելող Անանիա Նարեկացին և նրա արժանավոր աշակերտ Գրիգոր Նարեկացին։

դ) Անի քաղաքի իմաստասիրական դպրոցը հիմնադրվել է XI դ. և գործել է մինչև XIII դ.։ Դպրոցն ունեցել է փիլիսոփայական ուղղություն։ Նրա ղեկավարներն ու դասախոսները տարբեր ժամանակներում եղել են Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Իմաստասերը, Մխիթար Անեցին և ուրիշներ։ Անիի իմաստասիրական դպրոցը, մյուսների հետ համեմատած, ավելի աշխարհիկ բնույթ է ունեցել. այնտեղ դասավանդվող առարկաների մեջ գերազանցել են հատկապես փիլիսոփայական և բնական գիտությունները։

հ) Սիս քաղաքի եպիսկոպոսական-համալսարանը. նրա հիմնադրումը սերտորեն կապված է Ներսես Լամբրոնացու անվան հետ։ Դպրոցը բեղմնավոր գործունեություն է ունեցել XII—XIII դդ.։ Այդ դպրոցը նույնպես ավելի աշխարհիկ բնույթ է ունեցել և մեծ մասամբ այնտեղ են իրենց ուսումն ստացել Կիլիկիայի հայկական թագավորության պետական գործիչներն ու գիտությանը նվիրված մարդիկ։

Վերոհիշյալ բարձրագույն դպրոցների շարքին են պատկանել նաև X—XIV դդ. լայն գործունեություն ծավալած Սանահնի, Հաղպատի, Արշարունյաց, Երասխաձորի, Կամրջաձորի, Բջնիի, Կեչառիսի, Կարսի, Գոշավանքի կամ Գետիկի, Երզնկայի շրջանի Կարփոսի և Կիլիկիայի Ակներ, Տարսոնի, Սկևռայի, Լամբրոնի, Դրազարկի դպրոցները։ Հիշյալ դպրոցները հանդիսացել են միջնադարյան հայ մտավորականության պատրաստման և միջնադարյան

հայկական կուլտուրայի՝ գրականության, գիտության և արվեստի ստեղծման ու զարգացման օջախներ։

Ժողովրդական բանահյուսությունը

Բանահյուսությունը IX—XIV դդ. դրսևորվել է ժողովրդական ասացվածքներում, հեքիաթներում, առակներում, պատմվածքներում և ավելի ընդարձակ ծավալի վեպերում՝ էպոսում։ Ժողովուրդը դրանց մեջ ամփոփել է իր իմաստուն, խրատական մտքերը, լավագույն իղձերն ու ձգտումները։

Դեռևս XII դ. Ներսես Շնորհալին և Մխիթար Գոշը հավաքել, մշակել և գրի են առել բազմաթիվ առակներ։ Նրանց է հետևել նաև XIII դ. առակագիր Վարդան Այգեկցին, որի կազմած առակների ժողովածուն ստացել է «Առվեսագիրք» անունը։ Վերոհիշյալ հեղինակների հավաքած և գրի առած առակների մեջ արտահայտվել են խրատական-բարոյական, հակակրոնական և սոցիալական մոտիվներ։

Ժողովրդական բանահյուսության գոհարներից է «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» էպոսը։ Ժողովրդական այս վեպը ձևավորվել է IX—X դդ., բայց լրացվել և հարստացել է նաև հետագա ժամանակներում։ Էպոսի պատմական սյուժեն գլխավորապես այն պայքարն է, որ հայ ժողովուրդը մղել է արաբական տիրապետության դեմ։

«Սասնա ծռեր»-ում արտահայտված են հայրենասիրական, հումանիստական բարձր գաղափարներ և հավատ հաղթանակի ու ապագայի նկատմամբ։ Այս էպոսը մեր ազատատենչ ժողովրդի ստեղծագործական հանճարի վսեմ հուշարձանն է, նրա ստեղծած կուլտուրական արժեքների խոշորագույն կոթողներից մեկը։

Գեղարվեստական գրականություն

Մինչև X դ. հայ գեղարվեստական գրականությունը հանդես է եկել պատմագիտական և կրոնական գրականության հետ միասնաբար և չի կազմել ինքնուրույն ճյուղ։ Սակայն սկսած X դ. նա անջատվեց դրանցից և զարգացավ որպես ինքնուրույն ճյուղ։ X—XIV դդ. ասպարեզ եկան մի շարք բանաստեղծներ, որոնք միջնադարյան հայ գեղարվեստական գրականությունը, առանձնապես պոեզիան, հասցրին բարձր զարգացման։

Հայ գեղարվեստական գրականության առաջին խոշոր դեմքը և աշխարհիկ բանաստեղծության հիմնադիրը Գրիգոր Նարեկացին է։ Նա ապրել և ստեղծագործել է X դ. երկրորդ կեսին և մահացել 1003 թ. իր ստեղծագործական ուժերի բեղուն շրջանում։ Նարեկացին թողել է մի շարք գրական գործեր, բայց դրանցից իրենց

գեղարվեստական արժանիքներով առավել աչքի են ընկնում «Տաղերը», այսինքն՝ չափածո բանաստեղծությունները, և «Մատյան ողբերգության» խորագրով պոեմը, որը ժողովրդին հայտնի է «Նարեկ» անունով։ Նարեկացու այդ ստեղծագործությունները հայ գրականության մեջ արվեստի անկրկնելի նմուշներ են։

Գրիգոր Նարեկացուց հետո գրական ասպարեզ ելան Ներսես Շնորհալին (XII դ.), Հովհաննես ու Կոստանդին Երզնկացիները (XIII դ.), Ֆրիկը (XIII—XIV դդ.) և ուրիշներ։ Ներսես Շնորհալին գրել է ներբողներ, առակներ, մանկական ոտանավորներ, հանելուկներ և մի պոեմ՝ «Ողբ Եդեսիոյ» վերնագրով։ Ինչպես Շնորհալու, այնպես էլ նրա ժամանակակից ու նրանից անմիջապես հետո հանդես եկած բանաստեղծների գործերում աշխարհիկ տարրը առավել մեծ տեղ է գրավում։ Այդ երևույթը նոր ուժգնությամբ է դրսևորվում XIII—XIV դդ. դրողների և առանձնապես Ֆրիկի բանաստեղծություններում։

Ֆրիկի կյանքի մասին քիչ տեղեկություններ են հասել մեզ։ Հայտնի է, որ նա աշխարհիկ մարդ է եղել, երկար ժամանակ ապրել է Կիլիկիայում, շրջագայել է այլ վայրեր և ծանոթացել ժողովրդի, հատկապես աշխատավոր մարդկանց կյանքին։ Ֆրիկի թողած գրական ժառանգությունը նրա բանաստեղծություններն են՝ «Տաղերը»։ Այս բանաստեղծություններում հեղինակը շոշափել է սոցիալական, հակակրոնական, խթատական, հայրենասիրական և այլ մոտիվներ։ Նա մերկացնում է աշխարհում գոյություն ունեցող անհավասարությունը, անարդարությունը, հարուստների ու իշխանավորների կողմից աշխատավոր բնակչության հարստահարումն ու ճնշումը։ Նա բողոքում է այն իրադրության դեմ, որ «մեկն ի պապանց պարոնորդի» է, իսկ մյուսը՝ «ի հարանց մուրող», կամ թե՝ «մեկին հազար ձի և ջորի, մեկին ոչ ուլ մի, ոչ մաքի», և ի վերջո՝ «մեկն ի զրկանց հարստի, մեկն իւրայնոցն աղքատասցի»։

Ֆրիկը իր ստեղծագործություններում արտահայտել է նաև հակակրոնական մոտիվներ։ Նա համարձակորեն կշտամբում է Ճակատագրին, այսինքն՝ աստծուն, ասելով՝ «ծուռ է զինչ որ դու կառնես, ով լինի հաւան քեզ»։ Ֆրիկի ստեղծագործություններում ակնհայտորեն արտահայտված են աթեիստական մտքեր, հայրենասիրական վառ զգացմունք, բոլոր օտար դավթիչների դեմ։ Բոլոր դեպքերում բանաստեղծը կանգնում է աղքատների, այլ կերպ ասած՝ աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում՝ ընդդեմ հարուստների և իշխողների։ Ֆրիկը միջնադարյան

հայ գրականության մեջ դեմոկրատական ուղղության հիմնադիրն է։

X—XIV դդ. հայ գեղարվեստական գրականության զարգացման ընթացքում դրսևորվեցին հետևյալ տենդենցներն ու հատկանշական գծերը. նախ, աստիճանաբար տեղի ունեցավ գրական ստեղծագործությունների բովանդակության աշխարհականացում, այնուհետև՝ գրական լեզվի մոտեցում ժողովրդի խոսակցական լեզվին։ Գեղարվեստական գրականության մեջ բարձրացվեցին հայրենասիրական, սոցիալական և հակակրոնական հարցեր, արտահայտվեցին հումանիստական գաղափարներ։

Պատմագիտական գրականություն

Հայ պատմագիտական գրականությունը IX—XIV դդ. նոր վերելք ապրեց։ Առպարեզ իջան շուրջ երկու տասնյակ պատմագիրներ, որոնց երկերը արժեքավոր ներդրում են հայ պատմագիտական մտքի զարգացման գործում։

Վերոհիշյալ դարերում հայ պատմագիտական գրականության մեջ առաջացավ բազմատեսակություն՝ իր մեծաթիվ ներկայացուցիչներով, որոնցից առավել աչքի ընկնողներն են.

Անանուն պատմագիր կամ Շապուհ Բագրատունի։ X դ. սկզբի պատմագիրներից է։ Նրա աշխատության սկիզբը մեզ չի հասել։ Մեզ հասած տեքստը սկսվում է VII դ.։ Թուցիկ կերպով շարադրելով արաբական տիրապետության ժամանակաշրջանի պատմությունը, հեղինակը ավելի հանգամանորեն պատմում է IX դ. վերջին քառորդի դեպքերի մասին։ Այս գիրքն առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն տեսակետից, որ գրված է ժողովրդի խոսակցական լեզվով, կամ ինչպես Դրասխանակերտցին է ասել՝ «գեղջուկ բանիւ», և շարադրված է վիպական ձևով։ Գրքում Արծրունիների ֆեոդալական տան օրինակով, որոշակիորեն բացահայտված են ֆեոդալական դասակարգի ներսում տեղի ունեցած նոր երևույթներն ու հարաբերությունները, որոնք ձևավորվում էին IX դ.։

Հովհաննես Դրասխանակերտցի։ Մենդյան թվականը հայտնի չէ։ Հայոց կաթողիկոս է ընտրվել 897 թվականին, մահացել է 930 կամ 931 թվականին։ Նա գրել է «Պատմութիւն Հայոց» վերնագրով մի աշխատություն, որի մեջ շարադրել է հայ ժողովրդի պատմությունը՝ սկսած Հայկի ու Բելի ավանդությունից մինչև 924—925 թթ. դեպքերը։

Իր աշխատության մեջ Դրասխանակերտցին պաշտպանում է հայկական միասնական պետության ստեղծման և պահպանման

գաղափարը, քննադատում է պետության միասնությունը չլատեալու ձգտում հանդես բերող տարրերին։ Այս դրական գծերի հետ միասին Դրասխանակերտցին պատմական երևույթներին տալիս է իդեալիստական մեկնաբանում, պատմական դեպքերի զարգացման մեջ տեսնում է աստծու կանխորոշող դերը։ Պատմագիրը հանդես է գալիս ֆեոդալական կարգերի պաշտպանի դերում և ամեն մի ըմբոստացում այդ կարգերի դեմ բնութագրում է որպես չարիք և աստծու կամքին հակառակ բան։

Թովմա Արծրունի։ Ենթադրվում է, որ նա ծնվել է IX դ. 60-ական և մահացել է X դ. 30-ական թթ.։ Թովման Արծրունիների տոհմային պատմագիրն է։ Նրա աշխատության վերնագիրն է «Պատմութիւն տանն Արծրունեաց»։ Նա իր աշխատությունը գրելու համար օգտագործել է հայկական և օտար աղբյուրներ, ժողովրդական առասպելներ և զրույցներ։

Գրքի առաջին բաժնում հեղինակը պատմում է Արծրունիների տոհմի ծագման մասին։ Երկրորդ մասում համառոտակի շարադրում է Պարսկաստանի, Հայաստանի և արաբական պետության պատմությունները մինչև IX դ., վերջում հանգամանորեն պատմում է Հայաստանի վիճակի մասին՝ IX դ. երկրորդ և X դ. առաջին կեսերին։ Գրքի վերջին գլուխները գրել են ուրիշները և դեպքերի շարադրումը հասցրել մինչև XIV դ.։

Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ)։ Ապրել է X դ. երկրորդ կեսին և XI դ. առաջին քառորդում։ Գրել է «Պատմութիւն տիեզերական» աշխատությունը, որի մեջ շարադրել է ոչ միայն հայ ժողովրդի, այլև Մերձավոր Արևելքի մի շարք ժողովուրդների ու պետությունների պատմությունը՝ շատ վաղ անցյալից մինչև իր ապրած ժամանակաշրջանը։

Ավելի կարևոր և արժեքավոր է աշխատության վերջին բաժինը, որտեղ հեղինակը հանգամանորեն շարադրել է Հայաստանի պատմությունը՝ սերտորեն շաղկապված Մերձավոր Արևելքի արաբական իշխանությունների և Բյուզանդիայի պատմության հետ։

Ստեփանոս Տարոնեցին առաջինն է, որ որոշակի նպատակ է դրել գրելու ընդհանուր պատմություն։ Նա իր աշխատության մեջ վեր է հանում հայ ժողովրդի ստեղծարար գործունեությունը, նրա մղած պայքարը իր անկախության համար և հանդես է գալիս որպես հայկական միասնական պետության շատադով։

Արիստակես Լաստիվերցի։ Լաստիվերցին ապրել է XI դ., մեռել է նույն դարի 70-ական թվականների վերջին կամ 80-ականի սկզբներին։ Նա գրել է «Պատմութիւն» խորագրով մի աշխատու-

թյուն, որն իր ձևով ժամանակագրություն է։ Աշխատությունը սկսվում է 1001 թ. դեպքերով և ավարտվում է 1071 թ. անցուդարձերի նկարագրությամբ։

Արիստակես Լաստիվերցին այն պատմագիրներից է, որոնք առավել մեծ չափերով են գտնվել կրոնական գրականության և եկեղեցական դոգմաների ազդեցության տակ։ Չնայած դրան, նրա աշխատությունը բովանդակում է մի շարք կարևոր դրույթներ։ Նախ, այնտեղ որոշակիորեն արտահայտված է այն միտքը, որ հասարակությունը բաժանված է երկու հակադիր խմբի՝ հարուստների ու աղքատների, շահագործողների ու շահագործվողների։ Այնուհետև Լաստիվերցին նշում է նաև դասակարգային պայքարի առկայությունը, նկարագրում է. Թոնդրակյան շարժման առանձին կազմակերպությունների գործունեությունը և նրանց դաղափարախոսությունը։ Լաստիվերցին իր աշխատության մեջ հանդես է գալիս որպես ժամանակի խոշորագույն հայրենասերներից մեկը, հայկական պետականության պահպանման և ուժեղ միասնական պետության ստեղծման ջերմ կողմնակից։

Մատթեոս Ուռհայեցի։ Ուռհայեցին XII դ. պատմագիր է։ Նա ծնվել է Եդեսիայում և այնտեղ էլ անցկացրել իր ամբողջ կյանքը։ Ուռհայեցու հեղինակությամբ մեզ է հասել պատմագիտական մի աշխատություն, որը հայտնի է «Ժամանակագրութիւն» խորագրով։ Մատթեոս Ուռհայեցին պատմությունն սկսում է 952 թ. և հասցնում մինչև 1136 թվականը, որից հետո այդ աշխատությունը շարունակում է Քեսունցի Գրիգոր անունով մի երեց և այն ավարտում 1162 թ. դեպքերով։

Ուռհայեցու աշխատությունը փաստորեն հանդիսանում է Մերձավոր Արևելքի մի շարք երկրների՝ Փոքր Ասիայի, Ասորիքի, Միջագետքի, Հայաստանի և Վրաստանի մասին գրված մի երկասիրություն։

Մատթեոս Ուռհայեցին Լաստիվերցու նման անարգանքի սյունին է գամում հայրենիքի դավաճաններին ու հայկական միասնական պետության դեմ դավեր նյութողներին։ Նրա աշխատությունն ըստ էության մի բողոք է օտար նվաճողների՝ սելջուկ-թուրքերի և խաչակիրների դեմ ի պաշտպանություն հայ ժողովրդի իրավունքների ու պետականության պահպանման։

Սմբատ Գունդստաբլ։ Սմբատ Գունդստաբլը կամ Սպարապետը (1208—1276) մեր երկրորդ աշխարհիկ պատմագիրն է։ Նա հայտնի է ոչ միայն որպես պատմագիր, այլև որպես օրենսդիր և զորավար։ Նրա գրչին են պատկանում «Պատմութիւն յունաց ի

Կոստանդնուպոլիս և հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց» խորագրով պատմագիտական աշխատությունը, «Պատաստանագիրք»-ը, Անտիոքի «Ասիզների» թարգմանությունը և այլ գրվածներ։ Նա իր «Պատմությունը» շարադրելիս հետևել է Մատթեոս Ուռհայեցու մեթոդին, այսինքն՝ կազմել է տարեգրություն։ Աշխատությունն սկսվում է 951 թ. և ավարտվում 1276 թ. դեպքերի նկարագրությամբ։

Սմբատ Գունդստաբլը իր աշխատության մեջ համառոտակի շարադրել է Բյուզանդիայում X դ. վերջին և XI դ. առաջին կեսին տեղի ունեցած դեպքերի, Բագրատունիների թագավորության վերջին շրջանի, սելջուկյան արշավանքների և համեմատաբար ավելի մանրամասն՝ Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը։ Պատմագիրը կանգ է առել գլխավորապես քաղաքական դեպքերի վրա և աչքաթող արել Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական ու կուլտուրական կյանքին վերաբերող հարցերը։ Գունդստաբլը առանձին դոհունակությամբ է պատմում Կիլիկիայի հայկական թագավորության հաստատման մասին՝ որպես հայերի կորցրած պետականության վերականգնման փաստ, և բարձր դնահատում Լևոն II-ի ու Ներսես Լամբրոնացու դերն այդ գործում։ Վերջինս քանակցել է խաչակիրների և բյուզանդական արքունիքի հետ Լևոնին ճանաչելու որպես թագավոր։

Կիրակոս Գանձակեցի։ Գանձակեցին ապրել է XIII դ., մահացել է 1272 թ.։ Նա գրել է «Պատմութիւն Հայոց» աշխատությունը, սկսելով հայերի կողմից քրիստոնեության ընդունումից մինչև իր ապրած ժամանակաշրջանը՝ 1265 թ.։ Աշխատության մեջ համառոտակի շարադրում է IV—XI դդ. պատմությունը, իսկ հետո ավելի մանրամասն տալիս է Հայաստանի վիճակը սելջուկյան էմիրությունների տիրապետության ժամանակ, հայ և վրաց ժողովուրդների մղած համատեղ պայքարը սելջուկյան տիրապետության դեմ, Զաքարյանների իշխանության առաջացումը Հայաստանում և Կիլիկիայի հայկական իշխանության պատմությունը։ Վերջում ավելի հանգամանորեն խոսում է մոնղոլական արշավանքների մասին, նկարագրում է մոնղոլների կատարած ավերածությունները, նրանց վարած քաղաքականությունը, անդրկովկասյան ժողովուրդների համար ստեղծված տնտեսական ու քաղաքական ծանր կացությունը և այդ ժողովուրդների մղած պայքարը մոնղոլական լծից ազատագրվելու համար։

Կիրակոս Գանձակեցու աշխատությունն ունի նաև խոցելի

կողմեր։ Օրինակ, աշխատության մեջ մեծ տեղ է տրված կրոնական-եկեղեցական հարցերին, դավանաբանական վեճերին, ինչպես և մեջ են բերված այնպիսի զրույցներ, որոնք լի են առասպելական հրաշքներով և հանգեցնում են սնոտիապաշտության։

Ստեփանոս Օրբելյան։ Օրբելյանն ապրել է XIII դ. երկրորդ կեսին և մահացել է 1304 թ.։ Եղել է Տաթևի վանքի վանահայրը։ Նա գրել է «Պատմութիւն նահանգին Սիսական» արժեքավոր աշխատությունը, որտեղ տալիս է Սյունյաց նահանգի տեղագրությունը, Սյունյաց ֆեոդալական տան առաջացումը և նրա խաղացած դերը Արշակունյաց թագավորության ժամանակ, քրիստոնեության տարածումը Սյունիքում և, համառոտագրելով, Սյունիքի պատմությունը հասցնում մինչև IX-դ.։ Դրանից հետո ավելի հանգամանորեն պատմում է Սյունյաց իշխանների և Տաթևի վանքի առաջնորդների քաղաքական, տնտեսական և կուլտուրական գործունեության, Սյունյաց թագավորության, Օրբելյան ֆեոդալական տան առաջացման ու գործունեության մասին և աշխատությունն ավարտում է XIII դ. վերջում տեղի ունեցած դեպքերով։ Օրբելյանի աշխատության մեջ հետաքրքիր տեղեկություններ կան Սյունյաց նահանգի տնտեսական կյանքի, առանձնապես գյուղատնտեսության զարգացման, ջրանցքաշինության, սոցիալական հարաբերությունների, դասակարգային հակամարտության խորացման և գյուղացիական ընդվզումների մասին, մի բան, որ առավել արժեքավոր է դարձնում այդ աշխատությունը։

Ստեփանոս Օրբելյանն իր պատմահայեցողությամբ հանդես է գալիս որպես ֆեոդալական դասակարգի գաղափարակիր։

Հիշյալ պատմագիրներից բացի հայտնի են նաև Ուխտանեսը (X դ.), Մովսես Կաղանկատվացին (X դ.), Սամվել Անեցին (XII դ.), Գրիգոր Ակներցին (XIII դ.), Վահրամ Բաբունին (XIII դ.), Վարդան Արևելցին (XIII դ.), Մխիթար Այրիվանեցին (XIII—XIV դդ.), Հեթումը (XIV դ.) և ուրիշներ։

Իրավաբանական գիտությունը

XII դ. սկսած հայ կուլտուրան հարստացավ մի նոր բնագավառով։ Դա գրավոր օրենսդրության ստեղծումն էր, որի առաջին ձեռնարկողը XII դ. առաջին կեսին եղավ Ալավկա սրդի Դավիթը։ Սակայն նրա կազմած դատաստանագիրքը շատ թերի էր և չէր կարող բավարարել հասարակության բարդացած հարաբերությունների հետևանքով առաջացած պահանջները։ Այդ պատճառով դատաստանագրքի ստեղծումը դարձյալ մնում էր որպես անհրաժեշտ գործ, որին XII դ. վերջերին ձեռնամուխ եղավ Մխիթար Գոշը։

Մխիթար Գոշը ծնվել է Գանձակ քաղաքում 1130-ական թթ. և մահացել է 1213 թ. խոր ծերության հասակում։ Նա իր «Դատաստանագիրքը» սկսել է շարադրել 1184 թ. և ավարտել է, հավանաբար, նույն դարի վերջին։ Նրա «Դատաստանագիրքը» բաղկացած է նախադրությունից և եկեղեցական ու աշխարհիկ օրենքների բաժիններից։ Գոշի «Դատաստանագիրքը», մասնավորապես նրա նախադրությունը և աշխարհիկ օրենքների բաժինը, միջնադարյան Հայաստանի գրական խոշորագույն հուշարձաններից է։ Նա մի գանձարան է, որտեղից կարելի է տեղեկություններ քաղել ոչ միայն միջնադարյան Հայաստանում իրավագիտական մտքի պատմության, այլև սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության համար։

Գոշը իր «Դատաստանագիրքը» գրելիս հիմք է ֆեոդալական դասակարգի շահերի պաշտպանության սկզբունքից, սակայն նա միաժամանակ պաշտպանում է նաև պրոգրեսիվ գաղափարներ։ Ամենից առաջ Գոշը հանդես է գալիս որպես կենտրոնացված ուժեղ պետության և օրինականության պաշտպան։ Պահանջելով կառավարող և իշխող դասակարգի ներկայացուցիչներից գործել միայն սահմանված օրենքներով, նա դրանով իսկ ձգտում է շրջանակների մեջ դնել իշխողների իրավունքները և արգելել նրանց կամայականություններն իրավազուրկ մարդկանց նկատմամբ։ Գոշը հայտարարում է՝ «Մարդկային բնությունը արարչից ազատ է ստեղծվել, իսկ ուրիշին ծառայելը առաջ է եկել հողի և ջրի կարիքից»։

Մխիթար Գոշից հետո, XIII դ. մի նոր դատաստանագիրք է գրում Սմբատ Գունդստաբլը, որը մեծ չափով օգտվել է Մխիթար Գոշից և խաչակրաց արշավանքի ժամանակ Միջերկրական ծովի արևելյան ափերին կազմակերպված լատինական իշխանությունների ասիզներից, դրանք հարմարեցնելով Կիլիկիայի հայկական թագավորության պայմաններին ու պահանջներին։ «Դատաստանագրքում» նա մեծ տեղ է տալիս կենտրոնացված պետության շահերի պաշտպանությանը, արհեստագործության ու առևտրի զարգացմանը և օրինականության պահպանմանը։ Բացի «Դատաստանագրքից», Գունդստաբլը լատիներենից հայերեն է թարգմանել Անտիոքի դքսությունում կիրառություն գտած դատական օրենքները և գործածության մեջ դրել Կիլիկիայի հայկական թագավորությունում։ Այդ ասիզների լատիներեն բնագրերը կորել են և մնացել են միայն հայերեն թարգմանությունները։

Գոշի և Գունդստաբլի «Դատաստանագրքերը» հայկական հասարակական մտքի զարգացման մեջ նորություն էին և դրանցով հիմք դրվեց հայկական գրավոր օրենսդրությանը։

Փիլիսոփայություն IX—XIV դդ. առաջընթաց է ապրում նաև հայ փիլիսոփայական միտքը։ Նրա զարգացման մեջ նոր և ուշագրության արժանի երևույթ էր Թոնդրակյան շարժման գաղափարախոսությունը, որի գլխավոր մշակողը եղել է Սըմբատ Զարեհավանցին։ Այդ գաղափարախոսության առանցքային հարցերից մեկը հոգու անմահության և հանդերձյալ կյանքի ժխտումը էր և այս աշխարհի՝ որպես ռեալ իրականության ընդունումը։ Դրանով Թոնդրակյանների փիլիսոփայությունը կանգնում էր աստվածային ուժերի արարչական կարողության մերժման և դեպի պթեիզմ տանող ուղու վրա։ Թոնդրակյանները զարգացնում էին սոցիալական իրավահավասարության գաղափարը։ Նրանք գտնում էին, որ հասարակության մեջ բոլոր մարդիկ պետք է լինեն իրավահավասար։ Նրանք պաշտպանում ու քարոզում էին նաև մարդու ակտիվ դերը հասարակական կյանքում։ Սմբատ Զարեհավանցու և նրա հետևորդների քարոզած գաղափարները Հայաստանում հիմք էին դնում փիլիսոփայական դեմոկրատական ուղղությանը, որը տանում էր դեպի մատերիալիզմ։ Դա IX—XIV դդ. հայ հասարակական մտքի մեջ ամենաառաջավոր ուղղությունն էր։

Փիլիսոփայական գիտության մեջ Թոնդրակյանների գաղափարախոսական հակառակորդներն են եղել քրիստոնեական եկեղեցու և ֆեոդալական դասակարգի ներկայացուցիչները։ Նրանք բոլորն էլ իրենց փիլիսոփայական աշխարհայեցողությամբ հիմնականում հարել են իդեալիզմին։ Սակայն նրանցից ոմանք որոշ հարցերում կանգնած են եղել առաջավոր գաղափարների պաշտպանության դիրքերում և շատ մեծ դեր են խաղացել հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում։ Այդպիսի մտածողներից էր Գրիգոր Մագիստրոսը (990—1058), Պահլավունյաց ֆեոդալական տան խոշորագույն ներկայացուցիչներից մեկը։ Նա խորամուխ է եղել փիլիսոփայության, գրականության, բնական գիտությունների և աստվածաբանության մեջ։ Գրիգոր Մագիստրոսը հունարենից հայերեն է թարգմանել Պլատոնի «Տիմէոս», «Փեդովնա» և Եվկլիդեսի «Երկրաչափություն» աշխատությունները, գրել է հերակլիտության մեկնություն, ինչպես և բազմաթիվ նամակներ։

XII դ. հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում աչքի է ընկել Հովհաննես Իմաստասերը (1045—1129), որը, հետևելով Անանիա Շիրակացուն, առաջ է քաշել այն միտքը, թե գիտության հիմքը փորձն է և գիտության մեջ պետք է ղեկավարվել ոչ միայն կրոնական-եկեղեցական դոգմաներով ու գրականությամբ, այլև «արտաքին», այսինքն՝ հին հունական և այլ աշխարհիկ գի-

տության տվյալներով։ Այնուհետև, Մխիթար Հերացին (XII դ.), որն իր «Ջերմանց մխիթարութիւն» բժշկագիտական և այլ գրվածքներում առաջ է քաշել օբյեկտիվ օրինաչափության, հոգու և մատերիայի հարաբերության, պատճառին և հետևանքին վերաբերող հարցերը, զարգացրել է իր ժամանակի համար համարձակ և պրոգրեսիվ մտքեր։

Այդ նույն ժամանակաշրջանում իր փիլիսոփայական հայացքներով հայտնի է դառնում նաև Մխիթար Գոշը, որը «Դատաստանագրքում» և իր մշակած առակներում արծարծում է օրենքի առ կենտրոնացված պետության անհրաժեշտությունը, սոցիալական անհավասարության և իր ժամանակի սոցիալական հիմնական խավերի անտագոնիստական հարաբերությունների հարցերը, դրանք առանձին դեպքերում մեկնաբանում է նկեղեցու քարոզած պաղատարներին հակառակ իմաստով։

XIII դ. ասպարեզ են դալիս արդեն պրոֆեսիոնալ փիլիսոփաներ, որոնք գրել են տրակտատներ և հետևել փիլիսոփայական առանձին ուղղության՝ հատկապես նոմինալիզմին։ Դրանցից հիշատակության արժանի են Վահրամ Բաբունին և Հովհաննես Երզնկացին։ Բաբունին ապրել է XIII դարում, եղել է Լևոն III-ի քահանայապետը։ Նա թողել է գրական մի շարք աշխատություններ։

Իր աշխատություններում Բաբունին քարոզում է, որ ռեալ աշխարհը գոյություն ունի անկախ մարդկանց գիտակցությունից որ մարդիկ աշխարհի և իրականության մասին գաղափար են կազմում իրենց զգայարանների միջոցով։ Նա միաժամանակ գտնում է, որ չի կարող գոյություն ունենալ ընդհանուր ճանաչողություն անկախ առանձին առարկաներից և պաշտպանում է Արիստոտելի մատերիալիստական ըմբռնումները արտաքինը և իմացությանը վերաբերող հարցերում։

Հովհաննես Երզնկացին (1250—1325/6), բացի բանաստեղծություններից, գրել է նաև գիտական փիլիսոփայական երկեր՝ «Դիոնիսիոս Թրակացու Քերականության մեկնությունը», «Ծաղազս երկնային շարժմանց» և այլն։ Այդ աշխատություններում նա զարգացնում է այն տեսակետը, թե մարմինը և հոգին հավասարազոր են, թե մարդը չի կարող անտեսել մարմնի պահանջները և մտածել միայն հոգու մասին, փակել իր հինգ զգայարանները արտաքին աշխարհի հանդեպ և այլն։ Երզնկացին միաժամանակ գտնում է, որ բնության երևույթների մեջ կա օրինաչափություն և պատճառականություն։

XIV դ. որպես պրոֆեսիոնալ փիլիսոփաներ հանդես են եկել

նաև Հովհաննես Որոտնեցին և նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին։ Որոտնեցու (1315—1388) գրական ժառանգության մեջ ուշադրության արժանի են Արիստոտելի «Կատեգորիայի» և մյուս աշխատությունների մեկնությունը, Պորփյուրի և Փիլոնի փիլիսոփայական աշխատությունների վերլուծությունը և այլն։ Որոտնեցին քննարկել է հատկապես տրամաբանության և ճանաչողության հարցերը նոմինալիզմի տեսանկյունից։ Նա զարգացրել է այն տեսակետը, թե զգայության ենթակա իրը գոյություն ունի անկախ այն մարմնից, որն ընկալում է այն, մտածողությունը որպես հայելի տրպավորում է իր մեջ իրի նմանությունը։ Որոտնեցին առանձին հրեվույթներին տալիս է մատերիալիստական մեկնաբանություն, որը հետագայում զարգացնում է նրա աշակերտ Տաթևացին։

Գրիգոր Տաթևացին (1340—1410) թողել է հարուստ գրական ժառանգություն, որի մեջ նշանավոր են՝ «Գիրք հարցմանց», «Ամոան հատոր», «Զմոան հատոր», Արիստոտելի «Լոգիկայի», Պլատոնի, Պորփյուրի և Փիլոնի փիլիսոփայական գրվածքների մեկնաբանությունները և այլն։ Տաթևացին քննարկում է հատկապես տրամաբանության, պատահականության և անհրաժեշտության, պատճառականության ու նպատակահարմարության վերաբերյալ հարցերը, որոնց լուսաբանման ժամանակ հիմնականում ելնում է սխոլաստիկայի և աստվածաբանության դիրքերից, բայց միաժամանակ առանձին, հատկապես ընության վերաբերող երևույթների մեկնաբանման դեպքում հանդես է բերում մատերիալիստական մոտեցում։ Նա գտնում է, որ առաջնայինը իրական աշխարհն է, իսկ մտածողությունը հետևում է իրական աշխարհին, որ մնայունը չի կարող բխել ոչ մնայունից, ինչպես, օրինակ, ոտքը չի բխում իր հետքից, այլ ոտքի հետքն է բխում ոտքից, կամ մարմինը հետևանք չէ իր ստվերի, այլ ստվերն է մարմնի հետևանքը։ IX—XIV դդ. փիլիսոփայական գիտության զարգացումը Հայաստանում, բացառությամբ թոնդրակյանների փիլիսոփայական ուղղության, թեև ընթանում էր սխոլաստիկայի և թեոլոգիայի գերիշխող ազդեցության ներքո, բայց և այնպես նրանում տիրապետող ուղղությունը նոմինալիզմն էր, որ դրսևորում էր մատերիալիզմի տարրեր և խոշոր առաջընթաց էր։

Բնական գիտությունները

Հայաստանում վերելք ապրեցին նաև բնական գիտությունները՝ մաթեմատիկան, աստղաբաշխությունը, բնագիտությունը, ալքիմիան և այլն։ Դեռևս XI դ. առաջին կեսին Գրիգոր Մագիստրոսն իր նամակներում պարզաբանում էր կենդանաբանությանը վերա-

բնող հարցեր, որոնք ցույց են տալիս, որ նա հանգամանորեն զբաղվում էր կենդանիների օրգանիզմի ուսումնասիրությամբ և բժշկությամբ։ Նույն դարի վերջին և XII դ. առաջին քառորդում բնական գիտությունների ուսումնասիրության բնագավառում հռչակ էր ձեռք բերել Հովհաննես Իմաստասերը։ Նա դասավանդել է Հաղպատի և Անի քաղաքի դպրոցներում, գրել է մաթեմատիկական, աստղաբաշխական ուսումնասիրություններ, որոնցից մեզ հասել են «Յաղագս անկիւնաւոր թուոց»-ը, տոմարական տեքստեր և այլ գրվածքներ։ Նա կարգավորել է հայկական անշարժ տոմարը։

XII դ. երկրորդ կեսին բնագիտության բնագավառում մեծ անուն է հանում Մխիթար Հերացին։ Նա մասնագիտությամբ բժիշկ էր, ուներ բժշկապետի կոչում։ 1184 թ. գրել է բժշկագիտական մի աշխատություն «Ջերմանց մխիթարութիւն» վերնագրով։ Այդ գիրքը նա շարադրել է ժամանակի խոսակցական հայերենով կամ, ինչպես ինքն է ասում, «դեղջուկ և արձակ բարբառով, զի դիւրահաս լիցի ամենայն ընթերցողաց»։ Մխիթար Հերացին դարդացնում է այն միտքը, թե հիվանդ մարդու բարձր ջերմությունը հետևանք է մարմնում առաջացած այրման, փտման, որ հիվանդությունը կապ ունի մարդու մարմնի ներսում տեղի ունեցող փոփոխության և հենց այդ այրման հետ։ Այդ միտքը նորություն էր միջնադարյան բնագիտության մեջ։

Մխիթար Հերացուց հետո բնագիտության ասպարեզում հանդես են եկել նոր մարդիկ։ XV դարի բնագետ-բժիշկ Ամիրդովլաթ Ամասացին իր «Անգիտաց ասելեաց» գրքում նշում է, որ իրենից առաջ եղել են անվանի բժիշկներ՝ Ահարոնը, սրա որդի Ստեփանոսը և նրանց տոհմից Ճուշին Հակոբը, Վահրամը և այլն, որոնք «շատ գրեանք շիներ էին»։ Մեզ է հասել Ստեփանոսի «Մաղիկ» վերնագրով աշխատությունը և Գրիգորիսի բժշկարանը՝ «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» վերնագրով։

Ինչպես բնական, այնպես էլ հասարակական գիտությունների զարդացմանն օժանդակել են նաև օտար լեզուներից կատարված հայերեն թարգմանությունները, որոնցից մի քանիսի բնագրերի անհայտացման պատճառով հայերեն թարգմանությունները ստացել են բնագրային նշանակություն։

2. ԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ճարտարապետություն և քանդակագործություն

Ճարտարապետությունը հայ միջնադարյան արվեստի մեջ առաջնակարգ տեղ է գրավում։ Արվեստի այդ ճյուղը արաբական տիրապետության ժամանակ զգալի չափով ետ էր մընացել։ Սակայն, սկսած IX դ. վերջից և X դ. սկզբից այն ընդունեց զարգացման լայն թափ ու ծավալ։

X դ. առաջին կեսին Վասպուրականում բարեկարգվեցին Վան և Ոստան քաղաքները, Աղթամար կղզում հիմնվեց մի նոր քաղաք, ուր կառուցվեցին ճարտարապետական գարձարվեստ հուշարձաններ, որոնցից առանձնապես փառահեղ են եղել արքայական տաճարը, կղզին ծովից անջատող ու ծովախորշ առաջացնող պարիսպը և եկեղեցու շենքը։ Աղթամար կղզում կառուցված այդ շենքերը եղել են հայ միջնադարյան ճարտարապետական արվեստի պարծանքը։ X դ. երկրորդ կեսին ճարտարապետության զարգացման կենտրոն դարձավ Շիրակը։ Այստեղ հիմնվեց և արագ վերելք ապրեց Անին, որը ճարտարապետական արվեստի մի գեղեցիկ համայնապատկեր էր ներկայացնում։ Այնտեղ կառուցվել են թագավորական բազմահարկ պալատ՝ օժանդակ շենքերով, քարվանսարաներ, կամուրջ Արուրյան գետի վրա, քաղաքի պարիսպները, Կաթողիկե եկեղեցին, Գագկաշեն եկեղեցին ու բազմաթիվ այլ շենքեր, որոնք ճարտարապետության լավագույն նմուշներ են։ Անիում կառուցվել է նաև ջրմուղ, որը բացառիկ երևույթ էր միջնադարյան Հայաստանի քաղաքների համար։

XI դ. 50-ական թթ. մինչև XII դ. կեսը սելջուկյան կործանարար արշավանքների ու նրանց տիրապետության ժամանակ Հայաստանում շինարարությունը առժամանակ կանգ առավ, սակայն XII դ. երկրորդ և XIII դ. առաջին կեսերին, Զաքարյանների իշխանության օրոք, նորից շինարարական եռուզեռ սկսվեց։ Գուգարքում, Շիրակում, Արարատյան դաշտում և նրան հարող գավառներում, Սյունիքում և այլ շրջաններում կառուցվեցին քաղաքացիական և եկեղեցական շենքեր, բերդ-ամրոցներ, կամուրջներ, ինչպես, օրինակ, Ամբերդի ամրոցը, Սանահնի կամուրջը, Թալինի և Սելիմի լեռնանցքի իշխան-քարվանսարաները, Հաղպատի, Սանահնի, Կոշավանքի, Կեչառիսի, Օհանավանքի, Սաղմոսավանքի, Գեղարդի, Տաթևի եկեղեցական շենքերը և այլն։ Ճարտարապետական տեսակետից առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում Գեղարդի քարափոր

մատուռներն ու գավիթը, որոնք փորված են ժայռի մեջ և հիացմունք են առաջացնում։

Ճարտարապետությանը զուգընթաց կատարելության է հասել նաև քանդակագործությունը։ Հայաստանում արվեստի այդ ճյուղը զուգորդվել է ճարտարապետությանը՝ շինքերը զարդարվել են հոյակապ քանդակներով։ Քանդակագործական արվեստի նմուշներ կան այդ շենքերի պատերի վրա՝ մարդկանց, կենդանիների, գյուղատնտեսական մշակույթների և զանազան առարկաների պատկերումներով։ Քանդակվել է նույնիսկ գյուղատնտեսական որևէ կուլտուրայի մշակման ամբողջ ընթացքը։ Այդպիսին է, օրինակ, Աղթամարի եկեղեցու քանդակների մի մասը։ Այնտեղ պատկերված է այգեգործության, ավելի ճիշտ՝ խաղողի մշակության ամբողջ ընթացքը՝ սկսած որթի տնկումից, մշակումից, այգեկութից, վերջացրած գինու մշակությամբ։ Հոյակապ քանդակներ ունեն Գեղարդի, Անիի, Սաղկաձորի, Սանահնի և այլ վայրերում կառուցված շինքերը։ Քանդակագործական արվեստի տեսակետից աչքի են ընկնում նաև խաչքարերը և հուշարձան-կոթողները։ Զարդաքանդակները հաճելի տեսք են տվել շենքերին, գեղեցկացրել դրանք և արտահայտիչ դարձրել նրանց ճարտարապետական ոճը։

X—XIV դդ. է՛լ ավելի հղկվեց ու կատարելագործվեց հայ ճարտարապետական արվեստը։ Հայերը, Մերձավոր Արևելքի ժողովուրդների ճարտարապետությունից վերցնելով և ստեղծագործորեն յուրացնելով նրա որոշ ձևերը, ստեղծեցին իրենց ինքնատիպ ճարտարապետական ոճը, որն իր հերթին ազդեցություն է թողել այլ ժողովուրդների ու երկրների ճարտարապետության վրա։ Դրա լավագույն ապացույցն են բյուզանդական և գոթական ճարտարապետության մեջ եղած հայկական ճարտարապետական ոճի տարրերը։ Մատենագրության մեջ և արձանագրություններում հաճախ հիշատակվում են այն մարդկանց անունները, ովքեր հանդիսացել են միջնադարյան Հայաստանի ճարտարապետական և քանդակագործական արվեստի կերտողները։ Վասպուրականի, հատկապես Աղթամարի հուշարձանների հեղինակն էր Մանվել ճարտարապետը՝ «այր լի իմաստութեամբ և զորաւոր» իր գործում, «ճարտարապետ հանճարեղ»։ Անիում X դ. վերջին և XI դ. առաջին քառորդում հրաշակված ճարտարապետ էր Տրդատը։ Նրա ստեղծագործություններն են Անիի և Շիրակի շատ հուշարձաններ, Կոստանդնուպոլսի հռչակավոր Սոֆիայի եկեղեցու վերակառուցված դմբեթը, որն ավելի գեղեցիկ է եղել և «սպայծառ, քան զառաջինն»։ X—XI դդ. որպես ճարտարապետներ ու քանդակագործներ հիշատակվում են Սամե-

հան արեղան, Սարգիսը, Վահան քահանան, XII դ.՝ Հեսուն, Գորգ Ճոնակը, XIII դ.՝ Անդրիասը Խծկոնքում, Գալծակ վարպետը Գեղարդում, Ֆրերը (Կարին քաղաքից) Հոռոմոսում, Հովհաննես քարադործը Գոշավանքում և շատ ուրիշներ, որոնց անունները չեն պահպանվել։ Այդ ճարտարապետ-քանդակագործները մեծ մասամբ եղել են աշխարհիկ մարդիկ և նրանք են կերտել IX—XIV դդ. հայկական ճարտարապետական արվեստը, որն արժանի տեղ է գրավում համաշխարհային ճարտարապետության պատմության մեջ։

Նկարչական արվեստը

Միջնադարյան Հայաստանում արվեստի ծաղկած ճյուղերից մեկն էլ մանրանկարչությունն էր, որը գերազանցորեն ծառայել է գրքի ձևավորմանն ու նկարազարդմանը։ Մեզ հասած ավելի քան 25 հազար հայկական ձեռագրերի զգալի մասը մանրանկարներ ունի։ Նկարազարդ գիրք ունենալու պահանջը առավել լայն չափեր է ընդունել, քանի որ քաղաքային կյանքի և առևտրական հարաբերությունների զարգացման շնորհիվ մարդկանց ճաշակը և կուլտուրական մակարդակն ավելի էր բարձրացել։ Հենց դա էլ նկարչական արվեստի զարգացման համար լայն ասպարեզ ստեղծեց։ Առաջ եկան ոչ միայն բազմաթիվ գծագրողներ և գիրք նախշողներ, այլև տաղանդավոր նկարիչներ, որոնցից շատերի անունները հայտնի են։

Մանրանկարչական արվեստի հնագույն օրինակներ կան մեզ հասած մի ավետարանում, որ գրվել է 887 թ., Մլքե թագուհու 902 թ. Ավետարանում, ինչպես և 989, 1033, 1038 թթ. և հետագայում նկարազարդված բազմաթիվ այլ գրքերում։ Արժեքավոր գործեր են թողել XIII դ. առաջին կեսի նկարիչ Մարգարը (հավանաբար ապրել է Անիում), որի վրձնին են պատկանում 1211 թ. մի ձեռագրի նկարները, ապա Վարդան նկարիչը Կիլիկիայում և Գրիգորը, որի գործերը դետեղված են 1232 թ. Սյունիքում գրված մի ավետարանում։ XIII դ. երկրորդ կեսին ասպարեզ են գալիս հայկական մանրանկարչության խոշորագույն ներկայացուցիչները՝ Թորոս Ռոսլինը և Սարգիս Պիծակը։ Սրանք երկուսն էլ ստեղծագործել են Կիլիկիայում և նկարազարդել շատ գրքեր, որոնց մանրանկարները դիտողին հիացմունք են պատճառում։ Թորոս Ռոսլինի «Ճաշոց» գրքի նկարները մանրանկարչական արվեստի կատարելության հասած գործեր են։ XIV դ. առաջին կեսին հիշատակվում են Սիմեոն նկարիչը Նախիջևանում, Օգսենը՝ Կիլիկիայում, Թորոս Տարոնեցին և Մոմիկը՝ Գլաձորում և ուրիշներ, Ռուստակես նկարիչը Բաղեշում և Մանվելն ու Մերունը։

Մանրանկարչությունից բացի, IX—XIV դդ. Հայաստանում և

Կիլիկիայի հայկական թագավորությունում զարգացել է որմնանկարչությունը։ Արվեստի այս ճյուղը սերտորեն կապված է եղել շենքերի նկարազարդման հետ։ Դահլիճները, եկեղեցիները, ֆեոդալական պալատները և այլ շենքեր ներսից հաճախ զարդարվել են նկարներով։ Որմնանկարներով զարդարված հուշարձանների թվին են պատկանում Աղթամարի Արծրունյաց թագավորական պալատը, որի նկարագիրը թողել է Թովմա Արծրունին, Անիի թագավորական և իշխանական պալատները, Փրկչի ու Տիրան Հոնենցի եկեղեցիները և այլն։ Հայկական միջնադարյան նկարչական արվեստի մեջ գոյություն է ունեցել երկու ուղղություն, որոնց ներկայացուցիչները իրարից տարբերվել են իրենց ընտրած թեմատիկայով, կյանքը դրսևորելու և ըմբռնելու մտահղացումներով և կատարման տեխնիկայով։ Այդ ուղղություններից մեկը եղել է կրոնական, պահպանողական, իսկ մյուսը՝ համեմատաբար ավելի աշխարհիկ, որին սնունդ են տվել զարդացող քաղաքային կյանքը և աշխատավոր խավերի պայքարը։ Առաջին ուղղությանը պատկանող նկարիչները իրենց թեմատիկան դարձրել են կրոնի պատմության մեջ հիշատակվող դեպքերն ու գործող անձերը և, ղեկավարվելով քրիստոնեական եկեղեցու մշակած կանոններով, կազմել են տվյալ գիրքը զարդարող նկարների կոմպոզիցիաներ։ Երկրորդ ուղղությանը հարող նկարիչները մեծ մասամբ իրենց թեմատիկան վերցրել են աշխարհիկ կյանքից՝ կենցաղային էպիզոդներ, մարդկանց ըզբաղմունքը բնորոշող դեպքեր և նույնիսկ հասարակության աղքատ խավի կյանքը ներկայացնող պատկերներ։

Հայ նկարիչներն ստեղծել են հոյակապ կոմպոզիցիաներ, վարպետորեն կիրառել գույների ներդաշնակություն, կարողացել են նկարների իմաստը պարզ ու հասկանալի դարձնել առաջին իսկ հայացքից, նրանց տալ իսկ արտահայտչականություն։ Նրանք օգտագործել են նաև այնպիսի գույներ, որոնք դարերի ընթացքում չեն կորցրել իրենց թարմությունը, չեն խունացել և գժգունացել։ Հայկական մանրանկարչությունը, ինչպես հայկական ճարտարապետությունը, իր նշանակությամբ և գեղարվեստական արժանիքներով դուրս է եկել ազգային շրջանակներից և միջազգային արվեստի պատմության մեջ գրավում է իր արժանի տեղը։

Թատրոնը

IX—XIV դդ. առանձին թատերական հաստատություններ մասին մեզ տեղեկություններ չեն հասել, սակայն մատենագրության մեջ եղած անուղղակի վկայությունները և մանրանկարչության առանձին պատկերներ վկայում են, որ Հայաստանում թատրոնը շարու-

նակել է իր զարգացումը և լայն տարածում է ստացել։ IX—XIV դդ. ձեռագրերում կան նկարներ, որոնք պատկերում են ներկայացման առանձին տեսարաններ։

Գրիգոր Մագիստրոսի վկայությամբ, թատերական ներկայացումներ դիտելու է գնացել նաև բնակչության ստորին խավը և հրճվանքով ընդունել հասարակական կյանքի արատավոր երևույթների մերկացումը դերակատարների կողմից։ X դ. դործիչ Խոսրով Անձևացին (Գրիգոր Նարեկացու հայրը) հանցանք է համարել խաղարան, թատրոն գնալը, որովհետև այդ վայրերում իբր անվայելուչ և այլասերող ներկայացումներ են բեմադրել, իսկ Դավիթ Մաշկևորը (XII դ.) թատրոն համախելը դասել է կրոնական մեղքերի թվին։

Վերոհիշյալ փաստերը հաստատում են, որ IX—XIV դդ. Հայաստանում զարգացել է նաև թատերական արվեստը։ Հավանաբար մեծ մասամբ կատակերդային ներկայացումներ են բեմադրվել։ Դերասանները՝ կատակերդակները, ծաղրածուները, պարուհիները, գուսանները ներկայացումների ժամանակ հագել են դիմակ և հատուկ թատերական զգեստ։ Դիմակները հաճախ պատկերել են կենդանիների, թռչունների կամ մարդկանց։ Ներկայացումներին ուղեկցել են երգն ու պարը, որոնք առավել հրապուրիչ և ժողովրդական են դարձրել թատերական արվեստը։

Երաժշտությունը

Թատերական արվեստին զուգընթաց մշակվել և զարգացել է նաև երաժշտությունը։ Դեռևս հին ժամանակներից հայտնի են եղել դողթան երգիչները, որոնք հիշյալ դարերում նույնպես հանդիսացել են հայկական ժողովրդական երգի ու երաժշտության մշակողներ և կերտողներ։ Գուսաններն իրենց երգերում պախարակում էին հասարակական կյանքում նկած այլանդակությունները, գովերգում լավը, քաջագործությունը, հերոսությունը և արտահայտում ժողովրդի ցավն ու վիշտը, ուրախությունն ու սրտմությունը։ Գուսանները և՛ երգում էին, և՛ պատմում։ Բացի գուսանական ժողովրդական երաժշտությունից, IX—XIV դդ. առավել լայն չափերով մշակվել ու զարգացել է նաև հայկական եկեղեցական երաժշտությունը։ Հոգևորականությունը ժողովրդին թատերական ներկայացումներից հեռու պահելու, դեպի եկեղեցին հետաքրքրություն և ձգտում առաջացնելու նպատակով ստիպված է լինում եկեղեցական արարողություններին տալ թատերական հանդիսավորություն և ժամերգությունը կատարել հոգեզմայլ երաժշտության տակ։ Դրա համար հորինվել են եկեղեցական շատ երգեր, որոնք իրենց մեղեդիներով և մշակման կատարելությամբ երաժշտական արվեստի բարձր նմուշներ են։

Եկեղեցական երաժշտություն հորինողներն օգտվել են ժողովրդական երաժշտությունից և դրա շնորհիվ եկեղեցական երաժշտությունը ավելի դյուրըմբռնելի է դարձել ժողովրդի համար։ Դեռևս VIII դ. հայերն ստեղծել են յուրատեսակ նոտաներ, որոնք կոչվել են խազեր։ Մեզ հասել են խազերով ձայնագրված շատ ձեռագրեր։

Վերածննդի տարրերը հայկական մշակույթի մեջ

IX—XIV դդ. Հայաստանում և Կիլիկիայում ինչպես երկրի սոցիալ-տնտեսական, այնպես էլ մտավոր կյանքում առաջացան մի շարք նոր երևույթներ, որոնք իրենց բնույթով և բովանդակությամբ հիշեցնում էին XIV—XVI դդ. Եվրոպայում տեղի ունեցած Վերածնունդը։ Վերջինս բնութագրվում է որպես եվրոպական ժողովուրդների կյանքում տնտեսության, արտադրության և մտավոր մշակույթի զարգացման նոր էտապ, որը նշանավորում է անցումը ֆեոդալիզմից դեպի բուրժուական հասարակարգ։ Հիշատակված երևույթը նվազ կամ առավել չափով դրսևորվել է նաև հայ իրականության թե՛ տնտեսական, թե՛ մտավոր կյանքի բնագավառներում։

IX—XI Հայաստանում, իսկ XII—XIV դդ. և՛ Հայաստանում և՛, առավելապես, Կիլիկիայի հայկական թագավորությունում այդ փոփոխությունների խորացումն ու ծավալումը ստեղծել էին ֆեոդալիզմի քայքայման և նոր հարաբերությունների սաղմնավորման ու զարգացման նախադրյալներ, որոնք մարդկանց մեջ սնուցում և առաջացնում էին Վերածնությանը հատուկ նոր գաղափարներ և հասկացողություններ հասարակական և բնական երևույթների մասին։

Այդ փոփոխությունների հետևանքներից մեկը դասակարգային պայքարի սրվելն էր, որի բնորոշ օրինակն է շուրջ երկու հարյուր տարի տևող Թոնդրակյան հակաֆեոդալական շարժումը՝ իր հեղափոխական աշխարհայեցողությամբ։ Այդ շարժման գաղափարախոսությունն արտահայտել է ոչ միայն դյուղացիության, այլև քաղաքային դասի ձգտումներն ու իղձերը, որոնք իրենց ամբողջ էությամբ հակաֆեոդալական բնույթ ունեին։ Մարդասիրական գաղափարների դրսևորումը Հայաստանում ցայտուն կերպով երևում է «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսում։ Նրա հերոսները անձնվիրաբար պայքարում են մարդկանց բարօրության համար, հոգատար են դեպի մարդը և կռվում են մարդկանց չարիք պատճառող տարրերի դեմ։

Վերածնության դարաշրջանի բնորոշ գաղափարներից մեկն էլ

կրոնական դոգմաների ու ասկետիզմի ժխտումն էր և աշխարհիկ կյանքի քարոզը։ Հայաստանում այդ դրսևորվել է ինչպես սոցիալական շարժումների դաղափարախոսության, այնպես էլ բանահյուսության, գրականության և արվեստի մեջ։ Այսպես, թոնդրակյանները ժխտում էին կրոնական բոլոր ծիսակատարությունները, առակներում ծաղրվում էին հոգևորականությունը, եկեղեցին և նրանց քարոզած սկզբունքները։ Ֆրիկի «Դանդատ» և «Ընդդեմ ֆալաքին» ոտանավորները մի հուժկու ընդվզում էին կրոնի և ճակատագրի, այլ կերպ ասած՝ աստծո դեմ։ Նարեկացու բանաստեղծություններում գովերգվում էին բնությունը, մարդը, սերը։ Նրա ոտանավորներից մեկում լայնաթիկունք, ահեղադոշ, հաստաբազուկ մարդն էր շարժման մեջ դնում իրերը և իշխում։ Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմում և Ֆրիկի «Դանդատում» հայրենասիրության հզոր ձայնն էր հնչում և այլն։

Աշխարհիկ կյանքի ձգտումը իր արտահայտությունն էր գտել նաև արվեստի մեջ։ Շինարները քանդակազարդում էին աշխարհիկ կյանքից վերցրած պատկերներով՝ ընտանի կենդանիներ, դյուղատնտեսական կուլտուրաներ և դյուղատնտեսական աշխատանքի զանազան պրոցեսներ պատկերող գեղեցիկ, բարձրարվեստ բարելիեֆներով։ Այդ նույն երևույթը արտահայտվում էր նաև մանրանկարչության ու որմնանկարչության մեջ։ Այստեղ էլ աշխարհիկ մոտիվներն իրենց համար ճանապարհ էին հարթում և առաջ ընթանում։ Որպես օրինակ հիշատակելու արժանի են Աղթամար կղզու եկեղեցու և արքայական պալատի, Անիի, Գառնիի, Հաղպատի, Սանահնի հուշարձանների քանդակները, Աղթամարի թագավորական պալատի որմնանկարները, Թորոս Ռոսլինի, Սարգիս Պիծակի և Ծերունի նկարները։

Հայաստանում կրոնական դոգմաների քննադատությանն ու ժխտմանը, հումանիստական դաղափարների քարոզին ու աշխարհիկ կյանքի ձգտումին ուղեկցում էին նաև մտածողության ազատությունը դիտության բնագավառում, ինչպես և բնական դիտությունների զարգացումը։ Հայկական դպրոցներում սկսում են ուսումնասիրել նաև բազմաթիվ այլ առարկաներ, այդ թվում՝ պատմություն, աշխարհագրություն, աստղագիտություն և այլն։ Առանձնակի ուշադրություն էր դարձվում բնական դիտությունների ուսումնասիրությանը։ Դրա հետևանքը լինում է այն, որ Հայաստանում զարդանում էր աստղաբաշխությունը, տոմարագիտությունը, մաթեմատիկան, բնագիտությունը՝ հատկապես բժշկությունը։ Իսկ այդպիսի գիտությունների զարգացման պահանջը առնչվում էր երկրում

աղմնավորվող ու զարգացող նոր հարաբերությունների հետ։ Այս բոլորի հետ միասին IX—XIV դդ. գրողներից ու գիտնականներից շատերը (Ֆրիկ, Մխիթար Հերացի և ուրիշներ) իրենց գործերը գրում էին ժողովրդի խոսակցական լեզվով, որպեսզի մարդկանց մատչելի, հասկանալի դարձնեն իրենց գիտելիքներն ու գաղափարները, այլ կերպ ասած՝ տեղի էր ունենում նաև գրական լեզվի ազատարհականացում։

Հայ իրականության մեջ առկա վերոհիշյալ երևույթները յուրահատուկ չեն ֆեոդալական հարաբերություններին և իրենց էությամբ հակաֆեոդալական են։ Դա նշանակում է, որ Հայաստանն ու Կիլիկիայի հայկական թագավորությունը նույնպես ապրել են մի շրջան, երբ առկա են եղել վերածնության բնորոշ երևույթներ թե՛ տնտեսության և թե՛ կուլտուրայի բնագավառներում։ Այդ շրջանը ընդգրկել է IX—XIV դդ.։ Այնուամենայնիվ, հայ իրականության մեջ վերածնության դարաշրջանին բնորոշ երևույթները չխորացան և չհասան այն մակարդակին, որին հասավ Եվրոպան XV—XVI դդ., կանգ առան իրենց զարգացման նախնական փուլում։ Ժողովուրդը կորցրեց իր անկախությունը, սելջուկյան արշավանքները կասեցրին տնտեսական կյանքի զարգացումը, իսկ մոնղոլական արշավանքներն ու տիրապետությունը Հայաստանում՝ երկիրը տարան դեպի տնտեսական քայքայում, արգելակելով հասարակական կյանքի առաջընթացը։

ԳԼՈՒԽ XXIX

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՃԱՑՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Երկրի վիճակը և մոնղոլական առաջին արշավանքը

Ջաքարյանները չկարողացան ամբողջ Հայաստանը միավորել իրենց տիրապետության ներքո և ստեղծել համահայկական պետականություն։ XIII դ. առաջին կեսին Հայաստանի հարավային շրջանները՝ Վասպուրականը, Մոկսը, Աղձնիքը և Տուրուբերանի հարավային գավառները մնացին Եգիպտոսի էյուբյան սուլթանության, իսկ արևմտյան շրջանները՝ Բարձր Հայքի արևմտյան մասերը, Երզնկան և Մուշից աշխարհն ամբողջությամբ անցան Իկոնիայի սուլթանությանը։

Երկրի քաղաքական և տերիտորիալ մասնատվածությունը մեծապես վնասում էր հայ ազգաբնակչության պաշտպանունակությանը ու զրկում նրան իր ուժերը համախմբելու և Հայաստան ներխուժող օտար զավթիչներին միասնաբար դիմադրելու հնարավորությունից։ Այդ առումով ևս դժվարանում էր նաև այն պատճառով, որ հազարավոր հայեր հեռանում էին իրենց հայրենիքից, գնում այլ երկրներ։

Մոնղոլները բնակվում էին Սիբիրի և Չինաստանի միջև ընկած տափաստաններում։ Նրանք 1206 թ. կայացած ժողովում իրենց ցեղապետներից մեկին՝ Տեմուչինին անանաչեցին որպես համամոնղոլական խաքան և նրան վերանվանեցին Չինգիզ խան և հիմք դրեցին մոնղոլական միացյալ պետության։ Այդ պետությունը իր կազմավորման առաջին իսկ տարիներից սկսեց նվաճողական քաղաքականություն վարել։ Չինգիզ խանի զորքերը 1219—1220 թթ. նվաճեցին Միջին Ասիան և Պարսկաստանի հյուսիսային մասը։ Ջեբե նուինը և Սուբատա բահադուրը մի ջոկատի

գլուխ անցած 1220 թ. աշնանը Ատրպատականի վրայով մտան Աղվանք, բանակեցին Մուղանի դաշտում և սկսեցին հարձակումներ գործել վրացական պետության արևելյան շրջանների վրա։

Վրաց թագավոր Գեորգի Լաշան և Զաքարյան Իվանե սպարապետը, կարգի բերելով հայ-վրացական բանակը, դուրս եկան մոնղոլների դեմ։ Ճակատամարտը տեղի ունեցավ 1220—1221 թթ. ձմռանը, Կոտման գետի ափին։ Սկզբում վրացիներին և հայերին հաջողվեց լուրջ հարված հասցնել մոնղոլներին և ետ մղել նրանց, բայց վերջում թաքստոցներից դուրս եկած մոնղոլական ջոկատները հակահարձակման անցնելով պարտության մատնեցին վրացական ու հայկական զորքերին։ Դրանից հետո մոնղոլները դադարեցրին հետապնդումը և Շիրվանով անցան Հյուսիսային Կովկաս։ Դա մոնղոլ-թաթարների առաջին արշավանքն էր դեպի Անդրկովկաս։

Ջալալեդդինի ասպատակությունները Հայաստանում

Մոնղոլների կողմից միջինասիական երկրների նվաճման ժամանակ Խորեզմի թագաժառանգ Ջալալեդդինը հեռացավ երկրից և գնաց Հնդկաստան։ Սակայն 1225 թ. նա վերադառնալով Պարսկաստան, բանակ կազմեց և փորձեց վերականգնել Խորեզմի պետությունը, բայց այդ նրան չհաջողվեց։ Դրանից հետո նույն 1225 թվականին նա սկսեց ասպատակել Ատրպատականը, Հայաստանն ու Վրաստանը։

Ջալալեդդինի դեմ դուրս եկան հայ-վրացական ուժերը Իվանե սպարապետի գլխավորությամբ, սակայն Գառնիի մոտերքում տեղի ունեցած ճակատամարտում պարտվելով՝ նահանջեցին։ Թշնամին, հետապնդելով հակառակորդին, 1226 թ. գրավեց Թիֆլիսը և կողոպտեց քաղաքը։ Դրանից հետո Ջալալեդդինի զորքերն սկսեցին հարձակումներ գործել Կարինի, Անիի, Կարսի և Խլաթի վրա, փորձելով գրավել այդ քաղաքները, բայց հաջողություն չունեցան։ Ստեփանոս Օրբելյանի ասելով, Ջալալեդդինը «որտեղ հասնում էր, ավերում էր, կողոպտում և սպանում չխնայելով ո՛չ մարդկանց և ո՛չ էլ անասուններին»։ Ջալալեդդինի ասպատակությունները Հայաստանում տևեցին շուրջ յոթ տարի։ Նրա դեմ դուրս եկան և՛ հայ-վրացական ուժերը, և՛ էմիրությունները։ Ջալալեդդինի զորքերի դեմ էին դուրս եկել Խլաթի էմիրը, ինչպես և Իկոնիայի և Էրզրումի սուլթանությունները, որոնք, օժանդակություն ստանալով Կիլիկիայի հայկական թագավորությունից, Երզնկայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ծանր պարտության մատնեցին նրա զորքերին և ստիպեցին նահանջել դեպի Ատրպատա-

կան։ 1231 թ. Ամիդ քաղաքի մոտ Ջալալեդդինի զորքերը վերջնականապես չախչախվեցին և ցաք ու ցրիվ եղան։ Ջալալեդդինն էլ իր դերեզմանը գտավ այնտեղ, և Կիրակոս Գանձակեցու խոսքերով ասած՝ «այնպէս բարձաւ շարն շարեաւ»։

Մոնղոլական նոր արշավանքները

Մոնղոլական զորքերը, որոնք հետապնդում էին Ջալալեդդինին, 1231—1232 թթ. ասպատակեցին Հայաստանի շատ շրջաններ։ Նրանք կողոպուտի և ավերածության ենթարկեցին Վասպուրականի, Ամիդի, Արզնի և Մայաֆարկինի շրջանները, կողոպտեցին Վարագա վանքը, գրավեցին Բերկրի ու Արճեշ քաղաքները, սրի քաշեցին նրանց բնակչությանը և շարժվեցին դեպի Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները։ Այստեղից մոնղոլները մտան Աղվանք ու պաշարեցին Գանձակը։ Գանձակի բնակիչները թեև դիմադրեցին, բայց մոնղոլներին հաջողվեց ամրություններ խորտակող մեքենաների միջոցով քանդել պարիսպները և ներխուժել քաղաք։

Այս անգամ ևս նրանք չհաստատվեցին Անդրկովկասում ու Հայաստանում և 1232 թ. հեռացան դեպի Պարսկաստան։ Սակայն Անդրկովկասի, Հայաստանի և Հյուսիսային Միջագետքի արոտավայրերը, որոնց մասին նրանք դիտեին նախորդ արշավանքներից, հրապուրում էին նրանց։ Մոնղոլական 30 հազարանոց բանակը, քոչվոր ցեղերով և անասուններով, Չարմաղանի գլխավորությամբ 1236 թ. արշավեց դեպի Անդրկովկաս ու Հայաստան։ Այդ բանակը մտավ Մուղանի դաշտը, այնտեղ բաժանվեց մի քանի մասերի և շարժվեց դեպի Հայաստան ու Վրաստան։ Չորաբանակներից մեկը Ասլան Նոինի գլխավորությամբ հարձակվեց Սյունիքի վրա։ Սյունյաց Օրբելյան իշխան Էլիկումը դիմադրություն ցույց չտվեց, քաշվեց Վայոց ձորի (այժմյան Սղեղնաձոր) Հրաշկաբերդ ամրոցը և ապավինեց նրա անմատչելի պարիսպներին։ Մոնղոլները գրավեցին ամբողջ Սյունիքը և ավարի ենթարկեցին գյուղերն ու ավանները, իսկ հետո առաջարկեցին Էլիկումին անձնատուր լինել և դաշինք կնքել իրենց հետ։ Էլիկումն ընդունեց մոնղոլների գերիշխանությունը, վերստացավ իր բոլոր կալվածքները և հանձն առավ իր զորքով մասնակցել նրանց արշավանքներին։ Մի այլ զորամաս, Դուզատա Նոինի ղեկավարությամբ, արշավեց դեպի Աղստև գետի հովիտը և գրավեց այդ շրջանի ամրությունները։ Երկրամասի տերը՝ իշխան Ավագը, Իվանե աթաբեկի որդին, սկզբում ամրացավ Կային բերդում, բայց հետո անձնատուր եղավ և ընդունեց մոնղոլների գերիշխանությունը։

Այդ նույն ժամանակ մոնղոլական մի ուրիշ զորաբանակ արշավեց դեպի Շամքորի շրջանը և պաշարեց Շամքոր քաղաքը, որը պատկանում էր Զաքարյան իշխաններից Վահրամին։ Քաղաքի բնակիչները ձեռնամուխ եղան պաշտպանության գործին, բայց երկար դիմադրել չկարողացան, և մոնղոլները գրավեցին քաղաքը։ Թաթար-մոնղոլների մի այլ ջոկատ ավելի առաջ էր անցել և մտել Լոռի։ Այս շրջանի ֆեոդալ տերերը էս, որոնց գլխավորում էր Զաքարե ամիրսպասալարի որդին՝ Շահնշահը, որևէ կուրջ փորձ չարեցին պաշտպանելու երկիրը։

Անիի և Կարսի գրավումը

Մոնղոլական զորքերը նույն՝ 1236 թ. իջան դեպի հարավ՝ դեպի Արարատյան դաշտն ու Շիրակ։ Զարմաղանի գլխավորած զորքերը Սևանա լճի հարավային ափերով մոտեցան Այրարատյան նահանգը և մոտեցան Անի քաղաքին։ Դեպի Անի էին առաջանում նաև Լոռին գրաված զորքերը։ Զարմաղանը պատվիրակություն ուղարկեց քաղաքի ավագանու մոտ և պահանջեց անձնատուր լինել։ Անիի ավագանին մերժեց նրա պահանջը, իսկ բնակչությունը հարձակվեց մոնղոլ պատվիրակների վրա և սպանեց նրանց։ Այդ դեպքից հետո մոնղոլները անմիջապես պաշարեցին ու գրավեցին քաղաքը, կողոպտեցին, կոտորեցին և գերեվարեցին բնակչության դդալի մասը։

Անիի և Կարսի գրավումով Հայաստանի հյուսիսային շրջանները նվաճվեցին մոնղոլների կողմից։

Մոնղոլները այլևս չհեռացան գրավված վայրերից, ինչպես առաջին արշավանքների ժամանակ, այլ հաստատվեցին այդ վայրերում։ Նրանց զինված ջոկատներին կրնկակոխ հետևում էին մոնղոլական ցեղերը, Կիրակոս Գանձակեցու խոսքերով ասած՝ «կանամքք և որդովք և ամենայն ախիր բանակին իւրեանց»։ Այդ ցեղերը ներխուժում էին նվաճված վայրերը և տիրանում լավագույն հողերին ու արոտավայրերին։

Հայաստանի մնացած նահանգների գրավումը

Մոնղոլները 1242 թ. վերսկսեցին իրենց առաջխաղացումը դեպի Հայաստանի հարավային ու արևմտյան շրջանները։ Այս անգամ մոնղոլական զորքերին Զարմաղանի փոխարեն գլխավորում էր Բաչու Նոյոնը։ Նրա բանակը տրշավեց դեպի Կարին և Հայաստանի հարավային շրջանները։ Կարին քաղաքի բնակիչները համառ դիմադրություն ցույց տվեցին և ավելի քան երկու ամիս քաջաբար պաշտպանվեցին։ Սակայն մոնղոլնե-

ին հաջողվեց գրավել Կարինը և կողոպուտի, հրի ու սրի մատնել նրա բնակիչներին։

Հաջորդ՝ 1243 թ. նրանք Զմանկատուկ գյուղաքաղաքի մոտ ջարդեցին Իկոնիայի սուլթանության բանակը և գրավեցին Կեսարիա ու Երզնկա քաղաքները, մեծ ավերածություն կատարելով Երզնկայում, որի բնակիչները մոնղոլներին դիմադրություն ցույց տալու համար կոտորվեցին։ Գանձակեցու ասելով, միայն «սակաւ մանկունս և աղջկունս ազատեցուցեալ՝ վարեցին ի գերութիւն»։

Զմանկատուկի ճակատամարտից երկու տարի հետո մոնղոլական զորքերը մի նոր արշավանք սկսեցին դեպի Տուրուբերանի և Վասպուրականի նահանգները։ Նրանք նախ մտան Մանազկերտի դաշտը, գրավեցին Խլաթը, ապա առաջ շարժվեցին դեպի հարավ և գրավեցին Բաղեշ քաղաքը։ Այնուհետև մտան Աղձնիք, անցան Հյուսիսային Միջագետք և Ասորիք։ Այս արշավանքի ժամանակ մոնղոլները գրավեցին նաև Հայաստանի հարավային նահանգները։ Այդպիսով, 1236—1245 թթ. ընթացքում ամբողջ Հայաստանը նվաճվեց մոնղոլների կողմից և ընկավ նրանց լծի տակ։

Երկրի ամայացման քաղաքականությունը

Մոնղոլները կիրառում էին նվաճված ժողովուրդների մասսայական կոտորածի և քաղաքների ու գյուղերի ամայացման քաղաքականություն։ Նրանք Հայաստանի բազմաթիվ շրջաններում բնաջնջեցին մարդկանց, հրկիզեցին նրանց բնակավայրերը, կոտորեցին երկրի խոշոր քաղաքների բնակչության զգալի մասին և մնացածներին գերի տարան։ Նրանց նպատակն էր՝ ստեղծել ամայի, անմարդաբնակ լայն տարածություններ, իրենց անասուններն արածեցնելու համար։ Մարքսի խոսքերով ասած՝ «Մոնղոլները վարվում էին իրենց արտադրության եղանակին համապատասխան, երբ ամայացնում էին Իռանստանը. անասնապահության դլխավոր պայման են մեծ, անմարդաբնակ տարածություններ»։

Մոնղոլները իրագործում էին նաև մասսայական գերեվարություն։ Նրանք տասնյակ հազարավոր մարդկանց, հատկապես երիտասարդների գերում էին, տանում օտար երկրներ և վաճառում։ Այդպես վարվեցին Անի, Կարս, Կարին, Երզնկա, Սեբաստիա և այլ քաղաքների ու շրջանների բնակչության հետ։ Ավարառությունը ու կողոպուտը մոնղոլների համար դարձել էին եկամտի և ապրուստի կարևոր աղբյուր։ Ֆեոդալների նկատմամբ մոնղոլներն առանձնահատուկ վերաբերմունք ունեին։ Նրանք, որոնք առանց որևէ դիմադրության կամ թույլ դիմադրությունից հետո անձնա-

տուր էին լինում, շարունակում էին տիրել իրենց կալվածքներին, պահպանել իրենց ռազմական ուժը և իրավունքները։ Հայաստանում մոնղոլներն այդպես վարվեցին Էրիկում Օրբելյանի, Ավագ Զաքարյանի, Շահնշահ Զաքարյանի և այլ խոշոր ֆեոդալների հետ։

Մոնղոլների վարած քաղաքականության նպատակն էր՝ պահպանել ֆեոդալների ռազմական ուժը և այն օգտագործել իրենց արշավանքների ժամանակ։ Եվ իրոք, նրանք Օրբելյան իշխաններին ստիպեցին մասնակցել Անիի գրավմանը, իսկ այնուհետև ինչպես Օրբելյանները, այնպես էլ Զաքարյանները իրենց զորքերով մասնակցեցին Կարինի, Երզնկայի, Խլաթի և այլ քաղաքների գրավմանը, դեպի Միջագետք ու Ասորիք կատարած արշավանքներին։

Մոնղոլների վարած քաղաքականությունը ամեն տեսակետից կործանարար եղավ Հայաստանի և հայ ժողովրդի համար։ Այն կասեցրեց երկրի տնտեսական և ինքնուրույն քաղաքական կյանքի հետագա զարգացումը, ինչպես և դեպի օտար երկրներ հայ բնակչության նոր մասսայական արտագաղթի պատճառ դարձավ։

1249 թվականի ապստամբության փորձը

Մոնղոլական արշավանքների և նվաճումների ընթացքում Հայաստան և Անդրկովկաս ներխուժած թաթարական և միջինասիական մեծաթիվ քոչվոր ցեղերը տիրացան տեղական բնակչությանը պատկանող արոտավայրերին և իրենց թափառումների ընթացքում ոտնատակ էին տալիս և ոչնչացնում էին մշակված արտերն ու այգիները, կասեցնում գյուղատնտեսության զարգացումը։

Ժողովրդի համար ավելի մեծ չարիք էին մոնղոլների կողմից գանձվող հարկերը։ Մոնղոլ հարկահաններն ու զորավարները ժողովրդից հավաքում էին այն ամենը, ինչ իրենց ցանկալի էր, և այնքան, որքան կամենում էին։ Հարկահանությունն ավելի սաստկացավ 1246—1247 թթ., երբ Հայաստան և Անդրկովկաս եկան Արղուն ու Բուղա հարկահավաքները։ Նրանք սկսեցին կեղեքել ժողովրդին բազմապիսի հարկերով ու պահանջներով, չխնայելով նաև ֆեոդալներին։ Կիրակոս Գանձակեցին նրանց բնութագրում է որպես «արք խիստք և հափշտակողք» և, մասնավորացնելով խոսքը Բուղայի մասին, ավելացնում է. «Մտանէր՝ ի տունս ավագանւոյն, և զոր ինչ ախորժ թուէր իրն՝ առնոյր անխնայ և ոչ ոք իշխէր ասել ինչ նմա»։

Մոնղոլական դաժան լուծը ժողովրդի մեջ առաջ բերեց ցասում նրանց տիրապետության դեմ։ Հայ և վրացի իշխանները ձեռ-

նամուխ եղան ապստամբության կազմակերպման գործին։ Հայկական աղբյուրները հաղորդում են, որ նրանք հավաքվել են Թիֆլիսում և որոշել վրաց Դավիթ թագավորի գլխավորությամբ ապրստամբել մոնղոլների դեմ։ 1249 թվականին վրացական և հայկական զինված ուժերը կենտրոնացվեցին Թիֆլիսի և Լոռիի շրջակայքում։ Ապստամբությանը մասնակցելու համար նրանք նախապատրաստել էին նաև մյուս շրջանների բնակչությանը։ Սակայն շուտով այդ բանը հայտնի է դառնում մոնղոլներին, ապստամբության կազմակերպիչները, այդ թվում և Դավիթ թագավորը, ձերբակալվում և բանտ են նետվում։ Դրանից հետո թեև Հայաստանի և Վրաստանի մի շարք շրջաններում, ուր կենտրոնացված էին ապստամբության համար կազմակերպված ուժերը, տեղի են ունենում զինված ելույթներ, բայց դրանք լայն տարածում չեն ստանում։ Մոնղոլները, օգտագործելով այդ հանգամանքը, Հայաստանում ու Վրաստանում կազմակերպում են մասսայական կոտորածներ։

Ապստամբությունը անհաջողություն կրեց, քանի որ այն մասսայական բնույթ չուներ։ Բացի այդ, ապստամբության ղեկավարության մեջ չկար միասնություն։ Ազդեցիկ ֆեոդալներից մեկը՝ Զաքարյան Ավաղը, որ վարում էր վրացական պետության աթաբեգության և հայ-վրացական զորքերի ամիրսպասալարության պաշտոնները, դեմ էր ապստամբությանը, իսկ դա նշանակում էր ապստամբական ուժերի անհամերաշխություն։

Դավիթ Ծարեցու շարժումը

Բնակչության աշխատավորական խավերը մոնղոլ նվաճողներից կեղեքվելուց և հարստահարվելուց բացի, շահագործման էին ենթարկվում նաև տեղական ֆեոդալների կողմից։ Գյուղացիները պարտավոր էին նրանց վճարել հողային տուրք՝ ռենտա, կատարել պարհակություն և դանազան այլ պարտավորություններ։ Հայ իշխանները և մանր ազնվականները հաճախ օգտագործում էին մոնղոլների գործադրած դաժանությունները և իրենք նույնպես դիմում էին կամայականության՝ կողոպտում և հարստահարում ժողովրդին։ Կիրակոս Գանձակեցին պատմում է, որ դսվառների տերերը, իշխանները իրենց շահի համար գործակցում էին մոնղոլների հետ։ Մասնավորացնելով իր խոսքը հայ ու վրաց իշխանների մասին, նա գրում է. «Մինչդեռ հեններից և ասպատակությունից մեր երկիրը սակավ ինչ կազդուրվել էր... և մարդիկ ավելի սրան էին ասլավինել, քան աստծուն, իշխանները զրկում և կողոպտում էին

աղքատներին, և այդ կողոպուտներով գնում էին թանկագին հանդերձանք ու հագնում, ուտում և ըմպում ու զուարճանում»։

Ժողովրդին շահագործելու և կեղեքելու գործում աշխարհիկ ֆեոդալներից ետ չէին մնում նաև հոգևոր ֆեոդալները։ Վանքերի և բարձրաստիճան հոգևորականների ձեռքում էին կենտրոնացվել մեծ տարածությամբ կալվածքներ, որտեղ ապրող գյուղացիներին նրանք դաժանորեն կեղեքում ու շահագործում էին, որը հարուցում էր աշխատավոր բնակչության դժգոհությունը։ Կիրակոս Գանձակեցին պատմում է նաև, որ Սևանա լճից դեպի արևելք, խաչենի գավառի Ջերմուկ բերդի մոտ գտնվող Մաբ գյուղում ապրում էր Դավիթ անունով մի մարդ՝ «ի չքաւորաց և ի տնանկաց, պահէր գչրաղաց նոցա և հայնմէ կերակրէր ինքն և կինն իւր և որդիքն»։ Դավիթ Մարեցին 1250 թ. սկսում է քարոզել ժողովրդի մեջ, թե ինքը աստծուց օժտված է հիվանդներին բուժելու, և մի փայտյա խաչ է կանգնեցնում եկեղեցու դռան առաջ՝ որպես նշան իր «հրաշագործություններիս»։ Դրանից հետո Հայաստանի տարբեր շրջաններից նրա մոտ են սկսում հավաքվել բազմաթիվ մարդիկ։ Նրանք լսում են Դավթի քարոզները, հավատում նրան և երես դարձնում այն հոգևորականներից, որոնք թշնամաբար էին տրամադրված դեպի Դավիթը։ Այդ շրջանի բարձրաստիճան հոգևորականները, որոնց թվում և մեր պատմագիր Կիրակոս Գանձակեցին, փորձում են ցրել Դավթի շուրջը համախմբվածներին, ձերբակալել և չեղոքացնել նրան։ Սակայն ժողովուրդը, որ այնքան շատ էր հավաքվել նրա մոտ և «տեղիք վայրացն ոչ բաւէին տանել», ըմբոստանում է Դավթին ձերբակալելու եկած հոգևորականների դեմ ու հարձակվում նրանց վրա՝ «սրովք և բրովք, կամէին սպանել գնոսա»։ Եպիսկոպոսն ու մյուս հոգևորականները հազիվհազ աղատվում են ժողովրդի ցասումից և հեռանում։ Սակայն, Դավիթ Մարեցու կողմնակիցներից ոմանք հետո օժանդակում են այդ հոգևորականներին՝ ձերբակալելու նրան և արտաքսելու իր հայրենի Գառնի գյուղը, իսկ հավաքված ժողովրդին ցրելու։ Դրանով էլ Մարեցու շարժումը վերջանում է։

Դավիթ Մարեցու շարժումը կարևոր երևույթ էր, որովհետև այն դրսևորում էր ժողովրդի դժգոհությունը «սեփական» շահագործողների դեմ և հայկական պետականության վերականգնման գաղափարը՝ հայտարարելով, որ իր որդիներից մեկը կլինի հայոց թագավոր, իսկ մյուսը՝ կաթողիկոս։

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻԼՂԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Իլղանությունը և վարչական կարգը Հայաստանում

Մոնղոլական մեծ պետությունը բաժանված էր չորս մեծ շրջանի՝ ուլուսների։ Այդ ուլուսներից մեկը, որի մեջ մտնում էր նաև Հայաստանը, իր վերջնական ձևավորումն ստացավ Մանգու ղանի ժամանակ (1251—1259)։ Սա այդ ուլուսի կառավարիչ նշանակեց իր եղբայր Հուլավուին, որը 1255 թ. եկավ Թավրիզ։ Նա նոր արշավանք կազմակերպեց դեպի Միջագետք ու Ասորիք և, 1258 թ. գրավելով Բաղդադը, վերջ տվեց Արաբական խալիֆայությանը։ Այնուհետև մոնղոլական զորքերը գրավեցին Ասորիքի մի մասը, բայց Պաղեստինի սահմանագլխին հանդիպեցին եգիպտական մամլուկյան զորքերի ուժեղ դիմադրությանը, պարտվեցին և ետ քաշվեցին։ Այս արշավանքներով ստեղծվեց մոնղոլական նվաճումները Առաջավոր Ասիայում և ստեղծվեց մոնղոլական մեծ պետություն, որն ստացավ հատուկ անուն՝ Իլղանություն կամ Իլխանություն։ Նրա մեջ մտնում էին Պարսկաստանը, Միջագետքը, Ասորիքի մի մասը, Փոքր Ասիայի արևելյան շրջանները, Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը։

Հայաստանում քաղաքական-վարչական իրավունքները կենտրոնացան մոնղոլների ձեռքում։ 1254—55 թթ. Հայաստանում անցկացվեց նոր աշխարհագիր, որի նպատակն էր՝ սահմանել հարկատվության և զինապարտության նոր կարգ։ Դրանից հետո Հայաստանի շրջաններում հիմնվեցին մոնղոլական զորքերի զորակայաններ, որոնց ղեկավարները կոչվում էին բասղաղ։ Նրանց հանձնարարված էր հետևել հարկերի հավաքմանը և հսկել տեղական ֆեոդալների գործունեությանը։ Հայաստանում և Վրաստանում բասղաղ էր նշանակված Արղունը։ Քաղաքներում և շրջաններում նշանակվեցին մոնղոլ կառավարիչներ, որոնք կոչվում էին շահնա և ենթակա էին բասղաղին։ Ստեղծվեցին կառավարման օժանդակ գրասենյակներ, այսպես կոչված դիվաններ, որտեղ կենտրոնացված էին հարկային մատյանները, և նշանակվեցին բազմաթիվ պաշտոնյաներ, դրագիրներ (բիթիքչիներ) և հարկահավաքներ (տամղաչիներ)։

Մոնղոլների հարկային քաղաքականությունը

Հայաստանում անցկացված աշխարհագրից հետո հարկերի չափը տնհամեմատ ավելացավ։ Գրիգոր Ակներցու վկայությամբ, հարկային միավոր էր համարվում աշխատող տղամարդը՝ սկսած 15-ից մինչև 60 տարեկանը։ Յուրաքանչյուր աշխատունակ տղամարդ պարտավոր էր վճարել մի տեսակ հարկ,

որը կոչվում էր մալ և որի չափը, սակայն, հայտնի չէ։ Կիրակոս Գանձակեցու պատմելով, յուրաքանչյուր աշխատունակ տղամարդ պարտավոր էր տարեկան վճարել «հարյուր վիտր ցորեն (40 կգ), հիսուն լիտր գինի (այժմյան 20 լիտր), երկու լիտր բրինձ և ծընծուտ, երեք տոպրակ, երկու չվան, մի սպիտակ (դրամ), մի նետ, մի պայտ և քսան անասունից մի անասուն ու ամեն մեկի համար մի սպիտակ»։ Երկրագործական արտադրանքով վճարված այդ հարկը մոնղոլների ժամանակ անվանվել է թաղար, իսկ անասուններից և արոտատեղերից վերցվածը՝ փախչուր կամ ղիշուր։ Բացի այդ, յուրաքանչյուր 15—60 տարեկան աշխատող տղամարդ տարեկան պետք է վճարեր 60 սպիտակ՝ որպես գլխահարկ։ Հիշատակված հարկերից բացի, բնակչությունը մոնղոլների համար պարտավոր էր կատարել զանազան կարգի ձրի աշխատանքներ՝ պարհակություն և զինվորական պարտավորություն կամ դրա դիմաց վճարեր հարկ, որ անվանվել է խալա։

Հիշյալ հարկերը, բացի գլխահարկից ու զինվորական պարտավորությունից, վճարում էին միայն գյուղացիները։ Քաղաքային բնակչությունը, արհեստավորներն ու առևտրականները գլխահարկի և զինվորական պարտավորության հետ միասին իրենց եկամուտներից վճարում էին նաև մի հարկ, որը կոչվում էր տամղա։

Ժողովրդի համար անտանելի հարկերից մեկն էր երթևեկության հարկը։ Դա սահմանված էր մոնղոլ ճանապարհորդներին սպասարկելու համար։ Առանձին կայաններում, որոնք կոչվում էին յամ, մոնղոլ ճանապարհորդը ստանում էր փոխադրական միջոց, սննդամթերք, դիշերելու տեղ և այլն։ Այս բանը չարաշահվում էր մոնղոլների կողմից և մի տեսակ չարիք էր դարձել ժողովրդի համար։ Պարսիկ մատենագիր Համդուլլահ Ղազվինին, խոսելով մոնղոլների հավաքած հարկերի չափի մասին, հաղորդում է, որ հարկերը վճարելուց հետո բնակիչներին մնում էր իրենց տարեկան եկամտի մեկ երրորդ մասը։ Կիրակոս Գանձակեցին նույնպես, խոսելով մոնղոլների հարկային դաժան քաղաքականության մասին, գրում է, որ նրանք ամեն ինչ հարկի տակ դրին, բոլորից պահանջելով «խստագոյն հարկս, ասելի քան զկար մարդոցն» և «այսպէս... վայիւ և աշխարով լցեալ զաշխարհս, թողին շար ոստիկանս ի վերայ աշխարհացս զնոյն պահանջել յամենայն ամի, նովին համարով և դրովս»։

Մարդիկ «սկսան շքաւորիլ», ի վիճակի չէին վճարել իրենց

հարկերը, և այն ժամանակ մոնղոլները հարկի դիմաց տանում էին նրանց երեխաներին։

Մոնղոլների հարկային քաղաքականությունը կասեցրեց երկրի արտադրողական ուժերի հետագա զարգացումը և Հայաստանը տարավ դեպի տնտեսական անկում ու քայքայում։

Հողատիրության ձևերը Հայաստանում մոնղոլների ժամանակ

Հայաստանում գոյություն ունեցող հողատիրության ձևերը մոնղոլները նույնությամբ չպահպանեցին։ Նրանք ճանաչեցին հայ խոշոր ֆեոդալների մի մասի սեփականատիրական իրավունքները իրենց կալվածքների նկատմամբ, սակայն միաժամանակ հաստատեցին հողատիրության այլ ձևեր ևս։

Մոնղոլները վերականգնեցին սելջուկյան տիրապետության ժամանակ Հայաստանում առաջացած իկտադրական հողատիրությունը, ընդարձակ հողաբաժիններ շնորհելով իրենց զինվորականներին և պաշտոնյաներին։

Հողատիրության այս ձևը սկզբնական շրջանում կրում էր պայմանական տիրակալության բնույթ, բայց XIII դ. վերջերից նկատվում է այդ ձևը ժառանգական դարձնելու հակում, որի մասին վկայում են Ղազան ղանի (1295—1304) հրահանգները՝ յարլիկները։ Այդ փաստաթղթերում ասված է, որ իկտան կարող է անցնել նրա տիրակալողի որդուն։ Իկտայական հողերի վրա ապրող բնակչությունից գանձվող բոլոր հարկերն ու տուրքերը գնում էին իկտադարի օգտին։ Այդ հողերը համարվում էին ինջու, այսինքն՝ նրանց նկամտից վերցված հարկից պետությունը բաժին չուներ։

Հողատիրության ձևերից էր նաև դիվանասպատկան և կառավարող տան անդամներին պատկանող հողերը։ Այդ հողերի մի մասից ստացված հարկերը մուծվում էին պետական գանձարան, իսկ մյուս մասից ստացվածը գնում էր թագավորական տան անդամների օգտին։ Այս կարգի հողերը համարվում էին խաս ինջու և դառնում թագավորական տան անդամների սեփականություն։ Կային այսպես կոչված վակֆային հողեր, որոնք պատկանում էին մահմեդական հոգևորականությանը։ Այս կարգի հողերի վրա ապրող բնակչությունը իր բոլոր հարկերն ու տուրքերը վճարում էր մզկիթներին և մահմեդական հոգևորականությանը։ Այդ հողերը նույնպես համարվում էին ինջու։

Վակֆային հողերի շարքին կարելի է դասել նաև հայ հոգևորականության կալվածքները։ Այս դեպքում էլ կալվածքը պատկանում էր եկեղեցական հաստատությանը և հանդիսանում նրա

սեփականությունը։ Հայկական եկեղեցին և նրա կալվածքները մոնղոլական տիրապետության ժամանակ մասնակիորեն կամ ամբողջությամբ ազատված էին պետական հարկեր վճարելու պարտավորությունից։

Հողատիրության ձևերից մեկն էլ տեղական ֆեոդալների՝ Հայաստանի հյուսիսում մեծ մասամբ հայ, իսկ հարավային և արևմտյան շրջաններում՝ դերազանցապես ոչ հայ կալվածատերերի հողերն էին։ Այդ հողերը մոնղոլական տիրապետության ժամանակ համարյա ամբողջությամբ համարվում էին կալվածատիրոջ սեփականություն։ Հողատիրության այս ձևը Հայաստանում ամենատարածվածն էր։ Սակայն հայ աշխարհիկ ֆեոդալների կալվածքները հետզհետե պակասում էին և անցնում վանքերին կամ հայ հոգևորականությանը։ Դրա պատճառն այն էր, որ աշխարհիկ ֆեոդալների կալվածքներից հավաքում էին մեծ քանակությամբ պետական հարկեր և տեղական ֆեոդալներին շատ քիչ բան էր մնում։ Նրանք կա՛մ թողնում-հեռանում էին երկրից, կա՛մ իրենց կալվածքները հանձնում վանքերին, որովհետև մոնղոլները վանքին նվիրած կալվածքը ազատում էին պետական հարկերից։

Ֆեոդալները, հատկապես ոչ հայկական ծագում ունեցողները, իրենց կալվածքները հանձնում էին գյուղացիներին մշակելու և ռենտա վճարելու պայմանով։ Նախկինում հայ ֆեոդալների կողմից կազմակերպված ֆեոդալական ադարակային տնտեսությունները, մոնղոլական տիրապետության շրջանում, նվազում և ետ էին մղվում։ Այրպիսիները մեծ մասամբ պահպանվում էին վանքապատկան կալվածքներում և որոշ չափով՝ հատ ու կենտ մնացած հայ խոշոր ֆեոդալների մոտ։

Մոնղոլներն իրենց տիրապետության սկզբնական շրջանում գյուղացիներին հողին չէին ամրացնում, և Հայաստանի շատ շրջաններում գյուղացիներն ունեին տեղաշարժման իրավունք։ Սակայն հետագայում մոնղոլ կալվածատերերը նույնպես հանդես բերեցին գյուղացիներին հողին ամրացնելու, այսինքն՝ ճորտացնելու ձգտում։ Ղազան զանը հրովարտակներով գյուղացիներին արգիլեց մի ֆեոդալի կալվածքից հեռանալը և մի այլ կալվածատիրոջ մոտ վերաբնակվելը։ Այդ հրովարտակները փախած գյուղացու կալվածատիրոջը իրավունք էին վերապահում 30 տարվա ընթացքում գտնել նրան և վերադարձնել նախկին տեղը։ Սակայն Հայաստանում թե՛ հայ, թե՛ այլազգի ֆեոդալների կողմից գյուղացիների ճորտացումը լայն տարածում չստացավ և հետագայում վերացվեց։

Հայերի և վրացիների նոր ապստամբությունը

Մոնղոլները էլղանության շրջանում նույնպես շարունակում էին հարստահարել ու գերեվարել հայ և վրացի աշխատավոր խավերին։ Հայ և վրացի ազնվականների համար ամենածանր պարտականություններից մեկը զինապարտությունն էր։ Նրանք պատերազմների ժամանակ պարտավոր էին իրենց զորքով մասնակցել մոնղոլների արշավանքներին։

Մոնղոլների այդպիսի մեծ չափի հարկապահանջությունը և գործադրած կամայականությունները նրանց դեմ հանեցին հայ և վրացի բնակչության համարյա բոլոր խավերին, որի հետևանքով 1259—1261 թթ. բռնկվեց մի նոր ապստամբություն։ Այս անգամ ապստամբության գլուխ անցավ վրաց թագավոր Դավիթը՝ Գեորգի Լաշայի որդին։ Ապստամբներն իրենց զորքերով անցան Վրաստանի լեռնային մասերը և սկսեցին հարձակումներ գործել մոնղոլական ջոկատների վրա։ Հայ իշխաններից ապստամբությանը մասնակցեցին և օժանդակեցին Խաչենի իշխան Հասան-Ջալալը, Զաքարյան Շահնշահի որդին՝ Զաքարեն, Զաքարյան Ավագի դուստր Խոշաքը և ուրիշներ։

Մոնղոլական զորքերը Արղունի գլխավորությամբ հետապնդեցին ապստամբներին և սկսեցին ասպատակել Վրաստանի և Հայաստանի մի շարք շրջաններ։ Բայց ապստամբները հանկարծակի հարձակվեցին Արղունի բանակի վրա, ջարդեցին նրա զորքերի մի մասին և ստիպեցին հեռանալ մի քանի դավառներից։ Դրանից հետո ապստամբները շարունակեցին պարտիզանական կռիվներ մղել, բայց լուրջ հաջողություն չունեցան։

Արղունին հաջողվեց ձերբակալել վրաց թագուհուն, հայ իշխաններ Զաքարեին, Հասան-Ջալալին և այլոց։ Ձերբակալվածներից մի քանիսին մահապատժի ենթարկեցին, այդ թվում՝ Խաչենի իշխան Հասան-Ջալալին և Շահնշահի որդի Զաքարեին։ Ապստամբությունը ճնշվեց 1261 թ.։ Անհաջողության պատճառն այն էր, որ այն չվերածվեց համաժողովրդական շարժման։ Դա առանձնապես զգալի էր Հայաստանում, քանի որ հայ ժողովրդի մի ստվար հատված մոնղոլական տիրապետության շրջանում դիմեց պայքարի ուրուսիվ ձևին՝ արտագաղթին։ Դա բնակչության մեջ առաջ բերեց ընկճվածություն, անվճռականություն, նույնիսկ հուսալքում՝ նրան անընդունակ դարձնելով ակտիվ պայքարի համար։

Հայաստանի քաղաքական վիճակը Հուլավուից հետո և տնտեսության քայքայումը

Հուլավուի գահակալության վերջին տարիներից սկսած երկրում համեմատաբար խաղաղ դրություն ստեղծվեց։ Դա բնակչությանը հնարավորություն տվեց կարգի բերել իր քայքայված տնտեսությունը։ Սկսեցին վերականգնել ավերված ավաններն ու քաղաքները, կառուցել հարտարապետական արժեք ունեցող շենքեր։ Սակայն այդ խաղաղ վիճակը երկար չտևեց։ Դեռևս Հուլավուի օրոք, մոնղոլական երկու ուլուսների՝ Ոսկե Հորդայի և Էլղանության միջև 1265 թ. սկսվել էր մի հակամարտություն, որի հետևանքով Անդրկովկասն ու Հայաստանը վեր էին ածվել պատերազմական թատերաբեմի։ Աբաղա ղանը (1265—1282) և նրա հաջորդները՝ Արղունը (1284—1291), Ղազան ղանը (1295—1304) և մյուսները պատերազմական գործողություններ էին վարում ոչ միայն Ոսկե Հորդայի զորքերի, այլև Եգիպտական մամլուկյան սուլթանության, փոքրասիական իշխանությունների և այլոց դեմ։ Բացի այդ, մոնղոլ ղանները ստիպված էին մշտական բախման մեջ մտնել ներքին դավադիր ուժերի հետ։ Իսկ այդ բոլորը կործանարար հետևանքներ էր ունենում Հայաստանի, Վրաստանի և նվաճված մյուս երկրների համար։ Մշտական անապահով վիճակը, մոնղոլ զորքերի ավարառությունը, քոչվոր ցեղերի անընդհատ տեղաշարժերը և ծանր հարկերը կասեցնում էին տնտեսության ընթացքը և ետ մղում այն։ Այս ամենը ավելի ցայտուն կերպով դրսևորվեց Ղազան ղանի մահից հետո, երբ Էլղանությունը սկսեց թուլանալ և քայքայվել։

Մոնղոլական լայնածավալ պետությունը սկզբնական շրջանում որոշ չափով նպաստեց միջազգային առևտրի զարգացմանը։ Հուլավուն նպաստ լեռան մոտ, Դառն դաշտում, կառուցել տվեց Ալադաղ անունով մի քաղաք և այնտեղ բնակեցրեց միջազգային առևտրով զբաղվող բազմաթիվ վաճառականների։ Սակայն տարանցիկ առևտրի աշխուժացումը երկրի տնտեսական կյանքի զարգացման համար համարյա թե նշանակություն չունեցավ։ Ինչպես ամբողջ Էլղանության մեջ, այնպես էլ Հայաստանում XIII դ. վերջին քառորդից սկսած արհեստագործությունը, դյուղատնտեսությունը և ներքին առևտուրը անկում ապրեցին։ Տնտեսության փակ բնույթը նորից սկսեց տիրապետող երևույթ դառնալ։ Տեղի էր ունենում երկրի տնտեսության բոլոր բնագավառների քայքայում։

Քաղաքների անկումը և բնակչության մասսայական արտագաղթը

Հայաստանի երբեմնի մարդաշատ և հարուստ քաղաքները աստիճանաբար աղքատացան, զրկվեցին բնակչությունից, իսկ նրանցից մի քանիսը նույնիսկ ամայացան։ Դվինը մոնղոլական տիրապետության ժամանակ քայքայվեց, ավերվեց և XIV դ. սկզբին որպես քաղաք դադարեց գոյություն ունենալուց։ Անին XIII դ. վերջերից սկսեց անկում ապրել և սակավաբնակ դառնալ։ XIV դարի վերջերին և XV դ. սկզբներին նա արդեն դադարել էր քաղաք լինելուց։ Նույն բախտին արժանացան նաև Կարսն ու Հայաստանի հյուսիսային նահանգների այլ քաղաքներ։ Նույնպիսի անկում ապրեց նաև երկրի գյուղատնտեսությունը։ Մանր հարկերը, հաճախակի դարձած պատերազմական գործողությունները, մոնղոլական և թուրքմենական քոչվոր ցեղերի ներխուժումը և տեղից-տեղ անվերջ թափառումները կործանարար հետևանքներ ունեցան գյուղատնտեսության համար։ Ամայացան, խոպան դարձան նախկին մշակված դաշտերն ու այգիները և վերածվեցին եկվոր ցեղերի անասունների արոտատեղիների։

Այս բոլորը մի քանի դար հետ մղեց երկրի սոցիալ-տնտեսական կյանքը։ Ճիշտ է ասված, որ եթե սելջուկները պոկեցին Արևելքի ժողովուրդների քաղաքակրթության ծառի ծաղիկները, ապա մոնղոլները պլոկեցին նաև նրա տերևները։

Որքան ճշմարտացի են հնչում Կ. Մարքսի այն խոսքերը, թե «մոնղոլների լուծը ոչ միայն ճնշում, այլև վիրավորում ու չորացնում էր նրան ղոհ դարձած ժողովրդի բուն ոգին։ Մոնղոլ-թաթարները ստեղծեցին սիստեմատիկ տեռորի ռեժիմ, ընդ որում քայքայումն ու մասսայական սպանությունները կազմում էին նրա մշտական ինստիտուտները»։ Այս խոսքերն ասված են Իրանում մոնղոլ-թաթարների վարած քաղաքականության կապակցությամբ, բայց դրանք հավասարապես վերաբերում են նաև Հայաստանին։

Մոնղոլական դաժան լծից ազատվելու համար հայ ժողովրդի մի մասը հեռացավ իր հայրենիքից դեպի օտար երկրներ և Կիլիկիայի հայկական թագավորություն։ Գաղթում էին Հայաստանի բոլոր նահանգներից և բնակչության բոլոր խավերից՝ աղնվականներ ու հոգևորականներ, առևտրականներ ու արհեստավորներ, գաղթում էր և գյուղացիությունը։

1314 թվականին Կարին քաղաքում գրված մի մեռագիր հիշատակարանում պատմվում է այն մասին, որ երկիրը տառա-

պանքի մեջ էր, հայ ժողովուրդն իսպառ նվազում էր, քաղաքացիներից շատերը իրենց երեխաներին վաճառում էին, իրենք փախչում, հեռանում երկրից։ 1341 թ. Տայքի Վարդաշեն ավանում գտնված մի հիշատակարանում ասված է, որ «եղև փախուստ ամենայն գաւառին, նա ևս քաղաքին միահամուռ», որ «ամենայն ոք փախաւ, և չուեցին յերկիր օտար»։

XIII—XIV դդ. տեղի ունեցած բնակչության մասսայական արտագաղթը մեծագույն աղետ էր հայ ժողովրդի համար։ Բնակչության զանգվածային հեռացումը թուլացնում էր ժողովրդի պայքարը օտար զավթիչների դեմ, հայրենիքը զրկում պաշտպանունակությունից, արտադրողական ուժերից և աշխարհով մեկ ցրում հարյուր հազարավոր հայերի։ Նրանք գնում էին Ղրիմ, Աստրախան, Լեհաստան, Ուկրաինա և եվրոպական այլ երկրներ, որտեղ այդ ժամանակներից սկսած առաջացան հայկական գաղթավայրեր՝ բազմահազար հայ բնակչությամբ։

3. ՀԱՅԱՍՏԱՆԸ XIV ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XV ԴԱՐՈՒՄ

Էլղանության քայքայումը և թուրքմենական ցեղերը Հայաստանում

Էլղանության մասնատման նշանները դրսևորվեցին դեռևս XIV դ. առաջին քառորդում։ Այդ երևույթի համար նպաստավոր պայմաններ էին ստեղծում նաև Ոսկի Հորդայի՝ դեպի Անդրկովկաս կազմակերպած արշավանքները։ Առաջին պառակտումն սկսվեց Անդրկովկասում 1319 թ.։ Ապստամբությունը գլխավորում էր Ղուռումշին, որի նպատակն էր՝ անջատել Անդրկովկասը էլղանությունից։ Դրան հետևեց Ջորանյանների ապստամբությունը։ Թեև նրանք ճնշվեցին, բայց կենտրոնական իշխանության այդ հաջողություններն առերևույթ էին։

Այս խառնակ շրջանում Հայաստանի հյուսիսային նահանգները մեծ մասամբ հնթակա էին Ջորանյաններին, որոնց իշխանության կենտրոնը Թավրիզն էր, իսկ Հայաստանի հարավային նահանգները՝ Ջելայիրներին, որոնք նստում էին Բաղդադում։ Հայկական ֆեոդալական իշխանությունները՝ Զաքարյանների հետնորդները Շիրակում, Վաչուտյաններինը՝ Արարատյան գավառում, Օրբելյաններինը՝ Սյունիքում, Պռոշյաններինը կամ Խաղբակյաններինը՝ Վայոց ձորում և Կոտայքում, դեռևս շարունակում էին պահպանել իրենց դիրքերը, բայց լուրջ ուժ չէին ներկայացնում և ի վիճակի չէին դիմադրելու հայ բնակչությանը երկիրը, հոնե, կիսանկախ վիճակում պահելու համար, ինչպես Վրաստանն էր։

Դեռևս մոնղոլական առաջին արշավանքների ժամանակ մոնղոլ կվող ուժերին կրնկակոխ Հայաստան ներխուժեցին Միջին Ասիայի թուրքմենական ցեղերը։ Հայաստանի հարմար արոտավայրերը գրավեցին այդ ցեղերի ուշադրությունը և նրանց մի մասը հաստատվեց Հայաստանում։ Այդ ցեղերի թվում էին կարա-կոյունլուները և աղ-կոյունլուները։ Նրանք այդպես էին անվանվում, որովհետև նրանցից մեկը պահում էր սև, մյուսը՝ սպիտակ գույնի աշխարներ։

Դեռևս XIV դ. վերջերին կարա-կոյունլուները հաստատվեցին Վանա լճի շրջակայքում՝ Վասպուրականում, Տուրուբերանում և այլուր, իսկ աղ-կոյունլուները՝ Մոկսի ու Աղձնիքի նահանգներում և Ծոփքի արևելյան գավառներում։ Հետագայում՝ XIV դ. վերջին քառորդում, նրանց ազդեցությունն ու քաղաքական կշիռը այնքան մեծացավ, որ այդ երկու ցեղերին հաջողվեց իրենց գերիշխանությունը հաստատել Հայաստանի տարբեր շրջաններում։

1378 թ. կարա-կոյունլուների ցեղապետներ Ղարա-Մահմադը և սրա որդի Ղարա-Յուսուֆը հիմնեցին իրենց իշխանությունը Տարոնի, Սասունի և Քաջբերունիքի շրջանում, իսկ աղ-կոյունլուները Օսմանի դիմավորությամբ՝ Հայաստանի հարավային մասերում, կենտրոն դարձնելով Դիարբեքիր կամ Ամիդ քաղաքը։

Լենգթեմուրի արշավանքները

Այդպիսի խառն և երերուն վիճակում էր Հայաստանը, երբ սկսվեցին Լենգթեմուրի արշավանքները։

Նրա զորքերը Թավրիզը գրավելուց հետո 1386 թ. արշավեցին Հայաստան, մտան Նախիջևան, ասպատակեցին Սյունիքը, գրավեցին Որոտան բերդը, ապա առաջ շարժվեցին դեպի Արարատյան դաշտը, Կարինի շրջանը, հարձակվեցին կարա-կոյունլուների իշխանության վրա, բայց ճապաղջուր դավառում պարտություն կրեցին և, ետ նահանջելով, ուղղություն վերցրին դեպի Վան ու 1387 թ. պաշարեցին այն։

Քաղաքի կառավարիչն ու բնակչությունը որոշում են դիմադրել Լենգթեմուրին, բայց 25 օր պաշտպանվելուց հետո ստիպված են լինում տեղի տալ։ Քաղաքն ընկնում է թշնամու ձեռքը։ Լենգթեմուրը, ինչպես պատմում է Թովմա Մեծոփեցին, հրամայում է՝ կանանց և երեխաներին գերի տանել, մնացած բոլորին բերդի պարիսպներից վայր նետել։

Այդ վայրագ հրամանը կատարվում է։ Վանա բերդի պարիսպներից ցած են նետվում հազարավոր մարդիկ, նրանց դիակներից հսկայական բլուր է գոյանում ու բարձրանում, որ «վերջին

անկեալքն ոչ մեռանէին։ Դրանից հետո Լենգթեմուրի զորքերը հեռացան Հայաստանից, բայց նորից երկու անգամ 1394—1396, 1400—1402 թթ. հարձակվեցին Հայաստանի վրա կողոպտելով և մասսայաբար կոտորելով ժողովրդին։

1400—1402 թթ. արշավանքի ժամանակ Լենգթեմուրի դեմ դուրս եկավ օսմանյան սուլթան Բայազիդ I-ի բանակը, բայց 1402 թ. Անգորայի ճակատամարտում պարտվեց, իսկ սուլթան Բայազիդ I-ը գերի ընկավ։

Հայաստանի վրա Լենգթեմուրի կազմակերպած արշավանքները ամենակործանարար և ավերիչ արշավանքներից էին։ Վանում նրանք բերդից վայր նետեցին և սպանեցին շուրջ 7000 մարդ, Սեբաստիայում, ինչպես պատմում է Թումա Մեծոփեցին, կանանց կապեցին ձիերի պոչից և քարշ տալով սպանեցին, նրանց երեխաներին ոչնչացրին հեծելազորի ոտների տակ տրորելով։ Նրանք չբավականացան այդ ամենով. նույն քաղաքի շուրջ չորս հազար տղամարդկանց կենդանի-կենդանի թաղելով խեղդեցին ջրի ու մոխրի մեջ։ Լենգթեմուրի արշավանքները էլ ավելի խորացրին երկրի տնտեսական կյանքի քայքայումն ու ամայացումը։

Թեմուրիդների և կարա-կոյունլուների պայքարը Հայաստանի համար

Լենգթեմուրի մահից հետո նորից զլուխ բարձրացրին կարա-կոյունլուները և աղ-կոյունլուները։ Կարա Յուսուֆը, որ Լենգթեմուրի արշավանքների ժամանակ փախել էր Հայաստանից, 1406 թ. վերադարձավ և վերականգնեց իր իշխանությունը Ատրպատականում ու Հայաստանի հյուսիսային շրջաններում։ Այդ հաջողությունից հետո Կարա Յուսուֆն իր բանակն առաջնորդեց դեպի Հայաստանի հարավային և արևմտյան նահանգները, դրավեց և իր իշխանությանը միացրեց Մերդին, Արզն և Երզնկա քաղաքները՝ նրանց շրջակա գավառներով։ Այնուհետև աղ-կոյունլուների ցեղապետ Օսմանը ընդունեց Կարա Յուսուֆի գերիշխանությունը։ Սակայն այդ երկար չտևեց։ 1417 թ. կարա-կոյունլուների վրա արշավեցին՝ արևելքից Թեմուրիդ Շահռուխի զորքերը, հարավ-արևմուտքից աղ-կոյունլուները։ Այդ ընդհարումները փոփոխական հաջողություններով տևեցին մի քանի տարի, դրանք ավելի հաճախակի դարձան Կարա Յուսուֆի հաջորդ և որդի Իսկանդարի (1420—1437) օրոք։

Կարա-կոյունլու Իսկանդարի իշխանության տարիները արհավիրքներով լի մի ժամանակաշրջան էր հայ ժողովրդի համար։ Երկրում փաստորեն անիշխանություն էր տիրում։ Հայաստանի դանաղան շրջաններում թուրքմենական և քրդական առանձին

ցեղապետներ հաստատել էին իրենց տիրապետությունը։ Իսկանդարը ձգտում էր ստեղծել ինքնանկախ և ընդարձակ մի պետություն, այն հակադրելով Թեմուրիդների և աղ-կոյունլուների իշխանություններին։ Թեմուրիդներն իրենց հերթին փորձում էին պահպանել իրենց գերիշխանությունը Լենգթեմուրի նվաճած բոլոր երկրների վրա։ Այդ պատճառով, մի կողմից Թեմուրիդների ու կարա-կոյունլուների և, մյուս կողմից, վերջինների ու Հայաստանում ինքնազլուխ դարձած ցեղապետների միջև տեղի էին ունենում անընդհատ կռիվներ, որոնց կործանարար հետևանքները առաջին հերթին բաժին էին ընկնում հայ ժողովրդին թե՛ բուն Հայաստանում, թե՛ նրան սահմանակից հայաբնակ շրջաններում։

Այդ խժդժությունների ժամանակ՝ 1437 թ. Իսկանդարի եղբայր Ջհանը Թեմուրիդների օժանդակությամբ նենգակ բերդում սպանել տվեց Իսկանդարին, անցավ իշխանության գլուխ, ընդունեց Շահռուխի գերիշխանությունը, վերջինիս կողմից հռչակվեց շահ և ստացավ Ջհանշահ անունը (1437—1467)։ Նա իր իշխանության առաջին տարիներին ճնշեց մյուս մանր ցեղապետների ըմբոստացումները և իր տիրապետությունը տարածեց Վրաստանի, Հայաստանի, Աղվանքի, Ատրպատականի և այլ երկրամասերի վրա։ Նրա իշխանության տարիներին երկիրը իսպառ ավերվեց և ժողովուրդն առժամանակ շունչ քաշեց անընդհատ կռիվներից ու ասպատակություններից։

Երևանը Արևելյան Հայաստանի վարչական կենտրոն

Ջհանշահի օրոք բավականին ամրապնդվեց կարա-կոյունլուների իշխանությունը Անդրկովկասում և Հայաստանում։ Առևտրական կապեր հաստատվեցին միջինասիական երկրների և Արևմուտքի հետ, կարգի բերվեց ենթակա երկրների կառավարչական սիստեմը և փորձ արվեց նպաստավոր պայմաններ ստեղծելու տնտեսության վերակենդանման համար։ Ջհանշահը Թավրիզը դարձրեց իր իշխանության կենտրոնը, Հայաստանի և անդրկովկասյան մյուս երկրների համար նշանակեց առանձին կուսակալ, որը նստում էր Նախիջևան քաղաքում։ Այս կուսակալությունը բաժանվեց մի քանի վարչական ընդարձակ շրջանների, որոնց կենտրոններ դարձան Երևանը՝ Հայաստանի հյուսիս-արևելյան մասերի, Վանը՝ Հայաստանի հարավ-արևմտյան շրջանների և Թիֆլիսը՝ Վրաստանի համար։ Այսպիսով, XV դ. 30-ական թթ. վերջերից սկսած Երևանը դառնում է Արարատյան դաշտի և ամբողջ Արևելյան Հայաստանի վարչական կենտրոնը։ Կարա-կոյունլուների կողմից Երևանի կառավարիչ է նշանակվում Յաղուբ բեկը,

որը խոշոր դեր է խաղացել հայոց կաթողիկոսությունը Էջմիածնում վերականգնելու գործում։

Դրանից հետո Երևանը աստիճանաբար դառնում է նաև Հայաստանի տնտեսական ու կուլտուրական կյանքի կենտրոնը։ Արարատյան դաշտը, որ հնուց ի վեր հայ ժողովրդի պետական-քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կյանքի օրրանն էր, այժմ նորից կարևորագույն նշանակություն է ձեռք բերում հայ ժողովրդի կյանքում և իր վրա բևեռում այդ ժամանակ արդեն աշխարհով մեկ ցրված հայերի հայացքը։

Երևանը Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն է։ Նրա մասին հիշատակություններ կան դեռևս ուրարտական արձանագրություններում։ Մեր թվականությունից առաջ VIII դ. ուրարտական արձանագրություններից մեկում հիշատակված է այժմյան Երևանի տերիտորիայում ընկած Էրեբունի անունով խոշոր բնակավայրի մասին, իսկ Երևանին շատ մոտիկ Կարմիր բլուր կոչված վայրում հայտնաբերված է ուրարտական մի ամրոց-քաղաք։ Այս փաստերը վկայում են Երևանի հնագույն բնակավայր լինելու և նրա անունը Էրեբունի բառից առաջանալու մասին։

Կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածնում

Կաթողիկոսությունը, որպես հայկական եկեղեցու բարձրագույն օրգան, ոչ միայն ղեկավարի դեր է խաղացել հայ ժողովրդի կրոնական գործում, այլև մասնակցել է նրա քաղաքական կյանքին վերաբերող հարցերի լուծմանը, իսկ երբեմն էլ, պատմական դեպքերի բերումով, կատարել է քաղաքական իշխանության առանձին ֆունկցիաներ։ Այս առումով նա կապված է եղել հայկական աշխարհիկ քաղաքական իշխանության դերագույն օրգանների հետ և, հետևելով նրանց, փոխադրվել է այնտեղ, որտեղ այդ օրգանները փոխադրվում կամ հաստատվում էին։

XV դ. հայկական պետականություն այլևս գոյություն չուներ ո՛չ բուն Հայաստանում, ո՛չ էլ Կիլիկիայում։ Հայերին, բնականաբար, մտահոգում էր այն հարցը, թե որտեղ պիտի լինի կաթողիկոսությունը։ Հայ հոգևորականության մեծագույն մասը այն կարծիքին էր, որ Ամենայն Հայոց կաթողիկոսությունը նորից պիտի տեղափոխվի Հայաստան՝ Էջմիածին, իր հինավուրց վայրը։

Կիլիկիայում հայկական թագավորության անկումից հետո կաթողիկոսության վիճակը երերուն դարձավ։ Այնտեղ կենտրոնացած հայությունը կազմում էր հայ ժողովրդի փոքր մասը։ Կիլիկիայից, սկսած XV դ. սկզբներից, հայերը տասնյակ հազարներով

հեռանում էին ու գնում օտար երկրներ։ Դրանով աննպաստ դրություն էր ստեղծվում Սսի Ամենայն հայոց կաթողիկոսության համար, որը անպաշտպան էր մնում և մեկուսանում, կտրվում հայ ժողովրդից։ Այնուհետև, Սսի միջավայրը և կաթողիկոսության մեջ գործող անձինք մեծ մասամբ հակված էին միաբանելու կաթոլիկական եկեղեցու հետ, ենթարկվելու նրան։

Վերոհիշյալ երևույթները հայ հոգևորականությանը և, հատկապես, բուն Հայաստանի հոգևորականությանը բերեցին այն համոզման, որ Սսից Ամենայն հայոց կաթողիկոսությունն անհրաժեշտ է տեղափոխել Էջմիածին։ Այդ միտքը ծագել էր դեռևս Գրիգոր Տաթևացու մոտ, բայց այն մասսայականացրին և նրա իրականացման գործի գլուխ անցան Թովմա Մեծոփեցին և Հովհաննես Հերմոնեցին։ Նրանք համոզեցին Հայաստանի հոգևորականությանը, այդ թվում նաև Աղթամարի հակաթոռ կաթողիկոսին, ստացան Կիլիկիայի հոգևորականների մի մասի համաձայնությունը և 1440 թ. Գրիգոր կաթողիկոսից պահանջեցին կաթողիկոսությունը Սսից տեղափոխել Էջմիածին։ Սակայն Սսի կաթողիկոսությունը մերժեց այդ պահանջը։ Այն ժամանակ Հովհաննես Հերմոնեցին և Թովմա Մեծոփեցին հրավեր ուղարկեցին հայ բարձրաստիճան հոգևորականներին՝ հավաքվելու և որոշելու կաթողիկոսության հարցը։ 1441 թվականին ժողովի պատվիրակները նախ հավաքվեցին Երևանում, ապա գնացին Էջմիածին։ Պատվիրակների թիվը, Թովմա Մեծոփեցու վկայությամբ, 300-ից ավելի է եղել, որոնց մի մասը աշխարհիկ մարդիկ՝ «ազատք և տրդիք աղատաց, ձեռնաւորք և տանտուտէրք» էին։ Ժողովը որոշում է այլևս չճանաչել Սսի կաթողիկոսին որպես Ամենայն հայոց կաթողիկոսի և նոր կաթողիկոս է ընտրում Կիրակոս Վիրապեցուն։ Այսպիսով, բազմադարյան ընդհատումից հետո Էջմիածնում նորից է հաստատվում Ամենայն հայոց կաթողիկոսությունը։

Այս իրադարձությունը իր նշանակությամբ կրոնական-եկեղեցական հարցերի շրջանակից դուրս է գալիս։ Այն հետապնդում էր նաև քաղաքական նպատակներ՝ հայերին հեռու պահել պապականության և եվրոպական քաղաքական մյուս ուժերի ձեռքին գործիք դառնալուց և դրանով իսկ Արևելքի իշխանություններին, որոնք արդեն տիրում էին Հայաստանին, չկրգռել հայերի դեմ։

Բացի դրանից, կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածնում, այսինքն՝ մայր հայրենիքում, ունեցավ նաև այն նշանակությունը, որ դարձավ միջոց օտար երկրներ ցրված բազմահա-

զար հայությանը կապելու հայրենիքի հետ, արգելակելու նրանց օտարացումը և ձուլումը այլ ազգությունների հետ։

Աղ-կոյունլուների տիրապետությունը և հայ ժողովրդի ծանր վիճակը

Ջհանշահի իշխանության առաջին տարիներին Հայաստանում հաստատված խաղաղությունը երկար չտևեց։ Աղ-կոյունլուները Օսմանի, նրա հաջորդներ Համզայի և Ջհանգիրի օրոք բավականին ուժեղացան և բացի Աղձնիքից ու Սոփքից իրենց ենթարկեցին նաև Տուրուբերանի մեծ մասը և դարձան կարա-կոյունլուների վտանգավոր մրցակիցները։

Ջհանգիրի օրոք աղ-կոյունլուների և կարա-կոյունլուների միջև հակամարտությունը շարունակվում էր. թեև 1461 թ. Ջհանշահին հաջողվեց իրեն ենթարկել Ջհանգիրին և հարկատու դարձնել, բայց և այնպես աղ-կոյունլուները չդադարեցրին պայքարը կարա-կոյունլուների դեմ։ Ջհանգիրի հաջորդը և որդին՝ Ուզուն-Հասանը Ջհանշահի մահից (1467) հետո պատերազմ սկսեց Ջհանշահի հաջորդ Հասան Ալիի դեմ։ Պատերազմական գործողությունները կարճատև եղան։ Կարա-կոյունլուները պարտվեցին, նրանց տիրապետության տակ գտնվող բոլոր երկրամասերը անցան աղ-կոյունլուների ձեռքը։

Աղ-կոյունլուների պետությունը չկարողացավ իր գոյությունը պահպանել երկար ժամանակ։ Ուզուն-Հասանի մահից հետո, 1479 թ. սկսած, նրանց իշխանությունն անկում ապրեց։ Իշխանատենչ տարրերը մեկը մյուսի ետևից գլուխ բարձրացրին, չլատեցին պետության ուժերը և արագացրին նրա անկումը, որը տեղի ունեցավ 1502 թ.։

Թուրքմենական ցեղերի ավելի քան 100-ամյա տիրապետության ու ասպատակությունների տարիներին ոչ միայն ոչնչացվեց ժողովրդի մի մասը, այլև տասնյակ հազարավոր հայեր դատապարտվեցին ստրկության, վաճառքի հանվեցին, ավերվեցին գյուղերն ու քաղաքները, խոպան դարձան արտերն ու այգիները, ժողովուրդը ծայրագույն թշվառության և աղքատության հասավ։ Կարելի է ասել, որ նրանց տիրապետությունը հայ ժողովրդի պատմության մեջ ամենամգձավանջային շրջանն է։ Նրանց տիրապետությունը իր ավարտին հասցրեց երկրի ավերումն ու ամայացումը, քաղաքների անկումն ու կործանումը, որ սկսվել էր մոնղոլ-թաթարների տիրապետության ժամանակներից։

Ժողովրդի աղքատացումն ու նրա տնտեսության քայքայումը պատկերավոր արտահայտել է XV դ. պատմագիր Թովմա Մեծոփեցին։ Նա գրում է, որ մի քաղաք և մի քանի գյուղ միասին վեր-

ցրված այնքան միջոց չունեին, որ կարողանային վճարել մի գերի մարդու փրկագինը։ Այս ժամանակաշրջանում հայ ժողովրդի նոր զանգվածներ հեռացան Հայրենիքից, դաղթելով օտար երկրներ։

Հայ բնակչության արտադաղթին հակառակ, Հայաստանում տեղի էր ունենում մի այլ երևույթ ևս։ Դեռևս մոնղոլական տիրապետության ժամանակներում, հատկապես XIII դ. վերջերից ըսկըսած, Անդրկովկաս և Հայաստան ներխուժեցին մոնղոլ-թաթարական և թուրքմենական մի շարք ցեղեր։ Այդ ցեղերը վարում էին թափառաշրջիկ կյանք և զբաղվում անասնապահությամբ։ Նրանք երկար ժամանակ ապրելով Հայաստանում և նրա հարևան երկրներում, սկսեցին ընտելանալ նստակյաց կյանքին, զբաղվել երկրագործությամբ և տնտեսության այլ ճյուղերով։

Այդպիսով, հայ բնակչության կողքին, Հայաստանում մշտական բնակություն հաստատեցին թաթարական և թուրքմենական ցեղեր, որոնք, օգտագործելով իրենց իշխող դիրքը, զենքն ու ուժը, տիրացան երկրի արգավանդ վայրերին, լավագույն արոտատեղերին և երկրում մնացած հայ բնակչությանը քշեցին դեպի լեռնալանջերը, ձորերը և այլ ապառաժուտ և ոչ բերրի տեղեր։ Հայ բնակչության և նրանց բնակավայրերի կենտրոնացումը լեռնալանջերին, հաղորդակցության ու շփման համար դրեթե անմատչելի վայրերում՝ բխում էր նաև ինքնապաշտպանության անհրաժեշտությունից։ Այդպիսի վայրերում ապրելով, նրանք համեմատաբար ավելի հաջող էին պաշտպանվում զավթիչների և ասպատակողների հարձակումներից ու ավարառությունից։

ԳԼՈՒԽ XXX

ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Քաղաքական դրությունը Մերձավոր Արևելքում XVI դարի սկզբին

XV դարի վերջերին և XVI դ. սկզբներին Մերձավոր Արևելքում քաղաքական նոր ուժեր ասպարեզ եկան։ Այդ ուժերից մեկը Օսմանյան կամ Օթոմանյան սուլթանությունն էր, իսկ մյուսը՝ Սեֆևյան Պարսկաստանը։ Հայաստանն ընկած էր այս երկու խոշոր պետությունների միջև և XVI դ. սկզբներին դարձավ նրանց պատերազմական գործողությունների թատերաբեմը։

XIII դարի երկրորդ կեսին թուրքական մի ցեղախումբ, իր ցեղապետ Օսմանի գլխավորությամբ, արևելքից անցավ Փոքր Ասիա և 1299 թ. դրեց Օսմանյան պետության հիմքը։

Օսմանի հաջորդները նվաճեցին Փոքր Ասիայի արևմտյան շրջանները, մտան Բալկանյան թերակղզի, Մուհամեդ II սուլթանի օրոք 1453 թ. պարտության մատնելով Բյուզանդական կայսրությանը, գրավեցին Կոստանդնուպոլիսը և վերջ տվեցին կայսրության գոյությանը։

Օսմանյան սուլթանության նվաճած երկրներում մեծ թվով հայ բնակչություն կար։ Սուլթանությունը, այս և մի շարք այլ հանգամանքներ նկատի ունենալով, 1461 թ. Կոստանդնուպոլսում հիմնեց հայկական պատրիարքություն, որին հանձնարարվեց հայերի կրոնական ու կրթական գործերի տնօրինությունը։

Սուլթանության սկզբնական շրջանի համբերատար մեղմ քաղաքականության նպատակն էր՝ շահել հայերի համակրանքը և նրանց ներգրավել պետության տնտեսական կյանքի ասպարեզ։ Դա տվեց իր արդյունքները։ Մինչև XV դ. երկրորդ կեսը հայերը մեծ

մասամբ դաղթում էին դեպի Ղրիմ, Արևմտյան Ուկրաինա և եվրոպական այլ երկրներ, իսկ XV դ. վերջերից նրանք գնում էին նաև Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա և փոքրասիական ծովափնյա այն քաղաքները, որոնք գտնվում էին Օսմանյան սուլթանության ձեռքին։

Օսմանյան սուլթանությունը XV դ. վերջերին արևմուտքում լուրջ դիմադրության հանդիպելով, իր հայացքն ուղղեց դեպի արևելք՝ Հայաստան, Ասորիք, Միջագետք և այլն։ Սուլթան Բայազիդ II-ի օրոք օսմանցիներն արդեն մի քանի ծանր հարված հասցրին աղ-կոյունլուներին, նրանց դուրս քշեցին Փոքր Ասիայի սահմաններից և մոտեցան Հայաստանին։

Այդ նույն ժամանակներում Մերձավոր Արևելքում ստեղծվեց մի նոր ուժ՝ Սեֆեյան պետությունը, որը նույնպես ձգտում էր գերիշխող դառնալ հիշյալ երկրներում։ Պարսկաստանի Սեֆեյան պետության հիմնադիր Իսմայիլը XV դարի վերջերին իր շուրջը համախմբեց կզլբաշ ցեղերին և պայքարի դուրս եկավ աղ-կոյունլուների տիրապետության դեմ։

Իսմայիլը մի քանի ճակատամարտերում հաղթություն տանելով, դրավեց Բաքվի, Շիրվանի շրջանները, մտավ Հայաստան, 1502 թ. Շարուրի դաշտում վերջնականապես պարտության մատնեց աղ-կոյունլուներին, տիրացավ իշխանությանը և Թավրիզում իրեն հայտարարեց շահ։ Այդպիսով, Պարսկաստանում հիմք դրվեց մի նոր պետության՝ որի գլուխ անցավ Իսմայիլը կամ՝ Շահ-Իսմայիլ I-ը (1502—1524)։

Այս նոր պետության մեջ մտան Պարսկաստանը, Միջագետքը, Ատրպատականը, Վրաստանն ու Հայաստանը։ Այսպիսով, XVI դ. սկզբին, Մերձավոր Արևելքի երկու խոշորագույն պետությունները՝ Սեֆեյան Պարսկաստանը և Օսմանյան սուլթանությունը սահմանակից դարձան, ընդ որում նրանց բաժանող գիծը դարձավ Եփրատ գետը՝ Հայաստանի արևմտյան սահմանը։

Հայաստանը պարսկա-օսմանյան կռիվների թատերաբեմ

Օսմանյան սուլթանությունը XVI դ. սկզբներին ձգտում էր գրավել Միջագետքը, Հայաստանը, Անդրկովկասը և արևելյան այլ երկրներ, որոնք գտնվում էին Սեֆեյան Պարսկաստանի տիրապետության տակ։ Օսմանյան սուլթան Սելիմ I Ահեղի (1512—1520) զորքերը 1514 թ. անցան Եփրատը, մտան Կամախի շրջանը և, ասպատակելով Բարձր Հայքի մի շարք գավառներ, արշավեցին դեպի Հայաստանի կենտրոնական շրջանները։ Շահ-Իսմայիլի զորքերը նահանջեցին

դեպի Ատրպատական, իրենց ետևից թողնելով հրկիզված և ավերված հայկական գյուղեր, ոչնչացված ցորենի դաշտեր։ Օսմանյան թուրքերը Տուրուբերանով անցան Այրարատյան նահանգ, ապա Վասպուրականի վրայով մտան Ատրպատական։ Ուլմիո լճի մոտերքում, Չալդրան կոչված վայրում, 1514 թ. օգոստոսին երկու բանակների միջև ճակատամարտ տեղի ունեցավ։ Իսմայիլի բանակը կռվում էր անձնուրաց, բայց, փոքր զինված լինելու պատճառով, պարտություն կրեց և նահանջեց դեպի Պարսկաստանի խորքերը, իր հետ տանելով ծանր վիրավորված Շահ-Իսմայիլին։

Թուրքական զորքերը չհետապնդեցին պարտված պարսիկներին։ Նրանք Հայաստանի վրայով ետ վերադարձան, 1515 թ. արշավեցին դեպի Ասորիք, մտան Կիլիկիա, իսկ հաջորդ տարին Սեֆյաններից գրավեցին Միջագետքը։ Օսմանյան սուլթանությունը 1514—1516 թթ. արշավանքների ժամանակ գավթեց Հայաստանի հարավ-արևմտյան մի շարք նահանգներ ու գավառներ, այդ թվում և Երզնկայի ու Կամախի շրջանները, Բարձր Հայքի ու Տուրուբերանի մի քանի գավառներ, Ծոփքն ու Մշո դաշտը։

Օսմանյան և Սեֆյան բանակների միջև պատերազմական գործողությունները Հայաստանում վերսկսվեցին 1532 թ.։ Թուրքական բանակը 1533 թ. գրավելով Խլաթ, Արճեշ, Վան քաղաքները ու Բարձր Հայքը, ոտնատակ տվեց Հայաստանի կենտրոնական շրջանները, անցավ Ատրպատական և սեպտեմբերին մտավ Թավրիզ։ Այդ նույն թվականին պարսից Թահմազ I շահը (1524—1576) սկսեց ասպատակել Հայաստանի արևելյան գավառները։ Պարսկական և օսմանյան բանակների այդպիսի երկկողմանի արշավանքները կրկնվեցին 1549—1554 թթ.։ Պարսկական զորքերը ասպատակում ու կողոպտում էին Բարձր Հայքը, Տուրուբերանը, Վասպուրականը, թուրքական զորքերը՝ Շիրակը, Արարատյան դաշտը, Գյուլիքը, Նախիջևանի շրջանը և Հայաստանի այլ գավառներ։

1555 թ. մայիսի 29-ին Օսմանյան սուլթանության և Սեֆյան Պարսկաստանի միջև հաշտություն կնքվեց, որի համաձայն առաջին անգամ Հայաստանը բաժանվեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև։ Այդ երկու պետությունների՝ Հայաստանով անցնող սահմանագիծը դարձավ Հայկական պարը։ Նրանից դեպի հարավ ընկած հայկական հողերը՝ Բարձր Հայքը, Տուրուբերանի, Աղձնիքի, Ծոփաց և Վասպուրականի նահանգները անցան Թուրքիային, իսկ դեպի հյուսիս ընկած շրջանները՝ Շիրակը, Դուգարքը, Արա-

ռատյան դաշտը, Սյունիքը և Վասպուրականի արևելյան մի քանի գավառներ անցան Պարսկաստանին։

Օսմանյան սուլթանությունը, օգտագործելով Սեֆևյան Պարսկաստանում եղած գահակալական խլրտումները, 1578 թ. նորից պատերազմ սկսեց Պարսկաստանի դեմ։

Օսմանյան սուլթան Մուրադ III-ը (1574—1595) արևելյան բանակի հրամանատար նշանակեց Մուստաֆա Լալա փաշային և կարգադրեց արշավել Հայաստանի և անդրկովկասյան երկրների վրա։ Պարսից շահ Մուհամեդ Խուդաբանդան (1578—1587) պարսկական բանակի հրամանատարությունը հանձնեց իր որդի Համզե Միրզային, որը շտապեց դիմադրելու օսմանյան զորքերին և կասեցնելու նրանց առաջխաղացումը։

80-ական թվականներին օսմանցիները շարունակում էին առաջ շարժվել և պարսիկներին դուրս մղել Հայաստանից, Վրաստանից և Ատրպատականից։ Նրանք նվաճեցին ամբողջ Հայաստանը, Անդրկովկասը և տիրացան Թավրիզ քաղաքին։ Այդ ժամանակ Սեֆևյանները իրենց իշխանությունը լիակատար կործանումից փրկելու համար դիմեցին Մուրադ III-ին հաշտություն կնքելու առաջարկով։

Հաշտությունը կնքվեց 1590 թ. մարտին պարսիկների համար շատ թանկ գնով։ Նրանք ստիպված եղան օսմանցիներին զիջել Հայաստանը, Վրաստանը, Աղվանքը և Ատրպատականը՝ Թավրիզ քաղաքով։

Ժողովրդի ծանր դրությունը և ազատագրական ձգտումները

Հայաստանն ամբողջ XVI դ. ապրեց պատերազմների, սովի, ավերածությունների, քայքայման, բնակչության ոչնչացման և գերեվարության տագնապալի պայմաններում։

Հայ ժողովրդի համար ստեղծված այդ մղձավանջային վիճակը ժամանակակից և ականատես Թադևոս Սեբաստացի վարդապետը արտահայտել է հետևյալ սեղմ նախադասությամբ. «Ոչ գեղ, ոչ քաղաք թողուցին, զամենայն հրով այրեցին, զայգիքն ամէն կտրեցին, զարտորայքն ամէն այրեցին, զամենայն սրով մաշեցին»։

Թուրքերը վերոհիշյալ արհավիրքներին ավելացրին նաև մի այլ չարիք, որն ամենից ծանրն ու անտանելին էր հայ ժողովրդի համար։ Սուլթան Սուլեյման I-ը (1520—1556) իր ենիչերական զորամասերը համալրելու նպատակով կարգադրեց երկուսից-հինգ տարեկան քրիստոնյաներից արու երեխաներին հավաքել և զորանոցային պայմաններում վարժեցնել զինվորական գործին։

Այսպիսի ծանր պայմաններում հայերի մեջ շարունակում էր պահպանվել հայրենիքից հեռանալու ձգտումը, բազմահազար հայեր թողնում էին իրենց տունն ու տեղը և դնում օտար երկրներ։

Սակայն, որքան էլ մեծ թվով հայեր հեռանային երկրից, այնուամենայնիվ, հայ բնակչության մեծագույն մասը մնում էր հայրենիքում՝ Հայաստանում։ Այդ մասն սկսում է ելք որոնել բստեղծված ծանր դրությունից դուրս գալու համար։ Սեփական ուժերով օտար զավթիչներին, այն էլ այդպիսի հզոր թշնամիներին, հայրենիքից դուրս քշելու և նրանց լծից ազատվելու հավանականությունը փոքր էր։ Անդրկովկասյան եղբայրական ժողովուրդներից օգնություն ստանալու հույսը նույնպես բացառված էր, քանի որ նրանք նույնպիսի վիճակում էին գտնվում։ Մնում էր հայացքն ուղղել դեպի հեռավոր Արևմուտք, որին հայերը հաճախ էին դիմել անցյալում։

Այդպիսի պարագաներում մարդիկ սկսեցին խորհել երկրի և ժողովրդի ազատագրության մասին։ Դրանցից մեկը, դուցե և առաջինը, եղել է հայոց կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցին։ Նա իր ժամանակի զարգացած մարդկանցից էր, կրթություն էր ստացել Կոստանդնուպոլսում, եղել էր Լեհաստանում, ղեկավարել հայկական դաղթավայրերի հոգևոր գործերը և այցելել Մոսկվա։ Նա տիրապետում էր մի քանի օտար լեզուների, այդ թվում և լատիներենին։

1547 թ. Էջմիածնում հրավիրվում է մի գաղտնի ժողով, որտեղ Սալմաստեցու առաջարկությամբ քննության է առնվում Հայաստանի ազատագրության հարցը։ Ժողովը որոշում է դիմել Վենետիկի հանրապետությանը և կաթողիկոսի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ օգնության գործը հաջողեցնելու համար։

Վենետիկի հանրապետությանն ուղարկած դիմումի մեջ ասված էր. «Մենք խեղճ հայքս ի մասին Պարսից, ի ներքոյ խիստ ասահապանաց այլադենից, կու սպասեմք ձեր գալուն... Դիտեմք որ ի զօրութենէ տերանց Վենետաց պիտի սկսի մեր փրկութիւնն և ազատութիւնն։ Կուղարկեմք մեր պատրիարք Ստեփանոս, շատ պատնառաց համար, առ մեծապայծառ տէրութիւն ձեր, որ շատ գութիւն ընծայէ ձեզ և մեր կողմանէ յանձնէ զմեզ առ ձեզ»։

Ստեփանոս Սալմաստեցին 1549 թ. մեկնում է Եվրոպա՝ լինում է Վենետիկում, Հռոմում, անցնում է Գերմանիա, ապա Լեհաստան և 1551 թ. վերադառնում Էջմիածին՝ առանց որևէ օգնության կամ օգնության խոստում ստանալու։

Այս անհաջողությունը չընկճեց հայերին։ 1562 թվականին տեղի ունեցավ մի այլ ժողով, այս անգամ Սեբաստիայում՝ Միքայել Սեբաստացու նախաձեռնությամբ և գլխավորությամբ։ Նա Սալմաստեցու բացակայության ժամանակ մնացել էր կաթողիկոսի տեղապահ, իսկ հետո ընտրվել կաթողիկոս։ Միքայել Սեբաստացու հրավիրած ժողովը հետապնդել է նույն նպատակը, ինչ որ 1547 թ. Էջմիածնի ժողովը։ Այստեղ էլ որոշվում է նոր դիմում հղել Եվրոպա՝ Հռոմի պապին և մյուս իշխանություններին՝ Հայաստանը օսմանյան և պարսկական տիրապետությունից ազատագրելու խնդրանքով։ Այս անգամ դիմումը Հռոմ տարավ մի պատվիրակություն, որի գլուխ կանգնած էր աշխարհիկ անձնավորություն՝ Աբգար Եվդոկացին կամ Թոխատեցին։ Պատվիրակության կազմումն էր նաև Աբգարի որդի Սուլթանշահը։

Այս պատվիրակության նպատակների մասին որոշակի տեղեկություններ է հաղորդում Սուլթանշահը, հայտարարելով, որ Եվրոպա գնալու իրենց նպատակն էր՝ նախ հիշեցնել հռոմեացիների և հայերի միջև կնքված դաշինքի մասին և նորոգել այն, երկրորդ՝ իմանալ, թե եվրոպական իշխանությունները ինչ վերաբերմունք ունեն հայերի նկատմամբ և երրորդ՝ համոզել նրանց՝ օգնել հայերին ազատագրվելու օտարների լծից։ Այս նույն բանը հաստատում է նաև Միքայել Սեբաստացին Հռոմի պապին ուղարկած իր մի նամակում։

Աբգար Եվդոկացու պատվիրակությունը նույնպես որևէ արդյունքի չհասավ։ Հայաստանի ազատագրության համար Սալմաստեցու և Սեբաստացու ձեռնարկումները այն նշանակությունն ունեցան, որ հայերը շուրջ երեք հարյուր տարվա լռությունից հետո նորից բարձրացրին ազատագրական պայքարի գաղափարը։ Այդ ձեռնարկումները հայ ժողովրդի ազատագրական պայքարի սկիզբն են, թեև Արևմուտքի օգնությամբ ազատագրվելու ուղին դրական արդյունքի հասցնել չէր կարող։

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ

Նոր պատերազմի նախապատրաստումը

Շահ-Աբաս I-ը (1587—1628) չէր հաշտվում 1590 թ. պայմանագրով Պարսկաստանի կրած տերիտորիալ կորուստների հետ։ Նա շուրջ 12 տարի տևող խաղաղ շրջանում դրսպեց ներքին հուզումները, միավորեց երկիրը, ստեղծեց ուժեղ

կենտրոնացված իշխանություն և 1597 թ. ծանր պարտության մատնելով ուզբեկներին, ապահովեց Պարսկաստանը նրանց հետագա հարձակումներից։ Այս ձեռնարկումներին զուգընթաց, Պարսկաստանի կենտրոնական իշխանությունը հատուկ ուշադրություն դարձրեց պետության տնտեսական կյանքի և հատկապես ֆինանսական դրության բարելավման վրա։ Այդ նպատակով խրախուսվեց ներքին և արտաքին առևտուրը, մետաքսի վաճառքը հայտարարվեց պետական մենաշնորհ, արդելվեց ոսկու և այլ միջոցների արտահանումը երկրից։ Բայց Շահ-Աբասի առաջին մտահոգության առարկան բանակի ուժեղացումն էր։

Այդ ժամանակ Պարսկաստանում էին գտնվում անգլիացի Անտոն և Ռոբերտ Շերլի եղբայրները, որոնք օգնեցին Շահ-Աբասին վերակազմավորելու պարսկական բանակը եվրոպական բանակների օրինակով, դարձնելով այն մշտական և զինելով հրազենի նոր տեսակներով, հատկապես թնդանոթներով։

XVI դ. 90-ական թթ. Թուրքիայի արևելյան նահանգները, որոնք ընդհանուր անունով կոչվում էին Անատոլիա, ապրեցին խռովահույզ մի ժամանակաշրջան։ Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններում բռնկել էր գյուղացիական ապստամբություն, գլուխ էին բարձրացրել նաև զանազան բախտախնդիր մարդիկ, օգտագործելով աշխատավոր գյուղացիության դժգոհությունը։ Նրանց բոլորին կոչում էին «ջալալիներ», այսինքն՝ ապստամբներ։

Սեֆևյան Պարսկաստանը շտապում էր օր առաջ օգտագործել Թուրքիայում ստեղծված անկայուն իրադրությունը և նրանից խլել Հայաստանն ու Անդրկովկասը։ Քաղաքական իրադրությունը Պարսկաստանի համար նպաստավոր էր նաև նրանով, որ Հայաստանի ու Անդրկովկասի համարյա բոլոր ժողովուրդները խիստ թշնամաբար էին տրամադրված դեպի Թուրքիան։ XVII դ. պատմագիր Առաքել Դավրիժեցին պատմում է, որ մի շարք հայ և ադրբեջանցի իշխաններ, հոգևորականներ և այլ անձինք դիմում են Շահ-Աբասին իրենց երկիրն արշավելու հրավերով, որովհետև «օսմանցիները... ծանր հարկատրահանջությամբ և կեղեքմամբ զրկում ու կողոպտում էին և հավատքի կուսեճություն (խստություն) գործադրում», որ «բաղում տառապանօք չարչարէին ոչ միայն զաղդն Հայոց, այլև զազգն վրաց և մահմեդականաց»։ Բացի այդ, Թուրքիան գերում էին հաղարավոր մարդկանց, տանում հեռավոր երկրներ վաճառելու, ավերում էին գյուղերն ու ավանները, անխնա կոտորում բնակչությանը։

Այդ պատճառով XVII դ. առաջին տարիներին հայերից, վրա-

ցիներից, ադրբեջանցիներից և քրդերից, հատկապես նրանց վերնախավային տարրերից, ներկայացուցիչներ գնացին Շահ-Աբասի մոտ և նրան խնդրեցին, որ նա արշավի դեպի Հայաստան, Ատրպատական, Վրաստան և այդ երկրներն ազատի օսմանյան Թուրքերի լծից։ Նույնիսկ Թուրքիային ենթակա շրջաններից հաճախ բնակչությունը խմբերով անցնում էր Պարսկաստան։ Վերոհիշյալ իրադրությունը նպաստավոր էր Պարսկաստանի համար, և Շահ-Աբասը շտապեց օգտագործել այն։

Շահ-Աբասի արշավանքը և Երևանի գրավումը

1603 թ. սկսվեց Թուրք-պարսկական պատերազմների վերջին շրջանը։ Պատերազմ սկսելու առիթ հանդիսացավ օսմանյան զորահրամանատար Ալի փաշայի հարձակումը Սալմաստ քաղաքի վրա, որի կառավարիչ քուրդ Ղազի խանը պարսիկների օգնությունը խնդրողներից մեկն էր։

Պարսկական բանակը արագ ընթացքով մտավ Թավրիզ, առանց դժվարության դրավեց այն, Սոֆիանա գաշտում ծանր պարտություն մատնեց Ալի փաշայի 20 հազարանոց բանակին և 1604 թ. սկզբին առաջ շարժվեց դեպի Նախիջևան, գրավեց Ջուղան, Նախիջևանը և, հետապնդելով Թուրքերին, եկավ-ու պաշարեց Երևանը։

Նույն թվականին Շահ-Աբասը անձամբ Թավրիզից շարժվեց դեպի Երևան։ Նա ճանապարհին մտավ Ջուղա քաղաքը, որի բնակիչները նրա համար ճոխ ընդունելություն կազմակերպեցին։ Դավրիժեցին պատմում է, որ ջուղայեցիները, որոնք համարյա բոլորն էլ հայ առևտրականներ և արհեստավորներ էին, Շահ-Աբասին գիմավորելու համար հագել էին իրենց տոնական զգեստները և «ի զարդ և ի զէնս ոսկեհուռն սխրատեսիլ հանդերձից պճնազարդեալք ընդ առաջ ընթանային»։ Այն փողոցը, որով անցնելու էր շահը, ծածկված էր թանկագին գորգերով և զումաշով։

Շահ-Աբասը, Ջուղայում երեք օր ճոխ ընդունելություն վայելելուց և հայ հարուստ առևտրականներից առատ նվերներ ստանալուց հետո, ճանապարհ ընկավ դեպի Երևան։ Պարսիկները չէին շտապում անմիջապես գրավել Երևանը։ Այդ պատճառով քաղաքի պաշարումը տևեց ութ ամիս՝ մինչև 1604 թ. ամառը։ Այդ ժամանակամիջոցում պարսկական զորքերի մի մասը արշավանքներ էր կազմակերպում դեպի Հայաստանի հարավային և արևմտյան նահանգները, ասպատակում Արճեշի, Բերկրիի, Վանի, Ալաշկերտի, Մանազկերտի, Էրզրումի, Խնուսի, ապա նաև Սևանա լճի շըր-

չակայքը ու այդ վայրերից տասնյակ հազարավոր մարդկանց քշում-բերում Արարատյան դաշտ։

1604 թվականի ամռանը գրավվեց նաև Երևան քաղաքը։ Սեֆեյան Պարսկաստանի հաղթանակը Թուրքիայի նկատմամբ կարծես թե կատարյալ էր։ Սակայն հետագա դեպքերը զգալի չափով փոխեցին պատերազմական գործողությունների ընթացքը։ 1604 թ. Կարին է ուղարկվում Սինան փաշա Ջղալօղլին՝ մի մեծ բանակով, որին հանձնարարված էր հակահարձակման անցնել և ետ մղել պարսիկներին։ Նույն թվականի աշնանը սկսվեց թուրքերի հակահարձակումը։ Շահ-Աբասը որոշեց ճակատամարտ չտալ, այլ նահանջել՝ ամայացնելով իր զորքի նահանջի և թշնամու բանակի հարձակման ուղղությամբ ընկած շրջանները, թշնամուն զրկել պաշար ձեռք բերելու հնարավորությունից, թուլացնել նրան, ապա նոր մարտի բռնվել։ Պարսկական բանակը նահանջում էր Արարատյան դաշտով, Արաքս գետի հոսանքի ուղղությամբ, հետևելով բռնությամբ տեղահան արված և դեպի Պարսկաստան քշվող բազմահազար բնակչության շարասյանը։

Մի շարք փոքր բախումներից հետո 1605 թ. հոկտեմբերի 25-ին Սոֆիան գյուղի մոտ տեղի ունեցավ պարսկական և օսմանյան բանակների ճակատամարտը, որը վերջացավ թուրքերի ծանր պարտությամբ։ Դրանից հետո Թուրքիայի և Պարսկաստանի միջև ժամանակավոր հաշտություն կնքվեց, որի համաձայն վերահաստատվեց 1555 թ. հաշտությամբ ընդունված սահմանագիծը։

Բնակչության բռնի գաղթեցումը

Հայ ժողովրդի համար պարսկա-օսմանյան պատերազմներից ամենածանրն ու ողբերգականը եղավ XVII դ. սկզբների պատերազմը, որին ուղեկցում էին ոչ միայն սովորական դարձած ավերածությունն ու ավարառումը, կոտորածն ու գերեվարումը, այլև բնակչության մասսայական տեղի գաղթեցումը, ժողովրդի հայրենազրկումը։

Այդ տեղահանումը համապարփակ բնույթ էր կրում և հետապնդում էր բնակչությանը ընդմիշտ իր հայրենիքից հեռացնելու և Պարսկաստանում մշտական բնակության դատապարտելու նպատակ։ Շահ-Աբասը հայ առևտրականներին և արհեստավորներին տեղափոխեց Պարսկաստանի քաղաքները՝ այնտեղ առևտուրն ու արհեստագործությունը զարգացնելու համար, իսկ Արարատյան դաշտի և Հայաստանի մյուս շրջանների գյուղացիներին՝ այնտեղ բամբակագործությամբ և գյուղատնտեսության այլ ճյուղերով զբաղվելու համար։

Բռնի տեղահանվեցին Հայաստանի մի շարք շրջանների, գերազանցապես Արարատյան դաշտի ու նրա շրջակայքի գավառների բնակիչները։ Տեղահանումն սկսվեց 1604 թ. Երևանը գրավելուց հետո, մի քանի հերթով։ Առաջին հերթին Պարսկաստան քշվեց ժողովրդի այն մասը, որ պարսկական զորքերն իրենց արշավանքների ժամանակ Հայաստանի տարբեր շրջաններից գերել ու բերել էին Արարատյան դաշտ։ Երկրորդ տեղահանումը կատարվեց նույն թվականի աշնանը, որ կրեց համատարած բնույթ և ուղեկցվում էր երկրի ավերմամբ ու ամայացմամբ։ Տեղահանման շարժառիթը օսմանյան զորքերի հակահարձակումն էր։

Շահ-Աբասը յուրաքանչյուր գավառի բնակչությանը տեղահան անելու համար նշանակում էր առանձին զորավարներ, իսկ ընդհանուր ղեկավարությունը և Երևանի ու Արարատյան դաշտի բնակչության տեղահանումը հանձնարարվել էր Ամիրգունա խանին, հրամայելով՝ «ուր և կարասցեն ձեռն արկել, արտասահման արարեալ վարեսցեն, և ոչ թողուցուն ամենևին շունչ կենդանի»։ Այդպես էլ արվեց։ Ամբողջ բնակչությունը՝ հայ, ադրբեջանցի, վրացի և այլն, առանց խտրության, տեղահան էր արվում և քշվում Պարսկաստան։ Նրանց տները, ունեցվածքը, պարենը, անասնակերը այրում, ոչնչացնում էին, որպեսզի օսմանցիների ձեռքը չընկներ, և գաղթող բնակչությունն էլ հույսը կտրեր տուն ու տեղից և այլևս չվերադառնար։

Գաղթող բնակչության շարասյան լայնությունը հասնում էր «ի ստորոտէ լերանցն Գառնւոյ մինչ ի գագն Երասխայ մեծի գետոյն», իսկ երկարությունը՝ երկու-երեք օրվա ճանապարհ, այսինքն՝ 70—100 կիլոմետր։

Պարսկական զորքերը տեղահանված բնակչությանը ենթարկում էին ծանր տանջանքների ու դաժան բռնությունների, գլխատում էին բոլոր նրանց, ովքեր չէին կարողանում շարունակել ճանապարհը, ըմբոստացողների ու փախչելու փորձ կատարողների գլուխները կտրում և նիզակների վրա ամրացրած տնկում էին ճանապարհի եզրերին, որ ահաբեկեն մարդկանց և ստիպեն նրանց ետ չմնալ, չխուսափել գաղթից։

Գաղթող բնակչության համար ամենաողբերգականը Արաքսն անցնելու պահն էր։ Եղած կամուրջներն ու մյուս միջոցները չէին բավարարում Արաքսի ափին կուտակված հարյուր հազարավոր մարդկանց արագ և շտապ գետանցին։ Պարսիկները երկյուղ կրելով, որ թուրքերը կարող են հասնել իրենց, ձգտում էին, որքան կարելի է, շուտ անցնել գետը և ազատվել հակառակորդի հետա-

պընդումից։ Այդ պատճառով Շահ-Աբասը հրամայում է իր զորքերին՝ ստիպել ժողովրդին լցվել դետը և ոտքով անցնել մյուս ափը։

Տեղի է ունենում ամենաողբերգական տեսարան։ Պարսիկ զինվորները մերկ սրերը ձեռներին, մահվան սպառնալիքի տակ քշում էին ժողովրդին դեպի գետը։ Այդ մասին են պատմում Առաքել Դավրիժեցու տարտնջուցիչ խոսքերը՝ «Ցառաջ զանհուն դետն տեսանէին իբրև ղծով՝ որ խեղդէր, և յետուստ զսուրն պարսից՝ որ սպանանէր»։ Մարդիկ լցվում էին ջուրը։ Ով կարողանում էր ճեղքում էր Արաքսի կոհակներն ու անցնում մյուս ափը, իսկ ով չէր կարողանում, առանձնապես ծերերն ու երեխաները, կանայք ու թուլակազմ մարդիկ, զոհ էր գնում գետի ալիքներին։

Նույն ճակատագիրն ունեցան նաև Ջուղայի բնակիչները, որոնք այնպես փառահեղ ընդունելություն էին ցույց տվել Շահ-Աբասին։ Վերջինիս հրամանով բռնությամբ տեղահան արին նաև ջուղայեցիներին, այրեցին քաղաքը, ոչնչացրին այն ամենը, ինչ որ բնակիչները չէին կարողացել վերցնել իրենց հետ կամ չէին կողոպտվել պարսիկների կողմից։

Պարսիկները որքան էլ աշխատեցին բոլորին տեղահանել, այնուամենայնիվ, շատերին հաջողվեց լեռներում, անտառներում, այրերում պահվելով, պարսկական զինվորներին դիմադրություն ցույց տալով կամ ճանապարհից փախչելով խուսափել գաղթեցումից։ Ծղել են դեպքեր, երբ բնակչությունը դիմել է ուժի, չի գաղթել և ստիպել է պարսկական զինվորներին հետ գնալ։ Այդպիսի դեպքերից է Գառնի գյուղի բնակչության դիմադրությունը։

Գառնեցիները, ինչպես պատմում է Դավրիժեցին, «սրով և բրով՝ քարիւ և փայտիւ» հարձակվեցին Ամիրգունա խանի ուղարկած զինվորների վրա, շատերի կառափները ջարդեցին և ետ շրջրտեցին։ Նույն գավառի մի քանի գյուղերի բնակիչներ բարձրացել էին լեռները, թաքնվել այրերում և զերծ մնացել տեղահանումից։ Իսկ երբ Ամիրգունա խանը անձամբ, մի ջոկատի գլուխ անցած, եկավ Գնդարդա ձորի այրերում թաքնվածներին տեղահան անելու, նրանք խանին դիմավորեցին նետերով և քարերի տարափով։

Տեղահան արված բնակչությունը 1605 թ. գարնանը շարունակեց իր ճանապարհը դեպի Պարսկաստան։ Նրա մի մասը՝ գյուղացիները տեղավորվեցին Սպահան քաղաքի շրջակա գավառներում, իսկ մյուս մասը, հատկապես առևտրականները և արհեստավորները՝ քաղաքներում։ Շահ-Աբասը Ջուղա քաղաքի բնակիչ-

ներին բնակության վայր տրամադրեց Սպահանում, ուր նրանք կառուցեցին իրենց առանձին թաղամասը և այն անվանեցին Նոր Ջուղա։ Դրանով էլ հիմք դրվեց Նոր Ջուղայի հայկական գաղթավայրին։

Շահ-Աբասի հրամանով կատարված այս վայրագ գաղթեցումը հայ ժողովրդի պատմության մեջ նրա գլխին եկած մեծագույն չարիքներից մեկն էր։ Բռնությամբ Պարսկաստան քշվեցին հարյուր հազարավոր հայեր։ Այդ ծանրագույն հարված էր հայ ժողովրդի համար, որովհետև հայազուրկ դարձան Հայաստանի շատ գավառներ, երկրի հայ բնակչությունը ավելի նոսրացավ, տկարացավ և երկար ժամանակ զրկվեց պաշտպանունակությունից, իր ինքնուրույնության համար պայքարելու հնարավորությունից։

Ջալալիների ասպատակությունները ու սովը

Գաղթից հետո երկրում մնացած հայ բնակչությունը, որ դարձյալ մեծամասնություն էր կազմում, ենթարկվեց նորանոր աղետների, որոնցից առավել ահավորը ջալալիների ասպատակություններն էին և 1606—1609 թթ. սովը։ Ջալալիների շարժումն սկսվել էր դեռևս 1590-ական թթ. վերջերից Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններում և տարածվել Թուրքիայի արևելյան երկրամասերում՝ Կեսարիայից հասնելով մինչև Երևան և Թավրիզ։

Ջալալիները գործում էին առանձին-առանձին ջոկատներով՝ իրենց թուրք կամ քուրդ ցեղապետների ու փաշաների գլխավորությամբ, առանց իշխանություն հաստատելու հավակնության։ Թեև նրանց զեկավարների մեջ կային նաև ժողովրդի ցածր խավերին պատկանողներ, որոնք իրենց հարվածներն ուղղում էին բռնավորների և հարուստների դեմ, բայց նրանց մեծագույն մասը զբաղվում էր ասպատակությամբ, գերեվարությամբ և ավազակությամբ։

Ջալալիների ավազակային մեծ ու փոքր ջոկատներից մի քանիսը Շահ-Աբասի կատարած բռնի գաղթեցումից հետո նույնպես շարունակեցին իրենց ասպատակությունները Հայաստանի ամբողջ տերիտորիայում։ Նրանք ավարառության և գերիներ ձեռք բերելու նպատակով ասպատակեցին ու կողոպտեցին Արարատյան դաշտի, Աշտարակի, Ասպարանի, Կոտայքի, Գառնիի, Ծաղկաձորի, Կեղարքունիքի, Սուրմարիի, Շիրակի, Ախալքալաքի և Ախալցխայի շրջանները, ամենուրեք տարածելով ահ ու սարսափ, մահ ու ավերածություն։ Ջալալիների մյուս ջոկատները ավազակային գործողություններ էին կատարում Վասպուրականում, Տարոնում, Բասե-

նում, Սեբաստիայում, Թոխատում, Կիլիկիայում և այլուր։

Ստեղծված վտանգավոր ու տագնապալի պայմաններում հայերը ստիպված էին իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու կամ գերեվարությունից ազատվելու համար տարվա բոլոր եղանակներին թաքնվել այրերում, անտառներում, լեռնային անմատչելի վայրերում և այդ պատճառով, ինչպես պատմում է Առաքել Դավրիժեցին, «սերմանել և հնձել և կալ և կուտ բարձաւ ամենեին և սկսաւ լինել սդութիւն հացի և ամենայն ուտելի իրաց»։ Այդ ամենի հետևանքը եղավ այն, որ 1606 թ. մինչև 1609 թ. ամբողջ երկրում տարածվեց սովը, որն առավել սուր բնույթ ընդունեց 1607—1608 թվականներին։

Սովը ամենուրեք հնձում էր մարդկանց։ Բնակչության համար սովն ավելի սարսափելի ու կործանարար եղավ, քան պատերազմը ու գերեվարությունը։ Շատ նահանգներում ու գավառներում սպառվել էր ամբողջ պարենը, մորթվել էին անասունները, իսկ կենդանի մնայածները սնվում էին մեռածների դիակներով։

Սովի և ջաղալիների սպառատակության տարիներին բազմաթիվ հայեր թողին իրենց հայրենիքը և գնացին օտար երկրներ՝ ստվարացնելու այնտեղ հաստատված հայկական գաղթավայրերի բնակչության թիվը։

1639 թ. հաշտությունը և Հայաստանի նոր բաժանումը Թուրքիայի և Պարսկաստանի միջև

Թուրքիայի և Պարսկաստանի միջև պատերազմական գործողություններն ընդհատումներով շարունակվեցին ավելի քան երեք տասնամյակ։ Այդ գործողությունները դարձյալ մեծ մասամբ տեղի էին ունենում հայկական հողերում։

1616—1617 թվականներին վերսկսված պատերազմական գործողությունները տևում են մինչև 1638 թ.։

Օսմանցիները 1638 թ. դեկտեմբերին գրավեցին Բաղդադը, բայց ընդունեցին պարսիկների առաջարկը և հաշտություն կնքեցին։ 1639 թվականին Դիարբեքիրում Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքվեց 30-ամյա հաշտություն, որը տևեց ավելի քան 80 տարի։

1639 թվականի հաշտության համաձայն Հայաստանը նորից վերաբաժանվեց Օսմանյան Թուրքիայի և Սեֆիյան Պարսկաստանի միջև։ Այս անգամ սահմանագիծը հյուսիսից սկսվում էր Սիսուրյան գետի ակունքից և նրա հոսանքով դալիս հասնում էր Արաքս գետին, ապա կտրում Արաքսը, ուղիղ գծով շարունակվում մինչև Հայկական պարի բարձունքները, նրա գագաթով թեքվում դեպի

արևելք և հասնում մինչև Փոքր Մասիս. այնուհետև, Մեծ ու Փոքր Մասիսների միջով թեքվելով դեպի հարավ և Վասպուրականը բաժանելով երկու մասի, ուղիղ գծով շարունակվում էր մինչև Միջագետք՝ Բաղդադը թողնելով Թուրքիային։

Պարսկաստանին անցան Հայաստանի հետևյալ նահանգներն ու գավառները՝ Գուգարքը, Շիրակի և Արշարունիքի մի մասը, Արարատյան դաշտը՝ նրա շրջակա գավառներով, Սյունիքն ու Արցախը և Վասպուրականի արևելյան մասը։ Թուրքիային անցան Այրարատյան նահանգի հարավային գավառները, Տուրուբերանի նահանգը, Վասպուրականի արևմտյան մասը՝ Վան քաղաքով, Աղձնիքը, Տոփքը, Բարձր Հայքը, Բասենն ու Վանանդի գավառը։ Այս բաժանումը անվոփոխ մնաց մինչև XIX դ. առաջին քառորդը։ Հայաստանի այն մասը, որն անցել էր Պարսկաստանին, անվանվեց Արևելյան կամ Պարսկահայաստան, իսկ այն մասը, որը մնացել էր Թուրքիային՝ Արևմտյան կամ Թուրքահայաստան, հաճախ նաև՝ Տաճկահայաստան։

Ընդոստացում տեղական շահագործողների դեմ և Մեխոյի եղույթը

XV—XVI դդ. Հայաստանում տեղի ունեցած քաղաքական աննպաստ անցուդարձերի հետևանքով համարյա ամբողջությամբ վերացել էին հայ աշխարհիկ ֆեոդալական տարրերը։ Նրանց շատ չնչին մասը իր դոյությունը կարողացավ պահպանել միայն Սյունիքի, Արցախի, Լոռիի և Հայաստանի հարավային լեռնային վայրերում։ Իսկ եկեղեցական կալվածատիրությունը իր դոյությունը պահպանում էր Հայաստանի բոլոր շրջաններում։

Պատմական աղբյուրներում եղած վկայություններից երևում է, որ Ռշտունիքում, Վասպուրականում, Սյունիքում, Արցախում և Արարատյան դաշտում հոգևոր հաստատություններն և առանձին հոգևորականներ ոչ միայն պահպանել, այլև XV—XVI դդ., XVII դ. առաջին կեսերին ձեռք էին բերել նորանոր կալվածքներ, ինչպես, օրինակ, Ռշտունիքի սբ. Հակոբի վանքը, Աշտարակի շրջանի Օհանավանքը, Գեղարդի վանքը և այլն։

Հիշյալ ժամանակաշրջանում առանձին հոգևորականներ կազմակերպում էին սեփական տնտեսություններ և ձեռք բերում կալվածքներ։ Այս վերջին երևույթի մասին Առաքել Դավրիժեցին պատմում է, որ հայկական բոլոր վանքերում «իւրաքանչիւր սեպհական ուներ իւր ինչս առանձին, այգի և բուրաստան, փեթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց»։

Դավրիժեցու հաղորդածը լրացնում է Գրիգոր Դարանաղեցին,

որն արդեն ականատես է եղել այս ամենին։ Նա պատմում է, որ հոգևորականները «թողեալ էին զլուսաղարդ վանորայսն, սփռեալ էին ի դեղորայսն և անդեայք, և այդիք, և բուրաստանք, և հօտք խաշանց, և արջառաց բազմութիւն ստացեալ էին և եղեալ էին իբրև զմի ի մեծատանց աշխարհականաց»։

Հոգևորականները շատ հաճախ բռնի միջոցներով ժողովրդից հավաքում էին բազմապիսի տուրքեր։ Դավրիժեցին պատմում է, որ հայ բարձրաստիճան հոգևորականները, այդ թվում և կաթողիկոսները, որոնք XVII դ. սկզբին մի քանիսն էին, «ի շրջագայութեան իւրեանց ի մէջ ժողովրդեանն, թաղաւորական ծառայ և այլազգի զօրականս շրջեցուցանէին ընդ ինքնեանս, և զիրաւունս և զհասս՝ որք ի ժողովրդենէն՝ ճշտիւ և բռնութեամբ ուժգին առնուին»։ Դրան ավելանում էին օտար տիրապետողների կեղեքումներն ու բռնությունները։ Այդ ամենը բնակչության մեջ առաջացնում էր մեծ դժգոհություն, որը երբեմն պոռթկում էր այս կամ այն ձևով։

Աշխատավոր ժողովրդի դժգոհության դրսևորման մի դեպք տեղի է ունեցել XVII դ. առաջին քառորդին Արևելյան Հայաստանում, որն իր սուր ծայրով ուղղված էր հատկապես կուսակրոն հոգևորականության դեմ։ Գրիգոր Դարանաղեցին պատմում է, որ Ջուղայի հարուստ առևտրականների դրդմամբ ու հովանավորությամբ Մեխլու մականունով մի մարդ Արևելյան Հայաստանում Երևանի Ամիրդունա խանի օրոք, սկսում է պայքարել բարձրաստիճան հոգևորականության դեմ, քարոզելով ոչնչացնել և վտարել նրանց Հայաստանից։ Նրա գործունեությունը պաշտպանություն է գտնում նաև բնակչության կողմից, որը համախմբվում է նրա շուրջը։ Մեխլուի մասին ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում Զաքարիա սարկավագ Քանաքեռցին։ Վերջինս պատմում է, որ Մեխլուն եղել է Գանձասարի կաթողիկոսարանի սարկավագ, բայց երբ նրան ուղարկում են դյուղերը կաթողիկոսարանի կարիքները հոգալու, նա սկսում է բնակչության մեջ քարոզել զանազան մտքեր, որոնց բովանդակության մասին պատմագիրը լռում է, բավարարվում դրանք «թիւր և անուղիղ հայհոյանս և չարաբանութիւնս» հայտարարելով։ Այդ մասին հայտնում են Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին, որը պատժում է Մեխլուին, նրան զրկում սարկավագի կոչումից և նշանակում վանքի տընտես։ Սակայն Մեխլուն հեռանում է այդտեղից և, շրջագայելով զանազան գավառներ, գալիս է Երևան, ճանապարհին իր շուրջը հավաքելով ավելի քան հինգ հարյուր մարդ՝ «ոչ միայն գռեհիկ

աշխարհականք և ռամիկք, այլև տգետք երիցունք, և փարթամ, և մեծազգի մարդիկ»։

Նա ժողովրդին քարոզում էր՝ հոգևորականներին տուրք չրտալ, հալածել նրանց և ոչնչացնել, նշանաբան ունենալով՝ «ով սպանի աբեղա, նա արքայություն կգնա», իսկ «ով աբեղաներին բան տա, նա դժոխք կգնա»։ Նրա քարոզած գաղափարները պաշտպանում և ընդունում էին ոչ միայն նրա շուրջը հավաքված հինգ հարյուր հոգին, այլև բնակչության որոշ խավեր։ Նվ ոգևորվելով այդ պաշտպանությունից, Մեխլուն, ինչպես ասում է Գրիգոր Դարանաղեցին, «Զարեանց հեղմունս գործէր և... օր քան զօր յաւելոյր զգործ չարեացն», հոգևորականներից ոմանց սպանել տվեց, իսկ շատերին էլ բրածեծ անելով քշեց իրենց բնակավայրերից։

Մեխլուի շարժումը երկար չի տևում։ Երևանի Ամիրդունա խանը նախ ձերբակալում է նրան և ապա աքսորում Արևելյան Հայաստանի սահմաններից դուրս, իսկ նրա շուրջը համախմբված մարդկանց ցրում։ Դրանից հետո Մեխլուն գնում է Երուսաղեմ, բայց այնտեղի հայ հոգևորականների կողմից հալածվում, բանտարկվում է, միայն ուխտի գնացած առևտրականների միջնորդությամբ ազատվում ու բերվում է Ամիդ քաղաքը։ Նրա հետագա գործունեության մասին ուրիշ տեղեկություններ չկան։

Մեխլուի անվան հետ կապված վիրահիշյալ դեպքերը վկայում են, որ նույնիսկ քաղաքական այդ ծանր իրադրության տարիներին աշխատավոր բնակչությունը տեղական շահագործող խավերի կողմից պակաս չափով չէր կեղեքվում, մի բան, որ մեծ դժգոհություն էր առաջացնում ժողովրդի մեջ ընդդեմ իր անմիջական շահագործողների և դասակարգային պայքարի զգացում արթնացնում նրանց մեջ։ Դա մի պայքար էր, որն ուղղված էր այդ ժամանակի հետամնաց ֆեոդալական կարգերի դեմ և որին, ինչպես վկայում են պատմական աղբյուրները, մասնակցել են ոչ միայն աշխատավորները, այլև առևտրականները, ժամանակի բուրժուականացնող տարրերը։

ԳԼՈՒԽ XXXI

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVII—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍԵՐՈՒՄ

Խանությունները Արևելյան Հայաստանում

Հայաստանը նվաճած պետությունները դեռևս XVI դ. փորձում էին իրենց գրաված հայկական հողերում վարչական կայուն սիստեմ ստեղծել, բայց այդ նրանց հաջողվեց միայն 1639 թ. հաշտությունից հետո։ Պարսկաստանին անցած հայկական նահանգներում, այսինքն՝ Արևելյան Հայաստանում, կազմակերպվեցին խանություններ՝ ինքնուրույն վարչական միավորներ։

Այդ խանություններից իր քաղաքական և ստրատեգիական նշանակությամբ կարևոր էր համարվում Երևանի խանությունը։ Վերջինս ընդգրկում էր Արարատյան դաշտն ամբողջությամբ, Վեդիի, Գառնիի, Գյոկչայի, Ախտալի, Կոտայքի, Աշտարակի, Ապարանի, Թալինի շրջանները և Շիրակի գավառի այն մասը, որն անցել էր Պարսկաստանի տիրապետությանը։ Այս խանությունը կազմակերպվեց XVII դ. առաջին տասնամյակում։ Խանության վարչական կենտրոն դարձավ Երևան քաղաքը։ Երևանի խանությունը կոչվել է նաև սարդարություն կամ բեյլերբեյություն, իսկ նրա խանը՝ սարդար կամ բեյլերբեյ։ Այդ խանությունը իր գոյության ընթացքում մինչև XVIII դ. առաջին կեսը Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի մյուս խանությունների համեմատությամբ հանդիսացել է առաջնակարգ վարչական և ռազմական միավոր։ Նրա վրա դրված էր պարսկական պետության արևմտյան սահմանի պաշտպանությունը թուրքական բանակի հարձակումներից և այդ պատճառով Արևելյան Հայաստանի ու Անդրկովկասի մյուս խանությունները անհրաժեշտության դեպքում պարտավոր էին իրենց

ռազմական ուժերը դնել Երևանի սարդարի տրամադրության տակ։

Արևելյան Հայաստանում ստեղծված երկրորդ խանությունը Նախիջևանին էր։ Այն ընդգրկում էր Շարուրի դաշտը, Սյունիքի հարավային մասերը և Նախիջևանի շրջանը։ Այս խանությունը նույնպես ձևավորվել է XVII դ. սկզբին, որի կենտրոնը եղել է Նախիջևան քաղաքը։

Երրորդը Մակուի խանությունն էր։ Այդ խանությունն ընդգրկում էր Վասպուրականի հյուսիս-արևելյան շրջանները, Հեր, Զարեվանդ գավառները և Արաքս գետի ստորին հոսանքի աջ ափին ընկած մի քանի այլ շրջաններ։ Խանության կենտրոնն էր Մակու քաղաքը։

Արևելյան Հայաստանի հյուսիսային մի քանի գավառներ անցան հարևան խանություններին, օրինակ՝ Գուգարքի ամբողջ նահանգը միացվեց Վրաստանին, իսկ Սևանա լճի հյուսիսային և արևելյան ափերին ընկած մի շարք շրջաններ մտան Գանձակի խանության մեջ։ Արցախ նահանգի հարավ-արևելյան գավառները և Սյունիքի հյուսիսային մի քանի շրջաններ պահպանվեցին որպես առանձին վարչական միավորներ, որոնք կոչվում էին մելիքություններ։

Խանությունների կառավարման սիստեմը

Խանություններում իշխանությունն ամբողջությամբ գտնվում էր պարսիկ պաշտոնյաների ձեռքում։ Բարձրագույն պաշտոնյան խանն էր, որին ենթարկվում էին մնացած բոլոր պաշտոնյաները։ Խանները նշանակվում էին շահերի կողմից անորոշ ժամանակով։ Նրանց պարտականությունն էր՝ հետևել խանության ներքին կարգ ու կանոնին, խանությունը պաշտպանել դրսի հարձակումներից, բաշխել հարկերն ու տուրքերը ըստ շրջանների և հսկել դրանց գանձմանը։ Նրանք էին դատում ծանր հանցագործությունները կամ հաստատում նման հանցանքների վերաբերյալ գատարանի հանած վճիռները։

Խանների պալատներին կից կային գրասենյակներ՝ իրենց բազմաթանակ պաշտոնյաներով՝ ծախսարարներ, հարկահավաքներ, որոնց թիվը հարյուրից ավելի էր։ Խանը ունեցել է նաև իր զինված ուժերը՝ բաղկացած հարյուրավոր հետևակ և հեծյալ զինվորներից։ Այդ զինվորներն իրենց ընտանիքներով խաղաղ ժամանակաշրջանում տեղավորվում էին խանության ենթակա առանձին բնակավայրերում՝ գերազանցապես գյուղական վայրերում և շարիք էին դառնում բնակչության համար։

Խանություններում դատավարությունը համարյա ամբողջու-

թյամբ գտնվում էր մահմեդական հոգևորականության ձեռքում։ Դատական օրենքները սահմանված էին զուրանի սկզբունքներով, այսինքն՝ ամբողջությամբ իշխում էր շարիաթի օրենքը։

Խանությունները բաժանվում էին շրջանների, որոնք կոչվում էին մահալ։ Օրինակ՝ Երևանի խանությունը բաժանված էր 13—15 մահալի։ Յուրաքանչյուր մահալ ուներ իր կառավարիչը, որ նշանակվում էր խանի կողմից և տարբեր խանություններում տարբեր անուն ուներ՝ նայիբ, միրբոլուկ, մելիք և այլն։ Նայիբներն ու միրբոլուկներն էլ ունեին իրենց ստորադաս պաշտոնյաները գյուղերում։ Դրանք գյուղապետներն էին, որոնք կոչվում էին քեդխուդա, գյուղի նայիբ, գյուղի մելիք և այլն։ Եթե գյուղը հայկական էր, նրա գյուղապետը կոչվում էր մելիք, եթե հայկական չէր՝ նայիբ։ Այնուհետև, գյուղում առանձին կարևոր պաշտոնյա էր համարվում միրաբը՝ ջրաշիրը։

Առանձին վարչական միավորներ էին հատկապես այն քաղաքները, որոնք հանդիսանում էին խանության կենտրոնատեղի։ Այդպիսի քաղաքներն ունեին իրենց քաղաքագլուխը՝ քալանթարը։

X Փաշայությունները Արևմտյան Հայաստանում

Հայաստանի այն մասում, որն անցել էր Թուրքիային, XVII դ. սկսած կազմակերպվեցին վարչական միավորներ, որոնք կոչվում էին փաշայություններ։ Դրանց թիվը փոփոխական է եղել։ XVIII դ. դրանք արդեն հաստատուն վարչական միավորներ էին.

ա) Կարսի փաշայության մեջ էին մտնում Շիրակի այն մասը, որն ընկած էր Ախուրյան գետի աջ ափին, Արշարունիքը և Վանանդի գավառը։ Կենտրոնը Կարս քաղաքն էր։

բ) Էրզրումի փաշայությունը ընդգրկում էր համարյա ամբողջ Բարձր Հայքը։ Նրա մեջ էին մտնում Բասենը, Ճորոխ գետի հովիտը, Ապահունիքը, Հարքը, Խնուսը, ինչպես և Երզնկայի ու Կամախի շրջանները։ Կենտրոնն էր Կարին կամ Էրզրում քաղաքը։ Այս փաշայությունն իր տարածությամբ ամենախոշորն էր, այնտեղ էր նստում օսմանյան պետության արևելյան զորքերի սերասկյարը՝ զորահրամանատարը։

գ) Խարբերդի կամ Մալաթիայի փաշայության մասերն էին կազմում հին Սոփքը և Եփրատ գետի միջին հոսանքի աջափնյա գավառները՝ Արաբկիրի և Մալաթիայի շրջանները, արևմուտքից ընդհուպ մինչև Մարաշի շրջանը, իսկ հարավից՝ մինչև Ասորիքի սահմանները։

դ) Դիարբեքիրի փաշայությունն ընդգրկում էր Մերդինի,

Մծբինի և Մայաֆարկինի կամ Նփրկերտի շրջանները։ Կենտրոնն էր Դիարբեքիր կամ հին Ամիդ քաղաքը։

ե) Բիթլիսի կամ Բաղեշի փաշայությունը թեև մի փոքր ուշ է կազմակերպվել, բայց եղել է Արևմտյան Հայաստանի ընդարձակ և կարևոր փաշայություններից մեկը։ Նա ընդգրկում էր Տարոնի, Մուշի, Սասունի, Աղձնիքի շրջանները և Մոկաց նահանգի արևմտյան մասերը։ Փաշայության կենտրոնն էր Բաղեշ կամ Բիթլիս քաղաքը։

զ) Վանի փաշայությունը երկար սահմանադծով անմիջապես շփվում էր պարսկական պետության հետ և նույնպես ստրատեգիական կարևոր նշանակություն ուներ։ Վանի փաշայության մեջ էին մտնում Վասպուրականի արևմտյան և հարավային գավառները, Ռշտունիքը, Մոկսի արևելյան մասը, Արծկեի, Արճեշի և Բերկրիի շրջանները։ Կենտրոնն էր Վան քաղաքը։

է) Բայազետի փաշայությունը կազմված էր Կողովիտ և Բագրևանդ գավառներից։ Նա սկզբնական շրջանում մտնում էր Էրզրումի փաշայության մեջ և միայն XVIII դ. երկրորդ կեսին առանձնացվեց և կազմեց առանձին փաշայություն, բայց երբեմն էլի ենթակա էր Էրզրումի փաշայությանը։ Նրա կենտրոնն էր Բայազետ քաղաքը։

Հայաստանի սահմաններից դուրս, բայց նրան մոտիկ կային հայաբնակ մի շարք շրջաններ, որոնք մտնում էին թուրքական պետության այլ վարչական միավորների մեջ։ Այդպիսի շրջաններից էին Սեբաստիան (Սվազ), Կիլիկիան, Մարաշը և Զեյթունը։

Փաշայությունների կառավարման ձևը

Փաշայություններում ամբողջ իշխանությունը գտնվում էր փաշաների ձեռքում, որոնց նշանակում էր սուլթանը։ Փաշաները, խաների նման, ունեին իրենց դրասենյակը՝ բազմաքանակ պաշտոնյաներով։ Փաշայություններում դատական գործը գտնվում էր մահմեդական հոգևորականության ձեռքում և առավել ևս, քան խանություններում, զուրանի սկզբունքներով գործող դատարանները ոտնահարում էին ոչ մահմեդական բնակչության իրավունքները, կիրառում կրոնական խտրականություն, որից ծայր աստիճան տուժում էին հայերը։

Փաշայությունները բաժանվում էին սանջակների, այսինքն՝ ավելի մանր շրջանների։ Յուրաքանչյուր սանջակ ուներ իր կառավարիչը և սրան ենթակա պանագան պաշտոնյաներ։ Նրանք նշանակվում էին փաշայի կողմից և պատասխանատու էին նրա առաջ։ Սանջակի կառավարիչը կոչվում էր բեյ կամ բեկ, տոանձին տեղե-

ռում նրան անվանում էին նաև գերեբնյի։ Գյուղերում իշխանության պաշտոնատար անձնավորությունը հանդիսանում էր գյուղի տանուտերը, որն Արևմտյան Հայաստանի շատ շրջաններում կոչվում էր ռես։

Փաշայություններում պաշտոնյաների նշանակման կարգը խիստ արատավոր էր։ Սուլթանը որևէ մեկին փաշայի պաշտոնում նշանակելիս պահանջում էր, որ պաշտոն ստացողը նախօրոք փաշայության մի տարվա հարկի չափ գումար մուծի սուլթանության գանձարանը, նրան իրավունք վերապահելով փաշայության հարկերը գանձելու իր օգտին։ Այդպես էլ վարվում էր փաշան սանջակի կառավարիչ նշանակելիս։ Իսկ սրանք էլ հարկերի հավաքման իրավունքը վաճառում էին հարուստ վաշխառուներին։ Հենց այդ էլ բնակչության և հատկապես նվաճված ժողովուրդների նկատմամբ ապօրինությունների ու կամայականությունների լայն դուռ էր բացում։

Հայ ֆեոդալական իշխանությունների մնացորդները Արևելյան և Արևմտյան Հայաստանում

Հայաստանը նվաճողները, սկսած սելջուկ-թուրքերից մինչև օսմանցիներն ու Սեֆևյանները, թեև աշխատել են ոչնչացնել հայ աշխարհիկ ֆեոդալներին և նրանց իշխանությունը, բայց և այնպես այդ ֆեոդալների մի մասին հաջողվել է իր գոյությունը պահպանել Հայաստանի լեռնային վայրերում և հարատևել մինչև XVIII դ. իսկ առանձին տեղերում նույնիսկ մինչև հաջորդ դարը։ Նրանք, իհարկե, պետական իշխանություն չէին, այլ ֆեոդալական փոքրիկ տներ էին, որոնք ամրացել էին լեռնաձորերում և պահպանել իրենց տիրակալությունը այդ վայրերի ու նրանց բնակչության վրա։

Այդ ֆեոդալներից ոմանք իրենց հպատակությունն էին հայտնել նվաճողներին և պահպանել իրենց գոյությունը, նվաճողների հանդեպ, կատարելով բոլոր պարտավորությունները։ Սակայն մի երկու տեղ թեև առերևույթ ընդունել էին նվաճողների գերիշխանությունը, բայց պահպանել էին ինքնավար գոյավիճակ և խուսափում էին որևէ պարտավորություն կատարելուց։

Արևելյան Հայաստանում այդպիսի մի քանի իշխանություններ իրենց գոյությունը պահպանել էին Սյունիքի և Արցախի նահանգներում։ Այդ իշխանությունները, սկսած Սեֆևյանների տիրապետության ժամանակաշրջանից, անվանվել են մելիքություններ, իսկ նրանց գլուխ կանգնած անձնավորությունները՝ մելիքներ։

Դեռևս XVI դ. հայտնի են եղել Խաչենի և Վարանդայի մելիքությունները. հետագայում մելիքություններ են կազմակերպվել

նաև Գյուլիստանի, Ջրաբերդի, Դիզակի և Սյունիքի գավառներում։ Մելիքները Արցախի և Սյունիքի նախկին հայ ֆեոդալական տների հետնորդներն էին, որոնց իշխանությունը իրենց կալվածքների և այդ կալվածքներում ապրող բնակչության վրա ճանաչեցին Սեֆևյան շահերը։ Մելիքները իրենց ենթակա շրջանը կառավարում էին ներքին ինքնավարության սկզբունքով, պարսկական պետությանը վճարում էին միայն մի հարկ, որ կոչվում էր շանլուղ։ Նրանց պաշտոնը ժառանգական էր, բայց մահացած մելիքի պաշտոնի անցումը նրա որդուն պիտի հաստատվեր շահի հրովարտակով՝ ֆերմանով։

Արևմտյան Հայաստանում հայ ֆեոդալների այդպիսի մանր իշխանություններ իրենց գոյությունը պահպանել էին երկրի հարավային լեռնոտ վայրերում՝ Հայկական Տավրոսի դժվարամատչելի ձորահովիտներում՝ Շատախում, Մոկսում, Սասունում, Դիարբեքիրից հյուսիս ընկած լեռներում և Զեյթունում։ Սրանցից առավել աչքի ընկնողներն էին Զեյթունն ու Դիարբեքիրի փաշայությունում Իսյան կոչված շրջանը։ Իսյանի հայերը, որոնք մեծ ուշադրություն էին դարձնում զինավարժությանը և քաջարի կռվողներ էին, քրդական ցեղերի հետ համագործակցած, երկար ժամանակ պահպանում էին իրենց ինքնուրույնությունը և հրաժարվում էին հարկ վճարել թուրքական պետությանը։

Հայ ժողովրդի պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Զեյթունը։ Այն գտնվում է Կիլիկիայից հյուսիս-արևելք՝ Տավրոսյան լեռներում և իրենից ներկայացնում է լեռներով շրջապատված մի փոքրիկ հովիտ, ուր բնակություն էին հաստատել 2—3 տասնյակ հազար հայեր։ Սրանք դեռևս օսմանյան տիրապետությունից առաջ ինքնանկախ, ազատ կյանք էին վարում և չենթարկվեցին նաև օսմանյան պետությանը։

Երկար պայքարից հետո, որի ընթացքում զեյթունցիները քաջաբար պաշտպանում էին իրենց անկախությունը, XVII դ. առաջին կեսին օսմանյան սուլթան Մուրադ IV-ը նրանց պարտադրեց տարեկան 15000 դահեկան վճարել Կոստանդնուպոլսի Այա Սոֆիա մզկիթին և հրաժարվեց միջամտել նրանց ներքին կյանքին։

Հայկական ինքնավար այդ իշխանությունները և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Հայաստանում խոշոր դեր են խաղացել XVII—XVIII դդ. թուրքական և պարսկական տիրապետությունների դեմ հայերի մղած ազատագրական պայքարում։ Այդ իշխանությունները դարձան հայկական ազատագրական պայքարի դարձոնքի և կազմակերպման օջախներ։

Հողատիրությունն ու հողատերերը Արևելյան Հայաստանում

Արևելքում, հատկապես մահմեդական դավանանքին պատկանող ժողովուրդների մոտ, հողը համարվել է պետության, ավելի ճիշտ, շահի կամ սուլթանի սեփականություն։ Սակայն այդ սկզբունքը, որ հաստատված էր դուրանով, XVII—XVIII դդ. չէր պահպանվում, մանավանդ այնպիսի երկրներում, ինչպիսիք էին Հայաստանն ու անդրկովկասյան երկրները, որտեղ դարերի ընթացքում տիրապետող են եղել հողատիրության այլ ձևեր ևս։ XIV—XVII դդ. նորանոր ժողովուրդների ներթափանցումը Հայաստան և հաճախակի փոփոխվող տիրապետությունները երկրում առաջ բերեցին հողատիրության բազմապիսի ձևեր, որոնցից մի քանիսը ավելի շատ էին տարածված։

ա) Մուլքատիրական կամ մուլքաղարական հողեր։ Այս անվանումը առաջացել է «մուլք» բառից, որն այս դեպքում նշանակում է դյուղացիների կողմից ֆեոդալին վճարվող տուրք՝ հողային ռենտա։ Սեֆեյանների իշխանությունը Հայաստանում կազմակերպված խանություններում իր պաշտոնյաներին որպես ոռճիկ շնորհում էր մեկ կամ մի քանի դյուղերի մուլքը։ Այդպիսով, նշված պաշտոնյաները ժամանակավորապես դառնում էին տվյալ դյուղերի տերեր։ Հետագայում զանազան պատճառներով և պատրվակներով այդ պաշտոնյաները պաշտոնաթող լինելուց հետո էլ իրենց ձեռքին էին պահում տվյալ դյուղերից մուլք դանձելու իրավունքը և այն վերածում ժառանգական սեփականության։ XVII դարի երկրորդ կեսին և XVIII դ. մուլք ստանալու իրավունքը դառնում է մասնավոր սեփականություն և առուծախի առարկա։ Այդ ձևով էլ հիմք է դրվում մուլքատիրական հողատիրության ինստիտուտին։

Իշխող և շահագործող խավերին պատկանող մարդիկ դյուղերից մուլք դանձելու իրավունք կարող էին ձեռք բերել զանազան ճանապարհներով՝ գնելու, գավթելու, դյուղի բնակիչներին ուրիշի ոտնձգություններից պաշտպանելու և այլն։

Մուլքատերերը մուլքատու գյուղի հողերի նկատմամբ որևէ տնօրինություն չէին անում, նրանք չէին խառնվում հողաբաշխման գործին և նույնիսկ իրավասու չէին մուլքատու գյուղի հողը կամ նրա մի մասը ուրիշին վաճառել կամ նվիրել։ Նրանք իրավասու էին գյուղի վճարելիք մուլքը, այսինքն՝ ռենտա—տուրքը տնօրինել ինչպես կամենային՝ վաճառել, նվիրել և այլն։ Այստեղ է ար-

տահայտվել այն սկզբունքը, թե հողը, տվյալ դեպքում գյուղական համայնքներին օգտագործման հանձնված հողը, պետության սեփականությունն է։ Դրանով պետք է բացատրել, որ մուլքատերը հողի նկատմամբ տնօրինություն անելու իրավունք չի ունեցել։

բ) Թիուլական կալվածքներ։ Այս տիպի հողատիրություն առաջանում էր հետևյալ կերպ։ Շահը կամ խանը իրեն այն պաշտոնյաներին կամ զինվորականներին, որոնք աչքի էին ընկնում հատուկ ծառայություններով, որպես պարգև նվիրում էր մեկ կամ մի քանի գյուղերից հավաքվող հարկը, այսինքն՝ պետական եկամտային հարկը, որը կոչվում էր բահրա։ Այդպիսի պարգևն անվանվում էր թիուլ և ժամանակավոր բնույթ էր կրում։

Այս ձևով էլ առաջացել է այդ մարդկանց տիրակալությունը նրանց տրված գյուղերի վրա։ Սա ըստ էության այնքանով էր հողատիրություն համարվում, որքանով ընդունվում էր պետության կամ շահի վերագույն սեփականատիրական իրավունքը հողի նկատմամբ։ Այդ թիուլատերերը նույնպես իրավունք ունեին միայն տվյալ գյուղի բահրան վերցնել իրենց օգտին, իսկ գյուղի համայնքի օգտագործմանը ենթակա հողերի նկատմամբ որևէ տնօրինություն անել չէին կարող։

գ) Եկեղեցական կալվածքներ։ Այս կարգի հողերը գտնվում էին մահմեդական և քրիստոնյա հոգևորականության ձեռքին։ Դրանք պատկանում էին ոչ թե առանձին հոգևորականների, այլ հոգևոր հաստատություններին՝ մզկիթին, եկեղեցուն, վանքին և այլն։ Մահմեդական հոգևորականներին պատկանող կալվածքները համարվում էին վակֆ, այսինքն՝ այն հողային հարկերն ու տուրքերը, որ պետք է ստանային պետությունն ու ֆեոդալը, տրվում էին մահմեդական կրոնական հաստատություններ։

Քրիստոնեական եկեղեցուն պատկանող կալվածքները պետական հարկից, հատկապես եկամտահարկ՝ բահրա վճարելուց ազատված չէին։ Միայն առանձին վանքերի, մեծ մասամբ էջմիածնի կաթողիկոսարանին էր հաջողվում երբեմն իր սեփական հողամասերն ազատել տալ հարկից, դարձնել վակֆ կամ պակասեցնել այն։ Չնայած դրան Արևելյան Հայաստանում հայկական վանքերը XVII—XVIII դդ. ունեին ընդարձակ կալվածքներ՝ թե՛ որպես մուլքատու գյուղեր և թե՛ որպես սեփական հողամասեր՝ այգի, վարելահող, խոտհարք, արոտատեղի և այլն։ Այդպիսին են եղել էջմիածնի, Սանահնի, Հաղպատի, Տաթևի և այլ վանքերը։

դ) Սեփականատիրական կալվածքներ։ Արևելյան Հայաստանում հողի մասնավոր սեփականությունը բավականին տարածված

Երևույթ էր։ Այդպիսի հողերը գտնվում էին հատկապես վանքերի, խաների, հարուստ վաճառականների և այլոց ձեռքին և կազմում էին ընդարձակ տարածություն գրավող վարելահողեր ու այգիներ։

Երևանի խաներին էր պատկանում քաղաքի շրջակայքում եղած այգիների մի մասը։ Էջմիածնի վանքին էին պատկանում Փարաքար և Էջմիածին գյուղերի միջև ընկած ընդարձակ վարելահողերի ու այգիների մեծ մասը։

Երևանի և շրջակա բնակավայրերի առևտրականները Երևանում և մերձակա գավառներում ձեռք էին բերել իբրև սեփականություն խաղողի այգիներ, վարելահողեր, բանջարանոցներ, կառուցել կամ գնել էին ջրաղացներ, իսկ բարձրադիր վայրերում՝ սարքել էին ջրամբարներ՝ գարնան ջրերը հավաքելու և ամռանն օգտագործելու համար։

Այս ամենից բացի, բոլոր տեսակի այգիներն էլ կազմում էին իրենց տերերի սեփականությունը, անկախ այն բանից, թե այգետերերը տիրող կամ շահագործող խավերի՞ն էին պատկանում, թե դյուղացիներ կամ արհեստավորներ էին։ Մասնավոր սեփականություն հանդիսացող հողերը տերերի կողմից ազատ կերպով վաճառվում ու նվիրվում էին յուրաքանչյուր մարդու, ով ցանկանար այն ձեռք բերել։

XVII—XVIII դդ. Հայաստանի հողատեր դասակարգի, այսինքն՝ ազնվականության ներսում զգալի փոփոխություններ էին կատարվել։ Առաջին հերթին բազմազան էր դարձել նրա էթնիկական կազմը։ Հայ հոգևորականության և մելիքների կողքին որպես կալվածատերեր կանգնած էին նաև պարսիկ ու ադրբեջանցի խանները, բեկերը և մահմեդական հոգևորականությունը։ Բացի այդ, խիստ կերպով խախտված էր ֆեոդալական դասակարգին հատուկ վասալական կախվածությունը։ Այն ստացել էր պաշտոնական ենթարկվածության բնույթ։ Թեև «խան» հորջորջումը ավելի բարձր էր դասվում, քան «բեկ», «աղա» կամ «մելիք» տիտղոսները, բայց սրանց կրողները վասալական կախվածության մեջ չէին գտնվում իրարից, եթե իրենց ստանձնած պաշտոններով իրար չէին ենթարկվում։ Բացի խաներից մնացածները չունեին իրենց զինվորական ջոկատները, ինչպես նախկինում վասալ ֆեոդալները։

Y. Հողատիրության ձևերը Արևմտյան Հայաստանում

Արևմտյան Հայաստանում, ըստ դուրանի, հողի գերագույն տերը համարվում էր սուլթանը։ Սակայն այստեղ ևս գոյություն էին ունեցել հողատիրության տարբեր ձևեր։

Դեռևս Սելիմ II-ի օրոք (1566—1574), XVI դ. երկրորդ կեսին Թուրքիայում տեղի ունեցավ հողային ռեֆորմ, որի համաձայն պետության ենթակա հողերը բաժանվեցին երեք կարգի։

Առաջին կարգի մեջ մտնում էին մահմեդական բնակչությանը և մահմեդական հոգևորականությանը պատկանող հողերը։ Մահմեդական հոգևորականության հողերը այստեղ էլ համարվում էին վակֆ։ Երկրորդ կարգին էին պատկանում գրավված երկրների հողերը, որոնք տրվում էին նվաճված, այսինքն՝ քրիստոնյա բնակչությանը օգտագործելու, այն պայմանով, որ նրանք կրկնակի հարկ վճարեին կա՛մ օսմանյան պետությանը, կա՛մ այն մարդուն, որին այդ հողերը տրամադրել էր պետությունը։ Երրորդ կարգի, այսինքն՝ պետության տրամադրության տակ եղած հողերը բաժանված էին մի քանի տեսակ կալվածքների, որոնցից ստացված եկամուտը՝ ա) գնում էր սուլթանի անձնական գանձարանը, բ) տրվում էր սուլթանի ընտանիքի անդամներին (մորը և այլն), գ) մտնում էր պետության գանձարանը և դ) կալվածքներ, որոնք պետության կողմից տրվում էին զինվորականներին ու պաշտոնյաներին։

Պաշտոնյաներին և զինվորականներին տրված հողերը սկզբնական շրջանում պայմանական բնույթ ունեին, բայց հետագայում, XVII—XVIII դդ. այդ սիստեմը փոխվեց և այդպիսի հողերի տիրակալությունը ժառանգական ու մշտական բնույթ ընդունեց։ Օսմանյան պետությունը Հայաստանում իր գիրքերը ամրապնդելու, հայկական ազատագրական շարժումներն ու պայքարը ճնշելու նպատակով Հյուսիսային Մեջագետքից մեծ թվով քրդական ցեղեր տեղափոխեց Հայաստանի կենտրոնական նահանգները և նրանց տրամադրության տակ գրեց ընդարձակ կալվածքներ։ Այդ ձևով Թուրք փաշաների ու բեկերի կողքին Արևմտյան Հայաստանում որպես շահագործողներ հանդես եկան նաև քուրդ ազնվականները։

Արևմտյան Հայաստանում հայկական ֆեոդալական տարրերը ավելի թույլ էին, քան Արևելյան Հայաստանում։ Այնտեղ հայ աշխարհիկ ֆեոդալները համարյա թե անհետացել էին։ Որպես կալվածատերեր Արևմտյան Հայաստանում հանդես էին գալիս նաև հայ հոգևորականները, վանքերը։ XVII—XVIII դարերում խոշոր

կալվածատեր վանքերի թվին էին պատկանում Վարագա, Նարեկա, Մշո սուրբ Կարապետի և ուրիշ վանքեր։ Վանքերը և նկեղեցիները, չնայած հանդիսանում էին այդ հողերի սեփականատերեր, բայց, որպես նվաճված ժողովրդին պատկանող կրոնական հաստատություններ, ստիպված էին զանազան հարկեր վճարել սուլթանին։ [illegible]

Գյուղացիության վիճակը

Թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում գյուղացիությունը կազմում էր հարկատու և շահագործվող խավերի ամենաստվար խումբը։ Նա XVII—XVIII դդ. Հայաստանում բազմատարր էր և՛ իր ազգային կազմով, և՛ իրավական դրությամբ ու տնտեսական վիճակով։

Սակայն այդ բոլորով հանդերձ թե՛ Թուրքիայում և թե՛ Պարսկաստանում, առհասարակ, տարբերություն էր դրվում նվաճված քրիստոնյա ժողովուրդների և նվաճող մահմեդական ժողովուրդների միջև։ Առանձնապես զգալի էր տարբերությունը քրիստոնյա և մահմեդական գյուղացիության միջև՝ հատկապես հարկատվության և անձնական իրավունքի տեսակետներից։

Արևելյան Հայաստանում գյուղացիությունը նախ բաժանված էր երկու խմբի։ Խմբերից մեկը կոչվում էր ռահաթ, մյուսը՝ ռայբար։ Ռահաթ համարվում էին այն գյուղացիները, որոնք ունեին իրենց հողաբաժինը և աշխատանքային գործիքները, այլ կերպ ասած՝ իրենց տնտեսությունը։ Ռայբար կոչվում էին այն գյուղացիները, որոնք չունեին հողաբաժին, աշխատանքային գործիքներ, բանող անասուն և նույնիսկ տուն։

Ռայբարները, չունենալով տնտեսություն և նույնիսկ ապրելու տեղ, զանազան պայմաններով աշխատում էին կալվածատերերի հողերի վրա։ Հողատերերը ռայբարին տալիս էին հողակտոր, գործիքներ և որոշ դեպքերում նույնիսկ բանող անասուն, ապրելու տեղ՝ պայմանով, որ ռայբարը մշակի հողամասը և ստացած բերքը բաժանի իր հետ, իհարկե, նախօրոք բերքից դուրս գալով գործիքների, բանող անասունի վարձը և, եթե սերմացու էր տրվել, սերմացուն։

Ռահաթը նույնպես ուներ իր ստորաբաժանումները։ Ռահաթների մի մասը մուլքատու գյուղացիներ էին, որոնք, բացի պետական հողային հարկից, մուլքատիրոջը վճարում էին նաև ռենտա, այսինքն՝ մուլք։ Ռահաթների մյուս խումբը աղատ գյուղացիների խումբն էր, որն ուներ իր սեփական հողամասերը, տնտեսությունը և վճարում էր պետական հողային հարկ։ Ռահաթների շարքին էին

դասվում նաև վաչկատուն ցեղերը, որոնք անասուններով տուրք էին տալիս այն խանին կամ բեկին, որին պատկանող արոտատեղերը օգտագործում էին։

Խանություններում գյուղացիները անձնապես ազատ էին, իրավունք ունեին մի տեղից գնալ և բնակություն հաստատել մի ուրիշ տեղ, այլ կերպ ասած՝ ճորտացված չէին։ Սակայն երբեմն առանձին ֆեոդալներ փորձում էին արգելակել գյուղացիների ազատ տեղաշարժը կամ հեռացած գյուղացուն ետ բերել։ Օրինակ, XVIII դ. երկրորդ կեսին Էջմիածնի վանքին պատկանած Մուղնի գյուղից երկու ընտանիք թողնում և գնում են Լոռի։ Էջմիածնի կաթողիկոս Սիմեոն Երևանցին տեղի կառավարչից պահանջում է, որ այդ ընտանիքները ետ վերադարձնի։

Այլ էր գյուղացիների իրավական վիճակը Լոռում, Սյունիքի և Արցախի մելիքություններում։ Այս վայրերում գյուղացիության զգալի մասը ճորտացված էր՝ ճորտական հին հարաբերությունները որոշ չափով իրենց ուժը պահպանել էին։ Գյուղացիները, բացի տուրքեր և հարկեր վճարելուց, անձնապես ենթակա էին ֆեոդալներին։

Արևմտյան Հայաստանում գյուղացիության դրությունն առավել ծանր էր, քան Արևելյան Հայաստանում։ Թեև Թուրքիայում ևս գյուղացու ճորտացումն օրենքով նախատեսված չէր, բայց այնտեղ գյուղացին կիսաստրկական վիճակում էր գտնվում։ Հայ գյուղացին այնտեղ փաստորեն զրկված էր անձնական ազատությունից, համարվում էր կալվածատիրոջ գերին և նրա համար, բացի ռենտա վճարելուց, կատարում էր բազմաթիվ պարտավորություններ։ Թուրք ու քուրդ կալվածատերերը հաճախ նրան առուծախի առարկա էին դարձնում կամ ստիպում ամիսներով ձրիաբար աշխատել իրենց համար։

Գյուղական համայնքը և հողաբաժանությունը

Հայաստանի արևելյան և արևմտյան մասերում XVII—XVIII դդ. ևս գյուղական համայնքը պահպանել էր իր գոյությունը, որը գյուղական բնակչության ձեռքին մի միջոց էր կարգավորելու գյուղի ներքին գործերը, գյուղացիներին պաշտպանելու կալվածատերերի կամայականություններից, պաշտոնյաների ոտնձգություններից և զանազան պատահարներից։

Գյուղական համայնքն ուներ իր ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին ընտանիքների գլխավորները կամ, ինչպես նրանք անվանում էին, տանուտերերը։ Այդ ժողովներում նրանք քննարկում և որոշում էին գյուղի ընդհանուր արոտատեղերի և ջրի

օգտագործման կարգը, հողաբաժանության հարցերը, ընարում գյուղապետեր, երբեմն լսում նրանց գործունեության մասին և ամբողջ գյուղին վերաբերող այլ հարցեր։ Գյուղական համայնքների գործունեությունն ավելի լայն չափերով էր դրսևորվում Արևելյան Հայաստանում։

Արևելյան Հայաստանում հաճախ էր գյուղերում տեղի ունենում հողաբաժանություն։ Դա անհրաժեշտություն է եղել, որովհետև վարելահողերը չէին հանդիսանում ստանձին գյուղական ընտանիքների սեփականությունը և, բացի դրանից, տարիների ընթացքում գյուղական ընտանիքների անդամների թիվը փոփոխվում էր. պատահում էր, որ փոքր ընտանիքն ունենում էր ավելի մեծ, իսկ մեծը՝ ավելի փոքր տարածությամբ վարելահող։

Հողաբաժանումը համայնքի ներսում տեղի էր ունենում հետևյալ սկզբունքով։ Որպես միավոր ընդունում էին 16 շնչից բաղկացած ընտանիքը, որը կոչվում էր համփա։ Այնուհետև հաշվում էին, թե քանի՞ այդպիսի միավոր կա գյուղում, գյուղի ունեցած վարելահողերը վեր էին ածում այդքան միավորի և բաժանում գյուղի ծխերի վրա՝ ելնելով նրանց ունեցած շնչերի թվից։ Եթե ընտանիքը բաղկացած էր 16 շնչից, ստանում էր մի լրիվ համփա հողաբաժին, 14 շնչից՝ երեք քառորդ և մեկ ութերորդ, 12 շնչից՝ երեք քառորդ, 10 շնչից՝ կես և մեկ ութերորդ, 8 շնչից՝ կես, 6 շնչից մեկ քառորդ և մեկ ութերորդ, 4 շնչից՝ քառորդ, 2 շնչից՝ մեկ ութերորդ համփա։ Եթե ընտանիքի շնչերի թիվը կենտ էր, ասենք՝ 9 շունչ էր, ապա այդ ընտանիքը ստանում էր կես համփա և մի այլ ընտանիքի հետ միասին, որի շնչերի թիվը նույնպես կենտ էր, ևս մեկ ութերորդ համփա հողաբաժին։

Մեկ շնչից բաղկացած ծուխը միշտ ստանում էր մեկ ութերորդ համփա։ Այս դեպքում գյուղական համայնքը դիջում էր նրան և օժանդակում այդ ծխին ոտքի կանգնելու։

Հարկերն ու տուրքերը

Հայաստանում ամբողջ բնակչությունը հարկատու էր։ Հայերը համարվում էին նվաճված ժողովուրդ՝ ռայա կամ զիմմի, այսինքն՝ գերի, հպատակ, հարկատու, ծառա։ Բացի այն հարկերից, որ ռայան տալիս էր պետությանը, նրա աշխատավորական խավերը, հատկապես գյուղացիները, մահմեդական աշխատավորության հետ միասին, կալվածատերերին վճարում էին նաև ռենտա և նրանց համար կատարում զանազան պարտավորություններ։

XVII—XVIII դարերում Թուրքական և պարսկական պետություններում կայուն հարկային սիստեմ համարյա թե չի եղել։

Սահմանված մի քանի ընդհանուր հարկերից բացի, տեղական իշխանությունների իրավասությանն էր թողնված ժողովրդից լրացուցիչ հարկեր ու տուրքեր հավաքելու գործը։ Այդ բխում էր փաշայություններում և խանություններում պաշտոնյաներ նշանակելու սիստեմից։ Խանը, փաշան և այլ պաշտոնյաներ իրենց պաշտոններն ստանձնելիս պետական գանձարան էին մուծում իրենց տնօրինությանը հանձնված շրջանի տարեկան հարկը և իրավունք ստանում բնակչությունից գանձելու մուծված գումարը։

Դրա հետևանքով տարբեր խանություններում և փաշայություններում միատեսակ հարկերի հետ միասին եղել են նաև տարբեր հարկեր ու տուրքեր և, նույնիսկ, միևնույն տեսակի հարկի համար տարբեր չափեր։ Այդ բոլորով հանդերձ, հավաքվել են հետևյալ հիմնական հարկերը.

ա) Դխանարկ, որը Արևելյան Հայաստանում կոչվել է բաշ-փուլի, իսկ Արևմտյան Հայաստանում՝ ջիզիե, երկու մասում էլ նրվաճված ժողովրդից գանձվում էր դրամով՝ սկսած չափահասության հասած տղամարդուց մինչև զառամյալ ծերունին։ Նախիջևանի խանությունում հայերը տարեկան վճարում էին մարդագլուխ 4 ռուբլի։

բ) Հողային կամ եկամտային հարկը Արևմտյան Հայաստանում անվանվում էր աշար, որը տարբեր ժամանակներում ու տարբեր փաշայություններում ունեցել է տարբեր չափ՝ սկսած տարեկան բերքի մեկ տասներորդից մինչև մեկ հինգերորդ մասը և ավելին։ Արևելյան Հայաստանում այն կոչվել է բաճրա և կազմել է տարեկան բերքի մեկ հինգերորդ մասը։ Երկու մասերում էլ այս հողային հարկը պետությանը վճարվել է բնամթերքով։ Արևելյան Հայաստանի վերաբերյալ Սիմեոն Երևանցին վկայում է, որ «որպես սովորութիւն է երկրիս, որք ի յամենայն գեօղօրայս զոր ինչ սերմանեն՝ ի հնգէն մէկ՝ զհնգորդ տան յարքունիս, որ բահրա ասի, և ի տասէն մէկ՝ զտասանորդ տան մլքատեսուն՝ որ մուլք ասի»։

գ) Անասնահարկը հավաքվել է զանազան ձևով, առանձին տեղերում գանձվել է փողով, իսկ այլ վայրերում՝ անասուններով։ Հարկի չափը նույնպես տարբեր տեղերում տարբեր է եղել. օրինակ Երևանի խանը անասնագահ ցեղերից հավաքում էր յուրաքանչյուր 100 ոչխարից մեկը, իսկ Նախիջևանի խանությունում հավաքվում էր դրամով՝ յուրաքանչյուր մեկ գոմեշից 1 ռուբլի 50 կոպեկ, կովից՝ 1 ռուբլի 20 կոպեկ, բեռնակիր ձիուց և ջորուց՝ 3 ռուբլի 60 կոպեկ, մեկ ոչխարից՝ 20 կոպեկ և այլն։ Անասնահարկը Արևելյան Հայաստանում կոչվել է մալ-փուլի, իսկ Արևմտյան Հայաստանում՝ ղայշուր կամ կամշուր։

դ) Հողային ռենտան վճարվում էր պետությանը այն դեպքում, երբ պետությունն էր հանդես գալիս որպես հողի փաստական տեր։ Մնացած բոլոր դեպքերում վճարվում էր առանձին մարդկանց՝ կալվածքի փաստական տնօրինողին։ Հողային ռենտան Արևելյան Հայաստանում անվանվել է մուլք, իսկ Արևմտյան Հայաստանում՝ խարաջ և երկու մասերում էլ կազմել է տարեկան բերքի մեկ տասներորդ մասը։

ե) Կոռ ու բեգարը ձրի պարտադիր աշխատանք էր, ծանրադույն պարտականություններից մեկը, որ կատարում էին Հայաստանի երկու մասերի աշխատավորները թե՛ պետության, թե՛ կալվածատերերի համար։ Կոռ ու բեգարի չափը կայուն կերպով սահմանված չէր, և տեղական իշխանություններն ու կալվածատերերը, շարաշահելով իրենց իրավունքները, ստիպում էին մարդկանց երկար ժամանակով կտրվել տնտեսությունից և ձրիաբար աշխատել իրենց համար։

է) Եկամտային հարկը և մաքսը վճարում էին քաղաքի բնակիչները՝ արհեստավորներն ու առևտրականները, իրենց եկամտի մոտավորապես 20 տոկոսի չափով։ Այդպիսի չափ էր սահմանված, օրինակ՝ Նախիջևանի խանությունում։

Բացի հիշատակված հարկերից ու տուրքերից, Արևելյան և Արևմտյան Հայաստանի բնակչությանը հարկադրում էին կատարել նաև բազմաթիվ այլ վճարումներ։ Օրինակ՝ Արևելյան Հայաստանում սահմանված էր առանձին տնահարկ, որ կոչվում էր էվ-փուլի, օջախի հարկ՝ ասաղ-փուլի, հատուկ հարկ՝ ոստիկանությանն ու հարկահավաքներին պահելու և վարձատրելու համար, որ կոչվել է զուլլուղ փուլի, մի քանի խանություններում՝ նաև հավատի հարկ, որը գանձվում էր հայերից, և այլն։ Որպես կանոն հարկերի չափը չէր սահմանվում, այլ թողնվում էր տեղական իշխանությունների հայեցողությանը։

Գյուղերում հարկերի հավաքման կարգն անտանելի էր։ Բերքահավաքի ժամանակ հարկահավաքները գնում էին գյուղերը և, ամիսներով մնալով այնտեղ, ապրում էին գյուղացիների հաշվին, ձգձգում էին հարկերի և տուրքերի հավաքումը, շատ դեպքերում պատճառ դառնալով բերքի կորուստի, որովհետև առանց նրանց թույլտվության չէր կարելի հնձել արտը կամ կալսած հացահատիկը տնօրինել։

Այդ բոլորը շատ ծանր էր անդրադառնում գյուղացիության վրա։ Գյուղացին շարունակում էր վարել ալքաթիկ կյանք, խոր

թշնամանք տածելով դեպի նվաճողներն ու տիրապետողները և նրանց հաստատած կարգերը։

Ժողովրդական հուզումները

Կալվածատերերի և պետական պաշտոնյաների կամայականություններն ու բռնությունները, ինչպես և տնտեսական կեղեքումը հաճախ դրդում էին աշխատավոր բնակչությանն ըմբոստանալու շահագործողների դեմ։ XVII—XVIII դդ. էլ այդ պայքարը դրսևորվել է տարբեր ձևերով՝ սկսած սովորական դժգոհություններից և կրոնական բնույթի շարժումներից մինչև զինված ընդվզումները։

Էջմիածնի վանքը XVIII դ. իր կալվածքների ընդարձակմանժամանակ հաճախ է հանդիպել գյուղացիների դիմադրությանը։ Օրինակ՝ վանքը Արագածի լանջերից դեպի Շիրակ հոսող գետակներից մեկի ընթացքը փոխում է, շրջելով դեպի Քասախ գետը և յուրացնում Քասախ գետի ջրի կեսը, մի շարք գյուղերի զրկելով այդ ջրից օգտվելու հնարավորությունից։ Գյուղացիները ըմբոստանում են դրա դեմ և մի քանի տասնամյակ շարունակ պայքարի մեջ մտնում վանքի հետ։ Այդ պայքարի ընթացքում գյուղացիները հաճախ են քանդել վանքի առուն, տիրացել ջրին, բայց վերջ ի վերջո հոգևորականությանը հաջողվել է ընկճել գյուղացիների դիմադրությունը և Երևանի խանի օգնությամբ ճնշել նրանց ընդվզումները։

Ավելի սուր բնույթ է ստացել Օշական գյուղի մոտ եղած հողերի համար մղված պայքարը Էջմիածնի վանքի և «մուղանցի» կոչված ադրբեջանական գյուղացիների միջև։ Նրանք հարձակվել են Էջմիածնի աթոռակալ խամսեցի Հակոբ եպիսկոպոսի վրա, որը դնացել էր Օշական՝ մուղանցիներից հողերը ետ վերցնելու, և սպանել նրան։

Պայքար է մղվել նաև Էջմիածնի բնակչության և վանքի միջև։ Վերջինս գյուղի հողերի զգալի մասը յուրացրել էր դեռևս նախորդ դարերում։ 1725 թ. Էջմիածնեցիներն ըմբոստանում են վանքի դեմ և փորձում հողի մի մասը ետ վերցնել նրանից, սակայն օսմանյան փաշան, որ այդ ժամանակ իշխում էր Երևանում, օգնում է վանքին և դսպում գյուղացիների ընդվզումը։

Ինչպես երևում է հետագա դեպքերից, վանքի և Էջմիածնեցիների միջև պայքարը թեև խուլ բնույթ է կրել, բայց հրկիզաուն է եղել, և վանքը, երկյուղ կրելով գյուղացիների ելույթներից, Սիմեոն Երևանցու ժամանակ, XVIII դ. երրորդ քառորդին քանդել է տալիս գյուղը, որ կպած էր վանքին, և, Սիմեոն կաթողիկոսի ասելով «իբր հրաչանի միոյ ձգման չափ» հեռացնում վանքից, որովհետև գյու-

ղացիներից «երկիւղը և վտանգը ևս ծնանէին սրբոյ աթոռոյս», այսինքն՝ վանքին։

Ավելի բնորոշ է Նախիջևանի խանությունում տեղի ունեցած գյուղացիների ապստամբությունը։ XVIII դ. 40-ական թթ. Նախիջևանի հայկական մի քանի գյուղեր ապստամբում են Մահմուդ-զուլի խանի դեմ։ Գյուղացիները համախմբվում են, զինվում և կենտրոնանում Աստապատ հայկական գյուղում։ Խանի զորքերը հարձակվում են Աստապատի վրա, բայց պարտվում են, որից հետո խանը ստիպված է լինում հեռանալ Նախիջևանից։

Փախած խանին փոխարինում է մի ուրիշը՝ Հեյդար-զուլի խանը, որը դատաստան է տեսնում հայ գյուղացիների ղեկավարների հետ և ուժեղացնում հաչածանքը ժողովրդի նկատմամբ։ 1750 թ. գյուղացիները նորից զենքի են դիմում և Հովհաննես Խանդամիրյանի գլխավորությամբ ամրանում Շահկերտ գյուղում ու զինում 500 քաջակորով մարդկանց։

Շահակերտցիների մեջ կային շատ պղնձագործ արհեստավորներ, որոնք ապստամբների համար նույնիսկ թնդանոթներ պատրաստեցին։ Խանը իմանալով այդ բոլորի մասին, չհանդգնեց անմիջապես հարձակման անցնել և Թավրիզից զորք խնդրեց։ Շուտով Հեյդար-զուլի խանին օգնության եկան ևս երեք խան՝ իրենց զորքերով։ Սկսվեց հարձակումը, բայց ապստամբները հաջողությամբ պաշտպանվում էին և ծանր հարվածներ հասցնում թշնամուն։ Հեյդար-զուլի խանն ու մյուսները ստիպված եղան դադարեցնել ռազմական գործողությունները և դիմել բանակցությունների՝ ապստամբներին համոզելու և զինաթափ անելու նպատակով։

Սկզբում Հովհաննես Խանդամիրյանն ու մյուս ղեկավարները չհամաձայնեցին, բայց հետո, երբ ապստամբների շարքերում տատանումներ առաջացան, ստիպված եղան դադարեցնել դիմադրությունը՝ պայմանով, որ խանը ապստամբների պարագլուխներին, հատկապես Խանդամիրյանին, չհետապնդի և դադարեցնի իր հաչածանքներն ու կեղեքումները։

Այսպես է վերջանում Նախիջևանի շրջանի գյուղացիության ըմբոստացումը, որ արտահայտում էր ժողովրդի ցասումը կալվածատեր խաների կեղեքումների, ինչպես և նվաճողների բիրտ կամայականությունների դեմ։

Աշխատավորական խավերի ընդվզումներ են տեղի ունեցել նաև Արևմտյան Հայաստանում։ Վան քաղաքի գլխավորներից մեկը՝ ռես Թոխմախ Միրաքը թուրք փաշաներից ետ չէր մնում ժողովրդին կեղեքելու գործում։ Նրան պատժելու համար 1702 թ. հավաք-

վում է շուրջ 500 մարդ և գրոհում նրա տան վրա։ Խոխմախ Միրաքը փախչում ու թաքնվում է, բայց գտնում են, ոտներից կապած այնքան են բարձ տալիս, մինչև որ մեռնում է։ Ժողովրդական մասսաների այդ ընդվզման դեմ դուրս է գալիս փաշան, գոսում այն և մեծ տուգանք վերցնում բնակչությունից։ Վերոհիշյալ դեպքերը վերկայում են աշխատավոր ժողովրդի մղած պայքարի մասին։

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ XVII—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Գյուղատնտեսությունը

Թուրքմենական ցեղերի անընդհատ ասպատակությունները XV դ. և ապա թուրք-պարսկական պատերազմները XVI դ. ու XVII դ. առաջին տասնամյակներում ծայր աստիճան քայքայեցին Հայաստանի գյուղատնտեսությունը։

Այդպիսի պայմաններում գյուղատնտեսության և ոչ մի բնագավառ առաջընթաց քայլ չարեց։ Դրությունը փոխվեց 1639 թ. հաշտությունից հետո, երբ Հայաստանում համեմատաբար երկարատև խաղաղություն հաստատվեց։

Արևելյան Հայաստանում դեռևս XVII դ. առաջին քառորդում սկսեցին հոգ տանել գյուղատնտեսության վերականգնման մասին։ Երևանի Ամիրգունա խանը, ինչպես պատմում է Զաքարիա սարկավագ Քանաքեռցին, արշավանքներ էր կազմակերպում դեպի Ալաշկերտի, Վասպուրականի ու Մշո շրջանները և այդ վայրերից հաղթավոր հայ ընտանիքներ բերում ու բնակեցնում Արարատյան դաշտում։

Արևելյան Հայաստանից տեղահանված և Պարսկաստան քշված հայերից շատերը որոշ ժամանակից հետո կարողացան վերադառնալ հայրենիք։ Այդպիսով, երկրի տնտեսության վերականգնման և հետագա զարգացման համար արդեն զգալի քանակությամբ արտադրող ուժ կար։

Նույն պատմագիրը վկայում է, որ Երևանի խանությունում այգիներ տնկեցին, առուներ փորեցին և նույնիսկ տնտեսությունը բարեկարգելու նպատակով տեղ-տեղ թեթևացրին հարկերը։ Դրա հետևանքը եղավ այն, որ Երևանի և Նախիջևանի խանություններում, Զանգեզուրում և Լոռիում գյուղատնտեսությունը դուրս եկավ անկման վիճակից։

Նույնպիսի փոփոխություններ են տեղի ունենում նաև անասնապահության բնագավառում։ Եթե նախորդ դարերում պատերազմների և երկրում ծագած սովի հետևանքով անասունները ոչնչ-

չացվում էին և պակասում էր նրանց գլխաքանակը, ապա սկսած XVII դ. երրորդ քառորդից անասնապահությունը ևս որոշ չափով վերակենդանացավ։

XVIII դարում Արևելյան Հայաստանում կալվածատերերից ոմանք սկսեցին զբաղվել գյուղատնտեսությամբ։ Նրանք իրենց հողերում ստեղծեցին բամբակի ու բրնձի դաշտեր և խաղողի ընդարձակ այգիներ։

Երևանի խանը իր տրամադրության տակ ուներ մեծ քանակությամբ հողամասեր։ Այդ հողամասերում նա մշակել էր տալիս հատկապես բամբակ, մասամբ՝ բրինձ և նրանց վաճառքից մեծ եկամուտներ էր ստանում։

Բամբակի, բրնձի դաշտեր, խաղողի ընդարձակ այգիներ ուներ նաև էջմիածնի վանքը։ Եղած տեղեկությունների համաձայն, այդ վանքը XVIII դ. ունեցել է շուրջ 5—6 հարյուր հեկտար վարելահող և դրանից փոքր-ինչ ավելի՝ խաղողի այգիներ։

Ֆեոդալ-կալվածատերերից բացի, գյուղատնտեսությամբ են սկսում զբաղվել նաև խոշոր առևտրականները՝ խոջաները։ Զաքարիա սարկավագ Քանաքեռցին պատմում է, որ կարբեցի հարուստ առևտրական Հակոբջանը և նրա որդիները, հատկապես Այվազը, ձեռք են բերում այգիներ, բանջարանոցներ, շրաղացներ և քարվանքանակ անասուններ, զբաղվում են գյուղատնտեսությամբ, առուներ փորում և կառուցում լճակ՝ ջուր ամբարելու համար։ Երևանցի խոջա Սեթը և սրա որդիները, բացի մկրտու գյուղերից, նաև ընդարձակ հողամասերի և այգիների տեր են դառնում և զբաղվում՝ գյուղատնտեսությամբ։ Առևտրականներն իրենց միջոցները ներդնում էին գյուղատնտեսության մեջ, որովհետև այն եկամտաբեր էր դարձել։

Հայաստանի արևելյան մասում գյուղատնտեսության մեջ XVIII դ. լայն տարածում է ստանում վարձու աշխատանքը։ Խանները, բեկերը և ֆեոդալական այլ տարրեր իրենց հողերը մշակելիս օգտագործում էին ռաչքարներին, որպես ազատ ձեռքեր։ Նրանք օրավարձով աշխատում էին կալվածատերերի հողերի վրա։ Այնուհետև էջմիածնի վանքը, որպես խոշոր կալվածատեր, իր սեփական հողերը մեծ մասամբ մշակում էր վարձու մշակներով։ Օրինակ՝ վանքի տնտեսության մեջ 1740 թ. օրավարձով օգտագործվել է 11336 բանվորական օր, 1769 թ.՝ 21415, իսկ 1779 թ.՝ 20485, այն դեպքում, երբ բացի օրավարձու բանվորներից, վանքի տնտեսության մեջ ամեն տարի աշխատել են նաև 70—90 մշտական վարձված մշակներ։ Այս բոլորը վկայում է այն մասին, որ XVIII դ. Արևել-

յան Հայաստանում, հատկապես վանքապատկան գյուղատնտեսության մեջ, մուտք էր գործել տնտեսություն վարելու առաջավոր եղանակ, որը նպաստում էր թե՛ գյուղատնտեսության զարգացմանը և թե՛ նրա արտադրանքի ապրանքայնացմանը։

Արևմտյան Հայաստանում ևս XVII դ. երկրորդ կեսից ժողովրդի համար ստեղծվեց համեմատաբար խաղաղ իրադրություն։ Ալաշկերտի, Մանազկերտի, Մշո դաշտերում և այլ վայրերում նորից սկսվեց բամբակի և տեխնիկական այլ կուլտուրաների մշակումը։ Վասպուրականում, Ալաշկերտում, Կաղզվանում, Շիրակում և մի քանի այլ շրջաններում զարգացան հացահատիկային բույսերի ու պտղատու այգիների մշակումը և անասնապահությունը։

Սակայն թուրքական կառավարությունը թույլ չէր տալիս հերկել խոտհարքի տեղերը և այնտեղ հացահատիկ կամ այլ մշակույթ ցանել, առանց հատուկ թույլտվության իրավունք չէր վերապահվում այգիներ տնկել։ Շատ հաճախ մի փաշայությունից մի այլ փաշայություն և նույնիսկ սանջակից-սանջակ գյուղատնտեսական արտադրանքներ փոխադրելու դեպքում մաքս էր վերցվում և նման այլ արգելքներ էին հարուցվում։ Այս բոլորը խոչընդոտում էր գյուղատնտեսության զարգացմանը Արևմտյան Հայաստանում։

Արհեստագործությունը

XV—XVI դդ. երկրի քաղաքական աննպաստ վիճակը արգելակեց նաև արհեստագործության զարգացումը։ Հայաստանի արհեստավորների մի զգալի մասը երկրից հեռացել էր։ Միայն տեղ-տեղ, այն էլ միայն երկրի հարավ-արևմտյան ծայրամասային մեկ-երկու քաղաքներում, օրինակ՝ Երզնկայում, արհեստագործությունը մասնակիորեն պահպանվել և աշխուժության նշաններ էր ցույց տալիս։

XVII—XVIII դդ. Հայաստանի համարյա բոլոր քաղաքներում և մեծ ավաններում նորից կենտրոնացան արհեստով զբաղվող մարդիկ, նորից հիմնվեցին արհեստավորական թաղամասեր և փողոցներ։ Ի դեպ, հակառակ եկվոր այլ էթնիկական տարրերի՝ թուրքերի, բրդերի, ադրբեջանցիների քանակական աճին, Հայաստանում արհեստագործությունը դարձյալ կենտրոնացված էր հայերի ձեռքին և արհեստավորների բացարձակ մեծամասնությունը կազմում էին հայերը։

Արհեստագործության մեջ ասպարեզ եկան բազմաթիվ ինքնուրույն և մասնագիտացված արհեստներ։ Առանձին քաղաքներում՝ Երևանում, Վանում, Բաղեշում, Կարինում և այլուր նյութական բարիքներ արտադրող արհեստների թիվը մի քանի տասնյակի էր հասել։ Կատարելագործվեց նաև արհեստագործական արտադրանքի

պատրաստման տեխնիկան։ Արհեստավորներն սկսում են մասնա-յատուկ գործադրել այնպիսի միջոցներ և աշխատանքի ձևեր, ասենք, դաջելը, դրոշմելը, ձուլելը, և այլն, որոնք հնարավորություն էին տալիս պատրաստել մեծ քանակությամբ միատեսակ արտադրանք։

XVII—XVIII դդ. Հայաստանում առավել տարածված արհեստագործական ճյուղերն էին.

ա) Մետաղագործությունը։ Դա արհեստագործության այն մայր ճյուղերից մեկն էր, որն իր մեջ ընդգրկում էր մի շարք արհեստներ՝ դարբնություն, պղնձագործություն, զինագործություն, ոսկերչություն, պայտագործություն, փականագործություն և այլն։

բ) Մանածագործությունը։ Արհեստագործության այս ճյուղը նույնպես իր մեջ ընդգրկել է բազմաթիվ արհեստներ, որոնցից ավելի կարևորներն էին ջուլհակությունը, գորգագործությունը, դերձակությունը և այլ արհեստներ։ Մանածագործության մեջ բազմատեսակ զարդանկարներով ու դույներով գործվածքներ պատրաստելու համար լայնորեն օգտագործվել է դաջելու մեթոդը։ Գործվածքների պատրաստման տեխնիկայի մեջ ևս առաջընթաց է տեղի ունեցել, կատարելագործվել է ջուլհակի դազգահը և այն հարմարեցվել ավելի նուրբ ու ծաղկազարդված գործվածքներ պատրաստելու համար։

Մանածագործության հետ կապված են եղել նաև ներկարարությունը և ասեղնագործությունը, որոնք նույնպես XVII—XVIII դդ. առաջընթաց էին ապրում։

Վերոհիշյալ գլխավոր արհեստագործական ճյուղերին զուգընթաց աշխուժացել և զարգացել էին նաև կաշեգործությունը, կավագործությունը, փայտամշակությունը և դանազան այլ արհեստներ։

Առևտուրը

Արևելյան և Արևմտյան Հայաստանում առևտրական հարաբերությունները թեև տարբեր չափերով, բայց և այնպես զարգացան թե՛ լայնությամբ և թե՛ խորությամբ։ Ընդլայնվում է ներքին շուկան, ասպարեզ են գալիս միջնորդ առևտրականներ, որոնք արհեստավորից և գյուղացուց վերցնում են նրանց արտադրանքը և տարբեր վայրերում վաճառքի հանում, աշխուժանում է արտաքին առևտուրը ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման բնագավառում։

XVII դ. երկրորդ կեսից սկսած ամեն կողմից դեպի Երևան են գալիս բազմաթիվ քարավաններ, Արարատյան դաշտում գնում գյուղատնտեսական դանազան մթերքներ և այլ ապրանքներ։ Զաքարիա Քանաքեռցին վկայում է, որ Կարբի գյուղաքաղաքի «մեծատուն և փարթամ» Հակոբջանի ընտանիքը առևտրական կապեր էր հաստատել Դանձակի, Արդաբիլի, Զմյուռնիայի, Պարսկաստանի և Հու-

նաստանի քաղաքների հետ։ Աբրահամ Կրետացին պատմում է, որ անձամբ կոնդակով ծանուցել է Կարսի, Էրզրումի, Խոյատի, Բայազետի, Վանի և Բաղեշի առևտրականներին և հորդորել նրանց՝ առևտուր անել Անդրկովկասի և Պարսկաստանի հետ, ապա ավելացնում է՝ «ահա սկսան գալ կարաւանք և վաճառականք՝ թէ մեր ազգէ, թէ յօտմանցւոց։ Այլև մեծամեծ կարաւանք կան որ մօտ օրերս գալոց են»։

Այդ առևտրական քարավանները գրեթե, առանձնապես Եվրոպայից, Հայաստան էին բերում դանազան ապրանքներ և Հայաստանից բազմատեսակ արհեստագործական արտադրանք ու գյուղատնտեսական մթերքներ դուրս տանում վաճառելու։ Զաքարիա սարկավագ Քանաքեռցին վկայում է, որ «երկիրն Արարատեան պարարտ է և առատ յամենայն իրաց՝ և թեթևապին։ Վասնորոյ յամենայն կողմանց գան յԵրևան, և դնեն զոր ինչ կամին, և դառնան ի տեղիս իւրեանց։ Նոյնպէս եկին և ի Թաւրիզոյ բազում կարաւան, և դնեցին բրինձ, բամբակ, լուղ, պանիր, հրագու, ձէթ, կաշի, մորթի և այլն զոր ինչ կամեցան՝ առին»։

Երևանի խանը մեծ քանակությամբ բամբակ, բրինձ և ուրիշ մթերքներ էր վաճառքի հանում։ Խանից ետ չէր մնում Էջմիածնի վանքը։ Այն ևս գյուղատնտեսական արտադրանքի առևտուր էր անում Կարսի, Բայազետի և Արևմտյան Հայաստանի այլ փաշայությունների հետ։ Վաճառահանված արտադրանքի մեջ մեծ տեղ էին բռնում բամբակը, բրինձը, ցորենը, դինին և այլն, իսկ Վանից, Բայազետից և ուրիշ տեղերից բերում էին բուրդ, լուղ և անասուններ։

Գյուղատնտեսական մթերքների վաճառքին մասնակցում էին նաև գյուղացիները։ Զաքարիա սարկավագի վկայությամբ Քանաքեռ գյուղը միայն տանուտերի միջոցով երեք տարում 340 թումանի առևտուր էր արել։ XVIII դարի դեռևս այդ փումարով կարելի էր դնել 3400 սամար չրրեն կամ ավելի քան 11300 փութ ցորենի այլուր։

Այս ամենը, անտարակույս, նպաստում էր Հայաստանի արտադրողական ուժերի աշխուժացմանը և երկրի տնտեսական կյանքի առաջընթացին։ Սակայն միևնույն հետադիմական ֆեոդալական կարգերը, որ իստակույն կերպով պաշտպանվում էին Թուրքական և պարսկական պետությունների կողմից, և վերջիններիս հաստատած հետամնաց քաղաքական ու վարչական սիստեմը մեծագույն չափով արգելակում էին Հայաստանի տնտեսական կյանքի նորմալ զարգացումը։

Քաղաքները ու քաղաքային դասը

Նախորդ դարերի պատմությունը ցույց տվեց, որ մոնդոլական տիրապետության ժամանակաշրջանից սկսած Հայաստանի քաղաքներն սկսում են քայքայվել և XV—XVI դդ. կորցնում իրենց դերն ու նշանակությունը երկրի տնտեսական կյանքում։ Սակայն XVII դ. կեսից սկսած արհեստագործության և առևտրի աշխուժացման շնորհիվ քաղաքները՝ Երզնկան, Թիֆլիսը, Կարինը, Վանը, Կարսը և Նախիջևանը նորից դառնում են արհեստագործության և առևտրի կենտրոններ։ Թիֆլիսն ու Երզնկան դարձան մանածագործության, իսկ Վանը և Կարինը՝ մետաղամշակման, հատկապես ոսկերչության կենտրոններ։ Այդ քաղաքներով էին անցնում արևելքից արևմուտք երթևեկող բազմաթիվ առևտրական քարավաններ։

XVII—XVIII դդ. քաղաքային աշխույժ կյանք ապրեց Երևանը։ Այստեղ զարգացան և՛ արհեստագործությունը, և՛ առևտուրը։ Երևանում գործում էին մի քանի տասնյակ արհեստներ, որոնցից առանձնապես արդյունաբերական նշանակություն ունեին կաշեգործությունը, ջուլհակությունը, հյուսնությունը, դերձակությունը, զինագործությունը, պղնձագործությունը և այլն։ Երևանի կաշեգործները կարող էին պատրաստել տարեկան ավելի քան 30000 մեծ և փոքր կաշի, ապակեղործները՝ օրական շուրջ 200 ապակյա ամանեղեն։ Երևանը դարձել էր նաև տարանցիկ առևտրի կենտրոններից մեկը։

Արևելյան Հայաստանում, Երևանից բացի, առևտրի և արհեստագործության մեջ աչքի ընկնող դեր էին խաղում այնպիսի քաղաքներ ու ավաններ, ինչպիսիք էին Նախիջևանը, Գյումրին, Կարբին, Ագուլիսը, Օրդուբադը և այլն։

XVII—XVIII դդ. քաղաքային բնակչությունն իր սոցիալական կազմով խայտաբղետ էր, սակայն նրա հիմնական մասը կազմում էին արհեստավորներն ու առևտրականները։ Այս երկու խավից հետո քաղաքի բնակչության մեջ զգալի թիվ էին կազմում նաև սեվագործ բանվորներն ու այգեպանները կամ այգեգործները։ Վերջիններս փաստորեն մասնագիտացած զբաղմունքի տեր մարդիկ էին ու վիճակագրական փաստաթղթերում համարվում էին արհեստավորներ։ Քաղաքներում ապրում էին նաև կալվածատիրական տարրեր ու հոգևորականներ։

Այդ մասնակի երևույթ չէր։ Դա վկայում է Հայաստանում XVII—XVIII դդ. առաջացած մի նոր խավի՝ քաղաքային դասի, կամ ինչպես Արևմուտքում էին անվանում, երրորդ դասի ձևավորման մասին։

Համքարություններ կամ եղբայրություններ

Քաղաքային դասը վերոհիշյալ դարերում ստեղծել էր նաև իր կազմակերպությունները՝ համքարությունները կամ եղբայրությունները։ Այդ կազմակերպությունների նպատակն էր՝ պաշտպանել իրենց անդամներին մրցակցությունից և օգնել նրանց դժբախտ դեպքերում։ Արևմտյան Հայաստանում նրանք կոչվել են էսնաֆություններ, իսկ Արևելյան Հայաստանում՝ համքարություններ։ Այդպիսի կազմակերպություններ եղել են Կարինում, Բաղեշում, Վանում, Երևանում, Նախիջևանում և այլ քաղաքներում։

Յուրաքանչյուր առանձին արհեստով զբաղվող արհեստավորները միանում էին մեկ ընկերության մեջ և կազմակերպում իրենց համքարությունը։ Կային քաղաքներ, օրինակ՝ Կարինում (Էրզրում), որտեղ բոլոր համքարությունները միավորվել և ստեղծել էին իրենց համաքաղաքային ընկերությունը կամ ընդհանուր վարչությունը։ Կարինի էսնաֆությունները հասել էին այն բանին, որ «խոհական արհեստավորները», ինչպես ասված էր Կարինի դարբինների համքարության կանոնադրության մեջ, քաղաքի «իշխան աղայի» հետ մշակեն քաղաքի ներքին կյանքին վերաբերող կանոններ։ Նրանք ձեռք էին բերել անհնազանդ արհեստավորին կամ առևտրականին պատժելու, տուգանելու, նույնիսկ խանութը կամ արհեստանոցը ձեռքից առնելու իրավունք։ Նրանք իրենց վրա էին վերցնում համքարության անդամներից հարկեր հավաքելու և պետական դանձարան մուծելու պարտավորությունը, ազատելով բնակչությանը թուրքական հարկահանների կամայականություններից և կեղեքումներից։

Համքարությունների ներքին կյանքում տիրապետում էին որոշ դեմոկրատական սկզբունքներ. նրանց անդամները իրավահավասար էին և մասնակցում էին ընկերությանը վերաբերող հարցերի քննարկմանն ու լուծմանը։ Դրա հետ միասին նրանք պարտավոր էին ենթարկվել համքարության որոշումներին և սրբությամբ պահպանել նրա ներքին կարգն ու կանոնը։

ԳԼՈՒԽ XXXII

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ XI—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Առաջին հայ գաղթավայրերը

Հայ բնակչության արտագաղթը հայրենիքից դեպի օտար երկրներ սկսվել է սելջուկյան արշավանքներից կամ մոնղոլական տիրապետությունից ավելի վաղ։ Դեռևս VI դ. սկսած Բյուզանդական կայսրությունը հայերին տեղահանել է իրենց հայրենիքից և բնակեցրել կայսրության հեռավոր վայրերում։ IX դ. երբ Վասիլ (Բարսեղ) I կայսեր զորքերը Փոքր Հայքում և Մեծ Հայքի արևմտյան գավառներում ճնշեցին պավլիկյան շարժումը, հազարավոր հայերի բռնությամբ տեղահան արեցին և բնակեցրին կայսրության հյուսիս-արևմտյան սահմանագլխին, հատկապես Մակեդոնիայում։ Այդ ժամանակաշրջանից սկսած Բալկանյան երկրներում՝ Բուլղարիայում, Հունաստանում և Ռումինիայում սկսեցին հիմնվել հայկական գաղթավայրեր։

X—XI դդ. ինչպես և հետագայում, Հայաստանից բնակչություն մեծ զանգվածներով տեղափոխվում է Փոքր Ասիայի արևելյան և Ասորիքի հյուսիսային նահանգները ու այդ վայրերում հիմնում հայկական բազմամարդ գաղութներ։

XI դ. սելջուկների կողմից Անի քաղաքի գրավումից և կողոպտումից հետո քաղաքի և նրա շրջակայքի բնակչության մի մասը հեռացավ հայրենի երկրից։ Անեցիների հետ նաև այլ վայրերից շատ հայեր գնացին և հաստատվեցին Կասպից ծովի հյուսիսային ափերին։

Հետագայում, երբ մոնղոլները տիրեցին Հայաստանին, Անիից շուրջ 40000 գաղթականներ շարժվեցին դեպի Աստրախան և Սարայ քաղաքները։ XIII դ. երկրորդ կեսին այդ վայրերի հայկական

գաղութներն ավելի բազմամարդ դարձան և իրենց ձեռքը վերցրին առևտուրն ու արհեստագործությունը։ Հին ժամանակներից սկսած, առավելապես XI դ. հայկական գաղթավայրեր են հիմնվում Վրաստանում և Անդրկովկասի այլ վայրերում։

Ղրիմի հայկական գաղթավայրերը

Հայկական խոշորագույն գաղթավայրերից մեկը եղել է Ղրիմի թերակղզու հարավ-արևելյան ծովափնյա շրջանը։ Եղած տեղեկությունները վկայում են, որ XI դ. վերջերից և XII դ. սկզբներից հայերն սկսել են բնակություն հաստատել Ղրիմի առանձին շրջաններում։ Հայերի գաղթը դեպի Ղրիմ ավելի է մեծանում XIV դ.։ Կասպից ծովի հյուսիսային ափերին բնակված հայերը 1299 թ. պատվիրակություն են ուղարկում Ջենովա՝ Ղրիմ տեղափոխվելու թույլտվություն ստանալու համար։ Ջենովայի կառավարությունը բավարարում է պատվիրակության խնդրանքը։

Մի քանի տասնյակ հազար հայեր 1330 թ. դուրս են գալիս Սարայ-Բերկեից ու Աստրախանից և զենքով իրենց համար ճանապարհ բացում դեպի Ղրիմ, որտեղ վաղ ժամանակներից բնակվում էին բազմահազար հայեր։ Հայերը հիմնել էին մի շարք գյուղեր, ավաններ, եկեղեցիներ, վանքեր, դպրոցներ։ XIV դարի երկրորդ կեսին հայերի թիվը Ղրիմում հասնում էր մի քանի հարյուր հազարի. միայն Կաֆա քաղաքում ապրում էին շուրջ 100000 հայեր։ Հայերի քանակական գերազանցությունը Ղրիմում հիմք է տրվել ժամանակակիցներին այն անվանելու «Ծովային Հայաստան»։

Ղրիմում գրված «Հայամավուրքի» գրիչը իր հիշատակարանում հիացմունքով հաղորդում է, թե «Յայնժամ զօրացաք մեք և բազմացաք, և շինեցաք զգեղ և զգաւառս, իշխանք և ազնվականք ի Ղարապազարէն սկսեալ մինչև ի Սուրխաթ և ի Ֆեոդոսեայ, ի լերինս և ի դաշտս չի արարին վանորեիք և շինեցաք տունք 100 000 և զեկեղեցիս հազար»։

Հայերը XIV—XV դդ. զգալի դեր են խաղացել Կաֆայի, Սուրխաթի և այլ քաղաքների ու գավառների պաշտպանության գործում։ Նրանք Կաֆայում ստեղծել են իրենց ոստիկանությունն ու զինվորական ջոկատները, պարսպապատել են քաղաքը անակնկալ հարձակումներից պաշտպանելու համար, Ղրիմում ստեղծել են կուլտուրական հաստատություններ. օրինակ, 1338 թ. Հովհաննես վարդապետ Սեբաստացին վերաշինում է սբ. Խաչի վանքը և այնտեղ կազմակերպում ճեմարան, այսինքն՝ բարձր տիպի դպրոց և գրչատուն։ Դպրոց և գրչատուն են հիմնվում նաև սբ. Անտոն վանքին կից և այլ վայրերում։ Այդ դպրոցներում ու գրչատներում գրվել ու

արտագրվել են շատ գրքեր, որոնցից մի քանիսը պահպանվել են մինչև մեր օրերը և հանդիսանում են հայկական միջնադարյան կուլտուրայի արժեքավոր կոթողներ։

Ղրիմի հայկական գաղութը իր բարգավաճման շրջանն է ապրել XIV—XV դդ.։ XV դ. երկրորդ կեսին, երբ Ղրիմի վրա կախվում է օսմանյան նվաճման սպառնալիքը, հայերի դգալի մասը ստիպված հեռանում է Ղրիմից և գնում Արևմտյան Ուկրաինա ու Լեհաստան։

Արևմտյան Եվրոպայի հայկական գաղութները

Վաղ ժամանակներից հայերը առևտրական կապեր են ունեցել Արևմտյան Եվրոպայի հետ, իսկ հայ առևտրականներից ոմանք բնակություն են հաստատել Իտալիայի, Ֆրանսիայի, Նիդեռլանդիայի քաղաքներում։ XI դարի վերջերից դեպի այդ երկրներ հայերի գաղթն ավելի հաճախակի է դառնում, իսկ XIII—XV դդ. Հայաստանից և Կիլիկիայից տասնյակ հազար հայեր գնում են դեպի Արևմուտք և հայկական գաղթավայրեր հաստատում եվրոպական շատ երկրներում։ Դրանցից նշանավոր են եղել Վենետիկում, Ջենովայում, Հռոմում, Ֆլորենցիայում, Պիզայում, Բեռլուզում, Մարսելում, Բրյուսելում, Ամստերդամում հիմնված գաղութները։

Գաղթավայրերից մի քանիսը XV դ. սկսած զգալի դեր են խաղացել հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման գործում, նպաստել նրա կուլտուրական կյանքի վերելքին։ Հայ և օտարազգի մի քանի պատմաբաններ Վենետիկի հայկական գաղութի հիմնադրման սկիզբը համարում են XI դ., բայց մինչև XIII դ. այն սակավամարդ է եղել։ Այդ ժամանակներից գաղութը բազմամարդ է դառնում, հիմնում է իր հաստատությունը, որը կոչվում էր «Հայոց տուն»։ Գաղութը ավելի է բարգավաճում հետագա դարերում։

Արևմտյան Եվրոպայում երկրորդ կարևորագույն հայկական գաղութը եղել է Ամստերդամինը։ Այնտեղ նույնպես XVI—XVIII դդ. կենտրոնանում են մեծ թվով հայ առևտրականներ ու արհեստավորներ, հիմնում իրենց հաստատությունները և խոշոր դեր խաղում հայկական տպագրության կազմակերպման գործում։ Այս բնագավառում նշանավոր գործ է կատարել նաև Ֆրանսիայի Մարսել քաղաքում հիմնված հայկական գաղութը։ Այդ գաղթավայրերը եղել են այն առաջին օջախները, որտեղ սկզբնավորվել, կազմակերպվել և զարգացել է հայկական տպագրությունը։

Գաղթավայրերում հուշակ են ձեռք բերում հայ արհեստավորները և դյուտարարները, օրինակ՝ Վենետիկում հայտնի էր Անտոն

Սուրյան անունով մեկը, որը հնարել էր ջրասույզ եղած նավերը ջրի հատակից հանելու հարմարանք, և Վենետիկի ծերակույտը 30 տարով այդ գործի մենաշնորհը նրան էր տվել։ Վերոհիշյալ գաղթավայրերը սերտ կապ էին հաստատել ինչպես մյուս գաղթավայրերի, այնպես էլ բուն Հայաստանի հետ, օժանդակում էին տպագրված գրականությունը հայրենիք տեղափոխելուն և նոր, առաջավոր գաղափարները հայ ժողովրդի մեջ տարածելուն։

Ուկրաինայի և Վեհաստանի հայկական գաղթավայրերը

Հայկական խոշոր գաղթավայրեր էին հիմնվել Արևմտյան Ուկրաինայում՝ Գալիցիայում, Մոլդավիայում, Բուկովինայում, Կամենեց-Պոդոլսկում, Տրանսիլվանիայում, Վալախիայում, ինչպես և Հունգարիայի ու Բուլգարիայի տարբեր վայրերում։ Հայերը հիշյալ վայրերն էին գաղթել դեռևս XI դ. և սերտ հարաբերությունների մեջ մտնել Կիևյան Ռուսիայի հետ։ Տեղեկություններ կան այն մասին, որ Գալիցիայի ռուս իշխան Դմիտրին 1067 թ. հայերին հրավիրել է իր մոտ լեհերի դեմ կռվելու համար։

XI դարում ապրած Թեոդոսիոս Պեչորացու «Վարքի» մեջ պատմվում է նրա և Կիևում հաստատված հայերի միջև մղված դավանաբանական վեճի մասին, իսկ XII դ. սկզբներին՝ Վլադիմիր II Մոնոմախի իշխանության օրոք (1113—1126) Կիևում կառուցվել է հայկական քարաշեն եկեղեցի։

XIII դ. վերջերին՝ մոնղոլ-թաթարների տիրապետության օրոք, Հայաստանից, հատկապես նրա քաղաքներից, բազմահազար հայեր գաղթեցին դեպի Ուկրաինա և նրա մերձակա երկրները։ Հետագայում, հատկապես XV դ. հարյուր հազարավոր հայեր տեղափոխվեցին այդ վայրերը Ղրիմից և Կիլիկիայից։ Հայ բնակչության այդպիսի ներհոսի հետևանքով Ուկրաինայի Լվով, Կամենեց-Պոդոլսկ, Ակկերման, լեհական Ռաշկով, Ստանիսլավ, Տրանսիլվանիայի Եղիսաբեթասլոլիս, Կեռլա, Բուկովինայի Չերնովեց, Սիրատ, Սուչավա, Մոլդավիայի Քիշնև, Բուլգարիայի Վառնա ու Ծովափնյա այլ քաղաքներում հիմնվեցին բազմամարդ հայկական գաղութներ։ Առանձին քաղաքներ և քաղաքատիպ ավաններ ու գյուղեր հիմնադրում էին հենց իրենք հայերը. օրինակ՝ Կեռլան կամ, ինչպես հաճախ այն անվանել են, Արմենոպոլիսը (Հայաքաղաքը)։

Վերոհիշյալ քաղաքներում և նրանց շրջակա գյուղական վայրերում կենտրոնանում են մեծ թվով հայեր։ Որոշ ուսումնասիրողներ այդ վայրերում XVI—XVIII դդ. հայերի թիվը հաշվում են 400 հազարից մինչև 500 հազար։

Եվրոպայի հայկական գաղթավայրերի բազմաքանակ բնակչությունը բաղկացած էր սոցիալական տարբեր խավերից՝ արհեստավորներից, առևտրականներից, գյուղացիներից, ազնվականներից և այլն։ Հայերը աչքի ընկնող դեր էին կատարում այդ երկրների տնտեսական և կուլտուրական կյանքում։ Լվովի, Կամենեց-Պոդոլսկի, Ռաշկովի, Եղիսաբեթգրադի, Կեռլայի և այլ քաղաքների հայկական գաղութները լեհական և այլ իշխանություններից ձեռք էին բերել իրենց ներքին կյանքը կառավարելու համար սեփական օրգաններ և կուլտուրական հաստատություններ ստեղծելու իրավունք։ Նրանք ունեին իրենց առանձին վոյթը, այսինքն՝ քաղաքագլուխը, կառավարիչը՝ իր տեղապահով, 12 հոգուց բաղկացած ազա-դատավորների կոլեգիան և 40 հոգուց կազմված պատվավոր-աղբարների հանձնաժողովը։

Եղիսաբեթգրադում, Լվովում, Կամենեց-Պոդոլսկում գտնվող հայերը իրենց դատական գործերը վարում էին մեծ մասամբ հայկական օրենսդրքերով գեռևս XIV դ. սկսած։

1518 թվականին լեհական թագավոր Սիգիզմունդ III-ը հայերից պահանջում է պետությանը ներկայացնել իրենց օրենսդրությունը։ Նրանք կազմում են օրենքների մի ժողովածու, որի մեջ մտցնում են հայկական եկեղեցական կանոններից և Մխիթար Գոշի «Դատաստանագրքից» բազմաթիվ հոդվածներ, թարգմանում լատիներեն և ներկայացնում թագավորին։ Սիգիզմունդ III-ը աննշան փոփոխություններով հաստատում է հայերի կազմած օրենքների ժողովածուն և նրանց իրավունք տալիս դրանով ղեկավարվել։ Հայերի հիմնած գաղթավայրերում՝ Լվովում, Եղիսաբեթգրադում, Կամենեց-Պոդոլսկում, Կեռլայում, Ռաշկովում և այլուր, եղել են հայկական դպրոցներ, գրչատներ, դպրատներ, բազմաթիվ վանքեր և կուլտուրական այլ հաստատություններ։ XVII դ. Լվովում հիմնվում է հայկական տպարան։ Այդ տպարանում տպվել և գրչատներում ձեռքով արտագրվել են մի շարք հայերեն գրքեր, որոնց մի մասը ուղարկվում էր նաև Հայաստան։ Լվովի հայ մտավորականության և հայկական դպրոցի սաների ջանքերով XVII դ. նորից վերակենդանանում է հայկական թատրոնը։

Հայկական վերոհիշյալ գաղթավայրերի բնակչությունը XVIII դ. ընթացքում աստիճանաբար նվազում է, և նրանցից շատերը դադարում են հայ բնակչության կենտրոնավայրեր լինելուց։ Դրա պատճառը մասամբ այն էր, որ սկսած XVII դ. երկրորդ կեսից դադարեց հայերի հոսանքը դեպի այդ վայրերը, իսկ նախորդ դարերում եկածները, շփման մեջ մտնելով տեղական բնակչության

հետ, յուլացնում էին նրանց նիստուկացը, լեզուն, կուլտուրան, կորցնում իրենց ազգային հատկանիշները և ձուլվում նրանց հետ։ Փոքր դեր չեն խաղացել այդ գործում նաև դավանաբանական վեճերը և կաթոլիկական եկեղեցին, որն ամեն կերպ ջանում էր իրեն ենթարկել հայերին և նպաստել նրանց ձուլմանը։ XVIII դ. երկրորդ կեսին այդ հարյուր հազարավոր բնակչություն ունեցող դաղթավայրերում մնացել էին աննշան քանակությամբ հայեր, որոնք այլևս ի վիճակի չէին որևէ դեր խաղալ իրենց ժողովրդի կուլտուրական և քաղաքական կյանքում։

Կոստանդնուպոլսի և Թուրքիայի այլ վայրերի գաղթօջախները

Հայկական խոշոր և հին գաղթավայրերից էին Կոստանդնուպոլիսն ու Փոքր Ասիայի ծովափնյա մի քանի այլ քաղաքներ՝ Զմյուռնիան կամ Իզմիրը, Տրապիզոնը և այլն։ Կոստանդնուպոլսում հայերը ընակություն էին հաստատել դեռևս Բյուզանդական կայսրության տիրապետության ժամանակաշրջանից։

Հայ իշխաններից շատերը բյուզանդական կայսրերի պալատներում վարում էին բարձր պաշտոններ և հասել էին նույնիսկ կայսրության գահին։ Այդ ժամանակներից ի վեր Կոստանդնուպոլսում սկսում է ձևավորվել Կոստանդնուպոլսի հայկական գաղութը, որտեղ XVII—XVIII դդ. հայերի թիվը հարյուր հազարների էր հասնում։

Հիշյալ հայկական գաղութները զգալի դեր են խաղացել հայ ժողովրդի և հատկապես նրա արևմտահայ հատվածի կուլտուրական ու քաղաքական կյանքում։ Նրանք, մյուս հայկական գաղութների հետ համեմատած, ավելի մոտ են եղել Հայաստանին և սերտ կապ են պահպանել բուն հայրենիքում ապրող հայության հետ։ Այդ հանգամանքը նրանց դարձրել է կենսունակ ու հարատև։

Այդ գաղութների, մասնավորապես Կոստանդնուպոլսի գաղութի, հայ բնակչությունը բաղկացած էր սոցիալական տարբեր խավերից, որոնց մեջ իրենց բազմամարդությամբ աչքի էին ընկնում արհեստավորները և մշակները։ Արհեստավորներն ունեին իրենց ընկերությունները, որոնք անվանվում էին էսնաֆություններ։ Արհեստավորներից և մշակներից բացի այդ գաղութներում զգալի թիվ էին կազմում առևտրականները, որոնք նույնպես ունեին իրենց ընկերությունները։

Առանձին խավ էին կազմում այսպես կոչված ամիրաները կամ սեղանավորները, որոնք զբաղվում էին դերասանական վաշխառությամբ։

Նոր Ջուղայի Հայկական գաղութը

Պարսկաստանում հայ բնակչությունը շատ հին պատմություն ունի։ Հայտնի է, որ դեռևս IV դ. պարսից Շապուհ թագավորը Հայաստանից տասնյակ հազարավոր մարդկանց բռնի տեղափոխեց Պարսկաստան։ Հայ բնակչության այդպիսի դաղթեցումներ դեպի Պարսկաստանի խորքերը կատարվել են նաև հետագա դարերում։ Սակայն հայկական գաղթավայրերի առաջացումը Պարսկաստանում տեղի է ունենում ավելի ուշ, առանձնապես XVII դ.։ Այդ գաղութներից առավել նշանավոր է պարսկական Սպահան քաղաքի արվարձաններից մեկում հիմնված Նոր Ջուղան։ Այստեղ հայերի բնակության մասին տեղեկություններ կան սկսած XVI դ. 50-ական թթ., բայց նրա հիմնադրումը տեղի է ունեցել Շահ-Աբաս I-ի օրոք։

XVII դ. երկրորդ կեսին Նոր Ջուղայի հայկական գաղութը ծաղկման շրջան էր ապրում, նրա բնակչության թիվը հասնում էր մի քանի տասնյակ հազարի։ Եվրոպական ճանապարհորդներից մեկը՝ Ջոնսոնը, նշել է, որ Սպահանի արվարձան Նոր Ջուղան ունեցել է 12 000 ընտանիք, այսինքն՝ 50—60 հազար շունչ, իսկ եթե հաշվենք նաև նրան մոտիկ և նրա հետ կապված հայկական գյուղերի բնակչությունը, ապա հայկական այդ գաղթավայրի բնակչությունը հարյուր հազարից ավելի է եղել։ Առանձնապես աչքի էր ընկնում խոշոր վաճառականների դասը, որն իր առևտրական գործունեությամբ կապված էր բազմաթիվ երկրների հետ և խոշոր դեր էր խաղում Արևելքի ու Արևմուտքի միջև առևտրի զարգացման գործում։ Մեծ թիվ էին կազմում նաև միջին ու մանր առևտրականները։ Այդ երկու խավերից ավելի բազմամարդ էին արհեստավորական և գյուղացիական խավերը, որոնք նույնպես իրենց լուման ունեին Սեֆևյան Պարսկաստանի արհեստագործության և գյուղատնտեսության զարգացման գործում։

Նոր Ջուղայի բնակչությունը, հատկապես առևտրականները, սերտորեն կապված էին Հայաստանի հետ և արձագանքում էին նրա աղատագրական պայքարին։ Ինչպես պատմական աղբյուրներն են վկայում, Նոր Ջուղայի մի քանի խոշոր առևտրականներ անմասն չեն մնացել XVIII դ. առաջին կեսին Արևելյան Հայաստանում ծավալված աղատագրական պայքարում։ Խաչատուր Ջուղայեցին հաղորդում է, որ Նոր Ջուղայի խոշոր առևտրականներ Հարություն Շահրիմանյանցին և Էմինիաղ-աղա խոջա Մինասյանցին նպաստ շահը կատարել է հայերի և վրացիների կազմակերպած ըմբոստացումների հրահրման մեջ։ Շահի հրամանով նրանց կենդանի-կենդանի այրել են խարույկի վրա։

Ավելի սուր ու հարատև է եղել գաղութի սոցիալական տարբեր խավերի միջև եղած պայքարը։ Դեմոկրատական տարրերը ոտքի են ելել խոշոր վաճառականների և բարձրաստիճան հոգևորականների դեմ, որոնք գաղութի ղեկավարությունն իրենց ձեռքում էին պահում և ճնշում ու կեղեքում աշխատավոր բնակչությանը։ Այդ պայքարի ցայտուն արտահայտությունն է XVII դ. առաջին կեսին Թոմասի գլխավորությամբ սկսված շարժումը։ Խաչատուր Ջուղայեցին պատմում է, որ Շահ-Սեֆի I-ի օրոք (1628—1642) Նոր Ջուղայում Թոմաս անունով մի մարդ սկսում է ժողովրդի մեջ քարոզել քրիստոնեական եկեղեցու համար անընդունելի գաղափարներ, որոնք հավանություն էին գտնում շատ մարդկանց կողմից և առաջ բերում բուռն վեճեր։ Թոմասի քարոզած գաղափարները հակակրոնական բնույթ ունեին և իրենց սուր ծայրով ուղղված էին շահագործողների և հատկապես հոգևորականների դեմ։ Խաչատուր Ջուղայեցու ասելով, նա մերժում էր խաչը, պատարագը և հաղորդությունը, արհամարհում էր առաջնորդներին, վարդապետներին, քահանաներին և նրանց բոլորին համարում խաբեբաներ։

1642 թվականին Նոր Ջուղայի մեծամեծները պախարակում են Թոմասին, աշխատում նրան խրատել, բայց, ըստ երևույթին, նա չի հրաժարվել իր գաղափարներից։ Թե ինչ վախճան է ունեցել Թոմասի գլխավորած շարժումը, հայտնի չէ, պատմագիրն այդ մասին լռում է։ Մի այլ հետագա դեպքերից երևում է, որ 1642 թվականից որոշ ժամանակ անց, Շահ-Սուլեյման I-ի օրոք (1667—1694), Նոր Ջուղայում նույնպիսի մի շարժում է սկսվում Տեր-Օհան աբեղայի գլխավորությամբ։ Այս նշանակում է, որ սկսված սոցիալական պայքարը, թեև կրոնական գունավորումով, շարունակվել է մինչև XVII դ. երկրորդ կեսը և ընդգրկել ոչ միայն քաղաքային, այլև հայկական գյուղերի բնակիչներին։ Այդ երևում է նրանից, որ Օհանի գործունեության կենտրոնը եղել է նաև Փերա գավառը, որտեղ բազմաթիվ հայկական գյուղեր կային։ Օհանին հալածանքի են ենթարկում, աքսորում, բանտարկում, բայց չեն կարողանում կասեցնել նրա պայքարը։

Նոր Ջուղայի հայկական գաղութը XVII—XVIII դդ. խոշոր դեր է խաղացել հայկական կուլտուրայի զարգացման գործում։ Այնտեղ XVII դ. առաջին կեսերին հիմնադրվել է մի դպրոց, որը Խաչատուր Ջուղայեցին անվանում է համալսարան։ XVII դ. երկրորդ կեսին Ջուղայում սկսում են գործել այլ դպրոցներ ևս, որոնցից նշանավոր էր Կոստանդին վարժապետի գլխավորած դպրոցը։ Այնտեղ դասավանդվում էին աշխարհիկ գիտություններ և գերա-

զանցապես հաշվողական առարկաներ։ Դասավանդումը կատարվում էր պարզ և հասկանալի լեզվով, համարյա աշխարհաբար։

Հնդկահայ գաղութը

Դեռևս XVI դ. հայ առևտրականները հենակետեր են ստեղծում հնդկական հինավուրց քաղաքներում՝ Մադրասում, Բոմբեյում, Սեյլոնթադում և այլուր։ Մադրասում հայկական եկեղեցի է կառուցվել դեռևս 1547 թ., քաղաքի հնագույն մասը կոչվել է հայ Թոմասի անունով։ Սուրաթ քաղաքում հայկական տոպանաքարեր կան 1666 թ., իսկ այդ քաղաքի հայ առևտրական խոջա Փանոս Քալանթարյանը 1688 թ. պայմանագիր է կնքել անգլիական առևտրական ընկերության հետ։

Թեև Հնդկաստանի հայկական գաղութներից մի քանիսը հին պատմություն ունեն, բայց նրանք սկսում են աճել ու զարգանալ միայն XVIII դ.։ Այդ ժամանակ է, որ հայերը լայն գործունեություն են ծավալում Մադրասում, Բոմբեյում, Հայդարաբադում, Կալկաթայում և Հնդկաստանի այլ քաղաքներում։ Հայ առևտրականները ակտիվ մասնակցություն են ունենում Կալկաթա քաղաքի հիմնադրմանը, որը տեղի է ունեցել 1690 թ.։

Հնդկաստանում հիմնված հայկական գաղութները նույնպես բազմաքանակ բնակչություն են ունեցել։ Առանձին տեղերում բնակչությունը տառնյակ հազարների է հասել։ Բայց, ի տարբերություն հայկական շատ այլ գաղթավայրերի, այստեղի բնակիչները կերտողներ էին և քիչ թվով արհեստավորներ։

Հնդկահայերը խոշոր դեր են խաղացել Հնդկաստանի տնտեսական կյանքում և ակտիվ կերպով մասնակցել են անգլիական գաղութարարների դեմ հնդիկ ժողովրդի մղած ազատագրական պայքարին։ Բենգալիայում 1763 թ. անգլիացիների դեմ բռնկված ապստամբության ժամանակ հնդկական զինված ուժերի մի քանի հրամանատարներ հայեր էին, նույնիսկ ընդհանուր հրամանատարությունն իր ձեռքն էր վերցրել Գրիգոր Հարությունյանը, որին անվանել են Գորգի խան։

Մեծ է եղել Հնդկաստանի հայկական գաղութների դերը հայկական ազատագրական պայքարի կազմակերպման և հայերի քաղաքական մտքի մեջ նոր դեմոկրատական ու առաջադիմական գաղափարներ արթնացնելու գործում։

Հայ ժողովրդի կուլտուրայի ընդհանուր գանձարանում Հնդկաստանի հայկական գաղութները, հատկապես Մադրասի գաղութը, խոշոր ծառայություն են մատուցել։ Այնտեղ է առաջին անգամ կազմակերպ-

վել և դրվել հայկական պարբերական մամուլի հիմքը։ 1794 թ. Մադրասում է լույս տեսել հայերեն առաջին թերթը՝ «Ազդարար»-ը։

2. ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ XVIII ԴԱՐԸ

Հայ-ռուսական մերձեցման վաղ շրջանը

Հայերի և ռուսների հարաբերությունների ըստկիզբը դրվել է X—XI դդ.։ Սկզբում դրանք էպիզոդիկ բնույթ են ունեցել։ Հայերը ռուսների մասին առաջին տեղեկություններն ստացել են ռուսական այն ջոկատներից, որոնք կա՛մ բյուզանդական բանակի կազմում, կա՛մ այլ առիթով եկել են Հայաստան և անդրկովկասյան երկրներ։

Հայ առևտրականների քարավանները X—XIII դդ. թափանցել են մերձվոլգյան և մերձդնեպրյան քաղաքները, հասել մինչև Նովգորոդ։ X դարի արաբ մատենագիր Իբն-Ֆադլանի վկայությամբ, սլավոնական մի իշխանի վրանի հատակը ամբողջությամբ ծածկված է եղել հայկական բազմերանգ գորգերով։

Հայ առևտրականների հետ միասին Ռուսաստան են գնացել նաև հայ բժիշկներ և ճարտարապետ-արհեստավորներ։ Հայտնի է, որ Վլադիմիր II Մոնոմախի օրոք (1113—1126) նրա արքունիքի պալատական բժիշկը հայ է եղել։ Ակադեմիկոս Գրեկովն իր աշխատություններում ընդգծում է, որ Ռոստով-Սուզդալյան իշխանության ենթակա վայրերում կառուցված ճարտարապետական հուշարձանների վրա որոշակիորեն նկատվում է հայկական ճարտարապետության ազդեցությունը։ Ռուս-հայկական կուլտուրական -կապերը այդ վաղ շրջանում արտահայտվել են նաև նկարչական արվեստի և թարգմանչական գրականության բնագավառներում։ Նովգորոդի տաճարներից մեկի պատերի վրա նկարված են եղել Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմե կույսի պատկերները, իսկ Մոսկվայի Վասիլի Երանելու տաճարի մի խորանը կոչվել է «Գրիգորի հայոց»՝ Գրիգոր Լուսավորչի անունով։ Անի քաղաքի XIII դ. եկեղեցիներից մեկի որմնանկարների հեղինակը եղել է ռուս նկարիչ։ Վերոհիշյալ դարերում հայերենից ռուսերեն են թարգմանվել «Գրիգոր Պարթևի վարքը» և «Հռիփսիմե կույսի վարքաբանությունը», իսկ ռուսերենից հայերեն՝ «Բորիսի և Գլեբի վարքաբանությունը»։

Այդ կապերը հանգեցրել են այն բանին, որ XII դ. Սանահնի վանքի վանահայր Գրիգոր Տուտեորդին կաթոլիկության և հունական եկեղեցու հալածանքների դեմ պայքարելու համար խորհուրդ

է տալիս հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային՝ հենվել «քրիստոնեության պատվար մեծափառ ռուսական եկեղեցու վրա»։ Պատմական աղբյուրները հիշատակում են, որ 1009 թ. կիևյան ռուս իշխանները Մոլդավիայում և Կիևին մոտիկ շրջաններում բնակություն հաստատած հայկական ռազմական ուժերին հրավիրում են օգնելու իրենց լեհերի դեմ մղվող պայքարում։

Այնուհետև, տեղեկություններ կան, որ X—XIII դդ. ռուսական զորքերի շարքերում հաճախ եղել են հայկական ջոկատներ։ Հիշատակելի է այն, որ 1410 թ. տևտոնական ասպետների դեմ մղված մարտերում, Գրյունվալդի ճակատամարտում ռուս զինվորների հետ միասին մարտնչել են նաև հայկական երկու գրնդեր։ Այսպիսին են եղել ռուս-հայկական կապերը վաղ ժամանակներում։ Դրանք ավելի սերտ և բազմակողմանի են դառնում հետագա դարերում։

Հայ առևտրականները Ռուսաստանում և 1667 թվականի արտոնագիրը

Ռուսական պետության հզորացումն ու ընդարձակումը, մի շարք երկրների հետ նրա սահմանների մերձեցումը մեծ հետաքրքրություն առաջացրեց Պարսկաստանում, Անդրկովկասում, Հյուսիսային Կովկասում և այլ երկրներում ապրող հայ առևտրականների մեջ։ Նրանք ավելի հաճախ սկսեցին Արևելքից ապրանքներ տեղափոխել Ռուսաստան, իսկ այնտեղից, նոր ապրանքներ ձեռք բերելով, գնալ ուրիշ երկրներ։ Այդ բանում մեծ չափով շահագրգռված էր նաև ռուսական պետությունը։ Այդ պատճառով հայ առևտրականների նկատմամբ նա սկսում է վարել խրախուսման ու հովանավորման քաղաքականություն։

Այդպիսի փոխադարձ շահագրգռվածությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում հայ առևտրականների աշխույժ գործունեության համար։ Պարսկաստանից, Անդրկովկասից, Լեհաստանից և այլ երկրներից, որտեղ կային հայկական գաղութներ, հայերն սկսում էին իրենց առևտրական քարավաններով անցնել Ռուսաստան և առևտուր անել Մոսկվայի, Նովգորոդի, Արխանգելսկի, Աստրախանի և այլ քաղաքների հետ։

XVI դարում Շամախու հայ առևտրականները Ռուսաստանի հետ առևտուր էին անում։ Նույն դարի կեսերին պատերազմական գործողությունների պատճառով ընդհատվել էր նրանց առևտուրը, բայց Շիրվանի խանը դիմում է Իվան IV-ին, խնդրելով, որ նա հնարավորություն տա հայ առևտրականներին վերականգնելու իրենց առևտուրը Ռուսաստանի հետ։ Ցարը հաճույքով ընդու-

նում է այդ առաջարկը, և նրանք նորից վերսկսում են իրենց առևտուրը։ Հայերն ամենից շատ իրենց գործունեությունը ծավալել են Աստրախան—Արխանգելսկ երթուղու երկարությամբ, այդ պատճառով հիշյալ ճանապարհը կոչվել է «հայկական»։

Հայ առևտրականները XVII դ. ճանաչված մարդիկ էին ռուսական իշխանների պալատներում և նույնիսկ ցարական արքունիքում։ Նրանց համար ռուս պետական գործիչները ոչ միայն լավ գնորդներ էին, այլև հովանավորողներ ու բարեկամներ։ Դրա ապացույցն է Նոր Ջուղայի խոջա Զաքար Սահրադյանի կողմից 1659 թ. Ալեքսեյ ցարին նվիրված «ալմաստե գահը»։

Ռուսական ցարը հաճույքով է ընդունում հայ առևտրականների այդ նվերը և խրախուսում նրանց առևտրական գործունեությունը Ռուսաստանում։ Նա խոջա Զաքար Սահրադյանին և նրա ընկերներին հանձնարարում է ավելի ընդլայնել իրենց առևտուրը Ռուսաստանի հետ և, մետաքսից ու թանկարժեք կերպասեղենից բացի, բերել թանկագին քարեր, համեմունքներ ու այլ ապրանքներ։ Ցար Ալեքսեյը այդ առևտրականներին հատկապես պատվիրեց՝ Ռուսաստան հրավիրել հայ արհեստավորների՝ երկրում արհեստագործությանը լայն թափ հաղորդելու համար։

1667 թ. Մոսկվայում Նոր Ջուղայի առևտրականների ներկայացուցիչներ Գրիգոր Լուսիկյանը և Ստեփան Համադանցին ռուսական արքունիքի հետ առևտրական պայմանագիր են կնքում։ Այդ պայմանագրի համաձայն ռուսական կառավարությունը Նոր Ջուղայի հայ առևտրականներին և առևտրական ընկերությանը պարտավորեցնում էր, որ Պարսկաստանի մետաքսը նրանք արտահանեն Ռուսաստան և նրա մի մասը Ռուսաստանի վրայով ներմուծեն Եվրոպական մյուս երկրներ։ Դրա գիմաց հայ առևտրականներին Ալեքսեյ ցարը տալիս էր լայն արտոնություններ՝ զանազան ապրանքների առևտրի մենաշնորհ, Ռուսաստանում ընկերություններ հիմնելու իրավունք և այլն։ Այդ արտոնությունների հիման վրա էլ Աստրախանում, իսկ հետագայում նաև Մոսկվայում, կազմակերպվում են հայ առևտրականների ընկերություններ կամ առևտրական տներ։

1667 թ. ռուսական կառավարության կողմից հայերին տրված արտոնությունները մեծ չափով խթանեցին հայերի և Ռուսաստանի միջև եղած առևտրա-տնտեսական կապերի ընդարձակումը։ Հարյուրավոր հայեր գնացին Ռուսաստանում բնակվելու, իսկ այդ բանը նպաստեց, որ հայերի և ռուսների միջև ավելի խորանան

ու զարգանան վաղուց եղած կուլտուրական կապերը, նախադրյալներ ստեղծվեց հետագայում այդ երկու ժողովուրդների միջև քաղաքական հարաբերությունների առաջացման համար։

Հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների սկզբնավորումը

Հայ առևտրականների ու արհեստավորների նկատմամբ ռուսական պետության հովանավորող և բարյացակամ վերաբերմունքի արդյունքը եղավ նաև այն, որ Ռուսաստանի հարավային շրջաններում, հատկապես Հյուսիսային Կովկասում, առաջացան հայկական գաղութներ, որոնցից առավել նշանավոր էին Աստրախանի, Մոզդոկի, Կզլարի և այլ քաղաքներում հիմնված գաղութները։

Այդ գաղութների բնակչությունը իր կապերը չկտրեց ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ այլ երկրներում եղած գաղթավայրերի հայերի հետ։ Իսկ թե՛ բուն Հայաստանում, թե՛ հայկական գաղթավայրերում պատմական դեպքերի բերումով հայ բուրժուականացող տարրերի մեջ, սկսած XVII դ. երկրորդ կեսերից, ուժեղանում էր Հայաստանն օտար տիրապետություններից ազատագրելու և սեփական պետություն ստեղծելու ձգտումը։

Հայաստանի ազատագրության դաղափարն այդ ժամանակներում սերտորեն կապվում էր դրսից օգնություն ստանալու հետ։ Հայերն այդպիսի օգնություն ստանալու հույսը XVII դ. վերջերից սկսեցին կապել Ռուսաստանի հետ։ Հայերի այդ ձգտումն ուներ իր ռեալ հիմքերը։ Ռուսաստանը XVII դ. աշխարհի խոշորագույն և հզոր պետություններից էր։ Անդրկովկասի հետ նրա հարավային սահմանն էին կազմում Կովկասյան լեռները։ Ռուսական պետությունը մեծ հետաքրքրություն էր հանդես բերում արևելյան երկրների, այդ թվում և Անդրկովկասի ու Հայաստանի նկատմամբ։ Այս բոլորը լուրջ հիմքեր էին ստեղծում Հայաստանը օսմանյան և պարսկական լծից ազատագրելու հույսը կապելու ռուսներից օգնություն ստանալու հետ։

Ռուսաստանի հետ քաղաքական հարաբերությունների մեջ մտնելու առաջին փորձերը կատարվում են 70-ական թթ.։ 1670—1671 թթ. Գանձասարի Պետրոս կաթողիկոսը հատուկ ուղերձով դիմում է ռուսական ցարին և խնդրում, որ նա իր հովանավորության տակ վերցնի հայերին և նրանց օգնի՝ ազատագրվելու օտար տիրակալների լծից։ Այդ նույն շրջանում Նոր Ջուղայեցի Գրիգոր Լուսիկյանը պատրաստվում է մեկնել Մոսկվա՝ որպես պարսկական շահի դիվանագիտական միսիայի անդամ, իսկ դրանից առաջ 1668—1669 թթ. Սպահան էր եկել հայոց կաթողիկոս Հակոբ Ջու-

դայեցին՝ հայկական ազատագրական շարժման առաջին ոգեշնչողներից մեկը։ Նա Սպահանում տեսակցություններ է ունենում Նոր Ջուղայի գլխավորների հետ և, ամենայն հավանականությամբ, այդ խորհրդակցությունների ժամանակ էլ ծագում է ռուսական ցարին խնդրագիր-նամակ ուղարկելու միտքը։

Հետագայում Հակոբ Ջուղայեցին նույնպես նամակ է գրում ռուսական ցարին՝ նրան խնդրելով օժանդակել Հայաստանի ազատագրման գործին։ Պատմական աղբյուրներից երևում է, որ ռուսական կառավարությանն այդպիսի նամակ ուղարկել են նաև Նորջուղայեցի հայ առևտրականները։ Այդ նամակները առաջին քայլերն էին հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների հաստատման բնագավառում, հարաբերություններ, որոնք հետագայում լայն ընթացք ստացան և դարձան հայկական ազատագրական շարժումների ծավալումն ու վերելքը խթանող գործոններից մեկը։

ԳԼՈՒԽ XXXIII

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVII—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՇԱՐԺՄԱՆ ՋԱՐԹՈՆՔԸ. ԷՋՄԻԱԾՆԻ 1677 ԹՎԱԿԱՆԻ ԺՈՂՈՎԸ

Ազատագրական շարժումը խթանող պայմանները

XVII դ. կեսերից Թուրքական և պարսկական պետությունները աստիճանաբար թուլանալով, կորցրեցին իրենց նրբեմնի ռազմական հզորությունն ու ազդեցությունը։

Թուրքիայում այդ բանը ցայտուն կերպով դրսևորվեց դարի վերջին կեսին, երբ Թուրքական պետությունը, եվրոպական ուժերից շարունակ պարտություն կրելով, զրկվում էր Եվրոպայի հարավարևելյան մասերում իր նվաճած շատ շրջաններից։

Նույնպիսի վիճակ էր ապրում նաև Աֆֆլյան Պարսկաստանը։ XVII դ. երկրորդ կեսին նա կորցրել էր Շահ-Աբաս I-ի ժամանակվա հզորությունը, կազմալուծվել և անմարտունակ էր դարձել նրա բանակը։

Պարսկական և Թուրքական կենտրոնական իշխանությունների կազմալուծումը թեև տեղական պաշտոնեության համար նվաճված ժողովուրդների նկատմամբ կամայականություն ու բռնություն գործադրելու հնարավորություն էր ընձեռում, բայց, այնուամենայնիվ, այդ ժողովուրդների աչքում Թուրքիան և Պարսկաստանը աստիճանաբար կորցնում էին իրենց ահ ու սարսափ տարածող նախկին ուժի ու հզորության համբավը։ Բնակչության մեջ առաջանում և ամրապնդվում էր այն միտքը, թե հնարավոր է պայքարի դուրս գալ Թուրքական ու պարսկական բռնության դեմ և ազատագրվել։

Պայքարի համար կարևոր աղդակ էր նաև Ռուսաստանի միջազգային ասպարեզ դուրս գալը և նրա հետաքրքրությունը Արևելքի երկրների նկատմամբ։ Ռուսաստանը XVII դ. վերջերին և XVIII դ. սկզբներին ընդարձակելով իր պետական սահմանները, մոտեցել

էր Անդրկովկասին և ձգտում էր իր ազդեցությունը տարածել նաև այդ երկրամասի վրա, մի հանգամանք, որը անդրկովկասյան ժողովուրդներին հույս էր ներշնչում և ոգևորում պայքարի ելնելու համար։

Հայաստանում ազատագրական գաղափարների տարածման գործում փոքր դեր չի խաղացել նաև Եվրոպայում և այլ երկրներում հաստատված հայկական գաղթավայրերի բնակիչությունը։ Այդ գաղթավայրերի հայկական տպարաններում տպագրվում էին գրքեր և բերվում հայրենիք։ Այդ գրքերից մի քանիսը նվիրվել են Հայաստանի ազատագրության գաղափարին, զգալի չափով բարձրացրել ժողովրդի ինքնագիտակցությունը և խթանել ազատագրական գաղափարների տարածումը։

Ազատագրական շարժումները պայմանավորվում էին ժողովրդի վիճակի է՛լ ավելի ծանրանալով։ Թուրքական և պարսկական դավիչները հայերին ենթարկում էին տնտեսական կեղեքման, զրկում անձի և գույքի ապահովությունից, ոտնահարում նրանց ազգային ու կրոնական զգացմունքները, ընտանեկան պատիվը։ Հայերին արգելում էին դատարանում վկայություն տալ մահմեդականների գործով, նույնիսկ սուտ վկայության դեպքում նրանք հայից խլում էին նրա ունեցվածքը և տալիս Թուրքին կամ պարսիկին։ Նրանք խրախուսում էին դավանափոխությունը և մահմեդականացած հային իրավունք էին տալիս տիրանալու իր ազգականների ունեցվածքին։

Ժողովրդի ծանր վիճակը առելություն էր առաջ բերել դեպի օտար դավիչները և հող ստեղծել ազատագրական գաղափարների տարածման համար։ Այդ գաղափարները XVII դ. կեսերին արդեն թափանցել էին հայ հասարակական գործիչների մեջ։

Ազատագրական շարժումը Արևմտյան Հայաստանում

Դեռևս XVII դարի 40—50-ական թվականներից Արևմտյան Հայաստանի բնակիչության մեջ ծնունդ է առնում ազատագրական շարժման գաղափարը, որի նպատակն էր Թուրքիային ենթակա քրիստոնյա ժողովուրդների հետ միասին թոթափել օսմանյան ծանր լուծը և ազատություն ձեռք բերել։ Կրետեի (Կանդիայի) պատերազմը Վենետիկի հանրապետության և Օսմանյան սուլթանության միջև, որ սկսվել էր 1645 թ. ու տևել մինչև 1669 թ. զգալի չափով հուսադրեց Թուրքական լծի տակ տառապող քրիստոնյա ժողովուրդներին, այդ թվում և հայերին, նրանց դրդեց պայքարի ելնել Օսմանյան պետության դեմ։

1662 թ. Անտիոքի հունաց պատրիարք Մակարը, Սսի հայոց

կաթողիկոս Խաչատուր Դաղատացին և Հալեպի ասորաց կաթողիկոս Անդրեասը նամակ են գրում Հռոմի պապին և խնդրում՝ աջակցել իրենց ժողովուրդների ազատագրական պայքարին։ Վերոհիշյալ անձնավորությունները միաժամանակ կապ են ստեղծում Հալեպի ֆրանսիական դեսպանության հետ և նրա միջոցով օգնություն խնդրում Լյուդովիկոս XIV-ից։ 1663 թ. նրանք երկրորդ նամակն են գրում Հռոմի պապին և միաժամանակ դիմում ֆրանսիական հյուպատոս Ֆրանսուա Բարոնին։

Սսի կաթողիկոս Խաչատուր Դաղատացին 1663 թ. փետրվարի 12-ին իր գրած դիմումի մեջ խնդրում է պապին, որ նա հոգ տանի բոլոր քրիստոնյաներին, հատկապես հայ ազգին ազատագրելու համար, և ապա ավելացնում է. «Հույս և հավատ ունենք, որ ձեր օրհնյալ ձեռքերով կկատարվի մեր փրկությունը»։ Հույների, հայերի և ասորիների նույն ձգտումն է արտահայտված նաև ֆրանսիական հյուպատոսի զեկուցագրում՝ ուղղված Լյուդովիկոս XIV-ին և նրա մինիստր Կոլբերին։ Այնտեղ ասված է, որ Թուրքիայի լծի տակ տառապող քրիստոնյա ժողովուրդները հույս ունեն ֆրանսիական պետության օգնությամբ ազատագրվելու Թուրքերի ճնշումներից։

Այսպիսով, XVII դ. 60-ական թթ. արևմտահայության մեջ ձևավորվում է ազատագրական շարժման գաղափարը, որը դլխավորում են հայրենասիրաբար տրամադրված հայ առևտրականները և հոգևորականության մի մասը՝ Խաչատուր Դաղատացու հետ միասին գործում էին համբավ և ազդեցություն ունեցող խոջա Մահտեսի Մուրադ կամ Շահմուրադ Բաղիշեցին, խոջա Առաքելը, Օրուսաղեմի հայոց պատրիարք Եղիազար Այնթապցին, Հովհաննես Թութունչին կամ Արևելցին՝ Պոլսի հայոց պատրիարքը, իսկ հետո Վանի Վարագա վանքի առաջնորդը, Հալեպցի Ջուզեպը, Էրզրումցի Գրիգորը և ուրիշներ։

Մահտեսի Մուրադը Փարիզում և նրա ծրագիրը

1660-ական թթ. կեսերին Ֆրանսիայում խոսում էին պապի և Վենետիկի պետության հետ միասին խաչակրաց արշավանք կազմակերպելու մասին։ 1663 թ. հայտնի դարձավ Թուրքիայի դեմ այդպիսի արշավանք կազմակերպելու ֆրանսիացի ղինվորական Տյուրենի ծրագիրը։ Եվ ահա 1666 թ. այդ ժողովուրդների ազատագրական շարժման զեկավարները պատվիրակություն են ուղարկում Փարիզ՝ Լյուդովիկոս XIV-ի մոտ։ Այդ պատվիրակությունը գլխավորում էր «հայ ազնվական» Մահտեսի Մուրադ Բաղիշեցին։ Նա Փարիզ է տարել հայերի և հույների կողմից առաջարկվող որոշակի ծրագիր, որով նախատեսվում էր. ա) Կրետե

կրկու համար մղվող պատերազմը օգտագործել և այդ առիթով Ֆրանսիայի, Վենետիկի և այլ երկրների ուժերով արշավանք կազմակերպել Օսմանյան սուլթանության դեմ. բ) բարձրացնել հույների, հայերի և թուրքական տիրապետության տակ գտնվող մյուս քրիստոնյա ժողովուրդների ապստամբություն. գ) տապալել սուլթանական իշխանությունը և Թուրքիայի կառավարումը հանձնել դոմինիկյան կրոնավոր հայր Օտոմանին. դ) ազատել քրիստոնյա ժողովորդներին թուրքական դերիշխանությունից։ Այդ նույն ժամանակամիջոցին՝ 1657 և 1668 թթ. խաչատուր Գաղատացին էլ բանակցություններ է կատարել դեպի Կրետե՝ վենետիկյան զորքերի հրամանատարության հետ գործակցելու և ապստամբությունը նախապատրաստելու համար։

1670 թ. սկզբներին Փարիզ է ուղարկվում Մահտեսի Մուրադի «պաշտոնակից» խոջա Առաքելը, որը նոր տեղեկություններ է տանում Արևմտյան Հայաստանում ազատագրական գաղափարների տարածման և ազատագրական շարժման ծավալման մասին։

1672 թ. Մահտեսի Մուրադը նոր տեսակցություն է ունենում Լյուդվիկոս XIV-ի հետ։ Այդ ընդունելության ժամանակ Մուրադը, հիշեցնելով նախորդ հանդիպման մասին, Ֆրանսիայի թագավորին հայտնում է, որ հայերը սպասում են ֆրանսիական զորքերին և Վանի, Բիթլիսի, Թոխատի, Սեբաստիայի, Կարինի, Կարսի և մերձակա մյուս շրջաններում, որտեղ հայերը ստվար թիվ են կազմում, պատրաստ են հույների և մյուս ժողովուրդների հետ միասին ապստամբություն բարձրացնել Անատոլիայում և դիմադրել մինչև ֆրանսիական բանակի հասնելը։ Սակայն այդ ժամանակ Թուրքիայի վրա արշավելու գաղափարը ֆրանսիական արքունիքում ընդունելություն չի գտնում։ Հակառակ թագավորի պատերազմական հակումներին, նրա մինիստրները, առանձնապես Կոլբերը ու գրլիոնը, գերադասում էին Թուրքիայի հետ խաղաղություն պահպանելը։ Բացի դրանից, նույն 1672 թ. պատերազմ ծագեց Ֆրանսիայի ու Հոլանդիայի միջև։ Դեպի Արևելք կատարվելիք արշավանքը ետին պլան մղվեց։

1683 թ. Վերսալ են ժամանում և Լյուդովիկոս XIV-ի հետ տեսակցություն են ունենում մի խումբ հայ հասարակական և կրոնական գործիչներ։ Դրանց թվում էին Թութունչի Հովհաննես վարդապետը, հալեպցի Ջուզեպը, էրզրումցի Գրիգորը, ռիսխանցի Զաքարիա վարդապետը և ուրիշներ։ Սրանք այնտեղ հանդիպում են Մահտեսի Մուրադ Բաղիշեցուն և բոլորը միասին ընդունվում Ֆրանսիայի արքայի կողմից։

Սակայն պապի և ֆրանսիական պետության օգնությամբ թուրքական լուծը թոթափելու և ազատագրվելու հունա-հայկական ծրագիրը չիրականացավ։ Ազատագրական շարժման ղեկավարները իրենց հույսը դրել էին դերազանցապես Ֆրանսիայի օգնության վրա, իսկ վերջինս իրերի բերումով շահագրգռված չէր ընդհարվելու Թուրքիայի հետ։

Ազատագրական շարժումը Արևելյան Հայաստանում

Այն ժամանակ, երբ Արևմտյան Հայաստանում հայերն իրենց բռիտակից մյուս ժողովուրդների հետ միասին պայքարում էին թուրքական լծից ազատագրվելու համար, Արևելյան Հայաստանում նույնպես ազատագրական շարժում սկսվեց, որն ուղղված էր պարսկական տիրակալության դեմ։ Այստեղ նույնպես ազատագրական գաղափարները թափանցել էին հայ հասարակական գործիչների ու ազնվականության, հատկապես Սյունիքի մելիքների մեջ և նրանց ոտքի հանել։

1677 թ. էջմիածնում հրավիրվում է գաղտնի ժողով, որին մասնակցում է 12 մարդ՝ 6 աշխարհիկ, 6 հոգևորական։ Ժողովի մասնակիցներից հայտնի են Մելիք-Խաչատրը, Կոստան Բեյը և Աղաջանը։

Էջմիածնի ժողովում քննարկման են դրվում Արևելյան Հայաստանի ազատագրման հարցը և դրա հետ կապված՝ հայկական և կաթոլիկական եկեղեցիների փոխհարաբերությունը։ Որոշվում է պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ պապից ու եվրոպական պետություններից օգնություն խնդրելու։ Պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում էին կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին, Մելիք-Խաչատրը և ուրիշներ, նախ գնում է Վրաստան՝ վրաց գործիչների հետ բանակցելու և համատեղ պայքար կազմակերպելու համար։ Փոխադարձ համաձայնությամբ որոշվում է, որ հայերը դիմեն Արևմտյան Եվրոպայի պետություններին, իսկ վրացիները՝ Ռուսաստանին։ 1679 թ. աշնանը էջմիածնի ժողովի պատվիրակությունը Վրաստանից ուղևորվում է դեպի Կոստանդնուպոլիս։ Այստեղ պատվիրակությունը տեսակցություններ է ունենում Պոլսի հայ բնակչության ներկայացուցիչների հետ, որոնցից մեկը՝ բանաստեղծ և պատմագիր Երեմիա Չելեպի Քեոմյուրճյանը մեծ աջակցություն է ցույց տալիս նրա գործունեությանը։

Երկարատև ճանապարհորդությունը, լարված աշխատանքը ծանր են անդրադառնում պատվիրակության ղեկավար Հակոբ Ջուղայեցու առողջության վրա. նա, ուր ամիս Կոստանդնուպոլսում մնալուց հետո, 1680 թ. օգոստոսին մահանում է։ Իրանից հետո

պատվիրակության մնացած անդամներն այլևս գործնական քայլերի չեն դիմում և նրանցից ոմանք ետ են վերադառնում Արևելյան Հայաստան։ Պատվիրակության ցրվելը, սակայն, չընդհատեց ազատագրական շարժման հետագա ընթացքը։ Այդ գործը շարունակեց պատվիրակության անդամ Մելիք-Իսրայելի որդին՝ Իսրայել Օրին։

Իսրայել Օրին Արևմտյան Եվրոպայում

Մելիք-Իսրայելը, ըստ երևույթին, ցանկացել էր Օրին Եվրոպա տանել կրթության տալու համար։ Օրին պատվիրակության անդամների հետ չվերադարձավ հայրենիք։ Նա առևտրական մի քարավանի հետ Կոստանդնուպոլսից անցավ Եվրոպա, եղավ Իտալիայում, ապա անցավ Ֆրանսիա, հաստատվեց Փարիզում և սկսեց զբաղվել առևտրով։

Պատմագիտական գրականության մեջ Իսրայել Օրու ծննդավայրի և Եվրոպայում ունեցած գործունեության մասին տարբեր կարծիքներ կան։

Սովետահայ պատմագետների մի մասն այն կարծիքին է, որ Օրու ծննդավայրն այժմյան Սիսիանի շրջանն է, որի գյուղերից մեկի մելիքն է եղել նրա հայրը՝ Իսրայելը, իսկ Պողոյանների իշխանական տոհմից սերված լինելու հորինված հանգամանքը բացատրվում է քաղաքական-դիվանագիտական նկատառումներով։

Իսրայել Օրին իր զեկուցագրերում պատմում է, որ XVII դ. 90-ական թթ. անգլո-ֆրանսիական պատերազմի ժամանակ զբաղվել է ֆրանսիական բանակին պարեն մատակարարելով, մասնակցել է պատերազմական գործողություններին և գերի է ընկել անգլիացիների ձեռքը։ Գերությունից ազատվելուց հետո նա այլևս չի մնացել Ֆրանսիայում և 1695 թ. մեկնել է Գերմանիա (Հանովերի հովիտ) և բնակություն հաստատել Դյուսելդորֆ քաղաքում։ Այստեղ նա սկզբնական շրջանում զբաղվել է առևտրով և մի գործի կապակցությամբ ստիպված է եղել դիմել Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին, ծանոթություն հաստատել նրա հետ։ Այստեղ էլ Օրին սկսել է զբաղվել Հայաստանի ազատագրության հարցով։

XVII դ. վերջերին եվրոպական պետություններն սկսում են մեծ հետաքրքրություն դրսևորել Մերձավոր Արևելքի նկատմամբ։ Իսրայել Օրին ըմբռնելով ստեղծված քաղաքական իրադրությունը, ենթադրում է, որ իրեն կհաջողվի շահադրդռել Հովհան Վիլհելմին Հայաստանի ազատագրության համար օգնություն կազմակերպելու նախաձեռնությունն ստանձնելու խնդրում։ Նա այդպիսի նկատառումով Հովհան Վիլհելմին պատմում է հայերի ծանր վիճակի, նրանց ազատագրական ձգտումների, էջմիածնի ժողովի, երկրի

ընական հարստություններին մասին և համոզում, որ նա իր վրա վերցնի Հայաստանի ազատագրման գործը և դառնա այդ երկրի թագավորը։

Հովհան Վիլհելմը տալիս է իր համաձայնությունը, բայց պահանջում է, որ հայերի կողմից այդ մասին լինի գրավոր դիմում և համաձայնություն։ Քանի որ Օրին իր մոտ այդպիսի դիմում չուներ, անհրաժեշտ եղավ մեկնել Հայաստան։

2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Անգեղակոթի ժողովը

Իսրայել Օրին 1699 թ. սկզբին ճանապարհ ընկավ դեպի Հայաստան։ Պֆալցի կուրֆյուրստը նամակներ գրեց վրաց թագավորին, Գանձասարի և Էջմիածնի կաթողիկոսներին։ Իսրայել Օրին փորձեց այդպիսի գրություններ վերցնել նաև ավստրիական կայսր Լեոպոլդ I-ից և Տոսկանայի դուքս Կոզմաս III-ից։

Ֆլորենցիայում Կոզմաս III-ը տվեց իր համաձայնությունը։ Վիեննայում, սակայն, Օրուն հասկացրին, որ Լեոպոլդ կայսրը չի կարող Հայաստանի ազատագրության մասին հանձնարարական տալ՝ նկատի ունենալով իր համար ստեղծված քաղաքական բարդ իրադրությունը։

Օրին նույն թվականի դարնանը Թուրքիայի վրայով մեկնեց հայրենիք։ Ճանապարհին նա եղավ Կոստանդնուպոլսում, տեսակցեց հայոց պատրիարքի հետ, վերջինիս օգնությամբ բարեհաջող հասավ Կարին, իսկ այնտեղից էլ Էջմիածին։

Իսրայել Օրին շատ էր կտրվել հայկական իրականությունից և անտեղյակ էր Հայաստանում ու Անդրկովկասում տեղի ունեցած իրադարձություններից։ Դրա ցայտուն ապացույցն այն էր, որ Օրու ցուցումներով Հովհան Վիլհելմի գրած նամակների բոլոր հասցեատերերն արդեն չկային։ Իսրայել Օրին կարծում էր, որ Էջմիածնի հոգևորականությունը և նրա կաթողիկոսը նեցուկ կլինեն իր գործունեությանը, սակայն Օրու հույսերը շարդարացան։ Էջմիածնի հոգևորականությունը և նախ՝ կաթողիկոսը անբարյացակամ դտնվեցին Օրու նկատմամբ։

Իսրայել Օրին սպասված եղավ անմիջապես հեռանալ Էջմիածնից. նա մեկնեց իր ծննդավայրը՝ Սիսիանի շրջան. եղավ իր եղբոր տանը, տեսավ քրոջն ու եղբայրներին, իրեն ներկայացնելով որպես օտարերկրացի ճանապարհորդ, քանի որ անհրաժեշտ էր զգուշանալ պարսիկների հետապնդումներից։ Եղբոր տանը գիշերելուց հետո

Օրին գնաց Անգեղակոթ-գյուղը՝ տեսակցելու Մելիք-Սաֆրազի հետ, որին գիտեր մանկությունից։ Անգեղակոթում Օրին Մելիք-Սաֆրազին պատմում է Հովհան Վիլհելմի հետ ունեցած իր զրույցների մասին և ոգևորում նրան, որ նա էլ ձեռնամուխ լինի Հայաստանի ազատագրության գործին։

Մելիք-Սաֆրազն ու Օրին որոշում են Սյունիքի մելիքներին հրավիրել Անգեղակոթ և քննության առնել Հովհան Վիլհելմի նամակները։ 1699 թ. ապրիլ ամսին Անգեղակոթում հրավիրվեց Սյունիքի մելիքների ժողովը։ Այդ ժողովի կողմից գրված դիմումներից երևում է, որ խորհրդակցությանը մասնակցել են 11 մելիքներ։

Ժողովում Իսրայել Օրին մելիքներին ծանոթացնում է Հովհան Վիլհելմի նամակներին, նրանց հայտնում, որ Վիլհելմը համաձայնվել է օգնել հայերին՝ ազատագրելու Արևելյան Հայաստանը պարսկական լծից և ստանձնելու հայկական թագավորության գահը՝ այն պայմանով, որ հայերի կողմից Հովհան Վիլհելմին և եվրոպական մյուս իշխանավորներին գրավոր դիմումներ արվեն։ Մելիքները հավանություն են տալիս Օրու առաջարկություններին և իրենց անունից դիմումներ գրում եվրոպական իշխանավորներին։ Այդ դիմումներից մեկն ուղղված էր Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին, որի մեջ շնորհակալություն էր հայտնվում կուրֆյուրստին, ճանաչում նրան հայոց թագավոր և խնդրում արագացնել իր զորքերի ուղարկումը Հայաստան։ Դիմումներ են գրվում նաև Ավստրիայի Լեոպոլդ կայսրին և Տոսկանայի դքսին։

Դիմումներից մեկը հասցեագրված էր Հռոմի պապին, որտեղ մելիքները խնդրում էին պապին, որ նա հորդորի եվրոպական իշխանություններին մահմեդականների գերիշխանությունից հայերին ազատագրելու գործում։ Դրա դիմաց նրանք հանձն էին առնում ազատագրվելուց հետո միանալ կաթոլիկական եկեղեցուն։ Հռոմի պապին գրված դիմումի մեջ առաջին անգամ խոսվում էր Էջմիածնի ժողովի մասին։

Անգեղակոթի ժողովում մի դիմում էլ գրվեց ռուսաց ցարին, որից նույնպես օգնություն էր խնդրվում պարսկական տիրակալությունից ազատագրվելու համար։ Սա արդեն որոշակի քայլ էր հայ-ռուսական քաղաքական կապեր հաստատելու գործում։ Բացի վերոհիշյալ դիմումներից, Անգեղակոթի ժողովը մի լիազորագիր և մելիքների կողմից ստորագրված, բայց չգրված թղթեր տվեցին Իսրայել Օրուն, նրան լիազորելով դրանց վրա իրենց անունից դիմումներ գրել ում որ հարկ լինի։ Օրուն տրված լիազորագրում պատմվում էր նրա տոհմի և ազնվականական ծագման մասին, նը-

բան համարելով սերված Պառչյան իշխանական տոհմից, և լիազորում նրան հայերի անունից բանակցություններ վարել եվրոպական պետությունների հետ։

Իսրայել Օրին՝ վերոհիշյալ փաստաթղթերն իր հետ վերցնելով, Մինաս վարդապետ Տիգրանյանցի հետ միասին, որին ժողովը առանձնացրեց որպես Օրու օգնական և քարտուղար, նույն 1699 թ. վերադարձավ Եվրոպա՝ Դյուսելդորֆ քաղաքը։

Անգեղակոթի ժողովը կարևոր դեր խաղաց հայերի ազատագրական շարժման ծավալման գործում։ Ժողովում քննարկվեցին նախշարժումը կազմակերպելու, ժողովրդին զինելու և օտար նվաճողների դեմ պայքարելու համար նրան նախապատրաստելու գործի հետ կապված հարցերը։

Իսրայել Օրու պլֆալցյան ծրագիրը և Եվրոպայում կրած անհաջողությունը

Իսրայել Օրին և Մինաս վարդապետը Դյուսելդորֆ ժամանելուց հետո երկար ժամանակ չկարողացան տեսակցել Հովհան Վիլհելմի հետ՝ վերջինիս հիվանդ լինելու պատճառով։ Նրանք, մինչև կուրֆյուրստի առողջանալն ու նրա հետ տեսակցելը, մշակեցին Արևելյան Հայաստանի ազատագրման ծրագիր, որով նախատեսվում էր Եվրոպայում կազմակերպել բանակ և այն ուղարկել Հայաստան։ Այդպիսի բանակ ստեղծելու համար պիտի կազմվեր եռյակ միություն՝ հանձինս Ավստրիայի կայսր Լեոպոլդի, Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի և Տոսկանայի դուքս Կոզիմա III-ի։ Բանակի տեղաշարժը գաղտնի պահելու համար այն պիտի անցներ Ռուսաստանով՝ որպես ռուսական պետության զորք և Կասպից ծովի վրայով մտներ Անդրկովկաս։

Ծրագրում նախատեսված էր՝ երբ եռյակ միության զորքերը մտնեն Անդրկովկաս, հայերն ու վրացիները պիտի ապստամբեն պարսիկների դեմ, միանան բանակին և 20—25 օրվա ընթացքում ազատագրեն ամբողջ Արևելյան Հայաստանը։ Ըստ Օրու ծրագրի, ազատագրված Հայաստանում պիտի վերականգնվեր հայկական պետությունը, կազմվեր թագավորություն, որի գահին բարձրանալու էր Հովհան Վիլհելմը։

Իսրայել Օրու ծրագրում խիստ գերագնահատված էին հայերի և վրացիների ռազմական ուժերը, վարդագույն էր պատկերված Հայաստանի տնտեսական վիճակը, նրա նյութական բարիքների առատությունն ու հարստությունը։ Այդ բոլորին հակառակ, Օրու ծրագրում Պարսկաստանի ռազմական ուժերն այնքան էին թերագնահատված, որ ընդամենը երկու շաբաթ էր նախատեսված Հայաստանից նրանց դուրս քշելու համար։ Դա Իսրայել Օրու դիվանագի-

տական մոտեցումն էր, որ նպատակ ուներ հրապուրելու Հովհան Վիլհելմին և նրան մղելու գործնական քայլերի՝ Հայաստանին օգնելու համար, իսկ հայերին՝ ոգևորելու ազատագրական պայքարում։

Հայաստանի ազատագրության այս ծրագիրը, իր թերություններով հանդերձ, արժեքավոր փաստաթուղթ և կարևոր երևույթ էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ։ Մինչ այդ հայերը ազատագրական պայքարի որոշակի գրավոր ծրագիր չեն ունեցել։ Դա հայ ազատագրական մտքի փայլուն արտացոլումն էր։

Իսրայել Օրին և Մինաս վարդապետը 1700 թ. իրենց մշակած ծրագիրը ներկայացրին կուրֆյուրստ Հովհան Վիլհելմին։ Սա տվեց իր հավանությունը և առաջարկեց ձեռնամուխ լինել ծրագրի իրականացման գործին։ Կուրֆյուրստի հանձնարարականներով Օրին նորից մեկնեց Ֆլորենցիա և Վիեննա՝ Լեոպոլդ I-ի և Կոզմաս III-ի համաձայնությունը ստանալու համար։

Ֆլորենցիայում Տոսկանայի դուքսը տվեց իր համաձայնությունը և խոստացավ զորք ու ռազմական հանդերձանք տրամադրել։ Սակայն Վիեննայում Օրին հաջողություն չունեցավ։ Լեոպոլդ կայսրը հրաժարվեց Հայաստանի ազատագրման գործին մասնակցելուց։ Այդպիսով Օրու ծրագիրը տապալվեց։

Եվրոպական այդ երկու խոշոր պետությունների՝ Ֆրանսիայի և Ավստրիայի համար XVII դ. վերջերին ստեղծված միջազգային, քաղաքական իրադրությունն այնքան էլ ոգևորիչ չէր, որ նրանք հայերի պատճառով բախվեին Պարսկաստանի և Թուրքիայի հետ։ Լյուդովիկոս XIV-ը և Լեոպոլդ I-ը վիճում էին իսպանական գահի համար և պատերազմի էին պատրաստվում։ Այդ պատճառով Ֆրանսիան, որը Թուրքիայի հետ լավ հարաբերությունների մեջ էր և վերջինիս միշտ հրահրում էր ընդդեմ Ավստրիայի, չէր ուզում իր դեմ հանել նրան։ Իսկ Պարսկաստանում Ֆրանսիան ուզում էր ավելի մեծ ազդեցություն ձեռք բերել՝ հեշտացնելու համար իր միսիոներների և առևտրականների գործունեությունը, որոնց հետ հաջող կերպով մրցում էին հայ առևտրականները։

Ավստրիան նույնպես իր նկատառումներն ուներ։ Նա նոր էր ավարտել Թուրքիայի դեմ մղած պատերազմը և չէր ուզում նորից ընդհարվել նրա հետ, մանավանդ, որ պատերազմի էր պատրաստվում Ֆրանսիայի դեմ։ Կար մի պատճառ ևս։ Հայաստանը շատ հեռու էր Արևմտյան Եվրոպայից և նրանց միջև ընկած էին այնպիսի

երկրներ, որոնք չէին հանդուրժի ոչ ֆրանսիական, ոչ էլ ավստրիական բանակների անցումն իրենց տերիտորիայով։

Այսպիսով, հայերի՝ Արևմուտքից օգնություն ստանալու հույսը չիրականացավ։ Նրանց մնում էր ավելի որոշակի և ավելի ռեալ ուժի հետ կապել օգնություն ստանալու իրենց հույսը։

3. ՇՐՋԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Իսրայել Օրին Մոսկվայում և ազատագրական նոր ծրագիրը

Վիեննայում Իսրայել Օրուն հասկացրին, որ հայերի ազատագրության գործին իրական օգնություն կարող է ցույց տալ Պետրոս I-ը, և նա, Արևմուտքից հույսը կտրած, իր ընկերոջ՝ Մինաս վարդապետի հետ ճանապարհ ընկավ դեպի Ռուսաստան։ Ռուսական իշխանություններին ներկայանալու համար Օրին Հովհան Վիլհելմից վերցրեց հանձնարարական և այնտեղ եկավ որպես կուրֆյուրստի պատվիրակ։ Ճանապարհին, Լեհաստանով անցնելիս, նրանք որպես թարգմանիչ իրենց հետ վերցրին լեհահայ Նազար Օրեխովիչին։

1701 թ. հուլիսին Իսրայել Օրին իր ընկերների հետ հասնում է Մոսկվա և ներկայանում ռուսական պետության առաջին պաշտոնյա Գոլովինին։ Վերջինս մանրամասն կերպով հետաքրքրվում է նրանց Ռուսաստան գալու նպատակով։ Զրույցի ընթացքում Գոլովինը ցանկանում է պարզել, թե հայերը ո՞ւմ օգնությամբ են ուզում ազատել իրենց երկիրը, կուրֆյուրստը ինչքա՞ն զորք է ուղարկելու, Հայաստանի ազատագրված հողերը ո՞ւմ անունով են պահվելու, ո՞ւմ զորքերը պիտի մնան գրավված հողերում և այլն։

Իսրայել Օրին այդ հարցերին տված իր գրավոր պատասխանում ամբողջովին շրջադարձ է կատարում դեպի Ռուսաստան։ Նա հայտարարում է, որ հայերը հույսը դրել են միայն Ռուսաստանի ռազմական օգնության վրա, նրանք Արևմուտքից օգնություն չեն խնդրել, նրանց ցանկությունն է եղել միայն, որ արևմտյան պետությունները թույլ չտան Թուրքիային հարձակվել հայերի վրա, որ Հայաստանում գրավված հողերն ու բերդերը կանցնեն ռուսական պետության գերիշխանության տակ և ռուսական զորքեր կըմընան այնտեղ։

Գոլովինի հետ ունեցած զրույցների ժամանակ Իսրայել Օրին խնդրում է, որ իրեն հնարավորություն տան անձամբ տեսակցելու Պետրոս I-ի հետ։ Օրուն խոստացան այդպիսի տեսակցություն։ Մինչև ռուսական ցարի հետ հանդիպելը Իսրայել Օրին մշակեց Հա-

յաստանի ազատագրության նոր ծրագիր։ Այդ ծրագրում նախատեսվում էր կազմակերպել 25 հազարանոց բանակ, որի մի մասը՝ 10 հազարը Աստրախանից ծովով պիտի անցներ Անդրկովկաս, մյուս մասը՝ 15 հազարը Հյուսիսային Կովկասից Դարիալի կիրճով պետք է մտներ Վրաստան, որտեղ ռուսական զորքերին պիտի միանային վրացական մի քանի տասնյակ հազար զինվորներ և շարժվեին դեպի Արևելյան Հայաստան։ Երբ երկու կողմից՝ Վրաստանից և Ադրբեջանից ռուսական զորքերը մտնեին Հայաստան, այնտեղ նրանց պիտի միանային ապստամբություն բարձրացրած հայերը, որոնց զինված ուժերի քանակը Օրին հասցնում էր մինչև հարյուր հազարի։ Ռուսական, հայկական և վրացական զորքերը 10—15 օրվա ընթացքում պիտի ազատագրեին ամբողջ Արևելյան Հայաստանը։

Ծրագրում նշվում էր, որ անհրաժեշտ է արշավանքը դեպի Հայաստան սկսել 1701 թ. հոկտեմբերին, որովհետև Պարսկաստանը բավականին թուլացել էր և ի վիճակի չէր դիմադրություն ցույց տալ։ Օրին այս ծրագիրը մշակելիս սերտ կապ էր պահպանում վրաց Արչիլ թագավորի հոր հետ, որն այն ժամանակ գտնվում էր Մոսկվայում և նույնպես ջանում էր ռազմական օգնություն ստանալ Ռուսաստանից։

Ծրագիրը ռուսական կառավարությանը ներկայացվեց դեռևս հուլիսի 25-ին։ Օրին նորից տեսակցություն խնդրեց Պետրոս I-ի հետ։ Այդ տեսակցությունը տեղի ունեցավ 1701 թ. հոկտեմբերին Դոլովինի դղյակում։ Զրույցի ժամանակ Օրին ու Մինաս վարդապետը պատմեցին հայերի ծանր վիճակի մասին, հաղորդեցին, որ հայերը իրենց ազատագրության հույսը դնում են ռուսաց հզոր պետության վրա և մեծ թագավորին խնդրում են ազատել իրենց օսմանյան և պարսկական լծից։ 1702 թ. մարտին պաշտոնապես հայտնեցին Օրուն, որ Պետրոս I-ը վճռել է շվեդական պատերազմը վերջացնելուց հետո անպայման օգնել հայերին և նրանց ազատել թուրքական ու պարսկական լծից։

Օրու նամակները Հայաստանում

Ռուսական կառավարության այս խոստումը ոգևորեց Օրուն և Մինաս վարդապետին։ Նրանք որոշեցին այդ լուրը շտապ կերպով հաղորդել Հայաստան։ Նամակներ գրեցին Սյունյաց մելիքներին, Գանձասարի ու Էջմիածնի կաթողիկոսներին և Մոսկվայում ապրող մի հայի՝ կապիտան Միրոն Վասիլևի միջոցով ուղարկեցին Հայաստան։

Միրոն Վասիլևը 1702 թ. գարնանը ճանապարհ ընկավ դեպի Անդրկովկաս։ Նա եղավ Դանձասարում և էջմիածնում։

Սակայն Միրոն Վասիլևը 1703 թ. դատարկաձեռն վերադարձավ Մոսկվա։ Օրու նամակների նկատմամբ հայ հոգևորականների և մելիքների սկզբնական անտարբեր վերաբերմունքը բացատրվում էր նրանով, որ Հայաստանի ազատագրության նոր ուղին, այսինքն՝ շրջադարձը դեպի Ռուսաստան, դեռևս ընդհանուր ճանաչում չէր գտել։

Միրոն Վասիլևի ձեռնունայն վերադառնալը ծանր կացություն ստեղծեց Իսրայել Օրու գործունեության համար։

Ստեղծված դրությունից դուրս գալու նպատակով Մինաս վարդապետն ու Օրին օգտագործեցին Անգեղակոթի ժողովի կողմից նրանց տրված մաքուր թղթերը։ Նրանք մելիքների անունից մի դիմում կազմեցին և ներկայացրին Պետրոս I-ին։ Այդ դիմումի մեջ ասված էր, որ հայերն իրենց ազատագրության ամբողջ հույսը դրնում են ռուսաց մեծ թագավորի օգնության վրա և աղաչում են շուտ իրականացնել այն։

Պատմագիտական գրականության մեջ այդ դիմումը համարվել է կեղծիք։ Սակայն Օրու և Մինաս վարդապետի նկատմամբ այդպիսի մեղադրանքն իրավացի չէ։ Նրանք կատարել են այն, ինչ իրավունք էր տվել Անգեղակոթի ժողովը։

Հայաստանում տեղի ունեցած հետագա դեպքերն արդարացրին Իսրայել Օրու վարքագիծը։ Թե՛ մելիքները, թե՛ Դանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, որ կաթողիկոս ընտրվելու օրից՝ 1703 թ. սկսած դարձավ ազատագրական պայքարի անխոնջ մարտիկներից մեկը, նորանոր դիմումներ հղեցին ռուսական պետությանը՝ հայերին օգնելու և Հայաստանն ազատագրելու խնդրանքով։

Օրու դեսպանությունը Պարսկաստան

Շվեդների դեմ մղված պատերազմում տարած առաջին հաղթանակները ռուսական կառավարությանը հնարավորություն տվեցին մտածելու նաև դեպի Պարսկաստան և Անդրկովկաս կազմակերպվելիք արշավանքի մասին։ Պարսկաստանում և Անդրկովկասում տիրող վիճակին ծանոթանալու համար անհրաժեշտ դարձավ Պարսկաստան ուղարկել մի դեսպանություն։ Իսրայել Օրին խնդրեց իրեն ևս թույլ տալ մասնակցելու այդ դեսպանությանը։ Ռուսական արքունիքը նկատի առնելով նրա իրաղն-

կությունը Անդրկովկասին, համաձայնեց Օրու առաջարկին, նրան տվեց դնդապետի կոչում և նշանակեց դեսպանության ղեկավար։

Պարսկաստանում դեսպանության նկատմամբ կասկածանք չառաջացնելու համար պետք էր ավելի անմեղ պատրվակ։ Այդ նպատակով խորհուրդ տրվեց Օրուն վերադառնալ Եվրոպա և իր ծանոթների միջոցով Հռոմի պապից մի նամակ վերցնել՝ ուղղված պարսից շահին։ Այդ նամակում պապը պետք է միջնորդեր շահի առաջ, որ նա կասեցներ քրիստոնյաների հալածանքները իր երկրում։

Իսրայել Օրին 1704 թ. Մոսկվայից գնաց Դյուսելդորֆ, Հովհան Վիլհելմի միջոցով ձեռք բերեց ցանկացած դիմումը, ապա շրջագայություն կատարեց Արևմտյան Եվրոպայում, 20 հազար ռուբլու զենք գնեց և 1706 թ. վերադարձավ Ռուսաստան։ Նա մտադիր էր Աստրախանում հայերից մի գունդ կազմակերպել և այն զինել Եվրոպայից բերված այդ նոր զենքով։ Պետրոս I-ը ևս, ի պաշտպանություն Պարսկաստանում ապրող քրիստոնյաների, նամակ գրեց շահին։ Իսրայել Օրին այդ նամակները վերցնելով, 1707 թ. հունիսին ճանապարհ ընկավ դեպի Պարսկաստան։ Օրին իր շքախմբով Աստրախանից նավով գալիս է Բաքվի մոտ գտնվող Նիդովոյե նավահանգիստը և այնտեղից ռուս նավաստիների զինված ջոկատի ուղեկցությամբ 1708 թ. սկզբին հանդիսավոր կերպով ժամանում Շամախի քաղաքը։

Շամախու խանը արգելեց նրան շարունակել ճանապարհորդությունը։ Արգելման պատճառը Պարսկաստանում գործող արևմտաեվրոպական՝ ֆրանսիական միսիոներների՝ հատկապես Մ՚իշելի տարածած այն լուրերն էին, թե Օրին պարսկահայ է, ուզում է Հայաստանը անջատել Պարսկաստանից և ինքը դառնալ Հայաստանի թագավոր։ Սակայն պարսկական իշխանություններին ձեռնտու չէր Պետրոս I-ի դեսպանին երկար ժամանակ պահել իրենց հողում, և 1709 թ. Օրին շարունակեց իր ճանապարհը դեպի Սպահան, նույն թվականի կեսերին վերադարձավ Անդրկովկաս և մնաց այնտեղ մինչև 1711 թ.։

Նա Անդրկովկասում գտնվելու ժամանակ ղպալի գործ կատարեց ազատագրական պայքարի դաղափարը արմատավորելու և ժողովրդի մեջ Ռուսաստանի նկատմամբ համակրանքն ուժեղացնելու ուղղությամբ։ Սպահան գնալիս և վերադառնալիս Օրին ճանապարհորդեց Հայաստանում, եղավ Գանձասարում, Սյունիքում, Էջմիածնում

նում։ Կապեր հաստատեց Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի և մելիքների հետ։ Աշխատեց համոզել Էջմիածնի կաթողիկոս Այեքսանդր Ջուղայեցուն՝ կողմնորոշվել դեպի Ռուսաստանը։

Օրին ուշադրություն դարձրեց նաև այդ երկրամասի բազմազգ ժողովուրդների միջև համատեղ պայքարի ճակատ ստեղծելու վրա։ Նա կապ հաստատեց վրաց և ադրբեջանցի գործիչների հետ։ Հայտնի են նրա հարաբերությունները Ղուբայի և Շիրվանի խանների, Սուլեյման-բաքայի և այլոց հետ։ Օրին աշխատում էր անդրկովկասյան ժողովուրդների ուժերը միավորել և հայկական ազատագրական պայքարը դուրս բերել ազգային շրջանակներից։ Նա արդեն բավականին տեղեկություններ էր հավաքել Պարսկաստանի և Անդրկովկասի մասին և իր գործունեությամբ հայերի ու անդրկովկասյան մյուս ժողովուրդների մեջ ոգևորություն, խանդավառություն և բարյացակամ վերաբերմունք էր առաջացրել դեպի Ռուսաստանը։ Այս բոլորից հետո Օրին և Եսայի Հասան-Ջալալյանը 1711 թ. ճանապարհ ընկան դեպի Ռուսաստան։ Նրանք Կասպից ծովով եկան Աստրախան, որպեսզի այստեղից մեկնեն Մոսկվա, բայց Աստրախանում 1711 թ. օգոստոսին դադարեց գործելուց հայ ժողովրդի ազատագրության համար բաբախող սիրտը՝ Իսրայել Օրին հանկարծամահ եղավ։

Իսրայել Օրին խոշոր դեր խաղաց XVII—XVIII դդ. հայ ազատագրական շարժման պատմության մեջ։ Նա ազատագրական շարժումը դուրս բերեց հոգևորականության շրջանակներից, կրոնական դավանաբանական արահետից, դրեց աշխարհիկ-քաղաքական ուղու վրա, բարձրացրեց համազգային մակարդակի և մարտական շունչ տվեց նրան։ Նա հայերի ազատագրական շարժումը դուրս բերեց նաև ազգային շրջանակներից, հայ ժողովրդի ազատագրական պայքարը կապեց անդրկովկասյան մյուս ժողովուրդների պայքարի հետ և արմատավորեց այդ ժողովուրդների համատեղ պայքարի գաղափարը։ Իսրայել Օրին դրեց հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների հիմքը և հայ ժողովրդի ազատությունը կապեց ռուս ժողովրդի օգնության հետ, հրաժարվելով արևմտյան օրիենտացիայից։ Իսրայել Օրին իրեն դրսևորեց որպես խոշոր հայրենասեր, միշտ ընդհանուրի, հայրենիքի ազատության շահը դերադասելով անձնականից, ազնվորեն, անձնուրաց կերպով իր կյանքը նվիրեց հայրենիքի ազատագրության գործին։

Դրությունը Անդրկովկասում և հայկական զինվորականության ստեղծումը

Խոսրով Օրու մահը չկանգնեցրեց հայերի ազատագրական շարժումը։

XVII դ. վերջերին Պարսկաստանում մտցվեց նոր հարկային սիստեմ և նշանակվեցին նորանոր հարկեր՝ կրկնապատիկ և եռապատիկ չափերով, որոնց գանձումը, մանավանդ նվաճված ժողովուրդներից, ուղեկցվում էր դաժան հալածանքներով։ Եսայի Հասան-Ջալալյանը պատմում է, որ պարսկական իշխանավորներից մեկը՝ Միրզա Թահիրը Խավրիզից 1100 զինվորներով ու հարկահաններով եկավ Ղարաբաղ, Գանձակ և ըսկըսեց կողոպտել հայ բնակչությանը։ Այդ նույն բանը տեղի էր ունենում Արևելյան Հայաստանի նաև մյուս շրջաններում։ Հարկահանության պատրվակով պարսից զինվորները ու պաշտոնյաները թալանում էին բնակչության ունեցվածքը, տանջանքի ենթարկում մարդկանց, ոտնահարում նրանց ընտանեկան պատիվը, կրոնական ու ազգային զգացմունքները, հարկի դիմաց տանում նրանց երեխաներին։ Հպատակ ժողովուրդների համար ստեղծված ծանր վիճակը ստիպում էր ոտքի ելնել պարոկական տիրակալության դեմ։ Այդպիսի ապստամբություն արդեն սկսվել էր Աֆղանստանում՝ Միր Վեյսի, իսկ հետո նրա որդու՝ Միր Մահմուդի գլխավորությամբ։ Ազատագրական շարժումը աշխուժացել էր նաև Վրաստանում և այլ երկրներում։ Ազատագրական պայքարի այդ վերելքն իր ոլորտի մեջ առավ նաև Արևելյան Հայաստանը։

XVIII դ. երկրորդ տասնամյակում Պարսկաստանի ու Անդրկովկասի նկատմամբ Ռուսաստանի հետաքրքրությունն ավելի ուժեղացավ. 1715 թ. Անդրկովկաս եկավ ռուսական դեսպան Վոլինսկին։ Նրան հանձնարարված էր ուսումնասիրել Պարսկաստան տանող ճանապարհները, հետաքրքրվել Անդրկովկասի ժողովուրդների, հատկապես հայերի կյանքով, պարզել, թե նրանք ինչպիսի վերաբերմունք ունեն ռուսական պետության նկատմամբ և լավ վերաբերվել նրանց հետ։

Մի տարի հետո՝ 1716 թ. Մոսկվայից Արևելյան Հայաստան եկավ Խոսրով Օրու ընկեր Մինաս վարդապետը։ Նա տեսակցություն ունեցավ Եսայի Հասան-Ջալալյանի և Էջմիածնի կաթողիկոս Աստվածատուր Համադանցու հետ, աշխատեց վերջինիս կողմնորոշել դեպի Ռուսաստանը և նոր լուրեր բերեց ռուսական զորքերի կողմից նախապատրաստվող արշավանքի մասին։ Վոլինսկու և Մի-

նաս վարդապետ Տիգրանյանցի այցելությունները նոր լիցք տվեցին հայկական ազատագրական շարժմանը։

Աֆղանցիների ասպատամբությունը հետզհետե լայն տարածում էր ստանում։ Նրանք 1722 թ. արշավեցին պարսից մայրաքաղաք Սպահանի վրա, գրավեցին այն և գլխատեցին գերի ընկած Հուսեյին շահին։ Պարսկաստանում առաջացավ քաղաքական խառնաշփոթություն։ Այդ խառնակ շրջանում ոտքի ելան նաև կովկասյան լեռնաբնակ ցեղերը։ Նրանք սկսեցին ասպատակել Ադրբեջանը և Հայաստանի հյուսիսային ու արևելյան շրջանները։

Լեզգիների ասպատակություններից պաշտպանվելու նպատակով հայերը Ղարաբաղում, Սյունիքում և այլուր սկսեցին կազմակերպել զինված ջոկատներ, որոնք հետզհետե համալրվեցին և կանոնավոր զորքի կերպարանք ստացան։ Հայկական զորքի խոշոր ջոկատներ առաջին հերթին կազմակերպվեցին պատմական Արցախում, այսինքն՝ Ղարաբաղում, Մոսավ լեռան շրջակայքում. այդ վայրը անվանվեց Մեծ սղնախ, որ նշանակում էր ամրացված վայր, զորակայան։ Այստեղ կենտրոնացված հայկական զորքերի թիվը 10 հազարից ավելի էր։ Նրանց կազմակերպիչներն ու զորավարներն էին Շիրվան, Սարուխան, Սարգիս, Գրիգոր յուզբաշիները և Մելիք Հովսեփը։ Մյուս զորակայանը Փոքր սղնախն էր՝ Շուշի քաղաքի մոտերքում, որի հրամանատարն էր Ավան Յուզբաշին. նրա զորքի թիվը հասնում էր երկու հազարի։ Հետագայում Ղարաբաղի այս երկու զորակայանների ընդհանուր զորահրամանատարը դարձավ Ավան Յուզբաշին, սակայն ամբողջ շարժման ոգեշնչողն ու կազմակերպիչը եղել է Եսայի Հասան-Ջալալյանը։ Այդպիսի ջոկատներ կազմակերպվեցին նաև Սյունիքում՝ Ղափանում։ Այդ ջոկատների մարտիկների թիվը սկզբնական շրջանում քիչ էր։ Նրանք ցրված էին տարբեր տեղերում և չունեին իրենց ընդհանուր ղեկավարը։ Օրինակ՝ Թորոս զորավարի գլխավորությամբ մի ջոկատ կազմակերպվեց Զավնդուրում, մի այլ ջոկատ Պապի գլխավորությամբ՝ Կալերում, մի ուրիշը՝ Տեր-Ավետիսի և Փարսադանի գլխավորությամբ՝ Հալիձորում և այլն։ Սյունիքում կազմակերպված բոլոր ջոկատների դինվորների ընդհանուր թիվը հասնում էր 7—8 հազարի։

Ապստամբության սկիզբը

1722 թ. սկզբներից լեզգիները Դաուդ բեկի գլխավորությամբ ներխուժեցին Ադրբեջանի կենտրոնական շրջանները, գրավեցին Շամախին, ամրացան այնտեղ և հարձակումներ սկսեցին Գանձակի խանության վրա։ Վրաց Վախթանգ VI թագավորը, որը բարեկամական հարաբերությունների մեջ էր Գանձակի խանի հետ, իր

բանակով օգնության եկավ նրան։ Այդ ժամանակ Վախթանգ VI-ի մոտ գնաց Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը՝ հայկական ազատագրական շարժման ղեկավարներից մեկը. Վախթանգ VI-ը և Եսայի Հասան Ջալալյանը գնում են Թիֆլիս և խորհրդակցում հայերի ու վրացիների հետագա միացյալ գործողությունների մասին։

1722 թ. ամռանը, երբ Վախթանգ VI-ը և Եսայի Հասան-Ջալալյանը պայքարի ծրագիր էին մշակում, Թիֆլիս են գալիս Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի պատվիրակները։ Պետրոս Մեծի պատվիրակը բերել էր ցարի նամակը, որով խորհուրդ էր տրվում Վախթանգին իր բանակով ընդառաջել ռուսական զորքին և Շամախիում միանալ նրան։ Պարսից շահն էլ իր նամակով քաջալերում էր վրաց թագավորին՝ լեզգիների դեմ նրա մղած հաջող մարտերի համար և հանձնարարում՝ շարունակել այդ գործը։ Թուրքական պատվիրակն էլ բերել էր Կարինի (Երզրում) օսմանյան փաշայի նամակը, որի մեջ փաշան սուլթանի անունից հայտնում էր, թե շուտով թուրքական զորքերը մտնելու են Անդրկովկաս և պահանջում էր Վախթանգից՝ իր զորքերով միանալ թուրքերին։

Վախթանգ VI-ը օսմանցիների պահանջը մերժեց։ Որոշվեց վրացական բանակը առաջ շարժել դեպի Գանձակ, այնտեղ բերել նաև հայկական զորքերը սղնախներից, ապա միացյալ ուժերը շարժել դեպի Շամախի և սպասել ռուսական բանակին։

1722 թ. սեպտեմբերին վրացական բանակը շարժվեց դեպի Գանձակ։ Եսայի Հասան-Ջալալյանը շտապեց Մեծ սղնախ՝ հայկական զորքը բերելու։ Երկու եղբայրական զորագնդերն իրար հանդիպեցին Գանձակի մոտ, Ջոլակ կոչված վայրում։ Ինչպես նկարագրում է Եսայի Հասան-Ջալալյանը, հանդիպումը հուզիչ է եղել։ Վրացական բանակը մարտական շարք է կազմել, իսկ հայկական զորքերը հանդիսավորությամբ անցել են նրանց առջևով։

Հայ-վրացական զորքերը Գանձակից չշարժվեցին դեպի Շամախի, քանի որ լեզգիներն արդեն կտրել էին ճանապարհը, իսկ ռուսական բանակի առաջխաղացման մասին էլ ոչ մի տեղեկություն չկար։

1722 թ. հուլիսին ռուսական զորքի մի մասը նավերով մոտեցավ Կասպից ծովի ափերին՝ Բաքվի և Գիլանի մոտերքում, իսկ մյուս մասը ցամաքով շարժվեց դեպի Հարավ։ Այդ զորամասերին հաջողվեց տիրանալ Կասպից ծովի անդրկովկասյան ափերին, սակայն մի շարք աննպաստ պայմանների պատճառով Պետրոս I-ը

կարգադրեց դադարեցնել առաջխաղացումը և ամրանալ նվաճված վայրերում, իսկ ինքը աշնան սկզբներին վերադարձավ Մոսկվա։

Վախթանգ VI-ը և Եսայի Հասան-Ջալալյանը աշնանը տեղեկություններ ստացան, որ Պետրոս I-ը վերադարձել է Մոսկվա և ռուսական բանակը դադարեցրել է իր առաջխաղացումը։ Այդ տրխուր լուրն ստանալուց հետո հայկական և վրացական զորքերը վերադարձան իրենց տեղերը։

Մեծ սղնախի զորաբանակը վերադառնալով Ղարաբաղ, ամրացավ անառիկ վայրերում և ապստամբեց պարսկական տիրապետության դեմ։ Նրան հետևեցին Փոքր սղնախի զորքերը։ Ապստամբությունն սկսվեց 1722 թ. աշնանը ամբողջ Ղարաբաղը ազատագրվեց և այնտեղ հաստատվեց հայկական իշխանություն։

Դավիթ-Բեկը և Սյունիքի ազատագրումը

Ազատագրական պայքարի ալիքը հասավ նաև պատմական Սյունիք։ Այստեղ իրադրությունը, Ղարաբաղի հետ համեմատած, ավելի բարդ էր։ Ղարաբաղում բնակչությունը զգալի չափով միատարր էր՝ հայկական։ Այնտեղ կային կազմակերպված զինվորական ավելի մեծ ուժեր և հմուտ ղեկավարներ՝ հանձինս Եսայի Հասան-Ջալալյանի և Ավան Յուզբաշու։ Ղափանում հայկական զինված ուժերը ցաքուցրիվ էին, չկար ռազմական և քաղաքական հմուտ ղեկավար։ Այնտեղ ավելի ուժեղ էին պարսկական խաները, իսկ քոչվոր ցեղերը չէին համակրում հայկական ազատագրական շարժմանը։

Այս դժվարությունները Ղափանի հայերից պահանջում էին գործի գլուխ դնել կազմակերպչական և ռազմական հմտություն ու վճռականություն ունեցող ղեկավարի։ Այդ նպատակով նրանք ղափանցի հայ առևտրական Ստեփանոս Շահումյանին ուղարկում են Թիֆլիս, որպեսզի վրացական բանակի հայ հրամանատարներից մեկին հրավիրի Ղափան։ Նա դիմում է վրաց արքայազն Շահնավազին, իսկ վերջինս մատնացույց է անում վրաց բանակում զինվորական ծառայության մեջ գտնվող Դավիթ-Բեկին։ Սա ընդունում է Ստեփանոս Շահումյանի առաջարկությունը և 1722 թ. աշնանը գալիս է Ղափան ու անցնում ապստամբության գլուխ։

Նա իր հետ բերել էր շուրջ 30 քաջակորով ռազմիկներ, այդ թվում՝ Մխիթարին, Ավթանդիլին, Բայանդուրին, մեծ և փոքր Գեորգիներին և ուրիշների։ Նրա առաջին գործը եղավ մի փոքր ջոկատ կազմակերպելը և գրոհի անցնելը։ Առաջին հաջող մարտը տեղի ունեցավ 1722 թ. աշնանը։ Ուշթափալար կոչված վայրում, ջիվանշիր ցեղերի և նրանց գլխավորող խաների դեմ։ Հայկական շուրջ 400

հոգուց բաղկացած զորախումբը Դավիթ-Բեկի հրամանատարությամբ գրոհեց հակառակորդի վրա և փառավոր հաղթանակ տարավ։ Այս հաղթանակը վճռական նշանակություն ունեցավ Դավիթ-Բեկի հեղինակության համար և նրա համբավը տարածվեց ժողովրդի մեջ։ Դրանից հետո նրան միացան մինչ այդ կազմակերպված ջոկատներից շատերը, օրինակ՝ Զավնդուրի ջոկատը՝ Թորոսի գլխավորությամբ, Ջուղայի զինված ուժերը՝ Մաղամելիքի որդիների գլխավորությամբ և այլն։

Ուչքիլիսայի հաղթանակից հետո Ղափանի զորամասերի առաջ ծառացավ մի կարևոր և դժվար խնդիր՝ ոչնչացնել երկրի ներսում եղած պարսկական խաների ուժերը և գրավել ապստամբության նրկատմամբ թշնամական դիրք բռնած մարդկանց ձեռքին գտնվող ամրությունները։ Դրանցից առանձնապես խոշոր նշանակություն ունեին Տաթևի շրջանում գտնվող բերդերը, ուր ամրացել էր դավաճան մելիքներից մեկը՝ մելիք Դավիթը, որը մահմեդականություն ընդունելուց հետո իրեն անվանում էր մելիք Բաղր։ Նրա ամրությունները վերցնելը դժվար էր, բայց Դավիթ-Բեկի զորքերը հարձակման անցան, կարողացան շրջապատել մելիք Բաղրի ամրոցը և երկու օրվա համառ գրոհներից հետո վերցնել նրա բոլոր ամրությունները, գերել Բաղրին և մահապատժի ենթարկել։

Տաթևի դեպքերից քիչ անց՝ 1723 թ. Ղափանի աղատադրված շրջանների վրա արշավեցին Բարիուշատի և Ղարադաղի պարսիկ խաները։ Զավնդուրի մոտ թշնամու դեմ ելան Թորոս և Բայանդուր զորավարներն իրենց զորախմբերով։ Պարսիկ խաները, վստահ իրենց գերազանց ուժի վրա, առաջ էին շարժվում. նրանք մտան Զավնդուր գավառը։ Սակայն Թորոսն ու Բայանդուրը գիշերով գրոհելով թշնամու վրա ճակատից ու թիկունքից կատարյալ հաղթանակի հասան։

Տաթևի և Զավնդուրի հաղթանակները էլ ավելի բարձրացրին Դավիթ-Բեկի և նրա բանակի հեղինակությունն ու համբավը ողջ Սյունիքում։ Այդ հաղթանակներից հետո եկան ու Դավիթ-Բեկին միացան նոր ջոկատներ, օրինակ՝ Հալիձորի ջոկատները՝ Տեր-Ավետիսի և Փարսադանի գլխավորությամբ, Կալերում եղած խումբը՝ Պապի հրամանատարությամբ, Մեղրիից Կոստանդինն ու Հովհաննեսը՝ իրենց զինվորներով, և մնացած տեղերում եղած ջոկատները։

Այսպիսով, Ղափանի, այսինքն՝ Սյունիքի բոլոր զինված ջոկատները 1723 թ. առաջին կեսին միավորվեցին մեկ զորաբանակի մեջ և Դավիթ-Բեկին ճանաչեցին որպես իրենց ընդհանուր հրա-

մանատար ու ղեկավար։ Ղափանում շուրջ մեկ տարվա մղած պայքարը պարսկական տիրակալության դեմ պսակվեց հաջողությամբ, խաներն ու բեկերը վռնդվեցին երկրից և այնտեղ ևս ստեղծվեց հայկական իշխանություն՝ Դավիթ-Բեկի գլխավորությամբ։

Հայկական իշխանությունների ամրապնդումը

Պարսկական խաներն ու բեկերը, որոնք դուրս էին շպրտվել Ղափանից և Ղարաբաղից, չէին հաշտվում կատարված իրողության հետ։ Նրանք փորձեր էին անում ճնշելու հայերի ապստամբությունը և վերականգնելու իրենց տիրապետությունը։ Երևանի խանը ուրիշ խաների հետ միասին 1723 թ. մի արշավանք կազմակերպեց Մեծ սղնախի վրա, իսկ Փոքր սղնախի վրա հարձակվեցին երկրից վռնդված խաները, սակայն սրանք բոլորն էլ պարտվեցին և ետ շպրտվեցին։ Ղարաբաղի հայերը հերոսաբար պաշտպանում էին իրենց ձեռք բերած ազատությունը և այնտեղ ստեղծված հայկական իշխանությունն օր-ավուր ամրապնդվում ու կայունանում էր։

Ավելի համառ պայքար ծավալվեց Ղափանում։ Մոտակա շրջաններում եղած խաները, որոնց մոտ ապաստան էին գտել նաև Ղափանից վռնդված ուժերը, անընդհատ հարձակումներ էին գործում ազատագրված շրջանների վրա և ավարի ու ավերի մատնում հայկական գյուղերը։ Դրա դեմն առնելու համար Դավիթ-Բեկը Ղափանում անչատ-անչատ գործող ջոկատները համախմբեց մի ընդհանուր հրամանատարության տակ, համալրեց և դարձրեց ամուր կարգապահություն ունեցող, մարտունակ մի բանակ։ Նա ստեղծեց իր շտաբը, կազմեց զինվորական խորհուրդ։ Մխիթարին նշանակեց սպարապետ՝ բանակի հրամանատար, զորքերը դասավորեց ըստ շրջանների և յուրաքանչյուր ջոկատի հրամանատար նշանակեց քաջակորով, զինվորական գործին հմուտ և ազատության գործին նվիրված մարդկանց, որպիսիք էին Տեր-Ավետիսը, Խորոսը, Պապը, Բայանդուրը, Փարսադանը, Ստեփանոս Շահումյանը, Ավթանդիլը և ուրիշներ։

Զևու բերդը, որը գտնվում էր Հալիձորի և Գեղվա գետի միջև, Ասլամազ դուլի խանի զորակայանն էր։ Հայկական զորքերը Մխիթար սպարապետի և Տեր-Ավետիսի հրամանատարությամբ գրոհեցին այդ բերդի վրա։ Տեր-Ավետիսը խաբեց բերդապահին, մի խումբ մարտիկների հետ մտավ բերդը և գերեց խանին, իսկ Մխիթար սպարապետի ջոկատը, գրոհելով պարիսպների վրա, գրավեց բերդը։

Հակառակորդի հաջորդ հենակետը ապստամբների թիկունքում

գտնվող Տաթևի Որոտնա բերդն էր։ Դեռևս Զևուի դեպքերից առաջ Որոտնա բերդի գրավման համար Դավիթ-Բեկը խնդրել էր Ավան Յուզբաշու օգնությունը։ Վերջինս եկել պաշարել էր բերդը, բայց չէր կարողացել գրավել։ 1724 թվականի գարնանային մի օր հայկական զորքերը պաշարեցին Որոտնա բերդը և չորսօրյա համառ մարտերից հետո գրավեցին բերդը։ Նախիջևանի խանը 1724 թ. բազմահազարանոց մի բանակով հարձակվեց Սիսիանի վրա։ Դավիթ-Բեկի ջոկատները դուրս եկան նրա դեմ։ Ճակատամարտը տեղի ունեցավ Նախիջևան գետի ափին։ Թշնամին չդիմացավ հայերի հուժկու հարվածներին, ետ ընկրկեց և նահանջեց գետի մյուս ափը։ Հայերը, ոգևորված իրենց հաջողությամբ, շարունակելով հետապնդել հակառակորդին, անցան գետը։ Բայց թշնամու զորքերը դադարեցնելով նահանջը անցան հակագրոհի։ Նրանք հայերին սեղմեցին գետին և օրվա վերջում պարտության մատնեցին։ Դավիթ-Բեկի բանակը մարտի դաշտում թողեց շուրջ 1000 դիակ և ետ նահանջեց։ Սա Դավիթ-Բեկի զորքերի առաջին լուրջ պարտությունն էր, բայց թշնամին չկարողացավ օգտագործել այն։

Հայկական զորքերը հազիվ էին ուշքի եկել Նախիջևանի տակ կրած պարտությունից, երբ ոտքի ելան Օրդուբադում ծվարած խանները։ Հայկական բանակը շտապեց կանխել այդ սպառնալիքը։ Թորոս զորավարի ջոկատները պատրաստվեցին հարձակվել Օրդուբադի վրա։ Սակայն այդ մասին Բարկուշատի Ֆաթալի խանին տեղյակ է պահում Արծվանիկ ավանի մելիք Ֆրանգուլը։ Սա խորհուրդ է տալիս խանին իր զորքերով արշավել Ջավնդուրի վրա և խափանել հայերի հարձակումը, խոստանալով նաև իր օժանդակությունը։ Այդպես էլ արվում է։ 1725 թ. Ջավնդուրի և Բարկուշատի սահմանագլխին, Սղվարդի ճակատամարտում, հայկական զորքերը պարտվում են, Թորոս զորավարը զոհվում է մարտի դաշտում։

Ֆաթալի խանը դրանից հետո փորձեց օգտագործել իր հաղթանակը և ասպատակել հայկական գյուղերը, սակայն Ջավնդուրում եղած հայկական զորքերին օգնության հասավ Պապ զորավարն իր ջոկատներով, կասեցրեց թշնամու ասպատակությունները և նրան դուրս քշեց Ջավնդուրից։ Այդ նույն ժամանակ Օրդուբադում կենտրոնացած ուժերը Սաֆի զուլի խանի գլխավորությամբ սկսեցին իրենց հարձակումները։ Նրանք ասպատակելով մի շարք բնակավայրեր, պաշարեցին Մեղրին։ Սաֆի զուլի խանի զորքերին հաջողվեց ներխուժել Մեղրիի Փոքր թաղ կոչված մասը, բայց մեղրեցիները քանդելով գետի կամուրջը, կասեցրին թշնամու առաջխաղացու-

մը։ Նրանք գիշերով հարձակվեցին թշնամու վրա, ջարդեցին նրան և դուրս քշեցին Մեղրիից։

Շուտով մեղրեցիներին օգնության հասան Բայանդուրն ու Ստեփանոս Շահումյանն իրենց ջոկատներով։ Թշնամին վերադասավորելով իր ուժերը, նորից դրոհեց Մեղրիի վրա, բայց հայերը երեք կողմից հարձակվելով կատարյալ պարտության մատնեցին նրան։ Թշնամին մարտի դաշտում թողեց մի քանի հազար դիակ և նահանջեց դեպի Օրդուբադ։

Օրդուբադում և այլ վայրերում ծվարած խաները մի քանի փորձեր ևս արեցին հայկական իշխանությունը տապալելու։ Նրանց հարձակումներից մեկի ժամանակ հայերը նույնիսկ ծանր կորուստ ունեցան, Ստեփանոս Շահումյանը դերի ընկավ, սակայն ի վերջո հաղթանակ տարան հայերը։ Նրանք ազատագրեցին ամբողջ Ղափանը, ամրապնդեցին իրենց իշխանությունը, որի պաշտպանության համար ոտքի էր ելել ամբողջ բնակչությունը։ Այդ նույն բանը տեղի էր ունենում նաև Ղարաբաղում, ուր բնակչությունը նույնպես անձնուրաց կերպով պայքարի էր ելել իր ազատության համար։

Ղափանի և Ղարաբաղի ապստամբության հաղթանակը հայերի ազատասիրական ձգտումների, օտարի լուծը թոթափելու համար նրանց մղած վճռական պայքարի արդյունքն էր։

5. ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶԱՎԹԻՉՆԵՐԻ ԴԵՄ

Թուրքերի ներխուժումը Անդրկովկաս

Սյունիքն ու Արցախը հաղիվ էին թոթափել պարսկական լուծը, երբ ստիպված եղան մարտնչել մի նոր, ավելի հզոր ու վտանգավոր թշնամու՝ օսմանյան նվաճողների դեմ։ 1723 թ. թուրքական զորքերը մտան Անդրկովկաս և դրավեցին Վրաստանը։

Թուրքական զորքերը Իբրահիմ փաշայի հրամանատարությամբ նույն թվականի աշնանը շարունակեցին իրենց արշավանքը դեպի Դանձակ։ Դանձակի ադրբեջանցիները և Ղարաբաղի հայերը թշնամու դեմ միացյալ ճակատ կազմեցին։ Նրանք պարտության մատնեցին թուրքական բանակին և ստիպեցին նրան ետ նահանջել դեպի Վրաստան։ Սակայն 1724 թ. վերջերին թուրքերին հաջողվեց գրավել Դանձակը և մոտենալ Ղարաբաղի հայկական իշխանության սահմաններին։ Բայց հայկական զորքերը պատնեշի նման կանգնե-

ցին նրանց առաջ։ Թուրքերին չհաջողվեց ոտք դնել Կարաբաղի հողի վրա։

Օսմանյան բանակի մի այլ ջոկատ 1724 թ. գարնանը Քյոփուրլու Աբդուլլա փաշայի գլխավորությամբ Կարինից արշավեց դեպի Արևելյան Հայաստան և մարտին արդեն Շիրակի վրայով անցավ Արարատյան դաշտ։ Առաջապահ ջոկատները թևանցեցին Աշտարակը, Կարբին և հասան Եղվարդ գյուղը։

Երևանի Միհրալի խանը օսմանյան առաջապահ զորամասերի դեմ դուրս բերեց իր 12 հազարանոց բանակը, բայց Եղվարդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտվեց և նահանջեց Երևան ու ամրացավ բերդում։ Թուրքական բանակը չկարացավ դրոհել Երևանի վրա։ Կարբի ավանում հայերը ձեռնամուխ էին եղել դիմադրություն կազմակերպելու գործին։ Կարբին այն ժամանակ բավականին մեծ ավան էր, ուր բնակություն էին հաստատել հարուստ առևտրական ընտանիքներ։ Օսմանցիները հարձակվեցին Կարբիի վրա, բայց հանդիպեցին հայերի ուժեղ դիմադրությանը։ Կարբեցիները Սարգսի, Աղարաբի, Պողոսի և Ավագի ղեկավարությամբ միաժամանակ հերոսաբար պաշտպանվում էին։ Նրանք դիմեցին Երևանի խանին, որպեսզի նա օժանդակ ուժ ուղարկի իրենց։ Սակայն օգնություն չստանալով, ստիպված եղան բանակցության մեջ մտնել թուրքերի հետ, քանի որ չէին կարող երկար դիմադրել օսմանյան 30—40 հազարանոց զորքին։ Այդ բանակցությունների հետևանքով կարբեցիները համաձայնվում են զինաթափ լինել, եթե օսմանյան զորքերը չմտնեն Կարբի։ Դրանից հետո օսմանյան բանակը դրավում է Աշտարակը, Էջմիածինը և շարժվում դեպի Երևան։

Երևանի պաշտպանությունը

1724 թ. ապրիլի 7-ին թուրքական բանակը մոտենում է Երևանին և սկսում իր դրոհները քաղաքի վրա։ Միհրալի խանը ուժեր չուներ քաղաքը տեսականորեն պաշտպանելու համար. քաղաքի բնակչությունը հույսը իր ուժերի վրա պիտի դներ։ Առաջին նախաձեռնողները եղան հայերը։ Նրանք ջոկատներ կազմակերպեցին և ձեռնամուխ եղան քաղաքի պաշտպանության գործին։

Թուրքական բանակը դիրքեր էր գրավել Հրազդան գետի ափին՝ Զորագյուղի դիմաց, փորձելով այնտեղից մտնել քաղաք։ Բայց թուրքերի գրոհներն ապարդյուն անցան։

Այդ անհաջողությունից հետո Աբդուլլա փաշան նոր համալրում է պահանջում և 10 հազարանոց մի նոր բանակ ստանում։ Օսմանցիները թարմ ուժերով վերսկսում են իրենց հարձակումները։ Նրանք

անցնում են Հրազդան գետը, թափանցում Զորագյուղի փողոցները և ձգտում մտնել քաղաք։ Սակայն հայ մարտիկները հերոսական դիմադրություն են ցույց տալիս։ Նրանք Հովհաննես Հունդիբեկյանի, Պողոս Քեչիբեկյանի, Կառչիկ Հովհաննեսի և Դավիթ Միրզեյանյանի գլխավորությամբ կասեցրին թուրքերի առաջխաղացումը, ցարդեցին նրանց և ետ շպրտեցին։ Հայերի հաղթանակը փառավոր էր, բայց կորուստն էլ մեծ էր։ Նրանք այդ ճակատամարտում կորցրին 2000 մարտիկ։

Այդ ճակատամարտը լուրջ կերպով անհանգստացրեց հայերին։ Նրանք գիտեին, որ այդպիսի գրոհներ նորից կլինեն։ Նոր ջոկատներ կազմակերպելու և քաղաքի պաշտպանությունը ամրապնդելու համար Դրիգոր վարդապետի գլխավորությամբ սբ. Սարգիս եկեղեցում խորհրդակցություն է հրավիրվում, որին մասնակցում էին նաև քաղաքի անվանի մարդիկ, Կոնդի հայ բոշաների առաջնորդները և քաղաքում տեղավորված շրջակա գյուղերի բնակչության ներկայացուցիչները։ Խորհրդակցությունը որոշում է դիմադրել թշնամուն և պաշտպանել քաղաքը բոլոր միջոցներով։

Խորհրդակցությունից հետո քաղաքացիներից 16 հոգի, այդ թվում Փիրիգուլը, Թաղեոսը, Մալխասը, Ավետիսը և ուրիշներ իրենց թաղամասերի բնակիչներից կազմակերպեցին խմբեր, որոնց մեջ ընդգրկեցին նաև շրջակա գյուղերի բոլոր ռազմունակ մարդկանց։ Երևանի երիտասարդները ևս Նիկողայոսի, Թաթիկի և այլոց գլխավորությամբ ջոկատներ կազմակերպեցին։ Ոտքի ելան նաև Կոնդի հայ բոշաները՝ Ղազարոս Բաբուրյանի, Դավթի և մյուսների ղեկավարությամբ։

Դրանից հետո հայերի կազմակերպված զորքի թիվը հասավ 10 հազարի։

Թուրքական բանակը վերջին անհաջող ճակատամարտից հետո միաժամանակ դադարեցրեց իր գրոհները։ Բայց շուտով թուրքերին Եգիպտոսից օգնության եկան ընտիր զորամասեր։ Սրանք, առանց Աբդուլլա փաշայի կարգադրության, ձեռնարկեցին մի նոր գրոհ՝ դարձյալ Զորագյուղի ուղղությամբ, հույս ունենալով Երևանի գրավումով փառքի արժանանալ և առատ ավար ձեռք բերել։ Նրանց հաջողվեց անցնել գետը, մտնել Զորագյուղ և առաջ շարժվել։

Հայերի առաջապահ ջոկատները ստիպված եղան ետ քաշվել դեպի ջրաղացները։ Թշնամին առաջանում էր դեպի քաղաք։ Սակայն, մյուս թաղամասերից եկան և մարտի նետվեցին նոր ջոկատներ, որոնց հետ նաև բոշաներից կազմված ջոկատը։ Թուրքերի առաջխաղացումը կասեցվեց, նրանք մեծ կորուստ ունեցան և նա-

հանչեցին իրենց ելման դիրքերը, մարտի վայրում թողնելով վեց հազար դիակ։ Հայերի կորուստն էլ զգալի էր։ Այդ ճակատամարտում նրանք զոհ տվեցին 1300 մարտիկ։

Հայերի հերոսական դիմադրությունը և թուրքական բանակի ծանր կորուստը Աբդուլլա փաշային հարկադրեցին նոր օգնություն խնդրել սուլթանից։ Վերջինս կարգադրում է Սարու Մուստաֆա և Ռաջաբ փաշաներին իրենց զորաբանակներով օգնության գնալ Աբդուլլային։

Շուտով տեղ հասավ թուրքերին օգնության եկող զորքը՝ շուրջ 38 հազար զինվոր։ Հայերը գիտեին թուրքերի ստացած նոր համալրման մասին և սպասում էին, որ օսմանցիները նոր հարձակում կսկսեն։ Իսկ հայ զորագնդերն արյունաքամ էին եղել, նոր լրացուցիչ ուժեր չկային և ոչ մի տեղից օգնություն ստանալու հույս չկար։

Բերդում եղած պարսիկները իրենց թնդանոթներով թշնամուն այլևս վնաս չէին կարող պատճառել, որովհետև անհնարին էր թընդանոթներով գնդակոծել նրանց դիրքերը։ Հայերը սակավաթիվ ուժերով թուրքական ավելի քան 70 հազարանոց բանակի դեմ մընացել էին մենակ՝ ճակատ առ ճակատ։ Դրությունը ահավոր էր։ Եվ ահա նրանք նորից են հավաքվում սր. Սարգիս եկեղեցում խորհրդակցելու։ Որոշվում է բանակցություն սկսել թուրքական հրամանատարության հետ քաղաքն առանց մարտի հանձնելու և դրանով իսկ կանխելու բնակչության կոտորածն ու ավարառությունը։

Բանակցություն սկսելու համար կար մի լուրջ դժվարություն։ Օսմանյան առաջապահ զինվորները թույլ չէին տալիս բանագնացներին հանդիպել հրամանատարության հետ և տեղնուտեղը սպանում էին նրանց։ Այդպես էին վարվել դրանից առաջ Հարությունի անունով պատվիրակի հետ, և հիմա էլ նույն վտանգն էր կանգնած հայերի առջև։ Սակայն դրան հակառակ, խորհրդակցության մասնակիցներից Ախիշանյան Միրզան հանձն է առնում գնալ՝ թեկուզ կյանքի գնով։ Բայց նա հաղթել էր հասել թուրքական դիրքերի առաջին գիծը, երբ նրան ևս բռնում ու սրախողխող են անում։

Ախիշանյանի թինկնապահը մի կերպ կարողանում է փախչել, իրեն նետելով Հրազդանի ջրերը և գալ ու պատմել եղելությունը։ Հայերին մնում էր կռվել, կռվել մինչև վերջին շունչը, վերջին կաթիլ արյունը։

1724 թվականի հունիսի 7-ի վաղ առավոտյան թուրքական բանակն սկսեց չորս կողմից գրոհել քաղաքի վրա։ Բազմահազար թուրք զինվորներ թափանցեցին քաղաքի փողոցները, ամենուրեք

հանդիպելով հայ մարտիկների անձնուրաց և հերոսական դիմադրության։ Թուրքերին հաջողվեց ընկճել հայերի դիմադրությունը և դրավել Երևանը 60 օրվա հերոսական պաշտպանությունից հետո։ Երևանի պաշտպանությունը հայ ժողովրդի ազատագրական պատերազմների պատմության հերոսական էջերից մեկն է։

Դրությունը Ղարաբաղում և պայքարը թուրքերի դեմ

Անդրկովկաս և Արևելյան Հայաստան կատարված օսմանյան արշավանքները շատ ծանր կացություն մեջ դրեցին Ղարաբաղում և Ղափանում հաստատված հայկական իշխանություններին։ Հայերը պրկվեցին իրենց հուսալի դաշնակիցներից մեկի՝ վրացիների օգնությունից և բոլոր կողմերից շրջապատվեցին թշնամական ուժերով։ Հյուսիսից և հյուսիս-արևելքից սպառնում էին կովկասյան լեռնաբնակ ցեղերը՝ Դաղստանի գրլխավորությամբ։ Արևմուտքից և հարավ-արևմուտքից առաջ էին շարժվում թուրքերը, իսկ հարավից անընդհատ հարձակումներ էին գործում երկրից դուրս վռնդված խաներն ու բեկերը։ Հայերի միակ հույսը ռուսական բանակի առաջխաղացումն էր դեպի Հայաստան, այն էլ չէր իրականանում։

Ռուսական օգնությունը արագացնելու նպատակով սղնախների ղեկավարները 1723 թ. նոյեմբերին, թուրքական հարձակումը նահանջելուց հետո, մի նոր խնդրագիր են գրում Պետրոս I-ին և հաղորդում թուրքական բանակի հարձակումների հետևանքով հայերի համար ստեղծված ծանր դրության մասին, խնդրում են, որ նա կատարի իր խոստումը։

Հաջորդ տարվա հունվարի 1-ին Մեծ սղնախ եկավ Իվան Կարապետ անունով մի հայ, որն իր հետ բերել էր Պետրոս I-ի հուշագիրը՝ ի պատասխան հայերի նախորդ դիմումների։ Այդ հուշագիրը գրվել էր 7 ամիս առաջ՝ 1723 թ. հունիսին, բայց նամակաբեր Իվան Կարապետը չէր կարողացել ժամանակին տեղ հասնել, որովհետև լեզգիները փակել էին ճանապարհը։

Պետրոս I-ը իր հուշագրում նորից խոստանում էր օգնել հայերին, նրանց խրախուսում էր չընկճվել և քաջարար դիմադրել թշնամուն մինչև ռուսական զորքերը օգնության հասնեն։ Ժողովրդի և զորքի ոգևորությունը նորից բարձրացավ, պաշարման վտանգը վերացավ և տեղի տվեց վճռականության ու միասնությանը։ Նույն տարվա փետրվարին սղնախների ղեկավարներն իրենց պատասխան նամակում հավաստում են ցարին, որ կդիմադրեն թշնամուն, միայն թե նա շտապեցնի ռուսական զորքերի մուտքը Ղարաբաղ։ Նամակը Մոսկվա տանելու համար առանձնացվեց պատվիրակություն՝

հանձինս Անտոն քահանա Առաքելյանի և Զալաբի Քյոխվայի, որոնց ճանապարհին միացավ նաև շամախեցի Պետրոս քահանան։

Այդպիսի դրություն էր տիրում Ղարաբաղում, երբ օսմանցիները, Երևանը գրավելուց հետո, նախապատրաստվում էին արշավել Ղափանի և Ղարաբաղի վրա։ Նրանք, նախքան իրենց զորքերի առաջխաղացումը, փորձում էին հայերին համոզել, որ նրանք զենքը վայր դնեն, անձնատուր լինեն և ճանապարհ տան իրենց։

Այդ նպատակին հասնելու համար թուրք փաշաները 1724 թ. Էջմիածնի կաթողիկոս Աստվածատուր Համադանցուն դրդում են նամակ գրել Ղարաբաղի հայերին, հատկապես Սսայի Հասան-Ջալալյանին, որ նրանք զենքը վայր դնեն և ընդունեն թուրքական հպատակություն։ Բայց Սսայի Հասան-Ջալալյանն ու նրա զինակիցները անհետևանք թողեցին Աստվածատուր Համադանցու նամակը և պատրաստվեցին մարտնչել թուրքական զավթիչների դեմ։ 1725 թ. օսմանյան 5 հազարանոց մի բանակ մտավ Վարանդայի շրջանը և սպառնալիք ստեղծեց Փոքր սղնախի համար։ Հայերը համաձայնվեցին չդիմադրել և ճանապարհ տալ թուրքերին։ Կերակրելու և օթևան տալու պատրվակով նրանց բաժանեցին մանր խմբերի, տեղավորեցին տարբեր գյուղերում, իսկ զինները բոլորին կոտորեցին։ Այդ հաջողությունը ոգևորություն առաջացրեց հայերի մեջ, ավելի ամրապնդեց Գանձակի ադրբեջանցիների և հայկական զորքերի համագործակցությունը։ Նրանք համաձայնության եկան զինակցել նաև պարսիկների հետ՝ ընդդեմ թուրքերի և այդ նպատակով պատվիրակություն ուղարկեցին Թահմազ շահի մոտ՝ առաջարկելով միացյալ ճակատ կազմակերպել թուրքերի դեմ։

Հայ-ռուսական հարաբերություններն և թուրքական նոր հարձակումը

1725 թվականին սղնախեր վերադարձան Անտոն քահանան և Զալաբի Քյոխվան։ Նրանք իրենց հետ բերել էին Պետրոս I-ի նոր ուղերձը, որը միայն հուսախաբություն առաջ բերեց հայերի մեջ։ Անտոն քահանան և Զալարի Քյոխվան ռուսական կառավարությանը հայտարարել էին, որ եթե հնարավոր չէ զորք ուղարկել Ղարաբաղ, ապա հայերին թույլատրվի գաղթել ու բնակություն հաստատել ռուսական զորքի կողմից արդեն գրավված վայրերում։ Պետրոս I-ը այդ հայտարարության և Անտոն քահանայի կողմից գրված դիմումի հիման վրա իր նոր նամակում առաջարկում էր հայերին՝ թողնել իրենց հայրենիքը և գաղթել Դիլան ու Կասպից ծովի առափնյա մյուս շրջանները։

Հայերը նորից ծանր վիճակի մեջ ընկան։ Ռուսաստանից օգնություն ստանալու հույսը չիրականացավ։ Այժմ նրանք կանգնած

էին, մի կողմից, օսմանյան վտանգի և, մյուս կողմից, Պետրոս I-ի՝ Գիլան գաղթելու առաջարկի առջև։ 1725 թվականի հուլիսին սղնախների ղեկավարները նորից խորհրդակցություն գումարեցին, հանգամանորեն կշռադատեցին ստեղծված վիճակը և որոշեցին նորից դիմում գրել Պետրոս I-ին, չմոռանալով, որ նա արդեն մահացել է։ Այդ նամակում Եսայի Հասան-Ջալալյանը, մելիքներն ու յուզբաշիները բացարձակապես չէին մերժում Գիլան և այլ շրջաններ գաղթելու առաջարկը։ Նրանք առաջ էին քաշում մի շարք պայմաններ, որոնց իրագործումը շատ դժվարությունների հետ էր կապված։ Հայերը խնդրում էին, որ ռուսական զորքերը առաջ շարժվեն մինչև Շամախի և ճանապարհ բացեն ժողովրդի համար։ Այդպիսի բան ռուսական բանակը չէր կարող անել, որովհետև կընխախտեր 1724 թ. Թուրքիայի հետ կնքված պայմանագիրը, որով արգելվում էր ռուսական զորքի մուտքը Շամախի։ Բացի դրանից, հայերը հասկացրին Իվան Կարապետին, որ իր կողմից նամակ գրի, ռուսական պետությանը զեկուցի գաղթեցման հետ կապված դժվարությունների մասին և զգալ տա հայերի անհամաձայնությունն իրենց հայրենիքից գաղթելու առաջարկի հետ։ Այդ նամակները Ռուսաստան տանելու համար նորից ուղարկեցին Ջալաբի Քյոխվային, բայց նրան զգուշացրին, որ բանավոր որևէ առաջարկություն անելու կամ տեղեկություն տալու իրավունք չունի։ Ջալաբի Քյոխվան այս անգամ հանձնարարությունը կատարեց բարեխղճորեն և Ղարաբաղ վերադարձավ 1726 թ. իր հետ բերելով Եկատերինա I-ի նամակը, որի մեջ նորից խոստում էր տրվում օգնության մասին։ Ջալաբի Քյոխվային միաժամանակ հանձնարարված էր բանավոր կերպով հայտնելու, որ ռուսական զորքեր կուղարկվեն վրաց Վախթանգ թագավորի կամ մի ուրիշի գլխավորությամբ։

1726 թ. օսմանյան 40 հազարանոց բանակը սկսեց իր հարձակումը Մեծ սղնախի վրա։ Օսմանյան զորքերի հետ էին նաև լեզգիները։ Սղնախի ղեկավարները համալրեցին իրենց ջոկատները, զինեցին բոլոր նրանց ովքեր ունեին զենք կրելու կարողություն, և կազմ-պատրաստ մարտի ելան։ Ճակատամարտը տևեց ութ օր։ Հայերը կատարյալ հաղթանակ տարան։ Թշնամին ռազմի դաշտում թողեց հազարավոր սպանվածներ և նահանջեց դեպի Գանձակ։

Հայերը թեև փառավոր հաղթանակ տարան և խափանեցին թուրքերի նոր հարձակումները, բայց զգում էին, որ միայն իրենց ուժով չէին կարող մինչև վերջ դիմանալ։ Այդ պատճառով սղնախների ղեկավարները 1727 թ. սկզբին, 26 հոգուց կազմված մի պատվիրակություն ուղարկեցին Սալյան ռուսական զորքերի հրա-

մանամաը գեներալ Դոլգորուկովի մոտ։ Պատվիրակությունը իր հետ տանում էր Եկատերինա կայսրուհու նամակը, որտեղ ասված էր, թե գեներալ Դոլգորուկովն իր զորքերից օգնական ուժ կուղարկի հայերին։ Ցարական գեներալը հայերին պատասխանեց, որ ինքը կայսրուհուց հրաման չունի Ղարաբաղ զորք ուղարկելու մասին և խորհուրդ տվեց նորից պատվիրակություն ուղարկել Ռուսաստան։ Ջալաբի Քյոխվան երրորդ անգամ ուղևորվեց ռուսական մայրաքաղաք։ Բայց ապարդյուն, օգնություն չստացավ և հայկական զորքը դարձյալ մեն-մենակ կանգնեց Ղարաբաղի լեռներում՝ որպես անխորտակ պատնեշ օսմանյան բազմահազարանոց բանակի դեմ հանդիման։

Հալիձորի ճակատամարտը

Արևելյան Հայաստան մտած թուրքական բանակը Երևանից շարժվեց դեպի Խոյ և Թավրիզ քաղաքները։ 1726 թ. նա իր զենքն ուղղեց նաև Ղափանի հայկական իշխանության դեմ։ Թշնամու բազմաքանակությունը և սկզբնական հաջողությունները ահարեկեցին Դավիթ-Բեկի առանձին ջոկատներին։ Օսմանցիները կարողացան գրավել Ղափանի մեծ մասը։ Դավիթ-Բեկը ստիպված եղավ իր մոտ մնացած սակավաթիվ զորքով ամրանալ իր նոր կառուցած Հալիձորի բերդում։ Թշնամին 1726 թ. աշնանը մոտեցավ և 1727 թ. պաշարեց Հալիձորը։

Համարյա ամեն օր նրանք գրոհ էին կազմակերպում բերդի վրա, բայց հարյուրավոր դիակներ թողնելով պարսպի պատերի տակ նահանջում էին։ Պաշարման վերջին օրը թուրքական բանակում արտասովոր եռուզեռ էր։ Թուրքերը որոշել էին այդ օրն անպայման գրավել բերդը։ Արևածագին թշնամին իր ուժերը բաժանեց երեք խմբի և տարբեր կողմերից շարժվեց դեպի բերդի սարիսպները։ Օսմանյան զորքերի առջևից գնում էին վերելակներ տանողները, նրանց հետևում էին դրոշակակիրները ու թմբկահարները, իսկ սրանց հետևից երեք ուղղությամբ գունդ առ գունդ շարժվում էր զորքը։ Երբ օսմանցիներին հաջողվեց սանդուղքները մոտեցնել պարսպին, նրանց զորքը աղմուկ-աղաղակով գրոհեց բերդի վրա։ Այդ պահին, ինչպես պատմում է Ստեփանոս Շահումյանը, ամբողջ ձորը թնդում էր հրանոթների որոտից և թմբուկների դարկից։ Թուրքական զորքերը ալիք առ ալիք մոտենում էին պարսպին։ Սակայն նրանց չէր հաջողվում բարձրանալ պարսպի վրա։ Հայ մարտիկները քաջարար ետ էին մղում նրանց գրոհները, չարդում էին վերելակներով պարիսպն ի վեր սողացող թուրքերին, որոնք, պատ-

մագրի խոսքերով ասած, կարկտահար վաղահաս թզերի նման թափվում էին սանդուղքների տակ։

Օրվա երկրորդ կեսին թշնամու դրոհները էլ ավելի սատկացան։ Պաշտպանվողները կենաց և մահու կռիվ էին մղում թուրքերի դեմ։ Բերդի անկումն անխուսափելի էր դարձել։ Բերդի հրամանատարությունը որոշում է հակագրոհի անցնել, ճեղքել թշնամու շրջթան և դուրս գալ շրջապատումից։ Նա զորքի մի մասին թողեց բերդի պարիսպները պաշտպանելու, իսկ մյուս մասին նախապատրաստեց գրոհի։ Մի քանի հարյուր կորովի մարտիկներից ջոկատ կազմեցին, աննկատելի դուրս եկան բերդից և հանկարծակի հարձակվեցին թշնամու վրա։ Գրոհը հուժկու էր և անսպասելի։ Թշնամու աջ թևը սարսափեց, խուճապի մատնվեց և դիմեց փախուստի։ Այդ խուճապն անդրադարձավ նաև մյուս զորագնդերի վրա և սկսվեց թշնամու բանակի ընդհանուր նահանջը։ Այդ ժամանակ բերդում մնացած զորքերն էլ հարձակման անցան և հետապնդեցին նահանջող հակառակորդին։

Թուրքերի դեմ տարած Հալիձորի հաղթանակը, թերևս, ամենախոշորն էր օսմանյան բանակի դեմ հայերի մղած հերոսամարտերում։ Հալիձորում նրանք թողին 148 դրոշակ, մեծ քանակությամբ ռազմավար և հաղարավոր դիակներ։

Հալիձորի փառահեղ հաղթանակը փոխեց պատերազմական գործողությունների ընթացքը։ Հայկական զորաբանակը լքած ջոկատները նորից վերադարձան Դավիթ-Բեկի մոտ, և հայերն սկսեցին Ղափանը մաքրել օսմանյան զորքերից։ Թուրքերը պարտություն պարտության հետևից կրելով, դուրս քշվեցին երկրից։

Մեղրիի ճակատամարտը

Հալիձորի պարտությունից հետո օսմանցիները իրենց ուժերը կենտրոնացրին Մեղրիում։ Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը համալրեցին իրենց ջոկատները մեղրեցիներով և հարձակման անցան։ Մեղրեցիներից կազմված մի ջոկատ դարան մտավ մոտիկ մի վայրում, իսկ մի այլ ջոկատ ծպտյալ կերպով թափանցեց Մեղրի։ Թուրքերը տեղեկացան հայերի նախապատրաստությունների մասին և շարժվեցին դեպի Փոքր թաղ։ Այդ ժամանակ Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը իրենց ջոկատով, որ ծպտյալ կերպով մտել էին Մեղրի, թիկունքից գրոհեցին թշնամու վրա։ Թուրքերը հանկարծակիի գալով, շտապեցին դեպի Փոքր թաղ, սակայն այդ կողմից էլ դարան մտած ջոկատն էր հարվածում նրանց և ստիպում շարժվել դեպի Մեղրիի կիրճը, որի ելքերը արդեն փակվելու էին հայերի կողմից։ Թուրքերին մնում էր միայն մի ելք՝ հանձնվել Արաքսի

ալիքներին։ Հայերի հարվածները և Արաքսի ալիքները կոտորեցին ու խեղդամահ արեցին թուրքական զորքերի զգալի մասը։ Նրանք կատարյալ պարտություն կրեցին։

Հալիձորի հաղթանակից հետո դա Ղափանի հայկական զորքերի երկրորդ խոշոր հաղթանակն էր, որ մեծ փառք բերեց Հասակայես Մխիթար սպարապետին և Տեր-Ավետիսին։ Այդ երկու հաղթանակը նորից վերականգնեց հայկական գինվորության ու նրա հրամանատար Դավիթ-Բեկի հեղինակությունը ժողովրդի մեջ։

Մեղրիի դեպքերից հետո օսմանյան բանակը նույն 1727 թ. մի քանի փորձեր արեց տիրանալու Ղափանին։ Բայց նրանց բոլոր գրոհները վերջանում էին անհաջողությամբ։ Դավիթ-Բեկի բանակը կարողանում էր քաջաբար պայքարել օսմանյան մեծաթիվ և բավականին ռազմունակ զորքերի դեմ՝ շնորհիվ այն բանի, որ ժողովուրդը բոլոր միջոցներով օգնում և օժանդակում էր նրան։ Ժողովուրդն ամենուրեք համալրում էր նրա շարքերը նորանոր ջոկատներով, պարեն ու զենք էր մատակարարում և ոգևորում մարտիկներին հայրենիքի ազատության համար մղվող պայքարում։

6. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՎԱԽՃԱՆԸ

Հայ-պարսկական համաձայնությունը և պայքարը օսմանցիների դեմ

Օսմանցիների դեմ տարած հաղթանակները մեծ ոգևորություն էին առաջացնում հայերի մեջ և հույս ներշնչում Արևելյան Հայաստանը թուրքական օկուպացիայից ազատագրելու գործում. սակայն այդ խնդրի իրագործումը միայն հայերի ուժերով հնարավոր չէր։ Հարկավոր էր մի հզոր դաշնակից, օգնող ուժ։ Դա կարող էր լինել Ռուսաստանը, որի զորքերը գտնվում էին Կատպիականի ափերին։ Հայերը մեծ հույսեր էին կապում ռուսական պետության հետ, բայց նա կաշկանդված էր 1723 թ. Պարսկաստանի և 1724 թ. Թուրքիայի հետ կնքած պայմանագրերով։ Անդրկովկասյան ժողովուրդների միացյալ պայքարի հնարավորությունը նույնպես բացառված էր, որովհետև թուրքերը զավթել էին Վրաստանը, իսկ Ադրբեջանի զգալի մասը գտնվում էր լեզգիների հսկողության տակ։ Ասպարեզի վրա մնում էր Պարսկաստանը, որը ուժի էր կանգնել և պատերազմական հաջող գործողություններ ծավալելով թուրքերի դեմ, երկրի զգալի մասը մաքրել էր նրանցից։

Հայերը, որոնք ապստամբության սկզբին իրենց զենքն ուղղել էին պարսկական տիրակալության դեմ, այժմ ձգտում էին պար-

սիկների հետ համագործակցության մեջ մտնել և միացյալ ուժերով պատերազմ մղել թուրքերի դեմ։ Դեպի Պարսկաստան հայերի այս կողմնորոշումը պետք է բացատրել նաև նրանով, որ նրանք պարսկական տիրակալությունը թուրքականի համեմատությամբ համարում էին փոքրագույն չարիք։ Եվ ահա, Դավիթ-Բեկը Հալիձորի հաղթանակից հետո, 1727 թ., իր երկու զորավարներին՝ Մխիթար սպարապետին և Տեր-Ավետիսին ուղարկեց պարսից Թահմազ շահի մոտ, թուրքերի դեմ միացյալ ճակատ կազմելու առաջարկով։

Պարսիկները սկզբում թերահավատությամբ մոտեցան հայերի առաջարկությանը, բայց չմերժեցին և որպես համաձայնության նշան մի փոքր ջոկատ դրեցին հայկական պատվիրակների հետ ու հետ ուղարկեցին։ Մեզրիի դեպքերից հետո հայերը նորից կրկնեցին իրենց առաջարկը։ Այս անգամ պարսից շահը համոզվեց թուրքերի դեմ պայքարելու հայերի վճռականության մեջ և հայերի ու պարսիկների միջև հաստատվեց համագործակցություն հետևյալ պայմաններով. ա) պարսիկները ճանաչեցին Սյունիքի հայկական իշխանությունը՝ Դավիթ-Բեկի գլխավորությամբ, իսկ Դավիթ-Բեկն էլ ընդունեց Պարսկաստանի գերադույն իշխանությունը, բ) Դավիթ-Բեկը նշանակվեց Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում եղած պարսկական զորքերի ընդհանուր հրամանատար և հիշյալ վայրերում եղած խաներին ու պարսկական զորքերին կարգադրվեց ենթարկվել Դավիթ-Բեկին, գ) Դավիթ-Բեկին իրավունք տրվեց կըտրելու իր սեփական դրամը, դ) համաձայնության եկան համատեղ պայքար մղել թուրքերի դեմ ու նրանց դուրս քշել Անդրկովկասից։

Կայացած համաձայնությունից հետո պարսից շահի կարգադրությամբ եկան և Դավիթ-Բեկի հրամանատարության տակ մտան Սյունիքի մոտերքում, Ղարադաղում և անդրկովկասյան այլ վայրերում եղած պարսիկ խաներն ու նրանց զորքերը։ Առաջին կարևոր գործը եղավ Օրդուբադի մաքրումը օսմանյան զորքերից։ Հայ-պարսկական ուժերը գիշերով մոտեցան Օրդուբադին և հարձակվեցին թշնամու վրա։ Հակառակորդը զգալի կորուստ կրելով հեռացավ քաղաքից և նրա շրջակայքից։

Դրանից հետո Դավիթ-Բեկի գլխավորած զորքերը ձեռնամուխ եղան Ագուլիսի ազատագրման գործին։ Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը, հայ-պարսկական զորքերի գլուխ անցած, արշավեցին Ագուլիսի վրա և ավանից դուրս քշեցին թուրքերին, բայց չամրացան այնտեղ և բանակ դրեցին Ագուլիսի վանքում։ Այնտեղ եկավ

նաև Դավիթ-Բեկը, զորահանգես կազմակերպեց և շատերին պարգևատրեց։

Նուտով օգնության եկան պարսկական նոր զորամասեր։ Դավիթ-Բեկը որոշեց հարձակման անցնել Ագուլիսի շրջակայքում եղած թուրքական զորքերի վրա և դուրս քշել նրանց այդ վայրերից։ Օսմանյան բանակն էլ իր հերթին էր պատրաստվում հակահարձակման անցնել։ Երկու ընդդիմադիր բանակների միջև փոփոխական հաջողություններով տեղի ունեցած մի քանի ընդհարումներից հետո խոշոր ճակատամարտ տրվեց Մարաղայի դաշտում։ Հայ-պարսկական զորքերը մարտից առաջ բաժանվեցին երեք խմբի։ Պարսիկ խաները առաջ շարժվեցին մի թևից, հայկական զորքերի մի մասը Դավիթ-Բեկի գլխավորությամբ՝ մյուս թևից, իսկ մի մասն էլ Տեր-Ավետիսի հրամանատարությամբ՝ Արաքս գետի կողմից գրոհեց թշնամու վրա։ Օսմանյան բանակն էլ վերադասավորվել էր և պատրաստվել գրոհի։ Մարտի ընթացքում երկու կողմերն էլ կռվում էին անդիշում։

Մարտի թեժ պահին պարսիկները, ահաբեկված օսմանյան զորքերի գրոհի հուժկու թափից, ետ ընկրկեցին և նահանջեցին մարտի դաշտից։ Հայերի մի թևը բացվեց և հարվածի տակ ընկավ։ Սակայն նրանք չտատանվեցին և շարունակեցին համարձակ կերպով գրոհել թշնամու վրա և, մեծ կորուստներ պատճառելով, նրան ստիպեցին նահանջել։ Հաղթանակը դարձյալ հայերին էր պատկանում։ Բայց նրանք, փոխանակ հետապնդելու թուրքերին և Ագուլիսի շրջանից դուրս քշելու, դադարեցրին մարտը և ընկան պարսիկների հետևից՝ նրանց վերադարձնելու համար։

Սա Դավիթ-Բեկի սխալն էր, որից օգտվեցին օսմանցիները։ Նրանք չհեռացան Ագուլիսի շրջանից, կապ հաստատեցին Ագուլիսի խոշոր առևտրականների հետ ու նրանց դուրս բերեցին Դավիթ-Բեկի դեմ։ Եվ երբ հայկական զորագնդերը վերադարձան ու նորից բանակեցին վանքում, ագուլիսցիները գնդակոծման ենթարկեցին նրանց և սպանեցին Մելիք-Փարսադանին։

Հայկական զորքերը իրենց հայրենակիցների հետ չընդհարվելու համար ստիպված եղան քանդել պարիսպը, վանքի բակից դուրս գալ հակառակ կողմից ու հեռանալ քաղաքից։ Սա էլ Դավիթ-Բեկի տակտիկական սխալն էր այն տեսակետից, որ անպատիժ թողեց ագուլիսցիներին, որոնք առավել ևս գոտեպնդվեցին, հետագայում նրանց զսպելու համար ուղարկված ջոկատին դիմադրեցին և ստիպեցին ձեռնունայն ետ վերադառնալ։

Նոր իրադրություն և նոր դիմումներ Ռուսաստանին

1728 թ. սկսած Ղարաբաղի և Վարանդայի հայկական իշխանությունների դրությունը ծանրացավ։ Օսմանյան վտանգը շարունակում էր մնալ և ավելի սպառնալից դառնալ։ Պարսիկների հետ համագործակցելու հայերի բոլոր ջանքերը, որ սկզբնական շրջանում որոշ արդյունք ավեց, այժմ արդեն անհաջողության էին մատնվում։ 1728—1730 թթ. պարսիկներն իրենց ուժերը կենտրոնացրին նաև աֆղանների և ապա օսմանցիների դեմ՝ Պարսկաստանի հարավային և հարավ-արևելյան շրջաններում։

Այդպիսի աննպաստ պայմաններում Ղափանի և Ղարաբաղի ազատագրական պայքարը նոր ծանր հարված ստացավ։ 1728 թ. մահացան Եսայի Հասան-Ջալալյանը և Դավիթ-Բեկը՝ ապստամբության ոգեշնչողներն ու ղեկավարները։

Հայկական զորքի մեջ տրտունջ ու հուսաբեկություն առաջացավ։ Սպառվում էին նրանց ուժերն ու ռազմամթերքը, թուլանում էին նրանց եռանդն ու կորովը։ Այդպիսի պայմաններում անհրաժեշտ եղավ նորից դիմել ռուսական պետությանը և օգնություն խնդրել նրանից։

Մինչև 1728 թ. ռուսական պետության հետ հայերի ունեցած նամակագրությունը վարում էր Եսայի Հասան-Ջալալյանը։ Նրա մահից հետո ինչպես բանակցություններ վարելու գործը, այնպես էլ սղնախների զորքերի ղեկավարումը ամբողջությամբ անցան Ավան Յուզբաշուն։ Սա ևս սկսեց ռուսներին դիմումներ հղել և պատվիրակություններ ուղարկել Կասպիական ափերին բանակած ռուսական զորքերի հրամանատարության մոտ, խնդրելով շտապ օգնություն։

1729 թ. սկզբներին սղնախների յուզբաշիներն ու մելիքները Ավան Յուզբաշու գլխավորությամբ նոր պատվիրակություն ուղարկեցին Բաքու՝ ռուսական զորքերի հրամանատար գեներալ Ռումյանցևի մոտ։ Պատվիրակության նպատակն էր՝ համոզել Ռումյանցևին, որ Թուրքերի հնարավոր առաջխաղացումը դեպի Կասպիական ափերը խափանելու համար հարկավոր է շտապ կերպով ռուսական զորքեր ուղարկել Ղարաբաղ։ Ռումյանցևն իր նախորդների նման հրաժարվեց կատարել հայերի խնդրանքը։ Անհրաժեշտություն առաջացավ նոր պատվիրակություն ուղարկել Պետերբուրգ։ 1729 թ. աշնանը պատվիրակությունը Ավան Յուզբաշու եղբոր՝ Թարխան յուզբաշու գլխավորությամբ արդեն Պետերբուրգում էր։ Սակայն նրանց բոլոր ջանքերը իզուր անցան։ Ցարական կառավարությունն ի վիճակի չեղավ ռազմական օգնություն ցույց տալ

հայերին։ Նրան խանգարում էին մի շարք հանգամանքներ. նախ, երկար ժամանակ նա պատերազմի մեջ էր եղել չեզնների հետ և անմիջապես չէր կարող ընդհարվել դեռևս բավականին լուրջ ուժ ներկայացնող թուրքական բանակի հետ, երկրորդ, նրան սպառնում էին եվրոպական պետությունները՝ Անգլիան ու Ֆրանսիան, որոնց ձեռնտու չէր ռուսական ազդեցության տարածումը Պարսկաստանի և Անդրկովկասի վրա։

Ապստամբության վախճանը

Սյունիքի և Արցախի հայերը մի քանի տարի շարունակ, առանց դրսից օգնություն ստանալու, անհավասար պայքար էին մղում օսմանյան զավթիչների դեմ։ Այդ օրհասական պատերազմում նրանք հույս ունեին, որ ռուսական պետությունից կամ պարսիկներից օգնություն կստանան և թուրքերին դուրս կքշեն երկրից։ Սակայն այդպես չեղավ, իսկ թուրքական սպառնալիքն ավելի ու ավելի էր սաստկանում։ Հենց այդ էլ հայկական զորքի մեջ առաջ բերեց հուսախաբություն, տատանումներ ու երկպառակություն։ Դեռևս Դավիթ-Բեկի և Նսայի Հասան-Ջալալյանի կենդանության ժամանակ կազմալուծող տարրերն իրենց զգացնել էին տալիս։ Դրա արտահայտությունն էին ազուլիսցիների և ապա Ջավրնդուրի ջոկատների պառակտիչ գործողությունները։

Կազմալուծումը Ղափանի զորքի մեջ առավել սուր ձևով դրսևորվեց Դավիթ-Բեկի մահից հետո։ 1728 թ. Ղափանի զինվորական հրամանատարությունն ամբողջությամբ անցավ Մխիթար Սպարապետի ձեռքը։ Սա նույնպես արիաբար գլխավորեց հայերի պայքարը թուրք զավթիչների դեմ և մի շարք հաղթական մարտեր մղեց։ Սակայն հենց նրա ժամանակ Ղափանի զորքը սկսեց պառակտվել և կազմալուծվել։ Այդ բանը ցայտուն կերպով երևաց, երբ թուրքական բանակը երկրորդ անգամ պաշարեց Հալիձորի բերդը, որի պաշտպանությունը դարձյալ իրենց վրա էին վերցրել Մխիթար Սպարապետն ու Տեր-Ավետիսը։ Բայց այս անգամ նրանք, փոխանակ միահամուռ կերպով հարվածելու թշնամուն, պառակտվեցին։

Մխիթար սպարապետը պահանջում էր շարունակել պաշտպանությունը և ուժասպառ անել թշնամուն, իսկ Տեր-Ավետիսը առաջարկում էր բանակցել թուրքերի հետ և բերդը հանձնել նրանց առանց դիմադրության։ Զորքի մի մասը պաշտպանեց Տեր-Ավետիսին, և նա կնաց թուրքերի հետ բանակցելու, իսկ Մխիթար Սպարապետը զիշերով հեռացավ բերդից։ Թուրքերը գրավեցին բերդը և, հակառակ իրենց տված խոստմանը, բոլորին թալանեցին, շատերին կա՛մ կոտորեցին, կա՛մ գերեվարեցին։

Հալիձորի դեպքից հետո թեև Մխիթար Սպարապետին հաջողվեց իր շուրջը համախմբել մնացած ջոկատներին և մի քանի հաջող հարձակումներ գործել թշնամու վրա, նույնիսկ վրեժխնդիր լինել թուրքերից Հալիձորի համար, սակայն ապստամբության ուժերի կազմալուծումը հնարավոր չեղավ կասեցնել։ Ղափանում այն շարունակեց խորանալ և ավարտվեց նրանով, որ 1730 թ., երբ Մխիթար Սպարապետը Օրդուբադում թուրքերին ջարդելուց հետո վերադառնում էր Խնձորեսկի իր շտաբը, դարան մտած մարդիկ զնդակոծեցին նրան և սպանեցին։ Դրանից հետո Ղափանում օսմանյան զորքերին այլևս կազմակերպված դիմադրություն ցույց չտրվեց։

Հայկական զորքը նույնպիսի կազմալուծում ապրեց նաև Ղարաբաղում։ Այստեղի հայկական զորքերը մինչև 1729 թ. հերոսաբար դիմադրում էին օսմանյան բանակին և պաշտպանում հայերի ձեռք բերած ազատությունը։ Սակայն Ռուսաստանից օգնություն ստանալու հայերի բոլոր ջանքերը հաջողություն չունեցան։ Ավան Յուզբաշին, որ անձամբ գնացել էր Ռուսաստանից օգնություն խնդրելու, այլևս չվերադարձավ Ղարաբաղ։ Սղնախների հայկական զինվորությունը նույնպես կազմալուծվեց և զորքը ցրվեց։ Օսմանյան բանակն օգտագործեց հայկական զորքի կազմալուծումը և գավթեց Ղարաբաղն ու Ղափանը։

Ապստամբության անհաջողության պատճառները և նշանակությունը

Սյունիքում հայերը շուրջ ութ տարի հերոսական պայքար մղեցին իրենց ազատության համար։ Այդ պայքարին մասնակցում էին բնակչության բոլոր խավերը։ Նրանք բոլորն էլ, հատկապես աշխատավոր գյուղացիությունն ու արհեստավորությունը, շահագրգռված էին որքան կարելի է շուտ թոթափել օտարի լուծը։ Նրանք ամենաեռանդուն մասնակցություն հանդես բերին այդ պայքարին և իրենց ուսերի վրա տարան ինչպես ճակատամարտերի, այնպես էլ զորքի համալրման, զենքի ու ռազմական հանդերձանքի պատրաստման և պարենավորման ամբողջ ծանրությունը։

Չնայած այս բոլորին, պատմագիտական գրականության մեջ առաջ է քաշված այն սխալ թեզը, թե դա գյուղացիական ապստամբություն էր՝ ուղղված ինչպես օտար զավթիչների, այնպես էլ հայ մելիքների ու կալվածատերերի դեմ։ Ապստամբության ղեկավարումը իրենց ձեռքն էին վերցրել բնակչության վերնախավերը՝ մելիքները, հոգևորականները և, մասամբ, առևտրականները։ Սրանց մեծամասնությունը նույնպես նվիրված էր ազատագրական պայքարին։ Սակայն, հակառակ ապստամբների անձնազոհությանն ու նը-

վիրվածությանը, հակառակ այն հաղթական հերոսամարտերի, որ նրանք մղեցին նախ պարսիկների, ապա թուրքերի դեմ, ապըստամբությունը անհաջող վախճան ունեցավ։

Ապստամբության անհաջողությունն ունի իր լուրջ պատճառները։ Կարևորագույն պատճառներից մեկը ապստամբության սահմանափակվածությունն էր տերիտորիալ նեղ շրջանակներում։ Այն դուրս չեկավ Ղափանի և Ղարաբաղի սահմաններից, չընդգրկեց. գոնե, Արևելյան Հայաստանի մյուս շրջանները նույնիսկ այն դեպքում, երբ Երևանն էլ էր ոտքի ելել թուրքերի դեմ, չվերածվեց համահայկական ապստամբության։

Անհաջողության պատճառներից մեկն էլ այն էր, որ ապստամբությունը չուներ միասնական ղեկավար կենտրոն և գործողության հեռանկարային ծրագիր։ Դավիթ-Բեկն իր զորավարներով, մի կողմից, Եսայի Հասան-Ջալալյանն ու Ավան Յուզբաշին, մյուս կողմից, գործում էին առանձին-առանձին։

Ապստամբության անհաջող վախճանին նպաստեց նաև այն, որ հայերը զրկվեցին իրենց դաշնակիցների օգնությունից։ Վրաստանը օկուպացիայի ենթարկվեց և ի վիճակի չեղավ այլևս օգնություն հասնել։ Իսկ ցարական կառավարությունը չիրականացրեց իր խոստացած օգնությունը։

Թեև Սյունիքի ապստամբությունը իր նպատակին. չհասավ, բայց խոշոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի ազատագրական պայքարի համար։ Այդ ապստամբությունը բարձրացրեց ժողովրդի ինքնագիտակցությունը, նրա մեջ ամրապնդեց այն գաղափարը, որ ինքն էլ կարող է զենք վերցնել և հաղթանակի հասնել։ Այդ ապստամբությունը ցույց տվեց, որ հնարավոր է ընդհանուր թշնամու դեմ կազմակերպել անգրկովկասյան ժողովուրդների համագործակցություն։

Սյունիքի և Ղարաբաղի ապստամբությունը ավելի ժողովրդականացրեց ազատագրական պայքարի գաղափարը։ Նրա ղեկավարների՝ Դավիթ-Բեկի, Մխիթար Սպարապետի, Ավան Յուզբաշու և այլոց անձնական քաջագործությունը և անձնազոհությունը օրինակ դարձան հայրենասիրության և ազատասիրության ոգով հետագա սերունդներին դաստիարակելու համար։ Այդ ապստամբությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության պայծառ էջերից է։

7. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Շարժման ժամանակավոր վայրէջքը

1734 թվականին պարսկական բանակը, որ Նադիր խանի գլխավորությամբ հաղթանակ էր տարել աֆղանների և թուրքերի դեմ երկրի հարավային շրջաններում, մտավ Անդրկովկաս, պաշարեց Գանձակ քաղաքը, իսկ հաջորդ տարվա գարնանը՝ նաև Երևանը։ Այդ նույն տարվա ամռանը օսմանյան մեծաքանակ զորքերը Քյոփրուլու Աբդուլլա փաշայի գլխավորությամբ օգնության եկան Երևան քաղաքում պաշարվածներին։ Պարսկական և օսմանյան բանակների միջև օգոստոսին Եղվարդ գյուղի մոտերքում ճակատամարտ տեղի ունեցավ։ Աբրահամ Կրետացու վկայությամբ, որը ճակատամարտից երեք օր հետո անցել էր մարտի դաշտում ընկած դիակների միջով, օսմանցիները ծանր պարտություն են կրել և տասնյակ հազարների կորուստ տվել։ Դրանից հետո Նադիր խանի բանակը շարժվեց դեպի Կարս, բայց օսմանցիները առաջարկեցին հաշտություն կնքել։ Այդպիսով, 1735 թ. վերջացավ պարսկա-օսմանյան պատերազմը և Արևելյան Հայաստանը նորից անցավ պարսիկների տիրապետության տակ։

Ամբողջ Պարսկաստանը և նրան ենթակա երկրները թուրքերից մաքրելուց հետո, 1736 թ. սկզբներին, Նադիր խանը իրեն հայտարարեց Պարսկաստանի շահ և երկրի կառավարումն իր ձեռքը վերցրեց։ Նա, իրազեկ լինելով Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարին, փորձեց վարել այնպիսի քաղաքականություն, որը նրանց հետագայում հեռու կպահեր ազատագրական պայքար մղելու գաղափարից, կլլատեր այդ ժողովուրդների ուժերը և նրանց վերնախավին կկողմնորոշեր դեպի Պարսկաստան։ Այդ նպատակին հասնելու համար Նադիր շահը Արևելյան Հայաստանում իրագործեց մի քանի ձեռնարկումներ։ Դրանցից մեկը վերաբերում էր Ղարաբաղի և Ղափանի հայ մելիքներին։ Նախորդ շրջանում, այդ մելիքները թեև ունեին որոշ իշխանություն իրենց կալվածքներում, բայց մեծ մասամբ ենթակա էին շրջապատի խաներին և հաճախ հալածվում ու կեղեքվում էին նրանց կողմից։ Նադիր շահը այդ մելիքներին համախմբեց և միավորեց հինգ մելիքությունների մեջ, որոնք պատմության մեջ հայտնի են «հնամյա մելիքություններ» անունով։ Շահը ճանաչեց յուրաքանչյուր մելիքության գլուխ կանգնած մելիքի ինքնավար իշխանությունը, նրանց դուրս բերեց խաների հսկողությունից և անմիջապես ենթարկեց շահին։ Այդ մելիքություններին իրավունք տվեց հազարական զինվորից բաղկա-

ցած մշտական բանակ ունենալ և միություն կազմել, այնպես որ հինգ մելիքությունները միասին կունենային 5000 հոգուց բաղկացած մշտական զինված ուժ։

Խամսայի (արաբերեն՝ հինգ) մելիքությունները հետևյալներն էին՝ ա) Գյուլիստանի մելիքություն՝ Բեգլարյանների, բ) Ջրաբերդի մելիքություն՝ Իսրայելյանների, գ) Խաչենի մելիքություն՝ Հասան-Ջալալյանների, դ) Վարանդայի մելիքություն՝ Շահնազարյանների և ե) Դիզակի մելիքություն՝ Եգանյանների գլխավորությամբ։

Նադիր շահը փորձեց սիրաշահել հայ հոգևորականությունը՝ անձնական ծանոթություն հաստատելով էջմիածնի կաթողիկոսի հետ, ընդարձակելով կաթողիկոսարանի կալվածքները և թեթևացնելով նրա հարկերը։ Նա խրախուսեց նաև հայ առևտրականներին և նրանց շահագրգռեց Պարսկաստանում առևտուր ծավալելու գործում։ Նադիրը նույնիսկ որոշ չափով թեթևացրեց հայերի նկատմամբ եղած հարկապահանջությունը և, ինչպես վկայում է Աբրահամ Կրետացին, կարգադրեց մի շարք հարկերի միայն կեսը վերցնել հայերից։ Պարսկական պետության այդպիսի քաղաքականությունը հայերին առժամանակ ետ կանգնեցրեց ազատագրական պայքարից։ Դրան նպաստեցին նաև Սյունիքի ապստամբության անհաջողությունը և պարսկա-թուրքական պատերազմական գործողությունները, որոնք ծանր հարված հասցրին բնակչությանը։

Հայկական գաղթավայրերը և ազատագրական շարժումը

Հայաստանում ազատագրական շարժման վայրէջքը տևեց մինչև XVIII դ. երկրորդ կեսը՝ շուրջ երեսուն տարի։ 1760-ական թթ. նոցից է նկատվում ազատագրական պայքարի ակտիվացում, բայց այս անգամ հասարակական կյանքի զարգացման այլ պայմաններում և այլ միջավայրում։

Արևմտյան Եվրոպայում, Լեհաստանում և Ուկրաինայի արևմտյան շրջաններում, Ռուսաստանում և այլ երկրներում հաստատված հայկական գաղթավայրերի բնակչությունը ակտիվորեն ընդգրկվում էր զարգացող բուրժուական հարաբերություններում։ Այդ գաղթավայրերի բնակչությունը, որ մեծ մասամբ առևտրականներ և արդյունաբերողներ էին, դյուրությամբ էր ընկալում բուրժուական հարաբերությունների զարգացման շնորհիվ առաջացած նոր գաղափարները և, առանձնապես, սեփական հայրենիք, ազգային պետություն և իշխանություն ձեռք բերելու գաղափարը։ Սակայն, նա իր այդ ձգտումները օտար երկրներում ապրելով իրականացնել չէր կարող։ Նրա նկատմամբ գործադրում էին խտրականություն,

տնտեսական ու քաղաքական ճնշումներ։ Այդպիսի պայմաններում գաղութահայ բնակչությունը իր հայացքը դարձնում էր դեպի հայրենիք, դեպի Հայաստան։ Եվ ահա հենց այդ գաղթավայրերի բնակչության մեջ էլ XVIII դ. կեսերին արթնանում է Հայաստանը թուրքական և պարսկական տիրապետությունից ազատագրելու միտքը։

Հայ ազատագրական շարժման գործում XVIII դ. երկրորդ կեսերին աչքի ընկան հատկապես Հնդկաստանում և Ռուսաստանում եղած գաղթավայրերը։

Մինչև XVIII դ. 40-ական թթ. անգլիացիները հաշվի էին առնում հայ առևտրականներին, բայց երբ նրանք հաստատուն կերպով գավթեցին Հնդկաստանը, սկսեցին այնտեղից դուրս մղել մյուսներին, որոնց թվում և հայ առևտրականներին։ Այդպիսի իրադրության պայմաններում հնդկահայ գաղութի բուրժուականացող տարրերի մեջ առաջանում է հայրենիքն ազատագրելու և սեփական պետություն կազմակերպելու գաղափարը։ Նույն միտքն է ծագում նաև Ռուսաստանում ապրող հայերի մեջ։ Այստեղ պայմանները մի փոքր այլ կերպ էին դասավորվել։ Ռուսական պետությունը օրըստօրե ավելի մեծ հետաքրքրություն էր հանդես բերում Արևելքի երկրների նկատմամբ և ձգտում էր նրանց վրա տարածել իր ազդեցությունը։ Այդ կապակցությամբ ուշադրություն էր դարձվում նաև Անդրկովկասի և Հայաստանի վրա։ Հայերն ու անդրկովկասյան ժողովուրդները փորձում են օգտվել դրանից և Ռուսաստանի օգնությամբ ազատագրվել թուրքական ու պարսկական տիրակալությունից։ Այս մտադրության իրականացման համար Ռուսաստանում հաստատված հայ գործիչներից ոմանք ռուսական արքունիքում, հատկապես Եկատերինա II-ի գահակալության շրջանում, բարձրացրին Հայաստանի ազատագրության հարցը։ Այսպիսով, Հնդկաստանի և Ռուսաստանի հայկական գաղութներում սկզբնավորվում է հայ ազատագրական շարժման մի նոր շրջան։

Այս անգամ դրվում է ամբողջ Հայաստանի ազատագրման ու հայկական միասնական պետության ստեղծման հարցը։ Առաջ են քաշվում դեմոկրատական սկզբունքներ պետական կառուցվածքում։ Պահանջվում է ֆեոդալական կարգերի վերացում։ Շարժման ղեկավարման գործում վճռական դեր է սկսում խաղալ բուրժուականացող առևտրական խավը, և շարժման մեջ որոշակիորեն դրսևորվում են տարբեր ուղղություններ։

Հովսեփ Էմինը և ազատագրական շարժումը հնդկահայերի մեջ

Հնդկահայ գաղութում հայկական ազատագրական շարժման առաջին մունետիկը եղավ Հովսեփ Էմինը կամ, ավելի ճիշտ, Էմին Հովսեփի Էմինյանը։ Նա ծնվել է 1726 թ. Պարսկաստանի Համադան քաղաքում։ Նրա նախնիները Հայաստանից Պարսկաստան էին տարվել Շահ-Աբաս I-ի ժամանակ։ Հայրը՝ Հովսեփը, որ զբաղվում էր առևտրով, թողել էր իր ընտանիքը Համադան քաղաքում (հոր մոտ), իսկ ինքը տեղափոխվել էր Հնդկաստանի Կալկաթա քաղաքը։ Շուտով այդտեղ է բերել տալիս նաև իր որդուն՝ Էմինին՝ առևտրական գործում իրեն օգնելու համար։ Բայց Էմինը տարվում է բոլորովին այլ գաղափարներով։ Նա գեռևս պատանեկան հասակում ակնատես էր եղել այն բռնություններին, որ թուրքերն ու պարսիկները գործադրում էին իր հայրենակիցների նկատմամբ։ Լսել էր Սյունիքի հերոսական ապստամբության և Ղարաբաղի ու Ղափանի մելիքությունների մասին։ Նա Կալկաթայի նավահանգստում և այլուր, շփվելով եվրոպացիների հետ, տեսնում էր նրանց բարձր կուլտուրան, ռազմական կազմակերպվածությունը։ Նրա գլխում առաջանում է այն միտքը, որ պետք է սովորել, յուրացնել նրանց ռազմական կազմակերպական ձևերը և ի սպաս դնել հայրենիքի ազատագրման գործին։

1751 թ. օգտվելով հոր բացակայությունից, Էմինը իր հասակակից մի երիտասարդի հետ վարձվում է մի նավում որպես հատակ մաքրող և գալիս է Լոնդոն։ Այստեղ նա շուրջ չորս տարի ապրում է ծանր պայմաններում, օրվա հաց ու օթևան գտնելու համար կատարում է զանազան ֆիզիկական աշխատանքներ։ 1755 թ. Լոնդոնում Էմինը պատահաբար ծանոթանում է անգլիացի երիտասարդ գրող Էդմոնդ Բյորքի հետ, որը և նրան վերցնում է իր հովանավորության տակ և նրա համար մատչելի դարձնում Լոնդոնի մտավորականության շրջանը։

Էդմոնդ Բյորքի հետ ծանոթանալուց միաժամանակ հետո Էմինը հանդիպում է Նորթումբերլենդի հերցոգին։ Վերջինս հետաքրքրվում է Էմինով, վերցնում է նրա ինքնակենսագրությունը, բազմացնել է տալիս և բաժանում անգլիական լորդերին որպես անգլիական վերնախավի համար հետաքրքրություն ներկայացնող մի պատմություն։ Դա Էմինի համար նոր ծանոթություններ է ստեղծում և հաջողություններ բերում նրան։ Անգլիական թագավորի որդին՝ Կումբերլենդի հերցոգը, որ նույնպես ծանոթացել էր Էմինի

կենսագրությանը, իր հովանավորության տակ վերցրեց Էմինին և ընդունել տվեց Վուլվիչի զինվորական ակադեմիան։

Էմինը Վուլվիչի ակադեմիայում սովորելու ընթացքում, փորձ ձեռք բերելու նպատակով մասնակցեց նաև անգլո-ֆրանսիական պատերազմին։ Այս գործում էլ նա ընդունակություն ցուցաբերեց և աչքի ընկավ իր քաջությամբ ու հմտությամբ։ Սակայն Էմինին միշտ հուզում էր հայրենիքի ազատագրության հարցը և, հենց որ նրա գործերը բարեհաջող ընթացք ստացան Լոնդոնում, նա ձեռնամուխ եղավ ազատագրական շարժման կազմակերպման գործին։ Այդ նպատակով նա նամակներ գրեց իր հորը, Կալկաթայի հայերին և Վրաստանի թագավոր Հերակլ II-ին։ Էմինը հորը գրած նամակում խնդրում էր, որ իր նամակները կարդացվեն Կալկաթայի ազդեցիկ հայերի առջև, որ նրանց հորդորի մասնակցելու հայերի ազատագրական գործին, որ նրանք էլ նամակ գրեն Հերակլ II-ին և նրան համոզեն գլխավորել հայերի ու վրացիների ազատագրական շարժումը։ Այդ նույն միտքը Էմինը հայտնում է նաև վրաց թագավորին գրած նամակում, նրան անվանելով հայոց ու վրաց թագավոր՝ կոչ անելով անցնել հայերի ու վրացիների գլուխ և պայքարել երկու ժողովուրդների ազատագրման համար։

Էմինը չէր բավարարվում միայն հնդկահայերի օգնությամբ։ Նա ձգտում էր շարժման մեջ ընդգրկել նաև Եվրոպայում եղած դաղթավայրերի հայերին։ Այդ մասին տեղեկություն կա Էմինի հովանավորներից մեկի՝ տիկին Մոնտեգյուի մի նամակում, որի մեջ վերջինս հաղորդում է, որ Հոլանդիայում եղած ժամանակ Էմինը հավաքել է Հաագայի և մյուս քաղաքների նշանավոր հայերին, նրանց քննությանն է դրել իր ծրագիրը, որին ներկա եղողները հավանություն են տվել և խոստացել օժանդակել։

Էմինին հաջողվեց 1758 թ. վերջերին տեսակցել Անգլիայի պրեմիեր-մինիստր Պիտտի հետ։ Տեսակցության նպատակն էր ըստանալ անգլիական կառավարության աջակցությունը։ Բայց ապարդյուն, Պիտտը ոչ մի աջակցություն չխոստացավ։ Պատճառն այն էր, որ Անգլիան չէր ուզում վատացնել իր հարաբերությունները Թուրքիայի հետ և փորձում էր նույնիսկ նրան դուրս բերել Ավստրիայի դեմ, որի հետ պատերազմի մեջ էր։ Դրանից հետո Էմինը պատրաստվեց ճանապարհ ընկնել դեպի Հայաստան։

Էմինը Հայաստանում

1759 թ. ձմեռնամուտին Հովսեփ Էմինն արդեն ճանապարհին էր։ Նա ափ իջնելով Ալեքսանդրետ քաղաքում, եկավ Հալեպ, իսկ այնտեղից երկու հայ ուղեկիցների հետ ճանապարհ ընկավ դեպի

Հայաստան։ Էմինն անցնում էր գյուղ առ գյուղ, հետաքրքրվում հայերի վիճակով և աշխատում նրանց մեջ արթնացնել ազատագրական պայքարի գաղափարներ։ Էմինը հայ գյուղացիներին կոչ էր անում պայքարի ելնել տգիտության, բռնության, անիրավահավասարության դեմ։ Նա օրինակներ էր բերում եվրոպական ժողովուրդների կյանքից, աշխատելով համոզել հայերին, որ նրանք էլ հետևեն եվրոպացիների օրինակին, թոթափեն օտարի լուծը, ազատագրվեն և իրենց սեփական պետությունն ու հայրենիքն ունենան։ Այրպիսի զրույցների ժամանակ հայերից շատերը, թեև տարակուսանքով ու ահով էին լսում Էմինի խոսքերը և ընկալում նրա մտքերը, բայց միաժամանակ հակվում էին գեպի նա, նրա մեջ տեսնելով իրենց ազատության գործին նվիրված մի անձնավորության։ Կարին քաղաքից ոչ շատ հեռու գտնվող Ջենիս գյուղում Էմինն իր պայուսակից հանում է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» գիրքը և նրանց կարդում այն հատվածները, որտեղ Խորենացին պատմում է հայկական պետության և հայ ժողովրդի կատարած սխրագործությունների մասին։ Նա խրախուսում է հայերին ոտքի ելնել և նորից ձեռք բերել իրենց ազատությունը։

Մշո սուրբ Կարապետ վանքի վանահայր Հովնան եպիսկոպոսը տեղեկանալով Էմինի գործունեությանը և ազատագրական գաղափարներին, հետագայում նամակագրական կապեր է հաստատում Էմինի հետ, դառնում է նրա մարտական գաղափարակիցը և կազմակերպչական աշխույժ գործունեություն ծավալում Արևմտյան Հայաստանում։

1760 թ. գարնանը Էմինն արդեն էջմիածնում էր։ Այստեղ նա անմիջապես չհայտնեց Հայաստան գալու իր նպատակի և ծրագրի մասին, ինչպես արել էր Իսրայել Օրին, բայց, այնուամենայնիվ, էջմիածնի միաբանության անդամները նրա նկատմամբ անբարյացակամ վերաբերմունք ցույց տվեցին և նույնիսկ մի անհայտ դեպքի կապակցությամբ բանտարկեցին նրան։ Սակայն կաթողիկոս Հակոբ Շամախեցին տեղեկանալով Էմինի բանտարկության մասին, կարգադրում է անմիջապես ազատել նրան։

Հայտնի չէ, թե Էմինը կաթողիկոսին հաղորդե՞լ է իր մտադրությունն ու ծրագրերը, բայց նա էջմիածնում ձեռները ծալած չի նստել։ Այնտեղ եղած ժամանակ փորձել է կապ հաստատել Երևանի առևտրականների հետ, ծանոթանալ երկրի դրությանը, տեղեկություններ հավաքել Վրաստանի և Պարսկաստանի քաղաքական իրադրության մասին և նամակ է ուղարկել վրաց թագավոր Հերակլին։ Այդ նամակում նա Հերակլին խնդրում է ընդունել իրեն և

հայտնում է, որ դրական պատասխան ստանալու դեպքում անմիջապես կմեկնի Թիֆլիս։ Սակայն մի քանի օր հետո էմինը փոխում է իր մտադրությունը և որոշում է վերադառնալ Անգլիա։

Նա հանգեց այն եզրակացության, որ Անդրկովկասի ժողովուրդների հայացքն ուղղված է դեպի Ռուսաստան և հարկավոր է դիմել հենց այդ մեծ պետության օգնությանը։ Եվ որպեսզի այդ օգնությունը ձեռք բերվի, նա որոշեց վերադառնալ Անգլիա, այնտեղից մեկնել Ռուսաստան և ռուսական կառավարության հանձնարարականով գնալ Վրաստան՝ Հերակլ II-ի մոտ։

8. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՕՋԱԽՆԵՐ

Էմինը Ռուսաստանում

Էմինը 1760 թ. ապրիլին էջմիածնից ուղևորվեց Լոնդոն։

Նա Լոնդոնի իր բարեկամների միջնորդությամբ կապ հաստատեց ռուսական դեսպանության հետ, ռուսական դեսպան իշխան Դոլգիցինից ստացավ Ռուսաստան մեկնելու անցագիր և հանձնարարական՝ ուղղված արտաքին գործոց վարչությանը։ 1761 թ. նոյեմբերին նա արդեն Պետերբուրգում էր։ Այստեղ նրան ընդունեց Ռուսաստանի կանցլեր կոմս Վորոնցովը։

Կանցլեր Վորոնցովից անհրաժեշտ գրություններ վերցնելով Վրաստան մեկնելու համար էմինը ճանապարհ ընկավ դեպի Թիֆլիս։ 1762 թվականի հունիսին նա արդեն Հյուսիսային Կովկասում էր և ամսվա վերջին ժամանեց սահմանամերձ Կղլար քաղաքը։ Աստրախանում, Կղլարում և Հյուսիսային Կովկասի այլ վայրերում ապրող հայերը էմինին դիմավորում էին մեծ խանդավառությամբ։ Նրանք լսել էին էմինի ծրագրի և նպատակների մասին, դիտեին, որ նա դնում է Անդրկովկաս և Հայաստան՝ հայրենիքի ազատագրության համար պայքար կազմակերպելու նպատակով։ Այդ գաղափարը համակել էր նաև Հյուսիսային Կովկասում ապրող հայերի սրտերը։ Աստրախանում էմինին միացան մի քանի տասնյակ զինված հայ երիտասարդներ, որոնք վճռել էին գնալ հայրենիք և մասնակցել նրա ազատագրական պայքարին։ Կղլարի հայերը մի քանի հարյուր հոգով դիմավորեցին էմինին և հանդիսավորությամբ նրան առաջնորդեցին քաղաք։ Այդ հանդիսավորությունն ու զինված ջոկատի առկայությունը կասկածանք առաջացրին ռուսական սահմանապահ զորքերի հրամանատար գեներալ Սուվորովի մոտ, որը էմինին թույլ չտվեց շարունակել ճանապարհը և պահակի ուղեցկությամբ ետ դարձրեց Աստրախան, իսկ այնտեղից էլ՝ Պետերբուրգ։ Սակայն էմինը չի հասնում մինչև Պետերբուրգ։ 1762 թ.

սեպտեմբերին օծվելու համար Մոսկվա էր ժամանել նոր գահ բարձրացած թագուհին՝ Եկատերինա II-ը։ Այդ կապակցությամբ Մոսկվա էին տեղափոխվել արևտական մի շարք օրգաններ, որոնց թվում և արտաքին գործոց վարչությունը։ Էմինը Մոսկվայում դիմեց արտաքին գործոց վարչությանը՝ Անդրկովկաս գնալու իրավունք ստանալու համար։ Նրան նորից ընդունեց կանցլեր Վորոնցովը՝ Գոլիցինի հետ միասին, որը Լոնդոնից վերադարձել և ստանձնել էր փոխ-կանցլերի պաշտոնը։ Ռուսական կանցլերը նորից բարյացակամ վերաբերվեց Էմինին, կարգադրեց նրան նոր անցագիր և հանձնարարականներ տալ Վրաստան մեկնելու համար։

Տեսակցության ժամանակ Վորոնցովը հայտնում է Էմինին, որ Եկատերինա կայսրուհին նույնպես համակրում է նրա գաղափարները և միաժամանակ առաջարկում է ծառայության մտնել ռուսական բանակում։ Սակայն Էմինը հրաժարվում է, հայտարարելով, որ ինքը վճռել է գնալ հայրենիք ու ծառայել նրա ազատագրության գործին։

Ռուսական կառավարությունը բարյացակամ էր Էմինի ու նրա ծրագրի նկատմամբ, որովհետև շահագրգռված էր Պարսկաստանի ու Թուրքիայի տիրապետության տակ եղած երկրները, հատկապես Անդրկովկասը և Հայաստանը, իր տիրապետության տակ առնելու խնդրում։

Էմինի ծրագիրը և Հերակլ II-ը

Էմինը Ռուսաստանում ծանոթություն հաստատեց այնտեղի հայ գործիչների հետ, որոնք համակրանքով վերաբերվեցին նրա ազատագրական գաղափարներին և դարձան ազատագրական պայքարի ակտիվ գործիչներ։ Դրանցից են եղել Թարխան Մարգարյանը, որը դարձավ Հյուսիսային Կովկասում կազմակերպված ջոկատի հրամանատարը, Պապա Խաթունյանը, Մովսես Բաղրամյանը, որ Մոսկվայում միացավ Էմինին, դարձավ նրա զինակիցը և նրա հետ միասին գործեց մի քանի տարի, և ուրիշներ։

Էմինը ծանոթություն հաստատեց նաև հայ ազդեցիկ առևտրական ընտանիքի՝ Լազարյանների հետ և նրանցից որոշ նյութական օժանդակություն ստացավ։ Հովհաննես Լազարյանը հետագայում ակտիվ մասնակցություն ունեցավ հայերի ազատագրական շարժմանը։ Հիշյալ անձնավորությունները մեծ չափով օգնեցին Էմինին ռուսական արքունիքում իր գործերը կարգի բերելու, հայ բնակչության մեջ ազատագրական շարժման գաղափարի տարածմանը նպաստելու գործում։

Պապա Խաթունյանի և Թարխան Մարգարյանի միջոցով Էմինը

նամակներ է հղել Հերակլ II-ին և նրանից պատասխան նամակներ ստացել։ Այդ նամակներում Էմինը հայտնում է վրաց թագավորին, որ ցանկանում է գալ Անդրկովկաս և ազատագրական պայքար կազմակերպել օտար զավթիչների դեմ, իսկ Հերակլը իր հերթին խրախուսում է Էմինին և հրավիրում նրան Թիֆլիս։

1763 թվականի ապրիլին Էմինը գալիս է Թիֆլիս։ Քաղաքից դուրս նրան դիմավորելու էին ուղարկել բազմաթիվ հայեր։ Հերակլի կարգադրությամբ վրացիներից և հայերից կազմված զինվորական մի ջոկատ նույնպես ընդառաջ էր եկել Էմինին։ Այդպես հանդիսավոր կերպով Էմինը մտնում է Թիֆլիս։ Հերակլ II-ը նրան հրավիրում է իր մոտ և երկար զրույց ունենում։ Այդ և հետագա տեսակցությունների ժամանակ Էմինը պատմում է Հերակլին իր նպատակների ու ծրագրի մասին, որի էությունը կայանում էր հետևյալում. ա) վրացիներից և հայերից ստեղծել ամրակուռ բանակ, այն կազմակերպել և վարժեցնել եվրոպական բանակների օրինակով, բ) ուժեղացնել կենտրոնական իշխանությունը, զսպել ֆեոդալական տարրերի կենտրոնախույս ձգտումները և ամրապնդել պետությունը, գ) բացել դպրոցներ՝ երիտասարդությանը դաստիարակելով հայրենասիրության և ազատասիրության ձգտումներով։ Ժողովրդի մեջ տարածել լուսավորություն, նրան ներշնչել ազատագրական գաղափարներ և նախապատրաստել օտար զավթիչների դեմ մղվող պայքարին, դ) կազմակերպել հայերի և վրացիների ապստամբություն Թուրքիայի և Պարսկաստանի դեմ, ազատագրել հայկական և վրացական բոլոր հողերը, ե) ստեղծել հայ-վրացական միացյալ պետություն՝ Հերակլի գլխավորությամբ, զ) այդ պայքարի ընթացքում ապավինել ռուսական պետության օգնությանը։

Հերակլ II-ը սկզբում ոգևորվեց Էմինի ծրագրի որոշ, հատկապես կենտրոնական իշխանության ուժեղացման, բանակի կազմակերպման գաղափարներով, բայց Թուրքիայի և Պարսկաստանի դեմ ապստամբության բարձրացման և ղեկավարման հարցում միշտ խուսափողական դիրք էր բռնում։ Էմինն աշխատում էր համոզել Հերակլ II-ին, որ նա ձեռնարկի այդ ծրագրի իրականացման գործը։ Հերակլի հետ Էմինի ունեցած բանակցությունները ձգձգվեցին, և նա Վրաստանում մնաց մինչև 1764 թ. ամառը։ Վրաստանում եղած ժամանակ Էմինը կապեր է հաստատում Հայաստանի առանձին շրջանների և գործիչների հետ՝ առանձնապես Մուշում, Երևանում և Ղարաբաղում գործող որոշ մարդկանց հետ։

Ազատագրական շարժման ակտիվացման գործում մեծ դեր է

խաղացել Հովնանը Արևմտյան Հայաստանում։ Նա իր տրամադրության տակ եղած միջոցներով աշխատում էր զինք ձեռք բերել, կազմակերպել զինվորական ջոկատներ և, ինչպես Էմինին գրած իր նամակներում հաղորդել էր, արդեն տարբեր շրջաններում ստեղծել էր մի քանի ջոկատներ, որոնց շարքերում ընդգրկվում էին ազատագրական պայքարին նվիրված մարդիկ։ Հովնանը կապ էր հաստատել Էրզրումի, Դիարբեքիրի, Վանի և այլ քաղաքների հայ նշանավոր մարդկանց հետ և նրանցից ոմանց ներգրավել ազատագրական շարժման մեջ։ Նա առանձին շրջաններում, օրինակ, Էրզրումում, ուներ իր գործակալները, որոնք դրամական միջոցներ էին հավաքում պայքարի կազմակերպման համար։

Հովնանը Էմինին գրած նամակներում հորդորում էր նրան՝ շարունակել իր ջանքերը ժողովրդի ազատագրումը իրականացնելու համար, անցնել Հերակլի զինվորներից կազմված մի ջոկատի գլուխ, նրա անունից մտնել Արևմտյան Հայաստան և պայքար սկսել Թուրքական տիրակալության դեմ։ Նա հաղորդում էր, որ այդ ժամանակ Էմինի ջոկատին կմիանան մի քանի տասնյակ հազար զինված մարտիկներ և ազատագրական ապստամբությունը կծավալվի ամբողջ երկրով մեկ։

Հովնանի նամակները ոգևորում էին Էմինին։ Նա, Հերակլին ոգեշնչելու և գործի մղելու համար, այդ նամակների ու Հովնանի գործունեության մասին պատմում էր նրան ու հորդորում գործի անցնել։ Սակայն Հերակլ II-ը խուսափում էր Էմինին հաստատ խոստում տալուց և Թուրքիայի ու Պարսկաստանի դեմ ապստամբություն կազմակերպելու որոշակի ձեռնարկումներից։

Հերակլը այլ կերպ վարվել չէր կարող։ Նրա գլխավորած իշխանությունը թեև փաստորեն ինքնանկախ էր և հանդիսանում էր ուժեղագույններից մեկը Անդրկովկասում, այնուհանդերձ այնքան զորեղ չէր, որ ծառանար դեռևս բավականին ուժեղ օսմանյան պետության և Պարսկաստանի դեմ։ Այդ էր պատճառը, որ Հերակլը ստիպված եղավ հեռու մնալ իր իշխանության տերիտորիալ ընդարձակման և հայ-վրացական միացյալ պետություն ստեղծելու մտքից։

Էմինի ազատագրական ծրագրի դեմ դուրս եկավ էջմիածնի կաթողիկոս Սիմեոն Երևանցին, որն անձնական ծանոթություն և բարեկամություն էր հաստատել Հերակլ II-ի հետ և նրան խորհուրդ էր տալիս ազատվել Էմինի ներկայությունից։ Կաթողիկոսի թելադրանքով Էմինի դեմ են դուրս գալիս նաև Թիֆլիսի հայ առևտրականներից ոմանք, ինչպես և հայ հոգևորականները (առանձնապես

հարուստ վաճառական Աղամալի որդի Թարխանը և Զաքարիա եպիսկոպոսը)։ Ի դեպ, Սիմեոն Երևանցին Հերակլին դրած նամակներից մեկում վատաբանում է նաև Հովնանին, որին ինքը՝ թագավորը մի նամակ էր գրել, խրախուսելով նրա գործունեությունը, բայց նամակը բռնվել էր Երևանում և տհաճության առիթ տվել։

Այսպիսով, ստեղծված իրադրությունը և Հերակլ II-ի վրա էմինի ծրագրի հակառակորդների գործադրած ճնշումը վրաց թագավորին ստիպում են հրաժարվել էմինի հետ գործակցելու մտադրությունից։

Այդ բոլորից հետո Հերակլը 1764 թ. ամռանը, հարմար առիթ գտնելով, իր մոտ է կանչում էմինին և առաջարկում հեռանալ Թիֆլիսից։ Էմինը ստիպված ուղևորվում է դեպի Ռուսաստան, բայց ճանապարհին հիվանդանում և մնում է կովկասյան լեռնաբնակ ցեղերի մոտ։

Խամսայի մելիքությունները և Էմինը

Խամսայի մելիքությունները դուրս չէին մնացել էմինի ուշադրությունից։ Թիֆլիսում եղած ժամանակ նա Ղարաբաղի մելիքներին գրած իր նամակներում հորդորում և ոգևորում էր՝ իրենց նախորդների նման պայքարի ելնել հայրենիքի ազատության համար։ Եվ այժմ, երբ նա անհաջողության էր հանդիպել վրաց արքունիքում, հույսը դրեց Ղարաբաղի մելիքների վրա։

Խամսայի մելիքություններում XVIII դ. երկրորդ կեսին տեղի էին ունեցել նոր իրադարձություններ։ Ղարաբաղի դաշտային մասում դեռևս նույն դարի 40-ական թթ. Փանահ խանի գլխավորությամբ կազմակերպվեց նոր իշխանություն, որն անվանվեց Ղարաբաղի խանություն։ Այն սկզբից ևեթ նվաճողական ձգտումներ հանդես բերեց հայկական մելիքությունների նկատմամբ։ Սակայն այդ ձգտումների իրականացման փորձերը հանդիպում էին հայ մելիքների միացյալ դիմադրությանը և խափանվում։ Բայց շատ չանցած երկպառակություն է ծագում մելիքությունների միջև, որից օգտվում է Փանահ խանը, կոտրում նրանց դիմադրությունը և տիրանում նրանց հողերի մի մասին։ Պառակտման պատճառ եղավ այն, որ Վարանդայի Մելիք Հովսեփին սպանեց նրա եղբայր Շահնազարը և իրեն հռչակեց Վարանդայի մելիք։ Նրա դեմ դուրս եկան մյուս մելիքները և հարձակվեցին Ավետարանոց գյուղում գտնվող նրա ամրոցի վրա։

Մելիք Շահնազարն իր իշխանությունը պահպանելու համար դիմեց Փանահ խանի օգնությանը։ Վերջինս օգտագործեց այդ միջադեպը և ամբողջությամբ իրեն ենթարկելով Վարանդայի մելիքությունը, հարձակվեց Խաչենի մելիքության վրա, այն խլեց Հասան-Ջալալյաններից և տվեց իր զորմնակից Միրզախանին։ Այսպիսով, Փանահ խանը չլատեց մելիքությունների ուժերը, Դիզակը կտրեց Ջրաբերդից ու Գյուլիստանից և երկարատև պայքարից հետո վերջին երկու մելիքությունների ղեկավարներին ստիպեց հեռանալ Ղարաբաղից։ Այդ նույն ժամանակ Փանահ խանը մելիք Շահնազարի խորհրդով Վարանդայի Շուշի գյուղի մոտ կառուցեց մի ամուր բերդ և ամրացավ այնտեղ։

Ղարաբաղի խաների և հայ մելիքների միջև մղված պայքարի հետևանքով Գյուլիստանի Մելիք Հովսեփը և Ջրաբերդի Մելիք Հաթամը հեռացել էին Ղարաբաղից։ Նրանք Հերակլ II-ի միջնորդությամբ Գանձակի խանից, որը բարեկամ էր վրաց թագավորին և թշնամի՝ Ղարաբաղի խանին, Շամխորի շրջանում փոքրիկ կալվածքներ են ստանում և իրենց ջոկատներով բնակություն հաստատում այնտեղ։ Նրանք հույս ունեին մի օր նորից վերադառնալ հայրենիք և վերականգնել իրենց իշխանությունը։

Այսպիսի վիճակում էին Ղարաբաղի հայ մելիքությունները, երբ 1766 թ. վերջերին Հովսեփ Էմինը եկավ Գեղարքունի՝ Մելիք Հովսեփի մոտ։ Վերջինս սիրով ընդունեց Էմինին։ Բայց ո՞չ Մելիք Հովսեփը, ո՞չ էլ մյուս մելիքների ուժերն այլևս այն չէին, որ նեցուկ դառնային ազատագրական պայքարի ծավալմանը և հայրենիքի ազատագրմանը։ Էմինը հանդիպումներ ունեցավ նաև Գանձասարի կաթողիկոսի և մյուս մելիքներից մի քանիսի հետ։

Այդ հանդիպումները Էմինին բերեցին այն եզրակացության, որ մելիքները չեն կարող հենարան լինել իր գործին, և նա որոշեց հեռանալ Հայաստանից, դարձյալ ուղղություն վերցնելով դեպի Ռուսաստան։ Սակայն ճանապարհին, Շամախու մոտերքում, նրան են հասցնում իր ծանոթներից մեկի նամակը, որով նա տեղեկացնում էր Էմինին, թե Հերակլը զղջացել է իր արարմունքի համար և այժմ ուզում է, որ Էմինը վերադառնա Թիֆլիս։

Էմինը փոխեց Ռուսաստան մեկնելու իր մտադրությունը և ուղևորվեց Վրաստան։ 1767 թ. նա նորից Հերակլի մոտ էր։ Սա առաջվա նման սիրով ընդունեց Էմինին, քանի որ Վրաստանին սպառնում էր թուրքական ներխուժումը, իսկ Հերակլը ցանկանում էր օգտագործել Էմինի ռազմական գիտելիքներն ու հմտությունը օսմանյան զորքերի դեմ պատերազմի դեպքում։ Էմինը իր հերթին

ոգևորվեց այն հույսով, թե հնարավոր կդառնա իր փայփայած նպատակի իրականացումը։ Բայց թուրքական ներխուժում Վրաստան տեղի չունեցավ և Հերակլը նորից սառը վերաբերմունք հանդես բերեց Էմինի ծրագրի իրագործման նկատմամբ։ Սա նորից հուսախաբ լինելով 1768 թ. հեռացավ Վրաստանից և մեկնեց Հնդկաստան։

Էմինի գործունեությունը զգալի չափով նպաստեց ազատագրական գաղափարի տարածմանը և այդ շարժման նոր օջախների ստեղծմանը։ Ռուսաստանում ապրող հայ գործիչներ Հովհաննես Լազարյանի և Հովսեփ Արղությանի հետ նրա ունեցած կապերը խրթան հանդիսացան այնտեղ ևս հայ ազատագրական շարժման նոր օջախ ստեղծելու և ակտիվ կերպով Հայաստանի ազատագրության հարցը առաջ քաշելու գործին։ Նրա գործունեությունը, Մշո Հովնանի հետ ունեցած կապերը աշխուժացրին ազատագրական շարժումը Արևմտյան Հայաստանում, առանձնապես Մշո և նրա հարևան շրջաններում։ Էմինը նոր աստիճանի բարձրացրեց հայ ազատագրական շարժումը XVIII դ. երկրորդ կեսին։ Նա այդ շարժման պատմության մեջ մտավ որպես իր հայրենիքի ազատագրության անխոնջ մարտիկ ու լուսավորիչ։

Մադրասի խմբակը և նրա գործունեությունը

Այն ժամանակ, երբ Էմինը գործում էր Անդրբիովկասում, Հնդկաստանի Մադրաս քաղաքի հայկական գաղութում կազմակերպվում է մի խմբակ, որը նույնպես նպատակ էր դնում պայքարելու Հայաստանի ազատագրության և հայկական պետականության վերականգնման համար։ Խմբակի ղեկավար կորիզը կազմում էին հարուստ ակնավաճառ Շահամիր Շահամիրյանը, դարաբաղցի քահանա Մովսես Բաղրամյանը, որ մի քանի տարի ընկերակցել էր Հովսեփ Էմինին և եղել նրա գաղափարակիցը, հարուստ առևտրական Գրիգոր Խոջաջանյանը, Հակոբ Շահամիրյանը՝ Շահամիր Շահամիրյանի որդին։ 1773 թ. Մադրաս է գալիս նաև Հովսեփ Էմինը և ակտիվ մասնակցություն ունենում խմբակի աշխատանքներին։

Մադրասի խմբակը, որին գլխավորում էր Շահամիր Շահամիրյանը, թեև որդեգրեց Էմինի ազատագրական գաղափարները ու ծրագրերը, բայց նա իր նպատակին հասնելու համար ընտրեց այլ ուղի։ Այդ ուղին ազատագրական պայքարի գրավոր պրոպագանդումն էր։ Խմբակի նախաձեռնությամբ 1772 թ. Մադրասում ստեղծվեց հայկական տպարան, որտեղ հրատարակվում էին ազատագրական պայքարին նվիրված գրքեր և տարածվում հայ բնակչու-

թյան մեջ։ Օրինակ՝ այդտեղ հրատարակված «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» և «Որոգայթ փառաց» գրքերն ուղարկվել են էջմիածին՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսին, Ղարաբաղի մելիքներին, Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին և այլոց։

Բացի հրատարակված գրքերի առաքումից, Շահամիրյանը նամակներ էր գրում էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսներին, վրաց Հերակլ թագավորին, Խամսայի մելիքներին։ Այդ նամակներում նա շարադրում էր Մադրասի խմբակի ծրագիրը Հայաստանի ազատագրության մասին։ Այդ ծրագիրը բովանդակում էր հետևյալ հիմնական դրույթները.

ա) Բացել դպրոցներ, ժողովրդի մեջ տարածել լուսավորություն, երիտասարդությանը դաստիարակել ազատասիրության ու հայրենասիրության գաղափարներով, նրան ուսուցանել իր ժողովրդի պատմությունը։

բ) Զինել ժողովրդին, երիտասարդությանը սովորեցնել ռազմական գործը, նրան նախապատրաստել օտար տիրապետողների դեմ զինված ապստամբության համար։

գ) Ապստամբության նախապատրաստման և կազմակերպման համար Խամսայի մելիքների մոտ ստեղծել մի մարմին՝ կազմված Հայաստանի տարբեր շրջանների ներկայացուցիչներից։

դ) Հայաստանի ազատագրության գործը ֆինանսավորելու նպատակով քահանայի մոտ խոստովանության գնացող յուրաքանչյուր մարդ ապստամբության համար պետք է տար այնքան, որքան կարող էր։ Այդ գումարը քահանան պետք է մուծեր ընդհանուր դանձարկղ։

ե) Ապստամբության հաղթանակն ապահովելու համար հայերը պետք է համագործակցեն վրացիների հետ՝ օտար իշխանների դեմ մղվող պայքարում և ձեռք բերեն ռուսական պետության հովանավորությունն ու օժանդակությունը։

զ) Ազատագրվելուց հետո ամբողջ Հայաստանում պետք է ստեղծվեր համահայկական անկախ և ինքնուրույն պետություն՝ հանրապետական և բուրժուական կարգերով։

Մադրասի խմբակի գործունեությունը և նրա առաջադրած պահանջները զգալի տարբերություն ունեին ազատագրական շարժման նախորդ շրջանի համեմատությամբ։ Այստեղ առաջնահերթ խնդիր էր համարվում ժողովրդին լուսավորելու, դպրոցներ բացելու և երիտասարդությանը ազատասիրության ոգով դաստիարակելու հարցը։ Շահամիրյանը, Էմինը և Բաղրամյանը հանդես էին գալիս ոչ միայն որպես ազատագրական շարժման անխոնջ գործիչներ, այլև որպես

լուսավորիչներ։ Խմբակի կողմից առաջ էր քաշված ամբողջ Հայաստանն ազատագրելու և հայկական միասնական ինքնուրույն պետություն ստեղծելու գաղափարը։

Մադրասի խմբակը Հայաստանի ազատագրումը համարում էր իրենց՝ հայերի գործը։ Այդ միտքը ցայտուն կերպով արտահայտված էր «Նոր տետրակ»-ի մեջ. հեղինակը դիմում էր հայ երիտասարդներին հետևյալ խոսքերով. «ապա ում երբեք լինի փոյթ առ այս՝ որ մենք վասն մեր ոչ ջանամք։ Ուստի անընդհատ մինչև այնքան նըկըրտիլով՝ և ջանալով զուն գործել պարտիմք մինչ զի զերծուցեալ զմեզ սատարաւ»։

Մադրասի խմբակի ծրագրի կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ սոցիալական բարեփոխությունների՝ ֆեոդալական հարաբերությունների վերացման և պետական դեմոկրատական կարգերի ստեղծման գաղափարն էր։ Որքանով էլ գա այն ժամանակվա Հայաստանի համար երազանք լիներ, այնուամենայնիվ, նախորդ շրջանի համեմատությամբ, ազատագրական շարժումը մի նոր աստիճանի վրա էր բարձրացնում։ Ի վերջո, այդ ժամանակ հայ բուրժուականացող առևտրականությունն ազատագրական շարժման մեջ ավելի ակտիվ դեր սկսեց խաղալ, քան առաջ, հանդես եկավ իր ծրագրով ու ձգտումներով։

Հայ ազատագրական շարժումը XVIII դ. երկրորդ կեսին ունեցավ նաև իր հակառակորդները, որոնց մեջ առավել աչքի էր ընկնում էջմիածնի կաթողիկոս Սիմեոն Երևանցին։ Նա գտնում էր, որ հայերը չպետք է դիմվեն և ապստամբեն պարսկական և թուրքական բռնակալության դեմ, այլ պետք է հնազանդությամբ սպասեն մինչև մի ուժեղ քրիստոնյա պետություն գա և իրենց ազատի։

Նա դեմ դուրս եկավ էմինի գործունեությանը, անկուր հալածանք սկսեց Հովնանի դեմ, իսկ երբ ստացավ Մադրասի խմբակի հրատարակած գրքերը՝ հանդես եկավ նաև այդ խմբակի ազատագրական գաղափարների ու գործունեության դեմ։ Նա Մովսես Բաղրամյանին հալածանքի ենթարկեց, Շահամիրյանից պահանջեց ոչնչացնել հրատարակված գրքերը և առանց իր թույլտվության գրքեր չհրատարակել և փակել տպարանը։

Հայ ազատագրական շարժման նկատմամբ Ամենայն հայոց կաթողիկոսության բռնած թշնամական դիրքը խիստ բացասաբար էր անդրադառնում այդ շարժումը տարածելու և ժողովրդին իր ազատագրության համար ակտիվ պայքարի հանելու գործի վրա։

9. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻՈՒՄ

Դրությունն Անդրկովկասում և Ռուսաստանի

XVIII դ. վերջին քառորդում անդրկովկասյան խանությունների վրա պարսկական կենտրոնական իշխանության հսկողությունը խիստ թուլացել էր։ Այդ խանություններից մի քանիսը համարյա ինքնավար իշխանությունների կերպարանք էին ստացել։ Դրանց մեջ առավել աչքի ընկնողը Ղարաբաղի խանությունն էր։ Այն ավելի էր ընդարձակվել ու հզորացել։ Իբրահիմ խանն իրեն էր ենթարկել Խամսայի մելիքներին, փորձում էր ծունկի բերել Գանձակի խանին և նրան դարձնել իր վասալը, բայց հանդիպում էր մյուս խաների և վրաց Հերակլ թագավորի դիմադրությանը։ Հերակլը փաստորեն իրենից վասալական կախման մեջ էր դրել Գանձակի և Երևանի խաներին, Երևանի խանին ստիպելով հարկ վճարել։ Ինքնավար դարձած այդ իշխանությունները անընդհատ պայքարի մեջ էին իրար հետ։ Իսկ դա ծանր էր անդրադառնում անդրկովկասյան ժողովուրդների, առանձնապես հայ ժողովրդի վրա։

Նույն դարի 80-ական թթ. Անդրկովկասին լուրջ վտանգ էր ըստպառնում նաև Թուրքիան։ Օսմանյան սուլթանությունը ձգտում էր իր իշխանությունը տարածել այդ երկրամասի վրա։ 1783 թ. երբ Վրաստանի և Ռուսաստանի փոխհարաբերությունն ավելի սերտ և բարեկամական բնույթ ստացավ, օսմանյան պետությունը լուրջ միջոցառումների դիմեց Անդրկովկասի խաներին Վրաստանի և Ռուսաստանի դեմ հանելու, նրանց ռուսական կողմնորոշումից հեռու պահելու համար։

Էրզրումի, Կարսի և սահմանամերձ այլ շրջանների փաշաները սպասվիրակներ էին ուղարկում Երևանի Ղուլամ Ալի խանի մոտ, որպեսզի նրան համոզեն միանալու թուրքերին ընդդեմ Վրաստանի։ Իսկ Ղուլամ Ալի խանի մահից հետո (1784) օսմանյան սուլթանը Երևանի նոր խանին՝ Մահմեդին հատուկ ուղերձ ուղարկեց և առաջարկեց միանալ իրեն, իրենց կողմը գրավել մյուս խաներին և դուրս գալ Վրաստանի ու Ռուսաստանի դեմ՝ Անդրկովկասը Ռուսաստանի ազդեցությունից հեռու պահելու համար։

Ռուսաստանն իր հերթին նույնպես ուղիներ էր որոնում Անդրկովկասը գրավելու համար։ Եկատերինա II-ը ձգտում էր Ռուսաստանին միացնել Սև և Կասպից ծովերի առափնյա շրջանները։ Դեռևս ռուս-թուրքական առաջին պատերազմի ժամանակ (1768—1774)

ռուսական զորքերի մի չոկատ եկավ Վրաստան՝ Հերակլի զորքերի հետ միասին Թուրքիայի դեմ պատերազմական գործողություններ սկսելու համար։ Ռուսական պետության սահմանը ավելի մոտեցավ Անդրկովկասին, երբ Ռուսաստանին անցան Կուբանի մի մասը և Կովկասյան լեռնաշղթայից դեպի հյուսիս ընկած շրջանները։

1783 թ. վրաց Հերակլ թագավորը դիմեց ռուսական պետությանը՝ Վրաստանը իր հովանավորության տակ վերցնելու և Թուրքիայի հնարավոր հարձակումների դեպքում Վրաստանին ռազմական օգնություն ցույց տալու համար։ Այդ թվականին Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցում Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքվեց պայմանագիր, որի համաձայն Վրաստանն ընդունեց ռուսական պետության հովանավորությունը և պարտավորություն ստանձնեց պատերազմի դեպքում Ռուսաստանի հետ միասին դուրս գալ Թուրքիայի դեմ, իսկ ռուսական պետությունը հանձն առավ Վրաստանը պաշտպանել թուրքական և պարսկական հարձակումներից, և զորքեր ուղարկեց Վրաստան։

Գեորգիևսկի դաշնագիրը, ռուսական զորագնդի ժամանումը Անդրկովկաս և ռուս-թուրքական հարաբերությունների սրվելը մեծ հույսեր էին ներշնչում նաև հայերին։ Այս անգամ ազատագրական շարժումը լայն թափ ստացավ նաև Ռուսաստանում եղած հայկական գաղթավայրերում, որտեղ ասպարեզ ելան Հայաստանի ազատագրության գաղափարով տոգորված նոր գործիչներ։

Մովսես Սարաֆյանի ազատագրական ծրագիրը

Ռուսաստանում (առավելապես Հյուսիսային Կովկասում) եղած հայկական գաղութները XVIII դ. երկրորդ կեսին ավելի բազմամարդ էին դարձել և սկսել էին հանդես բերել կուլտուրական ու քաղաքական աշխույժ գործունեություն։ Առանձնապես աչքի էին ընկնում Աստրախանի, Կզլարի և այլ վայրերի հայկական գաղութները։ Այդտեղի հայ բնակչությունն ավելի ստվարացավ և գաղթավայրերի գործունեությունն ավելի մեծ թափ ստացավ, երբ 1778—1779 թթ. ռուսական կառավարությունը Ղրիմից տեղահան արեց մեծ թվով հայերի և վերաբնակեցրեց Դոնի Ռոստովում ու նրա շրջակայքում, հիմնեց Նոր-Նախիջևանի հայկական գաղութը։ Այդ գաղթավայրերն էին գնում ու բնակություն հաստատում բազմաթիվ հայեր, այդ թվում նաև Պարսկաստանից և Անդրկովկասից եկած հարուստ առևտրականներ։

Հայերն այնքան էին աճել ռուսական պետության ենթակա վայրերում և նրանց կուլտուրական ու կրոնական կյանքի տնօրինումն այնպիսի կարևորություն էր ստացել, որ Ամենայն հայոց կա-

Թողիկոս Սիմեոն Երևանցին հատուկ դիմում դրեց և պատվիրակություն ուղարկեց Եկատերինա II կայսրուհու մոտ, նրան խնդրելով թույլ տալ Ռուսաստանում ապրող հայերի համար կազմակերպել առանձին թեմ։ Կայսրուհին ընդառաջեց հայոց կաթողիկոսի խնդրանքին։ 1768 թ. նա հատուկ հրովարտակով թույլատրեց կազմակերպել այդ թեմը, որն ամբողջությամբ պետք է ենթարկվեր էջմիածնի կաթողիկոսին։ Սիմեոն Երևանցին այդ թեմի առաջնորդ նշանակեց Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին՝ Լոռիի համանուն ֆեոդալական տան անդամներից մեկին։ Հայկական եկեղեցական թեմի ստեղծումը նոր խթան հանդիսացավ Ռուսաստանի հայերի կուլտուրական և քաղաքական գործունեության համար։

1769 թ. Աստրախանի բնակիչ, մետաքսագործությամբ զբաղվող Մովսես Սարաֆյանը, Հովհաննես Լազարյանի, Գրիգոր Կամպանյանի և Պետերբուրգում ապրող այլ անվանի հայերի գիտությամբ, բայց իր անունից, Եկատերինա II-ին ներկայացրեց մի ծրագիր՝ բաղկացած ներածությունից և տասնչորս հոդվածից այն մասին, թե ինչպես Ռուսաստանի օգնությամբ ազատագրել Հայաստանը և վերականգնել հայկական պետականությունը։

Մովսես Սարաֆյանը Արարատյան դաշտի ծնունդ էր, առևտրական գործերով երկար ժամանակ եղել էր Թուրքիայում և Պարսկաստանում, ծանոթ էր այդ երկրներում տիրող դրությանը և հայ ժողովրդի ծանր վիճակին, իսկ հետո գնացել էր Աստրախան և զբաղվում էր մետաքսի մշակությամբ։

Սարաֆյանի ծրագիրն ուներ հետևյալ բովանդակությունը.

ա) Վրաց երկու թագավորությունների հետ միասին պատերազմ սկսել Թուրքիայի դեմ՝ Վրաստան ուղարկելով ռուսական մի էքսպեդիցիոն կորպուս։ բ) Ռուսաստանում եղած հայերից, հայ հրամանատարի գլխավորությամբ, կազմակերպել կամավորական ջոկատներ։ Պատերազմական գործողությունների ընթացքում այդպիսի ջոկատներ կազմակերպել Արևելյան և Արևմտյան Հայաստանի հայերից, ներգրավելով նաև Ղարաբաղի մելիքների ուժերը, նրանց մատակարարել զենք, հանդերձանք և նյութական միջոցներ։ գ) Ամբողջ Հայաստանն ազատագրելուց հետո միավորել այն, կազմակերպել հայկական պետություն Ռուսաստանի հովանավորության ներքո և հայերից մեկին ճանաչել որպես հայոց թագավոր։ դ) Հայոց թագավորությունը պարտավոր էր անհրաժեշտության դեպքում Ռուսաստանին տրամադրել ռազմական ուժ և այլ միջոցներ, իսկ ռուսական պետությունը պետք է հովանավորեր նրան ուրիշ պետությունների հարձակումների դեպքում։

Սարաֆյանի ծրագրի համաձայն Թուրքիայի դեմ ռազմական գործողություններ սկսելուց առաջ ռուսական զորքերը պետք է գրավեին Երևանը կամ, այլ կերպ ասած, Արևելյան Հայաստանը։ Դրանից հետո ռուսական և վրացական զորքերը հայկական շրջանների հետ միասին պետք է տարբեր ուղղություններով առաջ շարժվեին դեպի Արևմտյան Հայաստան, գրավեին Կարսը, Վանը և հաջողության դեպքում շարունակեին իրենց առաջխաղացումը։ Պատերազմական ծախսերը հոգալու համար Սարաֆյանն առաջարկում էր կոնտրիբուցիա դնել Հայաստանում ապրող Թուրքերի վրա, անհրաժեշտության դեպքում այն հավաքել նաև հայերից, նույնիսկ հայկական եկեղեցիներից վերցնել նրանց ունեցած թանկարժեք ըստ սահմանին ու այլ իրեր։

Սարաֆյանի ծրագիրը արտահայտում էր Ռուսաստանի հայկական գաղթավայրերի բնակչության հայրենասիրական իղձերը, բայց այն միաժամանակ արտահայտում էր համարյա ամբողջ հայ ժողովրդի քաղաքական ձգտումները։ Հակոբ կաթողիկոս Շամախեցին դեռևս 1760 թ. դիմում է գրում ռուսական ցարին և խնդրում, որ նա իր հովանավորության տակ վերցնի հայ և վրաց ժողովուրդներին։ Մի քանի տարի հետո, 1768 թ., նույնպիսի դիմումով Եկատերինա կայսրուհուն դիմեց նաև Սիմեոն Երևանցին։ Կայսրուհին խոստացավ հայերին վերցնել իր հովանավորության տակ։ Ռուսաստանի օգնությամբ պարսկական և Թուրքական տիրակալությունից ազատագրվելու ձգտումն ավելի ցայտուն է դրսևորված ռուսական կառավարությանն ուղղված Երևանի, Սյունիքի և այլ վայրերում ապրող հայերի դիմումներում։

Հայ-ռուսական բանակցությունները XVIII դ. 80-ական թվականներին

XVIII դ. վերջին քառորդում Ռուսաստանը նախապատրաստվում էր արշավանք սկսել դեպի Անդրկովկաս և Կասպիականի ափերը։ Այդ գործը հանձնարարվել էր ռուս տաղանդավոր զորավար Սուվորովին։ Նա դեպի Կովկաս շարժվելուց առաջ, Եկատերինա II-ի և իշխան Գրիգորի Պոտյոմկինի հանձնարարությամբ, Հայաստանին վերաբերող հարցերը քննելու համար մի խորհրդակցություն է գումարում, որին մասնակցելու համար հրավիրվում են Հովհաննես Լազարյանը, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և Հովսեփ Էմինը։ Վերջինս այդ ժամանակ գտնվում էր Նոր-Ջուղայում և ի վիճակի չէր ներկա լինելու խորհրդակցությանը, թեև Արղությանը այդ մասին նրան նամակ էր գրել։

Խորհրդակցությունը տեղի ունեցավ Պետերբուրգում 1780 թ.

հունվարին։ Այնտեղ արծարծվել են Հայաստանին ու հայերին վերաբերող մի շարք հարցեր և խոսք է եղել հայկական պետության վերականգնման հնարավորության մասին։ Խորհրդակցությունը նպատակ է ունեցել խրախուսել հայերին, նրանց մասնակից դարձնել դեպի Անդրկովկաս կատարվող ռուսական զորքերի արշավանքին և ապահովել նրանց օժանդակությունը արշավող բանակին։ Այդ կարևոր հարցերը պարզաբանելու համար անհրաժեշտ է եղել, որ Լազարյանն ու Արղությանը մի քանի անգամ հանդիպումներ ունենան իշխան Պոտյոմկինի և գեներալ Սուվորովի հետ։ Վերջինիս հետ տեղի ունեցած զրույցներից մեկի մասին Արղությանը գրել է. «...Մեր թախանձելն նորոգել ի մեզ զմասնաւոր տերութիւն մի մեծն Հայաստան ի քաղաք Երևան. պատասխանեց թե կարելի է...»։

Գեներալ Սուվորովը Հյուսիսային Կովկաս դալուց հետո կապ հաստատեց Ղարաբաղի հայ մելիքների հետ, որոնք նորից ոգեվորվում են ազատագրական գաղափարներով ու հույսերով։ Սուվորովին հաջորդած կովկասյան զորքերի հրամանատար գեներալ Պավել Պոտյոմկինը իշխան Գ. Պոտյոմկինի հանձնարարությամբ նամակներ է ուղարկում Ղարաբաղի մելիքներին և Ղուկաս կաթողիկոսին՝ հայտնելով նրանց ռուսական զորքերի առաջիկայում կատարվելիք արշավանքի մասին և հուսադրում, որ այդ արշավանքը կօգնի հայերին ազատագրվելու թուրք-պարսկական տիրակալությունից։

Այդ ժամանակ Ղարաբաղի մելիքները նոր մարդիկ էին։ Գյուլիստանում մելիքությունն իր ձեռքն էր վերցրել Մելիք Արովը, Ջրաբերդում՝ Մելիք Մեջլումը, Դիզակում՝ Մելիք Բախտամը։ Սրանք նույնպես, իրենց նախորդների նման, մաքառում էին Իբրահիմ խանի դեմ՝ իրենց իշխանությունը պահպանելու համար։ Սրանք մի քանի այլ մարդկանց հետ միասին 1783 թ. մարտին հավաքվեցին Գանձասարի վանքում՝ Հովհաննես կաթողիկոսի մոտ, և քննարկեցին Պոտյոմկինի նամակը։ Այդ ժողովը որոշեց ընդունել ռուսական հպատակությունը, խնդրել ռուսական պետությանը շտապցնելու իր զորքերի արշավանքը դեպի Անդրկովկաս և Հայաստան և Գանձասարի կաթողիկոս Հովհաննեսի, վեց եպիսկոպոսի ու վեց մելիքների ստորագրություններով գրություններ ուղարկվեց իշխան Պոտյոմկինին։ Վերջինս Գանձասարի ժողովի դիմումը ստանալուց հետո, շուտով, նույն թվականի ապրիլին, կարգադրում է գեներալ Պոտյոմկինին արշավանք սկսել դեպի Անդրկովկաս, պաշտոնանկ անել Իբրահիմ խանին և Ղարաբաղում կազմակերպել հայկական իշխանություն, որի գլուխ դնել մելիքներից մեկին։

Այդ նույն ժամանակ ռուսական պետությանը դիմումներ են

գրում նաև Երևանի հայերը։ Սրանք կապ են հաստատում ռուսաստան քարձրաստիճան պաշտոնյաների հետ և 1784 թ. երևանցի առևտրական Ստեփան Տեր-Սահակյանին ուղարկում են Ռուսաստան, նրան հանձնելով Եկատերինա II-ին գրած դիմումը։ Տեր-Սահակյանը Ռուսաստան դնալու ճանապարհին լինում է Աստրախանում, տեսակցում իշխան Պոտյոմկինի հետ և ապա ուղևորվում Պետերբուրգ։ Լազարյանն ու Արղությանը ռուսական կառավարությանը Ստեփան Տեր-Սահակյանին ներկայացնում են որպես Հայաստանի պատվիրակի։

Սակայն դեպի Անդրկովկաս արշավանք սկսելու մասին իշխան Պոտյոմկինի հրամանը չիրագործվեց։ Դրա պատճառներից մեկը Անդրկովկասում գտնվող պարսկական մի քանի խաների, հատկապես Ղարաբաղի Իբրահիմ խանի խորամանկ և երկիմաստ քաղաքականությունն էր։ 1783 թ., երբ Վրաստանի և Ռուսաստանի միջև կնքվում էր Գեորգիևսկի դաշնագիրը և որոշվում էր իշխանաղուրկ անել Իբրահիմ խանին, վերջինս պատվիրակություն ուղարկեց ռուսական հրամանատարության մոտ և հայտնեց, որ ընդունում է ռուսական հպատակությունը։ Ռուսաստանին հպատակություն են հայտնում նաև Խոյի և այլ վայրերի խաները։ 1784 թ. պարսկական գահին տիրելու հավակնություն ունեցող Ալի-Մուրադ խանը Ռուսաստանից աջակցություն ստանալու նպատակով բանակցություններ սկսեց Եկատերինա II-ի հետ և խոստացավ Ռուսաստանին դիջել Կասպից ծովի արևմտյան ափերը, Ղարաբաղը, Վարադաղը և Երևանի խանությունը։

Այդպիսի նպաստավոր առաջարկությունները գայթակղեցրին ցարական կառավարությանը, որը որոշեց դիվանագիտական, խաղաղ ճանապարհով տիրանալ այդ երկրամասին։ Բայց ապարդյուն։ Իբրահիմ խանը և մյուսները չանում էին ժամանակ շահել և մտադրություն չունեին ենթարկվելու Ռուսաստանին, իսկ Ալի-Մուրադ նոյն թվականին էլ մեռավ՝ առանց իր խոստումը կատարելու։

Հայ-ռուսական դաշնագրի երկու նախագիծ և ազատագրական շարժման երկու ուղղություն

Պարսկական և թուրքական տիրակալությունից Հայաստանի ազատագրման հարցը XVIII դ. 80-ական թթ. ավելի սերտորեն է կապվում Ռուսաստանի օգնության հետ։ Ռուսական պետությանն ուղղված Արևելյան Հայաստանի բնակչության հաճախակի դիմումները, Եկատերինա II-ի արքունիքի և նրա բարձրաստիճան պաշտոնյաների հետ Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի մոտիկ հարաբերությունները մեծ դեր խաղացին այդ գործում։

Երկրի ազատագրումը Ռուսաստանի հետ էին կապում նաև Մադրասի խմբակի ղեկավարները։ Շահամիր Շահամիրյանն իր որդուն՝ Եղիազարին ուղարկում է Պետերբուրգ՝ հայրենիքի ազատագրության հարցը ռուսական պետության առաջ բարձրացնելու համար։ Եղիազարը Պետերբուրգում «Նոր տետրակ»-ը թարգմանել է տալիս ռուսերեն և տարածում ռուսական քաղաքական գործիչների շրջանում։

Հայերը նույնիսկ փորձեցին կազմել Ռուսաստանի հետ կնքվելիք պայմանագրի նախագծեր և ներկայացնել Եկատերինա II-ին։

Այդպիսի նախագծեր նախապատրաստվեցին թե՛ Ռուսաստանում եղած հայկական գաղթավայրերում՝ Հովսեփ Արղությանի և Հովհաննես Լազարյանի ղեկավարությամբ, և թե՛ Մադրասի գաղութում՝ Շահամիրյանի ղեկավարությամբ։ Պետերբուրգի 1780 թ. խորհրդակցությունից հետո հրապարակ հանվեցին հայ-ռուսական դաշնագրի երկու նախագիծ։ Նախագծերից մեկը, որը գրականության մեջ հայտնի է «Հյուսիսային ծրագիր» անունով, կազմել է Հովսեփ Արղությանը, իսկ մյուսը, որն անվանվել է «Հարավային ծրագիր», մշակել է Շահամիր Շահամիրյանը։

Արղությանի առաջարկած նախագիծն ունի 18 հոդված, որոնց հիմնական բովանդակությունը հետևյալն է.

ա) Հայաստանն ազատագրելուց հետո ռուսական զորքերի մի մասը մնում է երկրում՝ պարսկական և օսմանյան հարձակումներից այն պաշտպանելու համար։

բ) Հայոց գահի թեկնածու առաջադրում է ցարը՝ կա՛մ հայերից, կա՛մ իր հավատարիմ մարդկանցից։ Նախագծում ակնարկված է իշխան Պոտյոմկինը, որին համարում էին Հայաստանի խնամակալ։

գ) Ով էլ որ լինի Հայաստանի թագավորը, երկիրը կառավարվելու է հայկական օրենքներով։

դ) Հայկական թագավորությունը գտնվելու է Ռուսաստանի հովանավորության ներքո և ռուսական պետությանը վճարելու է հարկ, իսկ պատերազմի ժամանակ օգնելու է զենքով։

ե) Հայաստանում պահպանվելու են ֆեոդալական հարաբերությունները։ Հայ ազնվականության մնացորդներն իրավունք ունեն նորից տիրանալ ընգարձակ կալվածքներին, իրենցից կախման մեջ դնելով գյուղացիներին։

Ապա մի շարք հոդվածներում խոսվում է ռուսական և հայկական պետությունների միջև հավիտենական բարեկամության պահպանման, առևտրական, կրոնա-դավանաբանական հարաբերու-

թյունների կարգավորման, հայկական պետական նշանների, մայրաքաղաքի և այլ հարցերի մասին։

Արդուբյանի առաջարկած նախագծի բովանդակությունից պարզ երևում է, որ Հայաստանի ազատագրումից հետո այնտեղ ստեղծվելու էր հայկական պետություն Ռուսաստանի գերիշխանության ներքո՝ միապետական կարգերով և ֆեոդալական հարաբերություններով։

Շահամիրյանի առաջարկած նախագիծն ունի 20 հոդված և առաջադրում է հետևյալը՝

ա) Հայաստանն ազատագրելուց հետո ռուսական զորքի մի մասը, շուրջ 6000 զինվոր, քսան տարով մնում է Հայաստանում՝ երկրի պաշտպանության համար։ Այդ ժամանակամիջոցում Հայաստանի ամրություններն ու բերդերը գտնվելու են ռուսական հրամանատարության տրամադրության տակ։ Հայաստանի կառավարությունը հատուցելու է այդ զորքերի ծախսը։

բ) Հայաստանի պետությունը ունենալու է պառլամենտական կառուցվածք և կոչվելու է «Հայոց տուն», որը երկիրը կառավարելու է հայկական օրենքներով և հրովարտակով կազմելու է Հայաստանի կառավարություն։ Նախագծում կառավարությունը անվանված է նախարարություն, որի անդամները և հատկապես նախագահը՝ նախարարը, լինելու են ազգով հայ և հայկական եկեղեցու դավանությամբ։

գ) «Հայոց տունը» ճանաչելու է Ռուսաստանին որպես իր ազատարարի, նրա հետ պահպանելու է մշտական բարեկամություն և, որպես հավատարմության նշան, տարեկան մեկ անգամ ռուսական ցարին ընծայելու է 20 մսխալ (մոտավորապես 84 գ) մաքուր ոսկի, երեք ձի և վեց խոյ։ Հայաստանը պարտավորվում է հարկ եղած դեպքում զորք տրամադրել Ռուսաստանին՝ նրա թշնամիների դեմ կռվելու համար։ Ռուսական կայսրությունը ճանաչելու է «Հայոց տունը» որպես Հայաստանի թագավորություն, որի դեսպանը՝ «Հայոց բիրանը», նստելու է Պետերբուրգում։ Իսկ եթե վիճելի հարց ծագի երկու պետությունների միջև ու նրանք խաղաղությամբ չկարողանան լուծել, ապա դիմում են երրորդ պետությանը, որի վճիռը պարտադիր է լինելու և՛ Հայաստանի, և՛ Ռուսաստանի համար։

Նախագծի մնացած հոդվածներում խոսվում է երկու պետությունների միջև մի շարք այլ հարցերի՝ առևտրի, պարտքերի վճարման, քրեական հանցագործ փախստականների, կրոնադավանաբանական խնդիրների կարգավորման մասին և այլն։

Այսպիսով, այդ նախագծում առաջադրված է հայկական ան-

կախ պետության ստեղծման, ֆեոդալական կարգերի վերացման և բուրժուական կարգերի հաստատման պահանջը։ Ընդ որում հայկական պետությունը պետք է ունենար հանրապետական բնույթ և դեմոկրատական կառուցվածք։ Այդ նախագծերի համեմատությունը ցույց է տալիս, որ XVIII դ. երկրորդ կեսին հայկական ազատագրական շարժման մեջ գոյություն է ունեցել երկու հոսանք՝ կղերա-ֆեոդալական, որի գլուխ կանգնած էր Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը, և բուրժուա-դեմոկրատական, որին ներկայացնում էր Մադրասի խմբակը՝ Շահամիր Շահամիրյանի և Հովսեփ Էմինի գլխավորությամբ։

Կղերա-ֆեոդալական ուղղությունը, արտահայտելով կալվածատերերի, հոգևորականների և Ռուսաստանի հայկական գաղթավայրերի հայ խոշոր առևտրականների տրամադրությունները, գտնում էր, որ Հայաստանում սոցիալական փոփոխություններ չը-պետք է կատարվեն, իսկ պետությունը պետք է ունենա ֆեոդալական-միապետական կառուցվածք և ենթակա լինի ցարական կառավարությանը։ Դրան հակառակ, բուրժուա-դեմոկրատական ուղղությունը, որ արտահայտում էր բուրժուականացող հայ առևտրականների, մտավորականների և դեմոկրատական այլ խավերի ձգտումներն ու իղձերը, ենթադրում էր ազատագրված Հայաստանում վերացնել հին՝ ֆեոդալական կարգերը, հաստատել դեմոկրատական կարգեր, տարածել լուսավորություն և ստեղծել անկախ պետություն։ Տվյալ ժամանակաշրջանում կղերա-ֆեոդալական հոսանքի առաջադրած նախագծի իրականացման համար ավելի ռեալ հիմքեր կային, քան բուրժուա-դեմոկրատական ուղղության նախագծի համար, թեև այն հագեցված էր դարի ամենաառաջադիմական գաղափարներով և պատմական խոշոր նշանակություն ուներ։

Երկու նախագծերն էլ ներկայացվել են ցարական կառավարությանը։ Ինչպես վկայում է Արղությանը՝ Շահամիրյանին գրած իր նամակում, հայերի այն խնդրանքին, որ Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվի դաշնագիր, ռուսական կառավարությունը պատասխանել է. «Թէ թագավորք ընդ թագաւորաց կարեն դնել դաշինս, ազգի ձերում ո՞վ է թագաւորն որ համարձակեցի զդաշն խընդրել», այսինքն՝ հայերը պետություն չունեն, հետևապես, նրանց հետ պայմանագիր չի կնքվի։ Այդպիսով, դաշնագրի երկու նախագծերը մնացին որպես արխիվային նյութ հայ-ռուսական բանակցությունների մասին։

Դրությունը Անդրկովկասում և ռուսական զորքերի արշավանքը

Անդրկովկասի քաղաքական վիճակը 1783 թ. հետո ավելի ծանրացավ։ Ռուսական հպատակության խոստում տված խանները դրժեցին իրենց խոսքը և փորձում էին ամրացնել իրենց դիրքերը։ Թուրքական կառավարությունը խանություններում ամեն կերպ հրահրում էր հակառուսական տրամադրություններ։

Թուրքիան Հերակլ II-ի դեմ հանեց ինչպես կովկասյան լեռնաբնակ ցեղերին, այնպես էլ խաներին։ Նրա գրդմամբ 1785 թ. Ավարայի Օմար խանը լեզգիներից և այլ ցեղերից կազմված բազմամարդ բանակով արշավեց Վրաստանի արևելյան շրջանների վրա և մինչև 1787 թ. թալանի ու ավերի ենթարկեց ինչպես այդ շրջանները, այնպես էլ Լոռին ու Երևանի խանության հյուսիս-արևմտյան մասերը՝ մինչև Աշտարակ ու Եղվարդ։

Օմար խանին օժանդակում էին նաև Ղարաբաղի ու Խոյի խանները։ Նրանց նպատակն էր՝ ծունկի բերել Հերակլ II-ին և ստիպել նրան հրաժարվելու Ռուսաստանի հետ դաշնակցելուց։ Ղարաբաղի Իբրահիմ խանը 1787 թ. այսինքն՝ Ռուսաստանին հպատակություն հայտնելուց չորս տարի հետո դիմում է օսմանյան սուլթանին, իր հպատակությունը հայտնում նրան և օգնություն խնդրում։

Օսմանյան սուլթանը խոստանում է օժանդակություն ցույց տալ, և Իբրահիմ խանը գործի է անցնում։ Նա Խոյի և Ավարայի խաների հետ միասին հարձակվում է Նախիջևանի և Գանձակի խանությունների վրա, տիրում նրանց և իր մարդկանց գնում իշխանության գլուխ։

Իբրահիմ խանը, օգտվելով ստեղծված իրադրությունից, սկսեց հաշվեհարդար տեսնել նաև Ղարաբաղի մելիքների և հայ բնակչության հետ։ Նա խաբեությամբ իր մոտ կանչեց մելիքներին ու Գանձասարի կաթողիկոսին և բանտարկեց Շուշիի բերդում։ Մելիքներից երկուսը 1787 թ. կարողացան փախչել բանտից և նորից պայքար սկսել Իբրահիմ խանի դեմ, իսկ կաթողիկոսն ու մյուս մելիքները սպանվեցին բանտում։ Դրանից հետո Իբրահիմ խանը ձեռնարկեց Ղարաբաղի հայ բնակչությանը այլ վայրեր տեղափոխելու կամ պարզապես ֆիզիկապես ոչնչացնելու գործը։

Այդպիսի վիճակ էր տիրում Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում, երբ Պարսկաստանում ներքին խռովությունների և գահակալական պայքարի ընթացքում հաղթանակ տարավ կաջարների ցեղին պատկանող Ագա-Մահմեդ խանը։ Նա անդրկովկասյան խաներից և Հերակլ II-ից պահանջում էր ընդունել իր գերիշխանու-

թյունը։ Նրանցից ոմանք առարկա ընդունեցին այդ պահանջը, իսկ Ղարաբաղի Իբրահիմ խանն ու վրաց Հերակլ թագավորը մերժեցին Աղա-Մահմեդ խանի պահանջը։ Հենց այդ էլ առիթ տվեց, որ Աղա-Մահմեդ խանը, 1794 թ. իրեն պարսից շահ հայտարարելուց հետո, արշավեր դեպի Անդրկովկաս։

Արշավանքն սկսվեց 1795 թ.։ Աղա-Մահմեդ խանի 50 հազարանոց բանակը շարժվեց դեպի Ղարաբաղ, Երևան և Շամախի։ Պարսից զորքերի այն մասը, որ Արարատյան դաշտն էր մտել, պաշարեց Երևանը. 30 օրից հետո քաղաքն ու բերդը անձնատուր եղան՝ առանց լուրջ պատերազմական գործողությունների։ Աղա-Մահմեդ խանը 1795 թ. ամբողջ ամառը զբաղված էր Շուշիի բերդի պաշարմամբ, բայց չկարողացավ գրավել այն և որոշեց արշավել Թիֆլիս։ Վրաստանն անպատրաստ էր դիմադրելու պարսից զորքին։ Հերակլը իր զորքերի մի մասը նույնիսկ քաղաքից հանել և ուղարկել էր ուրիշ տեղ, իսկ ռուսական գումարտակը, որ Գեորգիևսկի դաշնագրությամբ Վրաստան էր եկել, վաղուց էր հեռացել Թիֆլիսից։

Աղա-Մահմեդ խանի զորքերը, հաղթահարելով վրացական բանակի թույլ դիմադրությունը, նույն թվականի սեպտեմբերին գրավեցին Թիֆլիսը, կողոպտեցին հարուստ քաղաքը և բազմաթիվ գերիներով հեռացան այնտեղից։

Պարսից շահի հաջողություններից հետո ամրապնդում Պարսկաստանի գերիշխանությունը Անդրկովկասի վրա, իսկ դա ձեռնտու չէր ոչ անդրկովկասյան ժողովուրդներին և ոչ էլ ռուսական պետությանը։ Այդ պատճառով Ռուսաստանը որոշեց նոր արշավանք ձեռնարկել դեպի Անդրկովկաս՝ կանխելու պարսկական գերիշխանության հաստատումն այնտեղ։

Նախքան արշավանք սկսելը ռուսական հրամանատարությունը 2000 հոգուց բաղկացած մի ջոկատ ուղարկեց Վրաստան՝ Հերակլին օգնելու համար, իսկ հաջորդ՝ 1796 թ. գարնանը արշավանք սկսեց դեպի Անդրկովկաս։ Արշավանքը գլխավորում էր կոմս Պլատոն Զուբովը։ Նրա բանակը հաջողությամբ վերցրեց Դերբենդը և առանց դիմադրության հանդիպելու առաջ շարժվեց դեպի Հարավ։ Ղուբայի, Բաքվի և մյուս տեղերի խաները շտապեցին իրենց հրապատակությունը հայտնել Ռուսաստանին, իսկ Աղա-Մահմեդ խանը իր բանակով այդ ժամանակ մեկնել էր Պարսկաստան՝ Խորասանում ծագած ապստամբություն ճնշելու համար։

Ռուսական զորքերը նույն թվականի դեկտեմբերին մտան Դանձակ, որի խանը առանց դիմադրության անձնատուր եղավ։

Կոմս Զուբովի բանակի հետ միասին Անդրկովկաս էր գալիս Հովսեփ Արղությանը։ Սա փայփայում էր այն հույսը, թե այս անգամ արդեն կիրականանա, դոնե, Արևելյան Հայաստանի ազատագրումը և կվերականգնվի հայկական պետությունը, բայց այդպես չեղավ։ 1796 թվականի նոյեմբերին մահացավ Եկատերինա II-ը և գահ բարձրացավ նրա որդի Պավել I-ը։ Նա իր համախոհների հետ միասին, որոնք չէին հետևում Եկատերինա II-ի արտաքին քաղաքականությանը, հրամայեց դադարեցնել ռուսական զորքերի առաջխաղացումը և ետ վերադառնալ Հյուսիսային Կովկաս։ Հայերի իղձը՝ օգտագործել այդ արշավանքը և ազատագրվել պարսկական և թուրքական լծից, դարձյալ անկատար մնաց։

Ռուսական բանակը հազիվ էր հեռացել Անդրկովկասից, երբ 1797 թ. գարնանը Աղա-Մահմեդ խանը մի նոր արշավանք կազմակերպեց դեպի Անդրկովկաս։ Նրա զորքերը անցան Արաքսը, մտան Սյունիք, գրավեցին Շուշիի բերդը, որի խանը՝ Իբրահիմը, այս անգամ փախել էր այնտեղից, և փաստորեն վերականգնեցին պարսկական կենտրոնական իշխանության տիրակալությունը Անդրկովկասյան խանությունների վրա։ Թեև շահի բռնություններն ու դաժանությունները իր դեմ հանեցին նույնիսկ նրա մոտիկ և հավատարիմ մարդկանց, որոնց ձեռքով էլ նա սպանվեց նույն թվականի մայիսին՝ Շուշվա բերդում, այնուամենայնիվ, Անդրկովկասի վիճակը շարունակեց մնալ անփոփոխ մինչև XIX դ. ընկիզբը, երբ Ռուսաստանը վճռականորեն ձեռնամուխ եղավ այդ երկրամասը իրեն միացնելու գործին։

ԳԼՈՒԽ XXXIV

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XV—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԴՊՐՈՑՆԵՐԸ, ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՏՈՒԼԸ

Դպրոցները

XV—XVI դդ. Թուրքմենական ցեղերի տիրակալությունը և պարսկա-օսմանյան պատերազմները աննպաստ դրություն ստեղծեցին հայկական մշակույթի զարգացման համար բուն երկրում։ Այդ բանն առանձնապես ծանրը անդրադարձավ դպրոցական կյանքի վրա։ Նախորդ դարերում հռչակ ձեռք բերած դպրոցներից համարյա ոչ մեկը, սկսած XV դ. երկրորդ քառորդից, այլևս չէր գործում։

XVII դ. սոսաջին կեսից սկսած ժողովուրդը նորից ձեռնամուխ եղավ դպրոցների բացման գործին։ Բազեշ քաղաքի Ամրդոլու վանքի նշանավոր դպրոցը XVII դ. սկզբից, Առաքել Դավրիժեցու վկայությամբ, նորից վերակենդանացավ և բեղմնավոր գործունեություն ծավալեց։ Նույն դարի երկրորդ կեսին դպրոցի հռչակն ավելի էլ տարածվում. շատ երիտասարդներ գալիս են այնտեղ սովորելու և կատարելագործվելու «արտաքին դիտությունների» մեջ։

XVII դ. սոսաջին քառորդում Տաթևի մոտ, Որոտան գետի ձորում, բացվում է Սյունյաց Մեծ անապատի դպրոցը։ 1610 թ. այստեղ են գալիս Սարգիս Եպիսկոպոսը և Կիրակոս Տրապիզոնցին։ Սրանք համախմբելով երիտասարդներին ուսուցանում են տարրական գրագիտություն։ Շուտով Ամրդոլուի դպրոցից այստեղ է գալիս Ներսես Մոկացին, որի շուրջն են համախմբվում մի քանի երիտասարդներ. սրանք ուսումնասիրում են հայ և հույն փիլիսոփաների գրվածքները։

Մեծ անապատի դպրոցի սաներից մի քանիսի ջանքերով դպրոցի

բոցներ են բացվում նաև Ագուլիսում, Օշանավանքում, Երևանում, Աղթամարում և այլուր։

Ներսես Մոկացին և նրա աշակերտ Մելիքսեթ Վանացին թողնում են Սյունյաց դպրոցը, գալիս Վանա լճի Լիմ կղզին և այնտեղ նոր դպրոց հիմնում։ Նրանք շարունակում են ուսումնասիրել «արտաքին գիտությունները», հատկապես Պլատոնի, Արիստոտելի, Դավիթ Անհաղթի, Պորփյուրի ստեղծագործությունները և ուսուցանում իրենց աշակերտներին։ Ներսես Մոկացու մահից հետո (1627) նրա գործը շարունակում է Մելիքսեթը։ Սա ավելի բարձր մակարդակի հասցրեց «արտաքին գիտությունների» ուսուցումը, որով նպաստեց գիտական մտքի զարգացմանը Հայաստանում։

XVII—XVIII դդ. դպրոցներ բացվեցին նաև հայկական գաղթավայրերում՝ Նոր Ջուղայում, Կոստանդնուպոլսում, Լվովում և այլուր։

1717 թ. Վենետիկի սուրբ Ղազար կղզում Մխիթար Սեբաստացու գլխավորությամբ հիմնվում է Մխիթարյան միաբանությունը, որին կից բացվում է նաև հայկական դպրոց։ XVIII դ. կեսին միաբանության անդամներից մի քանիսը անցնում են Վիեննա, այնտեղ կազմակերպում Մխիթարյան միաբանության նոր ճյուղ և հիմնում իրենց դպրոցը։ Մխիթարյանների այդ երկու դպրոցն էլ հայագիտության և հայկական տպագրության զարգացման գործում մեծ դեր են կատարել։

Հայկական տպագրությունը

Մշակույթի բնագավառում հայ ժողովրդի հեռաբերած նվաճումներից մեկը տպագրության կազմակերպումն էր։ 1512 թ. Վենետիկում լույս տեսավ առաջին հայերեն տպագրված գիրքը՝ «Պարզատումար» վերնագրով, իսկ հաջորդ՝ 1513 թ.՝ արդեն մի քանի գիրք, որոնց թվում նաև «Տաղարան»-ը։

Հայտնի չէ, թե 1512—1513 թթ. լույս տեսած հայերեն գրքերը ո՞ր տպարանում են տպվել և ո՞ւմ էր այն պատկանում, սակայն 1513 թ. լույս տեսած գրքերում հիշատակված է Հակոբ անունով մի հայ, որն իրեն «մեղապարտ» է անվանում և այդ գործի կազմակերպիչն է եղել։

1562 թ. Էջմիածնի կաթողիկոսը Վենետիկ է ուղարկում հայ առևտրական Աբգար Եվդոկացուն կամ Թոխատեցուն, որին հանձնարարված էր զբաղվել նաև հայերեն գրքերի տպագրության գործով։ Աբգար Եվդոկացին 1567 թ. իր պատրաստած հայերեն տառերն ու տպագրական այլ սարքավորումները փոխադրեց Կոս-

տանդնուպոլիս և այնտեղ մի շարք գրքեր հրատարակեց։ Այդպիսով, Կոստանդնուպոլսում հայկական տպարանի հիմքը դրվեց և այն դարձավ հայկական կուլտուրայի օջախներից մեկը։

1640-ական թթ. նոր էջ բացեցին հայկական տպագրության պատմության մեջ։ Այս անգամ տպագրության գործի օջախ դարձավ նոր Ջուղայի հայկական դպրոցը։ Դպրոցի ղեկավար խաչատուր Կեսարացին և իր աշակերտները տառեր են փորագրում, տպագրական հարմարանքներ պատրաստում, տպարան հիմնում և 1640 թ. տպագրում իրենց անդրանիկ գիրքը՝ «Հարանց վարքը»։ Տպարանը ամուր հիմքի վրա դնելու համար Կեսարացին մարդ է ուղարկում Եվրոպա՝ ավելի կատարելագործված տառեր և տպարանական սարքավորում բերելու համար։ Մի քանի տարի հետո պայքարով և դժվարությամբ ձեռք բերված այդ սարքավորումը հասցվում է Սպահան, և նոր Ջուղայի տպարանը սկսում է տպագրել ավելի ճաշակով ու գեղեցիկ գրքեր։

Հայկական տպագրության կազմակերպման գործին առանձին ուշադրություն է դարձնում Հակոբ Ջուղայեցին։ Նա Եվրոպա է ուղարկում Մատթեոս Մարեցուն, որը 1658 թ. Ամստերդամում տպարան է հիմնում։ Մարեցու մահից հետո (1661) Հակոբ Ջուղայեցին Ամստերդամ է ուղարկում Ոսկան Երևանցուն՝ տպագրության գործը ղեկավարելու համար։ Նա Ամստերդամում և ապա Լիվորնոյում ու Մարսելում, հրատարակեց շուրջ 17 անուն գիրք, այդ թվում «Քերականությունը», Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», Անանիա Շիրակացու «Աշխարհացույցը» և սրան կից «Աղվեսագիրքը»։

Ոսկան Երևանցու մահից հետո (1674) տպարանի աշխատողներից մեկը՝ Մատթեոս Վանանդեցին (Գողթն գավառի Վանանդ գյուղից) Թովմաս Նուրիջանյանի օգնությամբ Ամստերդամում հրատարակում է մի շարք գրքեր, տակայն նրա աշխատանքի գլուխգործոցը 1695 թ. հրատարակած «Համատարած աշխարհացույցն» է, պղնձե տախտակի վրա փորագրված մի քարտեզ և դրան կից բացատրական հավելվածներ՝ «Բանալի» վերնագրով։ Այդ նույն ժամանակ և հետագայում Վանանդեցու և Նուրիջանյանի տպարանում առաջին անգամ տպագրվում են Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», «Դուռն իմաստության» գասագիրքը, «Գանձ լափոց, կշռոց, թվոց և դրամոց բոլոր աշխարհի» և մի քանի այլ գրքեր։ Ամստերդամի հայկական տպարանը հայ գրքի տպագրության գործը զարգացման ավելի բարձր աստիճանի հասցրեց։

XVIII դ. առաջին կեսին հայկական տպագրությունը աշխուժանում է նաև Կոստանդնուպոլսում։ Տպագրվում են մի քանի տասնյակ գրքեր, այդ թվում Ներսես Շնորհալու «Հանելուկները», Ագաթանգեղոսի «Պատմությունը», Փավստոս Բուզանդի «Պատմությունը», Բաղդասար Դպիրի «Քերականությունը» և այլն։ Տպագրական գործը ծավալվում է նաև Վենետիկում, որի հրատարակությունների մեջ իրենց արժանի տեղն են գրավում «Հայկազյան բառարանը» և Միքայել Չամչյանի եռահատոր «Հայոց պատմությունը»։

XVIII դ. 70-ական թթ. հիմնվեց ևս երկու տպարան։ Դրանցից մեկը Մադրասի ազատագրական խմբակի կազմակերպած տպարանն էր, որը լույս ընծայեց հայկական առաջին քաղաքական բովանդակության գրքերը՝ «Նոր տետրակը» և «Որոգայթ փառացը», իսկ մյուսը՝ մայր երկրում (Էջմիածնում) 1771 թ. Սիմեոն Երևանցու հիմնադրածը։

Հայկական տպագրության կազմակերպումն ու զարգացումը կուլտուրական և լուսավորական մեծ գործ էր. դրա շնորհիվ հեշտացան ուսուցման կազմակերպումը, գրագիտության տարածումը, զարգացավ գիտությունը, կորստից փրկվեցին հայկական մատենագրության շատ դանձեր և դարձան ժողովրդի սեփականությունը։

Հրապարակախոսությունը և պարբերական մամուլը

XVIII դ. հիմք դրվեց նաև հայ հրապարակախոսական գրականությանը և պարբերական մամուլին։ 1773 թ. Մադրասի ազատագրական խմբակը իր տպարանում հրատարակեց «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» և մի քանի տարի հետո «Որոգայթ փառաց» գրքերը։ Առաջին գիրքը, որի հեղինակը խմբակի անդամ Մովսես Բաղրամյանն է, ամբողջությամբ շոշափում է քաղաքական հարցեր, որոնց առանցքը Հայաստանի ազատագրության խնդիրն է։ Երկրորդ գիրքը նույնպես քաղաքական բովանդակության է և արծարծում է Հայաստանի ազատագրության ու պետական կարգին վերաբերող հարցեր։

Այդ գրքերում քարոզվում են հետևյալ հիմնական սկզբունքները.

ա) Հայերը նույնպես մի ամբողջական ազգություն են, ինչպես բոլոր ազգությունները, հետևապես, նրանք նույնպես իրավունք ունեն ազատ լինելու, ունենալու իրենց սեփական պետությունն ու հայրենիքը։ բ) Հայերը ազատություն ձեռք բերելու համար պետք է կազմակերպվեն, միավորվեն, դինվեն, սովորեն զենք

գործածել, դպրոցներ բացեն և երիտասարդությանը դաստիարակեն ազատասիրության, հայրենասիրության ոգով, լուսավորություն տարածեն ժողովրդի մեջ։ դ) Ժողովրդի ազատագրությունը օտար տիրակալներից իր՝ ժողովրդի սեփական գործն է, հետևապես, հայերն իրենք պետք է պայքարեն իրենց ազատության համար և հույսը դնեն իրենց վրա, քանի որ «ում երբէք լինի փոյթ առ այս որ մեք վասն մեր ոչ ջանամք»։ դ) Հաջող պայքարի համար պետք է համագործակցել բախտակից վրաց ժողովրդի հետ, նախապատրաստել զինված ապստամբություն Թուրքիայի և Պարսկաստանի դեմ։ ե) Վերացնել երկրում ֆեոդալական կարգերը, հաստատել կայուն օրենքներ, թույլ չտալ, որ միանձնյա իշխանություն հաստատվի, ապահովել բոլոր մարդկանց ազատ գործունեությունը տնտեսական և մյուս բնագավառներում։

Սրանք էին այն հիմնական քաղաքական-հասարակական գաղափարները, որ պաշտպանում էին ժամանակի հայ առաջավոր մտածողները։ Նրանք արտահայտում էին զարգացող բուրժուազիայի ձգտումները։

Հայ պարբերական մամուլի ստեղծման նախաձեռնողը նույնպես եղավ հնդկահայ քահանաներից մեկը՝ Հարություն Շմավոնյանը։ Նա 1793 թ., երբ Շահամիր Շահամիրյանի հիմնադրած տպարանն այլևս չէր գործում, Մադրասում նոր տպարան հիմնեց և գրքեր հրատարակեց։ Հաջորդ՝ 1794 թ. հոկտեմբերի 16-ին Մադրասում լույս է տեսնում հայերեն առաջին թերթը՝ «Ազդարար» անունով։ Դրանով հայկական պարբերական մամուլի, հայկական լրագրական գործի հիմքը դրվեց։

«Ազդարարը» լույս էր տեսնում ամիսը մեկ անգամ։ Նա ծավալով փոքր էր, բայց ուներ տարբեր բաժիններ, օրինակ՝ քաղաքական բաժին, որտեղ զանազան տեղեկություններ էին տպվում տարբեր երկրներում տեղի ունեցած անցուդարձի մասին, աղդի կյանքին վերաբերող բաժին, որտեղ տպագրվում էին Հայաստանի քաղաքական վիճակի, ժողովրդի դրության, Հայաստանի ազատագրության և այլ հարցերին վերաբերող հոդվածներ։ Թերթն ուներ նաև գրական բաժին։ Այնտեղ տպագրվել են ժամանակակից հայ պատմագիրների աշխատություններից, օրինակ՝ Խաչատուր Ջուղայեցու «Պատմություն պարսից»ը և այլ երկեր։ Ալֆերի հարուստ էր և մեծ տեղ էր բռնում առևտրական կյանքի և հայտարարությունների բաժինը։

Հարություն Շմավոնյանը թերթի հրատարակումը շարունակեց մինչև 1796 թ. մարտ ամիսը, ընդամենը՝ 18 համար։ Այն թեև

կարճ կյանք ունեցավ, բայց հայ ընթերցողների մեջ սեր արթնացրեց դեպի լրագիրը։

Առաջին հայ պարբերականի դադարից հետո 1799 թ. Վենետիկում Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ լույս է տեսնում հայերեն երկրորդ պարբերականը՝ «Տարեգրություն» անունով, աշխարհաբար լեզվով։ Դրանից հետո հայ պարբերական մամուլը անընդմեջ բազմանում և աճում է։

2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Գիտական մտքի նոր զարթոնք

XV—XVI դդ. Հայաստանում ոչ միայն քաղաքական իրադրությունների մղձավանջային շրջան էր, այլև գիտական մտքի լճացման, ամլության դարեր։ Սակայն XVII դ. առաջին տասնամյակներից հայ գիտական մտքի մեջ մի նոր զարթոնք տեղի ունեցավ։ Դրանում խոշոր դերը կատարեցին Բաղեշի Ամրդոլուի և Սյունյաց Մեծ անապատի դպրոցների ուսուցիչներն ու սաները։

Ամրդոլուի դպրոցի ուսուցիչ Բարսեղ Գավառացին XVII դ. առաջին տասնամյակներում սկսում է ուսումնասիրել հույն և հայ փիլիսոփաների գրվածքները։ Բարսեղ Գավառացու աշակերտները շատ բան ավելացրին իրենց ուսուցչի հաղորդած դիտելիքներին։ Այդ աշակերտներից առանձնապես աչքի ընկավ Ներսես Մոկացին։ Սա եկավ Սյունյաց Մեծ անապատի դպրոց, իր շուրջը համախմբեց երիտասարդներին, նրանց դասախոսություններ կարդաց փիլիսոփայության, բերականության և գիտության այլ բնագավառների մասին, սեր ու ձգտում առաջացրեց նրանց մեջ դեպի աշխարհիկ գիտությունները։

Ներսես Մոկացու հետ միասին և նրանից հետո գիտության զարգացման ու տարածման գործում փոշոր դեր խաղաց նրա տոկուն և ամենաընդունակ աշակերտը՝ Մելիքսեթ Վժանացին։ Առաքել Դավրիժեցին մեծ գովեստով և երախտագիտությամբ է խոսում Մելիքսեթի մասին։ Պատմագիրը հաղորդում է, որ Վժանացին տքնությամբ ու չարչարանքով «զմարմին իւր խաչ բարձեալ» տասը տարի անընդհատ ուսումնասիրեց Արիստոտելի, Պլատոնի, Պորփյուրի, Դավիթ Անհաղթի աշխատությունները, ինչպես և տոմարագիտությունն ու բերականությունը։

Բարսեղ Գավառացու, Ներսես Մոկացու և Մելիքսեթ Վժանացու ծառայությունն այն է, որ նրանք ասպարեզ հանեցին մոռաց-

ված գիտությունները, արթնացրին դիտական միտքը հայ իրականության մեջ, կոգրեր պատրաստեցին աշխարհիկ գիտությամբ զբաղվելու համար։

Պատմագիտությունը

Պատմագիտությունը նույնպես XV—XVI դդ. վայելչքի շրջան ապրեց։ Թեև եղել են մանր տարեգրություններ և XV դ. պատմագիր Թովմա Մնձուրեցին գրել է Լենգթեմուրի արշավանքների պատմությունը, սակայն պատմագիտական լիարժեք գործեր այդ դարերում ստեղծվել չեն եկել։ XVII դ. սկսած պատմագիտությունը ևս բռնեց վերելքի ուղի։

Այս շրջանի նշանավոր պատմագիրներից է Առաքել Դավրիժեցին։ Նա ծնվել է XVI դ. 80-ական թթ. վերջերին կամ 90-ականի սկզբներին Թավրիզում, մահացել է 1670 թվականին (թաղվել է Էջմիածնում)։ Դավրիժեցին գրել է 60 տարվա՝ 1602—1662 թթ. պատմությունը։ Իր «Պատմության» մեջ հեղինակը հանգամանորեն նկարագրում է հայ ժողովրդի վիճակը XVI դ. վերջերին և XVII դ. սկզբներին, պարսկա-օսմանյան պատերազմի ընթացքը XVII դ. առաջին կեսին, Հայաստանի երկրորդ բաժանումը Պարսկաստանի և Թուրքիայի միջև։ Բացի քաղաքական անցուդարձից, պատմագիրը տեղեկություններ է հաղորդում Հայաստանի տնտեսական վիճակի և այլ երկրների մասին։ Նրա աշխատությունը հագեցված է խոր հայրենասիրությամբ և առաջադիմական ձգտումներով դեպի այն ամենը, ինչ նպաստում է լուսավորության տարածմանը, գիտության զարգացմանը, ժողովրդի կուլտուրական վերելքին, թեև տուրք է տալիս կրոնական դոգմաներին։

Առաքել Դավրիժեցին իր «Պատմությունը» գրելիս հատուկ ուշադրություն է դարձրել ժամանակագրության վրա, որովհետև «դիտելի է, զի ըստ պահանջելոյ հարկին աստանոր պետք է գտնել զթվականն իբր զհիմն, և ապա հարել ի նոյն պատմութիւն որպէս զշինուածս»։ Դավրիժեցու «Պատմությունը» կարևորագույն աղբյուր է XVII դ. Հայաստանի և Մերձավոր Արևելքի պատմության ուսումնասիրության համար, նույն դարի հայկական պատմագիտական մտքի արժեքավոր հուշարձաններից մեկն է։

Գրիգոր Դարանաղցին (կամ Կամախեցին) (1576—1643) ծնվել է Դարանաղի գավառի Կամախ քաղաքում։ Սկզբնական կրթությունն ստացել է իր ծննդավայրում։ Եղել է Ղրիմում, Կոստանդնուպոլսում, Երուսաղեմում և այլ երկրներում։ Նա թողել է պատմագիտական մի աշխատություն, որի վերնագիրն է «Ժամանակագրութիւն»։ Այս գործն իր բնույթով տարեգրություն է և որոշ իմաս-

տով հեղինակի ինքնակենսագրությունը։ Աշխատության մեջ նա կարևոր տեղեկություններ է հաղորդում Հայաստանի, Թուրքիայի, հայկական մի քանի գաղթավայրերի և այլ երկրների մասին։ Հետաքրքիր են նրա վկայությունները Արևելյան Հայաստանում XVII դ. առաջին քառորդում տեղի ունեցած գյուղացիական դժգոհությունների և հուզումների մասին։

Գրիգոր Դարանաղեցու «ժամանակագրությունը» նույնպես հարուստ տեղեկություններ է հաղորդում Մերձավոր Արևելքի երկրների XVII դ. առաջին կեսի պատմության վերաբերյալ և հավատի աղբյուր է այդ երկրների պատմության ուսումնասիրության համար։

Զաքարիա սարկավագ Քանաքեռցին ծնվել է Քանաքեռ գյուղում 1627 թ.։ Կրթությունն ստացել է Հովհաննավանքի դպրոցում, այնտեղ աշխատել է որպես ուսուցիչ մինչև իր մահը՝ 1700 թ.։

Զաքարիա Քանաքեռցին թողել է «Պատմագրություն» վերնագրով մի աշխատություն՝ բաղկացած երեք մասից։ Աշխատությունն սկսվում է պարսից Արշակունի թագավորների և ապա հայոց գահակալների թվարկումով՝ մինչև հայ Արշակունի վերջին թագավորը։ Դրանից անմիջապես հետո անցնելով XV դ. դեպքերին, համառոտաբար շարադրում է պատմությունը մինչև XVII դ., այդ դարի պատմությունը տալով շատ մանրամասն կերպով։ Աշխատության վերջին մասը նվիրված է Հովհաննավանքի պատմությանը և իր՝ հեղինակի ազգաբանությանը։

Քանաքեռցու աշխատությունը իր բնույթով ու բովանդակությամբ տարբերվում է ժամանակակից մյուս պատմագիրների երկերից։ Նա գրի է առել այն ամենը, ինչի մասին լսել է, առանց ստուգելու և ճշտելու։ «...Զոր ինչ լուաք ի համբաւոյ՝ զայն գրեցաք, թէ գովութիւն լիցի և թէ սուտ պարսաւանք՝ նոցա լիցի»,— գրում է նա։

Քանաքեռցու երկը հարուստ նյութ է տալիս գյուղական համայնքի և Արարատյան դաշտի տնտեսական կյանքի մասին։ Նա աշխատող չի արել նաև արհեստագործության ու առևտրի բնագավառը և հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում այդ մասին։ Նրա ուշադրությունից չի վրիպել նաև գյուղացիության դժգոհությունը տեղական և օտար շահագործողներից և մանրամասն տեղեկություններ է հաղորդում XVII դ. առաջին քառորդի գյուղացիական շարժման վերաբերյալ։ Այդ կարևոր տեղեկություններն էլ Քանաքեռցու աշխատությունը դարձնում են արժեքավոր աղբյուր XVII դ. պատմության համար։

Երեմիա Չելեպի Քեոմյուրճյանը (1635—1695) ծնվել է Կոստանդնուպոլսում և այնտեղ էլ անցկացրել իր կյանքը։ Նա գործուն մասնակցություն է ունեցել Պոլսի հայկական գաղութի հասարակական կյանքին և աչքի է ընկել իր առաջադիմական ձգտումներով։ Նա գրել է բանաստեղծություններ, կատարել թարգմանություններ, բայց արժեքավոր են նրա պատմագիտական երկերը։ Միքայել Չամչյանի վկայությամբ, Քեոմյուրճյանը գրել է Օսմանյան կայսրության պատմությունը՝ բաղկացած հինգ գրքից, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը (թուրքերեն լեզվով), Պարսկաստանի, Հնդկաստանի, Անատոլիայի և Հայաստանի մասին ընդարձակ մի աշխատություն (գերմանական դեսպանի հանձնարարությամբ), «Տնօրինական տեղիք» վերնագրով մի գիրք և հրապարակախոսական աշխատություններ։ Նրա աշխատությունների մեծ մասը չի հրատարակված, իսկ մի քանի ձեռագրեր էլ անհետացել են։ Հայ ժողովրդի պատմության համար արժեքավոր է «Գիրք պատմաբանութեանց» աշխատությունը, որի մեջ Քեոմյուրճյանը նկարագրում է պարսկա-օսմանյան պատերազմները, օտար զավթիչների կողմից նվաճված քրիստոնյա ժողովուրդների, հատկապես հայերի նկատմամբ գործադրված բռնություններն ու դաժանությունները Արևմտյան Հայաստանում՝ բողոքելով տիրողների վայրագությունների դեմ։ «Տարեգրական պատմություն» աշխատության մեջ, որն իրավամբ օրագիր է անվանված, պատմվում է Պոլսի ներքին կյանքի, հայկական գաղութում եղած վեճերի ու պայքարի մասին։

Քեոմյուրճյանը հրապարակախոսական գրվածքներում և պատմագիտական երկերում հարցերին և փաստերին քննադատաբար է մոտենում և, չնայած հայ իրականության մեջ տիրապետող պատմահայեցողությանը, զգալի չափով ազատ է կրոնական նախապաշարմունքներից։ Նա, ինչպես իրավացիորեն նկատում է Լեոն, իր լեզվի և մտածողության աշխարհականացմամբ հետագա հայ հրապարակախոսության և պատմագիտության նախակարապետն է։

Աբրահամ Կրետացին ծնվել է Կրետե կղզում XVII դ. 70-ական թթ.։ Երկար ժամանակ եղել է թեմի առաջնորդ, իսկ 1734 թ. եկել է Էջմիածին և ընտրվել կաթողիկոս։ Նրա «Պատմութիւն անցիցն իւրոց և Նատրշահին պարսից» գիրքը ընդամենը երեք տարվա պատմություն է ընդգրկում՝ 1734 թ. մինչև 1736-ի վերջը, բայց կարևոր աղբյուր է պարսկական պետության կողմից հայերի նկատմամբ վարած քաղաքականությունը բացահայտելու համար։

Գրքում մանրամասնությամբ պատմվում է Նադիր շահի զորքերի՝ Ղզվարդ գյուղի մոտերքում թուրքերի դեմ մղած ճակատամարտի, պարսից շահի թագադրման ծիսակատարությունների, Արևելյան Հայաստանի նկատմամբ Նադիր շահի վարած քաղաքականության և «խամսայի մելիքությունների» մասին։

Աբրահամ Երևանցու անձնավորության մասին առայժմ տեղեկություններ չկան։ Հայտնի է միայն, որ նա ապրել է XVIII դ. առաջին կեսին և գրել է պատմագիտական մի աշխատություն՝ «Պատմութիւն պատերազմաց», որն ընդգրկում է 1721—1736 թթ. աֆղանների ու պարսիկների, ապա՝ պարսիկների ու թուրքերի միջև մղված պատերազմների պատմությունը։ Երևանցու երկի արժեքը բարձր է հատկապես այն իմաստով, որ միակ պատմական աղբյուրն է Արարատյան դաշտի հայերի՝ Երևանի ու Կարբիի պաշտպանության և իրենց ազատագրության համար օսմանցիների դեմ մղած հերոսական պայքարի մասին։ Աբրահամ Երևանցին թեև պատմական դեպքերի անհաջող ընթացքը երբեմն մասնակիցների ատելածամոռացությամբ է-մեկնաբանում, բայց իրենից առաջ եղած մեր պատմագիրներից շատերի նման գերի չէ կրոնական դոգմաներին, ավելի ազատ է խորհում երևույթների ու պատմական անցուդարձի մասին, պատճառաբանում և բացատրում է-դրդ երևույթները։

Եսայի Հասան-Ջալալյանը ծնվել է Ղարաբաղում XVII դ. երկրորդ կեսին և մահացել 1728 թ.։ Կրթությունը ստացել է Գանձասարի վանքում և իր կյանքի վերջին շրջանում ղեկավարել է կաթողիկոսական աթոռը Գանձասարում։ XVIII դ. առաջին կեսի հայկական ազատագրական շարժման խոշոր գործիչ է և, միաժամանակ, պատմագիր։ Նա գրել է «Պատմութիւն կամ յիշատակարան ինչ ինչ անցից դեսդիոց յաշխարհն Աղուանից» կամ, կրճատ ձևով ասած՝ «Համառօտ պատմութիւն Աղուանից», որի մեջ պատմում է Արևելյան Հայաստանի, հատկապես Արցախի և Սյունիքի դրության մասին XVIII դ. առաջին երեք տասնամյակներում։ Աշխատությունը հայրենասիրական ոգով գրված մի ժամանակագրություն է։

Հասան-Ջալալյանի աշխատության կարևոր մասը վերաբերում է Սյունիքի հայկական ազատագրական ապստամբության պատմությանը։ Այնտեղ հանգամանորեն խոսվում է հայկական զինվորականության կազմակերպման, հայ-վրաց միացյալ ապստամբության նախապատրաստման, վրաց Վախթանգ VI թագա-

վորի կողմից հայկական զինվորականությանը ցույց տրված օգնության և այլ պատմական դեպքերի մասին։

Ստեփանոս Նահուշյանը ամենայն հավանականությամբ ծնվել է Ղափանի շրջանում, հայ առևտրականի ընտանիքում։ Սը-նը-նդյան ու մահվան թվականներն անհայտ են։ Եղել է Սյունիքի ապստամբության կազմակերպիչներից և Դավիթ-Բեկի զորավարներից մեկը։ Ապստամբությունից հետո դնացել է Վենետիկ և զբաղվել առևտրով։ Այնտեղ էլ նա Դավիթ-Բեկի հերոսական պայքարի պատմությունը թելադրել է, իսկ Մխիթարյան միաբանության անդամ Ղուկաս Սեբաստացին դրի է առել։ Այդպես ստեղծվել է Դավիթ-Բեկի ապստամբության հակիրճ, բայց բովանդակալից և բարձր հայրենասիրությամբ տոգորված պատմությունը, որը հրատարակիչները վերնագրել են՝ «Դավիթ-Բեգ, ընտիր պատմութիւն Դաւիթ-Բեգին և պատերազմաց հայոց Խափանու»։

Հեղինակը թեև պատմական դեպքերը շարադրում է էմպիրիկ ձևով, առանց նրանց ներքին բովանդակության ու կապի մեջ թափանցելու և պատճառաբանելու, այնուհանդերձ, հանդես է բերում ստեղծված քաղաքական իրադրության ճիշտ ըմբռնում, մեծ սեր դեպի ազատագրական պայքարը, առեղծյուն դավաճանների նկատմամբ։

Խաչատուր Ջուղայեցին ծնվել է Նոր Ջուղայում, ծննդյան և մահվան թվականները անհայտ են. որոշակի է այն, որ 1788 թ. կենդանի է եղել, իսկ 1795 թ. արդեն չկար։ Ջուղայեցին գրել է «Պատմութիւն պարսից» աշխատությունը, որն սկսվում է պարսկական Աքեմենյան թագավորության հիմնադրումից, համառոտաբար շարադրում է Պարսկաստանի ու Հայաստանի պատմությունը մինչև աղ-կոյունլուների իշխանության վերջը, իսկ հետո ավելի ընդարձակ և հանգամանորեն խոսում է պարսկական սեֆենյան պետության և դրանից հետո ընկած շրջանի մասին։

Հայաստանի և հայ ժողովրդի մասին Ջուղայեցին խոսում է հայրենասիրական խոր ու հուզիչ զգացմունքով։ Ժողովրդին հասած ամեն մի դժբախտություն, փորձանք խոցոտում է նրա սիրտը։ Նրա երկը կարևորագույն աղբյուր է XVI—XVIII դդ. Առաջավոր Ասիայի ժողովուրդների պատմությունն ուսումնասիրելու համար։

Թոմաս Խոջամալյանցը հնդկահայ վաճառական էր, գործել է XVIII դ. երկրորդ կեսին։ Սկզբում եղել է նավավար, բայց հետո զբաղվել է առևտրով և գրականությամբ։ Խոջամալյանցը իր ժամանակի զարգացած հայ աշխարհիկ մտավորականներից էր։ Նա, իր մայրենի լեզվից բացի, իմացել է անգլերեն, հնդկերեն և պարա-

կերեն, եղել է Անգլիայում, ծանոթացել է եվրոպական կյանքին ու գիտությանը և զբաղվել գրականությամբ։

Խոջամալյանցը գրել է Հնդկաստանի պատմությունը սկսած եվրոպացիների ներթափանցումից մինչև իր օրերը, բաղկացած երկու մասից։ Հրատարակվել է այդ աշխատության երկրորդ մասը, որի մեջ հեղինակը մանրամասնությամբ պատմում է XVIII դ. դեպքերի, մասնավորապես անգլիացիների ու ֆրանսիացիների դեմ հնդիկների մղած պայքարի մասին։

Թոքմաս Խոջամալյանցի աշխատության արժեքը ոչ միայն այն է, որ նա հարուստ նյութ է տալիս Հնդկաստանի պատմության նոր շրջանի ուսումնասիրության համար, այլև այն, որ հայ աշխարհիկ պատմագրի մտահորիզոնը ազգային շրջանակներից դուրս է եկել և ընդգրկել ընդհանուր պատմությանը վերաբերող հարցեր։

Միքայել Չամչյանը *(1738—1823)* ծնվել է Կոստանդնուպոլսում, նախնական կրթությունն ստացել է ծննդավայրում, հետո գնացել է Վենետիկի ս. Ղազար փղզի ուսումը շարունակելու։ 1779 թ. լույս է տեսել նրա առաջին հայագիտական ուսումնասիրությունը՝ «Քերականությունը»։ Նրա գրչին են պատկանում նաև կրոնադավանաբանական բազմաթիվ գրքեր։ Բայց ամենաարժեքավորը նրա «Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեսուն 1784» խորագիրը կրող եռահատոր աշխատությունն է։

Իր ժամանակի մեծ պատմաբանի այդ խոշոր գործը լույս է տեսել Վենետիկում 1784—1786 թթ. ընթացքում։ Այդ երկի հրատարակումը, ինչպես նշել է բազմավաստակ պատմաբան Լեոն, մի նոր դարաշրջան բացեց հայագիտության, հատկապես հայոց պատմագիտության զարգացման համար։

Չամչյանի «Պատմությունը» սկսվում է աշխարհաշինությունից, Հայկի ու Բելի պատմությունից և ավարտվում է XVIII դ. վերջի դեպքերով։

Այդպիսի խոշոր գործ կատարելով հանդերձ, Չամչյանը զերծ չի եղել իր ժամանակի ու շրջապատի սահմանափակություններից։

Միքայել Չամչյանը իր պատմահայեցողությամբ դավանում է հայ միջնադարյան կղերա-ֆեոդալական պատմագիրների քարոզած սկզբունքները, պատմական երևույթների ու դեպքերի զարգացման ընթացքը մեկնաբանում է աստծու կամեցողությամբ։ Նա անհրաժեշտ չափով ուշադրություն չի դարձրել ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքին և դասակարգային հարաբերություններին։ Չամչյանը լայն տեղ է տվել նաև կրոնական հարցերին՝ հաճախ դրանք դարձնելով պատմության առանցքը։ Այնուհանդերձ, Չամ-

չյանի «Պատմություն հայոց» աշխատությունը խոշորագույն երևույթ է եղել հայ պատմագիտության մեջ։

Փիլիսոփայական միտքը

XVII դ. փիլիսոփայական գործերով աչքի է ընկել Սիմոնոն Ջուղայեցին, որը ծնվել է Նոր Ջուղայում XVI դ. վերջերին, վախճանվել է 1657 թ.։ Նրա գրվածքներից առանձին համբավ են վայելել «Քերականությունն» ու «Տրամաբանությունը»։ Դրանց մեջ Ջուղայեցին քննության է առնում մարմնի ու հոգու փոխհարաբերությունը, իմացության տեսությունը, տրամաբանությունը, դիտությունների դասակարգումը և այլ հարցեր։ Հիմնականում պաշտպանելով իդեալիզմը, նա, այնուամենայնիվ, մի շարք հարցերում փորձ է անում սահմանազատվելու միջնադարյան կրոնական ըմբռնումներից։

Խաչատուր Էրզրումցին (Խաչատուր Առաքելյան) (1666—1740) ծնվել է Կարինում։ Նախնական կրթությունը նա ստացել է ծննդավայրում, իսկ հետո եկել է Էջմիածին և շարունակել կատարելագործվել ուսման մեջ։ Նրա գրչին են պատկանում «Գիրք քերականութեան», «Բովանդակութիւն ամենայն ոսմանց», ասյա նաև՝ «Համառօտ մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի», «Ակիակատար աստվածաբանութիւն», «Ճարտասանութիւն» և այլ գրվածքներ։ Էրզրումցին այդ աշխատություններում քննարկում է փիլիսոփայական, կրոնա-դավանաբանական և հասարակական կյանքին վերաբերող մի շարք հարցեր։ Փիլիսոփայական ընդհանուր հարցերում նա իդեալիստ է։ Ու թեև հասարակական կարգերին վերաբերող հարցերում ևս իդեալիստ է, բայց այդ բնագավառում նա պաշտպանում է առաջադիմական գաղափարները, մերժելով ֆեոդալական հարաբերություններն ու կամայականությունը, գերադասում է օրինականության սկզբունքը, առաջ քաշում արդարացի պատերազմների գաղափարը։ Նա ժողովրդի ազատության, նրա բարոյության և իրավունքների պաշտպանության համար մղվող պատերազմը համարում է արդարացի։ Սա պայքարի ելած ճնշված ժողովուրդների իրավունքների պաշտպանության գաղափարախոսություն է։

Բացի վերոհիշյալներից, փիլիսոփայական մտքեր են արտահայտել կամ առանձին հարցերի քննությամբ զբաղվել՝ Ռսկան Երևանցին (XVII դ.), Մխիթար Սեբաստացին (XVIII դ.), Սիմեոն Երևանցին (XVIII դ.) և ուրիշներ։

Իրավաբանական գիտությունը

XVIII դ. հայ իրավաբանական միտքը մի առաջընթաց քայլ ևս կատարեց։ 70-ական թթ. վերջերին Մադրասի քաղաքական խմբակը լույս ընծայեց ազատագրվելիք Հայաստանի համար մի օրենսգիրք «Որոգայթ փառաց» վերնագրով։ Այդ օրենսգրքի համաձայն, Հայաստանում պիտի ստեղծվեր հայկական ազգային պետություն՝ դեմոկրատական և հանրապետական սկզբունքներով։ Պետության գերագույն օրգանը լինելու էր «Հայոց տունը» (պառլամենտը)։ Նա պետք է կազմվեր երկու պալատից՝ օրենսդրական և գործադիր իշխանություններից, որոնց անդամները ընտրվելու էին ժողովրդի կողմից։ Ընտրական կարգը լինելու էր ընդհանուր և բազմաստիճան։ Յուրաքանչյուր 12 հազար ընտանիք ունեցող տերիտորիա կազմելու էր մեկ ընտրական շրջան, որի յուրաքանչյուր բնակավայրը (գյուղ, ավան և այլն) ընտրելու էր մեկական ներկայացուցիչ։ Սրանք իրենց միջից վիճակահանությամբ պետք է առանձնացնեին երկու մարդ՝ որպես Հայոց տան պատգամավորներ կամ, ինչպես օրենսդրության մեջ է ասված՝ փոխանորդներ։ Բոլոր ընտրական շրջաններից ընտրված երկուական փոխանորդներից էլ կազմվելու էր Հայոց տունը՝ պառլամենտը։ Այդ երկու փոխանորդներից մեկը դառնալու էր օրենսդրական, մյուսը՝ գործադիր օրգանի անդամ։ Պետական բոլոր պաշտոնները պետք է լինեին ընտրովի, սկսած փոխանորդից՝ պառլամենտի անդամից, մինչև հանրապետության նախագահը։ Յուրաքանչյուր երեք տարին մեկ տեղի էր ունենալու վերընտրություն կամ, ավելի ճիշտ, նոր ընտրություն։

Գործադիր օրգանի փոխանորդներն իրենց միջից ընտրելու էին պետության բարձրաստիճան պաշտոնյաներ՝ հանրապետության նախագահ, նախագահի խորհրդականներ և տեղակալներ, մինիստրներ, բանակի զլխավոր հրամանատար և այլն, իսկ օրենսդրական օրգանի փոխանորդները՝ նույնպես իրենց միջից՝ դատավորներ և դատական այլ պաշտոնյաներ։ Ընտրողներին իրավունք էր վերապահվում ետ կանչել ընտրած փոխանորդին, պետական և դատական պաշտոնյային՝ ընդհուպ մինչև հանրապետության նախագահը, ժամանակից շուտ, այսինքն՝ նախքան երեք տարին լրանալը, եթե նրանք չարդարացնեին իրենց կամ հանցանք գործեին (կաշառակերություն, պետական դավաճանություն և այլն), և նրանց փոխարեն ընտրել նորը։ Ընտրությունների ժամանակ ընտրողները կարող էին ազատ կերպով խոսել առաջադրված թեկնածուների դեմ կամ օգտին։

Օրենսդիրքը նախատեսում էր խղճի, կրոնի, խոսքի ազատություն, ունեցվածքի և անձի ապահովություն, իրավահավասարություն, հանրապետության մեջ ապրող օտարազգիների գործունեության ազատություն, քաղաքական և այլ կարգի փախստական օտարականներին օթևան տալու իրավունք, պարտադիր կրթություն մինչև որոշ տարիքի երկսեռ երեխաների համար, աղքատներին, հաշմանդամներին ու ծերերին (խնամողներ չունենալու դեպքում)՝ պետության կողմից օգնություն ստանալու հնարավորություն և նման այլ արտոնություններ։

Երկրի սոցիալ-տնտեսական կյանքի բնագավառում օրենսգիրքը պահանջում էր ֆեոդալական հարաբերությունների վերացում և բուրժուական կարգերի հաստատում։ Մասնավոր սեփականությունը հայտարարվում է սրբություն և անձեռնմխելի։ Երաշխավորվում են մասնավոր ձեռներեցությունը, արհեստագործությունը և առևտրի զարգացումը, ինչպես նաև մարդկանց ազատ գործունեությունը տնտեսության բոլոր բնագավառներում։

Սրանք են «Որոգայթ փառացի» հիմնական սկզբունքները։ Դրանք Հայաստանի համար սահմանում էին բուրժուա-դեմոկրատական հանրապետություն, ուր ժողովրդի կողմից ստեղծված և հաստատված օրենքն էր թագավորելու։ Այդ գաղափարները վերցվել են Լոկից և Մոնտեսքյոյից, բայց միաժամանակ որոշ հարցերում մի քայլ առաջընթաց է կատարվել դեպի դեմոկրատիզմ։ Այդ արտահայտվել է ընտրության կարգի մեջ, ուր բացառվում է որևէ սահմանափակում, երկրի կոլեգիալ ղեկավարության սկզբունքի մեջ, հարկեր սահմանելու դեմոկրատիկ բնույթի մեջ, երբ հարկի ծանր բեռը դրվում է հարուստների վրա, և այլ հարցերում։ Այս առումով Մադրասի խմբակը մշակել էր այնպիսի մի օրենսդրություն, որն իր դեմոկրատիկ բնույթով գերազանցում էր այդ ժամանակվա ամեն մի հանրապետական սահմանադրության։

Սակայն, դրա հետ միասին, նա ունի նաև իր թերությունները. ինչպես, օրինակ, պետության նեղ, ազգային բնույթը, երբ պետական ղեկավար օրգաններում ընտրվելու իրավունքից զրկվում են ոչ միայն այլազգիները, այլև այն հայերը, որոնք լուսավորչական եկեղեցու համայնքին չէին պատկանում, պետական օրգաններում կանանց մասնակցության բացառումը, այլազգիներին Հայաստանում անշարժ գույք՝ հող և այլն ձեռք բերելու իրավունքից զրկելը և ասիական առանձին հետամնաց սովորույթների պահպանումը։

Մադրասի խմբակի մշակած օրենսգիրքը չէր ելնում բուն Հա-

յաստանում տիրող իրադրությունից, չէր բխում Հայաստանի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման մակարդակի պահանջներից և այդ առումով այն ուտոպիա էր Հայաստանի համար։

Բնական գիտությունները

XV դ. խոշոր բնագետ-բժիշկ Ամիրդովլաթ (Գրիգոր) Ամասեցին (1414—1496) եղել է իր ժամանակի ամենազարգացած մարդկանցից մեկը, տիրապետել է բազմաթիվ լեզուների, շրջագայել է շատ երկրներ և երկար տարիներ ապրել ու գործել է Կոստանդնուպոլսում։ Ամիրդովլաթ Ամասեցին, բացի հմուտ, ճանաչված բժիշկ լինելուց, զբաղվել է նաև գիտությամբ։ Նա աշխարհաբար լեզվով գրել է «Օգուտ բժշկութեան», «Անգիտաց անպէտ», «Ախրապատին» և այլ աշխատություններ։ Նրա գործերը տոգորված են մարդասիրական և ժողովրդի մեջ լուսավորություն ու գիտություն տարածելու գաղափարով՝ «Գիտությունը լույս է, իսկ տգիտությունը խավար... ով որ ուսում ունի, նա լույս ունի»։

Արժեքավոր է նրա այն միտքը, թե ճանաչողության աղբյուրը փորձն է, փորձով կարելի է ստուգել և հայտնաբերել ճշմարտությունը։ Այս բոլորի հետ միասին Ամիրդովլաթ Ամասեցին, որոշ չափով տուրք տալով ժամանակին, առաջ էր քաշում այն թեզը, թե կրոնն ու գիտությունը իրար չեն խանգարում և կարող են զուգահեռաբար խրախուսվել ու զարգանալ։ Սա ցույց է տալիս Ամասեցու անհետևողականությունը տեսության մեջ, իսկ գործնականում, հիվանդությունները բուժելու և կանխելու հարցերում, նա ոչ մի զերբնական ուժ չի ընդունում։

XVII դարի առաջին կեսին իր բնագիտական աշխատություններով աչքի է ընկել Աբրահամ Կոստանդնուպոլսեցին։ Նա 1611 թ. ձեռնարկել է գրել իր հետաքրքիր աշխատությունը, որի վերնագիրն է՝ «Պատմութիւն անասնոց և գազանաց, չորքոտանեաց, սողնոց և թռչնաւորաց, թռչնոց և մարդկան, ծովային ձկանց և անասնոց»։ Հիշյալ աշխատության մեջ հեղինակը դասակարգում է կենդանիներին ըստ տեսակների, նկարագրում է նրանց հատկությունները, նշում ապրած վայրերը, նրանց տված օգուտն ու վնասը։ Աբրահամ Կոստանդնուպոլսեցին իր երկով մեծ ծառայություն է մատուցել հայ բնագիտական մտքի զարգացման գործում։

Մյուս բնագետը Ավետիք Բաղդասարյանն է։ Նա ծնվել է Տիգրանակերտ (Դիարբեքիր) քաղաքում և գրականության մեջ հաճախ անվանվում է Տիգրանակերտցի։ Ավետիքը աշխարհիկ մարդ էր։

Նա իր գիտական գործունեությունն սկսել է 1684 թ. և 35 տարվա ընթացքում գրքեր է գրել մաթեմատիկայի, աստղաբաշխության, տոմարագիտության և նույնիսկ երաժշտության մասին։ Նրա ամենակարևոր գործը «Տեֆտեր գիրքն» է, որի մեջ հեղինակը պարզաբանում է թվաբանական, տոմարագիտական, աստղաբաշխական հարցեր։

XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբներին միաժամանակ ասպարեզ են ելնում Ղուկաս Նուրիջանյանը (կամ Վանանդեցին)՝ Գողթն գավառի Վանանդ գյուղից, Խաչատուր Էրզրումցին (Առաքելյան) և Պետրոս Քալանթարյանը։ Նուրիջանյանը գրել է «Գանձ չափոյ, կշռոյ, թվոյ և դրամից բոլոր աշխարհի» գիրքը, որի մեջ խոսվում է նաև թվաբանական չորս գործողություններից մասին, «Դուռն իմաստութեան» վերնագրով դասագիրքը, «Բնագանութիւն իմաստասիրական կամ տարրաբանութիւն» և այլն։ Այս վերջին աշխատություններում Ղուկաս Նուրիջանյանը բացատրում է բնական երևույթները՝ ամպը, անձրևը, ձյունը, կայծակը, երկրաշարժը և տալիս նրանց առաջացման պատճառները՝ իր ժամանակի գիտության մակարդակին համապատասխան։

Խաչատուր Էրզրումցին գրել է «Բովանդակութիւն ամենայն ումանց» վերնագրով բնագիտական աշխատությունը, որի մեջ խոսվում է բնության, մաթեմատիկայի, աստղաբաշխության և այլ հարցերի մասին։ Իսկ Պետրոս Քալանթարյանը, որը սովորել է Մոսկվայում և այնտեղ զբաղվել է բժշկությամբ, գրել է «Բժշկարան համառօտ» խորագիրը կրող գիտական աշխատությունը և հավելվածում տվել է բառարան՝ գեղերին վերաբերող բառերի բացատրությամբ։

Վերահիշյալ բնագետների աշխատությունները դպրի առաջադիմության հասցրին հայ գիտական միտքը։ Դրանք, իրենց թերություններով հանդերձ, նորություն էին և խոշոր չափով նպաստում էին գիտության զարգացմանը բուն Հայաստանում։

Բառարանագրությունը

Կուլտուրական կյանքի առաջընթացը, հայ մտավորականության շփումը այլ երկրների գրական և գիտական աշխարհի հետ, ինչպես և հայոց լեզվի նկատմամբ այդ երկրների գիտնականների հետաքրքրությունը խթանեցին նաև հայոց լեզվի զարգացումը։

XVIII դ. երկրորդ կեսին Գրիգոր Խալդարյանը Պետերբուրգում կազմում և հրատարակում է հայ-ռուսերեն բառարան՝ «Գիրք որ կոչի Շավիղ լեզվագիտութեան» վերնագրով։ Նույն ժամանակներում, դարձյալ Պետերբուրգում, Կլեոպատրա Սարաֆյանի հե-

ղինակությամբ լույս է տեսնում ռուսաց լեզվի ուսուցման ձեռնարկ, որի մի մասը նույնպես բառարան է՝ հայերենից-ռուսերեն, ռուսերենից- հայերեն։

Բառարանագիտության մեջ մեծագույն վաստակ են ներդրել Վենետիկի Մխիթարյանները։ Դեռևս Մխիթար Սեբաստացու կենդանության ժամանակ նրա ղեկավարությամբ սկսվել էր հայերեն բացատրական բառարան կազմելու գործը։ Տասնյակ տարիներ մեղվաջան աշխատանք է կատարվել հայերեն դրական երկերից, փաստաթղթերից, արձանագրություններից բառեր, աշխարհի տարբեր վայրերից հայերեն ձեռագիր և տպագիր դրքեր հավաքելու և այդ բոլորից հայերեն ամեն մի բառի գործածության օրինակներ վերցնելու համար։

Այդ ժրաջան աշխատանքի արդյունքը եղավ այն, որ կազմվեց «Բառգիրք հայկազեան լեզուի» կամ, ինչպես այժմ սովորաբար անվանում են, Հայկազյան բառարանը։ Դա սուտինի և դեռևս չգերազանցված հայոց լեզվի բացատրական բառարանն է, որը լույս տեսավ 1749 թվականին։ Նրա հիման վրա նախապատրաստվեց և 1836 թ. հրատարակվեց «Նոր հայկազեան բառգիրք» լրացված և կատարելագործված աշխատությունը։

3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԸ

Գեղարվեստական գրականությունը

Հայ ժողովրդի մտավոր կյանքում թերևս գեղարվեստական գրականությունն է, որ XV—XVI դդ. միջավանդային շրջանում շարունակեց իր հարատև զարգացումը։

XV դ. աշքի ընկող բանաստեղծներից է **Մկրտիչ Նաղաշը**։ Նա ծնվել է Բաղեշ քաղաքի մոտ գտնվող Պոռ գյուղում XIV դ. վերջերին և ապրել է մինչև XV դ. երկրորդ կեսը։ Նաղաշը նշանավոր է նաև որպես նկարիչ և դրա համար էլ ստացել է **նաղաշ** (այսինքն՝ նկարիչ) մականունը։ Մկրտիչ Նաղաշը թողել է բազմաթիվ ոտանավորներ, որոնց մի մասն է միայն հրատարակվել։ Այդ ոտանավորներում բանաստեղծը շարունակում է Ցրիկի սրաբիցիան՝ քննադատում անարդարությունը, պախարակում հարուստներին և բարձրացնում սոցիալական հարցեր։ Նա դրել է նաև սիրո, բնության, գեղեցկության և պանդխտության մասին։ Նաղաշի բանաստեղծությունները, որոնք գրված են ժամանակի խոսակցական, այսինքն՝ աշխարհաբար լեզվով, թեև զերծ չեն կրոնական դաստողություններից, բայց իրենց էությամբ աշխարհիկ են։

Մկրտիչ Նաղաշի ժամանակակիցն է Առաքել Բաղիշեցին, իսկ նրանից հետո ապարեզ են մտել Հովհաննես Թլկուրանցին և Գրիգորիս Աղթամարցին, որոնք բացի կրոնաբարոյական ոտանավորներից գրել են նաև սիրո և բնության մասին, երգել են աշխարհիկ կյանքը։ Թլկուրանցին և Աղթամարցին իրենց աշխարհիկ բանաստեղծություններում զարգացնում են այն միտքը, որ մարդիկ չպետք է հրաժարվեն այս աշխարհի բարիքներից վայելելուց, որովհետև այլ կյանք նրանց համար չկա։

XVI դ. տաղանդավոր բանաստեղծը Նահապետ Քուչակն է։ Նրա անձնավորության մասին քիչ տեղեկություններ կան։ Նահապետ Քուչակի ստեղծագործությունները գերազանցապես սիրո թեմային են վերաբերում։ Նա իր բանաստեղծություններում գրել է մարդկային խոր զգացմունքներ ու հումանիզմ, զրանք արտահայտել է բանաստեղծական կատարելության հասած պատկերներով։ Բացի բանաստեղծություն գրելուց, նա զբաղվել է նաև երաժշտությամբ, երգել է իր ստեղծագործությունները։ Քուչակը համարվում է միջնադարյան հայ խոշորագույն լիրիկը, ժողովրդի մեջ անուն հանած ու նրա կողմից սիրված գուսանը։

XVII դ. բանաստեղծների մեջ պայծառ դեմք է Նաղաշ Հովնաթանը (1661—1722), որը հայտնի է նաև որպես նկարիչ ու երգիչ։ Նա ճանապարհորդել է շատ երկրներ, երկար տարիներ ապրել է Թիֆլիսում, գրել է սիրո մասին, երգել է բնության գեղեցկությունը, թողել է խրատաբարոյական ու երգիծական շատ ոտանավորներ։ Հովնաթանի երգիծական ոտանավորներում ծաղրվում են հոգևորականները, նրանց ընչաքաղցությունը և քծնանքը հարուստներին։

XVIII դ. հայ գեղարվեստական գրականությանը տվեց մի նոր պայծառ դեմք՝ Սայաթ-Նովային (1712—1795)։ Նա ծնվել է Թիֆլիսում, արհեստավորի ընտանիքում։ Վաղ հասակից մեծ սեր է տածել դեպի երաժշտությունն ու բանաստեղծությունը։ Սայաթ-Նովան գրել է անդրկովկասյան երեք ժողովուրդների լեզուներով՝ հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն։ Նրա բանաստեղծությունները բազմաբովանդակ են, ունեն սոցիալական ուժեղ գունավորում, արտահայտում են բանաստեղծի ոչ միայն սերը դեպի բնության գեղեցկությունը, այլև դժգոհությունը անարդարության, սոցիալական անհավասարության, տիրող դասակարգի դեմ, համակրանքը աշխատավոր մարդու նկատմամբ։

Սայաթ-Նովան իր երգերում արտահայտել է ժողովուրդների համերաշխության և եղբայրության գաղափարներ, սիրո հանճա-

բեղ երգիչը մեծ ժողովրդականություն է վայելում անդրկովկասյան բոլոր ազգերի մեջ։

Թատրոնը

XVI—XVIII դդ. Հայաստանի տարբեր վայրերում դուսանները, ժողովրդի միջից հանդես եկած դերասատարները և նույնիսկ մասնագիտացած դերասանները մեծ ավաններում, քաղաքներում և բազմամարդ այլ բնակավայրերում կազմակերպում էին բացօթյա, հրապարակային ներկայացումներ՝ պարում էին, երգում, երգիծական պատկերներ և երբեմն էլ մի քանի գործողություններով պիեսներ էին ցուցադրում։ Այդպիսի մի ներկայացման նկարագրությունը տվել է ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը։ Նա 1664 թ. եղել է Երևանում, դիտել է մի ներկայացում, որի ժամանակ նախ ցույց են տվել ըմբշամարտ, իսկ հետո երեք գործողությամբ մի կատակերգություն։ Ներկայացման ժամանակ դերասաններն ու դերասանուհիները իրենց դերերը կատարել են չափածոյով, երգելով պարել են նվագակցության տակ։

XVII դ. 60-ական թթ. հայկական թատերական արվեստի պատմության մեջ նշանակալի նոր երևույթ տեղի ունեցավ։ Լվովի քաղաքի հայկական դպրոցի աշակերտները իրենց ուսուցիչների օգնությամբ թատերական խմբակ են կազմակերպում և 1668 թ. ապրիլի 9-ին հայերեն լեզվով ներկայացում տալիս քաղաքի հասարակության համար։ Նրանք բեմադրում են «Հռիփսիմե կույսի նահատակությունը» ողբերգությունը։ Այն ներկայացվել է երաժշտության ուղեկցությամբ և մեծ հաջողություն է ունեցել։ Լվովի դպրոցի աշակերտների նախաձեռնությունը արձագանք է գտնում նաև մյուս հայկական գաղթավայրերում։ Այսպես վերակենդանացավ հայ հին թատրոնը և սկիզբ դրվեց նոր թատրոնի զարգացմանը։ Ուկրաինայի հայկական գաղթավայրերից հայ թատերական արվեստը անցավ Կոստանդնուպոլիս, ապա Վենետիկի Մխիթարյանների մոտ, որոնք XVIII դ. ներկայացումներ են կազմակերպում՝ բեմադրության նյութ դարձնելով Տիգրան Մեծի, Տրդատ III-ի, Վարդան Մամիկոնյանի և Բագրատունի թագավորների գործունեությունը։

Երաժշտությունը

Երաժշտությունը միշտ հայկական արվեստի անկապտելի մասն է եղել։ XV—XVIII դդ. հայկական երաժշտության մեջ զգալի տեղ են բռնում պանդխտական երգերը, որոնք արտահայտում են ժողովրդի թախիծն ու կարոտը օտարության մեջ գտնված իր զավակների նկատմամբ,

ինչպես և վերջիններիս կարոտը իրենց հարազատների ու հայրենիքի հանդեպ։

Ժողովրդական երաժշտությանը զուգահեռ ստեղծվել ու զարգացել է նաև աշուղական երաժշտությունը։ Ժողովրդական երաժշտությունից այն տարբերվել է նրանով, որ հանդիսացել է կոնկրետ մարդու, որևէ աշուղի, երգչի ստեղծագործությունը, ազգությունը ընդունելով դարձյալ ժողովրդական մեղեդիները, ժողովրդական երգերը։ Երգիչ-ստեղծագործողներից շատերը իրենք են գրել երգի խոսքերը և իրենք էլ եղանակել։ Այդպիսի երգահան-բանաստեղծներ են եղել Նահապետ Քուչակը, Նաղաշ Հովնաթանը, Շամչի Մելքոնը և ուրիշներ։

XVIII դ. գուսանական երաժշտության ամենախոշոր դեմքը Սայաթ-Նովան է։ Նա իր գրած բանաստեղծությունները երգի է վերածել և ինքն էլ երգել է՝ քամանչայի վրա նվագելով շղերազանցված վարպետությամբ։ Նրա երգերը, որ դեռևս XVIII դ. դարձել են անդրկովկասյան ժողովուրդների սեփականությունը, երգել են հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն լեզուներով։ Սայաթ-Նովայի երաժշտական ստեղծագործությունների շնորհիվ հայկական աշխարհիկ երաժշտությունն ավելի բարձր մակարդակի հասավ։

XV—XVIII դդ. շարունակեց զարգանալ նաև հայկական եկեղեցական երաժշտությունը։ Հորինվեցին նոր երգեր, կատարելագործվեցին հները։ Եկեղեցական երաժշտության զարգացման մեջ որոշ դեր են խաղացել Մասխալճի Հարությունը, Տեր-Պետրոս Մինասիպյանը և ուրիշներ։

1794 թ. Կոստանդնուպոլսում լույս տեսավ երաժշտության վերաբերյալ մի աշխատություն՝ «Նվագարան» վերնագրով։ Այդ գրքի հեղինակն էր Գրիգոր դպիր Գապաճադալյանը, որն իր աշխատության մեջ խոսել է հայկական, թուրքական և հունական երաժշտության մասին։ Դա առաջին հայերեն երաժշտագիտական աշխատություններից է։

Քանդակագործությունը և նկարչությունը

Հայաստանում քանդակագործությունը ծառայել է շենքերի զարդանկարմանը և զարգացել է շինարարությանն ու ճարտարապետությանը զուգընթաց։ XV—XVIII դարերում բարձրարվեստ շենքեր չեն կառուցվել։ Այդ պատճառով քանդակագործությունը մեծ զարգացում չի ունեցել։ Բայց այդ արվեստն օգտագործվել է փոքր հուշարձանների զարդաքանդակման համար։

ճանապարհների խաչմերուկներում կամ աշքի ընկնող տեղերում, բնակավայրերի մոտերքում և արբավայրերում դրվել են բազմաթիվ մանր հուշարձաններ, որոնք քանդակազարդվել են նուրբ ու կեղեցիկ փորագրություններով։ Հայ քանդակագործ վարպետը իր արվեստը կիրառել է առանձնապես խաչքարերի վրա, որոնց նըմուշները հիմա էլ գտնվում են հին գերեզմանատներում։

Հայկական արվեստի մեջ վերոհիշյալ դարերում զարգացման բարձր մակարդակի է հասել նկարչությունը։ Նախորդ դարերի նըման, մանրանկարչության հիմնական ասպարեզը եղել է ձեռագրերի զարդանկարումը և պատերի գեղանկարումը։ Մանրանկարչական արվեստը շարունակել է ծաղկել ու զարգանալ թե՛ բուն Հայաստանում, թե՛ հայկական գաղթավայրերում։ Մանրանկարչությունը ունեցել է իր բազմաթիվ ներկայացուցիչները, բայց մեծ համբավ և ժողովրդական ճանաչում են ունեցել հատկապես մեծ բանաստեղծներ Մկրտիչ Նաղաշը և Նաղաշ Հովնաթանը։ Վերջինս զարդանկարել է Էջմիածնի մայր տաճարի ներսի պատերը. նրա նկարների մի մասը մինչև այսօր էլ պահպանվում է դմբեթի պատերի վրա։

Հայաստանում նկարչական արվեստի մեջ մինչև XVII դ. համարյա բացառապես մանրանկարչությունն է գերիշխել։ Մակայն այդ դարում նկարիչներն սկսեցին ստեղծել նաև այլ բնույթի գործեր՝ դիմանկարներ, բնանկարներ և այլն։ Բայց ամենակարևորն այն է, որ նրանք սկսեցին յուրացնել և կիրառել եվրոպական առաջավոր նկարչական արվեստը։ Այս ուղղության պլխավոր ներկայացուցիչն է Մինաս Ջուղայեցին, որի մասին մեծ գովեստով է խոսում պատմագիր Առաքել Դավրիժեցին։ Մինասը ծնվել է Նոր Ջուղայում, նկարչություն է սովորել Հալեպում՝ մի եվրոպացի նըկարչի մոտ, նորից վերադարձել է Նոր Ջուղա, որտեղ գործել է մինչև իր մահը՝ մոտավորապես մինչև XVII դ. 70-ական թթ.։

Մինաս Ջուղայեցին մեծ տաղանդի տեր նկարիչ էր, նրա համբավը տարածվել էր ողջ Պարսկաստանում։ Նա Նոր Ջուղայի հարուստ հայ առևտրականների, պարսից շահի և խանների պալատները զարդարել է իր որմնանկարներով։

Մինաս Ջուղայեցուց հետո նույն դարում եվրոպական նկարչական արվեստն ուսումնասիրել է նաև Ստեփանոս Լեհացին, որը Լվովից դալիս է Էջմիածին և մնում այնտեղ։ Այդ երկու ժամանակակից նկարիչները հայկական նկարչական արվեստին տալիս են նոր շունչ, այն դուրս բերում մանրանկարչության շրջանակներից

և դնում զարգացման ավելի լայն ուղու վրա։ Մինաս Ջուղայեցին իր շուրջն է հավաքում աշակերտներ և նրանց սովորեցնում իր արվեստը։ Դժբախտաբար, այդ նշանավոր նկարիչների գործերը չեն պահպանվել կամ առայժմ անհայտ են, բայց փաստ է այն, որ նրանք են դրել նոր ուղղության հիմքը և դարձել հայկական նորագույն շրջանի նկարչական արվեստի նախակարապետները։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբաղա, *խան*, 593
Աբաս, *ազնվական*, 501
Աբաս, *թագավոր*, 450, 453, 462
Աբաս Մեզրատունի, *թագավոր*, 424, 443, 449
Աբաս Բագրատունի, *սպարապետ*, 416, 420
Աբաս Կյուրիկյան, *իշխան*, 490
Աբգար Եկեղեցի (Թոխատեցի) 608, 723
Աբսելդարեն, *թագավոր*, 108
Աբդալա, *Հայաստանի կառավարիչ*, 357
Աբլաբիոս, *պրեֆեկտ*, 237
Աբլղարիբ, *իշխան*, 533
Աբրահամ Արևելցի 328
Աբրահամ Երևանցի 731
Աբրահամ Կոստանդնուպոլսեցի, *քրնուզկոս*, 737
Աբրահամ Կրետացի, *կաթողիկոս*, 640, 695, 696, 730
Աբուբեքր, *զորավար*, 542
Աբու-Աբաս, *խալիֆ*, 394, 396
Աբուլավար 495
Աբուլավար, *էմիր*, 488, 490
Աբու-Մկդեմ Արծրունի 414
Աբու-Յուսուֆ, *օրենսգիր*, 360, 368
Աբու-Ջաֆր Արծրունի 414
Աբու-Ջաֆր էլ-Մանսուր, *զորավար*, 394, 396
Աբուսալ Արծրունի 434
Աբուսալ-Համազասպ, *թագավոր*, 455
Աբուսալ, *սարկավագ*, 407—409
Ագարանգեղոս 114, 160, 220, 225—227, 329
Ադդոն 172
Ադոնց Ն. 76, 285, 301
Ազրիանոս, *կայսր*, 183, 184
Աթա էլ-Մուլքանա 403
Աթանաս Ալեքսանդրացի 265
Աթաքիտուդա, *զորավար*, 233
Աթիլլա 269
Ամբանակ, *թագավոր*, 86—88
Ալավիա որդի Դավիթ, *օրենսգիր*, 566
Ալեքսանդր Մակեդոնացի 69, 100—106, 187, 730
Ալեքսանդր Ջուղայեցի, *կաթողիկոս*, 670
Ալեքսեյ, *պարսիկ*, 524
Ալեքսեյ, *ցար*, 654
Ալի, *խալիֆ*, 354
Ալի, *փաշա*, 610
Ալի-Աբմանի, *էմիր*, 378, 379
Ալիսե 523, 526
Ալի-Մաուրադ, *խան*, 715
Ալփ—Ասլան, *սուլթան*, 437, 488
Ամիրջանյան Միրզա 682
Ամեն 473
Ակակիոս, *պրոկոնսուլ*, 303—305

Անտոն, բժիշկ 571
Անտոն Բուլղար 461, 485
Անմազ, փեմբ, 421
Անմեղ Աղա-Աղա, քաղաքի, 417
Աղաթար 680
Աղամալ 705
Աղա-Մամեղ խան, շահ, 719—721
Աղաչան 661
Ամիտոս Մարկեբիանոս, պատմիչ, 236, 245—247, 255, 256, 507
Ամիր, զորավար, 400
Ամիրգուն, խան, 612, 612, 117, 618, 636,
Ամիրդովլաթ (Գրիգոր) Ամասեցի, բնագիտ բժիշկ, 571, 737
Ամիր-Օմար, զորավար, 537
Ամֆիկրատես Աթենացի, պատմագիր, 194
Այծեմիկ 495
Այվազ, առևտրական, 637
Անակ Պարթև 191
Անանես 471
Անանիա Նարեկացի 559
Անանիա Շիրակացի 10, 13, 205, 222, 307, 308, 313, 322, 334—339, 341, 724
Անանուն (Շապուհ Բագրատունի), պատմագիր, 561
Անաստաս, կաթողիկոս, 341
Անաստաս, կայսր, 303
Անաստոլիոս, զորավար, 278
Անդեկան, մաղզպան, 296
Անդովկ, իշխան, 235, 244
Անդրիաս, փաթոլիկոս, 659
Անդրիաս, հարտարապետ, 574
Անդրոնիկոս Եվփորդի, զորավար, 515
Անդրոնիկոս Կոմնենոս, զորավար, 514, 516
Անիա, թագավոր, 76, 77
Անտիոքոս III 108—110, 115
Անտիոքեն, փիլիսոփա, 334
Անտոն Շերլի 609
Անտոնիոս Կարակալլա, կայսր, 187
Անտոնիոս Պիոս, կայսր, 184
Անուշվան 286
Աշխատաբար, թագավոր, 182
Աշխեն, 225
Աշոտ I 415—420, 447
Աշոտ II (Աշոտ երկաթ) 423—425, 436, 440, 449
Աշոտ III 443, 447, 450, 451
Աշոտ IV 456—458
Աշոտ Արծրունի 407—409, 411, 412
Աշոտ Բագրատունի, Հայաստանի կուսակալ, 335
Աշոտ Բագրատունի, Հայոց իշխան, 391—393, 399, 400, 402
Աշոտ Թագրատունի, սպարապետ, 423
Աշոտ Բագրատունի, Վրաստանի կուսակալ, 406
Աշոտ-Երեմիա, թագավոր, 449, 455
Աշոտ, իշխան, 410, 411
Աշոտ, իշխան, 387, 388
Աշոտ Մասկեր Բագրատունի, Հայոց իշխան, 402, 406
Աշուշա, բգեշխ, 276, 286
Ապլնաս, էմիր, 451, 453
Ապլմախրա 421
Ապրվարդ, էմիր, 466
Ապպիանոս 117, 126, 166
Առաստոմ Գնունի 289
Առավան, հարտարապետ, 262, 323
Առաքել, խոջա, 659 660
Առաքել Բաղիշեցի 740
Առաքել Դավրիժեցի 609—617, 724, 727, 728, 743
Առաքելյան Անտոն 684
Առաքել Սյունեցի 558
Ասիա, զորավար, 460, 461
Ասլամազ դոլի, խան, 677
Ասլան, խան 582
Ասկլեպիադես 339
Աստվածատուր Համատանցի, կաթողիկոս, 672, 684
Ասսուրբանիպալ, թագավոր, 57, 58
Ասսուրնազիրպալ II 34, 36
Ասսուրնիրարի IV 42
Ավազ 680
Ավան Յուղրաշի 673, 675, 691, 693, 694
Ավնտես 681
Ավքանդի 675, 677

Ավշին, *էմիր*, 420, 421
Ավրելիանոս, *կայսր*, 190
Ատան, *իշխան*, 527
Ռոում Դեուին 289
Աստվկա, *պարիսպ*, 266, 261, 326
Աստեբասեն, *քաղաքներ*, 420, 422
Ատրուսիզդ, *մարզպան*, 284
Ատրշնասպ, *մարզպան*, 287, 289, 290
Արամ, *թագավոր*, 36, 37
Արգիշտի I 40—42, 46, 53, 61, 63, 79
Արգիշտի II 56
Արգիր, *գորավար*, 377
Արդ էլ-Մելիք, *խալիֆ*, 356, 389
Արինթեոս, *գորավար*, 252
Արիոբարզան, *Կապադովկիայի թագավոր*, 122
Արիոբարզան, *թագավոր*, 171, 172
Արիստակես Լատիվերցի 443, 445, 471, 472, 481, 485, 487, 563, 564
Արիստոնիկ 332, 340, 570, 720, 727
Արմեն, *քրմապետ*, 226
Արղությյան Հովսեփ, *արքեպիսկոպոս*, 707, 712—718, 721
Արղուն, *հարկահավաք*, 585, 588, 592
Արղուն, *դան*, 593
Արշակ I 173
Արշակ II 236—251, 254, 263
Արշակ III 259—262
Արշակ Արշակունի, *իշխան*, 304
Արշամ, *թագավոր*, 107, 108
Արշավիր, *իշխան*, 235
Արշավիր Կամսարական 289, 291
Արտաշես, *թագավոր*, 120
Արտաքսես I 12, 109—116, 152, 159, 166, 194, 196, 197
Արտաշես II 146—148, 156
Արտաշես III 236
Արտաշես Մամիկոնյան 284
Արտաշիր, *թագավոր*, 260
Արտաշիր I 188—190
Արտավազդ, *Ատրպատականի թագավոր*, 147
Արտավազդ, *Արտավազդ II-ի տղան*, 146
Արտավազդ, *Հայաստանի թագավոր*, 190
Արտավազդ I 113, 117
Արտավազդ II 141—147, 149, 156, 162, 166, 194, 195, 197, 199, 209
Արտավազդ IV 172
Արտավազդ Մամիկոնյան 397
Արտավազդ Մամիկոնյան, *սպարապետ*, 232
Արտավան, *նախարար*, 250, 252, 255
Արտավան III 172, 173
Արտավան V 187—189
Արտավան Արշակունի, *իշխան*, 304
Արտաֆերնես II 90, 91
Արմա 471
Արմենդայոս 176

Բաբեկ 403—405
Բաբուրյան Ղազարոս 691
Բագրատ Բագրատունի, *Հայոց իշխան*, 407—410
Բագրատ Բագրատունի, *սպարապետ*, 402
Բագրատ (Բագրատ), *գորավար*, 122, 125
Բալաձորի, *պատմիչ*, 353, 393
Բալոիճ, *իշխան*, 538
Բակուր, *քրիշտ*, 232
Բակուր, *թագաժառանգ*, 143
Բակուր II 182
Բակուր Արշակունի, *թագավոր*, 184, 185, 199, 209
Բաղդասար Դպիր 725
Բաղդասարյան Ավետիք (Տիգրանակերտցի), *քանդակ*, 737
Բաղրամյան Մովսես 702, 707—709, 725
Բայազիդ I 597
Բայազիդ II 604
Բայաբեղար 675, 676
Բաչու, *նոին*, 529, 531, 583
Բաա Սահակունի 257—259
Բասյանան Եղնատցի, *պատմագիր*, 195, 196
Բասրեղ, *արքեպիսկոպոս*, 529

Բարեղ I 380, 416, 418
Բարեղ (Վասիլ) II 452, 454, 456, 457
Բարեղ Դավառեցի 727
Բարեղ Կեսարացի 323, 328, 335, 340
Բեկ-Թեմուր, էմիր, 541
Բեշր, զորավար, 425
Բեմիր, ասմիկան, 396
Բիզարս (Ֆեդիտար), սուլթան, 531
Բյուրֆ Էդմոնդ, 698
Բազոմիլ 382
Բռենմունդ, դուքս, 522, 523
Բռենմոնդ, իշխան, 538
Բռենմունդ Միսկանի, դուքս, 526, 528
Բոպպ Ֆ. 71
Բուզ, զորավար, 305
Բուլա, հարկահավաք, 595
Բուլա Շարաբի, զորավար, 410—414, 416

Գաբրիել, բժիշկ, 340
Գագիկ I 447, 453, 455, 456
Գագիկ II 458—460, 508, 510
Գագիկ Արասյան, թագավոր, 462, 486, 488, 508
Գագիկ Աղոսմերան Արծրունի 421
Գագիկ Արծրունի, թագավոր, 422—424, 449
Գագիկ Արծրունի, նախարար, 395, 396
Գագիկ-Հաշիկ Արծրունի, տե՛ս Գագիկ Արծրունի
Գաղիշո Հասլանովի 288
Գաղիշո Մաղխազ, իշխան, 286
Գալիանոս 339, 340
Գալձակ, Հարտարարարապետ, 574
Գայոս Կեսար, զորավար, 171, 172
Գասպարաշյան Դրիգոր 742
Գարագաշյան Ա. 96
Գլինոն Սյուրի, իշխան, 286, 294
Գենեսիոս-Տիմոթեոս 375
Գեորգի 675
Գեորգի III 496, 497, 500
Գեորգի Լաշա, թագավոր, 581, 592
Գերմանիկոս, զորավար, 173
Գրլմաչ 448
Գլակ, նախարար, 250, 252, 255
Գյուտ, կաթողիկոս, 283, 286, 287
Գեել 237, 244
Գոթիցին, փոխ-կանցլեր, 701—702
Գոլովին 667, 668
Գոզ Վասիլ, իշխան, 509, 511
Գոռ, սպարապետ, 446
Գորգ Ճոնակ, Հարտարապետ, 574
Գրեկով, ակադ., 652
Գրիգոր 600, 659
Գրիգոր, արքեպիսկոպոս, 505
Գրիգոր, եպիսկոպոս, 474
Գրիգոր, կաթողիկոս, 600
Գրիգոր, Նկարիչ, 574
Գրիգոր, վարդապետ, 681
Գրիգոր I 461, 490
Գրիգոր II 490
Գրիգոր Ակներցի 565, 588
Գրիգոր Աղթամարցի 740
Գրիգոր Անավարզեցի, կաթողիկոս, 535
Գրիգոր Դարանաղեցի (Կամախեցի) 616—618, 728, 729
Գրիգոր-Դերենիկ, իշխան, 417
Գրիգորիս, բժիշկ, 571
Գրիգոր Լուսավորիչ 225, 227, 233, 320, 652
Գրիգոր Մագիստրոս 458, 459, 461, 465—467, 471, 475—479, 481, 482, 485, 559, 568, 570, 576
Գրիգոր Մամիկոնյան, իշխան, 391—393
Գրիգոր Մամիկոնյան, Հայաստանի կառավարիչ, 354, 355
Գրիգոր Մամիկոնյան, նախարար, 296
Գրիգոր Նազիանզացի 323, 328
Գրիգոր Նարեկացի 466, 471, 476—479, 559—561, 576
Գրիգոր Նյուսացի 340
Գրիգոր Պանլավունի, տե՛ս Գրիգոր Մագիստրոս
Գրիգոր Սոսիան, իշխան, 417, 423, 424
Գրիգոր Տաթևացի 558, 570
Գրիգոր Տղա, կաթողիկոս, 653

Դրիգոր Տաթևացու, *վանական*, 652
Գրիգոր Քեռուցի 564
Դուրաս, *վանական*, 125, 135
Գուրգեն 313
Գուրգեն, *թագավոր*, 453
Գուրգեն, *իշխան*, 451
Գուրգեն Ապուսալի, *իշխան*, 417
Գուրգեն Արծրունի, *իշխան*, 408, 412—414
Գուրգեն Արծրունի 422, 424
Գուրգեն Դեռնի 424
Գեորգ Գառնեցի, *կաթողիկոս*, 417, 421
Գեորգ Մարպետունի, *զորավար*, 425, 426, 446

Դալարջին, *զորավար*, 89
Դանիել Առաջ, *episkopos*, 324
Դանիել Առաջ, *կաթողիկոս*, 233
Դավթակ Քերթող 331
Դավթուկ, *զորավար*, 442
Դավիթ 681
Դավիթ, *թագավոր*, 586, 592
Դավիթ, *իշխան*, 410, 411
Դավիթ Անհաղթ 331, 333, 334, 722, 727
Դավիթ Աննաղան, *թագավոր*, 451, 452, 462
Դավիթ (Բաղ), *մելիք*, 676
Դավիթ-Բեկ 675—678, 686—692, 694, 732
Դավիթ Գեռնի 424
Դավիթ Սասեցի 586, 587
Դավիթ Կյուրիկյան 490
Դավիթ Կյուրապալատ, *իշխան*, 452—454
Դավիթ Մամիկոնյան, *իշխան*, 391, 392
Դավիթ Մաշկևոր 376
Դավիթ IV (Նիկաբար) 494, 495
Դավիթ Սահառունի 318
Դավիթ Տիրատոր 559
Դատարի, *եպիսկոպոս*, 231, 232
Դարդեն, *պատմագրի*, 540
Դարեհ I 85, 88—90
Դարեհ III Կոդոման 100, 103
Դատաղ, *թեկ*, 673
Դեղեատեն, *թագավոր*, 495
Դենչապուռ 270—272
Դը Վիոն, *մինեխատ*, 660
Դիոգենես IV 489
Դիոնիսիոս Թել-Մահրացի 368
Դիոնիսիոս Թրակացի 331.
Դիոն Կասիուս 134, 147, 189
Դիոսքորիդես 339
Դմիտրի, *իշխան*, 646
Դալզարապով 686
Դավ, *զորավար*, 377
Դուզոսա, *նոին*, 582

Զգեզ, *ասորական*, 346
Զգնիկ Կոզբացի 328, 335
Զգոպես 331
Զեկասերինա I 685, 686
Զեկասերինա II 697, 702, 710—713, 715, 721
Զելիա, *զորավար*, 474
Զեղիազար Այնթապցի, *պատրիարք*, 659
Զլիշն 270—272, 274, 276, 277, 281, 282, 285
Զենոն Գ. 75
Զատի 472
Զաքի Հասան-Ջալալյան, *կաթողիկոս*, 669—675, 684, 685, 691, 692, 694, 731
Զաքի Նշեցի 559
Զվենեն 105—107
Զվանիտա 236
Զոհրաբ Զալնալի Քեռմյուռեյան 661, 730
Զուլոյ Զուլոնունի, *քրմապետ*, 105, 109, 160
Զուլանդ IV 105, 106, 194, 196
Զուլանդ Սակալանյաց, *թագավոր*, 86, 87
Զվիվան, *կաթողիկոս*, 505

Զաքել 527, 528
Զաքարիանոս, *թագավոր*, 131
Զարեհ, *Արտաշես I-ի տղան*, 113
Զարեհ, *թագավոր*, 108—112, 115, 120

Զարեհ, *Տիգրան II-ի որդան, 136*
Զարեհ երվանդեան *141*
Զարմանզոփտա *541*
Զարմանդոփտա, *թագուհի, 259*
Զամարիա *375*
Զաքարիա, *եպիսկոպոս, 705*
Զաքարիա, *վարդապետ, 660*
Զաքարյան Սվազ, *իշխան, 582, 584, 586, 592*
Զաքարյան Զաքարե, *ատաբեկ-սպասալար, 497—500, 583*
Զաքարյան Զաքարե, *իշխան, 592*
Զաքարյան Իվանե *497—501, 581, 582*
Զաքարյան Շահնշահ, *իշխան, 583, 584, 592*
Զաքարիա Քանաքեռցի *617, 627, 636—640, 729*
Զենոբ Գլակ *159, 226*
Զենոն, *կայսր, 300*
Զենոն-Արտաշես, *թագավոր, 173*
Զենոն Սոսիկ *332, 333*
Զին, *զորավար, 250*
Զիպարեի, *թագավոր, 78*
Զուրակ Կամսարական *313*
Զուրզ Պլատան, *գոմս, 720, 721*

Էդկոզ, *էմիր, 495, 496*
Էլիկում Օրբելյան, *իշխան, 501, 582, 584*
Էմբաս, *զորավար, 88*
Էմիր իբն-Եզիդ *593*
Էմինուզ-աղա Մինասյանց, *առևտրական, 649*
Էնգելս Ֆ. *19, 47, 166, 217, 265*
Էոմեր, *զորավար, 541*
Էվրիպիդես *143, 198*
Էրատոս, *թագուհի, 150, 156, 172*
Էրիմենա *58*

Թագեոս *681*
Թադեոս Սեբաստացի, *վարդապետ, 606*
Թաթիկ *681*
Թաթուլ, *զինվոր, 486*
Թանմազ, *շահ, 684*
Թանմազ I *605*
Թամար, *թագուհի, 497—499*
Թարխան, *յուզբաշի, 691*
Թարխան, *վանաբակոն, 705*
Թեմուրաշ, *զորավար, 537*
Թեոդոսիոս Պեշորացի *646*
Թեոդորա, *կայսրուհի, 377*
Թեոդորոս *317*
Թեոդորոս, *կայսր, 269, 267, 269, 278, 326*
Թեոդորոս Մեծ, *կայսր, 299*
Թեոդորոս Մոպսուեստացի *323*
Թեոդորոս Ռշտունի, *սպարապետ, 346—354, 387*
Թեոն *333*
Թիգլաթպալասար I *78*
Թիգլաթպալասար II *33, 34*
Թիգլաթպալասար III *43*
Թոդրոս *471*
Թոխտամիշ Մյուրաբ, *խան, 635, 636*
Թոմաս *656*
Թոմաս *651*
Թոռնիկ, *իշխան, 491*
Թովմա Արծրունի *273, 362, 407, 410—412, 435, 444, 563, 575*
Թովմա Մեծոփեցի, *պատմագիր, 596, 597, 600, 601, 728*
Թորամանյան, *Հարությունաբեկ, 349*
Թորոս *532*
Թորոս *511*
Թորոս *513—516*
Թորոս, *զորավար, 653, 675, 677*
Թորոս Ռոսլին, *նկարիչ, 574, 578*
Թորոս Տարոնացի, *նկարիչ, 574*
Թուղուրլի-Ինանուրաս, *թագավոր, 33*

Միրամ, *զորավար, 411*

Իբն ալ-Ասիր, *պատմագիր, 409*
Իբն ալ-Ֆարիհ, *պատմագիր, 427*
Իբն-Նալբանդ *652*
Իբրահիմ *414*
Իբրահիմ, *խան, 705, 710, 714, 715, 719, 720*
Իբրահիմ, *փաշա, 679*
Իբրահիմ Ռանդալ, *զորավար, 484*
Ինինյան Դավիթ *727*
Ինոկենտիոս III, *պապ, 281*

Իշոյանի, *թագավոր*, 38
Խանակ ֆրն-Իսմայիլ 413
Իսկանդար 597, 598
Իսրայել Օրլի 662—672, 700
Իվան IV 653
Իվանի 501
Իվանե Օրբելյան 497, 500
Իվան Կուրապալատ 683, 685

Լազարյան Հովհաննես 702, 707, 712—716
Լենգթեմուր 596—598, 727
Լեո 730
Լեոնտիոս, *զորավար*, 356
Լեոպոլդ I 663—666
Լեպիդոս 144
Լիբիանոս 323
Լիպարիտ, *իշխան*, 485
Լիպարիտ, *սպարապետ*, 541
Լիպարիտ Օրբելյան 501
Լյուդովիկոս XIV 659, 660, 666
Լուկիանոս Սամոսատցի 201
Լուկիոս Վերոս 185
Լուսիոլոս 127—135, 137, 141, 194
Լուսինյան Գրիգոր 654, 655
Լուսինյան Բոհեմունդ 538, 540
Լուսինյան Գալիբոն, *տե՛ս Կոստանդին* III
Լուսինյան Չիվան, *տե՛ս Կոստանդին* II
Լևոն 533
Լևոն, *կայսր*, 286
Լևոն, *մարշալ*, 528
Լևոն I 511—514
Լևոն II 520—527, 546, 548, 551, 565
Լևոն III 532—534, 555
Լևոն IV 535, 536
Լևոն V 537—540
Լևոն VI 542
Լևոն 3-րդ Իսավրացի, *կայսր*, 286

Խաչ, *եպիսկոպոս*, 242
Խաչատրյան Պապա 702
Խալաթյանց Դ. 96
Խալդարյան Գրիգոր 738
Խանդամիրյան Հովհաննես 635
Խաչատուր Գաղատացի, *կաթողիկոս*, 659, 660
Խաչատուր Երզրումցի (Խաչատուր Ա-ռամելյան) 734, 738
Խաչատուր Վենարացի 724
Խաչատուր Ջուղայեցի, *պատմագիր*, 649, 650, 726, 732
Խաչիկ, *կաթողիկոս*, 462
Խրիմյան, *պարսկական մարտերի առաջնորդ*, 379—381, 386
Խոտեցի Հովհան 410, 411
Խուրս 294
Խոշամ 592
Խոշամալյանց Թովմաս, *պատմագիր*, 732, 733
Խոշաքանյան Գրիգոր, *ճանապարհորդ*, 707
Խոսրով, *պարսկական թագավոր*, 182
Խոսրով, *Պարսկաստանի թագավոր*, 315, 317
Խոսրով I 187
Խոսրով II 191
Խոսրով IV 260—262
Խոսրով Անձևացի 576
Խոսրով III Կոդակ 227—262
Խոսրով Նուշիրվան, *թագավոր*, 306, 307, 311—313
Խորեն Խոսրոսանի, *մաղխազ*, 280, 281

Մեհրան, *նկարիչ*, 574, 578

Կալինիկ 372
Կալիստենես 331
Կալիտա, *պարսկական մարտերի առաջնորդ*, 380
Կամարա 473
Կամբիզ, *թագավոր*, 88
Կամենաս (Կոմիանոս), *զորավար*, 461, 462, 485
Կամպանյան Գրիգոր 712
Կառչիկ Հովհաննես 681
Կարամ 386
Կավատ, *թագավոր*, 317
Կարաճեի, *թագավոր*, 75—77
Կարքեսա, *պարսկական մարտերի առաջնորդ*, 377—379, 386

Կարեն, զորավար, 250
Կիմաար, թագավոր, 58, 59, 84
Կիո Սանակ, վոստիկան, 518
Կիրակոս Դանձակեցի 445, 565, 582—587, 589
Կիրակոս Վիրապեցի 600
Կիրակոս Տրապիզոնցի 722
Կիրսիլոս Փարպալանցի 69
Կլեոպատրա, թագուհի, 147
Կլեոպատրա, Տիգրան II-ի կինը, 121
Կյուրեղ 471
Կյուրիկե, թագավոր, 462, 490
Կյուրոս, թագավոր, 86—88
Կյուրոս Կրոսեր 90, 91, 97
Կոզմաս III, դուքս, 663, 665, 666
Կոլբեր, մինիստր, 659, 660
Կոնստանդին-Սիլվան, սպանիկյանների առաջնորդ, 374
Կոնրադ 524
Կոստան Բեյ 661
Կոստանդ II 349, 350, 352, 354
Կոստանդին 676
Կոստանդին, կայսր, 370
Կոստանդին, վարժապետ, 650
Կոստանդին I 510, 511
Կոստանդին II 538, 540, 542
Կոստանդին III 538, 540
Կոստանդին IV 541
Կոստանդին V 541
Կոստանդին XI 462
Կոստանդին Գունդստաբլ, Հեթում I-ի Տայրը, 527—529
Կոստանդին Գունդստաբլ, Օշին սպայի եղբայրը, 537, 538
Կոստանդին Նվիրաբոլ, զորավար, 517
Կոստանդին Երզնկացի 561
Կոստանդին Լամբրոնացի, իշխան, 589
Կոստանդին Կալման, զորավար, 517
Կոստանդին V Կոպրոնիմոս, կայսր, 392
Կոստանդին Մեծ, կայսր, 227, 231, 237
Կոստանդինոս, վարար, 234—237, 244—247
Կոստաս 237
Կորթալոն, զորավար, 175—177, 179, 180
Կորյուն 266, 302—326, 328, 239
Կրեշմեր Պ. 75
Կոնձիկ, թոնդրակյանների առաջնորդ, 472—474
Կոտաե, զորավար, 394

Հաբիբ իբն-Մասլամա, զորավար, 333, 354
Հազարամեհան, զորավար, 293, 295
Հայկազուն I 262, 326
Հայկազուն II 269, 270, 274—276, 287, 295
Հայոր, եպիսկոպոս, 474
Հայոց, կաթողիկոս, 540
Հայոր Խորենցի, եպիսկոպոս, 634
Հայոր (Հարի Հայոր) 472, 481
Հայոր Մեղապարտ 722
Հայոր Նամախեցի, կաթողիկոս, 700, 713
Հայորջան 637, 640
Հայոց Ջուղայեցի, կաթողիկոս, 655, 656, 661, 724
Համազասպ, սպրկոնասպ, 304
Համազասպ Արծրունի 395, 399
Համազասպ Մամիկոնյան, զորավար, 281
Համազասպ Մամիկոնյան, Հայաստանի կուսակալ, 354
Համամ Ամատունի 369
Համդալլան Ղազվինի 589
Համզա 601
Համզե Միրզա, զորավար, 606
Հայր Մուրդեան 239
Հանդիբեկյան Հովհաննես 681
Հանիբալ 114
Հասան, ասորիկան, 396, 397
Հասան Ալի 601
Հասան Հավնունի 422
Հասան-Ջալալ, իշխան, 592
Հարիր իբն ադ-Թայ (Հերբ) 366, 367
Հարություն 682
Հարությունյան Գրիգոր (Գրիգոր խան) 651
Հարուն, էմիր, 495

Հաուն ալ-Դաշիդ, խալիֆ, 403
Հնթոում 541
Հնթոում, պատմիչ, 566
Հնթոում I 528—533, 551, 555
Հնթոում II 534—536
Հնթոում Լամբրոնացի, իշխան, 524, 529
Հնթում Ջամբոլա, իշխան, 541
Հնյդար-դուլի, խան, 635
Հնրիխ I 523, 524
Հնու, թոնդրակյանների առաջնորդ, 471
Հնու, Հարտարարեան, 574
Հերակլ I 317, 318
Հերակլ II 699—701, 708, 710, 719, 720
Հերմես Եռամեծ 332, 333
Հերոդոտ 12, 90, 93, 94, 96
Հիշամ, խալիֆ, 366, 391
Հիպոկրատես 399
Հմայակ Մամիկոնյան 397
Հմայակ Մամիկոնյան, Վարդանի եղբայրը, 278, 284, 286, 325
Հյուրշման Հ. 71
Հռադամիզդ, թագավոր, 409
Հռիփսիմե, Աշոտ I-ի մայրը, 409
Հռիփսիմե, կույս, 652
Հռոփանոս, դեսպան, 325
Հոմերոս 77
Հոնոնց Տիգրան, առնտրական, 504
Հովիաննես, կաթող, 247, 258
Հովհան Եկեղցի 325, 328
Հովհան Մամիկոնյան, պատմիչ, 312, 313, 331
Հովհան Մայրավանեցի 310
Հովհան Մանդակունի, կաթողիկոս, 198, 199, 290, 344
Հովհաննես 676
Հովհաննես, episkoposներ, 468, 469
Հովհաննես, կաթողիկոս, 617
Հովհաննես, կաթողիկոս, 703, 714
Հովհաննես, քարտուղար վարքի, 374
Հովհաննես Արշակունի, իշխան, 304—306
Հովհաննես Դրասխանակերտցի (Դվինեցի), կաթողիկոս, 322, 418, 419, 423, 436, 465—468, 470, 473, 562, 563
Հովհաննես Թազրևանցի, կաթողիկոս, 316
Հովհաննես II Դարեղեցի, կաթողիկոս, 331
Հովհաննես Երզնկացի 561, 569
Հովհաննես Եկեղեցի, պատմիչ, 317
Հովհաննես Թլկուրանցի 541, 740
Հովհաննես Թորոսի (Արևելցի), պատրիարք, 659, 660
Հովհաննես Իմաստասեր 341, 559, 568, 571
Հովհաննես Կոմնենոս, կայսր, 512, 516
Հովհաննես Հերմոնեցի 600
Հովհաննես Որոտնեցի 558, 559, 570
Հովհաննես Սեբաստացի, վարդապետ, 644
Հովհաննես Սմբատ, թագավոր, 456—458, 491
Հովհան Ոսկեբերան 323, 328, 507
Հովհան Փիլիպ, կուրֆիրատ, 662—667, 676
Հովհան Օձնեցի, կաթողիկոս, 373, 374
Հովհան, episkoposներ, 700, 704, 705, 707, 709
Հովսեփ Էմին (Էմին Հովսեփի Էմինյան) 695—709, 713, 718
Հովսեփ 375
Հովսեփ Գաղնեցի 325, 328
Հովսեփ Վայոցձորեցի, կաթողիկոս, 273, 275, 280, 281, 297, 323
Հովսեփ Ֆլավիոս 173
Հորացիոս, բանաստեղծ, 149
Հռոմանոս III 132, 136—140
Հռոմանոս IV 144, 148
Հռոմանոս Կամսարական 292
Հռոմեոս 473
Հուզդանեան, թագավոր, 76, 77
Հուլան 531, 588, 593
Հուլիանոս 236
Հուլիանոս, զորավար, 246, 247
Հուլիանոս, կայսր, 235
Հուլիոս Կեսար 142
Հուսեյին, շահ, 673

Հուսիկ, *փաթաթիկոս*, 233, 255
Հուստինիանոս, *կայսր*, 14, 300, 301, 303—305
Հուստինիանոս II 356
Հուստինոս, *կայսր*, 311

Ձվիկ, *Վահան Մամիկոնյանի մայրը*, 286

Ղազան, *խան*, 534, 590, 591, 593
Ղազար, *Խոնգրակյանների առաջնորդ*, 471
Ղազար Փարպեցի 271, 274, 285—290, 293—295, 332; 330
Ղազի, *խան*, 610
Ղարա-Մամմադ 596
Ղարա-Յուսուֆ 596, 597
Ղափանցյան Գ. 73, 76
Ղալամ Ալի, *խան*, 710
Ղուկաս, *փաթաթիկոս*, 714
Ղուկաս Սեբաստացի 732
Ղազարմշի 595
Ղևոնդ, *երեց*, 276, 280, 281
Ղևոնդ, *պատմիչ*, 331, 356, 369, 392, 396, 398
Ղևոնդ Հայկազն 323, 332

Ճալալ, *դուքս*, 512
Ճոշին Հակոբ, *բժիշկ*, 571

Մաժան 113
Մաղխաս 681
Մակար, *պատրիարք*, 658
Մահմադ, *խան*, 710
Մահմադ-զադի, *խան*, 635
Մահտեսի Մուրադ (Նահմուրադ) Բաղիշեցի 659, 660
Մաղամելիք 675
Մամբրե Վերծանող 328, 331
Մամբուն 453
Մանանդյան Հ. 96, 186, 241
Մանդու, *դան*, 530, 531
Մանիս Ավվիլիոս, *գնոստ*, 122
Մանկայոս, *զորավար*, 129
Մանչուկ, *ցմիր*, 541
Մանվել 301
Մանվել, *Հարտարապետ*, 573
Մանվել, *նախարար*, 574
Մանվել Կոմնենոս, *կայսր*, 513, 516
Մանվել Մամիկոնյան 259
Մանուչ 488, 495
Մաս Ն. 72, 73
Մասխալցի Հարություն, *երգահան*, 742
Մասուդի, *պատմիչ*, 404
Մավրիանոս 352
Մատթեոս Մարեցի 724
Մատթեոս Վանանդեցի 724
Մատթեոս Ուռհայեցի 427, 442, 450, 454, 455, 463, 490, 510, 514, 564, 565
Մար Աբրահամ Կաթինա (Մծուրնացի) 195
Մարգար, *նախարար*, 574
Մարգարյան Թարխան 702
Մարկիանոս, *կայսր*, 278
Մարկիոնոս, *կայսր*, 187, 188
Մարկո Պոլո 564
Մարկոս Անտոնիոս 144—148
Մարկոս Ավրելիոս, *կայսր*, 184
Մարկոս Կրասոս 142—144
Մարկվարտ Հ. 327
Մարմ Կ. 161, 166, 221, 584, 594
Մամարեն, *փոխարքա*, 127
Մեղիոս Լարիսացի 69
Մեխլու 616—618
Մենոն, *զորավար*, 104
Մենուա, *թագավոր*, 38—41, 47, 79
Մելիք Աբել 714
Մելիք-Ահմադ 513
Մելիք-Բախտամ 714
Մելիք Խրայել 661, 662
Մելիք Հաբսամ 706
Մելիք Հովսեփ 673
Մելիք Հովսեփ 705, 706
Մելիք Հովսեփ 705
Մելիք Մեղրամ 714
Մելիք-Նասիր, *սուլթան*, 537, 538
Մելիք-շահ 439, 490
Մելիք-Մախրազ 664
Մելիքսեթ Վժանացի 723, 727
Մեսրոպ Մաշտոց 262, 267, 322—328, 333

Մեսոպ 341
Մեսրոպարոս Սկեվռացի 127, 194
Մերուժան, դարձվար 129
Մերուժան Արծրունի, նախարար, 247, 248, 253
Մերուժան Արծրունի 278
Մժեմ Դեմրի 309, 317
Մլեհ, թագավոր, 513, 516—518
Մլէհ, թագուհի, 574
Մխիթար, կաթողիկոս, 540
Մխիթար Այրիվանեցի 566
Մխիթար Անեցի 559
Մխիթար Գոշ 502—504, 560, 563, 567, 569, 647
Մխիթար Հերացի 569, 571, 579
Մխիթար Սեբաստացի 723, 734, 739
Մխիթար Սպարապետ 675, 677, 637—689, 692—694
Միթրդատ, դարձվար, 122
Միթրդատատես, թագավոր, 103, 104, 106
Միրրեն (Միհրան), սատրապ, 104
Միրզա Թաղիր 672
Միրզախան 705
Միրզեջանյան Դավիթ 681
Միհրան, թագավոր, 243
Միհրալի, խան, 680
Միհրան, զորավար, 292
Միհրան Մեհեվանդակ, զորավար, 313
Միհրդատ. Ատրպատականի թագավոր, 132, 135
Միհրդատ, Հայաստանի թագավոր, 173, 174
Միհրդատ II 117, 120
Միհրդատ VI Եվպատոր, տե՛ս Մի-հրդատ Պոնտացի
Միհրդատ Պոնտացի 121, 122, 127, 128, 130, 132—139, 194
Միհրնեռսեհ. Նոգարարապետ, 274, 278
Միհաս Ջուղայեցի. նկարիչ, 743, 744
Միշել, միսիոներ, 670
Միր Մահմուդ 672
Միր Վեյս 672
Միքայել, զորավար, 393
Միքայել III 373
Միքայել VII Դուկաս, կայսր, 489
Միքայել Սեբաստացի 608
Միքայել Վատնա, զորավար, 517
Մկրտիչ Նարոյ 739, 740, 743
Մռավիա, խալիֆ, 350, 354, 355
Մոնոմախ, կայսր, 458, 459, 460
Մոմիկ, նկարիչ, 574
Մովսես Դասխուրանցի, պատմիչ, 331,
Մովսես II Եղվարդեցի, կաթողիկոս, 316
Մովսես Խորենացի 66, 80, 84, 85, 87, 105, 109, 112—114, 116, 117, 119, 158—160, 163, 184, 186, 187, 190, 193—196, 212, 213, 222, 225, 228, 240, 243, 253, 262, 266, 322, 326—331, 700, 724
Մովսես Կաղանկատվացի 331, 565
Մորիկ, կայսր, 314, 315, 317
Մրվան իբն-Մուհամեդ, խալիֆ, 355, 390, 391
Մուբասիմ, խալիֆ, 407
Մոթավաքիլ, խալիֆ, 407, 409, 410, 414
Մոկարել Վանանդեցի 411
Մուհամեդ II 603
Մուհամեդ, զորավար, 397
Մուհամեդ, էմիր, 419
Մուհամեդ, մարգարե, 340
Մուհամեդ Բեն-Օքբա 363, 393
Մուհամեդ Խուդարաենդա, շահ. 606
Մուհամեդ Տաբարի 490
Մուշեղ, թագավոր, 450, 451
Մուշեղ, թոնդրակյանների առաջնորդ, 472
Մուշեղ, Սմբատ I-ի որդին, 423, 424
Մուշեղ Մամիկոնյան, իշխան, 315
Մուշեղ Մամիկոնյան, զորավար, 352
Մուշեղ Մամիկոնյան, Տայոց փիլիսոփա, 393
Մուշեղ Մամիկոնյան. Հրաշատի որդին, 397—399, 401
Մուշեղ Մամիկոնյան, սպարապետ, 252—254, 257, 258
Մուշկան Նյուսալվսարա, զորավար, 280, 284
Մուսա իբն-Զուբար, էմիր, 367, 408, 409
Մուստաֆա Լալա, փաշա, 696

Մաուրայ III 606
Մուշիլ II 76

Յակոբի, *գրամիչ*, 402
Յակոբայի 427
Յազաբ, *բեկ*, 598
Յամբլիքոս Բարբլոնացի 195
Յասոն, *գերասան*, 143
Յուստինեան 117
Յուսուֆ, *զորավար*, 409, 410
Յուսուֆ Սաֆի, *էմիր*, 421—425

Նադիր, *շահ*, 649, 695, 696, 731
Նաֆենիկ, *վարձակ*, 199
Նարանաբեկյան Վասիլ 514
Նաղաշ Հովհաննես 740, 742, 743
Նահապետ, *կաթողիկոս*, 664
Նահապետ Քուչակ 740, 742
Նարամսին, *թագավոր*, 78
Նզրեկի Բաղդի, *մարաշախտ*, 541
Նեմեսիոս 339, 340
Նեոպտոլեմոս 106
Ներշապուհ Արծրունի 278, 281
Ներշապուհ Մամիկոնյան, *եպիսկոպոս*, 223, 303
Ներսեհ 175—180, 199
Ներսեհ, *Հայաստանի թագավոր*, 234
Ներսեհ, *Պարսկաստանի թագավոր*, 321
Ներսեհի Կամսարական 289, 291, 292
Ներսեհ Կամսարական, *նախարար*, 243, 244
Ներսես, *զորավար*, 314
Ներսես II Բագրևանդցի, *կաթողիկոս*, 393, 372
Ներսես Կամբրեցի 559, 565
Ներսես Մշեցի 559
Ներսես Մոկացի 722, 723, 727
Ներսես (Շիրակի Ներսես), *Բոլորակ-բանների առաջնորդ*, 472
Ներսես Շնորհալի 477, 505, 560, 561, 725
Ներսես Պարթև, *կաթողիկոս*, 223, 237—239, 242—244, 254, 255
Ներսես III Տայեցի, *կաթողիկոս*, 348—354
Նոյան, *զորավար*, 425

Նիխոր Վշնասպիտա 295, 296
Նիկոդայոս 631
Նյուտան 337
Նոեմս 335
Նուր-էդ-դին, *սուլթան*, 518
Նուրիջանյան Թովմաս 724
Նուրիջանյան Վարդան (Վանանդեցի), *բնագիտ*, 735

Նաև-Արսես 603—614, 649
Նահապ, *կաթողիկոս*, 333
Նահապետյան հոդվածար 716
Նահապետյան Հակոբ 707
Նահապետյան Նահապետ 707—709, 716, 718, 725
Նաև-Իսմայիլ 604, 605
Նահնազար, *մելիք*, 705, 706
Նանինավազ 675
Նանուսն 597, 598
Նաև-Սեֆի I 650, 657, 698
Նաև-Սուլեյման I 650
Նահուտյան Ստեփանոս 675, 677, 679, 686, 732
Նամիրամ, *թագուհի*, 40
Նամշի Միրոն 742
Նարսես 411
Նարսեհ, *զորավար*, 294, 295
Նարսեհ, *թագավոր*, 262
Նարսեհ I 190, 191
Նարսեհ II 223, 231—236, 242, 245—253, 255—260, 649
Նարսեհ III 260
Նարսեհ Ամատունի 369
Նարդեն, *Հանապարհորդ*, 741
Նեերիմանյանց Հարություն, *առևտրա-կան*, 649
Նիրս 312
Նիրսեն, *յուզբաշի*, 673
Նամսոնյան Հարություն 726

Ոզաման, *զորավար*, 348
Ոդյուսիա, *բոլոր*, 194, 196
Ոսկան Երևանցի 724, 734
Ոտիզդ, *թագավոր*, 315
Ոտիզդ-Արտաշիր, *թագավոր*, 190

Չալարի Բյոխվա 634—636

Ջակիր, *գիշերապետ*, 484
Ջամչյան Միքայել 725, 730, 733
Ջարմուզան 582, 583
Ջինղիզ խան (Թեմուչին) 580
Ջմշկիկ, *կոյր*, 450
Ջորովանել, *իշխան*, 491

Պալատուչի Բնկոլոդի 554
Պամբա, *թագավոր*, 78
Պասլ, *զորավար*, 673, 676—678
Պապ, *թագավոր*, 240, 245, 251—259, 263
Պավել I 721
Պարթամպիր, *թագավոր*, 182, 183.
Պարույր Հայկազն (Պրոյերեպոս) 332
Պարույր Սկայորդի, *թագավոր*, 84
Պետերման Հ. 71
Պետոս, *զորավար*, 178, 179
Պետրոնոս Մամիկոնյան, *զորավար*, 378, 379
Պերոս, *դիպլոմատիկա*, 665
Պերոս, *քաջանա*, 684
Պետրոս I 667—670, 674, 675, 683—685
Պետրոս Գետադարձ, *կաթողիկոս*, 456—459, 462
Պիրոզ, *թագավոր*, 286, 287, 295
Պլուտիկոս, *զորավար*, 105
Պիսարովսկի Բ. 77
Պիտա, *պրոմիներ-մինիստր*, 699
Պլատոն 332, 340, 723, 727
Պլինիոս Ավագ 12, 168, 194
Պլուտարքոս 114, 115, 130, 134, 143, 169, 194, 195, 198, 200, 203
Պոդոմեռոս 13, 336
Պոդոմեռոս, *զորավար*, 101
Պոլիմոն, *թագավոր*, 173
Պոլիբիոս 107, 112, 116
Պողոս 680
Պողոս 372
Պողոս, *առաքյալ*, 372, 374
Պողոս Սամոսատցի 372
Պոմպեոս 137, 144
Պոսյոմկին Գրիգորի, *իշխան*, 713, 714

Պոսյոմկին Պավել, *զեներալ*, 714
Պորֆյուր 332, 334, 570, 722, 727
Պրոկոպիոս 347, 348
Պրոսկոպիոս, *զորավար*, 247
Պրոպոպիոս Կեսարացի, *պատմիչ*, 303, 308
Պուբլիոս Կանդիոս 144

Ջալալեդդին 581, 582
Ջանսպ, *էմիր*, 406
Ջավիդան 403
Ջանանգիր 601
Ջանգշան, *շահ*, 598, 601
Ջոնսոն, *հանանապետություն*, 649
Ջուզեպ 659, 660

Ռայմոնդ, *դուքս*, 523, 526
Ռաչաբ, *փաշա*, 682
Ռիքա 527
Ռիչարդ Առյուծասիրտ, *թագավոր*, 521, 522
Ռոբերտ Շերլի 609
Ռոստոմիս, *Եկեղեցի*, 574
Ռոստոմ, *զորավար*, 521
Ռուբեն, *Լևոն II-ի եղբայրը*, 528
Ռուբեն, *Լևոն I-ի որդին*, 513
Ռուբեն I 509, 510
Ռուբեն II 518
Ռուբեն-Ռայմոնդ, *դուքս*, 526, 527
Ռումյանցև, *զեներալ*, 691, 693
Ռուսա I 44—46, 56
Ռուսա II 56, 57
Ռուսա III 58
Ռումե-էդ-դին, *սուլթան*, 498

Սաթենիկ, *թագուհի*, 113, 196, 197
Սալահեդդին, *սուլթան*, 520, 522
Սալար, *զորավար*, 290
Սալմանասար I 33, 36
Սալմանասար III 36, 37
Սամենան, *հայասպարապետ*, 573
Սամոս, *թագավոր*, 107
Սամվել, *եպիսկոպոս*, 473
Սամվել, *Վահան Մամիկոնյանի որդին*, 253

Սամվել Անեցի 322, 427, 435, 495, 555, 566
Սամվել Մամիկոնյան 401
Սայաթ-Նովա 740, 742
Սանահարուկ, թագավոր, 181, 182, 184
Սանեսան, թագավոր, 229
Սանակ, փչխան, 423, 424
Սանակ Արծրունի, նախարար, 395
Սանակ Բագրատունի, փչխան, 400
Սանակ Բագրատունի, մարզպան, 286, 288, 290—292, 329
Սանակ Զարեհարեցի, կաթողիկոս, 389
Սանակ Պռնկավորի, իշխան, 456
Սանակ Պարթև, կաթողիկոս, 262, 266, 267, 324, 326—328
Սահրադյան Զաքար 654
Սարաֆյան Մովսես 711—713
Սարգիս 680
Սարգիս, եպիսկոպոս, 722
Սարգիս, Թոնդրակեցիների առաջնորդ, 471
Սարգիս, կաթողիկոս, 472
Սարգիս, հարստարարար, 574
Սարգիս, յուզբաշի, 673
Սարգիս Պիծակ 574, 578
Սարգիս Քերթող 541
Սարգոն I 78
Սարգոն II 44—46, 51, 52, 56
Սարդար, քրմապետ, 46
Սարդար (Սիգուր) I 37, 38
Սարդուր II 40, 42—44, 53, 63, 79
Սարդուր III 57
Սարուխան, յուզբաշի, 673
Սարու Մուստաֆա, փաշա, 682
Սասան 188
Սաֆի դուլի, խան, 678
Սեթաստիանոս, զորավար, 247
Սեբեոս 66, 195, 311, 315, 316, 330
Սեբուխտ 313
Սեբոխտ, զորավար, 278
Սեր, խոջա, 637
Սելիմ II 628
Սելիմ I Ամեն 604
Սելևկոս-Նիկատորա, թագուհի, 124
Սելևկոս Նիկատոր, զորավար, 101
Սենեքերիմ, վասպուրականի թագավոր, 455, 508
Սենեքերիմ, Սյունիքի թագավոր, 490
Սեպտիմիոս Սեբեոս, կայսր, 185—187
Սերգիյ (Տյուրիկոս) 376
Սերոբեան 137
Սիգիսմունդ, թագավոր, 647
Սիմեոն, նկարիչ, 574
Սիմեոն Երևանցի, կաթողիկոս, 627, 630, 632, 634, 704, 705, 708, 709, 711, 713, 725, 734
Սիմեոն Զալայեցի 704
Սիմեոն-Տիտ, պարիկեանների առաջնորդ, 375
Սինան Ջղաղզի, փաշա, 611
Սիսաուս, զորավար, 305
Սմբատ, Արտաշես I-ի դայակը, 113, 160, 197
Սմբատ, դահիրից փչխան, 422—424, 469
Սմբատ, փչխան, 387—389
Սմբատ I 419—424, 440, 447, 465, 466
Սմբատ II 435, 451—453
Սմբատ I, Սյունիքի թագավոր, 451
Սմբատ II, Սյունիքի թագավոր, 451, 461
Սմբատ Բագրատունի, նախարար, 313, 315, 316
Սմբատ Բագրատունի, Հայոց I-ի եղբորորդին, 424
Սմբատ Բագրատունի, սպարապետ, 387—389
Սմբատ Բագրատունի, սպարապետ, 399, 400
Սմբատ Բագրատունի, սպարապետ, 407, 414, 415, 465
Սմբատ Գունդստաբլ 528, 529, 533, 544, 564, 565, 567
Սմբատ Զարեհավանցի, Թոնդրակեցիների առաջնորդ, 466, 471, 481, 568
Սմբատ Մամիկոնյան 316
Սմբատ Մամիկոնյան 391

Սոնեմոս-Տիգրան, թագավոր, 184, 185, 195
Սոդոմաճ 325
Սոնդոր, զորավար, 532
Սպարտակ 142
Սուտոնիոս Գրիֆոս, զորավար, 185
Ստեփանե, Քան Լ-ի որդին, 513, 515, 516
Ստեփան Համադանցի, առևտրական, 654
Ստեփանոս, քմահաճ, 571
Ստեփանոս Լեհացի, նկարիչ, 743
Ստեփանոս Սոսմատեցի, կաթողիկոս, 607
Ստեփանոս Սյունեցի 334, 339
Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ) 311, 322, 356, 444, 450, 454, 465, 466, 507, 563
Ստեփանոս Օրբելյան 183, 427, 435, 468, 469, 474, 496, 500, 566, 581,
Սուրբոն 12, 69, 71, 80, 83, 111, 112, 114, 115, 120, 191, 202
Սուպչին, գեներալ, 701
Սուլալիս, զորավար, 377
Սուիդաս 181
Սուլեյման, զորավար, 394, 395
Սուլեյման I 606
Սուլեյման-բարա, խան, 671
Սուլթանշահ 608
Սուլլա, գեղարքեռոր, 122
Սուպպիլուլիում, թագավոր, 75, 76
Սուվորով Ա. 713, 714
Սուրեն, զորավար, 142, 143
Սուրեն Վշնասպ, մարզպան, 311—313
Սուրյան Անոան 645

Վազգեն, իշխան, 287
Վախթանգ 313
Վախթանգ, թագավոր, 287, 291
Վախթանգ VI 673—675, 685, 731
Վաղիդ I 363
Վանան 376
Վահան, իշխան, 279
Վահան, ճարտարապետ, 574
Վահան Ամատունի, հազարապետ, 272—273, 278, 280, 325, 326
Վահան Արծրունի 395
Վահան Դեռնի 400
Վահան Հավնունի 403
Վահան Մամիկոնյան 247, 253
Վահան Մամիկոնյան, մարզպան, 284, 286—296, 309, 330
Վահրամ, քմահաճ, 571
Վահրամ, իշխան, 583
Վահրամ Զոհրաբյան 500
Վահրամ Մարաշախտ, իշխան, 527, 529
Վահրամ Զուրիկ 315
Վահրամ Պահլավունի, սպարապետ, 453, 456, 458—460
Վահրամ Բարունի 565, 569
Վահնունի, նախարար, 291
Վահումիսա, զորավար, 89
Վաղարշ I 184, 212
Վաղարշ I, Պարթևաստանի թագավոր, 174, 177—179
Վաղարշ (Վաղարշակ) II 163, 185—187, 195
Վաղարշակ, Պապի տղան, 259
Վաղարշ (Բալաշ), թագավոր, 295, 296
Վարես, փարոր, 251, 253, 256—258
Վաչե Մամիկոնյան, սպարապետ, 228—232
Վաչե Վշնասյան 501
Վանոն, թագավոր, 172
Վասակ 305, 306
Վասակ, զորավար, 178
Վասակ, թագավոր, 471, 474
Վասակ, իշխան, 491
Վասակ, Համայակ Մամիկոնյանի որդան, 284, 289, 292
Վասակ Բագրատունի 391
Վասակ Բագրատունի 399
Վասակ Բագրատունի 406
Վասակ Իշխանիկ, իշխան, 417, 423, 424
Վասակ Մամիկոնյան. սպարապետ, 237, 248, 249
Վասակ Պռոշյան (Խաղբակյան), իշխան, 501

Վասակ Սյունեցի (Սյունի), *մարզպան*, 274, 276, 277, 279, 280, 284, 285
Վասիլ (Բասեղ) I 643
Վարդի Միրոն 663, 669
Վարազդատ, *թագավոր*, 257—259
Վարազ Նապոտ 234
Վարազվաղան 274
Վարդան, *Բիզանդիոն Ռշտունու տղան*, 387
Վարդան, *Մաշտոցի հայրը*, 322
Վարդան, *նկարիչ*, 574
Վարդան, *Վասակ Մամիկոնյանի փեսան*, 237
Վարդան Այգեկցի 560
Վարդան Արևելցի 493, 494, 529, 566
Վարդան Մամիկոնյան, *սպարապետ*, 274, 277, 279—287, 325, 741
Վարդան Մամիկոնյան (Կարմիր Վարդան) 311, 313
Վարդ Պատրիկ, *մարզպան*, 309
Վենդենեմ 287
Վեռա Նարգիս Սյունեցի 458, 459
Վիլհերանգ Օլդենբուրգ 533
Վինդիշման Ֆ. 71
Վինֆրիդ, *լոսավորիչ*, 327
Վիրգիլիոս 149
Վլադիմիր II Մոնոմախ 646, 652
Վլիթ, *ասորիքան*, 374
Վոլինսկի 672
Վորոնցով, *կանցլեր*, 701, 702
Վռամ, *թագավոր*, 263
Վռամշապուհ, *թագավոր*, 262, 324, 326
Վրիկ 286
Վրվեռ 473
Վրույր, *Արտաշես Ա-ի տղան*, 113, 193

Տաքարի 368
Տակիտոս 114, 145, 172, 174, 177
Տեր-Ավետիս 673, 676—692
Տերենտիոս, *զորավար*, 251, 255, 258
Տեր-Պետրոս Մինասյան, *երգահան*, 742
Տեր-Սահակյան Ստեփան, *առեղծվածագիր*, 715
Տեր-Ցեռն 650
Տիբերիոս, *կայսր*, 173
Տիբերիոս, III Ապսիմարոս, *կայսր*, 389
Տիբերիոս Կլավդիոս 148, 149
Տիգրան II 12, 117—141, 149, 156, 161, 162, 168—170, 194, 197, 198, 209, 507, 741
Տիգրան III 146, 148, 149, 156
Տիգրան IV 150, 156
Տիգրան V 172
Տիգրան VI 176, 177
Տիգրան Երվանդյան, *թագավոր*, 86—88, 196
Տիգրան Կրտսեր 136, 139
Տիգրանյանց Մինաս, *վարդապետ*, 665—669, 672
Տիմարքոս, *կուսակալ*, 116
Տիրայր Խորձենացի 328
Տիրան 194
Տիրան, *բազավոր*, 233—235, 254
Տիրան-Տիգրան I 113, 117
Տիրիբազ, *սատրապ*, 92—94
Տիրիթ 237, 244
Տյուրեն 659
Տյուրինգոս, *Շիրակացու աստղագիտը*, 335
Տրայանոս, *զորավար*, 256
Տրայանոս, *կայսր*, 182, 183
Տրդատ, *իշխան*, 185
Տրդատ, *ճարտարապետ*, 573
Տրդատ I 174, 175, 177, 179—181, 199
Տրդատ II 187—191
Տրդատ III 191, 214, 224—227, 237, 330, 741
Տուդխալիա III 75
Տուրին 484, 486, 487

Ցիցերոն 134, 194

Ուզուն-Հասան 601
Ուխտանես, *պատմիչ*, 566
Ումայի, *էմիր*, 419

Փաղլուն, *էմիր*, 468, 491
Փապրան, *Մանուչեհի թոռը*, 495
Փանան, *խան*, 705, 706
Փառաեենմ, *թագուհի*, 244, 245, 250, 251
Փառեն, *կաթողիկոս*, 233
Փավստոս Բուզանդ 182, 222, 223, 227—239, 241—245, 243, 249, 251, 253, 255, 257, 259—261, 328, 339, 725
Փաղլուն, *էմիր*, 453
Փարսադան 673, 677, 690
Փարաման, *թագավոր*, 173, 174
Փիլարդուն 536
Փիլարտոս, *իշխան*, 509
Փիլոն Ակեռաճեղացի 332, 570
Փիսակ, *սենեկապետ*, 234
Փիրիզոլ 681
Փլեղոն Տրալլացի 130
Փոկաս, *կայսր*, 317

Քալանթարյան Պետրոս, *բժիշկ-զիտնական*, 738
Քալանթարյան Փանոս 651
Քիյոռուզ, *սուլթան*, 526, 527
Քիշիբեկյան Պողոս 681
Քյոփուրլու Արդուլլա, *փաշա*, 680—682, 695
Քսենոփոն 12, 85, 86, 90—98, 165, 201
Քսերքսես I 96
Քսերքսես, *Ծոփքի թագավոր*, 108, 109
Քրիստափոր, *զորավար*, 381

Օղոստոս, *կայսր*, 144 147—149, 172
Օգսեն, *ենարիչ*, 574
Օթման, *զորավար*, 348
Օլիմպիա, *թագուհի*, 237, 244, 245
Օլիմպիոդոր 332
Օկտավիանոս, *տե՛ս Օգոստոս*
Օմար, *խալիֆ*, 719
Օմար II 374
Օմար ալ-Ամիտ, *զորավար*, 379
Օշին, *թագավոր*. 526, 537, 555
Օշին, *իշխան*. 508
Օշին, *պայլ*, 537, 538
Օշին, *պայլ*, Ներսես I-ի եղբայրը, 529
Օշին Հերուվյան, *իշխան*, 514
Օսման 603
Օսման, *ցեղապետ*, 596, 597, 601
Օվիդիոս 149
Օտոման 666
Օրիբազիոս 339
Օրմանյան Մ. 297
Օրոդես, *թագավոր*, 142—144
Օռոնտաս-Երվանդ II, *սատրապ*, 91, 93

Ֆաբալի, *խան*, 678
Ֆիլիպ, *Կիլիկիայի թագավոր*, 528
Ֆիլիպ, *Դրանսիայի թագավոր*, 538
Ֆոբեր Է. 76
Ֆրանգոլ, *մելիք*, 678
Ֆրանկ Պիպին, *լուսավորիչ*, 327
Ֆրանսուա I 383
Ֆրանսուա Բարոն 659
Ֆրեր 574
Ֆրիդրիխ Շիկամորուս, *թագավոր*, 521—523
Ֆրիկ 561, 578, 579, 739

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Արազայի դուշա 5
Աքսազիա 457
Աքսվյանի շրջան 24
Ալարակ, գյուղ, 494
Ադրաան 381
Ազոպիս, գյուղ, 641, 689, 690, 723
Ալամանկիտ 14, 408
Ադանա 508, 511, 512, 517, 535—537, 539—541, 548, 553
Ադիաբեն 69, 80, 123, 126, 130, 176, 177, 183, 187
Ադրբեջան 668, 673, 688
Ազատ, գետ, 7, 9, 209, 228, 316
Աթեմ 328, 332
Ալաշաղ, քաղաք, 593
Ալեքսանդրիա, քաղաք, 521, 699
Ալեքսանդրեան ծոց, տե՛ս Խառի ծոց
Ալեքսանդրիա 146, 328, 332
Ալպի, շրջան, 78
Ալբիե-թափա 63
Ամալցխա 397, 614
Ամալրալոմ 614
Ամոնա 619
Ամուրյան 7, 9, 64, 105, 444, 572, 614, 621
Ամիլինեն 69
Ակկերման, քաղաք, 646
Ակներ 559
Ակոպ, գյուղ, 289, 387
Ակսիում, Հրվանդան, 147, 148
Աղյակ, գավառ, 14, 408, 410, 419
Աղթամար, կղզի, 6, 14, 352, 351, 449, 490, 572, 573, 575, 578, 600, 723
Աղձնիք 10, 13, 64, 78, 80, 85, 97, 104, 102, 169, 219, 224, 232, 247, 248, 308, 363, 408, 419, 421, 449, 452, 461, 491, 500, 580, 584, 596, 601, 605, 616, 622
Աղլաս, գյուղ, 471, 473, 475
Աղասն. գետ, 7, 11, 13, 425, 582
Աղվանք 69, 129, 130, 139, 189, 225, 270, 274, 275, 277—279, 287, 291, 307, 310, 312, 314, 331, 349, 350, 352, 354, 355, 357, 393, 403, 404, 413, 418, 421, 441, 449, 471, 475, 488, 491, 497, 582, 598, 606
Անայ 505
Անանոսի լեռնաշղթա, տե՛ս Ամանոս լեռնաշղթա
Անասիա 380
Անբիւդ 343, 572
Անի 246, 363, 378, 441, 582, 596, 615, 618, 621, 622, 624, 707
Անխոս, քաղաք, 379
Անյուկ, բերդ, 362, 490
Անատեղում 645, 724
Անդրոնիկ դուքս 722, 727
Անուսա, բերդ, 513

Այտ 537, 539, 541, 548, 552—554
Այծպանութ, բնակավայր, 4
Այնթապ 531
Այրարատ 10, 11, 13—15, 64, 66, 67, 85, 104, 105, 112, 213, 216, 229, 248, 261, 279, 288, 308, 316, 347, 389, 467, 470, 498, 504, 605, 616
Այրարատյան նահանգ, տե՛ս Այրարատ
Անատոլիա 609, 660, 730
Անարզաբա 509, 511, 514, 515, 533, 553
Անկիզակոթ 663—665, 669
Անգեղուն, գավառ, 14, 77, 200, 201, 224, 252, 261, 299
Անգլիա 522, 691, 699, 701, 733
Անգղ, գյուղ, 14, 201, 276
Անգորա 597
Անդոկ, գնանակատեղի, 4
Անդրկովկաս 22, 45, 59, 64, 65, 270, 276, 287, 314, 315, 346, 350, 351, 354—357, 362, 365, 402, 414, 484, 581, 582, 585, 593, 595, 598, 602, 604, 606, 609, 619, 640, 644, 653, 655, 658, 663, 665, 668,—672, 674, 679, 688, 689, 692, 695, 697, 701—704, 707, 710, 713—715, 719—721
Անի, քաղաք, 335, 435, 438—445, 450, 451, 453, 456—460, 485, 488, 491, 494—497, 505, 558, 559, 571—573, 575, 578, 581, 583, 584, 643, 652
Անի-Պիմզա 20
Անիտաս 381
Անհուշ, բերդ, 250, 262
Անիտ, տե՛ս Հանիտի գավառ
Անձևացյաց գավառ 408
Անոթիմ 101, 123—125, 187, 253, 305, 323, 328, 332, 375, 511, 515, 517, 518, 520, 522, 523, 526—528, 532, 542, 565, 567
Անտիոքոնտական պար 4
Անտիոքավրոպյան լեռնաշղթա 3, 5, 111
Աշոցք 402
Աշտարակ 342, 614, 616, 619, 680, 719
Աշտիշատի վանք 14, 160, 202, 203, 238, 239
Ապանումիտ 363, 453, 466, 621
Ապարան 614, 619
Ապար աշխարհ 284
Առակլիա, քաղաք, 521
Առապար, վայր Օշականի մոտ, 223
Առաջավոր Ասիա 3, 38, 42, 43, 51, 57—59, 87, 98, 105, 118, 125, 127, 139, 187, 345, 588, 732
Առաջին Արմենիա, վարչական միավորում Արտաբերան խալիֆայության մեջ 357
Առաջին Հայք 15, 299, 300, 303—305
Արբերան 363
Արեան, ավան, 231
Արյուն, բերդ, 513
Ասիա 20, 124, 382
Ատրեպատական 33—36, 38—46, 51, 52, 55—59, 64, 67, 78—80, 85, 89, 95, 101, 104, 107, 108, 120, 121, 123—128, 131, 142, 144, 145, 148, 155, 156, 173, 176, 183, 200, 201, 225, 265, 324, 337, 345, 345, 350, 354, 357, 409, 505, 509, 519, 520, 526, 530, 531, 552, 564, 584, 585, 588, 604, 605, 621, 643
Ատտալան 635
Ատրախան 595, 643, 644, 653—655, 668, 670, 671, 701, 711, 712
Ավան 317, 343
Ավարայրի դաշտ 5, 14, 273, 280—286, 290, 297, 300,
Ավելաղաշտ, տե՛ս Բերդ
Ավատրիա 664, 666, 699
Ատոլիա 521
Ատրպատական 13, 114, 117, 123, 130, 139, 144, 145, 148, 155, 171, 172, 175, 181, 248, 252, 253, 288, 289, 315, 484, 581, 597, 598, 604—606, 610
Արաբական խալիֆայություն 318, 331,

345, 349—351, 353, 354, 356, 358, 359, 365—367, 370, 377, 390, 391, 396, 401, 405—407, 409, 411, 413, 414, 561, 563, 589
Արաբիա 353, 391, 396, 409, 411, 413
Արաբիր 621
Արազած 4, 22, 27, 67, 634
Արազածոտն 14, 67, 421, 498, 501, 595
Արազուս 376, 378
Արածանի 5, 7, 10, 13, 21, 39, 47, 64, 92, 107, 133, 134, 151, 176, 178, 182, 401, 435
Արամալի, *երկրամաս Ուրարտուում*, 37
Արարատ, *լեռ*, 3, 4, 68, 70, 160, 289, 387, 616
Արարատյան դաշտ 5, 6, 8—11, 20, 21, 27, 29, 39—41, 47, 48, 51, 56, 58, 67, 80, 81, 105, 106, 114, 115, 126, 151, 152, 155, 156, 184, 289, 338, 423, 427, 435, 451, 461, 487, 488, 496—498, 500, 503, 572, 583, 596, 598, 599, 605, 611, 612, 614, 616, 619, 636, 639, 680, 712, 720, 729
Արարատի շրջան 9, 114
Արամ 4, 6, 7, 9, 10, 13, 39—41, 105, 114, 149, 193, 228, 229, 289, 387, 388, 427, 611—613, 615, 620, 687, 688, 690, 721
Արթվայի շրջան 123
Արգիշտիխինիլի, *տե՛ս Արմավիր*
Արգաթիլ 403
Արգամանի սարահարթ 5
Արեղունի, *բլուր*, 13, 18
Արզն (Արձն) 401, 408, 410, 441, 582, 597
Արզնի 11, 64
Արթիկ 11, 26
Արին-բերդ, 35, 40, 49, 50
Արխաեզելակ 653, 654
Արծաթ, *գյուղ*, 294
Արծավ 347, 348
Արձկե 444, 487, 622
Արձն 440—444, 485
Արկաթիակերտ 160
Արղանա, *գետ*, 108
Արզնի, *Արզանա-մոգնի*, 18
Արնակ, *լճակ*, 6
Արենշ 42, 64, 362, 400, 441, 442, 461, 582, 605, 610, 622
Արենոն, *գյուղ*, 408
Արմալի-Մցխեթ 156
Արմավիր 9, 14, 35, 41, 42, 64, 67, 94, 105, 106, 115, 156, 158, 161, 201, 202, 206, 210
Արմենիա 67, 69, 78, 85, 89
Արմենիա, *փարշական մխիթարում Աբարտական խալիֆայության մեջ*, 357, 358, 389—391, 402
Արմենի-Նուարդիա 77—80, 84, 85
Արմենոպոլիս, *տե՛ս Կեսոյա*
Արյան լիճ 412, 414
Արշակավան 240—244
Արշամաշատ 108, 161, 183
Արշամեյա 108
Արշարունիք 14, 402, 406, 485, 503, 559, 616, 621
Արպադ 43
Արտագերս, *ամրոց*, 14, 171, 172, 250, 251, 397
Արտազ 14, 280, 290, 299
Արտամետ 14
Արտանուշ, *քաղաք*, 442
Արտաշատ 9, 15, 114—115, 123, 133, 138, 141, 143, 146, 154, 161, 173—176, 180, 184, 185, 194—196, 198, 202, 204, 206, 208, 222, 223, 228, 251
Արտին լեռ 17, 18
Արցախ 9, 13, 81, 85, 111, 112, 151, 252, 283, 308, 413, 414, 436, 451, 461, 490, 491, 497, 498, 500, 508, 616, 620, 624, 630, 679, 692, 731
Արևն 343, 344, 398, 408
Արևմտյան 114, 115
Արևելյան Եփրատ, *տե՛ս Արածանի*
Արևելյան Հայաստան 93, 261, 262, 269, 298, 305, 307, 311, 312, 314, 315, 320, 351, 372, 375, 588,

616—620, 623, 625, 626, 628—633, 636—642, 649, 661—665, 668, 672, 680, 683, 686, 688, 689, 694, 695, 702, 713, 715, 719, 721, 729, 731
Արևելյան Վրաստան 357, 488
Արևելյան Տիգրիս (Ոռնատնու), գետ, 7, 9, 13, 91, 92
Արևիվ, գավառ, 14, 495
Արևմտյան Եվրոպա 221, 546, 552, 645, 661, 662, 666, 696
Արևմտյան Եփրատ, տե՛ս Եփրատ
Արևմտյան Հայաստան 24, 91, 93, 246, 247, 259, 260, 262, 266, 298—300, 302—304, 326, 370, 371, 374, 381, 384, 387, 393, 473, 621—624, 628—630, 632, 633, 635, 638—640, 642, 658, 660, 661, 670, 700, 704, 712, 713, 730
Արևմտյան Վրաստան 369, 397, 441
Արևմտյան Տիգրիս, տե՛ս Տիգրիս
Արևմտյան Ուիրանշահ 604, 645, 646
Ակեմենյան Պարսկաստան 95, 98, 100, 104
Ակդոնստան 672

Բաբելոնիա 42, 57, 58, 66, 68, 70, 80, 86, 88, 90, 95, 96, 100, 101, 104, 186
Բագուին 204
Բագավան 204, 260, 398, 402
Բագարան 9, 14, 105, 109, 175, 160, 418, 425
Բագրևանդ 15, 24, 204, 260, 276, 392, 393, 397, 398, 401, 435, 461, 468, 491, 498, 503, 622
Բազ, քաղաք-ամրոց, 403
Բազմադբյուր 473
Բաթում 4
Բալանովիտ 5, 299
Բալկանյան թերակղզի 69, 72, 381, 382, 643
Բախտակ, գետակ, 6
Բակուրիա 155
Բաղաբերդ 496
Բաղդադ 396, 399, 405, 407, 411, 414, 441, 531, 588, 595, 610, 615
Բաղեշ 7, 352, 363, 402, 409, 440—442, 574, 584, 622, 638, 640—642, 660, 722, 727, 739
Բաղմ, գավառ, 10, 14, 474
Բայազետ 5, 11, 15, 229, 240, 316, 346—348, 399, 622, 640
Բայլական 393, 403
Բառոտ 20
Բասեն 5, 7, 14, 235, 292, 401, 452, 482, 485, 498, 503, 614, 616, 621
Բարգող, լեռնագագաթ, 4
Բարկուշատ 676, 678
Բարձրբերդ, գավառ Վիլիկիայում, 510
Բարձր Հայք 13, 14, 75, 80, 85, 112, 248, 299, 308, 360, 418, 454, 461, 491, 498, 500, 580, 604, 605, 621
Բահու 604, 670, 674, 691, 730
Բենգալիա 651
Բերլին 69
Բերդ 431, 469, 668
Բերդկոմ 307
Բերդուս 511, 515
Բերկրի 6, 10, 352, 363, 402, 414, 441, 452, 461, 484, 487, 582, 610, 622
Բերուլ 645
Բզնունիք 14
Բիթլիս, տե՛ս Բաղեշ
Բինիսրունի ժայռ 89
Բյուզանդիա 229, 233, 235—237, 242—246, 251, 261, 269, 273, 278, 285—287, 298—305, 308, 314—318, 320, 321, 326, 344, 345, 348—351, 354—356, 369, 370, 371, 374—377, 379, 382, 390, 399, 401, 406, 417, 419, 420, 425, 440, 441, 450, 452, 454, 458, 462, 463, 473, 484, 485, 489, 515—520, 522, 578, 603, 648

Բյուրանիա 116, 119, 122, 127
Բյուրակնյան բարձրավանդակ 5, 7, 8, 261
Բամբեյ 651
Բասրա (Բասփոր) 106, 121, 127, 137, 155, 552, 595, 604, 644—646, 711, 728
Բշնի 64, 498, 559
Բրյուսել 645
Բուլանիս 17
Բուլղարիա 381, 643, 646
Բուկովինա 646
Բուշտու 39, 41

Գալատիա 119
Գալիցիա 646
Գայլ, գետ, 15, 106, 137, 380
Գանգես 100
Գանձակ, Ատրպատականում, 145, 155,, 307
Գանձակ 422, 453, 462, 488, 491, 493—495, 497, 498, 501, 566, 582, 620, 639, 672—674, 679, 694, 695, 706, 719, 720
Գանձասար 617, 655, 663, 663—670, 674, 706, 708, 714, 719, 731
Գառնի 9, 15, 24, 64, 154
Գավառագետ 6
Գավդամեղա 100, 103, 104
Գարդման 495, 500
Գեղամա լեռներ 4, 8, 27, 30
Գեղարդ 228, 572—574, 613, 616
Գեղարքունիք, գավառ, 14, 64, 67, 501, 614
Գեղվա գետ 677
Գեորգիևակ, ամրոց, 711
Գետաշեն 27, 705, 706
Գերմանիա 607, 662
Գիլան 674, 684, 685
Գլակա վանք 14
Գլանոր 550, 574
Գոշկի 619
Գոյլիստան 624, 696, 705, 706, 714
Գյումրի, տե՛ս Կեղինական
Գողթն 14, 266, 323, 324, 724, 738
Գոշավանք 559, 572, 574

Գրիսա 496
Գրյունվալդ 653
Գուգարք 9, 10, 13, 14, 32, 111, 112, 169, 219, 252, 418, 419, 424, 425, 436, 441, 450, 451, 453, 461, 462, 488, 490, 497, 498, 572, 605, 616, 620
Գոմանք, գյուղ, 388, 389
Գուրզան 42, 509, 521, 522, 531, 621, 622

Դամասկոս 345, 350, 351, 354, 374, 389, 396
Դանիորդա 76
Դանուբ 106, 269
Դաշքուտուն 39, 193
Դաշտային Կիլիկիա 124, 126, 131, 506, 510, 511
Դամ դաշտ 593
Դասոիր, բնակավայր, 137
Դարաբել, բերդ, 62
Դարանալյաց գավառ 14, 120, 182, 193, 195, 202, 204, 248, 299, 380, 728
Դարղանեի նեղուց 127
Դարիալի կիրճ 668
Դարպսակ 521
Դեբեդ 7
Դեղին գետ 7
Դեյլամ 403
Դերբենդ 57, 357, 390, 720
Դերջան, գավառ, 5, 114, 204, 261, 299
Դերսիմ 5
Դիարբեքիր, տե՛ս Ամիդ
Դիտուիքի 35, 39, 40
Դիզակ 624, 696, 706, 714
Դյուսլդորֆ 662, 665, 670
Դոդս, գյուղ, 421
Դոնի Դոնտով 711
Դսեղ 558
Դվին 9, 15, 27, 95, 223, 228, 288—290, 292, 293, 295, 296, 302, 307, 308, 313, 316, 342—344, 346, 349, 350, 352, 353, 357, 362,

363, 372, 375, 397, 398, 403, 413, 415, 419, 421, 423—425, 438, 440—442, 444, 445, 452, 461, 491, 496, 498, 594
Դրազարկի վանք 529, 559
Դրմիռտ, գյուղ, 79
Դու, գյուղ, 292
Դուրդի դաշտ 5
Դուր-Շարուկինի 46

Եգեռաց երկիր 419
Եղիպտոս 88, 95, 101, 108, 124, 144, 146, 167, 193, 340, 405, 521, 530, 532, 537, 539, 552, 580, 681
Եղեփա 183, 187, 324, 332, 509, 512, 564
Եղովպիա 100
Եկեղյաց գավառ 14, 120, 146, 159, 183, 202, 261, 299
Եղեգնաձոր 283
Եղբարք Սուրբ, բեռ, 347
Եղինեղ, գյուղ, 14
Եղիսաբեթպոլիս 646, 647
Եղվարդ 342, 558, 678, 680, 695, 719, 731
Եմեն 362, 391
Եղիսպարիս 375
Եվրոպա 18, 221, 344, 382, 533, 577, 607, 608, 640, 658, 661, 662, 670, 699, 724
Երազգավոր 105, 421, 422, 449
Երասխաձոր 559
Երեռույքի տանար 342
Երզնկա 5, 11, 14, 63, 94, 146, 202, 294, 492, 558, 559, 580, 581, 584, 585, 597, 605, 621, 638, 641
Երկրորդ Արմենիա, վարչական միավոր Արաբական խալիֆայության մեջ, 357
Երկրորդ Հայք. տե՛ս Բոզսրա երկիր
Երնջակ. բերդ, 7, 501, 599
Երվանդաշատ 14, 105, 109, 115, 161, 206, 223, 251
Երվանդական 105

Երրորդ Արմենիա, վարչական միավոր Արաբական խալիֆայության մեջ, 300, 357
Երուսաղեմ 285, 307, 343, 344, 512, 520, 522, 523, 618, 728
Երևան 10, 11, 15, 41, 57, 64, 71 106, 333, 344, 347, 598—677, 680, 681, 683, 686, 694, 695, 700, 703, 705, 710, 713, 714, 715, 719, 720, 723, 731, 741
Երևանյան լիճ 18
Եփեսոս, պրովինցիա Բյուզանդիայում, 380
Եփրատ 4, 10, 12, 13, 36, 37, 39, 57, 76, 92, 96, 106—108, 112, 123, 124, 129, 135, 142, 156, 178, 357, 368, 378, 604, 621

Զար, գետ, 412
Զաղաներ, բնակատեղ, 20
Զանգեզուր 490, 636
Զարեհյան 115, 161, 223, 251, 276, 465
Զարիշատ 115, 161, 223, 251
Զարեհեղ 231, 252, 278, 280, 419, 620
Զեյտ 135, 379
Զեյթուն 622, 624
Զիմզիմ 44
Զիբբա, ամրոց, 224
Զմյուռնիա 604, 639, 648
Զող 26
Զվարթնոց 56, 343, 344
Զևամա 156
Զեռ, բերդ, 677, 678

Էգեյան ծով 88
Էլամ 57, 101
Էկրատան 58, 87, 123, 155
Էրեբունի, բերդ-ամրոց, 41, 42, 51, 63, 90, 94, 96,
Էրզրում, տե՛ս Կարին
Էջմիածին 14, 24, 105, 154, 161, 184, 185, 191, 206, 208, 223, 251, 323, 324, 343, 599, 600, 607, 608, 626, 627, 630, 634, 640 661—664, 668, 670, 680, 684,

696, 700, 701, 704, 708, 709, 723, 725, 728, 734, 743

Ընդմիջաս, լեռնաշղթա, տե՛ս Կապանակող

Թալին 20, 572, 619
Թալիշի լեռներ 403
Թավրիզ 441, 588, 595, 596, 598, 604, 606, 610, 614, 635, 640, 672, 686, 728
Թեյշեբաինի ամրոց, տե՛ս Կարմիր բլուր
Թեսալիա 69, 72
Թիլ, ավան, 204, 513
Թիֆլիս, 278, 307, 413, 420, 485, 441, 581, 586, 598, 674, 675, 701, 703, 704—706, 720, 740
Թոզարմա երկիր, մ. թ. ա. IV, 15, 80, 299, 300
Թոնդուրեկ, լեռնաշղթա, 3, 4
Թոխատ 379, 616, 640, 660
Թոնդրակ, գյուղ, 466, 467, 475, 482
Թոռնավան, գավառ, 412
Թավ, գյուղ, 412
Թափրակ-կալա 35, 44, 47, 49, 50, 62, 63
Թրակիա 246, 259, 316, 381
Թուրայլ, ավան, 471, 475, 481, 482
Թուխարք, ամրոց, 389
Թուրքիա 605, 609—611, 614, 615, 616, 621, 629, 630, 648, 657—660, 663, 664, 667, 674, 685, 688, 699, 702—704, 710—713, 719, 726, 728, 729

Իբերիա, տե՛ս Վրաստան
Իզմիր, տե՛ս Ֆիլոտենիա
Իլդարուսի, տե՛ս Հրազդան
Իկոնիա 511, 518, 521, 526, 527, 530, 532, 541, 552, 580, 581
Իոսոս 197
Իսյան շրջան 624
Իսոս, ժողովուրդ, 507
Իտալիա 137
Իտալիա 382, 645
Իրան, տե՛ս Պարսկաստան

Իրանական բարձրավանդակ 58, 59
Իրիս (Եշիլ-Իրմակ), գետ, 15, 380

Կամբրան 559
Կամոս, գետ, 306
Կարիսա 69
Կենատան 595, 607, 645, 646, 653, 667, 696
Կենինական 27, 397, 641
Կենինզրադ 63, 701, 712, 713, 715—717, 738
Կոռայքի Կիլիկիա 506, 510, 513, 515, 550
Կոռայքի Ղարաբաղ 106
Կոմ, գղջի, 6, 723
Կիմարեռ 724
Կնաշեն 26, 27
Կյոլնիա, պետություն, 59
Կոնդոն 698, 699, 701, 702
Կոռի 460, 487—490, 494, 497, 500, 503, 504, 583, 586, 616, 620, 636, 712, 719
Կվոլ 646, 647, 723, 741, 743
Կուլուա, բերդ, 521

Խաբուր, գետ, 80
Խաբրի 56
Խալիտա 56
Խալպու, քաղաք, 43
Խալխալի գաշտ 279
Խաղաթի-Խալդիկա 86
Խամսայի մելիքություններ 705, 708, 710
Խաչենի գավառ 495, 587, 623, 696
Խառան, քաղաք, 143
Խարբերդ 10, 14, 621
Խարբերդի գաշտ 5, 7, 173
Խարս, գյուղ, 398
Խեթական թագավորություն 77, 78
Խլաթ 307, 400, 409, 440—442, 452, 471, 475, 481, 491, 498, 499, 581, 584, 585, 605
Խծկոնք 574
Խնձորեկ 683
Խնուս 471, 475, 481, 491, 618, 621
Խոյ 441, 484, 686, 719
Խռնավ, լեռնաշղթա, 4, 8

Խոշոր, *գետ*, 6, 40
Խոսխորոնիմ, *գավառ*, 14
Խորասան 396, 491, 720
Խորեզմի պետություն 531
Խորձյան գավառ 223, 261
Խորնի, *գյուղ*, 14
Խորվիրապ 51, 114
Խրամ 364
Խուրուշկիա 35
Խութ, *գավառ*, 14, 401, 410
Խոշաբերդ 414

Ծաղկանոր 573, 614
Ծաղկանց լեռներ 4, 6, 7, 277
Ծաղկոտն, *գավառ*, 15, 201, 231, 466
Ծամնդավի շրջան 508
Ծավդեկից գավառ 224
Ծար, *գյուղ*, 587
Ծիծեռնավանք 342
Ծիրանաց լեռներ 4
Ծղուկ 14
Ծմբո, *գյուղ*, 453
Ծովք, *լիճ*, 6, 7
Ծոփք 5, 9, 10, 12, 13, 14, 39, 41, 77, 80, 85, 107—110, 112, 120, 129, 138, 144, 151, 156, 169, 178, 183, 209, 224, 252, 261, 299, 300, 308, 346, 401, 580, 596, 601, 605, 621

Կարբերա 128
Կալաբեն 69, 80
Կայեր 671, 673
Կալիկադեոս (Սելևկիա), *գետ*, 506, 512
Կալկարա 651, 698, 699
Կախեթ 413
Կաճիրն 537, 538, 542
Կազզվան 9, 152, 250, 638
Կամախ 76, 492, 604, 605, 621, 723
Կամախի դաշտ 5
Կամենից-Պոդոլսկ 646, 647
Կամրջաձոր 559
Կայեն-բերդ 592
Կայենպոլիս 184
Կանեշ 78
Կաշն, *ավան*, 471, 473, 475, 481, 482
Կապադովկիա 15, 105, 106, 107, 116, 119—122, 126, 135, 136, 144, 148, 155, 166, 174, 176, 178, 184, 185, 188, 295, 265, 299, 374, 381, 508, 509, 511, 534
Կապան 451, 495, 513, 527
Կապույտ բերդ 293, 424
Կապուտան ծով, *տե՛ս* Ուրմիա լիճ
Կապուտավոր, *լեռնադագաթ*, 4, 10
Կապուտջուր, *լեռնադագաթ*, 4
Կապից ծով 7, 12, 68, 69, 112, 307, 357, 441, 643, 644, 665, 674, 684, 710, 715
Կաստիմ, *բերդ*, 523
Կարակորում, *քաղաք*, 530
Կարբի 627, 639, 641, 680, 731
Կարքաբին 114
Կարին (Թեոդոսպոլիս) 5, 7, 10, 11, 13, 14, 24, 94, 111, 261, 294, 299, 300, 307, 308, 312, 352, 393, 397, 399, 400, 404, 441—443, 460, 485, 486, 491, 498, 574, 581, 583—585, 594, 596, 610, 611, 621, 622, 638, 640—642, 660, 663, 674, 680, 700, 704, 720
Կարմիր բլուր, *ամրոց*, 27, 35, 47—51, 57, 58, 61—63, 599
Կարմիր գետ, *տե՛ս* Կուտուր գետ
Կարնո բարձրավանդակ 520
Կարնո դաշտ 14, 259
Կարս 5, 6, 14, 17, 164, 420, 421, 440—443, 445, 449, 450, 453, 456, 457, 460, 462, 485, 486, 488, 491, 498, 503, 508, 558, 559, 581, 583, 594, 621, 640, 641, 660, 695, 710, 713
Կարտոս 559
Կարհեմիշ, *քաղաք*, 58
Կարմավարեր 496
Կաֆա 644
Կելկեղ, *տե՛ս* Գալլ գետ
Կնշարոս 559, 572
Կեղտ 646, 647
Կեսարիա 78, 238, 246, 255, 377, 584, 614

Կզլար 655, 701, 711
Կիբոսա, *բերդ*, 374
Կիզիկ, *քաղաք*, 127
Կիզիտաբա, *ամրոց*, 511
Կիլիկիա 4, 15, 104, 122, 137, 183, 247, 454, 499, 506—517, 519—535, 537, 559, 561, 565, 567, 574, 575, 577, 581, 594, 599, 600, 605, 615, 622, 624, 645, 646
Կիչտան, *քաղաք*, 43
Կիպրոս 522, 538, 540, 542
Կիրովական 24, 27
Կիև 646, 653
Կիևյան Ռուսիա 362, 646
Կղարչի 402, 419
Կղզյակ-գյուղ, *գնակալավայր*, 20
Կյուլնոս (Տարսուս-չայ), *գետ*, 506
Կոգովիտ, *գավառ*, *տե՛ս* Բաբյուգետ
Կոլխիդա 42, 106, 121, 155, 156
Կոլոնիա 307, 374
Կող, *գավառ*, 6
Կողբ 9, 20, 152, 307, 441
Կողմիս 69, 120, 137
Կոմմագեն 107, 108, 123, 131
Կոնդ 681
Կոպիտաբ, *ամրոց*, 510
Կոսիկոս 515, 533, 537, 538, 552, 553
Կոտոմազոլ, *բերդ*, 540
Կոստանդնուպոլիս 266, 267, 307, 311, 316, 317, 348, 350, 352, 356, 371, 419, 425, 459, 462, 513, 514, 565, 579, 603, 604, 607, 624, 646, 659, 661—663, 723—725, 728, 730, 733, 737, 742
Կովկաս 18, 45, 51, 57, 59, 225, 229, 356, 390, 441, 581, 653, 668, 701, 702, 711, 713, 714, 721
Կովկասյան լեռնաշղթա 68, 357, 390
Կոտայք 14, 425, 501, 595, 614, 619
Կոտուր, *գետ*, 5, 7
Կորդվաց աշխարհ 90, 123, 126, 131, 132, 135, 139, 140, 142
Կորդվաց լեռներ 3, 7, 12
Կորզովմների երկիր 91
Կորնեք 13, 20, 85, 104, 112, 305, 412
Կոտց, *կղզի*, 6
Կրետե (Կանդիա), *կղզի*, 658, 659, 660, 730
Կուրան, 711
Կուլիմար (Քղիմար), *քաղաք*, 79
Կումայրի, *տե՛ս* Լենինական
Կումենու 60
Կումմախա 42, 43, 76
Կոստուրվինի դաշտ 57
Կուր, *գետ*, 4—6, 7, 10, 12, 13, 196, 419, 456
Կուրման, *գետ*, 581

Հաւազա, *քաղաք*, 649
Հազարի (Աղաքենազետ), *գետ*, 7
Հաղամանկերա, *տե՛ս* Ագամանկերա
Հազր, *գյուղ*, 393
Հաթթի երկիր 78
Հալեպ 512, 513, 517, 518, 531, 541, 542, 659, 699, 743
Հալիձոր 673, 676, 677, 686—689, 692, 693
Հաղպատ 502, 559, 572, 578, 626
Համադան 404, 407, 698
Հայաստ 75, 76, 77
Հայդարաբաղ 651
Հայկական լեռնաշխարհ 17, 24, 35, 47, 64, 65, 67, 69, 71—73, 77, 78, 80—82, 92, 112, 113, 139
Հայկական սար 4, 6, 38, 39, 81, 65, 615
Հայկական ՍՍՀ 6, 9, 24, 41, 62, 64, 114
Հայկական Տավրոս 4, 7, 10, 13, 36, 624
Հայոց ձոր 5, 21, 66, 80
Հանձիր, *գավառ*, 14, 77, 252, 299
Հաշտյանք, *գավառ*, 294
Հսոին 26
Հարք 80, 454, 466, 471—473, 477, 479, 621
Հացեկաց, *գյուղ*, 14, 322
Հեր 231, 252, 278, 280, 419, 620
Հյուսիսային Կովկաս 655, 721
Հյուսիսային Միջագետք 80, 101,

116, 121, 123—126, 134, 135, 139, 140, 142, 421, 485, 491, 505, 582, 584, 628
Հեղինական օվկիանոս 10
Հեղինաստան 104, 155, 156, 307, 308, 552, 581, 691, 697, 693, 707, 730, 733
Հելլենիա 660, 699
Հոռոմոս 574
Հովհաննավանք 572, 616, 723, 729
Հոանեկեսս 14, 178, 180, 181, 182, 184
Հոնեռս 662
Հռոմ 110, 119—122, 127, 128, 135, 137—139, 141, 142, 144, 147—150, 157, 161, 167, 171—175, 177,—180, 183—185, 187, 194, 222, 224, 227, 230—233, 245, 246, 252, 253, 256, 261, 308, 332, 340, 535, 538—540, 607, 608, 645, 659, 664, 670
Հոռմկլա 535
Հրապդան, գետ, 7, 11, 17, 57, 680, 682
Հրաշկաբերդ, ամրոց, 582
Հունաստան 91, 101, 121, 122, 157, 161, 199, 332, 639, 643

Ձիթենյաց լեռներ 343, 344
Ձիրավի դաշտ 253
Ձկնավանտ, վայր, 423, 424
Ձորագետ, գետ, 490
Ձորագյուղ 680, 681
Ձորք, գավառ, 10

Ղարաբաղ 13, 672, 673, 675, 677, 679, 680, 683, 686, 691, 693—695, 698, 703, 705, 706, 708, 710, 712, 714, 715, 719, 720, 731
Ղարադաղ, Երկրամաս Պարսկաստանում, 676, 689, 715
Ղափան 8, 11, 683, 686—688, 691—695, 698, 732
Ղրիմ, տե՛ս Թաւրիզ
Ղուրա 720

Ճանուկ, ոստան, 501
Ճապաղջուր 596
Ճարմանայի դաշտ 291
Ճորա գաւառ 279, 306
Ճորոխ 4—6, 10, 13, 397, 621

Մալենսիա 110
Մաղրաս 651, 652, 707, 709, 716, 718, 725, 726, 735, 736
Մազազի գավառ 15
Մաժաք 126
Մալաքիա 15, 17, 39, 41, 42, 104, 129, 178, 299, 374, 376, 379, 394
Մակեդոնիա 101, 121, 643
Մակու 5, 316, 620
Մամեստիա 508, 511, 517, 537, 539, 548, 552, 553
Մայֆարկին 441, 442, 582, 622
Մայիոպ 199
Մանազկերտ 5, 34, 37, 362, 363, 402, 419, 422, 440—442, 452—454, 461, 484, 486—489, 491, 509, 584, 610, 638
Մանանազ 14, 299, 374, 375, 380, 471—476, 482, 485
Մաննա Երկիր 39, 41, 44, 46, 59
Մաշտոց-բլուր, Տիմ բնակատեղ, 20
Մասիս, տե՛ս Արարատ, լեռ
Մասիսան, գետ, 533
Մարարա 690
Մարաշ, տե՛ս Գերմանիկ
Մարաստան 58, 59, 69, 80, 85, 86, 88, 101, 106, 115, 116, 120, 123, 124, 155, 187, 224, 247
Մարդալի 299
Մարդաստան 409
Մարմաշեն 502
Մարմարա ծով 127, 521
Մարսել 645, 724
Մարտունու շրջան 32
Մեզինա 340
Մելաս (Թոխմա սու), գետակ, 378
Մելքոնենի թագավորություն, տե՛ս Մաղաթիա
Մեծամոր 6, 7, 26, 27, 29, 114, 223
Մեծ Զաբ, գետ, 80
Մեծ Սոփի 14

Մեծ Հայք 2, 3, 12—15, 104—107, 109, 110, 112, 113, 120, 156, 209, 299, 643
Մեծրաց թոռներ 4
Մեկկա 340
Մեղրագետ 182
Մեղրի 4, 8, 496, 676, 678, 679, 687—689
Մերդին 597, 621
Մերձավոր Արևելք 167, 227, 228, 301, 317, 329, 330, 396, 489, 520, 524, 529, 531—537, 539, 557, 563, 564, 573, 603, 604, 662, 728, 729
Միգդոնիա 123
Միլլի տափաստան 13
Միջագետք 4, 22, 43, 51, 90, 106—108, 115, 117, 123, 128, 130, 137, 139, 142, 143, 155, 177, 183, 186, 222, 240, 245, 246, 315, 324, 345, 346, 441, 455, 461, 484, 520, 530, 531, 532, 564, 585, 583, 604, 605, 616
Միջերկրական ծով 121, 123, 124, 137, 441, 506, 511, 512, 519, 520, 552, 567
Միջին Ասիա 100, 101, 104, 115, 308, 396, 484, 580, 596
Մծբին 135, 177, 183, 187, 222, 224, 227, 230, 231, 234, 261, 622
Մծուրն 161, 182, 195
Մեծերի դուռ, ժայռ, 60
Մենուր 77
Մշո դաշտ 5, 91, 130, 133, 192, 605
Մոզոկ 635
Մոլդավիա 646, 653
Մոխրարլյուր 24
Մոկաց աշխարհ 80, 490, 491, 622
Մոկս, գետակ 7, 449, 471, 580, 596, 622, 624
Մոկի 13, 85, 104, 112, 247, 411, 500
Մոնղոլիա 529, 530
Մոսկվա 607, 654, 655, 667—672, 675, 683, 702, 738
Մռավ, լեռ, 673
Մսխ, քաղաք, 512, 513, 515, 533
Մրեն 342
Մուփսանաբ-թափա 27
Մուղանի դաշտ 581, 582
Մուղնի 630
Մուշ 8, 14, 79, 409, 410, 622, 629, 636, 700, 703, 707
Մուշկին (Պուշկին) 56
Մուսասիր 35, 38, 46, 50, 51, 60, 63

Նարեկ, գիրք, 345

Նազիկ, լիճ, 6
Նաիրի երկիր 33, 34, 36, 38
Նախիջևան 5, 7, 9, 14, 71, 105, 152, 161, 223, 289, 307, 352, 362—364, 410, 414, 422, 423, 440—442, 451—461, 574, 596, 605, 610, 620, 632, 633, 635, 636, 641, 642, 678
Նախնավան, տե՛ս Նախիջևան
Նարեկա վանք 14, 629
Նարեկ, գյուղ, 559
Նեճավենդ 345, 407
Նեմրութ, լեռնադաշտ, 4
Ներսեսնապատ 290, 291
Ներքին Տարոն 5
Նիզ, գավառ, 423
Նիզեղանդիա 646
Նիզովոյե, Նավահանգիստ, 670
Նիկեֆորչոսե-Դարկին, գետակ, 130
Նիկիա, քաղաք, 380
Նիկոմեդիա 380
Նինվե 58, 80, 123, 317
Նկան, ամրոց, 395, 412
Նոյեմբերյանի շրջան 20
Նոշիրավան 169, 252
Նոր-Նախիջևան 711
Նոր-Զուղա 614, 649, 650, 654, 656, 723, 724, 732, 734, 743
Նավոռաղ 652, 653
Նպատ, լեռ, 13, 253, 593
Նվարսակ, գյուղ, 295
Նփրկերա-Դարկին 126

Նավաշեն 252
Նահասլիվան 15, 268
Նահատան 307

Նամկերտ, *գյուղ*, 635
Նամիրամի ջրանցք 40
Նավախի 393, 653, 670, 673, 674, 685, 706, 720
Նամքալդե, *բնակ*, 452, 494
Նամմար 419, 500, 583, 706
Նաշիլու 39
Նատախ 624
Նաուրի գաշտ 604, 620
Նեռեպվիր 24, 25
Նիրակ 5, 8, 11, 14, 29, 40, 67, 81, 258, 335, 397, 402, 424, 425, 435, 461, 471, 472, 481, 488, 491, 496—498, 500, 502—505, 508, 572, 573, 583, 595, 605, 614, 616, 619, 621, 634, 638
Նիրի, *բերդաքաղաք*, 473
Նիրվան 403, 581, 604
Նլորուտ, *բերդ*, 495
Նվեյցարիա 382
Նռեա 294
Նուշի 90, 706, 719—721
Նփղրա 505

Ողական, *ամրոց*, 14
Ողջի, *գետ*, 7, 11
Ոստան, *գավառ*, 15
Ոստան, *քաղաք*, 14, 414, 435, 441, 442, 444, 449, 572,
Ուղտաղ 347
Ուռաան, *բերդ*, 596, 678
Ուռտան, *գետ*, 7, 11, 722
Ուսիրանք, *գավառ*, 412

Զալդրան, *վայր*, 605
Զանգեզուր 673, 676, 678, 692
Զեռեռվեց 646
Զինաստան 115, 155, 156, 308, 580
Զլլար, *լիճ*, 40, 42
Զմահզլաղուկ, *գյուղաքաղաք*, 584
Զորարդ Արմենիա, *վարչական միավոր Արաբական խալիֆայության մեջ*, 357
Զորարդ Հայք, *տե՛ս Նոյք*

Պաղնատուն 124, 144, 265, 362, 513 526, 530, 531, 588
Պաղնատուն, *գավառ*, 10
Պաղրաս, *ամրոց*, 521
Պատիռոն 541
Պարթևական թագավորություն 107, 119, 120, 122, 138, 155, 174, 175, 186, 188
Պարսից ծոց 155, 188
Պարսկաստան 13, 112
Պարսկաստան 22, 87—90, 93, 101, 104, 117, 188—191, 222—224, 230—235, 245, 246, 248, 249, 252, 253, 257, 261, 262, 270, 272, 273, 275, 279, 284, 287, 292, 298, 301, 305, 307, 308, 314—318, 320, 345, 346, 357, 404, 441, 455, 484, 485, 501, 552, 563, 580—582, 588, 603—606, 608—616, 619, 629, 630, 639, 640, 649, 653, 657, 665, 666, 668—674, 688, 689, 691, 692, 695, 696, 698, 700, 702—704, 711, 712, 719, 720, 726, 728, 730, 732, 743
Պարսպատուներ 111
Պարսուա 39, 41
Պարտավ 307, 357, 393, 441
Պաֆլագոնիա 105, 106
Պերգամոնի թագավորություն 116, 119
Պերսեպոլիս 94
Պետերբուրգ, *տե՛ս Լենինգրադ*
Պիզա 645
Պիզու 459, 508
Պլովդիվ 383
Պոնտական լեռնաշղթա 4
Պոնտոս 86, 107, 115, 121, 122, 127, 128, 130, 132, 135, 137, 148, 155, 194, 374, 392
Պոռ, *գյուղ*, 739
Պոսոռ 379
Պոսկանա, *ամրոց*, 521
Պտղոմեական թագավորություն 101
Պրովանս 382
Պուրդուումգի ջրջան, *Նուսպրիա երկրում*, 78

Ջավախքի սարահարթ 5
Ջենիս 700

Ջենովա 525, 554, 644, 645
Ջերմ, գյուղաքաղաք, 473
Ջերմուկ, առողջարան, 11
Ջերմուկ, բերդ, 587
Ջհան, գետ, 4, 539
Ջրաբերդ 624, 696, 706, 714
Ջրաշատ, գյուղ, 95
Ջուղա 610, 613, 617

Ռան, գետ, 325
Ռաշիդով 646, 647
Ռավիճ, վայր, 521
Ռշտունիք, գավառ, 14, 64, 388, 411, 414, 490, 559, 616, 622
Ռումինիա 643
Ռուսախինիի 44
Ռուսաստան 429, 584, 594, 652—655, 657, 661, 665, 667—672, 674, 684, 686, 688, 691, 693, 696, 699, 701, 702, 705—707, 710—713, 715—721

Ռաղմաստ 484
Ռաղմոսալանմ 572
Ռամասատ 107, 196, 324, 325, 378
Սանահին 558, 559, 572, 573, 626, 652
Սասանյան Պարսկաստան 268, 269, 321, 330
Սասուն 78, 410, 490, 508, 596, 622, 624
Սատանի-դար, բլուր, 18
Սատաղ 208, 235
Սարայ-Բերկե 643, 644
Սարդեն 90
Սարբա (Սիհուն), գետ, 506
Սեբաստիա 15, 299, 316, 378, 380, 455, 584, 599, 608, 615, 622, 660
Սեղիմ 572
Սելևկիա, քաղաք, 12, 101, 106, 108, 110, 115, 123, 155, 183, 507, 512, 518, 522, 553
Սելջուքաղ 651
Սերաս 646
Սեֆենյան Պարսկաստան 604, 605, 606, 609, 611, 613
Սիրիր 580
Սիմ, բեռ, 421
Սիմոնիկա, տիպ, 513
Սինակ, ճանապարհ, 4
Սինոպե 235
Սիս, քաղաք, 507, 511, 517, 521—523, 525, 531—536, 541, 542, 548, 552, 553, 555, 559, 600, 658, 659
Սիսական 67
Սիփան 106, 210, 343, 662, 663, 678
Սիսաֆերնես 69, 80
Սիցիլիա 552
Սիփան 6
Սկևռա 559
Սղերդ 7
Սմբատաբերդ, բեռ, 485
Սյունիք 9—11, 14, 29, 30, 32, 64, 81, 85, 104, 111, 112, 151, 219, 244, 266, 307, 352, 404, 423, 424, 430, 431, 435, 436, 450, 451, 460, 461, 468—471, 474, 487—491, 495, 497, 498, 500, 501, 503, 504, 559, 566, 572, 574, 582, 595, 596, 605, 606, 616, 620, 623, 624, 630, 661, 664, 670, 672, 673, 675—677, 679, 689, 692—694, 713, 721, 727, 731, 732
696, 698
Սյունյաց լեռնաշղթա 4, 8
Սոլի, քաղաք, 126
Սոլընդա, քաղաք, 507
Սոմխեթ 494
Սովետական Միություն 11, 18
Սոտ, դավառ, 10
Սոֆիա 573
Սոֆիան, գյուղ, 611
Սոֆիանա, գաստ, 610
Սպահան 407, 613, 614, 649, 655, 656, 670, 673, 724
Սպեր 10, 14, 104, 237, 299, 402, 485
Սվազ, տե՛ս Սեբաստիա
Սվիշտով 383
Ստանիս 188
Ստանիսլավ 646

Սրմանց լեռնազգաթ 7
Սուրբատ 36
Սուգունիա, բերդաքաղաք, 37
Սուզա 94
Սուչավա 646
Սոնկավան, լեռնագագաթ, 4
Տոպպիսլիկում 76
Սուտաթ 651
Սուրխաթ 644
Սուրմալու 5, 614
Սուրմարի, տե՛ս Սուրմալու
Սևանի լեռներ 8, 13
Սևանա լիճ 6, 8, 29, 41, 42, 44, 229, 441, 461, 491, 494, 497, 500, 501, 583, 587, 610, 620
Սևանա կղզի 425, 426
Սև բլուր, բնակավայր, 20, 24
Սև լեռներ 506, 515, 518, 532, 539
Սև ծով 45, 59, 68, 100, 105—108, 115, 120, 126, 156, 240, 353, 357, 379, 441, 521
Սև ջրի դաշտ 5

Վալախիա 646
Վանկա բերդ 510, 512, 513
Վաղարշաբերտ 15
Վաղարշապատ, տե՛ս էջմիածին
Վաղարշավան 14
Վայոց ձոր, գավառ, 10, 11, 14, 283, 501, 539, 582, 595
Վան 4, 10, 14, 24, 35, 34, 38, 40, 42,—46, 58, 60—62, 64, 80, 84, 85, 90, 96, 105, 231, 440—442, 449, 568, 572, 596—598, 605, 610. 616, 622, 635, 638, 640—642, 659, 660, 704, 713
Վանա լիճ 4, 5, 6, 9, 10, 13, 38, 45, 47, 48, 66, 104, 151, 231, 316, 357, 400, 435, 441, 449, 484, 569
Վանանդ, գավառ, 14, 389, 450, 461, 462, 616, 621, 724, 738
Վառնա 646
Վասպուրական 4, 14, 21, 85, 112, 266, 308, 347, 387, 388, 391, 394, 396, 399, 408—411, 413, 414, 421. 423, 426, 435, 436, 449—451, 455, 456, 461, 471, 485, 488, 491, 500, 508, 572, 580, 582, 584, 596, 606, 616, 620, 622, 636, 637
Վարազա վանք 592, 600
Վարազակերտ 289
Վարազնունիք, գավառ, 10
Վարանդա 623, 684, 696, 705, 706
Վարդանակերտ 307, 387—389
Վարդաշեն, ավան, 595
Վարդգեսավան, տե՛ս էջմիածին
Վարդենիս 6
Վատիվան 538
Վարշակ 291
Վեղի 9, 619
Վեհնանդի 525, 554, 607, 645, 646, 658, 660, 723, 725, 727, 732, 733, 739, 741
Վերոալ 680
Վիեննա 663, 666, 667
Վիրահայոց լեռնաշղթա 4, 112
Վռ. շրջան Շինկյուղեհայում, 382
Վրաստան 116, 130, 155, 166, 189, 225, 242, 270, 274, 275, 287, 288, 290—292, 307, 310, 312, 314, 349, 350, 352, 354, 401, 406, 413, 420, 421, 441, 449, 454, 457, 488, 493—498, 501, 504, 591, 582, 586, 588, 592, 595, 598, 604, 620, 644, 661, 668, 672, 679, 688, 694, 699, 700—703, 706, 707, 710—712, 715, 719, 720
Վրկանաց աշխարհ 175, 177, 184

Տարայ 51
Տարարիստան 403
Տարև, գյուղ, 358, 572, 626, 676, 678, 722
Տարնի վանք 431, 468—470, 474, 496. 566
Տամարեկի 431, 468, 469
Տայք 6, 9, 13, 92, 111, 112, 237, 283, 292, 353, 389, 392, 402, 419, 421, 424, 452—454, 456, 457, 485, 595
Տաշիրք, գավառ, 10, 490
Տավրիկյան Թեոդոսենս 121
Տավրոսյան լեռնաշղթա 4, 112, 130, 133, 178, 419, 506, 624

Տավուշ 495
Տարոն 14, 39, 64, 79, 80, 85, 104, 112, 159, 160, 176, 202, 203, 239, 259, 266, 315, 322, 330, 346, 408, 410, 413, 419, 421, 454, 461, 485, 491, 596, 614, 622
Տարսոն 256, 278, 507, 508, 510—513, 515, 517, 524, 528, 534, 539, 541, 548, 552, 553, 559
Տեփերաս, գետ, 91
Տեվրիկ 378, 381
Տերեի-ձոր, բնակատեղ, 20
Տիգրանակերտ 7, 125—127, 129—132, 136, 161, 174—176, 178, 194, 198, 206, 223, 248, 346, 737
Տիգրիս 6—8, 10, 13, 101, 368, 396
Տիգրոն 183, 186, 188, 234, 247—249, 262, 270, 274, 275, 284—287, 292, 295, 296, 312, 317, 345
Տղմուտ, գետ, 280, 281
Տմարիթ 111, 283
Տոյրոս 26
Տոմխտ, ամրոց, 108, 120
Տոսկանիա, գրաստիյուն, 664—666
Տոսպ 14, 64, 161
Տվարածատափի գաշտ 5
Տրանսիլվանիա 646
Տրապիզոն 92, 105, 335, 353, 441, 649
Տրիպոլիս 526
Տուշպա, տե՛ս Վան
Տուրոպերան 10, 13, 14, 308, 316, 322, 357, 452, 461, 498, 500, 580, 584, 596, 601, 605

Ցուր, բերդ, 431, 468, 469, 474

Ուասի մարզ 45
Ուկրաինա 595, 604, 646, 696, 741
Ուշթափալար, վայր, 675, 676
Ուռնա 307
Ուռֆի 10, 13, 81, 85, 111, 112, 252, 413, 418—419, 490
Ուրարտու 12, 33, 35—38, 40, 59, 61, 62, 65, 80, 84, 85, 96, 159
Ուրմե երկիր 79
Ուրմիա լիճ, 3, 4, 6, 18, 36, 38, 42—44, 46, 47, 145, 307, 603

Փամբակ, գետ, 11
Փամբակի լեռնաշղթա 4
Փայտակարան 13, 111, 112, 252, 273, 307, 308, 403, 419
Փառիսոս 500
Փավլիտիս 111
Փարասպատն, տե՛ս Փասիանակ
Փարամար 627
Փարիզ 150, 542, 659, 660, 662
Փերե 69
Փյուլիկիա 123, 124, 127, 129,—131, 144, 148
Փոքր Ասիա 22, 45, 51, 56, 59, 72, 73, 77, 88, 90, 95, 97, 100, 104, 108, 110, 116, 119, 121, 122, 124, 126, 135, 156, 159, 200, 380, 459, 492, 506, 508, 520, 529, 564, 588, 603, 604, 609, 614, 616, 648
Փոքր Կովկաս 3, 4, 10, 36
Փոքր Հայք 12, 15, 75, 80, 85, 86, 104, 106, 107, 116, 120, 121, 137, 146, 156, 208, 299, 393, 374, 643

Քաղեանա 345
Քաղկեդոն 301, 302, 317
Քաղրեղ, վտակ, 7, 79
Քանաթեռ 640, 729
Քաշթերուանիք 596
Քասախ, գետ, 342, 634
Քարքի, տե՛ս Վրաստան
Քառուս Կիլիկիա, տե՛ս Լեռնային Կիլիկիա
Քեսու 509
Քթիշ, բերդ, 413
Քիշեմ 646
Քիրմանշահ 83
Քոկամար 79
Քուշանաց թագավորություն 156

Օլթի, գետ, 39
Օնոնավանք, տե՛ս Հովհաննավանք
Օձուն 342
Օշական 229, 326, 634

Օսմանյան պետություն, տե՛ս Թուրքիա
Օտոյեն 123
Օդեսպրալ 106, 641, 678, 689, 693

Խասիս 92

Խարկով, գետ, 7
Խոդասիա (Թեոդոսիա) 644
Խրիստոսիա 552, 554, 645, 663, 666
Խրամսիա 46, 382, 383, 645, 660—662, 666, 69[illegible]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհի բնությունը և Մեծ Հայքի վարչական բաժանումը 3

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

Նախնադարյան-համայնական հասարակությունը և վաղ ստրկատիրությունը Հայաստանում

ԳԼՈՒԽ I. Նախնադարյան-համայնական հասարակությունը Հայաստանում
1. Պալեոլիթը և նեոլիթը Հայաստանում 16
2. Էնեոլիթը և բրոնզե դարը Հայաստանում 24
3. Երկաթե դարի սկիզբը և նախնադարյան-համայնական կարգերի քայքայումը 30
ԳԼՈՒԽ II. Ուրարտական պետությունը
1. Ուրարտական պետության առաջացումը և ամրապնդումը . 33
2. Ուրարտուն իբրև Առաջավոր Ասիայի հզոր պետություն . . 38
3. Պայքար Ուրարտուի և Ասորեստանի միջև և Ուրարտական պետության թուլացումը 43
4. Ուրարտուի մշակույթը, հասարակական և պետական կարգը 47
5. Ուրարտական պետության անկումը 56
6. Ուրարտուի մշակույթը 59
ԳԼՈՒԽ III. Հայ ժողովրդի կազմավորումը
1. Ավանդություններ հայ ժողովրդի ծագման մասին 65
2. Հայ ժողովրդի ծագման հարցը պատմագրության մեջ 70
3. Հայկական ցեղերն ու ցեղային միությունները 73
4. Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը 80
ԳԼՈՒԽ IV. Հայկական հնագույն պետությունը
1. Հայկական պետության առաջացումը . . . 84
2. Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի կազմում 87

3. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները VI—IV դարերում (մ. թ. ա.) 93

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

Ստրկատիրությունը Հայաստանում

ԳԼՈՒԽ V. Հայկական թագավորություններ IV—III դարերում (մ. թ. ա.)
1. Հելլենիզմի դարաշրջանը Արևելքում 100
2. Հայկական թագավորությունները IV—III դարերում 103
ԳԼՈՒԽ VI. Հայկական կենտրոնացված պետության առաջացումը
1. Հայկական հողերի միավորումը 110
ԳԼՈՒԽ VII. Հայաստանը քրդ Առաջավոր Ասիայի ճզոր տերություն
1. Հայկական պետության հզորացումը 118
2. Հայ-հռոմեական պատերազմները 127
ԳԼՈՒԽ VIII. Հայ ժողովրդի պայքարը պետական անկախության պահպանման համար
1. Հայաստանի պայքարը պետական հզորության և ինքնուրույնության վերականգնման համար 141
ԳԼՈՒԽ IX. Հայաստանի տնտեսությունը և հասարակական-պետական կարգը
1. Տնտեսության հիմնական ճյուղերը 151
2. Հասարակական և պետական կարգը 157
ԳԼՈՒԽ X. Արշակունիների թագավորությունը Հայաստանում I—III դարերում
1. Հայկական պետական անկախության վերականգնումը . . 171
2. Հայաստանը II—III դարերում 182
ԳԼՈՒԽ XI. Հին ճարտարական մշակույթը
1. Գրականություն, ժողովրդական վեպ, թատրոն 192
2. Պալատները և տաճարը 200
3. Հայկական հելլենիստական արվեստը 206

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

Հայաստանը վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում

ԳԼՈՒԽ XII. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում
1. Ֆեոդալական հարաբերությունների սաղմնավորումը 211
2. Հայաստանը IV դարի առաջին կեսին 224
3. Պայքար կենտրոնացված պետության ստեղծման համար Արշակ II-ի ժամանակ 239
4. Հայաստանը Պարսի պահակության շրջանում 252
5. Արյունակիների թագավորության անկումը 257
ԳԼՈՒԽ XIII. Սոցիալական և ազատագրական շարժումները V—VI դարերում
1. Սոցիալական շարժումները 264
2. Ազատագրական շարժումները V դարի առաջին կեսին 268
3. Ազատագրական պատերազմները 481—484 թվականներին 285
ԳԼՈՒԽ XIV. Հայաստանը VI դարում

1. Արևմտյան Հայաստանը և Հուստինիանոսի ռեֆորմները . 298
2. Հայ ժողովրդի պայքարը անկախության վերականգնման համար VI դարում. Հայաստանի երկրորդ բաժանումը 303
ԳԼՈՒԽ XV. Հայկական մշակույթը IV—VIII դարերում 319
ԳԼՈՒԽ XVI. Հայաստանի ճվաճումը Արաբական խալիֆայության կողմից
1. Արաբական արշավանքները Հայաստան 345
2. Արաբական խալիֆայության տիրապետությունը Հայաստանում 353
3. Արաբական խալիֆայության քաղաքականությունը Հայաստանում 359
ԳԼՈՒԽ XVII. Պավլիկյան սոցիալական շարժումը Հայաստանում
1. Պավլիկյան շարժման սկզբնավորումը և ընթացքը . . 372
2. Պավլիկյան շարժման գաղափարախոսությունը 383
ԳԼՈՒԽ XVIII. Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ
1. Ապստամբական շարժումները VIII դարում 387
2. Արաբական խալիֆայության թուլացումը և ապստամբական շարժումները IX դարում 401

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ

Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանում

ԳԼՈՒԽ XIX. Հայկական պետականության վերականգնումը
1. Բագրատունիների թագավորության հաստատումը . . 415
2. Պայքար պետական անկախության պահպանման համար . . 420
ԳԼՈՒԽ XX. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները և ֆեոդալական կարգերը IX—XI դարերում
1. Ֆեոդալական հարաբերությունների խորացումը 427
2. Գյուղատնտեսությունը 434
3. Արհեստագործությունը 436
4. Առևտուրը 440
5. Քաղաքները 442
6. Քաղաքական կարգերը 446
ԳԼՈՒԽ XXI. Հայաստանի գլուխկանության անկումը
1. Հայաստանի տրոհումը ֆեոդալական մանր թագավորությունների 449
2. Բյուզանդական ագրեսիան Հայաստանի դեմ . 454
3. Անիի թագավորության անկումը . . . 456
4. Հայաստանի վիճակը Անիի անկումից հետո 461
ԳԼՈՒԽ XXII. Գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XI դարերում
1. Թոնդրակյան շարժման սկզբնավորումը 464
2. Գյուղացիական ապստամբությունները X դարի առաջին քառորդում 467
3. Թոնդրակյան շարժման նոր վերելքը . . . 471
4. Թոնդրակյանների գաղափարախոսությունը . 476
5. Թոնդրակյան շարժման ճնշումը 481
ԳԼՈՒԽ XXIII. Հայաստանը սելջուկ-թուրքերի տիրապետության շրջանում
1. Սելջուկների արշավանքները 484
2. Հայաստանի նվաճումը սելջուկների կողմից . . . 487

ԳԼՈՒԽ XXIV. Հայ և վրաց ժողովուրդների ճամատեղ պայքարը էմիրությունների դեմ և Հայաստանի հյուսիսային շրջանների ազատագրումը

1. Հայ ու վրաց ժողովուրդների պայքարը օտար նվաճողների դեմ 493
2. Հայաստանի հյուսիսային շրջանների ազատագրումը և Զաքարյանների իշխանության հաստատումը 496
3. Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը Զաքարյանների իշխանության օրոք 500

ԳԼՈՒԽ XXV. Հայկական իշխանության առաջացումը Կիլիկիայում

1. Կիլիկիայի աշխարհագրական պայմանները և բնակչությունը 505
2. Հայկական իշխանության հաստատումը Կիլիկիայում . . . 509
3. Պայքար բյուզանդական զորքերի դեմ և հայկական իշխանության ամրապնդումը 514

ԳԼՈՒԽ XXVI. Կիլիկիայի ճայկական թագավորությունը

1. Լևոն II-ը և թագավորության հռչակումը . . . 520
2. Հեթումյանների դինաստիան և դաշինքը մոնղոլների հետ . 527
3. Կիլիկիայի քաղաքական դրությունը XIV դարում և թագավորության անկումը 534

ԳԼՈՒԽ XXVII. Կիլիկիայի ճայկական պետության սոցիալ-տնտեսական կյանքը

1. Դասակարգային հարաբերությունները և քաղաքական կարգերը 543
2. Կիլիկիայի տնտեսական կյանքը 550

ԳԼՈՒԽ XXVIII. Հայկական մշակույթը IX—XIV դարերում

1. Գրականության և գիտության զարգացումը . . 557
2. Արվեստի զարգացումը 572

ԳԼՈՒԽ XXIX. Հայաստանը ֆեոդալական հարաբերությունների ձևացման և տնտեսական անկման շրջանում

1. Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից . 580
2. Հայաստանը Լենկ-Թիմուրի շրջանում 588
3. Հայաստանը XIV դարի երկրորդ կեսին և XV դարում . . 595

ԳԼՈՒԽ XXX. Թուրք-պարսկական պերապետության հաստատումը Հայաստանում

1. Հայաստանի առաջին բաժանումը պարսկական և օսմանյան պետությունների միջև 603
2. Հայաստանի երկրորդ բաժանումը Թուրքիայի և Պարսկաստանի միջև 608

ԳԼՈՒԽ XXXI. Վարչական կարգերը և սոցիալ-տնտեսական կյանքը Հայաստանում XVII—XVIII դարերում

1. Վարչական կարգերը Հայաստանի արևելյան և արևմտյան մասերում 619
2. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները . . . 625
3. Հայաստանի տնտեսական կյանքը XVII—XVIII դարերում . 636

ԳԼՈՒԽ XXXII. Հայկական գաղթավայրերը և հայ-ռուսական հարաբերությունների սկիզբն ու զարգացումը

1. Հայկական գաղթավայրերի առաջացումը XI—XVIII դարերում 643
2. Հայ-ռուսական հարաբերությունների սկիզբն ու զարգացումը մինչև XVIII դարը 652

ԳԼՈՒԽ XXXIII. Հայ ազատագրական շարժումները XVII—XVIII դարերում

1. Շարժման գարթոնքը. Էջմիածնի 1677 թվականի ժողովը 657

2. Արևելյան Հայաստանի ազատագրման ծրագիրը 663
3. Շրջադարձ դեպի Ռուսաստան . . . 667
4. Միությի ազատագրական ապստամբությունը 672
5. Հերոսամարտեր Թուրքական զավթիչների դեմ 679
6. Ապստամբության վախճանը 683
7. Հայ ազատագրական շարժումը XVIII դարի երկրորդ կեսին 695
8. Ազատագրական շարժման նոր օջախներ 701
9. Ազատագրական շարժումը և Հայ-ռուսական կապերը XVIII դարի վերջին տասնամյակներում 710

ԳԼՈՒԽ XXXIV. Հայկական մշակույթը XV—XVIII դարերում

1. Դպրոցները, տպագրությունը և մամուլը . 722
2. Գիտությունների զարգացումը 727
3. Գրականությունն ու արվեստը . 739
Անձնանունների ցանկ . . . 747
Տեղանունների ցանկ . . 762

Գրքի 1—11-րդ գլուխները գրել է դոց. Հայկազ Գևորգի Ժամկոչյանը, 12—15-րդ գլուխները՝ պրոֆ. Աշոտ Գարեգինի Աբրահամյանը, 16—18-րդ գլուխները՝ պրոֆ. Ստեփան Տիգրանի Մելիք-Բախշյանը, 19—34-րդ գլուխները՝ պրոֆ. Սերոբ Պողոսի Պողոսյանը, Հայկական լեռնաշխարհի բնությունը և Մեծ Հայքի վարչական բաժանումը՝ պրոֆ. Թադևոս Խաչատուրի Հակոբյանը։

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սկզբից մինչև XVIII դ. վերջը

Հրատ. խմբագիր՝ Ա. Մ. Գաբրիելյան
Վեր. խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Նկարիչ՝ Հ. Ն. Գորնակաղյան
Տեխն. խմբագիր՝ Մ. Պ. Սարգսյան
Վերատ. սրբագրիչ՝ Ա. Ի. Սաղաթելյան

ՎԽ 08460 Պատվեր 1172 Տպաքանակ 20000

Հանձնված է արտադրության 9/IX—1974 թ.։
Ստորագրված է տպագրության 20/II—1975 թ.։
Թուղթ տպ. 60×90 1/16։
Տպագր. 49,0., հրատ. 40,2 մամուլ։
Գինը՝ 2 ռ. 50 կոպ.։
Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Աբովյան փող. № 52։

Երևանի համալսարանի տպարան, 375025 Աբովյան, փող. № 52։
Типография Ереванского госуниверситета, Ереван 375025, ул. Абовяна 52.